Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

18213

ՆՈՐ
ԿՏԱԿԱՐԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ
ԵՒ ՏՊԱԳՐԵԱԼ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

معارف عموميه نظارت جليله‌سنك ٦ ربيع الاول ٣٢١
و ٢٠ مايس ٣١٩ تاريخلى و ١٨ نومرولى رخصتنامه سيله
نشر اولنمشدر

مصارف آمريقان بيبل شركتى طرفندن تسويه اولنه‌رق
طبع اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՑԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1903

ՑԱՆԿ

Աւետարան ըստ Մատթէոսի	ունի 28	գլուխ
Աւետարան ըստ Մարկոսի	» 16	»
Աւետարան ըստ Ղուկասու	» 24	»
Աւետարան ըստ Յովհաննու	» 21	»
Գործք Առաքելոց	» 28	»
Թուղթ Պօղոսի Առաքելոյն		
առ Հռովմայեցիս	» 16	»
առ Կորնթացիս Ա	» 16	»
առ Կորնթացիս Բ	» 13	»
առ Գաղատացիս	» 6	»
առ Եփեսացիս	» 6	»
առ Փիլիպպեցիս	» 4	»
առ Կողոսացիս	» 4	»
առ Թեսաղոնիկեցիս Ա	» 5	»
առ Թեսաղոնիկեցիս Բ	» 3	»
առ Տիմոթէոս Ա	» 6	»
առ Տիմոթէոս Բ	» 4	»
առ Տիտոս	» 3	»
առ Փիլիմոն	» 1	»
առ Եբրայեցիս	» 13	»
Ընդհանրական Թուղթ Յակոբու	» 5	»
Ա. Ընդհանրական Թուղթ Պետրոսի	» 5	»
Բ. Ընդհանրական Թուղթ Պետրոսի	» 3	»
Ա. Ընդհանրական Թուղթ Յովհաննու	» 5	»
Բ. Թուղթ Յովհաննու	» 1	»
Գ. Թուղթ Յովհաննու	» 1	»
Ընդհանրական Թուղթ Յուդայի	» 1	»
Յայտնութիւն Յովհաննու	» 22	»

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Քրիստոսի ազգաբանութիւնը Աբրահամէն մինչեւ Յովսէփ. 18 Կոյս Մարիամ որ Յովսէփին նշանուած էր, Սուրբ Հոգիէն կը յղանայ. 19 Հրեշտակը Յովսէփին սխալ կարծիքը կ'ուղղէ, եւ կը մեկնէ Քրիստոսի անունները.

1 Գիրք ա ծննդեան Յիսուսի Քրիստոսի բ Դաւիթի
որդւոյն, գ Աբրահամի որդւոյն:
2 դ Աբրահամ ծնաւ Իսահակը. ե Իսահակ ծնաւ
Յակոբը. զ Յակոբ ծնաւ Յուդան ու անոր
3 եղբայրները. է Յուդա ծնաւ Փարէսը ու Զարան
Թամարէն. ը Փարէս ծնաւ Եսրոնը. Եսրոն ծնաւ
4 Արամը. Արամ ծնաւ Ամինադաբը. Ամինադաբ
5 ծնաւ Նաասոնը. Նաասոն ծնաւ Սաղմոնը. Սաղ-
մոն ծնաւ Բոոսը Ռախաբէն. Բոոս ծնաւ Ովբէդը
Հռութէն. Ովբէդ ծնաւ Յեսսէն. թ Յեսսէ
6 ծնաւ Դաւիթ թագաւորը. ժ Դաւիթ թագաւորը
7 ծնաւ Սողոմոնը Ուրիայի կնիկէն. ի Սողոմոն ծնաւ
Ռոբովամը. Ռոբովամ ծնաւ Աբիան. Աբիա
8 ծնաւ Ասան. Ասա ծնաւ Յովսափատը. Յով-
սափատ ծնաւ Յովրամը. Յովրամ ծնաւ Ոզիան.
9 Ոզիա ծնաւ Յովաթամը. Յովաթամ ծնաւ Ա-

ա Ղու. գ. 23.
բ Սաղ. ճլբ. 11. Եսա. ժա. 1. Երեմ. իգ. 5. Գղ. իբ. 42. Յոհ. է. 42. Գործ. բ. 30. ժգ. 23. Հռով. ա. 3.
գ Ծն. ժբ. 3. իբ. 18. Գաղ. գ. 16.
դ Ծն. իա. 2, 3.
ե Ծն. իե. 26.
զ Ծն. իթ. 35.
է Ծն. լը. 27.
ը Հռութ. դ. 18, եւ. ա Մն. բ. 5, 9, եւ.
թ ա Թագ. ժզ. 1. ժէ. 12.
ժ բ Թագ. ժբ. 24.
ի ա Մն. գ. 10, եւ.

10 քազը · Աքազ ծնաւ Եզեկիան · լ Եզեկիա ծնաւ
Մանասէն · Մանասէ ծնաւ Ամոնը · Ամոն ծնաւ
11 Յովսիան · խ Յովսիա ծնաւ Յեքոնիան ու անոր
եղբայրները ծ Բաբելոնեան գերութեանը ատեն-
12 ները · Բաբելոն գերութեան երթալնէն ետև կ Յե-
քոնիա ծնաւ Սաղաթիէլը · Սաղաթիէլ ծնաւ
13 հ Զօրաբաբէլը · Զօրաբաբէլ ծնաւ Աբիուդը ·
Աբիուդ ծնաւ Եղիակիմը · Եղիակիմ ծնաւ Ազով-
14 րը · Ազովր ծնաւ Սադովկը · Սադովկ ծնաւ
15 Աքիմը · Աքիմ ծնաւ Եղիուդը · Եղիուդ ծնաւ
Եղիազարը · Եղիազար ծնաւ Մատթանը · Մատ-
16 թան ծնաւ Յակոբը · Յակոբ ծնաւ զՅովսէփ
զայրն Մարիամայ, որմէ ծնաւ Յիսուս, որ կ՚ըսուի
17 Քրիստոս : Արդ բոլոր ազգերը Աբրահամէն մին-
չև Դաւիթ տասնուչորս ազգ, և Դաւիթէն մին-
չև Բաբելոնեան գերութիւնը տասնուչորս ազգ,
ու Բաբելոնեան գերութենէն մինչև Քրիստոս
տասնուչորս ազգ :
18 Եւ ձ Յիսուսի Քրիստոսի ծնունդը աս կերպով
էր · անոր մայրը Մարիամ Յովսէփին նշանուած,
դեռ իրարու քով չեկած՝ ղ Սուրբ Հոգիէն յղացած
19 գտնուեցաւ : Եւ Յովսէփ անոր էրիկը արդար
մարդ ըլլալով ու չուզելով որ զանիկայ ճ խայտա-
ռակ ընէ, միտածեց որ ծածկաբար արձակէ զանի-
20 կայ : Եւ քանի որ անիկայ աս բաները կը մտածէր,
ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեւցաւ անոր
ու ըսաւ, Յովսէփ Դաւիթի որդին, մի վախ-
նար քեզի առնել քու Մարիամ կնիկդ, մ ինչու որ

լ Դ Թագ. ի. 21; Ա Մն. գ. 13;
խ Տե՛ս Ա Մն. գ. 15, 16;
ծ Դ Թագ. իդ. 14, 15, 16; իե. 11; Բ Մն. լզ. 10, 20; Երեմ. իէ. 20; լթ. 9; ծբ. 11, 15, 28, 29, 30; Դան. ա. 2;
կ Ա Մն. գ. 17, 19;
հ Եզր. գ. 2; ե. 2; Նեեմ. ժբ. 1; Անգ. ա. 1;
ձ Ղու. ա. 27;
ղ Ղու. ա. 35;
ճ Բ Օր. իդ. 1;
մ Ղու. ա. 35;

21 անոր ներսի դին ծնածը Սուրբ Հոգիէն է : Եւ
յ որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը * Յի-
սուս դնես, ն քանզի անիկայ իր ժողովուրդը իրենց
22 մեղքերէն պիտի փրկէ : Եւ աս ամէնը եղաւ որ
կատարուի Տէրոջմէն ըսուածը մարգարէին ձեռ-
23 քովը, որ կ՚ըսէ, շ Ահա կոյսը պիտի յղանայ ու
որդի պիտի ծնանի, և անոր անունը Էմմանուէլ
պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի
24 հետ : Եւ Յովսէփ քունէն արթննալով՝ ինչպէս
որ Տէրոջը հրեշտակը իրեն հրամայեց, այնպէս
25 ըրաւ ու իր կնիկը քովն առաւ . Եւ չէր գիտեր
զանիկայ, մինչև իր ո անդրանիկ որդին ծնաւ, ու
անոր անունը Յիսուս դրաւ :

ԳԼ. Բ

1 Արևելքէն մոգերը Քրիստոսի կ՚երթան աստղի մը առաջնորդութեամբը ; 11 և երկրպագութիւն կ՚ընեն անոր, ու իրենց ընծաները կը մատուցանեն ; 14 Յովսէփ առնելով Յիսուսը ու անոր մայրը՝ Եգիպտոս կը փախչի ; 16 Հերովդէս մանր տղաքը սպաննել կու տայ . 20 անոր մահը ; 23 Յիսուս Եգիպտոսէն կը տարուի Գալիլեայի Նազարէթ քաղաքը ;

1 Ու չ երբոր Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլե-
հէմին մէջ Հերովդէս թագաւորին օրերը, ահա
2 պ արևելքէն մոգեր եկան Երուսաղէմ, Ու ըսին,
ջ Ո՞ւր տեղ է ան՝ որ Հրէաներուն թագաւոր
ծնաւ . ինչու որ մենք արևելքի մէջ ռ անոր աստղը
տեսանք, ու եկանք անոր երկրպագութիւն ընելու :
3 Ու երբոր Հերովդէս թագաւորը լսեց, խռովե-
4 ցաւ, և բոլոր Երուսաղէմ իրեն հետ . Եւ ժողո-
վելով բոլոր ս քահանայապետները ու ժողովուրդին

յ Ղու. ա. 31;
* յ՟ Փրկիչ;
ն Գործ. դ. 12; ե. 31; ժգ. 23, 38;
շ Ես. է. 14;
ո Ել. ժգ. 2; Ղու. բ. 7, 21;
չ Ղու. բ. 4, 6, 7;
պ Ծն. ժ. 30; իե. 6; Գ Թագ. դ. 30;
ջ Ղու. բ. 11;
ռ Թւ. իդ. 17; Ես. կ. 3;
ս Բ Մն. լզ. 14;

դ դպիրները , ե հարցուց անոնց՝ թէ Քրիստոսը
5 ուր պիտի ծնանի ։ Անոնք ալ իրեն ըսին ,
Հրէաստանի Բեթղեհէմին մէջ . ինչու որ ասանկ
6 գրուած է մարգարէին ձեռքովը . զ Եւ դուն Բեթ-
ղեհէմ Յուդայի երկիրը , Յուդայի իշխաննե-
րուն մէջ բնաւ պզտիկ մը չես . ինչու որ քեզ-
մէ իշխան մը պիտի ելլէ , է Որ իմ Իսրայէլ ժո-
7 ղովուրդս պիտի հովուէ ։ Ան ատենը Հերով-
դէս ծածկաբար մոգերը կանչեց , ու ստուգեց
8 անոնցմէ աստղին երևցած ատենը . Ու զանոնք
Բեթղեհէմ խրկելով՝ ըսաւ , Գացէ՛ք ստոյգը
իմացէ՛ք ան մանուկին վրայով , ու երբոր գտնէք ,
ինծի իմացուցէ՛ք , որ ես ալ գամ՝ անոր երկր-
9 պագութիւն ընեմ ։ Ու երբոր անոնք թագաւո-
րէն ան խօսքը լսեցին , գացին . և ահա ան աստղը՝
որ արևելքի մէջ տեսեր էին , անոնց առջևէն
գնաց , մինչև որ եկաւ կեցաւ մանուկին եղած
10 տեղին վրայ ։ Երբոր տեսան աստղը , շատ մեծ
11 ուրախութիւնով ուրախացան ։ Ու տունը մտա-
նելով , տեսան մանուկը իր մօրը Մարիամին
հետ , ու ինկան երկրպագութիւն ըրին անոր , և
իրենց գանձերը բանալով՝ ը ընծաներ տուին անոր ,
12 ոսկի ու կնդրուկ և զմուռս ։ Ու հրաման առնե-
լով թ երազի մէջ՝ որ նորէն Հերովդէսին չդառնան ,
ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը ։
13 Ու երբոր անկէ գացին անոնք , ահա Տէրոջը
հրեշտակը երազի մէջ երևցաւ Յովսէփին՝ ու
ըսաւ , Ելի՛ր առ մանուկը ու անոր մայրը , ու
Եգիպտոս փախիր , և հոն կեցիր մինչև որ ես
քեզի ըսեմ , քանզի Հերովդէս պիտի փնտռէ ան
14 մանուկը՝ կորսնցնելու համար ։ Ան ալ ելաւ ,
մանուկը ու անոր մայրը գիշերով առաւ , և գնաց

դ Մն. լդ. 13 ։
ե Մաղ. բ. 7 ։
զ Միք. ե. 2 ։ Յոհ. է. 42 ։
է Յայտ. բ. 27 ։
ը Սաղ. հբ. 10 ։ Եսա. կ. 6 ։
թ Գլ. ա. 20 ։

Եգիպտոս , ու մինչև Հերովդէսին մահը հոն էր .
15 Որ կատարուի Տէրոջմէն ըսուածը մարգարէին
ձեռքովը , որ կ'ըսէ , ժ Եգիպտոսէն կանչեցի իմ
որդիս ։
16 Ան ատենը երբոր տեսաւ Հերովդէս թէ խա-
բուեցաւ մոգերէն , սաստիկ սրդողեցաւ , ու խրկեց
ջարդեց Բեթղեհէմի և անոր ամէն սահմաններուն
մէջ գտնուած բոլոր տղաքը՝ երկու տարու-
նէն վար , ան ժամանակին համեմատ որ մոգերէն
17 ստուգեց ։ Ան ատենը կատարուեցաւ Երեմիա
18 մարգարէին ձեռքով ըսուածը , որ կ'ըսէ , ի Ռա-
մայի մէջ ձայն մը լսուեցաւ , ողբ , լաց ու մեծ
կոծ . Ռաքէլ կու լար իր տղոցը համար , ու չէր
ուզեր մխիթարուիլ , ինչու որ չկային ։
19 Ու երբոր Հերովդէս մեռաւ , ահա Տէրոջը
հրեշտակը Եգիպտոս երազի մէջ Յովսէփին երև-
20 ցաւ , Ու ըսաւ , Ելի՛ր առ մանուկը ու անոր
մայրը , և գնա Իսրայէլի երկիրը , քանզի մեռան
21 անոնք որ մանուկին կեանքը կը փնտռէին ։ Ան
ալ ելաւ՝ մանուկը ու անոր մայրը առաւ և եկաւ
22 Իսրայէլի երկիրը ։ Իսկ երբոր լսեց թէ Արքե-
լայոս թագաւորեց Հրէաստանի վրայ իր հօրը
Հերովդէսին տեղը , վախցաւ հոն երթալու . ու
երազի մէջ պատգամ առնելով՝ լ Գալիլեայի կող-
23 մերը գնաց . Ու եկաւ խ Նազարէթ ըսուած քա-
ղաքը բնակեցաւ , որ մարգարէներուն խօսքը կա-
տարուի՝ թէ Նազովրեցի պիտի կոչուի ։

ժ Ովս. ժա. 1 ։
ի Երեմ. լա. 15 ։
լ Գլ. դ. 13 ։ Ղու. բ. 39 ։
խ Յոհ. ա. 45 ։

ԳԼ. Գ

1 Յովհաննէսին քարոզութիւնը , պաշտօնը , վարքը և մկրտութիւնը ։ 7 Յովհաննէս կը յանդիմանէ փարիսեցիները , 13 և կը մկրտէ զՔրիստոս Յորդանանու մէջ ։

1 Այն օրերը ա Յովհաննէս Մկրտիչը եկաւ, բ ու
Հրէաստանի անապատին մէջ կը քարոզէր ,
2 Ու կ՚ըսէր , Ապաշխարեցէ՛ք , ինչու որ գ Երկնից
3 Թագաւորութիւնը մօտեցած է ։ Վասն զի ասի-
կայ ան է՛ որուն համար Եսայի մարգարէին ձեռ-
քով ըսուեցաւ , որ կ՚ըսէ , դ Անապատի մէջ
կանչողին ձայնը , ե Տէրոջը ճամբան պատրաստե-
4 ցէ՛ք , անոր շաւիղները շտկեցէ՛ք ։ Ու աս
զ Յովհաննէսը իր հանդերձը է ուղտի մազէ ,
ու իր մէջքը կաշիէ գօտի ունէր . և իր կերա-
5 կուրը ը մարախ ու թ վայրենի մեղր էր ։ ժ Այն
ատենը Երուսաղէմ և բոլոր Հրէաստան ու Յոր-
6 դանանու բոլոր կողմերը իրեն կ՚ելլէին , Ու կը
մկրտուէին իրմէն Յորդանանու մէջ , ու ի իրենց
7 մեղքերը կը խոստովանէին ։ Ու երբոր տեսաւ
փարիսեցիներէն ու սադուկեցիներէն շատերը իր
մկրտութեանը եկած , ըսաւ անոնց , լ Իժերու
ծնունդներ , ո՞վ իմացուց ձեզի խ գալու բար-
8 կութենէն փախչիլ ։ Ուրեմն ապաշխարութեան
9 արժանաւոր պտուղ բերէք ։ Ու մի՛ խոր-
հիք դուք ձեր ներսի դին ըսել թէ ծ Մենք մեզի
հայր՝ Աբրահամը ունինք . քանզի կ՚ըսեմ ձեզի ,
որ Աստուած կարող է աս քարերէս Աբրահամին
10 որդիներ հանել ։ Ալ հիմա կացինը ծառերուն
արմատին քովը կը դրուի . ուստի կ ամէն ծառ
որ բարի պտուղ չբերեր , կը կտրուի ու կրակը

ա Մար. ա. 4, 15 ։ Ղու. գ. 2, 3 ։ Յոհ. ա. 28 ։
բ Յես. ժգ. 10 ։
գ Դան. բ. 44 ։ Գլ. դ. 17 ։ ժ. 7 ։
դ Ես. խ. 3 ։ Մար. ա. 3 ։ Ղու. գ. 4 ։ Յոհ. ա. 23 ։
ե Ղու. ա. 76 ։
զ Մար. ա. 6 ։
է դ Թագ. ա. 8 ։ Զաք. ժգ. 4 ։
ը Ղև. ժա. 22 ։
թ ա Թագ. ժդ. 25, 26 ։
ժ Մար. ա. 5 ։ Ղու. գ. 7 ։ Գոր. ժթ. 4 ։
ի Գոր. ժթ. 18 ։
լ Գլ. ժբ. 34 ։ իգ. 33 ։ Ղու. գ. 7, 8, 9 ։
խ Հռով. ե. 9 ։ ա Թես. ա. 10 ։
ծ Յոհ. ը. 33, 39 ։ Գոր. ժգ. 26 ։ Հռով. դ. 1, 11, 16 ։
կ Գլ. է. 19 ։ Ղու. ժգ. 7, 9 ։ Յոհ. ժե. 6 ։

11 կը ձգուի ։ հ Ես ձեզ ջրով կը մկրտեմ ապաշ-
խարութեան համար , բայց իմ ետեւէս եկողը ինծ-
մէ զօրաւոր է , ու ես անոր կօշիկները կրելու ար-
ժանի չեմ . ձ Անիկայ ձեզ պիտի մկրտէ Հոգւով
12 Սրբով ու կրակով . ղ Որուն հեծանոցը իր ձեռքն
է , և իր կալը պիտի մաքրէ ու իր ցորենը համ-
բարը պիտի ժողվէ , և ճ յարդը չմարելու կրա-
կով պիտի այրէ ։
13 մ Այն ատենը Յիսուս յ Գալիլեայէն Յորդանան
14 եկաւ Յովհաննէսին , որ անկէ մկրտուի ։ Ու
Յովհաննէս կ՚արգիլէր անիկայ ու կ՚ըսէր , Ինծի
պէտք է որ քեզմէ մկրտուիմ , ու դուն ինծի՞ կու
15 գաս ։ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ ա-
նոր , Թո՛ղ տուր հիմա , ինչու որ այսպէս կը վա-
յելէ մեզի որ բոլոր արդարութիւնը կատարենք .
16 ետքը թող տուաւ անոր ։ ն Ու երբոր Յիսուս
մկրտուեցաւ , շուտ մը ջուրէն դուրս ելաւ , և
ահա երկինքը անոր բացուեցաւ , ու տեսաւ շ Աս-
տուծոյ Հոգին որ աղաւնիի պէս կ՚իջնէր , ու կու
17 գար իր վրայ ։ ո Ու ահա երկինքէն ձայն մը եկաւ
որ կ՚ըսէր , չ Ասիկա է իմ սիրելի Որդիս , որուն
հաւներ եմ ։

հ Մար. ա. 8 ։ Ղու. գ. 16 ։ Յոհ. ա. 15, 26, 33 ։ Գոր. ա. 5 ։ ժա. 16 ։ ժթ. 4 ։
ձ Ես. դ. 4 ։ խդ. 3 ։ Մաղ. գ. 2 ։ Գոր. բ. 3, 4 ։ ա Կոր. ժբ. 13 ։
ղ Տես Մաղ. գ. 3 ։
ճ Մաղ. դ. 1 ։ Գլ. ժգ. 30 ։
մ Մար. ա. 9 ։ Ղու. գ. 21 ։
յ Գլ. բ. 22 ։
ն Մար. ա. 10 ։
շ Ես. ժա. 2 ։ խբ. 1 ։ Ղու. գ. 22 ։ Յոհ. ա. 32, 33 ։
ո Յոհ. ժբ. 28 ։
չ Սաղ. բ. 7 ։ Ես. խբ. 1 ։ Գլ. ժբ. 18 ։ ժէ. 5 ։ Մար. ա. 11 ։ Ղու. թ. 35 ։ Եփե. ա. 6 ։ Կող. ա. 13 ։ բ Պետ. ա. 17 ։

ԳԼ. Դ

1 Քրիստոս ծոմ կը պահէ ու կը փորձուի ։ 11 Հրեշտակները անոր սպասաւորութիւն կ՚ընեն ։ 13 Քրիստոս Կափառնայումի մէջ կը բնակի . 17 կը սկսի քարոզել . 18 կը կանչէ Պետրոսը ու Անդրէասը , 21 Յակոբոսը և Յովհաննէսը , 23 ու կը բժշկէ բոլոր հիւանդները ։

1 Այն ատենը ^ա Յիսուս անապատը տարուեցաւ Սուրբ
2 ^բ Հոգիէն՝ որ Սատանայէն փորձուի ։ Եւ քառա-
սուն ցորեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելէն ետքը
անօթեցաւ ։
3 Եւ փորձողը անոր մօտենալով ըսաւ, Թէ որ
դուն Աստուծոյ Որդին ես, ըսէ որ աս քարերը հաց
4 ըլլան ։ Անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ,
Գրուած է թէ ^գ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ,
հապա ան ամէն խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ ։
5 Այն ատենը Սատանան առաւ տարաւ զանիկայ
^դ սուրբ քաղաքը, և կայնեցուց զանիկայ տաճարին
6 աշտարակին վրայ, Ու ըսաւ անոր, Թէ որ դուն
Աստուծոյ Որդին ես, քեզ ասկէ վար ձգէ, ինչու որ
գրուած է թէ ^ե Իր հրեշտակներուն պիտի ապսպրէ
քեզի համար, ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն
7 քեզ, որ չըլլայ թէ ոտքդ քարի զարնես ։ Յիսուս
ըսաւ անոր, Դարձեալ գրուած է թէ ^զ Քու Տէր
Աստուածդ չփորձես ։
8 Սատանան նորէն առաւ հանեց զանիկայ խիստ
բարձր լեռան մը վրայ, և ցուցուց անոր աշխարհի
բոլոր թագաւորութիւնները ու անոնց փառքը ։
9 Ու ըսաւ անոր, Ասոնք ամէնը քեզի կու տամ,
10 թէ որ իյնաս՝ ինծի երկրպագութիւն ընես ։ Այն
ատենը Յիսուս ըսաւ անոր, [Ետեւս] գնա՛ Սատա-
նայ, ինչու որ գրուած է թէ ^է Քու Տէր Ա-
ստուծոյդ երկրպագութիւն ընես, ու միայն զա-
11 նիկայ պաշտես ։ Այն ատենը Սատանան զանիկայ
թողուց ։ Եւ ահա ^ը հրեշտակներ եկան ու անոր
սպասաւորութիւն կ'ընէին ։

ա Մար. ա. 12 ։ Ղու. դ. 1 ։
բ Տես գ Թագ. ժը. 12 ։ Եզեկ. գ. 14 ։ ը. 3 ։ ժա. 1, 24 ։ խ. 2 ։ խգ. 5 ։ Գործ. ը. 39 ։
գ բ Օր. ը. 3 ։
դ Նեեմ. ժա. 1, 18 ։ Ես. խբ. 2 ։ ծբ. 1 ։ Գլ. իէ. 53 ։ Յայտ. ժա. 2 ։
ե Սաղ. ղա. 11, 12 ։
զ բ Օր. զ. 16 ։
է բ Օր. զ. 13 ։ ժ. 20 ։ Յես. իդ. 14 ։ ա Թագ. է. 3 ։
ը Եբր. ա. 14 ։

12 Եւ ^թ երբոր լսեց Յիսուս թէ Յովհաննէս մատ-
13 նուեցաւ, ելաւ գնաց Գալիլեա ։ Ու ձգելով
Նազարէթը, եկաւ բնակեցաւ Կափառնայում
ծովեզերեայ քաղաքը, Զաբուղոնի ու Նեփթա-
14 ղիմի սահմաններուն մէջ ։ Որ կատարուի Եսայի
15 մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, ^ժ Զաբու-
ղոնի երկիրը ու Նեփթաղիմի երկիրը, ծովու
ճամբով Յորդանանու անդին կողմը, Հեթանո-
16 սաց Գալիլեան ։ ^ի Խաւարի մէջ նստող ժողո-
վուրդը մեծ լոյս տեսաւ, և լոյս ծագեցաւ անոնց՝
որ մահուան երկրին ու շուքին մէջ կը նստէին ։
17 ^լ Անկէ ետեւ Յիսուս սկսաւ քարոզել ու ըսել,
^խ Ապաշխարեցէք, ինչու որ երկնից թագաւորու-
թիւնը մօտ է ։
18 ^ծ Երբոր Յիսուս Գալիլեացւոց ծովուն քովէն
կը պտըտէր, տեսաւ երկու եղբայրներ՝ ^կ Պետրոս
կոչուած Սիմոնը և անոր եղբայրը Անդրէասը՝ որ
19 ծովը ուռկան կը ձգէին, ինչու որ ձկնորս էին ։ Եւ
ըսաւ անոնց, Իմ ետեւէս եկէք, ու ^հ ձեզ մարդոց
20 որսորդ ընեմ ։ ^ձ Անոնք ալ շուտ մը ուռկանները
21 թողուցին ու անոր ետեւէն գացին ։ ^ղ Եւ անկէ
յառաջ երթալով՝ տեսաւ ուրիշ երկու եղբայրներ,
Զեբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յով-
հաննէսը նաւին մէջ իրենց հօրը Զեբեդէոսին
հետ, երբ իրենց ուռկանները կը կարկըտէին ։ Ու
22 կանչեց զանոնք ։ Անոնք ալ շուտ մը նաւը ու
հայրերնին թողուցին, ու անոր ետեւէն գացին ։
23 Եւ Յիսուս բոլոր Գալիլեան պտըտելով, ^ճ կը

թ Մար. ա. 14 ։ Ղու. գ. 20 ։ դ. 14, 31 ։ Յօհ. դ. 43 ։
ժ Ես. թ. 1, 2 ։
ի Ես. խբ. 7 ։ Ղու. բ. 32 ։
լ Մար. ա. 14, 15 ։
խ Գլ. գ. 2 ։ ժ. 7 ։
ծ Մար. ա. 16, 17, 18 ։ Ղու. ե. 2 ։
կ Յօհ. ա. 42 ։
հ Ղու. ե. 10, 11 ։
ձ Մար. ժ. 28 ։ Ղու. ժը. 28 ։
ղ Մար. ա. 19 ։ Ղու. ե. 10 ։
ճ Գլ. թ. 35 ։ Մար. ա. 21, 39 ։ Ղու. դ. 15, 45 ։

սորվեցընէր անոնց ժողովարաններուն մէջ , և
ճ արքայութեան աւետարանը կը քարոզէր , ու
ձ ժողովուրդին մէջի ամէն կերպ հիւանդութիւնները
24 ու ամէն կերպ ցաւերը կը բժշկէր : Եւ անոր
համբաւը բոլոր Սուրիա տարածուեցաւ , և բերին
անոր՝ բոլոր հիւանդները որ կերպ կերպ ցաւերով
ու տանջանքներով կը նեղուէին , և դիւահարները
ու լուսնոտները և անդամալոյծները . ու բժշկեց
25 զանոնք : Եւ ն շատ ժողովուրդներ անոր ետևէն
կ'երթային՝ Գալիլեայէն ու Դեկապոլիսէն և
Երուսաղէմէն ու Հրէաստանէն և Յորդանանու
անդիի կողմէն :

ԳԼ. Ե

1 Քրիստոս կը սկսի իր քարոզութիւնը լեռանը վրայ , 3 և կ'իմացընէ թէ որոնք են երանելիները . 13 իր աշակերտները կ'անուանէ երկրի աղ , 14 աշխարհի լոյս , լեռան վրայ կեցած քաղաք . 17 կը յայտնէ թէ ինքը եկաւ օրէնքը կատարելու . 21 կը բացատրէ թէ ի՛նչ է սպանութիւն ընելը , 27 շնութիւն ընելը , 33 երդում ընելը . 38 կը յորդորէ չարին հակառակ չկենալ , 44 մինչև անգամ թշնամիները սիրել , 48 և կատարեալ ըլլալու ջանք ընել :

1 Եւ տեսնելով ժողովուրդները՝ ա լեռը ելաւ . ու
երբոր նստաւ հոն , իր աշակերտները քովը
2 գացին . Եւ իր բերանը բանալով կը սորվեցընէր
անոնց ու կ'ըսէր .
3 բ Երանի հոգւով աղքատներուն , ինչու որ
4 երկնից թագաւորութիւնը անոնցն է : գ Երանի
սգաւորներուն , ինչու որ անոնք պիտի մխիթա-
5 րուին : դ Երանի հեզերուն , ինչու որ ե անոնք պի-
6 տի ժառանգեն երկիրը : Երանի անոնց՝ որ անօթի

ճ Գլ . իդ . 14 ; Մար . ա . 14 ;
ձ Մար . ա . 34 ;
ն Մար . գ . 7 ;

ա Մար . գ . 13 , 20 ;
բ Ղու . զ . 20 ; Տես Սաղ . ծա . 17 ; Առակ . ժզ . 19 ; իթ . 23 ; Եսա . ծէ . 15 ; կզ . 2 ;
գ Եսա . կա . 2 , 3 ; Ղու . զ . 21 ; Յով . ժզ . 20 ; բ Կոր . ա . 7 ; Յայտ . իա . 4 ;
դ Սաղ . լէ . 11 ;
ե Տես Հռով . դ . 13 ;

ու ծարաւ են արդարութեան , ինչու որ զ անոնք
7 պիտի կշտանան : է Երանի ողորմածներուն , ինչու
8 որ անոնք ողորմութիւն պիտի գտնեն : ը Երանի
անոնց՝ որ սրտով մաքուր են , ինչու որ թ անոնք
9 պիտի տեսնեն զԱստուած : Երանի խաղաղութիւն
ընողներուն , ինչու որ անոնք Աստուծոյ որդիներ
10 պիտի կոչուին : ժ Երանի անոնց՝ որ հալածուած
են արդարութեան համար , ինչու որ երկնից թա-
11 գաւորութիւնը անոնցն է : ի Երանի է ձեզի՝ երբոր
կը նախատեն ձեզ ու կը հալածեն , և սուտ տեղը
ամէն կերպ լ գէշ խօսքեր կը խօսին վրանիդ ինծի
12 համար . խ Ցնծացէք և ուրախ եղէք , ինչու որ
ձեր վարձքը շատ է երկինքը . քանզի ծ ասանկ կերպով
հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները :
13 Դուք էք երկրի աղը . կ հապա թէ որ աղը իր
համը կորսնցընէ , ինքը ինչո՞վ պիտի աղուի .
անկէ ետև բանի մը չգար , միայն թէ դուրս
ձգուելու և մարդոց ոտքին տակը կոխուելու :
14 հ Դուք էք աշխարհի լոյսը . քաղաք մը՝ որ լեռան
15 վրայ կեցած է , չկրնար պահուիլ : Ու ձ ճրագը
չեն վառեր և դներ գրուանի տակ , հապա աշտա-
նակի վրայ , և լոյս կու տայ բոլոր տանը մէջ
16 եղողներուն : Անանկ թող լուսաւորէ ձեր լոյսը
մարդոց առջին , ղ որ տեսնեն ձեր բարի գործքե-

զ Եսա . ծե . 1 ; կե . 13 ;
է Սաղ . խա . 1 ; Գլ . զ . 14 ; Մար . ժա . 25 ; բ Տիմ . ա . 16 ; Եբր . զ . 10 ; Յակ . բ . 13 ;
ը Սաղ . ժե . 2 ; իդ . 4 ; Եբր . ժբ . 14 ;
թ ա Կոր . ժգ . 12 ; ա Յով . գ . 2 , 3 ;
ժ բ Կոր . դ . 17 ; բ Տիմ . բ . 12 ; ա Պետ . գ . 14 ;
ի Ղու . զ . 22 ;
լ ա Պետ . դ . 14 ;
խ Ղու . զ . 23 ; Գործ . ե . 41 ; Հռով . ե . 3 ; Յակ . ա . 2 ; ա Պետ . դ . 13 ;
ծ Նեեմ . թ . 26 ; բ Մն . լզ . 16 ; Գլ . իգ . 34 , 37 ; Գործ . է . 52 ; ա Թես . բ . 15 ;
կ Մար . թ . 49 ; Ղու . ժդ . 34 , 35 ;
հ Առակ . դ . 18 ; Փիլ . բ . 15 ;
ձ Մար . դ . 21 ; Ղու . ը . 16 ; ժա . 33 ;
ղ ա Պետ . բ . 12 ;

րը , ու [ճ] փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն
է :
17 [մ] Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մար-
գարէները աւրելու . չեկայ աւրելու , հապա կա-
18 տարելու : Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի ,
[յ] Մինչեւ որ երկինք ու երկիր անցնին , օրէնքէն յովտ
մը կամ նշանագիր մը պիտի չանցնի , մինչեւ որ
19 բոլորն ալ կատարուի : [ն] Ուստի ով որ այս ամենա-
փոքր պատուիրանքներուն մէկը աւրէ , ու մարդոց
անանկ սորվեցնէ , անիկայ ամենափոքր պիտի
կոչուի երկնից թագաւորութեանը մէջ . բայց ով
որ ընէ եւ սորվեցնէ , անիկայ մեծ պիտի կոչուի
20 երկնից թագաւորութեանը մէջ : Քանզի կ'ըսեմ
ձեզի , [շ] Եթէ որ ձեր արդարութիւնը Դպիրներուն
ու փարիսեցիներուն արդարութենէն աւելի չըլլայ ,
բնաւ պիտի չմտնէք երկնից թագաւորութիւնը :
21 Լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն , [ո] Սպա-
նութիւն մի՛ ըներ . եւ ով որ սպանութիւն ընէ ,
22 դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ . Բայց ես
ձեզի կ'ըսեմ , [չ] Ով որ իր եղբօրը պարապ տեղը
նեղանայ , դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ .
եւ ով որ իր եղբօրը Յիմար ըսէ , ատեանի պար-
տաւոր պիտի ըլլայ . եւ ով որ իր եղբօրը Անմիտ
ըսէ , դժոխքի կրակին պարտաւոր պիտի ըլլայ :
23 Ուրեմն [պ] թէ որ քու ընծադ սեղանին վրայ բերես ,
ու հոն միտքդ գայ թէ քու եղբայրդ քեզի դէմ
24 բան մը ունի , [ջ] Հոն ձգէ քու ընծադ սեղանին
առջեւը , եւ գնա առաջ եղբօրդ հետ հաշտուէ , ու
25 ետքը եկուր որ քու ընծադ մատուցանես : [ռ] Քու

ճ Յոհ. ժե. 8 ; ա Կոր. ժգ. 25 :
մ Հռովմ. գ. 31 ; ժ. 4 ; Գաղ. գ. 24 :
յ Ղու. ժզ. 17 :
ն Յակ. բ. 10 :
շ Հռովմ. թ. 31 ; ժ. 3 :
ո Եւ. ի. 13 ; բՕր. ե. 17 :
չ ա Յոհ. գ. 15 :
պ Գէ. ը. 4 ; իգ. 19 :
ջ Գէ. ժը. 19 ; ա Տիմ. բ. 8 ; ա Պետ. գ. 7 :
ռ Առակ. իե. 8 ; Ղու. ժբ. 58, 59 :

ոսոխիդ հետ շուտով միաբանէ , քանի որ անոր
հետ ճամբուն մէջն ես . չըլլայ որ քու ոսոխդ քեզ
դատաւորին մատնէ , եւ դատաւորը դահիճին , եւ
26 բանտը ձգուիս : Ճշմարիտ կ'ըսեմ քեզի , պիտի
չելլես անկէ , մինչեւ որ վերջի նաքարակիտը չվճա-
րես :
27 Լսեր էք որ ըսուեցաւ , [ս] Շնութիւն մի՛ ըներ :
28 Բայց ես ձեզի կ'ըսեմ , [վ] Ով որ կնիկ մարդու կը
նայի անոր ցանկանալու համար , ալ անիկայ իր
29 սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ : [տ] Արդ թէ
որ քու աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ , [ր] հանէ
զանիկայ ու քեզմէ ձգէ , ինչու որ աղէկ է քեզի որ
անդամներուդ մէկը կորսուի , ու քու բոլոր մար-
30 մինդ դժոխքը չձգուի : Եւ թէ որ աջ ձեռքդ քեզ
կը գայթակղեցնէ , կտրէ զանիկայ ու քեզմէ
ձգէ , ինչու որ աղէկ է քեզի որ անդամներուդ մէ-
կը կորսուի , ու քու բոլոր մարմինդ դժոխքը
31 չձգուի : Նաեւ ըսուեցաւ թէ [ց] Ով որ իր կնիկը
կ'արձակէ , թող անոր արձակման թուղթ տայ .
32 Բայց ես ձեզի կ'ըսեմ թէ [ւ] Ով որ իր կնիկը
կ'արձակէ առանց պոռնկութեան պատճառի , ինքը
պատճառ կ'ըլլայ անոր շնութիւն ընելուն , եւ ով
որ այն արձակուածը առնէ , շնութիւն կը գործէ :
33 Դարձեալ լսեր էք որ [փ] ըսուեցաւ առաջիններուն ,
[ք] Սուտ երդում մի՛ ըներ , հապա [օ] ըրած երդում-
34 ներդ վճարէ Տէրոջը : Բայց ես ձեզի կ'ըսեմ ,

ս Եւ. ի. 14 ; բՕր. ե. 18 :
վ Յոբ. լա. 1 ; Առակ. զ. 25 ; Տես Ծն. լը. 2 ; բԹագ. ժա. 2 :
տ Գէ. ժը. 8, 9 ; Մար. թ. 46 :
ր Տես գլ. ժթ. 12 ; Հռովմ. ը. 13 ; ա Կոր. թ. 27 ; Կող. գ. 5 :
ց բՕր. իդ. 1 ; Երեմ. գ. 1 ; Տես գլ. ժթ. 3 ; Մար. ժ. 2 , ևն :
ւ Գէ. ժթ. 9 ; Ղու. ժզ. 18 ; Հռովմ. է. 3 ; ա Կոր. է. 10, 11 :
փ Գէ. իգ. 16 :
ք Եւ. ի. 7 ; Ղև. ժթ. 12 ; Թուո. լ. 2 ; բՕր. ե. 11 ;
օ բՕր. իգ. 23 :

ֆ Ամենևին երդում մի՛ ընէք , ո՛չ երկինքի վրայ՝ որ
35 ա Աստուծոյ աթոռն է , Ու ո՛չ երկրի վրայ՝ որ
անոր ոտքերուն պատուանդանն է , ո՛չ ալ Երու-
սաղէմի վրայ՝ որ բ մեծ Թագաւորին քաղաքն է .
36 Ու ո՛չ քու գլխուդ վրայ երդում ընես , ինչու որ
չես կրնար մէկ մազ մը ճերմըկցընել կամ սեւցը-
37 նել ։ գ Հապա ձեր խօսքը ըլլայ այոն այո՛ , և
ոչը՝ ո՛չ . ու ասկէ աւելին չարէն յառաջ կու գայ ։
38 Լսեր էք որ ըսուեցաւ , դ Աչքի տեղ աչք , ու
39 ակռայի տեղ ակռայ ։ Բայց ես ձեզի կ'ըսեմ ,
ե Չարին հակառակ մի՛ կենաք , զ Հապա թէ որ
մէկը ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ՝ դարձուր ա-
40 նոր միւսն ալ ։ Ու մէկը որ կ'ուզէ քեզի հետ
դատ վարել ու քու շապիկդ առնել , թո՛ղ տուր
41 անոր քու վերարկուդ ալ ։ Ու է ո՛վ որ քեզ պա-
հակ բռնէ ու մղոն մը ճամբայ քշէ , գնա անոր
42 հետ երկուք ։ Քեզմէ ուզողին տուր , ու ը երես
մի՛ դարձըներ անկէ՝ որ կ'ուզէ քեզմէ փոխ առնել ։
43 Լսեր էք որ ըսուեցաւ , թ Քու ընկերդ սիրես ու
44 ժ թշնամիդ ատես ։ Բայց ես ձեզի կ'ըսեմ , ի Սի-
րեցէք ձեր թշնամիները , օրհնեցէք ձեզ անիծող-
ները , բարի ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն , և
լ աղօթք ըրէք անոնց համար՝ որ ձեզ կը չարչըր-
45 կեն ու կը հալածեն . Որ ձեր երկնաւոր Հօրը

ֆ Գլ . իգ . 16 , 18 , 22 ; Ցակ . ե . 12 ;
ա Ես . կզ . 1 ;
բ Սաղ . խը . 2 ; ձէ . 3 ;
գ Կող . դ . 6 ; Ցակ . ե . 12 ;
դ Ել . իա . 24 ; Ղև . իդ . 20 ; բՕր . ժթ . 21 ;
ե Առակ . ի . 22 ; իդ . 29 ; Ղու . զ . 29 ; Հռով . ժբ . 17 , 19 ; ա Կոր . զ . 7 ; ա Թես . ե . 15 ; ա Պետ . գ . 9 ;
զ Ես . ծ . 6 ; Ողբ . գ . 30 ;
է Գլ . իէ . 32 ; Մար . ժե . 21 ;
ը բՕր . ժե . 8 , 10 ; Ղու . զ . 30 , 35 ;
թ Ղև . ժթ . 18 ;
ժ բՕր . իգ . 6 ; Սաղ . խա . 10 ;
ի Ղու . զ . 27 , 35 ; Հռով . ժբ . 14 , 20 ;
լ Ղու . իգ . 34 ; Գոր . է . 59 ; ա Կոր . դ . 12 , 13 ; ա Պետ . բ . 23 ; գ . 9 ;

որդիքը ըլլաք . ինչու որ խ իր արևը կը ծագեցընէ
թէ՛ չարերուն և թէ՛ բարիներուն վրայ , և անձրև
կը ղրկէ թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն
46 վրայ ։ ծ Վասն զի թէ որ դուք ձեզ սիրողները
սիրէք , ի՞նչ վարձք կ'ունենաք . չէ՞ որ մաքսաւոր-
47 ներն ալ նոյնը կ'ընեն ։ Ու թէ որ միայն ձեր
եղբայրներուն բարև տաք , ի՞նչ աւելի կ'ընէք
ուրիշներէն . չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը կ'ը-
48 նեն ։ կ Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ հ ինչպէս որ
ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է ։

ԳԼ . Զ

1 Քրիստոս կը շարունակէ իր քարոզութիւնը լերանը վրայ , ու կը խօսի ողորմութեան , 5 աղօթք ընելու , 14 մեր եղբարցը յանցանքը ներելու , 16 ծոմ պահելու , 19 մեր գանձը ուր պահելու , 24 Աստուծոյ և մամոնայի ծառայութիւն ընելու վրայով . 25 կը յորդորէ որ աշխարհային բաներու համար հոգ չընենք , 33 հապա Աստուծոյ թագաւորութիւնը խնդրենք ։

1 Զգո՛յշ եղէք որ ձեր ա ողորմութիւնը մարդոց
առջևը չընէք՝ անոնց երևնալու համար , եթէ
ոչ՝ վարձք չէք առներ ձեր Հօրմէն որ երկինքն է ։
2 Ուստի բ երբոր ողորմութիւն կ'ընես , առջևդ փող
մի՛ հնչեցըներ , ինչպէս որ կեղծաւորները ժողո-
վարաններուն ու փողոցներուն մէջ կ'ընեն , որ
մարդոցմէ փառաւորուին . ճշմարիտ կ'ըսեմ ձեզի ,
3 անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան ։ Իսկ դուն
երբոր ողորմութիւն կ'ընես , ձախ ձեռքդ թող
4 չգիտնայ աջ ձեռքիդ ինչ գործելը . Որ քու ողոր-
մութիւնդ գաղտուկ ըլլայ . և քու Հայրդ որ
գաղտուկը կը տեսնէ , գ քեզի յայտնապէս հատու-
ցում պիտի ընէ ։

խ Յոբ . իե . 3 ;
ծ Ղու . զ . 32 ;
կ Ծն . ժէ . 1 ; Ղև . ժա . 44 ; ժթ . 2 ; Ղու . զ . 36 ; Կող . ա . 28 ; դ . 12 ; Յակ . ա . 4 ; ա Պետ . ա . 15 , 16 ;
հ Եփ . ե . 1 ;

ա բՕր . իդ . 13 ; Սաղ . ճժբ . 9 ; Դան . դ . 27 ; բ Կոր . թ . 9 , 10 ;
բ Հռով . ժբ . 8 ;
գ Ղու . ժդ . 14 ;

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

5 Ու երբոր աղօթք կ'ընես, կեղծաւորներուն
նման չըլլաս, որ կը սիրեն ժողովարաններուն մէջ
ու հրապարակներուն անկիւնները կայնելով աղօթք
ընել, որ մարդոց երեւնան. Ճշմարիտ կ'ըսեմ
6 ձեզի, անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան: Իսկ
դուն երբոր աղօթք կ'ընես, [դ]մտի՛ր քու ներքին
սենեակդ ու դուռդ գոցէ, և աղօթք ըրէ քու
Հօրդ՝ որ գաղտուկ տեղ կը գտնուի. և քու
Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնա-
7 պէս հատուցում պիտի ընէ: Ու երբոր աղօթք
կ'ընէք, [ե]հեթանոսներուն պէս շատախօս մի՛
ըլլաք. [զ]Վասն զի կը կարծեն թէ իրենց շատ
8 խօսելուն համար պիտի լսուին: Ուրեմն անոնց
չնմանիք, ինչու որ ձեր Հայրը ձեզի պէտք եղածը
9 գիտէ՝ դեռ դուք իրմէ չխնդրած: Ասոր համար
աղօթք ըրէք դուք.
[է]Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես, քու անունդ
10 սուրբ ըլլայ. Քու թագաւորութիւնդ գայ.
[ը]Քու կամքդ ըլլայ, [թ]ինչպէս որ երկինքը՝ անանկ
11 ալ երկրիս վրայ. [ժ]Մեր ամէն աւուր հացը
12 այսօր մեզի տուր. Ու [ի]մեզի ներէ մեր պարտ-
քերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտ-
13 տականներուն. Ու [լ]մեզ փորձութեան մի՛ տա-
նիր. Հապա [խ]չարէն մեզ ազատէ. [ծ]Ինչու որ
քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու
փառքը յաւիտեանս: Ամէն:
14 [կ]Վասն զի թէ որ դուք ներէք մարդոց իրենց

դ Դ Թագ. դ. 33:
ե Ժող. ե. 2:
զ Գ Թագ. ժը. 26, 29:
է Ղուկ. ժա. 2:
ը Գլ. իզ. 39, 42: Գործ. իա. 14:
թ Սաղ. ճգ. 20, 21:
ժ Տես Յոբ. իգ. 12: Առակ. լ. 8:
ի Գլ. ժը. 21:
լ Գլ. իզ. 41: Ղուկ. իբ. 40, 46: Ա Կոր. ժ. 13: Բ Պետ. բ. 9: Յայտ. գ. 10:
խ Յօհ. ժէ. 15:
ծ Ա Մն. իթ. 11:
կ Մար. ժա. 25, 26: Եփե. դ. 32: Կող. գ. 13:

յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի
15 կը ներէ. Հապա [հ]թէ որ դուք չներէք մարդոց
իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի չներեր
ձեր յանցանքները:
16 Ու [ձ]երբոր ծոմ կը պահէք, կեղծաւորներուն
պէս տրտումերես մի՛ ըլլաք. քանզի իրենց
երեսները կ'աւրեն որ մարդոց երեւնան թէ ծոմ
կը պահեն. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք իրենց
17 վարձքը առած կ'ըլլան: Բայց դուն երբոր ծոմ
18 կը պահես, [ղ]գլուխդ օծէ ու երեսդ լուա, Որ
մարդոց ծոմ պահողի պէս չերեւնաս, հապա քու
Հօրդ՝ որ գաղտուկ տեղ կը գտնուի, և քու
Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, *քեզի հատու-
ցում պիտի ընէ:
19 [ճ]Երկրի վրայ ձեզի գանձեր մի՛ դիզէք, ուր որ
ցեցը ու ժանկը կ'ապականեն, և ուր գողերը
20 պատ կը ծակեն ու կը գողնան. [մ]Հապա ձեզի
գանձեր դիզեցէք երկինքը, ուր որ ո՛չ ցեցը և
ոչ ժանկը կ'ապականէ, ու ոչ գողերը պատ կը
21 ծակեն և կը գողնան: Քանզի ձեր գանձը ուր
22 որ է, սրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ: [յ]Մար-
մինին ճրագը աչքն է. հապա թէ որ քու աչքդ
պարզ է, բոլոր մարմինդ լուսաւոր կ'ըլլայ.
23 Բայց թէ որ քու աչքդ վատ է, բոլոր մարմինդ
մութ կ'ըլլայ. ուրեմն թէ որ քու մէջդ եղած
լոյսը խաւար է, այն խաւարը որչափ է:
24 [ն]Մարդ մը չկրնար երկու տէրոջ ծառայութիւն
ընել. ինչու որ կամ մէկը պիտի ատէ և միւսը
սիրէ, կամ † մէկուն պիտի յարի՝ և միւսը ար-

հ Գլ. ժը. 35: Յակ. բ. 13:
ձ Ես. ծը. 5:
ղ Հռութ. գ. 3: Դան. ժ. 3:
* Ոմանք՝ քեզի յայտնապէս
ճ Առակ. իգ. 4: Ա Տիմ. զ. 17: Եբր. ժգ. 5: Յակ. ե. 1, եւն:
մ Գլ. ժթ. 21: Ղուկ. ժբ. 33, 34: ժը. 22: Ա Տիմ. զ. 19: Ա Պետ. ա. 4:
յ Ղուկ. ժա. 34, 36:
ն Ղուկ. ժզ. 13:
† Կամ՝ մէկը պիտի մեծարէ

համարհէ ։ ն Չէք կրնար ծառայել Աստուծոյ ու
25 մամոնայի ։ Ուստի կ'ըսեմ ձեզի , ո Հոգ մի՛
ընէք ձեր կեանքին համար՝ թէ ինչ պիտի ուտէք ,
կամ ինչ պիտի խմէք ․ ո՛չ ալ ձեր մարմիննե-
րուն համար , թէ ինչ պիտի հագնիք ․ չէ՞ որ
կեանքը կերակուրէն աւելի է , ու մարմինը հա-
26 գուստէն ։ չ Նայեցէք երկինքի թռչուններուն ,
որ ո՛չ կը սերմանեն և ո՛չ կը հնձեն և ո՛չ ամբարի
մէջ կը ժողվեն , ու ձեր երկնաւոր Հայրը կը
կերակրէ զանոնք ․ չէ՞ որ դուք անոնցմէ աւելի լաւ
27 էք ։ Ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր
28 հասակին վրայ կանգուն մը աւելցընել ։ Ու հա-
գուստի համար ինչո՞ւ հոգ կ'ընէք ․ նայեցէք դաշ-
տի շուշաններուն՝ ինչպէս կ'աճին ․ ո՛չ կ'աշխա-
29 տին և ո՛չ կը մանեն ․ Բայց ձեզի կ'ըսեմ որ
Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ
30 անոնցմէ մէկուն պէս չհագուեցաւ ։ Ուստի թէ
որ դաշտի խոտը որ այսօր կայ և վաղը փուռը
կը ձգուի , Աստուած անանկ կը հագուեցընէ ,
հապա ո՛րչափ աւելի ձեզ՝ թերահաւատներ ։
31 Ուրեմն հոգ մի՛ ընէք՝ ըսելով , Ի՞նչ պիտի ու-
տենք , կամ Ի՞նչ պիտի խմենք , կամ Ի՞նչ պի-
32 տի հագնինք ․ (Ինչու որ ատ բոլոր բաները հե-
թանոսները կը խնդրեն ․) վասն զի ձեր երկնաւոր
Հայրը գիտէ՝ թէ ատ բոլոր բաները ձեզի պէտք
33 են ։ Բայց պ առաջ խնդրեցէք Աստուծոյ թագա-
ւորութիւնը և անոր արդարութիւնը , ու ատ
34 բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուի ։ Ուստի
վաղուան համար հոգ մի՛ ընէք , ինչու որ վաղուան

ն Գաղ․ ա․ 10 ։ ա Տիմ․ զ․ 17 ։ Յակ․ դ․ 4 ։ ա Յոհ․ բ․ 15 ։
ո Սաղ․ ծե․ 22 ։ Ղու․ ժբ․ 22, 23 ։ Փիլ․ դ․ 6 ։ ա Պետ․ ե․ 7 ։
չ Յոբ․ լը․ 41 ։ Սաղ․ ճխէ․ 9 ։ Ղու․ ժբ․ 24, ևն ։
պ Տես գ Թագ․ գ․ 13 ։ Սաղ․ լէ․ 25 ։ Մար․ ժ․ 30 ։ Ղու․ ժբ․ 31 ։ ա Տիմ․ դ․ 8 ։

օրը իրեն համար հոգ պիտի ընէ ․ հերիք է օրուան
իր նեղութիւնը ։

ԳԼ․ Է

1 Քրիստոս իր քարոզութիւնը վերջացընելով՝ կը յանդիմանէ անխոհեմաբար դատողութիւն ընելը ․ 6 կ'արգիլէ սուրբ բաները շուներուն տալը ․ 7 կը յորդորէ աղօթք ընել , 13 նեղ դռնէն ներս մտնել , 15 սուտ մարգարէներէն զգուշ կենալ , 21 իր խօսքը միայն լսողներ չըլլալ՝ հապա կատարողներ , 24 նմանելով անանկ մարդու մը՝ որ իր տունը վէմի վրայ կը շինէ , 26 և ո՛չ թէ աւազի վրայ ։

1 ա Մ՛Ի դատէք՝ որ չդատուիք ։ (2) Վասն զի ինչ
դատաստանով որ դատէք , անով պիտի
դատուիք ․ և բ ինչ չափով որ չափէք , անով պի-
3 տի չափուի ձեզի ։ գ Ու ինչո՞ւ քու եղբօրդ աչ-
քին մէջի շիւղը կը տեսնես , ու քու աչքիդ մէջի
4 գերանին չես նայիր ։ Կամ ի՞նչպէս կրնաս ըսել
քու եղբօրդ , Թո՛ղ տուր աչքէդ շիւղը հանեմ ․
5 և ահա քու աչքիդ մէջը գերան կայ ։ Կեղծաւոր՝
առաջ քու աչքէդ գերանը հանէ , ու ետքը պարզ
պիտի տեսնես եղբօրդ աչքէն շիւղը հանելու ։
6 դ Սուրբ բանը շուներուն մի՛ տաք , և ձեր մար-
գարիտները խոզերուն առջեւը մի՛ ձգէք , որ ոտ-
քերնուն տակը չկոխկրտեն զանոնք , ու դառնան
ձեզ պատառեն ։
7 ե Խնդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի ․ փնտռեցէք՝
և պիտի գտնէք ․ դուռը զարկէք՝ և պիտի բացուի
8 ձեզի ․ Վասն զի զ ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնէ ,
և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ , և ով որ դուռը
9 կը զարնէ՝ պիտի բացուի անոր ։ է Ձեզմէ ո՞ր

ա Ղու․ զ․ 37 ։ Հռով․ բ․ 1 ։ ժդ․ 3, 4, 10, 13 ։ ա Կոր․ դ․ 3, 5 ։ Յակ․ դ․ 11, 12 ։
բ Մար․ դ․ 24 ։ Ղու․ զ․ 38 ։
գ Ղու․ զ․ 41, 42 ։
դ Առակ․ թ․ 7, 8 ։ իգ․ 9 ։ Գոր․ ժգ․ 45, 46 ։
ե Գլ․ իա․ 22 ։ Մար․ ժա․ 24 ։ Ղու․ ժա․ 9, 10 ։ ժը․ 1 ։ Յոհ․ ժդ․ 13 ։ ժե․ 7 ։ ժզ․ 23, 24 ։ Յակ․ ա․ 5, 6 ։ ա Յոհ․ գ․ 22 ։ ե․ 14, 15 ։
զ Առակ․ ը․ 17 ։ Երեմ․ իթ․ 12, 13 ։
է Ղու․ ժա․ 11, 12, 13 ։

մարդը կայ՝ որուն իր որդին հաց որ ուզէ, միթէ
10 քա՞ր պիտի տայ անոր. Կամ թէ որ ձուկ
11 ուզէ, միթէ օ՞ձ պիտի տայ անոր։ Ուստի եթէ
դուք [ը] որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծա-
ներ տալ գիտէք, որչափ աւելի ձեր Հայրը որ
երկինքն է, բարի բաներ պիտի տայ անոնց որ
իրմէ կը խնդրեն։
12 Ուստի [թ] ամէն բան որ կ՚ուզէք որ մարդիկ ձեզի
ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք, քանզի [ժ] աս
է օրէնքը ու մարգարէները։
13 [ի] Նեղ դռնէն ներս մտէք, ինչու որ լայն է ան
դուռը ու ընդարձակ՝ ան ճամբան, որ դէպ ՚ի
կորուստ կը տանի. և շատուոր են անոնք որ անկէ
14 կը մտնեն։ Ինչու որ նեղ է ան դուռը ու
նեղուցք է ան ճամբան, որ դէպ ՚ի կեանք կը
տանի. և քիչուոր են անոնք որ զանիկայ կը գտ-
նեն։
15 [լ] Զգո՛յշ կեցէք սուտ մարգարէներէն՝ [խ] որոնք
ձեզի կու գան ոչխարի հանդերձներով, բայց ներսէն
16 [ծ] յափշտակող գայլեր են։ [կ] Իրենց պտուղէն պի-
տի ճանչնաք զանոնք. [հ] միթէ փուշերէն խաղող կը
17 քաղե՞ն, կամ տատասկէն՝ թուզ. Նմանապէս ալ
[ձ] ամէն բարի ծառ բարի պտուղ կու տայ, և չար
18 ծառ չար պտուղ կու տայ։ Բարի ծառը չկրնար
չար պտուղ տալ, ոչ ալ չար ծառը բարի պտուղ
19 տալ։ [ղ] Ամէն ծառ որ բարի պտուղ չտար՝ կը

ը Ծն. զ. 5; ը. 21;
թ Ղու. զ. 31;
ժ Ղև. ժթ. 18; Գլ. իբ. 40; Հռով. ժգ. 8, 9, 10; Գաղ. ե. 14; Ա Տիմ. ա. 5;
ի Ղու. ժգ. 24;
լ Բ Օր. ժգ. 3; Երեմ. իգ. 16; Գլ. իդ. 4, 5, 11, 24; Մար. ժգ. 22; Հռով. ժզ. 17, 18; Եփե. ե. 6; Կող. բ. 8; Բ Պետ. բ. 1, 2, 3; Ա Յոհ. դ. 1;
խ Միք. գ. 5; Բ Տիմ. գ. 5;
ծ Գոր. ի. 29, 30;
կ Հմր 20; Գլ. ժբ. 33;
հ Ղու. զ. 43, 44;
ձ Երեմ. ժա. 19; Գլ. ժբ. 33;
ղ Գլ. գ. 10; Ղու. գ. 9; Յոհ. ժե. 2, 6;

20 կտրուի ու կրակը կը ձգուի։ Ուրեմն իրենց
պտուղէն պիտի ճանչնաք զանոնք։
21 Ո՛չ թէ ամէն մէկը որ ինծի [ճ] Տէր Տէր կ՚ըսէ,
պիտի մտնէ երկնից թագաւորութիւնը, հապա
անիկայ որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ։
22 Շատերը ան օրը ինծի պիտի ըսեն, Տէր Տէր՝
[մ] չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք, և
քու անունովդ դեւեր հանեցինք, ու քու անունովդ
23 շատ հրաշքներ ըրինք։ Ու [յ] ան ատենը անոնց
յայտնապէս պիտի ըսեմ թէ Ես բնաւ ձեզ չէի
ճանչնար, [ն] մէկդի գացէք քովէս դուք որ անօրէ-
նութիւն կը գործէիք։
24 Արդ [շ] ո՛վ որ աս իմ խօսքերս կը լսէ ու կը
կատարէ անոնք, զանիկայ պիտի նմանցընեմ խե-
լացի մարդու մը՝ որ իր տունը վէմի վրայ շինեց.
25 Ու անձրև իջաւ ու գետերը վազեցին ու հովերը
փչեցին և զարկին ան տանը, ու չփլաւ, ինչու
26 որ վէմի վրայ հաստատուած էր։ Ու ով որ աս
իմ խօսքերս կը լսէ ու չկատարեր անոնք, կը
նմանի անխելք մարդու մը՝ որ իր տունը աւազի
27 վրայ շինեց. Ու անձրև իջաւ ու գետերը վազե-
ցին ու հովերը փչեցին, և զարկին ան տանը,
ու փլաւ, և մեծ էր անոր կործանումը։
28 Ու երբոր Յիսուս լմնցուց աս խօսքերը,
[ո] ժողովուրդները կը զարմանային անոր վարդա-
29 պետութեանը վրայ. [չ] Ինչու որ իշխանութիւն
ունեցողի մը պէս կը սորվեցընէր անոնց, ու չէ թէ
դպիրներուն պէս։

ճ Ովս. ը. 2; Գլ. իե. 11, 12; Ղու. զ. 41; ժգ. 25; Գոր. ժթ. 13; Հռով. բ. 13; Յակ. ա. 22;
մ Թու. իդ. 4; Յոհ. ժա. 51; Ա Կոր. ժգ. 2;
յ Գլ. իե. 12; Ղու. ժգ. 25, 27; Բ Տիմ. բ. 19;
ն Սաղ. ե. 5; զ. 8; Գլ. իե. 41;
շ Ղու. զ. 47, ևն.;
ո Գլ. ժգ. 54; Մար. ա. 22; զ. 2; Ղու. դ. 32;
չ Յոհ. է. 46;

ԳԼ. Ը

2 Քրիստոս կը մաքրէ բորոտը, 5 կը բժշկէ հարիւրապետին ծառան, 14 Պետրոսին զոքանչը 16 և ուրիշ շատ հիւանդներ. 18 կը ցուցընէ թէ ի՛նչ կերպով իր ետևէն երթալ պէտք է. 23 ծովուն ալեկոծութիւնը կը հանդարտեցընէ. 28 երկու դիւահարներէ դևերը կը հանէ, 31 և զանոնք կը թողու որ երթան խոզերուն մէջ մտնեն:

1 Ու երբոր ան լեռնէն վար իջաւ, շատ ժողո-
2 վուրդներ գացին անոր ետևէն: [ա]Ու ահա բորոտ
մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր ու
կ'ըսէր. Տէ՛ր, թէ որ ուզես, կրնաս զիս մաքրել:
3 Ու Յիսուս իր ձեռքը երկնցընելով դպաւ անոր
ու ըսաւ, Կ'ուզեմ՝ մաքրուէ. և շուտ մը անոր
4 բորոտութիւնը մաքրուեցաւ: Ու Յիսուս ըսաւ
անոր, [բ]Զգուշ կեցի՛ր՝ մէկու մը չըսես, հապա
գնա քեզ քահանային ցուցուր, և [գ]Մովսէսին
պատուիրած ընծան տո՛ւր, անոնց վկայութիւն
ըլլալու համար:
5 [դ]Ու երբոր Կափառնայում մտաւ, հարիւրա-
6 պետ մը եկաւ քովը, կ'աղաչէր անոր, Ու կ'ըսէր.
Տէ՛ր, իմ ծառաս տունը անդամալոյծ պառկած
7 չարաչար կը տանջուի: Ու Յիսուս ըսաւ անոր,
8 Ես կու գամ ու զանիկա կը բժշկեմ: Ու հարիւ-
րապետը պատասխան տալով ըսաւ. Տէ՛ր, [ե]ես
արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակը մտնես,
[զ]Միայն թէ խօսքո՛վ զրուցէ, ու իմ ծառաս պիտի
9 բժշկուի. Ինչու որ ես ալ իշխանութեան տակ
մարդ մըն եմ, ու իմ հրամանիս տակը զինուորներ
ունիմ. և ասոր կ'ըսեմ, Գնա՛, ու կ'երթայ.
և միւսին՝ թէ Եկո՛ւր, ու կու գայ. և ծառայիս՝
10 թէ Աս բանը ըրէ, ու կ'ընէ: Յիսուս երբոր

ա Մար. ա. 40, ևն. Ղու. ե. 12, ևն.
բ Գլ. թ. 30. Մար. ե. 43.
գ Ղև. ժդ. 3, 4, 10. Ղու. ե. 14.
դ Ղու. է. 1, ևն.
ե Ղու. ժե. 19, 21.
զ Սաղ. ճէ. 20.

ըսեց՝ զարմացաւ, և իր ետևէն գացողներուն ըսաւ,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ ես
11 այսչափ հաւատք չգտայ: Ու ձեզի կ'ըսեմ որ
[է]արևելքէն ու արևմուտքէն շատեր պիտի գան,
ու երկնից թագաւորութեանը մէջ պիտի բազմին
12 Աբրահամին ու Իսահակին և Յակոբին հետ. Իսկ
[ը]թագաւորութեանը որդիքը [թ]դուրսի խաւարը
պիտի հանուին. հոն պիտի ըլլայ լաց ու ակռաներ
13 կրճտել: Ու Յիսուս հարիւրապետին ըսաւ,
Գնա՛, ու ինչպէս որ դուն հաւատացիր, անանկ
թող ըլլայ քեզի. և նոյն ժամուն անոր ծառան
բժշկուեցաւ:
14 Ու [ժ]Յիսուս Պետրոսին տունը գալով՝ տեսաւ
որ անոր [ի]զոքանչը ջերմէն բռնուած պառկած էր.
15 Ու անոր ձեռքէն բռնեց, ու ջերմը թող տուաւ
զանիկա. ան ալ ոտքի վրայ ելաւ, և անոնց
սպասաւորութիւն կ'ընէր:
16 [լ]Երբոր իրիկուն եղաւ, շատ դիւահարներ բե-
րին անոր, ու խօսքով հանեց չար ոգիները, և
17 բոլոր հիւանդները բժշկեց. Որ Եսայի մարգարէին
ձեռքով ըսուած խօսքը կատարուի, [խ]Անիկա մեր
հիւանդութիւնները վերցուց, և մեր ցաւերը
կրեց:
18 Յիսուս իր բոլորտիքը շատ ժողովուրդ տեսնե-
լով, հրաման ըրաւ որ միւս կողմը երթան:
19 [ծ]Ու դպիր մը մօտենալով՝ ըսաւ անոր, Վա՛ր-
դապետ՝ ես քու ետևէդ պիտի գամ, ու՛ր որ եր-

է Ծն. ժբ. 3. Եսա. բ. 2, 3. ժա. 10. Սաղ. ա. 11. Ղու. ժգ. 29. Գոր. ժ. 45. ժա. 18. ժգ. 26. Հռովմ. ժե. 9, ևն. Եփե. գ. 6.
ը Գլ. խա. 43.
թ Գլ. ժգ. 42, 50. իբ. 13. իդ. 51. իե. 30. Ղու. ժգ. 28. Բ Պետ. բ. 17. Յուդ. 13.
ժ Մար. ա. 29, 30, 31. Ղու. դ. 38, ևն.
ի Տես Ա Կոր. թ. 5.
լ Մար. ա. 32, ևն. Ղու. դ. 41, 42.
խ Եսա. ծգ. 4. Ա Պետ. բ. 24.
ծ Ղու. թ. 57, 58.

20 թառ։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները որ-
ջեր ունին, ու երկնից թռչունները բոյներ. բայց
Որդին մարդոյ տեղ մը չունի, որ հոն իր գլուխը
21 դնէ։ զԵւ մէկ ուրիշը՝ որ անոր աշակերտներէն
էր, ըսաւ անոր, էՏէ՛ր՝ ինծի հրաման տուր, որ
22 երթամ առաջ իմ հայրս թաղեմ։ Յիսուս ըսաւ
անոր, Եկո՛ւր իմ ետեւէս, ու թո՛ղ տուր մեռել-
ներուն որ թաղեն իրենց մեռելները։
23 Ու երբոր նաւը մտաւ, իր աշակերտները իր ետեւէն
24 գացին. ըԵւ ահա մեծ ալէկոծութիւն մը եղաւ
ծովուն մէջ, անանկ որ նաւը ալիքներէն կը ծած-
25 կուէր. խոկ ինքը կը քնանար։ Եւ աշակերտները
մօտ գացին արթընցուցին զանիկայ ու ըսին,
26 Տէ՛ր, ազատէ մեզ, ահա՛ կը կորսուինք։ Եւ
ըսաւ անոնց, Թերահաւատներ՝ ինչո՞ւ այդչափ
վախկոտ էք. ան ատենը ելաւ հովերուն ու ծո-
27 վուն սաստեց, և մեծ խաղաղութիւն եղաւ։ Ու
մարդիկը զարմացան և կ'ըսէին, Ի՞նչպէս մարդ է
աս՝ որ հովերը ու ծովը ասոր կը հնազանդին։
28 ժՈւ երբոր միւս կողմը *Գերգեսացւոց եր-
կիրը անցաւ, երկու դիւահար պատահեցան իրեն
գերեզմաններէն ելած՝ սաստիկ կատղած, անանկ
29 որ ճար չէր մէկու մը ան ճամբայէն անցնիլ։ Եւ
ահա աղաղակեցին ու ըսին, Յիսո՛ւս՝ Որդի Աս-
տուծոյ՝ դուն մեր հետը ի՞նչ բան ունիս,
ատենէն առաջ մեզ տանջելո՞ւ համար հոս
30 եկար։ Եւ անոնցմէ հեռու շատ խոզերու ե-
31 րամակ մը կար, որ կ'արածուէին։ Ու դեւերը
կ'աղաչէին իրեն՝ ու կ'ըսէին, Թէ որ մեզ կը
հանես, հրաման տուր մեզի որ երթանք խոզերուն

զ Ղու. թ. 59, 60։
է Տես գ Թագ. ժթ. 20։
ը Մար. դ. 37, ևն։ Ղու. ը. 23, ևն։
թ Սաղ. կե. 7։ ձթ. 9։ ճէ. 29։
ժ Մար. ե. 1, ևն։ Ղու. ը. 26, ևն։
* Ոմանք՝ Գադարացւոց

32 երամակին մէջը մտնենք։ Եւ ըսաւ անոնց, Գացէ՛ք.
ու անոնք ելան գացին խոզերուն երամակին մէջը
մտան. և ահա բոլոր երամակը գահավէժ տեղէն
33 ծովը վազեցին, ու ջուրերուն մէջը մեռան։ Խո-
զարածներն ալ փախան, և քաղաքը երթալով
բոլորը պատմեցին, ու դիւահարներուն պատահած
34 բաները։ Եւ ահա բոլոր քաղաքը Յիսուսին
դէմը ելաւ. ու երբոր տեսան զանիկայ, իաղա-
չեցին որ իրենց սահմաններէն երթայ։

ԳԼ. Թ.

2 Քրիստոս անդամալոյծ մը կը բժշկէ. 9 Մատթէոսը մաքսաւորութիւն ընելէն իրեն կը կանչէ. 10 մաքսաւորներու և մեղաւորներու հետ կ'ուտէ. 14 իր աշակերտներուն ծոմ չպահելը կ'արդարացնէ. 20 տեռատես կինը կը բժշկէ. 23 Յայրոսի աղջիկը կը յարուցանէ. 27 երկու կոյրերու աչքերը կը բանայ. 32 համր դիւահարը կը բժշկէ, 36 և կը խղճայ բազմութեանը վրայ։

1 Եւ նաւը մտնելով՝ անդին կողմը անցաւ, աու
2 եկաւ իր քաղաքը։ բԵւ ահա բերին իրեն ան-
դամալոյծ մը, որ մահիճի մէջ պառկած էր. և
գՅիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ ըսաւ անդա-
մալոյծին, Քաջալերուէ՛ որդեակ, քու մեղքերդ
3 քեզի ներուած են։ Եւ ահա դպիրներէն ոմանք
իրենց մտքին մէջը ըսին, Ասիկայ հայհոյութիւն
4 կ'ընէ։ Յիսուս ալ դանոնց խորհուրդները իմա-
նալով ըսաւ, Ինչո՞ւ սրտերնուդ մէջ չար բաներ
5 կը խորհիք. Քանզի ո՞րը աւելի դիւրին է. Քու
մեղքերդ ներուած են՝ ըսե՞լը, թէ Ելի՛ր ու քալէ՛
6 ըսելը։ Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մար-
դոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թո-
ղութիւն տալու, (ան ատենը անդամալոյծին

ի Տես բ Օր. ե. 25։ գ Թագ. ժէ. 18։ Ղու. ե. 8։ Գոր. ժզ. 39։

ա Գւ. դ. 13։

բ Մար. բ. 3։ Ղու. ե. 18։
գ Գւ. ը. 10։
դ Սաղ. ճլթ. 2։ Գւ. ժբ. 25։ Մար. ժբ. 15։ Ղու. ե. 22։ զ. 8։ թ. 47։ ժա. 17։

7 ըսաւ,) Ելի՛ր՝ մահիճդ առ ու տունդ գնա ։ Ու
8 անիկայ ելաւ՝ իր տունը գնաց ։ Ժողովուրդները
երբոր տեսան՝ զարմացան, ու փառաւորեցին զԱս-
տուած, որ մարդոց անանկ իշխանութիւն տուեր
էր ։
9 ե Ու Յիսուս անկէ առաջ անցնելով մարդ մը
տեսաւ Մատթէոս անունով, որ մաքս ընդունելու
տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Ետեւէս եկուր ․
10 ան ալ ելաւ անոր ետեւէն գնաց ։ զ Ու եղաւ որ
տունը սեղան նստած ատենը՝ ահա ուրիշ շատ մաք-
սաւորներ և մեղաւորներ եկած՝ ու սեղան նստած
11 էին Յիսուսին ու անոր աշակերտներուն հետ ։ Ու
փարիսեցիները երբոր տեսան, ըսին անոր աշակերտ-
ներուն, Ինչո՞ւ ձեր վարդապետը է մաքսաւորներուն
12 ու ը մեղաւորներուն հետ կ'ուտէ ։ Բայց Յիսուս
երբոր լսեց, ըսաւ անոնց, Առողջներուն բժիշկ
13 պէտք չէ, հապա հիւանդներուն ։ Գացէք՝ սորվե-
ցէք թէ ինչ է աս խօսքը՝ թ Ողորմութիւն կ'ուզեմ,
և չէ թէ զոհ ․ ինչու որ ես արդարները կանչե-
լու չեկայ, ժ հապա մեղաւորները ապաշխարութեան ։
14 Ան ատենը Յովհաննէսին աշակերտները անոր
եկան՝ ու ըսին, ժա Ինչո՞ւ մենք ու փարիսեցիները
շատ անգամ ծոմ կը պահենք, և քու աշակերտներդ
15 չեն պահեր ։ Ու Յիսուս ըսաւ անոնց, Միթէ
կարելի՞ է որ ժբ Հարսնիքին տղաքը սուգ պահեն՝
քանի որ փեսան իրենց հետն է ․ բայց օրեր պիտի
գան որ երբ փեսան իրենցմէ վերցուի, ժգ ան ա-
16 տենը ծոմ պիտի պահեն ։ Ու մէկը չձգեր նոր

ե Մար. բ. 14 ։ Ղուկ. ե. 27 ։
զ Մար. բ. 15, ևն ։ Ղուկ. ե. 29, ևն ։
է Գլ. ժա. 19 ։ Ղուկ. ե. 30 ։ ժե. 2 ։
ը Գաղ. բ. 15 ։
թ Ովս. զ. 6 ։ Միք. զ. 6, 7, 8 ։ Գլ. ժբ. 7 ։
ժ ա Տիմ. ա. 15 ։
ժա Մար. բ. 18, ևն ։ Ղուկ. ե. 33 ։ ժը. 12 ։
ժբ Յոհ. գ. 29 ։
ժգ Գործ. ժգ. 2, 3 ։ ժդ. 22 ։ ա Կոր. է. 5 ։

ղաթի կտոր հին հանդերձի վրայ, քանզի ան որ
անոր լրութեանը համար դրուած է, կ'առնէ հան-
դերձէն, ու պատռուածքը ալ աւելի գէշ կ'ըլլայ ․
17 Ոչ ալ նոր գինին հին տիկերու մէջ կը դնեն ․ եթէ
ոչ՝ տիկերը կը պատռին ու գինին կը թափի, և
տիկերը կը կորնչին ․ հապա նոր գինին նոր տիկե-
րու մէջ կը դնեն, ու երկուքն ալ կը պահուին ։
18 ժդ Երբոր անիկայ անոնց հետ աս բաները կը խօ-
սէր, ահա իշխան մը եկաւ, երկրպագութիւն
կ'ընէր անոր ու կ'ըսէր, Աղջիկս ալ մինչև հիմա
մեռած է, բայց եկո՛ւր ձեռքդ անոր վրայ դիր,
19 ու պիտի ապրի ։ Ու Յիսուս ելաւ ։ ու իր
աշակերտներուն հետ անոր ետեւէն գնաց ։
20 ժե Ու ահա տասուերկու տարուան տեղատես կին
մը մօտեցաւ ետեւէն՝ անոր հանդերձին քղանցքին
21 դպաւ ․ Քանզի իր սրտին մէջ կ'ըսէր, Թէ որ
միայն անոր հանդերձին դպչիմ, պիտի բժշկուիմ ։
22 Բայց Յիսուս երբոր ետին դարձաւ ու տեսաւ զա-
նիկայ, ըսաւ, Քաջալերուէ՛ աղջիկ, ժզ Քու հա-
ւատքդ քեզ բժշկեց ․ և կնիկը նոյն ժամէն բժշ-
կուեցաւ ։
23 ժէ Ու երբոր Յիսուս իշխանին տունը եկաւ, ու
տեսաւ ժը զփողահարները և խռոված բազմութիւնը,
24 Ըսաւ անոնց, ժթ Մեկդի գացէք, ինչու որ աղջի-
կը մեռած չէ, հապա կը քնանայ ․ և ծաղր կ'ընէին
25 անիկայ ։ Ու երբոր բազմութիւնը դուրս ձգուե-
ցաւ, ինքը ներս մտաւ՝ անոր ձեռքէն բռնեց, ու
26 աղջիկը ոտք ելաւ ։ Ու աս լուրը ան բոլոր եր-
կիրը տարածուեցաւ ։
27 Ու երբոր Յիսուս անկէ առաջ անցաւ, երկու
կոյր ինկան անոր ետեւէն, կ'աղաղակէին ու կ'ը-

ժդ Մար. ե. 22, ևն ։ Ղուկ. ը. 41, ևն ։
ժե Մար. ե. 25 ։ Ղուկ. ը. 43 ։
ժզ Ղուկ. է. 50 ։ ը. 48 ։ ժէ. 19 ։ ժը. 42 ։
ժէ Մար. ե. 38 ։ Ղուկ. ը. 51 ։
ժը Տես բ Մն. լե. 25 ։
ժթ Գործ. ի. 10 ։

28 ւէին, ժ Ողորմէ՛ մեզի Որդի Դաւիթի։ Ու երբ–
որ տուն եկաւ, կոյրերը իրեն եկան. և Յիսուս
անոնց ըսաւ, Կը հաւատա՞ք թէ կրնամ աս բանը
29 ընել. ըսին անոր, Այո՛ Տէր։ Այն ատենը
անոնց աչքերուն դպաւ ու ըսաւ, Ձեր հաւատ–
30 քին պէս ըլլայ ձեզի։ Ու անոնց աչքերը բացուե–
ցան. և Յիսուս սաստիկ պատուէր տուաւ անոնց
ու ըսաւ, ը Զգո՛յշ կեցէք, մէկը չիմանայ։
31 ի Բայց անոնք ելան ան բոլոր երկրին մէջ անոր
համբաւը տարածեցին։
32 լ Ու երբոր անոնք դուրս ելան, ահա մէկ համր
33 դիւահար մարդ մը բերին իրեն։ Ու երբոր դևը
ելաւ, համրը խօսեցաւ. և ժողովուրդները զարմա–
ցան ու կ'ըսէին թէ Իսրայէլի մէջ բնաւ ասանկ բան
34 մը տեսնուած չէ։ Բայց փարիսեցիները կ'ըսէին
թէ խ Անիկայ դևերուն իշխանովը դևերը կը հանէ։
35 ծ Ու Յիսուս կը պտըտէր բոլոր քաղաքները ու
գեղերը, և կ անոնց ժողովարաններուն մէջ կը
սորվեցընէր ու կը քարոզէր արքայութեան աւե–
տարանը, և կը բժշկէր բոլոր ախտերը ու բոլոր
36 հիւանդութիւնները ժողովուրդին մէջ։ հ Ու
ժողովուրդները տեսնելով՝ անոնց վրայ խղճաց,
ինչու որ յոգնած ու ցիրուցան եղած էին ձ հովիւ
37 չունեցող ոչխարներու պէս։ Այն ատենը ըսաւ իր
աշակերտներուն, ղ Հունձքը շատ է, բայց մշակ–
38 ները քիչ. ճ Ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէ՛ք,
որ մշակներ հանէ իր հունձքին։

ժ Գլ. ժե. 22 ։ ի. 30, 31 ։ Մար. ժ. 47, 48 ։ Ղու. ժը. 38, 39 ։
ը Գլ. ը. 4 ։ ժը. 16 ։ ժէ. 9 ։ Ղու. ե. 14 ։
ի Մար. է. 36 ։
լ Տե՛ս Գլ. ժբ. 22 ։ Ղու. ժա. 14 ։
խ Գլ. ժբ. 24 ։ Մար. գ. 22 ։ Ղու. ժա. 15 ։
ծ Մար. զ. 6 ։ Ղու. ժգ. 22 ։
կ Գլ. դ. 23 ։
հ Մար. զ. 34 ։
ձ Թուոց. իէ. 17 ։ գ Թագ. իբ. 17 ։ Եզեկ. լդ. 5 ։ Զաք. ժ. 2 ։
ղ Ղու. ժ. 2 ։ Յոհ. դ. 35 ։
ճ Բ Թես. գ. 1 ։

ԳԼ. Ժ.

1 Քրիստոս իր տասներկու առաքեալները կը ղրկէ՝ հրաշքներ
ընելու իշխանութիւն տալով անոնց. 5 պատուէրներ կու տայ
անոնց և կը սորվեցընէ թէ ինչ պարտին ընել. 16 կը մխի–
թարէ զանոնք հալածմունքներու վրայով, 40 և օրհնութիւն
կը խոստանայ զանոնք ընդունողներուն։

1 Ու ա իր քովը կանչելով իր տասներկու աշա–
կերտները, անոնց իշխանութիւն տուաւ պիղծ
ոգիներուն վրայ՝ որ զանոնք հանեն, և ամէն ցաւերը
ու ամէն հիւանդութիւնները բժշկեն։
2 Ու տասներկու առաքելոց անունները ասոնք
են. առաջինը Սիմոն՝ բ Պետրոս ըսուածը և
3 անոր եղբայրը Անդրէաս, Յակոբոս Զեբեդեան
և անոր եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս և Բար–
թողոմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր,
Յակոբոս Աղփեան և Ղեբէոս՝ որ Թադէոս մակ–
4 անուանեցաւ, գ Սիմոն Կանանացի և դ Յուդա
Իսկարիովտացի, որ նաև մատնեց զանիկայ։
5 Այս տասներկուքը Յիսուս ղրկեց, և անոնց
պատուիրեց ըսելով, ե Հեթանոսներու ճամբայ
մի՛ երթաք, ու զ Սամարացիներու քաղաք մի՛
6 մտնէք. է Հապա աւելի Իսրայէլի տանը ը կոր–
7 սուած ոչխարներուն գացէք։ թ Ու երբոր կ'եր–
թաք, քարոզեցէ՛ք ու ըսէ՛ք թէ ժ Երկնից թա–
8 գաւորութիւնը մօտեցած է։ Հիւանդները բը–
ժշկեցէ՛ք, բորոտները *մաքրեցէ՛ք, դևերը հա–
9 նեցէ՛ք. ի ձրի առեր էք, ձրի տուէ՛ք։ լ Մի՛

ա Մար. գ. 13, 14 ։ զ. 7 ։ Ղու. զ. 13 ։ թ. 1 ։
բ Յոհ. ա. 42 ։
գ Ղու. զ. 15 ։ Գործ. ա. 13 ։
դ Յոհ. ժգ. 26 ։
ե Գլ. դ. 15 ։
զ Տե՛ս դ Թագ. ժէ. 24 ։ Յոհ. դ. 9, 20 ։
է Գլ. ժե. 24 ։ Գործ. ժգ. 46 ։
ը Եսա. ծգ. 6 ։ Երեմ. ծ. 6, 17 ։ Եզեկ. լդ. 5, 6, 16 ։ ա Պետ. բ. 25 ։
թ Ղու. թ. 2 ։
ժ Գլ. գ. 2 ։ դ. 17 ։ Ղու. ժ. 9 ։
* Ոմանք՝ մաքրեցէ՛ք, մեռելները յարուցէ՛ք ։
ի Գործ. ը. 18, 20 ։
լ ա Թագ. թ. 7 ։ Մար. զ. 8 ։ Ղու. թ. 3 ։ ժ. 4 ։ իբ. 35 ։

ստանաք ոսկի՝ և ոչ արծաթ՝ և ոչ [ե]պղինձ ձեր
10 գօտիներուն մէջը, Ո՛չ ճամբու համար տոպրակ,
և ոչ երկու հանդերձ, ոչ կօշիկ, ոչ գաւազան.
11 [զ]Ինչու որ մշակը իր կերակուրին արժանի է։ Եւ
[է]որ քաղաք կամ գեղ մտնէք, հարցուցէ՛ք թէ
ո՛վ է անոր մէջը արժանաւոր, ու հո՛ն կեցէք
12 մինչև որ անկէ ելլէք։ Ու երբոր տունը կը մտ-
13 նէք, բարեւ տուէ՛ք *անոր։ Եւ [ը]թէ որ այն
տունը արժանաւոր է, ձեր բարեւը անոր վրայ
գայ. հապա թէ որ արժանաւոր չէ, [թ]ձեր բա-
14 րեւը ձեզի դառնայ։ Եւ ո՛վ որ ձեզ չընդունի՝
ու ձեր խօսքերը մտիկ չընէ, երբոր այն տունէն
կամ քաղաքէն կ'ելլէք, [ժ]ձեր ոտքերուն փոշին
15 թօթուեցէ՛ք։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, [ի]Սոդո-
մացւոց ու Գոմորացւոց երկրին աւելի դիւրին պիտի
ըլլայ դատաստանին օրը քան թէ այն քաղաքին։
16 [լ]Ահա ես ձեզ կը ղրկեմ իբրև ոչխարներ գայ-
լերու մէջ. [խ]ուստի օձերու պէս խորագէտ եղէք
17 և [ծ]աղաւնիներու պէս միամիտ։ Իսկ մարդոցմէ
զգուշացէ՛ք, ինչու որ [կ]ձեզ ատեաններու պիտի
մատնեն, ու [հ]իրենց ժողովարաններուն մէջը ձեզ
18 պիտի ծեծեն. [ձ]Եւ իմ անունիս համար կուսա-
կալներու ու թագաւորներու առջև պիտի տար-
ուիք, անոնց և հեթանոսներուն վկայութիւն
19 ըլլալու համար։ [ղ]Բայց երբոր ձեզ մատնեն,

[ե] Տես Մար. զ. 8։
[զ] Ղու. ժ. 7։ ա Կոր. թ. 7, ԺԴ։ ա Տիմ. ե. 18։
[է] Ղու. ժ. 8։
* Ողջոյն՝ անոր՝ ու ըսէ՛ք, Բարեւ այս տանս։
[ը] Ղու. ժ. 5, 6։
[թ] Սաղ. լե. 13։
[ժ] Մար. զ. 11։ Ղու. թ. 5։ ժ. 10, 11։
[ի] Ծնեմ. ե. 13։ Գոր. ժգ. 51։ ժը. 6։
[լ] Ղու. ժա. 22, 24։
[խ] Ղու. ժ. 3։
[ծ] Հռով. ժզ. 19։ Եփե. ե. 15։
[կ] ա Կոր. ժդ. 20։ Փիլ. բ. 15։
[հ] Գլ. իդ. 9։ Մար. ժգ. 9։ Ղու. ժբ. 11։ իա. 12։
[ձ] Գոր. ե. 40։
[ղ] Գոր. ժբ. 1։ իդ. 10։ իե. 7, 23։ բ Տիմ. դ. 16։
[ճ] Մար. ժգ. 11, 12, 13։ Ղու. ժբ. 11։ իա. 14, 15։

հոգ մի՛ ընէք թէ ինչպէ՛ս կամ ի՛նչ պիտի խօ-
սիք, ինչու որ [մ]ձեզի պիտի տրուի այն ժամուն՝
20 ինչ որ պիտի խօսիք։ [յ]Վասն զի չէ՛ թէ դուք
էք որ կը խօսիք, հապա ձեր Հօրը Հոգին՝ որ
21 ձեր ներսի դին կը խօսի։ Ու [ն]եղբայր եղբայրը
մահուան պիտի մատնէ, և հայրը՝ որդին. և որ-
դիք իրենց ծնողացը վրայ պիտի ելլեն ու մեռցը-
22 նեն զանոնք։ Եւ իմ անուանս համար [շ]ամե-
նուն ատելի պիտի ըլլաք. [ո]Բայց ո՛վ որ մինչև
23 վերջը համբերէ, անիկայ պիտի ապրի։ Ու
[չ]երբոր աս քաղաքին մէջ ձեզ կը հալածեն,
ուրիշ քաղաք փախէք. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
Իսրայէլի քաղաքները պիտի չհատցընէք, [պ]մին-
24 չև որ Որդին մարդոյ գայ։ [ջ]Աշակերտը իր վար-
դապետէն աւելի չէ՛, և ոչ ծառան իր տիրոջմէն։
25 Հերիք է աշակերտին՝ որ իր վարդապետին պէս
ըլլայ, ու ծառային՝ իր տիրոջը պէս. [ս]թէ որ
տանուտէրը Բէեղզեբուղ կոչեցին, ո՛րչափ աւելի
26 անոր ընտանիքը։ Ուստի մի՛ վախնաք անոնցմէ,
[վ]ինչու որ բան մը չկայ ծածուկ՝ որ պիտի չյայտ-
27 նուի, և գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի։ Ինչ
որ ձեզի մութի մէջ կ'ըսեմ, անիկա լոյսի մէջ
խօսեցէք, և ինչ որ ականջն 'ի վար կը լսէք,
28 տանիքներուն վրայ քարոզեցէք։ [տ]Եւ մի՛ վախ-
նաք անոնցմէ՛ որ մարմինը կը սպաննեն, ու չեն
կրնար հոգին սպաննել. հապա աւելի անկէ՛ վախ-
ցէք դուք, որ կրնայ հոգին ու մարմինը գեհենին

[մ] Ել. դ. 12։ Երեմ. ա. 7։
[յ] բ Թագ. իգ. 2։ Գործ. դ. 8։ զ. 10։ բ Տիմ. դ. 17։
[ն] Միք. է. 6։ Հմր. 35, 36։ Ղու. իա. 16։
[շ] Ղու. իա. 17։
[ո] Դան. ժբ. 12, 13։ Գլ. իդ. 13։ Մար. ժգ. 13։
[չ] Գլ. բ. 13։ դ. 12։ ժբ. 15։ Գործ. ը. 1։ թ. 25։ ժդ. 6։
[պ] Գլ. ժզ. 28։
[ջ] Ղու. զ. 40։ Յօհ. ժգ. 16։ ժե. 20։
[ռ] Գլ. ժբ. 24։ Մար. գ. 22։ Ղու. ժա. 15։ Յօհ. ը. 48, 52։
Մար. դ. 22։ Ղու. ը. 17։ ժբ. 2, 3։
[տ] Եսա. ը. 12, 13։ Ղու. ժբ. 4։ ա Պետ. գ. 14։

29 մէջ կորսնցընել : Չէ՞ որ երկու ճնճղուկ մէկ
դանկի կը ծախուին, և անոնցմէ մէկը գետինը
30 չիյնար՝ առանց ձեր Հօրը : հ Բայց ձեր գլխուն
31 բոլոր մազերն ալ համրուած են : Ուրեմն մի՛
վախնաք, վասն զի շատ ճնճղուկներէն լաւ էք
32 դուք : Արդ ձ ամէն ով որ մարդոց առջև զիս կը դա-
ւանի, ղ ես ալ անիկայ պիտի դաւանիմ իմ Հօրս
33 առջևը՝ որ երկինքն է . ճ Նոյնպէս ով որ մարդոց առջև
զիս կ'ուրանայ, ես ալ անիկայ պիտի ուրանամ իմ
34 Հօրս առջևը՝ որ երկինքն է : մ Մի՛ կարծէք՝ թէ
ես երկրի վրայ խաղաղութիւն ձգելու եկայ . խաղա-
35 ղութիւն ձգելու չեկայ, հապա սուր . Վասն զի որ
եկայ յ մարդը իր հօրմէն զատելու, ու աղջիկը՝
36 իր մօրմէն, ու հարսը՝ իր կեսուրէն . Ու ն մար-
դուն թշնամիները իր ընտանիքը պիտի ըլլան :
37 շ Ան որ հայրը կամ մայրը ինծմէ աւելի կը սիրէ,
ինծի արժանի չէ . և ան որ տղան կամ աղջիկը
38 ինծմէ աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ . ո Ու
ան որ իր խաչը չառներ ու իմ ետևէս գար, ինծի
39 արժանի չէ : չ Ան որ իր անձը կը գտնէ, պիտի
կորսնցընէ զանիկայ . և ան որ իր անձը ինծի
համար կը կորսնցընէ, պիտի գտնէ զանիկայ :
40 պ Ան որ ձեզ կ'ընդունի, զիս կ'ընդունի . և ան
41 որ զիս կ'ընդունի, զիս ղրկողը կ'ընդունի : ջ Ան
որ մարգարէ մը կ'ընդունի մարգարէի անունով,

հ ա Թագ. ժդ. 45 ; բ Թագ. ժդ. 11 ; Ղուկ. իա. 18 ; Գործ. իէ. 34 ;
ձ Ղուկ. ժբ. 8 ; Հռովմ. ժ. 9, 10 ;
ղ Յայտ. գ. 5 ;
ճ Մար. ը. 38 ; Ղուկ. թ. 26 ; բ Տիմ. բ. 12 ;
մ Ղուկ. ժբ. 49, 51, 52, 53 ;
յ Միք. է. 6 ;
ն Սաղ. խա. 9 ; ծե. 13 ; Միք. է. 6 ; Յովհ. ժգ. 18 ;
շ Ղուկ. ժդ. 26 ;
ո Գլ. ժզ. 24 ; Մար. ը. 34 ; Ղուկ. թ. 23 ; ժդ. 27 ;
չ Գլ. ժզ. 25 ; Ղուկ. ժէ. 33 ; Յովհ. ժբ. 25 ;
պ Գլ. ժը. 5 ; Ղուկ. թ. 48 ; ժ. 16 ; Յովհ. ժբ. 44 ; ժգ. 20 ; Գաղ. դ. 14 ;
ջ գ Թագ. ժէ. 10 ; ժը. 4 ; դ Թագ. դ. 8 ;

մարգարէի վարձք կ'առնէ, և ան որ արդար մը
կ'ընդունի արդարի անունով, արդարի վարձք
42 կ'առնէ : ռ Ու ան որ աս պզտիկներէն մէկուն
միայն գաւաթ մը պաղ ջուր կը խմցընէ աշակեր-
տի անունով, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, բնաւ իր
վարձքը պիտի չկորսնցընէ :

ԳԼ. ԺԱ

2 Յովհաննէս իր աշակերտները Քրիստոսի կը ղրկէ ; 7 Քրիստոսի վկայութիւնը Յովհաննէսին համար ; 18 Ժողովրդոց կարծիքը Յովհաննէսին ու Քրիստոսի վրայով ; 20 Քրիստոս կը նախատէ Քորազինը, Բեթսայիդան և Կափառնայումը՝ իրենց ապերախտութեանը և անզեղջ մնալուն համար . 25 և կը փառաւորէ իր Հօրը իմաստութիւնը՝ Աւետարանը պարզամիտներուն յայտնելուն համար . 28 իրեն կը կանչէ ամէն անոնք որ իրենց մեղքին ծանրութիւնը կը զգան ;

1 Ու եղաւ որ երբ Յիսուս լմնցուց իր տասներկու
աշակերտներուն պատուէր տալը, գնաց անկէ
անոնց քաղաքներուն մէջ քարոզելու և սորվեցը-
նելու :
2 Իսկ Յովհաննէս ա բանտին մէջը բ երբոր լսեց
Քրիստոսի գործքերը, իր աշակերտներէն երկուքը
3 խրկելով ըսաւ անոր, գ Դուն ա՞ն ես որ գալու
4 էիր, թէ ուրիշի մը սպասենք : Ու Յիսուս պա-
տասխան տալով անոնց ըսաւ, Գացէք պատմեցէք
Յովհաննէսին ինչ որ կը լսէք ու կը տեսնէք .
5 դ Կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն,
բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն,
մեռելները յարութիւն կ'առնեն ե ու աղքատ-

ռ Գլ. ը. 5, 6 ; իե. 40 ; Մար. թ. 40 ; Եբր. զ. 10 ;

ա Գլ. ժդ. 3 ;
բ Ղուկ. է. 18, 19, ևն. ;
գ Ծն. խթ. 10 ; Թուոց. իդ. 17 ; Դան. թ. 24 ; Յովհ. զ. 14 ;
դ Եսայ. իթ. 18 ; լե. 4, 5, 6 ; խբ. 7 ; Յովհ. բ. 23 ; գ. 2 ; ե. 36 ; ժ. 25, 38 ; ժդ. 11 ;
ե Սաղ. իբ. 26 ; Եսայ. կա. 1 ; Ղուկ. դ. 18 ; Յակ. բ. 5 ;

6 ներուն աւետարան կը քարոզուի : Եւ երանի
անոր զ որ իմ վրայովս չգայթակղի :
7 է Ու երբոր անոնք գացին, Յիսուս սկսաւ ժո-
ղովուրդներուն ըսել Յովհաննէսին համար, Ի՞նչ
տեսնելու ելաք անապատին մէջ. ը եղէ՞գ մը հովէն
8 շարժուած : Հապա ի՞նչ տեսնելու ելաք. փա-
փուկ հանդերձներ հագած մա՞րդ մը. ահա փա-
փուկ հանդերձներ հագնողները թագաւորաց տու-
9 ներն են : Հապա ի՞նչ տեսնելու ելաք. մարգարէ՞.
այո՛ կ՚ըսեմ ձեզի, թ մարգարէէ մըն ալ աւելի :
10 Քանզի ասիկա է որուն համար գրուած է.
ժ Ահա ես իմ դեսպանս կը ղրկեմ քու երեսիդ
առջեւէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու
11 առջեւդ : Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Կիներէն
ծնածներուն մէջը Յովհաննէս Մկրտիչէն մեծը ելած
չէ. սակայն երկնից թագաւորութեանը մէջ պզտ-
12 պզտիկը անկէ մեծ է : ի Ու Յովհաննէս Մկրտիչին
օրերէն մինչեւ հիմա երկնից թագաւորութիւնը
ուժով կ՚առնուի, և ուժեղները կը յափշտակեն
13 անիկայ : լ Քանզի որ բոլոր մարգարէները ու օրէնքը
14 մինչեւ Յովհաննէս մարգարէութիւն ըրին. Եւ
եթէ կ՚ուզէք ընդունիլ, անիկայ է խ Եղիան՝ որ
15 պիտի գար : ծ Ան որ լսելու ականջ ունի, թող
16 լսէ : Բայց կ որո՞ւ նմանցնեմ աս ազգը. կը
նմանի տղոց, որ շուկաները նստելով՝ իրենց
17 ընկերներուն կը կանչեն, Ու կ՚ըսեն, Փող չալե-

զ Եսա. ը. 14, 15 : Գլ. ժգ. 57 : իդ. 10 : իզ. 31 : Հռով. թ. 32, 33 : ա Կոր. ա. 23 : բ. 14 : Գաղ. ե. 11 : ա Պետ. բ. 8 :
է Ղու. է. 24 :
ը Եփե. դ. 14 :
թ Գլ. ժդ. 5 : իա. 26 : Ղու. ա. 76 : է. 26 :
ժ Մաղ. գ. 1 : Մար. ա. 2 : Ղու. ա. 76 : է. 27 :
ի Ղու. ժզ. 16 :
լ Մաղ. դ. 6 :
խ Մաղ. դ. 5 : Գլ. ժէ. 12 : Ղու. ա. 17 :
ծ Գլ. ժգ. 9 : Ղու. ը. 8 : Յայտ. բ. 7, 11, 17, 29 : գ. 6, 13, 22 :
կ Ղու. է. 31 :

ցուցինք ձեզի՝ ու չխաղացիք, ողբ կարդացինք ձեզի՝
18 ու կոծ չըրիք : Վասն զի Յովհաննէս եկաւ, ո՛չ
կ՚ուտէր և ո՛չ կը խմէր, ու կ՚ըսեն, Դեւ կայ
19 անոր ներսի դին : Որդին մարդոյ եկաւ՝ կ՚ուտէ ու
կը խմէ, և կ՚ըսեն, Ահա ուտող և արբեցող
մարդ մը՝ հ մաքսաւորներու ու մեղաւորներու բարե-
կամ. ձ Եւ իմաստութիւնը արդարացաւ իր որ-
դւոցմէն :
20 ԱՆ ատենը սկսաւ նախատել ան քաղաքները,
որոնց մէջ գործուեր էին իր հրաշքներուն շատերը,
21 քանզի չապաշխարեցին. ղ Վա՜յ քեզ՝ Քորազին,
վա՜յ քեզ՝ Բեթսայիդա. քանզի որ եթէ Տիւրոսի
ու Սիդոնի մէջ եղած ըլլային ան հրաշքները՝ որ
ձեր մէջը եղան, շատոնցմէ ճ քուրձով ու մոխրով
22 ապաշխարած պիտի ըլլային : Բայց ձեզի կ՚ըսեմ,
մ Տիւրոսին և Սիդոնին աւելի դիւրին պիտի ըլլայ
23 դատաստանին օրը՝ քան թէ ձեզի : Եւ դուն Կա-
փառնայում՝ յ որ մինչեւ երկինքը բարձրացած ես,
մինչեւ դժոխքը պիտի իջնես, քանզի որ եթէ
Սոդոմի մէջ եղած ըլլային ան հրաշքները՝ որ քու
մէջդ եղան, իրաւ որ մինչեւ աս օրս դեռ պիտի
24 մնար : Բայց ձեզի կ՚ըսեմ որ ն Սոդոմայեցւոց երկրին
աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը,
քան թէ քեզի :
25 շ Նոյն ժամանակին պատասխան տուաւ Յիսուս
ու ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ, ով Հայր՝
Տէր երկնի և երկրի, ո որ աս բաները ծածուկ
պահեցիր իմաստուններէն և գիտուններէն, ու
26 չ տղոց յայտնեցիր : Այո՛ ով Հայր, քանզի որ

հ Գլ. թ. 10 :
ձ Ղու. է. 35 :
ղ Ղու. ժ. 13, ԺԴ :
ճ Յովն. գ. 7, 8 :
մ Գլ. ժ. 15 : Հմր 24 :
յ Տես Եսա. ժդ. 13 : Ողբ. բ. 1 :
ն Գլ. ժ. 15 :
շ Ղու. ժ. 21 :
ո Տես Սաղ. ը. 2 : ա Կոր. ա. 19, 27 : բ. 8 : բ Կոր. գ. 14 :
չ Գլ. ժզ. 17 :

27 քու առջեւդ աւանկ հաճելի եղաւ : [ղ]Ամէն բան
ինծի տրուեցաւ իմ Հօրմէս , ու մէկը չճանչնար
Որդին՝ բայց Հայրը . Եւ մէկը չճանչնար Հայրը՝
բայց Որդին , եւ ան՝ որուն որ Որդին կ'ուզէ
28 յայտնել : Եկէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւո-
29 րածներ , եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ : Իմ
լուծս ձեր վրայ առէք , [մ]եւ ինծմէ սորվեցէք՝ որ
հեզ եմ ու [յ]սրտով խոնարհ , եւ [ն]ձեր անձերուն
30 հանգստութիւն պիտի գտնէք : [շ]Ինչու որ իմ
լուծս քաղցր է , եւ իմ բեռս թեթեւ :

ԳԼ. ԺԲ.

1 Քրիստոս կը յանդիմանէ փարիսեցւոց կուրութիւնը շաբաթ
օրուան վրայով , 3 Սուրբ Գիրքերով , 9 փաստով , 13 և
հրաշքով մը ։ 22 Կոյր ու համր դիւահար մը կը բժշկէ ։ 31
Կ'իմացընէ թէ Սուրբ Հոգիին դէմ եղած հայհոյութիւնը
պիտի չներուի , 36 և թէ դատարկ խօսքերու համար հաշիւ
պիտի տրուի ։ 38 Կը յանդիմանէ անհաւատները որ նշան կը
խնդրեն , 49 և կը ցուցընէ թէ ո՛վ է իր եղբայրը՝ իր քոյրը
և իր մայրը ։

1 Այն ատենը [ա]Յիսուս՝ շաբաթ օրը գնաց արտե-
րուն մէջէն . եւ իր աշակերտները անօթեցան ,
ու սկսան ցորենի հասկեր փրցնել եւ ուտել :
2 Փարիսեցիները երբոր տեսան , ըսին անոր , Ահա
քու աշակերտներդ կը գործեն ինչ որ արժան չէ
3 շաբաթ օրը գործել : Ան ալ անոնց ըսաւ , Չէ՞ք
կարդացեր դուք [բ]Դաւիթին ըրածը , երբոր անօ-
4 թեցաւ ինքը ու անոնք որ իր հետն էին . Ինչպէս
մտաւ Աստուծոյ տունը , եւ [գ]առաջաւորութեան հա-

ղ Գլ. ԻԸ. 18 ։ Ղու. Ժ. 22 ։ Յոհ. Գ. 35 ։ ԺԳ. 3 ։ ԺԷ. 2 ։ Ա Կոր. ԺԵ. 27 ։
ճ Յոհ. Ա. 18 ։ Զ. 46 ։ Ժ. 15 ։
մ Յոհ. ԺԳ. 15 ։ Փիլ. Բ. 5 ։ Ա Պետ. Բ. 21 ։ Ա Յոհ. Բ. 6 ։
յ Զաք. Թ. 9 ։ Փիլ. Բ. 7, 8 ։
ն Երեմ. Զ. 16 ։
շ Ա Յոհ. Ե. 3 ։

ա Բ Օր. ԻԳ. 25 ։ Մար. Բ. 23 ։ Ղու. Զ. 1 ։
բ Ա Թագ. ԻԱ. 6 ։
գ Ել. ԻԹ. 30 ։ Ղև. ԻԴ. 5 ։

ցերը կերաւ , որ ո՛չ իրեն օրինաւոր էր ուտել , եւ
ո՛չ անոնց՝ որ իր հետն էին , [դ]բայց միայն քահա-
5 նաներուն : Կամ թէ [ե]օրէնքին մէջը չէ՞ք կար-
դացեր , որ քահանաները շաբաթ օրերը տաճարին
6 մէջ շաբաթը կը պղծեն՝ ու անմեղ են : Բայց ձեզի
կ'ըսեմ որ աս տեղը [զ]տաճարէն մեծ մէկը կայ :
7 Եւ թէ որ գիտնայիք թէ ինչ ըսել է , [է]Ողոր-
մութիւն կ'ուզեմ՝ ու չէ՛ թէ զոհ , ան ատենը ան-
8 պարտները չէիք դատապարտեր . Վասնզի Որդին
մարդոյ շաբաթին տէրն է :
9 [ը]Եւ անկէ երթալով՝ եկաւ անոնց ժողովարանը :
10 Եւ հոն մէկ մարդ մը կար՝ որուն ձեռքը չորցած
էր . եւ հարցուցին անոր ու ըսին թէ [թ]Շաբաթ
օրը բժշկել արժա՞ն է , որ անոր վրայով ամբաս-
11 տանութիւն ընեն : Ան ալ ըսաւ անոնց , Ձեզմէ
ո՞ր մարդը կայ՝ որ մէկ ոչխար մը ունենայ , եւ անի-
կայ շաբաթ օրը [ժ]փոսի մէջ իյնայ , պիտի չբռնէ՞
12 ու վեր հանէ զանիկայ : Արդ որչափ աւելի է մար-
դը ոչխարէն . ուրեմն շաբաթ օրը բարի գործել
13 արժան է : Ան ատենը ըսաւ ան մարդուն , Եր-
կընցո՛ւր ձեռքդ . ան ալ երկընցուց , ու ողջացաւ
14 միւսին պէս : Իսկ [ի]փարիսեցիները դուրս ելլե-
լով՝ անոր վրայ խորհուրդ կ'ընէին թէ ինտո՞ր
անիկայ կորսնցընեն :
15 Եւ Յիսուս երբոր գիտցաւ , [լ]զատուեցաւ անկէ .
[խ]Եւ շատ ժողովուրդներ անոր ետեւէն գացին , ու
16 ամէնը բժշկեց : Եւ [ծ]սաստիկ պատուիրեց անոնց

դ Ել. ԻԹ. 32, 33 ։ Ղև. Ը. 31 ։ ԻԴ. 9 ։
ե Թուոց. ԻԸ. 9 ։ Յոհ. Է. 22 ։
զ Բ Մն. Զ. 18 ։ Մաղ. Գ. 1 ։
է Ովս. Զ. 6 ։ Միք. Զ. 6, 7, 8 ։ Գլ. Թ. 13 ։
ը Մար. Գ. 1 ։ Ղու. Զ. 6 ։
թ Ղու. ԺԳ. 14 ։ ԺԴ. 3 ։ Յոհ. Թ. 16 ։
ժ Տես Ել. ԻԳ. 4, 5 ։ Բ Օր. ԻԲ. 4 ։
ի Գլ. ԻԷ. 1 ։ Մար. Գ. 6 ։ Ղու. Զ. 11 ։ Յոհ. Ե. 18 ։ Ժ. 39 ։ ԺԱ. 53 ։
լ Տես Գլ. Ժ. 23 ։ Մար. Գ. 7 ։
խ Գլ. ԺԹ. 2 ։
ծ Գլ. Թ. 30 ։

17 որ զինքը մէկու մը չյայտնեն։ Որ կատարուի
18 Եսայի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, [է]Ահա
իմ ծառաս՝ որ ընտրեցի, ու իմ սիրելիս՝ [ը]որուն
հաճեցաւ իմ անձս. իմ Հոգիս անոր վրայ պիտի
դնեմ, ու հեթանոսներուն իրաւունք պիտի
19 պատմէ։ Ո՛չ պիտի վիճի, և ո՛չ պիտի աղաղա-
կէ, և ո՛չ մէկը պիտի լսէ անոր ձայնը հրապա-
20 րակներուն մէջ։ Ջախջախած եղէգը պիտի չփշրէ,
ու պլպլած պատրոյգը պիտի չմարէ, մինչև որ
21 դատաստանը յաղթութեան հանէ։ Եւ հեթա-
նոսները անոր անուանը պիտի յուսան։
22 [թ]Ան ատենը կոյր ու համր դիւահար մը բերին
իրեն, և զանիկայ բժշկեց, այնպէս որ համրը ու
23 կոյրը խօսեցաւ ու տեսաւ։ Եւ բոլոր ժողովուրդ-
ները զարմացան ու կ՚ըսէին, Արդեօք ասիկա՞յ է
24 Դաւիթի որդին։ [ժ]Բայց փարիսեցիները երբոր
լսեցին, ըսին, Ասիկայ ուրիշ բանով չհաներ
դևերը՝ բայց դևերուն Բէեղզեբուղ իշխանովը։
25 Եւ [ի]Յիսուս անոնց խորհուրդները իմանալով՝
ըսաւ անոնց, Ամէն թագաւորութիւն իրեն դէմ
բաժնուած՝ կ՚աւերի. և ամէն քաղաք կամ տուն
26 իրեն դէմ բաժնուած՝ չկրնար կենալ։ Եւ թէ որ
Սատանան Սատանայ կը հանէ, իրեն դէմ բաժ-
նուեցաւ. ուստի ինչպէ՞ս պիտի կենայ անոր թա-
27 գաւորութիւնը։ Ու թէ որ ես Բէեղզեբուղով
դևերը կը հանեմ, ձեր որդիները ինչո՞վ կը հա-
նեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դատաւոր-
28 ները։ Բայց թէ որ ես Աստուծոյ Հոգիովը կը
հանեմ դևերը, ուրեմն [լ]Աստուծոյ թագաւորու-
29 թիւնը ձեր վրայ հասած է։ [խ]Կամ ինչպէ՞ս կրնայ

է Ես. խբ. 1։
ը Գլ. գ. 17; ժէ. 5։
թ Տես Գլ. թ. 32; Մար. գ. 11; Ղու. ժա. 14։
ժ Գլ. թ. 34; Մար. գ. 22; Ղու. ժա. 15։
ի Գլ. թ. 4; Յօհ. բ. 25; Յայտ. բ. 23։
լ Դան. բ. 44; է. 14; Ղու. ա. 33; ժա. 20; ժէ. 20, 21։
խ Ես. խթ. 24; Ղու. ժա. 21, 22, 23։

մէկը զօրաւոր մարդու մը տունը մտնել, և անոր
կարասիները յափշտակել, թէ որ առաջ ան
զօրաւոր մարդը չկապէ, ու ետքը անոր տունը
30 կողոպտէ։ Ան որ իմ հետս չէ, ինծի հակառակ
է, և ան որ ինծի հետ չժողվեր, ցիրուցան կ՚ընէ։
31 Անոր համար ձեզի կ՚ըսեմ, [ծ]Ամէն մեղք ու հայ-
հոյութիւն պիտի ներուի մարդոց, [կ]բայց Սուրբ
Հոգւոյն դէմ եղած հայհոյութիւնը պիտի չներուի
32 մարդոց. Եւ ով որ [հ]Որդւոյ մարդոյ դէմ բան
կ՚ըսէ, [ձ]պիտի ներուի անոր. բայց ով որ Հո-
գւոյն Սրբոյ դէմ կ՚ըսէ, պիտի չներուի անոր,
ո՛չ աս աշխարհիս մէջ՝ և ո՛չ գալու աշխարհքին մէջ։
33 Կամ ծառը բարի ըրէք, ու [ղ]անոր պտուղը բարի,
կամ ծառը չար ըրէք, ու անոր պտուղը չար.
34 ինչու որ ծառը պտուղէն կը ճանչցուի։ [ճ]Իժերու
ծնունդներ՝ ինչպէս կրնաք բարի խօսիլ, որ չար
էք. ինչու որ [մ]սրտին աւելորդէն բերանը կը
35 խօսի։ Բարի մարդը իր սրտին բարի գանձէն
բարի բաներ կը հանէ, և չար մարդը իր սրտին
36 չար գանձէն չար բաներ կը հանէ։ Բայց ձեզի կ՚ը-
սեմ, թէ Ամէն դատարկ խօսքերու համար որ
մարդիկ կը խօսին, դատաստանին օրը հաշիւ պի-
37 տի տան։ Ինչու որ քու խօսքերէդ պիտի ար-
դարանաս, և քու խօսքերէդ պիտի դատապար-
տուիս։
38 [յ]Ան ատենը դպիրներէն ու փարիսեցիներէն
ոմանք պատասխան տուին իրեն ու ըսին, Վար-
դապետ՝ կ՚ուզենք քեզմէ նշան մը տեսնել։
39 Անիկայ պատասխան տուաւ ու անոնց ըսաւ,

ծ Մար. գ. 28; Ղու. ժբ. 10; Եբր. զ. 4; ժ. 26, 29; ա Յօհ. ե. 16։
կ Գոր. է. 51։
հ Գլ. ժա. 19; ժգ. 55; Յօհ. է. 12, 52։
ձ ա Տիմ. ա. 13։
ղ Գլ. է. 17; Ղու. զ. 43, 44։
ճ Գլ. գ. 7; իգ. 33։
մ Ղու. զ. 45։
յ Գլ. ժզ. 1; Մար. ը. 11; Ղու. ժա. 16, 29; Յօհ. բ. 18; ա Կոր. ա. 22։

Չար և վ շնացող ազգը նշան կ'ուզէ, և ուրիշ
նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան
40 մարգարէին նշանը ։ Քանզի տ ինչպէս որ Յով-
նան իրեք օր ու իրեք գիշեր կէտ ձուկին փորին
մէջն էր, անանկ ալ Որդին մարդոյ պիտի ըլլայ
երկրիս սրտին մէջը իրեք օր ու իրեք գիշեր ։
41 ր Նինուէի մարդիկը դատաստանին օրը աս ազգին
դէմ պիտի ելլեն ու ց պիտի դատապարտեն ասի-
կայ, ւ ինչու որ Յովնանին քարոզութեամբը
զղջլի եղան. և ահա Յովնանէն մեծ մէկը կայ
42 հոս ։ փ Հարաւի թագուհին դատաստանին օրը
աս ազգին դէմ պիտի ելլէ ու պիտի դատապարտէ
ասիկայ, ինչու որ ինքը երկրի ծայրերէն եկաւ
Սողոմոնին իմաստութիւնը լսելու. և ահա Սո-
ղոմոնէն մեծ մէկը կայ հոս ։
43 ք Ու երբոր պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ,
օ անջուր տեղուանք կը պտըտի, հանգստութիւն
44 կը փնտռէ ու չգտներ. Ան ատենը կ'ըսէ, Դառ-
նամ նորէն իմ տունս՝ ուսկից որ ելայ. և կու-
գայ զանիկայ կը գտնէ պարապ՝ մաքրուած ու
45 յարդարուած ։ Ան ատենը կ'երթայ և իր
հետը կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի
չար, ու մտնելով հոն կը բնակին, և ֆ այն
մարդուն վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ. ասանկ
պիտի ըլլայ աս չար ազգին ալ ։
46 Ու քանի որ ինքը ժողովուրդին կը խօսէր,
ա ահա իր մայրը ու բ եղբայրները դուրսը կայներ

վ Եսա. ծէ. 3 ։ Գլ. ժզ. 4 ։ Մար. ը. 38 ։ Յոհ. դ. 48 ։
տ Յովն. ա. 17 ։
ր Ղու. ժա. 32 ։
ց Տես Երեմ. գ. 11 ։ Եզեկ. ժզ. 51, 52 ։ Հռովմ. բ. 27 ։
ւ Յովն. գ. 5 ։
փ գ Թագ. ժ. 1 ։ բ Մն. թ. 1 ։ Ղու. ժա. 31 ։
ք Ղու. ժա. 24 ։
օ Յոբ. ա. 7 ։ ա Պետ. ե. 8 ։
ֆ Եբր. զ. 4 ։ ժ. 26 ։ բ Պետ. բ. 20, 21, 22 ։
ա Մար. գ. 31 ։ Ղու. ը. 19, 20, 21 ։
բ Գլ. ժգ. 55 ։ Մար. զ. 3 ։ Յոհ. բ. 12 ։ է. 3, 5 ։ Գործ. ա. 14 ։ ա Կոր. թ. 5 ։ Գաղ. ա. 19 ։

47 էին, և կ'ուզէին իր հետը խօսիլ ։ Ու մէկը
իրեն ըսաւ, Ահա քու մայրդ ու եղբայրներդ
դուրսը կայներ են, և կ'ուզեն հետդ խօսիլ ։
48 Ան ալ իրեն ըսողին պատասխան տուաւ ու ըսաւ,
Ո՞վ է իմ մայրս, և ո՞վ են իմ եղբայրներս ։
49 Ու իր ձեռքը դէպ 'ի իր աշակերտներուն երկընցը-
նելով ըսաւ, Ահա իմ մայրս և իմ եղբայրներս.
50 Վասն զի գ ով որ իմ երկնաւոր Հօրս կամքը
կատարէ, անիկայ է իմ եղբայրս և քոյրս ու
մայրս ։

ԳԼ. ԺԳ

3 Սերմնացանին առակը. 18 անոր մեկնութիւնը ։ 24 Որոմին, 31 մանանեխին, 33 խմորին, 44 ծածկուած գանձին, 45 մարգարիտին 47 ու ծովը ձգուած ուռկանին առակները ։ 53 Քրիստոս կ'անարգուի իր հայրենակիցներէն ։

1 Այն օրը Յիսուս տունէն ելլելով՝ դ ծովուն եզերքը
2 նստաւ ։ ե Ու շատ ժողովուրդներ քովը
ժողվուեցան, անանկ որ զ ինքը նաւը մտաւ ու
նստաւ. և բոլոր ժողովուրդը ծովեզերքը կայներ
3 էր ։ Ու շատ բաներ խօսեցաւ անոնց առակնե-
րով՝ և ըսաւ,
4 է Ահա սերմ ցանողը ելաւ որ սերմ ցանէ. ու
երբոր կը ցանէր՝ մէկ քանիները ճամբուն քովը
ինկան, և թռչունները եկան ու կերան զանոնք ։
5 Ու ուրիշները ապառաժուտ տեղերու վրայ ինկան՝
ուր որ շատ հող չկար, և շուտ մը բուսան հողը
6 խորունկութիւն չունենալուն համար. Սակայն
արեւուն ծագած ատենը այրեցան, ու արմատ չու-
7 նենալնուն համար չորցան ։ Ու ուրիշները ինկան
փուշերու մէջ, և փուշերը ելան ու խեղդեցին զա-
8 նոնք ։ Ու ուրիշները ինկան աղէկ հողի մէջ,
ու պտուղ կու տային՝ մէկը [illegible] ը հարիւր,

գ Տես Յոհ. ժե. 14 ։ Գաղ. ե. 6 ։ զ. 15 ։ Կող. գ. 11 ։ Եբր. բ. 11 ։
դ Մար. դ. 1 ։
ե Ղու. ը. 4 ։
զ Ղու. ե. 3 ։
է Ղու. ը. 5 ։
ը Ծն. իզ. 12 ։

9 որը վաթսուն , և որը երեսուն ։ [զ]Ան որ լսելու
ականջ ունի , թող լսէ ։
10 Ու աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն , Ինչո՞ւ
11 համար առակներով կը խօսիս անոնց ։ Ան ալ
պատասխան տուաւ ու ըսաւ անոնց , Անոր հա-
մար՝ որ [է]ձեզի տրուած է գիտնալ երկնից թա-
գաւորութեանը խորհուրդները , և անոնց տրուած
12 չէ ։ [ը]Վասն զի ով որ ունի , անոր պիտի տրուի
ու պիտի աւելնայ . և ով որ չունի , ունեցածն
13 ալ անկէ պիտի առնուի ։ Անոր համար առակ-
ներով կը խօսիմ անոնց , որ կը տեսնեն՝ ու չեն
տեսներ , և կը լսեն՝ ու չեն լսեր ու միտք չեն
14 առներ ։ Ու անոնց վրայ կը կատարուի Եսա-
յիին մարգարէութիւնը որ կ'ըսէ , [թ]Լսելով
պիտի լսէք՝ ու պիտի չիմանաք , և տեսնելով
15 պիտի տեսնէք՝ ու պիտի չտեսնէք ։ Ին-
չու որ աս ժողովուրդին սիրտը թանձրացաւ ,
և [ժ]իրենց ականջներովը ծանր լսեցին , ու
աչքերնին գոցեցին , որ չըլլայ թէ բնաւ աչ-
քերով տեսնեն և ականջներով լսեն և սր-
տով իմանան ու դարձի գան , և ես անոնք
16 բժշկեմ ։ [ի]Բայց երանի է ձեր աչքերուն՝ որ կը
17 տեսնեն , ու ձեր ականջներուն որ կը լսեն ։ [լ]Քան-
զի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ շատ մարգարէներ
և արդարներ փափաքեցան ձեր տեսածները տեսնե-
լու՝ ու չտեսան , և ձեր լսածները լսելու՝ ու չլսեցին ։
18 [խ]Հիմա դուք սերմ ցանողին առակը լսեցէք ։

զ Գլ. ժա. 15 ։ Մար. դ. 9 ։
է Գլ. ժա. 25 ։ ժզ. 17 ։ Մար. դ. 11 ։ ա Կոր. բ. 10 ։ ա Յով. բ. 27 ։
ը Գլ. իե. 29 ։ Մար. դ. 25 ։ Ղու. ը. 18 ։ ժթ. 26 ։
թ Ես. զ. 9 ։ Եզեկ. ժբ. 2 ։ Մար. դ. 12 ։ Ղու. ը. 10 ։ Յով. ժբ. 40 ։ Գոր. իը. 26, 27 ։ Հռով. ժա. 8 ։ բ Կոր. գ. 14, 15 ։
ժ Եբր. ե. 11 ։
ի Գլ. ժզ. 17 ։ Ղու. ժ. 23, 24 ։ Յով. ի. 29 ։
լ Եբր. ժա. 13 ։ ա Պետ. ա. 10, 11 ։
խ Մար. դ. 14 ։ Ղու. ը. 11 ։

19 Ան ամէնը որ [ծ]թագաւորութեան խօսքը կը լսէ
ու միտք չառներ , չարը կու գայ ու անոր սրտին
մէջ ցանուածը կը յափշտակէ . ասիկա ան է որ
20 ճամբուն քովը ցանուեցաւ ։ Ու ապառաժուտ
տեղերու վրայ ցանուածը ան է՝ որ երբ կը լսէ
խօսքը , շուտ մը [կ]ուրախութեամբ կ'ընդունի զա-
21 նիկա . Բայց իր մէջը արմատ չունենալով՝ քիչ
ժամանակ կը տևէ . ու երբոր նեղութիւն կամ
հալածանք ըլլայ խօսքին համար , շուտ մը [հ]կը
22 գայթակղի ։ Ու [ձ]փուշերուն մէջ ցանուածը
[ղ]ան է՝ որ երբ կը լսէ խօսքը , աշխարհիս զբաղ-
մունքը և հարստութեան խաբէութիւնը խօսքը կը
23 խեղդեն , ու կ'ըլլայ անպտուղ ։ Իսկ աղէկ հողի
մէջ ցանուածը ան է՝ որ երբ կը լսէ խօսքը , միտք
կ'առնէ , և պտուղ կու տայ՝ որը հարիւր , որը
վաթսուն ու որը երեսուն ։
24 Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու
ըսաւ , Երկնից թագաւորութիւնը նմանեցաւ մէկ
մարդու մը , որ իր արտին մէջ բարի սերմ ցանեց .
25 Ու երբոր մարդիկ կը քնանային , իր թշնամին
եկաւ ու ցորենին մէջ որոմ ցանեց և գնաց .
26 Ու երբոր խոտը բուսաւ ու պտուղ բերաւ , անկէ
27 ետև որոմն ալ երևցաւ ։ Ուստի տանուտիրոջը
ծառաները մօտեցան ու իրեն ըսին , Տէ՛ր , չէ՞ որ
դուն քու արտիդ մէջ բարի սերմ ցանեցիր ,
28 ուրեմն որոմը ուսկից ունի ։ Ու անիկա ըսաւ
անոնց , Մէկ թշնամի մարդ մը ըրած է ասիկա .
ծառաները իրեն ըսին , Հիմա կ'ուզե՞ս որ եր-
29 թանք անիկա մէկդի քաղենք ։ Ան ալ ըսաւ ,
Չէ , չըլլայ թէ որոմը քաղած ատեննիդ ցորենն
30 ալ անոր հետը փրցընէք ։ Թո՛ղ տուէք որ եր-

ծ Գլ. դ. 23 ։
կ Ես. ծը. 2 ։ Եզեկ. լգ. 31, 32 ։ Յով. ե. 35 ։
հ Գլ. ժա. 6 ։ բ Տիմ. ա. 15 ։
ձ Երեմ. դ. 3 ։
ղ Գլ. ժթ. 23 ։ Մար. ժ. 23 ։ Ղու. ժը. 24 ։ ա Տիմ. զ. 9 ։ բ Տիմ. դ. 10 ։

կուքն ալ մէկտեղ աճին մինչեւ հունձքի ատենը.
եւ հունձքին ատենը հնձողներուն պիտի ըսեմ, Նա-
խաջ որոմը քաղեցէք, եւ անիկայ խուրձ խուրձ կա-
պեցէք այրելու համար, իսկ ձցորենը իմ ամբարս
ժողվեցէք:
31 Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու
ըսաւ, ղԵրկնից թագաւորութիւնը մանանեխի
հատի նման է, որն որ մարդ մը առաւ՝ իր արտին
32 մէջը ցանեց. Որ ամէն սերմերէն պզտիկ է, ու
երբոր աճի՝ ամէն խոտեղէններէն մեծ է, ու ծառ
կ'ըլլայ, անանկ որ երկնից թռչունները կու գան,
եւ անոր ճիւղերուն վրայ կը հանգչին:
33 ճՈւրիշ առակ մըն ալ զրուցեց անոնց — ը-
սաւ —, Երկնից թագաւորութիւնը խմորի նման է,
որն որ կնիկ մը առաւ՝ իրեք գրիւ ալիւրի մէջ պա-
հեց, մինչեւ որ ամէնն ալ խմորեցաւ:
34 Յիսուս մայս ամէն բաները առակներով խօսե-
ցաւ ժողովուրդին, ու առանց առակի բան մը չէր
35 խօսեր անոնց. Որ կատարուի մարգարէին ձեռքով
ըսուած խօսքը, յԱռակներով պիտի բանամ իմ
բերանս, նաշխարհի սկիզբէն 'ի վեր ծածկուած
բաները յառաջ պիտի բերեմ:
36 Այն ատենը Յիսուս ժողովուրդները թողուց,
տունը եկաւ. եւ իր աշակերտները մօտեցան իրեն
ու ըսին, Արտին որոմներուն առակը մեկնէ՛ մեզի:
37 Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Բա-
38 րի սերմը ցանողը Որդին մարդոյ է. Եւ շարտը
աշխարհս է. իսկ բարի սերմը անոնք են, որ
թագաւորութեանը որդիքն են, բայց որոմը

ձ Գլ. գ. 12:
ղ Ես. բ. 2, 3; Միք. դ. 1; Մար. դ. 31; Ղու. ժգ. 18, 19:
ճ Ղու. ժգ. 20:
մ Մար. դ. 33, 34:
յ Սաղ. հը. 2:
ն Հռով. ժզ. 25, 26; Ա Կոր. բ. 7; Եփե. գ. 9; Կող. ա. 26:
շ Գլ. իդ. 14; իը. 19; Մար. ժզ. 15, 20; Ղու. իդ. 47; Հռով. ժ. 18; Կող. ա. 6:

39 ոչարին որդիքն են. Եւ թշնամին որ անիկայ ցա-
նեց, Սատանան է, եւ չհունձքը աշխարհիս վերջն
40 է, ու հնձողները հրեշտակներն են: Արդ ինչպէս որ
որոմը կը ժողվուի ու կրակի մէջ կ'այրի, աշխար-
41 հիս վերջն ալ անանկ պիտի ըլլայ: Որդին մարդոյ
իր հրեշտակները պիտի ղրկէ, ու պպիտի ժողվեն
անոր թագաւորութենէն բոլոր գայթակղութիւն-
42 ները՝ եւ անոնք որ անօրէնութիւն կը գործեն, ջՈւ-
կրակի հնոցին մէջ պիտի ձգեն զանոնք. ռՀոն պի-
43 տի ըլլայ լալ ու ակռաներ կրճտել: սԱն
ատենը արեւի պէս պիտի փայլին արդարները իրենց
Հօրը թագաւորութեանը մէջ: վԱն որ լսելու
ականջ ունի, թող լսէ:
44 Դարձեալ երկնից թագաւորութիւնը արտի մէջ
պահուած գանձի նման է, որ անիկայ մէկ մարդ
մը գտնելով՝ կը ծածկէ, եւ ուրախութենէն
կ'երթայ տբոլոր ունեցածը կը ծախէ, ու րան
արտը կը գնէ:
45 Դարձեալ երկնից թագաւորութիւնը վաճառա-
կան մարդու մը նման է, որ գեղեցիկ մարգարիտներ
46 կը փնտռէ. Եւ ցմէկ պատուական մարգարիտ մը
գտնելով՝ գնաց իր բոլոր ունեցածը ծախեց, ու
զանիկայ գնեց:
47 Դարձեալ երկնից թագաւորութիւնը ծովը
ձգուած ուռկանի մը նման է, որ ւամէն տեսակէն
48 կը ժողվէ. Որ երբոր լեցուեցաւ՝ ցամաքը հա-
նեցին, ու նստան աղէկները ամաններու մէջ

ո Ծն. գ. 13; Յօհ. ը. 44; Գոր. ժգ. 10; Ա Յօհ. գ. 8:
չ Յովէլ. գ. 13; Յայտ. ժդ. 15:
պ Գլ. ժը. 7; Բ Պետ. բ. 1, 2:
ջ Գլ. գ. 12; Յայտ. ժթ. 20; ի. 10:
ռ Գլ. ը. 12; Հմր 50:
ս Դան. ժբ. 3; Ա Կոր. ժե. 42, 43:
վ Հմր 9:
տ Փիլ. գ. 7, 8:
ր Ես. ծե. 1; Յայտ. գ. 18:
ց Առակ. բ. 4; գ. 14, 15; ը. 10, 19:
ւ Գլ. իբ. 10:

49 ժողվեցին ու անպէտքը դուրս ձգեցին : Նոյնպէս պի-
տի ըլլայ աշխարհիս վերջը . հրեշտակները պիտի
ելլեն ու °արդարներուն մէջէն չարերը պիտի զա-
50 տեն , Եւ ‡պիտի ձգեն զանոնք կրակի հնոցին մէջ .
հոն պիտի ըլլայ լաց ու ակռաներ կրճտել :
51 Ըսաւ անոնց Յիսուս , Հասկցա՞ք ասոնք ամէն
52 բաները . ըսին անոր , Այո՛ Տէր : Եւ անիկայ ը-
սաւ անոնց , Անոր համար ամէն դպիր որ երկնից
թագաւորութեան աշակերտեալ է , նման է տա-
նուտէր մարդու մը՝ որ իր գանձէն —նոր ու հին
բաներ կը հանէ :
53 Ու երբոր կատարեց Յիսուս այս առակները ,
54 անկէ մեկնեցաւ . F Եւ եկաւ իր գաւառը , ու
անոնց կը սորվեցնէր իրենց ժողովարանին մէջ ,
մինչեւ որ կը զարմանային անոնք ու կ'ըսէին ,
Ասիկայ ուրկից ունի այս իմաստութիւնը եւ հրաշք-
55 ները . ‡Ասիկայ հիւսնին որդին չէ՞ . ասոր մայրը
Մարիամ չէ՞ կոչուիր , ու ⊤ասոր եղբայրները՝ ⊢Յա-
56 կոբոս եւ Յովսէս ու Սիմոն եւ Յուդա . Ու
ասոր քոյրերը ամէնը մեր քով չե՞ն . ալ ինքը
57 ուրկից ունի այս ամէն բաները : Եւ անոր վրայով
ղկը գայթակղէին . բայց Յիսուս ըսաւ անոնց ,
⊢Մարգարէ մը անպատիւ չէ՝ բայց միայն իր գա-
58 ւառին ու իր տանը մէջ : Եւ ⊏հոն շատ հրա-
շքներ չըրաւ անոնց անհաւատութեանը համար :

c Գլ. իե. 32 :
‡ Հմր 42 :
— Երգ. է. 13 :
F Գլ. բ. 23 : Մար. զ. 1 :
Ղու. դ. 16, 23 :
‡ Եսա. խթ. 7 : Մար. զ. 3 :
Ղու. դ. 23 : Յով. դ. 42 :
⊤ Գլ. ժբ. 46 :
⊢ Մար. ժե. 40 :
ղ Գլ. ժա. 6 : Մար. զ. 3, 4 :
⊢ Ղու. դ. 24 : Յով. դ. 44 :
⊏ Մար. զ. 5, 6 :

ԳԼ. ԺԴ

1 Հերովդէսին կարծիքը Քրիստոսի վրայով : 3 Յովհաննէս մկրտչին գլխատուելուն պատճառը : 13 Յիսուս անապատ տեղ մը կ'երթայ , 15 ուր տեղ հինգ հազար հոգի կը կերակրէ հինգ նկանակով ու երկու ձուկով . 22 ծովուն վրայ քալելով՝ իր աշակերտներուն կ'երթայ , 34 և Գեննեսարեթի ցամաքը ելլելով հիւանդները կը բժշկէ՝ անոնց իր հանդերձին ծայրին դպչելովը :

1 Այն ժամանակը —Հերովդէս չորրորդապետը Յի-
2 սուսին համբաւը լսեց . Ու իր ծառաներուն
ըսաւ , Ասիկայ Յովհաննէս մկրտիչն է . անիկայ
մեռելներէն յարութիւն առած է , եւ անոր համար
հրաշքներ կ'ըլլան անով :
3 Քանզի F Հերովդէս Յովհաննէսը բռներ , զա-
նիկայ կապեր ու բանտը դրեր էր՝ իր եղբօրը Փիլիպ-
4 պոսին կնկանը Հերովդիայի համար : Վասն զի
Յովհաննէս անոր կ'ըսէր , ‡Քեզի օրինաւոր չէ
5 անիկայ քեզ ունենալ : Ուստի կ'ուզէր զանիկայ
սպաննել , բայց ժողովուրդէն կը վախնար ,
⊤ինչու որ իբրեւ մարգարէ կ'ընդունէին զանիկայ :
6 Ու երբոր Հերովդէսին ծննդեան օրը եղաւ ,
Հերովդիայի աղջիկը խաղաց հանդէսի ատենին
7 մէջ , ու Հերովդէսին հաճելի եղաւ : Ուստի
երդումով խոստացաւ որ տայ անոր ինչ որ
8 ուզելու ըլլայ : Եւ անիկայ առաջ իր մօրմէն խրա-
տուելով՝ ըսաւ , Տո՛ւր ինծի հոս Յովհաննէս
9 մկրտչին գլուխը սկուտեղի մը վրայ : Եւ թա-
գաւորը տրտմեցաւ . բայց երդումներուն համար
ու իր հետը նստողներուն համար հրաման ըրաւ որ
10 տրուի : Եւ մարդ խրկելով Յովհաննէսը բանտին
11 մէջ գլխատեց : Եւ անոր գլուխը սկուտեղով
բերուեցաւ ու տրուեցաւ աղջկանը , ան ալ իր
12 մօրը տարաւ : Եւ անոր աշակերտները եկան ու
մարմինը վերցնելով թաղեցին , եւ գացին Յի-
սուսին պատմեցին :
13 Ու ⊢երբոր լսեց Յիսուս , անկէ նաւով անա-
պատ տեղ մը գնաց առանձին . երբոր լսեցին

— Մար. զ. 14 : Ղու. թ. 7 :
F Մար. զ. 17 : Ղու. գ. 19, 20 :
‡ Ղև. ժը. 16 : ի. 21 :
⊤ Գլ. իա. 26 : Ղու. ի. 6 :
⊢ Գլ. ժ. 23 : ժբ. 15 : Մար. զ. 32 : Ղու. թ. 10 : Յով. զ. 1, 2 :

ժողովուրդները՝ ոտքով անոր ետևէն գացին իրենց
քաղաքներէն ։
14 Ու *երբոր դուրս ելաւ , շատ ժողովուրդ-
տեսնելով՝ խղճաց անոնց վրայ , ու անոնց հի-
ւանդները բժշկեց ։
15 ե Եւ իրիկուան ատեն իր աշակերտները իրեն
եկան ու ըսին , Հոս անապատ տեղ մըն է , և
ժամանակը ուշացած է ․ արձակէ ժողովուրդները ,
16 որ գեղերը երթան ու իրենց կերակուր գնեն ։ Եւ
Յիսուս անոնց ըսաւ , Հարկ չէ որ անոնք եր-
17 թան , դուք տուէք ատոնց որ ուտեն ։ Անոնք ալ
ըսին անոր , Հոս ուրիշ բան մը չունինք , բայց
18 միայն հինգ նկանակ ու երկու ձուկ ։ Ու ըսաւ
19 անոնց , Հոս ինծի բերէք զանոնք ։ Եւ հրաման
ըրաւ որ ժողովուրդները խոտին վրայ նստին ․ և
հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ , ու դէպ 'ի
երկինքը նայելով օրհնեց , ու կտրելով նկանակ-
ները աշակերտներուն տուաւ , և աշակերտները
20 ժողովուրդին ։ Եւ ամէնքը կերան ու կշտացան ,
և տասուերկու կողով լեցուն աւելցած կտորուանք-
21 ները վերցուցին ։ Եւ անոնք որ կերան , հինգ
հազարի չափ էրիկ մարդիկ էին՝ կնիկներէն և
տղաքներէն 'ի զատ ։
22 †Եւ շուտ մը աշակերտները արտորցուց որ նաւը
մտնեն , և իրմէ առաջ անդին կողմը անցնին ,
23 մինչև որ ինքը ժողովուրդները արձակէ ։ է Եւ
ժողովուրդները արձակելէն ետքը՝ ինքը լեռը ելաւ
առանձին աղօթք ընելու ․ ու ը երբոր իրիկուն
24 եղաւ , հոն մինակ էր ․ Իսկ նաւը արդէն ծովուն
մէջտեղը ալէկոծութեան մէջ էր , ինչու որ հովը
25 դէմ էր ։ Ու գիշերուան չորրորդ պահուն Յիսուս

* Ուրիշ՝ երբոր Յիսուս
դ Գղ․ թ․ 36 ։ Մար․ զ․ 34 ։
ե Մար․ զ․ 35 ։ Ղու․ թ․ 12 ։ Յօհ․ զ․ 5 ։
զ Գղ․ ժե․ 36 ։
† Ուրիշ՝ Եւ Յիսուս
է Մար․ զ․ 46 ։
ը Յօհ․ զ․ 16 ։

26 դէպ 'ի անոնց գնաց՝ ծովուն վրայ քալելով ։ Եւ
աշակերտները երբոր անիկայ տեսան՝ որ ժ ծովուն
վրայ կը քալէր , խռովեցան , և ըսին թէ աչքի
երևոյթ բան մըն է ․ ու վախերնուն կանչուըռտե-
27 ցին ։ Եւ շուտ մը Յիսուս խօսեցաւ անոնց ու
28 ըսաւ , Քա՛ջ եղէք՝ ես եմ , մի՛ վախնաք ։ Պետ-
րոս պատասխան տուաւ անոր ու ըսաւ , Տէ՛ր՝ թէ
որ դուն ես , հրաման ըրէ ինծի որ քեզի գամ ջու-
29 րերուն վրայէն ։ Ան ալ ըսաւ , Եկո՛ւր ․ Պետրոս
ալ նաւէն իջաւ , ջուրերուն վրայէն քալեց որ
30 Յիսուսին քովը երթայ ․ Բայց հովը սաստիկ տես-
նելով՝ վախցաւ , ու երբոր սկսաւ ընկղմիլ , աղա-
31 ղակեց ու ըսաւ , Տէ՛ր , ազատէ զիս ։ Եւ
Յիսուս շուտ մը իր ձեռքը երկնցուց , բռնեց
զանիկայ ու անոր ըսաւ , Թերահաւատ՝ ինչո՞ւ
32 երկմտեցար ։ Ու երբոր նաւը ելան , հովը դադա-
33 րեցաւ ։ Եւ անոնք որ նաւուն մէջն էին , եկան
երկրպագութիւն ըրին անոր ու ըսին , Իրաւցընէ
ժա Որդի Աստուծոյ ես դուն ։
34 ժբ Ու անդին կողմը անցնելով՝ Գեննեսարեթի
35 երկիրը հասան ։ Ու երբոր ան տեղի մարդիկը
ճանչցան զանիկայ , լուր խրկեցին բոլոր շրջակայ
տեղուանքը , ու բոլոր հիւանդները անոր բերին ․
36 Եւ կ'աղաչէին անոր , որ միայն իր հանդերձին
քղանցքին դպչին ․ և ժգ անոնք որ դպան՝ բժշկուե-
ցան ։

ժ Յոբ․ թ․ 8 ։
ժա Սաղ․ բ․ 7 ։ Մար․ ա․ 1 ։ Գղ․ ժզ․ 16 ։ իզ․ 63 ։ Ղու․ դ․ 42 ։ Յօհ․ ա․ 49 ։ զ․ 70 ։ ժա․ 27 ։ Գործ․ ը․ 37 ։ Հռով․ ա․ 4 ։
ժբ Մար․ զ․ 53 ։
ժգ Գղ․ թ․ 20 ։ Մար․ գ․ 10 ։ Ղու․ զ․ 19 ։ Գործ․ ժթ․ 12 ։

ԳԼ․ ԺԵ

3 Քրիստոս կը յանդիմանէ դպիրները և փարիսեցիները՝ որոնք իրենց աւանդութեանց պատճառաւ զանց կ'ընէին Աստուծոյ պատուիրանքները ․ 11 ու կը սորվեցընէ թէ բերանը մտած բանը մարդս չպղծեր ․ 21 կը բժշկէ Քանանացի կնկանը աղ-

ջնէր, 30 և ուրիշ շատ ժողովուրդներ․ 32 եօթը նկանակով ու քանի մը ձուկով չորս հազար էրիկ մարդիկ կը կշտացընէ, կնիկներէն ու տղաքներէն 'ի զատ ։

1 Ան ատենը [ա]Յիսուսին եկան դպիրները ու փա–
րիսեցիները՝ որ Երուսաղէմէն էին, ու ըսին,
2 [բ]Ինչո՞ւ քու աշակերտներդ [գ]ծերերուն աւանդու–
թիւնը զանց կ'ընեն, ինչու որ ձեռքերնին չեն
3 լուար, երբոր հաց կ'ուտեն ։ Ան ալ պատասխան
տուաւ ու ըսաւ անոնց, Հապա դուք ինչո՞ւ Աս–
տուծոյ պատուիրանքը զանց կ'ընէք ձեր աւանդու–
4 թեանը պատճառաւ ։ Քանզի Աստուած պատուի–
րեց ըսելով, [դ]Քու հայրդ ու մայրդ պատուէ․
5 Եւ [ե]Ով որ իր հայրը կամ մայրը անիծէ, մահով
6 թող մեռնի ։ Բայց դուք կ'ըսէք, Ով որ իր
հօրը կամ մօրը ըսէ թէ [զ]Ան բանը որ ինծմէ
պիտի շահիս, Աստուծոյ տուրք ընծայ է․ ու
իր հայրը կամ իր մայրը չպատուէ, ազատ է․
և այսպէս ձեր աւանդութեանը պատճառաւ Աս–
7 տուծոյ պատուիրանքը խափանած էք ։ [է]Կեղծա–
ւորներ՝ աղէկ մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ
8 Եսայի ու ըսաւ, [ը]Աս ժողովուրդը ինծի *շըր–
թունքներովը զիս կը պատուէ, բայց իրենց սիր–
9 տը հեռացած զատուած է ինծմէ․ Ու պարապ
տեղը զիս կը պաշտեն, [թ]մարդոց պատուիրած
բաները իբրեւ վարդապետութիւն սորվեցընելով ։
10 [ժ]Եւ ժողովուրդները իրեն կանչելով՝ ըսաւ ա–
11 նոնց, Լսեցէք ու մտք առէք․ [ի]Չէ թէ ինչ որ

[ա] Մար․ է․ 1 ։
[բ] Մար․ է․ 5 ։
[գ] Կող․ բ․ 8 ։
[դ] Ել․ ի․ 12 ։ Ղև․ ժթ․ 3 ։ Բ Օր․ ե․ 16 ։ Առակ․ իգ․ 22 ։ Եփե․ զ․ 2 ։
[ե] Ել․ իա․ 17 ։ Ղև․ ի․ 9 ։ Բ Օր․ իէ․ 16 ։ Առակ․ ի․ 20 ։ լ․ 17 ։
[զ] Մար․ է․ 11, 12 ։
[է] Մար․ է․ 6 ։
[ը] Ես․ իթ․ 13 ։ Եզեկ․ լգ․ 31 ։
* Ոմանք՝ բերնովը ինծի կը մօտենայ, և շրթունքներովը
[թ] Ես․ իթ․ 13 ։ Կող․ բ․ 18–22 ։ Տիտ․ ա․ 14 ։
[ժ] Մար․ է․ 14 ։
[ի] Գործ․ ժ․ 15 ։ Հռով․ ժդ․ 14, 17, 20 ։ ա Տիմ․ դ․ 4 ։ Տիտ․ ա․ 15 ։

բերանը կը մտնէ՝ կը պղծէ մարդը, հապա ինչ
որ բերնէն կ'ելլէ՝ անիկայ կը պղծէ մարդը ։
12 Ան ատենը իր աշակերտները եկան՝ ըսին իրեն,
Գիտե՞ս որ փարիսեցիները գայթակղեցան՝ երբոր
13 լսեցին այն խօսքը ։ Ան ալ պատասխան տալով
ըսաւ, [լ]Ամէն տունկ որ իմ երկնաւոր Հայրս չէ
14 տնկեր, պիտի խլուի ։ Թո՛ղ տուէք անոնք․
[խ]Իրենք կոյր են՝ կոյրերու առաջնորդ․ իսկ թէ որ
կոյրը կոյրին առաջնորդէ, երկուքն ալ փոսը պի–
15 տի իյնան ։ Եւ [ծ]Պետրոս պատասխան տալով
16 անոր ըսաւ, Մեկնէ մեզի աս առակը ։ Ըսաւ
Յիսուս, [կ]Դո՞ւք ալ տակաւին անմիտ էք․
17 Ու չէ՞ք հասկընար թէ [հ]ամէն ինչ որ բերանը
կը մտնէ, փորը կ'երթայ ու արտաքնոցը կը
18 ձգուի․ Բայց [ձ]բերնէն ելած բաները սրտէն յա–
19 ռաջ կու գան, և անոնք կը պղծեն մարդը ։ [ղ]Ին–
չու որ սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ, սպա–
նութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ,
գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհո–
20 յութիւններ ։ Ասոնք են որ կը պղծեն մարդը,
բայց անլուայ ձեռքով հաց ուտելը չպղծեր մարդը ։
21 [ճ]Եւ Յիսուս անկէ ելլելով՝ Տիւրոսի ու Սիդոնի
22 կողմերը գնաց ։ Եւ ահա Քանանացի կնիկ մը
ան սահմաններէն ելած՝ կ'աղաղակէր անոր ու կ'ը–
սէր, Ողորմէ՛ ինծի Տէր՝ որդի Դաւթի, աղ–
23 ջիկս դևէն սաստիկ կը չարչարուի ։ Եւ ինքը
բնաւ պատասխան մը չտուաւ անոր, ու իր աշա–
կերտները մօտենալով՝ կ'աղաչէին իրեն ու կ'ըսէ–
ին, Արձակէ՛ զանիկայ, վասն զի մեր ետևէն կ'ա–
24 ղաղակէ ։ Եւ ինքը պատասխան տուաւ ու

[լ] Յովհ․ ժե․ 2 ։ ա Կոր․ գ․ 12, ևն ։
[խ] Ես․ թ․ 16 ։ Մաղ․ բ․ 8 ։ Գլ․ իգ․ 16 ։ Ղու․ զ․ 39 ։
[ծ] Մար․ է․ 17 ։
[կ] Գլ․ ժզ․ 9 ։ Մար․ է․ 18 ։
[հ] ա Կոր․ զ․ 13 ։
[ձ] Յակ․ գ․ 6 ։
[ղ] Ծն․ զ․ 5 ։ ը․ 21 ։ Առակ․ զ․ 14 ։ Երեմ․ ժէ․ 9 ։ Մար․ է․ 21 ։
[ճ] Մար․ է․ 24 ։

ըսաւ. [մ]Ես ուրիշ մը չղրկուեցայ՝ բայց միայն
25 Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն : Եւ
անիկայ եկաւ երկրպագութիւն կ'ընէր անոր ու
26 կ'ըսէր, Տէ՛ր օգնէ ինծի : Ան ալ պատասխան
տուաւ ու ըսաւ, [յ]Աղէկ չէ տղոց հացը առնել,
27 ու շուներուն ձգել : Եւ անիկայ ըսաւ, Այո՛
Տէր, ինչու որ շուներն ալ իրենց տիրոջը սեղա-
28 նէն ինկած փշրանքներէն կը կերակրուին : Ան
ատենը Յիսուս պատասխան տուաւ անոր ու ը-
սաւ, Ո՛վ կին՝ քու հաւատքդ մեծ է, քու ու-
զածիդ պէս ըլլայ քեզի . և նոյն ժամէն անոր աղ-
ջիկը բժշկուեցաւ :
29 [ն]Ու Յիսուս անկէ գնաց՝ [շ]Գալիլեայի ծովեզեր-
30 քը եկաւ, և լեռը ելլելով հոն նստաւ : Եւ
[ո]շատ ժողովուրդներ իրեն եկան, որ իրենց հետ
ունէին կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ
և ուրիշ շատեր . ու ձգեցին անոնք Յիսուսի ոտ-
31 քը, և բժշկեց զանոնք . Անանկ որ ժողովուրդ-
ները զարմացան, տեսնելով որ համրերը կը խօ-
սէին, հաշմանդամները կը բժշկուէին, կաղերը կը
քալէին և կոյրերը կը տեսնէին, ու Իսրայէլի
Աստուածը կը փառաւորէին :
32 [չ]Եւ Յիսուս իր աշակերտները քովը կանչելով՝
ըսաւ, Կը խղճամ այս ժողովուրդին վրայ, ինչու
որ հիմա իրեք օր է որ իմ քովս են, և բան մը
չունին ուտելու . ու անոնք անօթի արձակել չեմ
33 ուզեր, չըլլայ որ ճամբան մարին : Իսկ [պ]աշա-
կերտները անոր ըսին, Մենք անապատի մէջ ո՞ւր-
կից պիտի ունենանք այնչափ հաց, որ այսչափ
34 բազմութիւնը կշտացընենք : Եւ Յիսուս ըսաւ

[մ] Գլ. Ժ. 5, 6 ։ Գործ. Գ. 25, 26 ։ ԺԳ. 46 ։ Հռով. ԺԵ. 8 ։
[յ] Գլ. Է. 6 ։ Փիլ. Գ. 2 ։
[ն] Մար. Է. 31 ։
[շ] Գլ. Դ. 18 ։
[ո] Եսա. ԼԵ. 5, 6 ։ Գլ. ԺԱ. 5 ։ Ղուկ. Է. 22 ։
[չ] Մար. Ը. 1 ։
[պ] Դ Թագ. Դ. 43 ։

անոնց, [ջ]Քանի՞ նկանակ ունիք . անոնք ալ ըսին,
35 Եօթը, ու քանի մը մանր ձուկեր : Եւ հրաման
36 ըրաւ ժողովուրդին որ գետնին վրայ նստին : Ու
եօթը նկանակը և ձուկերը առաւ, [ռ]գոհացաւ
և կտրեց ու տուաւ աշակերտներուն, աշակերտ-
37 ներն ալ՝ ժողովուրդին : Կերան ամէնքը և կըշ-
տացան, ու եօթը զամբիւղ լեցուն աւելցած կը-
38 տորուանքները վերցուցին : Եւ անոնք որ կերան՝
չորս հազար էրիկ մարդիկ էին կնիկներէն և տը-
ղաքներէն 'ի զատ :
39 Ու [ս]երբոր ժողովուրդը արձակեց, նաւը մը-
տաւ ու Մագդաղայի սահմանները եկաւ :

ԳԼ. ԺԶ.

1 Փարիսեցիք նշան մը կ'ուզեն ։ 6 Յիսուս կը պատուիրէ իր աշակերտներուն՝ որ զգոյշ ըլլան փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն ։ 13 Ժողովուրդին կարծիքը Քրիստոսի վրայով ։ 16 և Պետրոսի դաւանութիւնը ։ 21 Յիսուս կ'իմացընէ աշակերտներուն իր մահը . 23 կը յանդիմանէ Պետրոսը՝ որ կ'ուզէր դէմ կենալ . 24 և իրեն հետեւիլ ուզողները կը խրատէ որ իրենց խաչը կրեն ։

1 Եւ [վ]փարիսեցիները ու սադուկեցիները քովը
եկան՝ փորձելով իրմէն կ'ուզէին որ երկինքէն
2 նշան մը ցուցընէ իրենց : Անիկայ պատասխան
տուաւ ու ըսաւ անոնց, Երբոր իրիկուն կ'ըլլայ,
կ'ըսէք թէ Պարզ պիտի ըլլայ, ինչու որ երկինքը
3 կարմրած է : Եւ առտուանց՝ Այսօր մրրիկ պիտի
ըլլայ, ինչու որ երկինքը միգապատ ու կարմրած
է : Կեղծաւորներ՝ երկինքին երեսը քննելը գի-
տէք, բայց ժամանակներուն նշանները չէ՞ք կրնար
4 գիտնալ : [տ]Չար ու շնացող ազգը նշան կ'ուզէ,
և ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց Յովնան
մարգարէին նշանը . և թողուց անոնք ու գնաց :

[ջ] Գլ. ԺԴ. 19 ։
[ռ] Ա Թագ. Թ. 13 ։ Ղուկ. ԻԲ. 19 ։
[ս] Մար. Ը. 10 ։
[վ] Գլ. ԺԲ. 38 ։ Մար. Ը. 11 ։ Ղուկ. ԺԱ. 16 ։ ԺԲ. 54—56 ։ Ա Կոր. Ա. 22 ։
[տ] Գլ. ԺԲ. 39 ։

5 Ու երբոր ա իր աշակերտները անդին կողմը ան–
6 ցան՝ հաց առնելու մոռցեր էին ։ Ու Յիսուս անոնց
ըսաւ ․ բ Նայեցէ՛ք ու զգուշացէ՛ք փարիսեցւոց և
7 սադուկեցւոց խմորէն ։ Անոնք մէջերնին կը խորհէին
8 ու կ'ըսէին թէ Հաց չբերինք անոր համար ։ Իսկ
Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով ըսաւ անոնց ,
Մէջերնիդ ինչո՞ւ կը խորհիք՝ թերահաւատներ ,
9 թէ հաց չառիք ։ գ Տակաւին չէ՞ք հասկնար և
չէ՞ք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հազարին , ու
10 քանի կողով վերցուցիք ․ դ Ո՛չ ալ եօթը նկանա–
կը՝ չորս հազարին , ու քանի զամբիղ վերցուցիք ։
11 Ինչպէ՞ս չէք հասկնար թէ ես հացի համար չըսի
ձեզի փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն զգուշ–
12 կենալ ։ Ան ատենը հասկցան որ հացի խմորէն
զգուշանալ չըսաւ , հապա փարիսեցւոց ու սադու–
կեցւոց վարդապետութենէն ։
13 Ու Յիսուս Փիլիպպոսի Կեսարիային կողմերը
երթալով , իր աշակերտներուն հարցուց ու ըսաւ ,
ե Մարդիկ ո՞վ կ'ըսեն թէ եմ ես Որդի մարդոյ ։
14 Ու անոնք ըսին , զ Ոմանք կ'ըսեն թէ Յովհաննէս
մկրտիչն ես , ուրիշները՝ Եղիան , ուրիշներն ալ՝
15 Երեմիան կամ մարգարէներէն մէկը ։ Ըսաւ
անոնց , Հապա դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ
16 եմ ։ Սիմոն Պետրոս պատասխան տուաւ ու ը–
սաւ , է Դուն ես Քրիստոս՝ կենդանի Աստուծոյ
17 Որդին ։ Ու Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ
անոր , Երանի քեզ , Սիմոն՝ Յովնանի որդի ,
ը ինչու որ մարմինը և արիւնը քեզի չյայտնեց ասի–
18 կայ , հապա թ իմ Հայրս որ երկինքն է ։ Ու ես

ա Մար․ ը․ 14 ։
բ Ղու․ ժբ․ 1 ։
գ Գլ․ ժդ․ 17 ։ Յով․ զ․ 9 ։
դ Գլ․ ժե․ 34 ։
ե Մար․ ը․ 27 ։ Ղու․ թ․ 18 ։
զ Գլ․ ժդ․ 2 ։ Ղու․ թ․ 7, 8, 9 ։
է Գլ․ ժդ․ 33 ։ Մար․ ը․ 29 ։ Ղու․ թ․ 20 ։ Յով․ զ․ 70 ։ ժա․ 27 ։ Գործ․ ը․ 37 ։ թ․ 20 ։ Ա Յով․ դ․ 15 ։ ե․ 5 ։ Եբր․ ա․ 2, 5 ։
ը Եփես․ բ․ 8 ։
թ Ա Կոր․ բ․ 10 ։ Գաղ․ ա․ 16 ։

քեզի կ'ըսեմ որ ժ Դուն * Պետրոս ես , ու ի աս
վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս , և
19 լ դժոխքին դռները անիկայ պիտի չյաղթեն ։ խ Ու
երկնից թագաւորութեան բանալիները քեզի պիտի
տամ ․ և ինչ որ երկրի վրայ կապես , երկինքի
մէջ կապուած պիտի ըլլայ ․ ու ինչ որ երկրի
վրայ արձակես , երկինքի մէջ արձակուած պիտի
20 ըլլայ ։ ծ Ան ատենը աշակերտներուն պատուիրեց ,
որ մէկու մը չըսեն թէ ինքը Քրիստոսն է ։
21 Անկէ ետև սկսաւ Յիսուս իր կ աշակերտներուն
ցուցընել թէ պէտք է որ ինքը Երուսաղէմ եր–
թայ , ու շատ չարչարանքներ կրէ ծերերէն և քա–
հանայապետներէն ու դպիրներէն , և սպաննուի ,
22 ու երրորդ օրը յարութիւն առնէ ։ Ու Պետրոս
մէկդի առաւ զանիկայ , և սկսաւ յանդիմանել
զանիկայ ու ըսել , Քաւ լիցի քեզ , Տէ՛ր՝ աս
23 բանը քեզի չըլլայ ։ Ու ինքը դառնալով՝ Պետ–
րոսին ըսաւ , Ետեւս գնա՝ հ Սատանայ , ձ ինծի
գայթակղութիւն ես դուն ․ ինչու որ Աստուծոյ
բաները չես մտածեր , հապա մարդոց բաները ։
24 ղ Ան ատենը Յիսուս իր աշակերտներուն ըսաւ ,
Թէ որ մէկը իմ ետևէս գալ կ'ուզէ , թող իր
անձը ուրանայ և իր խաչը վերցընէ ու իմ ետևէս
25 գայ ։ ճ Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը ապ–
րեցընել , պիտի կորսնցընէ անիկայ ․ և ով որ
ինծի համար իր անձը կը կորսնցընէ , պիտի գտնէ
26 զանիկայ ։ Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը՝ թէ որ

ժ Յով․ ա․ 42 ։
* Վէմ
ի Եփես․ բ․ 20 ։ Յայտ․ իա․ 14 ։
լ Յոբ․ լը․ 17 ։ Սաղ․ թ․ 13 ։ ճէ․ 18 ։ Ես․ լը․ 10 ։
խ Գլ․ ժը․ 18 ։ Յով․ ի․ 23 ։
ծ Գլ․ ժէ․ 9 ։ Մար․ ը․ 30 ։ Ղու․ թ․ 21 ։
կ Գլ․ ի․ 17 ։ Մար․ ը․ 31 ։ թ․ 31 ։ ժ․ 33 ։ Ղու․ թ․ 22 ։ ժը․ 31 ։ իդ․ 6, 7 ։
հ Տես Բ Թագ․ ժթ․ 22 ։
ձ Հռով․ ը․ 7 ։
ղ Գլ․ ժ․ 38 ։ Մար․ ը․ 34 ։ Ղու․ թ․ 23 ։ ժդ․ 27 ։ Գործ․ ժդ․ 21 ։ Ա Թես․ գ․ 3 ։ Բ Տիմ․ գ․ 12 ։
ճ Ղու․ ժէ․ 33 ։ Յով․ ժբ․ 25 ։

բոլոր աշխարհը վաստըկի և իր անձը կորսնցը-
նէ, կամ ե իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի
27 տայ մարդ։ Վասն զի զ Որդին մարդոյ իր Հօրը
փառքովը պիտի գայ է իր հրեշտակներուն հետ, ը և
ան ատենը ամէն մէկուն իր գործքերուն համեմատ
28 հատուցում պիտի ընէ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի
որ թ հոս ներկայ եղողներէն մէկ քանիները կան՝
որոնք մահուան համը պիտի չառնեն, մինչև
որ տեսնեն Որդին մարդոյ իր թագաւորութիւնովը
եկած։

ԳԼ. ԺԷ.

1 Քրիստոսի այլակերպութիւնը։ 14 Քրիստոս կը բժշկէ լուսնոտը. 22 կը նախաձայնէ իր չարչարանքները. 24 ու երկդրամեան տուրքը կը հատուցանէ։

1 Ու ժ վեց օրէն ետև Յիսուս իր հետը առաւ
Պետրոսը ու Յակոբոսը և անոր եղբայրը
Յովհաննէսը, ու անոնք մէկ բարձր լեռ մը հանեց
2 առանձին. Ու անոնց առջևը այլակերպեցաւ, ու
իր երեսը փայլեցաւ արեգակի պէս, ու իր հան-
3 դերձները ձերմըկցան լուսոյ պէս։ Ու ահա երևցան
անոնց Մովսէս ու Եղիա, ու իր հետը կը խօսէին։
4 Պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ Յիսուսին,
Տէ՛ր՝ աղէկ է որ հոս կենանք. Թէ որ կ'ուզես,
իրեք խրճիթ շինենք հոս, մէկը քեզի՝ և մէկը
5 Մովսէսին՝ ու մէկը Եղիային։ Ու ժա քանի որ անի-
կայ կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը անոնց վրայ
հովանի եղաւ, և ահա ամպէն ձայն մը եկա-
ըսելով, ժբ Սա է իմ սիրելի Որդիս, ժգ որուն

ե Սաղ. խթ. 7, 8։
զ Գլ. իզ. 64; Մար. ը. 38; Ղու. թ. 26։
է Դան. է. 10; Զաք. ժդ. 5; Գլ. իե. 31; Յուդ. 14։
ը Յոբ. լդ. 11; Սաղ. կբ. 12; Առակ. իդ. 12; Երեմ. ժէ. 10; լբ. 19; Հռոմ. բ. 6; ա Կոր. գ. 8; բ Կոր. ե. 10; ա Պետ. ա. 17; Յայտ. բ. 23; իբ. 12։
թ Մար. ը. 39; Ղու. թ. 27։
ժ Մար. թ. 1; Ղու. թ. 28։
ժա բ Պետ. ա. 17։
ժբ Գլ. գ. 17; Մար. ա. 11; Ղու. գ. 22։
ժգ Ես. խբ. 1։

6 հաւներ եմ. ժդ ատոր մտիկ ըրէք։ ժե Աշակերտները
երբոր լսեցին, երեսնուն վրայ ինկան ու խիստ
7 վախցան։ Ու Յիսուս մօտենալով ժզ դպաւ անոնց
8 ու ըսաւ, Ելէք ու մի՛ վախնաք։ Աչքերնին
վերցուցին ու մէկը չտեսան, բայց միայն Յի-
սուսը։
9 Ու երբոր ան լեռնէն վար կ'իջնէին, ժէ Յիսուս
պատուիրեց անոնց ու ըսաւ, Այս տեսիլքը մար-
դու մի՛ զրուցէք, մինչև Որդին մարդոյ մեռելնե-
10 րէն յարութիւն առնէ։ Ու իր աշակերտները
իրեն հարցուցին ու ըսին, Ուրեմն ժը ինչո՞ւ համար
դպիրները կ'ըսեն թէ պէտք է որ առաջ Եղիան
11 գայ։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ
անոնց, Յիրաւի առաջ Եղիան կու գայ և ժթ ամէն
12 բան կարգի կը դնէ։ ի Բայց ձեզի կ'ըսեմ որ
Եղիան արդէն եկած է, և անիկայ չճանչցան,
հապա ի՛նչ որ ուզեցին՝ ըրին անոր. անանկ ալ
13 իա Որդին մարդոյ անոնցմէ պիտի չարչարուի։ իբ Այն
ատենը հասկցան աշակերտները, որ Յովհաննէս
մկրտչին համար ըսաւ անոնց։
14 իգ Ու երբոր ժողովուրդին քովը եկան, մարդ մը
մօտեցաւ անոր, և ծնկան վրայ գալով կ'ըսէր,
Տէ՛ր՝ իմ որդւոյս ողորմէ, որ կը լուսնոտի և չարա-
չար կը տանջուի, քանզի շատ անգամ կրակի մէջ
15 կ'իյնայ ու շատ անգամ ջուրի մէջ։ Ու անիկայ
քու աշակերտներուդ բերի, ու չկրցան զանիկայ
16 բժշկել։ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ,

ժդ բ Օր. ժը. 15, 19; Գործ. գ. 22, 23։
ժե բ Պետ. ա. 18։
ժզ Դան. ը. 18; թ. 21; ժ. 10, 18։
ժէ Գլ. ժզ. 20; Մար. ը. 30; թ. 9։
ժը Մաղ. դ. 5; Գլ. ժա. 14; Մար. թ. 10։
ժթ Մաղ. դ. 6; Ղու. ա. 16, 17; Գործ. գ. 21։
ի Գլ. ժա. 14; Մար. թ. 11, 12։
իա Գլ. ժզ. 21։
իբ Գլ. ժա. 14։
իգ Մար. թ. 14; Ղու. թ. 37։

Ո՜վ անհաւատ և խոտորեալ ազգ՝ մինչև ե՞րբ
ձեզի հետ պիտի ըլլամ, մինչև ե՞րբ ձեզի պիտի
17 համբերեմ. զանիկայ հոս ինծի բերէք: Ու Յի-
սուս սաստեց անոր, ու դևը անկէ ելաւ, և բժշ-
18 կուեցաւ տղան նոյն ժամէն: Այն ատենը աշա-
կերտները առանձին Յիսուսին քովը երթալով՝
19 ըսին, Մենք ինչո՞ւ չկրցանք անիկայ հանել: Ու
Յիսուս ըսաւ անոնց, Ձեր թերահաւատութեա-
նը համար. քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, [հ] Թէ
որ մանանեխի հատի չափ հաւատք ունենաք, աս
լեռանս պիտի ըսէք՝ Ասկէ անդին փոխադրուէ, և
պիտի փոխադրուի. ու բան մը անճարելի պիտի
20 չըլլայ ձեզի: Սակայն աս տեսակը ուրիշ բանով
չելլեր, բայց միայն աղօթքով և ծոմապահու-
թեամբ:
21 [ձ] Ու երբոր անոնք Գալիլեայի մէջ կը պտըտէին՝
Յիսուս ըսաւ անոնց, Որդին մարդոյ պիտի մատ-
22 նուի մարդոց ձեռքը, Ու զանիկայ պիտի մեռցը-
նեն, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ. ու
խիստ տրտմեցան:
23 [ղ] Երբոր անոնք Կափառնայում եկան, [ճ] երկ-
դրամեան տուրքը առնողները Պետրոսին եկան ու
ըսին, Ձեր վարդապետը երկդրամեանը չ՞հա-
տուցաներ. Ու անիկայ ըսաւ, Այո՛, կը հատու-
24 ցանէ: Ու երբոր տունը մտաւ, Յիսուս անոր
դէմը ելաւ ու ըսաւ, Քեզի ի՞նչպէս կ'երևնայ՝
Սիմոն, երկրիս թագաւորները որմէ՞ն կ'առ-
նեն հարկը կամ տուրքը, իրենց որդիներէ՞ն թէ
25 օտարներէն: Պետրոս անոր ըսաւ թէ Օտարնե-
րէն. Յիսուս անոր ըսաւ, Ուրեմն որդիքը ազատ

[հ] Գլ. իա. 21 : Մար. ժա. 23 : Ղու. ժէ. 6 : ա Կոր. ժբ. 9 : ժգ. 2 :
[ձ] Գլ. ժզ. 21 : ի. 17 : Մար. ը. 31 : թ. 29, 30 : ժ. 33 : Ղու. թ. 22, 44 : ժը. 31 : իդ. 6, 7 :
[ղ] Մար. թ. 32 :
[ճ] Տես Ել. լ. 13 : լը. 26 :

26 են: Բայց չըլլայ որ անոնք գայթակղեցընենք,
գնա ծովը և կարթ ձգէ, ու առջի ձուկը որ կ'ել-
լէ՝ առ, և անոր բերանը բանալով՝ սատեր մը
պիտի գտնես. զանիկայ առ՝ անոնց տուր ինծի և
քեզի համար:

ԳԼ. ԺԸ.

1 Քրիստոս կը պատուիրէ իր աշակերտներուն խոնարհ ու հեզ ըլլալ, 7 գայթակղութիւն չտալ, և պզտիկները չանարգել. 15 կը սորվեցընէ թէ ինչպէս վարուելու ենք մեր եղբայրներուն հետ, երբոր անոնք մեզի դէմ մեղանչեն, 21 և թէ քանի՛ անգամ ներելու ենք անոնց. 23 ասիկայ կը բացատրէ թագաւորի մը առակովը, որ հաշիւ ուզեց իր ծառաներէն, 32 ու իր ընկերին ողորմութիւն չցուցընողը պատժեց:

1 [մ] Նոյն ժամանակը աշակերտները Յիսուսին քո-
վը եկան ու ըսին, Ո՞վ է մեծ երկնից թա-
2 գաւորութեանը մէջ: Ու Յիսուս տղայ մը կան-
չեց իրեն, զանիկայ անոնց մէջտեղը կայնեցուց,
3 Ու ըսաւ; Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, [յ] Թէ որ
դարձի չգաք և տղոց պէս չըլլաք, երկնից թագա-
4 ւորութիւնը բնաւ պիտի չմտնէք: [ն] Ուստի ով
որ իր անձը աս տղուն պէս խոնարհեցընէ, անիկայ
5 է մեծ երկնից թագաւորութեանը մէջ: Ու [շ] ով
որ ասանկ տղայ մը ընդունի իմ անունովս, զիս
6 կ'ընդունի: Ու [ո] ով որ գայթակղեցընէ աս
պզտիկներուն մէկը որ ինծի կը հաւատան, աղէկ
է անոր որ իր պարանոցէն իշու աղացքի քար մը
կախուի, ու ծովուն անդունդին մէջ ընկղմի:
7 Վա՜յ աշխարհին՝ գայթակղութիւններու պատ-
ճառաւ. [չ] Վասն զի հարկ է որ գայթակղութիւն-
ները գան, բայց [պ] վա՜յ այն մարդուն՝ որուն ձեռքովը

[մ] Մար. թ. 32 : Ղու. թ. 46 : իբ. 24 :
[յ] Սաղ. ճլա. 2 : Գլ. ժթ. 14 : Մար. ժ. 14 : Ղու. ժը. 16 : ա Կոր. ժդ. 20 : ա Պետ. բ. 2 :
[ն] Գլ. ի. 27 : իգ. 11 :
[շ] Գլ. ժ. 42 : Ղու. թ. 48 :
[ո] Մար. թ. 41 : Ղու. ժէ. 1, 2 :
[չ] Ղու. ժէ. 1 : ա Կոր. ժա. 19 :
[պ] Գլ. իզ. 24 :

8 գայթակղութիւնը կու գայ ։ [է]Եթէ որ քու
ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցնէ , կտրէ
անիկայ ու քեզմէ ձգէ ․ աղէկ է քեզի կաղ կամ
պակասաւոր մտնել կեանքը , քան թէ երկու ձեռք
կամ երկու ոտք ունենալ ու յաւիտենական կը-
9 րակին մէջը ձգուիլ ։ Եւ թէ որ աչքդ քեզ
կը գայթակղեցնէ , հանէ անիկայ և քեզմէ ձգէ ․
աղէկ է քեզի մէկ աչքով կեանքը մտնել , քան
թէ երկու աչք ունենալ ու կրակին գեհենը
ձգուիլ ։

10 Զգո՛յշ կեցէք որ չանարգէք աս պզտիկներէն
մէկը ․ քանզի կ՚ըսեմ ձեզի որ երկինքի մէջ [ը]անոնց
հրեշտակները միշտ [թ]կը տեսնեն իմ Հօրս երեսը՝
11 որ երկինքն է ։ [ժ]Ինչու որ Որդին մարդոյ եկաւ
12 կորսուածը փրկելու ։ [ի]Ի՞նչպէս կ՚երեւնայ ձեզի ․
թէ որ մարդ մը հարիւր ոչխար ունենայ , և անոնց
մէկը մոլորի , իննսունըինը ոչխարը *լեռները
13 չ՞ձգեր , ու՝ երթար մոլորածը փնտռեր ։ Եւ
թէ որ գտնելու ըլլայ զանիկայ , ճշմարիտ կ՚ըսեմ
ձեզի , որ աւելի ուրախ կ՚ըլլայ անոր վրայ , քան
14 թէ իննսունըիննին որ մոլորած չեն ։ Նմանկ ալ
ձեր երկնաւոր Հայրը չհաճիր որ աս պզտիկներէն
մէկը կորսուի ։

15 [լ]Եթէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ ,
գնա յանդիմանէ անիկայ՝ երբոր դուն և ան մինակ
էք ․ թէ որ քեզի մտիկ ընէ , [խ]շահեցար քու եղ-
16 բայրդ ։ Հապա թէ որ մտիկ չընէ քեզի , քու
հետդ մէկ ուրիշ մը կամ երկուք ալ առ , որ
[ծ]երկու կամ իրեք վկաներու բերնէ ամէն բան

է Գլ. ե. 29, 30 ; Մար. թ. 42, 44 ։
ը Սաղ. լդ. 7 ; Զաք. ժգ. 7 ; Եբր. ա. 14 ։
թ Եսթ. ա. 14 ; Ղու. ա. 19 ։
ժ Ղուկ. թ. 56 ; ժթ. 10 ; Յոհ. գ. 17 ; ժբ. 47 ։
ի Ղու. ժե. 4 ։
* Ոմանք՝ չ՞ձգեր , ու՝ լեռները
լ Ղև. ժթ. 17 ; Ղու. ժէ. 3 ։
խ Յակ. ե. 20 ; ա Պետ. գ. 1 ։
ծ Բ Օր. ժէ. 6 ; ժթ. 15 ; Յոհ. ը. 17 ; բ Կոր. ժգ. 1 ; Եբր. ժ. 28 ։

17 հաստատուի ։ Եւ թէ որ անոնց ալ մտիկ չընէ ,
եկեղեցիին ըսէ ․ իսկ թէ որ եկեղեցիին ալ մտիկ
չընէ , [ճ]հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ
քեզի ։

18 Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , [յ]Երկրի վրայ ինչ որ
կապէք , երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ ․ ու
երկրի վրայ ինչ որ արձակէք , երկինքի մէջ ար-
19 ձակուած պիտի ըլլայ ։ [ն]Դարձեալ կ՚ըսեմ ձեզի ,
Թէ որ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին
ամէն ինչ բանի համար որ խնդրեն , [շ]պիտի ըլլայ
20 անոնց իմ Հօրմէս որ երկինքն է ։ Քանզի ուր
որ երկու կամ իրեք հոգի ժողվուած ըլլան իմ
անունովս , հոն եմ ես անոնց մէջը ։

21 Ան ատենը Պետրոս մօտեցաւ անոր ու ըսաւ ,
Տէ՛ր՝ քանի՞ անգամ թէ որ եղբայրս ինծի դէմ
մեղանչէ՝ ներեմ անոր ․ [ո]մինչև եօ՞թը անգամ ։
22 Յիսուս անոր ըսաւ , Քեզի չեմ ըսեր թէ մինչև
եօթը անգամ , [չ]հապա մինչև եօթանասուն ան-
23 գամ եօթը ։ Ասոր համար երկնից թագաւորու-
թիւնը կը նմանի թագաւորի մը , որ իր ծառանե-
24 րէն հաշիւ առնել ուզեց ։ Ու երբոր սկսաւ առ-
նել , տասը հազար տաղանդի պարտական մը
25 բերուեցաւ իրեն ։ Բայց անիկայ վճարելու [illegible]
չունենալով , իր տէրը հրաման ըրաւ
[պ]որ անիկայ և անոր կինը ու որդիքը և անոր բո-
լոր ունեցածը ծախուի , ու [illegible] վճարուի ։
26 Իսկ ծառան անոր առջևը իյնալով երկրպագու-
թիւն կ՚ընէր ու կ՚ըսէր , Տէ՛ր՝ համբերէ ինծի և
27 ամէնը քեզի կը վճարեմ ։ Եւ ան ծառային տէրը
վրան խղճալով՝ արձակեց զանիկայ , ու պարտքը

ճ Հռով. ժզ. 17 ; ա Կոր. ե. 9 ; բ Թես. գ. 6, 14 ; բ Յոհ. 10 ։
յ Գլ. ժզ. 19 ; Յոհ. ի. 23 ; ա Կոր. ե. 4 ։
ն Գլ. ե. 24 ։
շ ա Յոհ. գ. 2 ; ե. 14 ։
ո Ղու. ժէ. 4 ։
չ Գլ. զ. 14 ; Մար. ժա. 25 ; Կող. գ. 13 ։
պ դ Թագ. դ. 1 ; Նեեմ. ե. 8 ։

28 շնորհեց անոր ։ Եւ նոյն ծառան ելաւ, իր ծա-
ռայակիցներէն մէկը գտաւ որ իրեն հարիւր դահե-
կան պարտք ունէր, ու զանիկայ բռնելով կը
խեղդէր ու կ՚ըսէր ։ Վճարէ ինծի ունեցած
29 պարտքդ ։ Ուստի անոր ծառայակիցը անոր ոտքը
ինկաւ, կ՚աղաչէր անոր ու կ՚ըսէր ։ Համբերէ
30 ինծի ու *քեզի կը վճարեմ ։ Եւ ինքը չէր
ուզեր ։ հապա գնաց՝ բանտը դրաւ զանիկայ,
31 մինչև որ պարտքը վճարէ ։ Երբոր իր ծառայա-
կիցները տեսան եղած բաները, խիստ տրտմեցան,
ու եկան իրենց տիրոջը հասկցուցին բոլոր եղածը ։
32 Այն ատենը անոր տէրը կանչեց զանիկայ ու ըսաւ
անոր ։ Չար ծառայ՝ ան բոլոր պարտքը ես քեզի
33 շնորհեցի՝ ինծի աղաչելուդ համար ։ Ուրեմն պէտք
չէ՞ր քեզի ալ քու ծառայակցիդ ողորմիլ, ինչպէս
34 որ ես քեզի ողորմեցայ ։ Եւ անոր տէրը բարկա-
նալով՝ դահիճներուն մատնեց զանիկայ, մինչև որ
35 բոլոր պարտքը վճարէ ։ ւ Նմանն ալ իմ երկ-
նաւոր Հայրս պիտի ընէ ձեզի, թէ որ ձեր սրտե-
րէն չէք ներեր ամէն մէկդ իր եղբօրը իրենց յան-
ցանքները ։

ԳԼ. ԺԹ

2 Քրիստոս կը բժշկէ հիւանդները ։ 3 պատասխան կու տայ կնիկ արձակելու վրայով փարիսեցւոց ըրած հարցմունքին ։ 13 մանր տղաքները կ՚օրհնէ ։ 16 կը սորվեցնէ պատանիին թէ ինչպէս կրնայ առնալ յաւիտենական կեանքը, 20 և թէ ինչ ընելու է որ կատարեալ ըլլայ ։ 23 իր աշակերտներուն կ՚ըսէ թէ ինչպէս դժուար է հարուստին՝ Աստուծոյ թագաւորութիւնը մտնել, 27 և վարձք կը խոստանայ անոնց՝ որ իր ետևէն երթալու համար որ և իցէ բան կը թողուն ։

1 Ու եղաւ որ երբ Յիսուս — աս խօսքերը լմնցուց,
Գալիլեայէն ելաւ ու եկաւ Հրէաստանի սահ-
2 մանները Յորդանանու անդին կողմը ։ ‡ Եւ

* Ոմանք՝ ամէնը քեզի
ւ Առակ. իա. 13 ; Գլ. զ. 12 ; Մար. ժա. 26 ; Յակ. բ. 13 ;
— Մար. ժ. 1 ; Յով. ժ. 40 ;
‡ Գլ. ժբ. 15 ;

անոր ետևէն շատ ժողովուրդներ գացին, ու հոն
բժշկեց զանոնք ։
3 Եւ փարիսեցիները անոր մօտենալով, զա-
նիկայ կը փորձէին՝ ու կ՚ըսէին թէ Արժա՞ն է
որ մարդ մը իր կնիկը արձակէ ամէն պատճառի
4 համար ։ Անիկայ ալ պատասխան տուաւ ու ա-
նոնց ըսաւ, Չէ՞ք կարդացեր ‡ թէ ան որ սկիզբէն
ստեղծեց, արու և էգ ստեղծեց անոնք՝ ու ըսաւ,
5 † Անոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի
ձգէ, և իր կնկանը պիտի յարի, ու ⊦ երկու-
6 քը մէկ մարմին պիտի ըլլան ։ Ուստի ալ երկուք
չեն, հապա մէկ մարմին ։ ուրեմն ան որ Աստուած
7 միաւորեց՝ մարդ թող չզատէ ։ Ըսին իրեն,
⊥ Հապա Մովսէս ինչո՞ւ պատուիրեց արձակման
8 թուղթ տալ և արձակել ։ Ըսաւ անոնց, Մով-
սէս ձեր սրտերուն կարծրութեանը համար ձեզի
հրաման տուաւ կնիկներնիդ արձակել, բայց սկիզ-
9 բէն անանկ չէր ։ ‖ Սակայն ձեզի կ՚ըսեմ, Ով
որ առանց պոռնկութեան պատճառի իր կնիկը
արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ՚ընէ ։ և
10 ով որ արձակուածը առնէ՝ շնութիւն կ՚ընէ ։ Իր
աշակերտները ըսին իրեն, ¶ Թէ որ ատանկ բան
կայ էրկան ու կնկան մէջտեղը՝ չամուսնանալը աղէկ
11 է ։ Եւ ինքը անոնց ըսաւ, § Ամէնը բաւական չեն
12 աս բանին, հապա անոնք՝ որոնց տրուած է ։ Ին-
չու որ կան ներքինիներ, որ իրենց մօրը որովայնէն
անանկ ծնան ։ և կան ⁂ ներքինիներ, որ մարդոցմէ
ներքինի եղան ։ և կան ներքինիներ՝ որ ինքզինքնին

‡ Ծն. ա. 27 ; ե. 2 ; Մաղ. բ. 15 ;
† Ծն. բ. 24 ; Մար. ժ. 5-9 ; Եփե. ե. 31 ;
⊦ Ա Կոր. զ. 16 ; է. 2 ;
⊥ Բ Օր. իդ. 1 ; Գլ. ե. 31 ;
‖ Գլ. ե. 32 ; Մար. ժ. 11 ; Ղու. ժզ. 18 ; Ա Կոր. է. 10, 11 ;
¶ Առակ. իա. 19 ;
§ Ա Կոր. է. 2, 7, 9, 17 ;
⁂ Ա Կոր. է. 32, 34 ; թ. 5, 15 ;

ներքինի ըլլան երկնից թագաւորութեանը համար ․
ով որ կրնայ առնել, թող առնէ ։
13 էԱյն ատենը մանր տղաք բերուեցան իրեն, որ
անոնց վրայ ձեռք դնէ և աղօթք ընէ, ու աշա-
14 կերտները կը յանդիմանէին զանոնք ։ Բայց Յի-
սուս ըսաւ, Թո՛ղ տուէք ատ մանր տղաքը, և մի՛
արգիլէք ատոնք ինծի գալէն, ինչու որ ըերկնից
15 թագաւորութիւնը ատանկներունն է ։ Եւ անոնց
վրայ ձեռք դնելէն ետև գնաց անկէ ։
16 թԵւ ահա մէկը մօտենալով՝ ըսաւ անոր, Բարի
ժվարդապետ՛ ինչ բարի գործ գործեմ, որ յա-
17 ւիտենական կեանքը ընդունիմ ։ Եւ անիկայ ըսաւ
անոր, Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես ․ մէկէն 'ի
զատ բարի չկայ, որ է Աստուած ․ հապա թէ որ
կ'ուզես կեանքը մտնել, պատուիրանքները պահէ ։
18 Ըսաւ անոր, Որո՞նք ․ և Յիսուս ըսաւ, Ասոնք ․
իՍպանութիւն մի՛ ըներ, Շնութիւն մի՛ ըներ,
Գողութիւն մի՛ ըներ, Սուտ վկայութիւն մի՛
19 ըներ, լՔու հայրդ ու մայրդ պատուէ, և խՔու
20 ընկերդ քու անձիդ պէս սիրես ։ Պատանին ըսաւ
անոր, Ասոնք ամէնը մանկութենէս 'ի վեր պահեր
21 եմ ․ ալ ի՞նչ բանով պակաս եմ ։ Ըսաւ անոր
Յիսուս, Թէ որ կ'ուզես կատարեալ ըլլալ,
ծգնա ունեցածդ ծախէ և տուր աղքատներուն,
ու երկինքը գանձ պիտի ունենաս, և եկուր իմ
22 ետևէս ։ Երբոր պատանին աս խօսքը լսեց՝ տրտմած
գնաց, ինչու որ շատ ստացուածք ունէր ։
23 Եւ Յիսուս ըսաւ աշակերտներուն, Ճշմարիտ

է Մար․ ժ․ 13 ։ Ղու․ ժը․ 15 ։
ը Գլ․ ժը․ 3 ։
թ Մար․ ժ․ 17 ։ Ղու․ ժը․ 18 ։
ժ Ղու․ ժ․ 25 ։
ի Ել․ ի․ 13 ։ բ Օր․ ե․ 17 ։
լ Գլ․ ժե․ 4 ։
խ Ղև․ ժթ․ 18 ։ Գլ․ իբ․ 39 ։ Հռով․ ժգ․ 9 ։ Գաղ․ ե․ 14 ։ Յակ․ բ․ 8 ։
ծ Գլ․ զ․ 20 ։ Ղու․ ժբ․ 33 ։ ժզ․ 9 ։ Գործ․ բ․ 45 ։ դ․ 34, 35 ։ ա Տիմ․ զ․ 18, 19 ։

կ'ըսեմ ձեզի որ կՀարուստը դժուարաւ պիտի
24 մտնէ երկնից թագաւորութիւնը ։ Դարձեալ կ'ը-
սեմ ձեզի, Դիւրին է որ *ուղտը ասեղին ծակէն
անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւո-
25 րութիւնը մտնէ ։ Աշակերտները երբոր լսեցին,
շատ զարմացան ու ըսին, Ուրեմն ո՞վ կրնայ
26 փրկուիլ ։ Յիսուս անոնց նայելով ըսաւ, Ասի-
կայ մարդոց կողմանէ անկարելի է՛ բայց հԱստուծոյ
կողմանէ ամէն բան կարելի է ։
27 ձԱյն ատենը Պետրոս պատասխան տուաւ ու
ըսաւ անոր, Ահա ղմենք ամէն բան թողուցինք և
քու ետևէդ եկանք ․ ուստի մեզի ի՞նչ պիտի
28 ըլլայ ։ Ըսաւ անոնց Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի թէ դուք որ իմ ետևէս եկաք, †միւսան-
գամ գալուստին'' երբոր Որդին մարդոյ իր
փառաց աթոռը նստի, ճդուք ալ տասներկու
աթոռներու վրայ պիտի նստիք՝ Իսրայէլի տասներ-
29 կու ցեղերը դատելու ։ մԵւ ով որ թողուց տու-
ներ, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր,
կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ ար-
տեր՝ իմ անուանս համար, հարիւրապատիկ պիտի
առնէ, և յաւիտենական կեանք պիտի ժառանգէ ։
30 յԲայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, և
յետիններ՝ առաջին ։

կ Գլ․ ժգ․ 22 ։ Մար․ ժ․ 24 ։ ա Կոր․ ա․ 26 ։ ա Տիմ․ զ․ 9, 10 ։
* Ոմանք՝ պարանը
հ Ծն․ ժը․ 14 ։ Յոբ․ խբ․ 2 ։ Երեմ․ լբ․ 17 ։ Զաք․ ը․ 6 ։ Ղու․ ա․ 37 ։ ժը․ 27 ։
ձ Մար․ ժ․ 28 ։ Ղու․ ժը․ 28 ։
ղ բ Օր․ լգ․ 9 ։ Գլ․ դ․ 20 ։ Ղու․ ե․ 11 ։
† Յուն․ վերստին ծննդեանը մէջ
ճ Գլ․ ի․ 21 ։ Ղու․ իբ․ 28, 29, 30 ։ ա Կոր․ զ․ 2, 3 ։ Յայտ․ բ․ 26 ։
մ Մար․ ժ․ 29, 30 ։ Ղու․ ժը․ 29, 30 ։
յ Գլ․ ի․ 16 ։ իա․ 31, 32 ։ Մար․ ժ․ 31 ։ Ղու․ ժգ․ 30 ։

ԳԼ. Ի

1 Քրիստոս այգիի բանուորներու առակով կը ցուցնէ թէ Աս-
տուած ընաւ մէկ մարդու մը պարտական չէ. 17 իր չարչա-
րանքը կը նախաձայնէ. 20 Զեբեդէոսի որդւոցը մօրը պա-
տասխան տալով կը սորվեցնէ իր աշակերտներուն խոնարհ
ըլլալ. 30 ու երկու կոյրերու աչքերը կը բանայ:

1 Վասնզի երկնից թագաւորութիւնը տանուտէր
մարդու մը նման է, որ առտուանց կանուխ
2 ելաւ՝ իր այգիին համար բանուորներ բռնելու: Եւ
բանուորներուն հետ օրը մէկ դահեկանի մը խօսք
3 կապեց, ու զանոնք խրկեց իր այգին: Եւ ժամը
իրեքին ատենները ելաւ՝ ուրիշները տեսաւ, որ
4 շուկային մէջ պարապ կայներ էին. Ու ըսաւ ա-
նոնց, Դո՛ւք ալ գացէք իմ այգիս, և ինչ որ ար-
5 ժան է՝ կու տամ ձեզի: Անոնք ալ գացին. ու
նորէն ժամը վեցին և ժամը իննին ատենները ելաւ՝
6 անանկ ըրաւ: Եւ ժամը տասնումէկին ատենները
ելաւ, ուրիշները գտաւ՝ որ պարապ կայներ էին,
ու անոնց ըսաւ, Ինչո՞ւ հոս բոլոր օրը պարապ
7 կայներ էք: Ըսին իրեն, Անոր համար որ մէկը
մեզ վարձքով չբռնեց. ըսաւ անոնց, Դուք ալ
այգին գացէք, ու ինչ որ արժան է՝ պիտի առնէք:
8 Եւ իրիկուն որ եղաւ, այգիին տէրը իր տնտեսին
ըսաւ, Բանուորները կանչէ, և անոնց վարձքը
տուր, ետքիններէն սկսելով մինչև առջինները:
9 Ու երբոր եկան անոնք որ ժամը տասնումէկին
10 գացեր էին, մէյմէկ դահեկան առին. Եւ առջին-
ները գալով՝ կը կարծէին որ աւելի պիտի առնեն,
11 ու անոնք ալ առին մէյմէկ դահեկան: Երբոր
առին, տանը տիրոջը դէմ տրտունջ կ՚ընէին ու
12 կ՚ըսէին թէ Ասոնք ետքինները մէկ ժամ մը գործե-
ցին, և անոնք հաւասար ըրիր մեզի, որ օրուան
13 ծանրութիւնը ու տաքութիւնը քաշեցինք: Անի-
կայ պատասխան տուաւ անոնցմէ մէկուն ու ըսաւ,
Ընկեր՝ ես քեզ չեմ զրկեր. չէ՞ որ դուն իմ հետս

14 մէկ դահեկանի մը խօսք կապեցիր. Առ քուկդ ու
գնա. կ՚ուզեմ որ աս ետքինին քեզի տուածիս պէս
15 տամ: ա Միթէ ես իշխանութիւն չունի՞մ իմ
բաներուս վրայ՝ ինչ որ ուզեմ ընելու. կամ թէ
16 բ քու աչքդ չա՞ր է որ ես բարերար եմ: գ Այսպէս
յետինները առաջին պիտի ըլլան, և առաջինները՝
յետին. դ ինչու որ կանչուածները շատ են, բայց
ընտրուածները քիչ:
17 Ու ե երբոր Յիսուս Երուսաղէմ կ՚ելլէր, Ճամ-
բան տասնուերկու աշակերտները հետը առաւ ա-
18 ռանձին, ու ըսաւ անոնց, զ Ահա Երուսաղէմ
կ՚ելլենք; և Որդին մարդոյ պիտի մատնուի քահա-
նայապետներուն ու դպիրներուն, և զանիկայ մա-
19 հուան պիտի դատապարտեն, է Եւ զանիկայ հե-
թանոսներուն պիտի մատնեն՝ ծաղր ընելու ու ծե-
ծելու և խաչը հանելու. ու երրորդ օրը յարու-
թիւն պիտի առնէ:
20 ը Ան ատենը Զեբեդէոսին որդւոցը մայրը իր
որդւոցը հետ եկաւ անոր, երկրպագութիւն
21 կ՚ընէր ու բան մը կը խնդրէր անկէ: Ան ալ ըսաւ
անոր, Ի՞նչ կ՚ուզես: Ըսաւ անոր, Ըսէ որ աս
իմ երկու որդիքս թ մէկը աջ կողմդ, և միւսը
ձախ կողմդ նստին քու թագաւորութեանդ մէջ:
22 Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Չէք
գիտեր ինչ կը խնդրէք. կրնա՞ք խմել ի այն
գաւաթը՝ որ ես պիտի խմեմ, կամ լ այն մկըր-
տութիւնովը մկրտուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ.

ա Հռով. Թ. 21:
բ Բ Օր. ԺԵ. 9. Առակ. ԻԲ. 6. ԳԼ. Զ. 23:
գ ԳԼ. ԺԹ. 30:
դ ԳԼ. ԻԲ. 14:
ե Մար. Ժ. 32. Ղու. ԺԸ. 31. Յոհ. ԺԲ. 12:
զ ԳԼ. ԺԶ. 21:
է ԳԼ. ԻԷ. 2. Մար. ԺԵ. 1.
16. Ղու. ԻԳ. 1. Յոհ. ԺԸ. 28, ԺԹ. Գործ. Գ. 13:
ը Մար. Ժ. 35:
թ ԳԼ. Դ. 21:
ժ ԳԼ. ԺԹ. 28:
ի ԳԼ. ԻԶ. 39, 42. Մար. ԺԴ. 36. Ղու. ԻԲ. 42. Յոհ. ԺԸ. 11:
լ Ղու. ԺԲ. 50:

23 ըսէն իրեն, Կրնանք։ Եւ ըսաւ անոնց, [ե]Իմ
բաժակս պիտի խմէք, և այն մկրտութիւնովը որ
ես մկրտուելու եմ, պիտի մկրտուիք. բայց իմ
աջ կողմս ու ձախ կողմս նստիլը՝ իմս չէ տալը,
հապա որոնց որ պատրաստուած է իմ [զ]Հօրմէս։
24 [է]Ու երբոր միւս տասը աշակերտները լսեցին, այն
25 երկու եղբայրներուն նեղացան։ Իսկ Յիսուս իրեն
կանչեց զանոնք ու ըսաւ, Գիտէք որ ազգաց
իշխանները կը տիրեն անոնց, և մեծամեծները
26 կ'իշխեն անոնց. Բայց ձեր մէջը [ը]անանկ պիտի
չըլլայ, հապա [թ]ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ,
27 թող անիկա ձեր սպասաւորը ըլլայ. [ժ]Ու ձեզմէ
ով որ առաջին ըլլալ կ'ուզէ, թող անիկա ձեր
28 ծառան ըլլայ. [ի]Ինչպէս [լ]Որդին մարդոյ չեկաւ
սպասաւորութիւն ընդունելու, [խ]հապա սպասաւո-
րութիւն ընելու, և [ծ]իր կեանքը [կ]շատերուն հա-
մար փրկանք տալու։
29 [հ]Ու երբոր անոնք Երիքովէն ելան, մեծ բազ-
30 մութիւն անոր ետևէն գնաց։ Եւ ահա ճամբուն
քովը [ձ]երկու կոյր նստած էին. երբոր լսեցին թէ
Յիսուս կ'անցնի, աղաղակեցին ու ըսին, Ողորմէ
31 մեզի, Տէր՝ որդի Դաւթի։ Եւ բազմութիւնը կը
յանդիմանէր զանոնք որ լռեն. բայց անոնք՝ ալ
աւելի կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ողորմէ մեզի
32 Տէր՝ որդի Դաւթի։ Եւ Յիսուս կանգ առնելով
կանչեց զանոնք ու ըսաւ, Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի
33 ընեմ։ Ըսին անոր, Տէր՝ որ աչքերնիս բացուին։

ե Գործ. ժբ. 2։ Հռովմ. ը. 17։ բ Կոր. ա. 7։ Յայտ. ա. 9։
զ Գլ. իե. 34։
է Մար. ժ. 41։ Ղուկ. իբ. 24, 25։
ը ա Պետ. ե. 3։
թ Գլ. իգ. 11։ Մար. թ. 34։ ժ. 43։
ժ Գլ. ժը. 4։
ի Յովհ. ժգ. 4։
լ Փիլ. բ. 7։
խ Ղուկ. իբ. 27։ Յովհ. ժգ. 14։
ծ Ես. ծգ. 10, 11։ Դան. թ. 24, 26։ Յովհ. ժա. 51, 52։ ա Տիմ. բ. 6։ Տիտ. բ. 14։ ա Պետ. ա. 19։
կ Գլ. իզ. 28։ Հռովմ. ե. 15, 19։ Եբր. թ. 28։
հ Մար. ժ. 46։ Ղուկ. ժը. 35։
ձ Գլ. թ. 27։

34 Եւ Յիսուս խղճալով՝ անոնց աչքերուն դպաւ, և
շուտ մը անոնց աչքերը բացուեցան, ու անոր
ետևէն գացին։

ԳԼ. ԻԱ

1 Քրիստոս իշու վրայ հեծած՝ Երուսաղէմ կը մտնէ. 12 տաճարէն դուրս կը վռնտէ առուտուր ընողները. 17 թզենին կ'անիծէ. 23 կը պապանձեցնէ քահանաները ու ծերերը, 28 և կը յանդիմանէ զանոնք՝ օրինակ բերելով հօր մը երկու որդիները, 35 ու այն մշակները՝ որ իրենց երկուածները սպաննեցին։

1 Ու [ա]երբոր Երուսաղէմին մօտեցան ու եկան
Բեթփագէ դէպ 'ի [բ]Ձիթենեաց լեռը, այն
ատենը Յիսուս իր աշակերտներէն երկուքը ղրկեց.
2 Եւ ըսաւ անոնց, Գացէ՛ք առ ձեր դիմացի գեղը,
և շուտ մը պիտի գտնէք կապած էշ մը ու անոր
հետ աւանակ մը. արձակեցէ՛ք անոնք ու ինծի բե-
3 րէք. Եւ թէ որ մէկը ձեզի բան մը ըսէ, ըսէ՛ք թէ
Տէրոջը պէտք են. և շուտ մը անոնք պիտի ղրկէ։
4 Աս ամէն բաները եղաւ, որ կատարուի մարգարէին
5 խօսքը որ կ'ըսէ, [գ]Ըսէ՛ք Սիօնի աղջկանը, Ահա
քու թագաւորդ քեզի կու գայ, հեզ՝ ու իշու
6 վրայ հեծած և իշու ձագի աւանակի վրայ։ [դ]Աշա-
կերտները գացին, և ինչպէս որ Յիսուս իրենց պա-
7 տուիրեր էր, ըրին. Ու բերին էշը և աւանակը, և
[ե]անոնց վրայ իրենց հանդերձները դրին, ու նըս-
8 տաւ անոնց վրայ։ Եւ ժողովուրդէն շատերը ի-
րենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին, և ու-
րիշները ծառերէն ճիւղեր կը կտրէին ու ճամբուն
9 վրայ կը տարածէին։ Եւ ժողովուրդները որ առջե-
ւէն ու ետևէն կ'երթային, կ'աղաղակէին ու կ'ըսէին,
[զ]Ովսաննա որդւոյ Դաւթի, [է]Օրհնեալ է այն որ Տէ-
րոջը անունովը կու գայ. Ովսաննա 'ի բարձունս։

ա Մար. ժա. 1։ Ղուկ. ժթ. 29։
բ Զաք. ժդ. 4։
գ Ես. կբ. 11։ Զաք. թ. 9։ Յովհ. ժբ. 15։
դ Մար. ժա. 4։
ե դ Թագ. թ. 13։
զ Տես Ղև. իգ. 40։ Յովհ. ժբ. 13։
է Սաղ. ճժը. 25։
ը Սաղ. ճժը. 26։ Գլ. իգ. 39։

10 ^բ Ու երբոր անիկա Երուսաղէմ մտաւ, բոլոր
քաղաքը շարժեցաւ, ու ըսաւ, Ո՞վ է աս։
11 Եւ ժողովուրդները ըսին, Անիկա Յիսուս ^գ մար-
գարէն է Գալիլեայի Նազարեթէն։
12 ^դ Եւ Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ, ու
դուրս հանեց ամէն անոնք որ տաճարին մէջ կը
ծախէին ու կը գնէին, և ստակ փոխողներուն
սեղանները ու աղաւնի ծախողներուն աթոռները
13 կործանեց. Եւ ըսաւ անոնց, Գրուած է թէ
^ե Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի, ^զ բայց
դուք անիկա աւազակներու այր ըրիք։
14 Եւ տաճարին մէջ կոյրեր ու կաղեր եկան
15 իրեն, և բժշկեց զանոնք։ Երբոր քահանայա-
պետները ու դպիրները տեսան անոր ըրած հրաշք-
ները, և տղաքը որ տաճարին մէջ կ'աղաղակէին
ու կ'ըսէին, Ովսաննա որդւոյ Դաւթի, բարկա-
16 ցան. Ու ըսին անոր, Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ա-
սոնք. և Յիսուս ըսաւ անոնց, Այո. ընաւ չէ՞ք
կարդացեր, թէ ^է Մանկանց ու կաթնկեր տղայոց
բերնէն գովութիւն կատարեցիր։
17 Եւ թողուց անոնք՝ քաղաքէն դուրս ^ը Բեթանիա
ելաւ, ու գիշերը հոն կեցաւ։
18 ^թ Եւ առտուանց երբոր քաղաքը կը դառնար,
19 անօթեցաւ. ^ժ Ու ճամբուն վրայ թզենի մը տես-
նելով՝ քովը գնաց, և անոր վրայ տերևներէն 'ի
զատ բան մը չգտաւ. ու ըսաւ անոր, Ասկէ ետև
քեզմէ պտուղ չըլլայ յաւիտեան. և իսկոյն թզե-
20 նին չորցաւ։ ^ի Եւ աշակերտները երբոր տեսան,

բ Մար. ժա. 15։ Ղու. ժթ. 45։ Յոհ. բ. 13, 15։
գ Գլ. բ. 23։ Ղու. է. 16։ Յոհ. զ. 14։ է. 40։ թ. 17։
դ Մար. ժա. 11։ Ղու. ժթ. 45։ Յոհ. բ. 15։
ւ բ Օր. ժգ. 25։
ե Ես. ծզ. 7։
զ Երեմ. է. 11։ Մար. ժա. 17։ Ղու. ժթ. 46։
է Սաղ. ը. 2։
ը Մար. ժա. 11։ Յոհ. ժա. 18։
թ Մար. ժա. 12։
ժ Մար. ժա. 13։
ի Մար. ժա. 20։

զարմացան ու ըսին Թէ Ինտո՞ր թզենին շուտ մը
21 չորցաւ։ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ
անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ^լ Թէ որ հա-
ւատք ունենաք ու ^խ չերկմտիք, չէ թէ միայն աս
թզենիին եղածը պիտի ընէք, ^ծ հապա նաև՝ թէ
որ աս լերանը ըսէք՝ Ելի՛ր ու ծովը ինկիր, պիտի
22 ըլլայ։ Եւ ^կ ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատ-
քով կը խնդրէք, պիտի առնէք։
23 ^հ Ու երբոր անիկա տաճարը եկաւ, քահանա-
յապետները և ժողովուրդին ծերերը անոր մօտե-
ցան՝ երբոր կը սորվեցնէր, ու ^ձ ըսին, Ի՞նչ իշ-
խանութիւնով կ'ընես աս բաները, և ո՞վ տուաւ
24 քեզի աս իշխանութիւնը։ Պատասխան տուաւ
Յիսուս ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը
հարցընեմ, որ եթէ անիկա ինծի ըսէք, ես ալ
ձեզի պիտի ըսեմ թէ ինչ իշխանութիւնով կ'ը-
25 նեմ աս բաները։ Յովհաննէսին մկրտութիւնը
ո՞ւրկից էր, երկինքէ՞ն թէ մարդոցմէ. և անոնք
26 մէջերնին կը խորհէին ու կ'ըսէին, Թէ որ ըսենք՝
Երկինքէն, մեզի պիտի ըսէ թէ Հապա ինչո՞ւ
չհաւատացիք անոր. իսկ թէ որ ըսենք՝ Մարդոց-
մէ, ժողովուրդէն կը վախնանք, ինչու որ ^ղ բո-
լորն ալ Յովհաննէսը իբրև մարգարէ կ'ընդու-
27 նին։ Եւ պատասխան տալով Յիսուսին ըսին,
Չենք գիտեր. և ինքը ըսաւ անոնց, Ես ալ ձեզի
չեմ ըսեր թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ աս
բաները։
28 Բայց ի՞նչպէս կ'երևնայ ձեզի. մէկ մարդ մը
երկու որդի ունէր, ու գնաց առջինին ըսաւ, Ո՛ր-
29 դեակ՝ գնա այսօր այգիիս մէջ գործէ։ Անիկայ

լ Գլ. ժէ. 19։ Ղու. ժէ. 6։
խ Յակ. ա. 6։
ծ Ա Կոր. ժգ. 2։
կ Գլ. է. 7։ Մար. ժա. 24։ Ղու. ժա. 9։ Յակ. ե. 16։ Ա Յոհ. գ. 22։ ե. 14։
հ Մար. ժա. 27։ Ղու. ի. 1։
ձ Ել. բ. 14։ Գոր. գ. 7։ է. 27։
ղ Գլ. ժդ. 5։ Մար. զ. 20։ Ղու. ի. 6։

պատասխան տուաւ ու ըսաւ, Չեմ ուզեր երթալ,
30 բայց ետքը զղջացաւ ու գնաց: Միւսին ալ
գնաց և անանկ ըսաւ, անիկայ պատասխան
տուաւ ու ըսաւ, Կ'երթամ, տէր. և չգնաց:
31 Այս երկուքէն ո՞րը իր հօրը կամքը կատա-
րեց. ըսին անոր՝ Առջինը. Յիսուս ըսաւ անոնց,
‡Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ մաքսաւորները ու
պոռնիկները ձեզմէ առաջ կը մտնեն Աստուծոյ
32 թագաւորութիւնը: Ինչու որ –Յովհաննէս
արդարութեան ճամբայով եկաւ ձեզի, և դուք
անոր չհաւատացիք. *բայց մաքսաւորները ու
պոռնիկները անոր հաւատացին. և դուք տեսաք
ու ետքը չզղջացիք անոր հաւատալու:
33 Ուրիշ առակ մըն ալ լսեցէք. Մէկ տանուտէր
մարդ կը կար՝ †որ այգի մը տնկեց ու ցանկով
պատեց զանիկայ, և անոր մէջը հնձան փորեց ու
աշտարակ շինեց, և զանիկայ մշակներու յանձնեց,
34 ու ‖ինքը օտար երկիր մը գնաց: Երբոր պտուղի
ժամանակը մօտեցաւ, իր ծառաները մշակներուն
35 խրկեց, ¶որ անոր պտուղները առնեն: §Եւ
մշակները անոր ծառաները բռնեցին, մէկը ծեծե-
ցին՝ միւսը սպաննեցին՝ մէկ ուրիշը քարկոծեցին:
36 Նորէն ուրիշ ծառաներ խրկեց առջիններէն շատ,
37 և անոնց ալ անանկ ըրին: Վերջը իր որդին
խրկեց անոնց՝ ըսելով, Պիտի ամչնան իմ որ-
38 դիէս: Բայց մշակները երբոր տեսան որդին,
իրարու ըսին, —Ասիկայ է ժառանգը, ÷եկէք
զանիկայ սպաննենք ու անոր ժառանգութիւնը

‡ Ղու. է. 29, 50:
– Գլ. գ. 1, ևն:
* Ղու. գ. 12, 13:
† Սաղ. ձ. 9: Երգ. ը. 11: Ես. ե. 1: Երեմ. բ. 21: Մար. ժբ. 1: Ղու. ի. 9:
‖ Գլ. իե. 14, 15:
¶ Երգ. ը. 11, 12:
§ Բ Մն. իդ. 21: լզ. 16: Նեեմ. թ. 26: Գլ. ե. 12: իգ. 34, 37: Գործ. է. 52: Ա Թես. բ. 15: Եբր. ժա. 36, 37:
— Սաղ. բ. 8: Եբր. ա. 2:
÷ Սաղ. բ. 2: Գլ. իզ. 3: իէ. 1: Յոհ. ժա. 53: Գործ. դ. 27:

39 տիրենք: +Եւ առին զանիկայ՝ այգիէն դուրս հա-
40 նեցին ու սպաննեցին: Ուստի երբոր այգիին
տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ ան մշակներուն:
41 •Ըսին իրեն, $Ան չարերը չարաչար պիտի կոր-
սընցընէ, ~և այգին պիտի յանձնէ ուրիշ մշակ-
ներու, որոնք պտուղները իրենց ժամանակին պի-
42 տի տան իրեն: Ըսաւ անոնց Յիսուս, ŦԲնաւ
չէ՞ք կարդացեր գրքին մէջ, Ան քարը որ շինող-
ները անարգեցին, անիկայ անկիւնին գլուխը
եղաւ. ասիկայ Տէրոջմէ եղաւ և զարմանալի է
43 մեր աչքերուն: Ասոր համար կ'ըսեմ ձեզի, որ
÷Աստուծոյ թագաւորութիւնը ձեզմէ պիտի առ-
նուի, ու անանկ ազգի մը պիտի տրուի՝ որ անոր
44 պտուղները բերէ: Եւ ով որ †աս քարիս վրայ
իյնայ՝ պիտի կոտրուի, և որուն վրայ որ իյնայ՝ ⊢պի-
տի փշրէ զանիկայ:
45 Ու երբոր քահանայապետները և փարիսեցիները
անոր առակները լսեցին, իմացան որ իրենց համար
46 կ'ըսէր: Եւ կը փնտռէին թէ ի՞նչպէս բռնեն
զանիկայ, բայց ժողովուրդէն վախցան, ինչու որ
‡մարգարէի պէս կ'ընդունէին զանիկայ:

+ Գլ. իզ. 50, ևն: Մար. ժդ. 46, ևն: Ղու. իբ. 54, ևն: Յոհ. ժը. 12, ևն: Գործ. բ. 23:
• Տես Ղու. ի. 16:
$ Ղու. իա. 24: Եբր. բ. 2, 3:
~ Գործ. ժգ. 46: ժե. 7: ժը. 6: իը. 28: Հռով. թ. ժ. ժա:
Ŧ Սաղ. ճժը. 22: Ես. իը. 16: Մար. ժբ. 10: Ղու. ի. 17: Գործ. դ. 11: Եփե. բ. 20: Ա Պետ. բ. 6, 7:
÷ Գլ. ը. 12:
† Ես. ը. 14, 15: Զաք. ժբ. 3: Ղու. ի. 18: Հռով. թ. 33: Ա Պետ. բ. 8:
⊢ Ես. կ. 12: Դան. բ. 44:
‡ Հմր 11: Ղու. է. 16: Յոհ. է. 40:

ԳԼ. ԻԲ

1 Թագաւորի որդւոյն հարսնիքին առակը: 9 Հեթանոսնե-րուն երկնից թագաւորութեան հրաւիրուիլը: 12 Հարսնի-քի հանդերձ չունեցողին պատիժը: 15 Կայսրին տուրք տա-լու վրայով: 25 Քրիստոս փաստով կը ջրէ սադուկեցւոց մոլորութիւնը յարութեան վրայով. 34 պատասխան կու-տայ օրինականին թէ ո՞րն է մեծ ու առաջին պատուիրանքը.

41 փարիսեցւոց հարցմանը կ'ընէ Մեսիային վրայով, ու կը պապանձեցընէ զանոնք ։

1 Դարձեալ պատասխան տուաւ Յիսուս [ա] և ա-
2 ռակներով ըսաւ անոնց, Երկնից թագաւո-
րութիւնը թագաւոր մարդու մը կը նմանի, որ իր
3 որդւոյն համար հարսնիք ըրաւ ։ Եւ իր ծառա-
ները խրկեց որ կանչեն հարսնիքի հրաւիրուած-
4 ները, և անոնք չուզեցին գալ ։ Նորէն ուրիշ
ծառաներ խրկեց ու ըսաւ, Ըսէք հրաւիրուած-
ներուն, Ահա իմ ճաշս պատրաստեցի, [բ] զուա-
րակներս ու գէր կենդանիներս մորթուած են, և
5 ամէն բան պատրաստ է. հարսնիք եկէք ։ Բայց
անոնք անհոգութիւն ընելով գացին, մէկը իր
6 արտը, ու միւսը իր առուտուրին. Եւ ուրիշ-
ները անոր ծառաները բռնեցին, նախատեցին ու
7 սպաննեցին ։ Թագաւորն ալ երբոր լսեց՝ բարկա-
ցաւ, և իր [գ] զօրքերը խրկեց ու այն սպանողները
8 սատկեցուց, ու անոնց քաղաքը այրեց ։ Այն ատե-
նը իր ծառաներուն ըսաւ, Հարսնիքը պատրաստ
9 է՝ բայց հրաւիրուածները [դ] արժանի չէին ։ Ուս-
տի գացէք ճամբու գլուխները, և ով որ գտնելու
10 ըլլաք՝ հարսնիքի հրաւիրեցէք ։ Եւ այն ծառա-
ները ելան ճամբաներուն վրայ, ու ով որ գտան
թէ՛ չար և թէ բարի՝ [ե] ամէնն ալ ժողվեցին, ու
11 հարսնիքը հարսնւորներով լեցուեցաւ ։ Եւ թա-
գաւորը երբոր մտաւ հարսնւորները տեսնելու,
հոն մէկ մարդ մը տեսաւ, [զ] որ հարսնիքի հանդերձ
12 հագած չէր. Եւ ըսաւ անոր, Ընկեր՝ ինչո՞ւ հա-
մար հոս մտար, առանց հարսնիքի հանդերձ ունենա-
13 լու. և անիկայ պապանձեցաւ ։ Այն ատենը թա-

ա Ղու. ժգ. 16 ։ Յայտ. ժթ. 7, 9 ։
բ Առակ. թ. 2 ։
գ Դան. թ. 26 ։ Ղու. ժթ. 27 ։
դ Գլ. ժ. 11, 13 ։ Գոր. ժգ. 46 ։
ե Գլ. ժգ. 38, 47 ։
զ Բ Կոր. ե. 3 ։ Եփե. դ. 24 ։ Կող. գ. 10, 12 ։ Յայտ. գ. 4 ։ ժզ. 15 ։ ժթ. 8 ։

գաւորը սպասաւորներուն ըսաւ, Կապեցէք ասոր
ոտքերը ու ձեռքերը, և առէք ու հանեցէք զանի-
կայ [է] դուրսի խաւարը. հոն պիտի ըլլայ լաց ու
14 ակռաներ կրճտել ։ [ը] Ինչու որ կանչուածները
շատ են ու ընտրուածները քիչ ։
15 [թ] Այն ատենը փարիսեցիները գացին խորհուրդ
ըրին, թէ ինչպէս անոր որոգայթ մը դնեն խօս-
16 քով ։ Եւ իրենց աշակերտները Հերովդէսեան-
ներուն հետ մէկտեղ խրկեցին անոր ու ըսին,
Վարդապետ՝ գիտենք որ ճշմարիտ ես, և ճշմար-
տութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցընես, ու
մէկու մը համար հոգ չէ, քանզի մարդոց երես-
17 պաշտութիւն չես ըներ ։ Ուստի մեզի ըսէ, քեզի
ի՞նչպէս կ'երեւնայ, Կայսրին տուրք տալ արժա՞ն
18 է թէ չէ ։ Յիսուս գիտնալով անոնց խորամանկ-
կութիւնը՝ ըսաւ, ինչո՞ւ զիս կը փորձէք՝ կեղ-
19 ծաւորներ. Ցուցուցէք ինծի տուրքին դրամը.
20 և անոնք դահեկան մը բերին իրեն ։ Ու ըսաւ
21 անոնց, Որո՞ւն է աս պատկերը ու գիրը ։ Ըսին
անոր՝ Կայսրին. այն ատենը ըսաւ անոնց, Ուրեմն
[ժ] այն որ Կայսրինն է՝ Կայսրին տուէք, և այն որ Աս-
22 տուծոյն է՝ Աստուծոյ տուէք ։ Երբոր լսեցին՝
զարմացան, և թողուցին զանիկայ ու գացին ։
23 [ի] Նոյն օրը անոր քովը եկան սադուկեցիները,
[լ] որոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ, և անոր հար-
24 ցուցին՝ Ըսելով, Վարդապետ՝ [խ] Մովսէս ըսաւ,
Թէ որ մէկը առանց զաւակի մեռնելու ըլլայ, ա-
նոր եղբայրը առնէ անոր կինը, և իր եղբօրը
25 զաւակ հանէ ։ Արդ եօթը եղբայրներ կային մեր
մէջը, և առջինը կին առաւ ու մեռաւ, և
զաւակ չունենալուն համար՝ իր կինը ձգեց իր եղ-

է Գլ. ը. 12 ։
ը Գլ. ի. 16 ։
թ Մար. ժբ. 13 ։ Ղու. ի. 20 ։
ժ Գլ. ժէ. 25 ։ Հռով. ժգ. 7 ։
ի Մար. ժբ. 18 ։ Ղու. ի. 27 ։
լ Գոր. իգ. 8 ։
խ Բ Օր. իե. 5 ։

26 բօրը ։ [illegible] Նոյնպէս ալ երկրորդը՝ ու երրորդը՝ մինչեւ
27 եօթներորդը ։ Ամենէն ետքը կինն ալ մեռաւ ։
28 Ուրեմն յարութեան ատենը այն եօթնէն որո՞ւն
կինը պիտի ըլլայ, ինչու որ ամէնքն ալ զանիկա
29 կին ունեցան ։ Եւ Յիսուս պատասխան տալով՝
անոնց ըսաւ, Դուք մոլորած էք, որ [ծ] ո՛չ գիր-
քերը գիտէք՝ և ո՛չ Աստուծոյ զօրութիւնը ։
30 Քանզի յարութեան ատենը ո՛չ կնիկ կ'առնեն՝ և
ո՛չ էրկան կը տրուին, հապա [կ] երկինքի մէջ Աս-
31 տուծոյ հրեշտակներուն պէս են ։ Բայց մեռելնե-
րուն յարութիւն առնելուն համար՝ չէ՞ք կարդացեր
32 Աստուծմէ ձեզի ըսուած խօսքը. [հ] Ես եմ Աբրա-
համին Աստուածը, և Իսահակին Աստուածը, ու
Յակոբին Աստուածը. Աստուած մեռելներուն
33 Աստուածը չէ, հապա կենդանիներուն ։ Ու ժո-
ղովուրդները լսելով՝ [ձ] կը զարմանային անոր վար-
դապետութեանը վրայ ։
34 [ղ] Բայց փարիսեցիները երբոր լսեցին թէ անիկայ
պապանձեցուց սադուկեցիները, մէկտեղ ժող-
35 վուեցան. [ճ] Եւ անոնցմէ մէկը՝ օրինական մը
36 հարցուց, զանիկա փորձելով, ու ըսաւ, Վա՛ր-
դապետ, ո՞ր պատուիրանքը մեծ է օրէնքին մէջ ։
37 Եւ Յիսուս ըսաւ անոր, [մ] Քու Տէր Աստուածդ
սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ ու
38 քու բոլոր մտքովդ. Աս է առաջին ու մեծ պատուի-
39 րանքը ։ Ու երկրորդը ասոր նման՝ [յ] Քու ընկերդ
40 սիրես քու անձիդ պէս ։ [ն] Աս երկու պատուիրան-
քէս կախուած են բոլոր օրէնքը և մարգարէները ։

ծ Յոհ. ի. 9 ։
կ ա Յոհ. գ. 2 ։
հ Ել. գ. 6, 16 ։ Մար. ժբ. 26 ։ Ղու. ի. 37 ։ Գոր. է. 32 ։ Եբր. ժա. 16 ։
ձ Գլ. է. 28 ։
ղ Մար. ժբ. 28 ։
ճ Ղու. ժ. 25 ։
մ բ Օր. զ. 5 ։ ժ. 12 ։ լ. 6 ։ Ղու. ժ. 27 ։
յ Ղե. ժթ. 18 ։ Գլ. ժթ. 19 ։ Մար. ժբ. 31 ։ Ղու. ժ. 27 ։ Հռով. ժգ. 9 ։ Գաղ. ե. 14 ։ Յակ. բ. 8 ։
ն Գլ. է. 12 ։ ա Տիմ. ա. 5 ։

41 [շ] Ու երբոր փարիսեցիները ժողվուեցան, Յի-
42 սուս հարցուց անոնց ու ըսաւ, Քրիստոսի վրա-
յով ի՞նչ կարծիք ունիք. անիկայ որո՞ւ որդի է ։
43 Ըսին իրեն, Դաւիթին ։ Ըսաւ անոնց Յիսուս,
Հապա ի՞նչպէս Դաւիթ Հոգիով զանիկա Տէր
44 կը կոչէ ու կ'ըսէ, [ո] Տէրը իմ Տէրոջս ըսաւ,
Նստէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ
45 ոտքերուդ պատուանդան ընեմ ։ Ուրեմն թէ որ
Դաւիթ զանիկա Տէր կը կոչէ, ի՞նչպէս անիկայ
46 անոր որդին կ'ըլլայ ։ [չ] Եւ մէկը չէր կրնար անոր
խօսք մը պատասխանել. [պ] Ու ան օրէն ետեւ մէկը
չէր համարձակեր անոր բան մը հարցընելու ։

ԳԼ. ԻԳ

1 Քրիստոս խրատ կու տայ ժողովուրդներուն որ դպրաց ու փարիսեցւոց բարի վարդապետութեանը հետեւին, և չէ թէ անոնց չար օրինակներուն. 5 Նոյնպէս ալ իր աշակերտները կը խրատէ որ զգոյշ կենան անոնց փառասիրութենէն. 13 ութը անգամ վայ կու տայ անոնց կեղծաւորութեանը և կուրութեանը. 34 ու Երուսաղեմի կործանումը կը նախաձայնէ ։

1 Ան ատենը Յիսուս խօսեցաւ ժողովուրդներուն և
2 իր աշակերտներուն ու ըսաւ, [ջ] Մովսէսին ա-
թոռը դպիրները և փարիսեցիները նստած են.
3 Ուրեմն ինչ որ ձեզի կ'ըսեն որ պահէք, պահե-
ցէք ու ըրէք, բայց անոնց գործքերուն պէս մի՛
4 ընէք. ինչու որ [ռ] կ'ըսեն ու չեն ըներ ։ Քանզի
[ս] ծանր և տանելու դժուար բեռներ կը կապեն ու
կը դնեն մարդոց ուսերուն վրայ, և իրենց մատովը
5 չեն ուզեր զանոնք շարժել ։ Եւ [վ] իրենց ամէն
գործքերը մարդոց երևնալու համար կ'ընեն. [տ] կը

շ Մար. ժբ. 35 ։ Ղու. ի. 41 ։
ո Սաղ. ճժ. 1 ։ Գոր. բ. 34 ։ ա Կոր. ժե. 25 ։ Եբր. ա. 13 ։ ժ. 12, 13 ։
չ Ղու. ժդ. 6 ։
պ Մար. ժբ. 34 ։ Ղու. ի. 40 ։
ջ Նեեմ. ը. 4, 8 ։ Մաղ. բ. 7 ։ Մար. ժբ. 38 ։ Ղու. ի. 45 ։
ռ Հռով. բ. 19, [illegible] ։
ս Ղու. ժա. 46 ։ Գոր. ժե. 10 ։ Գաղ. զ. 13 ։
վ Գլ. զ. 1, 2, 5, 16 ։
տ Թու. ժե. 38 ։ բ Օր. զ. 8 ։ իբ. 12 ։ Առակ. գ. 3 ։

լայնցընեն իրենց գրապանակները, ու կ'երկնցընեն
6 իրենց հանդերձներուն քղանցքները ․ դ Ընթրիք-
ներու մէջ առաջին բազմոցները կը սիրեն, և ժո-
ղովարաններուն մէջ՝ առաջին աթոռները, ու շու-
7 կաներուն մէջ՝ բարեւները, Եւ մարդոցմէ Ռաբբի՛
8 Ռաբբի՛ կոչուիլ ։ ե Բայց դուք Ռաբբի մի՛ կո-
չուիք, ինչու որ ձեր Ուսուցիչը մէկ մըն է, այ-
9 սինքն Քրիստոս, և դուք ամէնքդ եղբայր էք ։ Ու
երկրի վրայ մէ՛կը ձեզի Հայր մի՛ կոչէք, զ ինչու որ
10 ձեր Հայրը մէկ մըն է, որ երկինքն է ։ Եւ դուք
ուսուցիչներ մի՛ կոչուիք, ինչու որ ձեր Ուսուցիչը
11 մէկ մըն է, այսինքն Քրիստոս ։ Եւ է ձեր մէջէն
12 մեծը ձեր սպասաւորը պիտի ըլլայ ։ ը Ով որ իր
անձը կը բարձրացընէ, պիտի խոնարհի ․ և ով
որ իր անձը կը խոնարհեցընէ, պիտի բարձրանայ ։
13 Բայց թ վա՜յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսե-
ցիներ՝ որ երկնից թագաւորութիւնը մարդոց առջեւ
կը գոցէք ․ քանզի դուք չէք մտներ, և մտնողներն
14 ալ չէք թողուր որ մտնեն ։ Վա՜յ ձեզի կեղծաւոր
դպիրներ ու փարիսեցիներ՝ ժ որ որբեւայրիներուն
տուները կ'ուտէք, ու մարդոց երեւնալու համար
աղօթքը կ'երկընցընէք ․ անոր համար աւելի դա-
15 տապարտութիւն պիտի ընդունիք ։ Վա՜յ ձեզի
կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ ծով ու
ցամաք կը պտըտիք մէկը նորահաւատ ընելու ․ ու
երբոր ըլլայ, զանիկայ ձեզմէ երկու անգամ աւելի
16 գեհենի որդի կ'ընէք ։ Վա՜յ ձեզի ի կո՛յր առաջ-
նորդներ՝ որ կ'ըսէք թէ լ Ով որ տաճարին վրայ

դ Մար. ժբ. 38, 39: Ղու. ժա. 43: ի. 46: գ Յովհ. 9:
ե Յակ. գ. 1: Տե՛ս բ Կոր. ա. 24: ա Պետ. ե. 3:
զ Մաղ. ա. 6:
է Գլ. ի. 26, 27:
ը Յոբ. իբ. 29: Առակ. ժե. 33: իթ. 23: Ղու. ժդ. 11: ժը. 14: Յակ. դ. 6: ա Պետ. ե. 5:
թ Ղու. ժա. 52:
ժ Մար. ժբ. 40: Ղու. ի. 47: բ Տիմ. գ. 6: Տիտ. ա. 11:
ի Գլ. ժե. 14: Հմր 24:
լ Գլ. ե. 33, 34:

երդում ընէ, բան մը չէ ․ բայց ով որ տաճարին
մէջի ոսկիին վրայ երդում ընէ, պարտաւոր
17 կ'ըլլայ ։ Ո՛վ յիմարներ ու կոյրեր՝ ո՞րը մեծ է,
ոսկի՞ն խ եթէ տաճարը որ կը սրբացընէ ոսկին ։
18 Եւ թէ՝ Ով որ սեղանին վրայ երդում ընէ, բան
մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պատարագին
19 վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ ։ Յիմարներ
ու կոյրեր՝ ո՞րը մեծ է, պատարա՞գը ծ եթէ սեղանը
20 որ կը սրբացընէ պատարագը ։ Ուստի ով որ
սեղանին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր
21 վրայ՝ և անոր վրայի ամէն բաներուն վրայ ․ Եւ ով
որ տաճարին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ
22 անոր վրայ՝ և կ անոր մէջ բնակողին վրայ ․ Եւ
ով որ երկինքին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ
հ Աստուծոյ աթոռին վրայ՝ և անոր վրան նստողին
23 վրայ ։ Վա՜յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսե-
ցիներ՝ ձ որ անանուխին ու սամիթին և չամանին
տասանորդը կը վճարէք, ու ղ կը ձգէք օրէնքին
ծանր ծանր բաները՝ դատաստանը և ողորմութիւնը
ու հաւատքը ․ ասոնք պէտք էր ընել, և անոնք
24 չձգել ։ Կո՛յր առաջնորդներ՝ որ մժղուկը կը
25 քամէք և ուղտը կը կլլէք ։ Վա՜յ ձեզի կեղծաւոր
դպիրներ ու փարիսեցիներ՝ որ ճ դաւաթին ու
պնակին դուրսի կողմը կը մաքրէք, ու ներսէն
յափշտակութեամբ և * անիրաւութեամբ լեցուն
26 են ։ Կո՛յր փարիսեցի՝ առաջ դաւաթին ու պնակին
ներսի կողմը մաքրէ, որ անոնց դուրսի կողմն ալ
27 մաքուր ըլլայ ։ Վա՜յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու
փարիսեցիներ՝ մ որ կը նմանիք ծեփած գերեզման-

խ Ել. լ. 29:
ծ Ել. իթ. 37:
կ գ Թագ. ը. 13: բ Մն. զ. 2: Սաղ. իզ. 8: ճլ. 14:
հ Գլ. ե. 34: Սաղ. ժա. 4: Գործ. է. 49:
ձ Ղու. ժա. 42:
ղ ա Թագ. ժե. 22: Ովս. զ. 6: Միք. զ. 8: Գլ. թ. 13: ժբ. 7:
ճ Մար. է. 4: Ղու. ժա. 39:
* Որոշ՝ անբարեխառնութեամբ
մ Ղու. ժա. 44: Գործ. իգ. 3:

ներու , որոնք դուրսէն գեղեցիկ կ'երեւնան , և
ներսէն մեռելներու ոսկորներով և ամէն կերպ
28 պղծութիւնով լեցուն են ։ Նոյնպէս ալ դուք
դուրսէն մարդոց արդար կ'երեւնաք , ու ներսէն
կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ լեցուն էք ։
29 Վա՜յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝
որ մարգարէներուն տապանները կը շինէք , և
30 արդարներուն գերեզմանները կը զարդարէք . Ու
կ'ըսէք , Թէ որ մեր հայրերուն օրերը ըլլայինք ,
անոնց հետ մարգարէներուն արեանը մասնակից չէ-
31 ինք ըլլար ։ Ուրեմն դուք ձեր վրայ կը վկայէք
թէ անոնց զաւակներն էք՝ որ մարգարէները կը
32 սպաննէին ։ Ուրեմն դուք ալ ձեր հայրերուն
33 չափը լեցուցէք ։ Օ՛ձեր՝ իժերու ծնունդներ ,
ի՞նչպէս պիտի փախչիք գեհենին դատապարտու-
34 թենէն ։ Ասոր համար ահա ես կը խրկեմ ձեզի
մարգարէներ և իմաստուններ ու դպիրներ , և
անոնցմէ մէկ քանիները պիտի սպաննէք ու խաչը
հանէք , և մէկ քանիները ձեր ժողովարաններուն
մէջը պիտի ծեծէք , ու քաղաքէ քաղաք հալածէք .
35 Որպէս զի երկրի վրայ թափուած բոլոր արդար
արիւնը ձեր վրայ գայ , արդար Աբելին արիւնէն
մինչև Բարաքիայի որդւոյն Զաքարիային արիւ-
նը , որ տաճարին ու սեղանին մէջտեղը սպաննեցիք ։
36 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Աս ամէն բաները պիտի
գան աս ազգիս վրայ ։
37 Ո՛վ Երուսաղէմ՝ Երուսաղէմ , որ մարգարէ-
ները կը սպաննէիր , ու քեզի խրկուածները կը

Ղու . ժա . 47 ։
Գոր . է . 51 , 52 ։ ա Թես . բ . 15 ։
Ծն . ժե . 16 ։ ա Թես . բ . 16 ։
Գղ . գ . 7 ։ ժբ . 34 ։
Գղ . խա . 34 , 35 ։ Ղու . ժա . 49 ։
Գոր . ե . 40 ։ է . 57 , 58 ։ իբ . 19 ։
Գղ . ժ . 17 ։ բ Կոր . ժա . 24 , 25 ։
Յայտ . ժբ . 24 ։
Ծն . դ . 8 ։ ա Յոհ . գ . 12 ։
բ Մն . իդ . 20 , 21 ։
Ղու . ժգ . 34 ։
բ Մն . իդ . 21 ։

քարկոծէիր . քանի՛ անգամ քու տղաքներդ
ժողվել ուզեցի՝ ինչպէս որ հաւը իր ձագերը
թեւերուն տակը կը ժողվէ , և դուք չուզեցիք ։
38 Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ . Ինչու
որ ձեզի կ'ըսեմ որ ալ ասկէ ետև պիտի չտեսնէք
զիս , մինչև որ ըսէք , Օրհնեա՜լ է ան որ Տէրոջը
անունովը կու գայ ։

ԳԼ . ԻԴ

1 Քրիստոս կը նախաձայնէ տաճարին կործանումը , 3 անկէ առաջ հասնելու մեծ թշուառութիւնները , 29 և իր դատաստանի գալուն նշանները ։ 36 Եւ ան օրը ու ժամը մեզի անծանօթ ըլլալուն համար , 42 կը պատուիրէ որ արթուն մնանք ան բարի ծառային պէս՝ որ ամէն վայրկեան իր տիրոջը գալուն կը սպասէ ։

1 Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով կ'երթար ,
ու աշակերտները անոր քովը գացին՝ տաճարին
2 շէնքերը իրեն ցուցնելու ։ Եւ Յիսուս անոնց
ըսաւ , Չէ՞ք տեսներ աս ամէն բաները . Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի , պիտի չմնայ հոս քար քարի վրայ՝
որ չքակուի ։
3 Ու երբոր անիկայ Ձիթենեաց լեռը նստեր էր ,
աշակերտները իրեն եկան առանձին ու ըսին ,
Ըսէ մեզի ե՞րբ պիտի ըլլան աս բաները . և
քու գալստեանդ ու աշխարհիս վերջին նշանը ի՞նչ
4 պիտի ըլլայ ։ Եւ Յիսուս պատասխան տուաւ ու
ըսաւ անոնց , Զգո՛յշ կեցէք՝ չըլլայ որ մէկը ձեզ
5 խաբէ . Ինչու որ շատերը պիտի գան իմ անունովս
ու ըսեն թէ Ես եմ Քրիստոսը , ու շատերը
6 պիտի մոլորցնեն ։ Եւ պիտի լսէք պատերազմներ

բ Օր . լբ . 11 , 12 ։
Սաղ . ժէ . 8 ։ ղա . 4 ։
Սաղ . ճժը . 26 ։ Գղ . խա . 9 ։
Մար . ժգ . 1 ։ Ղու . իա . 5 ։
գ Թագ . թ . 7 ։ Երեմ . իզ . 18 ։ Միք . գ . 12 ։ Ղու . ժթ . 44 ։
Մար . ժգ . 3 ։
ա Թես . ե . 1 ։
Եփե . ե . 6 ։ Կող . բ . 8 , 18 ։ բ Թես . բ . 3 ։ ա Յոհ . դ . 1 ։
Երեմ . ժդ . 14 ։ իգ . 21 , 25 ։ Հմր 24 ։ Յոհ . ե . 43 ։
Հմր 11 ։

ու՝ պատերազմներու լուրեր. զգո՛յշ կեցէք որ
չխռովիք, ինչու որ [illegible] ամէն բաները պէտք է
7 որ ըլլան, բայց դեռ վերջը չէ։ Վասն զի ը ազգ
ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն
թագաւորութեան վրայ, և տեղ տեղ սովեր
ու մահտարաժամներ և երկրաշարժութիւններ
8 պիտի ըլլան։ Բայց ասոնք ամէնը ցաւերուն
9 սկիզբն են։ թ Այն ատենը ձեզ նեղութեան
պիտի մատնեն, և ձեզ պիտի սպաննեն, ու
իմ անուանս համար ամէն ազգերուն ատելի պի-
10 տի ըլլաք։ Եւ այն ատենը շատերը ժ պիտի գայ-
թակղին, ու մէկզմէկ պիտի մատնեն և մէկ-
11 զմէկ պիտի ատեն։ Եւ ի շատ սուտ մարգարէներ
12 պիտի ելլեն, ու լ շատերը պիտի մոլորցնեն։ Եւ
անօրէնութիւնը շատնալուն համար շատերուն սէրը
13 պիտի պաղի։ խ Բայց ով որ մինչև վերջը համբ-
14 երէ, անիկա պիտի ապրի։ Եւ ծ արքայու-
թեան աս աւետարանը կ բոլոր աշխարհի մէջ
պիտի քարոզուի՝ բոլոր ազգերուն վկայութիւն ըլ-
լալու, և անկէ ետև վերջը պիտի գայ։
15 հ Ուստի երբոր տեսնէք աւերմունքին պղծու-
թիւնը՝ որ ձ Դանիէլ մարգարէին ձեռքովը ըսուած
է, թէ սուրբ տեղը կը կենայ. (ով որ կարդայ՝
16 թող հասկընայ.) Այն ատենը ղ Հրէաստանի մէջ
17 եղողները լեռները թող փախչին. Եւ ան որ
տանիքին վրայ է՝ թող չիջնէ իր տունէն բան
18 մը առնելու. Եւ ան որ արտին մէջն է՝ թող

ը Բ Մն. ժե. 6 ։ Եսա. ժթ. 2 ։ Անգ. բ. 22 ։ Զաք. ժդ. 13 ։
թ Գլ. ժ. 17 ։ Մար. ժգ. 9 ։ Ղուկ. իա. 12 ։ Յով. ժե. 20 ։ ժզ. 2 ։ Գործ. դ. 2, 3 ։ է. 58 ։ ժբ. 1 ։ Ա Պետ. դ. 16 ։ Յայտ. բ. 10, 13 ։
ժ Գլ. ժա. 6 ։ ժգ. 57 ։ Բ Տիմ. ա. 15 ։ դ. 10, 16 ։
ի Գլ. է. 15 ։ Գործ. ի. 29 ։ Բ Պետ. բ. 1 ։
լ Ա Տիմ. դ. 1 ։ Հմր 5, 24 ։
խ Գլ. ժ. 22 ։ Մար. ժգ. 13 ։ Եբր. գ. 6, 14 ։ Յայտ. բ. 10 ։
ծ Գլ. դ. 23 ։ թ. 35 ։
կ Հռով. ժ. 18 ։ Կող. ա. 6, 23 ։
հ Մար. ժգ. 14 ։ Ղուկ. իա. 20 ։
ձ Դան. թ. 27 ։ ժբ. 11 ։
ղ Դան. թ. 23, 25 ։

19 ետ՛ չդառնայ իր հանդերձները առնելու։ Բայց
ճ վա՜յ այն օրերը յղի եղողներուն ու ծիծ տուող-
20 ներուն։ Եւ աղօթք ըրէք որ ձեր փախչիլը
21 ձմեռը չըլլայ, ո՛չ ալ շաբաթ օրը. Վասն
զի մ այն ատենը անանկ մեծ նեղութիւն պիտի
ըլլայ, որուն նմանը աշխարհի սկիզբէն մինչև հի-
22 մա եղած չէ, ո՛չ ալ պիտի ըլլայ։ Եւ թէ որ
այն օրերը չքիչնային, բնաւ մէկ մարմին մը պի-
տի չապրէր. յ բայց ընտրեալներուն համար
23 այն օրերը պիտի քիչնան։ ն Այն ատենը թէ որ
մէկը ձեզի ըսէ թէ Ահա հոս է Քրիստոսը կամ
24 հոն, մի՛ հաւատաք. Ինչու որ շ սուտ քրիստոս-
ներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու մեծ
նշաններ և հրաշքներ պիտի ցուցնեն, որ ո եթէ
25 կարելի էր՝ ընտրեալներն ալ մոլորցնեն։ Ահա
26 ձեզի առաջուց ըսի։ Ուստի թէ որ ձեզի ըսեն
թէ Ահա անապատին մէջն է, մի՛ ելլէք. և թէ
Ահա ներքին սենեակներուն մէջն է, մի՛ հաւա-
27 տաք։ չ Վասն զի ինչպէս որ փայլակը արևելքէն
կ՚ելլէ ու մինչև արևմուտք կ՚երևնայ, անանկ
28 պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ գալուստը։ պ Վասն
զի ուր որ մեռած մարմին կայ, հոն պիտի ժող-
վուին արծիւները։
29 Եւ ջ շուտ մը այն նեղութեան օրերէն ետև ռ ա-
րեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի
չտայ, և աստղերը երկինքէն պիտի իյնան, ու

ճ Ղուկ. իգ. 29 ։
մ Դան. թ. 26 ։ ժբ. 1 ։ Յովէլ. բ. 2 ։
յ Եսա. կե. 8, 9 ։ Զաք. ժգ. 2, 3 ։
ն Մար. ժգ. 21 ։ Ղուկ. ժէ. 23 ։ իա. 8 ։
շ Բ Օր. ժգ. 1 ։ Հմր 5, 11 ։ Բ Թես. բ. 9, 10, 11 ։ Յայտ. ժգ. 13 ։
ո Յով. զ. 37 ։ ժ. 28, 29 ։ Հռով. ը. 28, 29, 30 ։ Բ Տիմ. բ. 19 ։
չ Ղուկ. ժէ. 24 ։
պ Յոբ. լթ. 30 ։ Ղուկ. ժէ. 37 ։
ջ Դան. է. 11, 12 ։
ռ Եսա. ժգ. 10 ։ Եզեկ. լբ. 7 ։ Յովէլ. բ. 10, 31 ։ գ. 15 ։ Ամով. ե. 20 ։ ը. 9 ։ Մար. ժգ. 24 ։ Ղուկ. իա. 25 ։ Գործ. բ. 20 ։ Յայտ. զ. 12 ։

30 երկնից զօրութիւնները պիտի շարժին ։ [ա] Ու ան
ատենը Որդւոյ մարդոյ նշանը պիտի երեւնայ եր-
կինքի մէջ, [բ] ու ան ատենը երկրիս բոլոր ազգերը
կոծ պիտի ընեն, [գ] ու պիտի տեսնեն Որդին մար-
դոյ երկինքի ամպերուն վրայ եկած զօրութիւնով
31 ու մեծ փառքով ։ [դ] Ու անիկայ իր հրեշտակները
պիտի ղրկէ մեծաձայն փողով, ու պիտի ժողվեն
իր ընտրեալները չորս հովերէն՝ երկինքին մէկ ծայ-
րէն մինչեւ միւս ծայրը ։
32 [ե] Թզենիէն առակ մը սորվեցէք. որ երբ անոր
ոստերը կը կակուղնան ու տերեւները կը ցցուին,
33 գիտէք թէ ամառը մօտ է ։ Նոյնպէս ալ դուք
երբոր աս ամէն բաները տեսնէք, գիտցէք [զ] որ
34 մօտ է դռներուն քով ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի
որ [է] աս ազգը պիտի չանցնի մինչեւ որ աս ամէն
35 բաները ըլլան ։ [ը] Երկինք ու երկիր պիտի
անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին ։
36 [թ] Իսկ այն օրուան և այն ժամուն համար մէկը
չգիտեր, ո՛չ ալ երկնից *հրեշտակները, [ժ] հապա
37 միայն իմ Հայրս ։ Բայց ինչպէս որ Նոյի օրերը
եղան, Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպէս պի-
38 տի ըլլայ ։ [ժա] Քանզի ինչպէս էին այն օրերը ջրհե-
ղեղէն առաջ, կ'ուտէին կը խմէին կնիկ կ'առնէ-
ին ու էրկան կու տային, մինչեւ այն օրը որ Նոյ
39 տապանը մտաւ, Ու չգիտցան՝ մինչեւ որ ջրհե-
ղեղը եկաւ ու ամէնը վերցուց. Որդւոյ մարդոյ

ա Դան. է. 13 ։
բ Զաք. ժբ. 12 ։
գ Վր. ժզ. 27 ։ Մար. ժգ. 26 ։ Յայտ. ա. 7 ։
դ Վր. ժգ. 41 ։ ա Կոր. ժե. 52 ։ ա Թես. դ. 15 ։
ե Ղու. իա. 29 ։
զ Յակ. ե. 9 ։
է Վր. ժզ. 28 ։ իգ. 36 ։ Մար. ժգ. 30 ։ Ղու. իա. 32 ։
ը Սաղ. ճբ. 26 ։ Եսա. ծա. 6 ։ Երեմ. լա. 35, 36 ։ Վր. ե. 18 ։ Մար. ժգ. 31 ։ Ղու. իա. 33 ։ Եբր. ա. 11 ։
թ Մար. ժգ. 32 ։ Գոր. ա. 7 ։ ա Թես. ե. 2 ։ բ Պետ. գ. 10 ։
* Ոմանք՝ հրեշտակները, և ո՛չ Որդին,
ժ Զաք. ժդ. 7 ։
ժա Ծն. զ. 3, 4, 5 ։ է. 5 ։ Ղու. ժէ. 26 ։ ա Պետ. գ. 20 ։

40 գալուստն ալ այնպէս պիտի ըլլայ ։ [ժբ] Ան ատենը
թէ որ երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը պի-
41 տի առնուի ու միւսը ձգուի. Ու թէ որ երկու
կնիկ մէկ աղօրիքի մէջ աղալու վրայ գտնուին,
մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի ։
42 Ուրեմն [ժգ] արթուն կեցէք, ինչու որ չէք գիտեր
43 թէ ո՛ր ժամուն ձեր Տէրը կու գայ ։ [ժդ] Բայց աս
գիտցէք, որ եթէ տանուտէրը գիտնար թէ գիշե-
րուան ո՛ր պահուն գողը կու գայ, արթուն կը
կենար և թող չէր տար որ իր տունը ծակեն ։
44 [ժե] Անոր համար դուք ալ պատրաստ կեցէք, քանզի
Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ՝ որ դուք
45 չէք կարծեր ։ [ժզ] Ուստի ո՞վ է այն հաւատարիմ ու
իմաստուն ծառան՝ որն որ իր տէրը իր ծառաներուն
վրայ դրաւ, որ ատենին անոնց կերակուր տայ ։
46 [ժէ] Երանի՜ է այն ծառային, որն որ իր տէրը եկած
47 ատենը անանկ ըրած պիտի գտնէ ։ Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի [ժը] որ իր բոլոր ունեցածին վրայ պի-
48 տի կեցընէ զանիկայ ։ Հապա թէ որ այն չար ծա-
ռան իր սրտին մէջը ըսէ, Իմ տէրս իր գալը կ'ու-
49 շացընէ. Ու սկսի իր ծառայակիցները ծեծել,
50 ու գինովներուն հետ ուտել ու խմել, Այն ծառա-
յին տէրը պիտի գայ անանկ մէկ օր մը՝ որ չսպասեր,
51 և անանկ մէկ ժամ մը՝ որ չգիտեր. Ու զանիկայ
մէջտեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը կեղ-
ծաւորներուն հետ պիտի դնէ. [ժթ] Հոն պիտի ըլլայ
լալ ու ակռաներ կրճտել ։

ժբ Ղու. ժէ. 34, 35 ։
ժգ Վր. իե. 13 ։ Մար. ժգ. 33, 35 ։ Ղու. իա. 36 ։
ժդ Ղու. ժբ. 39 ։ ա Թես. ե. 2 ։ բ Պետ. գ. 10 ։ Յայտ. գ. 3 ։ ժզ. 15 ։
ժե Վր. իե. 13 ։ ա Թես. ե. 6 ։
ժզ Ղու. ժբ. 42 ։ Գոր. ի. 28 ։ ա Կոր. դ. 2 ։ Եբր. գ. 5 ։
ժէ Յայտ. ժզ. 15 ։
ժը Վր. իե. 21, 23 ։ Ղու. իբ. 29 ։
ժթ Վր. ը. 12 ։ իե. 30 ։

ԳԼ. ԻԵ

1 Տասը կուսանաց առակը, 14 ու տաղանդներուն առակը, 31 Վերջին դատաստանին ստորագրութիւնը։

1 Այն ատենը երկնից թագաւորութիւնը պիտի նմանի
տասը կոյսերու, որոնք իրենց լապտերները
2 առնելով՝ [ա] փեսան դիմաւորելու ելան։ [բ] Անոնցմէ
3 հինգը իմաստուն էին, և հինգը յիմար, Որ յի-
մարները առին իրենց լապտերները, ու հետերնին
4 եղ չառին. Բայց իմաստունները իրենց լապտեր-
5 ներուն հետ ամաններով եղ ալ առին։ Ու փեսան
որ ուշացաւ, [գ] ամէնն ալ թմրեցան ու քնացան։
6 Ու կէս գիշերին [դ] ձայն մը եղաւ, Ահա փեսան կու
7 գայ՝ զանիկայ դիմաւորելու ելէք։ Այն ատենը բո-
լոր կոյսերը ելան ու [ե] իրենց լապտերները շտը-
8 կեցին։ Ու յիմարները ըսին իմաստուններուն,
տուէք մեզի ձեր եղէն, ինչու որ մեր լապտերները
9 մարելու վրայ են։ Պատասխան տուին իմաստուն-
ները ու ըսին, Չըլլայ որ մեզի ու ձեզի չբաւա-
կանանայ. այլ ծախողներուն գացէք և
10 գնեցէք ձեզի համար։ Երբոր անոնք գացին գնե-
լու՝ փեսան եկաւ, ու պատրաստ եղողները անոր հետ
11 հարսնիքը մտան, և [զ] դուռը գոցուեցաւ։ Ետքը
միւս կոյսերն եկան ու ըսին, [է] Տէր Տէր՝ բաց
12 մեզի։ Բայց անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ [ը] Ես ձեզ չեմ ճանչնար։
13 [թ] Ուրեմն արթուն կեցէք, ինչու որ ոչ օրը գի-
տէք և ոչ * ժամը։

[ա] Եփե. Ե. 29, 30. Յայտ. ԺԹ. 7. ԻԱ. 2, 9.
[բ] Գլ. ԺԳ. 47. ԻԲ. 10.
[գ] Ա Թեսա. Ե. 6.
[դ] Գլ. ԻԴ. 31. Ա Թեսա. Դ. 16.
[ե] Ղուկ. ԺԲ. 35.
[զ] Ղուկ. ԺԳ. 25.
[է] Գլ. Է. 21, 22, 23.
[ը] Սաղ. Ե. 5. Ամբ. Ա. 13. Յոհ. Թ. 31.
[թ] Գլ. ԻԴ. 42, 44. Մար. ԺԳ. 33, 35. Ղուկ. ԻԱ. 36. Ա Կոր. ԺԶ. 13. Ա Թեսա. Ե. 6. Ա Պետ. Ե. 8. Յայտ. ԺԶ. 15.
* Ոմանք՝ ժամը, որուն մէջ Որդին մարդոյ կու գայ։

14 Քանզի [ժ] ինչպէս օտար երկիր գացող մարդ մը
կանչեց իր ծառաները, և իր ունեցածը անոնց
15 յանձնեց։ Մէկուն տուաւ հինգ տաղանդ, ու մէ-
կուն՝ երկուք, և մէկուն՝ մէկ, [ի] ամէն մէկուն իր
կարողութեանը չափ, ու անմիջապէս ճամբայ
16 ելաւ։ Ու ան որ հինգ տաղանդը առած էր,
գնաց անոնցմով գործ տեսաւ, և ուրիշ հինգ
17 տաղանդ շահեցաւ։ Նմանապէս ան որ երկուքը
18 առած էր, ուրիշ երկուք ալ շահեցաւ։ Իսկ ան
որ մէկը առած էր, գնաց գետինը փորեց. ու իր
19 տիրոջը ստակը պահեց։ Շատ ժամանակէն ետև
ան ծառաներուն տէրը եկաւ, և անոնցմէ հաշիւ
20 ուզեց։ Ու հինգ տաղանդը առնողը եկաւ՝ ուրիշ
հինգ տաղանդ ալ բերաւ, ու ըսաւ, Տէ՛ր՝ հինգ
տաղանդ յանձնեցիր ինծի, ահա ուրիշ հինգ տա-
21 ղանդ ալ անոնց վրայ շահեցայ։ Ըսաւ անոր իր
Տէրը, Ապրի՛ս՝ բարի ու հաւատարիմ ծառայ,
դուն որ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար, [լ] քեզ
շատ բաներու վրայ պիտի կեցընեմ. մտի՛ր [խ] քու
22 տիրոջդ ուրախութեանը մէջ։ Երկու տաղանդը
առնողն ալ եկաւ ու ըսաւ, Տէ՛ր՝ երկու տաղանդ
յանձնեցիր ինծի, ահա ուրիշ երկու տաղանդ ալ
23 անոնց վրայ շահեցայ։ Ըսաւ անոր իր տէրը,
[ծ] Ապրի՛ս՝ բարի ու հաւատարիմ ծառայ, դուն որ
քիչ բանին մէջ հաւատարիմ եղար, քեզ շատ
բաներու վրայ պիտի կեցընեմ. մտի՛ր քու տիրոջդ
24 ուրախութեանը մէջ։ Մէկ տաղանդը առնողն
ալ եկաւ ու ըսաւ, Տէ՛ր՝ գիտէի որ դուն խիստ
մարդ մըն ես, չսերմանած տեղէդ կը հնձես ու
25 չցանած տեղէդ կը ժողվես. Ուստի վախնալով,
գացի քու տաղանդդ գետինին տակը պահեցի.

[ժ] Ղուկ. ԺԹ. 12. Գլ. ԻԱ. 33.
[ի] Հռով. ԺԲ. 6. Ա Կոր. ԺԲ. 7, 11, 29. Եփե. Դ. 11.
[լ] Գլ. ԻԴ. 47. Հմր 34, 46. Ղուկ. ԺԲ. 44. ԻԲ. 29, 30.
[խ] Եբր. ԺԲ. 2. Բ Տիմ. Բ. 12. Ա Պետ. Ա. 8.
[ծ] Հմր 21.

26 [illegible] ահա քուկդ քեզի : Պատասխան տուաւ
անոր տէրը ու ըսաւ անոր , Չար և ծոյլ ծառայ՝
գիտէիր որ չսերմնած տեղէս կը հնձեմ ու չցա-
27 նած տեղէս կը ժողվեմ . Ուրեմն պէտք էր քեզի
որ իմ ստակս սեղանաւորներուն տայիր , որ ես
28 եկած ատենս շահովը առնէի իմս : Արդ առէք
անկէ տաղանդը , ու տասը տաղանդ ունեցողին
29 տուէք : է Ինչու որ ամէն ունեցողին պիտի տրուի ,
ու պիտի աւելնայ . և չունեցողին ունեցածն ալ
30 անկէ պիտի առնուի : Եւ աս անպիտան ծառան
ը դուրսի խաւարը հանեցէք . հոն պիտի ըլլայ
լալ ու ակռաներ կրճտել :
31 Ու թ երբոր Որդին մարդոյ իր փառքովը գայ ,
և բոլոր * սուրբ հրեշտակները իր հետը , ան
32 ատենը իր փառաց աթոռը պիտի նստի . Եւ
ժ անոր առջևը պիտի ժողվուին բոլոր ազգերը ,
ու ի զանոնք իրարմէ պիտի զատէ , ինչպէս որ
33 հովիւ մը ոչխարները այծերէն կը զատէ . Եւ
ոչխարները իր աջ կողմը պիտի կայնեցընէ , ու
այծերը՝ ձախ կողմը :
34 Ան ատենը Թագաւորը իր աջ կողմը եղողներուն
պիտի ըսէ , Եկէք իմ Հօրս օրհնածները , լ աշ-
խարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած թա-
35 գաւորութիւնը խ ժառանգեցէք . ծ Ինչու որ անօ-
թեցայ , և ինծի ուտելիք տուիք . ծարաւեցայ , ու
ինծի խմցուցիք . կ օտարական էի , և զիս

է Գլ. ժգ. 12 ; Մար. դ. 25 ; Ղու. ը. 18 ; ժթ. 26 ; Յոհ. ժե. 2 ;
ը Գլ. ը. 12 ; իդ. 51 ;
թ Զաք. ժդ. 5 ; Գլ. ժզ. 27 ; ժթ. 28 ; Մար. ը. 38 ; Գոր. ա. 11 ; ա Թես. դ. 15 ; բ Թես. ա. 7 ; Յուդ. 14 ; Յայտ. ա. 7 ;
* Ոմանք չունին սուրբ բառը :
ժ Հռով. ժդ. 10 ; բ Կոր. ե. 10 ; Յայտ. ի. 12 ;
ի Եզեկ. ի. 38 ; լդ. 17, 20 ; Գլ. ժգ. 49 ;
լ Գլ. ի. 23 ; Մար. ժ. 40 ; ա Կոր. բ. 9 ; Եբր. ժա. 16 ;
խ Հռով. ը. 17 ; ա Պետ. ա. 4, 9 ; գ. 9 ; Յայտ. իա. 7 ;
ծ Եսա. ծը. 7 ; Եզեկ. ժը. 7 ; Յակ. ա. 27 ;
կ Եբր. ժգ. 2 ; գ Յոհ. 5 ;

36 ներս առիք . հ Մերկ էի , և զիս հագուեցուցիք .
հիւանդ էի , ու ինծի տես եկաք . ձ բանտի մէջ
37 էի , և ինծի եկաք : Ան ատենը արդարները անոր
պատասխան պիտի տան ու ըսեն , Տէ՛ր՝ ե՞րբ քեզ
անօթեցած տեսանք՝ ու կերակրեցինք , կամ ծա-
38 րաւած՝ ու խմցուցինք . Ե՞րբ քեզ օտարական տե-
սանք՝ և ներս առինք , կամ մերկ՝ ու հագուեցու-
39 ցինք . Ե՞րբ քեզ հիւանդ կամ բանտի մէջ տե-
40 սանք , ու քեզի եկանք : Եւ Թագաւորը պատաս-
խան տալով պիտի ըսէ անոնց , Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի , ղ Որովհետև աս իմ եղբայրներուս ամենա
պզտիկներէն մէկուն ըրիք , ինծի ըրիք :
41 Ան ատենը ձախ կողմը եղողներուն ալ պի-
տի ըսէ , ճ Մէկդի գացէք ինծմէ անիծեալներ՝
մ յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստուած
42 է յ Սատանային ու իր հրեշտակներուն : Ինչու
որ անօթեցայ , և ինծի ուտելիք չտուիք . ծարաւե-
43 ցայ , ու ինծի չխմցուցիք . Օտարական էի , և զիս
ներս չառիք . մերկ էի , և զիս չհագուեցուցիք .
հիւանդ ու բանտի մէջ էի , և ինծի տես չեկաք :
44 Ան ատենը անոնք ալ պատասխան պիտի տան ու
ըսեն , Տէ՛ր՝ ե՞րբ տեսանք քեզ անօթեցած կամ
ծարաւած՝ կամ օտարական՝ կամ մերկ՝ կամ հիւանդ՝
կամ բանտի մէջ , ու քեզի սպասաւորութիւն
45 չըրինք : Ան ատենը պատասխան պիտի տայ
անոնց ու ըսէ , Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , ն Որով-
հետև ասոնց ամենա պզտիկներէն մէկուն չըրիք ,
ինծի ալ չըրիք :
46 շ Եւ ասոնք պիտի երթան յաւիտենական տան-

հ Յակ. բ. 15, 16 ;
ձ բ Տիմ. ա. 16 ;
ղ Առակ. ժդ. 31 ; ժթ. 17 ; Գլ. ժ. 42 ; Մար. թ. 40 ; Եբր. զ. 10 ;
ճ Սաղ. զ. 8 ; Գլ. է. 23 ; Ղու. ժգ. 27 ;
մ Գլ. ժգ. 40, 42 ;
յ բ Պետ. բ. 4 ; Յուդ. 6 ;
ն Առակ. ժդ. 31 ; ժէ. 5 ; Զաք. բ. 8 ; Գոր. թ. 5 ;
շ Դան. ժբ. 2 ; Յոհ. ե. 29 ; Հռով. բ. 7, &c.

տանջը, իսկ արդարները՝ յաւիտենական կեան-
քը :

ԳԼ. ԻԶ

1 Իշխանները խորհուրդ կ'ընեն Քրիստոսի դէմ ։ 6 Կնիկ մը եղով կ'օծէ անոր գլուխը ։ 14 Յուդա կը մատնէ զՔրիստոս ։ 17 Քրիստոս կ'ուտէ զատիկը · 26 կը սահմանէ իր սուրբ ընթրիքը · 36 աղօթք կ'ընէ պարտէզին մէջ · 47 և մէկ համբուրով մը մատնուած՝ 57 Կայիափայի առջին կը տարուի ։ 69 Պետրոս կ'ուրանայ զՔրիստոս ։

1 Ու երբոր Յիսուս լմնցուց աս բոլոր խօսքերը,
2 ըսաւ իր աշակերտներուն · ա Գիտէք որ երկու
օրէն ետև զատիկ կ'ըլլայ, և Որդին մարդոյ կը
մատնուի խաչը ելլելու :
3 բ Այն ատենը քահանայապետները ու դպիրները
և ժողովուրդին ծերերը ժողվեցան քահանայա-
4 պետին սրահը, որուն անունը Կայիափա էր · Ու
խորհուրդ ըրին որ նենգութեամբ բռնեն Յիսուսը
5 ու մեռցընեն : Բայց կ'ըսէին թէ Ո՛չ տօնին
ատենը, որ ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ :
6 գ Ու երբոր Յիսուս դ Բեթանիա էր բորոտ
7 Սիմոնին տունը, Կնիկ մը եկաւ անոր՝ որ ունէր
ծանրագին եղի շիշ մը, և թափեց անոր գլխուն
8 վրայ՝ երբոր անիկա սեղան նստած էր : ե Եւ
անոր աշակերտները տեսնելով՝ դժուարեցան՝ ու
9 ըսին, Ինչո՞ւ աս կորուստը ըլլայ · Քանզի աս
եղը կրնար սուղ գնով ծախուիլ, ու աղքատնե-
10 րուն տրուիլ : Եւ Յիսուս իմանալով ըսաւ
անոնց, Ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք կնիկը · քանզի
11 անիկա բարի գործ մը գործեց ինծի : զ Ինչու
որ աղքատները ամէն ատեն ձեր հետը ունիք,
12 բայց է զիս ամէն ատեն չունիք : Վասն զի ասի-

ա Մար. ժդ. 1 ; Ղու. իբ. 1 ; Յոհ. ժգ. 1 ;
բ Սաղ. բ. 2 ; Յոհ. ժա. 47 ; Գործ. դ. 25, ... ;
գ Մար. ժդ. 3 ; Յոհ. ժա. 1, 2 ; ժբ. 3 ;
դ Գլ. իա. 17 ;
ե Յոհ. ժբ. 4 ;
զ Բ Օր. ժե. 11 ; Յոհ. ժբ. 8 ;
է Տես գլ. ժը. 20 ; իը. 20 ; Յոհ. ժգ. 33 ; ժդ. 19 ; ժզ. 5, 28 ; ժէ. 11 ;

կայ որ աս եղը իմ մարմնիս վրայ թափեց, իմ
13 թաղմանս համար ըրաւ : Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի թէ բոլոր աշխարհի մէջ՝ ուր որ աս աւե-
տարանս քարոզուի, ասոր ըրածն ալ պիտի
խօսուի իրեն յիշատակ ըլլալու համար ։
14 ը Այն ատենը տասուերկուքէն մէկը՝ որ թ Յուդա
Իսկարիովտացի կ'ըսուէր, գնաց քահանայապետ-
15 ներուն ու ըսաւ, ժ Ի՞նչ կ'ուզէք ինծի տալ,
ու ես ձեզի մատնեմ զանիկայ · և անոնք երեսուն
16 սիկղ արծաթ * խոստացան անոր : Եւ անկէ ետև
պատեհութիւն մը կը փնտռէր, որ զանիկայ
մատնէ անոնց :
17 ի Եւ բաղարջակերաց առջի օրը աշակերտները
Յիսուսին եկան ու անոր ըսին, Ո՞ւր կ'ուզես որ
18 քեզի պատրաստենք՝ զատիկը ուտելու համար : Եւ
անիկայ ըսաւ, Գացէ՛ք քաղաքը այս ինչ մարդուն
ու ըսէ՛ք անոր, Վարդապետը կ'ըսէ, Ժամանակս
մօտ է, աշակերտներուս հետ մէկտեղ քու քովդ
19 պիտի ընեմ զատիկը : Աշակերտներն ալ ըրին
ինչպէս որ Յիսուս իրենց հրաման ըրաւ, ու
պատրաստեցին զատիկը :
20 լ Ու երբոր իրիկուն եղաւ, տասուերկուքին հետ
21 սեղան նստաւ : Եւ քանի որ կ'ուտէին՝ ըսաւ,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ ձեզմէ մէկը զիս պիտի
22 մատնէ : Ու շատ տրտմեցան, և անոնցմէ ամէն
մէկը սկսաւ ըսել անոր, Տէ՛ր՝ միթէ ե՞ս եմ :
23 Անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ, խ Ան որ իմ
հետս իր ձեռքը պնակը խոթեց, նոյնը պիտի
24 մատնէ զիս : Յիրաւի Որդին մարդոյ կ'երթայ՝

ը Մար. ժդ. 10 ; Ղու. իբ. 3 ; Յոհ. ժգ. 2, 30 ;
թ Գլ. ժ. 4 ;
ժ Զաք. ժա. 12 ; Գլ. իէ. 3 ;
* Կամ կշռեցին
ի Ել. ժբ. 6, 18 ; Մար. ժդ. 12 ; Ղու. իբ. 7 ;
լ Մար. ժդ. 17-21 ; Ղու. իբ. 14 ; Յոհ. ժգ. 21 ;
խ Սաղ. խա. 9 ; Ղու. իբ. 21 ; Յոհ. ժգ. 18 ;

ծ ինչպէս որ գրուած է իրեն համար, բայց կ վայ այն
մարդուն՝ որուն ձեռքովը Որդին մարդոյ կը մատ-
նուի. աղէկ էր այն մարդուն որ ծնած չըլլար:
25 Պատասխան տուաւ Յուդա որ անիկայ պիտի
մատնէր՝ ու ըսաւ, Վարդապետ՝ միթէ ես եմ.
ըսաւ անոր, Դուն ըսիր:
26 հ Եւ քանի որ անոնք կ'ուտէին, ձ Յիսուս հաց
առաւ՝ օրհնեց ու կտրեց, և տուաւ աշակերտներուն
ու ըսաւ, Առէ՛ք կերէ՛ք, այս է իմ մարմինս:
27 Եւ գաւաթը առաւ՝ գոհացաւ, ու տուաւ անոնց
28 և ըսաւ, ղ Ամէնքդ ալ խմեցէք ասկէ. ճ Ինչու
որ ասիկայ է իմ արիւնս մ նոր ուխտի, որ յ շատե-
րու համար կը թափուի մեղաց թողութեան հա-
29 մար: Բայց ն կ'ըսեմ ձեզի, շ Ասկէ ետև որթին
բերքէն բնաւ պիտի չխմեմ մինչև այն օրը՝ երբոր
ձեր հետը անիկայ նոր խմեմ իմ ո Հօրս թագա-
ւորութեանը մէջ:
30 չ Եւ օրհնութիւն մը երգելէն ետև Ձիթենեաց
31 լեռը ելան: Այն ատենը Յիսուս ըսաւ անոնց,
պ Դուք ամէնքդ այս գիշեր ջ ինծի վրայով պիտի
գայթակղիք. ինչու որ գրուած է թէ ռ Հովիւը
պիտի զարնեմ, ու հօտին ոչխարները պիտի
32 ցրուին: Բայց յարութիւն առնելէս ետև ձեզմէ
33 առաջ ս Գալիլեա պիտի երթամ: Պատասխան

ծ Սաղ. իբ: Ես. ծգ: Դան. թ. 26: Մար. թ. 11: Ղու. իդ. 25, 26, 46: Գործ. ժէ. 2, 3: իզ. 22, 23: ա Կոր. ժե. 3:
կ Յոհ. ժէ. 12:
հ Մար. ժդ. 22: Ղու. իբ. 19:
ձ ա Կոր. ժա. 23, 24, 25:
ղ ա Կոր. ժ. 16:
ճ Մար. ժդ. 23:
մ Տես Ել. իդ. 8: Ղև. ժէ. 11:
յ Երեմ. լա. 31:
ն Գլ. ի. 28: Հռով. ե. 15: Եբր. թ. 22:
շ Մար. ժդ. 25: Ղու. իբ. 18:
ո Գործ. ժ. 41:
չ Մար. ժդ. 26:
պ Մար. ժդ. 27: Յոհ. ժզ. 32:
ջ Գլ. ժա. 6:
ռ Զաք. ժգ. 7:
ս Գլ. իը. 7, 10, 16: Մար. ժդ. 28: ժզ. 7:

տուաւ Պետրոս ու ըսաւ անոր, Թէպէտ ամէնքն
ալ քու վրայովդ գայթակղին, բայց ես բնաւ պիտի
34 չգայթակղիմ: Ըսաւ անոր Յիսուս, վ Ճշմարիտ
կ'ըսեմ քեզի, Այս գիշեր դեռ հաւը չխօսած՝ երեք
35 անգամ զիս պիտի ուրանաս: Ըսաւ անոր Պետրոս,
Թէ և քեզի հետ մեռնելու ալ ըլլամ՝ բնաւ քեզ
պիտի չուրանամ. ասանկ կ'ըսէին նաև ամէն
աշակերտները:
36 տ Այն ատենը Յիսուս անոնց հետ տեղ մը եկաւ,
որուն անունը Գեթսեմանի էր, ու ըսաւ աշա-
կերտներուն, Հոս նստեցէք մինչև որ ես երթամ
37 հոն աղօթք ընեմ: Եւ իր հետը առնելով Պետ-
րոսը ու ր Զեբեդէոսին երկու որդիքը, սկսաւ
38 տրտմիլ և վշտանալ: Այն ատենը ըսաւ անոնց,
ց Իմ անձս մեռնելու չափ տրտում է. հոս կեցէք
39 և ինծի հետ արթուն մնացէք: Ու քիչ մը առաջ
երթալով՝ իր երեսին վրայ ինկաւ և ւ աղօթք ըրաւ՝
ըսելով, փ Ո՛վ Հայր իմ՝ թէ որ կարելի է,
ք թող այս գաւաթը ինծմէ անցնի. բայց օ չէ թէ
ինչպէս որ ես կ'ուզեմ, հապա ինչպէս որ դուն
40 կ'ուզես: Եւ եկաւ աշակերտներուն ու զանոնք
քնացած գտաւ, և ըսաւ Պետրոսին, Այդպէս մէկ
ժամ մըն ալ չկրցա՞ք ինծի հետ արթուն կենալ:
41 ֆ Արթո՛ւն կեցէք և աղօ՛թք ըրէք, որ փորձութեան
մէջ չմտնէք. հոգին յօժար է, բայց մարմինը
42 տկար: Դարձեալ երկրորդ անգամ գնաց աղօթք
ըրաւ՝ ըսելով, Ո՛վ Հայր իմ՝ եթէ անկարելի է
որ այս գաւաթը ինծմէ անցնի առանց անկէ խմե-

վ Մար. ժդ. 30: Ղու. իբ. 34: Յոհ. ժգ. 38:
տ Մար. ժդ. 32-35: Ղու. իբ. 39: Յոհ. ժը. 1:
ր Գլ. դ. 21:
ց Յոհ. ժբ. 27:
ւ Մար. ժդ. 36: Ղու. իբ. 42: Եբր. ե. 7:
փ Յոհ. ժբ. 27:
ք Գլ. ի. 22:
օ Յոհ. ե. 30: զ. 38: Փիլ. բ. 8:
ֆ Մար. ժգ. 33: ժդ. 38: Ղու. իբ. 40, 46: Եփե. զ. 18:

43 լուս , թող քու կամքդ ըլլայ ։ Ու եկաւ զանոնք
նորէն քնացած գտաւ , քանզի որ աչքերնին ծանրա–
44 ցած էր ։ Ու թողուց զանոնք , ու նորէն գնաց
երրորդ անգամ աղօթք ըրաւ՝ նոյն խօսքը ըսելով ։
45 Ան ատենը եկաւ իր աշակերտներուն ու ըսաւ
անոնց , Ասկէ ետեւ քնացէք ու հանգչեցէք .
ահա ժամը հասաւ , և Որդին մարդոյ մեղաւորնե–
46 րուն ձեռքը կը մատնուի ։ Ելէք ասկէ երթանք .
ահա մօտեցաւ անիկայ՝ որ զիս պիտի մատնէ ։
47 Ու ա դեռ անիկայ աս որ կը խօսէր , ահա Յու–
դա՝ տասներկուքէն մէկը եկաւ , և իր հետը
շատ բազմութիւն սուրերով ու բիրերով՝ քահա–
48 նայապետներէն և ժողովուրդին ծերերէն ։ Ու զա–
նիկայ մատնողը անոնց նշան մը տուեր էր՝ ըսելով ,
Ով որ ես համբուրեմ՝ ան է , բռնեցէք անիկայ ։
49 Ու շուտ մը Յիսուսին մօտենալով՝ ըսաւ , Ողջ՚յն
50 քեզ՝ վարդապետ , ու բ համբուրեց զանիկայ ։ Ու
Յիսուս ըսաւ անոր , գ Ընկեր՝ ինչո՞ւ համար եկար
դուն . ան ատենը մօտեցան՝ ձեռք զարկին Յի–
51 սուսին ու բռնեցին զանիկայ ։ Ու ահա դ Յիսուսի
հետ եղողներուն մէկը ձեռքը երկընցուց և իր
սուրը հանելով՝ զարկաւ քահանայապետին ծառա–
52 յին , և անոր ականջը մէկդի հանեց ։ Ան ատենը
Յիսուս ըսաւ անոր , Սուրդ իր տեղը դարձուր ,
քանզի որ ե ամէն սուր առնողները սրով պիտի
53 կորսուին ։ Կը կարծե՞ս թէ չեմ կրնար հիմա իմ
Հօրս աղաչել , և ինծի հասցնէ զ տասներկու
54 * գունդէն աւելի հրեշտակներ ։ Բայց ի՞նչպէս պի–
տի կատարուին գիրքերը , է թէ պէտք է ասանկ
ըլլալ ։

ա Մար. ժդ. 43 ; Ղու. իբ. 47 ; Յոհ. ժը. 3 ; Գոր. ա. 16 ;
բ Բ Թագ. ի. 9 ;
գ Սաղ. խա. 9 ; ծե. 13 ;
դ Յոհ. ժը. 10 ;
ե Ծն. թ. 6 ; Յայտ. ժգ. 10 ;
զ Դ Թագ. զ. 17 ; Դան. է. 10 ;
* Յուն. լեգէոնէն
է Ես. ծգ. 7, ժ ; Հմր 24 ; Ղու. իդ. 25, 44, 46 ;

55 Ան ատենը Յիսուս ըսաւ այն բազմութեանը ,
Իբր թէ աւազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրե–
րով զիս բռնելու . ամէն օր տաճարին մէջ ձեզի
հետ կը նստէի ու կը սորվեցնէի , և զիս չբռնե–
56 ցիք ։ Բայց աս ամէն բաները եղաւ՝ որ ը կա–
տարուին մարգարէից գիրքերը ։ Ան ատենը թ բո–
լոր աշակերտները թողուցին անիկայ ու փախան ։
57 ժ Ու անոնք որ Յիսուսը բռնեցին՝ Կայիափա քա–
հանայապետին տարին , ուր որ դպիրները ու ծե–
58 րերը ժողվուեր էին ։ Ու Պետրոս հեռուանց ա–
նոր ետեւէն գնաց մինչև քահանայապետին գաւի–
թը , ու ներս մտաւ սպասաւորներուն հետ նստաւ
59 որ վերջը տեսնէ ։ Իսկ քահանայապետները ու
ծերերը և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ սուտ վը–
կայութիւն մը կը փնտռէին , որ անիկայ մեռցընեն ,
60 Ու չգտան . թէ և ի շատ սուտ վկաներ ալ եկան ,
61 բայց չգտան . ետքը լ երկու սուտ վկայ եկան , Ու
ըսին թէ Ասիկայ ըսաւ , խ Ես կրնամ Աստուծոյ
տաճարը քակել , և զանիկայ իրեք օրուան մէջ
62 շինել ։ ծ Ու քահանայապետը ոտք ելլելով ը–
սաւ անոր , Պատասխան մը չե՞ս տար . ի՞նչ կը
63 վկայեն ասոնք քեզի դէմ ։ կ Ու Յիսուս լուռ կը
կենար ։ Պատասխան տուաւ քահանայապետը
ու ըսաւ անոր , հ Կենդանի Աստուծով քեզ
կ'երդմնցընեմ որ մեզի ըսես , թէ դո՞ւն ես Քրի–
64 ստոս Որդին Աստուծոյ ։ Ըսաւ անոր Յիսուս ,
Դուն ըսիր . բայց կ'ըսեմ ձեզի , ձ Ասկէ ետեւ պի–
տի տեսնէք Որդին մարդոյ ղ Զօրութեան աջ կող–

ը Ողբ. դ. 20 ; Հմր 54 ;
թ Տես Յոհ. ժը. 15 ;
ժ Մար. ժդ. 53 ; Ղու. իբ. 54 ; Յոհ. ժը. 12, 13, 24 ;
ի Սաղ. իէ. 12 ; լե. 11 ; Մար. ժդ. 55 ; Գոր. զ. 13 ;
լ Բ Օր. ժթ. 15 ;
խ Գլ. իէ. 40 ; Յոհ. բ. 19 ;
ծ Մար. ժդ. 60 ;
կ Ես. ծգ. 7 ; Գլ. իէ. 12, 14 ;
հ Ղև. ե. 1 ; Ա Թագ. ժդ. 24, 26 ;
ձ Դան. է. 13 ; Գլ. ժզ. 27 ; իդ. 30 ; Ղու. իա. 27 ; իբ. 31 ; Յոհ. ա. 51 ; Հռով. ժդ. 10 ; Ա Թես. դ. 16 ; Յայտ. ա. 7 ;
ղ Սաղ. ճժ. 1 ; Գոր. է. 55 ;

մը նստած, ու երկնից ամպերուն վրայ եկած ։
65 ճԱն ատենը քահանայապետը իր հանդերձները
պատռեց ու ըսաւ, Հայհոյութիւն ըրաւ. ալ
ի՞նչ պէտք է մեզի վկաներ. ահա հիմա լսեցիք
66 անոր հայհոյութիւնը. Ձեզի ի՞նչպէս կ՚երեւնայ.
անոնք պատասխան տուին ու ըսին, մՄահապարտ
67 է ։ յԱն ատենը անոր երեսը թուքին, ու բռուն-
ցով ծեծեցին անիկայ. նոմանք ալ ապտակ զար-
68 նելով՝ ըսին, շՄարգարէացի՛ր մեզի՛ դուն Քրի-
ստոս, ո՞վ է ան որ քեզի զարկաւ ։
69 ոԻսկ Պետրոս դուրսը գաւիթը նստեր էր. և
մէկ աղախին մը եկաւ անոր ու ըսաւ, Դուն ալ
70 Գալիլեացի Յիսուսին հետն էիր ։ Բայց անիկայ
ամենուն առջեւ ուրացաւ ու ըսաւ, Չեմ գիտեր
71 դուն ի՛նչ կը խօսիս ։ Ու երբոր դուրսը ելաւ,
ուրիշ աղախին մը զանիկայ տեսաւ, և հոն եղող-
ներուն ըսաւ, Ասիկայ ալ Յիսուս Նազովրեցիին
72 հետն էր ։ Ու Պետրոս նորէն երդումով ընելով
73 ուրացաւ թէ Ես այն մարդը չեմ ճանչնար ։ Ու
քիչ մը ատենէն ետև հոն եղողները եկան և ըսին
Պետրոսին, Յիրաւի դուն ալ անոնցմէ ես, ին-
չու որ քու չզրուցուածքդ ալ քեզ յայտնի կ՚ը-
74 նէ ։ Ան ատենը պսկսաւ անիծել ու երդումով ը-
նել՝ [illegible] թէ Ես այն մարդը չեմ ճանչնար.
75 և իսկոյն հաւը խօսեցաւ ։ Ու Պետրոս միտքը
բերաւ Յիսուսին խօսքը՝ որ իրեն ըսեր էր թէ
ջԴեռ հաւը չխօսած՝ իրեք անգամ պիտի ուրա-
նաս զիս. ու դուրս ելլելով դառնապէս լացաւ ։

ճ Դ Թագ. ժը. 37 ; ժթ. 1 ;
մ Ղև. իդ. 16 ; Յոհ. ժթ. 7 ;
յ Եսա. ծ. 6 ; ծգ. 3 ; Գլ. իէ. 30 ;
ն Ղուկ. իբ. 63 ; Յոհ. ժթ. 3 ;
շ Մար. ժդ. 65 ; Ղուկ. իբ. 64 ;
ո Մար. ժդ. 66 ; Ղուկ. իբ. 55 ; Յոհ. ժը. 16, 17, 25 ;
չ Ղուկ. իբ. 59 ;
պ Մար. ժդ. 71 ;
ջ Հմր 34 ; Մար. ժդ. 30 ; Ղուկ. իբ. 61, 62 ; Յոհ. ժգ. 38 ;

ԳԼ. ԻԷ

1 Քրիստոս Պիղատոսի ձեռքը կը տրուի կապուած ։ 3 Յուդա խեղդամահ կ՚ըլլայ ։ 19 Պիղատոս իր կնիկէն խրատուած՝ 24 իր ձեռքերը կը լուայ, 26 ու Բարաբբան կ՚արձակէ ։ 29 Քրիստոս փուշերով կը պսակուի, 34 կը խաչուի, 39 կը նախատուի, 50 կը մեռնի ու կը թաղուի ։ 66 Քրիստոսի գերեզմանը Հրէայք կը կնքեն, ու պահապան զինուորներ կը դնեն ։

1 Երբոր առտու եղաւ, աբոլոր քահանայապետնե-
րը ու ժողովուրդին ծերերը Յիսուսի դէմ
2 խորհուրդ ըրին որ զանիկայ մեռցընեն ։ Ու կա-
պելով զանիկայ տարին, ու բՊոնտացի Պիղատոս
կուսակալին ձեռքը տուին ։
3 գԱն ատենը Յուդա՝ որ զանիկայ մատնեց,
տեսնելով թէ դատապարտուեցաւ, զղջի եկաւ,
ու երեսուն արծաթը ետ դարձուց քահանայապետ-
4 ներուն և ծերերուն, Ու ըսաւ, Մեղայ, որ անմեղ
արիւն մատնեցի. և անոնք ըսին, Մեզի ի՞նչ,
5 դուն նայէ ։ Ու արծաթը տաճարին մէջ ձգեց
դու դուրս ելաւ, և գնաց ինքզինքը խեղդեց ։
6 Քահանայապետներն ալ արծաթը առնելով՝ ը-
սին, Օրէն չէ զանիկայ *կորբանին մէջ դնել,
7 ինչու որ արեան գին է ։ Ու խորհուրդ ըրին,
և անով բրուտին արտը ծախու առին՝ օտարներու
8 գերեզմանատուն ըլլալու համար ։ Աս պատճառով
ան արտը եԱրեան արտ ըսուեցաւ մինչև այսօր ։
9 Ան ատենը կատարուեցաւ †Երեմիա մարգարէին
ձեռքով ըսուած խօսքը, զՈւ առին երեսուն ար-
ծաթը՝ գին կտրուածին գինը, որ Իսրայէլի որ-
10 դւոցմէ ոմանք գին կտրեցին, Ու տուին անիկայ

ա Սաղ. բ. 2 ; Մար. ժե. 1 ; Ղուկ. իբ. 66 ; իգ. 1 ; Յոհ. ժը. 28 ;
բ Գլ. ի. 19 ; Գործ. գ. 13 ;
գ Գլ. իզ. 14, 15 ;
դ Բ Թագ. ժէ. 23 ; Գործ. ա. 18 ;
* Յն՝ տաճարին գանձանակը
ե Գործ. ա. 19 ;
† Ոմանք [illegible] Երեմիա տեղը ;
զ Զաք. ժա. 12, 13 ;

բրուտին արտին, ինչպէս որ ինծի հրաման ըրաւ
Տէրը :
11 Եւ Յիսուս կուսակալին առջեւը կայնեցաւ. և
կուսակալը ե հարցուց անոր ու ըսաւ, Հրէից
Թագաւորը դո՞ւն ես : Եւ Յիսուս ըսաւ անոր,
12 զ Դուն կ'ըսես : Ու քահանայապետներէն և
ծերերէն ամբաստանուած ատենը է ոչինչ պատաս-
13 խան մը չտուաւ : Այն ատենը Պիղատոս ըսաւ ա-
նոր, ը Չե՞ս լսեր թէ որչափ բաներ դէմ կը վկայեն
14 անոնք : Եւ անոր բան մը պատասխան չտուաւ,
մինչեւ շատ զարմացաւ կուսակալը :
15 թ Բայց կուսակալը սովորութիւն ունէր որ տօ-
նին ատենը կապուած մը արձակէր ժողովուրդին,
16 ով որ ուզէին : Այն ատենը Բարաբբա անունով
17 մէկ երեւելի բանտարկեալ մը ունէին : Երբոր
ժողովուեցան՝ ըսաւ անոնց Պիղատոս, Ո՞րը կ'ու-
զէք որ ձեզի արձակեմ. Բարաբբա՞ն թէ Յի-
18 սուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի. Քանզի գիտէր թէ
նախանձի համար մատնեցին զանիկա :
19 Ու երբոր ատեանը նստեր էր, անոր
կնիկը մարդ ղրկեց անոր ու ըսաւ, Դուն ան ար-
դարին հետ բան մը չունենաս, ինչու որ այսօր
երազիս մէջ շատ դիպուածներ անցան գլխէս անոր
համար :
20 ժ Բայց քահանայապետները և ծերերը ժողո-
վուրդը համոզեցին որ Բարաբբան խնդրեն ու
21 Յիսուսը կորսնցնեն : Պատասխան տուաւ կու-
սակալը ու ըսաւ անոնց, Աս երկուքէս ո՞րը կ'ու-
զէք որ ձեզի արձակեմ. և անոնք ըսին, Բարաբ-
22 բան : Ըսաւ անոնց Պիղատոս, Հապա ի՞նչ
23 ընեմ Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի : Ամէնքն

ե Մար. ժե. 2 ; Ղու. իգ. 3 ; Յովհ. ժը. 33 :
զ Յովհ. ժը. 37 ; ա Տիմ. զ. 13 :
է Գւ. իզ. 63 ; Յովհ. ժթ. 9 :
ը Գւ. իզ. 62 ; Յովհ. ժթ. 10 :
թ Մար. ժե. 6 ; Ղու. իգ. 17 ; Յովհ. ժը. 39 :
ժ Մար. ժե. 11 ; Ղու. իգ. 18 ; Յովհ. ժը. 40 ; Գործ. գ. 14 :

ալ ըսին անոր, Թող խաչուի. և կուսակալը
ըսաւ, Բայց ի՞նչ չար գործ ըրաւ. և անոնք ևս
առաւել կ'աղաղակէին ու կ'ըսէին, Թող խա-
24 չուի : Եւ Պիղատոս տեսնելով որ օգուտ մը չըլ-
լար, հապա ալ աւելի խռովութիւն կ'ըլլայ,
ժա ջուր առաւ՝ ձեռքերը լուաց ժողովուրդին առջեւը
ու ըսաւ, Ես աս արդարին արիւնէն անպարտ եմ.
25 դո՛ւք մտածեցէք : Եւ բոլոր ժողովուրդը պատաս-
խան տալով ըսաւ, ժբ Անոր արիւնը մեր վրայ ու
26 մեր որդւոցը վրայ ըլլայ : Այն ատենը Բարաբբան
արձակեց անոնց, և ժգ Յիսուսը ծեծելով՝ անոնց
ձեռքը տուաւ որ խաչուի :
27 ժդ Այն ատենը կուսակալին զինուորները պալատին
ներսը առին Յիսուսը, ու բոլոր զինուորներուն
28 գունդը անոր վրայ ժողվեցին. Եւ զանիկա մեր-
կացընելով՝ ժե կարմիր վերարկու մը հագցուցին ա-
29 նոր : ժզ Ու փուշերէ պսակ մը հիւսելով՝ անոր
գլուխը դրին, ու եղէգ մը անոր աջ ձեռքը. և
անոր առջեւը ծնկան վրայ գալով ծաղր կ'ընէին
զանիկա, ու կ'ըսէին, Ողջո՜յն քեզ՝ Հրէից Թա-
30 գաւոր : Եւ ժէ թքնելով անոր վրայ՝ եղէգը կ'առ-
31 նէին ու անոր գլուխը կը ծեծէին : Ու երբոր
ծաղր ըրին անիկա, վերարկուն վրայէն հանեցին
ու իր հանդերձները հագցուցին անոր, ժը և տա-
րին զանիկա խաչը հանելու :
32 Եւ ժթ դուրս ելլելով՝ ի Կիւրենացի մարդ մը գտան
Սիմոն անունով, զանիկա պահակ բռնեցին՝ որ

ժա Օր. իա. 6 :
ժբ Օր. ժթ. 10 ; Յես. բ. 19 ; Բ Թագ. ա. 16 ; Գ Թագ. բ. 23 ; Գործ. ե. 28 :
ժգ Ես. ծգ. 5 ; Մար. ժե. 15 ; Ղու. իգ. 16, 24, 25 ; Յովհ. ժթ. 1, 16 :
ժդ Մար. ժե. 16 ; Յովհ. ժթ. 2 :
ժե Ղու. իգ. 11 :
ժզ Սաղ. կթ. 19 ; Ես. ծգ. 3 :
ժէ Ես. ծ. 6 ; Գւ. իզ. 67 :
ժը Ես. ծգ. 7 :
ժթ Թուոց. ժե. 35 ; Գ Թագ. իա. 13 ; Գործ. է. 57 ; Եբր. ժգ. 12 :
ի Մար. ժե. 21 ; Ղու. իգ. 26 :

է

33 անոր խաչը վերցընէ ։ Ու [ն] եկան Գողգոթա ըս-
34 ուած տեղը, որ է գանկի տեղ. Եւ [ո] լեղիով
խառնած քացախ տուին անոր որ խմէ. ու երբոր
35 համը առաւ, խմել չէր ուզեր ։ [չ] Եւ զանիկայ
խաչը հանելով, անոր հանդերձները վիճակով
բաժնեցին. [որ մարգարէէն ըսուածը կատարուի,
[պ] Իմ հանդերձներս իրենց մէջը բաժնեցին, և իմ
36 պատմուճանիս վրայ վիճակ ձգեցին ։] [ջ] Ու նստեր
37 անիկայ կը պահէին ։ Եւ [ռ] անոր գլխուն վրայ իր
յանցանքը գրուած դրին թէ Ասիկայ է Յիսուս
38 Հրէից Թագաւորը ։ [ս] Ան ատենը անոր հետ երկու
աւազակ խաչուեցան մէկը անոր աջ կողմէն, ու
մէկը ձախ կողմէն ։
39 Եւ [վ] անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր,
40 գլուխնին կը շարժէին, Ու կ'ըսէին, [տ] Դուն որ
տաճարը կը քակէիր և իրեք օրուան մէջ կը
շինէիր, ինքզինքդ ազատէ. [ր] թէ որ Աստուծոյ
41 Որդին ես, իջի՛ր աս խաչէդ ։ Նոյնպէս ալ
քահանայապետները դպիրներուն ու ծերերուն հետ
42 ծաղր ընելով՝ կ'ըսէին, Ուրիշները ազատեց,
ինքզինքը չկրնար ազատել. թէ որ Իսրայէլի
Թագաւոր է, թող հիմա իջնէ խաչէն, և իրեն
43 հաւատանք ։ [ց] Աստուծոյ յուսացեր է, հիմա թող
փրկէ ատիկայ՝ եթէ կ'ուզէ ատիկայ. ինչու որ ը-
44 սաւ թէ Ես Որդի Աստուծոյ եմ ։ [ւ] Իր հետը
խաչուած աւազակներն ալ նոյնպէս կը նախատէին
զանիկայ ։

[ն] Մար. ժե. 22։ Ղու. իգ. 33։ Յոհ. ժթ. 17։
[ո] Սաղ. կթ. 21։ Տես Հմր 48։
[չ] Մար. ժե. 24։ Ղու. իգ. 34։ Յոհ. ժթ. 24։
[պ] Սաղ. իբ. 18։
[ջ] Հմր 54։
[ռ] Մար. ժե. 26։ Ղու. իգ. 38։ Յոհ. ժթ. 19։
[ս] Եսա. ծգ. 12։ Մար. ժե. 27։ Ղու. իգ. 32, 33։ Յոհ. ժթ. 18։
[վ] Սաղ. իբ. 7։ ճթ. 25։ Մար. ժե. 29։ Ղու. իգ. 35։
[տ] Գլ. իզ. 61։ Յոհ. բ. 19։
[ր] Գլ. իզ. 63։
[ց] Սաղ. իբ. 8։
[ւ] Մար. ժե. 32։ Ղու. իգ. 39։

45 [փ] Եւ վեցերորդ ժամէն մինչև իններորդ ժամը
46 բոլոր երկրին վրայ խաւար եղաւ ։ Եւ ժամը իննին
ատենները [ք] Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու
ըսաւ, Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի. որ ըսել
է [օ] Աստուած իմ Աստուած իմ, ինչո՞ւ զիս թո-
47 ղուցիր ։ Անոնցմէ ոմանք՝ որ հոն կայներ էին,
երբոր լսեցին՝ կ'ըսէին, Ասիկայ Եղիան կը կանչէ ։
48 Եւ շուտ մը անոնցմէ մէկը վազեց սպունգ մը ա-
ռաւ՝ [ֆ] քացախով լեցուց, ու եղէգի մը անցընե-
49 լով՝ տուաւ անոր որ խմէ ։ Ու միւսները կ'ը-
սէին, Թո՛ղ տուր՝ տեսնենք թէ Եղիան կու գա՞յ
ատիկայ ազատելու ։
50 [ա] Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնով աղաղակեց՝
ու հոգին աւանդեց ։
51 Եւ ահա [բ] տաճարին վարագոյրը վերէն 'ի վար
երկուքի ճեղքուեցաւ, ու երկիրը շարժեցաւ, և
52 քարերը պատռեցան, Եւ գերեզմանները բա-
ցուեցան, ու շատ սուրբ ննջեցեալներու մարմին-
53 ներ յարութիւն առին, Եւ գերեզմաններէն ելան
անոր յարութենէն ետև, մտան սուրբ քաղաքը
ու շատերուն երևցան ։
54 [գ] Բայց հարիւրապետը և անոր հետ Յիսուսը
պահողները երբոր տեսան երկրաշարժը ու եղած
բաները, շատ վախցան ու ըսին, Յիրաւի
ասիկայ Որդի Աստուծոյ էր ։
55 Եւ հոն շատ կիներ կային որ հեռուէն կը նա-
յէին, [դ] որոնք Գալիլեայէն Յիսուսի ետևէն եկան
56 իրեն ծառայութիւն ընելու. [ե] Որոնց մէջն էր
Մարիամ Մագդաղենացին, և Յակոբոսին ու

[փ] Ամով. ը. 9։ Մար. ժե. 33։ Ղու. իգ. 44։
[ք] Եբր. ե. 7։
[օ] Սաղ. իբ. 1։
[ֆ] Սաղ. կթ. 21։ Մար. ժե. 36։ Ղու. իգ. 36։ Յոհ. ժթ. 29։
[ա] Մար. ժե. 37։ Ղու. իգ. 46։
[բ] Ել. իզ. 31։ բ Մն. գ. 14։ Մար. ժե. 38։ Ղու. իգ. 45։
[գ] Հմր 36։ Մար. ժե. 39։ Ղու. իգ. 47։
[դ] Ղու. ը. 2, 3։
[ե] Մար. ժե. 40։

Յովսէսին մայրը Մարիամ , և Զեբեդէոսի որ-
դւոցը մայրը ։
57 ղ Ու երբոր իրիկուն եղաւ՝ Արիմաթիայէն հա-
րուստ մարդ մը եկաւ՝ որուն անունը Յովսէփ էր ,
58 որ ինքն ալ Յիսուսի աշակերտ էր ։ Ասիկայ
Պիղատոսին քովը երթալով՝ Յիսուսին մարմինը
խնդրեց . ան ատենը Պիղատոս հրաման ըրաւ որ
59 մարմինը տրուի ։ Եւ Յովսէփ մարմինը առաւ՝
60 մաքուր կտաւով պատեց , Ու ճ դրաւ իր նոր գե-
րեզմանին մէջ՝ որն որ քարէ փորած էր . և գերեզ-
մանին դուռը մեծ քար մը գլորցընելով գնաց ։
61 Եւ հոն էր Մարիամ Մագդաղենացին և միւս
Մարիամը՝ գերեզմանին դիմացը նստած ։
62 Եւ հետևեալ օրը՝ որ ուրբաթէն ետև էր , քա-
հանայապետները ու փարիսեցիները ժողվուեցան
63 Պիղատոսին քովը , Ու ըսին , Տէ՛ր՝ կը յիշենք որ
ան մոլորեցուցիչը իր կենդանութեան ատենը կ՚ը-
սէր թէ մ Երեք օրէն ետև յարութիւն կ՚առնեմ ։
64 Ուստի հրաման ըրէ որ մինչև երրորդ օրը գերեզ-
մանին զգուշութիւն ընեն . չըլլայ թէ իր աշա-
կերտները գիշերով գան՝ զանիկայ գողնան , և ժո-
ղովուրդին ըսեն թէ Մեռելներէն յարութիւն
առաւ . ու ետքի մոլորութիւնը առջինէն գէշ
65 ըլլայ ։ Պիղատոս անոնց ըսաւ , Դուք ունիք
պահապան զինուորներ . գացէ՛ք՝ զգուշութիւն
66 ըրէք ինչպէս որ գիտէք ։ Անոնք ալ գացին գե-
րեզմանին զգուշութիւն ըրին , յ քարը կնքելով ու
պահապան զինուորներ դնելով ։

ղ Մար . ժե . 42 ։ Ղու . իգ . 50 ։ Յոհ . ժթ . 38 ։
ճ Եսա . ծգ . 9 ։
մ Գլ . ժզ . 21 ։ ժէ . 22 ։ ի . 19 ։ իզ . 61 ։ Մար . ը . 31 ։ ժ . 34 ։ Ղու . թ . 22 ։ ժը . 33 ։ իդ . 6 , 7 ։ Յոհ . բ . 19 ։
յ Դան . զ . 17 ։

ԳԼ . ԻԸ

1 Հրեշտակը կ՚աւետէ կանանց Քրիստոսի յարութիւնը ։ 9 Քրիստոս ինքը կ՚երևնայ անոնց ։ 11 Քահանայապետները

ստակ կու տան զինուորներուն որ ըսեն թէ անիկայ իր գերեզմանէն գողցուեցաւ ։ 16 Քրիստոս իր աշակերտներուն կ՚երևնայ , 19 և կը խրկէ զանոնք բոլոր հեթանոսները աշակերտելու և մկրտելու ։

1 Եւ շաբաթ ա գիշերը՝ որ մէկշաբթին կը լուսնար ,
եկաւ Մարիամ Մագդաղենացին բ ու միւս
2 Մարիամը գերեզմանը տեսնելու ։ Ու ահա մեծ
երկրաշարժ մը եղաւ , ինչու որ Տէրոջը գ հրեշտա-
կը երկինքէն իջնելով , գնաց դռնէն մէկդի գլոր-
3 ցուց քարը , ու անոր վրայ նստաւ ։ դ Եւ անոր
տեսքը փայլակի պէս էր , ու անոր հանդերձները
4 ձիւնի պէս ճերմակ ։ Եւ անոր վախէն պահապան-
5 ները խռովեցան , ու մեռածի պէս եղան ։ Պա-
տասխան տուաւ հրեշտակը ու ըսաւ կիներուն ,
Դուք մի՛ վախնաք , քանզի գիտեմ որ կը փնտռէք
6 Յիսուսը՝ որ խաչուեցաւ . Անիկայ հոս չէ , ինչու
որ յարութիւն առաւ , ե ինչպէս որ ըսաւ . եկէք
7 տեսէ՛ք ան տեղը՝ ուր որ Տէ՛րը պառկած էր ։ Եւ
շուտ մը գացէք անոր աշակերտներուն ըսէք թէ
անիկայ մեռելներէն յարութիւն առաւ , և զ Ահա
ձեզմէ առաջ Գալիլեա կ՚երթայ , հոն պիտի տես-
8 նէք անիկայ . ահա ձեզի զրուցեցի ։ Եւ անոնք
շուտ մը գերեզմանէն ելան վախով ու մեծ ուրա-
խութիւնով՝ և կը վազէին աշակերտներուն պատ-
մելու ։
9 Ու երբոր կ՚երթային անոր աշակերտներուն
պատմելու , ահա է Յիսուս անոնց դէմը ելաւ ու
ըսաւ , Ողջոյն ձեզ ։ Եւ անոնք մօտենալով անոր
ոտքերը բռնեցին , ու երկրպագութիւն ըրին անոր ։
10 Ան ատենը Յիսուս ըսաւ անոնց , Մի՛ վախնաք ,

ա Մար . ժզ . 1 ։ Ղու . իդ . 1 ։ Յոհ . ի . 1 ։
բ Գլ . իէ . 56 ։
գ Տես Մար . ժզ . 5 ։ Ղու . իդ . 4 ։ Յոհ . ի . 12 ։
դ Դան . ժ . 6 ։
ե Գլ . ժբ . 40 ։ ժզ . 21 ։ ժէ . 22 ։ ի . 19 ։
զ Գլ . իզ . 32 ։ Մար . ժզ . 7 ։
է Տես Մար . ժզ . 9 ։ Յոհ . ի . 14 ։

գացէք [ը] իմ եղբայրներուս ըսէք որ Գալիլեա
երթան, ու հոն զիս պիտի տեսնեն։
11 Երբոր անոնք կ'երթային՝ ահա պահապան
զինուորներէն մէկ քանին քաղաքը եկան, ու քա-
հանայապետներուն պատմեցին բոլոր եղած բաները։
12 Եւ անոնք ծերերուն հետ մէկտեղ ժողվուելով ու
խորհուրդ ընելով՝ շատ ստակ տուին զինուորնե-
13 րուն, Ու ըսին, Ըսէք թէ Անոր աշակերտները
գիշերով եկան անիկայ գողցան՝ երբոր մենք կը
14 քնանայինք։ Եւ թէ որ այս բանը կուսակալին
ականջը հասնի, մենք անիկայ կը հաճեցընենք, և
15 ձեզ *ապահով կ'ընենք։ Անոնք ալ ստակը առին՝
ու սորվածնուն պէս ըրին. և այս ձայնը Հրէից
մէջ տարածուեցաւ մինչև այս օրս։
16 Իսկ տասնումէկ աշակերտները գացին Գալիլեա
17 այն լեռը՝ [թ] ուր որ Յիսուս իրենց որոշեր էր։ Ու
երբոր զանիկայ տեսան, երկրպագութիւն ըրին
18 անոր, բայց ոմանք տարակուսեցան։ Եւ Յիսուս
մօտենալով՝ խօսեցաւ անոնց ու ըսաւ, [ժ] Ամէն
իշխանութիւն ինծի տրուեցաւ երկինքի ու երկրի
19 մէջ։ [ի] Ուրեմն գացէք [լ] բոլոր ազգերը աշակերտե-
ցէք, մկրտեցէք զանոնք յանուն Հօր և Որդւոյ և
20 Հոգւոյն Սրբոյ. [խ] Սորվեցուցէք անոնց որ ան
ամէն բաները պահեն՝ ինչ որ ես ձեզի պատուիրե-
ցի. և ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչև աշ-
խարհիս վերջը։

ը Տես Յօհ. ի. 17; Հռով. ը. 29; Եբր. բ. 11;
* Յուն. անհոգ.
թ Գլ. իզ. 32; Հմր 7;
ժ Դան. է. 13, 14; Գլ. ժա. 27; ժզ. 28; Ղու. ա. 32; ժ. 22; Յօհ. գ. 35; ե. 22; ժգ. 3; ժէ. 2; Գործ. բ. 36; Հռով. ժդ. 9; ա Կոր. ժե. 27; Եփե. ա. 10, 21; Փիլ. բ. 9, 10; Եբր. ա. 2; բ. 8; ա Պետ. գ. 22; Յայտ. ժէ. 14;
ի Մար. ժզ. 15;
լ Եսա. ծբ. 10; Ղու. իդ. 47; Գործ. բ. 38, 39; Հռով. ժ. 18; Կող. ա. 23;
խ Գործ. բ. 42;

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Յովհաննէս մկրտչին պաշտօնը; 9 Յիսուս կը մկրտուի. 12 կը փորձուի. 14 կը քարոզէ. 16 իրեն հետևելու կը կանչէ Պետրոսը, Անդրէասը, Յակոբոսը և Յովհաննէսը. 23 կը բժշկէ դիւահար մը, 29 Պետրոսին զոքանչը 32 ու շատ հիւանդներ, 41 և կը մաքրէ բորոտը;

1 [ա] Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի աւետա-
2 րանին սկիզբը։ Ինչպէս որ Մարգարէից մէջ
գրուած է, [բ] Ահա ես իմ դեսպանս կը ղրկեմ քու
երեսիդ առջևէն, որ քու ճամբադ պիտի պատրաս-
3 տէ քու առջևէդ։ [գ] Անապատի մէջ կանչողին
ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր
4 շաւիղները շտկեցէք։ [դ] Յովհաննէս անապատին
մէջ կը մկրտէր, և ապաշխարութեան մկրտու-
թիւն կը քարոզէր՝ մեղքերու թողութեան հա-
5 մար։ [ե] Եւ բոլոր Հրէաստանի երկիրը ու Երու-
սաղեմցիք կ'երթային անոր, ու ամէնքը կը մկր-
տուէին անկէ Յորդանան գետին մէջ մեղքերնին
6 խոստովանելով։ Եւ Յովհաննէս հագեր էր ուղտի
մազ, և իր մէջքը կաշիէ գօտի. ու իր կերակուրը
7 [է] մարախ ու վայրենի մեղր էր։ Եւ կը քարոզէր ու
կ'ըսէր, [ը] Իմ ետևէս ինծմէ զօրաւորը կու գայ,
որ ես արժանի չեմ ծռելու և անոր կօշիկներուն

ա Մատ. ժգ. 33; Ղու. ա. 35; Յօհ. ա. 34;
բ Մաղ. գ. 1; Մատ. ժա. 10; Ղու. է. 27;
գ Եսա. խ. 3; Մատ. գ. 3; Ղու. գ. 4; Յօհ. ա. 15, 23;
դ Մատ. գ. 1; Ղու. գ. 3; Յօհ. գ. 23;
ե Մատ. գ. 5;
զ Մատ. գ. 4;
է Ղև. ժա. 22;
ը Մատ. գ. 11; Յօհ. ա. 27; Գործ. ժգ. 25;

8 կապերը արձակելու ։ ըԵս ձեզ ջրով մկրտեցի ,
բայց անիկա ձեզ ժՍուրբ Հոգիով պիտի մկրտէ ։
9 իՈւ եղաւ որ այն օրերը Յիսուս Գալիլեայի
Նազարեթէն եկաւ , ու Յովհաննէսէն մկրտուեցաւ
10 Յորդանանու մէջ ։ լԵւ շուտ մը ջուրէն ելլելուն
պէս՝ երկինքը բացուած տեսաւ , և Հոգին աղաւ-
11 նիի պէս՝ որ իր վրայ կ'իջնէր ։ Եւ ձայն մը եկաւ
երկինքէն՝ որ կ'ըսէր , խԴուն ես իմ սիրելի
Որդիս , որուն հաճեր եմ ։
12 ծԵւ շուտ մը Հոգին անապատը հանեց զանի-
13 կայ ։ Ու քառասուն օր հոն էր անապատին մէջ
Սատանայէն փորձուած . և գազաններու հետ էր ,
կու հրեշտակները իրեն սպասաւորութիւն կ'ընէին ։
14 հԵւ Յովհաննէսին մատնուելէն ետև Յիսուս
Գալիլեա եկաւ , ձԱստուծոյ արքայութեան աւե-
15 տարանը կը քարոզէր ու կ'ըսէր , ղԺամանա-
կը լցուած է , և ճԱստուծոյ թագաւորութիւնը
մօտեցած է . ապաշխարեցէ՛ք ու աւետարանին
հաւատացէ՛ք ։
16 մԵրբոր Գալիլեացւոց ծովուն քովէրը կը պը-
տըտէր , տեսաւ Սիմոնը ու Սիմոնին եղբայրը
Անդրէասը՝ ծովը ուռկան ձգած , ինչու որ ձկնորս
17 էին ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց , Իմ ետևէս
եկէք , ու ես ձեզ ընեմ որ մարդու որսորդ ըլլաք ։
18 Անոնք ալ շուտ մը իրենց յուռկանները թողու-
19 ցին ու անոր ետևէն գացին ։ նԵւ անկէ քիչ
մը առաջ երթալով՝ տեսաւ Զեբեդեան Յակո-

ը Գոր. ա. 5 ; ժա. 16 ; ժթ. 4 ։
ժ Ես. խդ. 3 ; Յովել. բ. 28 ; Գոր. բ. 4 ; ժ. 45 ; ժա. 15, 16 ; ա.Կոր. ժբ. 13 ։
ի Մատ. գ. 13 ; Ղու. գ. 21 ։
լ Մատ. գ. 16 ; Յոհ. ա. 32 ։
խ Սաղ. բ. 7 ; Մատ. գ. 17 ; Գլ. թ. 6 ։
ծ Մատ. դ. 1 ; Ղու. դ. 1 ։
կ Մատ. դ. 11 ։
հ Մատ. դ. 12 ։
ձ Մատ. դ. 23 ։
ղ Դան. թ. 25 ; Գաղ. դ. 4 ; Եփե. ա. 10 ։
ճ Մատ. գ. 2 ; դ. 17 ։
մ Մատ. դ. 18 ; Ղու. ե. 4 ։
յ Մատ. ժթ. 27 ; Ղու. ե. 11 ։
ն Մատ. դ. 21 ։

բոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը , որ անոնք
ալ նաւին մէջ ուռկանները կը կարկըտէին .
20 Եւ շուտ մը զանոնք կանչեց . անոնք ալ իրենց
հայրը Զեբեդէոսը վարձկաններուն հետ նաւին
մէջ ձգելով , անոր ետևէն գացին ։
21 շՈւ մտան Կափառնայում . և իսկոյն շաբաթ
22 օրը ժողովարանը մտնելով՝ կը սորվեցընէր ։ Եւ
ոկը զարմանային անոր վարդապետութեանը վրայ ,
ինչու որ իշխանութիւն ունեցողի մը պէս կը սոր-
վեցընէր անոնց , ու չէ թէ դպիրներուն պէս ։
23 չԵւ անոնց ժողովարանին մէջ մարդ մը կար , որ
պիղծ ոգի ունէր իր ներսի դին , ու աղաղակեց
24 ըսելով , Թո՛ղ տուր , պԴուն մեզի հետ ի՞նչ
բան ունիս՝ Յիսուս Նազովրեցի . միթէ մեզ
կորսնցընելո՞ւ եկար . գիտեմ քեզ՝ ո՛վ ես , Աս-
25 տուծոյ Սուրբը ։ Եւ Յիսուս սաստեց անոր՝
26 ըսելով , Պապանձէ՛ ու Ել անկէ ։ Եւ պիղծ
ոգին ռսաստիկ ցնցեց զանիկայ , ու մեծ ձայնով
27 մը աղաղակեց ու անկէ ելաւ ։ Եւ ամէնքը
զարմացան , այնպէս որ իրարու հարցուփորձ կ'ընէ-
ին ու կ'ըսէին , Աս ի՞նչ է . ի՞նչ նոր վարդա-
պետութիւն է աս , որ իշխանութիւնով պիղծ
ոգիներուն ալ կը հրամայէ , ու իրեն կը հնազան-
28 դին ։ Եւ շուտ մը իր համբաւը Գալիլեացւոց
ամէն կողմերը ելաւ ։
29 սԵւ շուտ մը ժողովարանէն ելլելով՝ Սիմոնին
ու Անդրէասին տունը մտան Յակոբոսին և Յով-
30 հաննէսին հետ ։ Ու Սիմոնին զոքանչը ջերմէ
բռնուած պառկած էր , և շուտ մը անոր համար
31 ըսին իրեն ։ Ու Յիսուս մօտեցաւ անոր ձեռքէն
բռնեց՝ վերցուց անիկայ . և իսկոյն ջերմը թող

շ Մատ. դ. 13 ; Ղու. դ. 31 ։
ո Մատ. է. 28 ։
չ Ղու. դ. 33 ։
պ Մատ. ը. 29 ։
ջ Հմր 34 ։
ռ Գլ. թ. 19 ։
ս Մատ. ը. 14 ; Ղու. դ. 38 ։

տուաւ զանիկայ ։ ~ ու անոնց սպասաւորութիւն
կ՚ընէր ։
32 լ Ու երբոր իրիկուն եղաւ՝ արեգակին մտած
ատենը բոլոր հիւանդները և դիւահարները իրեն
33 կը բերէին ։ Ու բոլոր քաղաքը դուռը ժողվուեր
34 էր ։ Եւ շատ հիւանդներ կերպ կերպ ցաւերէ
բժշկեց , ու շատ դեւեր հանեց . ու խ դեւերուն խօ-
սիլ չէր տար , ինչու որ զինքը կը ճանչնային ։
35 ծ Եւ առաւօտուն շատ կանուխ ելլելով դեռ չլ-
լուսցած՝ ելաւ ու գնաց անապատ տեղ մը , և հոն
36 աղօթք կ՚ընէր ։ Ու Սիմոն և իր հետը եղողները
37 գացին անոր ետևէն ։ Ու երբոր գտան զանիկայ՝
38 ըսին անոր թէ Ամէնը քեզ կը փնտռեն ։ Եւ
ըսաւ անոնց , կ Եկէ՛ք երթանք մերձակայ գիւղա-
քաղաքները , որ հոն ալ քարոզեմ , քանզի հ աս
39 բանիս համար ելեր եմ ։ ձ Եւ անոնց ժողովարան-
ներուն մէջը կը քարոզէր բոլոր Գալիլեայի մէջ ,
ու դեւերը կը հանէր ։
40 ղ Մէկ բորոտ մը եկաւ անոր՝ կ՚աղաչէր , ծունկ
կը դնէր ու կ՚ըսէր անոր , Թէ որ ուզես , կրնաս
41 զիս մաքրել ։ Եւ Յիսուս խղճալով՝ ձեռքը եր-
կընցուց , դպաւ անոր ու ըսաւ անոր , Կ՚ուզեմ՝
42 մաքրուէ՛ ։ Ու երբոր աս ըսաւ անոր , շուտ մը
բորոտութիւնը անկէ գնաց , ու մաքրուեցաւ ։
43 Եւ սաստիկ պատուէր տալով անոր՝ շուտ մը դուրս
44 հանեց զանիկայ , ու ըսաւ անոր , Զգո՛յշ կեցիր՝
մէկուն բան մը չըսես . հապա գնա՛ քեզ քահանա-
յին ցուցո՛ւր , և տո՛ւր քու մաքրուելուդ ընծան ,
ճ որ Մովսէս պատուիրեց՝ անոնց վկայութիւն ըլլա-
45 լու համար ։ Բայց մ անիկայ ելլելով՝ սկսաւ շատ

լ Մատ. Ը. 16 ; Ղու. Դ. 41 ;
խ Գւ. Գ. 12 ; Ղու. Դ. 42 ; Տես Գոր. ԺԶ. 17, 18 ;
ծ Ղու. Դ. 43 ;
կ Ղու. Դ. 44 ;
հ Ես. ԿԱ. 1 ; Յոհ. ԺԶ. 28 ; ԺԷ. 4 ;
ձ Մատ. Դ. 23 ; Ղու. Դ. 45 ;
ղ Մատ. Ը. 2 ; Ղու. Ե. 12 ;
ճ Ղև. ԺԴ. 3, 4, 10 ; Ղու. Ե. 14 ;
մ Ղու. Ե. 15 ;

հրատարակել ու բանը տարածել , անանկ որ
ալ ինքը չէր կրնար յայտնի կերպով քաղաք մը
մտնել . հապա դուրսը անապատ տեղուանք էր ,
ն և ամէն կողմերէն իրեն կու գային ։

ԳԼ. Բ

1 Քրիստոս կը բժշկէ անդամալոյծ մը . 14 իրեն հետևելու կը կանչէ Մատթէոս մաքսաւորը . 15 մաքսաւորներու ու մեղաւորներու հետ հաց կ՚ուտէ . 18 կ՚արդարացընէ իր աշակերտներուն ծոմ չպահելը , 23 և շաբաթ օրը ցորենի հասկեր փրցընել ուտելը ։

1 Եւ նորէն շ Կափառնայում մտաւ քանի մը օրէն
2 ետև . Ու լսուեցաւ որ անիկայ տան մէջ է , և
շուտով շատ մարդիկ ժողվուեցան , անանկ որ ալ
տեղ չկար , ո՛չ ալ դրանը քովերը . ու կը խօսէր
3 անոնց Աստուծոյ խօսքը ։ Եւ կու գային իրեն՝ չորս
մարդով վերցուած անդամալոյծ մը կը բերէին ։
4 Ու երբոր բազմութենէն չէին կրնար անոր մօտե-
նալ , քակեցին տանը յարկը՝ ուր որ Յիսուս էր ,
ու ծակ մը բանալով՝ վար իջեցուցին մահիճը՝
5 որուն վրայ պառկած էր անդամալոյծը ։ Եւ Յի-
սուս անոնց հաւատքը տեսնելով՝ ըսաւ անդամա-
լոյծին , Որդեակ՝ քու մեղքերդ քեզի ներուած
6 են ։ Ու դպիրներէն մէկ քանիները կային որ հոն
նստեր էին , և իրենց սրտերուն մէջ կը խորհէին՝
7 ըսելով , Ինչու համար ասիկայ ասանկ հայհոյու-
թիւններ կը խօսի . ո ո՞վ կրնայ մեղաց թողու-
8 թիւն տալ , բայց միայն Աստուած ։ Եւ չ Յի-
սուս իսկոյն իմանալով իր հոգւոյն մէջ՝ որ անոնք
այնպէս կը խորհին մէջերնին , ըսաւ անոնց , Ատ
9 ի՞նչ կը խորհիք սրտերնուդ մէջ ։ պ Ո՞րը աւելի
դիւրին է , անդամալոյծին ըսել՝ Քու մեղքերդ
ներուած են , եթէ ըսել , Ելի՛ր , մահիճդ առ
10 ու քալէ՛ ։ Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին

ն Գւ. Ը. 13 ;
շ Մատ. Թ. 1 ; Ղու. Ե. 18 ;
ո Յոբ. ԺԴ. 4 ; Ես. ԽԳ. 25 ;
չ Մատ. Թ. 4 ;
պ Մատ. Թ. 5 ;

մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու
թողութիւն տալու , (ըսաւ անդամալոյծին ,)
11 Քեզի կ՚ըսեմ , Ելի՛ր , մահիճդ առ ու տունդ
12 գնա : Ան ալ շուտ մը ելաւ , և իր մահիճը առ-
նելով՝ ամենուն առջեւը դուրս ելաւ , անանկ որ
ամէնքը ապշած մնացին , և փառք տուին Աստու-
ծոյ. ու ըսին թէ Անանկ բան մը ամենեւին տեսած
չէինք :
13 ի Եւ ելաւ նորէն ծովեզերքը , ու բոլոր ժողո-
վուրդը իրեն կու գային , և կը սորվեցընէր անոնց :
14 լ Ու երբոր կ՚անցնէր , տեսաւ Ղեւի Աղփէոսեանը ,
որ մաքս ընդունելու տեղը նստեր էր . ու ըսաւ ա-
նոր , Եկո՛ւր իմ ետեւէս . ան ալ ելաւ անոր
15 ետեւէն գնաց : խ Ու եղաւ որ երբոր սեղան նստած
էր անոր տանը մէջ , շատ մաքսաւորներ ու մե-
ղաւորներ ալ սեղան նստած էին Յիսուսի հետ ու
անոր աշակերտներուն հետ . քանզի շատուոր էին ,
16 ու անոր ետեւէն կ՚երթային : Եւ դպիրները ու փա-
րիսեցիները երբոր տեսան թէ անիկայ մաքսաւոր-
ներուն ու մեղաւորներուն հետ կ՚ուտէ , ըսին ա-
նոր աշակերտներուն , Ինչո՞ւ համար մաքսաւորնե-
րուն ու մեղաւորներուն հետ կ՚ուտէ ու կը խմէ :
17 Եւ Յիսուս երբոր լսեց , ըսաւ անոնց , ծ Առողջ-
ներուն բժիշկ պէտք չէ , հապա հիւանդներուն .
ես արդարները կանչելու չեկայ , հապա մեղաւոր-
ները :
18 Ը Եւ Յովհաննէսին ու փարիսեցիներուն աշա-
կերտները ծոմ կը պահէին . և եկան ու ըսին անոր,
Ինչո՞ւ Յովհաննէսին ու փարիսեցիներուն աշա-
կերտները ծոմ կը պահեն , ու քու աշակերտներդ
19 ծոմ չեն պահեր : Եւ Յիսուս ըսաւ անոնց , Մի-

ի Մատ. Թ. 9 :
լ Մատ. Թ. 9 : Ղու. Ե. 27 :
խ Մատ. Թ. 10 :
ծ Մատ. Թ. 12, 13 : ԺԲ. 11 : Ղու. Ե. 31, 32 : ԺԹ. 10 : Ա Տիմ. Ա. 15 :
Ը Մատ. Թ. 14 : Ղու. Ե. 33 :

թէ կարելի՞ է որ հարսնիքին տղաքը՝ քանի որ փե-
սան իրենց հետն է , ծոմ պահեն . որչափ ժամա-
նակ որ փեսան իրենց հետը ունին , կարելի չէ ծոմ
20 պահել : Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան
իրենցմէ վերցուի , հապա ան օրը ծոմ պիտի պա-
21 հեն : Մէկը կարկըտան չձգեր նոր լաթի կտոր մը
հին հանդերձի վրայ . թէ չէ՝ ան նորը որ անոր
լրութեանը համար դրուած էր , հինէն կ՚առնէ ,
22 ու պատռուածքը ալ աւելի գէշ կ՚ըլլայ . Ո՛չ ալ
մէկը նոր գինին հին տիկերու մէջ կը դնէ . եթէ
ոչ՝ նոր գինին տիկերը կը պատռէ , ու գինին կը
թափի , և տիկերը կը կորնչին . հապա նոր գինին
նոր տիկերու մէջ դնելու է :
23 կ Ու եղաւ որ շաբաթ օրը ինքը արտերուն մէ-
ջէն կ՚անցնէր , և իր աշակերտները որ կ՚երթային ,
24 սկսան հ ցորենի հասկեր փրցընել : Ու փարիսեցիները
ըսին իրեն , Նայէ՛ շաբաթ օրը ի՞նչ կ՚ընեն ,
25 որ արժան չէ : Ինքն ալ անոնց ըսաւ , Բնաւ չէ՞ք
կարդացեր դուք ձ Դաւիթին ըրածը՝ երբոր պէտք
ունեցաւ , և անօթեցաւ ինքը ու անոնք որ իր
26 հետն էին . Ինչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբի-
աթար քահանայապետին օրովը , և առաջաւորու-
թեան հացերը կերաւ , ու տուաւ անոնց ալ որ
իր հետն էին , ղ որ [illegible] օրինաւոր չէ ուտել ,
27 բայց միայն քահանաներուն : Եւ ըսաւ անոնց ,
Շաբաթը մարդուն համար եղաւ , ու չէ թէ
28 մարդը շաբաթին համար : Ուրեմն ճ Որդին մար-
դոյ շաբաթին ալ տէրն է :

կ Մատ. ԺԲ. 1 : Ղու. Զ. 1 :
հ Բ Օր. ԻԳ. 25 :
ձ Ա Թագ. ԻԱ. 6 :
ղ Ել. ԻԹ. 32, 33 : Ղև. ԻԴ. 9 :
ճ Մատ. ԺԲ. 8 :

ԳԼ. Գ

1 Քրիստոս կը բժշկէ ձեռքը չորցած մարդը , 10 և ուրիշ շատ ցաւագարներ . 11 պիղծ ոգիները կը յանդիմանէ . 13 իր տասնըերկու առաքեալները կ՚ընտրէ . 22 փաստով կը ցուցը-

նէ որ անոնց բաժը թէ ինքը Բէեղզեբուղով դեւեր կը հանէ, հայհոյութիւն է. 31 եւ կ'իմացընէ թէ ո՛րոնք են իր եղբայրը՝ քոյրը եւ մայրը։

1 Եւ [ա] նորէն ժողովարանը մտաւ, ու հոն մարդ մը
2 կար, որուն ձեռքը չորցած էր։ Եւ իրեն կը
սպասէին թէ արդեօք շաբաթ օրը զանիկա պիտի
բժշկէ՞, որ իր վրայով ամբաստանութիւն ընեն։
3 Եւ ինքը ձեռքը չորցած մարդուն ըսաւ, Ելի՛ր
4 մէջտեղը կայնէ՛։ Ու ըսաւ անոնց, Շաբաթ օրը
բարի՞ք ընել արժան է, թէ չարիք ընել. հոգի
մը ազատե՞լ, թէ մեռցընել. բայց անոնք
5 լուռ կեցան։ Եւ Յիսուս բարկութեամբ շուր-
ջանակի անոնց վրայ նայելով՝ անոնց սրտերուն կու-
րութեանը համար տրտմած, ըսաւ այն մարդուն,
Ձեռքդ երկնցո՛ւր. ան ալ երկնցուց, եւ անոր
6 ձեռքը *ողջացաւ։ [բ] Ու փարիսեցիները [գ] Հերով-
դէսեաններուն հետ մէկտեղ շուտ մը դուրս ելլե-
լով, անոր դէմ խորհուրդ կ'ընէին թէ ի՛նչպէս
կորսընցընեն զանիկա։
7 Բայց Յիսուս իր աշակերտներովը ծովեզերքը
գնաց. եւ շատ բազմութիւն անոր ետեւէն գացին
8 Գալիլեայէն, ու [դ] Հրէաստանէն, Եւ Երուսաղէ-
մէն, ու Եդովմէն եւ Յորդանանու անդին կողմէն,
ու անոնք որ Տիւրոսի ու Սիդոնի շրջակայ տեղերէն
էին, շատ բազմութիւն երբոր լսեցին ինչ որ
9 կ'ընէր, իրեն եկան։ Եւ իր աշակերտներուն ըսաւ
որ նաւակ մը պատրաստ կենայ իրեն համար՝ ժողո-
վուրդին բազմութեանը պատճառաւ, որ զինքը
10 չնեղեն։ Վասնզի շատերը բժշկեց, անանկ որ ցաւ-
ունեցողները վրան կը դիզուէին որ իրեն դպչին։
11 [ե] Եւ պիղծ ոգիները երբոր զինքը կը տեսնէին,
կ'իյնային իր առջեւը, կը կանչուըտէին ու կ'ը-

[ա] Մատ. ժբ. 9; Ղուկ. զ. 6։
* Որմնէ՝ ողջացաւ միւսին պէս
[բ] Մատ. ժբ. 14։
[գ] Մատ. իբ. 16։
[դ] Ղուկ. զ. 17։
[ե] Գլ. ա. 23, 24; Ղուկ. դ. 42։

12 սէին, [զ] Դուն ես Աստուծոյ Որդին. եւ [է] ինքը
սաստիկ կը յանդիմանէր զանոնք, որ զինքը
չյայտնեն։
13 [ը] Եւ լեռը ելլելով, իր ուզածները իրեն կանչեց.
14 ու գացին անոր քովը։ Եւ տասուերկու հոգի ո-
րոշեց, որ իր հետը ըլլան, եւ որ անոնք խրկէ
15 քարոզել, Ու իշխանութիւն ունենալ ցաւերը
16 բժշկելու եւ դեւերը հանելու։ Ու Սիմոնին
17 [թ] անունը Պետրոս դրաւ. Եւ Զեբեդեան Յա-
կոբոսին՝ ու Յակոբոսին եղբօրը Յովհաննէսին՝ ա-
նոնց անունները Բանէրեգէս դրաւ, որ ըսել է
18 Որոտման որդիք. Եւ Անդրէասը, ու Փիլիպ-
պոսը, եւ Բարթողիմէոսը, ու Մատթէոսը, եւ
Թովմասը, ու Աղփէոսեան Յակոբոսը, եւ Թա-
19 դէոսը, ու Սիմոն Կանանացին, Եւ Յուդա
Իսկարիովտացին, որ նաեւ մատնեց զանիկա։
20 Տուն մը եկան, եւ նորէն ժողովուրդը ժողվուե-
ցաւ, [ժ] անանկ որ հաց ուտելու ալ ժամանակ չկրցան
21 գտնել։ Ու երբոր իրենները լսեցին, ելան որ
զինքը բռնեն, վասնզի կ'ըսէին թէ խելըռած է։
22 Եւ այն դպիրները որ Երուսաղէմէն իջեր էին,
կ'ըսէին թէ [լ] Անոր ներսի դին Բէեղզեբուղ կայ,
23 եւ դեւերուն իշխանովը դեւերը կը հանէ։ [խ] Եւ իրեն
կանչելով զանոնք, առակներով կ'ըսէր անոնց,
24 Ի՞նչպէս կրնայ Սատանան Սատանայ հանել։ Ու
թէ որ մէկ թագաւորութիւն մը իրեն դէմ բաժ-
25 նուի, այն թագաւորութիւնը չկրնար կենալ։ Եւ
թէ որ տուն մը իրեն դէմ բաժնուի, այն տունը
26 չկրնար կենալ։ Ու թէ որ Սատանան իրեն դէմ
ելլէ ու բաժնուած է, անիկա չկրնար կենալ,

[զ] Մատ. ժդ. 33; Գլ. ա. 1։
[է] Գլ. ա. 25, 34; Մատ. ժբ. 16։
[ը] Մատ. ժ. 1; Ղուկ. զ. 12; թ. 1։
[թ] Յովհ. ա. 42։
[ժ] Գլ. գ. 31։
[ի] Յովհ. է. 5; ժ. 20։
[լ] Մատ. թ. 34; ժ. 25; Ղուկ. ժա. 15; Յովհ. է. 20; ը. 48, 52; ժ. 20։
[խ] Մատ. ժբ. 25։

27 հապա անոր վերջը հասած է ։ [ծ]Մէկը չկրնար
զօրաւոր մարդու մը տունը մտնելով անոր կարա-
սիները յափշտակել, թէ որ առաջ այն զօրաւոր
մարդը չկապէ, ու ետքը անոր տունը կողոպտէ ։
28 [կ]Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ Ամէն մեղքերը պի-
տի ներուին մարդոց որդիներուն, և հայհոյու-
29 թիւնները՝ որչափ որ հայհոյեն ․ Բայց ով որ
Հոգւոյն Սրբոյ դէմ հայհոյէ, յաւիտեան թողու-
թիւն պիտի չունենայ, հապա յաւիտենական
30 դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ ․ Վասն զի
կ'ըսէին թէ Պիղծ ոգի կայ անոր ներսի դին ։
31 [հ]Ետքը անոր մայրը ու եղբայրները եկան, և
դուրսը կայնելով մարդ խրկեցին ու կը կանչէին
32 զանիկայ ։ Եւ ժողովուրդը անոր բոլորտիքը նստեր
էր ․ ու իրեն ըսին թէ Ահա քու մայրդ ու
եղբայրներդ դուրսը քոյրերդ ալ քեզ կ'ուզեն ։
33 Եւ անիկա պատասխան տուաւ անոնց ու ըսաւ,
34 Ո՞վ է իմ մայրս կամ եղբայրներս ։ Ու իր
բոլորտիքը նստողներուն նայելով ըսաւ, Ահա իմ
35 մայրս ու իմ եղբայրներս ․ Վասն զի ով որ
Աստուծոյ կամքը կը կատարէ, անիկայ է իմ
եղբայրս և քոյրս ու մայրս ։

ԳԼ. Դ

1 Սերմնացանին առակը, 14 և անոր առակին մեկնութիւնը ։ 21 Մենք պարտաւոր ենք մեր գիտութեան լոյսը ուրիշներուն ալ հաղորդելու ։ 26 Ծածուկ աճեցող սերմին, 30 և մանանեխի հատին առակը ։ 35 Քրիստոս կը հանդարտեցնէ ծովուն ալեկոծութիւնը ։

1 [ձ]Դարձեալ սկսաւ սորվեցընել ծովեզերքին վրայ,
և շատ ժողովուրդ անոր քովը ժողվուեցաւ, ա-
նանկ որ ինքը նաւը մտաւ ու նստաւ ծովուն վրայ,
և բոլոր ժողովուրդը ցամաքը ծովուն եզերքն էր ։
2 Եւ անոնց շատ բաներ կը սորվեցընէր առակներով,

[ծ] Ես. խթ. 24 ; Մատ. ժբ. 29 ։
[կ] Մատ. ժբ. 31 ; Ղու. ժբ. 10 ; ա Յոհ. ե. 16 ։
[հ] Մատ. ժբ. 46 ; Ղու. ը. 19 ։
[ձ] Մատ. ժգ. 1 ; Ղու. ը. 4 ։

[ղ]ու կ'ըսէր անոնց իր վարդապետութեանը մէջ,
3 Լսեցէ՛ք՝ ահա սերմ ցանողը ելաւ որ սերմ ցանէ ։
4 Ու երբոր կը ցանէր, մէկ քանին ճամբուն քովը
ինկաւ, և թռչունները եկան ու կերան զանիկայ ։
5 Եւ ուրիշը ինկաւ ապառաժուտ տեղի վրայ, ուր
որ շատ հող չկար ․ և շուտ մը բուսաւ, հողը
6 խորունկութիւն չունենալուն համար ․ Սակայն ա-
րեւուն ծագած ատենը այրեցաւ, ու արմատ չունե-
7 նալուն համար չորցաւ ։ Եւ ուրիշը ինկաւ փու-
շերու մէջ, և փուշերը ելան ու խեղդեցին զանի-
8 կայ, ու պտուղ չտուաւ ․ Եւ ուրիշը ինկաւ աղէկ
հողի մէջ, ու պտուղ կու տար, որ ելաւ ու
մեծցաւ, և կը բերէր մէկուն տեղը երեսուն, ու
մէկուն տեղը վաթսուն, և մէկուն տեղը հարիւր ։
9 Ու կ'ըսէր, Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ ։
10 [մ]Ու երբոր առանձին էր, իր քովը եղողները
տասներկուքին հետ մէկտեղ հարցուցին իրեն այն
11 առակը ։ Եւ ըսաւ անոնց ․ Ձեզի տրուած է
գիտնալ Աստուծոյ թագաւորութեանը խորհուր-
դը, բայց [յ]անոնց որ դուրսէն են, ամէն բան
12 առակներով կ'ըլլայ ․ [ն]Որ տեսնելով տեսնեն ու
չտեսնեն, և լսելով լսեն ու չիմանան, որ չըլլայ
թէ դարձի գան, և իրենց մեղացը թողութիւն
13 ըլլայ ։ Ու ըսաւ անոնց, Այս առակը չէ՞ք գի-
տեր ․ ուրեմն ի՞նչպէս պիտի գիտնաք ամէն ա-
14 ռակները ։ [շ]Սերմ ցանողը խօսքը կը ցանէ ։
15 Եւ ճամբուն քովինները անոնք են՝ որոնց մէջ խօս-
քը կը ցանուի ․ ու երբոր կը լսեն, շուտ մը Սա-
տանան կու գայ՝ և անոնց սրտերուն մէջ ցանուած
16 խօսքը կը հանէ ։ Նոյնպէս ալ ապառաժուտ

[ղ] Գլ. ժբ. 38 ։
[ճ] Յոհ. ժե. 5 ; Կող. ա. 6 ։
[մ] Մատ. ժգ. 10 ; Ղու. ը. 9, ևն ։
[յ] ա Կոր. ե. 12 ; Կող. դ. 5 ; ա Թես. դ. 12 ; ա Տիմ. գ. 7 ։
[ն] Ես. զ. 9 ; Մատ. ժգ. 14 ; Ղու. ը. 10 ; Յոհ. ժբ. 40 ; Գործ. իը. 26 ; Հռով. ժա. 8 ։
[շ] Մատ. ժգ. 19 ։

տեղերու վրայ ցանուածները անոնք են, որ երբոր
կը լսեն խօսքը՝ շուտ մը ուրախութեամբ կ՚ընդու-
17 նին զանիկայ. Եւ իրենց մէջը արմատ չունենալով՝
քիչ ժամանակ կը տեւեն, ետքը երբոր նեղութիւն
կամ հալածանք ըլլայ խօսքին համար, շուտ մը կը
18 գայթակղին։ Եւ փուշերուն մէջ ցանուածները
19 անոնք են՝ որ երբ խօսքը կը լսեն, Աշխարհիս
զբաղմունքները ը ու հարստութեան խաբէութիւն-
ները, և ուրիշ բաներուն ցանկութիւնները մէջ
մտնելով՝ խօսքը կը խեղդեն, ու կ՚ըլլայ անպտուղ։
20 Եւ աղէկ հողի մէջ ցանուածները անոնք են, որ
խօսքը կը լսեն՝ և կ՚ընդունին, ու պտուղ կու
տան՝ մէկուն տեղը երեսուն, և մէկուն տեղը վաթ-
սուն, ու մէկուն տեղը հարիւր։
21 թ Եւ ըսաւ անոնց, Միթէ ճրագը գրուանին
կամ մահիճին տա՞կը դրուելու համար կու գայ.
22 չէ՞ որ աշտանակին վրայ դրուելու համար։ ժ Ին-
չու որ ծածուկ բան մը չկայ, որ պիտի չյայտնուի.
և գաղտուկ բան մը չէ եղած՝ որ երեւան պիտի
23 չելլէ։ ի Թէ որ մէկը լսելու ականջ ունի, թող
լսէ։
24 Եւ ըսաւ անոնց, Նայեցէք ինչ կը լսէք.
լ Ինչ չափով որ դուք կը չափէք, նոյն չափով
պիտի չափուի ձեզի. և ձեզի՝ որ կը լսէք, պիտի
25 աւելնայ։ Վասն զի խ ով որ ունի, անոր պիտի
տրուի. և ով որ չունի, ունեցածն ալ անկէ
պիտի առնուի։
26 Եւ կ՚ըսէր, ծ Աստուծոյ թագաւորութիւնը
անանկ է, որպէս թէ մէկ մարդ մը հողին մէջը
27 սերմ ձգէ, Ու քնանայ և արթննայ գիշեր ու

ը ա Տիմ. զ. 9, 17։
թ Մատ. ե. 15; Ղուկ. ը. 16; ժա. 33։
ժ Մատ. ժ. 26; Ղուկ. ժբ. 2։
ի Մատ. ժա. 15; Հմր 9։
լ Մատ. է. 2; Ղուկ. զ. 38։
խ Մատ. ժգ. 12; իե. 29; Ղուկ. ը. 18; ժթ. 26։
ծ Մատ. ժգ. 24։

ցորեկ, և սերմը բուսնի ու մեծնայ, ու ինքը
28 չգիտեր թէ ինչպէս։ Քանզի հողը ինքնիրմէն
պտուղ կու տայ, առաջ խոտը, ետքը հասկը,
29 անկէ ետև լեցուն ցորենը հասկին մէջ։ Ու երբոր
պտուղը հասուննայ, շուտ մը կ մանգաղը կը ղրկէ,
ինչու որ հունձքի ատենը հասած է։
30 Եւ կ՚ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնը
հ ի՞նչ բանի նմանցընենք, կամ ի՞նչ առակով
31 անիկայ բաղդատենք։ Մանանեխի հատին նման
է, որ հողի մէջ ցանուած ատենը՝ երկրի վրայ
32 եղած սերմերուն ամենէն պզտիկն է. Ու երբոր
ցանուի, կը բուսնի և ամէն խոտեղէններէն ալ
մեծ կ՚ըլլայ, ու մեծ ճիւղեր կ՚արձակէ, անանկ
որ երկնից թռչուններուն հերիք կ՚ըլլայ անոր
շուքին տակը բնակելու։
33 ձ Եւ անանկ շատ առակներով կը խօսէր անոնց
34 հետ խօսքը որչափ որ կրնային մտիկ ընել. Ու
առանց առակի բան մը չէր խօսեր անոնց, բայց
առանձին իր աշակերտներուն կը մեկնէր ամէնը։
35 ղ Եւ նոյն օրը երբոր իրիկուն կ՚ըլլար, ըսաւ
անոնց, Եկէ՛ք ծովուն անդիի կողմը անցնինք։
36 Անոնք ալ ժողովուրդը թող տալով՝ առին զինքը
ինչպէս որ էր նաւուն մէջ. և ուրիշ նաւակներ
37 ալ կային անոր հետ։ Ու հովի մեծ փոթորիկ մը
եղաւ, և ալիքները նաւուն վրայ կու գային,
38 անանկ որ գրեթէ կը լեցուէր։ Ու ինքը նաւուն
ետեւի կողմը բարձի վրայ կը քնանար. արթընցու-
ցին զանիկայ և կ՚ըսէին անոր, Վարդապետ՝ հոգ
39 չէ՞ որ կը կորսուինք։ Ու ելլելով՝ սաստեց հո-
վին, և ծովուն ըսաւ, Դադարէ՛ լռէ կեցիր. ու
հովը դադարեցաւ, և մեծ խաղաղութիւն եղաւ։

կ Յայտ. ժդ. 15։
հ Մատ. ժգ. 31; Ղուկ. ժգ. 18; Գործ. ը. 41; դ. 4; ե. 14; ժթ. 20։
ձ Մատ. ժգ. 34; Յով. ժզ. 12։
ղ Մատ. ը. 18, 23; Ղուկ. ը. 22։

40 Ու ըսաւ անոնց, Ինչո՞ւ ատանկ վախկոտ էք,
41 ի՞նչպէս կ՚ըլլայ որ հաւատք չունիք։ Եւ անոնք
խիստ վախցան, ու կ՚ըսէին իրարու, Արդեօք ո՞վ
է ասիկայ, որ հովը ու ծովը անոր կը հնազանդին։

ԳԼ. Ե

1 Քրիստոս լէգէոն ունեցող մարդը կը բժշկէ. 13 և անկէ ել-
լող դևերը խոզերուն մէջ կը մտնեն։ 25 Քրիստոս կը բժշ-
կէ տեռատես կնիկը։ 35 և Յայրոսի աղջիկը կը յարուցանէ։

1 Եւ ⁼եկան ծովուն անդիի կողմը *Գադարացւոց
2 երկիրը։ Ու երբոր ինքը նաւէն ելաւ, գե-
րեզմաններէն ելած մարդ մը պատահեցաւ իրեն,
3 որ պիղծ ոգի ունէր. Որ անոր բնակած տեղն ալ
գերեզմաններուն մէջն էր. ու շղթայով ալ մէկը
4 չէր կրնար զանիկայ կապել. Որովհետև շատ ան-
գամ ոտնակապերով և շղթաներով կապուեր էր,
բայց անիկայ շղթաները կտրեր ու ոտնակա-
պերը կոտրտեր էր, և մէկը չէր կրնար զանիկայ
5 նուաճել. Եւ միշտ գիշեր ու ցորեկ †գերեզ-
մաններուն մէջ ու լեռներուն մէջ՛՛ կը կանչուր-
տէր, ու իր մարմինը քարերով կը ճեղքոտէր։
6 Երբոր հեռուանց Յիսուսը տեսաւ, վազեց ու
7 երկրպագութիւն ըրաւ անոր, Եւ մեծ ձայնով մը
աղաղակեց ու ըսաւ, Դուն իմ հետս ի՞նչ բան
ունիս, Յիսուս՝ Որդի Աստուծոյ բարձրելոյ, քեզ
Աստուծով կ՚երդմնցընեմ, զիս մի՛ տանջեր։
8 (Քանզի կ՚ըսէր անոր, Պիղծ ոգի՛ ելի՛ր այս
9 մարդէն։) Եւ անոր հարցուց թէ Անունդ ի՞նչ
է. ու ըսաւ անոր, Իմ անունս Լէգէոն է, ին-
10 չու որ մենք շատուոր ենք։ Եւ շատ ‡կ՚աղաչէին
11 անոր՝ որ զիրենք այն երկրէն դուրս չխրկէ։ Եւ
հոն լեռանը մօտ խոզերու մեծ երամակ մը կար՝ որ
12 կ՚արածուէին։ Ու բոլոր դևերը աղաչեցին անոր

⁼ Մատ. Ը. 28։ Ղու. Ը. 26։
* Ոմանք՝ Գերգեսացւոց
† Ոմանք՝ լեռներուն մէջ ու գերեզմաններուն մէջ
‡ Կամ կ՚աղաչէր

ու ըսին, Մեզ խոզերուն խրկէ, որ անոնց մէջը
13 մտնենք։ Եւ Յիսուս շուտ մը հրաման տուաւ
անոնց. ու երբոր պիղծ ոգիները ելան՝ խոզերուն
մէջը մտան, և երամակը գահավէժ տեղէն ծովը
վազեց, (երկու հազարի չափ կային,) ու ծովուն
14 մէջը խեղդուեցան։ Եւ խոզարածները փախան,
ու պատմեցին քաղաքը ու ագարակները. և ժողովք
15 ելան տեսնելու՝ թէ ինչ բան է որ եղաւ։ Ու
եկան Յիսուսին, և տեսան դիւահարը՝ որ լէգէոն
ունէր, որ հագուած ու խելքը վրան եկած նստեր
16 էր, ու վախցան։ Եւ անոնք որ տեսեր էին,
պատմեցին անոնց թէ ինչ եղաւ դիւահարին,
17 նաև խոզերուն վրայով։ ⸗ Եւ սկսան աղաչել
18 անոր, որ իրենց սահմաններէն երթայ։ Ու երբ-
որ անիկայ նաւը մտաւ, ‡դիւահարը կ՚աղաչէր
19 անոր՝ որ հետը ըլլայ։ Եւ Յիսուս թող չտուաւ
անոր, հապա ըսաւ անոր, Գնա՛ քու տունդ քու
ընտանեացդ, ու պատմէ անոնց ինչ որ Տէրը
20 քեզի ըրաւ, և ողորմեցաւ քեզի։ Ան ալ գնաց,
և սկսաւ Դեկապոլիսի մէջ քարոզել ինչ որ Յի-
սուս իրեն ըրաւ. և ամէնը կը զարմանային։
21 ⁼ Ու երբոր Յիսուս նաւով նորէն միւս ան-
դիի կողմը անցաւ, շատ բազմութիւն ժողվուեցաւ
22 անոր քովը, և ինքը ծովեզերքն էր։ ⁼ Եւ ահա
ժողովրդապետներուն մէկը կու գար, որուն անու-
նը Յայրոս էր, ու երբոր տեսաւ զանիկայ, անոր
23 ոտքը ինկաւ. Եւ շատ կ՚աղաչէր անոր՝ ու կ՚ըսէր
թէ Իմ աղջիկս մեռնելու մօտ է, դուն անոր
վրայ ձեռք դնես, որպէս զի ազատի, ու պիտի
24 ապրի։ Եւ գնաց անոր հետ, ու շատ բազմու-
թիւն իր ետևէն կ՚երթային ու կը նեղէին զինքը։
25 Եւ կնիկ մը՝ ⁼որ տասուերկու տարի արիւնի

⸗ Մատ. Ը. 34։ Գործ. ԺԶ. 39։
‡ Ղու. Ը. 38։
⁼ Մատ. Թ. 1։ Ղու. Ը. 40։
⁼ Մատ. Թ. 18։ Ղու. Ը. 41։
⁼ Ղև. ԺԵ. 25։ Մատ. Թ. 20։

26 տառապանքութեան մէջ էր, Ու շատ նեղութիւն
կրած էր շատ բժիշկներէն, և իր բոլոր ունեցածը
վատներ էր, ու օգուտ մը չէր գտեր, հապա ևս ա-
27 ւելի գէշցեր էր, Երբոր Յիսուսին վրայով
լսեց, ետևէն եկաւ բազմութեանը մէջ, ու անոր
28 հանդերձին դպաւ. Քանզի կ՚ըսէր, Թէ որ մի-
այն անոր հանդերձներուն դպչիմ, պիտի բժշ-
29 կուիմ: Եւ շուտ մը իր արիւնին աղբիւրը ցամ-
քեցաւ, ու իր մարմինին մէջ իմացաւ թէ տան-
30 ջանքէն բժշկուեցաւ: Եւ Յիսուս շուտ մը գիտ-
նալով իր անձին մէջ ան ե զօրութիւնը՝ որ իրմէն
ելաւ, դարձաւ բազմութեանը մէջ ու ըսաւ,
31 Ո՞վ դպաւ իմ հանդերձներուս: Եւ իր աշա-
կերտները ըսին իրեն, Կը տեսնես որ բազմու-
թիւնը քեզ կը նեղէ, ու կ՚ըսե՞ս թէ Ո՞վ ինծի
32 դպաւ: Եւ իր բոլորտիքը կը նայէր որ աս բա-
33 նը ընողը տեսնէ: Ու կինը վախցաւ ու դողաց,
ինչու որ գիտէր թէ իրեն ինչ եղաւ. և եկաւ՝
անոր առջևը ինկաւ, ու բոլոր [illegible] շիտկէ շի-
34 տակ զրուցեց անոր: Եւ Յիսուս ըսաւ անոր,
Աղջի՛կ ը Քու հաւատքդ քեզ բժշկեց. գնա՛ խա-
ղաղութեամբ, ու բժշկուած եղիր քու տանջանքէդ:
35 թ Երբոր ինքը դեռ կը խօսէր, ժողովրդապետին
տունէն [illegible] եկան ու ըսին թէ Աղջիկդ մեռաւ,
36 այլ ինչո՞ւ վարդապետը կը յոգնեցընես: Իսկ
Յիսուս ըսուած խօսքը լսածին պէս՝ ժողովրդապե-
տին ըսաւ, Մի՛ վախնար, միայն թէ հաւատա:
37 Եւ մէկը թող չտուաւ իր հետը երթալու, բայց
միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յակոբոսին եղ-
38 բայրը Յովհաննէսը: Ու ժողովրդապետին տունը
գալով՝ տեսաւ աղմուկ և սաստիկ լացողներ ու ա-
39 ղաղակողներ: Եւ ներս մտնելով՝ ըսաւ անոնց,
Ինչո՞ւ խռովեր էք ու կու լաք. մանուկը մեռած

ե Ղու. զ. 19: ը. 46:
ը Մատ. թ. 22: Ղւ. ժ. 52:
Գոր. ժդ. 8:
թ Ղու. ը. 49:

40 չէ՛, հապա ժ կը քնանայ: Եւ ծաղր կ՚ընէին անի-
կայ. ի բայց ինքը ամէնը դուրս հանելով՝ իր հետը
առաւ մանուկին հայրը ու մայրը՝ և անոնք որ իր
հետն էին, ու մտաւ հոն ուր որ մանուկը պառ-
41 կած էր: Եւ մանուկին ձեռքէն բռնելով՝ ըսաւ ա-
նոր, Տալիթա՛ կո՛ւմի, որ կը թարգմանուի, Աղ-
42 ջիկ՝ (քեզի կ՚ըսեմ,) ելի՛ր: Եւ իսկոյն աղջիկը
ոտք ելաւ ու կը քալէր, ինչու որ տասնըերկու
տարեկան էր. ու մեծ ապշութեամբ ապշեցան:
43 Եւ խստիւ պատուէր տուաւ անոնց՝ որ մէկը
չգիտնայ աս բանը, ու ըսաւ որ անոր ուտելիք
տան:

ԳԼ. Զ.

1 Քրիստոս անարգութիւն կը կրէ իր քաղաքակիցներէն. 7 տասնըերկու աշակերտներուն իշխանութիւն կու տայ պիղծ ոգիները հանելու: 14 Զանազան կարծիքներ Քրիստոսի վրայով: 27 Յովհաննէս մկրտիչ կը գլխատուի 29 և կը թաղուի: 30 Առաքեալները իրենց քարոզութենէն Յիսուսի կը դառնան: 34 Հինգ հացին ու երկու ձուկին հրաշքը: 48 Քրիստոս ծովուն վրայ կը քալէ, 53 և ամէն իրեն դպչող ցաւագարները կը բժշկէ:

1 Եւ ա անկէ ելնելով՝ եկաւ իր երկիրը, ու անոր
2 աշակերտները իր ետևէն գացին: Եւ շաբաթ
օրը հասնելուն՝ սկսաւ ժողովարանին մէջ սորվեցը-
նել. ու շատերը լսելով կը զարմանային ու կ՚ը-
սէին, բ Ասիկայ ո՞ւսկից ունի աս բաները, կամ
աս ի՞նչ իմաստութիւն է որ ասոր տրուած է, որ
3 ասանկ հրաշքներ կ՚ըլլան ասոր ձեռքովը: Ասիկայ
հիւսը չէ՞, Մարիամին որդին, և գ Յակոբոսին
ու Յովսէսին և Յուդային ու Սիմոնին եղբայրը.
ու ասոր քոյրերը հոս մեր քովը չե՞ն. և դ անոր

ժ Յով. ժա. 11:
ի Գոր. թ. 40:
լ Մատ. ը. 4: թ. 30: ժբ. 16: ժէ. 9: Ղւ. գ. 12: Ղու. ե. 14:
ա Մատ. ժգ. 54: Ղու. դ. 16:
բ Յով. զ. 42:
գ Մատ. ժբ. 46: Գաղ. ա. 19:
դ Մատ. ժա. 6:

4 վրայով կը գայթակղէին ։ Բայց Յիսուս ըսաւ ա-
նոնց, [ե] Մարգարէ մը անպատիւ չէ՝ բայց միայն
իր երկրին մէջ ու իր ազգականներուն և իր
5 տանը մէջ ։ [զ] Ու չէր կրնար հոն մէկ հրաշք մըն
ալ ընել, միայն թէ քանի մը հիւանդներու վրայ
6 ձեռք դրաւ ու բժշկեց զանոնք ։ Եւ [ը] անոնց ան-
հաւատութեանը վրայ կը զարմանար ։ [թ] Ու շրջա-
կայ գեղերը պտըտելով՝ կը սորվեցընէր ։
7 [ժ] Եւ իրեն կանչեց տասներկուքը, ու սկսաւ
երկու երկու խրկել զանոնք, ու անոնց իշխանու-
8 թիւն տուաւ պիղծ ոգիներուն վրայ ։ Եւ պատուի-
րեց անոնց՝ որ ճամբու համար բան մը չառնեն,
բայց միայն գաւազան մը. ոչ տոպրակ, ոչ հաց,
9 ոչ ստակ գօտիներնուն մէջ. Հապա [ի] հողաթափ
հագնին. և Երկու հանդերձ մի՛ հագնիք՝ ըսաւ ։
10 [լ] Ու ըսաւ անոնց, Ո՛ր տուն որ մտնէք, հոն կեցէք
11 մինչև որ անկէ ելլէք ։ [խ] Եւ անոնք որ ձեզ չեն ըն-
դունիր ու ձեզի մտիկ չեն ըներ, երբոր անկէ
կ'ելլէք, [ծ] ոտքերնուդ տակի փոշին թօթուեցէ՛ք
անոնց վկայութիւն ըլլալու համար ։ * Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, Սոդոմացւոց ու Գոմորացւոց աւելի
դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ
ան քաղաքին" ։
12 Եւ անոնք ելլելով՝ կը քարոզէին որ մարդիկ
13 ապաշխարեն ։ Եւ շատ դևեր կը հանէին, [կ] ու
շատ հիւանդներ եղով կ'օծէին ու կը բժշկէին
զանոնք ։
14 [հ] Եւ Հերովդէս թագաւորը լսեց, (ինչու որ ա-

[ե] Մատ. ժգ. 57 ։ Յօհ. դ. 44 ։
[զ] Տես Ծն. ժթ. 22 ։ լը. 25 ։
[է] Մատ. ժգ. 58 ։ Գղ. թ. 22 ։
[ը] Ես. ծթ. 16 ։
[թ] Մատ. թ. 35 ։ Ղու. ժգ. 22 ։
[ժ] Մատ. ժ. 1 ։ Գղ. գ. 13, 14 ։ Ղու. թ. 1 ։
[ի] Գոր. ժբ. 8 ։
[լ] Մատ. ժ. 11 ։ Ղու. թ. 4 ։ ժ. 7, 8 ։
[խ] Մատ. ժ. 14 ։ Ղու. ժ. 10 ։
[ծ] Գոր. ժգ. 51 ։ ժը. 6 ։
* Ոմանք չունին ։
[կ] Յակ. ե. 14 ։
[հ] Մատ. ժդ. 1 ։ Ղու. թ. 7 ։

նոր անունը յայտնի եղաւ,) ու կ'ըսէր թէ
Յովհաննէս Մկրտիչը մեռելներէն յարութիւն առեր
է, ու անոր համար հրաշքներ կ'ըլլան անով ։
15 [ձ] Ուրիշները կ'ըսէին թէ Եղիան է. ուրիշներն
ալ կ'ըսէին թէ Մարգարէ մըն է, կամ մարգա-
16 րէից մէկուն պէս ։ Բայց [ղ] երբոր Հերովդէս լը-
սեց, ըսաւ, Նոյնկայ Յովհաննէսն է որուն գլու-
խը ես կտրեցի, մեռելներէն յարութիւն առեր է ։
17 Քանզի Հերովդէս ինքը ղրկեր խրկեց Յովհան-
նէսը բռնեց, ու կապեց բանտը դրաւ՝ իր եղբօրը
Փիլիպպոսին կնկանը Հերովդիայէին համար, ինչու
18 որ իրեն կնիկ առեր էր զանիկայ ։ Վասն զի Յով-
հաննէս Հերովդէսին կ'ըսէր, [ճ] Քեզի օրինաւոր
19 չէ քու եղբօրդ կնիկը ունենալ ։ Եւ Հերովդիա
ոխ ունէր անոր դէմ, ու կ'ուզէր անիկայ մեռցընել
20 ու չէր կրնար. Ինչու որ Հերովդէս [մ] կը վախնար
Յովհաննէսէն, գիտնալով թէ անիկայ արդար և
սուրբ մարդ մըն է. և անոր բերանը կը նայէր,
ու անկէ լսելով շատ բան կ'ընէր, և քաղցրու-
21 թեամբ անոր մտիկ կ'ընէր ։ Ու [յ] երբոր դիպուկ
օր մը եղաւ, որ Հերովդէս [ն] իր ծննդեան օրը
ընթրիք կ'ընէր իր մեծամեծներուն և հազարա-
22 պետներուն ու Գալիլեայի երևելիներուն, Եւ
Հերովդիային աղջիկը հանդէսին ներս մտնելով
խաղաց, ու հաճելի եղաւ Հերովդէսին և իր հետը
նստողներուն. Թագաւորը ըսաւ աղջկանը, Խնդրէ
23 ինծմէ ինչ որ կ'ուզես, ու պիտի տամ քեզի ։ Եւ
անոր երդում ըրաւ ըսելով, [շ] Ինչ որ դուն ինծմէ
խնդրես, պիտի տամ քեզի, մինչև թագաւորու-
24 թեանս կէսը ։ Եւ անիկայ դուրս ելլելով իր մօրը
ըսաւ, Ի՞նչ ուզեմ. ան ալ ըսաւ, Յովհաննէս

[ձ] Մատ. ժզ. 14 ։ Գղ. ը. 28 ։
[ղ] Մատ. ժդ. 2 ։ Ղու. գ. 19 ։
[ճ] Ղև. ժը. 16 ։ ի. 21 ։
[մ] Մատ. ժդ. 5 ։ իա. 26 ։
[յ] Մատ. ժդ. 6 ։
[ն] Ծն. խ. 20 ։
[շ] Եսթ. ե. 3, 6 ։ է. 2 ։

25 մկրտչին գլուխը ։ Եւ շուտ մը արտորալով թա-
գաւորին քովը մտաւ ու խնդրեց՝ ըսելով ,
Կ'ուզեմ որ շուտով սկուտեղի մը վրայ Յովհաննէս
26 մկրտչին գլուխը տաս ինծի ։ ւ Եւ թագաւորը
խիստ տրտմեցաւ , բայց երդումներուն համար ու
իր հետը նստողներուն համար չուզեց որ անոր
27 խնդիրքը մերժէ ։ Եւ թագաւորը իսկոյն դահիճ
ղրկեց , ու հրաման ըրաւ անոր գլուխը բերելու .
28 ան ալ գնաց բանտին մէջ գլխատեց զանիկայ . Եւ
սկուտեղով մը բերաւ անոր գլուխը՝ ու տուաւ
29 աղջկանը , և աղջիկը զանիկայ իր մօրը տուաւ ։ Եւ
անոր աշակերտները լսելով , եկան անոր մարմինը
վերցուցին , ու գերեզմանի մէջ դրին ։
30 Եւ ա առաքեալները Յիսուսին քովը ժողվուե-
ցան , ու պատմեցին անոր՝ ամէն ինչ որ ըրին և
31 ինչ որ սորվեցուցին ։ ւ Եւ անիկայ ըսաւ անոնց ,
Եկէ՛ք դուք առանձին անապատ տեղ մը , և քիչ
մը հանգչեցէ՛ք . քանզի ղ շատերը կային որ կու
գային ու կ'երթային . և հաց ուտելու ալ ժա-
32 մանակ չէին ունենար ։ ջ Եւ նաւով անապատ
33 տեղ մը գացին առանձին ։ Եւ ժողովուրդները
տեսան զանոնք որ կ'երթային , և շատերը զանի-
կայ ճանչցան , ու ոտքով բոլոր քաղաքներէն հոն
կը վազէին , և անոնցմէ առաջ հասնելով անոր
34 քովը ժողվուեցան ։ − Եւ Յիսուս երբոր դուրս
ելաւ , շատ ժողովուրդ տեսնելով՝ խղճաց անոնց
վրայ . ինչու որ հովիւ չունեցող ոչխարներու պէս
էին . և ա սկսաւ շատ բաներ սորվեցընել անոնց ։
35 վ Եւ երբոր ժամանակը շատ ուշացաւ , իր աշա-
կերտները իրեն եկան ու ըսին , Հոս անապատ
36 տեղ մըն է , ու ժամանակը ուշացած է , Արձակէ

ւ Մատ. ժդ. 9 ։
ա Ղու. Թ. 10 ։
ւ Մատ. ժդ. 13 ։
ղ Գլ. գ. 20 ։
ջ Մատ. ժդ. 13 ։
− Մատ. Թ. 36 ։ ժդ. 14 ։
ա Ղու. Թ. 11 ։
վ Մատ. ժդ. 15 ։ Ղու. Թ. 12 ։

ժողովուրդները որ երթան բոլորտիքի ագարակները
ու գեղերը ու իրենց հաց գնեն , ինչու որ ուտելու
37 բան մը չունին ։ Բայց անիկայ պատասխան տուաւ
ու ըսաւ անոնց , Դո՛ւք տուէք ատոնց որ ուտեն ։
Եւ ըսին իրեն , ր Երթանք երկու հարիւր դահե-
38 կանի հաց գնե՞նք՝ և տանք ատոնց որ ուտեն ։ Ը-
սաւ անոնց , Քանի՞ նկանակ ունիք , գացէք նա-
յեցէք . ու երբոր գիտցան՝ ըսին , բ Հինգ , ու
39 երկու ձուկ ։ Եւ հրաման ըրաւ անոնց՝ որ ամէնը
40 կանանչ խոտին վրայ գունդ գունդ նստեցընեն ։ Եւ
դաս դաս նստան՝ հարիւրական ու յիսունական ։
41 Եւ հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ ու դէպ 'ի
երկինքը նայելով , ց օրհնեց . և մանրեց նկանակները
ու տուաւ իր աշակերտներուն , որ անոնց առջևը
42 դնեն , ու երկու ձուկը ամէնուն ալ բաժնեց ։ Եւ
43 ամէնքը կերան ու կշտացան . Եւ տասնըերկու
կողով լեցուն կտորուանքները վերցուցին , և
44 ձուկերէն ալ ։ Եւ ան հացերէն ուտողները հինգ
հազարի չափ էրիկ մարդիկ էին ։
45 − Եւ շուտ մը իր աշակերտները արտորցուց որ
նաւը մտնեն , և իրմէ առաջ միւս կողմը Բեթ-
սայիդա անցնին , մինչև որ ինքը ժողովուրդը
46 արձակէ ։ Եւ անոնցմէ զատուելով՝ լեռը ելաւ
47 աղօթք ընելու ։ ÷ Եւ երբոր իրիկուն եղաւ ,
նաւը ծովուն մէջտեղն էր , ու ինքը մինակ ցամաքն
48 էր ։ Եւ տեսաւ անոնք որ կը տաղնապէին հովին
թի քաշելու ատենին , ինչու որ հովը իրենց դէմ
էր . և գիշերուան չորրորդ պահուն ատենները
ծովուն վրայ քալելով կու գայ անոնց , ու + կ'ուզէր
49 անոնցմէ անցնիլ ։ Անոնք երբոր տեսան որ ծովուն

ր Թու. ժա. 13, 22 ։ դ Թագ. դ. 43 ։
բ Մատ. ժդ. 17 ։ Ղու. Թ. 13 ։ Յով. զ. 9 ։ Տես Մատ. ժե. 34 ։ Գլ. ը. 5 ։
ց ա Թագ. Թ. 13 ։ Մատ. իզ. 26 ։
− Մատ. ժդ. 22 ։ Յով. զ. 17 ։
÷ Մատ. ժդ. 23 ։ Յով. զ. 16, 17 ։
+ Տես Ղու. իդ. 28 ։

վրայ կը քալէր, կարծեցին թէ աչքի երեւոյթ բան
50 մըն է, ու կանչուըռտեցին. Վասնզի ամէնքն ալ
զանիկայ տեսան ու խռովեցան. և իսկոյն շուտ մը
խօսեցաւ անոնց հետ ու ըսաւ անոնց, Վստահ եղէք՝
51 ես եմ, մի՛ վախնաք: Եւ նաւը ելաւ անոնց
քովը, ու հովը դադարեցաւ. և անոնք մտքերնուն
մէջ չափէ դուրս ապշած էին ու կը զարմանային:
52 Վասն զի [ա]հացին վրայ եղած հրաշքը չիմացան,
ինչու որ [բ]սիրտերնին թմրած էր:
53 [գ]Եւ միւս կողմը անցնելով, Գենեսարէթի
54 երկիրը հասան և նաւը տեղաւորեցին: Եւ երբոր
նաւէն ելան, ան տեղի մարդիկը իսկոյն ճանչցան
55 զանիկայ. Եւ ասդին անդին վազելով բոլոր
շրջակայ տեղուանքը, սկսան մահիճներով հի-
56 ւանդները բերել՝ ուր որ կը լսէին թէ հոն է: Եւ
ուր որ կը մտնէր՝ գեղերը կամ քաղաքները կամ
ագարակները, հրապարակներուն մէջ կը դնէին
հիւանդները, ու կ'աղաչէին իրեն որ [դ]դպչի իր
հանդերձին քղանցքին գոնէ. և որոնք որ դպան,
բժշկուեցան:

ԳԼ. Է.

1 Փարիսեցիք կը մեղադրեն Քրիստոսի աշակերտները՝ անլուայ ձեռքով հաց ուտելնուն համար։ 8 Իսկ ինքը կ'ապացուցանէ թէ անոնք մարդոց աւանդութիւնները բռնելով՝ Աստուծոյ պատուիրանքը կ'անարգեն. 14 և թէ կերակուրը մարդը չպղծեր։ 24 Փիւնիկ Ասորի կնկանը աղջիկը պիղծ ոգիէ մը կ'ազատէ, 31 և խուլ ու ծանրախօս մարդ մը կը բժշկէ։

1 Եւ [ե]իր քովը ժողվուեցան փարիսեցիները ու
դպիրներէն ոմանք՝ որ Երուսաղէմէն եկած էին:
2 Եւ երբոր տեսան որ անոր աշակերտներէն ոմանք
պիղծ՝ այսինքն անլուայ ձեռքերով հաց կ'ուտէին,
3 մեղադրեցին: Ինչու որ փարիսեցիները ու բոլոր
Հրեաները մինչև որ աղէկ մը ձեռքերնին չլուան,

[ա] Գլ. Ը. 17, 18:
[բ] Գլ. Գ. 5: Ժզ. 14:
[գ] Մատ. Ժդ. 34:
[դ] Մատ. Թ. 20: Գլ. Ե. 27, 28: Գոր. ԺԹ. 12:
[ե] Մատ. ԺԵ. 1:

հաց չեն ուտեր, քանզի ծերերուն աւանդութիւնը
4 կը բռնեն. Եւ շուկայէն եկած ատենին թէ որ չը-
լուացուին, չեն ուտեր. և ուրիշ շատ բաներ կայ՝
որ ընդունած են ու կը բռնեն, այսինքն գաւաթ-
ներու և փարչերու ու պղնձէ ամաններու և անկո-
5 ղիններու լուացմունքներ: [զ]Ետքը ատենը փարիսե-
ցիները ու դպիրները հարցուցին անոր թէ Ինչո՞ւ
քու աշակերտներդ ծերերուն աւանդութեանը պէս
չեն երթար, հապա անլուայ ձեռքերով հաց կ'ու-
6 տեն: Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ ա-
նոնց, Աղէկ մարգարէութիւն ըրաւ Եսայի ձեզի
կեղծաւորներուդ համար, ինչպէս որ գրուած է,
[է]Այս ժողովուրդը միայն շրթունքներովը զիս կը պա-
տուէ, բայց իրենց սիրտը հեռացած զատուած է
7 ինծմէ. Եւ պարապ տեղը զիս կը պաշտեն, մար-
դոց պատուիրած բաները իբրև վարդապետութիւն
8 սորվեցնելով: Վասն զի Աստուծոյ պատուի-
րանքը թող տալով՝ մարդոց աւանդութիւնը կը
բռնէք, ինչպէս փարչերու և գաւաթներու լուաց-
մունքներ, և ասոնց նման շատ ուրիշ բաներ կ'ը-
9 նէք: Եւ ըսաւ անոնց, Աղէկ կ'անարգէք Աս-
տուծոյ պատուիրանքը, որ ձեր աւանդութիւնը
10 պահէք: Վասն զի Մովսէս ըսաւ, [ը]Պատուէ հայրդ
ու մայրդ. և [թ]Ով որ իր հայրը կամ
11 մայրը անիծէ, մահով թող մեռնի: Բայց դուք
կ'ըսէք, Թէ որ մէկը իր հօրը կամ մօրը ըսէ,
Ան բանը որ ինծմէ պիտի շահիս Աստուծոյ պատա-
[ժ]կորբան է, (որ ըսել է ընծայ,) ազատ կ'ըլլայ
12 անկէ. Եւ ալ թող չէք տար անոր բան մը ընել
13 իր հօրը կամ իր մօրը. Եւ Աստուծոյ խօսքը կը
խափանէք ձեր աւանդութիւնովը, որ կ'ա-

[զ] Մատ. ԺԵ. 2:
[է] Ես. ԻԹ. 13: Մատ. ԺԵ. 8:
[ը] Ել. Ի. 12: Բ Օր. Ե. 16: Մատ. ԺԵ. 4:
[թ] Ել. ԻԱ. 17: Ղև. Ի. 9: Առակ. Ի. 20:
[ժ] Մատ. ԺԵ. 5: Իգ. 18:

ւանդէք ։ Եւ ասոր նման շատ ուրիշ բաներ
կ'ընէք ։
14 [Է]Եւ բոլոր ժողովուրդը իրեն կանչելով՝ ըսաւ
անոնց, Լսեցէք ինծի ամէնքդ ու հասկցէք ։
15 Բան մը չկայ որ դուրսէն մարդուն ներսը մտնէ,
ու կարող ըլլայ զանիկայ պղծելու, հապա ան
բաները որ անկէ կ'ելլեն, անոնք են որ մարդը կը
16 պղծեն ։ [Ը]Ով որ լսելու ականջ ունի, թող լսէ ։
17 [Թ]Ու երբոր ան բազմութենէն զատուելով տուն
մտաւ, իր աշակերտները հարցուցին իրեն ան ա-
18 ռակին համար ։ Ու ըսաւ անոնց, Դուք ալ
ատանկ անմիտ էք. չէ՞ք հասկնար թէ ամէն ինչ
որ դուրսէն մարդուն ներսի դին կը մտնէ, չկրնար
19 զանիկայ պղծել. Վասն զի չէ թէ անոր սրտին
մէջը կը մտնէ, հապա փորը, և արտաքնոցը կ'ել-
20 լէ, ու բոլոր կերածները կը մաքրէ ։ Եւ կ'ըսէր
թէ Ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն, անիկայ կը
21 պղծէ մարդը ։ [Ժ]Ինչու որ ներսէն մարդոց սրտէն
կ'ելլեն չար խորհուրդները, շնութիւններ, պոռ-
22 նկութիւններ, սպանութիւններ, Գողութիւն-
ներ, ագահութիւններ, չարութիւններ, նենգու-
թիւն, գիճութիւն, չար աչք, հայհոյութիւն,
23 ամբարտաւանութիւն, անզգամութիւն ։ Աս բո-
լոր չար բաները ներսէն կ'ելլեն, ու կը պղծեն
մարդը ։
24 [Ի]Եւ անկէ ելլելով՝ Տիւրոսի ու Սիդոնի սահ-
մանները գնաց, և տուն մը մտնելով՝ չէր ուզեր
որ մէկուն յայտնուի, բայց չկրցաւ ծածկուիլ.
25 Քանզի կնիկ մը՝ որուն աղջիկը պիղծ ոգի ունէր
[illegible], լսեց անոր վրայով, ու եկաւ՝ անոր
26 ոտքը ինկաւ ։ Եւ ան կնիկը *հեթանոս էր՝ ազ-

Է Մատ. ժե. 10 ։
Ը Մատ. ժա. 15 ։
Թ Մատ. ժե. 15 ։
Ժ Ծն. զ. 5 ; ը. 21 ; Մատ. ժե. 19 ։
Ի Մատ. ժե. 21 ։
* Յուն. Յոյն

զով Փիւնիկ Ասորի, ու կ'աղաչէր անոր՝ որ դևը
27 իր աղջիկէն հանէ ։ Եւ Յիսուս ըսաւ անոր,
Թո՛ղ տուր որ առաջ տղաքը կշտանան. քանզի
աղէկ չէ տղոց հացը առնել ու շուներուն ձգել ։
28 Անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Այո՛
Տէր, ինչու որ շուներն ալ սեղանին տակը տղոց
29 փշրանքներէն կը կերակրուին ։ Եւ ըսաւ անոր,
Այս խօսքիդ համար գնա, քու աղջիկէդ դևը ե-
30 լաւ ։ Եւ ինքը իր տունը երթալով՝ գտաւ որ
դևը ելած, ու աղջիկը անկողինին վրայ պառկած
էր ։
31 [Լ]Եւ նորէն Տիւրոսի ու Սիդոնի սահմաններէն
ելլելով՝ եկաւ Գալիլեայի ծովեզերքը Դեկապոլիսի
32 սահմաններուն մէջէն ։ Եւ [Խ]մէկը բերին անոր
աւջին՝ խուլ ու դժուարախօս, ու կ'աղաչէին որ
33 անոր վրայ ձեռք դնէ ։ Եւ ժողովուրդէն մէկդի
առնելով զանիկայ, իր մատները անոր ականջնե-
րուն մէջը խօթեց ու [Ծ]թուքաւ, և անոր լեզուին
34 դպաւ, [Կ]Ու երկինք նայելով՝ [Հ]հառաչեց ու ը-
սաւ անոր, Եփփաթա, (որ ըսել է Բացուէ՛,)
35 [Ձ]Եւ իսկոյն անոր ականջները բացուեցան, ու ա-
նոր լեզուին կապը քակուեցաւ, և շիտակ կը
36 խօսէր ։ Ու [Ղ]պատուիրեց անոնց որ մէկու մը չը-
սեն. և որչափ ինքը կը պատուիրէր անոնց,
37 անոնք՝ ալ աւելի կը քարոզէին. Ու չափէ
դուրս կը զարմանային և կ'ըսէին, Ամէն բաները
աղէկ ըրաւ ասիկայ, որ խուլերուն լսել կու տայ
և համրերուն խօսիլ ։

Լ Մատ. ժե. 29 ։
Խ Մատ. թ. 32 ; Ղու. ժա. 14 ։
Ծ Գլ. ը. 23 ; Յոհ. թ. 6 ։
Կ Գլ. զ. 41 ; Յոհ. ժա. 41 ; ժէ. 1 ։
Հ Յոհ. ժա. 33, 38 ։
Ձ Եսա. լե. 5, 6 ; Մատ. ժա. 5 ։
Ղ Գլ. ե. 43 ։

ԳԼ. Ը.

1 Քրիստոս հրաշքով կը կերակրէ ժողովուրդը. 11 փարիսե-
ցւոց խնդրած նշանը չուզեր տալ. 15 կը պատուիրէ իր ա-

շակերտներուն որ զգուշ ըլլան փարիսեցիներուն խմորէն և Հերովդէսեաններուն խմորէն . 22 կոյրի մը աչքերը կը բանայ . 27 կը ծանուցանէ թէ ինքը Քրիստոսն է, որ պիտի չարչարուի ու յարութիւն առնէ . 34 և իր աշակերտները կը յորդորէ որ համբերեն, երբոր հալածուին աւետարանի դաւանութեանը համար ։

1 Ան օրերը ա ժողովուրդը խիստ շատ ըլլալով, և
ուտելու բան մը չունենալով, Յիսուս իրեն
2 կանչեց իր աշակերտները ու ըսաւ անոնց, Կը
խղճամ աս ժողովուրդին վրայ, ինչու որ հիմա
իրեք օր է որ իմ քովս են, և բան մը չունին ու-
3 տելու. Ու թէ որ ասոնք անօթի ղրկեմ իրենց
տուները, ճամբուն մէջ պիտի մարին, ինչու որ
4 ասոնցմէ ոմանք հեռու տեղէ եկած են: Ու իր ա-
շակերտները պատասխան տուին իրեն, Աս անա-
պատի մէջ ուսկի՞ց կրնայ մէկը հացով կշտացը-
5 նել ասոնք: բ Ու հարցուց անոնց, Քանի՞ նկա-
6 նակ ունիք. ու անոնք ըսին, Եօթը: Ու հրա-
մանն ըրաւ ժողովուրդին՝ որ գետնին վրայ նստին,
ու առաւ եօթը նկանակը, գոհացաւ և կտրեց,
ու տուաւ աշակերտներուն, որ ժողովուրդին
7 առջևը դնեն, և դրին: Ու քանի մը մանր ձու-
կեր ունէին, և օրհնեց ու ըսաւ որ անոնք ալ
8 դնեն անոնց առջևը: Ու կերան ու կշտացան,
ու աւելցած կտորուանքները վերցուցին եօթը
9 զամբիւղ: Ու ուտողները չորս հազարի չափ էին.
10 ու արձակեց զանոնք: Ու դ շուտ մը նաւը մտնե-
լով աշակերտներուն հետ, եկաւ Դաղմանութայի
կողմերը:
11 ե Ու փարիսեցիները ելլելով՝ սկսան անոր հետ
վիճաբանութիւն ընել, և զանիկայ փորձելով՝
12 իրմէն նշան մը կ'ուզէին երկինքէն: Ու անիկայ իր

ա Մատ. ժե. 32 ;
բ Մատ. ժե. 34 ; Տես գլ. զ. 38 ;
գ Մատ. ժդ. 19 ; Գլ. զ. 41 ;
դ Մատ. ժե. 39 ;
ե Մատ. ժբ. 38 ; ժզ. 1 ; Յօհ. զ. 30 ;

հոգիին մէջ հառաչելով ըսաւ, Ի՞նչ է որ աս
ազգը նշան կ'ուզէ. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ աս
13 ազգին նշան պիտի չտրուի: Ու զանոնք թող տա-
լով՝ նորէն նաւը մտաւ, ու գնաց ծովուն միւս
կողմը:
14 զ Ու հաց առնելու մոցեր էին, ու նաւուն մէջ
15 իրենց հետը միայն մէկ նկանակ մը ունէին: է Ու
կը պատուիրէր անոնց ու կ'ըսէր, Նայեցէ՛ք և
զգուշացէ՛ք փարիսեցւոց խմորէն ու Հերովդէսին
16 խմորէն: Ու իրարու հետ կը խորհէին ու կ'ը-
17 սէին թէ ը Հաց չունենալնուս համար է: Իսկ
Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով ըսաւ անոնց,
Ինչո՞ւ կը խորհիք թէ հաց չունիք. Դեռ տակաւին
չէ՞ք հասկընար ու չէ՞ք իմանար. դեռ սիրտեր-
18 նիդ թմրա՞ծ է. Աչքեր ունիք ու չէ՞ք տեսներ,
և ականջներ ունիք ու չէ՞ք լսեր, և չէ՞ք յիշեր:
19 թ Երբոր հինգ նկանակը հինգ հազարին կտրեցի,
քանի՞ կողով լեցուն կտորուանք վերցուցիք. ըսին
20 անոր, Տասուերկու: Ու ժ Երբոր եօթը նկանակը
չորս հազարին կտրեցի, քանի՞ զամբիւղ լեցուն
կտորուանք վերցուցիք. անոնք ալ ըսին, Եօթը:
21 Ու ըսաւ անոնց, ժա Ապա ինչո՞ւ չէք հասկընար:
22 Ու Բեթսայիդա եկաւ, ու անոր առջևը կոյր
23 մը բերին, ու կ'աղաչէին իրեն որ դպչի անոր. Ու
անիկայ կոյրին ձեռքէն բռնելով՝ գեղէն դուրս
հանեց, ժբ ու անոր աչքերուն թքնելով՝ ձեռքը ա-
նոր վրայ դրաւ, ու կը հարցընէր անոր թէ բան
24 մը կը տեսնէ՞. Ան ալ նայեցաւ ու կ'ըսէր, Մար-
դիկներ կը տեսնեմ ծառերու պէս որ կը պտըտին:
25 ժգ Նորէն ձեռքը անոր աչքերուն վրայ դրաւ, ու ա-

զ Մատ. ժզ. 5 ;
է Մատ. ժզ. 6 ; Ղու. ժբ. 1 ;
ը Մատ. ժզ. 7 ;
թ Գլ. զ. 52 ;
ժ Մատ. ժզ. 20 ; Գլ. զ. 43 ; Ղու. թ. 17 ; Յօհ. զ. 13 ;
ժա Մատ. ժե. 37 ; Հմր 8 ;
ժբ Գլ. զ. 52 ; Հմր 17 ;
ժգ Գլ. է. 33 ;

նոր նայիլ տուաւ. եւ՝ ողջացաւ ու ամէն բան հա-
26 մարձակ կը տեսնէր ։ Ետքը զանիկայ իր տունը
ղրկելով՝ ըսաւ, Գեղը մի՛ մտներ, ու ծ գեղին
մէջ մէկուն մի՛ ըսեր ։
27 կ Եւ Յիսուս իր աշակերտներուն հետ մէկտեղ
Փիլիպպոսի Կեսարիային գեղերը ելաւ, ու ճամ-
բուն մէջ կը հարցնէր իր աշակերտներուն ու կ'ը-
սէր անոնց, Ինծի համար ո՞վ կ'ըսեն մարդիկ թէ
28 եմ ։ Եւ անոնք պատասխան տուին ու ըսին,
Ոմանք՝ հ Յովհաննէս մկրտիչը, եւ ուրիշները՝ Ե-
29 ղիան, ուրիշներն ալ՝ մարգարէներէն մէկը ։ Եւ
ինքը ըսաւ անոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ
կ'ըսէք թէ եմ. պատասխան տուաւ Պետրոս ու
30 ըսաւ անոր, ձ Դուն ես Քրիստոսը ։ ղ Եւ սաս-
տիկ պատուիրեց անոնց՝ որ իրեն համար մէկու մը
չըսեն ։
31 Ու ճ սկսաւ սորվեցընել անոնց թէ Պէտք է որ
Որդին մարդոյ շատ չարչարանքներ կրէ, ու երէց-
ներէն եւ քահանայապետներէն ու դպիրներէն մեր-
ժուի, ու սպաննուի, եւ իրեք օրէն ետեւ յարու-
32 թիւն առնէ ։ Ու այս խօսքը յայտնի խօսեցաւ.
եւ Պետրոս մէկդի առաւ զանիկայ, ու սկսաւ յան-
33 դիմանել զանիկայ ։ Եւ ինքը դարձաւ ու իր
աշակերտներուն նայելով, յանդիմանեց Պետրոսը
ու ըսաւ, Ետեւս գնա՛ Սատանայ, ինչու որ դուն
Աստուծոյ բաները չես մտածեր, հապա մարդոյ
բաները ։
34 Եւ ժողովուրդը իր աշակերտներուն հետ մէկ-
տեղ իրեն կանչելով՝ ըսաւ անոնց, մ Ո՛վ որ
կ'ուզէ իմ ետեւէս գալ, թող իր անձը ուրանայ,

ծ Մատ. ը. 4 ։ Գլ. ե. 43 ։
կ Մատ. ժզ. 13 ։ Ղուկ. Թ. 18 ։
հ Մատ. ժդ. 2 ։
ձ Մատ. ժզ. 16 ։ Եօհ. զ. 70 ։ ժա. 27 ։
ղ Մատ. ժզ. 20 ։
ճ Մատ. ժզ. 21 ։ ժէ. 21 ։ Ղուկ. Թ. 22 ։
մ Մատ. ժ. 38 ։ ժզ. 24 ։ Ղուկ. Թ. 23 ։ ժդ. 27 ։

35 եւ իր խաչը վերցընէ, ու իմ ետեւէս գայ ։ Վասն
զի յ ո՛վ որ կ'ուզէ իր անձը ապրեցընել, պիտի
կորսնցընէ զանիկայ. եւ ո՛վ որ ինծի ու աւետա-
րանին համար իր անձը կորսնցընէ, պիտի ապրե-
36 ցընէ զանիկայ ։ Քանզի ի՞նչ օգուտ է մարդուն՝
որ բոլոր աշխարհը վաստըկի, եւ իր անձը կորսնը-
37 ցընէ. Կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք
38 պիտի տայ մարդ ։ Վասն զի ն ո՛վ որ զիս ու
իմ խօսքերս շ ճանչնալը ամօթ սեպէ այս շնացող
ու մեղաւոր ազգին մէջ, Որդին մարդոյ ալ զանի-
կայ ճանչնալը ամօթ պիտի սեպէ՝ երբոր գայ իր
39 Հօրը փառքովը սուրբ հրեշտակներուն հետ ։ Եւ
ըսաւ անոնց, ո Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ հոս
ներկայ եղողներէն մէկ քանիները կան՝ որոնք մա-
հուան համը պիտի չառնեն, մինչեւ որ տեսնեն
չ Աստուծոյ թագաւորութիւնը զօրութիւնով ե-
կած ։

ԳԼ. Թ

1 Քրիստոսի այլակերպութիւնը ։ 11 Քրիստոս իր աշակերտներուն կը սորվեցընէ Եղիայի գալուն վրայով. 24 խուլ եւ համր դեւ մը կը հանէ. 30 կը նախաձայնէ իր մահը եւ յարութիւնը. 34 կը յորդորէ իր աշակերտները որ հեզ ըլլան. 38 եւ կը պատուիրէ անոնց որ իրեն հակառակ չեղողները չարգիլեն, ու հաւատացեալներուն գայթակղութիւն չտան ։

1 Եւ պ վեց օրէն ետեւ Յիսուս իր հետը առաւ
Պետրոսը ու Յակոբոսը եւ Յովհաննէսը, ու
անոնք մէկ բարձր լեռ մը հանեց առանձին, եւ
2 անոնց առջեւը այլակերպեցաւ ։ Ու իր հանդերձ-
ները եղան փայլուն ջ խիստ ճերմակ, անանկ որ
երկրի վրայ թափիչ մը չկրնար այնպէս ճերմըկցը-
3 նել ։ Ու Եղիան Մովսէսին հետ երեւցաւ անոնց, եւ
4 Յիսուսին հետ կը խօսէին ։ Եւ Պետրոս պա-

յ Եօհ. ժբ. 25 ։
ն Մատ. ժ. 33 ։ Ղուկ. Թ. 26 ։ ժբ. 9 ։
շ Տես Հռով. ա. 16 ։ բ Տիմ. ա. 8 ։ բ. 12 ։
ո Մատ. ժզ. 28 ։ Ղուկ. Թ. 27 ։
չ Մատ. իդ. 30 ։ իե. 31 ։ Ղուկ. իբ. 18 ։
պ Մատ. ժէ. 1 ։ Ղուկ. Թ. 28 ։
ջ Դան. է. 9 ։ Մատ. իը. 3 ։

տասխան տուաւ ու ըսաւ Յիսուսին , Ռաբբի՛
աղէկ է որ հոս կենանք . ու երեք խրճիթ շինենք ,
մէկը քեզի , և մէկը Մովսէսին , ու մէկը Եղիային .
5 Վասն զի չէր գիտեր թէ ինչ խօսի , ինչու որ
6 զարհուրեր էին ։ Ու մէկ ամպ մը հովանի եղաւ
անոնց վրայ , ու ձայն մը եկաւ ամպէն՝ ըսելով ,
Ասիկայ է իմ սիրելի Որդիս , անոր մտիկ ըրէք ։
7 Ու յանկարծ ասդին անդին որ նայեցան , ալ
ուրիշ մէկը չտեսան , հապա միայն Յիսուսը
8 իրենց հետ ։ դ Ու երբոր լեռնէն վար կ'իջնէին ,
պատուիրեց անոնց որ տեսածնին մէկու մը չպատ-
մեն , բայց միայն Որդին մարդոյ մեռելներէն յարու-
9 թիւն առնելէն ետև ։ Ու անոնք այն խօսքը պա-
հեցին , ու մէջերնին հարցափորձ կ'ընէին թէ
10 մեռելներէն յարութիւն առնելը ի՞նչ է ։ Ու
իրեն հարցուցին ու ըսին , Ան ի՞նչ է որ դպիրնե-
րը կ'ըսեն թէ ե Պէտք է որ առաջ Եղիան գայ ։
11 Անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց ,
Յիրաւի առաջ Եղիան կու գայ , և ամէն բան
կարգի կը դնէ . և թէ զ ինչո՞ր գրուած է Որդւոյ
մարդոյ համար , որ շատ չարչարանքներ պիտի
12 կրէ ու է անարգուի . Բայց ձեզի կ'ըսեմ որ
ը Եղիան եկաւ ալ , և ինչ որ ուզեցին՝ ըրին
անոր , ինչպէս որ գրուած է անոր համար ։
13 թ Ու աշակերտներուն քովը գալով՝ տեսաւ շատ
ժողովուրդ անոնց բոլորտիքը՝ և դպիրները , որ
14 վիճաբանութիւն կ'ընէին անոնց հետ ։ Ու շուտ
մը բոլոր ժողովուրդը երբոր տեսան անիկայ՝ խիստ
զարմացան , ու առաջ վազելով՝ բարև կու տային
15 անոր ։ Ու հարցուց դպիրներուն թէ Ի՞նչ վի-

դ Մատ . ժէ . 9 ;
ե Մաղ . դ . 5 ; Մատ . ժէ . 10 ;
զ Սաղ . իբ . 6 ; Ես . ծգ . 2 , [illegible] ; Դան . թ . 26 ;
է Ղու . իգ . 11 ; Փիլ . բ . 7 ;
ը Մատ . ժա . 14 ; ժէ . 12 ; Ղու . ա . 17 ;
թ Մատ . ժէ . 14 ; Ղու . թ . 37 ;

16 վիճաբանութիւն կ'ընէք անոնց հետ ։ Ու ժողովուր-
դէն ժ մէկը պատասխան տալով ըսաւ , Վարդա-
պե՛տ , իմ որդիս քեզի բերի , որ համր ոգի ունի .
17 Ու ո՛ւր որ անոր հանի , զանիկայ գետինը կը
զարնէ . ան ալ կը փրփրի և իր ակռաները կը
կրճտէ ու կը ցամքի . և քու աշակերտներուդ
18 ըսի որ զանիկայ հանեն , ու չկրցան ։ Պատաս-
խան տուաւ անոնց ու ըսաւ , Ո՛վ անհաւատ ազգ՝
մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ , մինչև ե՞րբ
ձեզի պիտի համբերեմ . ինծի բերէք անիկայ ։
19 Ու զանիկայ բերին իրեն . ի Երբոր տղան տեսաւ
զանիկայ , շուտ մը [illegible] ոգին ցնցեց զանիկայ ու
գետինը ինկած կը թաւալըտըկէր ու կը փրփրէր ։
20 Ու Յիսուս հարցուց անոր հօրը ու ըսաւ , Ո՞ր-
չափ ատեն է՛ որ ասը անոր եղաւ . ու անի-
21 կայ ըսաւ , Տղայութենէն 'ի վեր . Ու շատ անգամ
կրակի ու ջուրի մէջ կը նետէ ատիկայ՝ որ կորսըն-
ցընէ . բայց թէ որ կարողութիւն մը ունիս , օգնէ
22 մեզի , խղճալով մեր վրայ ։ Ու Յիսուս ըսաւ
անոր , Թէ որ կարող ես հաւատալու , լ ամէն
23 բան կարելի է անոր որ կը հաւատայ ։ Ու տը-
ղուն հայրը շուտ մը աղաղակեց ու արցունքով
ըսաւ ; Կը հաւատամ Տէ՛ր , օգնէ իմ անհաւա-
24 տութեանս ։ Յիսուս երբոր տեսաւ որ ժողովուր-
դը վրան կը դիզուի , սաստեց պիղծ ոգիին ու ը-
սաւ անոր , Համր ու խուլ ոգի՛ ես կը հրամայեմ
քեզի , ելի՛ր ատկէ , ու մէյմըն ալ չմտնես անոր
25 ներսը ։ Ու կանչըռտելով՝ սաստիկ ցնցեց զա-
նիկայ ; ու ելաւ . և տղան մեռելի պէս եղաւ ,
26 անանկ որ շատերը ըսին թէ Մեռաւ ։ Ու Յի-
սուս անոր ձեռքէն բռնելով վերցուց զանիկայ .
27 ան ալ կայնեցաւ ։ խ Ու երբոր ինքը տուն մտաւ ,

ժ Մատ . ժէ . 14 ; Ղու . թ . 38 ;
ի Գլ . ա . 26 ; Ղու . թ . 42 ;
լ Մատ . ժէ . 19 ; Գլ . ժա . 23 ; Ղու . ժէ . 6 ; Յոհ . ժա . 40 ;
խ Մատ . ժէ . 18 ;

իր աշակերտները առանձին հարցուցին իրեն՝ ըսե-
28 լով, Մենք ինչո՞ւ չկրցանք հանել զանիկա։ Եւ
ըսաւ անոնց, Այս տեսակը կարելի չէ ուրիշ բա-
նով մը ելլել, բայց միայն աղօթքով ու ծոմա-
պահութեամբ։
29 Եւ անկէ ելլելով՝ Գալիլեայի մէջէն կ՚անցնէին.
30 ու չէր ուզեր որ մէկը գիտնայ։ [ե] Ինչու որ կը
սորվեցընէր իր աշակերտներուն ու կ՚ըսէր անոնց
թէ Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռ-
քը, և զանիկայ պիտի սպաննեն. ու երբոր սպան-
31 նուի, երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։ Եւ
անոնք չէին հասկընար այն խօսքը, ու կը վախնա-
յին իրեն հարցընելու։
32 [զ] Եւ եկաւ Կափառնայում, ու երբոր տուն մը-
տաւ, հարցուց անոնց, Ի՞նչ վիճաբանութիւն
33 կ՚ընէիք ճամբան իրարու հետ։ Եւ անոնք լռե-
ցին, ինչու որ ճամբուն մէջ իրարու հետ վի-
34 ճաբանութիւն կ՚ընէին թէ ով մեծ է։ Ու երբ-
որ նստաւ, կանչեց տասներկուքը ու ըսաւ ա-
նոնց, [է] Թէ որ մէկը կ՚ուզէ առաջին ըլլալ, ամե-
նուն յետինը պիտի ըլլայ և ամենուն սպասաւո-
35 րը։ Ու [ը] տղայ մը առաւ կայնեցուց անոնց մէջը,
36 և իր գիրկը առնելով զանիկայ՝ ըսաւ անոնց, Ով
որ ասանկ տղոցմէն մէկը ընդունի իմ անունովս,
զիս կ՚ընդունի. և [թ] ով որ զիս ընդունի, չէ թէ
37 զիս կ՚ընդունի, հապա զիս ղրկողը։ [ժ] Պատաս-
խան տուաւ անոր Յովհաննէս ու ըսաւ, Վար-
դապետ՝ մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը
հանէր, ու մեր ետևէն չպտըտիր, և զանիկայ ար-
38 գիլեցինք՝ մեր ետևէն չպտըտելուն համար։ Եւ
Յիսուս ըսաւ, Մի՛ արգիլէք զանիկայ, [ի] ինչու

[ե] Մատ. ժէ. 21 ։ Ղու. թ. 44 ։
[զ] Մատ. ժը. 1 ։ Ղու. թ. 46 ։ իբ. 24 ։
[է] Մատ. ի. 19, 27 ։ Գւ. ժ. 43 ։
[ը] Մատ. ժը. 2 ։ Ղւ. ժ. 16 ։
[թ] Մատ. ժ. 40 ։ Ղու. թ. 48 ։
[ժ] Թու. ժա. 28 ։ Ղու. թ. 49 ։
[ի] ա Կոր. ժբ. 3 ։

որ մէկը չկայ որ իմ անունովս հրաշք գործէ, ու
39 կարենայ շուտ մը զիս հայհոյել. [լ] Քանզի ան որ
40 * մեզի հակառակ չէ, մեր՝՝ կողմն է։ [խ] Վասն զի
ով որ ձեզի գաւաթ մը ջուր խմցընէ † իմ անու-
նովս՝ թէ դուք Քրիստոսինն էք, ճշմարիտ կ՚ըսեմ
ձեզի, Անիկայ իր վարձքը պիտի չկորսնցընէ։
41 [ծ] Եւ ով որ գայթակղեցընէ աս պզտիկներէն մէկը
որ ինծի կը հաւատան, աւելի աղէկ էր անոր՝ որ
աղացքի քար մը իր վիզէն կախուէր ու ծովը
42 ձգուէր։ [կ] Եւ թէ որ քու ձեռքդ քեզ կը գայ-
թակղեցընէ, կտրէ անիկայ. աղէկ է քեզի պա-
կասաւոր մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք
ունենալ ու գեհենը երթալ չմարելու կրա-
43 կին մէջը. [հ] Ուր որ անոնց որդը չմեռնիր ու
44 կրակը չմարիր։ Եւ թէ որ քու ոտքդ քեզ կը
գայթակղեցընէ, կտրէ անիկայ. աղէկ է քեզի
կաղ մտնել կեանքը, քան թէ երկու ոտք ունե-
նալ ու գեհենը ձգուիլ չմարելու կրակին մէջը.
45 Ուր որ անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։
46 Եւ թէ որ քու աչքդ քեզ կը գայթակղեցընէ,
հանէ անիկայ. աղէկ է քեզի մէկ աչքով Աստու-
ծոյ թագաւորութիւնը մտնել, քան թէ երկու
47 աչք ունենալ ու կրակին գեհենը ձգուիլ. Ուր
48 որ անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։ Ին-
չու որ ամէն մարդ կրակով պիտի աղուի, [ձ] և ա-
49 մէն զոհ աղով պիտի աղուի։ [ղ] Աղը աղէկ է,
բայց թէ որ աղը անհամնայ, ինչո՞վ պիտի հա-
մովցընէք. [ճ] Ձեր անձին մէջ աղ ունեցէք, և
[մ] իրարու հետ խաղաղութիւն ըրէք։

[լ] Տես Մատ. ժբ. 30 ։
* Ոմանք՝ ձեզի հակառակ չէ, ձեր
[խ] Մատ. ժ. 42 ։
† Ոմանք՝ աս
[ծ] Մատ. ժը. 6 ։ Ղու. ժէ. 1 ։
[կ] բ Օր. ժգ. 6 ։ Մատ. ե. 29 ։ ժը. 8 ։
[հ] Ես. կզ. 24 ։
[ձ] Ղև. բ. 13 ։ Եզեկ. խգ. 24 ։
[ղ] Մատ. ե. 13 ։ Ղու. ժդ. 34 ։
[ճ] Եփե. դ. 29 ։ Կող. դ. 6 ։
[մ] Հռով. ժբ. 18 ։ ժդ. 19 ։ բ Կոր. ժգ. 11 ։ Եբր. ժբ. 14 ։

ԳԼ. Ժ

2 Քրիստոս կը վիճաբանի փարիսեցիներուն հետ՝ կնիկ արձակելու վրայով. 13 իրեն բերուած տղաքը կ'օրհնէ. 17 կ'իմացընէ հարուստ մարդու մը՝ թէ ինչ ընելու է որ յաւիտենական կեանքը ժառանգէ. 23 հարստութեան վտանգը կը ցուցընէ իր աշակերտներուն. 28 վարձք կը խոստանայ անոնց՝ որ աւետարանին համար իրենց ո՛ր և իցէ բաները կը թողուն. 32 կը նախաձայնէ իր մահը և յարութիւնը. 35 երկու փառասէր աշակերտները կը խրատէ որ աւելի իրեն հետ չարչարուիլը մտածեն. 46 և կոյր Բարտիմէոսին աչքերը կը բանայ։

1 Եւ [ա] անկէ ելլելով՝ Հրէաստանի սահմանները
եկաւ Յորդանանու անդիի կողմէն, ու նորէն
ժողովուրդները անոր քով կը ժողվուէին. և
ինչպէս որ սովորութիւն ունէր, դարձեալ կը սոր-
վեցընէր անոնց։
2 [բ] Ու փարիսեցիները քով եկան, և զանիկայ
փորձելով կը հարցընէին անոր թէ Արժա՞ն է որ
3 էրիկը իր կնիկը արձակէ։ Եւ անիկայ պատասխան
տուաւ ու անոնց ըսաւ, Մովսէս ձեզի ի՞նչ
4 պատուիրեց։ Եւ անոնք ըսին, [գ] Մովսէս հրաման
5 տուաւ արձակման գիր գրել, ու արձակել։ Եւ
Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Ձեր
սրտին կարծրութեանը համար գրեց ձեզի աս
6 պատուէրը. Բայց ստեղծագործութեան սկիզբէն
[դ] Աստուած անոնք արու և էգ ըրաւ, ու ըսաւ,
7 [ե] Անոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ,
8 և իր կնկանը պիտի յարի. Ու երկուքը մէկ մարմին
պիտի ըլլան, ուստի ալ երկուք չեն, հապա մէկ
9 մարմին. Ուրեմն ան որ Աստուած միաւորեց,
10 մարդ թող չզատէ։ Եւ տունը իր աշակերտները
11 նորէն նոյն բանը հարցուցին իրեն։ Ու ըսաւ

[ա] Մատ. ժթ. 1։ Յոհ. ժ. 40։ ժա. 7։
[բ] Մատ. ժթ. 3։
[գ] Բ Օր. իդ. 1։ Մատ. ե. 31։ ժթ. 7։
[դ] Ծն. ա. 27։ ե. 2։
[ե] Ծն. բ. 24։ ա Կոր. զ. 16։ Եփե. ե. 31։

անոնց, [զ] Ո՛վ որ իր կնիկը արձակէ և ուրիշ մը
12 առնէ, անոր դէմ շնութիւն կ'ընէ։ Ու կնիկ մը
թէ որ իր էրիկէն զատուի և ուրիշ էրկան մը
ըլլայ, շնութիւն կ'ընէ։
13 [է] Եւ մանր տղաք բերին իրեն, որ անոնց դպչի.
բայց աշակերտները կը յանդիմանէին բերողները։
14 Յիսուս երբոր տեսաւ, սրդողելով անոնց ըսաւ,
Թո՛ղ տուէք աս մանր տղոցը որ ինծի գան, և մի՛
արգիլէք զանոնք, ինչու որ [ը] Աստուծոյ թագաւո-
15 րութիւնը ասանկներունն է։ Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, [թ] Ո՛վ որ Աստուծոյ թագաւորութիւնը
պզտիկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ
16 անոր մէջը։ Եւ անոնք գիրկը առաւ, վրանին
ձեռք դրաւ ու օրհնեց զանոնք։
17 [ժ] Ու երբոր անիկայ դուրս ելաւ ճամբուն մէջ,
հա՛ մէկ մարդ մը վազեց՝ ու անոր առջևը ծունկ
դնելով կը հարցընէր անոր ու կ'ըսէր, Բարի՛ վար-
դապետ՝ ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժա-
18 ռանգեմ։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս
բարի կ'անուանես. մէկէն 'ի զատ բարի չկայ, որ
19 է Աստուած։ Պատուիրանքները գիտես. [ի] Շնու-
թիւն մի՛ ըներ, Սպանութիւն մի՛ ըներ, Գողու-
թիւն մի՛ ըներ, Սուտ վկայութիւն մի՛ ըներ,
Զրկանք մի՛ ըներ, Քու հայրդ ու մայրդ պա-
20 տուէ։ Անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ անոր,
Վարդապետ՝ ատոնք ամէնը մանկութենէս 'ի վեր
21 պահեր եմ։ Եւ Յիսուս անոր նայելով՝ սիրեց զա-
նիկայ, ու ըսաւ անոր, Մէկ բան մը պակաս է
քեզի. գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատնե-
րուն, ու [լ] երկինքը գանձ պիտի ունենաս, և խաչը

[զ] Մատ. ե. 32։ ժթ. 9։ Ղու. ժզ. 18։ Հռով. է. 3։ ա Կոր. է, 10. 11։
[է] Մատ. ժթ. 13։ Ղու. ժը. 15։
[ը] ա Կոր. ժդ. 20։ ա Պետ. բ. 2։
[թ] Մատ. ժը. 3։
[ժ] Մատ. ժթ. 16։ Ղու. ժը. 18։
[ի] Ել. ի։ Հռով. ժգ. 9։
[լ] Մատ. զ. 19, 20։ ժթ. 21։ Ղու. ժբ. 33։ ժզ. 9։

22 վերցուր՝ ու եկուր իմ ետեւէս ։ Եւ անիկայ աս
խօսքին համար խոժոռելով տրտմած գնաց , քանզի
23 որ շատ ստացուածք ունէր ։ [ե]Եւ Յիսուս իր բոլո-
րը նայելով ըսաւ իր աշակերտներուն , Որչափ
դժուար է անոնց որ հարստութիւն ունին , Աս-
24 տուծոյ թագաւորութիւնը մտնել ։ Եւ աշակերտնե-
րը զարմացեր էին անոր խօսքերուն վրայ . բայց Յի-
սուս նորէն պատասխան տալով՝ անոնց ըսաւ , Որ-
դեակներ՝ որչափ դժուար է [զ]իրենց հարստութեանը
յուսացողներուն Աստուծոյ թագաւորութիւնը մտ-
25 նել ։ Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի ,
քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը
26 մտնէ ։ Եւ անոնք խիստ շատ կը զարմանային ու
27 կ'ըսէին իրարու , Ո՞վ կրնայ փրկուիլ ։ Եւ
Յիսուս անոնց նայելով ըսաւ , [է]Ասիկայ մարդոց
կողմանէ անկարելի է , բայց ոչ Աստուծոյ կողմանէ .
քանզի Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի է ։
28 [ը]Պետրոս սկսաւ ըսել անոր , Ահա մենք ամէն
29 բան թողուցինք ու քու ետեւէդ եկանք ։ Եւ Յիսուս
պատասխան տալով ըսաւ , Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի ,
Մէկը չկայ որ թողուց տուն , կամ եղբայրներ ,
կամ քոյրեր , կամ հայր , կամ մայր , կամ կին ,
կամ որդիներ , կամ արտեր՝ ինծի համար ու աւետա-
30 րանին համար , [թ]Որ պիտի չառնէ հարիւրապատիկ
հիմա աս ատենս՝ տուներ , ու եղբայրներ , և քոյ-
րեր , ու մայրեր , և որդիներ , ու արտեր՝ հալածա-
նաց հետ , և գալու աշխարհին մէջ՝ յաւիտենական
31 կեանքը ։ [ժ]Բայց շատ առաջիններ պիտի ըլլան
յետին , ու յետիններ՝ առաջին ։
32 [ի]Եւ անոնք դէպ 'ի Երուսաղէմ կ'ելլէին , ու-

ե Մատ. ժթ. 23։ Ղու. ժը. 24։
զ Յոբ. լա. 24։ Սաղ. ծբ. 7։ կբ. 10։ ա Տիմ. զ. 17։
է Երեմ. լբ. 17։ Մատ. ժթ. 26։ Ղու. ա. 37։
ը Մատ. ժթ. 27։ Ղու. ժը. 28։
թ բ Մն. իե. 9։ Ղու. ժը. 30։
ժ Մատ. ժթ. 30։ ի. 16։ Ղու. ժգ. 30։
ի Մատ. ի. 17։ Ղու. ժը. 31։

ճամբուն մէջն էին . և Յիսուս անոնցմէ առաջ
կ'երթար , ու անոնք կը զարմանային , ու ետեւէն
երթալով՝ կը վախնային ։ [լ]Եւ նորէն քովը առնե-
լով տասներկուքը , սկսաւ ըսել անոնց ինչ բա-
33 ներ որ իրեն պիտի պատահէին . Ու ըսաւ , Ահա
Երուսաղէմ կ'ելլենք , և Որդին մարդոյ պիտի
մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն , և
զանիկայ մահուան պիտի դատապարտեն , ու զա-
34 նիկայ հեթանոսներուն պիտի մատնեն . Եւ զանի-
կայ ծաղր պիտի ընեն ու ծեծեն , և անոր վրայ
պիտի թքնեն , ու զանիկայ մեռցնեն , ու երրորդ
օրը յարութիւն պիտի առնէ ։
35 [խ]Եւ անոր քովը գացին Յակոբոս ու Յովհաննէս՝
Զեբեդէոսի որդիքը , ու ըսին , Վարդապետ՝
կ'ուզենք որ [illegible] ինչ որ խնդրենք , մեզի ընես ։
36 Ան ալ ըսաւ անոնց , Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի
37 ընեմ ։ Ու անոնք ըսին իրեն , Շնորհէ մեզի որ
նստինք մեզմէ մէկը աջ կողմդ և միւսը ձախ
38 կողմդ քու փառացդ մէջ ։ Եւ Յիսուս ըսաւ ա-
նոնց , Չէք գիտեր ինչ կը խնդրէք . կրնա՞ք
խմել այն գաւաթը որ ես կը խմեմ , և այն մկր-
տութիւնովը մկրտուիլ՝ որով ես կը մկրտուիմ ։
39 Եւ անոնք ըսին իրեն , Կրնանք . ու Յիսուս ըսաւ
անոնց , Այն գաւաթը որ ես կը խմեմ՝ պիտի
խմէք , և այն մկրտութիւնովը որ ես կը մկրտուիմ՝
40 պիտի մկրտուիք . Բայց իմ աջ կողմս ու ձախ
կողմս նստիլը՝ իմս չէ տալը , հապա որոնց որ պատ-
41 րաստուած է ։ [ծ]Ու երբոր միւս տասը աշակերտ-
ները լսեցին , սկսան Յակոբոսին ու Յովհաննէսին
42 նեղանալ ։ Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք ու
ըսաւ անոնց , [կ]Գիտէք որ ազգաց իշխան սեպ-
ուածները կը տիրեն անոնց , և անոնց մեծամեծնե-

լ Գլ. ը. 31։ թ. 30։ Ղու. թ. 22։ ժը. 31։
խ Մատ. ի. 20։
ծ Մատ. ի. 24։
կ Ղու. իբ. 25։

43 ըր կ՚իշխեն անոնց · [ա] Բայց ձեր մէջը անանկ պիտի
չըլլայ ; հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ՚ուզէ ,
44 անիկայ ձեր սպասաւորը ըլլայ · Ու ձեզմէ ով որ
առաջին ըլլալ կ՚ուզէ , անիկայ ամենուն ծառայ
45 ըլլայ ։ Վասնզի [բ] Որդին մարդոյ ալ չեկաւ սպա-
սաւորութիւն ընդունելու , հապա սպասաւորու-
թիւն ընելու , և [գ] իր կեանքը շատերուն համար
փրկանք մը տալու ։
46 [դ] Ու եկան Երիքով · ու երբոր Երիքովէն կ՚ելլէր
աշակերտներովը և շատ բազմութիւնով , Տիմէոսի
որդին կոյր Բարտիմէոսը ճամբուն քովը նստեր էր
47 մուրալու ։ Ու երբոր լսեց թէ Յիսուս Նազով-
րեցին է , սկսաւ աղաղակել ու ըսել , Յիսուս՝
48 որդի՛ Դաւիթի՛ ողորմէ՛ ինծի ։ Ու շատերը կը
յանդիմանէին զանիկայ որ լռէ , բայց անիկայ՝
ալ աւելի կ՚աղաղակէր , Որդի՛ Դաւիթի՛ ողորմէ՛
49 ինծի ։ Ու Յիսուս կանգ առնելով՝ ըսաւ որ անի-
կայ կանչեն · կանչեցին կոյրը ու ըսին անոր ,
50 Քաջ եղիր , ելի՛ր՝ քեզ կը կանչէ ։ Ու անիկայ
իր հանդերձը ձգելով , ելաւ ու եկաւ Յիսուսին ։
51 Ու Յիսուս պատասխան տուաւ ու անոր ըսաւ ,
Ի՞նչ կ՚ուզես որ քեզի ընեմ · կոյրը ըսաւ անոր ,
52 Ռաբբունի՛ որ աչքերս բացուին ։ Ու Յիսուս ը-
սաւ անոր , [ե] Գնա , քու հաւատքդ քեզ բժշկեց ·
և շուտ մը անոր աչքերը բացուեցան , ու ճամբան
Յիսուսին ետեւէն կ՚երթար ։

[ա] Մատ. ի. 26, 28 ; Գլ. թ. 34 ; Ղու. թ. 48 ;
[բ] Յօհ. ժգ. 14 ; Փիլ. բ. 7 ;
[գ] Մատ. ի. 28 ; ա Տիմ. բ. 6 ; Տիտ. բ. 14 ;
[դ] Մատ. ի. 29 ; Ղու. ժը. 35 ;
[ե] Մատ. թ. 22 ; Գլ. ե. 34 ;

ԳԼ. ԺԱ.

1 Քրիստոս իշու վրայ հեծած Երուսաղէմ կը մտնէ հանդէսով · 13 անպտուղ թզենին կ՚անիծէ · 15 տաճարը կը մաքրէ · 20 կը յորդորէ իր աշակերտները որ հաստատ հաւատք ունենան , և իրենց թշնամիներուն ներեն · 27 և իր ըրած բաներուն օրինաւոր ըլլալը կը հաստատէ Յովհաննէսին վկայութեամբը , որ Աստուծմէ խրկուած մարդ մըն էր ։

1 Ու [ա] երբոր Երուսաղէմին մօտեցան՝ Բեթփագէ ու
Բեթանիա դէպ ՚ի Ձիթենեաց լեռը , Յիսուս
2 իր աշակերտներէն երկուքը խրկեց , Ու ըսաւ ա-
նոնց , Գացէք աս ձեր դիմացի գեղը · և անոր մէջ
մտնելնուդ պէս՝ պիտի գտնէք կապած աւանակ մը ,
որուն վրայ մարդ մը նստած չէ · արձըկեցէք անի-
3 կայ ու բերէք · Ու թէ որ մէկը ըսէ ձեզի թէ
Աս ի՞նչ կ՚ընէք , ըսէք թէ Տէրոջը պէտք է · և
4 շուտ մը հոս պիտի խրկէ զանիկայ ։ Գացին և
գտան աւանակը դուրսը փողոցին մէջ դրանը քով
5 կապած , ու արձըկեցին զանիկայ ։ Ու հոն կայ-
նողներէն ոմանք ըսին անոնց , Ի՞նչ կ՚ընէք որ
6 կ՚արձըկէք աս աւանակը ։ Ու անոնք ըսին անոնց
ինչպէս որ Յիսուս պատուիրեր էր · ու իրենց թող
7 տուին ։ Ու աւանակը Յիսուսին բերին , ու անոր
վրայ իրենց հանդերձները դրին , ու նստաւ անոր
8 վրայ ։ [բ] Ու շատերը իրենց հանդերձները ճամբուն
վրայ փռեցին , և ուրիշները ծառերէն ճիւղեր կը
9 կտրէին ու ճամբուն վրայ կը տարածէին ։ Ու
առջեւէն ու ետեւէն գացողները կ՚աղաղակէին ու
կ՚ըսէին , Ովսաննա , [գ] Օրհնեա՛լ է ան որ Տէրոջը
10 անունովը կու գայ · Օրհնեա՛լ է մեր Դաւիթ հօրը
թագաւորութիւնը որ *կու գայ · Ովսաննա ՚ի
բարձունս ։
11 [դ] Ու Յիսուս մտաւ Երուսաղէմ ու տաճարը ,
և չորս կողմը ամէն բաները աչքէ անցուց · և ար-
դէն ժամանակը իրիկուն ըլլալով՝ Բեթանիա ելաւ
տասներկուքին հետ մէկտեղ ։
12 [ե] Ու հետեւեալ օրը երբոր Բեթանիայէն կ՚ել-
13 լէին , անօթեցաւ · [զ] Ու հեռուանց տերեւալից
թզենի մը տեսնելով՝ եկաւ որ գուցէ անոր վրայ

[ա] Մատ. իա. 1 ; Ղու. ժթ. 29 ; Յօհ. ժբ. 14 ;
[բ] Մատ. իա. 8 ;
[գ] Սաղ. ճժը. 26 ;
* Ուրիշ՝ Տէրոջը անունովը կու գայ ·
[դ] Մատ. իա. 12 ;
[ե] Մատ. իա. 18 ;
[զ] Մատ. իա. 19 ;

բան մը գտնէ. ու երբոր անոր քովը գնաց, տերեւ-
ներէն 'ի զատ բան մը չգտաւ, ինչու որ թու-
14 զի ատեն չէր. * Եւ պատասխան տուաւ ու
ըսաւ անոր, Ասկէ ետեւ մէկը քեզմէ պտուղ չուտէ
յաւիտեան. եւ իր աշակերտները լսեցին:
15 ա Ու եկան Երուսաղէմ. եւ Յիսուս տաճարը
մտնելով՝ սկսաւ դուրս հանել անոնք որ տաճարին
մէջ կը ծախէին ու կը գնէին. եւ սատկ փոխողնե-
րուն սեղանները ու աղաւնի ծախողներուն ա-
16 թոռները կործանեց. Եւ թող չէր տար որ մէկը
17 տաճարին մէջէն աման մը անցընէ: Եւ կը սոր-
վեցընէր ու կ'ըսէր անոնց, Գրուած չէ՞ որ բ Իմ
տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգե-
րուն, բայց գ դուք ատիկա աւազակներու այր
18 ըրիք: դ Եւ դպիրները ու քահանայապետները
լսելով՝ կը փնտռէին թէ ինչպէս կորսնցընեն
զանիկա, քանզի անկէ կը վախնային. ինչու որ
ե բոլոր ժողովուրդը զարմացեր էր անոր վարդա-
19 պետութեանը վրայ: Ու երբոր իրիկուն եղաւ,
քաղաքէն դուրս ելաւ:
20 զ Եւ առտուանց երբոր անկէ կ'անցնէին, թզե-
21 նին տեսան արմատէն չորցած: Ու Պետրոսին
միտքը եկաւ ու ըսաւ անոր, Ռաբբի՛ ահա
22 թզենին որ անիծեցիր, չորցեր է: Եւ Յիսուս
պատասխան տալով ըսաւ անոնց, Աստուծոյ հա-
23 ւատք ունեցէ՛ք: Քանզի է ճշմարիտ կ'ըսեմ ձե-
զի, Ո՛վ որ աս լեռանը ըսէ՝ Ելի՛ր ու ծովը ին-
կիր, եւ իր սրտին մէջը չերկմտի, հապա հաւատայ
թէ ինչ որ ըսէ՝ կ'ըլլայ, պիտի ըլլայ անոր ինչ

* Ոմանք՝ Ու Յիսուս
ա Մատ. իա. 12: Ղու. ժթ. 45: Յով. բ. 14:
բ Ես. ծզ. 7:
գ Երեմ. է. 11:
դ Մատ. իա. 45, 46: Ղու. ժթ. 47:
ե Մատ. է. 28: Գղ. ա. 22: Ղու. դ. 32:
զ Մատ. իա. 19:
է Մատ. ժէ. 19: իա. 21: Ղու. ժէ. 6:

24 որ ըսէ: Անոր համար կ'ըսեմ ձեզի, ը Ինչ՞ բան
որ աղօթքով կը խնդրէք, հաւատացէք թէ
25 պիտի առնէք, եւ պիտի ըլլայ ձեզի: Ու երբոր
աղօթքի կը կայնիք, թ ներեցէք թէ որ մէկուն
դէմ բան մը ունիք. որպէս զի ձեր Հայրն ալ որ
26 երկինքն է, ներէ ձեզի ձեր յանցանքները: ժ Իսկ
թէ որ դուք չէք ներեր, ձեր Հայրն ալ որ եր-
կինքն է, պիտի չներէ ձեր յանցանքները:
27 Եւ նորէն Երուսաղէմ եկան, ի ու երբոր
տաճարին մէջ կը պտըտէր, քահանայապետ-
ները եւ դպիրները ու ծերերը անոր եկան,
28 Ու ըսին անոր, Ի՞նչ իշխանութիւնով կ'ը-
նես աս բաները, եւ ո՞վ տուաւ քեզի աս իշխա-
29 նութիւնը, որ աս բաները ընես: Պատաս-
խան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Ես ալ
ձեզի բան մը հարցնեմ, ու թէ որ ինծի պատաս-
խան տաք, ես ալ ձեզի պիտի ըսեմ թէ ինչ
30 իշխանութիւնով կ'ընեմ աս բաները. Յովհան-
նէսին մկրտութիւնը երկինքէ՞ն էր՝ թէ մարդոցմէ,
31 պատասխան տուէք ինծի: Եւ անոնք մէջերնին
կը խորհէին ու կ'ըսէին, Թէ որ ըսենք՝ Երկինքէն,
պիտի ըսէ, Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր.
32 Իսկ թէ որ ըսենք՝ Մարդոցմէ, ժողովուրդէն կը
վախնային. ինչու որ լ ամէնքը * գիտէին Յով-
33 հաննէսը թէ ճշմարտապէս մարգարէ էր: Եւ
պատասխան տալով ըսին Յիսուսին, Չենք գի-
տեր. եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ
անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանու-
թիւնով կ'ընեմ աս բաները:

ը Մատ. է. 7: Ղու. ժա. 9: Յով. ժդ. 13: ժե. 7: ժզ. 24: Յակ. ա. 5, 6:]
թ Մատ. զ. 14: Կող. գ. 13:
ժ Մատ. ժը. 35:
ի Մատ. իա. 23: Ղու. ի. 1:
լ Մատ. գ. 5: ժդ. 5: Գղ. ա. 20:
* Յոմ. ունէին

ԳԼ. ԺԲ

1 Քրիստոս կը նախագուշակէ Հրէից մերժուիլը և հեթանոսաց կոչումը՝ ապերախտ մշակներուն ձեռքը յանձնուած այգիին առակովը. 13 պատասխան կու տայ՝ Կայսրին հարկ տալու վրայով. 18 կը ցուցընէ սադուկեցւոց՝ իրենց մոլորութիւնը յարութիւն չկայ ըսելնուն համար. 28 առաջին պատուիրանքին վրայով հարցընող դպիրին խնդիրը կը լուծէ. 35 կը ջրէ այն կարծիքը որ դպիրները ունէին Քրիստոսի վրայով. 38 և կը պատուիրէ ժողովրդոց որ զգուշ ըլլան անոնց փառասիրութենէն և կեղծաւորութենէն ։ 41 Քրիստոս կը գովէ երկու լումայ տուող աղքատ որբևարին ։

1 Եւ ա սկսաւ առակներով խօսիլ անոնց հետ ը-
սել , Մէկ մարդ մը այգի տնկեց , ու անոր
բոլորտիքը ցանկ քաշեց , և ստորահնձան փորեց , ու
աշտարակ շինեց , և զանիկայ մշակներու յանձնեց ,
2 ու ինքը օտար երկիր մը գնաց ։ Եւ ատենին ծա-
ռայ մը խրկեց մշակներուն , որ մշակներէն այգիին
3 պտուղէն առնէ ։ Իսկ անոնք բռնեցին՝ ծեծեցին
4 զանիկայ ու պարապ ճամբեցին ։ Նորէն ուրիշ
ծառայ մըն ալ խրկեց անոնց . և զանիկայ քարկո-
ծելով՝ գլուխը վիրաւորեցին , ու անարգուած
5 ճամբեցին ։ Եւ դարձեալ ուրիշ մը խրկեց . ու
զանիկայ սպաննեցին . և շատ ուրիշներ ալ խրկեց .
որոնց մէկ քանիները ծեծեցին ու մէկ քանիները
6 սպաննեցին ։ Ուստի մէկ սիրելի որդի մըն ալ
ունենալով , վերջապէս զանիկայ ալ խրկեց անոնց՝
7 ըսելով , Գուցէ ամչնան իմ որդիէս ։ Բայց այն
մշակները ըսին իրարու , Ասիկայ է ժառանգը .
եկէք զանիկայ սպաննենք , ու ժառանգութիւնը
8 մերը ըլլայ ։ Եւ բռնեցին զանիկայ ու սպաննե-
9 ցին , և այգիէն դուրս հանեցին ։ Ուստի այգիին
տէրը ի՞նչ պիտի ընէ . պիտի գայ ու կորսնցընէ
10 մշակները , և այգին ուրիշներու պիտի տայ ։ Եւ
աս գիրը չէ՞ք կարդացեր թէ բ Այն քարը որ
շինողները անարգեցին , անիկայ անկիւնին գլուխը

ա Մատ. իա. 33: Ղուկ. ի. 9: | բ Սաղ. ճժը. 22:

11 եղաւ . Ասիկայ Տէրոջմէ եղաւ , և զարմանալի է
մեր աչքերուն ։
12 գ Եւ կը փնտռէին թէ ինչպէս բռնեն զանիկայ ,
բայց ժողովուրդէն վախցան , քանզի իմացան որ
այն առակը իրենց համար ըսաւ . և ձգեցին անիկայ
ու գացին ։
13 դ Եւ փարիսեցիներէն ու Հերովդէսեաններէն
քանի մը հոգի խրկեցին անոր , որ խօսքով բռնեն
14 զանիկայ ։ Եւ անոնք եկան ու ըսին անոր ,
Վարդապետ՝ գիտենք որ ճշմարիտ ես , և մէկու մը
համար հոգ չէ , քանզի մարդոց երեսպաշտու-
թիւն չես ըներ , հապա ճշմարտութեամբ Աստու-
ծոյ ճամբան կը սորվեցընես . Կայսրին տուրք
15 տալ արժա՞ն է թէ չէ , տա՞նք՝ թէ չտանք ։ Եւ
Յիսուս գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝ ը-
սաւ անոնց , Ինչո՞ւ զիս կը փորձէք . բերէ՛ք ինծի
16 մէկ դահեկան մը որ տեսնեմ ։ Եւ անոնք բերին .
ու ըսաւ անոնց , Որո՞ւնն է աս պատկերը ու գի-
17 րը . և անոնք ըսին անոր , Կայսրին ։ Եւ Յիսուս
պատասխան տալով ըսաւ անոնց , Ան որ Կայսրինն
է Կայսրին տուէք , և ան որ Աստուծոյն է Աստու-
ծո՛յ տուէք . ու զարմացան անոր վրայ ։
18 Եւ անոր քովը եկան ե սադուկեցիները , որոնք
կ'ըսէին թէ զ յարութիւն չկայ , և անոր հարցու-
19 ցին ըսելով , Վարդապետ՝ է Մովսէս մեզի գրեց
որ եթէ մէկուն եղբայրը մեռնի՝ ու կնիկը ձգէ և
զաւակ չձգէ , անոր եղբայրը առնէ անոր կնիկը և
20 իր եղբօրը զաւակ հանէ ։ Արդ եօթը եղբայրներ
կային , և առջինը կնիկ առաւ ու մեռաւ և զա-
21 ւակ չձգեց ։ Ու երկրորդը առաւ զանիկայ ու
մեռաւ , և ան ալ զաւակ չձգեց . նոյնպէս ալ եր-
22 րորդը ։ Ու եօթն ալ զանիկայ առին և զաւակ

գ Մատ. իա. 45, 46: Գլ. ժա. 18: Յոհ. է. 25, 30, 44:
դ Մատ. իբ. 15: Ղուկ. ի. 20:
ե Մատ. իբ. 23: Ղուկ. ի. 27:
զ Գործ. իգ. 8:
է Բ Օր. իե. 5:

23 չձգեցին․ ամէնէն ետքը կինն ալ մեռաւ։ Ու-
րեմն յարութեան ատենը՝ երբոր յարութիւն առ-
նեն, անոնցմէ որո՞ւն կինը պիտի ըլլայ․ ինչու
24 որ եօթն ալ զանիկայ կնիկ ունեցան։ Եւ Յիսուս
պատասխան տալով անոնց ըսաւ, Ասոր համար
չէ՞ որ մոլորած էք, որ ոչ Գիրքը գիտէք, և ոչ
25 Աստուծոյ զօրութիւնը։ [ա]Քանզի երբոր մեռելնե-
րէն յարութիւն առնեն, ոչ կնիկ կ'առնեն, և ոչ
էրկան կը տրուին․ հապա երկինքի հրեշտակնե-
26 րուն պէս են։ Բայց մեռելներուն համար՝ թէ
յարութիւն կ'առնեն, Մովսէսին գրքին մէջը չէ՞ք
կարդացեր մորենիին վրայ, ինչպէս Աստուած անոր
խօսեցաւ ըսելով, [բ]Ես եմ Աբրահամին Աստուա-
ծը, և Իսահակին Աստուածը, ու Յակոբին Աս-
27 տուածը։ Անիկայ մեռելներուն Աստուածը չէ,
հապա կենդանիներուն․ ուրեմն դուք խիստ մոլ-
րած էք։
28 [գ]Եւ դպիրներէն մէկը եկաւ, ու մտիկ կ'ընէր
անոնց՝ երբոր վիճաբանութիւն կ'ընէին, որ երբոր
տեսաւ թէ աղէկ պատասխան տուաւ անոնց, հար-
ցուց անոր ու ըսաւ, Ո՞րն է բոլոր պատուի-
29 րանքներուն առաջինը։ Եւ Յիսուս պատասխանեց
անոր, Բոլոր պատուիրանքներուն առաջինը ան է․
[դ]Լսէ, ով Իսրայէլ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր
30 մըն է․ Եւ քու Տէր Աստուածդ սիրես քու բո-
լոր սրտէդ, և քու բոլոր անձէդ, ու քու բո-
լոր մտքէդ, և քու բոլոր զօրութենէդ․ աս ի-
31 կայ է առաջին պատուիրանքը։ Ու երկրորդը
ասոր նման՝ [ե]Քու ընկերդ սիրես քու անձիդ
պէս․ ասոնցմէ մեծ ուրիշ պատուիրանք չը-
32 կայ։ Եւ դպիրը ըսաւ անոր, Աղէ՛կ վար-

ա ա Կոր. ժե. 42, 49, 52։
բ Ել. գ. 6։
գ Մատ. իբ. 35։
դ բ Օր. զ. 4։ Ղու. ժ. 27։
ե Ղև. ժթ. 18։ Մատ. իբ. 39։ Հռով. ժգ. 9։ Գաղ. ե. 14։ Յակ. բ. 8։

դապետ, ճշմարիտ խօսեցար թէ Աստուած մէկ է,
33 [զ]Եւ անկէ 'ի զատ ուրիշ մը չկայ․ Եւ բոլոր սրտէ,
ու բոլոր մտքէ, և բոլոր անձէ, ու բոլոր զօրու-
թենէ անիկայ սիրելը, ու ընկերը իր անձին պէս
սիրելը [է]ամէն ողջակէզներէ ու զոհերէ աւելի է։
34 Եւ Յիսուս տեսնելով որ անիկայ խելացութիւնով
պատասխան տուաւ, ըսաւ անոր, Աստուծոյ թա-
գաւորութենէն հեռու չես․ [ը]Եւ ալ ուրիշ մէկը
չէր համարձակեր անոր բան մը հարցնելու։
35 [թ]Եւ Յիսուս երբոր տաճարին մէջ կը սորվեցը-
նէր, պատասխան տուաւ ու ըսաւ, Դպիրները
ինտո՞ր կ'ըսեն թէ Քրիստոս Դաւիթի որդին է․
36 Եւ ինքը Դաւիթ [ժ]Սուրբ Հոգիով կ'ըսէ, [ի]Տէ-
րը իմ Տէրոջս ըսաւ, [լ]Նստէ իմ աջ կողմս, մին-
չև որ քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան
37 ընեմ։ Ուրեմն Դաւիթ ինքը որ զանիկայ Տէր
կը կոչէ, ի՞նչպէս անիկայ անոր որդին կ'ըլլայ․
և ժողովուրդէն շատերը յօժարութեամբ մտիկ
կ'ընէին անոր։
38 [խ]Եւ իր վարդապետութեանը մէջ կ'ըսէր ա-
նոնց, [ծ]Զգուշացէք դպիրներէն, որոնք կ'ուզեն
փառաւոր հանդերձներով պտըտիլ, և [կ]շուկանե-
39 րուն մէջ բարեւներ կը փնտռեն, Ու ժողովարան-
ներուն մէջ առաջին աթոռները, և ընթրիքներու
40 մէջ առաջին բազմոցները․ [հ]Որոնք որբևայրիներուն
տուները կ'ուտեն, ու ձեւոյ երևնալու համար
աղօթքը կ'երկնցընեն․ ասոնք աւելի դատապար-
տութիւն պիտի ընդունին։
41 [ձ]Եւ Յիսուս գանձանակին դիմացը նստած՝ կը

զ բ Օր. դ. 39։ Ես. խե. 6, 14։ խզ. 9։
է ա Թագ. ժե. 22։ Ովս. զ. 6։ Միք. զ. 6, 7, 8։
ը Մատ. իբ. 46։
թ Մատ. իբ. 41։ Ղու. ի. 41։
ժ բ Թագ. իգ. 2։
ի Սաղ. ճժ. 1։
լ Գծ. դ. 2։
խ Մատ. իգ. 1։ Ղու. ի. 46։
ծ Ղու. ժա. 43։
կ Մատ. իգ. 14։
հ Ղու. իա. 1։

նայէր թէ ինչպէս ժողովուրդը ա գանձանակին մէջ
ստակ կը ձգէ . և շատ հարուստներ շատ բան
42 ձգեցին : Մէկ աղքատ որբևայրի մըն ալ եկաւ ու
երկու լումայ ձգեց, որ մէկ նաքարակիտ մը կ'ընէ :
43 Եւ իր աշակերտները իրեն կանչելով ըսաւ անոնց,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ բ աս աղքատ որբևա-
րին գանձանակը ստակ ձգողներուն ամենէն աւելի
44 ձգեց . Ինչու որ ամէնքը իրենց աւելցածէն ձգեցին,
բայց ասիկա իր չքաւորութենէն՝ ունեցածին բո-
լորը ձգեց՝ գ իր բոլոր ապրուստը :

ԳԼ . ԺԳ

1 Քրիստոս կը նախաձայնէ թէ տաճարը պիտի կործանի . 9 թէ աւետարանին համար հալածանքներ պիտի ըլլան . 14 թէ մեծամեծ թշուառութիւններ պիտի գան Հրէից վրայ . 24 և թէ ինքը ինչ կերպով դատաստանի պիտի գայ : 32 Վերջին ժամը ընաւ մէկուն յայտնուած չըլլալուն համար՝ Քրիստոս կը պատուիրէ արթուն կենալ ու աղօթք ընել :

1 Ու ա երբոր տաճարէն դուրս կ'ելլէր, իր աշակերտ-
ներէն մէկը ըսաւ իրեն, Վարդապետ՝ նայէ ին-
2 տո՛ր քարեր են, և ինչ կերպ շէնքեր : Եւ Յիսուս
պատասխան տալով ըսաւ անոր, Կը տեսնե՞ս աս
մեծ շէնքերը . բ Քար մը քարի վրայ պիտի չմնայ
որ չքակուի :
3 Ու երբոր անիկա Ձիթենեաց լեռը տաճարին
դիմացը նստեր էր, Պետրոս ու Յակոբոս և Յով-
հաննէս ու Անդրէաս հարցուցին իրեն առանձին,
4 գ Ըսէ մեզի ե՞րբ պիտի ըլլան աս բաները, և ի՞նչ
նշան պիտի ըլլայ աս ամէն բաներուն կատարուե-
5 լու ատենը : Եւ Յիսուս պատասխան տուաւ
անոնց ու սկսաւ ըսել, դ Զգո՛յշ կեցէք՝ չըլլայ որ
6 մէկը ձեզ խաբէ . Ինչու որ շատերը պիտի գան իմ
անունովս ու ըսեն թէ Ես եմ Քրիստոսը, ու

ա դ Թագ. ժբ. 9 :
բ բ Կոր. ը. 12 :
գ բ Օր. իդ. 6 : ա Յոհ. գ. 17 :
ա Մատ. իդ. 1 : Ղու. իա. 5 :
բ Ղու. ժթ. 44 :
գ Մատ. իդ. 3 : Ղու. իա. 7 :
դ Երեմ. իթ. 8 : Եփե. ե. 6 : ա Թես. բ. 3 :

7 շատերը պիտի մոլորցընեն : Բայց երբոր լսէք պա-
տերազմներ և պատերազմներու լուրեր, մի՛ խը-
ռովիք, ինչու որ պէտք է ըլլալ, բայց դեռ վերջը
8 չէ : Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու
թագաւորութիւն թագաւորութեան վրայ, և տեղ
տեղ երկրաշարժութիւններ պիտի ըլլան, սովեր ու
խռովութիւններ ալ պիտի ըլլան . ե Ասոնք ցաւե-
9 րուն սկիզբներն են : Զգուշացէք ձեր անձերուն,
քանզի զ ձեզ ատեաններու պիտի մատնեն, ու ժո-
ղովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն, և իմ ան-
ուանս համար կուսակալներու ու թագաւորներու
առջև պիտի կենաք՝ անոնց վկայութիւն ըլլալու
10 համար . Եւ է առաջ պէտք է որ աւետարանը քա-
11 րոզուի բոլոր ազգերուն : ը Բայց երբոր ձեզ մատնե-
լու տանին, առաջուց հոգ մի՛ ընէք և մի՛ մը-
տածէք թէ ինչ պիտի խօսիք, հապա ան ժամուն
ինչ որ ձեզի տրուի, անիկայ խօսեցէք . ինչու որ
չէ թէ դուք էք որ կը խօսիք, թ հապա Հոգին
12 Սուրբ : Ու ժ եղբայր եղբայրը մահուան պիտի
մատնէ, և հայրը՝ որդին, և որդիք իրենց ծնողացը
13 վրայ պիտի ելլեն ու մեռցընեն զանոնք : ի Եւ իմ
անուանս համար ամենուն ատելի պիտի ըլլաք .
բայց լ ով որ մինչև վերջը համբերէ, անիկայ պիտի
14 ապրի : խ Ու երբոր տեսնէք աւերմունքին պղծու-
թիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքովը ըսուած
է, թէ արժան չեղած տեղը կը կենայ . (ծ ով որ
կարդայ՝ թող հասկընայ .) ան ատենը կ Հրէաս-
15 տանի մէջ եղողները լեռները թող փախչին . Եւ

ե Մատ. իդ. 8 :
զ Մատ. ժ. 17, 18 : իդ. 9 : Յայտ. բ. 10 :
է Մատ. իդ. 14 :
ը Մատ. ժ. 19 : Ղու. ժբ. 11 : իա. 14 :
թ Գոր. բ. 4 : դ. 8, 31 :
ժ Միք. է. 6 : Մատ. ժ. 21 : իդ. 10 : Ղու. իա. 16 :
ի Մատ. իդ. 9 : Ղու. իա. 17 :
լ Դան. ժբ. 12 : Մատ. ժ. 22 : իդ. 13 : Յայտ. բ. 10 :
խ Մատ. իդ. 15 :
ծ Դան. թ. 27 :
կ Ղու. իա. 21 :

ան որ տանիքին վրայ է՝ թող տուն չիջնէ , ու
16 չմտնէ իր տունէն բան մը առնելու . Եւ ան որ
արտին մէջն է՝ թող ետ չդառնայ իր հանդերձը
17 առնելու : հ Բայց վայ ան օրերը յղի եղողներուն ու
18 ծիծ տուողներուն : Եւ աղօթք ըրէք որ ձեր փախ–
19 չիլը ձմեռը չըլլայ . ձ Քանզի ան օրերը անանկ նե–
ղութիւն պիտի ըլլայ , որուն նմանը Աստուծոյ
ստեղծած արարածոց սկիզբէն մինչև հիմա եղած
20 չէ , ո՛չ ալ պիտի ըլլայ : Եւ թէ որ Տէրը ան օրե–
րը չկարճեցընէր , բնաւ մէկ մարմին մը պիտի չազ–
րէր . բայց ընտրեալներուն համար որոնք ընտրեց ,
21 ան օրերը կարճեցուց : Եւ ղ Ան ատենը թէ որ
մէկը ձեզի ըսէ , Ահա հոս է Քրիստոսը՝ կամ ահա
22 հոն , մի՛ հաւատաք . Ինչու որ սուտ քրիստոսներ
և սուտ մարգարէներ պիտի ելլեն , ու նշաններ և
հրաշքներ պիտի ցուցընեն , որ եթէ կարելի էր՝
23 ընտրեալներն ալ մոլորցընեն : Իսկ ճ դուք զգո՛յշ
կեցէք , ահա առաջուց ըսի ձեզի ամէնը :
24 մ Բայց ան օրերը ան նեղութենէն ետև արեգա–
կը պիտի խաւարի , ու լուսինը իր լոյսը պիտի
25 չտայ , Եւ աստղերը երկինքէն պիտի թափթը–
փին , ու երկնից մէջի զօրութիւնները պիտի շար–
26 ժին : յ Եւ ան ատենը պիտի տեսնեն Որդին մար–
դոյ ամպերու մէջ եկած մեծ զօրութիւնով ու
27 փառքով : Եւ ան ատենը իր հրեշտակները պի–
տի ղրկէ , ու իր ընտրեալները պիտի ժողվէ չորս
հովերէն՝ երկրի ծայրէն մինչև երկինքի ծայրը :
28 ն Թզենիէն առակ մը սորվեցէք . որ երբ անոր ոս–
տերը կը կակուղնան ու տերևները կը ցցուին , գի–

հ Ղու . իա . 23 : իդ . 29 :
ձ Դան . Թ . 26 : ժբ . 1 : Յովել . բ . 2 : Մատ . իդ . 21 :
ղ Մատ . իդ . 23 : Ղու . ժէ . 23 : իա . 8 :
ճ բ Պետ . գ . 17 :
մ Դան . է . 10 : Սոփ . ա . 15 : Մատ . իդ . 29 : Ղու . իա . 25 :
յ Դան . է . 13 , 14 : Մատ . ժզ . 27 : իդ . 30 : Գլ . ժդ . 62 : Գործ . ա . 11 : ա Թես . դ . 15 : բ Թես . ա . 7 , 10 : Յայտ . ա . 7 :
ն Մատ . իդ . 32 : Ղու . իա . 29 :

29 տէք թէ ամառը մօտ է : Նոյնպէս ալ դուք երբ–
որ աս բաները եղած տեսնէք , գիտցէ՛ք որ մօտ է
30 դռներուն քովը : Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ աս
ազգը պիտի չանցնի , մինչև որ աս ամէն բաները
31 ըլլան : Երկինք ու երկիր պիտի անցնին , բայց
32 շ Իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին : Իսկ ան
օրուան ու ժամուն համար մէկը չգիտեր , ո՛չ եր–
կինքի մէջ եղող հրեշտակները և ո՛չ Որդին ,
33 հապա միայն Հայրը : ո Զգո՛յշ կեցէք , արթուն
մնացէք և աղօթք ըրէք , ինչու որ չէք գիտեր
34 ատենը երբ է . չ Ինչպէս օտար երկիր գացող
մարդ մը իր տունը կը թողու , ու իր ծառանե–
րուն իշխանութիւն կու տայ , և ամէն մէկուն իր
գործը , ու դռնապանին կ'ապսպրէ որ արթուն
35 կենայ . Ուրեմն պ արթուն կեցէք , ինչու որ չէք
գիտեր թէ երբ կու գայ տանուտէրը , իրիկունը՝
թէ կէս գիշերին՝ թէ հաւախօսին և թէ առ–
36 տուանց . Չըլլայ որ յանկարծակի գայ ու ձեզ
37 քունի մէջ գտնէ : Եւ ինչ որ կ'ըսեմ ձեզի , ա–
մենուն կ'ըսեմ , Արթուն կեցէք :

շ Ես . խ . 8 :
ո Մատ . իդ . 42 : իե . 13 : Ղու . ժբ . 40 : իա . 34 : Հռով . ժգ . 11 : ա Թես . ե . 6 :
չ Մատ . իդ . 45 : իե . 14 :
պ Մատ . իդ . 42 , 44 :

ԳԼ . ԺԴ

1 Հրէից դաւաճանութիւնը Քրիստոսի դէմ : 3 Կին մը անոր գլխուն վրայ կը թափէ շիշ մը պատուական եղ : 10 Յուդան իր Տէրը կը ծախէ ստակով : 18 Քրիստոս կը ծանուցանէ թէ իր աշակերտներէն մէկը զինքը պիտի մատնէ : 22 Զատիկը պատրաստելէն և ուտելէն ետև Քրիստոս հաղորդութեան խորհուրդը կը սահմանէ . 26 կը նախաձայնէ իր բոլոր աշակերտներուն ցրուիլը , և Պետրոսի ուրացութիւնը : 43 Յուդա համբուրելով կը մատնէ զՔրիստոս : 46 Քրիստոս պարտէզին մէջ կը բռնուի , 55 սուտ վկաներէն կ'ամբաստանուի , և ամբարիշտ վճռով կը դատապարտուի Հրէից ատեանէն : 65 Հրէայք անարգանօք կը չարչարեն զՔրիստոս : 66 Պետրոս երեք անգամ կ'ուրանայ իր Տէրը :

1 Նաեւ ա երկու օրէն ետք զատիկ ու բաղարջակերք
էր. եւ քահանայապետները ու դպիրները կը
փնտռէին թէ ինչպէս նենգութեամբ բռնեն զա-
2 նիկայ ու մեռցնեն: Բայց կ'ըսէին թէ Ո՛չ
տօնին ատենը, որ ժողովուրդին մէջ խռովութիւն
չըլլայ:
3 բ Ու երբոր ինքը Բեթանիա էր բորոտ Սիմոնին
տունը սեղան նստած, կնիկ մը եկաւ՝ որ շիշ մը
պատուական սուղ նարդոսի եղ ունէր, եւ կոտրեց
4 այն շիշը ու անոր գլխուն վրայ թափեց: Նաեւ կային
ոմանք որ կը դժուարէին ու կ'ըսէին, Ինչո՞ւ հա-
5 մար եղաւ այս եղին կորուստը. Քանզի աս [եղը]
երեք հարիւր դահեկանէն աւելի կրնար ծախուիլ
ու աղքատներուն տրուիլ. եւ սաստիկ կը յանդի-
6 մանէին զանիկայ: Բայց Յիսուս ըսաւ, Թո՛ղ
տուէք ատոր, ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք ատիկայ.
7 բարի գործ մը գործեց ինծի: գ Ինչու որ աղքատ-
ները ամէն ատեն ձեր հետը ունիք, ու երբոր ու-
զէք՝ կրնաք անոնց բարիք ընել, բայց զիս ամէն
8 ատեն չունիք: Անիկայ ինչ որ ունէր՝ ըրաւ.
առաջուց իմ մարմինս օծեց իմ թաղմանս համար.
9 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ բոլոր աշխարհի մէջ՝
ուր որ աս աւետարանս քարոզուի, ատոր ըրածն
ալ պիտի խօսուի իրեն յիշատակ ըլլալու համար:
10 դ Նաեւ Յուդա Իսկարիովտացին տասնեւերկուքէն
մէկը գնաց քահանայապետներուն, որ զանիկայ
11 մատնէ անոնց: Անոնք ալ լսելով ուրախացան,
ու իրեն ստակ տալ խոստացան. եւ կը փնտռէր
թէ ինչպէս պատեհութիւնով մը մատնէ զանի-
կայ:
12 ե Նաեւ բաղարջակերաց առջի օրը՝ որ զատիկը կը

ա Մատ. իզ. 2: Ղու. իբ. 1: Յօհ. ժա. 55: ժբ. 1:
բ Մատ. իզ. 6: Յօհ. ժբ. 1, 3: Տես Ղու. է. 37:
գ բ Օր. ժե. 11:
դ Մատ. իզ. 14: Ղու. իբ. 3, 4:
ե Մատ. իզ. 17: Ղու. իբ. 7:

մորթէին, անոր աշակերտները ըսին իրեն, Ո՞ւր
կ'ուզես երթանք պատրաստենք՝ որ զատիկը ուտես:
13 Նաեւ իր աշակերտներէն երկուքը խրկեց ու ըսաւ
անոնց, Գացէ՛ք քաղաքը, ու ձեզի մարդ մը պի-
տի պատահի, որ ուսին վրայ ջուրի սափոր մը կը
14 տանի, գացէ՛ք անոր ետեւէն. Նաեւ ուր որ մտնէ,
տանը տիրոջը ըսէ՛ք, Վարդապետը կ'ըսէ, Ո՞ւր
է օթեւանը՝ որ հոն աշակերտներուս հետ մէկտեղ
15 զատիկը ուտեմ: Նա ալ ձեզի յարդարուած ու
պատրաստ մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ. հոն
16 պատրաստեցէ՛ք մեզի: Նաեւ իր աշակերտները
գացին ու քաղաքը մտան, եւ ինչպէս որ իրենց
ըսաւ՝ այնպէս գտան, եւ զատիկը պատրաստեցին:
17 զ Ու երբոր իրիկուն եղաւ՝ տասնեւերկուքին հետ
18 մէկտեղ եկաւ: Ու երբոր սեղան նստան ու կ'ու-
տէին, ըսաւ Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի
որ ձեզմէ մէկը որ հիմա իմ հետս կ'ուտէ, զիս պի-
19 տի մատնէ: Նաեւ անոնք սկսան տրտմիլ, ու
մէկիկ մէկիկ ըսել անոր, Միթէ ե՞ս եմ,
20 և ուրիշ մը՝ Միթէ ե՞ս եմ: Անիկայ պա-
տասխան տուաւ ու ըսաւ անոնց, Նա տա-
սնեւերկուքէդ մէկը՝ որ ինծի հետ իր ձեռքը պնակը
21 խօթեց: Յիրաւի է Որդին մարդոյ կ'երթայ՝
ինչպէս որ գրուած է իրեն համար, բայց վա՜յ այն
մարդուն՝ որուն ձեռքովը Որդին մարդոյ կը մատ-
նուի. աղէկ էր այն մարդուն որ ծնած չըլլար:
22 ը Նաեւ քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց
առաւ՝ օրհնեց ու կոտրեց, եւ տուաւ անոնց ու
23 ըսաւ, *Առէ՛ք, աս է իմ մարմինս: Նաեւ գաւա-
թը առաւ՝ գոհացաւ, ու տուաւ անոնց, եւ ա-
24 մէնքն ալ խմեցին անկէ: Ու ըսաւ անոնց,
Անիկայ է իմ արիւնս նոր ուխտի, որ շատերու-

զ Մատ. իզ. 20:
է Մատ. իզ. 24: Ղու. իբ. 22:
ը Մատ. իզ. 26: Ղու. իբ. 19: Ա Կոր. ժա. 23:
* Յուն.՝ Առէ՛ք կերէ՛ք:

25 համար կը թափուի ։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի,
Ասկէ ետեւ որթին բերքէն բնաւ պիտի չխմեմ
մինչեւ այն օրը՝ երբոր անիկայ նոր խմեմ Աստուծոյ
թագաւորութեանը մէջ ։
26 է Եւ օրհնութիւն մը երգելէն ետեւ Ձիթենեաց
27 լեռը ելան ։ ը Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ամէնքդ
ալ այս գիշեր իմ վրայովս պիտի գայթակղիք ․
ինչու որ գրուած է թէ թ Հովիւը պիտի զարնեմ,
28 ու ոչխարները պիտի ցրուին ։ Բայց և յարու-
թիւն առնելէս ետեւ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի
29 երթամ ։ ի Իսկ Պետրոս ըսաւ անոր, Թէպէտ
30 ամէնքն ալ գայթակղին, բայց ոչ թէ ես ։ Եւ
Յիսուս ըսաւ անոր, Ճշմարիտ կ՚ըսեմ քեզի,
որ դուն ալ այս գիշեր դեռ հաւը երկու անգամ
չխօսած, երեք անգամ զիս պիտի ուրանաս ։
31 Բայց Պետրոս աւելի կը պնդէր ու կ՚ըսէր, Թէև
քեզի հետ մեռնիլ պէտք ըլլայ ինծի, բնաւ քեզ
պիտի չուրանամ ․ նոյնպէս կ՚ըսէին ամէնքն ալ ։
32 լ Եկան այն տեղը՝ որուն անունը Գեթսեմանի
էր, ու ըսաւ իր աշակերտներուն, Հոս նստեցէք՝
33 մինչեւ որ ես աղօթք ընեմ ։ Եւ իր հետը առնելով
Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, սկսաւ
34 խռովիլ և վշտանալ ։ Ան ատենը ըսաւ անոնց, խ Իմ
անձս մեռնելու չափ տրտում է ․ հոս կեցէք և
35 արթուն մնացէք ։ Ու քիչ մը առաջ երթալով,
իր երեսին վրայ գետինը ինկաւ և աղօթք ըրաւ,
36 որ եթէ կարելի է՝ այն ժամը իրմէ անցնի ։ Եւ
ըսաւ, ծ Աբբա Հայր, կ ամէն բան քեզի հնարաւոր
է, աս գաւաթը ինծմէ անցուր ․ հ բայց ոչ թէ

է Մատ․ իզ․ 30 ։
ը Մատ․ իզ․ 31 ։
թ Զաք․ ժգ․ 7 ։
ժ Գլ․ ժզ․ 7 ։
ի Մատ․ իզ․ 33, 34 ։ Ղու․ իբ․ 33, 34 ։ Յով․ ժգ․ 37, 38 ։
լ Մատ․ իզ․ 36 ։ Ղու․ իբ․ 39 ։ Յով․ ժը․ 1 ։
խ Յով․ ժբ․ 27 ։
ծ Հռով․ ը․ 15 ։ Գաղ․ դ․ 6 ։
կ Եբր․ ե․ 7 ։
հ Յով․ ե․ 30 ։ զ․ 38 ։

ինչպէս որ ես կ՚ուզեմ, հապա ինչպէս որ դուն
37 կ՚ուզես ։ Եւ եկաւ ու զանոնք քնացած գտաւ,
և ըսաւ Պետրոսին, Սիմո՛ն՝ կը քնանա՞ս ․ չկրցա՞ր
38 ժամ մը արթուն կենալ ։ Արթո՛ւն կեցէք և
աղօթք ըրէք, որ փորձութեան մէջ չմտնէք ․
39 ձ Հոգին յօժար է, բայց մարմինը տկար ։ Եւ
նորէն գնաց աղօթք ըրաւ, նոյն խօսքը ըսելով ։
40 Եւ դարձաւ ու զանոնք նորէն քնացած գտաւ,
ինչու որ աչքերնին ծանրացած էր, և չէին գիտեր
41 թէ ինչ պատասխան տան անոր ։ Երրորդ ան-
գամ ալ եկաւ ու ըսաւ անոնց, Ասկէ ետեւ քնա-
ցէք ու հանգչեցէք ․ բաւական է, ղ ժամը հա-
սաւ ․ ահա Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը
42 կը մատնուի ։ ճ Ելէք երթանք, ահա մօտեցաւ
անիկայ որ զիս պիտի մատնէ ։
43 մ Եւ դեռ անիկայ աս որ կը խօսէր, իս-
կոյն Յուդա՝ տասուերկուքէն մէկը եկաւ, և
իր հետը քահանայապետներուն և դպիրներուն ու
ծերերուն կողմէն շատ բազմութիւն սուրերով ու
44 բիրերով ։ Եւ զանիկայ մատնողը անոնց նշան մը
տուեր էր՝ ըսելով, Ո՛վ որ ես համբուրեմ՝ ան է,
45 բռնեցէք անիկայ և զգուշութեամբ տարէք ։ Ու
անիկայ գալով շուտ մը մօտեցաւ անոր և ըսաւ,
46 Ռաբբի՛ Ռաբբի, ու համբուրեց զանիկայ ։ Եւ
անոնք ձեռք զարկին անոր ու բռնեցին զանի-
47 կայ ։ Եւ քովը կայնողներէն մէկը սուրը քաշեց
ու զարկաւ քահանայապետին ծառային, ու ա-
48 նոր ականջը մէկդի հանեց ։ Եւ Յիսուս պա-
տասխան տալով ըսաւ անոնց, յ Իբր թէ աւազա-
կի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով զիս բռնե-

ձ Հռով․ է․ 22, 23 ։ Գաղ․ ե․ 17 ։
ղ Յով․ ժգ․ 1 ։
ճ Մատ․ իզ․ 46 ։ Յով․ ժը․ 1, 2 ։
մ Մատ․ իզ․ 47 ։ Ղու․ իբ․ 47 ։ Յով․ ժը․ 3 ։
յ Մատ․ իզ․ 55 ։ Ղու․ իբ․ 52 ։

49 լու . Ամէն օր ձեր քովն էի ու տաճարին մէջ կը
սորվեցընէի , և զիս չբռնեցիք . բայց որպէս զի
50 ա գիրքերը կատարուին : բ Ան ատենը բոլոր
աշակերտները թողուցին զանիկայ ու փախան :
51 Եւ մէկ երիտասարդ մը անոր ետևէն կ'երթար՝
մերկ մարմնին վրայ կտաւ մը առած , ու երիտա-
52 սարդները զանիկայ բռնեցին . Ան ալ կտաւը
թողուց ու մերկ փախաւ անոնցմէ :
53 գ Եւ տարին Յիսուսը քահանայապետին , ու
անոր քովը ժողվուեցան բոլոր քահանայապետնե-
54 րը և ծերերը ու դպիրները : Եւ Պետրոս հե-
ռուանց անոր ետևէն գնաց մինչև ներսը քահա-
նայապետին գաւիթը , և սպասաւորներուն հետ
55 նստաւ , ու կրակին քովը կը տաքնար : Իսկ
քահանայապետները ու բոլոր ժողովքը Յիսու-
սի դէմ վկայութիւն կը փնտռէին որ զանիկայ
56 մեռցընեն , և չէին գտներ . Ինչու որ շատերը
սուտ վկայութիւն կը վկայէին անոր դէմ , ու վը-
57 կայութիւնները իրարու համաձայն չէին : Եւ
ոմանք ելան սուտ վկայութիւն կ'ընէին անոր դէմ
58 ու կ'ըսէին թէ Մենք լսեցինք ատիկէ որ կ'ըսէր ,
ե Ես այս ձեռագործ տաճարը պիտի քակեմ , և
իրեք օրուան մէջ ուրիշ մը պիտի շինեմ առանց
59 ձեռագործի : Բայց անանկ ալ իրենց վկայու-
60 թիւնը համաձայն չէր : Եւ զ քահանայապետը
մէջտեղը ոտք ելլելով , հարցուց Յիսուսին ու
ըսաւ , Պատասխան մը չե՞ս տար . ի՞նչ կը
61 վկայեն ասոնք քեզի դէմ : Բայց է անիկայ լռու
կը կենար և պատասխան մը չէր տար . ը քահա-
նայապետը նորէն կը հարցընէր անոր ու կ'ըսէր ,
Դո՞ւն ես Քրիստոսը՝ օրհնեալ Աստուծոյ Որդին :

ա Սաղ. իբ. 6 : Եսա. ծգ. 7, ը : Ղու. իբ. 37 : իդ. 44 :
բ Սաղ. ձր. 8 : Հմր 27 :
գ Մատ. իզ. 57 : Ղու. իբ. 54 : Յօհ. ժը. 13 :
դ Մատ. իզ. 59 :
ե Գծ. ժե. 29 : Յօհ. բ. 19 :
զ Մատ. իզ. 62 :
է Եսա. ծգ. 7 :
ը Մատ. իզ. 63 :

62 Եւ Յիսուս ըսաւ , Ես եմ . ու թ պիտի տեսնէք
Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը նստած , ու
63 երկնից ամպերովը եկած : Եւ քահանայապետը
իր հանդերձները պատռեց ու ըսաւ , Ալ ի՞նչ
64 պէտք է մեզի վկաներ : Լսեցիք հայհոյութիւնը ը-
սեցիք . ձեզի ի՞նչպէս կ'երևնայ . և ամէնքը դա-
տապարտեցին զանիկայ թէ մահապարտ է :
65 ժ Եւ ոմանք սկսան թքնել անոր . ու երեսը
ծածկել և բռունցքով ծեծել ու ըսել , Մար-
գարէացիր . ու սպասաւորները ապտակ կը զար-
նէին անոր :
66 Եւ Պետրոս վարը գաւիթն էր , ու քահանայա-
67 պետին աղախիններէն մէկը եկաւ , Ու տեսնելով
Պետրոսը որ կը տաքնար , նայեցաւ անոր ու ը-
սաւ , Դուն ալ Յիսուս Նազովրեցիին հետն էիր :
68 Բայց անիկայ ուրացաւ ու ըսաւ , Չեմ գիտեր և
չեմ հասկընար թէ դուն ի՞նչ կը խօսիս . ու երբոր
դուրս ելաւ գաւիթին դրանը առջևը , հաւը խօսե-
69 ցաւ : Եւ ի աղախինը նորէն տեսաւ զանիկայ , ու
սկսաւ բոլորտիքը կայնողներուն ըսել թէ Աս ալ
70 անոնցմէ է . Եւ անիկայ նորէն ուրացաւ : լ Ու
քիչ մը ատենէն ետքը՝ նորէն բոլորտիքը կայնող-
ները ըսին Պետրոսին , Յիրաւի դուն անոնցմէ
ես , խ Ինչու որ Գալիլեացի ես , և քու զրուցուած-
71 քդ ալ նման է անոր : Բայց անիկայ սկսաւ ա-
նիծել ու երդում ընել՝ ըսելով թէ Ես այն մար-
դը չեմ ճանչնար , որուն համար դուք կ'ըսէք :
72 ծ Եւ իսկոյն երկրորդ անգամ հաւը խօսեցաւ . ու
Պետրոս միտք բերաւ այն խօսքը՝ որ Յիսուս իրեն
ըսեր էր թէ , Դեռ հաւը երկու անգամ չխօսած՝

թ Մատ. իդ. 30 : իզ. 64 : Ղու. իբ. 69 :
ժ Մատ. իզ. 58, 69 : Ղու. իբ. 55 : Յօհ. ժը. 16 :
ի Մատ. իզ. 71 : Ղու. իբ. 58 : Յօհ. ժը. 25 :
լ Մատ. իզ. 73 : Ղու. իբ. 59 : Յօհ. ժը. 26 :
խ Գոր. բ. 7 :
ծ Մատ. իզ. 75 :

ղուն երեք անգամ՝ պիտի ուրանաս զիս․ ու սկսաւ լալ ։

ԳԼ․ ԺԵ

1 Յիսուս կապուած կը տարուի Պիղատոսին առջեւ և կ՚ամբաստանուի ։ 15 Պիղատոս ժողովուրդին մեծ աղաղակին նայելով՝ մարդասպան Բարաբբան կ՚արձակէ, և Յիսուսը ձեռք կու տայ որ խաչուի ։ 17 Փուշերէ պսակ մը կը դնեն Յիսուսի գլուխը․ 19 անոր երեսը կը թքնեն և զանիկայ ծաղր կ՚ընեն․ 27 խաչը կը հանեն երկու չարագործներուն մէջտեղը․ 29 Հրէայք սաստիկ նախատինքներ կու տան անոր ։ 39 բայց հարիւրապետը կը խոստովանի թէ անիկայ Աստուծոյ Որդին է ։ 43 Յովսէփ պատուով կը թաղէ զՅիսուս ։

1 Եւ [ա] առաւօտանց շուտ մը քահանայապետները
ծերերուն ու դպիրներուն հետ՝ և բոլոր ժո-
ղովքն ալ խորհուրդ ըրին, Յիսուսը կապեցին
2 ու տարին մատնեցին Պիղատոսին ։ Եւ [բ] Պիղա-
տոս հարցուց անոր ու ըսաւ, Դո՞ւն ես Հրէից
Թագաւորը․ անիկայ ալ պատասխան տալով ը-
3 սաւ անոր, Դուն կ՚ըսես ։ Եւ քահանայապետ-
ները շատ ամբաստանութիւն կ՚ընէին անոր վրա-
4 յով ։ [գ] Ու Պիղատոս նորէն հարցուց անոր ըսե-
լով, Պատասխան մը չե՞ս տար․ նայէ ո՛րչափ
5 քեզի դէմ կը վկայեն ։ [դ] Եւ Յիսուս տակաւին
պատասխան մը չտուաւ, մինչև որ Պիղատոս զար-
մացաւ ։
6 Բայց [ե] տօնին ատենը կապուած մը կ՚արձակէր
7 անոնց, ո՛րը որ իրենք ուզէին ։ Եւ մէկը կար Բա-
րաբբա անուանով իր ընկեր խռովարարներուն հե-
տը կապուած, որոնք խռովութեան ատենը մար-
8 դասպանութիւն ըրեր էին ։ Եւ ժողովուրդը աղա-
ղակելով սկսաւ խնդրել որ ընէ ինչպէս որ միշտ
9 կ՚ընէր իրենց ։ Եւ Պիղատոս անոնց պատասխան

[ա] Սաղ․ բ․ 2 ։ Մատ․ իէ․ 1 ։ Ղու․ իբ․ 66 ։ իգ․ 1 ։ Յոհ․ ժը․ 28 ։ Գոր․ գ․ 13 ։ դ․ 26 ։
[բ] Մատ․ իէ․ 11 ։
[գ] Մատ․ իէ․ 13 ։
[դ] Եսա․ ծգ․ 7 ։ Յոհ․ ժթ․ 9 ։
[ե] Մատ․ իէ․ 15 ։ Ղու․ իգ․ 17 ։ Յոհ․ ժը․ 39 ։

տուաւ ու ըսաւ, Կ՚ուզէ՞ք որ Հրէից Թագաւորը
10 արձակեմ ձեզի ։ Քանզի գիտէր որ քահանայա-
պետները նախանձի համար մատներ էին զանիկայ ։
11 [է] Բայց քահանայապետները ժողովուրդը գրգռե-
ցին որ խնդրեն յաւէտ Բարաբբան իրենց արձա-
12 կել ։ Նորէն Պիղատոս պատասխան տուաւ ու
ըսաւ անոնց, Հապա Հրէից Թագաւոր ըսած-
13 նիդ ի՞նչ կ՚ուզէք որ ընեմ ։ Եւ անոնք նորէն
14 կ՚աղաղակէին, Խաչը հանէ զանիկայ ։ Պիղատոս
ըսաւ անոնց, Բայց ի՞նչ չար գործ ըրած է անի-
կայ․ և անոնք՝ ալ աւելի կ՚աղաղակէին ու կ՚ըսէ-
15 ին, Խաչը հանէ զանիկայ ։ Եւ [ը] Պիղատոս ժո-
ղովուրդը գոհ ընել ուզելով՝ Բարաբբան արձա-
կեց անոնց, ու Յիսուսը ծեծելով՝ ձեռք տուաւ որ
խաչուի ։
16 [թ] Եւ զինուորները ներս տարին զանիկայ գաւի-
թը՝ այսինքն պալատը, և բոլոր գունդը մէկտեղ
17 կանչեցին․ Ու հագցուցին անոր ծիրանիներ, և
18 փշեղէն պսակ հիւսելով՝ անոր գլուխը դրին․ Ու
սկսան բարեւ տալ անոր ու ըսել, Ողջո՜յն քեզ՝
19 Հրէից Թագաւոր ։ Եւ անոր գլուխը եղէգով
կը ծեծէին ու կը թքնէին անոր, և ծնկան վրայ
20 գալով երկրպագութիւն կ՚ընէին անոր ։ Ու
երբոր ծաղր ըրին զանիկայ, ծիրանիները վրայէն
հանեցին և իր հանդերձները հագցուցին անոր,
ու դուրս հանեցին զանիկայ՝ որ խաչը հանեն ։
21 [ժ] Եւ Սիմոն Կիւրենացին՝ Աղեքսանդրոսին և
Ռուփոսին հայրը, որ անկէ կ՚անցնէր արտէն
եկած, պահակ բռնեցին որ անոր խաչը վերցնէ ։
22 [ի] Ու տարին անիկայ Գողգոթա ըսուած տեղը,
23 (որ կը թարգմանուի Գանկի տեղ․) [լ] Եւ անոր

[է] Մատ․ իէ․ 20 ։ Գոր․ գ․ 14 ։
[ը] Մատ․ իէ․ 26 ։ Յոհ․ ժթ․ 1, 16 ։
[թ] Մատ․ իէ․ 27 ։
[ժ] Մատ․ իէ․ 32 ։ Ղու․ իգ․ 26 ։
[ի] Մատ․ իէ․ 33 ։ Ղու․ իգ․ 33 ։ Յոհ․ ժթ․ 17 ։
[լ] Մատ․ իէ․ 34 ։

զմուռսով խառնուած գինի տուին որ խմէ, բայց
24 ինք չառաւ։ Ու խաչը հանեցին զանիկայ, [ա] Եւ
անոր հանդերձները բաժնեցին, անոնց վրայ վիճակ
25 ձգելով թէ ով ինչ պիտի առնէ։ [բ] Ժամը
26 իրեքն էր, ու խաչը հանեցին անիկայ։ Եւ [գ] ա-
նոր յանցանքի գիրը գրուած էր Իբր Հրէից Թա-
27 գաւորն է։ Ու [դ] անոր հետ երկու աւազակ խաչը
հանեցին, մէկը անոր աջ կողմէն ու մէկը ձախ
28 կողմէն։ Եւ կատարուեցաւ ան գիրը որ կ'ըսէ
29 թէ [ե] Անօրէններուն հետ սեպուեցաւ։ [զ] Եւ ա-
նոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր, գլուխնին
կը շարժէին ու կ'ըսէին, Վա՜շ [է] դու որ տաճարը կը
30 քակէիր, և իրեք օրուան մէջ կը շինէիր, Ինք-
31 զինքդ ազատէ՛ ու իջի՛ր ատ խաչէդ։ Նոյնպէս
ալ քահանայապետները դպիրներուն հետ իրենց
մէջը ծաղր ընելով կ'ըսէին, Ուրիշները ազատեց,
32 ինքզինքը չկրնար ազատել։ Ան Քրիստոսը Իս-
րայէլի Թագաւորը թող հիմա խաչէն վար իջնէ,
որ տեսնենք ու հաւատանք. և [ը] իր հետը խաչը
ելողները կը նախատէին զանիկայ։
33 Ու [թ] վեցերորդ ժամը հասածին պէս, բոլոր
երկրին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը։
34 Եւ իններորդ ժամուն Յիսուս մեծ ձայնով աղաղա-
կեց ու ըսաւ, [ժ] Էլօի Էլօի լամա սաբաքթանի. որ
կը թարգմանուի, Աստուած իմ, Աստուած իմ,
35 ինչո՞ւ զիս թողուցիր։ Եւ քովը կայնողներէն ոմանք
36 երբոր լսեցին՝ կ'ըսէին թէ Եղիան կը կանչէ։ Ու
[ի] մէկը վազեց սպունգ մը քացախով լեցուց, ու

[ա] Սաղ. իբ. 18։ Ղու. իգ. 34։ Յօհ. ժթ. 23։
[բ] Տես Մատ. իէ. 45։ Ղու. իգ. 44։ Յօհ. ժթ. 14։
[գ] Մատ. իէ. 37։ Յօհ. ժթ. 19։
[դ] Մատ. իէ. 38։
[ե] Ես. ծգ. 12։ Ղու. իբ. 37։
[զ] Սաղ. իբ. 7։
[է] Գլ. ժդ. 58։ Յօհ. բ. 19։
[ը] Մատ. իէ. 44։ Ղու. իգ. 39։
[թ] Մատ. իէ. 45։ Ղու. իգ. 44։
[ժ] Սաղ. իբ. 1։ Մատ. իէ. 46։
[ի] Մատ. իէ. 48։ Յօհ. ժթ. 29։

եղէգի մը անցընելով՝ [լ] տուաւ անոր որ խմէ, և
ըսաւ, Թո՛ղ տուր տեսնենք թէ Եղիան կու գա՞յ
անիկայ վար իջեցընելու։
37 [խ] Եւ Յիսուս մեծ ձայն մը հանեց ու հոգի
38 տուաւ։ Ու [ծ] տաճարին վարագոյրը երկուքի
39 պատռեցաւ վերէն 'ի վար։ Եւ [կ] հարիւրապետը
որ անոր դիմացը կեցեր էր, տեսնելով որ այսպէս
աղաղակելով հոգի տուաւ, ըսաւ, Յիրաւի Որդի
40 Աստուծոյ էր աս մարդը։ [հ] Կնիկներ ալ կային
որ [ձ] հեռուանց կը նայէին, որոնց մէջն էր Մա-
րիամ Մագդաղենացին և պզտիկ Յակոբոսին
ու Յովսէսին մայրը Մարիամ, և Սողոմէ.
41 Որոնք՝ երբոր Յիսուս Գալիլեա էր, [ղ] իր ետևէն
կ'երթային և իրեն սպասաւորութիւն կ'ընէին.
և ուրիշ շատ կնիկներ ալ՝ որ իր հետը Երուսա-
ղէմ ելեր էին։
42 [ճ] Ու երբոր իրիկուն եղաւ, ան օրը ուրբաթ՝
43 այսինքն շաբաթին առջի օրը ըլլալով, Յովսէփ
Արիմաթացի երևելի խորհրդական մը՝ որ ինքն ալ
[մ] Աստուծոյ թագաւորութեանը կը սպասէր, եկաւ
ու համարձակութիւն ընելով՝ Պիղատոսին քովը
44 մտաւ, և Յիսուսին մարմինը խնդրեց։ Ու Պի-
ղատոս զարմացաւ որ արդէն մեռած ըլլայ. և
հարիւրապետը իրեն կանչելով՝ հարցուց անոր թէ
45 Շա՞տ ատեն է որ մեռաւ։ Ու երբոր ստոյգը
իմացաւ հարիւրապետէն, մարմինը Յովսէփին
46 շնորհեց։ [յ] Եւ Յովսէփ կտաւ գնեց, ու զանիկայ

[լ] Սաղ. կթ. 21։
[խ] Մատ. իէ. 50։ Ղու. իգ. 46։ Յօհ. ժթ. 30։
[ծ] Մատ. իէ. 51։ Ղու. իգ. 45։
[կ] Մատ. իէ. 54։ Ղու. իգ. 47։
[հ] Մատ. իէ. 55։ Ղու. իգ. 49։
[ձ] Սաղ. լը. 11։
[ղ] Ղու. ը. 2, 3։
[ճ] Մատ. իէ. 57։ Ղու. իգ. 50։ Յօհ. ժթ. 38։
[մ] Ղու. բ. 25, 38։
[յ] Մատ. իէ. 59, 60։ Ղու. իգ. 53։ Յօհ. ժթ. 40։

վար իջեցնելով՝ կտաւով փաթթեց, ու դրաւ
գերեզմանի մէջ՝ որ քարէ փորուած էր. և քար մը
47 գլորեց գերեզմանին դուռը ։ Իսկ Մարիամ
Մագդաղենացին ու Յովսէսին մայրը Մարիամ
տեսան ան տեղը ուր որ դրուեցաւ ։

ԳԼ. ԺԶ.

1 Հրեշտակ մը Քրիստոսի յարութիւնն աւետը կ'աւետէ երեք կիներու ։ 9 Քրիստոս կ'երևնայ Մարիամ Մագդաղենացիին, 12 արտը գացող երկու աշակերտներուն, 14 նոքը առաքեալներուն, 15 որոնք կը ղրկէ աւետարանը քարոզելու ։ 19 Քրիստոս երկինքը կը համբառնայ ։

1 Ու [ա]երբոր շաբաթը անցաւ, Մարիամ Մագ-
դաղենացին և Յակոբոսին մայրը Մարիամ և
Սողոմէ [բ]խունկեր ծախու առին, որ գան օծեն
2 անիկայ ։ [գ]Ու մէկշաբթի առտուանց շատ կա-
3 նուխ՝ արևը որ կը ծագէր՝ եկան գերեզմանը, Ու
իրարու կ'ըսէին, Քարը ո՞վ պիտի գլորէ մեզի
4 գերեզմանին դռնէն, (Ու նայեցան տեսան
որ քարը գլորուած էր,) ինչու որ շատ մեծ
5 էր ։ [դ]Ու ներս գերեզմանը մտնելով՝ երիտասարդ
մը տեսան որ աջ կողմը նստեր էր ճերմակ պատմու-
6 ճան հագած, ու զարհուրեցան ։ [ե]Ու անիկայ
ըսաւ անոնց, Մի՛ զարհուրիք. Յիսուս Նազովրե-
ցին կը փնտռէք, որ խաչուեցաւ. անիկայ յարու-
թիւն առաւ, հոս չէ. ահա՛ ան տեղը ուր որ դրին
7 զանիկայ ։ Բայց գացէ՛ք՝ ըսէք անոր աշակերտնե-
րուն և Պետրոսին, թէ ահա ձեզմէ առաջ Գալի-
լեա կ'երթայ, հոն պիտի տեսնէք զանիկայ՝ [զ]ինչպէս
8 որ ձեզի ըսաւ ։ Ու անոնք դողով ու ապշութեամբ
բռնուած՝ ելան ու փախան գերեզմանէն, [է]և մէկու
մը բան չըսին, քանզի կը վախնային ։
9 Յիսուս մէկշաբթի առտուանց յարութիւն առած՝

[ա] Մատ. իը. 1 ։ Ղու. իդ. 1 ։ Յոհ. ի. 1 ։
[բ] Ղու. իգ. 56 ։
[գ] Ղու. իդ. 1 ։ Յոհ. ի. 1 ։
[դ] Ղու. իդ. 3 ։ Յոհ. ի. 11, 12 ։
[ե] Մատ. իը. 5, 6, 7 ։
[զ] Մատ. իզ. 32 ։ Գլ. ժդ. 28 ։
[է] Տես Մատ. իը. 8 ։ Ղու. իդ. 9 ։

առաջ [ը]Մարիամ Մագդաղենացիին երևցաւ,
10 [թ]որմէ եօթը դև հաներ էր ։ [ժ]Անիկայ գնաց անոնց
պատմեց որոնք անոր հետ էին, երբոր սուգ կ'ը-
11 նէին ու կու լային ։ [ի]Իսկ անոնք երբոր լսեցին թէ
կենդանի է և թէ իրեն երևցաւ, չհաւատացին ։
12 Ետքը ուրիշ կերպարանքով [լ]երևցաւ անոնցմէ
13 երկուքին՝ որ քալելով արտը կ'երթային ։ Ու
անոնք գացին ուրիշներուն պատմեցին. ու անոնց
ալ չհաւատացին ։
14 [խ]Վերջը տասնըմէկին երևցաւ, երբոր սեղան
նստած էին, ու երեսնին զարկաւ իրենց անհաւա-
տութիւնը և սրտերնուն կարծրութիւնը, վասն զի
որոնց որ զինքը երևցաւ մեռելներէն յարութիւն
առած, անոնք չհաւատացին ։
15 [ծ]Ու ըսաւ անոնց, Գացէ՛ք բոլոր աշխարհ, ու
[կ]աւետարանը քարոզեցէ՛ք բոլոր ստեղծուածնե-
16 րուն ։ [հ]Ան որ հաւատայ ու մկրտուի, պիտի
փրկուի, [ձ]և ան որ չհաւատայ, պիտի դատապար-
17 տուի ։ Ու անոնք որ կը հաւատան, աս նշանները
անոնց հետ պիտի երթան. [ղ]Իմ անունովս դևեր
18 պիտի հանեն, [ճ]նոր լեզուներ պիտի խօսին. [մ]Օձե-
րը ձեռքերնին պիտի բռնեն, և թէ որ մահաբեր
դեղ մը խմեն, իրենց պիտի չվնասէ. [յ]հիւանդնե-
րու վրայ ձեռք պիտի դնեն, ու անոնք պիտի ա-
ռողջանան ։
19 Արդ [ն]Տէրը անոնց հետ խօսելէն ետքը [շ]երկին-

[ը] Յոհ. ի. 14 ։
[թ] Ղու. ը. 2 ։
[ժ] Ղու. իդ. 10 ։ Յոհ. ի. 18 ։
[ի] Ղու. իդ. 11 ։
[լ] Ղու. իդ. 13 ։
[խ] Ղու. իդ. 36 ։ Յոհ. ի. 19 ։ ա Կոր. ժե. 5 ։
[ծ] Մատ. իը. 19 ։ Յոհ. ժե. 16 ։
[կ] Կող. ա. 23 ։
[հ] Յոհ. գ. 18, 36 ։ Գործ. բ. 38 ։ ժզ. 30, 31, 32 ։ Հռով. ժ. 9 ։ ա Պետ. գ. 21 ։
[ձ] Յոհ. ժբ. 48 ։
[ղ] Ղու. ժ. 17 ։ Գործ. ե. 16 ։ ը. 7 ։ ժզ. 18 ։ ժթ. 12 ։
[ճ] Գործ. բ. 4 ։ ժ. 46 ։ ժթ. 6 ։ ա Կոր. ժբ. 10, 28 ։
[մ] Ղու. ժ. 19 ։ Գործ. իը. 5 ։
[յ] Գործ. ե. 15, 16 ։ թ. 17 ։ իը. 8 ։ Յակ. ե. 14, 15 ։
[ն] Գործ. ա. 2, 3 ։
[շ] Ղու. իդ. 51 ։

քը համբարձաւ, ու Աստուծոյ ᵃաջ կողմը նստաւ:
20 Իսկ անոնք ելան ու ամէն տեղ կը քարոզէին, և
Տէրը անոնց գործակից էր, ᵇու խօսքը կը հաստա-
տէր ան նշաններով որ անոնց հետը կ'երթային:

ա Սաղ. ճժ. 1: Գոր. է. 55:
բ Գոր. ե. 12: ժդ. 3: Ա Կոր. բ. 4, 5: Եբր. բ. 4:

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Ղուկասու աւետարանին յառաջաբանութիւնը: 5 Եղիսաբեթին 26 ու կոյս Մարիամին յղութիւնը: 39 Եղիսաբեթին և Մարիամին մարգարէութիւնը Քրիստոսի վրայով: 57 Յովհաննէս մկրտչին ծնունդը և թլփատութիւնը: 67 Զաքարիայի մարգարէութիւնը Քրիստոսի 76 և Յովհաննէսին վրայով:

1 Որովհետեւ շատերը մեր մէջը հաստատ գիտցուած
բաներուն վրայով եղած պատմութիւնը կարգի
2 դնելու ձեռք զարկին, ᵃԻնչպէս որ սկիզբէն աչ-
քով տեսնողները և խօսքին սպասաւոր եղողները
3 ᵇաւանդեցին մեզի, ᶜԻս ալ որ սկիզբէն ան
ամէն բաներուն ճշդութեամբ տեղեկացեր էի,
յարմար դատեցի ᵈկարգաւ գրել քեզի ᵉո՛վ
4 պատուական Թէոփիլոս, ᶻՈր սորված բաներուդ
ստուգութիւնը իմանաս:
5 ᵉՀրէաստանի Հերովդէս թագաւորին օրերը
ᵉԱբիայի դասակարգութենէն Զաքարիա անու-

ա Եբր. բ. 3: Ա Պետ. ե. 1: Բ Պետ. ա. 16: Ա Յով. ա. 1:
բ Մար. ա. 1: Յով. ժե. 27:
գ Գոր. ժե. 19, 25, 28: Ա Կոր. է. 40:
դ Գոր. ժա. 4:
ե Գոր. ա. 1:
զ Յով. ի. 31:
է Մատ. բ. 1:
ը Ա Մն. իդ. 10, 19: Նեեմ. ժբ. 4, 17:

նով քահանայ մը կար, որուն կինը Ահարոնի
6 աղջիկներէն էր, և անոր անունը Եղիսաբեթ: Ու
երկուքն ալ Աստուծոյ առջեւ ᶿարդար էին, և
Տէրոջը բոլոր պատուիրանքներուն և իրաւունքնե-
7 րուն մէջ անարատութեամբ կը քալէին: Իսկ
զաւակ չունէին, ինչու որ Եղիսաբեթ ամուլ էր,
ու երկուքն ալ օրերնին անցուցած էին:
8 Ու երբոր անիկա իր դասակարգութեան օրերը
համնելուն քահանայական պաշտօնը կը կատարէր
9 Աստուծոյ առջեւը, ᶨՔահանայութեան սովորութեա-
նը պէս ᶦիրեն ինկաւ որ Տէրոջը տաճարը մտնէ
10 խնկարկութիւն ընէ: ˡԵւ ժողովուրդին բոլոր
բազմութիւնը դուրսը աղօթքի կայներ էին խուն-
11 կին ատենը: Ու երեցաւ անոր Տէրոջը հրեշտա-
կը, որ կայներ էր ˣխունկի սեղանին աջ կողմը:
12 Իսկ Զաքարիա երբոր տեսաւ՝ ծշփոթեցաւ, ու ա-
13 նոր վրայ վախ մը ինկաւ: Իսկ հրեշտակը ըսաւ
անոր, Մի՛ վախնար՝ Զաքարիա, ինչու ու քու
աղօթքդ լսուեցաւ, և քու կինդ Եղիսաբեթ քեզի
որդի մը պիտի ծնանի, ու կանոր անունը *Յով-
14 հաննէս դնես: Իսկ քեզի ուրախութիւն ու ցըն-
ծութիւն պիտի ըլլայ, և հշատերը անոր ծնանե-
15 լուն վրայ պիտի ուրախանան. Ինչու որ Տէրոջը
առջեւը մեծ պիտի ըլլայ, և ձգինի ու օղի պիտի
չխմէ. և ղդեռ իր մօրը որովայնէն Սուրբ Հո-
16 գիով պիտի լեցուի. ճՈւ Իսրայէլի որդւոցմէ

թ Ծն. է. 1: ժէ. 1: Գ Թագ. թ. 4: Դ Թագ. ի. 3: Յոբ. ա. 1: Գոր. իգ. 1: իդ. 16: Փիլ. գ. 6:
ժ Ա Մն. իդ. 19: Բ Մն. ը. 14: լա. 2:
ի Ել. լ. 7, 8: Ա Թագ. բ. 28: Ա Մն. իգ. 13: Բ Մն. իթ. 11:
լ Ղև. ժզ. 17: Յայտ. ը. 3, 4:
խ Ել. լ. 1:
ծ Դատ. զ. 22: ժգ. 22: Դան. ժ. 8: Հմր 29: Գլ. բ. 9: Գոր. ժ. 4: Յայտ. ա. 17:
կ Հմր 60, 63:
* Թ՛ Տէրոջը շնորհքը:
հ Հմր 58:
ձ Թու. զ. 3: Դատ. ժգ. 4: Գլ. է. 33:
ղ Երեմ. ա. 5: Գաղ. ա. 15:
ճ Մաղ. դ. 5, 6:

շատերը իրենց Տէր Աստուծոյն պիտի դարձնէ ։
17 մ Եւ ինքը անոր առջեւէն պիտի դայ Եղիային հո-
գիովը ու զօրութիւնովը՝ հայրերուն սիրտերը որ-
դւոցը վրայ դարձնելու, և անհնազանդները՝ ար-
դարներուն իմաստութեանը, որ Տէրոջը բարե-
18 կարգ ժողովուրդ մը պատրաստէ ։ Եւ Զաքա-
րիա ըսաւ հրեշտակին, յ Ինչո՞վ գիտնամ աս
բանը, որովհետեւ ես ծեր եմ, ու իմ կինս իր
19 օրերը անցուցած է ։ Եւ հրեշտակը պատասխան
տալով ըսաւ անոր, Ես եմ ն Գաբրիէլը որ
Աստուծոյ առջեւը կը կայնիմ, ու խրկուեցայ քե-
զի զրուցելու և աս բաներուն աւետիսը քեզի
20 տալու ։ Եւ ահա շ համր պիտի ըլլաս դուն, ու
պիտի չկրնաս խօսիլ մինչեւ այն օրը՝ որ աս բաները
ըլլան. քանզի չհաւատացիր իմ խօսքերուս, որոնք
21 իրենց ատենին պիտի կատարուին ։ Ու ժողովուր-
դը Զաքարիային կը սպասէր, և կը զարմանային
22 անոր տաճարին մէջ ուշանալուն վրայ ։ Ու երբոր
դուրս ելաւ, չէր կրնար խօսիլ անոնց հետ. և
իմացան որ տաճարին մէջ տեսիլք մը տեսած է.
ու ինքը նշանով կը խօսէր անոնց հետ, և համր կը
23 կենար ։ Ու եղաւ որ ո երբ անոր պաշտօնին օրե-
24 րը լմնցան, իր տունը գնաց ։ Եւ այն օրերէն
ետքը անոր կինը Եղիսաբեթ յղացաւ, ու հինգ
25 ամիս ինքզինքը կը պահէր, և կ'ըսէր ։ Այսպէս
ըրաւ ինծի Տէրը ** օրերս, որ իմ վր** նայեցաւ
չ նախատինքս մարդոց մէջէն վերցնելու ։
26 Ու վեցերորդ ամսուն մէջ Գաբրիէլ հրեշտակը
Աստուծմէ խրկուեցաւ Գալիլեայի մէկ քաղաքը՝
27 որուն անունը Նազարէթ էր, պ Մէկ կոյսի մը՝

մ Մաղ. դ. 5 ։ Մատ. ժա. 14 ։ Մար. թ. 11 ։
յ Ծն. ժէ. 17 ։
ն Դան. ը. 16 ։ թ. 21, 22, 23 ։ Մատ. ժը. 10 ։ Եբր. ա. 14 ։
շ Եզեկ. գ. 26 ։ իդ. 27 ։
ո Տես դ. Թագ. ժա. 5 ։ աՄն. թ. 25 ։
չ Ծն. լ. 23 ։ Եսա. դ. 1 ։ ծդ. 1, 4 ։
պ Մատ. ա. 18 ։ Ղկ. բ. 4, 5 ։

մարդու մը նշանուած, որուն անունը Յովսէփ էր՝
Դաւիթի տունէն, և այն կոյսին անունը Մարիամ
28 էր ։ Ու հրեշտակը անոր գալով ըսաւ, ջ Ողջոյն
քեզ՝ ո՛վ շնորհընկալ կոյս, ռ Տէրը քու հետդ է.
29 դուն կիներուն մէջ օրհնեալ ես ։ Եւ անիկայ տես-
նելով՝ անոր խօսքին վրայ ս շփոթեցաւ, ու ինքն-
իրեն կը մտածէր թէ ինչպէս բան պիտի ըլլայ աս
30 ողջոյնը ։ Եւ հրեշտակը անոր ըսաւ, Մի՛ վախ-
նար՝ Մարիամ, ինչու որ Աստուծմէ շնորհք
31 գտար. վ Եւ ահա պիտի յղանաս ու որդի մը պիտի
ծնանիս, և տ անոր անունը Յիսուս պիտի դնես ։
32 Անիկայ մեծ պիտի ըլլայ, ր ու Բարձրելոյն Որդին
պիտի ըսուի, և ց Տէր Աստուած պիտի տայ անոր
իր հօրը Դաւիթին աթոռը, ւ ու Յակոբին տանը
33 վրայ յաւիտեան պիտի թագաւորէ, Եւ անոր
34 թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ ։ Ու
Մարիամ ըսաւ հրեշտակին, Ի՞նչպէս պիտի ըլլայ
աս բանը, որովհետեւ ես էրիկ մարդ չեմ գիտեր ։
35 Եւ հրեշտակը պատասխան տալով ըսաւ անոր,
փ Հոգին Սուրբ պիտի գայ քեզի, ու Բարձրելոյն
զօրութիւնը քու վրադ հովանի պիտի ըլլայ.
ուստի այն քեզմէ ծնանելու սուրբը ք Աստուծոյ
36 Որդի պիտի ըսուի ։ Եւ ահա քու ազգականդ
Եղիսաբեթ՝ անիկայ ալ իր պառաւութեան ատենը
արու զաւակով մը յղի է. ու ասիկայ այն ամուլ
37 ըսուածին վեցերորդ ամիսն է. Ինչու որ օ Աստուծոյ

ջ Դան. թ. 23 ։ ժ. 19 ։
ռ Դատ. զ. 12 ։
ս Հմր 12 ։
վ Եսա. է. 14 ։ Մատ. ա. 21 ։
տ Ղկ. բ. 21 ։
ր Մար. ե. 7 ։
ց բ Թագ. է. 11, 12 ։ Եսա. թ. 6, 7 ։ ժզ. 5 ։ Երեմ. իգ. 5 ։ Սաղ. ճլբ. 11 ։ Յայտ. գ. 7 ։
ւ Դան. բ. 44 ։ է. 14, 27 ։ Աբդ. 21 ։ Միք. դ. 7 ։ Յովհ. ժբ. 34 ։ Եբր. ա. 8 ։
փ Մատ. ա. 20 ։
ք Մատ. ժդ. 33 ։ իզ. 63, 64 ։ Մար. ա. 1 ։ Յովհ. ա. 34 ։ ի. 31 ։ Գործ. ը. 37 ։ Հռովմ. ա. 4 ։
օ Ծն. ժը. 14 ։ Երեմ. լբ. 17 ։ Զաք. ը. 6 ։ Մատ. ժթ. 26 ։ Մար. ժ. 27 ։ Ղկ. ժը. 27 ։ Հռովմ. դ. 21 ։

38 քովը բնաւ մէկ բան մը անկարելի չըլլար ։ Ու
Մարիամ ըսաւ, Ահա ես Տէրոջը աղախինն եմ,
քու ըսածիդ պէս թող ըլլայ ինծի ․ ու հրեշտակը
անոր քովէն գնաց ։
39 Ան օրերը ելաւ Մարիամ ու արտորնօք լեռնա-
40 կողմը ‡ Յուդայի մէկ քաղաքը գնաց ։ Ու մտաւ
Զաքարիային տունը ու Եղիսաբեթին բարեւ
41 տուաւ ։ Ու եղաւ որ երբ լսեց Եղիսաբեթ Մա-
րիամին բարեւը, մանուկը անոր որովայնին մէջը
խաղաց, ու Եղիսաբեթ Սուրբ Հոգիով լեցուե-
42 ցաւ ․ Ու բարձր ձայնով մը կանչեց ու ըսաւ,
— Օրհնեալ ես դուն կանանց մէջ, և օրհնեալ է
43 քու որովայնիդ պտուղը ։ Ու աս ինծի ուսկից
44 եղաւ, որ իմ Տէրոջս մայրը ինծի գայ ․ Վասն զի
ահա երբոր քու բարեւիդ ձայնը ականջիս եկաւ,
մանուկը որովայնիս մէջը խաղաց ուրախութենէն ։
45 Ու երանի անոր որ * հաւատացեր է, քանզի պիտի
կատարուի ան բաները՝ որ Տէրոջմէ ըսուեցաւ
46 իրեն ։ Ու Մարիամ ըսաւ, ⁎ Իմ անձս կը
47 մեծցընէ Տէրը, Ու իմ հոգիս ուրախացաւ իմ
48 Փրկիչ Աստուծովս ։ Ինչու որ ‡ իր աղախինին
խոնարհութեանը նայեցաւ․ քանզի ասկէ ետե-
ւը † բոլոր ազգերը ինծի երանութիւն պիտի
49 տան ։ Վասն զի Հզօրը ⁎ ինծի մեծամեծ բաներ
50 ըրաւ, ու անոր Անունը սուրբ է ։ Ու ⁎ անոր
ողորմութիւնը իրմէն վախցողներուն վրայ է ազգէ
51 ազգ ։ ⁎ Իր բազուկովը զօրութիւն ցուցուց,
⁎ ցիրուցան ըրաւ ամբարտաւանները իրենց սրտին

‡ Յես․ խա․ 9, 10, 11 ։
— Հմր 28 ։ Դատ․ ե․ 24 ։
* Կամ՝ հաւատացեր է թէ
⁎ Ա Թագ․ բ․ 1 ։ Սաղ․ լդ․ 2, 3 ։ լե․ 9 ։ Ամբ․ գ․ 18 ։
‡ Ա Թագ․ ա․ 11 ։ Սաղ․ ճլը․ 6 ։
† Մաղ․ դ․ 12 ։ Գղ․ ժա․ 27 ։
⁎ Սաղ․ հա․ 19 ։ Ճիզ․ 2, 3 ։
⁎ Սաղ․ ճժա․ 9 ։
⁎ Ծն․ ժէ․ 7 ։ Եղ․ ի․ 6 ։ Սաղ․ ճգ․ 17, 18 ։
⁎ Սաղ․ ղը․ 1 ։ Ճժը․ 15 ։ Եսա․ խ․ 10 ։ ծա․ 9 ։ ծբ․ 10 ։
⁎ Սաղ․ լգ․ 10 ։ Ա Պետ․ ե․ 5 ։

52 խորհուրդովը ։ ⁎ Զօրաւորները իրենց աթոռներէն
53 իջեցուց, ու խոնարհները բարձրացուց ։ ⁎ Անօթի-
ները բարիքներով լեցուց, և հարուստները պա-
54 րապ ճամբեց ։ Օգնութիւն ըրաւ իր Իսրայէլ
ծառային՝ ⁎ Իր ողորմութիւնը միտք բերելով․
55 ⁎ Ինչպէս որ ինքը խօսեցաւ մեր հայրերուն՝ Աբրա-
համին ու անոր սերունդին յաւիտեան ։
56 Ու Մարիամ անոր քովը իրեք ամիսի չափ
կեցաւ, ու իր տունը դարձաւ ։
57 Ու Եղիսաբեթին ծնանելու ժամանակը լեցուե-
58 ցաւ, ու որդի մը ծնաւ ։ Ու լսեցին անոնք որ
անոր բոլորտիքը կը բնակէին՝ ու անոր ազգական-
ները, որ Տէրը անոր վրայ իր մեծ ողորմութիւնը
ցուցուց, և ⁎ անոր հետ կ՚ուրախանային ։
59 Ու եղաւ որ ⁎ ութերորդ օրը տղան թլփատելու
եկան, և զանիկայ իր հօրը անունովը Զաքարիա
60 կը կոչէին ։ Իսկ անոր մայրը պատասխան տուաւ
ու ըսաւ, ⁎ Չէ, հապա Յովհաննէս պիտի կոչուի ։
61 Ու անոր ըսին թէ Քու ազգականներուդ մէջ
62 մէկը չկայ որ աս անունով կոչուի ։ Նշան կ՚ընէին
անոր հօրը թէ ինչ անունով կ՚ուզէ որ անիկայ
63 կոչուի ։ Ան ալ տախտակ մը ուզեց ու գրեց՝ ը-
սելով, ⁎ Յովհաննէս է անոր անունը ․ ու ամէնքը
64 զարմացան ։ ⁎ Ու իսկոյն բացուեցաւ անոր բերանը
ու անոր լեզուն, և կը խօսէր ու կ՚օրհնէր զԱս-
65 տուած ։ Ու վախ մը ինկաւ ան ամենուն վրայ՝
որոնք անոնց բոլորտիքը կը բնակէին ․ ու աս
ամէն բաները Հրէաստանի բոլոր ⁎ լեռնակողմը կը

⁎ Ա Թագ․ բ․ 6 ։ Յոբ․ ե․ 11 ։ Սաղ․ ճժգ․ 6 ։
⁎ Ա Թագ․ բ․ 5 ։ Սաղ․ լդ․ 10 ։
⁎ Սաղ․ ղը․ 3 ։ Երեմ․ լա․ 3, 20 ։
⁎ Ծն․ ժէ․ 19 ։ Սաղ․ ճլբ․ 11 ։ Հռով․ ժա․ 28 ։ Գաղ․ գ․ 16 ։
⁎ Հմր 14 ։
⁎ Ծն․ ժէ․ 12 ։ Ղև․ ժբ․ 3 ։
⁎ Հմր 13 ։
⁎ Հմր 13 ։
⁎ Հմր 20 ։
⁎ Հմր 39 ։

66 վրուցուէր ։ Եւ ամէն լսողները [թ] իրենց սիրտերուն
մէջը դրին , ու կ'ըսէին , Արդեօք աս տղան ի՞նչ
պիտի ըլլայ . ու [ժ] Տէրոջը ձեռքը անոր հետն էր ։
67 Եւ անոր հայրը Զաքարիա [ի] Սուրբ Հոգիով
68 լեցուած՝ մարգարէացաւ ու ըսաւ , [լ] Օրհնեալ
ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը , որ [խ] այցելութեան
69 եկաւ և իր ժողովուրդին փրկութիւն ըրաւ . [ծ] Ու
մեզի փրկութեան եղջիւր մը հանեց իր Դաւիթ
70 ծառային տունէն . ([կ] Ինչպէս որ սուրբերուն
բերնովը խօսեցաւ , որոնք աշխարհի սկիզբէն 'ի
71 վեր անոր մարգարէներն էին .) Փրկութիւն մեր
թշնամիներէն և բոլոր մեզ ատողներուն ձեռ–
72 քէն , [հ] Ողորմութիւն ընելու մեր հայրերուն վրայ ,
73 և իր սուրբ ուխտը միտք բերելու , ([ձ] Այն երդումը՝
որ մեր հօրը Աբրահամին ըրաւ ,) մեզի տալու ,
74 Որ մեր թշնամիներուն ձեռքէն ազատելով՝
75 առանց վախի [ղ] զանիկայ պաշտենք [ճ] Սրբութիւ–
նով ու արդարութիւնով անոր առջևը մեր կե–
76 նացը բոլոր օրերուն մէջ ։ Եւ դուն , ո՛վ մանուկ՝
Բարձրելոյն մարգարէն պիտի կոչուիս . ինչու որ
[մ] Տէրոջը երեսին առջևէն պիտի երթաս՝ անոր
77 ճամբաները պատրաստելու , Անոր ժողովուրդին
գիտցնելու իրենց փրկութիւնը [յ] իրենց մեղքերուն
78 թողութիւնովը , Մեր Աստուծոյն գթած ողոր–

թ Գլ. բ. 19 , 51 ։
ժ Ծն. լթ. 2 ։ Սաղ. ձ. 17 ։ ձթ. 21 ։ Գործ. ժա. 21 ։
ի Յովել. բ. 28 ։
լ Գ Թագ. ա. 48 ։ Սաղ. խա. 13 ։ Հր. 18 ։ ճզ. 48 ։
խ Եղ. գ. 16 ։ դ. 31 ։ Սաղ. ճժա. 9 ։ Գլ. է. 16 ։
ծ Սաղ. ճլբ. 17 ։
կ Երեմ. իգ. 5 , 6 ։ լ. 10 ։ Դան. թ. 24 ։ Գործ. գ. 21 ։ Հռով. ա. 2 ։
հ Ղև. իզ. 42 ։ Սաղ. ղը. 3 ։ ճե. 8 , 9 ։ ճզ. 45 ։ Եզեկ. ժզ. 60 ։ Հմր 54 ։
ձ Ծն. ժբ. 3 ։ ժէ. 4 ։ իբ. 16 , 17 ։ Եբր. զ. 13 , 17 ։
ղ Հռով. զ. 18 , 22 ։ Եբր. թ. 14 ։
ճ Երեմ. լբ. 39 , 40 ։ Եփե. դ. 24 ։ բ Թես. բ. 12 ։ բ Տիմ. ա. 9 ։ Տիտ. բ. 12 ։ ա Պետ. ա. 15 ։ բ Պետ. ա. 4 ։
մ Ես. խ. 3 ։ Մաղ. գ. 1 ։ դ. 5 ։ Մատ. ժա. 10 ։ Հմր 17 ։
յ Մար. ա. 4 ։ Գլ. գ. 3 ։

մութեանը համար՝ որով [ն] Ծագողը բարձունքէն վե–
79 րէն մեզի այցելութեան եկաւ , [շ] Խաւարի և մա–
հուան ստուերի մէջ նստողներուն լոյս տալու , —
մեր ոտքերը խաղաղութեան ճամբուն մէջ շիտ–
կելու ։
80 Եւ [ո] տղան կը մեծնար ու կը զօրանար հոգիով ,
և [չ] անապատներուն մէջն էր մինչև այն օրը՝ որ
ինքը Իսրայէլին երևցաւ ։

ԳԼ. Բ

1 Օգոստոս Կայսրը կը հրամայէ աշխարհագիր ընել իր բոլոր տէրութեանը մէջ ։ 6 Քրիստոսի ծնունդը ։ 8 Հրեշտակ մը աւետիս կու տայ հովիւներուն ։ 13 Երկնային զօրաց բազմութիւն կ'օրհնեն զԱստուած Քրիստոսի ծննդեանը համար ։ 21 Քրիստոս կը թլփատուի , 22 տաճարը կը տարուի ։ 28 Սիմէոն և Աննա կը մարգարէանան Քրիստոսի վրայով ։ 40 Քրիստոս կը զարգանայ իմաստութեամբ , 46 տաճարին մէջ Հրէից վարդապետներուն հարցմունքներ կ'ընէ , 51 և իր ծնողացը հնազանդ կը մնայ ։

1 Ու եղաւ որ այն օրերը Օգոստոս Կայսրէն հրաման
2 եղաւ՝ որ բոլոր աշխարհ գրուի ։ ([պ] Այս առջի
աշխարհագիրը եղաւ Կիւրենոսին Սիւրիայի վրայ
3 կուսակալութիւն ըրած ատենը ։) Եւ ամէնքը
կ'երթային աշխարհագիրը մտնելու՝ ամէն մէկը
4 իր քաղաքին մէջ ։ Յովսէփ ալ Գալիլեայէն
Նազարէթ քաղաքէն ելաւ դէպ 'ի Հրէաստան
[ջ] Դաւիթի քաղաքը՝ որ Բեթլեհէմ կ'ըսուի ,
([ռ] ինքը Դաւիթի տունէն ու ազգատոհմէն ըլլա–
5 լուն համար ,) Աշխարհագիրը մտնելու Մարիամին
հետ մէկտեղ , որ այն իր նշանածն էր , և յղի էր ։
6 Ու եղաւ որ երբ անոնք հոն էին , անոր ծնանելու
7 օրերը լեցուեցան . Եւ իր [ս] անդրանիկ որդին

ն Թու. իդ. 17 ։ Մաղ. դ. 2 ։
շ Ես. թ. 2 ։ խբ. 7 ։ խթ. 9 ։ Մատ. դ. 16 ։ Գործ. իզ. 18 ։
ո Գլ. բ. 40 ։
չ Մատ. գ. 1 ։ ժա. 7 ։
պ Գործ. ե. 37 ։
ջ ա Թագ. ժզ. 1 , 4 ։ Յովհ. է. 42 ։
ռ Մատ. ա. 16 ։ Գլ. ա. 27 ։
ս Մատ. ա. 25 ։

ծնաւ , ու խանձարուրով փաթթեց և զանիկայ
մսուրին մէջը պառկեցուց , ինչու որ իջևանին մէջ
իրենց տեղ չկար ։
8 Եւ ան տեղը հովիւներ կային դաշտի մէջ կեցած ,
որոնք իրենց հօտերուն գիշերուան պահպանու-
9 թիւնը կ՚ընէին ։ Եւ ահա Տէրոջը հրեշտակը
անոնց վրայ իջաւ , ու Տէրոջը փառքը անոնց բո-
լորտիքը ծագեցաւ . ե ու խիստ շատ վախցան ։
10 Եւ հրեշտակը ըսաւ անոնց , Մի վախնաք , ինչու
որ ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս կու
տամ , զ Որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ .
11 է Վասն զի ձեզի այսօր ը Փրկիչ մը ծնաւ Դաւիթի
12 քաղաքին մէջ , որ ինքը թ Օծեալ Տէր է ։ Եւ
աս ձեզի նշան մը ըլլայ . մանուկ մը պիտի գտնէք
խանձարուրով փաթթած ու մսուրի մէջ պառ-
13 կած ։ ժ Եւ յանկարծ ան հրեշտակին հետը երկնա-
յին զօրքերու բազմութիւն մը եղաւ , որոնք զԱս-
14 տուած կ՚օրհնէին ու կ՚ըսէին , ի Երկնից բարձրու-
թեանը մէջ Աստուծոյ փառք , ու երկրիս վրայ
լ խաղաղութիւն , խ մարդոց մէջ հաճութիւն ։
15 Ու եղաւ որ երբ հրեշտակները անոնցմէ երկինքը
վերցան , հովիւները իրարու ըսին , Եկէք մինչև
Բեթլէհէմ երթանք , ու տեսնենք թէ ի՞նչ է աս
16 եղած բանը , որն որ Տէրը մեզի ցուցուց ։ Ու
եկան արտորնօք , և գտան Մարիամը ու Յովսէփը
17 և մսուրին մէջ պառկած մանուկը ։ Ու երբոր

ե Ղկ . ա . 12 ։
զ Ծն . ժբ . 3 ։ Մատ . իը . 19 ։ Մար . ա . 15 ։ Հմր 31 , 32 ։ Ղկ . իդ . 47 ։ Կող . ա . 23 ։
է Ես . թ . 6 ։
ը Մատ . ա . 21 ։
թ Մատ . ա . 16 ։ ժզ . 16 ։ Ղկ . ա . 43 ։ Գոր . բ . 36 ։ ժ . 36 ։ Փիլ . բ . 11 ։
ժ Ծն . իը . 12 ։ լբ . 1 , 2 ։ Սաղ . ճգ . 20 , 21 ։ ճխը . 2 ։ Դան . է . 10 ։ Եբր . ա . 14 ։ Յայտ . ե . 11 ։
ի Ղկ . ժթ . 38 ։ Եփս . ա . 6 ։ գ . 10 , 21 ։ Յայտ . ե . 13 ։
լ Ես . ծէ . 19 ։ Ղկ . ա . 79 ։ Հռոմ . ե . 1 ։ Եփս . բ . 17 ։ Կող . ա . 20 ։
խ Յոհ . գ . 16 ։ Եփս . բ . 4 , 7 ։ բ Թես . բ . 16 ։ ա Յոհ . դ . 9 , 10 ։

տեսան , իմացուցին ան խօսքին վրայով , որ աս
18 մանուկին համար իրենց զրուցուեցաւ ։ Եւ ամէն-
քը որ կը լսէին , կը զարմանային ան բաներուն
19 վրայ որ հովիւները իրենց կը զրուցէին ։ ծ Բայց
Մարիամ աս ամէն բաները կը պահէր , ու իր սըր-
20 տին մէջը կը մտածէր ։ Եւ հովիւները դարձան ,
կը փառաւորէին ու կ՚օրհնէին զԱստուած ան ամէն
բաներուն համար որ լսեցին ու տեսան , ինչպէս որ
իրենց զրուցուած էր ։
21 կ Ու երբոր ութը օրերը լման եղան մանուկը
թլփատելու , հ անոր անունը Յիսուս դրուեցաւ ,
որ հրեշտակէն կոչուած էր՝ դեռ ինքը մօրը որովայ-
նին մէջ չյղացած ։
22 Ու Մովսէսին օրէնքին համեմատ՝ երբոր անոնց
ձ մաքրութեան օրերը լմնցան , Երուսաղէմ տա-
23 րին զանիկայ Տէրոջը առջևը հանելու , (Ինչպէս
որ գրուած է Տէրոջը օրէնքին մէջ թէ ղ Ամէն ա-
րու որ արգանդ կը բանայ , Տէրոջը սուրբ ըսուի ,)
24 Ու ճ Տէրոջը օրէնքին մէջ ըսուածին պէս՝ ընծայ
տալու զոյգ մը տատրակ կամ աղաւնիի երկու
25 ձագ ։ Եւ ահա Երուսաղէմի մէջ մարդ մը կար ,
որուն անունը Սիմէօն էր , ու ան մարդը արդար
ու աստուածավախ էր , մ և Իսրայէլի մխիթարու-
թեանը կը սպասէր . ու Սուրբ Հոգին անոր վրայ
26 էր ։ Եւ անոր յայտնուած էր Սուրբ Հոգիէն՝
յ թէ մահ պիտի չտեսնէ , մինչև որ Տէրոջը Օծեա-
27 լը տեսնէ ։ ն Եւ Հոգիով տաճարը եկաւ . ու երբոր
ծնողքը բերին Յիսուս մանուկը՝ որ օրէնքին սովո-

ծ Ծն . լէ . 11 ։ Ղկ . ա . 66 ։ Հմր 51 ։
կ Ծն . ժէ . 12 ։ Ղև . ժբ . 3 ։ Ղկ . ա . 59 ։
հ Մատ . ա . 21 , 25 ։ Ղկ . ա . 31 ։
ձ Ղև . ժբ . 2 , 3 , 4 , 6 ։
ղ Ել . ժգ . 2 ։ իբ . 29 ։ լդ . 19 ։ Թու . գ . 13 ։ ը . 17 ։ ժը . 15 ։
ճ Ղև . ժբ . 2 , 6 , 8 ։
մ Ես . խ . 1 ։ Մար . ժե . 43 ։ Հմր 38 ։
յ Սաղ . ձթ . 48 ։ Եբր . ժա . 5 ։
ն Մատ . դ . 1 ։

28 բութեանը պէս անոր համար ընեն, Ինքն ալ զանի-
կայ իր գիրկը առաւ, և օրհնեց զԱստուած ու ը-
29 սաւ, ՚Հիմա՛ ո՛վ Տէր՝ արձակես քու ծառադ
30 խաղաղութիւնով քու խօսքիդ համեմատ. Վասն
31 զի ՚իմ աչքերս տեսան քու փրկութիւնդ, Որ բո-
լոր ժողովուրդներուն առջեւ պատրաստեցիր,
32 ՚Լոյս մը հեթանոսները լուսաւորելու, և փառք
33 քու Իսրայէլ ժողովուրդիդ: Եւ Յովսէփ ու ա-
նոր մայրը զարմացած էին ան բաներուն վրայ, որ
34 անոր համար կը խօսուէին: Ու Սիմէօն օրհնեց զա-
նոնք, և անոր մօրը Մարիամին ըսաւ, Ահա աս
մանուկը ՚Իսրայէլի մէջ շատ մարդոց ինկալուն ու
ելլելուն համար, Ու հակառակութեան նպատակ
35 մը ըլլալու համար կեցած է. (Եւ ՚քու սրտէդ
ալ թուր մը պիտի անցնի,) որ ասանկով շատ
սրտերէն խորհուրդները յայտնուին:
36 Եւ հոն էր Աննա մարգարէն Փանուէլի աղջիկը՝
Ասերի ցեղէն. ասիկայ իր օրերը շատ անցուցած
էր՝ երկանը հետ եօթը տարի կենալով իր կուսու-
37 թեանը ժամանակէն, Եւ որբևարի էր գրեթէ
ութսունչորս տարուան. որ տաճարէն չէր զա-
տուէր, հապա ծոմով և աղօթքով Աստուծոյ
38 ծառայութիւն կ՚ընէր ՚գիշեր ու ցորեկ: Եւ ա-
սիկայ նոյն ժամուն եկաւ, ու Տէրոջը գոհութիւն
կու տար, ու անոր վրայով կը խօսէր ան ամենուն,
որոնք ՚Երուսաղէմի մէջ փրկութեան կը սպասէին:
39 Ու երբոր ամէն բան կատարեցին Տէրոջը օրէնքին
համեմատ, նորէն Գալիլեա դարձան իրենց ՚Նա-

՚ Ծն. խզ. 30: Փիլ. ա. 23:
՚ Եսա. ծբ. 10: Գլ. գ. 6:
՚ Եսա. թ. 2: խբ. 6: խթ. 6: կ. 1, 2, 3: Մատ. դ. 16: Գոր. ժգ. 47: իը. 28:
՚ Եսա. ը. 14: Ովս. ժդ. 9: Մատ. իա. 44: Հռով. թ. 32, 33: ա Կոր. ա. 23, 24:
բ Կոր. բ. 16: ա Պետ. բ. 7, 8:
՚ Գոր. իը. 22:
՚ Սաղ. խբ. 10: Յոհ. ժթ. 25:
՚ Գոր. իզ. 7: ա Տիմ. ե. 5:
՚ Մար. ժե. 43: Հմր 25: Գլ. իդ. 21:

40 զարէթ քաղաքը: ՚Եւ մանուկը կը մեծնար ու
հոգւով կը զօրանար՝ իմաստութեամբ լեցուած,
ու Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր:
41 Եւ անոր ծնողքը ՚ամէն տարի զատկի տօնին
42 Երուսաղէմ կ՚երթային: Ու երբոր անիկայ տաս-
ներկու տարեկան եղաւ, տօնին սովորութեանը
43 պէս երբոր անոնք Երուսաղէմ ելան, Եւ ան օրերը
որ լմնցուցին ու նորէն ետ դարձան, Յիսուս
մանուկը Երուսաղէմ մնաց. և Յովսէփ ու անոր
44 մայրը չէին գիտեր. Հապա կարծելով թէ անի-
կայ ճամբորդներուն հետն է, մէկ օրուան ճամբայ
գացին, ու կը փնտռէին զանիկայ իրենց ազգական-
45 ներուն և ճանչւորներուն մէջը: Ու երբոր չգտան,
նորէն Երուսաղէմ դարձան անիկայ փնտռելու:
46 Ու եղաւ որ իրեք օրէն ետքը տաճարին մէջը գտան
զանիկայ, որ վարդապետներուն հետ նստեր էր,
անոնց մտիկ կ՚ընէր ու անոնց բան կը հարցընէր:
47 Եւ ՚ամէն անոր ականջ դնողները կը զարմանային
անոր իմաստութեանը ու պատասխաններուն վրայ:
48 Ու երբոր տեսան անիկայ, ապշած մնացին. և ա-
նոր մայրը ըսաւ անոր, Որդեակ՝ ինչո՞ւ համար
մեզի այդպէս ըրիր. ահա քու հայրդ ու ես խիստ
49 վշտացած քեզ կը փնտռէինք: Եւ ըսաւ անոնց,
Ո՞չ ինչո՞ւ կը փնտռէիք, չէի՞ք գիտեր թէ ինծի
50 պէտք է ՚որ իմ Հօրս *տանը ըլլամ: ՚Եւ ա-
նոնք չհասկցան ան խօսքը որ իրենց զրուցեց:
51 Եւ իջաւ անոնց հետ ու գնաց ՚Նազարէթ, և ա-
նոնց հնազանդ էր. ՚բայց անոր մայրը աս ամէն
խօսքերը իր սրտին մէջ կը պահէր:
52 Եւ Յիսուս ՚կը զարգանար իմաստութիւնով

՚ Հմր 52: Գլ. ա. 80:
՚ Ել. իգ. 15, 17: լդ. 23:
բ Օր. ժզ. 1, 16:
՚ Մատ. ե. 28: Մար. ա. 22: Գլ. դ. 22, 32: Յոհ. է. 15, 46:
՚ Յոհ. բ. 16:
* Կամ՝ գործերուն մէջ
՚ Գլ. թ. 45: ժը. 34:
՚ Հմր 19: Դան. է. 28:
՚ ա Թագ. բ. 26: Հմր 40:

ու՛ հասակով, և Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք
գտնելով ։

ԳԼ. Գ

1 Յովհաննէսին քարոզութիւնը և մկրտութիւնը. 15 անոր վկայութիւնը Քրիստոսի համար ։ 20 Հերովդէս կը բանտարկէ զՅովհաննէս ։ 21 Քրիստոս կը մկրտուի, ու երկինքէն վկայութիւն կ՚ըլլայ իրեն համար ։ 23 Յիսուսի տարիքը, և անոր ազգաբանութիւնը Յովսեփէն մինչև Ադամ ելլելով ։

1 Տիբերիոս Կայսրին թագաւորութեանը տասնը-
հինգերորդ տարին՝ Պոնտացի Պիղատոսին
Հրէաստանի վրայ կուսակալութիւն ըրած ատենը,
ու Հերովդէսին Գալիլեացւոց վրայ չորրորդապե-
տութեան ատենը, և անոր եղբօրը Փիլիպպոսին
Իտուրացւոց և Տրաքոնացւոց երկրին վրայ չորրոր-
դապետութեան ատենը, և Լիւսանիայի Աբիլինա-
2 ցւոց վրայ չորրորդապետութեան ատենը, [ա] Ան-
նայի ու Կայիափայի քահանայապետութեան ա-
տենը՝ Աստուծոյ խօսքը եղաւ Զաքարիայի որդւոյն
3 Յովհաննէսին վրայ անապատին մէջ ։ [բ] Ու անի-
կայ եկաւ Յորդանանու բոլոր կողմերը, և ապաշ-
խարութեան մկրտութիւն կը քարոզէր [գ] մեղաց
4 թողութեան համար. Ինչպէս որ Եսայի մարգարէին
խօսքերուն գրքին մէջ գրուած է ըսելով, [դ] Անա-
պատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատ-
5 րաստեցէք, անոր շաւիղները շիտկեցէք. Ամէն
ձոր պիտի լեցուի, և ամէն լեռ ու բլուր պիտի
ցածնայ, և ծուռը պիտի շիտկուի, ու խորտու-
6 բորտ տեղերը հարթ ճամբաներ պիտի ըլլան. [ե] Ու
ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնը պիտի տես-
նէ ։

7 Ու իրմէն մկրտուելու ելլող ժողովուրդներուն
ըսաւ, [զ] Իժերու ծնունդներ՝ ո՞վ խմացուց ձեզի

[ա] Յոհ. ժա. 49, 51 ; ժը. 13 ; Գոր. դ. 6 ։
[բ] Մատ. գ. 1 ; Մար. ա. 4 ։
[գ] Ղկ. ա. 77 ։
[դ] Ես. խ. 3 ; Մատ. գ. 3 ; Մար. ա. 3 ; Յոհ. ա. 23 ։
[ե] Սաղ. ղը. 2 ; Ես. ծբ. 10 ; Ղկ. բ. 10 ։
[զ] Մատ. գ. 7 ։

8 գալու բարկութենէն փախչիլ ։ Ուրեմն ապաշ-
խարութեան արժանաւոր պտուղներ բերէք, և մի՛
սկսիք ձեր ներսի դին ըսել թէ Մենք մեզի հայր՝
Աբրահամը ունինք. քանզի կ՚ըսեմ ձեզի որ
Աստուած կարող է աս քարերէս Աբրահամին որ-
9 դիներ հանելու ։ Ալ հիմա կացինը ծառերուն
արմատին քովը կը դրուի. [է] ուստի ամէն ծառ որ
բարի պտուղ չբերեր, կը կտրուի ու կրակը կը
10 ձգուի ։ [ը] Ու ժողովուրդները կը հարցընէին իրեն
11 ու կ՚ըսէին, Ուրեմն ի՞նչ ընենք ։ Պատասխան
տուաւ ու ըսաւ անոնց, [թ] Ո՛վ որ երկու հանդերձ
ունի, թող չունեցողին տայ. և ո՛վ որ կե-
12 րակուր ունի, նոյնպէս ընէ ։ [ժ] Մաքսաւորներ ալ
եկան մկրտուելու, ու ըսին անոր, Վարդապետ՝
13 մենք ի՞նչ ընենք ։ Ան ալ ըսաւ անոնց, Ձեզի
14 հրամայուածէն աւելի բան չպահանջէք ։ [ի] Զի-
նուորներն ալ կը հարցընէին անոր ու կ՚ըսէին,
Եւ մենք ի՞նչ ընենք. ըսաւ անոնց, Մէկը մի՛
հարստահարէք, [լ] և մէկու մը վրայ զրպարտութիւն
մի՛ ընէք, ու ձեր թոշակովը բաւականացէք ։

15 Երբոր ժողովուրդը կը սպասէր, և ամէնքը ի-
րենց սրտերուն մէջ կը մտածէին Յովհաննէսին
16 համար՝ թէ մի՞թէ արդեօք Քրիստոսը, Յովհան-
նէս պատասխան տուաւ ամենուն ու ըսաւ, [խ] Ես
ձեզ ջրով կը մկրտեմ, բայց ինծմէ աւելի զօրա-
ւորը կու գայ, որ ես անոր կօշիկներուն կապերը
քակելու արժանի չեմ. անիկայ ձեզ պիտի մկրտէ
17 Հոգւով Սրբով և կրակով. Որուն հեծանոցը իր
ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ, [ծ] ու ցորենը իր
ամբարը պիտի ժողվէ, և յարդը չմարելու կրա-

[է] Մատ. է. 19 ։
[ը] Գոր. բ. 37 ։
[թ] Ղկ. ժա. 41 ; բ Կոր. ը. 14 ; Յակ. բ. 15, 16 ; ա Յոհ. գ. 17 ; դ. 20 ։
[ժ] Մատ. իա. 32 ; Ղկ. է. 29 ։
[ի] Ղկ. ժթ. 8 ։
[լ] Ել. իգ. 1 ; Ղև. ժթ. 11 ։
[խ] Մատ. գ. 11 ։
[ծ] Միք. դ. 12 ; Մատ. ժգ. 30 ։

18 կով պիտի այրէ ։ Ուրիշ շատ բաներ ալ կը քա-
րոզէր՝ ժողովուրդը յորդորելով ։
19 է Բայց Հերովդէս չորրորդապետը անկէ յանդի-
մանուելով իր եղբօրը կնկանը Հերովդիային հա-
մար, և բոլոր չարութիւններուն համար որ Հե-
20 րովդէս գործեց, Ան ամենուն վրայ աս ալ աւել-
ցուց, որ Յովհաննէսը բանտի մէջ գոցեց ։
21 Ու երբոր մկրտուեցաւ բոլոր ժողովուրդը, ը և
Յիսուս ալ մկրտուելով՝ աղօթք կ'ընէր, երկինքը
22 բացուեցաւ. Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր երե-
ւոյթով աղաւնիի պէս անոր վրայ իջաւ, ու երկին-
քէն ձայն մը եկաւ՝ որ կ'ըսէր՝ Դուն ես իմ սի-
րելի Որդիս, քեզի հաճեցայ ։
23 Եւ ինքը Յիսուս սկսեր էր թ գրեթէ երեսուն տա-
րեկան ըլլալ, որ (ինչպէս կը կարծուէր) ժ ինքը
Յովսեփին որդին էր, որ ան Հեղիին, որ ան
24 Մատաթին, Որ ան Ղեւիին, որ ան Մեղքիին,
25 որ ան Յաննէին, որ ան Յովսեփին, Որ ան Մա-
տաթիային, որ ան Ամովսին, որ ան Նաւումին,
26 որ ան Եսղիին, որ ան Նանգէին, Որ ան Մաա-
թին, որ ան Մատաթիային, որ ան Սեմէիին,
27 որ ան Յովսեփին, որ ան Յուդային, Որ ան
Յովհաննային, որ ան Ռեսային, որ ան Զօրա-
բաբելին, որ ան Սաղաթիէլին, որ ան Ներիին,
28 Որ ան Մեղքիին, որ ան Ադդիին, որ ան Կով-
29 սամին, որ ան Եղմովդադին, որ ան Էրին, Որ
ան Յովսեսին, որ ան Եղիազարին, որ ան Յով-
30 րիմին, որ ան Մատաթին, որ ան Ղեւիին, Որ
ան Սիմէօնին, որ ան Յուդային, որ ան Յովսե-
31 փին, որ ան Յովնանին, որ ան Եղիակիմին, Որ ան
Մելէային, որ ան Մայնանին, որ ան Մատաթա-
յին, ի որ ան Նաթանին, լ որ ան Դաւիթին,

է Մատ. ժդ. 3։ Մար. զ. 17։
ը Մատ. գ. 13։ Յօհ. ա. 32։
թ Թուոց. դ. 3, 35, 39, 43, 47։
ժ Մատ. ժգ. 55։ Յօհ. զ. 42։
ի Զաք. ժբ. 12։
լ Ա Թագ. ե. 14։ Ա Մն. գ. 5։

32 խ Որ ան Յեսսէին, որ ան Ովբեդին, որ ան Բոո-
33 սին, որ ան Սաղմոնին, որ ան Նաասոնին, Որ
ան Ամինադաբին, որ ան Արամին, որ ան Եսը-
34 րոնին, որ ան Փարեսին, որ ան Յուդային, Որ
ան Յակոբին, որ ան Իսահակին, որ ան Աբրա-
35 համին, ծ որ ան Թարային, որ ան Նաքովրին, Որ
ան Սերուքին, որ ան Ռագաւին, որ ան Փաղե-
36 կին, որ ան Եբերին, որ ան Սաղային, կ Որ ան
Կայնանին, որ ան Արփաքսադին, հ որ ան Սեմին,
37 որ ան Նոյին, որ ան Ղամեքին, Որ ան Մաթու-
սաղային, որ ան Ենովքին, որ ան Յարեդին, որ
38 ան Մաղաղիէլին, որ ան Կայնանին, Որ ան Ե-
նովսին, որ ան Սեթին, որ ան Ադամին, ձ որ ան
Աստուծոյն ։

ԳԼ. Դ

1 Քրիստոս ծոմ կը պահէ և կը փորձուի. 13 կը յաղթէ Սատանային. 14 կը սկսի քարոզել։ 16 Նազարեթի մարդիկը կը զարմանան անոր շնորհալի խօսքերուն վրայ։ 33 Յիսուս կը բժշկէ դիւահար մը։ 38 Պետրոսին զոքանչը 40 և ուրիշ շատ հիւանդներ։ 41 Դեւերը կը խոստովանին թէ անիկայ է Քրիստոսը, բայց կը յանդիմանուին անկէ. 43 Քրիստոս կը քարոզէ քաղաքներուն մէջ։

1 Եւ ղ Յիսուս Հոգւով Սրբով լեցուած Յորդա-
նանէն դարձաւ, ճ ու Հոգիէն անապատը
2 տարուեցաւ, Եւ քառասուն օր Սատանայէն փոր-
ձուեցաւ. մ Հոն ան օրերը բան մը չկերաւ, և ան
օրերը լմննալէն ետև անօթեցաւ ։
3 Ու Սատանան ըսաւ անոր, Թէ որ Աստուծոյ
4 Որդին ես, ըսէ աս քարին որ հաց ըլլայ ։ Եւ
Յիսուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ,
յ Գրուած է թէ Ո՛չ միայն հացով կ'ապրի
մարդ, հապա Աստուծոյ ամէն խօսքովը ։

խ Հռութ. դ. 18, եւ։ Ա Մն. բ. 10, եւ։
ծ Ծն. ժա. 24, 26։
կ Տես Ծն. ժա. 12։
հ Ծն. ե. 6, եւ. ժա. 10, եւ։
ձ Ծն. ե. 1, 2։
ղ Մատ. դ. 1։ Մար. ա. 12։
ճ Հմր 14։ Գլ. բ. 27։
մ Ել. լդ. 28։ Գ Թագ. ժթ. 8։
յ Բ Օր. ը. 3։

5 Նա Սատանան մէկ բարձր լեռ մը հանելով զա-
նիկայ, աշխարհի բոլոր թագաւորութիւնները
6 ցուցուց անոր մէկ վայրկեանի մը մէջ. Նա Սատա-
նան ըսաւ անոր, Աս ամէն իշխանութիւնը ու
անոնց փառքը քեզի պիտի տամ, [ե]ինչու որ ինծի
յանձնուած է, և որու որ ուզեմ՝ կու տամ անի-
7 կայ. Ուստի թէ որ դուն իմ առջեւս ինկած երկր-
8 պագութիւն ընես, ամէնը քեզի ըլլայ։ Նա Յի-
սուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ, *[զ]Գրը-
ուած է թէ Քու Տէր Աստուծոյդ երկրպագու-
թիւն ընես, ու միայն զանիկայ պաշտես։
9 [է]Նա զանիկայ տարաւ Երուսաղէմ ու տաճա-
րին աշտարակին վրայ կայնեցուց, ու ըսաւ անոր,
Թէ որ դուն Աստուծոյ Որդին ես, քեզ ասկէ վար
10 ձգէ. Ինչու որ [ը]գրուած է թէ Իր հրեշտակնե-
րուն պիտի ապսպրէ քեզի համար՝ որ քեզ պահեն.
11 Ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ, որ
12 չըլլայ թէ ոտքդ քարի զարնես։ Նա Յիսուս պա-
տասխան տուաւ ու ըսաւ անոր, [թ]Ըսուած է թէ
13 Քու Տէր Աստուածդ չփորձես։ Ու երբոր Սատա-
նան ամէն փորձութիւնը կատարեց, [ժ]ատեն մը
ետ կեցաւ անկէ։
14 [ի]Նա Յիսուս [լ]Հոգիին զօրութեամբը [խ]Գա-
լիլեա դարձաւ, ու անոր համբաւը ան գաւառին
15 ամէն կողմերը տարածուեցաւ։ Նա ինքը անոնց
ժողովարաններուն մէջը կը սորվեցնէր, ու ամենէն
կը փառաւորուէր։
16 Ու եկաւ [ծ]Նազարէթ, ուր որ ինքը մեծցած

ե Յոհ. ժբ. 31 ; ժդ. 30 ;
Յայտ. ժգ. 2, 7 ;
* Ոմանք՝ Ետե՛ւս գնա Սատա-
նայ. ինչու որ գրուած
զ Բ Օր. զ. 13 ; ժ. 20 ;
է Մատ. դ. 5 ;
ը Սաղ. ղա. 11 ;
թ Բ Օր. զ. 16 ;
ժ Յոհ. ժդ. 30 ; Եբր. դ. 15 ;
ի Մատ. դ. 12 ; Յոհ. դ. 43 ;
լ Հմր 1 ;
խ Գործ. ժ. 37 ;
ծ Մատ. բ. 23 ; ժգ. 54 ;
Մար. զ. 1 ;

էր. և իր սովորութեանը պէս [կ]շաբաթ օրը մտաւ
17 ժողովարանը, ու ելաւ որ կարդայ։ Նա տուին
անոր Եսայի մարգարէին գիրքը. ու երբոր գիրքը
բացաւ, գտաւ ան տեղը՝ ուր որ գրուած էր,
18 [հ]Տէրոջը Հոգին իմ վրաս է. *ինչու որ՝՝ զիս
օծեց աղքատներուն աւետարան քարոզելու, զիս
ղրկեց կոտրած սիրտ ունեցողները բժշկելու.
19 Գերիներուն ազատութիւն և կոյրերուն տեսու-
թիւն քարոզելու, հարստահարութիւն կրողները
ազատ թող տալու, Տէրոջը ընդունելի տարին քա-
20 րոզելու։ Նա գիրքը գոցելով՝ տուաւ սպասաւորին
ու նստաւ. և ժողովարանը եղողներուն ամէնը
21 աչքերնին տնկած անոր կը նայէին։ Նա սկսաւ ա-
նոնց ըսել, Այսօր աս գրուածը կատարուեցաւ, ու
22 ձեր ականջները լսեցին։ Նա ամէնքը անոր վրայ կը
վկայէին, [ձ]ու կը զարմանային անոր բերնէն ելած
շնորհալի խօսքերուն վրայ՝ ու կ'ըսէին, [ղ]Ասիկայ
23 Յովսէփին որդին չէ՞։ Նա ըսաւ անոնց, Իրաւ որ
դուք ինծի պիտի ըսէք աս առակը. Բժի՛շկ՝ քու
անձդ բժշկէ. [ճ]որչափ բաներ լսեցինք որ Կափառ-
նայումի մէջ եղաւ, [մ]հոս ալ ըրէ քու քաղաքիդ
24 մէջ։ Նա ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ
25 [յ]Մարգարէ մը իր քաղաքին մէջ ընդունելի չէ։ Նա
յիրաւի կ'ըսեմ ձեզի՝ թէ [ն]Շատ որբեւարիներ կային
Եղիային օրերը Իսրայէլի մէջ, երբոր երեք տարի
ու վեց ամիս երկինքը գոցուեցաւ, անանկ որ մեծ
26 սով եղաւ բոլոր երկրին մէջ. Բայց Եղիա ա-
նոնցմէ մէկուն չղրկուեցաւ, հապա միայն Սի-
դոնացւոց Սարեփթա քաղաքին մէջ որբեւարի կնկան

կ Գործ. ժգ. 14 ; ժէ. 2 ;
հ Եսա. կա. 1 ;
* Կամ անոր համար
ձ Սաղ. խե. 2 ; Մատ. ժգ.
54 ; Մար. զ. 2 ; Ղկ. բ.
47 ;
ղ Յոհ. զ. 42 ;
ճ Մատ. դ. 13 ; ժա. 23 ;
մ Մատ. ժգ. 54 ; Մար. զ. 1 ;
յ Մատ. ժգ. 57 ; Մար. զ.
4 ; Յոհ. դ. 44 ;
ն Գ Թագ. ժէ. 9 ; ժը. 1 ;
Յակ. ե. 17 ;

27 մը ։ պ Եւ շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ
Եղիսէ մարգարէին ատենը , ու անոնցմէ մէկը
չմաքրուեցաւ , հապա միայն Նէեման Ասորին ։
28 Եւ ժողովարանին մէջ ամէնքն ալ բարկութիւնով
29 լեցուեցան՝ երբոր ասոնք լսեցին ․ Ու ելան անիկայ քաղաքէն դուրս հանեցին , և տարին զանիկայ մինչև ան լեռանը ցցուած ծայրը , որուն վրայ
իրենց քաղաքը շինուած էր , որ զանիկայ բարձր
30 տեղէն վար ձգեն ։ ջ Բայց ինքը անոնց մէջէն անցաւ գնաց ։
31 ռ Եւ իջաւ Գալիլեայի Կափառնայում քաղաքը ,
32 ու շաբաթ օրերը կը սորվեցնէր անոնց ։ Եւ կը
զարմանային անոր վարդապետութեանը վրայ ,
ս ինչու որ իշխանութիւնով էր անոր խօսքը ։
33 վ Եւ ժողովարանին մէջ մարդ մը կար , որ պիղծ
դևի ոգի ունէր , ու մեծ ձայնով մը աղաղակեց՝
34 Ըսելով , Թո՛ղ տուր , դուն մեզի հետ ի՞նչ բան
ունիս՝ Յիսուս Նազովրեցի ․ միթէ մեզ կորսնցընելո՞ւ եկար ․ տ գիտեմ քեզ ո՛վ ես , ր Աստուծոյ
35 Սուրբը ։ Եւ Յիսուս սաստեց անոր՝ ըսելով ,
Պապանձէ ու ել անկէ ․ ու դևը զանիկայ ժողովուրդին մէջտեղը գետինը զարկաւ , և ելաւ
36 անկէ , ու վնաս մը չտուաւ անոր ։ Եւ զարմանք
եկաւ ամենուն վրայ ․ և իրարու հետ կը խօսէին
ու կ'ըսէին , Աս ի՞նչ խօսք է , որ իշխանութիւնով և զօրութիւնով կը հրամայէ պիղծ ոգիներուն , ու կ'ելլեն ։ Եւ անոր համբաւը տարա-
37 ծուեցաւ շրջակայ գաւառին ամէն տեղերը ։
38 ց Ու ժողովարանէն ելլելով՝ Սիմոնին տունը
39 մտաւ ։ Սիմոնին զոքանչն ալ սաստիկ ջերմով կը
40 տանջուէր , ու անոր համար աղաչեցին իրեն ։ Եւ

պ Դ Թագ. ե. 14 ։
ջ Յոհ. ը. 59 ; ժ. 39 ։
ռ Մատ. դ. 13 ; Մար. ա. 21 ։
ս Մատ. է. 28 , 29 ; Տիտ. բ. 15 ։
վ Մար. ա. 23 ։
տ Հմր 42 ։
ր Սաղ. ժզ. 10 ; Դան. թ. 24 ; Ղկ. ա. 35 ։
ց Մատ. ը. 14 ; Մար. ա. 29 ։

Յիսուս անոր վրայ կայնելով՝ սաստեց ջերմին , որ
թողուց զանիկայ ․ և շուտ մը ելաւ ու անոնց
սպասաւորութիւն կ'ընէր ։
41 ւ Եւ արևը մարը մտած ատենը՝ ամէն անոնք որ
ունէին տեսակ տեսակ ցաւերով հիւանդներ , իրենց
բերին զանոնք ․ ինքն ալ անոնցմէ ամէն մէկուն
42 վրայ ձեռք դնելով՝ բժշկեց զանոնք ։ փ Դևեր ալ
կ'ելլէին շատերէն , կ'աղաղակէին ու կ'ըսէին թէ
Դուն ես Քրիստոս՝ Աստուծոյ Որդին ․ ք Եւ ինքը
կը սաստէր ու թող չէր տար անոնց որ խօսին ,
ինչու որ գիտէին թէ ինքը Քրիստոսն է ։
43 օ Ու երբոր ցորեկ եղաւ , ելաւ ու գնաց անապատ տեղ մը , և ժողովուրդները կը փնտռէին
զանիկայ ․ եկան մինչև անոր , ու կը ստիպէին
44 զանիկայ որ իրենցմէ չերթայ , Բայց անիկայ ըսաւ
անոնց , Պէտք է ինծի որ ուրիշ քաղաքներուն ալ
Աստուծոյ թագաւորութիւնը քարոզեմ , քանզի
45 աս բանիս համար խրկուած եմ ։ ֆ Ու Գալիլեայի ժողովարաններուն մէջ կը քարոզէր ։

ԳԼ. Ե

1 Քրիստոս Պետրոսի նաւը նստած՝ կը սորվեցընէ ժողովրդոց , 4 և ձկանց հրաշալի որսով մը կը ցուցընէ թէ Պետրոսը ու անոր ընկերները մարդոց որսորդներ պիտի ընէ ։ 12 Քրիստոս բորոտը կը մաքրէ ․ 16 անապատ տեղ մը քաշուած՝ աղօթք կ'ընէ ․ 18 անդամալոյծ մը կը բժշկէ ․ 27 իրեն կը կանչէ Մատթէոս մաքսաւորը ․ 29 մեղաւորներու հետ հաց կ'ուտէ ․ 34 և կը նախաձայնէ թէ իր համբառնալէն ետև առաքեալները նեղութիւն պիտի կրեն ու ծոմ պահեն ։

1 Ու ա եղաւ որ երբ ժողովուրդը անոր բոլորտիքը
դիզուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու համար ,
ինքն ալ Գեննեսարեթի ծովակին քովը կեցեր էր ։
2 Ու տեսաւ երկու նաւեր՝ որ ծովակին քովը կեցեր
էին , և ձկնորսները անոնց մէջէն ելած՝ ուռկանները

ւ Մատ. ը. 16 ; Մար. ա. 32 ։
փ Մար. ա. 34 ; գ. 11 ։
ք Մար. ա. 25 ; 34 ; Հմր 34 , 35 ։
օ Մար. ա. 35 ։
ֆ Մար. ա. 39 ։
ա Մատ. դ. 18 ; Մար. ա. 16 ։

3 կը լուային : Ինքը այն նաւերուն մէկուն մէջը
մտաւ որ Սիմոնինն էր եւ աղաչեց անոր՝ որ
քիչ մը ցամաքէն ծովուն մէջը տանի . եւ նստե-
լով՝ նաւուն մէջէն ժողովուրդներուն կը սորվե-
ցընէր :
4 Եւ երբոր խօսելէն դադարեցաւ , ըսաւ Սիմո-
նին , բ Առաջ տար նաւը դէպ 'ի խորունկը , եւ
5 ուռկաններնիդ ձգեցէք ջուրը որսալու : Եւ Սի-
մոն պատասխան տալով ըսաւ անոր , Վարդապետ՝
բոլոր գիշերս աշխատեցանք ու բան մը չբռնե-
ցինք ; բայց քու խօսքիդ համար ուռկանը ձգեմ :
6 Եւ երբոր ասիկա ըրին , խիստ շատ ձուկեր ժողվեցին
7 մէջը , ու իրենց ուռկանը կը պատռուէր : Եւ
աչքով կ'ընէին միւս նաւուն մէջ եղող իրենց ըն-
կերներուն՝ որ գան օգնեն իրենց . եւ եկան , ու
երկու նաւերն ալ լեցուցին , մինչեւ որ ընկղմելու
8 մօտ էին : Սիմոն Պետրոս երբոր տեսաւ , Յի-
սուսի ծունկերուն ինկաւ ու ըսաւ , Տէ՛ր գ իմ
քովէս մեկդի գնա , ինչու որ ես մեղաւոր մարդ
9 մըն եմ : Վասն զի ապշութիւնը պատեց անիկայ
եւ անոր հետը եղող ամէնը , այն իրենց բռնած
10 ձուկերուն որսին համար . Նոյնպէս ալ Զեբե-
դէոսին որդիքը Յակոբոս եւ Յովհաննէս , որոնք
Սիմոնին ընկերներն էին . ու Յիսուս ըսաւ Սիմո-
նին , Մի՛ վախնար , դ ասկէ ետեւ մարդոց որսորդ
11 պիտի ըլլաս : Եւ նաւերը ցամաքը հանելով՝
ե ամէն բան թողուցին ու անոր ետեւէն գացին :
12 զ Եւ եղաւ որ երբ ինքը քաղաքի մը մէջ էր ,
ահա մէկ մարդ մը բորոտութիւնով լեցուն երբոր
Յիսուսը տեսաւ , երեսի վրայ իյնալով աղաչեց
անոր ու ըսաւ , Տէ՛ր թէ որ ուզես , կրնաս զիս

բ Յոհ. իա. 6 ։
գ Բ Թագ. զ. 9 ; Գ Թագ. ժէ. 18 ։
դ Մատ. դ. 19 ; Մար. ա. 17 ։
ե Մատ. դ. 20 ; ժթ. 27 ; Մար. ա. 18 ; Ղկ. ժը. 28 ։
զ Մատ. ը. 2 ; Մար. ա. 40 ։

13 մաքրել : Եւ Յիսուս իր ձեռքը երկընցընելով
դպաւ անոր , ու ըսաւ , Կ'ուզեմ՝ մաքրուէ . եւ
14 շուտ մը բորոտութիւնը անկէ գնաց : է Եւ ինքը
պատուիրեց անոր որ մէկու մը չըսէ , հապա ըսաւ ,
Գնա՛ քեզ քահանային ցուցուր , եւ ը Մովսէսին
պատուիրածին պէս քու մաքրուելուդ ընծան տո՛ւր՝
15 անոնց վկայութիւն ըլլալու համար : Եւ անոր վրա-
յով խօսքը աւելի կը տարածուէր . թ Ու շատ ժողո-
վուրդներ կը ժողվուէին մտիկ ընելու , եւ անով
16 իրենց հիւանդութիւններէն բժշկուելու : ժ Եւ
ինքը անապատ տեղուանք կը քաշուէր եւ աղօթք
կ'ընէր :
17 Եւ եղաւ որ մէկ օր մը ինքը կը սորվեցընէր , ու
փարիսեցիներ եւ օրինաց վարդապետներ նստած էին ,
որոնք Գալիլեայի ու Հրէաստանի ու Երուսաղէմի
բոլոր գիւղաքաղաքներէն ժողվուած էին . ու Տէ-
րոջը զօրութիւնը ներկայ էր անոնք բժշկելու :
18 ի Եւ ահա քանի մը մարդիկ մէկ անդամալոյծ մարդ
մը մահիճով բերին , եւ հնարը կը փնտռէին թէ
ինչպէս զանիկայ ներս խօթեն , ու դնեն անոր
19 առջեւը . Եւ երբոր բազմութենէն ճամբայ չէին
գտներ՝ որ անկէ ներս խօթեն անիկայ , տանիքին
վրայ ելան , եւ զանիկայ կղմինտրներուն մէջէն մա-
հիճովը մէջտեղը Յիսուսին առջեւը իջեցուցին :
20 Եւ անիկայ տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ ա-
նոր , Ո՛վ մարդ՝ քու մեղքերդ քեզի ներուած են :
21 Եւ լ դպիրները ու փարիսեցիները սկսան խորհիլ
ու ըսել , Ո՞վ է ասիկայ , որ հայհոյութիւններ
կը խօսի . խ Ո՞վ կրնայ մեղաց թողութիւն տալ ,
22 բայց միայն Աստուած : Եւ Յիսուս իմանալով ա-

է Մատ. ը. 4 ։
ը Ղև. ժդ. 4 , 10 , 21 , 22 ։
թ Մատ. դ. 25 ; Մար. գ. 7 ; Յոհ. զ. 2 ։
ժ Մատ. ժդ. 23 ; Մար. զ. 46 ։
ի Մատ. թ. 2 ; Մար. բ. 3 ։
լ Մատ. թ. 3 ; Մար. բ. 6 , 7 ։
խ Սաղ. լբ. 5 ; Ես. խգ. 25 ։

նոնց խորհուրդները՝ պատասխան տուաւ ու ըսաւ
23 անոնց ; Սրտերնուդ մէջ ի՞նչ կը խորհիք ։ Ո՞րը
աւելի դիւրին է, ՚Քու մեղքերդ քեզի ներուած
24 են ըսե՞լը, թէ Ելի՛ր ու քալէ՛ ըսելը ։ Բայց որ-
պէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն
ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու,
(ըսաւ անդամալոյծին,) ՚Քեզի կ'ըսեմ, Ելի՛ր
25 մահիճդ առ ու տունդ գնա ։ Ան ալ իսկոյն ա-
նոնց առջեւը ելաւ, ու վրան առաւ ինչ բանի
վրայ որ պառկած էր, և գնաց իր տունը, ու Աս-
26 տուծոյ փառք կու տար ։ Եւ ամէնքը ապշած մնա-
ցին, ու Աստուծոյ փառք կու տային, և վախով
լեցուած՝ կ'ըսէին թէ Այսօր նորանշան բաներ
տեսանք ։

27 ծ Եւ աս բաներէն ետեւ ելաւ անկէ, ու տեսաւ
մէկ մաքսաւոր մը՝ որուն անունը Ղեւի էր, որ
մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր,
28 Ետեւէ՛ս եկուր ։ Ան ալ թողուց ամէնը և ելաւ
29 գնաց անոր ետեւէն ։ կ Ու Ղեւի անոր մեծ կոչունք
մը ըրաւ իր տանը մէջ . հ և շատ բազմութիւն
կար մաքսաւորներու և ուրիշներու՝ որ անոնց հետ
30 սեղան նստեր էին ։ Եւ անոնց դպիրները ու փա-
րիսեցիները տրտունջ կ'ընէին անոր աշակերտնե-
րուն ու կ'ըսէին, Ինչո՞ւ համար մաքսաւորներուն
31 և մեղաւորներուն հետ կ'ուտէք ու կը խմէք ։ Եւ
Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց ; Ա-
ռողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդնե-
32 րուն ։ Ես ձ արդարները կանչելու չեկայ, հապա
մեղաւորները ապաշխարութեան ։

33 Անոնք ալ ըսին անոր, ղ Ինչո՞ւ Յովհաննէսին
աշակերտները շատ անգամ ծոմ կը պահեն . և ա-

ծ Մատ. թ. 9 ; Մար. բ. 13, 14 ;
կ Մատ. թ. 10 ; Մար. բ. 15 ;
հ Գլ. ժե. 1 ;
ձ Մատ. թ. 13 ; ա Տիմ. ա. 15 ;
ղ Մատ. թ. 14 ; Մար. բ. 18 ;

ղօթքներ կ'ընեն, նոյնպէս ալ փարիսեցւոց աշա-
կերտները . և քուկիններդ կ'ուտեն ու կը խմեն ։
34 Անիկայ ալ ըսաւ անոնց, Կրնա՞ք հարսնիքին
տղոցը ծոմ պահել տալ՝ քանի որ փեսան իրենց
35 հետն է ։ Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան ի-
րենցմէ վերցուի, հապա ան օրերը ծոմ պիտի
36 պահեն ։ ճ Առակ մըն ալ ըսաւ անոնց թէ Մէկը
չձգեր նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ . եթէ
ոչ՝ ան նորը պատռուածք ալ կ'ընէ, ու հինցածին
հետ ալ չմիաբանիր ան նոր լաթէն եղած կտորը ։
37 Եւ մէկը նոր գինին հին տիկերու մէջ չդներ . եթէ
ոչ՝ նոր գինին տիկերը կը պատռէ, ինքը կը
38 թափի ու տիկերը կը կորնչին ։ Հապա նոր գի-
նին նոր տիկերու մէջ դնելու է, ու երկուքն ալ
39 կը պահուին ։ Եւ մէկը հին գինին խմելէն ետեւ
անմիջապէս նորը չուզեր † քանզի կ'ըսէ թէ
Հինը աւելի ախորժելի է ։

ԳԼ. Զ.

1 Քրիստոս շաբաթ օրուան պահպանութեանը վրայով փարիսեցւոց կուրութիւնը կը յանդիմանէ Սուրբ Գրոց վկայութեամբը՝ փաստով և հրաշքով ։ 13 տասուերկու առաքեալները կ'ընտրէ ։ 17 հիւանդները կը բժշկէ ։ 20 ժողովրդոց առջեւը իր աշակերտներուն խօսելով կը ցուցնէ թէ որո՛նց կը վայլէ երանութիւն և որո՛նց վայ ։ 27 կը պատուիրէ թշնամին սիրել, 46 և Աստուծոյ խօսքին հնազանդելով բարիք գործել, որ չըլլայ թէ առանց հիման հողի վրայ շինուած տան մը պէս կործանինք փորձութեան օրը ։

1 Ու մ եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ օրը ինքը
արտերուն մէջէն կ'անցնէր, և իր աշակերտները
ցորենի հասկեր փրցնելով, ձեռքերնուն մէջ կը
2 շփէին ու կ'ուտէին ։ Ու փարիսեցիներէն ոմանք
ըսին անոնց ; Աս ի՞նչ բան կ'ընէք, յ որ արժան
3 չէ ընել շաբաթ օրը ։ Եւ Յիսուս պատասխան

ճ Մատ. թ. 16, 17 ; Մար. բ. 21, 22 ;
մ Մատ. ժբ. 1 ; Մար. բ. 23 ;
յ Ել. ի. 10 ;
ն ա Թագ. իա. 6 ;
շ Ղև. իդ. 9 ;

տալով անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացեր դուք դ Դա–
ւիթին ըրածը, երբոր անօթեցաւ ինքը և անոնք
4 որ իր հետն էին. Ինչպէս անիկայ Աստուծոյ
տունը մտաւ, և առաջաւորութեան հացերը ա–
ռաւ ու կերաւ, և տուաւ անոնց ալ որ իր հետն
էին. ե որ մէկու մը օրինաւոր չէ ուտել, բայց
5 միայն քահանաներուն։ Ու ըսաւ անոնց, Որդին
մարդոյ շաբաթին ալ Տէրն է։
6 ե Ու եղաւ որ ուրիշ շաբաթ օր մըն ալ ինքը
ժողովարանը մտաւ ու կը սորվեցընէր. և հոն մարդ
7 մը կար, որուն աջ ձեռքը չորցած էր։ Ու դը–
պիրները ու փարիսեցիները անոր կը սպասէին թէ
շաբաթ օրը զանիկայ կը բժշկէ՞, որպէս զի ամբաս–
8 տանութեան առիթ մը գտնեն անոր դէմ։ Իսկ
ինքը գիտնալով անոնց խորհուրդները, ըսաւ ան
մարդուն որուն ձեռքը չորցած էր, Ելի՛ր՝ մէջտեղը
9 կայնէ. ան ալ ելաւ կայնեցաւ։ Ան ատենը
Յիսուս ըսաւ անոնց, Ձեզի բան մը հարցընեմ.
Շաբաթ օրը ի՞նչ արժան է, բարի՞ք ընել,
թէ չարիք ընել. հոգի մը ապրեցընե՞լ, թէ
10 մեռցընել։ Ու շուրջանակի ամէնուն վրայ նայե–
լով՝ ըսաւ անոր, Ձեռքդ երկընցո՛ւր. ան ալ
այնպէս ըրաւ, ու անոր ձեռքը ողջացաւ միւսին
11 պէս։ Ու անոնք կատաղութեամբ լեցուեցան, ու
իրարու հետ կը խօսէին թէ ինչ ընեն Յիսուսին։
12 զ Ու եղաւ որ ան օրերը լեռը ելաւ աղօթք ընե–
լու, ու բոլոր գիշերը Աստուծոյ աղօթք ընելով
13 անցուց։ Ու երբոր առտու եղաւ, կանչեց իր աշա–
կերտները, է ու անոնցմէ տասուերկու հոգի ընտ–
14 րեց, որոնք առաքեալ ալ անուանեց. Սիմոնը՝
ը որն որ Պետրոս ալ անուանեց, և անոր եղբայրը
Անդրէասը, Յակոբոսը ու Յովհաննէսը, Փիլիպ–

ե Մատ. ժբ. 9 ։ Մար. գ. 1 ։ Ղկ. ժգ. 14 ։ ժդ. 3 ։ Յոհ. թ. 16 ։
զ Մատ. ժդ. 23 ։
է Մատ. ժ. 1 ։
ը Յոհ. ա. 42 ։

15 պոսը և Բարթուղիմէոսը, Մատթէոսը և Թով–
մասը, Ալփէոսեան Յակոբոսը և Նախանձայոյզ
16 ըսուած Սիմոնը, թ Յակոբոսին եղբայրը Յուդան
և Իսկարիովտացի Յուդան՝ որ և մատնիչ եղաւ։
17 Ու անոնց հետ իջնելով՝ մէկ տափարակ տեղ մը
կայնեցաւ, նաև իր աշակերտներուն ժողովը ժ ու
մեծ բազմութիւն մը ժողովուրդներու բոլոր Հրէ–
աստանէն ու Երուսաղէմէն և Տիւրոսի ու Սի–
18 դոնի ծովեզերքէն. Որոնք եկան անոր խօսքերը
մտիկ ընելու, ու իրենց հիւանդութիւններէն բը–
ժըշկուելու. և պիղծ ոգիներէն նեղութիւն կրող–
19 ները ալ եկան ու կը բժշկուէին։ Ու բոլոր
ժողովուրդը ժա կ'ուզէր իրեն դպչիլ, ժբ ինչու որ
զօրութիւն կ'ելլէր իրմէն ու ամէնը կը բժշկէր։
20 Ու ինքը իր աչքերը դէպ 'ի իր աշակերտներուն
վերցուց ու ըսաւ, ժգ Երանի ձեզի աղքատներուդ,
ինչու որ ձերն է Աստուծոյ թագաւորութիւնը։
21 ժդ Երանի ձեզի որ հիմա անօթի էք, ինչու որ պի–
տի կշտանաք. ժե Երանի ձեզի որ հիմա կու լաք,
22 ինչու որ պիտի խնդաք։ ժզ Երանի է ձեզի՝ երբոր
մարդիկ ձեզ ատեն, ժէ ու երբոր ձեզ իրենց ընկե–
րութենէն մերժեն ու նախատեն, և ձեր վրայով
գէշ անուն հանեն Որդւոյ մարդոյ պատճառովը։
23 ժը Ուրախ եղէք դուք ան օրը ու ցնծացէք, որ ահա
ձեր վարձքը շատ է երկինքը. ժթ վասն զի իրենց
24 հայրերը այդպէս կ'ընէին մարգարէներուն։ ի Բայց
վա՜յ ձեզի իա հարուստներուդ, իբ ինչու որ ձեր մխի–

թ Յուդ. 1 ։
ժ Մատ. դ. 25 ։ Մար. գ. 7 ։
ժա Մատ. ժդ. 36 ։
ժբ Մար. ե. 30 ։ Ղկ. ը. 46 ։
ժգ Մատ. ե. 3 ։ ժա. 5 ։ Յակ. բ. 5 ։
ժդ Եսա. ծե. 1 ։ կե. 13 ։ Մատ. ե. 6 ։
ժե Եսա. կա. 3 ։ Մատ. ե. 4 ։
ժզ Մատ. ե. 11 ։ ա Պետ. բ. 19 ։ գ. 14 ։ դ. 14 ։
ժէ Յոհ. ժզ. 2 ։
ժը Մատ. ե. 12 ։ Գործ. ե. 41 ։ Կող. ա. 24 ։ Յակ. ա. 2 ։
ժթ Գործ. է. 51 ։
ի Ամով. զ. 1 ։ Յակ. ե. 1 ։
իա Ղկ. ժբ. 21 ։
իբ Մատ. զ. 2, 5, 16 ։ Ղկ. ժզ. 25 ։

25 թարութիւնը առած էք ։ Վա՜յ ձեզի՛ որ կուշտ
էք, ինչու որ պիտի անօթենաք ։ Վա՜յ ձեզի որ
հիմա կը խնդաք, ինչու որ սուգ պիտի ընէք ու
26 լաք ։ Վա՜յ ձեզի՛ երբոր *մարդիկ ձեր վրայով
աղէկ խօսին, ինչու որ իրենց հայրերը այդպէս
կ'ընէին սուտ մարգարէներուն ։
27 Բայց կ'ըսեմ ձեզի որ մտիկ կ'ընէք, Սիրե-
ցէք ձեր թշնամիները ։ ձեզ ատողներուն բարի
28 ըրէք ։ Ձեզ անիծողները օրհնեցէք, ձեզի նե-
ղութիւն տուողներուն համար աղօթք ըրէք ։
29 Ան որ քու մէկ ծնօտիդ կը զարնէ, միւսն ալ
մօտեցուր անոր ։ Եւ ան որ քու վերարկուդ քեզ-
մէ կը հանէ, մի՛ արգիլեր անկէ շապիկդ ալ ։
30 Ան ամէնուն որ քեզմէ կ'ուզէ՛ տուր, ու քու
31 բաներդ առնողէն ետ մի՛ պահանջեր ։ Եւ
ինչպէս կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք
32 ալ անոնց անանկ ըրէք ։ Եւ թէ որ դուք
ձեզ սիրողները սիրէք՝ ի՞նչ շնորհ կ'ունե-
նաք ։ ինչու որ մեղաւորներն ալ կը սիրեն
33 զիրենք սիրողները ։ Եւ թէ որ դուք ձեզի բա-
րի ընողներուն բարի ընէք, ի՞նչ շնորհ կ'ու-
նենաք ։ ինչու որ մեղաւորներն ալ նոյն բանը կ'ը-
34 նեն ։ Եւ թէ որ անանկ մարդիկներու փոխ
տաք՝ որոնցմէ յոյս ունիք առնելու, ի՞նչ շնորհ
կ'ունենաք ։ ինչու որ մեղաւորներն ալ մեղաւոր-
ներուն փոխ կու տան, որ նոյն չափովը ետ առնեն ։
35 Հապա սիրեցէք դուք ձեր թշնամիները, ու
բարի ըրէք, և փոխ տուէք առանց փոխարէնի

Ես. կե. 13 ։
Առակ. ժդ. 13 ։
Յոհ. ժե. 19 ։ ա Յոհ. դ. 5 ։
* Ոմանք՝ բոլոր մարդիկ
Ել. իգ. 4 ։ Առակ. իե. 21 ։ Մատ. ե. 44 ։ Հմր 35 ։ Հռովմ. ժբ. 20 ։
Ղկ. իգ. 34 ։ Գործ. է. 59 ։
Մատ. ե. 39 ։
ա Կոր. զ. 7 ։
բ Օր. ժե. 7, 8, 10 ։ Առակ. իա. 26 ։ Մատ. ե. 42 ։
Մատ. է. 12 ։
Մատ. ե. 46 ։
Մատ. ե. 42 ։
Հմր 27 ։
Սաղ. լէ. 26 ։ Հմր 30 ։

մը սպասելու ։ և ձեր վարձքը շատ պիտի ըլլայ,
ու Բարձրելոյն որդիքը պիտի ըլլաք ։ ինչու որ
անիկայ բարերար է ապերախտներուն ու չարե-
36 րուն ։ Ուրեմն գթած եղէք՝ ինչպէս որ ձեր Հայրն
37 ալ գթած է ։ Մի՛ դատէք, ու պիտի չդա-
տուիք ։ մի՛ դատապարտէք, ու պիտի չդատապար-
տուիք ։ ներեցէք, ու ձեզի պիտի ներուի ։
38 Տուէք՝ ու ձեզի պիտի տրուի ։ աղէկ չափով՝
կոխուած՝ ցնցուած՝ լեփլեցուն պիտի տրուի ձեր
գոգը ։ քանզի ան չափովը որով դուք կը չափէք,
ձեզի պիտի չափուի ։
39 Առակ մըն ալ ըսաւ անոնց, Միթէ կոյրը
կոյրին կրնա՞յ առաջնորդութիւն ընել, չէ՞ որ եր-
40 կուքն ալ փոսը պիտի իյնան ։ Աշակերտը իր
վարդապետէն մեծ չէ, բայց ամէն կատարելապէս
վարժուածը իր վարդապետին պէս կ'ըլլայ ։
41 Եւ ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը կը
տեսնես, ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր ։
42 Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբօրդ, Եղբա՛յր
թո՛ղ տուր որ աչքիդ մէջի շիւղը հանեմ ։ և դուն
քու աչքիդ մէջի գերանը չես տեսներ ։ կեղծաւո՛ր
Առաջ քու աչքէդ գերանը հանէ, ու ետքը պարզ
պիտի տեսնես քու եղբօրդ աչքին մէջի շիւղը հա-
43 նելու ։ Ինչու որ չկայ բարի ծառ մը որ չար պտուղ
բերէ, ոչ ալ չար ծառ մը որ բարի պտուղ
44 բերէ ։ Վասն զի ամէն ծառ իր պտուղէն կը
ճանչցուի ։ ինչու որ փուշերէն թուզ չեն քաղեր,
45 ու մորենիէն խաղող չեն ժողվեր ։ Բարի մարդը

Մատ. ե. 45 ։
Մատ. ե. 48 ։
Մատ. է. 1 ։
Առակ. ժթ. 17 ։
Սաղ. հթ. 12 ։
Մատ. է. 2 ։ Մար. դ. 24 ։ Յակ. բ. 13 ։
Մատ. ժե. 14 ։
Մատ. ժ. 24 ։ Յոհ. ժգ. 16 ։ ժե. 20 ։
Մատ. է. 3 ։
Տես Առակ. ժը. 17 ։
Մատ. է. 16, 17 ։
Մատ. ժբ. 33 ։
Մատ. ժբ. 34 ։

իր սրտին բարի գանձէն բարութիւն կը բղխէ, և
չար մարդը իր սրտին չար գանձէն չարութիւն կը
բղխէ. ե ինչու որ իր բերանը սրտին աւելցուքէն
կը խօսի։
46 զ Ու ինչո՞ւ զիս Տէր Տէր՝ կը կոչէք, ու ըսած
47 բաներս չէք կատարեր։ է Ան ամէնը որ ինծի կու
գայ և իմ խօսքերս կը լսէ ու անոնք կը կատարէ,
48 ձեզի ցուցընեմ թէ որո՛ւ կը նմանի։ Անիկայ տուն
շինող մարդու մը կը նմանի, որ փորեց ու խո-
րունկցուց, ու հիմը վէմի վրայ դրաւ. և ջուրերուն
յորդած ատենը գետը զարկաւ այն տանը, ու
չկրցաւ զանիկայ շարժել, ինչու որ վէմի վրայ հաս-
49 տատուած էր։ Բայց ան որ իմ խօսքերս կը լսէ
ու չկատարեր, կը նմանի այն մարդուն՝ որ հողի վը-
րայ առանց հիմի տուն կը շինէ. որուն գետը
զարկաւ, և շուտ մը փլաւ, ու այն տանը կործա-
նումը մեծ էր։

ԳԼ. Է

1 Քրիստոս աւելի մեծ հաւատք կը գտնէ հեթանոս հարիւրապետի մը վրայ քան թէ Հրէից վրայ. 10 անոր ծառան հեռուէն կը բժշկէ. 11 Նային քաղաքէն եղող այրի կնկան մը զաւակը կը յարուցանէ. 19 իր հրաշքները յիշելով պատասխան կու տայ Յովհաննէսին խրկած մարդոցը. 24 Յովհաննէսին վրայով իր ունեցած գաղափարը կը յայտնէ ժողովուրդին. 30 կը յանդիմանէ Հրէաները՝ որ ո՛չ Յովհաննէսին և ո՛չ իր վարմունքովը համոզուեցան. 36 կը ցուցընէ թէ ինքը բարեկամ է մեղաւորներուն, չէ՛ թէ զանոնք մեղաց մէջ պահելու, այլ անոնց մեղքերը ներելու, երբոր անոնք զղջեն գան ու հաւատան։

1 Ու երբոր իր բոլոր խօսքերը ժողովուրդին ականջ-
ներուն խօսելը լմնցուց, ը մտաւ Կափառ-
2 նայում։ Ու հարիւրապետի մը ծառայ ծանր
հիւանդացած՝ մօտ էր մեռնելու, որ սիրելի էր ա-
3 նոր։ Երբոր Յիսուսի վրայով լսեց, Հրէաներէն

ե Մատ. ժբ. 34.
զ Մաղ. ա. 6. Մատ. է. 21. իե. 11. Գղ. ժգ. 25.
է Մատ. է. 24.
ը Մատ. ը. 5.

տանէ մը ծերեր խրկելով, աղաչեց անոր որ գայ իր
4 ծառան ազատէ։ Անոնք ալ եկան Յիսուսին՝ և
թախանձանօք կ՚աղաչէին անոր ու կ՚ըսէին թէ
Անիկայ արժանի է՝ որուն աս շնորհը պիտի ընես.
5 Ինչու որ մեր ազգը կը սիրէ, ու ժողովարանը
6 անիկայ շինեց մեզի։ Ու Յիսուս անոնց հետ գնաց.
երբոր տունէն շատ հեռու չէր, հարիւրապետը
խրկեց անոր տանէ մը բարեկամներ, ու ըսաւ անոր,
Տէ՛ր՝ մի՛ յոգնիր, ինչու որ ես արժանի չեմ որ
7 դուն իմ յարկիս տակը մտնես. Անոր համար ես
ինքզինքս ալ արժանի չսեպեցի քեզի գալու. հա-
պա խօսքո՛վ զրուցէ, և իմ ծառաս պիտի բժշկուի.
8 Ինչու որ ես ալ իշխանութեան տակ դրուած մարդ
մըն եմ, ու իմ հրամանիս տակը զինուորներ ունիմ.
և ասոր կ՚ըսեմ՝ Գնա՛, ու կ՚երթայ. և միւսին
թէ Եկո՛ւր, ու կու գայ, և ծառայիս թէ Աս
9 բանը ըրէ, ու կ՚ընէ։ Յիսուս աս բաները լսե-
լով՝ զարմացաւ անոր վրայ. և իր ետևէն գացող
ժողովուրդին դարձաւ ու ըսաւ, Ձեզի կ՚ըսեմ,
որ Իսրայէլի մէջ անգամ ես այսչափ հաւատք
10 չգտայ։ Ու պատգամաւորները նորէն տուն դար-
ձան, և հիւանդ ծառան առողջացած գտան։
11 Ու եղաւ որ հետևեալ օրը քաղաք մը կ՚երթար,
որուն անունը Նային էր. և անոր հետը կ՚երթա-
յին իր աշակերտներէն շատերը ու մեծ բազմու-
12 թիւն։ Ու երբոր քաղաքին դրանը մօտեցաւ,
ահա մեռել մը դուրս կը հանէին, իր մօրը մէկ
հատիկ տղան. և անիկայ որբևայրի էր, ու քա-
13 ղաքին շատ ժողովուրդը անոր հետն էր։ Ու
Տէրը անիկայ տեսնելով՝ խղճաց անոր վրայ, ու
14 ըսաւ անոր, Մի՛ լար։ Ու մօտենալով՝ դագա-
ղին դպաւ, ու տանողները կանգ առին. և ըսաւ,
15 Ո՛վ պատանի՝ քեզի կ՚ըսեմ, թ Ելի՛ր։ Ու մեռելը
ելաւ նստաւ, և սկսաւ խօսիլ. ու տուաւ զանի-

թ Գղ. ը. 54. Յով. ժա. 43. Գործ. թ. 40. Հռովմ. դ. 17.

16 կայ իր մօրը ։ ա Եւ ամէնքն ալ վախով բռնուե-
ցան , ու զԱստուած կը փառաւորէին ըսելով
թէ՝ բ Մեծ մարգարէ մը ելեր է մեր մէջը . և
թէ՝ գ Աստուած իր ժողովուրդին այցելութիւն
17 ըրաւ ։ Եւ աս ձայնը անոր վրայով բոլոր Հրէաս-
տան ելաւ , ու բոլոր շրջակայ տեղուանքը ։
18 դ Եւ Յովհաննէսին պատմեցին իր աշակերտները
19 աս ամէն բաներուն վրայով ։ Յովհաննէս ալ իր
աշակերտներէն երկուքը իրեն կանչեց , և զանոնք
Յիսուսին խրկեց՝ ըսելով , Դուն ա՞ն ես որ գա-
20 լու էիր , թէ ուրիշի մը սպասենք ։ Եւ ան մար-
դիկը՝ եկան անոր ու ըսին , Յովհաննէս մկրտիչը
մեզ խրկեց քեզի , ու կ՚ըսէ , Դուն ա՞ն ես որ
21 գալու էիր , թէ ուրիշի մը սպասենք ։ Եւ նոյն
ժամուն շատերը բժշկեց իրենց հիւանդութիւննե-
րէն ու հարուածներէն և չար ոգիներէն , ու շատ
22 կոյրերու տեսութիւն շնորհեց ։ Եւ Յիսուս
ե պատասխան տալով անոնց ըսաւ , Գացէք Յով-
հաննէսին պատմեցէք ինչ որ տեսաք ու լսեցիք .
զ որ կոյրերը կը տեսնեն , կաղերը կը քալեն ,
բորոտները կը մաքրուին , խուլերը կը լսեն ,
մեռելները յարութիւն կ՚առնեն , է աղքատնե-
23 րուն աւետարան կը քարոզուի . Եւ երանի անոր
որ իմ վրայովս չգայթակղիր ։
24 ը Ու երբոր Յովհաննէսին խրկած մարդիկը գա-
ցին , Յիսուս սկսաւ ժողովուրդներուն ըսել Յով-
հաննէսին համար , Ի՞նչ տեսնելու ելաք անապա-
25 տին մէջ , եղէ՞գ մը հովէն շարժուած ։ Հապա
ի՞նչ տեսնելու ելաք , փափուկ հանդերձներ հա-
գած մա՞րդ մը . ահա անոնք որ փառաւոր հա-
գուստներով ու փափկութեան մէջ են , թագաւո-

ա Գլ. ա. 65.
բ Գլ. իդ. 19. Յօհ. դ. 19. զ. 14. թ. 17.
գ Գլ. ա. 68.
դ Մատ. ժա. 2.
ե Մատ. ժա. 5.
զ Ես. լե. 5.
է Գլ. դ. 18.
ը Մատ. ժա. 7.

26 րական պալատներն են ։ Հապա ի՞նչ տեսնելու
ելաք , մարգարէ՞ . այո՛ կ՚ըսեմ ձեզի , մարգարէէ
27 մըն ալ աւելի ։ Ինչու որ ասիկայ է որուն հա-
մար գրուած է , թ Ահա ես իմ դեսպանս կը խրկեմ
քու երեսիդ առջեւէն , որ քու ճամբադ պիտի պատ-
28 րաստէ քու առջեւդ ։ Քանզի կ՚ըսեմ ձեզի ,
Կիներէն ծնածներուն մէջը Յովհաննէս մկրտի-
չէն մեծ մարգարէ չկայ . սակայն Աստուծոյ թագա-
ւորութեանը մէջ պզտիկը անկէ մեծ է ։
29 Եւ բոլոր ժողովուրդը ու մաքսաւորները երբոր
լսեցին , արդարացուցին զԱստուած , որ ժ Յով-
30 հաննէսին մկրտութիւնովը մկրտուեցան ։ Բայց
փարիսեցիները և օրինականները ի իրենց անձին
դէմ Աստուծոյ խորհուրդը անարգեցին , որ անկէ
չմկրտուեցան ։
31 լ Ուստի որո՞ւ նմանցընեմ աս ազգին մարդիկը ,
32 և որո՞ւ կը նմանին ։ Կը նմանին տղոց , որ շու-
կաները նստելով՝ իրարու կը կանչեն ու կ՚ըսեն ,
Փող հնչեցուցինք ձեզի՝ ու չխաղացիք , ողբ կարդա-
33 ցինք ձեզի՝ ու չլացիք ։ խ Վասն զի Յովհաննէս
մկրտիչ եկաւ , ո՛չ հաց կ՚ուտէր և ո՛չ գինի կը
խմէր , ու կ՚ըսէք , Դեւ կայ անոր ներսի դին ։
34 Որդին մարդոյ եկաւ՝ կ՚ուտէ ու կը խմէ , և կ՚ը-
սէք , Ահա ուտող և արբեցող մարդ մը՝ մաքսա-
35 ւորներու ու մեղաւորներու բարեկամ . ծ Եւ ի-
մաստութիւնը արդարացաւ իր բոլոր որդւոցմէն ։
36 կ Փարիսեցիներէն մէկը կ՚աղաչէր անոր որ իր
հետը հաց ուտէ . ան ալ փարիսեցիին տունը
37 մտաւ ու սեղան նստաւ ։ Եւ ահա քաղաքին մէջ
մեղաւոր կնիկ մը կար , երբոր իմացաւ թէ անի-
կայ փարիսեցիին տունը սեղան նստեր է , մէկ շիշ

թ Մաղ. գ. 1.
ժ Մատ. գ. 5. Գլ. գ. 12.
ի Գոր. ի. 27.
լ Մատ. ժա. 16.
խ Մատ. գ. 4. Մար. ա. 6. Գլ. ա. 15.
ծ Մատ. ժա. 19.
կ Մատ. իզ. 6. Մար. ժդ. 3. Յօհ. ժա. 2.

38 մը անուշահոտ եղ բերաւ․ Ու ետեւի կողմէն անոր
ոտքերուն քովը կեցեր՝ կու լար, և արցունքովը
սկսաւ անոր ոտքերը թրջել, ու իր գլխուն մազե-
րովը կը սրբէր, և կը համբուրէր անոր ոտքերը,
39 ու եղով կ'օծէր։ Ու երբոր տեսաւ փարիսեցին՝
որ զանիկայ հրաւիրեր էր, կ'ըսէր իր մտքին մէջ,
ղ Ասիկայ թէ որ մարգարէ ըլլար, պիտի գիտնար
թէ ո՛վ և ինչպէս կնիկ է իրեն դպչողը, ինչու որ
40 մեղաւոր է։ Ու Յիսուս պատասխան տուաւ ու
ըսաւ անոր, Սիմո՛ն՝ քեզի բան մը ունիմ ըսելու․
41 ան ալ ըսաւ, Ըսէ՛ վարդապետ․ և ըսաւ, Մէկ
փոխ տուող մը երկու պարտական ունէր․ մէկը
հինգ հարիւր դահեկան պարտք ունէր, ու միւսը՝
42 յիսուն։ Ու որովհետև հատուցանելու կարողու-
թիւն չունէին, երկուքին ալ շնորհեց․ հիմա
ըսէ, Անոնցմէ ո՞րը աւելի պիտի սիրէ զանի-
43 կայ։ Պատասխան տուաւ Սիմոն ու ըսաւ, Ինծի
անանկ կ'երևնայ, թէ որուն որ շատ շնորհեց․ ան
44 ալ ըսաւ անոր, Ուղիղ դատեցիր։ Ու դառնա-
լով դէպ 'ի ան կնիկը՝ ըսաւ Սիմոնին, Կը տես-
նե՞ս աս կնիկը․ ես քու տունդ մտայ, դուն ոտքե-
րուս ջուր չտուիր, բայց ասիկայ իր արցունքովը
45 ոտքերս թրջեց, և իր * մազերովը սրբեց։ Դուն
ինծի համբոյր մը չտուիր, բայց ասիկայ հոս մտնե-
լէս 'ի վեր ոտքերս համբուրելէն չդադարեցաւ։
46 ճ Դուն իմ գլուխս ձէթով չօծեցիր, բայց ասիկայ
47 իմ ոտքերս անուշահոտ եղով օծեց։ յ Անոր հա-
մար կ'ըսեմ քեզի․ Ներուած են անոր շատ մեղ-
քերը, ինչու որ շատ սիրեց․ բայց որուն որ քիչ
48 կը ներուի, անիկայ քիչ կը սիրէ։ Ու ըսաւ
49 անոր, ջ Քու մեղքերդ ներուած են։ Ու անոր
հետ սեղան նստողները սկսան իրենց մէջը ըսել,

ղ Գլ․ ժե․ 2։
* Ոմանք՝ գլխուն մազերովը
ճ Սաղ․ իգ․ 5։
յ Ա Տիմ․ ա․ 14։
ջ Մատ․ Թ․ 2 ; Մար․ բ․ 5։

ն Ո՞վ է ասիկայ որ մեղաց թողութիւն ալ կու
50 տայ։ Ու ինքը ըսաւ կնկանը, շ Քու հաւատ-
քդ * փրկեց, գնա խաղաղութեամբ։

ԳԼ․ Ը

1 Կանայք իրենց ստացուածքովը ծառայութիւն կ'ընեն Քրիստոսի ։ 4 Քրիստոս կը զրուցէ սերմնացանին 16 և ճրագին առակը ․ 21 կ'իմացընէ թէ ո՛վ են իր մայրը ու եղբայրները ․ 22 կը սաստէ հովերուն ․ 26 և մէկ մարդէ մը դիւաց լեգէոնը դուրս հանելով թող կու տայ անոնց որ խոզերուն երամակը մտնեն ։ 37 Գադարացիք չեն ընդունիր զինքը ։ 43 Յիսուս տեսատես կնիկը կը բժշկէ ։ 49 և Յայրոսի աղջիկը կը յարուցանէ ։

1 Ու եղաւ որ անկէ ետև՝ ալ ինքը քաղաքէ քաղաք
ու գեղէ գեղ պտըտելով կը քարոզէր, և Աս-
տուծոյ թագաւորութիւնը կ'աւետարանէր ; ու
2 տասնևերկուքը իր հետն էր․ ո Նաև քանի մը կը-
նիկներ՝ որ չար ոգիներէ ու հիւանդութիւններէ
բժշկուեր էին, Մարիամ որ Մագդաղենացի
3 կ'ըսուէր, բ ուսկից որ եօթը դև ելեր էր, Ու
Յովհաննա՝ Հերովդէսին տանը վերակացուին
Քուզային կնիկը, ու Շուշան և շատ ուրիշներ,
որոնք իրենց ստացուածքովը † անոր ծառայութիւն
կ'ընէին։
4 ‡ Ու երբոր մեծ բազմութիւն ժողվուեցաւ, և
շատ քաղաքներէ իրեն եկան, առակով մը ըսաւ
5 անոնց, Սերմ ցանող մը ելաւ իր սերմը ցանելու․
ու ցանած ատենը մէկ քանին ճամբուն քովը
ինկաւ և ոտքի տակ կոխուեցաւ, ու երկինքի
6 թռչունները կերան զանիկայ։ Ու ուրիշը ապա-
ռաժի վրայ ինկաւ, ու բուսածին պէս չորցաւ՝ հողը
7 հիւթ չունենալուն համար։ Ու ուրիշը փուշերու
մէջ ինկաւ, ու փուշերը անոր հետը բուսնելով՝

ն Մատ․ Թ․ 3 ; Մար․ բ․ 7 ;
շ Մատ․ Թ․ 22 ; Մար․ ե․ 34 ; ժ․ 52 ; Գլ․ Ը․ 48 ; ժը․ 42 ;
* Կամ բժշկեց
ո Մատ․ իէ․ 55, 56 ;
բ Մար․ ժզ․ 9 ;
† Ոմանք՝ անոնց
‡ Մատ․ ժգ․ 2 ; Մար․ դ․ 1 ;

8 խեղդեցին անիկայ ։ Իսկ ուրիշը աղէկ հողի մէջ
ինկաւ , ու բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ
տուաւ ․ երբոր աս բաները կը գոչէր , կ'աղա-
ղակէր , Ան որ լսելու ականջ ունի , թող լսէ ։
9 ա Իսկ իր աշակերտները կը հարցնէին իրեն՝
10 ըսելով թէ Ի՞նչ պիտի ըլլայ ան առակը ։ Ան
ալ ըսաւ , Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ
թագաւորութեանը խորհուրդները , բայց ուրիշ-
ներուն առակներով կը խօսիմ ․ բ որ տեսնելով՝
չտեսնեն , և լսելով՝ չիմանան ։
11 գ Արդ առակը աս է ․ Սերմը Աստուծոյ խօսքն
12 է ։ Ու ճամբուն քովինները անոնք են՝ որ կը լսեն ,
ու ետքը Սատանան կու գայ՝ անոնց սրտէն կը հանէ
13 խօսքը , որ չըլլայ թէ հաւատան ու փրկուին ։ Իսկ
ապառաժին վրայինները անոնք են՝ որ երբ կը լսեն ,
ուրախութեամբ կ'ընդունին խօսքը , բայց արմատ
չունին ․ ատեն մը կը հաւատան՝ ու փորձութեան
14 ժամանակը կը հեռանան ։ Իսկ փուշերուն մէջ
ինկածը անոնք են՝ որ կը լսեն , բայց հոգերով ու
հարստութիւնով և աս կեանքիս ցանկութիւ-
ներովը զբաղած ըլլալով՝ կը խեղդուին և ան-
15 պտուղ կ'ըլլան ։ Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը
անոնք են՝ որ բարի և յօժար սրտիւ լսելով խօսքը՝
կ'ընդունին ու համբերութիւնով պտուղ կու
տան ։
16 դ Չկայ մէկը որ ճրագը վառէ ու ամանի մը տակ
կամ մահիճին ներքևը դնէ , հապա աշտանակի
վրայ կը դնէ , որ ներս մտնողները լոյսը տեսնեն ։
17 ե Վասն զի չկայ ծածուկ բան մը որ պիտի չյայտ-
նուի , ոչ ալ գաղտուկ բան մը որ պիտի չգիտ-
18 ցուի ու երևան չելլէ ։ Ուստի նայեցէք թէ ինչպէս

ա Մատ․ ժգ․ 10։ Մար․ դ․ 10։
բ Ես․ զ․ 9 ։ Մար․ դ․ 12 ։
գ Մատ․ ժգ․ 18։ Մար․ դ․ 14։
դ Մատ․ ե․ 15 ։ Մար․ դ․ 21 ։ Ղկ․ ժա․ 33 ։
ե Մատ․ ժ․ 26 ։ Ղկ․ ժբ․ 2 ։

կը լսէք ։ զ Քանզի ով որ ունի՝ անոր պիտի տրուի ,
և ով որ չունի՝ ան ալ որ ինքը կը կարծէ թէ
ունի , անկէ պիտի առնուի ։
19 է Իսկ անոր մայրը ու եղբայրները իրեն եկան ,
ու բազմութենէն չէին կրնար անոր քովը երթալ ։
20 Իսկ անոր իմացուցին՝ ըսելով , Քու մայրդ ու
եղբայրներդ դուրսը կայներ են , ու քեզ տեսնել
21 կ'ուզեն ։ Իսկ անիկայ պատասխան տալով ըսաւ
անոնց , Իմ մայրս ու իմ եղբայրներս անոնք են ,
որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու զանիկայ կը կա-
տարեն ։
22 ը Ու եղաւ որ մէկ օր մը նաւը մտաւ ինքը և իր
աշակերտներն ալ , ու ըսաւ անոնց , Ծովակին
23 միւս կողմը անցնինք ․ և ճամբայ ելան ։ Ու երբ-
որ նաւով կ'երթային , ինքը քնացաւ , ու հովի
փոթորիկ մը իջաւ ծովակին վրայ , և նաւը կը լե-
24 ցուէր , ու իրենք վտանգի մէջ էին ։ Մօտեցան
արթընցուցին անիկայ ու ըսին , Վարդապետ՝
վարդապետ՝ ահա կը կորսուինք ․ ան ալ ելաւ
սաստեց հովին ու ջուրերուն խռովութեանը , և
25 հանդարտեցան , ու խաղաղութիւն եղաւ ։ Իսկ ը-
սաւ անոնց , Ո՞ւր է ձեր հաւատքը ․ և անոնք վա-
խի մէջ ինկած զարմացան , ու իրարու կ'ըսէին ,
Արդեօք ո՞վ է ասիկայ , որ հովերուն ու ջուրին
ալ հրաման կու տայ , և կը հնազանդին ասոր ։
26 թ Ու նաւելով իջան *Գադարացւոց երկիրը , որ
27 Գալիլեային դիմացի կողմն է ։ Իսկ ինքը ցամաքը
ելլելուն պէս՝ ան քաղաքէն մարդ մը ելաւ դիմացը՝
որուն ներսը շատ ատենէ 'ի վեր դևեր կային ․ ու
անիկայ հանդերձ չէր հագներ , ոչ ալ տան մէջ
28 կը բնակէր , հապա գերեզմաններու մէջ ։ Իսկ
Յիսուսը տեսնելով՝ աղաղակեց , ու ինկաւ անոր

զ Մատ․ ժգ․ 12 ։ իե․ 29 ։ Ղկ․ ժթ․ 26 ։
է Մատ․ ժբ․ 46 ։ Մար․ գ․ 31 ։
ը Մատ․ ը․ 23 ։ Մար․ դ․ 35 ։
թ Մատ․ ը․ 28 ։ Մար․ ե․ 1 ։
* Ոմանք՝ Գերգեսացւոց

առջեւը, ու բարձր ձայնով ըսաւ, Դուն իմ հետս
ի՞նչ բան ունիս Յիսուս՝ Որդի Աստուծոյ բարձ-
29 րելոյ, կ'աղաչեմ քեզի՝ զիս մի տանջեր. (Ինչու
որ հրամայեց պիղծ ոգիին որ ան մարդէն ելլէ.
որովհետեւ շատ ատեն էր որ զանիկայ յափշտակեր
էր. եւ անիկայ շղթաներով ու ոտնակապերով
կապուած կը պահուէր, բայց կապերը կը կտրը-
30 տէր, ու դեւէն անապատը կը քշուէր.) Հար-
ցուց անոր Յիսուս ու ըսաւ, Անունդ ի՞նչ է. ան
ալ ըսաւ, Լէգէոն. ինչու որ շատ դեւեր մտեր
31 էին անոր ներսը դին: Եւ կ'աղաչէին անոր՝ ե որ
32 անդունդը երթալու հրաման չտայ իրենց: Եւ ան
տեղը շատ խոզերու երամակ մը կար՝ որ լեռը կ'ա-
րածուէին. ու աղաչեցին անոր՝ որ իրենց հրաման
տայ անոնց մէջը մտնելու. եւ հրաման տուաւ ա-
33 նոնց: Ու դեւերը մարդէն ելլելով՝ խոզերուն մէջը
մտան, եւ երամակը զառիվերէ տեղէն ծովակը վա-
34 զեց ու խեղդուեցաւ: Եւ խոզարածները աս ե-
ղած բանը տեսնելով փախան, ու պատմեցին
35 քաղաքը ու ագարակները: Եւ մարդիկ ելան եղած
բանը տեսնելու, ու եկան Յիսուսին, եւ գտան ան
մարդը՝ ուսկից որ դեւերը ելեր էին, հագուած ու
խելքը վրան Յիսուսի ոտքերուն քովը նստած, ու
36 վախցան: Եւ անոնք որ տեսեր էին, պատմեցին
37 անոնց թէ ի՛նչպէս դիւահարը ազատեցաւ: զ Եւ
Գադարացւոց շրջակայ տեղուանքը գտնուող բոլոր
բազմութիւնը կ'աղաչէր անոր, է որ իրենցմէ եր-
թայ, ինչու որ մեծ վախով բռնուած էին. ան
38 ալ նաւը մտնելով՝ ետ դարձաւ: ը Եւ ան մարդը՝
ուսկից որ դեւերը ելեր էին, կ'աղաչէր անոր որ
հետը ըլլայ. բայց Յիսուս արձակեց անիկայ ու
39 ըսաւ, Դարձիր քու տունդ, ու պատմէ ի՛նչ որ
Աստուած քեզի ըրաւ. ան ալ գնաց, ու բոլոր

ե Յայտ. ի. 3.
զ Մատ. ը. 34.
է Գոր. ժզ. 39.
ը Մար. ե. 18.

քաղաքին մէջը քարոզեց ի՛նչ որ Յիսուս իրեն
ըրաւ:
40 Ու երբոր Յիսուս ետ դարձաւ, ժողովուրդը
զանիկայ ընդունեց, ինչու որ ամէնքը անոր կը
41 սպասէին: թ Եւ ահա Յայրոս անունով մարդ մը
եկաւ, ու ինքը ժողովարանին իշխանն էր. եւ Յի-
սուսին ոտքը իյնալով կ'աղաչէր անոր, որ իր
42 տունը մտնէ. Ինչու որ մէկ հատիկ աղջիկ մը
ունէր՝ գրեթէ տասուերկու տարեկան, որ մեռնե-
լու մօտ էր. ու երբոր անիկայ կ'երթար, բազ-
մութիւնը կը նեղէր զանիկայ:
43 ժ Եւ կնիկ մը՝ որ տասուերկու տարիէ 'ի վեր ա-
րիւնի տեռատեսութեան մէջ էր, ու իր բոլոր
ունեցածը բժիշկներուն ծախք ըրած էր, եւ իրեն
44 մէկէ մը բժշկուելու ճար մը եղած չէր, Ետեւէն
մօտենալով՝ անոր հանդերձին քղանցքին դպաւ, եւ
45 իսկոյն իր արիւնին հոսումը դադարեցաւ: Եւ
Յիսուս ըսաւ, Ո՞վ էր ան որ ինծի դպաւ. երբ-
որ ամէնքը կ'ուրանային, ըսաւ Պետրոս ու անոր
հետ եղողները, Վարդապետ՝ բազմութիւնը քեզ
կը հրէ ու կը նեղէ, ու կ'ըսե՞ս թէ Ո՞վ ինծի
46 դպաւ: Եւ Յիսուս ըսաւ, Մէկը ինծի դպաւ,
քանզի ի իմացայ որ ինծմէ զօրութիւն մը ելաւ:
47 Երբոր տեսաւ կնիկը որ բանը անկէ չպահուեցաւ,
դողալով եկաւ ու անոր առջեւը ինկաւ, եւ բոլոր
ժողովուրդին առջեւը անոր պատմեց թէ ի՛նչ բա-
նի համար անոր դպեր էր, եւ թէ ի՛նչպէս ինքը
48 իսկոյն բժշկուեցաւ: Եւ Յիսուս ըսաւ անոր,
Քաջալերուէ՛ աղջիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց,
գնա խաղաղութեամբ:
49 լ Երբոր ինքը դեռ կը խօսէր, ժողովրդապետին
տունէն մէկը եկաւ ու ըսաւ անոր, Աղջիկդ մե-

թ Մատ. թ. 18. Մար. ե. 22.
ժ Մատ. թ. 20.
ի Մար. ե. 30. Գւ. զ. 19.
լ Մար. ե. 35.

50 ռաւ , ալ վարդապետը մի՛ յոգնեցըներ : Բայց
Յիսուս երբոր լսեց , պատասխան տուաւ անոր ու
ըսաւ , Մի՛ վախնար , միայն հաւատա , ու պիտի
51 ապրի : Եւ երբ տունը մտաւ՝ ուրիշ մէկը թող
չտուաւ որ մտնէ , բայց միայն Պետրոսը ու Յա-
կոբոսը և Յովհաննէսը ու աղջկան հայրը ու
52 մայրը : Ամէնքն ալ կու լային ու կ՚ողբային անոր
վրայ . և Ինքը ըսաւ , Մի՛ լաք , անիկայ մեռած
53 չէ , յ հապա կը քնանայ : Եւ անոնք ծաղր կ՚ընէին
54 զանիկայ , քանզի գիտէին թէ մեռաւ : Ու Ինքը
ամէնն ալ դուրս հանելով , բռնեց անոր ձեռքէն
55 ու կանչեց ըսելով , Աղջի՛կ ն ելի՛ր : Եւ անոր
հոգին դարձաւ , ու իսկոյն ոտք ելաւ . և Յիսուս
56 հրաման ըրաւ որ ուտելիք տան անոր : Ու անոր
ծնողքը ապշած մնացին . շ և Ինքը անոնց պատուի-
րեց որ եղած բանը մէկու մը չըսեն :

ԳԼ. Թ.

1 Քրիստոս իր աշակերտները կը խրկէ հրաշքներ ընելու և քարոզելու : 7 Հերովդէս կը ցանկայ Քրիստոսը տեսնելու : 17 Քրիստոս հինգ հազար հոգի կը կերակրէ . 18 կը հարցնէ թէ մարդիկ իրեն համար ո՞վ է կ՚ըսեն . 22 իր չարչարանքները կը նախաձայնէ . 23 ամենուն պատուէր կու տայ որ իր օրինակին հետեւին : 28 Քրիստոսի այլակերպութիւնը : 37 Քրիստոս կը բժշկէ լուսնոտը . 43 դարձեալ իր չարչարանքը կը նախաձայնէ իր աշակերտներուն . 46 կը պատուիրէ անոնց որ խոնարհ ըլլան . 51 ամենուն հետ քաղցրութեամբ վարուիլ՝ առանց վրէժխնդրութեան : 57 Քանի մը անձինք կ՚ուզեն Քրիստոսի հետեւիլ , սակայն պայմաններ կ՚առաջարկեն :

1 Եւ իր ո տասներկու աշակերտները մէկտեղ իրեն
կանչելով , անոնց զօրութիւն ու իշխանու-
թիւն տուաւ բոլոր դեւերուն վրայ և ախտերը
2 բժշկելու : Եւ չ զանոնք խրկեց որ Աստուծոյ թա-
գաւորութիւնը քարոզեն ու հիւանդները բժշկեն :

յ Յոհ. ժա. 11, 13 :
ն Գլ. է. 14 ; Յոհ. ժա. 43 :
շ Մատ. ը. 4 ; թ. 30 ; Մար. ե. 42 :
ո Մատ. ժ. 1 ; Մար. գ. 13 ; զ. 7 :
չ Մատ. ժ. 7, 8 ; Մար. զ. 12 ; Գլ. ժ. 1, 9 :

3 Եւ պ ըսաւ անոնց , Ճամբու համար բան չառնէք ,
ո՛չ գաւազան և ոչ պարկ , ո՛չ հաց և ոչ
4 ստակ , ո՛չ ալ կրկին հանդերձ ունենաք : Եւ ջ որ
5 տուն որ մտնէ՛ք՝ հոն մնացէք , ու անկէ ելէք : Ու
ռ անոնք որ ձեզ չեն ընդունիր , երբոր այն քաղաքէն
կ՚ելլէք , ս ձեր ոտքերուն փոշին անգամ թօթուեցէք՝
6 իրենց դէմ վկայութիւն ըլլալու համար : Եւ ա-
նոնք վ ելան ու գեղէ գեղ կը պտըտէին , և ամէն
տեղ աւետարանը կը քարոզէին ու բժշկութիւն
կ՚ընէին :
7 Եւ տ Հերովդէս չորրորդապետը անոր բոլոր
գործքերը լսելով՝ տարակուսանաց մէջ էր . որով-
8 հետեւ ոմանք ըսած էին թէ Յովհաննէսը յարու-
թիւն առաւ մեռելներէն , և ոմանք՝ թէ Եղիան
յայտնուեցաւ . և ուրիշներն ալ՝ թէ Առջի մար-
9 գարէներէն մէկը յարութիւն առաւ : Եւ Հերով-
դէս ըսաւ , Յովհաննէսը ես գլխատեցի , հապա
ասիկայ ո՞վ պիտի ըլլայ , որուն վրայով այսանկ
բաներ կը լսեմ . ր Ու կ՚ուզէր որ տեսնէ զանիկայ :
10 Եւ ց առաքեալները դարձան ու պատմեցին ա-
նոր ինչ որ ըրին . ւ և առաւ զանոնք՝ առանձին
անապատ տեղ մը քաշուեցաւ քաղաքի մը քով ,
11 որուն անունը Բեթսայիդա էր : Եւ ժողովուրդները
երբոր իմացան , անոր ետեւէն գացին , ու զանոնք
ընդունելով՝ կը խօսէր անոնց Աստուծոյ թագա-
ւորութեանը վրայով . և որոնք որ բժշկութեան
կարօտ էին , կը բժշկէր :
12 փ Ու երբոր օրը սկսաւ իրիկուան մօտենալ ,
տասներկուքը եկան ու ըսին անոր , Արձակէ
ժողովուրդները , որ շրջակայ գեղերը ու ագարակ-

պ Մատ. ժ. 9 ; Մար. զ. 8 ; Գլ. ժ. 4 ; իբ. 35 :
ջ Մատ. ժ. 11 ; Մար. զ. 10 :
ռ Մատ. ժ. 14 :
ս Գործ. ժգ. 51 :
վ Մար. զ. 12 :
տ Մատ. ժդ. 1 ; Մար. զ. 14 :
ր Գլ. իգ. 8 :
ց Մար. զ. 30 :
ւ Մատ. ժդ. 13 :
փ Մատ. ժդ. 15 ; Մար. զ. 35 ; Յոհ. զ. 1, 5 :

ները երթան իջևանին ու կերակուր գտնեն,
13 ինչու որ հոս անապատ տեղ մըն ենք ։ Ըսաւ ա-
նոնց, Դուք տուէք ատոնց ուտելիք · անոնք ալ
ըսին, Մենք հինգ նկանակէն ու երկու ձուկէն
աւելի բան չունինք, թէ որ չերթանք աս բոլոր
14 ժողովուրդին համար կերակուր չգնենք ։ (Քանզի
հինգ հազարի չափ էրիկ մարդիկ կային ։) Եւ ը-
սաւ իր աշակերտներուն, Զանոնք դաս դաս՝ յի-
15 սուն յիսուն նստեցուցէք ։ Եւ անանկ ըրին ու
16 ամէնն ալ նստեցուցին ։ Եւ ան հինգ նկանակը ու
երկու ձուկը առնելով՝ ու դէպ 'ի երկինքը նայելով,
օրհնեց զանոնք ու կտրեց, և կու տար աշակերտնե-
17 րուն, որ ժողովուրդին առջևը դնեն ։ Եւ կերան
ու կշտացան ամէնքն ալ, ու աւելցած կտորուանք-
ները տասուերկու կողով վերցուցին ։
18 Խ Եւ եղաւ որ երբ ինքը առանձին աղօթք կ'ընէր,
աշակերտներն ալ իր հետը էին, և հարցուց ա-
նոնց ըսելով, Ժողովուրդները ինծի համար ո՞վ
19 կ'ըսեն թէ եմ ։ Անոնք ալ պատասխան տալով
ըսին, Ոմանք՝ Ծ Յովհաննէս մկրտիչը, և ուրիշները՝
Եղիան, ուրիշներն ալ՝ թէ Առջի մարգարէներէն
20 մէկը յարութիւն առեր է ։ Եւ ինքը ըսաւ անոնց,
Հապա դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ ·
Կ պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ, Աստուծոյ
21 Քրիստոսը ։ Եւ Հ ինքը սաստիկ պատուիրեց ա-
22 նոնց որ աս բանը մէկու մը չըսուցին · Եւ ըսաւ
թէ, Ձ Պէտք է որ Որդին մարդոյ շատ չարչարանք-
ներ կրէ, և ծերերէն ու քահանայապետներէն և
դպիրներէն մերժուի ու սպաննուի, ու երրորդ
23 օրը յարութիւն առնէ ։ Ղ Եւ ամենուն կ'ըսէր,
Թէ որ մէկը կ'ուզէ իմ ետևէս գալ, թող իր

Խ Մատ. ժզ. 13 ։ Մար. ը. 27 ։
Ծ Մատ. ժդ. 2 ։ Հմր 7, 8 ։
Կ Մատ. ժզ. 16 ։ Յօհ. զ. 70 ։
Հ Մատ. ժզ. 20 ։
Ձ Մատ. ժզ. 21 ։ ժէ. 21 ։
Ղ Մատ. ժ. 38 ։ ժզ. 24 ։ Մար. ը. 34 ։ Ղւ. ժդ. 27 ։

անձը ուրանայ, և ամէն օր իր խաչը վերցընէ, ու
24 իմ ետևէս գայ ։ Վասն զի ո՛վ որ կ'ուզէ իր անձը
ապրեցընել, պիտի կորսնցընէ զանիկայ · և ո՛վ
որ ինծի համար իր անձը կորսնցընէ, պիտի
25 ապրեցընէ զանիկա ։ Ճ Քանզի ի՞նչ կը շահի մարդ
մը՝ թէ որ բոլոր աշխարհը վաստըկի, և իր անձը
26 կորսնցընէ կամ վնասէ ։ Մ Վասն զի ո՛վ որ զիս
ու իմ խօսքերս [illegible] ամօթ սեպէ, Որդին
մարդոյ ալ զանիկայ [illegible] ամօթ պիտի սեպէ՝
երբոր գայ իր ու Հօրը և սուրբ հրեշտակներուն
27 փառքովը ։ Յ Բայց ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ հոս
կայնողներէն մէկ քանիները կան՝ որոնք մահուան
համը պիտի չառնեն, մինչև որ տեսնեն Աստուծոյ
թագաւորութիւնը ։
28 Ն Եւ եղաւ որ աս խօսքերէն գրեթէ ութ օր ետ-
քը՝ Պետրոսը ու Յովհաննէսը և Յակոբոսը առ-
29 նելով՝ լեռը ելաւ աղօթք ընելու ։ Եւ երբոր
ինքը աղօթք կ'ընէր, իր երեսին տեսքը ուրիշ
կերպ մը եղաւ, ու իր հագուստը ճերմակ ու փայ-
30 լուն եղաւ ։ Եւ ահա երկու մարդիկ իր հետը կը
31 խօսէին, որոնք Մովսէս ու Եղիա էին, փառքով
երևցած, և անոր [illegible] ելլելուն վրայով կը
խօսէին, որ Երուսաղէմի մէջ պիտի կատարուէր ։
32 Բայց Պետրոս և անոր հետ եղողները Շ քունով
ծանրացած էին, ու երբոր արթընցան, տեսան
անոր փառքը և ան երկու մարդիկը՝ որ անոր քո-
33 վը կեցեր էին ։ Եւ եղաւ որ երբ անոնք կը զա-
տուէին անոր քովէն, Պետրոս ըսաւ Յիսուսին,
Վարդապետ՝ աղէկ է որ հոս կենանք, ու երեք
խրճիթ շինենք, մէկը քեզի, և մէկը Մովսէսին, ու
մէկը Եղիային · վասն զի չէր գիտեր ինչ կը խօ-
34 սէր ։ Եւ քանի որ անիկայ աս բաները կը խօ-

Ճ Մատ. ժզ. 26 ։ Մար. ը. 36 ։
Մ Մատ. ժ. 33 ։ Մար. ը. 38 ։ Բ Տիմ. բ. 12 ։
Յ Մատ. ժզ. 28 ։ Մար. ը. 39 ։
Ն Մատ. ժէ. 1 ։ Մար. թ. 1 ։
Շ Դան. ը. 18 ։ ժ. 9 ։

սէր՝, ամպ մը եկաւ ու անոնց վրայ հովանի եղաւ ,
35 և ամպին տակը մտած ատենին վախցան ։ Ու
ձայն մը եղաւ ամպէն՝ ըսելով , ʺԱսիկայ է իմ սի-
36 րելի Որդիս , ւԱնո՛ր մտիկ ըրէք ։ Եւ այն ձայնը
որ եղաւ , Յիսուս մինակ գտնուեցաւ ։ ҭՈւ ի-
րենք լուռ կեցան , և իրենց տեսածներէն այն օրե-
րը մէկուն բան մը չպատմեցին ։
37 Ջ Ու եղաւ որ հետևեալ օրը՝ երբոր անոնք լեռ-
նէն վար իջան , շատ ժողովուրդ անոր դէմը ելաւ ։
38 Եւ ահա ժողովուրդին մէջէն մէկ մարդ մը աղաղա-
կեց ու ըսաւ , Վարդապետ՝ կ'աղաչեմ քեզի՝ նայէ
39 իմ որդիիս , քանզի իմ մէկ հատիկս է ։ Եւ ահա
ոգի մը կը բռնէ զանիկայ ։ ան ալ յանկարծ կը
կանչուըռտէ , և զանիկայ ցնցելով կը փրփրցնէ ,
ու հազիւ կը զատուի անկէ՝ ջարդուբուրդ ընելով
40 զանիկայ ։ Եւ քու աշակերտներուդ աղաչեցի որ
41 հանեն զանիկայ , ու չկրցան ։ Պատասխան
տուաւ Յիսուս ու ըսաւ , Ո՛վ անհաւատ և խո-
տորեալ ազգ՝ մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ
42 ու ձեզի համբերեմ ։ հոս բեր քու որդիդ ։ Ու
երբոր դեռ կը մօտենար , դևը զանիկայ գետինը
43 զարկաւ ու սաստիկ ցնցեց ։ Իսկ Յիսուս սաստեց
պիղծ ոգիին , և բժշկեց տղան ու զանիկայ իր հօ-
44 րը տուաւ ։ Եւ ամէնքը կը զարմանային Աս-
տուծոյ մեծամեծ գործքերուն վրայ ։
Ու քանի որ ամէնքը կը զարմանային Յիսուսին
ըրած բոլոր գործքերուն վրայ , անիկայ ըսաւ իր
աշակերտներուն , –Դուք աս խօսքերը ականջներ-
նիդ դրէք , վասն զի Որդին մարդոյ պիտի մատ-
45 նուի մարդոց ձեռքը ։ ʺԲայց անոնք չէին իմանար
այն խօսքը , և անոնցմէ ծածկուած էր որ չհասկը-

ʺ Մատ. գ. 17 ։
ւ Գոր. գ. 22 ։
ҭ Մատ. ժէ. 9 ։
Ջ Մատ. ժէ. 14 ։ Մար. թ. 13 , 16 ։
– Մատ. ժէ. 21 ։
ʺ Մար. թ. 31 ։ Ղու. ը. 50 ։ ժը. 34 ։

նան՝ , ու կը վախնային այն խօսքին համար իրեն
հարցընելու ։
46 Վ Խորհուրդ մըն ալ մտաւ անոնց մէջ թէ ար-
47 դեօք իրենց մէջը ո՛վ է մեծ ։ Իսկ Յիսուս անոնց
սրտին խորհուրդը իմանալով , տղայ մը առաւ ու
48 զանիկայ իր քովը կայնեցուց , Եւ ըսաւ անոնց ,
ҭ Ով որ աս տղան իմ անունովս կ'ընդունի՝ զիս
կ'ընդունի . և ան որ զիս կ'ընդունի՝ անիկայ զիս
ղրկողը կ'ընդունի . վասն զի ր ան որ ձեր ամենուն
մէջը պզտիկ է , անիկայ մեծ պիտի ըլլայ ։
49 չ Պատասխան տուաւ Յովհաննէս ու ըսաւ ,
Վարդապետ՝ մէկը տեսանք որ քու անունովդ դևեր
կը հանէր , և զանիկայ արգիլեցինք , ինչու որ մեր
50 հետը չպտըտիր ։ Եւ Յիսուս ըսաւ անոր , Մի՛
արգիլէք . –քանզի ան որ *մեզի հակառակ չէ ,
մեր'' կողմէն է ։
51 Ու եղաւ որ երբ ÷ իր աշխարհէս վերնալու օրերը
կը կատարուէր , ինքն ալ † հաստատ որոշեց'' Երու-
52 սաղէմ երթալ ։ Եւ իր երեսին առջևէն պատ-
գամաւորներ ղրկեց , որ երբոր գացին՝ Սամարա-
ցւոց մէկ գեղը մտան որ իրեն համար պատրաստու-
53 թիւն մը ընեն ։ +Եւ չընդունեցին զանիկայ ,
ինչու որ անոր երեսը դէպ 'ի Երուսաղէմ երթա-
54 լու դարձած էր ։ Երբոր իր աշակերտները Յա-
կոբոս ու Յովհաննէս տեսան , ըսին , Տէ՛ր՝ կ'ու-
զե՞ս որ ըսենք , ու երկինքէն կրակ իջնէ և սպա-
նեցընէ անոնք , ∘ինչպէս որ Եղիան ալ ըրաւ ։
55 Եւ դարձաւ յանդիմանեց զանոնք՝ ըսելով , Չէ՞ք
56 գիտեր թէ ինչ հոգիի տէր էք դուք . ‡ Վասն զի

Վ Մատ. ժը. 1 ։ Մար. թ. 33 ։
ҭ Մատ. ժ. 40 ։ ժը. 5 ։ Մար. թ. 36 ։ Յոհ. ժբ. 44 ։ ժգ. 20 ։
ր Մատ. իգ. 11 , 12 ։
չ Մար. թ. 37 ։ Տես Թուոց. ժա. 28 ։
– Մատ. ժբ. 30 ։ Ղու. ժա. 23 ։
* Ոմանք՝ ձեզի հակառակ չէ , ձեր
÷ Մար. ժզ. 19 ։ Գործ. ա. 2 ։
† Յուն. երեսը հաստատեց
+ Յոհ. դ. 4 , 9 ։
∘ Դ Թագ. ա. 10 , 12 ։
‡ Ոմանք չունին ։

ֆ Որդին մարդոյ չեկաւ մարդոց հոգիները կորսնցնելու, հապա փրկելու." Ու ուրիշ գեղ մը գացին։
57 ա Ու երբոր անոնք ճամբան կ՚երթային, մէկը
ըսաւ անոր, Տէ՛ր, քու ետեւէդ գամ՝ ուր որ եր-
58 թաս։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները
որջեր ունին, ու երկնից թռչունները բոյներ,
բայց Որդին մարդոյ տեղ մը չունի, որ հոն իր
գլուխը դնէ։
59 բ Մէկ ուրիշի մըն ալ ըսաւ, Եկուր իմ ետե-
ւէս. ան ալ ըսաւ, Տէ՛ր, ինծի հրաման տուր որ
60 առաջ երթամ իմ հայրս թաղեմ։ Յիսուս ը-
սաւ անոր, Թո՛ղ տուր մեռելներուն որ թաղեն
իրենց մեռելները. բայց դուն գնա Աստուծոյ
թագաւորութիւնը քարոզէ։
61 Մէկ ուրիշ մըն ալ ըսաւ, Տէ՛ր, գ Ես քու ետե-
ւէդ պիտի գամ, բայց ինծի հրաման տուր որ
առաջ իմ տանս մէջ եղողներուն հրաժարական
62 ողջոյն տամ։ Յիսուս ըսաւ անոր. Ո՛չ մէկը
որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի,
Աստուծոյ թագաւորութեանը յարմար է։

ԳԼ. Ժ

1 Քրիստոս եօթանասուն աշակերտներ կը խրկէ հրաշագործութիւն ընելու և քարոզելու. 17 կը պատուիրէ անոնց որ խոնարհ ըլլան, և կ՚իմացընէ թէ ինչ բանի համար պարտին ուրախանալ. 21 շնորհակալ կ՚ըլլայ Հօրը՝ անոր շնորհացը համար. 23 երանութիւն կու տայ իր աշակերտներուն երջանիկ վիճակին. 25 կը սորվեցընէ օրինականին թէ ինչ ընելու է որ յաւիտենական կեանքը ժառանգէ. և թէ ո՛վ որ իր ողորմութեանը կարօտ է, անիկայ իրեն ընկեր սեպելու է. 41 կը յանդիմանէ Մարթան, ու անոր քոյրը Մարիամը կը գովէ։

1 Ասոր բաներէն ետեւ Տէրը ուրիշ եօթանասուն ալ
որոշեց, դ և զանոնք իր առջեւէն երկու երկու

ֆ Յոհ. գ. 17. ժբ. 47.
ա Մատ. ը. 19.
բ Մատ. ը. 21.
գ Տես Գ Թագ. ժթ. 20.
դ Մատ. ժ. 1. Մար. զ. 7.

խրկեց բոլոր քաղաքները ու տեղերը՝ ուր որ ինքը
2 պիտի երթար։ Եւ կ՚ըսէր անոնց, ե Հունձքը շատ
է, ու մշակները քիչ. զ ուստի հունձքին Տէրոջը
3 աղաչեցէք որ մշակներ հանէ իր հունձքին։ Գա-
ցէք. է ահա ես ձեզ կը խրկեմ իբրեւ գառներ
4 գայլերու մէջ։ ը Հետերնիդ քսակ մի՛ առնէք,
ո՛չ ալ պարկ, և ո՛չ կօշիկներ, թ Ու ճամբան
5 մէկու մը բարեւ մի՛ տաք։ ժ Եւ ո՛ր տուն որ
6 մտնէք, առաջ ըսէք, * Բարեւ աս տանս։ Ու
թէ որ հոն † բարեւի արժանաւոր մարդ" կայ, ձեր
բարեւը պիտի հանգչի անոր վրայ, հապա թէ չէ՝
7 ձեզի պիտի դառնայ։ ի Եւ ան տանը մէջ մնա-
ցէք, ու լ անոնցմէ կերէք ու խմեցէք, խ ինչու որ
մշակը իր վարձքին արժանի է. տունէ տուն մի՛
8 փոխուիք։ Եւ ո՛ր քաղաք որ մտնէք ու ձեզ
ընդունին, ինչ որ առջեւնիդ դրուի, կերէք.
9 ծ Ու բժշկեցէք անոր մէջի հիւանդները, և ըսէք
անոնց, կ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի մօ-
10 տեցեր է։ Բայց ո՛ր քաղաք որ մտնէք ու ձեզ
չընդունին, անոր հրապարակները ելլելով՝ ըսէք,
11 հ Ան փոշին ալ որ ձեր քաղաքէն մեր ոտքերուն
փակած է, ձեզի կը թօթուենք. միայն թէ աս
գիտնաք որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի
12 մօտեցեր է։ Ձեզի կ՚ըսեմ ձ որ ան օրը Սոդոմի
[illegible] աւելի դիւրին պիտի ըլլայ, քան թէ
13 ան քաղաքին։ ղ Վա՜յ քեզ Քորազին, վա՜յ քեզ

ե Մատ. թ. 37, 38. Յոհ. դ. 35.
զ Բ Թես. գ. 1.
է Մատ. ժ. 16.
ը Մատ. ժ. 9, 10. Մար. զ. 8. Գլ. թ. 3.
թ Դ Թագ. դ. 29.
ժ Մատ. ժ. 12.
* Յուն. Խաղաղութիւն
† Յուն. խաղաղութեան որդի
ի Մատ. ժ. 11.
լ Ա Կոր. ժ. 27.
խ Մատ. ժ. 10. Ա Կոր. թ. 4, 14. Ա Տիմ. ե. 18.
ծ Գլ. թ. 2.
կ Մատ. գ. 2. դ. 17. ժ. 7. Հմր 11.
հ Մատ. ժ. 14. Գլ. թ. 5. Գործ. ժգ. 51. ժը. 6.
ձ Մատ. ժ. 15. Մար. զ. 11.
ղ Մատ. ժա. 21.

Բեթսայիդա՜, հ ինչու որ եթէ Տիւրոսի ու Սիդոնի
մէջ եղած ըլլային ան հրաշքները՝ որ ձեր մէջը
եղան, շատոնցմէ քուրձով՝ ու մոխիրի մէջ նստե-
14 լով ապաշխարած պիտի ըլլային։ Բայց դատաս-
տանին օրը Տիւրոսին ու Սիդոնին աւելի դիւրին
15 պիտի ըլլայ, քան թէ ձեզի։ ձ Ու դուն Կա-
փառնայում՝ ղ որ մինչև երկինքը բարձրացած ես,
16 ճ մինչև դժոխքը պիտի իջնես։ մ Ան որ ձեզի
մտիկ կ'ընէ, ինծի մտիկ կ'ընէ. յ և ան որ ձեզ
կը մերժէ, զիս կը մերժէ. ն և ան որ զիս կը մեր-
ժէ, զիս ղրկողը կը մերժէ։
17 շ Ու եօթանասուն աշակերտները դարձան ու-
րախութեամբ ու ըսին, Տէ՛ր, քու անունովդ
18 դևերն ալ մեզի կը հնազանդին։ Ու ըսաւ ա-
նոնց, ո Սատանան փայլակի պէս երկինքէն վար
19 ինկած կը տեսնէի։ չ Ահա ձեզի իշխանութիւն
կու տամ օձերու ու կարիճներու՝ և թշնամիին
բոլոր զօրութեանը վրայ կոխկռտելու. ու ընաւ
20 մէկ բան մը ձեզի պիտի չվնասէ։ Բայց դուք
անոր վրայ մի՛ ուրախանաք որ չար ոգիները ձեզի
կը հնազանդին, հապա ուրախացէ՛ք որ պ ձեր ա-
նունները երկինքը գրուած են։
21 ջ Նոյն ժամուն Յիսուս հոգիով ուրախացաւ
ու ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ ո՛վ Հայր՝ Տէր
երկնի և երկրի, որ աս բաները ծածուկ պահեցիր
իմաստուններէն և գիտուններէն, ու տղոց յայտնե-
ցիր. այո՛ ո՛վ Հայր, ինչու որ քու առջևդ ասանկ

հ Եզեկ. գ. 6։
ձ Մատ. ժա. 23։
ղ Ծն. ժդ. 4; բ Օր. ա. 28; Եսա. ժգ. 13; Երեմ. ծա. 53։
ճ Տես Եզեկ. իզ. 20; լբ. 18։
մ Մատ. ժ. 40; Մար. թ. 37; Յոհ. ժգ. 20։
յ ա Թես. դ. 8։
ն Յոհ. ե. 23։
շ Հմր 1։
ո Յոհ. ժբ. 31; ժզ. 11; Յայտ. թ. 1; ժբ. 8, 9։
չ Մար. ժզ. 18; Գործ. իը. 5։
պ Ել. լբ. 32; Սաղ. կթ. 28; Եսա. դ. 3; Դան. ժբ. 1; Փիլ. դ. 3; Եբր. ժբ. 23; Յայտ. ժգ. 8; ի. 12; իա. 27։
ջ Մատ. ժա. 25։

22 հաճելի եղաւ։ ռ Ամէն բան ինծի տրուեցաւ իմ
Հօրմէս, ս ու մէկը չգիտեր թէ ո՛վ է Որդին,
բայց միայն Հայրը. և թէ ո՛վ է Հայրը, բայց
միայն Որդին, և ան՝ որուն որ Որդին կ'ուզէ
յայտնել։
23 Ու աշակերտներուն դառնալով՝ առանձին ըսաւ,
վ Երանի՜ ան աչքերուն՝ որ ձեր տեսածները կը
24 տեսնեն. Վասնզի կ'ըսեմ ձեզի, որ տ շատ մար-
գարէներ և թագաւորներ ուզեցին ձեր տեսածները
տեսնել, ու չտեսան, և ձեր լսածները լսել, ու
չլսեցին։
25 Ու ահա մէկ օրինական մը ելաւ, ու զանիկայ
փորձելով ըսաւ, ր Վարդապե՛տ, ի՞նչ ընեմ որ
26 յաւիտենական կեանքը ժառանգեմ։ Անիկայ ալ
ըսաւ անոր, Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է. ին-
27 չո՞ր կը կարդաս։ Պատասխան տուաւ անիկայ
ու ըսաւ, ց Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր
սրտէդ ու քու բոլոր անձէդ և քու բոլոր զօրու-
թենէդ ու քու բոլոր միտքէդ, և ւ քու ընկերդ
28 ալ քու անձիդ պէս։ Ու ինքը ըսաւ անոր, Շի-
տակ պատասխան տուիր. ատիկայ ըրէ՛ փ ու
29 պիտի ապրիս։ Իսկ անիկայ ուզելով ք ինքզինքը
արդարացընել, ըսաւ Յիսուսին, Բայց իմ ըն-
30 կերս ո՞վ է։ Պատասխան տուաւ Յիսուս ու ը-
սաւ, Մէկ մարդ մը Երուսաղէմէն Երիքով կ'իջնէր.
ու աւազակներու ձեռք ինկաւ, որոնք մերկացու-
ցին զանիկայ ու վիրաւորելով կիսամեռ թողուցին
31 ու գացին։ Ու պատահեցաւ որ քահանայ մը ան
ճամբայէն կ'իջնէր, ու զանիկայ տեսնելով՝ օ ան

ռ Մատ. իը. 18; Յոհ. գ. 35; ե. 27; ժէ. 2։
ս Յոհ. ա. 18; զ. 44, 46։
վ Մատ. ժգ. 16։
տ ա Պետ. ա. 10։
ր Մատ. ժթ. 16; իբ. 35։
ց բ Օր. զ. 5։
ւ Ղև. ժթ. 18։
փ Ղև. ժը. 5; Նեեմ. թ. 29; Եզեկ. ի. 11, 13, 21; Հռով. ժ. 5։
ք Գլ. ժզ. 15։
օ Սաղ. լը. 11։

32 դէպի կողմէն անցաւ ։ Նոյնպէս ալ Ղեւտացի մը
այն տեղը հասնելով՝ գնաց ու տեսաւ, և անդիի
33 կողմէն անցաւ ։ ‡ Բայց Սամարացի մը որ ճամբոր-
դութիւն կ'ընէր, եկաւ անոր քովը, ու զանիկայ
34 տեսնելով՝ խղճաց ․ Ու մօտեցաւ անոր վէրքերը
փաթթեց՝ վրան ձէթ և գինի թափելով, ու իր
գրաստին վրայ դնելով՝ տարաւ անիկայ մէկ պան-
35 դոկ մը, և անոր հոգ տարաւ ։ Ու հետեւեալ օրը
երբոր կ'ելլէր անկէ, երկու դահեկան հանեց պան-
դոկապետին տուաւ և անոր ըսաւ, Հոգ տար
ատոր, ու ինչ որ աւելի ծախք ընես, ես դառ-
36 նալուս ես քեզի կը վճարեմ ։ Հիմա այն իրե-
քէն ո՞րը քեզի կ'երեւնայ ընկեր ըլլալ աւազակ-
37 ներուն ձեռքը իյնողին ։ Ու անիկայ ըսաւ, Ան որ
անոր ողորմութիւն ըրաւ ։ Ան ատենը Յիսուս ը-
սաւ անոր, Գնա՛ դուն ալ այնպէս ըրէ ։
38 Ու եղաւ որ երբ անոնք կ'երթային, ինքը գեղ
մը մտաւ ․ և մէկ կնիկ մը ‖ Մարթա անունով
39 զանիկայ իր տունը ընդունեց ։ Ու անիկայ քոյր
մը ունէր, որուն անունը Մարիամ էր, ‡ որ եկա-
‡ Յիսուսի ոտքերուն քովը նստաւ, ու անոր խօս-
40 քերը մտիկ կ'ընէր ։ Բայց Մարթա շատ սպասա-
ւորութիւնով զբաղած էր, եկաւ անոր քովը ու
ըսաւ, Տէ՛ր՝ քու հոգդ չէ՞, որ իմ քոյրս զիս մի-
նակ թողուց սպասաւորութեան մէջ ․ ուստի ա-
41 տոր զրուցէ՛ որ ինծի օգնէ ։ Պատասխան տուաւ
Յիսուս ու ըսաւ անոր, Մարթա՛ Մարթա, դուն
շատ բաներու համար հոգ ընելով կը տագնապիս ․
42 Բայց մէկ բան մը պէտք է, և Մարիամ այն աղէկ
բաժինը ընտրեց, որ իրմէ պիտի չառնուի ։

‡ Յօհ. դ. 9 ։
‖ Յօհ. ժա. 1 ։ ժբ. 2, 3 ։
‡ ա Կոր. է. 32, Ձ ։
‡ Գլ. ը. 35 ։ Գործ. իբ. 3 ։

ԳԼ. ԺԱ.

1 Քրիստոս իր աշակերտներուն կը սորվեցնէ աղօթք ընել, և կը պատուիրէ որ ստէպ աղօթք ընեն ․ 11 հաստատելով որ

այսպէս՝ Աստուած իրենց բարիքներ պիտի ընէ ․ 14 համր դեւ մը հանելով կը յանդիմանէ հայհոյիչ փարիսեցիները, 28 և կը ցուցընէ թէ որո՛նք են երանելիները ․ 29 ժողովրդոց կը քարոզէ, 37 և կը յանդիմանէ փարիսեցւոց՝ դպրաց և օրինականաց կեղծաւորեալ սրբութիւնը ։

1 Ու եղաւ որ մէկ տեղ մը աղօթք կ'ընէր ․ ու երբ-
որ դադարեցաւ, իր աշակերտներէն մէկը ը-
սաւ իրեն, Տէ՛ր՝ մեզի աղօթք ընե՛լ սորվեցուր,
ինչպէս որ Յովհաննէս ալ իր աշակերտներուն սոր-
2 վեցուց ։ Ու ըսաւ անոնց, Երբոր աղօթք կ'ը-
նէք, ըսէ՛ք, ‖ Ո՛վ Հայր *մեր՝ որ երկինքն ես",
քու անունդ սուրբ ըլլայ ․ քու թագաւորութիւնդ
գայ ․ *քու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ ա-
3 նանկ ալ երկրիս վրայ" ․ Մեր ամէն աւուր հացը
4 օրէ օր մեզի տո՛ւր ․ Ու մեզի ներէ՛ մեր մեղքերը,
ինչու որ մենք ալ կը ներենք այն ամենուն՝ որ մեզի
պարտական են ․ ու մեզ փորձութեան մի՛ տանիր,
*հապա չարէն մեզ ազատէ՛" ։
5 Ու ըսաւ անոնց ․ Ձեզմէ ո՞վ է անիկայ, որ
բարեկամ մը ունենայ, ու կէս գիշերուան մէջ
երթայ անոր և ըսէ անոր, Բարեկա՛մ ինծի իրեք
6 նկանակ փոխ տուր ․ Ինչու որ իմ մէկ բարեկամս
ճամբայէ ինծի եկաւ, ու բան մը չունիմ անոր
7 առջևը դնելու ։ Անիկայ ալ ներսէն պատասխան
տայ և ըսէ, Զիս մի՛ յոգնեցըներ, արդէն դու-
ռը գոցուած է, ու տղաքս իմ քովս անկողինի մէջ
8 են, չեմ կրնար ելլել ու քեզի հաց տալ ։ Ձեզի
կ'ըսեմ, ‡ Թէև բարեկամութեան համար չելլէ
տայ անոր, սակայն անոր թախանձանքին համար
9 պիտի ելլէ ու պէտք եղածը տայ անոր ։ ‡ Ես ալ
կ'ըսեմ ձեզի, Խնդրեցէ՛ք և պիտի տրուի ձեզի,
փնտռեցէ՛ք ու պիտի գտնէք ․ դուռը զարկէ՛ք և
10 պիտի բացուի ձեզի ․ Վասն զի ամէն ով որ կը

‖ Մատ. զ. 9 ։
* Ոմանք չունին ։
‡ Գլ. ժը. 1, Ձ ։
‡ Մատ. է. 7 ։ իա. 22 ։ Մար. ժա. 24 ։ Յօհ. ժե. 7 ։ Յակ. ա. 6 ։ ա Յօհ. գ. 22 ։

խնդրէ՝ կ'առնէ, և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ,
և ով որ դուռը կը զարնէ՝ պիտի բացուի անոր։
11 գ Ձեզմէ ո՞վ է այն հայրը՝ որմէն իր որդին հաց որ
ուզէ, միթէ քա՞ր պիտի տայ անոր. կամ թէ որ
ձուկ ուզէ, միթէ ձուկին տեղը օ՞ձ պիտի տայ
12 անոր. Նաեւ կամ թէ որ հաւկիթ ուզէ, միթէ
13 կարի՞ճ պիտի տայ անոր։ Ուստի եթէ դուք որ
չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ
գիտէք, ո՜րչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ
Հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը խնդրեն։
14 դ Ու դեւ մը կը հանէր, և անիկայ համր էր. ու
եղաւ որ երբ դեւը ելաւ, համրը խօսեցաւ, և
15 ժողովուրդները զարմացան։ Բայց անոնցմէ մէկ
քանիները ըսին, ե Անիկայ դեւերուն Բէեղզեբուղ
16 իշխանին միջոցովը դեւերը կը հանէ։ Ուրիշներն
ալ փորձելով զ երկինքէն նշան մը կ'ուզէին անկէ։
17 է Բայց ինքը ը գիտնալով անոնց խորհուրդները՝
ըսաւ անոնց, Ամէն թագաւորութիւն իրեն դէմ
բաժնուած կ'աւերի, և տուն մը * իրեն դէմ
18 բաժնուած՝ կը կործանի. Հապա թէ որ Սատա-
նան իրեն դէմ բաժնուած է, անոր թագաւորու-
թիւնը ինչպէ՞ս պիտի կենայ. որովհետեւ կ'ըսէք
19 թէ Բէեղզեբուղով դեւերը կը հանեմ։ Իսկ թէ
որ ես Բէեղզեբուղով դեւերը կը հանեմ, ձեր
որդի՞քը ինչով կը հանեն. ուրեմն անոնք պիտի
20 ըլլան ձեր դատաւորները։ թ Բայց թէ որ ես
Աստուծոյ մատովը կը հանեմ դեւերը, ուրեմն
Աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հասած է։
21 ժ Երբոր զօրաւոր մարդ մը զէնքերը վրան առած՝ իր
տունը բակը կը պահպանէ, անոր բաները խաղա-

գ Մատ. Է. 9:
դ Մատ. Թ. 32: ԺԲ. 22:
ե Մատ. Թ. 34: ԺԲ. 24:
զ Մատ. ԺԲ. 38: ԺԶ. 1:
է Մատ. ԺԲ. 25: Մար. Գ. 24:
ը Յօհ. Բ. 25:
* Յուն. տուն
թ Ել. Ը. 19:
ժ Մատ. ԺԲ. 29: Մար. Գ. 27:

22 ղութեան մէջ կը մնան. ի Բայց երբոր անկէ ա-
ւելի զօրաւորը վրան գալով յաղթէ զանիկայ,
անոր զէնքերը կ'առնէ՝ որոնց ինքը յուսացեր էր,
23 և անկէ առած կողոպուտը կը բաժնէ։ լ Ան որ
իմ հետս չէ, ինծի հակառակ է. և ան որ ինծի
հետ չժողվեր, ցիրուցան կ'ընէ։
24 խ Երբոր պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ, անջուր
տեղուանք կը պտըտի, հանգստութիւն կը
փնտռէ. ու երբոր չգտներ, կ'ըսէ, Դառնամ
25 նորէն իմ տունս՝ ուսկից որ ելայ. Նաեւ կու գայ՝
զանիկայ մաքրուած ու յարդարուած կը գտնէ։
26 Ան ատենը կ'երթայ՝ և իր հետը կ'առնէ եօթը
ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն
կը բնակին. ծ և ան մարդուն վերջը առջինէն գէշ
կ'ըլլայ։
27 Ու եղաւ որ երբ անիկայ աս բաները կը խօսէր,
ժողովուրդին մէջէն մէկ կնիկ մը ձայնը վերցուց ու
ըսաւ անոր, կ Երանի այն որովայնին՝ որ քեզ
կրեց, և այն ծիծերուն՝ որ քեզի կաթ տուին։
28 Նաեւ ինքը ըսաւ, հ Մանաւանդ թէ երանի անոնց
որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը պահեն։
29 ձ Ու երբոր ժողովուրդները անոր քով կը դի-
զուէին, սկսաւ ըսել, Աս ազգը չար է. նշան
կ'ուզէ, և ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց
30 միայն Յովնան մարգարէին նշանը։ ղ Քանզի
ինչպէս որ Յովնան Նինուէացիներուն նշան
եղաւ, անանկ ալ Որդին մարդոյ աս ազգին պիտի
31 ըլլայ։ ճ Հարաւի թագուհին դատաստանին օրը
աս ազգին մարդոցը դէմ պիտի ելլէ, ու պիտի
դատապարտէ զանոնք. ինչու որ երկրի ծայրերէն

ի Ես. ԾԳ. 12: Կող. Բ. 15:
լ Մատ. ԺԲ. 30:
խ Մատ. ԺԲ. 43:
ծ Յօհ. Ե. 14: Եբր. Զ. 4: Ժ. 26: Բ Պետ. Բ. 20:
կ Գլ. Ա. 28, 48:
հ Մատ. Է. 21: Գլ. Ը. 21: Յակ. Ա. 25:
ձ Մատ. ԺԲ. 38, 39:
ղ Յովն. Ա. 17: Բ. 10:
ճ Գ Թագ. Ժ. 1:

եկաւ Սողոմոնին իմաստութիւնը լսելու . և ահա
32 Սողոմոնէն մեծ մէկը կայ հոս ։ Նինուէի մարդի-
կը դատաստանին օրը աս ազգին դէմ պիտի ելլեն ,
ու պիտի դատապարտեն զանիկայ , [ժ] ինչու որ
Յովնանին քարոզութեամբը զղջի եկան . և ահա
Յովնանէն մեծ մէկը կայ հոս ։
33 [ի] Մէկը ճրագը չվառեր՝ ծածուկ տեղ մը դներ ,
ոչ ալ գրուանի տակ , հապա աշտանակի վրայ ,
34 որ ներս մտնողները լոյսը տեսնեն ։ [լ] Մարմինին
ճրագը աչքն է . ուստի երբոր աչքդ պարզ է ,
բոլոր մարմինդ ալ լուսաւոր կ'ըլլայ . բայց երբոր
35 աչքդ վատ է , մարմինդ ալ մութ կ'ըլլայ ։ Ու-
րեմն զգոյշ կեցիր , որ քու մէջդ եղած լոյսը
36 խաւար չըլլայ ։ Արդ թէ որ քու բոլոր մարմինդ
լուսաւոր է , և մութ մաս մը չունի , բոլորն ալ
լուսաւոր կ'ըլլայ , ինչպէս երբոր ճրագ մը իր
փայլունութեամբը քեզ կը լուսաւորէ ։
37 Ու երբոր աս բաները կը խօսէր , փարիսեցի մը
կ'աղաչէր անոր՝ որ իր քովը ճաշ ուտէ . անիկայ
38 ալ մտաւ՝ սեղան նստաւ ։ [խ] Իսկ փարիսեցին երբ-
որ տեսաւ՝ զարմացաւ , որ նախ չլուացուեցաւ ճա-
39 շէն առաջ ։ Ու Տէրը ըսաւ անոր , [ծ] Հիմա դուք
փարիսեցիներ՝ գաւաթին ու պնակին դուրսի դին
կը մաքրէք , [կ] ու ձեր ներսիդին յափշտակու-
40 թեամբ և չարութեամբ լեցուն է ։ Անխելքներ՝
ան որ դուրսինը ըրաւ , ներսինն ալ ինքը չըրա՞ւ ։
41 [հ] Սակայն անոնց մէջը եղածներէն ողորմութիւն
տուէք , և ահա ամէն բան մաքուր կ'ըլլայ ձեզի ։
42 [ձ] Բայց վա՜յ ձեզի փարիսեցիներուդ՝ որ անանուխին
ու փեգենային և բոլոր խոտեղէններուն տասանոր-
դը կը վճարէք , ու զանց կ'ընէք իրաւունքը և

[ժ] Յովն. գ. 5 ։
[ի] Մատ. ե. 15 ։ Մար. դ. 21 ։ Ղկ. ը. 16 ։
[լ] Մատ. զ. 22 ։
[խ] Մար. է. 8 ։
[ծ] Մատ. իգ. 23 ։
[կ] Տիտ. ա. 15 ։
[հ] Ես. ծը. 7 ։ Դան. դ. 27 ։ Ղկ. ժբ. 33 ։
[ձ] Մատ. իգ. 23 ։

Աստուծոյ սէրը . ատոնք պէտք էր ընել , և անոնք
43 չձգել ։ [ճ] Վա՜յ ձեզի փարիսեցիներուդ՝ որ ժողո-
վարաններուն մէջ առաջին աթոռները կը սիրէք ,
44 ու՝ շուկաներուն մէջ բարեւները ։ [մ] Վա՜յ ձեզի
կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ [յ] որ անյայտ
գերեզմաններու նման էք , որոնց վրայէն մարդիկ
կը քալեն ու չեն գիտեր ։
45 Ու օրինականներէն մէկը պատասխան տալով
ըսաւ անոր , Վարդապետ՝ աս խօսքերը զրուցելով՝
46 մեզ ալ վար կը զարնես ։ Ու անիկայ ըսաւ ,
Ձեզ ալ վա՜յ օրինականներուդ , [ն] որ տանելու
դժուար բեռներ կը բեռցընէք մարդոց , ու դուք
47 մէկ մատովնիդ ան բեռներուն չէք դպչիր ։ [շ] Վա՜յ
ձեզի՝ որ մարգարէներուն գերեզմանները կը շինէք ,
48 ու ձեր հայրերը սպաննեցին զանոնք ։ Ուրեմն կը
վկայէք և հաւանութիւն կու տաք ձեր հարցը ը-
րածներուն . ինչու որ իրենք սպաննեցին զանոնք ,
49 ու դուք անոնց գերեզմանները կը շինէք ։ Անոր
համար ալ Աստուծոյ իմաստութիւնը ըսաւ , [ո] Պի-
տի ղրկեմ անոնց մարգարէներ ու առաքեալներ , և
անոնցմէ ոմանք պիտի սպաննեն , ու ոմանք հալածեն .
50 Որպէս զի աշխարհի սկիզբէն հետէ թափուած բո-
լոր մարգարէներուն արիւնը աս ազգէն պահան-
51 ջուի , [չ] Աբէլին արիւնէն մինչև [պ] Զաքարիային
արիւնը , որ սեղանին ու տաճարին մէջտեղը կոր-
սուեցաւ . ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , աս ազգէն պի-
52 տի պահանջուի ։ [ջ] Վա՜յ ձեզի օրինականներուդ
որ գիտութեան բանալին վերցուցիք . դուք չմտաք ,
և մտնողներն ալ արգիլեցիք ։
53 Ու երբոր աս բաները անոնց կը զրուցէր , դպիր-
ները ու փարիսեցիները սկսան խիստ դժուարիլ ,

[ճ] Մատ. իգ. 6 ։ Մար. ժբ. 38 , 39 ։
[մ] Մատ. իգ. 27 ։
[յ] Սաղ. ե. 9 ։
[ն] Մատ. իգ. 4 ։
[շ] Մատ. իգ. 29 ։
[ո] Մատ. իգ. 34 ։
[չ] Ծն. դ. 8 ։
[պ] բ Մն. իդ. 20 , 21 ։
[ջ] Մատ. իգ. 13 ։

և շատ բաներու վրայով անոր բերնէն խօսք փընտ-
54 ռել . Եւ անոր դարան պատրաստելով՝ կը փընտ-
ռէին թէ ինչպէս գ անոր բերնէն բան մը որսան ,
որ անոր վրայով ամբաստանութիւն ընեն ։

ԳԼ. ԺԲ

1 Քրիստոս իր աշակերտներուն կը պատուիրէ կեղծաւորութենէ զգոյշ կենալ , ու չվախնալ իր վարդապետութիւնը քարոզելէն . 13 մեծամեծ ամբարներ շինել մտածող հարուստին առակովը կը պատուիրէ ժողովրդոց որ զգոյշ ըլլան ագահութենէ ։ 22 Պէտք չէ որ չափազանց հոգ ունենանք աշխարհային բաներու վրայով , 31 այլ Աստուծոյ Թագաւորութիւնը խնդրենք , 33 ողորմութիւն տանք , 36 և պատրաստ ըլլանք որ երբ մեր Տէրը գայ դուռը զարնէ , իսկոյն իրեն բանանք ։ 41 Քրիստոսի պաշտօնեաները պարտին իրենց յանձնուած պաշտօնը կատարել , 49 և հալածանքներու սպասել ։ 54 Պէտք է որ մարդիկ աս շնորհաց ժամանակին պատեհութիւնը չկորսնցընեն , 58 վասն զի սոսկալի բան է մեռնիլ՝ առանց հաշտուելու Աստուծոյ հետ ։

1 Այս միջոցիս երբոր բիւրաւոր ժողովուրդներ վրան
ժողվուեցան , մինչև որ մէկզմէկ կը կոխէին ,
ա սկսաւ ըսել իր աշակերտներուն , բ Ամէնէն
առաջ ինքզինքնիդ զգոյշ պահեցէք փարիսեցւոց
2 խմորէն , որ է կեղծաւորութիւն ։ գ Ինչ որ
բան մը չկայ ծածուկ՝ որ պիտի չյայտնուի , և
3 գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի ։ Ուստի ինչ որ
մութ տեղը զրուցեցիք , անիկայ լոյս տեղը պիտի
լսուի . և ան որ ներքին սենեակներուն մէջ ական-
ջի խօսեցաք , տանիքներուն վրայ պիտի քարոզուի ։
4 դ Բայց ձեզի ե իմ բարեկամներուս կը զրուցեմ ,
Մի վախնաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն ,
ու անկէ ետև աւելի բան մը ընելու կարողութիւն
5 չունին ։ Հապա ձեզի ցուցնեմ թէ որմէ պիտի
վախնաք . Անկէ վախցէք՝ որ սպաննելէն ետև իշ-
խանութիւն ունի գեհեանը ձգելու . այո՛, կ'ըսեմ

գ Մար. ժբ. 13 ։
ա Մատ. ժզ. 6 ։ Մար. ը. 15 ։
բ Մատ. ժզ. 12 ։
գ Մատ. ժ. 26 ։ Մար. դ. 22 ։ Ղկ. ը. 17 ։
դ Մատ. ժ. 28 ։ Ես. ծա. 7, 8, 12, 13 ։ Երեմ. ա. 8 ։
ե Յոհ. ժե. 14, 15 ։

6 ձեզի , Անկէ վախցէք ։ Չէ՞ որ հինգ ճնճղուկը
երկու դանկի կը ծախուի , և անոնցմէ մէկը մոռ-
7 ցուած չէ Աստուծոյ առջին ։ Բայց ձեր գլխուն
բոլոր մազերն ալ համրուած է . ուրեմն մի՛ վախ-
նաք , ինչու որ դուք շատ ճնճղուկներէն աւելի աղէկ
8 էք ։ Եւ զ ձեզի կ'ըսեմ , Ամէն մէկ որ զիս կը
դաւանի մարդոց առջևը , Որդին մարդոյ ալ ա-
նիկայ պիտի դաւանի Աստուծոյ հրեշտակներուն
9 առջևը ։ Բայց ան որ զիս մարդոց առջևը կ'ու-
րանայ , ուրացուած պիտի ըլլայ Աստուծոյ հրեշտակ-
10 ներուն առջևը ։ է Եւ ամէն մէկ որ Որդւոյ մարդոյ
դէմ բան կ'ըսէ , պիտի ներուի անոր , բայց ան որ
Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւն կ'ընէ , պիտի
11 չներուի անոր ։ ը Ու երբոր ձեզ ժողովարանները՝
և իշխանութիւններու ու պետութիւններու առջև
տանելու ըլլան , հոգ մի՛ ընէք թէ ինչպէս կամ
ինչ պատասխան պիտի տաք , կամ ինչ պիտի
12 ըսէք . Վասն զի Սուրբ Հոգին պիտի սորվեցընէ
ձեզի նոյն ժամուն՝ ինչ որ պէտք է խօսիլ ։
13 Ժողովուրդին մէջէն մէկը ըսաւ անոր , Վարդա-
պետ՝ զրուցէ՛ եղբօրս , որ Հօրս թողած ժառանգու-
14 թիւնը իմ հետս բաժնէ ։ Ան ալ ըսաւ անոր ,
թ Մա՛րդ՝ ո՞վ զիս ձեր վրայ դատաւոր կամ բաժին
15 ընող դրաւ ։ Եւ ըսաւ անոնց , ժ Նայեցէք և
զգուշացէ՛ք ագահութենէն . ինչու որ մարդուս
ստացուածքներուն աւելնալէն կախուած չէ իր
16 կեանքը ։ Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով ,
Մէկ հարուստ մարդու մը արտերը առատ բերքեր
17 տուին , Եւ ինքը կը մտածէր ինքնիրեն ու կ'ը-
սէր , Ի՞նչ ընեմ , վասն զի տեղ չունիմ , որ
18 հոն իմ բերքերս ժողվեմ ։ Եւ ըսաւ , Աս ընեմ .

զ Մատ. ժ. 32 ։ Մար. ը. 38 ։ բ Տիմ. բ. 12 ։ ա Յոհ. բ. 23 ։
է Մատ. ժբ. 31, 32 ։ Մար. գ. 22 ։ ա Յոհ. ե. 16 ։
ը Մատ. ժ. 19 ։ Մար. ժգ. 11 ։ Ղկ. իա. 14 ։
թ Յոհ. ժը. 36 ։
ժ ա Տիմ. զ. 7, 8 ։

իմ ամբարներս քակեմ ու աւելի մեծ շինեմ,
և հոն ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս.
19 Ու իմ անձիս ըսեմ, էՈ՛վ անձ՝ շատ բարիքներ
ունիս շատ տարիներու համար ժողվուած. հանգչէ՛,
20 կե՛ր, խմէ՛ ու ուրախ եղիր։ Բայց Աստուած ը-
սաւ անոր, Ո՛վ անմիտ՝ ըաս գիշեր հոգիդ քեզմէ
պիտի պահանջուի. թՈւստի ան քու պատրաստած
21 բաներդ որո՞ւն պիտի ըլլայ։ Այսպէս է անիկայ
որ իր անձին համար գանձ կը դիզէ, ժու Աստու-
ծոյ չհարստանար։
22 Ու ըսաւ իր աշակերտներուն, Ասոր համար
կ'ըսեմ ձեզի, իՀոգ մի՛ ընէք ձեր կեանքին հա-
մար թէ ինչ պիտի ուտէք, ոչ ալ մարմնին
23 համար՝ թէ ինչ պիտի հագնիք. Ինչու որ կեան-
քը կերակուրէն աւելի է, ու մարմինը հագուս-
24 տէն։ լՆայեցէ՛ք ագռաւներուն, որ ոչ կը սեր-
մանեն և ոչ կը հնձեն, որոնք ոչ շտեմարաններ
ունին՝ ոչ ալ ամբարներ, ու Աստուած անոնք
կը կերակրէ. դուք որչափ աւելի լաւ էք
25 թռչուններէն։ Ու ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընե-
լովը իր հասակին վրայ կանգուն մը աւելցընել։
26 Հապա թէ որ ամենափոքր բանին կարող չէք,
27 ուրիշ բաներուն համար ինչո՞ւ հոգ կ'ընէք։ Նա-
յեցէ՛ք շուշաններուն՝ ինչպէս կ'աճին. ոչ կ'աշ-
խատին և ոչ կը մանեն, բայց ձեզի կ'ըսեմ որ
Սողոմոն ալ իր բոլոր՝ փառաւորութեանը մէջ ա-
28 նոնցմէ մէկուն պէս չհագուեցաւ։ Ուստի թէ որ
խոտը որ այսօր դաշտի մէջ է՝ ու վաղը փուռը կը
ձգուի, Աստուած անանկ կը հագուեցընէ, ո՛ր-
29 չափ աւելի ձեզ՝ թերահաւատներ։ Ու դուք մի՛

է Ժող. ժա. 9; ա Կոր. ժե. 32; Յակ. ե. 5։
ը Յոբ. ի. 22; իէ. 8; Սաղ. ծբ. 7; Յակ. դ. 14։
թ Սաղ. լթ. 6; Երեմ. ժէ. 11։
ժ Մատ. զ. 20; Հմր 33; ա Տիմ. զ. 18, 19; Յակ. բ. 5։
ի Մատ. զ. 25։
լ Յոբ. լը. 41; Սաղ. ճխզ. 9։

փնտռէք թէ ինչ պիտի ուտէք՝ և ինչ պիտի
30 խմէք, ու մի՛ շփոթիք. Վասն զի աս բոլոր բա-
ները աշխարհիս ազգերը կը փնտռեն. ու ձեր
Հայրը գիտէ որ աս բաները ձեզի պէտք են։
31 խԲայց դուք Աստուծոյ թագաւորութի՛ւնը խնդրե-
ցէք, և աս բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուի։
32 Մի՛ վախնար պզտիկ հօտ, ծինչու որ ձեր Հայրը
հաճեցաւ որ թագաւորութիւնը ձեզի տայ։
33 կԾախեցէ՛ք ձեր ստացուածքը և ողորմութի՛ւն
տուէք. հու ձեզի չհիննալու քսակնե՛ր պատրաս-
տեցէք, ու երկինքը՝ չպակսելու գանձ մը, ուր ոչ
34 գողը կը մօտենայ և ոչ ցեցը կ'ապականէ։ Քան-
զի ձեր գանձը ուր որ է, սիրտերնիդ ալ հոն պիտի
35 ըլլայ։ ձՁեր մէջքերը գօտեւորած ըլլան, ղու
36 ճրագները վառած. Ու դուք ան մարդոցը նման՝
որ իրենց տիրոջը կը սպասեն՝ թէ երբ պիտի դառ-
նայ հարսնիքէն. որ երբ գայ և դուռը զարնէ,
37 իսկոյն բանան անոր։ ճԵրանի՛ ան ծառաներուն,
որ տէրը երբոր գայ՝ զանոնք արթուն պիտի գտնէ.
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ինքը գօտին մէջքը պի-
տի կապէ ու սեղան նստեցընէ անոնք, և առաջ-
անցնելով սպասաւորութիւն պիտի ընէ անոնց։
38 Ու թէ որ գիշերուան երկրորդ պահուն գայ, կամ
երրորդ պահուն գայ ու անանկ գտնէ, երանելի
39 են ան ծառաները։ մԲայց աս գիտցէ՛ք, որ եթէ
տանուտէրը գիտնար թէ ո՛ր ատեն գողը կու գայ,
արթուն կը կենար ու թող չէր տար որ իր տու-
40 նը ծակեն։ յՈւրեմն դուք ալ պատրաստ կեցէք,

խ Մատ. զ. 33։
ծ Մատ. ժա. 25, 26։
կ Մատ. ժթ. 21; Գոր. բ. 45; դ. 34։
հ Մատ. զ. 20; Գղ. ժզ. 9; ա Տիմ. զ. 19։
ձ Եփե. զ. 14; ա Պետ. ա. 13։
ղ Մատ. իե. 1, ...
ճ Մատ. իդ. 46։
մ Մատ. իդ. 43; ա Թես. ե. 2; բ Պետ. գ. 10; Յայտ. գ. 3; ժզ. 15։
յ Մատ. իդ. 44; իե. 13; Մար. ժգ. 33; Ղկ. իա. 34, 36; ա Թես. ե. 6; բ Պետ. դ. 12։

քանզի Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ՝
որ դուք չէք կարծեր ։
41 Եւ Պետրոս ըսաւ անոր, Տէ՛ր, աս առակը մեզի՞
42 կ'ըսես թէ ամենուն ալ ։ Եւ Տէրը ըսաւ, ղ Ուրեմն
ո՞վ է այն հաւատարիմ ու իմաստուն տնտեսը, որն
որ տէրը իր գերդաստանին վրայ պիտի դնէ, որ ա-
43 տեններն անոնց ուտելիքը տայ ։ Երանի է այն ծառա-
յին, որն որ իր տէրը եկած ատենը անանկ ըլ-
44 լած պիտի գտնէ ։ ձ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ
իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցընէ զանիկայ ։
45 մ Հապա թէ որ այն ծառան իր սրտին մէջը ըսէ,
Իմ տէրս իր գալը կ'ուշացընէ. և սկսի ծառանե-
րը ու աղախինները ծեծել, և ուտել ու խմել ու
46 գինովնալ, Այն ծառային տէրը պիտի գայ անանկ
մէկ օր մը որ չսպասեր, և անանկ մէկ ժամ մը որ
չգիտեր, և զանիկայ մէջտեղէն պիտի կտրէ, ու
անոր բաժինը անհաւատարիմներուն հետ պիտի
47 դնէ ։ յ Եւ այն ծառան՝ որ իր տիրոջը կամքը գիտէ
ու չպատրաստուիր, ոչ ալ անոր կամքը 'ի գործ
48 կը դնէ, շատ ծեծ պիտի ուտէ ։ ն Բայց այն որ
չգիտեր ու ծեծի արժանի բան մը կ'ընէ, քիչ ծեծ
պիտի ուտէ. որուն որ շատ տրուեցաւ, շատ պի-
տի ուզուի անկէ, և որուն որ աւելի յանձնուե-
ցաւ, ալ աւելի պիտի պահանջուի անկէ ։
49 շ Ես կրակ ձգելու եկայ երկրիս վրայ, ու ի՞նչ
50 կ'ուզեմ թէ որ արդէն բորբոքած է ։ ո Բայց
մկրտութիւն մը ունիմ մկրտուելու, և ի՜նչպէս
51 կը տաղնապիմ մինչև որ կատարուի ։ չ Կը կար-
ծէք թէ ես երկրի վրայ խաղաղութի՞ւն տալու

ղ Մատ. իդ. 45 ։ իե. 21 ։ ա Կոր. դ. 2 ։
ձ Մատ. իդ. 47 ։
մ Մատ. իդ. 48 ։
յ Թուռ. ժե. 30 ։ բ Օր. իե. 2 ։ Յօհ. թ. 41 ։ ժե. 22 ։ Գործ. ժէ. 30 ։ Յակ. դ. 17 ։
ն Ղև. ե. 17 ։ ա Տիմ. ա. 13 ։
շ Հմր 51 ։
ո Մատ. ի. 22 ։ Մար. ժ. 38 ։
չ Մատ. ժ. 34 ։ Հմր 49 ։

եկայ. ձեզի կ'ըսեմ՝ Ոչ, ռ հապա բաժանմունք.
52 ս Ինչու որ ասկէ ետև մէկ տան մէջ հինգը իրարմէ
բաժնուած պիտի ըլլան. երեքը երկուքէն, ու
53 երկուքը երեքէն. Հայրը պիտի բաժնուի որդիէն,
և որդին հօրմէն, մայրը աղջիկէն ու աղջիկը մօր-
մէն, կեսուրը իր հարսէն ու հարսը իր կեսուրէն ։
54 Եւ ըսաւ ժողովուրդներուն, տ Երբոր արևմուտ-
քին կողմէն ամպ մը ելած կը տեսնէք, շուտ մը
կ'ըսէք թէ Անձրև պիտի գայ, և անանկ կ'ըլ-
55 լայ ։ Ու երբոր հարաւային հովը կը փչէ՝ կ'ըսէք
56 թէ Տաք պիտի ըլլայ, և անանկ կ'ըլլայ ։ Կե՛ղ-
ծաւորներ՝ երկրի ու երկինքի երեսը քննել գիտէք,
57 հապա աս ժամանակը ի՞նչպէս չէք քններ ։ Եւ
ինչո՞ւ դուք ձեզմէ չէք որոշեր իրաւունքը ։
58 ր Երբոր դուն քու ոսոխիդ հետ իշխանին երթալու
ըլլաս, ց ճամբուն մէջ անկէ ազատելու համար
ջանք ըրէ, որ չըլլայ թէ քեզ դատաւորին առջին
քաշէ, ու դատաւորը դահիճին ձեռքը տայ քեզ,
59 ու դահիճն ալ բանտը դնէ ։ Ձեզի կ'ըսեմ,
բնաւ պիտի չելլես անկէ, մինչև որ վերջի լուման
չվճարես ։

ԳԼ. ԺԳ.

1 Քրիստոս ապաշխարութիւն կը քարոզէ, Գալիլեացւոց և ուրիշներուն կրած պատիժը յիշելով. 6 Անպտուղ թզենիին առակը. 11 Քրիստոս կծկուած կնիկը կը բժշկէ. 18 մանանեխի հատին և խմորին առակովը կը ցուցընէ ճշմարտութեան խօսքին զօրաւոր ներգործութիւնը իր ընտրեալներուն սրտին մէջ. 24 կը խրատէ նեղ դռնէն ներս մտնելու ջանք ընել, 31 և կը յանդիմանէ Հերովդէսը ու Երուսաղէմը ։

1 Եւ ոմանք՝ այն ատենը ներկայ գտնուելով՝ պատ-
մեցին անոր Գալիլեացւոց վրայով, որոնց ա-
րիւնը Պիղատոս իրենց զոհերուն հետը խառնեց ։
2 Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց, Կը

ռ Միք. է. 6 ։ Յօհ. է. 43 ։ թ. 16 ։ ժ. 19 ։
ս Մատ. ժ. 35 ։
տ Մատ. ժզ. 2 ։
ր Առակ. իե. 8 ։ Մատ. ե. 25 ։
ց Սաղ. լը. 6 ։ Եսա. ծէ. 6 ։

կարծէ՞ք որ այն Գալիլեացիները՝ բոլոր Գալիլեա-
ցիներէն աւելի մեղաւոր էին, որ ասանկ բաներ
3 քաշեցին։ Ձեզի կ'ըսեմ, Ո՛չ. հապա թէ որ
չապաշխարէք, ամէնքդ ալ անանկ պիտի կոր-
4 սուիք։ Կամ թէ այն տասնըութը հոգին՝ որոնց
վրայ Սելովամին մէջի աշտարակը ինկաւ և անոնք
մեռցուց, կը կարծէ՞ք որ անոնք Երուսաղէմի մէջ
բնակած բոլոր մարդիկներէն աւելի պարտաւոր
5 էին։ Ձեզի կ'ըսեմ, Ո՛չ. հապա թէ որ չապաշ-
խարէք, ամէնքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք։
6 Այս առակն ալ ըսաւ. [ա] Մարդ մը իր այգիին
մէջ տնկուած թզենի մը ունէր, ու եկաւ անկէ
7 պտուղ փնտռելու՝ և չգտաւ։ Ուստի ըսաւ այ-
գեպանին, Ահա իրեք տարի է որ կու գամ աս
թզենիին վրայ պտուղ փնտռելու ու չեմ գտներ.
ու ատիկայ կտրէ, ինչո՞ւ համար գետինը խա-
8 փանէ։ Անիկայ պատասխան տուաւ ու անոր ը-
սաւ, Տէ՛ր՝ աս տարի ալ ատիկայ թող տուր,
մինչև որ ատոր բոլորտիքը բրեմ ու թրիք դնեմ,
9 Եւ թէ որ պտուղ տայ, աղէկ. հապա թէ չէ՝
գալ տարի կտրես ատիկայ։
10 Եւ Յիսուս ժողովարաններուն մէկուն մէջ շաբաթ
11 օրը կը սորվեցընէր։ Եւ ահա մէկ կնիկ մը կար,
որ հիւանդութեան ոգի մը ունէր տասնըութը
տարիէ 'ի վեր, ու կծկտած էր և ամենևին չէր
12 կրնար շիտակ կայնիլ։ Ու Յիսուս զանիկայ տես-
նելով՝ իրեն կանչեց և ըսաւ անոր, Կնի՛կ դուն
13 քու հիւանդութենէդ արձակուած ես։ [բ] Ու ձեռքը
անոր վրայ դրաւ. և իսկոյն շիտկուեցաւ ու
14 փառք կու տար Աստուծոյ։ Իսկ ժողովարանին
իշխանը պատասխան տուաւ բարկանալով՝ որ Յի-
սուս շաբաթ օրը բժշկեց, և ըսաւ ժողովուրդին,
[գ] Վեց օր կայ՝ որոնց մէջ արժան է գործ գործել,

ա Ես. ե. 2։ Մատ. իա. 19։
բ Մար. ժզ. 18։ Գործ. թ. 17։
գ Ել. ի. 9։

ուստի այն օրերը եկէք բժշկուեցէք, [դ] ու չէ՞ թէ
15 շաբաթ օրը։ Ան ատենը Տէրը պատասխան
տուաւ անոր ու ըսաւ, Կեղծաւո՛ր, [ե] ձեզմէ ա-
մէն մէկը շաբաթ օրը իր եզը կամ էշը մսուրէն
16 չքակէ՞ր՝ որ տանի ջուր տայ. [զ] Հապա ասիկայ
որ Աբրահամի աղջիկ էր, որ ահա տասնըութը
տարի Սատանան զանիկայ կապեց, չէ՞ր վայլեր որ
17 շաբաթ օրը այն կապէն արձըկուի։ Եւ աս բանը
որ ըսաւ, իրեն հակառակ կեցողները ամէնքն ալ
ամօթով մնացին. ու բոլոր ժողովուրդը կ'ուրա-
խանար այն ամէն փառաւոր գործքերուն համար՝ որ
անկէ կ'ըլլային։
18 [է] Եւ ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը
ի՞նչ բանի կը նմանի, ու ի՞նչ բանի նմանցընեմ
19 անիկայ։ Մանանեխի հատի նման է, որն որ
մարդ մը առաւ՝ իր պարտէզը ձգեց. և աճեցաւ ու
մեծ ծառ եղաւ. ու երկնից թռչունները անոր
ճիւղերուն վրայ բնակեցան։
20 Դարձեալ ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը
21 ի՞նչ բանի նմանցընեմ։ Խմորի նման է, որն որ
կնիկ մը առաւ՝ իրեք գրիւ ալիւրի մէջ պահեց,
մինչև որ ամէնն ալ խմորեցաւ։
22 [ը] Եւ քաղաքները ու գեղերը պտըտելով կը
սորվեցընէր, ու դէպ 'ի Երուսաղէմ ճամբայ կ'ը-
23 նէր։ Եւ մէկը ըսաւ անոր, Տէ՛ր՝ քիչո՞ր են
անոնք որ պիտի փրկուին։ Անիկայ ալ ըսաւ ա-
24 նոնց, [թ] Ջանք ըրէք որ նեղ դռնէն մտնէք, քան-
զի կ'ըսեմ ձեզի որ [ժ] շատերը մտնել պիտի ու-
25 զեն և պիտի չկրնան։ [ի] Անկէ ետև որ տանու-
տէրը ելլէ ու [լ] դուռը գոցէ, և դուք սկսիք դուռը

դ Մատ. ժբ. 10։ Մար. գ. 2։ Ղկ. զ. 7։ ժդ. 3։
ե Ղկ. ժդ. 5։
զ Ղկ. ժթ. 9։
է Մատ. ժգ. 31։ Մար. դ. 30։
ը Մատ. թ. 35։ Մար. զ. 6։
թ Մատ. է. 13։
ժ Յովհ. է. 34։ ը. 21։ ժգ. 33։ Հռով. թ. 31։
ի Սաղ. լբ. 6։ Ես. ծե. 6։
լ Մատ. իե. 10։

կենալ, ու դուռը զարնել և ըսել, ե Տէ՛ր Տէ՛ր,
բաց մեզի. ան ալ պատասխան տալով պիտի ըսէ
26 ձեզի, զ Ձեզ չեմ ճանչնար ուսկից էք։ Ան ատե-
նը պիտի սկսիք ըսել, Մենք քու առջևդ կերանք
ու խմեցինք, և դուն մեր փողոցներուն մէջը սոր-
27 վեցուցիր։ է Եւ անիկայ պիտի ըսէ, Ձեզի կ՚ը-
սեմ, ձեզ չեմ ճանչնար ուսկից էք, ը Մէկ դի
կեցէք ինծմէ բոլոր անիրաւութիւն գործողներդ։
28 թ Հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կրճտել,
ժ երբոր տեսնէք Աբրահամը ու Իսահակը և Յա-
կոբը ու բոլոր մարգարէները Աստուծոյ թագաւո-
29 րութեանը մէջ, ու ձեզ դուրս հանած։ Եւ
պիտի գան արևելքէն ու արևմուտքէն և հիւսիսէն
ու հարաւէն, ու պիտի բազմին Աստուծոյ թագա-
30 ւորութեանը մէջ։ ի Եւ ահա կան յետիններ՝ որ
առաջիններ պիտի ըլլան, ու կան առաջիններ՝ որ
յետիններ պիտի ըլլան։
31 Նոյն օրը մէկ քանի փարիսեցիներ եկան ու ըսին
անոր, Ելի՛ր ու գնա ասկէ, ինչու որ Հերովդէս
32 քեզ սպաննել կ՚ուզէ։ Եւ ինքը ըսաւ անոնց,
Գացէք՝ ան աղուէսին ըսէք, Ահա ես դևեր կը
հանեմ ու բժշկութիւններ կը կատարեմ այսօր և
33 վաղը, ու երրորդ օրը լ պիտի կատարուիմ։ Մի-
այն թէ պէտք է որ այսօր ու վաղը և միւս օրը
պտըտիմ, վասն զի կարելի չէ որ մարգարէ մը
34 Երուսաղեմէն դուրս կորսուի։ խ Ո՛վ Երուսա-
ղէմ՝ Երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէ-
իր, ու քեզի խրկուածները կը քարկոծէիր, քանի՜
անգամ քու տղաքներդ ժողվել ուզեցի՝ ինչպէս որ
հաւը իր ձագերը թևերուն տակը կը ժողվէ, և

ե Գլ. զ. 46։
զ Մատ. է. 26; իե. 12։
է Մատ. է. 23; իե. 41; Հմր. 25։
ը Սաղ. զ. 8; Մատ. իե. 41։
թ Մատ. ը. 12; ժգ. 42; իդ. 51։
ժ Մատ. ը. 11։
ի Մատ. ժթ. 30; ի. 16; Մար. ժ. 31։
լ Եբր. բ. 10։
խ Մատ. իգ. 37։

35 դուք չուզեցիք։ ծ Ահա ձեր տունը ձեզի աւերակ
պիտի մնայ. սակայն ձեզի կ՚ըսեմ, որ ալ զիս
պիտի չտեսնէք, մինչև գայ ան ժամանակը որ պի-
տի ըսէք, կ Օրհնեա՜լ է ան որ Տէրոջը անունովը
կու գայ։

ԳԼ. ԺԴ

*2 Քրիստոս շաբաթ օրը կը բժշկէ ջրգողեալ մարդը. 7 կը սոր-
վեցնէ խոնարհ ըլլալ, 12 և աղքատները ճաշի հրաւիրել.
16 ընթրիքին առակովը կը ցուցնէ թէ աշխարհասէր ան-
ձինք՝ որ Աստուծոյ խօսքը կ՚անարգեն, դուրս պիտի մնան
երկինքէն։ 25 Քրիստոսի աշակերտիլ ուզողները պէտք է
որ յառաջագոյն խորհին թէ իրենց խաչը պիտի կրեն, որ
չըլլայ թէ ետքը ամօթալից եղանակաւ ետ քաշուին անկէ.
34 ու բոլորովին անպիտան ըլլան՝ իր համը կորսնցուցած
աղի պէս։*

1 Ու եղաւ որ երբ ինքը շաբաթ օր մը փարիսեցւոց
գլխաւորներուն մէկուն տունը մտաւ հաց ու-
2 տելու, ու անոնք անոր կը սպասէին։ Եւ ահա
3 հոն ջրգողեալ մարդ մը կար իր առջևը։ Եւ Յի-
սուս պատասխան տուաւ ու խօսեցաւ օրինական-
ներուն ու փարիսեցիներուն՝ ըսելով, հ Արժա՞ն է
4 շաբաթ օրը բժշկել։ Անոնք ալ լուռ կեցան. և
5 ինքը բռնեց անիկայ՝ բժշկեց ու ճամբեց. Եւ պա-
տասխան տալով ըսաւ անոնց, ձ Ձեզմէ որո՞ւն
էշը կամ եզը հորը իյնալու ըլլայ, ու շուտ մը
6 չհանէր անիկայ շաբաթ օրը։ Եւ աս բաներուս
չկրցան անոր պատասխան տալ։
7 Առակ մը զրուցեց ան հրաւիրուած մարդոց ալ,
երբոր տեսաւ թէ ինչպէս առաջին բազմոցները
8 կ՚ընտրէին, ու ըսաւ անոնց, Երբոր մէկէ մը
հարսնիքի հրաւիրուիս, առաջին բազմոցին վրայ
մի՛ նստիր. չըլլայ որ քեզմէ աւելի պատուաւոր

ծ Ղև. իզ. 31, 32; Սաղ. կթ. 25; Ես. ա. 7; Դան. թ. 27; Միք. գ. 12։
կ Սաղ. ճժը. 26; Մատ. իա. 9; Մար. ժա. 10; Գլ. ժթ. 38; Յոհ. ժբ. 13։
հ Մատ. ժբ. 10։
ձ Ել. իգ. 5; Բ Օր. իբ. 4; Գլ. ժգ. 15։

9 մէկն ալ հրաւիրուած ըլլայ անկէ․ Եւ ան որ քեզ
ու անիկայ հրաւիրեց, գայ ըսէ քեզի, Ասոր
տեղ տուր, և անկէ ետև սկսիս ամօթով յետին
10 տեղը բռնել ։ գ Հապա երբոր հրաւիրուիս, գնա
յետին տեղը նստէ․ որ երբ քեզ հրաւիրողը գայ,
քեզի ըսէ, Բարեկամ՝ վե՛ր հրամմէ․ ան ատենը
քու հետդ նստողներուն առջևը քեզի փառք կ՚ըլ-
11 լայ ։ դ Վասն զի ամէն ով որ իր անձը կը բարձ-
րացընէ, պիտի խոնարհի․ և ով որ իր անձը կը
խոնարհեցընէ, պիտի բարձրանայ ։
12 Ու զինքը հրաւիրողին ալ ըսաւ, Երբոր ճաշ
կամ ընթրիք կ՚ընես, մի՛ կանչեր քու բարե-
կամներդ, ոչ ալ քու եղբայրներդ, և ոչ քու
ազգականներդ, ու ոչ ալ հարուստ դրացիներդ,
որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ հրաւիրեն,
13 ու քեզի հատուցում ըլլայ ։ Հապա երբոր հաց-
կերոյթ կ՚ընես, ե աղքատներ, պակասաւորներ,
14 կաղեր ու կոյրե՛ր հրաւիրէ, Ու երանելի պիտի
ըլլաս, ինչու որ անոնք չեն կրնար փոխարէնը
քեզի հատուցանել․ քանզի արդարներուն յարու-
թիւն առած ատենը փոխարէնը քեզի պիտի հա-
տուցուի ։
15 Եւ սեղան նստողներէն մէկը երբոր լսեց աս
խօսքը՝ ըսաւ անոր, զ Երանի՜ անոր որ Աստուծոյ
16 թագաւորութեանը մէջ հաց պիտի ուտէ ։ է Եւ
ինքը ըսաւ անոր, Մէկ մարդ մը մեծ ընթրիք
17 ըրաւ, ու շատ մարդիկ հրաւիրեց ։ ը Եւ ընթ-
րիքին ատենը խրկեց իր ծառան, որ հրաւիրուած-
ները կանչէ, ըսելով, Եկէ՛ք, ինչու որ արդէն
18 ամէն բան պատրաստ է ։ Եւ ամէնքը մէկէն
սկսան ետ քաշուիլ․ առաջինը անոր ըսաւ, Ես

գ Առակ. իե. 6, 7.
դ Յոբ. իբ. 29; Սաղ. ժը. 27; Առակ. իթ. 23; Մատ. իգ. 12; ժը. 14; Յակ. դ. 6; ա Պետ. ե. 5.
ե Նեեմ. ը. 10, 12.
զ Յայտ. ժթ. 9.
է Մատ. իբ. 2.
ը Առակ. թ. 2, 5.

արտ մը ծախու առի, ու պէտք է որ ելլեմ տես-
նեմ անիկայ․ կ՚աղաչեմ քեզի, զիս հրաժարուած
19 սեպէ ։ Եւ միւսը ըսաւ, Հինգ զոյգ եզ ծախու
առի, ու կ՚երթամ որ անոնք փորձեմ․ կ՚աղաչեմ
20 քեզի, զիս հրաժարուած սեպէ ։ Եւ միւսը ը-
սաւ, Կնիկ առի, ու անոր համար չեմ կրնար
21 գալ ։ Եւ ան ծառան եկաւ ու իր տիրոջը պատ-
մեց աս բաները․ ան ատենը բարկացաւ տանու-
տէրը ու ըսաւ իր ծառային, Շուտով քաղա-
քին հրապարակները ու փողոցները ելիր, և աղ-
քատները ու պակասաւորները և կաղերը ու կոյ-
22 րերը հօս մտցուր ։ Ծառան ալ ըսաւ, Տէ՛ր
եղաւ ինչ որ հրամայեցիր, ու տակաւին տեղ
23 կայ ։ Եւ Տէրը ըսաւ ծառային, Ելի՛ր ճամբա-
ները ու ցանկերը, և գտածներդ ստիպէ՛ հօս
24 մտնելու, որ տունս լեցուի ։ Քանզի կ՚ըսեմ
ձեզի թ որ ան հրաւիրուածներէն մէկն ալ իմ
ընթրիքէս համը պիտի չառնէ ։
25 Ու իր հետը շատ ժողովուրդներ կ՚երթային․ և
26 դառնալով անոնց ըսաւ, ժ Թէ որ մէկը ինծի կու
գայ, ի ու չատեր իր հայրը և մայրը, ու կինը և
զաւակները, ու եղբայրները և քոյրերը, լ նաև
իր կեանքն ալ, չկրնար իմ աշակերտս ըլլալ ։
27 խ Եւ ով որ իր խաչը չվերցըներ ու իմ ետևէս
28 գար, չկրնար իմ աշակերտս ըլլալ ։ ծ Վասն զի
ձեզմէ ո՞վ աշտարակ մը շինել ուզելով, առաջ
չնստիր ու հաշիւ ըներ ծախքը, թէ անիկայ լմըն-
29 ցընելու կարողութիւն ունի՞ ․ Որ չըլլայ թէ երբ
հիմը ձգէ ու չկրնայ լմնցընել, բոլոր տեսնող-
30 ները սկսին անիկայ ծաղր ընել, Եւ ըսել թէ, Աս
մարդը սկսաւ շինել, ու չկրցաւ լմնցընել ։

թ Մատ. իա. 43; իբ. 8; Գործ. ժգ. 46.
ժ Բ Օր. ժգ. 6; լգ. 9; Մատ. ժ. 37.
ի Հռով. թ. 13.
լ Յայտ. ժբ. 11.
խ Մատ. ժզ. 24; Մար. ը. 34; Ղկ. թ. 23; Բ Տիմ. գ. 12.
ծ Առակ. իդ. 27.

31 Կամ թէ ո՞ր թագաւոր ուրիշ թագաւորի մը
հետ պատերազմելու երթալով, առաջ չնստիր ու
խորհիր, թէ արդեօք տասը հազարով կրնա՞յ դէմ
կենալ անոր՝ որ քսան հազարով իր վրայ կու գայ։
32 Հապա թէ չէ՝ քանի որ անիկայ հեռու է, դեսպան
33 ղրկելով՝ խաղաղութիւն կը խնդրէ։ Ահա ա-
սանկ ալ ձեր մէջէն ամէն մէկը թէ որ իր բոլոր
ստացուածքէն ետ չկենայ, չկրնար իմ աշակերտս
34 ըլլալ։ ա Աղը աղէկ բան է. բայց թէ որ աղը
իր համը կորսնցնէ, ինչո՞վ պիտի համովնայ։
35 Ո՛չ հողի ու ոչ թրիքի տեղ օգտակար կ՚ըլլայ,
հապա անիկայ դուրս կը նետեն։ Ան որ լսելու
ականջ ունի, թող լսէ։։

ԳԼ. ԺԵ.

1 Մոլորեալ ոչխարին, 8 կորսուած դրամին, 11 և անառակ որդիին առակները։

1 բ Եւ բոլոր մաքսաւորները ու մեղաւորները անոր
2 կը մօտենային իրմէն լսելու համար։ Եւ
փարիսեցիները ու դպիրները տրտունջ կ՚ընէին ու
կ՚ըսէին, Ասիկայ մեղաւորները կ՚ընդունի, գ ու
անոնց հետ կ՚ուտէ։
3 Եւ անիկայ աս առակը խօսեցաւ անոնց՝ ըսելով,
4 դ Ձեզմէ ո՞վ է ան մարդը՝ որ հարիւր ոչխար ունե-
նայ, և անոնցմէ մէկը որ կորսնցնէ, իննսուն-
ինը չ՞ձգեր անապատին մէջ՝ ու ան կորսուածին
5 ետեւէն երթար, մինչև որ զանիկայ գտնէ։ Ու
երբոր կը գտնէ, ուրախանալով իր ուսերուն վրայ
6 կը դնէ զանիկայ, Եւ տունը գալով, կը կանչէ
բարեկամները ու դրացիները, ու անոնց կ՚ըսէ,
Ուրախ եղէք ինծի հետ, ինչու որ իմ ե կորսուած
7 ոչխարս գտայ։ Ձեզի կ՚ըսեմ որ այսպէս ուրա-
խութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի մը

ա Մատ. ե. 13։ Մար. թ. 49։
բ Մատ. թ. 10։
գ Գոր. ժա. 3։ Գաղ. բ. 12։
դ Մատ. ժը. 12։
ե Ա Պետ. բ. 10, 25։

համար որ կ՚ապաշխարէ, զ քան թէ իննսունինը
արդարներու համար՝ որ անոնց ապաշխարութիւն
8 պէտք չէ։ Կամ թէ ո՞վ է ան կնիկը որ տասը
դրամ ունենայ. ու թէ որ դրամ մը կորսնցնէ,
ճրագ չվառեր, ու տանը մէջ աւել չզարներ, և
9 զգուշութեամբ փնտռեր, մինչև որ գտնէ։ Ու
երբոր կը գտնէ, կը կանչէ բարեկամները ու դրա-
ցիները, և կ՚ըսէ, Ուրախ եղէք ինծի հետ, ին-
10 չու որ իմ կորսնցուցած դրամս գտայ։ Ասանկ
ալ՝ ձեզի կ՚ըսեմ, ուրախութիւն կ՚ըլլայ Աստու-
ծոյ հրեշտակներուն առջեւը մէկ մեղաւորի մը հա-
մար որ կ՚ապաշխարէ։
11 Եւ ըսաւ, Մէկ մարդ մը երկու որդի ունէր.
12 Ու անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ, Հայր՝ ս—
տացուածքէդ ինծի իյնալու բաժինը տուր ինծի.
13 ան ալ բաժնեց անոնց իր է ունեցածը։ Եւ շատ
օրեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր բաները ժողվեց
ու հեռու երկիր մը գնաց, և հոն անառակու-
14 թեամբ ապրելով իր ունեցածը փճացուց։ Ու
երբոր ամէնը հատցուց, ան երկրին մէջ սաստիկ
սով մը եղաւ, ու ինքը սկսաւ չքաւոր ըլլալ։
15 Եւ գնաց ան երկրին քաղաքացիներէն մէկուն քովը
մնաց. ան ալ իր ագարակը ղրկեց զանիկայ խո-
16 զեր արածելու համար։ Եւ կը փափաքէր խոզե-
րուն կերած եղջիւրէն իր փորը լեցնելու, ու մէկը
17 չէր տար անոր։ Եւ ինքզինքին գալով ըսաւ,
Քանի՜ բանուորներ կան իմ հօրս տունը հացով
18 լեցուած, ու ես հոս սովամահ կը կորնչիմ. Ել-
լեմ՝ երթամ իմ հօրս, և ըսեմ անոր, Հայր՝
19 մեղանչեցի երկինքին դէմ ու քու առջեւդ, Եւ ալ
արժանի չեմ քու որդիդ ըսուելու. զիս քու վարձ-
20 կաններուդ մէկուն պէս ըրէ։ Ու ելաւ իր հօրը
եկաւ. ը Եւ դեռ որ ինքը շատ հեռու էր, հայրը

զ Գւ. ե. 32։
է Մար. ժբ. 44։
ը Գոր. բ. 39։ Եփե. բ. 13, 17։

տեսաւ զանիկայ՝ ու գութը շարժեցաւ ,ը և՝ վազե-
լով՝ անոր պարանոցին վրայ ինկաւ , ու համբուրեց
21 զանիկայ ։ Որդին ալ ըսաւ անոր , Հա՛յր՝ մե-
ղանչեցի երկինքին դէմ ու Քու առջեւդ , և ալ ար-
22 ժանի չեմ քու որդիդ ըսուելու ։ Բայց հայրը ը-
սաւ իր ծառաներուն , Հանեցէ՛ք առաջին պատմու-
ճանը ու հագցուցէ՛ք անոր , և մատնի դրէք անոր
23 ձեռքը , ու կօշիկներ՝ անոր ոտքերը . Նաև պարարտ
զուարակը բերէ՛ք մորթեցէ՛ք , և ուտենք և ու-
24 րախ ըլլանք . թ Ինչու որ աս իմ որդիս մեռած էր
ու ողջցաւ , կորսուած էր ու գտնուեցաւ . և
25 սկսան ուրախ ըլլալ ։ Ու անոր մեծ որդին ագա-
րակն էր , ու երբոր կու գար ու տանը մօտեցաւ ,
26 նուագարաններուն և պարերուն ձայնը լսեց ։ Ու
ծառաներէն մէկը իրեն կանչելով՝ կը հարցնէր
27 թէ աս ի՞նչ է ։ Անիկայ ալ ըսաւ անոր , Եղ-
բայրդ եկաւ , ու հայրդ պարարտ զուարակը մոր-
թեց , ինչու որ ողջ առողջ ձեռք ձգեց զանիկայ ։
28 Իսկ ինքը բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել .
ուստի իր հայրը դուրս ելլելով կ'աղաչէր անոր ։
29 Նա անիկայ պատասխան տալով՝ ըսաւ հօրը , Ահա
այսչափ տարի է որ քեզի կը ծառայեմ , ու բնաւ
քու խօսքէդ դուրս չելայ , ու ինծի երբեք մէկ ուլ
մը չտուիր , որ իմ բարեկամներուս հետ ուրախու-
30 թիւն ընէի ։ Բայց երբոր եկաւ աս քու որդիդ՝
որ քու ստացուածքդ բոզերու հետ կերաւ , անոր
31 մորթեցիր պարարտ զուարակը ։ Նա անիկայ
ըսաւ անոր , Որդեակ՝ դուն միշտ իմ հետս ես ,
32 ու իմ բոլոր ունեցածս քուկդ է . Սակայն պէտք
էր ուրախ ըլլալ և խնդալ , ժ ինչու որ աս քու
եղբայրդ մեռած էր ու ողջցաւ , կորսուած էր ու
գտնուեցաւ ։

ը Սաղ . ծա . 4 ։ Յայտ . գ . 1 ։
թ Հմր 32 ։ Եփե . բ . 1 ։ ե . 14 ։ ժ Հմր 24 ։

ԳԼՈՒԽ ԺԶ

1 Անիրաւ տնտեսին առակը ։ 14 Քրիստոս կը յանդիմանէ արծաթասէր փարիսեցւոց կեղծաւորութիւնը ։ 19 Հեշտասէր մեծատունը և աղքատ Ղազարոսը ։

1 Ու իր աշակերտներուն ալ ըսաւ , Մէկ հարուստ
մարդ մը կար , որ տնտես մը ունէր , և անոր
վրայով գանգատ եղաւ իրեն՝ որպէս՝ թէ իր ունե-
2 ցածը կը փճացնէ ։ Ուստի կանչեց զանիկայ ու
ըսաւ անոր , Ի՞նչ է աս որ քեզի համար կը լսեմ .
քու տնտեսութեանդ հաշիւը տո՛ւր , ինչու որ ալ
3 չես կրնար տնտես ըլլալ ։ Նա տնտեսը իր մտքին
մէջ ըսաւ , Ի՞նչ ընեմ , որովհետեւ իմ տէրս
տնտեսութիւնը ինծմէ կ'առնէ . *հողագործու-
թիւն չեմ կրնար ընել'' , մուրալու կ'ամչնամ ։
4 Գիտեմ ինչ պիտի ընեմ , որպէս զի երբոր ես
տնտեսութենէս մերժուիմ , զիս իրենց տունը ըն-
5 դունին ։ Նա իր տիրոջը պարտականները մէկիկ
մէկիկ իրեն կանչելով՝ ըսաւ առջինին , Դուն իմ
6 տիրոջս որչափ պարտք ունիս ։ Ան ալ ըսաւ ,
Հարիւր մար ձէթ . և ըսաւ անոր , Գիրդ առ՝ ու
7 շուտով նստէ յիսուն գրէ ։ Նաև միւսին ըսաւ ,
Դուն ալ որչափ պարտք ունիս . և անիկայ ըսաւ ,
Հարիւր քոռ ցորեն . ու ըսաւ անոր , Գիրդ առ՝
8 և ութսուն գրէ ։ Ու տէրը անիրաւ տնտեսը գո-
վեց , որ խելացութիւնով ըրաւ . վասն զի աս աշ-
խարհիս որդիքը իրենց ցեղին մէջ՝ —լուսոյ որդի-
9 ներէն աւելի խելացի են ։ Նա ես ալ ձեզի կ'ը-
սեմ , բ Անիրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ
ըրէք , որ †երբ անիկայ պակսի'' , ձեզ յաւիտե-
10 նական բնակարաններու մէջ ընդունին ։ ‡Ան որ
քիչ բանի մէջ հաւատարիմ է , շատի մէջ ալ

* Յուն . չեմ կրնար փորել
— Յօհ . ժբ . 36 ։ Եփե . ե . 8 ։ ա Թես . ե . 5 ։
բ Դան . դ . 27 ։ Մատ . զ . 19 ։ ժթ . 21 ։ Ղկ . ժա . 41 ։
ա Տիմ . զ . 17 , 18 , 19 ։
† Կամ կարօտութեան ժամանակնիդ՝
‡ Մատ . իե . 21 ։ Ղկ . ժթ . 27 ։

հաւատարիմ է. եւ ան որ քիչի մէջ անիրաւ է,
11 շատի մէջ ալ անիրաւ է։ Ուստի թէ որ անիրաւ
մամոնային մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ
12 հարստութիւնը ո՞վ պիտի հաւատայ ձեզի։ Ու
թէ որ օտարին բանին մէջ հաւատարիմ չեղաք,
ձերը ո՞վ պիտի տայ ձեզի։
13 ա Մէկ ծառայ մը չկրնար երկու տէրերու ծառա-
յութիւն ընել, ինչու որ կամ մէկը պիտի ատէ եւ
միւսը սիրէ, կամ * մէկուն պիտի յարի" եւ միւսը
արհամարհէ. չէք կրնար ծառայել Աստուծոյ ու
մամոնայի։
14 Ու փարիսեցիներն ալ բ որ արծաթասէր էին,
աս ամէն բաները լսելով կը քամահրէին զանիկայ։
15 Ու ըսաւ անոնց, Դուք էք որ մարդոց առջեւ
գ ինքզինքնիդ կ'արդարացնէք. դ բայց Աստուած
գիտէ ձեր սիրտերը. ինչու որ ե մարդոց մէջ բարձր
16 եղածը Աստուծոյ առջեւ պիղծ է։ զ Օրէնքը ու
մարգարէները մինչեւ Յովհաննէս էին. անկէ ետեւ
Աստուծոյ թագաւորութիւնը կը քարոզուի, եւ ա-
17 մէն մէկը անոր մէջը մտնելու կ'արտորայ։ է Դիւ-
րին է որ երկինքը ու երկիրը անցնին, քան թէ
18 օրէնքէն մէկ նշանագիր մը իյնայ։ ը Ո՛վ որ իր
կնիկը արձակէ եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն
կ'ընէ. եւ ով որ էրիկէ արձակուած կնիկ մը առ-
նէ՝ շնութիւն կ'ընէ։
19 Մէկ հարուստ մարդ մը կար, որ ծիրանի ու
բեհեզ կը հագնէր, եւ ամէն օր փառաւորապէս
20 ուրախութիւն կ'ընէր։ Ու Ղազարոս անունով
աղքատ մը կար վէրքերով լեցուն, որ անոր դրանը

ա Մատ. զ. 24։
* Կամ մէկը պիտի մեծարէ
բ Մատ. իգ. 14։
գ Ղկ. ժ. 29։
դ Սաղ. է. 9։
ե Ա Թագ. ժզ. 7։
զ Մատ. դ. 17. ժա. 12, 13։
Ղկ. է. 29։
է Սաղ. ճբ. 26, 27. Եսա. խ. 8. ծա. 6. Մատ. ե. 18. Ա Պետ. ա. 25։
ը Մատ. ե. 32. ժթ. 9. Մար. ժ. 11. Ա Կոր. է. 10, 11։

21 առջին դրուած էր. Ու կը փափաքէր որ ան
հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն իր փորը
լեցնէ. նաեւ շուներն ալ կու գային եւ անոր
22 վէրքերը կը լզէին։ Ու եղաւ որ ան աղքատը
մեռաւ, ու հրեշտակները Աբրահամին գոգը տարին
զանիկայ. հարուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ։
23 Ու դժոխքին մէջը երբոր տանջանքի մէջ էր, իր
աչքերը վերցնելով հեռուէն տեսաւ Աբրահամը,
24 ու Ղազարոսը անոր գոգը հանգիստ նստած։ Ու
ինքը աղաղակեց ու ըսաւ, Հա՛յր Աբրահամ՝
ողորմէ՛ ինծի ու ղրկէ՛ Ղազարոսը, որ իր
մատին ծայրը ջուրը թաթխէ, ժ ու զովացնէ իմ
լեզուս, ինչու որ ի աս բոցիս մէջ կը տանջուիմ.
25 Ու Աբրահամ ըսաւ, Որդեա՛կ՝ լ մի՛տք բեր, որ
դուն քու կեանքիդ ատենը քու բարիքներդ առիր,
նոյնպէս ալ Ղազարոս՝ չարիքներ. հիմա անիկայ
26 [հոս] կը մխիթարուի, ու դուն կը տանջուիս։ Ու
աս ամէն բաներէն 'ի զատ՝ մեր ու ձեր մէջտեղը մեծ
անդունդ մը կայ հաստատուած. անանկ որ ասկէ
ձեզի անցնիլ ուզողները չկրնան, ոչ ալ անկէ
27 մեզի գալ ուզողները անցնին։ Ան ալ ըսաւ,
Ուրեմն կ'աղաչեմ քեզի՝ հա՛յր, որ անիկայ իմ
28 հօրս տունը ղրկես, Քանզի հինգ եղբայր ունիմ,
որ երթայ անոնց վկայութիւն տայ, որ չըլլայ թէ
29 անոնք ալ աս չարչարանքին տեղը գան։ Ու Աբրա-
համ ըսաւ անոր, խ Անոնք Մովսէսը ու մարգարէ-
30 ները ունին, թող անոնց մտիկ ընեն։ Ան ալ ը-
սաւ, Ո՛չ հա՛յր Աբրահամ, հապա թէ որ մեռել-
ներէն մէկը անոնց երթայ, պիտի ապաշխարեն։
31 Ու անիկայ ըսաւ անոր, Թէ որ Մովսէսին ու
մարգարէներուն մտիկ չեն ըներ, ծ ոչ ալ թէ որ

ժ Զաք. ժդ. 12։
ի Եսա. կզ. 24. Մար. թ. 43, 48։
լ Յոբ. իա. 13. Ղկ. զ. 24։
խ Եսա. ը. 20. լդ. 16. Յովհ. ե. 39, 45. Գործ. ժե. 21. ժէ. 11։
ծ Յովհ. ժբ. 10, 11։

մեռելներէն մէկը յարութիւն առնելու ըլլայ, պի-
տի համոզուին ։

ԳԼ. ԺԷ

1 Քրիստոս կը սորվեցընէ գայթակղութիւն չտալ, 3 և իրարու յանցանքները ներել, 6 Հաւատքին զօրութիւնը, 7 Մենք պարտաւոր ենք Աստուծոյ, բայց Աստուած պարտաւոր չէ մեզի, 11 Քրիստոս կը բժշկէ տասը բորոտները, 22 Աստուծոյ Թագաւորութիւնը և Որդւոյ մարդոյ գալուստը ։

1 Եւ ըսաւ իր աշակերտներուն, ա Անկարելի է որ
գայթակղութիւններ չգան, բայց վա՜յ անոր,
2 որուն ձեռքովը կու գան ։ Անոր աւելի աղէկ է, որ
անոր պարանոցէն իշու աղացքի քար մը կախուի,
ու անիկայ ծովը ձգուի, քան թէ աս պզտիկներէն
3 մէկը գայթակղեցընէ ։ Զգուշացէ՛ք ձեր անձերուն ։
բ Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ,
գ յանդիմանէ զանիկայ. ու թէ որ ապաշխարէ,
4 ներէ անոր ։ Եւ թէ որ օրը եօթը անգամ քեզի
դէմ մեղանչէ՝ ու օրը եօթը անգամ դառնայ քեզի
ու ըսէ, Կ'ապաշխարեմ, ներէ անոր ։
5 Եւ առաքեալները ըսին Տէրոջը, Մե՛ր հաւատ-
6 քը աւելցո՛ւր ։ դ Եւ Տէրը ըսաւ, Թէ որ մա-
նանեխի հատի չափ հաւատք ունենայիք, աս թը-
թենիին կրնայիք ըսել, Արմատաքի խլուէ՛ ու
ծովուն մէջը տնկուէ՛, ան ալ պիտի հնազանդէր
ձեզի ։
7 Բայց ձեզմէ ո՞վ է ան մարդը՝ որ ունենայ մէկ
երկրագործ կամ հովիւ ծառայ մը, որ անիկայ
երբոր ագարակէն տուն մտնէ, շուտով զրուցէ
8 անոր թէ Անցի՛ր սեղան նստէ. Հապա չ՛ըսեր
անոր թէ Պատրաստէ՛ իմ ընթրիքս, ու գօտիդ
կապած ե ինծի սպասաւորութիւն ըրէ, մինչև որ
ես ուտեմ ու խմեմ. ու ետքը դուն ալ կեր ու

ա Մատ. ժը. 6, 7: Մար. թ. 41: ա Կոր. ժա. 19:
բ Մատ. ժը. 15, 21:
գ Ղև. ժթ. 17: Առակ. ժէ. 10: Յակ. ե. 19:
դ Մատ. ժէ. 19: իա. 21: Մար. թ. 22: ժա. 23:
ե Գլ. ժբ. 37:

9 խմէ ։ Միթէ շնորհակա՞լ կ'ըլլայ ան ծառային,
իրեն հրամայուած բաները կատարելուն համար.
10 չեմ կարծեր ։ Նոյնպէս ալ դուք երբոր բոլոր
ձեզի հրամայուած բաները ընէք, ըսէք թէ զ Մենք
անպիտան ծառաներ ենք, քանզի ան որ պարտա-
կան էինք ընելու, ըրինք ։
11 Ու եղաւ որ երբ ինքը է Երուսաղէմ կ'երթար,
Սամարիայի և Գալիլեայի մէջտեղէն կ'անցնէր ։
12 Ու երբոր մէկ գեղ մը պիտի մտնէր, տասը բորոտ
մարդիկ հանդիպեցան անոր, ը որոնք հեռուն կայ-
13 նեցան, Եւ ձայներնին վերցուցին ու ըսին, Յի-
14 սո՛ւս վարդապետ, ողորմէ՛ մեզի ։ Եւ տեսնելով՝
անոնց ըսաւ, թ Գացէ՛ք դուք ձեզ քահանաներուն
ցուցուցէ՛ք. ու եղաւ որ երբ կ'երթային, մաք-
15 րուեցան ։ Եւ անոնցմէ մէկը երբոր տեսաւ թէ
բժշկուեցաւ, ետ դարձաւ ու մեծ ձայնով փառք
16 կու տար Աստուծոյ. Ու երեսի վրայ անոր ոտքը
ինկալով՝ շնորհակալ կ'ըլլար անոր. և ինքը Սա-
17 մարացի էր ։ Պատասխան տուաւ Յիսուս ու
ըսաւ՝, Չէ՞ որ տասն ալ մաքրուեցան, իսկ ան
18 ինը ո՞ւր են. Ասիկա օտարազգիէն 'ի զատ ուրիշներ
չգտնուեցան՝ որ դառնալով Աստուծոյ փառք տան ։
19 ժ Եւ ըսաւ անոր. Ելի՛ր գնա. քու հաւատքդ
քեզ բժշկեց ։
20 Ու երբոր փարիսեցիները իրեն հարցուցին թէ
Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գայ,
պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Աստուծոյ
թագաւորութիւնը դիտուելով եկած բաներով
21 չգար. ի Ու պիտի չըսեն թէ Ահա հոս է կամ Ահա

զ Յոբ. իբ. 3: լե. 7: Սաղ. ժզ. 2: Մատ. իե. 30: Հռով. գ. 12: ժա. 35: ա Կոր. թ. 16, 17: Փիլէմ. 11:
է Ղու. թ. 51, 52: Յով. դ. 4:
ը Ղև. ժգ. 46:
թ Ղև. ժգ. 2: ժդ. 2: Մատ. ը. 4: Գլ. ե. 14:
ժ Մատ. թ. 22: Մար. ե. 34: ժ. 52: Գլ. է. 50: ը. 48: ժը. 42:
ի Հմր 23:

հոն, ինչու որ [ջ] ահա Աստուծոյ թագաւորութիւ-
նը ձեր ներսի դին է ։
22 Աշակերտներուն ալ ըսաւ, [ռ] Օրեր պիտի գան
որ դուք Որդւոյ մարդոյ օրերուն մէկը տեսնելու
23 պիտի փափաքիք, ու պիտի չտեսնէք ։ [ս] Եւ թէ
որ ըսեն ձեզի թէ Ահա հոս է կամ Ահա հոն, մի՛
24 երթաք ու անոնց մի՛ հետեւիք ։ [վ] Վասն զի ինչ-
պէս որ փայլակը երկինքին տակը մէկ դիէն փայ-
լատակելով՝ մինչեւ երկինքին տակը միւս դին
լոյս կու տայ, նոյնպէս ալ պիտի ըլլայ Որդին
25 մարդոյ իր գալուն օրը ։ [տ] Բայց թէ պէտք է որ
ինքը առաջ շատ չարչարանքներ կրէ ու մերժուի
26 աս ազգէն ։ [ր] Եւ ինչպէս որ Նոյի օրերը եղաւ,
անանկ պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ օրերն ալ ։
27 Կ'ուտէին՝ կը խմէին՝ կնիկ կ'առնէին, էրկան կը
տրուէին, մինչեւ այն օրը որ Նոյ տապանը մտաւ,
28 և ջրհեղեղը եկաւ ու ամէնը կորսնցուց ։ [ց] Նմա-
նապէս՝ ինչպէս որ Ղովտին օրերը եղաւ, կ'ուտէին՝
կը խմէին՝ ծախու կ'առնէին՝ կը ծախէին՝ կը տըն-
29 կէին՝ կը շինէին ։ [ւ] Բայց այն օրը որ Ղովտ Սոդո-
մէն ելաւ, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց և
30 բոլորն ալ կորսնցուց ։ Նոյնպէս պիտի ըլլայ այն
օրը՝ որուն մէջ [փ] Որդին մարդոյ պիտի յայտնուի ։
31 Այն օրը [ք] ան որ տանիքին վրայ է և իր կարասիները
տանը մէջ, թող վար չիջնէ զանոնք առնելու ։ և
ան որ արտին մէջն է նոյնպէս թող ետ չդառնայ ։
32 [օ] Մտքերնիդ բերէք Ղովտին կնիկը ։ (33) [ֆ] Ով
որ իր կեանքը կ'ուզէ ազատելու, պիտի կորսնցընէ

ջ Հռով. ժդ. 17 ։
ռ Տես Մատ. թ. 15 ։ Յով. ժէ. 12 ։
ս Մատ. իդ. 23 ։ Մար. ժգ. 21 ։ Ղկ. իա. 8 ։
վ Մատ. իդ. 27 ։
տ Մար. ը. 31 ։ թ. 30 ։ ժ. 33 ։ Ղկ. թ. 22 ։
ր Ծն. է ։ Մատ. իդ. 37 ։
ց Ծն. ժթ ։
ւ Ծն. ժթ. 16, 24 ։
փ Բ Թես. ա. 7 ։
ք Մատ. իդ. 17 ։ Մար. ժգ. 15 ։
օ Ծն. ժթ. 26 ։
ֆ Մատ. ժ. 39 ։ ժզ. 25 ։ Մար. ը. 35 ։ Ղկ. թ. 24 ։ Յով. ժբ. 25 ։

զանիկայ . և ով որ կը կորսնցընէ, պիտի ապրե-
34 ցընէ զանիկայ ։ [ա] Ձեզի կ'ըսեմ, Այն գիշերը երբ
որ երկու հոգի մէկ անկողինի մէջ ըլլան, մէկը
35 պիտի առնուի ու միւսը ձգուի ։ Եւ երբ որ երկու
կնիկ մէկտեղ աղալու ըլլան, մէկը պիտի առնուի
ու միւսը ձգուի ։ Ու երբ որ երկու հոգի արտի մը
մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի ։
36 Եւ պատասխան տալով ըսին անոր, Տէ՛ր՝ ո՞ւր
37 տեղ պիտի ըլլայ աս բանը ։ Ան ալ ըսաւ անոնց,
[բ] Ուր որ մարմին կայ, հոն պիտի ժողվուին արծիւ-
ները ։

ԳԼ. ԺԸ

1 Թախանձող որբեւարին, 9 փարիսեցիին և մաքսաւորին առակը ։ 15 Մանր տղայք Քրիստոսի կը բերուին ։ 18 Մէկ իշխան մը կ'ուզէ Քրիստոսի հետեւիլ, բայց իր հարստութիւնները արգելք կ'ըլլան ։ 28 Քրիստոսի համար ամէն բան թող տուողներուն վարձքը ։ 31 Քրիստոս կը նախաձայնէ իր մահը, 35 և կոյրին աչքերը կը բանայ ։

1 Անոնց առակ մըն ալ ըսաւ աս բանիս վրայով թէ
[գ] պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձ-
2 րանալ ։ Ըսաւ, Մէկ դատաւոր մը կար քաղաքի
մը մէջ, որ Աստուծմէ չէր վախնար ու մարդէ չէր
3 ամչնար ։ Եւ նոյն քաղաքին մէջ որբեւարի մը կար,
որ անոր կու գար ու կ'ըսէր, Իրաւունք ըրէ ինծի
4 ու ազատէ զիս իմ ոսոխէս ։ Եւ անիկայ ժամանակ
մը չէր ուզեր անոր մտիկ ընել, բայց ետքը ըսաւ իր
մտքին մէջ, Թէեւ Աստուծմէ չեմ վախնար, ու
5 մարդէ չեմ ամչնար, [դ] Գոնէ աս որբեւարին զիս
ձանձրացընելուն համար իրեն իրաւունք ընեմ, որ
6 չգայ ամէն ատեն զիս թախանձէ ։ Եւ Տէրը ըսաւ,
7 Լսեցէք՝ անիրաւ դատաւորը ինչ կ'ըսէ ։ [ե] Հապա
Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի

ա Մատ. իդ. 40, 41 ։ Ա Թես. դ. 16 ։
բ Յոբ. լթ. 30 ։ Մատ. իդ. 28 ։
գ Ղկ. ժա. 5 ։ իա. 36 ։ Հռով. ժբ. 12 ։ Եփե. զ. 18 ։ Կող. դ. 2 ։ Ա Թես. ե. 17 ։
դ Ղկ. ժա. 8 ։
ե Յայտ. զ. 10 ։

չընէ՞, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ'աղաղակեն,
8 թէեւ երկայնամիտ ալ ըլլայ անոնց վրայ։ Ձեզի
կ'ըսեմ դ որ շուտով անոնց իրաւունք պիտի ընէ.
բայց Որդին մարդոյ երբոր գայ, արդեօք հաւատք
պիտի գտնէ՞ երկրի վրայ։
9 Ու մէկ քանիներուն՝ եորոնք իրենց անձերնուն
վրայ կը վստահանային թէ արդար են, և ուրիշնե-
10 րը կ'անարգէին, աս առակը ըսաւ. Երկու մարդ
ելան տաճարը աղօթք ընելու, մէկը փարիսեցի ու
11 միւսը մաքսաւոր։ զՓարիսեցին կայներ էր, ու
առանձին այսպէս աղօթք կ'ընէր. էՈվ Աստուած
շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց պէս
չեմ, յափշտակող՝ անիրաւ՝ շնացող, և կամ աս
12 մաքսաւորին պէս. Շաբաթը երկու ան-
գամ ծոմ կը պահեմ, ու բոլոր ստացուածքիս
13 տասանորդը կու տամ։ Ու մաքսաւորը հեռուն
կայներ էր, ու չէր ուզեր աչքն ալ երկինքը վեր-
ցընել, հապա իր կուրծքը ծեծելով կ'ըսէր. Աս-
14 տուած՝ ողորմէ ինծի մեղաւորիս։ Ձեզի կ'ըսեմ
թէ ասիկայ ան միւսէն աւելի արդարացած իր
տունը իջաւ. ըվասն զի ով որ իր անձը կը բարձ-
րացընէ, պիտի խոնարհի. և ով որ իր անձը կը
խոնարհեցընէ, պիտի բարձրանայ։
15 թՄանր տղաք ալ բերին իրեն, որ անոնց
դպչի. ու աշակերտները տեսնելով կը յանդիմա-
16 նէին զանոնք։ Բայց Յիսուս անոնք իրեն կանչե-
լով ըսաւ, Թող տուէք աս մանր տղոցը որ ին-
ծի գան, և մի՛ արգիլէք զանոնք. ժինչու որ Աս-
տուծոյ թագաւորութիւնը ասանկներունն է։

դ Եբր. ժ. 37 ; բ Պետ. գ. 8, 9 ;
ե Ղկ. ժ. 29 ; ժգ. 15 ;
զ Սաղ. ճլե. 2 ;
է Եզ. ա. 15 ; ծը. 2 ; Յայտ. գ. 17 ;
ը Յոբ. իբ. 29 ; Մատ. իգ. 12 ; Ղկ. ժդ. 11 ; Յակ. դ. 6 ; ա Պետ. ե. 5, 6 ;
թ Մատ. ժթ. 13 ; Մար. ժ. 13 ;
ժ ա Կոր. ժդ. 20 ; ա Պետ. բ. 2 ;

17 իՃշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ Աստուծոյ թա-
գաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի,
բնաւ պիտի չմտնէ անոր մէջը։
18 լՈւ մէկ իշխան մը հարցուց անոր ու ըսաւ,
Բարի վարդապետ՝ ի՞նչ գործ գործեմ որ յաւի-
19 տենական կեանքը ժառանգեմ։ Ու Յիսուս ըսաւ
անոր, Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես. մէկէն 'ի
20 զատ բարի չկայ, որ է Աստուած։ Պատուիրանք-
ները գիտես. խՇնութիւն մի՛ ըներ, Սպանու-
թիւն մի՛ ըներ, Գողութիւն մի՛ ըներ, Սուտ
վկայութիւն մի՛ ըներ, ծՔու հայրդ ու մայրդ
21 պատուէ։ Ան ալ ըսաւ, Ատոնք ամէնը մանկու-
22 թենէս 'ի վեր պահեր եմ։ Աս լսելով Յիսուս
ըսաւ անոր, Մէկ բան մըն ալ պակաս է քեզի.
կՔու բոլոր ունեցածդ ծախէ, և աղքատներուն
բաշխէ, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և ե-
23 կուր իմ ետեւէս։ Անիկայ երբոր աս բանը լսեց
24 տրտմեցաւ, ինչու որ շատ հարուստ էր։ Ու Յի-
սուս երբոր անիկայ տրտմած տեսաւ, ըսաւ, հՈ՜ր-
չափ դժուար է անոնց՝ որ հարստութիւն ունին՝
25 Աստուծոյ թագաւորութիւնը մտնել։ Քանզի
դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան
թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը
26 մտնէ։ Ու անոնք որ լսեցին՝ կ'ըսէին, Ու ո՞վ
27 կրնայ փրկուիլ։ Ու ինքը ըսաւ, ձՄարդոց կող-
մանէ անկարելի եղած բաները Աստուծոյ կողմանէ
28 կարելի են։ ղՈւ Պետրոս ըսաւ, Ահա մենք ա-
29 մէն բան թողուցինք և քու ետեւէդ եկանք։ Ու ա-

ի Մար. ժ. 15 ;
լ Մատ. ժթ. 16 ; Մար. ժ. 17 ;
խ Ել. ի. 12-16 ; բ Օր. ե. 16—20 ; Հռով. ժգ. 9 ;
ծ Եփե. զ. 2 ; Կող. գ. 20 ;
կ Մատ. զ. 19, 20 ; ժթ. 21 ; ա Տիմ. զ. 19 ;
հ Առակ. ժա. 28 ; Մատ. ժթ. 23 ; Մար. ժ. 23 ;
ձ Երեմ. լբ. 17 ; Զաք. ը. 6 ; Մատ. ժթ. 26 ; Ղկ. ա. 37 ;
ղ Մատ. ժթ. 27 ;

նիկայ՝ ըսաւ անոնց, ք Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ
մարդ մը չկայ՝ որ թողուց տուն, կամ ծնողք,
կամ եղբայրներ, կամ կին, կամ որդիներ՝ Աս-
30 տուծոյ թագաւորութեանը համար, ր Որ պիտի
չառնէ բազմապատիկ աս ատենիս մէջ, և գալու
աշխարհին մէջ յաւիտենական կեանքը։
31 ս Եւ տասնըերկուքը իր քովը առնելով՝ ըսաւ
անոնց, Ահա մենք Երուսաղէմ կ'ելլենք, տ և
մարգարէներուն ձեռքովը Որդւոյ մարդոյ համար
32 բոլոր գրուածները պիտի կատարուին։ ւ Ինչու որ
հեթանոսներուն պիտի մատնուի, ու ծաղր պիտի
ըլլայ և պիտի նախատուի, ու պիտի թքնեն
33 անոր, Եւ պիտի ծեծեն ու սպաննեն անիկայ, ու
34 երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։ փ Բայց ա-
նոնք աս բաներէն մէկն ալ չհասկըցան. ու աս
խօսքը անոնցմէ ծածկուած էր, և ըսած բաները
չէին իմանար։
35 ք Ու եղաւ որ երբ ինքը Երիքովին կը մօտենար,
36 կոյր մը ճամբուն քովը նստեր էր մուրալու։ Երբ
որ լսեց բազմութեանը անցնիլը, հարցուց թէ
37 Ի՞նչ է ան։ Եւ իրեն ըսին թէ Յիսուս Նազով-
38 րեցին կ'անցնի։ Աստի աղաղակեց ու ըսաւ,
39 Յիսուս՝ որդի Դաւիթի՝ ողորմէ ինծի։ Եւ ա-
նոնք որ առջևէն կ'երթային, կը յանդիմանէին
զանիկայ, որ լռէ. բայց անիկայ՝ ալ աւելի կ'ա-
40 ղաղակէր, Որդի Դաւիթի՝ ողորմէ ինծի։ Եւ
Յիսուս կանգ առնելով՝ հրաման ըրաւ որ զանիկայ
իրեն բերեն, ու երբոր անիկայ մօտեցաւ, հարցուց
41 անոր ու ըսաւ, Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ.
անիկայ ալ ըսաւ, Տէ՛ր՝ որ աչքերս բա-

ք Օր. լգ. 9.
ր Յոբ. խբ. 10.
ս Մատ. ժզ. 21. ժէ. 21. ի. 17. Մար. ժ. 32.
տ Սաղ. իբ. Ես. ծգ.
ւ Մատ. իե. 2. Գլ. իգ. 1. Յոհ. ժբ. 28. Գոր. գ. 13.
փ Մար. թ. 31. Գլ. բ. 50. թ. 45. Յոհ. ժ. 6. ժբ. 16.
ք Մատ. ի. 29. Մար. ժ. 46.

42 ցուին։ Եւ Յիսուս ըսաւ անոր, ղ Թո՛ղ բա-
43 ցուին. Հաւատքդ քեզ բժշկեց։ Եւ իս-
կոյն անոր աչքերը բացուեցան, ու անոր ետևէն
կ'երթար ու փառք կու տար Աստուծոյ. բոլոր
ժողովուրդն ալ տեսնելով՝ զԱստուած կը գովա-
բանէին։

ԳԼ. ԺԹ

1 Զաքէոս մաքսապետը։ 11 Տասը մնասին առակը։ 28 Քրիստոս իշու վրայ հեծած՝ փառաւոր հանդէսով Երուսաղէմ կը մտնէ. 41 քաղաքին վրայ կ'ողբայ. 45 տաճարէն դուրս կը հանէ գնողները և վաճառողները. 47 ամէն օր տաճարին մէջ կը սորվեցնէ. իսկ Հրէից գլխաւորները կ'ուզեն կորսնցնել զանիկայ, բայց ժողովուրդէն կը վախնան։

1 Եւ մտնելով Երիքովի մէջէն կ'անցնէր։ (2) Եւ
ահա մարդ մը կար, անունը Զաքէոս ըսուած,
3 որ մաքսապետ էր ու հարուստ մէկ մըն էր։ Եւ
կ'ուզէր տեսնել թէ ով է Յիսուսը, ու բազմու-
թենէն չէր կրնար, ինչու որ հասակով կարճ էր։
4 Եւ առաջ վազեց ու ժանտաթզենիի մը վրայ ելաւ,
որ զանիկայ տեսնէ. ինչու որ անկէ պիտի անցնէր։
5 Ու երբոր Յիսուս ան տեղը եկաւ, վեր նայելով
զանիկայ տեսաւ, ու ըսաւ անոր, Զաքէո՛ս շուտ
ըրէ, անկէ վա՛ր իջիր, ինչու որ պէտք է ինծի
6 այսօր քու տունդ կենալ։ Եւ արտորալով վար
իջաւ, և ուրախութեամբ ընդունեց զանիկայ։
7 Երբոր ամէնն ալ տեսան, կը տրտնջէին ու կ'ը-
սէին մ թէ Մեղաւոր մարդու քով մտաւ իջևան
8 ընելու։ Եւ Զաքէոս կայնեցաւ ու ըսաւ Տէրո-
ջը, Տէ՛ր՝ ահա իմ ունեցածիս կէսը աղքատներուն
կու տամ, յ ու թէ որ զրպարտութեամբ մէկու
մը զրկանք ըրած եմ, ն չորեքպատիկ կը հատու-
9 ցանեմ անոր։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Այսօր

ղ Գլ. ժէ. 19.
ճ Գլ. ե. 26. Գոր. գ. 21. ժա. 18.
մ Մատ. թ. 11. Գլ. ե. 30.
յ Գլ. գ. 14.
ն Ել. իբ. 1. Ա Թագ. ժբ. 3. Բ Թագ. ժբ. 6.

աս տանը փրկութիւն եղաւ. դ ինչու որ ասիկայ
10 ալ Աբրահամի որդի է ։ ե Վասն զի Որդին
մարդոյ եկաւ որ կորսուածը փնտռէ ու փրկէ ։
11 Ու երբոր անոնք աս բաները կը լսէին, առակ
մըն ալ ըսաւ իր Երուսաղէմ մօտենալուն համար,
զ և անոնց անանկ կարծելուն համար թէ շուտ մը
Աստուծոյ թագաւորութիւնը պիտի յայտնուի ։
12 է Ուստի ըսաւ, Մէկ ազնուական մարդ մը հեռու
երկիր գնաց՝ իրեն թագաւորութիւն առնելու և
13 դառնալու ։ Ու իր տասը ծառաները կանչելով՝
տասը մնաս տուաւ անոնց, ու ըսաւ անոնց, Բա-
14 նեցուցէք [illegible]՝ մինչև որ ես գամ ։ ը Իսկ անոր
քաղաքացիները զանիկայ կ՚ատէին, ու դեսպաններ
խրկեցին անոր ետևէն, ըսելով թէ Չենք ուզեր
15 որ ասիկայ մեր վրայ թագաւորութիւն ընէ ։ Ու
եղաւ որ երբ անիկայ թագաւորութիւնը առնելով
ետ դարձաւ, իրեն կանչել տուաւ այն ծառաները՝
որոնց որ ստակը տուեր էր, որ գիտնայ թէ ով ինչ
16 շահ ըրած է ։ Ու առջինը եկաւ ու ըսաւ, Տէ՛ր
17 քու մնասդ տասը մնաս շահ ըրաւ ։ Ու ըսաւ ա-
նոր, Աղէ՛կ բարի ծառայ, որովհետև քիչ բա-
նին մէջ թ հաւատարիմ եղար, տասը քաղաքի վրայ
18 իշխանութիւն ունեցիր ։ Ու երկրորդը եկաւ ու
ըսաւ, Տէ՛ր քու մնասդ հինգ մնաս շահ ըրաւ ։
19 Ու ըսաւ անոր, Դուն ալ հինգ քաղաքի վրայ
20 եղիր ։ Ու ուրիշ մը եկաւ ու ըսաւ, Տէ՛ր ահա
քու մնասդ՝ որ թաշկինակի մէջ ծրարած կը պա-
21 հէի. ժ Վասն զի կը վախնայի քեզմէ, ինչու որ
դուն խիստ մարդ մըն ես. չդրած բանդ կը վեր-

դ Հռովմ. դ. 11, 12, 16 ։ Գաղ. գ. 7 ։
ե Ղկ. ժգ. 16 ։
զ Մատ. ժը. 11 ։ Տես Մատ. ժ. 6 ։ ժե. 24 ։
է Գործ. ա. 6 ։
ը Մատ. իե. 14 ։ Մար. ժգ. 34 ։
թ Յոհ. ա. 11 ։
ժ Մատ. իե. 21 ։ Ղկ. ժզ. 10 ։
ժ Մատ. իե. 24 ։

22 ցընես ու չսերմանածդ կը հնձես ։ Ու անիկայ
ըսաւ անոր, ժա Քու բերնէդ քեզ պիտի դատեմ՝
ով չար ծառայ. ժբ գիտէիր որ ես խիստ մարդ մըն
եմ, չդրած բանս կը վերցընեմ ու չսերմանածս
23 կը հնձեմ, Ու ինչո՞ւ համար իմ ստակս սեղանա-
ւորներուն չտուիր, որ ես եկած ատենս շահովը
24 առնէի անիկայ ։ Ու հոն կայնողներուն ըսաւ,
Առէք ատկէ մնասը ու տուէք անոր որ տասը
25 մնաս ունի. (Ու ըսին իրեն, Տէ՛ր անիկայ տասը
26 մնաս ունի.) ժգ Վասն զի կ՚ըսեմ ձեզի, թէ ամէն
ունեցողին պիտի տրուի, և չունեցողին ունեցածն
27 ալ անկէ պիտի առնուի ։ Բայց այն իմ թշնամիներս՝
որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագաւոր ըլլամ,
28 հոս բերէք ու իմ առջևս սպաննեցէք ։ Ու աս
բաները խօսելէն ետև, առաջ գնաց Երուսաղէմ
ելլելու ։
29 ժդ Ու եղաւ որ երբ Բեթփագէին ու Բեթանիա-
յին մօտեցաւ, դէպ ՚ի այն լեռը որ Ձիթենեաց
լեռ կ՚ըսուի, իր աշակերտներէն երկուքը խրկեց,
30 Ու ըսաւ, Գացէք դէ՛ դիմացը եղած գեղը, և
անոր մէջ մտնելնուդ պէս պիտի գտնէք կապուած
աւանակ մը, որուն վրայ բնաւ մարդ մը նստած
31 չէ. արձըկեցէք անիկայ ու բերէք. Ու թէ որ
մէկը ձեզի հարցընէ թէ Ինչո՞ւ կ՚արձըկէք. ա-
32 սանկ ըսէք անոր թէ Տէրոջը պէտք է ։ Երբոր
գացին անոնք որ խրկուեցան, ինչպէս որ իրենց
33 զրուցեր էր՝ գտան ։ Ու երբոր աւանակը կ՚արձը-
կէին, անոր տէրերը ըսին անոնց, Ինչո՞ւ կ՚ար-
34 ձըկէք աս աւանակը ։ Անոնք ալ ըսին, Տէրոջը
35 պէտք է. Ու զանիկայ Յիսուսին բերին, ժե ու
իրենց հանդերձները աւանակին վրայ ձգելով՝ Յի-

ժա Բ Թագ. ա. 16 ։ Յոբ. ժե. 6 ։ Մատ. ժբ. 37 ։
ժբ Մատ. իե. 26 ։
ժգ Մատ. ժգ. 12 ։ իե. 29 ։ Մար. դ. 25 ։ Ղկ. ը. 18 ։
ժդ Մար. ժ. 32 ։
ժե Մատ. իա. 1 ։ Մար. ժա. 1 ։
ժզ Բ Թագ. թ. 13 ։ Մատ. իա. 7 ։ Մար. ժա. 7 ։ Յոհ. ժբ. 14 ։

36 սուրը՝ հեծցուցին։ ղ Ու երբոր կ'երթար, իրենց
37 հանդերձները ճամբուն վրայ կը փռէին։ Ու երբոր
ալ մօտեցաւ, և Ձիթենեաց լերանը զառ'ի վայ-
րէն կ'իջնէր, աշակերտներուն բոլոր բազմութիւնը
սկսաւ ուրախութեամբ զԱստուած օրհնել բարձր
ձայնով այն բոլոր հրաշքներուն համար՝ որ տեսեր
38 էին. Ու կ'ըսէին, ճ Օրհնեալ է այն Թագաւորը
որ Տէրոջը անունովը կու գայ. մ Երկինքի մէջ
խաղաղութի՛ւն, ու փառք՝ բարձրութեան մէջ։
39 Իսկ բազմութեանը մէջէն փարիսեցիներուն մէկ
քանիները ըսին անոր, Վա՛րդապետ՝ յ քու ա-
40 շակերտներդ յանդիմանէ՛։ Իսկ անիկայ պատաս-
խան տուաւ ու ըսաւ անոնց, Ձեզի կ'ըսեմ, թէ
որ ասոնք լուռ կենան, ն քարերը պիտի աղաղա-
կեն։
41 Ու երբոր մօտեցաւ, քաղաքը տեսնելով՝ շ լա-
42 ցաւ անոր վրայ և ըսաւ, Գոնէ աս քու օրուանդ
մէջ գիտնայիր քու խաղաղութիւնդ, բայց հիմա
43 ծածկուեցաւ քու աչքերէդ։ Ինչու որ օրեր պիտի
գան քու վրադ, ո որ թշնամիներդ քու բոլորտիքդ
պատնէշ պիտի շինեն, ու քեզ պիտի պաշարեն,
44 և ամէն կողմէ քեզ նեղը պիտի ձգեն. չ Իսկ հիմ-
նայատակ պիտի ընեն քեզ ու քու մէջդ եղած զա-
ւակներդ, և քար մը քարի վրայ ամենևին պիտի
չթողուն քու մէջդ, պ անոր համար որ չճանչցար
քու այցելութեան ժամանակդ։
45 ջ Իսկ տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել ա-
46 նոր մէջ ծախողները և գնողները. Իսկ ըսաւ ա-

ղ Մատ. իա. 8։
ճ Սաղ. ճժը. 26։ Ղկ. ժգ. 35։
մ Ղկ. բ. 14։ Եփե. բ. 14։
յ Ամբ. բ. 11։
ն Յով. ժա. 35։
շ Ես. իթ. 3, 4։ Երեմ. զ. 3, 6։ Ղկ. իա. 20։
ո Գ. Թագ. թ. 7, 8։ Միք. գ. 12։
չ Մատ. իդ. 2։ Մար. ժգ. 2։ Ղկ. իա. 6։
պ Դան. թ. 24։ Ղկ. ա. 68, 69։ Ա Պետ. բ. 12։
ջ Մատ. իա. 12։ Մար. ժա. 11, 15։ Յով. բ. 14, 15։

նոնց, ռ Գրուած է թէ Իմ տունս աղօթքի տուն
է, ս բայց դուք անիկայ աւազակներու այր ըրիք։
47 Իսկ ամէն օր տաճարին մէջ կը սորվեցրնէր.
վ բայց քահանայապետները ու դպիրները և ժողո-
վուրդին գլխաւորները կը փնտռէին թէ ինչպէս
48 կորսընցընեն զանիկայ, Ու բան մը չէին կրնար
գտնել թէ ինչ ընեն, ինչու որ բոլոր ժողովուր-
դը անոր կապուեր էին մտիկ ընելու։

ԳԼ. Ի

1 Քրիստոս իր իշխանութեան իրաւունքը կը պաշտպանէ Յով-
հաննէսի մկրտութեան հարցումովը։ 9 Այգիին առակը։ 25
Քրիստոսի պատասխանը Կայսրին տուրք տալու վրայով։ 27
Յարութիւն չկայ ըսող սադուկեցիները կը պապանձեցրնէ։
41 Քրիստոս ինչպէս Դաւիթի որդին կ'ըլլայ։ 45 Իր աշա-
կերտներուն կը պատուիրէ դպիրներէն զգոյշ կենալ։

1 տ Ու եղաւ որ այն օրերուն մէկը՝ երբոր տաճարին
մէջ ժողովուրդին կը սորվեցրնէր և աւետա-
րանը կը քարոզէր, քահանայապետները ու դպի-
2 րերը ծերերուն հետ մէկտեղ վրայ հասան, Ու
անոր խօսեցան՝ ըսելով, Ըսէ՛ մեզի՝ ր ի՞նչ
իշխանութիւնով կ'ընես աս բաները, կամ ո՞վ է
3 աս իշխանութիւնը քեզի տուողը։ Պատասխան
տուաւ ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը
4 հարցընեմ, և ըսէք ինծի, Յովհաննէսին մկր-
5 տութիւնը երկինքէ՞ն էր թէ մարդոցմէ։ Իսկ ա-
6 նոնք մէջերնին խորհեցան ու ըսին, Թէ որ ըսենք՝
Երկինքէն, պիտի ըսէ, Հապա ինչո՞ւ չհաւատա-
ցիք անոր. իսկ թէ որ ըսենք՝ Մարդոցմէ, բոլոր
ժողովուրդը մեզ պիտի քարկոծեն. ց ինչու որ
համոզուած են թէ Յովհաննէս մարգարէ
7 էր։ Իսկ պատասխան տուին թէ չենք գիտեր ուսկից
8 էր։ Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ

ռ Ես. ծզ. 7։
ս Երեմ. է. 11։
վ Մար. ժա. 18։ Յով. է. 19։ ը. 37։
տ Մատ. իա. 23։
ր Գոր. դ. 7։ է. 27։
ց Մատ. ժդ. 5։ իա. 26։ Ղկ. է. 29։

ըսէր թէ ինչ իշխանութիւնով կ՚ընեմ աս բա-
ները :
9 Սկսաւ աս առակը զրուցել ժողովուրդին .
կ Մէկ մարդ մը այգի տնկեց և զանիկայ մշակնե-
րու յանձնեց . ու ինքը օտար երկիր երթալով՝ շատ
10 ժամանակ մնաց : Ու ատենին ծառայ մը խրկեց
մշակներուն , որ այգիին պտուղէն անոր տան . իսկ
մշակները ծեծեցին զանիկայ ու պարապ ճամբե-
11 ցին : Ու ուրիշ ծառայ մըն ալ խրկեց . իսկ ա-
նոնք զանիկայ ալ ծեծեցին , անարգեցին ու պարապ
12 ճամբեցին : Ու երրորդ մըն ալ խրկեց . իսկ ա-
նոնք զանիկայ ալ վիրաւորեցին ու դուրս հանեցին :
13 Այն ատենը այգիին տէրը ըսաւ , Ի՞նչ ընեմ . իմ
սիրելի որդիս խրկեմ , գուցէ զանիկայ տեսնելով
14 ամչնան : Բայց մշակները երբոր տեսան զանիկայ ,
իրարու հետ խորհուրդ ըրին՝ ըսելով , Ասիկայ է
ժառանգը , եկէ՛ք զանիկայ սպաննենք՝ որ ժառան-
15 գութիւնը մերը ըլլայ : Ու զանիկայ այգիէն
դուրս հանեցին ու սպաննեցին . ուստի այգիին
16 տէրը ի՞նչ պիտի ընէ անոնց . Պիտի գայ ու կոր-
սնցնէ ան մշակները , և այգին ուրիշներու պիտի
17 տայ : Երբոր ասոր լսեցին , ըսին , Քա՛ւ լիցի : Ու
ինքը անոնց նայելով ըսաւ , Հապա ի՞նչ է աս
գրուածը թէ հ Այն քարը որ շինողները մերժե-
18 ցին , անիկայ անկիւնին գլուխը եղաւ : Ամէն ո՛վ
որ ան քարին վրայ իյնայ՝ պիտի կոտրտի , ձ և որու-
19 վրայ որ իյնայ՝ պիտի փշրէ զանիկայ : Ու քահա-
նայապետները ու դպիրները կը փնտռէին թէ ինչպէս
նոյն ժամուն ձեռք զարնեն անոր , բայց ժողովուր-
դէն վախցան . քանզի իմացան որ ան առակը իրենց
համար ըսաւ :
20 ղ Ու [illegible] սպասելով՝ խրկեցին

կ Մատ. իա. 33. Մար. ժբ. 1.
հ Սաղ. ճժը. 22. Մատ. իա. 42.
ձ Դան. բ. 34, 35. Մատ. իա. 44.
ղ Մատ. իբ. 15.

քանի մը խաբեբայ մարդիկ՝ որոնք կեղծաւորու-
թեամբ ինքզինքնին արդար կը ձևացընէին , որ ա-
նիկայ խօսքով բռնեն՝ տէրութեան և կուսակալին
21 իշխանութեանը զանիկայ մատնելու : Ու անոր
հարցուցին ըսելով , ճ Վարդապե՛տ գիտենք որ
շիտակ կը խօսիս ու կը սորվեցընես , և աչառու-
թիւն չես ըներ , հապա ճշմարտութեամբ Աստուծոյ
22 ճամբան կը սորվեցընես : Մեզի արժա՞ն է Կայսրին
23 տուրք տալ թէ չէ : Ու անոնց խորամանկու-
թիւնը հասկընալով ըսաւ անոնց , Ինչո՞ւ զիս կը
24 փորձէք . Ցուցուցէ՛ք ինծի դահեկան մը : Որո՞ւն
պատկերը ու գիրը ունի վրան : Պատասխան տուին
25 ու ըսին , Կայսրինը : Ու ինքը ըսաւ անոնց , Ու-
րեմն ան որ Կայսրինն է՝ Կայսրին տուէք , և ան որ
26 Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք : Ու չկրցան անի-
կայ խօսքով մը բռնել ժողովուրդին առջևը , ու
զարմանալով անոր պատասխանին վրայ՝ լուռ կե-
ցան :
27 Ու մ Սադուկեցիներէն ոմանք եկան , (յ որոնք
հակառակութիւն կ՚ընեն թէ յարութիւն չկայ ,)
28 և անոր հարցուցին՝ ըսելով , Վարդապե՛տ ն Մով-
սէս մեզի գրեց , Թէ որ մէկուն եղբայրը կնիկ ու-
նենալով մեռնելու ըլլայ , ու մեռած ատենը
զաւակ չունենայ , անոր եղբայրը առնէ ան կնիկը ,
29 և իր եղբօրը զաւակ հանէ : Եօթը եղբայրներ
կային . ու առջինը կնիկ մը առնելով՝ զաւակ չու-
30 նեցած մեռաւ : Երկրորդն ալ առաւ ան կնիկը , և
31 ինքն ալ մեռաւ առանց զաւակի : Երրորդն ալ
առաւ զանիկայ , նմանապէս եօթն ալ , ու զաւակ
32 չձգեցին ու մեռան : Ամենէն ետքը կնիկն ալ
33 մեռաւ : Ուրեմն յարութեան ատենը անոնցմէ
որո՞ւն կնիկը պիտի ըլլայ , ինչու որ եօթն ալ զա-
34 նիկայ կնիկ ունեցան : Ու Յիսուս պատասխան

ճ Մատ. իբ. 16. Մար. ժբ. 14.
մ Մատ. իբ. 23. Մար. ժբ. 18.
յ Գործ. իգ. 6, 8.
ն Բ Օր. իե. 5.

տալով անոնց ըսաւ, Այս աշխարհիս որդիքը կնիկ
35 կ'առնեն ու էրկան կը տրուին ։ Բայց անոնք որ
արժանի պիտի ըլլան ան աշխարհին հասնելու ու
մեռելներէն յարութիւն առնելու, ոչ կնիկ կ'առ-
36 նեն և ոչ էրկան կը տրուին. Որովհետև ալ չեն
կրնար մեռնիլ. Հրեշտակներուն հաւասար
են, ու Աստուծոյ որդիք են, ե ինչու որ յարու-
37 թեան որդիք են ։ Բայց մեռելներուն յարութիւն
առնելը զ Մովսէս ալ իմացուց մորենիին պատմու-
թեանը մէջ, երբոր կը կոչէ Տէրը՝ Աբրահամին Աս-
տուածը, ու Իսահակին Աստուածը, և Յակոբին
38 Աստուածը ։ Ու Աստուած մեռելներուն Աս-
տուածը չէ, հապա կենդանիներուն, է ինչու
39 որ ամէնը անոր կենդանի են ։ Ու դպիրներէն մէկ
քանին պատասխան տուին ու ըսին, Վարդապետ՝
40 աղէկ ըսիր ։ Ու ալ մէկը համարձակութիւն չէր
ըներ անոր բան մը հարցընելու ։

41 Ու ըսաւ անոնց, ը Ի՞նչպէս կ'ըսեն թէ Քրիս-
42 տոս Դաւիթի որդին է. Ու ինքը Դաւիթ Սաղ-
մոսներուն գրքին մէջ կ'ըսէ, թ Տէրը իմ Տէրոջս
43 ըսաւ, Նստէ իմ աջ կողմս, Մինչև որ քու
44 թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ ։ Ու-
րեմն Դաւիթ որ զանիկայ Տէր կը կոչէ, ի՞նչպէս
անիկայ անոր որդին կ'ըլլայ ։

45 Ու բոլոր ժողովուրդին առջևը ըսաւ իր աշա-
46 կերտներուն, ժ Զգուշացէք դպիրներէն, որոնք
կ'ուզեն փառաւոր հանդերձներով պտըտիլ, և
շուկաներուն մէջ բարևներ կը սիրեն, ու ժողովա-
րաններուն մէջ առաջին աթոռները, և ընթրիքնե-
47 րու մէջ առաջին բազմոցները. Որոնք որբևարի-

ե Ա Կոր. ժե. 42, 49, 52 ։ Ա Յոհ. գ. 2 ։
զ Հռով. ը. 23 ։
է Ել. գ. 6 ։
ը Հռով. զ. 10, 11 ։
թ Մատ. իբ. 42 ։ Մար. ժբ. 35 ։
ժ Սաղ. ճժ. 1 ։ Գործ. բ. 34 ։
ժա Մատ. իգ. 1 ։ Մար. ժբ. 38 ։
ժբ Մատ. իգ. 5 ։
ժգ Գլ. ժա. 43 ։
ժդ Մատ. իգ. 14 ։

ներուն տուները կ'ուտեն, ու ձևոքով երևնալու
համար աղօթքը կ'երկընցընեն. ասոնք աւելի դա-
տապարտութիւն պիտի ընդունին ։

ԳԼՈՒԽ ԻԱ

1 Քրիստոս կը գովէ աղքատ որբևարին. 5 կը նախագուշակէ տաճարին ու Երուսաղէմին կործանումը. 25 նաև վերջին օրուան նշանները. 34 կը յորդորէ որ արթուն ըլլանք ։

1 Ու նայելով՝ ա տեսաւ հարուստները որ իրենց
2 ընծաները գանձանակը կը ձգէին ։ Մէկ տնանկ
որբևարի մըն ալ տեսաւ, որ հոն երկու լումայ
3 ձգեց ։ Ու ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի
բ որ աս աղքատ որբևարին ամէնէն աւելի ձգեց.
4 Ինչու որ ամէն անոնք իրենց աւելցածէն Աստուծոյ
ընծաներուն մէջը ձգեցին, բայց անիկայ իր չքա-
ւորութենէն բոլոր իր ունեցած ապրուստը ձգեց ։
5 գ Ու երբոր մէկ քանիները տաճարին համար կ'ը-
սէին թէ Գեղեցիկ քարերով ու նուէրներով զար-
6 դարուած է, ըսաւ, Այս բաները որ կը տեսնէք, օրեր
պիտի գան դ որ ան ատենը քար մը քարի վրայ պի-
7 տի չմնայ որ չքակուի ։ Հարցուցին իրեն ու ըսին,
Վարդապետ՝ ե՞րբ պիտի ըլլան աս բաները, և
ի՞նչ է նշանը՝ երբոր աս բաները պիտի ըլլան ։
8 Ան ալ ըսաւ, ե Զգոյշ կեցէք՝ չխաբուիք, ին-
չու որ շատերը պիտի գան իմ անունովս ու ըսեն
թէ Ես եմ Քրիստոսը, ու ժամանակը մօտեցած
9 է. ուրեմն անոնց ետևէն չերթաք ։ Բայց երբոր լսէք
պատերազմներ և խռովութիւններ՝ մի՛ վախնաք,
ինչու որ պէտք է առաջ աս բաները ըլլան, բայց
10 վախճանը իսկոյն չէ ։ զ Ան ատենը ըսաւ անոնց,
Ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն
11 թագաւորութեան վրայ. Ու տեղ տեղ մեծ

ա Մար. ժբ. 41 ։
բ Բ Կոր. ը. 12 ։
գ Մատ. իդ. 1 ։ Մար. ժգ. 1 ։
դ Գլ. ժթ. 44 ։
ե Մատ. իդ. 4, 5 ։ Մար. ժգ. 5 ։ Եփե. ե. 6 ։ Բ Թեսաղ. բ. 3 ։
զ Մատ. իդ. 7 ։

երկրաշարժութիւններ պիտի ըլլան, ու սովեր և
մահտարաժամներ, նաև երկինքէն սոսկալի բաներ
12 և մեծ նշաններ պիտի ըլլան։ [է] Բայց աս ամէն
բաներէն առաջ իրենց ձեռքերը ձեզի պիտի զար-
նեն ու հալածեն, և ժողովարաններու ու [ը] բան-
տերու պիտի մատնեն. և [թ] իմ անուանս համար
[ժ] թագաւորներու ու կուսակալներու առջև պիտի
13 տարուիք։ [ի] Ու աս բաները վերջը ձեզի վկայու-
14 թիւն մը պիտի ըլլայ։ [լ] Ուստի ձեր սրտին մէջը
դրէք՝ որ առաջուց չմտածէք պատասխան տալու
15 վրայով։ Վասն զի ես ձեզի բերան ու իմաստու-
թիւն պիտի տամ, [խ] որուն պիտի չկրնան դէմ
խօսիլ, կամ դէմ կենալ ձեր ամէն հակառա-
16 կորդները։ Ու [ծ] պիտի մատնուիք ծնողքներէ
ու եղբայրներէ և ազգականներէ ու բարեկամ-
17 ներէ, [կ] ու ձեզմէ պիտի սպաննեն. [հ] Ու իմ ա-
նուանս համար ամենուն ատելի պիտի ըլլաք.
18 [ձ] Բայց մէկ մազ մը ձեր գլխէն պիտի չկորսուի։
19 Ձեր համբերութիւնովը հոգիներդ պիտի ստանաք։
20 [ղ] Ու երբոր տեսնէք Երուսաղէմը չորս կողմէն
զօրքերով պատած, ան ատենը գիտցէք որ անոր
21 աւերումը մօտ է։ Ան ատենը Հրէաստանի մէջ
եղողները լեռները թող փախչին, ու անոր մէջ
եղողները թող հեռանան, և անոնք որ ագարակ-
22 ներն են, թող չմտնեն անոր մէջը։ Վասն զի ան
օրերը վրէժխնդրութեան օրեր են, [ճ] որ բոլոր
23 գրուածները կատարուին։ [մ] Բայց վայ ան օրերը
յղի եղողներուն ու ծիծ տուողներուն, ինչու որ

է Մար. ժգ. 9; Յայտ. բ. 10;
ը Գոր. դ. 3; ե. 18; ժբ. 4; ժզ. 24;
թ Ա Պետ. բ. 13;
ժ Գոր. իե. 23;
ի Փիլ. ա. 28; Բ Թես. ա. 5;
լ Մատ. ժ. 19; Մար. ժգ. 11; Ղկ. ժբ. 11;
խ Գոր. զ. 10;
ծ Միք. է. 6; Մար. ժգ. 12;
կ Գոր. է. 58; ժբ. 2;
հ Մատ. ժ. 22;
ձ Մատ. ժ. 30;
ղ Մատ. իդ. 15; Մար. ժգ. 14;
ճ Դան. թ. 26, 27; Զաք. ժա. 1;
մ Մատ. իդ. 19;

մեծ նեղութիւն պիտի ըլլայ երկրին վրայ, ու
բարկութիւն այս ժողովուրդին վրայ.
24 Ու սուրի բերնով պիտի իյնան, ու բոլոր ազգե-
րուն մէջ գերի պիտի տարուին. ու Երուսաղէմ
ազգերուն ոտքի կոխան պիտի ըլլայ, [յ] մինչև որ
25 ազգերուն ժամանակները լմննան։ [ն] Ու արեգա-
կին և լուսնին ու աստղերուն վրայ նշաններ պիտի
ըլլան, ու երկրի վրայ ազգերը այլայլութեամբ պի-
տի տագնապին, և ծովը ու ալիքները պիտի
26 գոռան. Մարդոց սիրտերը պիտի նուաղին իրենց
վախէն՝ և աշխարհի վրայ գալու բաներուն սպասե-
լէն, [շ] ինչու որ երկնից զօրութիւնները պիտի
27 շարժին։ Ու ան ատենը պիտի տեսնեն Որդին
մարդոյ [ո] ամպի մէջ եկած զօրութիւնով ու մեծ
28 փառքով։ Ու երբոր աս բաները սկսին ըլլալ,
ելէք ու գլուխնիդ բարձրացուցէք, [չ] ինչու որ
ձեր փրկութիւնը մօտ է։
29 [պ] Ու առակ մը ըսաւ անոնց, Տեսէք թզենին
30 ու ամէն ծառերը. Երբոր կը բողբոջին, տեսնե-
լով՝ դուք ձեզմէ կ'իմանաք թէ ալ ամառը մօտ
31 է։ Նոյնպէս ալ դուք երբոր աս բաները եղած
տեսնէք, գիտցէք որ Աստուծոյ թագաւորութիւ-
32 նը մօտ է։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ աս
ազգը պիտի չանցնի, մինչև որ այս ամէն բաները
33 ըլլան։ [ջ] Երկինք ու երկիր պիտի անցնին,
34 բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին։ Իսկ
դուք [ռ] զգուշացէք ձեր անձերուն, չըլլայ որ սիր-
տերնիդ կերուխումով ու գինովութիւնով և աշ-
խարհային զբաղմունքներով ծանրանայ, ու յան-

յ Դան. թ. 27; ժբ. 7; Հռով. ժա. 25;
ն Մատ. իդ. 29; Մար. ժգ. 24; Բ Պետ. գ. 10, 12;
շ Մատ. իդ. 29;
ո Մատ. իդ. 30; Յայտ. ա. 7; ժդ. 14;
չ Հռով. ը. 19, 23;
պ Մատ. իդ. 32; Մար. ժգ. 28;
ջ Մատ. իդ. 35;
ռ Հռով. ժգ. 13; Ա Թես. ե. 6; Ա Պետ. դ. 7;

35 կարծակի այն օրը ձեր վրայ հասնի ․ ա Վասն զի բոլոր
երկրին երեսը բնակողներուն ամենուն վրայ բ որո-
36 գայթի մը պէս պիտի հասնի ։ գ Արթուն
կեցէք , դ ու ամէն ատեն աղօթք ըրէք , որ ար-
ժանի ըլլաք այն բոլոր ըլլալու բաներէն ազատելու
ու ե Որդւոյ մարդոյ առջեւ կայնելու ։
37 զ Ու ցորեկները տաճարին մէջ կը սորվեցնէր ,
է և գիշերները կ՚ելլէր Ձիթենեաց ըսուած լեռը
38 կը կենար ։ Ու բոլոր ժողովուրդը առտուանց
կանուխ իրեն կ՚երթային տաճարը՝ իր խօսքերը լը-
սելու ։

ԳԼ․ ԻԲ

1 Հրէայք դաւակցութիւն կ՚ընեն Քրիստոսի դէմ , 3 Սատանան կը դրդէ Յուդան որ մատնէ զՔրիստոս , 7 Առաքեալները կը պատրաստեն զատիկը , 19 Քրիստոս իր սուրբ ընթրիքը կը սահմանէ ․ 21 իր մատնիչին ո՛վ ըլլալը կ՚իմացընէ՝ առանց անոր անունը տալու ․ 24 իր աշակերտները փառասիրութենէ կը զգուշացընէ ․ 31 Պետրոսին կ՚իմացընէ թէ իր հաւատքը պիտի չպակսի , 34 Բայց իրեք անգամ պիտի ուրանայ իր Տէրը ․ 39 աղօթք կ՚ընէ Գեթսեմանեան պարտէզին մէջ , և արիւն քրտինք կը թափէ ․ 47 մէկ համբուրով մը կը մատնուի ․ 50 Մաղքոսին ականջը կը բժշկէ , 54 Պետրոս իրեք անգամ կ՚ուրանայ իր Տէրը , 63 Քրիստոս նախատալից անարգութիւն և չարչարանք կը կրէ , 66 ու կը խոստովանի թէ ինքը Աստուծոյ Որդին է ։

1 ը Բաղարջակերաց տօնը մօտեցաւ որ Զատիկ
2 կ՚ըսուէր ․ թ Ու քահանայապետները ու դը-
պիրները կը փնտռէին թէ ինչպէս սպաննեն զանի-
կայ , քանզի ժողովուրդէն կը վախնային ։
3 ժ Ու Սատանան Իսկարիովտացի մականուանեալ
Յուդային ներսը մտաւ , որ անիկայ տասներկու-
4 քին համրանքէն էր ։ Ու գնաց քահանայապետ-

ա Թես․ ե․ 2 ։ բ Պետ․ գ․ 10 ։ Յայտ․ գ․ 3 ։ ժզ․ 15 ։
գ Մատ․ իդ․ 42 ։ իե․ 13 ։ Մար․ ժգ․ 33 ։
դ Ղկ․ ժը․ 1 ։
ե Սաղ․ ա․ 5 ։ Եփե․ զ․ 13 ։
զ Յոհ․ ը․ 1 , 2 ։
է Ղկ․ իբ․ 39 ։
ը Մատ․ իզ․ 2 ։ Մար․ ժդ․ 1 ։
թ Սաղ․ բ․ 2 ։ Յոհ․ ժա․ 47 ։ Գործ․ դ․ 27 ։
ժ Մատ․ իզ․ 14 ։ Մար․ ժդ․ 10 ։ Յոհ․ ժգ․ 2 , 27 ։

ներուն ու իշխաններուն հետ խօսք ըրաւ թէ ինչ-
5 պէս զանիկայ մատնէ անոնց ։ Անոնք ալ ուրա-
6 խացան ի և խոստացան անոր ստակ տալ ։ Ու
ինքը վրան առաւ , և պատեհութիւն մը կը փնտռ-
ռէր որ զանիկայ մատնէ անոնց առանց բազմու-
թեանը ժողվուելուն ։
7 լ Ու Բաղարջակերաց օրը եկաւ , որուն մէջ պէտք
8 էր զատիկը մորթել ։ Ու խրկեց Պետրոսը և
Յովհաննէսը ու ըսաւ , Գացէ՛ք պատրաստեցէ՛ք
9 մեզի զատիկը որ ուտենք ։ Անոնք ալ ըսին անոր ,
10 Ո՞ւր կ՚ուզես որ պատրաստենք ։ Ու ըսաւ անոնց ,
Ահա երբոր քաղաքը մտնէք , ձեզի մարդ մը պիտի
պատահի որ ուսին վրայ ջուրի սափոր մը կը տանի ․
անոր ետեւէն գացէ՛ք այն տունը՝ ուր որ ինքը կը
11 մտնէ ․ Ու այն տանը տիրոջը ըսէ՛ք , Վարդապե-
տը կ՚ըսէ քեզի , Ո՞ւր է օթեւանը՝ որ հոն աշա-
12 կերտներուս հետ մէկտեղ զատիկը ուտեմ ։ Ան
ալ ձեզի յարդարուած մեծ վերնատուն մը պիտի
13 ցուցնէ , հոն պատրաստեցէ՛ք ։ Ու գացին գտան
ինչպէս որ իրենց ըսաւ , ու զատիկը պատրաստե-
ցին ։
14 խ Ու երբոր ժամը հասաւ՝ սեղան նստաւ , և
15 տասներկու առաքեալները իր հետը ։ Ու ըսաւ
անոնց , Փափաքելով փափաքեցայ որ աս զատի-
կը ձեզի հետ ուտեմ իմ չարչարուելէս առաջ ։
16 ծ Քանզի կ՚ըսեմ ձեզի որ ալ բնաւ ասկէ պիտի
չուտեմ՝ մինչեւ որ Աստուծոյ թագաւորութեանը
17 մէջ կատարուի ։ Ու գաւաթը առաւ՝ գոհացաւ
ու ըսաւ , Առէ՛ք ասիկայ ու բաժնեցէ՛ք ձեր մէջը ․
18 կ Ինչու որ ձեզի կ՚ըսեմ , որ բնաւ որթին բերքէն
պիտի չխմեմ՝ մինչեւ որ Աստուծոյ թագաւորու-
թիւնը գայ ։

ի Զաք․ ժա․ 12 ։
լ Մատ․ իզ․ 17 ։ Մար․ ժդ․ 12 ։
խ Մատ․ իզ․ 20 ։ Մար․ ժդ․ 17 ։
ծ Ղկ․ ժդ․ 15 ։ Գործ․ ժ․ 41 ։ Յայտ․ ժթ․ 9 ։
կ Մատ․ իզ․ 29 ։ Մար․ ժդ․ 25 ։

19 ե Եւ հաց առաւ՝ գոհացաւ, կտրեց եւ տուաւ
անոնց ու ըսաւ, Աս է իմ մարմինս, որ ձեզի
համար տրուած է. զ ասիկա ըրէք զիս յիշելու
20 համար։ Նոյնպէս ալ գաւաթը տուաւ ընթրի-
քէն ետեւ ու ըսաւ, է Աս գաւաթը նոր ուխտ է
իմ արիւնովս, որ ձեզի համար կը թափուի։
21 ը Բայց ահա զիս մատնողին ձեռքը ինծի հետ
22 սեղանին է։ թ Եւ յիրաւի Որդին մարդոյ կ'եր-
թայ՝ ժ ինչպէս որ սահմանուած է, բայց վա՜յ այն
մարդուն՝ որուն ձեռքովը անիկա կը մատնուի։
23 ի Եւ անոնք սկսան մէջերնին հարցուփորձ ընել,
թէ իրենցմէ ո՛վ է որ այս բանը պիտի ընէ։
24 լ Վէճ մըն ալ եղաւ անոնց մէջը թէ իրենցմէ
25 ո՛վ մեծ պիտի սեպուի։ խ Եւ անիկա ըսաւ ա-
նոնց, Ազգաց թագաւորները անոնց կը տիրեն, եւ
անոնք որ կ'իշխեն անոնց՝ բարերար կը կոչուին.
26 ծ Բայց դուք անանկ պիտի չըլլաք, կ հապա ան որ
ձեր մէջը մեծ է՝ պզտիկին պէս թող ըլլայ, եւ ա-
27 ռաջնորդը սպասաւորին պէս։ հ Քանզի ո՛վ է
մեծը, սեղան նստո՞ղը թէ սպասաւորը. չէ՞ որ
սեղան նստողը. ձ սակայն ես ձեր մէջը սպասաւորի
28 մը պէս եմ։ Եւ դուք անոնք էք՝ որ միշտ ինծի
հետ կը կենայիք ղ իմ փորձութիւններուս մէջ.
29 ճ Ես ալ ձեզի Թագաւորութիւն մը ուխտ կ'ընեմ,
ինչպէս որ իմ Հայրս ինծի թագաւորութիւն մը
30 ուխտ ըրաւ. մ Որ դուք իմ սեղանէս ուտէք ու

ե Մատ. իզ. 26։ Մար. ժդ. 22։
զ ա Կոր. ժա. 24։
է ա Կոր. ժ. 16։
ը Սաղ. խա. 9։ Մատ. իզ. 21, 23։ Մար. ժդ. 18։ Յովհ. ժգ. 21, 26։
թ Մատ. իզ. 24։
ժ Գործ. բ. 23։ դ. 28։
ի Մատ. իզ. 22։ Յովհ. ժգ. 22, 25։
լ Մար. թ. 33։ Ղկ. թ. 46։
խ Մատ. ի. 25։ Մար. ժ. 42։
ծ Մատ. ի. 26։ ա Պետ. ե. 3։
կ Ղկ. թ. 48։
հ Ղկ. ժբ. 37։
ձ Մատ. ի. 28։ Յովհ. ժգ. 13, 14։ Փիլ. բ. 7։
ղ Եբր. դ. 15։
ճ Մատ. իդ. 47։ Ղկ. ժբ. 32։ բ Կոր. ա. 7։ բ Տիմ. բ. 12։
մ Մատ. ը. 11։ Ղկ. ժդ. 15։ Յայտ. ժթ. 9։

խմէք իմ թագաւորութեանս մէջ, յ եւ աթոռնե-
րու վրայ նստիք՝ Իսրայէլի տասներկու ցեղերը
դատելու։
31 Եւ Տէրը ըսաւ, Սիմո՛ն Սիմո՛ն՝ ահա ն Սատա-
նան ձեզ փնտռեց, որ ցորենի պէս խարբալէ.
32 շ Բայց ես քեզի համար աղօթք ըրի որ քու հա-
ւատքդ չպակսի. ո եւ դուն երբոր դարձի գաս, քու
33 եղբայրներդ ալ հաստատէ։ Իսկ ինքը ըսաւ ա-
նոր, Տէ՛ր՝ ես պատրաստ եմ քեզի հետ բանտը
34 երթալու ալ, մեռնելու ալ։ չ Եւ անիկա ըսաւ,
Պետրո՛ս՝ քեզի կ'ըսեմ որ այսօր հաւը պիտի
չխօսի՝ մինչեւ որ դուն երեք անգամ ուրանաս, ըսե-
լով թէ զիս չես ճանչնար։
35 պ Եւ ըսաւ անոնց, Երբոր ձեզ խրկեցի առանց
քսակի ու պարկի եւ կօշիկներու, բանի մը կարօտ
36 եղա՞ք։ Անոնք ալ ըսին, Բանի՛ մըն ալ չէ.
Եւ ըսաւ, Բայց հիմա ան որ քսակ ունի՝ թող
հետը առնէ, նոյնպէս ալ պարկը. եւ ան որ [illegible]
չունի, թող իր հանդերձը ծախէ, ու իրեն
37 թուր մը ծախու առնէ. ջ Քանզի կ'ըսեմ ձեզի որ
աս գրուած բանն ալ պէտք է որ իմ վրաս կատա-
րուի, ռ Եւ անօրէններու հետ սեպուեցաւ. քան-
զի ինչ որ ինծի համար գրուած է, կատարուե-
38 լու վրայ է։ Անոնք ալ ըսին, Տէ՛ր՝ ահա հոս եր-
կու թուր կայ. ան ալ ըսաւ անոնց, Հերիք են։
39 ս Ու ելաւ իր սովորութեանը պէս վ Ձիթենեաց
լեռը գնաց. աշակերտներն ալ իր ետեւէն գացին։

յ Սաղ. խթ. 14։ Մատ. ժթ. 28։ ա Կոր. զ. 2։ Յայտ. գ. 21։
ն ա Պետ. ե. 8։
շ Ամով. թ. 9։
ո Յովհ. ժէ. 9, 11, 15։
չ Սաղ. ծա. 13։ Յովհ. իա. 15, 16, 17։
պ Մար. իզ. 34։ Մար. ժդ. 30։ Յովհ. ժգ. 38։
ջ Մատ. ժ. 9։ Ղկ. թ. 3։ ժ. 4։
ռ Ես. ծգ. 12։ Մար. ժե. 28։
ս Մատ. իզ. 36։ Մար. ժդ. 32։ Յովհ. ժը. 1։
վ Ղկ. իա. 37։

40 ⁺Երբոր՝ այն տեղը հասաւ, ըսաւ անոնց, Աղօթք
41 ըրէք որ փորձութեան մէջ չմտնէք։ ⁺Եւ ինքը անոնցմէ զատուեցաւ քարընկեցի մը չափ, ու ծնկան
42 վրայ գալով աղօթք կ'ընէր, Ու կ'ըսէր, Հա՛յր՝ թէ որ կ'ուզես, աս գաւաթը ինծմէ անցո՛ւր. °բայց չէ թէ իմ կամքս՝ հապա քու կամքդ թող ըլ-
43 լայ։ Ու երկինքէն ⁺հրեշտակ մը երեւցաւ անոր և կը զօրացընէր զանիկայ. —ու սաստիկ նեղութեան մէջ ըլլալով՝ աւելի ջերմեռանդութեամբ
44 աղօթք կ'ընէր։ Եւ իր քրտինքը արիւնի մեծ կաթիլներու պէս էր, որ գետինը կը թափուէր։
45 Եւ աղօթքէն ելլելով աշակերտներուն քովը եկաւ, ու գտաւ անոնք տրտմութենէն քնացած.
46 Եւ ըսաւ անոնց, Ինչո՞ւ կը քնանաք. ⁺Ելէ՛ք աղօթք ըրէք որ փորձութեան մէջ չմտնէք։
47 Ու երբոր դեռ կը խօսէր, ⁺ահա մէկ բազմութիւն մը, և Յուդա ըսուածն ալ՝ տասներկուքէն մէկը անոնց առջեւէն կ'երթար, ու Յիսուսին
48 մօտեցաւ որ զանիկայ համբուրէ։ Բայց Յիսուս ըսաւ անոր, Յուդա՛ համբուրելո՞վ կը մատնես
49 Որդին մարդոյ։ Երբոր անոր բոլորտիքը եղողները տեսան ինչ որ պիտի ըլլար, ըսին անոր, Տէ՛ր
50 թուրով զարնե՞նք։ ⁺Եւ անոնցմէ մէկը քահանայապետին ծառային զարկաւ ու մէկդի հանեց
51 անոր աջ ականջը։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Թո՛ղ տուէք մինչև աս տեղը. և
52 դպաւ անոր ականջին ու բժշկեց զանիկայ։ ⁺Եւ Յիսուս իր վրայ եկող քահանայապետներուն ու տաճարին իշխաններուն ու ծերերուն ըսաւ, Իբր

⁺ Մատ. զ. 13։ իզ. 41։ Մար. ժդ. 38։ Հմր 46։
⁺ Մատ. իզ. 39։ Մար. ժդ. 35։
° Յոհ. ե. 30։ զ. 38։
⁺ Մատ. դ. 11։
— Յոհ. ժբ. 27։ Եբր. ե. 7։
⁺ Հմր 40։
⁺ Մատ. իզ. 47։ Մար. ժդ. 43։ Յոհ. ժը. 3։
⁺ Մատ. իզ. 51։ Մար. ժդ. 47։ Յոհ. ժը. 10։
⁺ Մատ. իզ. 55։ Մար. ժդ. 48։

թէ աւազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով։
53 Ամէն օր ձեզի հետ էի տաճարին մէջ, և ինծի ձեռք չզարկիք. ղբայց աս է ձեր ժամանակը ու խաւարին իշխանութիւնը։
54 ⁺Եւ զանիկայ բռնելով տարին ու քահանայապետին տունը մտցուցին. ⁺Պետրոս ալ հեռուանց
55 անոր ետեւէն կ'երթար։ ⁺Երբոր կրակ վառեցին գաւիթին մէջ ու մէկտեղ նստան, Պետրոս ալ
56 նստաւ անոնց մէջը։ Մէկ աղախին մը տեսնելով զանիկայ որ կրակին քովը նստեր էր, նայեցաւ անոր ու ըսաւ, Ասիկայ ալ անոր հետն էր։
57 Բայց Պետրոս ուրացաւ զանիկայ ու ըսաւ, Կնի՛կ
58 ես անիկայ չեմ ճանչնար. ⁺Եւ քիչ մը ետքը մէկ ուրիշ մը տեսաւ զանիկայ ու ըսաւ, Դուն ալ անոնցմէ ես. և Պետրոս ըսաւ, Մա՛րդ ես անոնց-
59 մէ չեմ։ ⁺Եւ ժամու մը չափ անցնելէն ետև, ուրիշ մըն ալ կը պնդէր ու կ'ըսէր, Յիրաւի ասիկայ ալ անոր հետն էր; ինչու որ Գալիլեացի է։
60 Բայց Պետրոս ըսաւ, Մա՛րդ չեմ գիտեր ինչ կը զրուցես դուն. և քանի որ իր խօսքը բերանն էր,
61 իսկոյն հաւը խօսեցաւ։ Եւ Տէրը դարձաւ ու Պետրոսին նայեցաւ, և Պետրոս ալ միտքը բերաւ Տէրոջը խօսքը՝ որ իրեն ըսեր էր թէ, ⁺Դեռ հաւը
62 չխօսած՝ իրեք անգամ պիտի ուրանաս զիս։ Ու Պետրոս դուրս ելլելով դառնապէս լացաւ։
63 ⁺Եւ այն մարդիկը որ Յիսուսը կը պահէին,
64 ծաղր կ'ընէին զանիկայ, ու կը ծեծէին. Եւ անոր աչքերը ծածկելով անոր երեսին կը զարնէին, ու

ղ Յոհ. ժբ. 27։
⁺ Մատ. իզ. 57։
⁺ Մատ. իզ. 58։ Յոհ. ժը. 15։
⁺ Մատ. իզ. 69։ Մար. ժդ. 66։ Յոհ. ժը. 17, 18։
⁺ Մատ. իզ. 71։ Մար. ժդ. 69։ Յոհ. ժը. 25։
⁺ Մատ. իզ. 73։ Մար. ժդ. 70։ Յոհ. ժը. 26։
⁺ Մատ. իզ. 75։ Մար. ժդ. 72։
⁺ Մատ. իզ. 34, 75։ Յոհ. ժգ. 38։
⁺ Մատ. իզ. 67, 68։ Մար. ժդ. 65։

կը հարցնէին իրեն ըսելով, Մարգարէացի՛ր մեզ
65 է ան որ քեզի զարկաւ ։ Եւ ուրիշ շատ բաներ կը
զրուցէին իրեն հայհոյելով ։
66 կ Ու երբոր առտու եղաւ՝ հ ժողովուրդին ծերա-
կոյտը, քահանայապետները և դպիրները ժողվուե-
ցան, ու տարին զանիկայ իրենց ատեանը՝ և ձ ըսին,
67 Թէ որ Քրիստոսը դուն ես, ըսէ՛ մեզի ։ Ըսաւ
անոնց, Թէ որ ձեզի ըսեմ ալ, պիտի չհաւա-
68 տաք ։ Եւ թէ որ ձեզի բան մը հարցնեմ, ինծի
պատասխան պիտի չտաք, ո՛չ ալ զիս պիտի ար-
69 ձակէք ։ ղ Ասկէ ետեւ Որդին մարդոյ Աստուծոյ զօ-
70 րութեանը աջ կողմը պիտի նստի ։ Եւ ամէնքը
ըսին, Ուրեմն դուն Աստուծոյ Որդի՞ն ես ։ Ինքն
ալ ըսաւ անոնց, ճ Դուք կ'ըսէք թէ ես եմ ։
71 մ Եւ անոնք ըսին, Ալ ի՞նչ պէտք է մեզի վկա-
յութիւն, ինչու որ մենք մեզմէ ասոր բերնէն լսե-
ցինք ։

ԳԼ. ԻԳ.

1 Քրիստոս կ'ամբաստանուի Պիղատոսին առջեւը, և Հերովդէսին կը խրկուի ։ 8 Հերովդէս ծաղր կ'ընէ զանիկայ ։ 12 Հերովդէս և Պիղատոս բարեկամ կ'ըլլան իրարու հետ ։ 18 Պիղատոս կ'արձակէ Բարաբբան, և Յիսուսը ձեռք կու տայ որ խաչուի ։ 27 Քրիստոս իր վրայ լացող կիներուն կ'իմացընէ Երուսաղէմի կործանումը ։ 34 աղօթք կ'ընէ իր թշնամիներուն համար ։ 39 Երկու չարագործ անձինք իր հետը կը խաչուին ։ 46 Քրիստոսի մահը 50 և թաղումը ։

1 Եւ յ անոնց բոլոր բազմութիւնը ոտք ելլելով
2 տարին զանիկայ Պիղատոսին ։ Ու սկսան անոր
վրայով ամբաստանութիւն ընել և ըսել, Ասի-
կայ գտանք՝ ն որ մեր ազգը կը մոլորցնէր, շ ու

կ Մատ. իէ. 1 ։
հ Գոր. դ. 26 ։ Տե՛ս Գոր. իբ. 5 ։
ձ Մատ. իզ. 63 ։ Մար. ժդ. 61 ։
ղ Մատ. իզ. 64 ։ Մար. ժդ. 62 ։ Եբր. ա. 3 ։ ը. 1 ։
ճ Մատ. իզ. 64 ։ Մար. ժդ. 62 ։
մ Մատ. իզ. 65 ։ Մար. ժդ. 63 ։
յ Մատ. իէ. 2 ։ Մար. ժե. 1 ։ Յոհ. ժը. 28 ։
ն Գոր. ժէ. 7 ։
շ Տե՛ս Մատ. ժէ. 26 ։ իբ. 21 ։ Մար. ժբ. 17 ։

Կայսրին հարկ տալէն կ'արգիլէր, ո և իրեն համար
կ'ըսէր թէ ինքը Քրիստոս — թագաւոր է ։
3 չ Իսկ Պիղատոս հարցուց անոր ու ըսաւ, Հրէից
թագաւորը դո՞ւն ես ։ Անիկայ ալ պատասխան
4 տուաւ անոր ու ըսաւ, Դուն կ'ըսես ։ Ան ատենը
Պիղատոս քահանայապետներուն ու ժողովուրդնե-
րուն ըսաւ, պ Ես աս մարդուն վրայ մէկ յանցանք
5 մը չեմ գտներ ։ Բայց անոնք ոտք կը կոխէին ու
կ'ըսէին թէ Ժողովուրդը իրար կ'անցընէ, ու
բոլոր Հրէաստանի մէջ կը սորվեցնէ Գալիլեայէն
6 սկսած մինչեւ աս տեղս ։ Եւ Պիղատոս երբոր լսեց
Գալիլեայի համար՝ հարցուց թէ աս մարդը Գա-
7 լիլեացի՞ է ։ Ու երբոր իմացաւ ջ թէ Հերովդէսի
իշխանութեան տակէն էր, զանիկայ Հերովդէսին
խրկեց, քանզի ան ալ ան օրերը Երուսաղէմ էր ։
8 Եւ Հերովդէս երբոր Յիսուսը տեսաւ, շատ
ուրախացաւ, ռ վասն զի ինքը շատոնցմէ կը փափա-
քէր անիկայ տեսնելու ։ ս Ինչու որ անոր վրայով
շատ բաներ լսած էր, և կը յուսար որ անկէ եղած
9 նշան մը տեսնէ ։ Ու շատ խօսքերով հարցուփորձ
կ'ընէր անոր, բայց անիկայ բնաւ իրեն պատասխան
10 մը չտուաւ ։ Քահանայապետները ու դպիրներն
ալ կեցեր էին, և սաստիկ ամբաստանութիւն կ'ը-
11 նէին անոր վրայ ։ վ Իսկ Հերովդէս անարգեց
զանիկայ իր զօրականներուն հետ, ու ծաղր ընելէն
ետեւ փառաւոր հանդերձներ հագցուց անոր, և
12 նորէն Պիղատոսին խրկեց ։ տ Ու ան օրը Պիղատոս
և Հերովդէս իրարու հետ բարեկամ եղան ։ որով-
հետեւ առաջ իրենց մէջը թշնամութիւն կար ։
13 ր Եւ Պիղատոս քահանայապետները ու իշխան-
14 ները և ժողովուրդը մէկտեղ կանչեց, Ու ըսաւ

ո Յոհ. ժթ. 12 ։
չ Մատ. իէ. 11 ։ ա Տիմ. զ. 13 ։
պ ա Պետ. բ. 22 ։
ջ Գլ. գ. 1 ։
ռ Գլ. թ. 9 ։
ս Մատ. ժդ. 1 ։ Մար. զ. 14 ։
վ Ես. ծգ. 3 ։
տ Գոր. դ. 27 ։
ր Մատ. իէ. 23 ։ Մար. ժե. 14 ։ Յոհ. ժը. 38 ։ ժթ. 4 ։

անոնց , Այս մարդը առջևս բերիք՝ ժողովուրդը
մոլորեցնողի մը պէս ; և ահա ես ձեր առջևը քննու-
թիւն ընելով՝ ասոր համար ձեր ըրած ամբաս-
տանութիւններէն յանցանք մը չգտայ աս մարդուն
15 վրայ . Ո՛չ ալ Հերովդէս , վասն զի ձեզ անոր
ղրկեցի , և ահա ասիկայ մահու արժանի գործ մը
16 ըրած չէ . Ուրեմն պատիժ մը տամ ասոր ու
17 արձակեմ . (Իսկ տօնին ատենը պէտք էր որ մէկը
18 արձակէ անոնց .) Եւ բոլոր բազմութիւնը մէկ-
տեղ աղաղակեցին ըսելով , Վերցո՛ւր ասիկայ ու
19 Բարաբբան արձակէ մեզի . (Որ ասիկայ քաղաքին
մէջ եղած խռովութեան մը և մարդասպանութեան
20 համար բանտը դրուած էր :) Եւ Պիղատոս Յի-
սուսը արձակել ուզելով , նորէն խօսեցաւ անոնց :
21 Բայց անոնք կ'աղաղակէին ու կ'ըսէին , Խաչը
22 հանէ ասիկայ՝ խաչը հանէ : Եւ ինքը երրորդ ան-
գամ ըսաւ անոնց , Բայց ի՞նչ չար գործ ըրած է
ասիկայ . ես ասոր վրայ մահու արժանի յանցանք
մը չգտայ . ուրեմն պատիժ մը տամ ասոր ու ար-
23 ձակեմ : Իսկ անոնք մեծաձայն աղաղակներով ստէպ
կը կոխէին , ու կ'ուզէին որ անիկայ խաչուի . և
անոնց ու քահանայապետներուն ձայները զօրաւոր
24 եղան : Ու Պիղատոս վճռեց որ անոնց խնդիրքը
25 ՚ի գործ դրուի : Եւ անոնց ուզած մարդը՝ որ խռո-
վութեան և մարդասպանութեան համար բանտը
դրուած էր , արձակեց անոնց , և Յիսուսը իրենց
կամացը յանձնեց :
26 Ու երբոր զանիկայ կը տանէին , Սիմոն Կիւրե-
նացի ըսուած մէկը բռնեցին՝ որ արտէն կու գար ,
և խաչը անոր վրայ դրին որ Յիսուսին ետևէն բերէ :
27 Ու անոր ետևէն կ'երթար մեծ բազմութիւն

ե Հմր 1, 2 :
զ Հմր 4 :
է Մատ. իէ. 26 : Յօհ. ժթ. 1 :
ը Մատ. իէ. 15 : Մար. ժե. 6 : Յօհ. ժը. 39 :
թ Գոր. գ. 14 :
ժ Մատ. իէ. 26 : Մար. ժե. 15 : Յօհ. ժթ. 16 :
ժա Մատ. իէ. 32 : Մար. ժե. 21 : Տե՛ս Յօհ. ժթ. 17 :

ժողովուրդ , նաև կանանց՝ որոնք կ'ողբային ու կու-
28 լային անոր համար : Եւ Յիսուս դարձաւ անոնց
ու ըսաւ , Ո՛վ Երուսաղէմի աղջիկներ՝ իմ վրաս մի՛
լաք , հապա ձեր անձերուն վրայ ու ձեր զաւակներ-
29 ուն վրայ լացէք : Վասն զի ահա օրեր կու գան՝
որոնց մէջ պիտի ըսեն , Երանի ամուլներուն , և
ան որովայններուն որ չծնան , և ծիծերուն որ կաթ
30 չտուին : Այն ատենը պիտի սկսին ըսել լեռներ-
ուն , Մեր վրայ ինկէք , ու բլուրներուն , Մեզ
31 ծածկեցէք : Վասն զի թէ որ դալար փայտին
ասանկ կ'ընեն , հապա չորին ի՞նչ պիտի ըլլայ :
32 Ուրիշ երկու ալ՝ չարագործներ բերուեցան
33 անոր հետը սպաննուելու : Երբոր Գագաթ
ըսուած տեղը գացին , հոն խաչը հանեցին զանի-
կայ , և ան չարագործներն ալ մէկը աջ կողմէն ու
34 միւսը ձախ կողմէն խաչեցին : Եւ ըսաւ Յիսուս ,
Հա՛յր՝ թողութիւն տուր ասոնց , վասն զի որ
չեն գիտեր ի՛նչ կ'ընեն : Ու անոր հանդերձներ-
35 ը բաժնելու ատեններնին վիճակ ձգեցին : Եւ ժո-
ղովուրդը կայներ կը նայէր . Իշխաններն ալ
անոնց հետ կը նախատէին զանիկայ ու կ'ըսէին ,
Ուրիշները ազատեց , թող ինքզինքն ալ ազատէ՝
թէ որ ասիկայ է Քրիստոս՝ Աստուծոյ ընտրեալը :
36 Ծաղր կ'ընէին անիկայ զինուորներն ալ , առջևը
37 կու գային՝ քացախ կը մատուցանէին անոր , Ու
կ'ըսէին , Թէ որ դուն ես Հրէից թագաւորը ,
38 քու անձդ ազատէ : Եւ գիր մը գրուած էր

ժբ Մատ. իդ. 19 : Ղկ. իա. 23 :
ժգ Ես. բ. 19 : Ովս. ժ. 8 : Յայտ. զ. 16 : թ. 6 :
ժդ Առակ. ժա. 31 : Երեմ. իե. 29 : Եզեկ. ի. 47 : իա. 3, 4 : ա Պետ. դ. 17 :
ժե Ես. ծգ. 12 : Մատ. իէ. 38 :
ժզ Մատ. իէ. 33 : Մար. ժե. 22 : Յօհ. ժթ. 17, 18 :
ժէ Մատ. ե. 44 : Գործ. է. 59 : ա Կոր. դ. 12 :
ժը Գործ. գ. 17 :
ժթ Մատ. իէ. 35 : Մար. ժե. 24 : Յօհ. ժթ. 23 :
ի Սաղ. իբ. 17 : Զաք. ժբ. 10 :
իա Մատ. իէ. 39 : Մար. ժե. 29 :
իբ Մատ. իէ. 37 : Մար. ժե. 26 : Յօհ. ժթ. 19 :

անոր վրայ Յունարէն ու Լատիներէն և Եբրայե-
ցերէն գիրերով թէ Ասիկայ է Հրէից Թագաւորը :
39 ⊤Եւ այն կախուած չարագործներուն մէկը հայ-
հոյութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Թէ որ դուն
Քրիստոսն ես, ազատէ՛ քու անձդ ու մեզ ալ :
40 Իսկ միւսը պատասխան տուաւ և զանիկայ յան-
դիմանելով ըսաւ, Դուն Աստուծմէ չե՞ս վախնար,
41 որովհետև նոյն դատապարտութեան մէջն ես : Ու
մենք իրաւունքով, քանզի ըստ մեր ըրածներուն
արժանաւոր հատուցումը կ'առնենք. բայց ասիկայ
42 մէկ գէշ բան մը չըրաւ : Եւ ըսաւ Յիսուսին,
Տէ՛ր, յիշէ՛ զիս, երբոր քու թագաւորութիւնովդ
43 գաս : Յիսուս ալ ըսաւ անոր, Ճշմարիտ կ'ը-
սեմ քեզի, Դուն այսօր իմ հետս դրախտին մէջը
պիտի ըլլաս :
44 ɾԵւ ժամը վեցին ատենները էր, ու բոլոր երկ-
րին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը. և
45 արեւը խաւարեցաւ, ʒՈւ տաճարին վարագոյրը
46 մէջտեղէն պատռեցաւ. Եւ Յիսուս մեծ ձայնով
աղաղակեց ու ըսաւ, −Հա՛յր, քու ձեռքդ կ'ա-
ւանդեմ իմ հոգիս. ÷ու երբոր աս ըսաւ, հոգի
տուաւ :
47 +Եւ հարիւրապետը եղած բանը տեսնելով՝ Աս-
տուծոյ փառք տուաւ ու ըսաւ, Իրաւցընէ աս
48 մարդը արդար էր : Եւ աս տեսարանը դիտելու
համար ժողվուած բոլոր բազմութիւնները եղած
բաները տեսնելով՝ կուրծքերնին կը զարնէին ու
49 ետ կը դառնային : °Ամէն իր ճանչուորներն ալ
հեռուն կայներ էին, նոյնպէս ալ այն կիները՝ որ
իր ետևէն եկեր էին Գալիլեայէն, ու կը տես-
նէին աս բաները :

⊤ Մատ. իէ. 44 : Մար. ժե. 32 :
ɾ Մատ. իէ. 45 : Մար. ժե. 33 :
ʒ Մատ. իէ. 51 : Մար. ժե. 38 :
− Սաղ. լա. 5 : ա Պետ. բ. 23 :
÷ Մատ. իէ. 50 : Մար. ժե. 37 : Յով. ժթ. 30 :
+ Մատ. իէ. 54 : Մար. ժե. 39 :
° Սաղ. լը. 11 : Մատ. իէ. 55 : Մար. ժե. 40 : Տես Յով. ժթ. 25 :

50 ‡Եւ ահա մէկ մարդ մը Յովսէփ անունով, որ
խորհրդական էր՝ բարի ու արդար մարդ մը,
51 (Ասիկայ անոնց խորհուրդին ու գործքին հաւա-
նութիւն տուած չէր,) Հրէաներուն Արիմաթիա
քաղաքէն, −որ ինքն ալ Աստուծոյ թագաւորու-
52 թեանը կը սպասէր. Ասիկայ Պիղատոսին գնաց,
53 ու Յիսուսին մարմինը խնդրեց : ғԵւ զանիկայ
խաչէն իջեցընելով՝ կտաւով փաթթեց, ու քարէ
փորուած գերեզմանի մը մէջ դրաւ, որ հոն բնաւ
54 մէկը դրուած չէր : Եւ այն օրը ÷ուրբաթ էր, ու
շաբաթը պիտի *սկսէր :
55 Եւ անոր ետևէն գացին այն կիները, ⊤որ
իրեն հետ Գալիլեայէն եկած էին, ⊦ու տեսան
գերեզմանը՝ և թէ ինչպէս անոր մարմինը հոն
56 դրուեցաւ : Եւ դառնալով՝ ɭխունկեր ու եղեր
պատրաստեցին, և շաբաթ օրը հանգստացան
ŀպատուիրանքին համեմատ :

ԳԼ. ԻԴ

1 Երկու հրեշտակներ Քրիստոսի յարութիւնը կ'աւետեն գե-
րեզմանը եկող կանանց : 9 Անոնք ալ աս լուրը ուրիշնե-
րուն կը պատմեն : 13 Քրիստոս կ'երևնայ Էմմաուս գացող
երկու աշակերտներուն . 36 ետքը առաքեալներուն, և անոնց
անհաւատութիւնը կը յանդիմանէ . 47 պատուէր մը կու
տայ անոնց . 49 Հոգւոյն Սրբոյ գալստեանը խոստմունքը
կ'ընէ, 51 և կը համբառնայ երկինքը :

1 −Ու մէկշաբթի օրը առտուանց շատ կանուխ գե-
րեզմանը եկան, ғու բերին այն խունկերը որ
պատրաստեր էին, և ուրիշ կիներ ալ անոնց
2 հետ : ÷Ու քարը գերեզմանէն մէկդի գլոր-

‡ Մատ. իէ. 57 : Մար. ժե. 42 : Յով. ժթ. 28 :
− Մար. ժե. 43 : Գլ. բ. 25, 38 :
ғ Մատ. իէ. 59 : Մար. ժե. 46 :
÷ Մատ. իէ. 62 :
* Յուն. լուսնար :
⊤ Գլ. ը. 2 :
⊦ Մար. ժե. 47 :
ɭ Մար. ժզ. 1 :
ŀ Ել. ի. 10 :
− Մատ. իը. 1 : Մար. ժզ. 1 : Յով. ի. 1 :
ғ Գլ. իգ. 56 :
÷ Մատ. իը. 2 : Մար. ժզ. 4 :

3 ցուած գտան ։ դ Եւ ներս մտնելով՝ Տէր Յի-
4 սուսին մարմինը չգտան ։ Ու եղաւ որ երբ
անոնք աս բանիս համար տարակուսանաց մէջ էին ,
ե ահա երկու մարդիկ լուսափայլ հանդերձներով
5 հասան անոնց ։ Ու երբոր վախով լեցուած՝
երեսնին դէպ 'ի գետինը ծռեցին , ան մարդիկը
ըսին անոնց , Ինչո՞ւ համար ողջը մեռելներուն հետ
6 կը փնտռէք ։ Հոս չէ՛ ան , հապա յարութիւն
առաւ ։ զ Միտքերնիդ բերէք ինչ որ խօսեցաւ ձե-
7 զի՝ երբոր դեռ Գալիլեայի մէջ էր , Ըսելով թէ
Որդին մարդոյ պէտք է որ մեղաւոր մարդոց ձեռ-
քը մատնուի ու խաչը ելլէ ու երրորդ օրը յա-
8 րութիւն առնէ ։ է Եւ միտքերնին բերին անոր
9 խօսքերը ։ ը Ու գերեզմանէն դառնալով աս ա-
մէն բաները պատմեցին տասնումէկին ու բոլոր
10 ուրիշներուն ։ Եւ էին Մարիամ Մագդաղենա-
ցին թ ու Յովհաննա և Յակոբոսին մայրը
Մարիամ , ու անոնց հետ ուրիշներ ալ , որ աս
11 բաները առաքեալներուն պատմեցին ։ ժ Եւ անոնց
առջեւը ցնորական խօսքեր երեւցաւ անոնց զրու-
12 ցածը , ու չէին հաւատար անոնց ։ ի Բայց Պետ-
րոս ելաւ վազեց դէպ 'ի գերեզմանը , ու ծռելով
նայեցաւ և տեսաւ որ միայն կտաւները կը կենա-
յին . ու գնաց՝ իր մտքին մէջ զարմանալով ան
եղածին վրայ ։

13 լ Եւ ահա անոնցմէ երկուքը նոյն օրը մէկ գեղ
մը կ'երթային , որ Երուսաղէմէն վաթսուն ասպա-
րէզ հեռու էր , և անոր անունը Էմմաուս էր ։
14 Եւ անոնք կը խօսէին իրարու հետ աս բոլոր եղած
15 անցքերուն վրայով ։ Ու եղաւ որ երբ անոնք

դ Հմր 23 ։ Մար . ժզ . 5 ։
ե Յօհ . ի . 12 ։ Գոր . ա . 10 ։
զ Մար . ժզ . 21 ։ ժէ . 23 ։ Մար . ը . 36 ։ Թ . 30 ։ Ղւ . Թ . 22 ։
է Յօհ . բ . 22 ։
ը Մատ . իը . 8 ։ Մար . ժզ . 10 ։
թ Ղւ . ը . 3 ։
ժ Մար . ժզ . 11 ։ Հմր 25 ։
ի Յօհ . ի . 3 , 6 ։
լ Մար . ժզ . 12 ։

կը խօսակցէին ու խորհրդածութիւն՝ կ'ընէին ,
խ Յիսուս ինքն ալ մօտենալով՝ հետերնին կ'եր-
16 թար ։ ծ Բայց անոնց աչքերը բռնուած էին , որ
17 զինքը չճանչնան ։ Եւ ըսաւ անոնց , Ի՞նչ է աս
խօսքերը , որ քալելով իրարու հետ կը խօսակ-
18 ցիք , ու տրտում ալ էք ։ Պատասխան տուաւ
անոնցմէ մէկը՝ կ որուն անունը Կղէովպաս էր , ու
ըսաւ անոր , Դո՞ւն միայն Երուսաղէմի մէջ կը
կենաս , ու չես գիտեր թէ ինչե՛ր եղաւ հոն աս օրե-
19 րս ։ Եւ ինքը ըսաւ անոնց , Ի՞նչ ։ անոնք ալ
ըսին իրեն , Նազովրեցի Յիսուսին համար , հ ան որ
Աստուծոյ և բոլոր ժողովուրդին առջեւը ձ գործքով
20 ու խօսքով զօրաւոր մարգարէ մը եղաւ ։ ղ Ի՛նչպէս
քահանայապետները ու մեր իշխանները մահուան
դատաստանի մատնեցին անիկա և խաչը հանե-
21 ցին ։ Իսկ մենք կը յուսայինք ճ թէ անիկա էր որ
Իսրայէլը պիտի ազատէր ։ և աս ամենուն վրայ աս
22 երրորդ օրն է որ աս բաները եղաւ ։ մ Նաեւ մեր
մէջէն մէկ քանի կիներ ալ մեզ զարմացուցին ,
23 որոնք առաւօտուն կանուխ գերեզմանը գացին , Ու
անոր մարմինը չգտնելով՝ եկան ու ըսին թէ
հրեշտակներու տեսիլք ալ տեսան , որոնք ըսեր են
24 թէ անիկա ողջ է ։ յ Եւ մերիններէն մէկ քանի-
ներն ալ գերեզմանը գացին ու անանկ գտան ,
ինչպէս որ ան կիները զրուցեցին , միայն թէ
25 զինքը չտեսան ։ Ան ալ ըսաւ անոնց , Ո՛վ ան-
միտներ ու թուլասիրտներ հաւատալու ան բոլոր
26 բաներուն՝ որ մարգարէները խօսեցան ։ ն Չէ՞ որ

խ Մատ . ժը . 20 ։ Հմր 36 ։
ծ Յօհ . ի . 14 ։ իա . 4 ։
կ Յօհ . ժԹ . 25 ։
հ Մատ . իա . 11 ։ Ղւ . է . 16 ։ Յօհ . գ . 2 ։ դ . 19 ։ Զ . 14 ։ Գոր . բ . 22 ։
ձ Գոր . է . 22 ։
ղ Ղւ . իգ . 1 ։ Գոր . ժգ . 27 , 28 ։
ճ Ղւ . ա . 68 ։ բ . 38 ։ Գոր . ա . 6 ։
մ Մատ . իը . 8 ։ Մար . ժզ . 10 ։ Հմր 9 , 10 ։ Յօհ . ի . 18 ։
յ Հմր 12 ։
ն Հմր 46 ։ Գոր . ժէ . 3 ։ Ա Պետ . ա . 11 ։

Քրիստոսի պէտք էր աս չարչարանքները կրել, և
27 իր փառքը մտնել։ [ն]Եւ սկսելով [ո]Մովսէսէն
և [չ]բոլոր մարգարէներէն կը մեկնէր անոնց,
ինչ որ իրեն համար բոլոր գիրքերուն մէջ գրուած
28 էր։ Երբոր մօտեցան այն գիւղին՝ ուր որ կ'եր-
թային, [պ]ինքն ալ կը ցուցնէր որպէս թէ աւելի
29 հեռու տեղ մը պիտի երթար։ [ջ]Բայց ստիպե-
ցին զինքը ու ըսին, Մեր քովը կեցիր, ինչու որ
իրիկունը մօտ է և օրը իջած է. և մտաւ անոնց
30 հետ կենալու։ Եւ եղաւ որ երբ ինքը անոնց հետ
սեղան նստաւ, [ռ]հացը առաւ՝ օրհնեց, ու կտրե-
31 լով տուաւ անոնց։ Ան ատենը անոնց աչքերը
բացուեցան, ու զինքը ճանչցան, և ինքը անոնցմէ
32 աներևոյթ եղաւ։ Եւ իրարու կ'ըսէին, Չէ՞ որ
սիրտերնիս մեր ներսի դին կը բորբոքէր, երբոր
ինքը մեր հետը կը խօսէր ճամբուն մէջ, և գիր-
քերը կը մեկնէր մեզի։
33 Եւ ելան նոյն ժամուն Երուսաղէմ դարձան, ու
մէկտեղ ժողվուած գտան տասնումէկը ու անոնց
34 հետ եղողները, Որոնք կ'ըսէին թէ Իրաւցնէ
Տէրը յարութիւն առաւ, [ս]ու Սիմոնին երևցաւ։
35 Եւ իրենք պատմեցին ինչ որ ճամբուն վրայ եղաւ,
և թէ ինչպէս ինքզինքը իրենց ճանչցուց հացը
կտրած ատենը։
36 [վ]Եւ քանի որ աս բաները կը խօսէին, Յիսուս
ինքը կայնեցաւ անոնց մէջտեղը ու ըսաւ անոնց,
37 Խաղաղութիւն ձեզի։ Բայց անոնք զարհուրելով

ն Հմր 45։
ո Ծն. գ. 15։ իբ. 18։ իզ. 4։ խթ. 10։ Թուոց. իա. 9։ Բ Օր. ժը. 15։
չ Սաղ. ժզ. 9, 10։ իբ։ ճլբ. 11։ Ես. է. 14։ թ. 6։ խ. 10, 11։ ծ. 6։ ծգ։ Երեմ. իգ. 5։ լգ. 14, 15։ Եզեկ. լդ. 23։ լէ. 25։ Դան. թ. 24։ Միք. է. 20։ Մաղ. գ. 1։ դ. 2։ Տես Յոհ. ա. 45։
պ Տես Ծն. լբ. 26։ խբ. 7։ Մար. զ. 48։
ջ Ծն. ժթ. 3։ Գոր. ժզ. 15։
ռ Մատ. ժդ. 19։
ս ա Կոր. ժե. 5։
վ Մար. ժզ. 14։ Յոհ. ի. 19։ ա Կոր. ժե. 5։

կը վախնային, ու կը կարծէին թէ [տ]ոգի մը կը
38 տեսնեն։ Եւ ըսաւ անոնց, Ինչո՞ւ խռոված էք,
և ինչո՞ւ սիրտերնուդ մէջը խորհուրդներ կ'ելլեն։
39 Տեսէ՛ք ձեռքերս ու ոտքերս, որ ես ինքս եմ. [ր]շօ-
շափեցէ՛ք զիս ու տեսէ՛ք, վասն զի ոգին մարմին և
ոսկորներ չունենար, ինչպէս որ զիս կը տեսնէք որ
40 ունիմ։ Եւ աս ըսելով ձեռքերը ու ոտքերը
41 ցուցուց անոնց։ Եւ երբոր տակաւին [ց]իրենց
ուրախութենէն չէին հաւատար՝ և զարմանքի
մէջ էին, ըսաւ անոնց, [ւ]Ուտելիք մը ունի՞ք
42 հոս։ Անոնք ալ կտոր մը խորոված ձուկ ու
43 մեղրախորիսխ տուին իրեն։ [փ]Եւ առաւ կերաւ
44 անոնց առջևը։ Եւ ըսաւ անոնց, [ք]Ասոնք
են այն խօսքերը որ ձեզի խօսեցայ՝ երբոր դեռ
ձեր հետն էի թէ Պէտք է որ կատարուի ան
ամէնը՝ որ Մովսէսի օրէնքին մէջ ու մարգարէնե-
րուն մէջ և սաղմոսներուն մէջ ինծի համար
45 գրուած են։ [օ]Ան ատենը անոնց միտքը բացաւ
46 որ գիրքերը հասկընան. Եւ ըսաւ անոնց թէ
Անանկ գրուած է, և [ֆ]անանկ պէտք էր Քրիստո-
սին չարչարուիլ, ու երրորդ օրը մեռելներէն յա-
47 րութիւն առնել. Եւ անոր անունովը [ա]ապաշ-
խարութիւն ու մեղաց թողութիւն՝ քարոզուիլ
48 [բ]բոլոր ազգերու մէջ՝ Երուսաղէմէն սկսած։ [գ]Եւ
49 դուք էք աս բաներուս վկաները։ [դ]Եւ ահա ես

տ Մար. զ. 49։
ր Յոհ. ի. 20, 27։
ց Ծն. խե. 26։
ւ Յոհ. իա. 5։
փ Գոր. ժ. 41։
ք Մատ. ժզ. 21։ ժէ. 21։ ի. 18։ Մար. ը. 31։ Ղու. թ. 22։ ժը. 31։ Հմր 6։
օ Գոր. ժզ. 14։
ֆ Հմր 26։ Սաղ. իբ։ Ես. ծ. 6։ ծգ. 2, ԺԵ։ Գոր. ժէ. 3։
ա Դան. թ. 24։ Գոր. ժգ. 38, 46։ ա Յոհ. բ. 12։
բ Ծն. ժբ. 3։ Սաղ. իբ. 27։ Ես. խթ. 6, 22։ Երեմ. լա. 34։ Ովս. բ. 23։ Միք. դ. 2։ Մաղ. ա. 11։
գ Յոհ. ժե. 27։ Գոր. ա. 8, 22։ բ. 32։ գ. 15։
դ Ես. խդ. 3։ Յովել. բ. 28։ Յոհ. ժդ. 16, 26։ ժե. 26։ ժզ. 7։ Գոր. ա. 4։ բ. 1, ԺԵ։

իմ Հօրս խոստմունքը ձեր վրայ կը ղրկեմ. բայց
դուք Երուսաղէմ քաղաքին մէջը նստեցէք, մինչև
որ վերէն զօրութիւն առնէք վրանիդ :
50 ե Ետքը զանոնք մինչև Բեթանիա հանեց, ու իր ձեռ-
51 քերը վեր վերցնելով օրհնեց անոնք : զ Եւ եղաւ
որ երբ անոնք կ'օրհնէր, զատուեցաւ անոնցմէ ու
52 վեր կ'ելլէր երկինքը : է Անոնք ալ երկրպագու-
թիւն ընելով անոր, մեծ ուրախութեամբ Երու-
53 սաղէմ դարձան : ը Եւ ամէն ատեն տաճարին մէջն
էին, ու կը գովաբանէին և կ'օրհնէին զԱստուած :

ե Գոր. ա. 12 :
զ Դ Թագ. բ. 11 : Մար. ժզ. 19 : Յոհ. ի. 17 : Գոր. ա. 9 : Եփե. դ. 8 :
է Մատ. իը. 9, 17 :
ը Գոր. բ. 46 : ե. 42 :

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Յիսուս Քրիստոսի Աստուածութիւնը, մարդկութիւնը և պաշտօնը : 15 Յովհաննէսին վկայութիւնը Քրիստոսի համար : 39 Քրիստոս իրեն կը կանչէ Անդրէասը, Պետրոսը, ևն :

1 ա Սկիզբէն էր Բանը, ու Բանը բ Աստուծոյ քովն
2 էր, գ և Բանը Աստուած էր : դ Անիկայ
3 սկիզբէն Աստուծոյ քովն էր : ե Ամէն բան անով ե-
ղաւ, և առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ :

ա Առակ. ը. 22, 23, ևն : Կող. ա. 17 : ա Յոհ. ա. 1 : Յայտ. ա. 2 : ժթ. 13 :
բ Առակ. ը. 30 : Գլ. ժէ. 5 : ա Յոհ. ա. 2 :
գ Փիլ. բ. 6 : ա Յոհ. ե. 7 :
դ Ծն. ա. 1 :
ե Սաղ. լգ. 6 : Հմր 10 : Եփե. գ. 9 : Կող. ա. 16 : Եբր. ա. 2 : Յայտ. դ. 11 :

4 զ Կեանքը անով էր, է ու կեանքը մարդոց լոյսն էր.
5 ը Եւ լոյսը խաւարին մէջ կը լուսաւորէր. ու խա-
ւարը զանիկայ չհասկցաւ :
6 ը Աստուծմէ ղրկուած մարդ մը կար, որուն ա-
7 նունը Յովհաննէս էր : թ Անիկայ վկայութեան ե-
կաւ՝ որ Լոյսին համար վկայէ, որ ամէնքը անոր
8 միջոցովը հաւատան : Ինքը չէր ան Լոյսը, հապա
եկաւ որ Լոյսին համար վկայութիւն տայ :
9 ի Ճշմարիտ Լոյսը ան էր, որ աշխարհ *եկող
10 բոլոր մարդիկը կը լուսաւորէ : Ինքը աշխարհի մէջ
էր, և աշխարհս անով եղաւ, ու աշխարհս զանիկայ
11 չճանչցաւ : Իր իւրայիններուն եկաւ, և իւրայինները զին-
12 քը չընդունեցին : ծ Բայց որոնք որ զինքը ընդու-
նեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ
որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուա-
13 նը. կ Որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմինի կամքէ
ոչ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան :
14 հ Եւ Բանը ձ մարմին եղաւ ու մեր մէջը բնակե-
ցաւ, (ղ և անոր փառքը տեսանք, Հօրմէն
միածինի փառքին պէս,) ճ շնորհքով ու ճշմար-
տութիւնով լեցուն :
15 մ Յովհաննէս վկայեց անոր համար և աղաղա-
կեց ըսելով, Անիկայ է՝ որուն համար կը զրուցէի,

զ Գլ. ե. 26 : ա Յոհ. ե. 11 :
է Գլ. ը. 12 : թ. 5 : ժբ. 35, 46 :
ը Գլ. գ. 19 :
թ Մաղ. գ. 1 : Մատ. գ. 1 : Ղու. գ. 2 : Հմր 33 :
ժ Գոր. ժթ. 4 :
ի Հմր 4 : Եսա. խթ. 6 : ա Յոհ. բ. 8 :
* Կամ գալով՝
լ Հմր 3 : Եբր. ա. 2 : ժա. 3 :
խ Ղու. ժթ. 14 : Գոր. գ. 26 : ժգ. 46 :
ծ Եսա. ծզ. 5 : Հռով. ը. 15 : Գաղ. գ. 26 : բ Պետ. ա. 4 : ա Յոհ. գ. 1 :
կ Գլ. գ. 5 : Յակ. ա. 18 : ա Պետ. ա. 23 :
հ Մատ. ա. 16, 20 : Ղու. ա. 31, 35 : բ. 7 : ա Տիմ. գ. 16 :
ձ Հռով. ա. 3 : Գաղ. դ. 4 : Եբր. բ. 11, 14, 16, 17 :
ղ Եսա. խ. 5 : Մատ. ժէ. 2 : Գլ. բ. 11 : ժա. 40 : բ Պետ. ա. 17 :
ճ Կող. ա. 19 : բ. 3, 9 :
մ Հմր 32 : Գլ. գ. 32 : ե. 33 :

շ Ան որ իմ ետեւէս կու գայ, ինծմէ առաջ եղաւ,
16 ո ինչու որ ինծմէ առաջ էր։ չ Եւ անոր լեցունու-
թենէն մենք ամէնքս շնորհք առինք շնորհքի տեղ։
17 Ինչու որ պ օրէնքը Մովսէսին ձեռքովը տրուեցաւ,
բայց ջ շնորհքը ռ ու ճշմարտութիւնը Յիսուս
18 Քրիստոսի ձեռքովը եղան։ ս Մէկը երբեք զԱս-
տուած տեսած չէ, վ բայց միածին Որդին որ
Հօրը ծոցն է, անիկայ պատմեց։
19 տ Ու Յովհաննէսին վկայութիւնը աս է, երբոր
Հրէաները Երուսաղէմէն քահանաներ ու Ղեւտացի-
ներ խրկեցին որ հարցնեն անոր թէ Դուն ո՞վ
20 ես։ ր Եւ անիկայ խոստովանեցաւ ու չուրացաւ.
21 խոստովանեցաւ թէ Ես Քրիստոսը չեմ։ Ու
հարցուցին անոր, Հապա ի՞նչ, ց Եղիա՞ն ես.
և ըսաւ, Չեմ. ւ Ա՛ն մարգարէ՞ն ես. պատասխան
22 տուաւ թէ Չէ։ Ան ատենը ըսին անոր, Դուն
ո՞վ ես. ըսէ՛ մեզի, որ պատասխան տանինք մեզ
խրկողներուն. դուն ի՞նչ կ'ըսես քեզի համար։
23 փ Ըսաւ, Ես անոր ձայնն եմ որ անապատին մէջ
կը կանչէ. Շտկեցէք Տէրոջը ճամբան, ք ինչպէս
24 որ Եսայի մարգարէն ըսաւ։ Եւ ան խրկուածները
25 փարիսեցիներէն էին. Ու հարցուցին իրեն ըսելով,
Հապա ինչո՞ւ մկրտութիւն կ'ընես, թէ որ դուն
Քրիստոսը չես, ու ո՛չ Եղիան, և ո՛չ մարգարէն։
26 Պատասխան տուաւ անոնց Յովհաննէս ու ըսաւ,

շ Մատ. գ. 11։ Մար. ա. 7։ Ղուկ. գ. 16։ Հմր 27, 30։ Գլ. գ. 31։
ո Գլ. ը. 58։ Կող. ա. 17։
չ Գլ. գ. 34։ Եփե. ա. 6, 7, 8։ Կող. ա. 19։ բ. 9, 10։
պ Ել. ի. 1, ևն։ Բ Օր. դ. 44։ ե. 1։ լգ. 4։
ջ Հռով. գ. 24։ ե. 21։ զ. 14։
ռ Գլ. ը. 32։ ժդ. 6։
ս Ել. լգ. 20։ Բ Օր. դ. 12։ Մատ. ժա. 27։ Ղուկ. ժ. 22։ Գլ. զ. 46։ Ա Տիմ. ա. 17։ զ. 16։ Ա Յօհ. դ. 12, 20։
վ Հմր 14։ Գլ. գ. 16, 18։ Ա Յօհ. դ. 9։
տ Գլ. ե. 33։
ր Ղուկ. գ. 15։ Գլ. գ. 28։ Գործ. ժգ. 25։
ց Մաղ. դ. 5։ Մատ. ժէ. 10։
ւ Բ Օր. ժը. 15, 18։
փ Մատ. գ. 3։ Մար. ա. 3։ Ղուկ. գ. 4։ Գլ. գ. 28։
ք Եսա. խ. 3։

÷ Ես ջրով կը մկրտեմ, + բայց ձեր մէջը մէկը կայ
27 որ դուք ան չէք ճանչնար. ։ Անիկայ է իմ ետեւէս
եկողը՝ որ ինծմէ առաջ եղաւ, որ ես արժանի չեմ
28 անոր կօշիկին կապը քակելու։ Ասոնք բաները
‡ Բեթաբարայի մէջ եղան Յորդանանու անդին
կողմը, ուր որ Յովհաննէս կը կենար ու կը մը-
կրտէր։
29 Հետեւեալ օրը Յովհաննէս տեսաւ Յիսուսը որ
իրեն կու գար, և ըսաւ, Ահա Աստուծոյ — Գառը՝
30 ‡ որ աշխարհի մեղքը կը վերցնէ։ ÷ Անիկայ է
որուն համար ես կը զրուցէի, Իմ ետեւէս մարդ մը
կու գայ՝ որ ինծմէ առաջ եղաւ, ինչու որ ինծմէ
31 առաջ էր։ Ու ես զանիկայ չէի ճանչնար,
բայց ⊤ անոր համար ես եկայ ջրով մկրտելու,
32 որ անիկայ Իսրայէլին յայտնուի։ ⊢ Եւ Յով-
հաննէս վկայութիւն տուաւ ըսելով, Թէ Կը
տեսնէի Հոգին՝ որ աղաւնիի պէս երկինքէն կ'իջ-
33 նէր, ու անոր վրայ կը հանգչէր։ Եւ ես զանիկայ
չէի ճանչնար, բայց ան որ զիս խրկեց ջրով մկրտե-
լու, ինքը ըսաւ ինծի. Որու վրայ տեսնես
Հոգին, որ կ'իջնէ ու կը հանգչի անոր վրայ,
34 ⊥ անիկայ է որ Սուրբ Հոգիով կը մկրտէ։ Ես
ալ տեսայ, ու վկայեցի թէ ասիկայ է Աստուծոյ
Որդին։
35 Հետեւեալ օրը դարձեալ Յովհաննէս կայներ
36 էր, և իր աշակերտներէն երկուքը։ Ու նայելով
Յիսուսին վրայ որ կը պտըտէր՝ ըսաւ, ⊢ Ահա

÷ Մատ. գ. 11։
+ Մաղ. գ. 1։
։ Հմր 15, 30։ Գործ. ժթ. 4։
‡ Դատ. ե. 24։ Գլ. ժ. 40։
— Ել. ժբ. 3։ Եսա. ծգ. 7։ Հմր 36։ Գործ. ը. 32։ Ա Պետ. ա. 19։ Յայտ. ե. 6, ևն։
‡ Եսա. ծգ. 11։ Ա Կոր. ժե. 3։ Գաղ. ա. 4։ Եբր. ա. 3։ բ. 17։ թ. 28։ Ա Պետ. բ. 24։ գ. 18։ Ա Յօհ. բ. 2։ գ. 5։ դ. 10։ Յայտ. ա. 5։
÷ Հմր 15, 27։
⊤ Մաղ. գ. 1։ Մատ. գ. 6։ Ղուկ. ա. 17, 76, 77։ գ. 3, 4։
⊢ Մատ. գ. 16։ Մար. ա. 10։ Ղուկ. գ. 22։ Գլ. ե. 32։
⊥ Մատ. գ. 11։ Գործ. ա. 5։ բ. 4։ ժ. 44։ ժթ. 6։
⊢ Հմր 29։

37 Աստուծոյ Գառը ։ Եւ լսեցին անկէ երկու աշա-
կերտները՝ երբոր կը խօսէր , ու գացին Յիսուսին
38 ետեւէն ։ Յիսուս երբոր դարձաւ ու տեսաւ անոնք
որ իր ետեւէն կու գային , ըսաւ անոնց , Ի՞նչ
կ'ուզէք ․ անոնք ալ ըսին իրեն , Ռաբբի , (որ
թարգմանուելով վարդապետ ըսել է ,) ո՞ւր է
39 քու օթեւանդ ։ Ըսաւ անոնց , Եկէք ու տեսէք ․
եկան ու տեսան ուր տեղ որ էր իր օթեւանը ․ և
ան օրը անոր քովը կեցան , ինչու որ ժամը տասնին
40 առտենները էր ։ Սիմոն Պետրոսին եղբայրը [է]Անդ-
րէաս ան երկուքէն մէկն էր , որ լսեցին Յովհաննէ-
41 սէն և անոր ետեւէն գացին ։ Ասիկայ նախ իր
Սիմոն եղբայրը կը գտնէ և կ'ըսէ անոր , Գտանք
42 Մեսիան , (որ Քրիստոս կը թարգմանուի ․) Ու
տարաւ զանիկայ Յիսուսին քովը ․ Յիսուս անոր
նայելով ըսաւ , Դուն ես Յովնանին որդին Սիմո-
նը , [ը]Դուն Կեփաս պիտի ըսուիս , որ * Պետրոս
կը թարգմանուի ։
43 Հետեւեալ օրը Յիսուս Գալիլեա ելլել ուզեց ,
և Փիլիպպոսը գտնելով՝ ըսաւ անոր , Եկուր իմ
44 ետեւէս ։ [ժ]Եւ Փիլիպպոս Բեթսայիդայէն էր՝
45 Անդրէասին ու Պետրոսին քաղաքէն ։ Փիլիպպոս
[ի]Կը գտնէ Նաթանայէլը և կ'ըսէ անոր , Ան՝ որուն
համար [լ]Մովսէս օրէնաց մէջ գրեց , [խ]և մարգարէ-
ներն ալ , զանիկայ գտանք , այսինքն Յիսուս [ծ]Նա-
46 զովրեցին , Յովսէփին որդին ։ Եւ Նաթանայէլ
ըսաւ անոր , [կ]Նազարեթէն կարելի՞ է որ աղէկ
բան մը ըլլայ ․ ըսաւ անոր Փիլիպպոս , Եկո՛ւր ու
47 տե՛ս ։ Յիսուս երբոր տեսաւ Նաթանայէլը որ

է Մատ. դ. 18։
ը Մատ. ժզ. 18։
* յն Վէմ։
ժ Գլ. ժբ. 21։
ի Գլ. իա. 2։
լ Ծն. գ. 15։ խթ. 10։ բ Օր. ժը. 18, [illegible]։ Տե՛ս Ղու. իդ. 27։
խ Ես. դ. 2։ է. 14։ թ. 6։ ծգ. 2, [illegible]։ Միք. ե. 2։ Զաք. զ. 12։ թ. 9։ Տե՛ս նաև Ղու. իդ. 27։
ծ Մատ. բ. 23։ Ղու. բ. 4։
կ Գլ. է. 41, 42, 52։

դէպ 'ի իրեն կու գար , ըսաւ անոր համար , [հ]Ահա
իրաւցընէ Իսրայէլացի մը , որուն ներսը նենգու-
48 թիւն չկայ ։ Նաթանայէլ ըսաւ անոր , Ուսկի՞ց
կը ճանչնաս զիս ․ պատասխան տուաւ Յիսուս ու
ըսաւ անոր , Դեռ Փիլիպպոս քեզ չկանչած ,
դուն որ թզենիին տակն էիր , ես քեզ տեսայ ։
49 Պատասխան տուաւ Նաթանայէլ ու ըսաւ անոր ,
Ռաբբի՛ [յ]դուն ես Աստուծոյ Որդին , [ղ]դուն ես
50 Իսրայէլի թագաւորը ։ Յիսուս պատասխան տը-
ուաւ և ըսաւ անոր , Անոր համար՝ որ քեզի ըսի թէ
քեզ թզենիին տակը տեսայ , կը հաւատա՞ս ․ ասկէ
51 աւելի մեծ բաներ պիտի տեսնես ։ Ու ըսաւ անոր ,
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , [ճ]ասկէ ետև պիտի
տեսնէք երկինքը բացուած , և Աստուծոյ հրեշտակ-
ները՝ որ կ'ելլեն ու կ'իջնեն Որդւոյ մարդոյ վրայ ։

ԳԼ․ Բ

1 Քրիստոս ջուրը գինիի կը փոխէ , 12 կ'երթայ Կափառնա-
յում ու ետքը Երուսաղէմ , 14 ուր տեղ տաճարէն դուրս
կը հանէ գնողները և ծախողները ․ 19 կը նախաձայնէ իր
մահը և յարութիւնը ։ 23 Շատերը իր հրաշքները տեսնե-
լով կը հաւատան իրեն , բայց ինքը իր անձը չհաւատար ա-
նոնց ։

1 Ու երրորդ օրը հարսնիք մը կար Գալիլեայի
[մ]Կանայ քաղաքը , և Յիսուսի մայրը հոն էր ։
2 Յիսուս ալ կանչուեցաւ ան հարսնիքը՝ ու իր ա-
3 շակերտներն ալ ։ Ու երբոր գինին պակսեցաւ ,
Յիսուսին մայրը ըսաւ անոր , Գինի չունին ։
4 Յիսուս ըսաւ անոր , [յ]Կնի՛կ՝ [ն]դուն իմ հետս
ի՞նչ բան ունիս ․ [շ]իմ ժամանակս դեռ հասած
5 չէ ։ Իր մայրը սպասաւորներուն ըսաւ , Ինչ որ
6 ձեզի ըսէ , ըրէ՛ք ։ Հոն վեց հատ քարէ կարաս-

հ Սաղ. լբ. 2։ հգ. 1։ Գլ. ը. 39։ Հռով. բ. 28, 29։ թ. 6։
յ Մատ. ժդ. 33։
ղ Մատ. իա. 5։ իէ. 11, 42։ Գլ. ժը. 37։ ժթ. 3։
ճ Ծն. իը. 12։ Մատ. դ. 11։ Ղու. բ. 9, 13։ իբ. 43։ իդ. 4։ Գոր. ա. 10։
մ Տե՛ս Յես. ժթ. 28։
յ Գլ. ժթ. 26։
ն բ Թագ. ժզ. 10։ ժթ. 22։
շ Գլ. է. 6։

ներ դրուած էին ե Հրէից մաքրուելու սովորութեա-
նը համեմատ, որ անոնց ամէն մէկը երկու կամ
7 երեք մար բան կ'առնէր։ Յիսուս ըսաւ անոնց,
Լեցուցէք այն կարասները ջրով. ու լեցուցին ա-
8 նոնք մինչև բերանը։ Ու ըսաւ անոնց, Հիմա
հանեցէք ու սեղանապետին տարէք. անոնք ալ
9 տարին։ Ու սեղանապետը երբոր գինի եղած
զ ջուրին համը առաւ, և չէր գիտեր ուսկից ըլլա-
լը. (բայց սպասաւորները որ ջուրը քաշեր էին,
10 գիտէին.) սեղանապետը կը խօսի փեսային, Ու
անոր կ'ըսէ, Ամէն մարդ աղէկ գինին առաջ կը
մատուցանէ, ու երբոր խմած կ'ըլլան, այն ատենը
ստորնագոյնը. բայց դուն աղէկ գինին մինչև հի-
11 մա պահեցիր։ Յիսուս հրաշքներուն սկիզբը աս
ըրաւ Գալիլեայի Կանայ քաղաքին մէջ, է և իր
փառքը յայտնեց. ու իր աշակերտները հաւատա-
ցին իրեն։
12 Անկէ ետև Յիսուս Կափառնայում իջաւ, ինքը
և իր մայրը ը ու իր եղբայրները և իր աշակերտնե-
րը, ու շատ օրեր հոն չկեցան։
13 թ Ու Հրէից զատիկը մօտ էր, ու Յիսուս Ե-
14 րուսաղէմ ելաւ. ժ Ու տաճարին մէջ գտաւ ար-
ջառ ու ոչխար և աղաւնի ծախողները, ու ստակ
15 փոխողներն ալ՝ որ նստեր էին. Ու չուանէ խարա-
զան մը շինելով՝ ամէնը տաճարէն դուրս հանեց,
ոչխարներն ալ ու արջառներն ալ, և ստակ փո-
խողներուն պղինձները ցիրուցան ըրաւ, ու սե-
16 ղանները կործանեց. Ու աղաւնի ծախողներուն
ըսաւ, Անկէ վերցուցէք ասոնք, ի իմ Հօրս տունը
17 առուտուրի տուն մի՛ ընէք։ Ու իր աշակերտները

ե Մար. է. 3։
զ Գլ. դ. 46։
է Գլ. ա. 14։
ը Մատ. ժբ. 46։
թ Ել. ժբ. 14։ բ Օր. ժզ. 1, 16։ Հմր 23։ Գլ. ե. 1։ զ. 4։ ժա. 55։
ժ Մատ. իա. 12։ Մար. ժա. 15։ Ղու. ժթ. 45։
ի Ղու. բ. 49։

միտքերնին բերին որ գրուած է, լ Քու տանդ նա-
խանձը զիս կերաւ։
18 Ան ատենը պատասխան տուին Հրեաները ու
ըսին անոր, խ Ի՞նչ նշան կը ցուցընես մեզի՝ որ
19 աս բաները կ'ընես։ Պատասխան տուաւ Յիսուս
ու ըսաւ անոնց, ծ Քակեցէք աս տաճարը, ու
20 երեք օրուան մէջ անիկայ պիտի կանգնեմ։ Ու
Հրեաները ըսին, Քառասունըվեց տարուան մէջ
շինուեցաւ աս տաճարը, և դուն երեք օրուան մէջ
21 պիտի կանգնե՞ս անիկայ։ Բայց ինքը կ իր մարմնոյն
22 տաճարին համար կ'ըսէր։ Ուստի երբոր ինքը մե-
ռելներէն յարութիւն առաւ, հ իր աշակերտները
միտքերնին բերին թէ աս բանը ըսած էր, ու
հաւատացին գիրքին և Յիսուսի ըսած խօսքին։
23 Ու երբոր զատկի տօնին ատենը Երուսաղէմ էր,
շատ մարդիկ անոր ըրած հրաշքները տեսնելով՝
24 հաւատացին անոր անունը։ Բայց ինքը Յիսուս
իր անձը անոնց չէր հաւատար, ինչու որ ինքը
25 գիտէր ամէն մարդ. Ու պէտք չէր որ մէկը մարդու
համար վկայութիւն տայ իրեն, ձ քանզի ինքը գի-
տէր թէ ինչ կայ մարդուն ներսի դին։

ԳԼ. Գ

1 Քրիստոս կը սորվեցընէ Նիկոդեմոսին թէ վերստին ծնունդը հարկաւոր է. 14 թէ փրկուելու համար պէտք է հաւատքով իր մահուանը նայիլ. 16 թէ Աստուած մեծ սէր ունի մարդոց վրայ. 18 թէ անհաւատները պիտի դատապարտուին։ 23 Յովհաննէսին մկրտութիւնը, անոր վկայութիւնը և վարդապետութիւնը Քրիստոսի վրայով։

1 Ու փարիսեցիներէն մարդ մը կար ա Նիկոդեմոս
2 անունով, որ Հրէից իշխան էր։ Անիկայ

լ Սաղ. կթ. 9։
խ Մատ. ժբ. 38։ Գլ. զ. 30։
ծ Մատ. իզ. 61։ իէ. 40։ Մար. ժդ. 58։ ժե. 29։
կ Կող. բ. 9։ Եբր. ը. 2։ ա Կոր. գ. 16։ զ. 19։ բ Կոր. զ. 16։
հ Ղու. իդ. 8։
ձ ա Թագ. ժզ. 7։ ա Մն. իը. 9։ Մատ. թ. 4։ Մար. բ. 8։ Գլ. զ. 65։ ժզ. 30։ Գործ. ա. 24։ Յայտ. բ. 23։
ա Գլ. է. 50։ ժթ. 39։

գիշերով* Յիսուսին քով եկաւ, և ըսաւ անոր. Ռաբ-
բի, գիտենք որ դուն Աստուծմէ վարդապետ եկած
ես, ինչու որ Ƀ մէկը չկրնար ընել աս հրաշքները
որ դուն կ՚ընես, թէ որ ÷ Աստուած իր հետը չըլլայ։
3 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոր, Ճշմա-
րիտ ճշմարիտ կ՚ըսեմ քեզի, ‡ Թէ որ մէկ մարդ
մը † նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորու-
4 թիւնը տեսնել։ Նիկոդեմոս ըսաւ անոր, Ին-
տո՞ր կրնայ մարդ մը ծնանիլ, որ ծերացած է.
Հնարաւո՞ր բան է որ նորէն իր մօրը որովայնը մտնէ
5 ու ծնանի։ Յիսուս պատասխան տուաւ, Ճշմա-
րիտ ճշմարիտ կ՚ըսեմ քեզի, ⊢ Թէ որ մէկ մարդ
մը ջուրէն ու Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ
6 թագաւորութիւնը մտնել։ Մարմինէն ծնածը
7 մարմին է, ու Հոգիէն ծնածը հոգի է։ Դուն մի
զարմանար որ քեզի ըսի, Պէտք է ձեզի նորէն
8 ծնանիլ։ ㄴ Հովը ուր որ ուզէ կը փչէ, և անոր
ձայնը կը լսես, բայց չես գիտեր ուսկից կու գայ
կամ ուր կ՚երթայ. ասանկ ալ է ան ամէնը՝ որ
9 Հոգիէն կը ծնանի։ Պատասխան տուաւ Նիկո-
դեմոս ու ըսաւ անոր, ⊦ Աս ի՞նչպէս կրնայ ըլլալ։
10 Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Դուն
Իսրայէլի մէջ վարդապետ մըն ես, և աս բաները
11 չե՞ս գիտեր։ ⊏ Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ քե-
զի, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք, և ինչ որ
տեսնենք՝ կը վկայենք, Ɓ ու մեր վկայութիւնը չէք
12 ընդունիր։ Թէ որ երկրաւոր բաները ձեզի ըսի
ու չէք հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք՝

* [illegible] անոր
Ƀ Գլ. թ. 16, 33 ։ Գործ. բ. 22 ։
÷ Գործ. ժ. 38 ։
‡ Գլ. ա. 13 ։ Գաղ. զ. 15 ։ Տիտ. գ. 5 ։ Յակ. ա. 18 ։ ա Պետ. ա. 23 ։ ա Յովհ. գ. 9 ։
† Կամ վերէն
⊢ Մար. ժզ. 16 ։ Գործ. բ. 38 ։
ㄴ Ժող. ժա. 5 ։ ա Կոր. բ. 11 ։
⊦ Գլ. զ. 53, 61 ։
⊏ Մատ. ժա. 27 ։ Գլ. ա. 18 ։ է. 16 ։ ը. 28 ։ ժբ. 49 ։ ժդ. 24 ։
Ɓ Հմր 32 ։

13 թէ որ երկնաւոր բաները ձեզի ըսեմ։ ǂ Ու
մէկը երկինքը չելաւ, բայց անիկայ միայն որ եր-
կինքէն իջաւ՝ Որդին մարդոյ, որ երկինքն է։
14 ⊦ Ու ինչպէս որ Մովսէս անապատին մէջ օձը բարձ-
րացուց, ւ այնպէս ալ պէտք է որ Որդին մարդոյ
15 բարձրանայ, Որ ամէն մէկ որ անոր հաւատայ՝
չկորսուի, Ƭ հապա յաւիտենական կեանք ունենայ։
16 ǂ Ինչու որ Աստուած անանկ սիրեց աշխարհը մին-
չև որ իր միածին Որդին տուաւ, որ ամէն մէկ որ
անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական
17 կեանք ունենայ։ ! Վասն զի Աստուած իր Որդին
չղրկեց աշխարհ որ աշխարհը դատէ, հապա որ
18 աշխարհս անով փրկուի։ ς Ան որ կը հաւատայ
անոր՝ չդատապարտուիր. և ան որ չհաւատար,
անիկայ արդէն դատապարտուած է, ինչու որ Աս-
տուծոյ միածին Որդւոյն անուանը չհաւատայ։
19 Ու աս է դատապարտութիւնը՝ Ꮷ որ լոյսը աշխարհ
եկաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրե-
20 ցին, ինչու որ իրենց գործքերը չար էին։ ㄴ Վասն
զի ամէն մէկ որ չար կը գործէ, անիկայ լոյսը կ՚ա-
տէ, և լոյսին քով չգար որ իր գործքերը չյանդի-
21 մանուին։ Բայց ան որ ճշմարտութիւն կը գործէ,
լոյսին քով կու գայ, որ իր գործքերը յայտնի
ըլլան թէ Աստուծով գործուեցան։
22 Աս բաներէն ետքը եկաւ Յիսուս և իր աշա-
կերտները Հրէաստանի երկիրը, և հոն կը կենար
անոնց հետ մէկտեղ, ȼ ու մկրտութիւն կ՚ընէր։
23 Յովհաննէս ալ Այնոնի մէջ ſ Սաղիմի մօտ մը-

ǂ Առակ. լ. 4 ։ Գլ. զ. 33, 38, 51, 63 ։ ժզ. 28 ։ Գործ. բ. 34 ։ ա Կոր. ժե. 47 ։ Եփե. դ. 9, 10 ։
⊦ Թուոց. իա. 9 ։
ւ Գլ. ը. 28 ։ ժբ. 32 ։
Ƭ Հմր 36 ։ Գլ. զ. 47 ։
ǂ Հռով. ե. 8 ։ ա Յովհ. դ. 9 ։
! Ղուկ. թ. 56 ։ Գլ. ե. 45 ։ ը. 15 ։ ժբ. 47 ։ ա Յովհ. դ. 14 ։
ς Գլ. ե. 24 ։ զ. 40, 47 ։ ի. 31 ։
Ꮷ Գլ. ա. 4, 9, 10, 11 ։ ը. 12 ։
ㄴ Յոբ. իդ. 13, 17 ։ Եփե. ե. 13 ։
ȼ Գլ. դ. 2 ։
ſ ա Թագ. թ. 4 ։

կրտութիւն կ'ընէր, որովհետեւ հոն շատ ջուր
24 կար, ու կու գային ու կը մկրտուէին: Ինչու
որ Յովհաննէս դեռ բանտը դրուած չէր.
25 Ան ատենը վիճաբանութիւն մը եղաւ Յովհան-
նէսին աշակերտներէն *Հրէաներուն հետ՝ մաք-
26 րութեան վրայով: Ու եկան Յովհաննէսին ու
անոր ըսին, Ռաբբի՛ անիկայ որ քեզի հետ Յոր-
դանանու անդին կողմն էր, որուն համար դուն
վկայութիւն տուիր, ահա ինքը կը մկրտէ. ու
27 ամէնը անոր կու գան: Պատասխան տուաւ
Յովհաննէս ու ըսաւ, Մարդ մը չկրնար բան մը
առնել, թէ որ երկինքէն տրուած չըլլայ անոր:
28 Դուք ձեզմէ կը վկայէք ինծի համար, որ ըսի
թէ Ես Քրիստոսը չեմ, հապա անոր առջեւէն
29 խրկուած եմ: Ան որ հարսն ունի, փեսան անի-
կայ է. բայց փեսային բարեկամը՝ որ կը կենայ
ու կը լսէ անոր, մեծապէս կ'ուրախանայ փեսային
ձայնին համար. ուստի աս իմ ուրախութիւնս
30 լցուած է: Անիկայ պէտք է որ մեծնայ, բայց ես
31 պզտիկնամ: Ան որ վերէն կու գայ՝ ամէնէն
վեր է. ան որ երկրէն է՝ երկրաւոր է, ու երկ-
րէն կը խօսի. ան որ երկինքէն կու գայ՝ ամէնէն
32 վեր է. Ու ինչ որ տեսաւ ու լսեց, ան կը
վկայէ, ու անոր վկայութիւնը մէկը չընդունիր:
33 Ան որ անոր վկայութիւնը կ'ընդունի, կնքեց
34 թէ Աստուած ճշմարիտ է: Վասն զի ան որ

Մատ. գ. 5, 6:
Մատ. ժդ. 3:
* Կամ Հրէայի մը
Գլ. ա. 7, 15, 27, 34:
ա Կոր. դ. 7: Եբր. ե. 4: Յակ. ա. 17:
Գլ. ա. 20, 27:
Մաղ. գ. 1: Մար. ա. 2: Ղու. ա. 17:
Մատ. իբ. 2: բ Կոր. ժա. 2: Եփե. ե. 25, 27: Յայտ. իա. 9:
Երգ. ե. 1:
Հմր 13: Գլ. ը. 23:
Մատ. իը. 18: Գլ. ա. 15, 27: Հռով. թ. 5:
ա Կոր. ժե. 47:
Գլ. զ. 33: ա Կոր. ժե. 47: Եփե. ա. 21: Փիլ. բ. 9:
Հմր 11: Գլ. ը. 26: ժե. 15:
Հռով. գ. 4: ա Յոհ. ե. 10:
Գլ. է. 16:

Աստուած խրկեց, Աստուծոյ խօսքերը կը խօսի,
ինչու որ Աստուած անոր չափով չտար Հոգին:
35 Հայրը կը սիրէ Որդին, ու ամէն բան անոր
36 ձեռքը տուած է: Ան որ Որդիին կը հաւատայ,
յաւիտենական կեանք ունի. ու ան որ Որդիին
չհնազանդիր, անիկայ կեանք պիտի չտեսնէ, հա-
պա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ:

ԳԼ. Դ

1 Քրիստոս Սամարացի կնկան մը հետ կը խօսի, ու իր ո՛վ ըլլալը անոր կը յայտնէ. 27 ատոր վրայ իր աշակերտները կը զարմանան: 31 Քրիստոս կ'իմացընէ անոնց իր նախանձը Աստուծոյ փառքին համար: 39 Շատ Սամարացիներ կը հաւատան անոր: 43 Քրիստոս Գալիլեա կ'երթայ, ու կը բժշկէ ազնուականի մը որդին:

1 Երբ որ Տէրը իմացաւ որ փարիսեցիները լսեր
էին՝ թէ Յիսուս Յովհաննէսէն աւելի աշա-
2 կերտներ կ'ընէ ու կը մկրտէ, (Թէպէտ չէ
թէ Յիսուս ինքը կը մկրտէր, հապա իր աշա-
3 կերտները,) Թողուց Հրէաստանը, ու նորէն
4 Գալիլեա գնաց: Ու պէտք եղաւ որ Սամարիայի
5 մէջէն անցնի: Ուստի եկաւ Սամարացւոց մէկ
քաղաքը՝ որուն անունը Սիքար էր, ան տեղին
մօտ՝ որն որ Յակոբ իր որդւոյն Յովսէփին
6 տուաւ. Ու հոն Յակոբին մէկ աղբիւրը կար.
Յիսուս ալ ճամբայէն յոգնած ըլլալով՝ ան աղբիւ-
րին վրայ նստաւ. ու ժամը վեցին ատեններն էր:
7 Սամարիայէն կնիկ մը եկաւ ջուր հանելու. Յի-
սուս ըսաւ անոր, Ինծի ջո՛ւր տուր խմելու.
8 (Քանզի իր աշակերտները քաղաքը գացեր էին,
9 որ ուտելիք առնեն:) Ան ատենը Սամարացի
կնիկը ըսաւ անոր, Դուն որ Հրեայ ես, ինչպէս

Գլ. ա. 16:
Մատ. ժա. 27: իը. 18: Ղու. ժ. 22: Գլ. ե. 20, 22: ժգ. 3: ժէ. 2: Եբր. բ. 8:
Ամբ. բ. 4: Գլ. ա. 12: զ. 47: Հմր 15, 16: Հռով. ա. 17: ա Յոհ. ե. 10:
Գլ. գ. 22, 26:
Ծն. լգ. 19: խը. 22: Յես. իդ. 32:

կ՚ուզես ջուր խմել ինծմէ՝ Սամարացի կնիկէ մը .
վասն զի է Հրեայք Սամարացւոց հետ հաղորդակ–
10 ցութիւն չեն ըներ ։ Յիսուս պատասխան տուաւ
ու ըսաւ անոր , Թէ որ դուն գիտնայիր Աստուծոյ
պարգեւը , և թէ ով է ան որ քեզի կ՚ըսէ , Ինծի
ջուր տուր խմելու , դուն անկէ պիտի ուզէիր , և
11 ինքը քեզի ը կենդանի ջուր պիտի տար ։ Կնիկը
ըսաւ անոր , Տէ՛ր դուն ջրհան ալ չունիս , ու աս
հորը խորունկ է . ուրեմն ո՞ւսկից պիտի ունենաս
12 ան կենդանի ջուրը ։ Միթէ դուն մեր Յակոբ
հօրմէն աւելի մե՞ծ մըն ես , որ աս հորը մեզի
տուաւ , և ասկէ խմեց ինքը ու իր որդիները և
13 իր անասունները ։ Պատասխան տուաւ Յիսուս
ու ըսաւ անոր , Ամէն ով որ աս ջուրէն խմէ ,
նորէն պիտի ծարաւի , թ բայց ով որ խմէ ան ջու–
րէն որ ես անոր պիտի տամ , յաւիտեան պիտի
14 չծարաւի . Հապա ան ջուրը որ ես անոր պիտի
տամ , ժ պիտի ըլլայ անոր ներսի դին ջուրի աղ–
բիւր մը՝ որ յաւիտենական կենաց համար կը
15 բղխէ ։ ի Կնիկը ըսաւ անոր , Տէ՛ր տուր ինծի
ան ջուրը որ չծարաւիմ , և հոս չգամ ջուր հա–
16 նելու ։ Յիսուս ըսաւ անոր , Գնա՛ քու էրիկդ
17 կանչէ՛ , ու հոս եկուր ։ Կնիկը պատասխան
տալով ըսաւ . Ես էրիկ չունիմ . Յիսուս ըսաւ
18 անոր , Աղէ՛կ ըսիր թէ Էրիկ չունիմ . Ինչու որ
դուն հինգ էրիկ ունեցեր ես , և ան որ հիմա ու–
նիս , քու էրիկդ չէ . ասիկայ շիտակ զրուցեցիր ։
19 Կնիկը ըսաւ անոր , Տէ՛ր լ կը տեսնեմ որ դուն
20 մարգարէ մըն ես ։ Մե՛ր հայրերը խ աս լեռանս
վրայ երկրպագութիւն ըրին . և դուք կ՚ըսէք թէ

է Դ Թագ. ԺԷ. 24 ։ Ղուկ. Թ. 52, 53 ։ Գործ. Ժ. 28 ։
ը Ես. ԺԲ. 3 ։ ԽԴ. 3 ։ Երեմ. Բ. 13 ։ Զաք. ԺԳ. 1 ։ ԺԴ. 8 ։
թ Գլ. Զ. 35, 59 ։
ժ Գլ. Է. 38 ։
ի Տես Գլ. Զ. 34 ։ Հռովմ. Զ. 23 ։ Ա Յովհ. Ե. 20 ։
լ Ղուկ. Է. 16 ։ ԻԴ. 19 ։ Գլ. Զ. 14 ։ Է. 40 ։
խ Դատ. Թ. 7 ։

Մէջն ծ Երուսաղէմ է տեղը , ուր պէտք է երկրպ–
21 պագութիւն ընել ։ Յիսուս ըսաւ անոր՝ , Կնի՛կ
հաւատա՛ ինծի՝ որ ժամանակ կու գայ , կ որ ան
ատենը ո՛չ աս լեռանը վրայ՝ և ո՛չ Երուսաղէմի
մէջ երկրպագութիւն պիտի ընէք Հօրը ։
22 Դուք անոր երկրպագութիւն կ՚ընէք , հ որ չէք
ճանչնար . մենք անոր երկրպագութիւն կ՚ընենք՝
որ կը ճանչնանք . ձ ինչու որ փրկութիւնը Հրեա–
23 ներէն է ։ Բայց ժամանակ կու գայ ու հիմա ալ
է , որ ճշմարիտ երկրպագողները երկրպագութիւն
պիտի ընեն Հօրը ղ հոգիով ճ ու ճշմարտութիւ–
նով , ինչու որ Հայրն ալ իրեն անանկ երկրպա–
24 գողներ կ՚ուզէ ։ մ Աստուած Հոգի է , և իրեն
երկրպագողներուն ալ պէտք է որ հոգիով ու
25 ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն ։ Կնի–
կը ըսաւ անոր , Գիտեմ որ Մեսիան կու գայ ,
(Քրիստոս ըսուածը ,) երբոր ինքը գայ , յ ամէն
26 բան մեզի պիտի պատմէ ։ Յիսուս ըսաւ անոր ,
27 ն Ես ան եմ՝ որ քեզի հետ կը խօսիմ ։ Եւ աս
խօսքին վրայ իր աշակերտները եկան , ու զարմա–
ցան որ ան կնկանը հետ կը խօսէր . բայց անոնցմէ
մէկը չըսաւ թէ Ի՞նչ կ՚ուզես , կամ Ի՞նչ կը
28 խօսիս ասոր հետ ։ Ան ատենը կնիկը ձգեց իր
սափորը ու քաղաքը գնաց , և ըսաւ մարդիկ–
29 ներուն , Եկէք տեսէք մէկ մարդ մը՝ որ ըսաւ ինծի
շ ամէն ինչ որ գործեր եմ . արդեօք ասիկա՞յ է
30 Քրիստոսը ։ Եւ անոնք քաղաքէն ելան ու անոր
կու գային ։
31 Եւ աս միջոցիս աշակերտները իրեն կ՚աղաչէին

ծ Բ Օր. ԺԲ. 5, 11 ։ Գ Թագ. Թ. 3 ։ Բ Մն. Է. 12 ։
կ Մաղ. Ա. 11 ։ Ա Տիմ. Բ. 8 ։
հ Դ Թագ. ԺԷ. 29 ։
ձ Ես. Բ. 3 ։ Ղուկ. ԻԴ. 47 ։ Հռովմ. Թ. 4, 5 ։
ղ Փիլ. Գ. 3 ։
ճ Գլ. Ա. 17 ։
մ Բ Կոր. Գ. 17 ։
յ Հմր 29, 39 ։
ն Գլ. Թ. 37 ։ Մատթ. ԻԶ. 63, 64 ։ Մար. ԺԴ. 61, 62 ։
շ Հմր 25 ։

32 ու կ'ըսէին, Ռաբբի՛ հաց կեր: Անիկայ ըսաւ
անոնց, Ես կերակուր ունիմ ուտելու՝ որ դուք
33 չէք գիտեր: Ուստի աշակերտները կ'ըսէին
իրարու, Միթէ մէկը ասոր ուտելու բան մը
34 բերա՞ւ: Յիսուս ըսաւ անոնց, Իմ կերակուրս
ան է որ ես զիս խրկողին կամքը ընեմ, և անոր
35 գործը կատարեմ: Չէ՞ որ դուք կ'ըսէք թէ
Տակաւին չորս ամիս կայ որ հունձքի ատենը գայ.
ահա ես ձեզի կ'ըսեմ, Աչքերնիդ վերցուցէք ու
արտերուն նայեցէք, որ արդէն ճերմկած՝
36 հնձուելու պատրաստ են: Ու ան որ կը հնձէ՝
վարձք կ'առնէ, ու յաւիտենական կենաց համար
պտուղ կը ժողվէ, որ սերմանողը ու հնձողը մէկ-
37 տեղ ուրախանան: Վասն զի աս բանիս մէջ
ճշմարիտ է ան խօսքը թէ Ուրիշը կը սերմանէ
38 և ուրիշը կը հնձէ: Ես ձեզ խրկեցի հնձելու ան
որ դուք չաշխատեցաք. ուրիշները աշխատեցան,
ու դուք անոնց աշխատանքին մէջ մտաք:
39 Ու ան քաղաքէն շատ Սամարացիք իրեն հաւա-
տացին ան կնկանը խօսքին համար որ կը վկայէր,
ըսելով թէ Ինչ որ ես գործեր էի, բոլորը ինծի
40 ըսաւ: Ու երբոր Սամարացիք անոր եկան՝ կ'աղա-
չէին անոր որ իրենց քովը կենայ. ու երկու օր հոն
41 կեցաւ: Ու ալ շատերը իրեն հաւատացին իր
42 խօսքին համար: Ու կ'ըսէին կնկանը, Ասկէ ետեւ
չէ թէ քու խօսքիդ համար կը հաւատանք, ինչու
որ մենք մեզմէ լսեցինք, և գիտենք որ ասիկայ է
ճշմարտապէս աշխարհի Փրկիչը՝ Քրիստոսը:
43 Ու երկու օրէն ետեւ ելաւ անկէ և Գալիլեա
44 գնաց: Ինչու որ Յիսուս ինքը վկայեց թէ
Մարգարէ մը իր գաւառին մէջ պատիւ չունենար:

Յոբ. իգ. 12; Գլ. զ. 38; ժէ. 4; ժթ. 30:
Մատթ. թ. 37; Ղուկ. ժ. 2:
Դան. ժբ. 3:
Հմր 29:
Գլ. ժէ. 8; Ա Յօհ. դ. 14:
Մատթ. ժգ. 57; Մար. զ. 4; Ղուկ. դ. 24:

45 Ու երբոր Գալիլեա եկաւ, Գալիլեացիները զինքը
ընդունեցին, ինչու որ տեսած էին ան բոլոր
հրաշքները՝ որ ինքը ըրաւ Երուսաղեմի մէջ տօնին
ատենը. Վասն զի իրենք ալ ան տօնին գացեր էին:
46 Ու Յիսուս նորէն եկաւ Գալիլեացւոց Կանայ
քաղաքը, ուր որ ջուրը գինի ըրած էր. և հոն
ազնուական մէկը կար, որուն որդին հիւանդ էր
47 Կափառնայումի մէջ: Ասիկայ լսելով որ Յիսուս
Հրէաստանէն Գալիլեա եկեր է, եկաւ անոր ու
կ'աղաչէր որ իջնէ և իր որդին բժշկէ, ինչու որ
48 մեռնելու վրայ էր: Ան ատենը Յիսուս ըսաւ
անոր, Թէ որ նշաններ ու հրաշքներ չտեսնէք,
49 բնաւ պիտի չհաւատաք: Ազնուականը ըսաւ անոր,
50 Տէր՝ իջի՛ր քանի որ իմ տղաս մեռած չէ: Յիսուս
ըսաւ անոր. Գնա՛, քու որդիդ ողջ է. մարդն ալ
հաւատաց ան խօսքին որ Յիսուս իրեն ըսաւ, ու
51 գնաց: Ու երբոր կ'իջնէր, իր ծառաները դիմա-
ւորեցին զինքը, և աւետիս տուին ըսելով թէ
52 Քու տղադ ողջ է: Ուստի հարցուց անոնց թէ որ
ժամէն սկսաւ աղէկի դառնալ. և ըսին իրեն,
53 Երէկ ժամը եօթնին տենդը թողուց զանիկայ: Ան
ատենը գիտցաւ անոր հայրը թէ ան ժամն էր որ
Յիսուս իրեն ըսաւ թէ Քու որդիդ ողջ է. ու
54 հաւատաց ինքը և իր բոլոր տունը: Աս նորէն երկ-
րորդ հրաշքն է որ Յիսուս ըրաւ, երբոր Հրէաս-
տանէն Գալիլեա եկաւ:

Գլ. բ. 23; գ. 2:
Բ Օր. ժգ. 16:
Գլ. բ. 1, 11:
Ա Կոր. ա. 22:

ԳԼ. Ե

1 Յիսուս երեսունըութը տարիէ 'ի վեր հիւանդ եղող մարդը կը բժշկէ շաբաթ օրը: 10 Հրեայք ասոր վրայով տրտունջ կ'ընեն, ու կը հալածեն զՔրիստոս: 17 Ան ալ իր անձին համար պատասխան կու տայ Հրեաներուն, ու զանոնք կը յանդիմանէ. և իր Հօրը, 32 ու Յովհաննէսին, 36 և իր գործքերուն, 39 ու Սուրբ Գրոց վկայութիւններովը իր ո՛վ ըլլալը կը յայտնէ:

1 ա Անկէ ետեւ Հրէից տօն էր, եւ Յիսուս Երուսա-
2 ղէմ ելաւ։ Ու Երուսաղէմի մէջ բ Ոչխարաց
դրանը քով աւազան մը կայ, որ Եբրայեցերէն
3 Բեթհեզդա կ'ըսուի, որ հինգ սրահ ունի։ Անոնց
մէջ խիստ շատ հիւանդներ պառկած էին, կոյրեր՝
կաղեր՝ չորցածներ, որոնք կը սպասէին ջուրին
4 խառնուելուն։ Վասն զի հրեշտակ մը ժամանակ
ժամանակ աւազանը կ'իջնէր ու ջուրերը կը խառ-
նէր, եւ ով որ ջուրին խառնուելէն ետեւ առաջ
առաջ անոր մէջը կը մտնէր, կը բժշկուէր՝ ինչ հի-
5 ւանդութիւն որ ունենար։ Եւ հոն մէկ մարդ մը
կար, որ երեսունութը տարիէ 'ի վեր հիւանդու-
6 թիւն մը ունէր։ Յիսուս երբոր տեսաւ զանիկայ
որ ինկած պառկած էր, ու գիտցաւ որ շատ ժամա-
նակէ 'ի վեր է, ըսաւ անոր, Կ'ուզե՞ս առողջա-
7 նալ։ Հիւանդը պատասխան տուաւ անոր, Տէ՛ր,
մարդ մը չունիմ որ երբ ջուրերը խառնուին՝ զիս
աւազանը ձգէ. հապա քանի որ ես ծանր կը շար-
8 ժիմ, ինծմէ առաջ ուրիշ մը կ'իջնէ։ Յիսուս
9 ըսաւ անոր, գ Ելի՛ր մահիճդ առ ու քալէ։ Եւ
իսկոյն մարդը առողջացաւ, ու իր մահիճը վերցը-
10 նելով կը քալէր. դ Ու այն օրը շաբաթ էր։ Ան
ատենը Հրեաները ըսին բժշկուած մարդուն,
Շաբաթ է, ե ու արժան չէ որ մահիճդ վերցընես։
11 Պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Ան որ զիս
բժշկեց՝ ինքը ինծի ըսաւ, Մահիճդ առ ու քալէ։
12 Ուստի հարցուցին անոր, Ո՞վ է ան մարդը որ
13 քեզի ըսաւ, Մահիճդ առ ու քալէ։ Եւ բժշկուա-
ծը չէր գիտեր թէ ով է ան, ինչու որ Յիսուս
մէկդի քաշուեցաւ՝ ան տեղը բազմութիւն ըլլալուն

ա Ղև. իգ. 2։ Բ Օր. ժզ. 1։ Գլ. բ. 13։
բ Նեեմ. գ. 1։ ժբ. 39։
գ Մատ. թ. 6։ Մար. բ. 11։ Ղուկ. ե. 24։
դ Գլ. թ. 14։
ե Ել. ի. 10։ Նեեմ. ժգ. 19։ Երեմ. ժէ. 21, 22։ Մատ. ժբ. 2։ Մար. բ. 24։ գ. 4։ Ղուկ. զ. 2։ ժգ. 14։

14 համար։ Անկէ ետքը Յիսուս զանիկայ տաճարին
մէջ գտնելով՝ ըսաւ անոր, Ահա բժշկուեցար,
զ այլ մեղք մի՛ գործեր, որ աւելի չար բան մը
15 չպատահի քեզի։ Գնաց մարդը, ու Հրեաներուն
պատմեց թէ Յիսուսն էր որ զինքը բժշկեց։
16 Եւ ասոր համար Հրեաները կը հալածէին Յի-
սուսը, եւ կը փնտռէին զանիկայ սպաննել, որ աս
17 բաները շաբաթ օրը կ'ընէր։ Եւ Յիսուս պա-
տասխան տուաւ անոնց, է Իմ Հայրս մինչեւ հիմա
18 կը գործէ, ես ալ կը գործեմ։ ը Ասոր համար՝
ալ աւելի կը փնտռէին Հրեաները զանիկայ ս-
պաննել, վասն զի չէ՛ թէ միայն շաբաթ օրը կը
լուծէր, հապա նաեւ զԱստուած իր Հայրը կ'ա-
նուանէր, թ ու այսպէս ինքզինքը Աստուծոյ հաւա-
19 սար կ'ընէր։ Իսկ Յիսուս պատասխան տուաւ ու
ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
ժ Որդին ինքիրմէն բան մըն ալ չկրնար ընել, մի-
այն թէ ինչ որ տեսնէ որ Հայրը կ'ընէ. վասն զի
ինչ որ անիկայ կ'ընէ, նմանապէս Որդին ալ
20 նոյնը կ'ընէ։ Ինչու որ ի Հայրը կը սիրէ Որդին,
եւ ամէն բան կը ցուցընէ անոր՝ ինչ որ ինքը կ'ը-
նէ. եւ ասոնցմէ ալ աւելի մեծ գործքեր պիտի ցու-
21 ցընէ անոր, որպէս զի դուք զարմանաք։ Վասն
զի ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ
ու կենդանի կ'ընէ, լ նմանկ ալ Որդին՝ որոնք որ
22 կ'ուզէ կը կենդանացընէ։ Քանզի Հայրը մէկը
չդատեր, խ հապա ամէն դատաստանը Որդիին
23 տուաւ. Որ ամէնը պատուեն Որդին, ինչպէս որ

զ Մատ. ժբ. 45։ Գլ. ը. 11։
է Գլ. թ. 4։ ժգ. 10։
ը Գլ. է. 20։
թ Գլ. ժ. 30, 33։ Փիլ. բ. 6։
ժ Հմր 30։ Գլ. ը. 28։ թ. 4։ ժբ. 49։ ժդ. 10։
ի Մատ. գ. 17։ Գլ. գ. 35։ Բ Պետ. ա. 17։
լ Ղուկ. է. 14։ ը. 54։ Գլ. ժա. 25, 43։
խ Մատ. ժա. 27։ իը. 18։ Հմր 27։ Գլ. գ. 35։ ժէ. 2։ Գործ. ժէ. 31։ Ա Պետ. դ. 5։

Հայրը կը պատուեն ․ ժ Ան որ Որդին չպատուեր ,
24 զանիկայ ղրկող Հայրը չպատուեր ։ Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ի Ան որ իմ խօսքս մը-
տիկ կ'ընէ , և կը հաւատայ անոր որ զիս ղրկեց ,
յաւիտենական կեանք ունի , ու դատապարտու-
թեան տակ չիյնար , լ հապա մահուանէ դէպ 'ի
25 կեանք անցած է ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի , որ ժամանակ պիտի գայ և ալ հիմա է , խ որ
ան ատենը մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որ-
դւոյն ձայնը , և անոնք որ կը լսեն , պիտի ապրին ։
26 Վասն զի ինչպէս որ Հայրը իր անձին մէջը կեանք
ունի , անանկ ալ Որդիին տուաւ որ իր անձին
27 մէջը կեանք ունենայ ․ ծ Եւ դատաստան ընելու ալ
իշխանութիւն տուաւ անոր , կ քանզի անիկայ Որդի
28 մարդոյ է ։ Ասոր վրայ մի զարմանաք , ինչու որ
ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզմաններուն մէջ
29 եղողները անոր ձայնը պիտի լսեն , հ Ու դուրս
պիտի գան , ձ անոնք որ բարի գործեր են , կենաց
յարութեան համար , և անոնք որ չար գործեր են ,
30 դատապարտութեան յարութեան համար ։ ղ Ես
ինքիրմէս բան մը չեմ կրնար ընել ․ ինտոր կը
լսեմ՝ անանկ կը դատեմ , և իմ դատաստանս ար-
դար է , ինչու որ ճ Ես իմ կամքս չեմ փնտռեր ,
31 հապա * անոր կամքը որ զիս ղրկեց ։ մ Թէ որ ես
ինծի համար վկայեմ , իմ վկայութիւնս ճշմարիտ
32 չէ ։ յ Ուրիշ մըն է որ ինծի համար կը վկայէ ․
և ես գիտեմ որ ճշմարիտ է ան վկայութիւնը՝ որ

ժ ա Յօհ․ բ․ 23 ։
ի Գղ․ գ․ 16, 18 ։ զ․ 40, 47 ։ ը․ 51 ։ ի․ 31 ։
լ ա Յօհ․ գ․ 14 ։
խ Հմր 28 ։ Եփե․ բ․ 1, 5 ։ ե․ 14 ։ Կող․ բ․ 13 ։
ծ Հմր 22 ։ Գոր․ ժ․ 42 ։ ժէ․ 31 ։
կ Դան․ է․ 13, 14 ։
հ Ես․ իզ․ 19 ։ ա Կոր․ ժե․ 52 ։ ա Թես․ դ․ 15 ։
ձ Դան․ ժբ․ 2 ։ Մատ․ իե․ 32, 33, 46 ։
ղ Հմր 19 ։
ճ Մատ․ իզ․ 39 ։ Գղ․ դ․ 34 ։ զ․ 38 ։
* Ոմանք՝ Հօրը
մ Գղ․ ը․ 14 ։ Յայտ․ գ․ 14 ։
յ Մատ․ գ․ 17 ։ ժէ․ 5 ։ Գղ․ ը․ 18 ։ ա Յօհ․ ե․ 6, 7, 9 ։

33 ինքը ինծի համար վկայեց ։ Դուք Յովհաննէսին
ղրկեցիք , ն Եւ ինքը ճշմարտութեանը վկայեց ։
34 Բայց ես չէ թէ մարդոյմէ վկայութիւն կ'առնեմ ,
35 հապա աս բաները կ'ըսեմ որ դուք փրկուիք ։ Անի-
կայ ճրագ մըն էր որ կը վառէր շ ու լոյս կու-
տար , ո Եւ դուք քիչ մը ատեն ուզեցիք անոր լու-
36 սովը ուրախանալ ։ չ Բայց ես Յովհաննէսին
վկայութենէն ալ մեծ վկայութիւն ունիմ , քանզի
պ Ան գործքերը որ Հայրը ինծի տուաւ որ անոնք
կատարեմ , ան նոյն գործքերը որ ես կը գործեմ՝
ինծի համար կը վկայեն թէ Հայրը զիս ղրկեց ։
37 Ու Հայրը որ զիս ղրկեց , ջ ինքը վկայեց ինծի հա-
մար ․ դուք բնաւ անոր ձայնը չլսեցիք , ռ ո՛չ ալ
38 անոր կերպարանքը տեսաք ․ Եւ ո՛չ անոր խօսքը
ձեր մէջը բնակած ունիք , քանզի ան որ ինքը
39 ղրկեց , դուք անոր չէք հաւատար ։ ս Գիրքերը
քննեցէ՛ք , ինչու որ դուք անոնցմով կը սեպէք
յաւիտենական կեանքը ունենալ , վ Եւ բուն անոնք
40 են որ ինծի համար կը վկայեն ․ տ Եւ դուք չէք
41 ուզեր ինծի գալ , որ կեանք ունենաք ։ ր Ես
42 մարդոյմէ փառք չեմ առներ ։ Բայց գիտեմ ձեզ
43 որ Աստուծոյ սէրը մէջերնիդ չունիք ։ Ես իմ
Հօրս անունովը եկայ , ու զիս չէք ընդունիր ․ թէ
որ ուրիշ մէկը իր անունովը գայ , անիկայ պիտի
44 ընդունիք ։ ց Դուք ինտո՞ր կրնաք հաւատալ , որ
իրարմէ փառք կ'առնէք ․ ւ և ան փառքը որ մէկ
45 Աստուծմէն է , չէք փնտռեր ։ Մի՛ կարծէք թէ

ն Գղ․ ա․ 15, 19, 27, 32 ։
շ բ Պետ․ ա․ 19 ։
ո Մատ․ ժգ․ 20 ։ իա․ 26 ։ Մար․ զ․ 20 ։
չ ա Յօհ․ ե․ 9 ։
պ Գղ․ գ․ 2 ։ ժ․ 25 ։ ժե․ 24 ։
ջ Մատ․ գ․ 17 ։ ժէ․ 5 ։ Գղ․ զ․ 27 ։ ը․ 18 ։
ռ բ Օր․ դ․ 12 ։ Գղ․ ա․ 18 ։ ա Տիմ․ ա․ 17 ։ ա Յօհ․ դ․ 12 ։
ս Ես․ ը․ 20 ։ ԼԴ․ 16 ։ Ղու․ ժզ․ 29 ։ Հմր 46 ։ Գոր․ ժէ․ 11 ։
վ բ Օր․ ժը․ 15, 18 ։ Ղու․ իդ․ 27 ։ Գղ․ ա․ 45 ։
տ Գղ․ ա․ 11 ։ գ․ 19 ։
ր Հմր 34 ։ ա Թես․ բ․ 6 ։
ց Գղ․ ժբ․ 43 ։
ւ Հռով․ բ․ 29 ։

ես ձեզի համար ամբաստանութիւն պիտի ընեմ
Հօրը . † կայ մէկը որ ձեզի համար ամբաստանու-
թիւն կ'ընէ , Մովսէսը՝ որուն դուք յուսացած
46 էք : Վասն զի թէ որ դուք Մովսէսին հաւատա-
յիք , ինծի ալ պիտի հաւատայիք , † ինչու որ
47 անիկայ ինծի համար գրեց : Բայց թէ որ անոր
գրածներուն չէք հաւատար , իմ խօսքերուս ին-
չո՞ւ պիտի հաւատաք :

ԳԼ. Զ.

1 Քրիստոս հինգ հազար հոգի կը կերակրէ հինգ հացով ու երկու ձուկով . 15 աս բանին վրայ մարդիկ կ'ուզեն թագաւոր ընել զանիկայ . 16 բայց Յիսուս անոնց քովէն ետ կը քաշուի , ու ծովուն վրայ քալելով՝ իր աշակերտներուն կ'երթայ . 26 կը յանդիմանէ իր բոլորտիքը դիզուողները , ու ամէն մարմնաւոր շահու համար իր խօսքը մտիկ ընողները . 32 կը ցուցնէ թէ ինքը հոգևոր կերակուր է հաւատացեալներուն : 66 Շատ աշակերտներ իրմէն կը զատուին : 68 Պետրոս կը դաւանի զՅիսուս : 70 Յուդան սատանայ կ'անուանի :

1 † Ասոր բաներէն ետքը Յիսուս Գալիլեայի, այսինքն
Տիբերիայի ծովուն անդին կողմը գնաց .
2 Ու անոր ետևէն շատ ժողովուրդ կ'երթար , ինչու
որ կը տեսնէին անոր հրաշքները որ հիւանդներուն
3 վրայ կ'ընէր : Ու Յիսուս լեռը ելաւ , ու հոն
4 նստաւ իր աշակերտներուն հետ մէկտեղ : † Ու
Հրէից զատկի տօնը մօտ էր :
5 † Յիսուս երբոր իր աչքերը վեր վերցուց ու
տեսաւ որ շատ ժողովուրդ կու գար իրեն , ըսաւ
Փիլիպպոսին , Ուսկից հաց ծախու առնենք որ
6 ասոնք ուտեն : (Ու աս կ'ըսէր զանիկայ փորձելու
համար , քանզի ինքը գիտէր ինչ պիտի ընէր :)
7 Փիլիպպոս պատասխան տուաւ անոր , † Երկու

† Հռով. բ. 12 :
† Ծն. գ. 15 ; ժբ. 3 ; ժը. 18 ; իբ. 18 ; խթ. 10 ; Բ Օր. ժը. 15, 18 ; Գլ. ա. 45 ; Գոր. իզ. 22 :
† Մատ. ժդ. 13 ; Մար. զ. 32 ; Ղու. թ. 10, 12 :
† Ղև. իգ. 5, 7 ; Բ Օր. ժզ. 1 ; Գլ. բ. 13 ; ե. 1 :
† Մատ. ժդ. 14 ; Մար. զ. 35 ; Ղու. թ. 12 :
† Տես Թու. ժա. 21, 22 :

հարիւր դահեկանի հաց ասոնց հերիք չէ , որ ամէն
8 մէկը քիչ մը առնէ : Իր աշակերտներէն մէկը՝
Սիմոն Պետրոսին եղբայրը Անդրէաս ըսաւ իրեն ,
9 Հոս մէկ պատանի մը կայ , որ հինգ գարեղէն հաց
ու երկու ձուկ ունի , † բայց անոնք ի՞նչ պիտի
10 ըլլան այդչափ մարդոց : Իսկ Յիսուս ըսաւ ,
Նստեցուցէք աս մարդիկը . և ան տեղը շատ խոտ
կար , ու մարդիկը նստան թուով հինգ հազարի
11 չափ : Ու Յիսուս հացերը առաւ ու գոհացաւ , և
աշակերտներուն բաժնեց , աշակերտներն ալ նստող-
ներուն , նոյնպէս ալ ձուկերէն՝ որչափ որ ուզեցին :
12 Ու երբոր կշտացան , ըսաւ իր աշակերտներուն ,
Ժողվեցէք աւելցած կտորուանքները՝ որ բան մը
13 չկորսուի : Ուստի ժողվեցին , և տասներկու
կողով լեցուցին ան հինգ գարեղէն հացերէն մնացած
14 կտորուանքները , որ ուտողներէն աւելցան : Իսկ
մարդիկը երբոր Յիսուսին ըրած հրաշքը տեսան ,
կ'ըսէին թէ Ասիկայ է ճշմարտապէս ան Մար-
15 գարէն՝ որ աշխարհ պիտի գար : Ու Յիսուս
գիտնալով որ պիտի գան զինքը յափշտակեն՝ որ
զինքը թագաւոր ընեն , նորէն մինակ լեռը գնաց :
16 † Ու երբոր իրիկուն եղաւ , իր աշակերտները
17 ծովեզերքը իջան . Ու նաւը մտնելով ծովուն
անդին կողմը Կափառնայում կ'երթային . † արդէն
մութը կոխեր էր , ու Յիսուս դեռ իրենց եկած
18 չէր . Ծովն ալ հովին սաստիկ փչելէն տակնուվրայ
19 կ'ըլլար : Ու երբոր թի քաշելով քսանուհինգ
կամ երեսուն ասպարէզի չափ գացին , տեսան Յի-
սուսը որ ծովուն վրայէն քալելով նաւուն կը
20 մօտենար , ու վախցան : Բայց ինքը ըսաւ ա-
21 նոնց , Ես եմ՝ մի՛ վախնաք : Ան ատենը ուզեցին

† Դ Թագ. դ. 43 :
† Ծն. խթ. 10 ; Բ Օր. ժը. 15, 18 ; Մատ. ժա. 3 ; Գլ. ա. 21 ; դ. 19, 25 ; է. 40 :
† Մատ. ժդ. 23 ; Մար. զ. 47 :

զանիկայ նաւը առնել . և շուտ մը նաւը-ան
երկիրը հասաւ՝ ուր որ կ՚երթային ։
22 Հետեւեալ օրը ժողովուրդը որ ծովուն անդին
կողմն էր, և տեսեր էր որ ուրիշ նաւակ չկար հոն
ան մէկէն 'ի զատ՝ որուն մէջ անոր աշակերտները
մտեր էին, և որ Յիսուս իր աշակերտներուն հետ
նաւակը մտած չէր, հապա միայն անոր աշակերտ-
23 ները գացեր էին . (Բայց Տիբերիայէն ուրիշ
նաւակներ եկան ան տեղին մօտ՝ ուր որ Տէրոջը
24 գոհանալովը հացը կերեր էին .) Ան ատենը
ժողովուրդը տեսնելով թէ ո՛չ Յիսուս հոն է,
ո՛չ ալ անոր աշակերտները, իրենք ալ նաւերը
մտան ու եկան Կափառնայում Յիսուսը փնտռելու ։
25 Ու երբոր անիկայ ծովուն անդին կողմը գտան՝ ըսին
26 անոր, Ռաբբի, Ե՞րբ եկար դուն հոս ։ Յիսուս պա-
տասխան տուաւ անոնց և ըսաւ, Ճշմարիտ ճշմարիտ
կ՚ըսեմ ձեզի, Դուք զիս կը փնտռէք՝ չէ թէ անոր
համար որ հրաշքներ տեսաք, հապա անոր համար
27 որ հացերէն կերաք ու կշտացաք ։ Գոյցէ՛ + գործեցէք՝
չէ թէ կորստական կերակուրին համար, ը հապա
ան կերակուրին համար որ յաւիտենական կենաց
մէջ կը մնայ, որ անիկայ Որդին մարդոյ ձեզի պիտի
տայ, թ Ինչու որ Հայր Աստուած զանիկայ կնքեց ։
28 Ան ատենը ըսին անոր, Ի՞նչ ընենք՝ որ Աստուծոյ
29 գործքերը գործենք ։ Պատասխան տուաւ Յիսուս
ու ըսաւ անոնց, ժ Աս է Աստուծոյ գործը, որ անոր
30 ղրկածին հաւատաք ։ Ըսին անոր, ի Բայց դուն
ի՞նչ նշան կ՚ընես որ տեսնենք ու քեզի հաւատանք .
31 ի՞նչ կը գործես ։ լ Մեր հայրերը անապատին
մէջ մանանան կերան, ինչպէս որ գրուած է,

ը Հմր 55 ։ Գլ. դ. 14 ։
թ Մատ. գ. 17 ։ ժէ. 5 ։ Մար. ա. 11 ։ թ. 6 ։ Ղու. գ. 22 ։ թ. 35 ։ Գլ. ա. 33 ։ ե. 37 ։ ը. 18 ։ Գոր. բ. 22 ։ բ Պետ. ա. 17 ։
ժ ա Յոհ. գ. 23 ։
ի Մատ. ժբ. 38 ։ ժզ. 1 ։ Մար. ը. 11 ։ ա Կոր. ա. 22 ։
լ Ել. ժզ. 15 ։ Թու. ժա. 7 ։ Նեեմ. թ. 15 ։ ա Կոր. ժ. 3 ։

32 Խ Երկինքէն հաց տուաւ անոնց որ ուտեն ։ Եւ
Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ
ձեզի թէ Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը,
բայց իմ Հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնաւոր
33 հացը ։ Ինչու որ Աստուծմէ տրուած հացը ան է
որ երկինքէն կ՚իջնէ, ու աշխարհիս կեանք կու
34 տայ ։ Ուստի ծ ըսին անոր, Տէր՝ ամէն ատեն աս
35 հացը մեզի տուր ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, կ Ես
եմ կենաց հացը . հ ան որ ինծի կու գայ, երբէք
պիտի չանօթենայ . և ան որ ինծի կը հաւատայ,
36 պիտի չծարաւի ։ ձ Բայց ես ձեզի ըսի որ դուք
37 զիս տեսաք ալ՝ ու չէք հաւատար ։ ղ Ան ամէնը որ
Հայրը ինծի կու տայ, ինծի պիտի գայ . ճ և ան
որ ինծի կու գայ, բնաւ դուրս պիտի չհանեմ ։
38 Ինչու որ ես երկինքէն իջայ, մ չէ թէ իմ կամքս
ընելու, յ հապա անոր կամքը՝ որ զիս ղրկեց ։
39 Եւ զիս ղրկող Հօրը կամքը աս է որ ն ան ա-
մէնը որ ինքը ինծի տուաւ՝ չկորսնցնեմ անկէ,
հապա անոր յարութիւն առնել տամ վերջին օրը ։
40 Քանզի զիս ղրկողին կամքը աս է, որ շ ան ամէնը
որ կը տեսնէ Որդին և կը հաւատայ անոր,
յաւիտենական կեանք ունենայ . ես ալ անոր
յարութիւն առնել տամ վերջին օրը ։
41 Ուստի Հրեաները տրտունջ կ՚ընէին իրեն հա-
մար, ինչու որ ըսաւ թէ Ես եմ երկինքէն իջած
42 հացը . Եւ կ՚ըսէին, ո Ասիկայ Յովսէփին որդին
Յիսուսը չէ՞, որուն հայրը ու մայրը մենք կը
ճանչնանք . ուրեմն ի՞նչպէս կ՚ըսէ ասիկայ թէ .

Խ Սաղ. հը. 24, 25 ։
ծ Տես գլ. դ. 15 ։
կ Հմր 48, 59 ։
հ Գլ. դ. 14 ։ է. 37 ։
ձ Հմր 26, 65 ։
ղ Հմր 45 ։
ճ Մատ. իդ. 24 ։ Գլ. ժ. 28, 29 ։ բ Տիմ. բ. 19 ։ ա Յոհ. բ. 19 ։
մ Մատ. իզ. 39 ։ Գլ. ե. 30 ։
յ Գլ. դ. 34 ։
ն Գլ. ժ. 28 ։ ժէ. 12 ։ ժը. 9 ։
շ Հմր 27, 47, 55 ։ Գլ. գ. 15, 16 ։ դ. 14 ։
ո Մատ. ժգ. 55 ։ Մար. զ. 3 ։ Ղու. դ. 22 ։

43 Ես երկինքէն իջայ ։ Պատասխան տուաւ Յիսուս
ու ըսաւ անոնց, Տրտունջ մի՛ ընէք մէջերնիդ ։
44 [ն]Մէկը չկրնար ինծի գալ, թէ որ զիս խրկող
Հայրը անիկայ չքաշէ․ ու ես անոր յարութիւն
45 տալու պիտի տամ վերջին օրը ։ [շ]Մարգարէից
մէջ գրուած է, Եւ ամէնքն ալ Աստուծմէ սորված
պիտի ըլլան․ [ո]Ան ամէնը որ Հօրմէն կը լսէ ու
46 կը սորվի, ինծի կու գայ ։ [չ]Ոչ թէ մէկը
Հայրը տեսած է, [պ]եթէ ոչ ան որ Աստուծմէ
47 է, անիկայ Հայրը տեսած է ։ Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի թէ [ջ]Ան որ ինծի կը հաւա-
48 տայ, յաւիտենական կեանք ունի ։ [ռ]Ես եմ կե-
49 նաց հացը ։ [ս]Ձեր հայրերը անապատին մէջ
50 մանանան կերան ու մեռան ։ [վ]Աս է ան հացը՝
— որ երկինքէն կ'իջնէ, որ եթէ մէկը ասկէ ուտէ,
51 պիտի չմեռնի ։ Ես եմ կենդանի հացը [տ]որ
52 երկինքէն իջայ ։ Թէ որ մէկը աս հացէն ուտէ,
յաւիտեան պիտի ապրի․ [ր]և ան հացը որ ես պի-
տի տամ՝ իմ մարմինս է, որ ես պիտի տամ աշ-
խարհիս կենացը համար ։
53 [ց]Նոր վրայ Հրեաները իրարու հետ կը վիճէին
ու կ'ըսէին, [ւ]Ինչպէ՞ս կրնայ ասիկայ իր մարմինը
54 մեզի տալ ուտելու ։ Իսկ Յիսուս ըսաւ անոնց,
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, [փ]Թէ որ
Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք և անոր արիւնը
չխմէք, ձեր անձերուն մէջը կեանք չէք ունենար ։
55 [ք]Ով որ իմ մարմինս ուտէ և իմ արիւնս խմէ,

ն Երգ․ ա․ 4 ։ Հմր 66 ։
շ Ես․ ծդ․ 13 ։ Երեմ․ լա․ 34 ։ Միք․ դ․ 2 ։ Եբր․ ը․ 10 ։ ժ․ 16 ։
ո Հմր 37 ։
չ Գլ․ ա․ 18 ։ ե․ 37 ։
պ Մատ․ ժա․ 27 ։ Ղուկ․ ժ․ 22 ։ Գլ․ ա․ 18 ։ է․ 29 ։ ը․ 19 ։
ջ Գլ․ գ․ 16, 18, 36 ։ Հմր 40 ։
ռ Հմր 33, 35 ։
ս Հմր 31 ։
վ Հմր 51, 59 ։
տ Գլ․ գ․ 13 ։
ր Եբր․ ժ․ 5, 10 ։
ց Գլ․ է․ 43 ։ թ․ 16 ։ ժ․ 19 ։
ւ Գլ․ գ․ 9 ։
փ Մատ․ իզ․ 26, 28 ։
ք Հմր 27, 40, 64 ։ Գլ․ դ․ 13, 14 ։

յաւիտենական կեանք կ'ունենայ, ու ես անոր յա-
56 րութիւն տալու պիտի տամ վերջին օրը ։ Ինչու
որ իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, և իմ ա-
57 րիւնս ճշմարիտ ըմպելիք է ։ Ան որ իմ մարմինս
կ'ուտէ, և իմ արիւնս կը խմէ, [օ]անիկայ իմ
ներսի դիս կը բնակի՝ ու ես անոր ներսի դին ։
58 Ինչպէս որ կենդանի Հայրը զիս խրկեց, ու ես
կենդանի եմ Հօրը ձեռքովը, այսպէս ալ ան որ
զիս կ'ուտէ, ինքն ալ իմ ձեռքովս կենդանի կը
59 մնայ ։ [ֆ]Աս է ան հացը որ երկինքէն իջած է․
չէ՛ թէ ինչպէս որ հայրերնիդ մանանան կերան՝ ու
մեռան․ ով որ աս հացը ուտէ, յաւիտեան պի-
տի ապրի ։
60 Աս բաները ըսաւ ժողովարանին մէջը՝ երբոր
Կափառնայումի մէջ կը սորվեցնէր ։
61 [ա]Ու աշակերտներէն շատերը երբոր լսեցին,
ըսին, Խիստ է աս խօսքը, ո՞վ կրնայ ասոր մտիկ
62 ընել ։ Յիսուս երբոր ինքնիրենը հասկըցաւ,
որ իր աշակերտները ան բանին համար տրտունջ
կ'ընեն, ըսաւ անոնց, Ատիկայ ձեզ կը գայթակ-
63 ղեցնէ՞ ։ [բ]Հապա ի՞նչ պիտի ըսէք, թէ որ
տեսնէք Որդին մարդոյ որ ելլէ ուր տեղ որ առաջ
64 էր ։ [գ]Հոգին է կենդանի ընողը, մարմինը շահ
մը չըներ․ ան խօսքերը որ ես ձեզի *կը խօսիմ,
65 հոգի ու կեանք են ։ [դ]Բայց ձեր մէջէն կան ոմանք
որ չեն հաւատար․ ինչու որ [ե]Յիսուս սկիզբէն
գիտէր՝ թէ ով են անոնք որ չեն հաւատար, և
66 ով է ան որ զինքը պիտի մատնէ․ Ու կ'ը-
սէր, [զ]Ատոր համար ձեզի ըսի որ մէկը չկրնար
ինծի գալ, թէ որ իմ Հօրմէս տրուած չըլլայ
անոր ։

օ Ա Յոհ․ գ․ 24 ։ դ․ 15, 16 ։
ֆ Հմր 49, 50, 51 ։
ա Հմր 67 ։ Մատ․ ժա․ 6 ։
բ Գլ․ գ․ 13 ։ Մար․ ժզ․ 19 ։ Գործ․ ա․ 9 ։ Եփե․ դ․ 8 ։
գ Բ Կոր․ գ․ 6 ։
* Ոմանք՝ խօսեցայ
դ Հմր 36 ։
ե Գլ․ բ․ 24, 25 ։ ժգ․ 11 ։
զ Հմր 44, 45 ։

67 ժ Աս պատճառով իր աշակերտներէն շատերը
68 ետ գացին, և ալ իր հետը չէին պտըտեր։ Ան
ատենը Յիսուս տասներկուքին ըսաւ, Միթէ
69 դուք ալ կ'ուզէ՞ք երթալ։ Սիմոն Պետրոս պա-
տասխան տուաւ անոր, Տէ՛ր, որո՞ւ պիտի երթանք,
70 ի դուն յաւիտենական կենաց խօսքեր ունիս. լ Ու
մենք հաւատացինք ու գիտցանք թէ դուն ես Քրիս-
71 տոսը *Աստուծոյ Որդին։ Յիսուս պատասխան
տուաւ անոնց, խ Ես ձեզ տասներկուքդ չընտրեցի՞,
72 ծ ու ձեզմէ ալ մէկը սատանայ է։ Ան կ'ըսէր Իս-
կարիովտացի Սիմոնեան Յուդային համար, ինչու
որ անիկայ էր որ զինքը պիտի մատնէր, ու տաս-
ներկուքէն մէկն էր։

ԳԼ. Է

1 Յիսուս կը յանդիմանէ իր ազգականներուն փառասիրութիւնը և յանդգնութիւնը. 10 Գալիլեայէն Երուսաղէմ կ'ելլէ տաղաւարահարաց տօնին. 14 տաճարին մէջ կը սորվեցնէ. 40 Ժողովրդոց զանազան կարծիքները Քրիստոսի վրայով. 45 Փարիսեցիք կը բարկանան իրենց սպասաւորներուն՝ զանիկայ չբռնելնուն համար, և կը յանդիմանեն Նիկոդեմոսը՝ որ Յիսուսի կողմը կը բռնէր։

1 Ու աս բաներէն ետև Յիսուս Գալիլեայի մէջ կը
պտըտէր, ինչու որ չէր ուզեր Հրէաստանի
մէջ պտըտիլ, կ վասն զի Հրէաները զինքը
սպաննել կ'ուզէին։
2 հ Ու Հրէաներուն տաղաւարահարաց տօնը մօտ
3 էր։ ձ Ուստի իր եղբայրները ըսին իրեն, Ելիր
ասկէ ու Հրէաստան գնա, որ քու աշակերտներդ
4 ալ տեսնեն քու գործքերդ որ կ'ընես. Ինչու որ
մէկը չկայ որ ծածկաբար բան մը ընէ, և ինքը
յայտնի ըլլալ ուզէ. Թէ որ դուն աս բաները

ժ Հմր 61։
ի Գոր. ե. 20։
լ Մատ. ժզ. 16։ Մար. ը. 29։ Ղու. թ. 20։ Գլ. ա. 49։ ժա. 27։
* Որդին՝ կենդանի Աստուծոյ
խ Ղու. զ. 13։
ծ Գլ. ժգ. 27։
կ Գլ. ե. 16, 17։
հ Ղև. իգ. 34։
ձ Մատ. ժբ. 46։ Մար. գ. 31։ Գոր. ա. 14։

5 կ'ընես, ինքզինքդ աշխարհին յայտնէ։ ղ Քանզի
6 իր եղբայրներն ալ չէին հաւատար իրեն։ Իսկ Յի-
սուս ըսաւ անոնց, ճ Իմ ժամանակս դեռ հասած
չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է։
7 մ Աշխարհս ձեզ չկրնար ատել, բայց զիս կ'ատէ,
յ ինչու որ ես անոր վրայով կը վկայեմ թէ իր
8 գործքերը չար են։ Դուք ելէք աս տօնիս. ես
[դեռ] չեմ ելլեր աս տօնիս, ն ինչու որ իմ ժամա-
9 նակս դեռ լըցուած չէ։ Աս ըսելով անոնց, ինքը
10 Գալիլեա մնաց։ Բայց երբոր իր եղբայրները ելան,
ետքը ինքն ալ ելաւ տօնին, ոչ թէ յայտնի՝ հա-
պա գաղտուկ կերպով մը։
11 շ Ու Հրէաները տօնին ատենը կը փնտռէին
12 զինքը ու կ'ըսէին, Ո՞ւր է անիկայ։ ո Ու ժողո-
վուրդին մէջ շատ շշնջիւն կար անոր վրայով.
չ ոմանք կ'ըսէին թէ Աղէկ մարդ է. ուրիշները
կ'ըսէին, Ոչ, հապա ժողովուրդը կը մոլորցնէ։
13 Սակայն մէկը անոր վրայով համարձակ չէր խօսեր
պ Հրէաներուն վախէն։
14 Իսկ երբոր տօնը կէս եղաւ, Յիսուս տաճարը
15 ելաւ ու կը սորվեցնէր։ ջ Ու Հրէաները կը
զարմանային ու կ'ըսէին, Ինտո՞ր ասիկայ գիրքերը
16 գիտէ, որ սորված չէ։ Յիսուս պատասխան տուաւ
անոնց ու ըսաւ, ռ Իմ վարդապետութիւնս իմս
17 չէ, հապա զիս ղրկողինն է։ ս Թէ որ մէկը կ'ուզէ
անոր կամքը ընել, պիտի գիտնայ աս վարդապե-
տութեանս համար թէ արդեօք Աստուծմէ՞ է, թէ
18 ես ինքիրմէս կը խօսիմ։ վ Ան որ ինքիրմէն կը խօսի,

ղ Մար. գ. 21։
ճ Գլ. բ. 4։ ը. 20։ Հմր 8, 30։
մ Գլ. ժե. 19։
յ Գլ. գ. 19։
ն Գլ. ը. 20։ Հմր 6։
շ Գլ. ժա. 56։
ո Գլ. թ. 16։ ժ. 19։
չ Մատ. իա. 46։ Ղու. է. 16։ Գլ. զ. 14։ Հմր 40։
պ Գլ. թ. 22։ ժբ. 42։ ժթ. 38։
ջ Մատ. ժգ. 54։ Մար. զ. 2։ Ղու. դ. 22։ Գոր. բ. 7։
ռ Գլ. գ. 11։ ը. 28։ ժբ. 49։ ժդ. 10, 24։
ս Գլ. ը. 43։
վ Գլ. ե. 41։ ը. 50։

իր անձին փառքը կը փնտռէ . բայց ան որ զինքը
խրկողին փառքը կը փնտռէ , անիկայ ճշմարիտ է ,
19 և անոր քովը անիրաւութիւն չկայ : յՄովսէս
չտուա՞ւ ձեզի օրէնքը , ու ձեզմէ մէկն ալ չպահեր
20 օրէնքը : նԻնչո՞ւ կը փնտռէք զիս սպաննել . պա-
տասխան տուաւ ժողովուրդը ու ըսաւ , շԴեւ կայ
քու ներսդ , ո՞վ քեզ կը փնտռէ սպաննել :
21 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց , Մէկ
գործ մը գործեցի , ու ամէնքդ ալ զարմացեր էք :
22 Արդ ոՄովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ ,
(որ չէ թէ Մովսէսէն էր , չհապա նախնիքնե-
23 րէն ,) ու շաբաթ օրը մարդ կը թլփատէք . Թէ
որ շաբաթ օրը մարդ թլփատութիւն կ'առնէ որ
Մովսէսին օրէնքը չքակուի . ինծի կը բարկանա՞ք
որ պես շաբաթ օրը ամբողջ մարդ մը բժշկեցի :
24 ջԱչքի երևցածին պէս դատաստան մի՛ ընէք , հա-
պա արդար դատաստան ըրէք :
25 Ան ատենը Երուսաղէմացիներէն ոմանք կ'ըսէին ,
26 Ասիկայ ան չէ՞ որն որ կը փնտռեն սպաննել . Ա-
հա յայտնի կը խօսի , ու բան մը չեն ըսեր անոր .
ռմիթէ իշխանները գիտցա՞ծ են թէ ասիկայ ճշմար-
27 տապէս Քրիստոսն է : սՍակայն մենք ասիկայ
գիտենք ուսկից է . բայց Քրիստոսը երբոր գայ ,
28 մէկը չգիտեր ուսկից է : Ու Յիսուս քանի որ կը
սորվեցնէր , տաճարին մէջ աղաղակեց ըսելով ,
վԻս ալ գիտէք , և ուսկից ըլլալս ալ գիտէք .
տՈւ ես ինքիրմէս եկած չեմ , հապա ան որ զիս

յ Եւ. իդ. 3 ; Բ Օր. լգ. 4 ; Յօհ. ա. 17 ; Գոր. է. 38 :
ն Մատ. ժբ. 14 ; Մար. գ. 6 ; Գւ. ե. 16, 18 ; ժ. 31, 39 ; ժա. 53 :
շ Գւ. ը. 48, 52 ; ժ. 20 :
ո Ղև. ժբ. 3 :
չ Ծն. ժէ. 10 :
պ Գւ. ե. 8, 9, 16 :
ջ Բ Օր. ա. 16, 17 ; Առակ. իդ. 23, 24 ; Գւ. ը. 15 ; Յակ. բ. 1 :
ռ Հմր 48 :
ս Մատ. ժգ. 55 ; Մար. զ. 3 ; Ղուկ. դ. 22 :
վ Տես Գւ. ը. 14 :
տ Գւ. ե. 43 ; ը. 42 :

խրկեց՝ րճշմարիտ է , ցոր անիկայ դուք չէք գի-
29 տեր : ւԲայց ես գիտեմ անիկայ , ինչու որ ես անկէ
30 եմ , և անիկայ զիս խրկեց : փՈւստի կը փնտռէին
զինքը բռնել , բայց քմէկն ալ իրեն ձեռք չզարկաւ ,
31 ինչու որ իր ժամանակը դեռ հասած չէր : օՈւ
ժողովուրդէն շատ մարդիկ հաւատացին իրեն , և
կ'ըսէին , Քրիստոսը երբոր գայ , ասոնցմէ աւելի
նշաննե՞ր պիտի ընէ , որչափ որ ասիկայ կ'ընէ :
32 Փարիսեցիները լսեցին ժողովուրդին աս շշնջիւնը
անոր վրայով . ու փարիսեցիները և քահանայա-
պետները սպասաւորներ խրկեցին , որ զանիկայ
33 բռնեն : Իսկ Յիսուս ըսաւ , ֆՔիչ մը ժամանակ
ալ ձեզի հետ եմ , ու կ'երթամ անոր որ զիս
34 խրկեց : ÷Իս պիտի փնտռէք ու պիտի չգտնէք , և
35 իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ : Ան ատենը
Հրեաները ըսին իրարու , Ո՞ւր պիտի երթայ
ասիկայ , որ մենք զինքը պիտի չգտնենք . միթէ
*հեթանոսաց մէջ +ցիրուցան եղածներո՞ւն պիտի
երթայ , և հեթանոսներուն պիտի սորվեցնէ :
36 Ի՞նչ է ան խօսքը որ զրուցեց՝ Իս պիտի փնտռէք
ու պիտի չգտնէք , և իմ եղած տեղս դուք չէք
կրնար գալ :
37 °Տօնին վերջի մեծ օրը Յիսուս կայներ էր , կ'ա-
ղաղակէր ու կ'ըսէր , ‡Թէ որ մէկը ծարաւ է ,
38 թող ինծի գայ ու խմէ : —Ան որ ինծի կը հա-
ւատայ՝ ինչպէս որ գիրքը կ'ըսէ , ‡անոր փորէն

ր Գւ. ե. 32 ; ը. 26 ; Հռով. գ. 4 :
ց Գւ. ա. 18 ; ը. 55 :
ւ Մատ. ժա. 27 ; Գւ. ժ. 15 :
փ Մար. ժա. 18 ; Ղուկ. ժթ. 47 ; ի. 19 ; Հմր 19 ; Գւ. ը. 37 :
ք Հմր 44 ; Գւ. ը. 20 :
օ Մատ. ժբ. 23 ; Գւ. գ. 2 ; ը. 30 :
ֆ Գւ. ժգ. 33 ; ժզ. 16 :
÷ Ովս. ե. 6 ; Գւ. ը. 21 ; ժգ. 33 :
* Յուն. Յունաց
+ Եսայ. ժա. 12 ; Յակ. ա. 1 ; Ա Պետ. ա. 1 :
° Ղև. իգ. 36 :
‡ Եսա. ծե. 1 ; Գւ. զ. 35 ; Յայտ. իբ 17 :
— Բ Օր. ժը. 15 :
‡ Առակ. ժը. 4 ; Եսա. ժբ. 3 ; իդ. 3 ; Գւ. դ. 14 :

39 կենդանի ջուրի գետեր պիտի բղխեն ։ գ Աս ըսաւ
Հոգիին համար՝ որ իրեն հաւատացողները պիտի
առնէին. վասն զի Սուրբ Հոգին տրուած չէր
տակաւին, ինչու որ Յիսուս դեռ դ փառաւորուած
40 չէր ։ Ժողովուրդէն շատ մարդիկ աս խօսքը որ
լսեցին, կ'ըսէին, Իրաւցընէ ասիկայ է ե մարգա-
41 րէն ։ Ուրիշները կ'ըսէին. զ Ասիկայ է Քրիս-
տոսը. ուրիշներն ալ կ'ըսէին, Միթէ Քրիս-
42 տոսը է Գալիլեայէ՞ն կու գայ ։ ը Չէ՞ որ գիրքը
կ'ըսէ թէ Քրիստոսը Դաւիթի սերունդէն ու
թ Դաւիթին եղած գեղէն Բեթլեհեմէն կու գայ ։
43 ժ Ասոր ժողովուրդին մէջ երկպառակութիւն ե-
44 ղաւ անոր համար ։ ի Եւ անոնցմէ ոմանք ուզեցին
բռնել զանիկայ, բայց մէկը անոր ձեռք չզար-
կաւ ։

45 Ու սպասաւորները նորէն եկան քահանայա-
պետներուն և փարիսեցիներուն. ու անոնք ըսին
46 անոնց, Ինչո՞ւ զանիկայ հոս չբերիք ։ Պատաս-
խան տուին սպասաւորները, լ Երբեք մէկը աս
47 մարդուն պէս խօսած չէ ։ Ան ատենը փարիսեցի-
ները պատասխան տուին անոնց և ըսին, Միթէ
48 դո՞ւք ալ մոլորեցաք ։ խ Իշխաններէն կամ փարի-
49 սեցիներէն մէկը հաւատա՞ց անոր. Բայց աս ռա-
միկ ժողովուրդը՝ որ օրէնքը չեն գիտեր, նզոված
50 են ։ Նիկոդեմոս ըսաւ անոնց, (ծ որ առաջուց
գիշեր ատեն իրեն եկեր էր, և անոնցմէ մէկն էր,)
51 կ Միթէ մեր օրէնքը մարդ կը դատէ՞, թէ որ

գ Ես. խդ. 3։ Յովել. բ. 28։ Գլ. ժզ. 7։ Գոր. բ. 17, 33, 38։
դ Գլ. ժբ. 16։ ժզ. 7։
ե Բ Օր. ժը. 15, 18։ Գլ. ա. 21։ զ. 14։
զ Գլ. դ. 42։ զ. 70։
է Հմր 52։ Գլ. ա. 46։
ը Սաղ. ճլբ. 11։ Երեմ. իգ. 5։ Միք. ե. 2։ Մատ. բ. 5։ Ղուկ. բ. 4։
թ Ա Թագ. ժզ. 1, 4։
ժ Հմր 12։ Գլ. թ. 16։ ժ. 19։
ի Հմր 30։
լ Մատ. է. 29։
խ Գլ. ժբ. 42։ Գոր. զ. 7։ Ա Կոր. ա. 20, 26։ բ. 8։
ծ Գլ. գ. 2։
կ Բ Օր. ա. 17։ ժէ. 8, ևն։ ժթ. 15։

առաջ անկէ բան մը չլսէ, և չգիտնայ թէ ինչ
52 կ'ընէ ։ Պատասխան տուին ու ըսին անոր, Մի-
թէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես. քննէ՛ ու նայէ,
53 հ որ Գալիլեայէն մարգարէ չելլեր ։ Եւ ամէն մէկը
իր տունը գնաց ։

ԳԼ. Ը

1 Քրիստոս կ'արձակէ շնութեան յանցանքով բռնուած կինը. 12 կը յայտնէ թէ ինքն է աշխարհիս լոյսը, ու իր վարդապետութիւնը կ'արդարացընէ. 33 Աբրահամին վրայ պարծեցող Հրէից պատասխան կու տայ, 59 և մէկդի կը քաշուի անոնց կատաղութենէն ։

1 Եւ Յիսուս Ձիթենեաց լեռը գնաց ։ (2) Ու
առտուանց նորէն տաճարը եկաւ, և բոլոր
ժողովուրդը իրեն կու գար, ու ինքը նստեր կը
3 սորվեցընէր անոնց ։ Եւ դպիրները ու փարիսե-
ցիները շնութեան մէջ բռնուած կնիկ մը բերին
4 անոր, ու զանիկայ մէջտեղը կայնեցընելով՝ Ըսին
իրեն, Վարդապետ, աս կնիկը շնութեան մէջ՝
5 աս մեղքը գործած ատենը բռնուեցաւ. ձ Եւ օրի-
նաց մէջ Մովսէս մեզի պատուիրեց ասանկները
քարկոծել. հիմա դուն ի՞նչ կ'ըսես ասոր հա-
6 մար ։ Աս կ'ըսէին՝ անիկայ փորձելով, որ անոր
վրայ ամբաստանութիւն ընելու առիթ մը ունենան.
բայց Յիսուս դէպ 'ի վար ծռելով՝ մատովը գետնին
7 վրայ կը գրէր ։ Սակայն երբոր վրան ինկան՝ հար-
ցընելով իրեն, վեր նայեցաւ ու ըսաւ անոնց,
ղ Ձեզմէ անմեղ եղողը՝ առաջ անիկայ թող քար
8 ձգէ ասոր վրայ ։ Եւ նորէն դէպ 'ի վար ծռելով՝
9 գետնին վրայ կը գրէր ։ Եւ անոնք աս լսելով
ու իրենց խղճմտանքէն յանդիմանուելով՝ ճ մէկիկ
մէկիկ դուրս կ'ելլէին, ծերերէն սկսած մինչև յե-
տինները. և Յիսուս մինակ մնաց, ու կնիկը մէջ-
10 տեղը կայնած ։ Եւ Յիսուս վեր նայելով ու կնի-

հ Ես. թ. 1, 2։ Մատ. դ. 15։ Գլ. ա. 46։ Հմր 41։
ձ Ղեւ. ի. 10։ Բ Օր. իբ. 22։
ղ Բ Օր. ժէ. 7։ Հռով. բ. 1։
ճ Հռով. բ. 22։

կին զատ մէկը չտեսնելով՝ ըսաւ անոր, Կնի՛կ, ո՞ւր
են անոնք որ քու վրայով ամբաստանութիւն կ'ը-
11 նէին. մէկը քեզ չդատապարտե՞ց։ Ու անիկայ
ըսաւ, Ո՛չ մէկը՝ Տէ՛ր. ու Յիսուս ըսաւ անոր,
ա Ես ալ չեմ դատապարտեր քեզ. գնա ու բ ասկէ
ետև մեղք մի՛ գործեր։
12 Արդ Յիսուս նորէն խօսեցաւ անոնց ու ըսաւ,
գ Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետևէս կու-
գայ, խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենաց
13 լոյսը պիտի ունենայ։ Իսկ փարիսեցիները ըսին
անոր, դ Դուն քու անձիդ համար կը վկայես, քու
14 վկայութիւնդ ճշմարիտ չէ։ Պատասխան տուաւ
Յիսուս ու ըսաւ անոնց, Թէև ես իմ անձիս հա-
մար վկայեմ, Բայց իմ վկայութիւնս ճշմարիտ է,
ինչու որ գիտեմ ուսկից եկայ և ուր կ'երթամ.
ե բայց դուք չէք գիտեր ուսկից կու գամ կամ
15 ուր կ'երթամ։ զ Դուք մարմնին նայելով դա-
տաստան կ'ընէք, է ես բնաւ մէկը չեմ դատեր.
16 Ու թէև դատելու ալ ըլլամ, իմ դատաստանս
ճշմարիտ է. ը ինչու որ ես մինակ չեմ, հապա ես,
17 և Հայրը որ զիս խրկեց։ թ Ու ձեր օրէնքին մէջն
ալ գրուած է թէ Երկու մարդու վկայութիւնը
18 ճշմարիտ է։ Ես եմ որ իմ անձիս համար կը վը-
կայեմ, ժ ու կը վկայէ ինծի համար Հայրն ալ որ
19 զիս խրկեց։ Ան ատենը ըսին անոր, Ո՞ւր է քու
Հայրդ. Յիսուս պատասխան տուաւ, ի Ո՛չ զիս
գիտէք՝ և ոչ իմ Հայրս. լ թէ որ զիս գիտնայիք,
իմ Հայրս ալ պիտի գիտնայիք։

ա Ղուկ. թ. 56 ։ ժբ. 14 ։ Գլ. գ. 17 ։
բ Գլ. ե. 14 ։
գ Գլ. ա. 4, 5, 9 ։ գ. 19 ։ թ. 5 ։ ժբ. 35, 36, 46 ։
դ Գլ. ե. 31 ։
ե Գլ. է. 28 ։ թ. 29 ։
զ Գլ. է. 24 ։
է Գլ. գ. 17 ։ ժբ. 47 ։ ժը. 36 ։
ը Հմր 29 ։ Գլ. ժզ. 32 ։
թ բ Օր. ժէ. 6 ։ ժթ. 15 ։ Մատ. ժը. 16 ։ բ Կոր. ժգ. 1 ։ Եբր. ժ. 28 ։
ժ Գլ. ե. 37 ։
ի Հմր 55 ։ Գլ. ժզ. 3 ։
լ Գլ. ժդ. 7 ։

20 Յիսուս աս խօսքերը խօսեցաւ խ գանձատունը,
երբոր տաճարին մէջ կը սորվեցընէր. ծ ու մէկը
չբռնեց զանիկայ, ինչու որ կ դեռ անոր ժամանակը
հասած չէր։
21 Ետքը Յիսուս նորէն ըսաւ անոնց, Ես կ'երթամ
հ ու զիս պիտի փնտռէք. ձ և ձեր մեղացը մէջ պի-
տի մեռնիք. ուր որ ես կ'երթամ, դուք չէք
22 կրնար գալ։ Ասոր վրայ Հրեաները կ'ըսէին,
Միթէ ինքզինքը պիտի մեռցընէ՞, որ կ'ըսէ թէ
23 Ո՛ւր որ ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ։ Ու
ըսաւ անոնց, ղ Դուք վարէն էք, ես վերէն եմ.
ճ դուք աս աշխարհէս էք, ես աս աշխարհէս չեմ.
24 մ Անոր համար ձեզի ըսի թէ Ձեր մեղացը մէջ պի-
տի մեռնիք, յ ինչու որ եթէ չհաւատաք թէ ես
25 եմ, ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք։ Ան ատենը
ըսին անոր, Դուն ո՞վ ես. և Յիսուս ըսաւ ա-
26 նոնց, Ի՛նչ որ սկիզբէն ձեզի կը խօսիմ։ Շատ
բաներ ունիմ ձեզի համար խօսելու և դատելու.
բայց ն ան որ զիս խրկեց, ճշմարիտ է, շ և ես
ինչ որ իրմէ լսեցի, անիկայ կը խօսիմ աշխարհիս
27 մէջ։ Անոնք չիմացան թէ Հօրը համար կը
զրուցէր իրենց։
28 Իսկ Յիսուս ըսաւ անոնց. ո Երբոր Որդին
մարդոյ բարձրացընէք՝, չ ան ատենը պիտի գիտնաք
թէ ես եմ, պ ու ինքիրմէս բան մը չեմ ըներ, ջ հա-
պա Հայրս ինչպէս որ ինծի սորվեցուց, անանկ կը
29 խօսիմ։ ռ Ու զիս խրկողը իմ հետս է. ս Հայրը

խ Մար. ժբ. 41 ։
ծ Գլ. է. 30 ։
կ Գլ. է. 8 ։
հ Գլ. է. 34 ։ ժգ. 33 ։
ձ Հմր 24 ։
ղ Գլ. գ. 31 ։
ճ Գլ. ժե. 19 ։ ժէ. 16 ։ ա Յովհ. դ. 5 ։
մ Հմր 21 ։
յ Մար. ժզ. 16 ։
ն Գլ. է. 28 ։
շ Գլ. գ. 32 ։ ժե. 15 ։
ո Գլ. գ. 14 ։ ժբ. 32 ։
չ Հռով. ա. 4 ։
պ Գլ. ե. 19, 30 ։
ջ Գլ. գ. 11 ։
ռ Գլ. ժդ. 10, 11 ։
ս Հմր 16 ։

զիս մինակ չթողուց · ɔ ինչու որ ես միշտ անոր
հաճելի եղած բաները կ՚ընեմ ։
30 Երբոր ասոնք խօսեցաւ, − շատ մարդիկ իրեն
31 հաւատացին ։ Ան ատենը Յիսուս իրեն հաւա-
տացող Հրեաներուն ըսաւ, Թէ որ դուք իմ
խօսքիս մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներս
32 կ՚ըլլաք · Ու ճշմարտութիւնը պիտի գիտնաք,
33 ÷ ու ան ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ ։ Պա-
տասխան տուին իրեն, + Մենք Աբրահամի սերունդ
ենք, ու երբեք մէկու մը ծառայեցինք · դուն ին-
34 չո՞ւ կ՚ըսես թէ ազատ պիտի ըլլաք ։ Յիսուս
պատասխան տուաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ
կ՚ըսեմ ձեզի թէ ∘ Ամէն ով որ մեղք կը գործէ, ա-
35 նիկայ մեղքի ծառայ է ։ ‡ Ու ծառան տանը մէջ յա-
ւիտեան չմնար, բայց որդին յաւիտեան կը մնայ ։
36 = Ուստի թէ որ Որդին ձեզ ազատ ընէ, ճշմարտա-
37 պէս ազատ պիտի ըլլաք ։ Գիտեմ որ Աբրահամի
սերունդ էք, ⊧ բայց կը փնտռէք զիս մեռցնել,
ինչու որ իմ խօսքս ձեր ներսի դին տեղ չունի ։
38 ÷ Ես ինչ որ տեսայ իմ Հօրս քովը՝ զան կը խօսիմ ·
և դուք ալ ինչ որ տեսաք ձեր հօրը քովը՝ զան
39 կ՚ընէք ։ Պատասխան տուին ու ըսին անոր,
∓ Մեր հայրը Աբրահամն է · ըսաւ անոնց Յիսուս,
⊦ Թէ որ Աբրահամին որդիքը ըլլայիք, Աբրահա-
40 մին գործքերը պիտի գործէիք ։ Ղ Բայց հիմա կը
փնտռէք սպաննել զիս, անանկ մարդ մը՝ որ ձեզի
ճշմարտութիւն խօսեցայ, ⊦ որն որ Աստուծմէ
41 լսեցի · Աբրահամ ատ բանը չըրաւ ։ Դուք ձեր

ɔ Գլ. դ. 34 ։ ե. 30 ։ զ. 38 ։
− Գլ. է. 31 ։ ժ. 42 ։ ժա. 45 ։
÷ Հռով. զ. 14, 18, 22 ։ ը. 2 ։ Յակ. ա. 25 ։ բ. 12 ։
+ Ղև. իե. 42 ։ Մատ. գ. 9 ։ Հմր 39 ։
∘ Հռով. զ. 16, 20 ։ բ Պետ. բ. 19 ։
‡ Գաղ. դ. 30 ։
= Հռով. ը. 2 ։ Գաղ. ե. 1 ։
⊧ Գլ. է. 20 ։ Հմր 40 ։
÷ Գլ. գ. 32 ։ ե. 19, 30 ։ ժդ. 10, 24 ։
∓ Մատ. գ. 9 ։ Հմր 33 ։
⊦ Հռով. բ. 28 ։ թ. 7 ։ Գաղ. գ. 7, 29 ։
Ղ Հմր 37 ։
⊦ Հմր 26 ։

հօրը գործքերը կ՚ընէք · ան ատենը ըսին անոր,
Մենք պոռնկութենէ չենք ծնած · ⊏ մենք մէկ Հայր
42 մը ունինք՝ որ է Աստուած ։ Յիսուս ըսաւ անոնց,
⊏ Թէ որ Աստուած ձեր Հայրը ըլլար, պիտի
սիրէիք զիս · ⊦ ինչու որ ես Աստուծմէ ելայ ու
եկայ · ⊦ և չէ թէ ես ինքիրմէս եկայ, հապա անի-
43 կայ զիս ղրկեց ։ Լ Ինչո՞ւ դուք իմ զրուցուածքս
չէք հասկընար · անոր համար որ չէք կրնար իմ
44 խօսքս մտիկ ընել ։ ⊦ Դուք ձեր հօրմէն Սատանայէն
էք, ու ձեր հօրը բաղձանքը կ՚ուզէք ընել · անի-
կայ սկիզբէն հետէ մարդասպան էր, ⊦ և ճշմարտու-
թեան մէջ չկեցաւ, ինչու որ անոր ներսի դին
ճշմարտութիւն չկայ · երբոր անիկայ ստութիւն
խօսի, իր իրեններէն կը խօսի, քանզի անիկայ
45 ստախօս է և անոր հայրը ։ Բայց որովհետև ես
ճշմարտութիւն կը խօսիմ, ինծի չէք հաւատար ։
46 Ձեզմէ ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեղքի համար ·
իսկ թէ որ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինչո՞ւ
47 ինծի չէք հաւատար ։ ⊦ Ան որ Աստուծմէ է, Աս-
տուծոյ խօսքերը մտիկ կ՚ընէ · դուք անոր համար
48 մտիկ չէք ըներ, որ Աստուծմէ չէք ։ Պատասխան
տուին Հրեաները ու ըսին անոր, Աղէկ չե՞նք
ըսեր մենք թէ դուն Սամարացի ես՝ ⊦ ու դև կայ
49 քու ներսդ ։ Յիսուս պատասխան տուաւ Լ ըսաւ,
Իմ ներսս դև չկայ, հապա ես իմ Հայրս կը
50 պատուեմ, և դուք զիս կ՚անարգէք ։ ⊦ Իսկ ես
իմ փառքս չեմ փնտռեր · կայ Մէկը որ կը փնտռէ
51 ու կը դատէ ։ Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի,
Ղ Թէ որ մէկը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահ
52 պիտի չտեսնէ ։ Ան ատենը Հրեաները ըսին անոր,

⊏ Ես. կգ. 16 ։ կդ. 8 ։ Մաղ. ա. 6 ։
⊏ ա Յօհ. ե. 1 ։
⊦ Գլ. ժզ. 27 ։ ժէ. 8, 25 ։
⊦ Գլ. ե. 43 ։ է. 28, 29 ։
Լ Գլ. է. 17 ։
⊦ Մատ. ժգ. 38 ։ ա Յօհ. գ. 8 ։
⊦ Յուդ. 6 ։
⊦ Գլ. ժ. 26, 27 ։ ա Յօհ. դ. 6 ։
⊦ Գլ. է. 20 ։ ժ. 20 ։ Հմր 52 ։
⊦ Գլ. ե. 41 ։ է. 18 ։
Ղ Գլ. ե. 24 ։ ժա. 26 ։

Հիմա գիտցանք որ քու ներսդ դեւ կայ . ա Աբրա–
համ մեռաւ՝ ու մարգարէները . և դուն կ'ըսես ,
Թէ որ մէկը իմ խօսքս պահէ , յաւիտեան մա–
53 հուան համը պիտի չառնէ : Միթէ դուն աւելի՞
մեծ ես մեր հայր Աբրահամէն որ մեռաւ , ու
մարգարէներն ալ մեռան . դուն քեզ ո՞վ կ'ընես :
54 Յիսուս պատասխան տուաւ , բ Թէ որ ես ինքզինքս
փառաւորեմ , իմ փառքս բան մը չէ . գ իմ Հայրս
է որ զիս կը փառաւորէ , որուն համար դուք
55 կ'ըսէք թէ *Մեր Աստուածն է . դ Դուք անիկայ
չէք ճանչնար , բայց ես գիտեմ անիկայ . ու թէ
որ ըսեմ թէ անիկայ չեմ գիտեր , ձեզի պէս
ստախօս պիտի ըլլամ . հապա ես գիտեմ անիկայ ,
56 և անոր խօսքը կը պահեմ : ե Ձեր հայրը Աբրա–
համ ցանկացաւ իմ օրս տեսնելու , ու զ տեսաւ և
57 ուրախացաւ : Իսկ Հրեաները ըսին անոր ,
Դուն տակաւին յիսուն տարեկան չես , Աբրահա՞մն
58 ալ տեսար : Յիսուս ըսաւ անոնց , Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , է Աբրահամին ըլլալէն
59 առաջ եմ ես : Ան ատենը ը քարեր վերցուցին որ
անոր վրայ նետեն . բայց Յիսուս ծածկուեցաւ ա–
նոնց աչքերէն , և թ անոնց մէջէն անցնելով՝ տաճա–
րէն դուրս ելաւ , ու այսպէս գնաց :

ա Զաք . ա . 5 : Եբր . ժա . 13 :
բ Գլ . ե . 31 :
գ Գլ . ե . 41 : ժզ . 14 : ժէ . 1 : Գործ . գ . 13 :
* Ուրիշ՝ ձեր
դ Գլ . է . 28 , 29 :
ե Ղուկ . ժ . 24 :
զ Եբր . ժա . 13 :
է Ել . գ . 14 : Ես . խգ . 13 : Գլ . ժէ . 5 , 24 : Կող . ա . 17 : Յայտ . ա . 8 :
ը Գլ . ժ . 31 , 39 : ժա . 8 :
թ Ղուկ . դ . 30 :

ԳԼ . Թ

1 Քրիստոս 'ի ծնէ կոյրին աչքերը կը բանայ : 8 Ան բժշկուած մարդը փարիսեցւոց կը տարուի , 13 որոնք բարկանալով՝ դուրս կ'ընեն զանիկայ իրենց ժողովարանէն . 35 բայց Յիսուս կ'ընդունի զանիկայ , ու ան ալ կը հաւատայ անոր : 39 Քրիստոս զորո՞նք կը լուսաւորէ :

1 Ու երբոր կ'անցնէր , մէկ մարդ մը տեսաւ կոյր
2 ծնած , Ու իր աշակերտները հարցուցին իրեն
ու ըսին , Ռաբբի՝ ա որո՞ւն է մեղքը , ասո՞ր թէ
3 իր ծնողացը , որ անիկայ կոյր ծնաւ : Պատաս–
խան տուաւ Յիսուս , Ոչ ասորն է մեղքը , ո՛չ
ալ իր ծնողացը , բ հապա որ Աստուծոյ գործքերը
4 ասոր վրայ յայտնի ըլլան : գ Քանի որ ցորեկ է ,
պէտք է որ զիս խրկողին գործքերը գործեմ . գի–
շերը կու գայ որ ան ատենը մէկը չկրնար գոր–
5 ծել : Քանի որ ես աշխարհի մէջ եմ , դ աշ–
6 խարհի լոյսն եմ : Երբոր աս ըսաւ , ե թուքաւ
գետինը , և թուքովը կաւ շինեց , ու ան կաւը
7 կոյրին աչքերուն վրայ ծեփեց . Ու ըսաւ անոր ,
Գնա՛ լուացուէ Սելովամի աւազանին մէջ , (որ
Խրկուած կը թարգմանուի ,) զ ուստի գնաց ու
8 լուացուեցաւ , եկաւ ու կը տեսնէր : Իսկ դրա–
ցիները և անոնք որ առաջուց տեսած էին զանիկայ
որ *կոյր էր , կ'ըսէին , Անիկայ չէ՞ր որ կը նըս–
տէր և կը մուրար . ոմանք կ'ըսէին , Անիկայ է .
9 Ուրիշները կ'ըսէին , Անոր նման մէկն է . իսկ ին–
10 քը կ'ըսէր թէ Ես եմ : Ուստի ըսին իրեն ,
11 Հապա ինչպէ՞ս բացուեցան քու աչքերդ : Ինքը
պատասխան տուաւ ու ըսաւ , է Յիսուս կոչուած
մարդ մը կաւ շինեց ու աչքերս ծեփեց , և ըսաւ
ինծի , Գնա Սելովամի աւազանը ու լուացուէ .
12 ես ալ գացի լուացուեցայ ու կը տեսնեմ : Ու
ըսին իրեն , Ո՞ւր է անիկայ . ըսաւ անոնց , Չեմ
գիտեր :
13 Փարիսեցիներուն տարին զանիկայ որ ատենով
14 կոյր էր : Ու շաբաթ օր էր երբոր Յիսուս կաւը

ա Հմր 34 :
բ Գլ . ժա . 4 :
գ Գլ . դ . 34 : ե . 19 , 36 : ժա . 9 : ժբ . 35 : ժէ . 4 :
դ Գլ . ա . 5 , 9 : գ . 19 : ը . 12 : ժբ . 35 , 46 :
ե Մար . է . 33 : ը . 23 :
զ Նեեմ . գ . 15 :
է Տես դ Թագ . ե . 14 :
* Ուրիշ՝ մուրացկան
ը Հմր 6 , 7 :

15 չինեց , ու անոր աչքերը բացաւ : Նորէն փարի-
սեցիներն ալ կը հարցընէին իրեն թէ ինտո՛ր կը
տեսնէ . անիկայ ալ ըսաւ անոնց , Կաւ դրաւ
աչքերուս վրայ , ու լուացուեցայ և կը տեսնեմ :
16 Ասոր վրայ փարիսեցիներէն ոմանք կ'ըսէին , Ան
մարդը Աստուծմէ չէ , ինչու որ շաբաթ օրը չպա-
հեր . ուրիշները կ'ըսէին , թ Ինտո՞ր կրնայ մեղա-
ւոր մարդ մը ասանկ հրաշքներ ընել . ժ ու մէջեր-
17 նին երկպառակութիւն կար : Նորէն ըսին կոյ-
րին , Դուն ի՞նչ կ'ըսես անոր համար՝ որ քու աչ-
քերդ բացաւ . ան ալ ըսաւ ի թէ Մարգարէ մըն
18 է : Իսկ Հրեաները չէին հաւատար անոր հա-
մար՝ թէ կոյր էր ու բացուեցաւ , մինչև որ ան
19 աչքը բացուածին ծնողքը կանչեցին . Ու անոնց
հարցուցին ու ըսին , Ա՞ս է ձեր որդին , որուն
համար դուք կ'ըսէք թէ կոյր ծնաւ . հապա հիմա
20 ինտո՞ր կը տեսնէ : Անոր ծնողքը պատասխան
տուին անոնց ու ըսին , Գիտենք որ ասիկայ է մեր
21 որդին , և որ ինքը կոյր ծնաւ . Բայց հիմա ինտո՛ր
կը տեսնէ , չենք գիտեր , կամ թէ ո՛վ բացաւ ա-
նոր աչքերը , մենք չենք գիտեր . ինքը չափահաս է ,
իրեն հարցուցէք . թող ինքը խօսի իրեն համար :
22 Աս ըսին անոր ծնողքը լ Հրեաներէն վախնալ-
նուն համար , քանզի Հրեաները միաբան հաւա-
նութեամբ որոշեր էին որ եթէ մէկը զանիկայ
Քրիստոս դաւանի , խ ժողովարանէն դուրս ձգուի :
23 Ասոր համար անոր ծնողքը ըսին թէ Ինքը չա-
24 փահաս է , իրեն հարցուցէք : Ուստի նորէն կան-
չեցին ան մարդը որ կոյր էր , ու ըսին անոր , ծ Աս-
տուծոյ փառք տուր , կ մենք գիտենք որ ան մարդը
25 մեղաւոր է : Անիկայ ալ պատասխան տուաւ ու

թ Հմր 33 ։ Գլ. գ. 2 ։
ժ Գլ. է. 12 , 43 ։ ժ. 19 ։
ի Գլ. դ. 19 ։ զ. 14 ։
լ Գլ. է. 13 ։ ժբ. 42 ։ ժթ. 38 ։ Գոր. ե. 13 ։
խ Հմր 34 ։ Գլ. ժզ. 2 ։
ծ Յես. է. 19 ։ ա Թագ. զ. 5 ։
կ Հմր 18 ։

ըսաւ , Թէ որ մեղաւոր է , ես չեմ գիտեր . միայն
26 ան գիտեմ որ կոյր էի և հիմա կը տեսնեմ : Նորէն
ըսին անոր , Ի՞նչ ըրաւ քեզի . քու աչքերդ ին-
27 տո՞ր բացաւ : Պատասխան տուաւ անոնց , Հի-
մա ըսի ձեզի ու չլսեցիք . ինչո՞ւ համար նորէն
լսել կ'ուզէք . միթէ դո՞ւք ալ կ'ուզէք անոր
28 աշակերտ ըլլալ : Անոնք նախատելով զանիկայ
ըսին , Դուն ես անոր աշակերտը . իսկ մենք
29 Մովսէսին աշակերտներն ենք : Մենք գիտենք
որ Աստուած Մովսէսին հետ խօսեցաւ , հ բայց
30 ասիկայ չենք գիտեր թէ ուսկից է : Պատասխան
տուաւ մարդը և ըսաւ անոնց , ձ Ասիկայ է զարմա-
նալու բանը՝ որ դուք չէք գիտեր թէ ուսկից է , և
31 անիկայ իմ աչքերս բացաւ : Գիտենք որ ղ Աս-
տուած մեղաւորներուն մտիկ չըներ , բայց թէ որ
մէկը աստուածապաշտ ըլլայ , ու անոր կամքը
32 կատարէ , անոր մտիկ կ'ընէ : Աշխարհիս սկիզբէն
'ի վեր լսուած չէ որ մարդ մը կոյր ծնածի մը աչ-
33 քերը բացած է : ճ Թէ որ Աստուծմէ չըլլար ան
34 մարդը՝ բան մըն ալ չէր կրնար ընել : Պատաս-
խան տուին և ըսին անոր , մ Դուն բոլորովին մե-
ղաց մէջ ծնած ես , ու մեզի վարդապետութի՞ւն
կ'ընես . և դուրս ըրին անիկայ :
35 Յիսուս լսեց որ զանիկայ դուրս ըրին , ու երբոր
գտաւ զանիկայ՝ ըսաւ անոր , Դուն կը հաւատա՞ս
36 յ Աստուծոյ Որդիին : Անիկայ պատասխան տուաւ
37 ու ըսաւ , Տէ՛ր՝ ո՞վ է որ հաւատամ անոր : Ու
Յիսուս ըսաւ անոր , Տեսար ալ անիկայ , ն և քե-
38 զի հետ խօսողը ան է : Անիկայ ալ ըսաւ , Կը

հ Գլ. ը. 14 ։
ձ Գլ. գ. 10 ։
ղ Յոբ. իէ. 9 ։ լե. 12 ։ Սաղ. ժը. 41 ։ լդ. 15 ։ կզ. 18 ։ Առակ. ա. 28 ։ ժե. 29 ։ իը. 9 ։ Եսա. ա. 15 ։ Երեմ. ժա. 11 ։ ժդ. 12 ։ Եզեկ. ը. 18 ։ Միք. գ. 4 ։ Զաք. է. 13 ։
ճ Հմր 16 ։
մ Հմր 2 ։
յ Մատ. ժդ. 33 ։ ժզ. 16 ։ Մար. ա. 1 ։ Գլ. ժ. 36 ։ ա Յով. ե. 13 ։
ն Գլ. դ. 26 ։

հաւատամ՝ Տէր . ու անոր երկրպագութիւն ըրաւ ։
39 Ու Յիսուս ըսաւ , ա Ես դատաստանի համար եկայ
աս աշխարհս , բ որ չտեսնողները տեսնեն և տես–
նողները կուրանան ։
40 Ու փարիսեցիներէն ոմանք որ իր հետն էին , աս
բաները լսելով՝ գ ըսին իրեն , Միթէ մե՞նք ալ
41 կոյր ենք ։ Յիսուս ըսաւ անոնց , դ Թէ որ կոյր
ըլլայիք , դուք մեղք չէիք ունենար . բայց հիմա
կ'ըսէք թէ Կը տեսնենք , ասոր համար ձեր մեղքը
ձեր վրայ կը մնայ ։

ԳԼ . Ժ

1 Քրիստոս է կենաց դուռը և բարի հովիւը ։ 19 Հրէից տար–
բեր կարծիքները անոր վրայով ։ 24 Յիսուս իր գործքերովը
կը ցուցնէ թէ ինքն է Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին ։ 39
Հրէից ձեռքէն կը փախչի , 40 և դարձեալ կ'երթայ Յորդա–
նանու միւս կողմը , ուր շատերը կը հաւատան իրեն ։

1 Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Ան որ դռնէն
չմտներ ոչխարներուն բակը , հապա ուրիշ
2 տեղէն կ'ելլէ , անիկայ գող ու աւազակ է ։ Բայց
ան որ դռնէն կը մտնէ , անիկայ ոչխարներուն հո–
3 վիւն է ։ Դռնապանը կը բանայ անոր , և ոչխար–
ները անոր ձայնին կը լսեն , ու իր ոչխարները
անունովին կը կանչէ , և դուրս կը հանէ զանոնք ։
4 Ու երբոր իր ոչխարները կը հանէ , անոնց առջևէն
կ'երթայ , ու ոչխարները իր ետևէն կ'երթան ,
5 ինչու որ անոր ձայնը կը ճանչնան ։ Սակայն օտա–
րի ետևէ չեն երթար . հապա անկէ կը փախչին ,
ինչու որ օտարներուն ձայնը չեն ճանչնար ։
6 Յիսուս աս առակը ըսաւ անոնց , բայց անոնք
7 չէին իմանար թէ ինչ էր որ իրենց կը խօսէր ։ Ու
Յիսուս նորէն ըսաւ անոնց , Ճշմարիտ ճշմարիտ
8 կ'ըսեմ ձեզի , Ես եմ ոչխարներուն դուռը ։ Ամէն
անոնք որ ինձմէ առաջ եկան , գող ու աւազակ

ա Գլ . ե . 22 , 27 ։ Տես գլ . գ . 17 ։ ժբ . 47 ։
բ Մատ . ժգ . 13 ։
գ Հռով . բ . 19 ։
դ Գլ . ժե . 22 , 24 ։

9 էին , բայց անոնց չլսեցին ոչխարները ։ ա Ես եմ
դուռը . թէ որ մէկը ինձմէ ներս մտնէ՝ պիտի
փրկուի , ու պիտի մտնէ ու ելլէ և արօտ գտնէ ։
10 Գողը չգար , միայն թէ գողնալու և սպաննելու
ու կորսնցնելու համար . ես եկայ որ կեանք ունե–
11 նան , և ալ աւելի ունենան ։ բ Ես եմ բարի
հովիւը . բարի հովիւը իր կեանքը ոչխարներուն
12 համար կը դնէ ։ Բայց վարձկանը որ հովիւ չէ
ու ոչխարները իրը չեն , երբոր կը տեսնէ գայլը
որ կու գայ , գ կը թողու ոչխարները ու կը փախ–
չի . և գայլը կը յափշտակէ ոչխարները , ու
13 զանոնք կը ցրուէ ։ Ու վարձկանը կը փախչի ,
ինչու որ վարձկան է . ու իր հոգը չէ ոչխարնե–
14 րուն համար ։ Ես եմ բարի հովիւը , դ և կը
ճանչնամ իմիններս ու կը ճանչցուիմ իմիննե–
15 րէս ։ ե Ինչպէս որ Հայրը զիս կը ճանչնայ , ես
ալ Հայրը կը ճանչնամ , զ ու իմ կեանքս ոչխար–
16 ներուն համար կը դնեմ ։ է Ուրիշ ոչխարներ ալ
ունիմ , որոնք աս բակէն չեն . անոնք ալ պէտք է
որ բերեմ , ու իմ ձայնիս պիտի լսեն , ը և պիտի
17 ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ ։ Անոր համար
Հայրը զիս կը սիրէ , թ որ ես իմ կեանքս կը դնեմ ,
18 որ նորէն առնեմ անիկայ ։ Մէկը չհաներ անիկայ
ինձմէ , հապա ես կը դնեմ անիկայ ինքիրմէս . իշ–
խանութիւն ունիմ անիկայ դնելու , ժ և իշխանու–
թիւն ունիմ անիկայ նորէն առնելու . ի Աս պա–
տուէրը իմ Հօրմէս առի ։
19 լ Նորէն երկպառակութիւն կ'ըլլար Հրէից մէջ

ա Գլ . ժդ . 6 ։ Եփես . բ . 18 ։
բ Ես . խ . 11 ։ Եզեկ . լդ . 12 , 23 ։ լէ . 24 ։ Եբր . ժգ . 20 ։ ա Պետ . բ . 25 ։ ե . 4 ։
գ Զաք . ժա . 16 , 17 ։
դ բ Տիմ . բ . 19 ։
ե Մատ . ժա . 27 ։
զ Գլ . ժե . 13 ։
է Ես . ծզ . 8 ։
ը Եզեկ . լէ . 22 ։ Եփես . բ . 14 ։ ա Պետ . բ . 25 ։
թ Ես . ծգ . 7 , 8 , 12 ։ Եբր . բ . 9 ։
ժ Գլ . բ . 19 ։
ի Գլ . զ . 38 ։ ժե . 10 ։ Գործ . բ . 24 , 32 ։
լ Գլ . է . 43 ։ թ . 16 ։

20 աս խօսքերուն համար ։ Եւ անոնցմէ շատերը կ'ը-
սէին , [ե]Դեւ կայ ատոր ներսի դին ու խելըռած է ,
21 ինչո՞ւ ատոր մտիկ կ'ընէք ։ Ուրիշները կ'ըսէին ,
Աս խօսքերը դիւահարի խօսքեր չեն ․ միթէ [զ]դեւը
կրնա՞յ [է]կոյրերուն աչքերը բանալ ։
22 Այն ատենը Երուսաղէմ նաւակատիքի տօնը ե-
23 ղաւ , ու ձմեռ էր ։ Եւ Յիսուս կը պտըտէր տա-
24 ճարին մէջ [ը]Սողոմոնին սրահը ։ Եւ Հրեաները
անոր չորս կողմը առին ու ըսին անոր , Մինչեւ
ե՞րբ մեզ տարակուսանաց մէջ կը թողուս ․ թէ
որ Քրիստոսը դուն ես , մեզի համարձակ ըսէ ։
25 Յիսուս պատասխան տուաւ անոնց , Ձեզի ըսի ու
չէք հաւատար ․ [թ]այն գործքերը որ ես իմ Հօրս
անունովը կը գործեմ , անոնք կը վկայեն ինծի հա-
26 մար ։ [ժ]Բայց դուք չէք հաւատար , ինչու որ իմ
27 ոչխարներէս չէք , *ինտոր որ ձեզի ըսի" ։ [ի]Իմ
ոչխարներս իմ ձայնիս կը լսեն , ես ալ անոնք կը
28 ճանչնամ , ու իմ ետեւէս կու գան ․ Եւ ես ա-
նոնց յաւիտենական կեանք կու տամ , [լ]ու յաւի-
տեան պիտի չկորսուին , ու մէկը իմ ձեռքէս պիտի
29 չյափշտակէ զանոնք ։ [խ]Իմ Հայրս [ծ]որ անոնք ին-
ծի տուաւ , ամենէն մեծ է ․ ու մէկը չկրնար իմ
30 Հօրս ձեռքէն յափշտակել ։ [կ]Ես ու Հայրը մէկ
ենք ։
31 Այն ատենը [հ]Հրեաները նորէն քարեր վերցու-
32 ցին , որ անիկայ քարկոծեն ։ Յիսուս պատասխան
տուաւ անոնց , Շատ բարի գործքեր ցուցուցի
ձեզի իմ Հօրմէս , անոնցմէ ո՞ր գործին համար

ե Գլ․ է․ 20 ; ը․ 48, 52 ;
զ Ել․ դ․ 11 ; Սաղ․ ղգ․ 9 ; ճխզ․ 8 ;
է Գլ․ թ․ 6, 7, 32, 33 ;
ը Գործ․ գ․ 11 ; ե․ 12 ;
թ Հմր 38 ; Գլ․ գ․ 2 ; ե․ 36 ;
ժ Գլ․ ը․ 47 ; ա Յոհ․ դ․ 6 ;
* Ոմանք չունին ;
ի Հմր 4, 14 ;
լ Գլ․ զ․ 37 ; ժէ․ 11, 12 ; ժը․ 9 ;
խ Գլ․ ժդ․ 28 ;
ծ Գլ․ ժէ․ 2, 6, [illegible] ;
կ Գլ․ ժէ․ 11, 22 ;
հ Գլ․ ը․ 59 ;

33 զիս կը քարկոծէք ։ Հրեաները պատասխան տուին
անոր՝ ըսելով , Բարի գործի համար քեզ չենք
քարկոծեր , հապա հայհոյութեան համար , ու
քանզի դուն որ մարդ ես , [ձ]ինքզինքդ Աստուած
34 կ'ընես ։ Յիսուս պատասխան տուաւ անոնց ․
[ղ]Չէ՞ որ ձեր օրէնքին մէջը գրուած է , Ես ըսի
35 թէ դուք աստուածներ էք ։ Թէ որ աստուածներ
կ'անուանէ զանոնք , [ճ]որոնց որ Աստուծոյ խօսքը
եղաւ , (ու կարելի չէ որ ան գրուածը աւրուի ,)
36 [մ]Հապա ան որ Հայրը սրբեց [յ]ու աշխարհք խըր-
կեց , դուք անոր կ'ըսէ՞ք թէ Հայհոյութիւն
կ'ընես , [ն]Աստուծոյ Որդի եմ [շ]ըսելուս համար ։
37 [ո]Թէ որ իմ Հօրս գործքերը չեմ գործեր , ինծի
38 մի հաւատաք ․ Հապա թէ որ կը գործեմ , թէեւ
ինծի չէք հաւատար , [չ]գործքերուն հաւա-
տացէք , որ գիտնաք ու հաւատաք [պ]թէ Հայրը իմ
մէջս է , ու ես անոր մէջ ։
39 [ջ]Դարձեալ կը փնտռէին զանիկայ բռնել , ու
40 անոնց ձեռքէն ելաւ ․ Ու նորէն գնաց Յորդանա-
նու անդին կողմը՝ ան տեղը , [ռ]ուր որ Յովհաննէս
41 առաջուց կը մկրտէր , ու հոն կեցաւ ։ Եւ շատերը
եկան անոր ու կ'ըսէին , Իրաւ Յովհաննէս մէկ
42 հրաշք մը չըրաւ ․ [ս]Բայց ինչ որ Յովհաննէս ը-
սաւ անոր համար , ամէնը ճշմարիտ էր ․ [վ]Ու շատ
մարդիկ հոն անոր հաւատացին ։

ձ Գլ․ ե․ 18 ;
ղ Սաղ․ ձբ․ 6 ;
ճ Հռով․ ժգ․ 1 ;
մ Գլ․ զ․ 27 ;
յ Գլ․ գ․ 17 ; ե․ 36, 37 ; ը․ 42 ;
ն Ղուկ․ ա․ 35 ; Գլ․ թ․ 35, 37 ;
շ Գլ․ ե․ 17, 18 ; Հմր 30 ;
ո Գլ․ ժե․ 24 ;
չ Գլ․ ե․ 36 ; ժդ․ 10—12 ;
պ Գլ․ ժդ․ 10, 11 ; ժէ․ 21 ;
ջ Գլ․ է․ 30, 44 ; ը․ 59 ;
ռ Գլ․ ա․ 28 ;
ս Գլ․ գ․ 30 ;
վ Գլ․ ը․ 30 ; ժա․ 45 ;

ԳԼ․ ԺԱ

1 Քրիստոս կը յարուցանէ չորս օրուան մեռած Ղազարոսը ; 45 Շատ Հրեաներ կը հաւատան ; 47 Քահանայապետները ու փարիսեցիք ժողով կ'ընեն Քրիստոսի դէմ ; 49 Կայիափային

մարգարէութիւնը ։ 54 Յիսուս իր անձը կը թագուցանէ ։ 55 Զատկի տօնին կը փնտռեն զանիկայ, և պատուէր կու տան բռնելու ։

1 Ու ա Մարիամին և անոր քրոջը Մարթային գիւ-
ղէն՝ Բեթանիայէն Ղազարոս անունով մէկը
2 հիւանդ էր ։ բ Նոյն այն Մարիամն էր, որ Տէրը
եղով օծեց, ու անոր ոտքերը իր մազերովը սրբեց,
3 որուն եղբայրը Ղազարոս հիւանդ էր ։ Ուստի իր
քոյրերը մարդ խրկեցին անոր ու ըսին, Տէ՛ր, ահա
4 անիկայ որ դուն կը սիրես, հիւանդ է ։ Յիսուս
երբոր լսեց, ըսաւ, Այս հիւանդութիւնը մահուան
համար չէ, գ հապա Աստուծոյ փառացը համար,
5 որ Աստուծոյ Որդին անով փառաւորուի ։ Եւ
Յիսուս կը սիրէր Մարթան և անոր քոյրը ու
6 Ղազարոսը ։ Իսկ երբոր լսեց թէ հիւանդ է, ե-
7 ղած տեղը դ երկու օր ալ կեցաւ ։ Ու անկէ ետքը
ըսաւ աշակերտներուն, Եկէ՛ք նորէն Հրէաստան
8 երթանք ։ Աշակերտները իրեն ըսին, Ռաբբի՛
ե Հրեաները հիմա քեզ կը փնտռէին քարկոծե-
9 լու, ու նորէն հո՞ն կ'երթաս ։ Պատասխան
տուաւ Յիսուս, Չէ՞ որ օրը տասուերկու ժամ
է ։ զ Թէ որ մէկը ցորեկը քալէ, չսահիր, ինչու
10 որ աս աշխարհիս լոյսը կը տեսնէ ։ է Բայց թէ որ
մէկը գիշերը քալէ, կը սահի, ինչու որ իր հե-
11 տը լոյս չկայ ։ Այս բաները ըսելէն ետև ըսաւ ա-
նոնց, Ղազարոս մեր բարեկամը ը քնացած է,
12 բայց կ'երթամ որ անիկայ արթնցնեմ ։ Իր ա-
շակերտները ըսին, Տէ՛ր, թէ որ քնացած է, պի-
13 տի առողջանայ ։ Իսկ Յիսուս անոր մեռնելուն
համար կ'ըսէր, բայց անոնք կը կարծէին թէ քուն

ա Ղու. ժ. 38, 39 ։
բ Մատ. իզ. 7 ։ Մար. ժդ. 3 ։ Գլ. ժբ. 3 ։
գ Գլ. թ. 3 ։ Հմր 40 ։
դ Գլ. ժ. 40 ։
ե Գլ. ժ. 31 ։
զ Գլ. թ. 4 ։
է Գլ. ժբ. 35 ։
ը Բ Օր. լա. 16 ։ Դան. ժբ. 2 ։ Մատ. թ. 24 ։ Գործ. է. 59 ։ ա Կոր. ժե. 18, 51 ։

14 քնանալուն համար կ'ըսէր ։ Այն ատենը Յիսուս
15 յայտնապէս ըսաւ անոնց, Ղազարոս մեռաւ ։ Ու
ես ուրախ եմ ձեզի համար որ հոն չէի, որ դուք
16 հաւատաք ։ բայց եկէ՛ք երթանք անոր ։ Թովմաս
որ Երկուորեակ կ'ըսուէր, ըսաւ իր աշակերտա-
կիցներուն, Մենք ալ երթանք՝ որ անոր հետ
մեռնինք ։
17 Յիսուս երբոր եկաւ, գտաւ որ անիկայ արդէն
18 չորս օրուան գերեզմանը դրուած էր ։ Ու Բե-
թանիա Երուսաղէմին մօտ էր՝ տասնուհինգ աս-
19 պարէզի չափ ։ Ու Հրեաներէն շատերը Մար-
թային ու Մարիամին եկած էին որ մխիթարեն
20 զանոնք իրենց եղբօրը համար ։ Երբ երբոր լսեց
Մարթա թէ Յիսուս կու գայ, զանիկայ դիմաւորե-
լու գնաց, բայց Մարիամ տանը մէջ նստեր էր ։
21 Ու Մարթա ըսաւ Յիսուսին, Տէ՛ր, թէ որ հոս
22 ըլլայիր, իմ եղբայրս չէր մեռներ ։ Բայց գիտեմ
որ հիմա ալ ը դուն ինչ որ խնդրես Աստուծմէ,
23 Աստուած պիտի տայ քեզի ։ Յիսուս ըսաւ անոր,
24 Քու եղբայրդ յարութիւն պիտի առնէ ։ Մար-
թա ըսաւ անոր, թ Գիտեմ որ յարութեան ժա-
մանակը՝ վերջին օրը յարութիւն պիտի առնէ ։
25 Յիսուս ըսաւ անոր ։ Ես եմ ժ յարութիւնը և
ի կեանքը ։ ի ան որ ինծի կը հաւատայ, թէև
26 մեռնի՝ պիտի ապրի, Ու ան ամէնը որ կենդանի
է ու ինծի կը հաւատայ, յաւիտեան պիտի չմեռ-
27 նի ։ դուն կը հաւատա՞ս ասոր ։ Ըսաւ անոր,
Այո՛ Տէր՝ լ ես հաւատացեր եմ որ դուն ես
Քրիստոսը Աստուծոյ Որդին, որ աշխարհք գալու
28 էիր ։ Ու երբոր աս ըսաւ, գնաց իր քոյրը Մա-
րիամը գաղտուկ մը կանչեց՝ ըսելով, Վարդա-

ը Գլ. թ. 31 ։
թ Ղու. ժդ. 14 ։ Գլ. ե. 29 ։
ժ Գլ. ե. 21 ։ զ. 39, 40, 44 ։
ի Գլ. ա. 4 ։ զ. 35 ։ ժդ. 6 ։ Կող. գ. 4 ։ ա Յոհ. ա. 1, 2 ։ ե. 11 ։
լ Գլ. զ. 36 ։ ա Յոհ. ե. 10, 13 ։
խ Մատ. ժզ. 16 ։ Գլ. զ. 42 ։ զ. 14, 70 ։

29 պէտը եկեր է ու քեզ կը կանչէ : Անիկայ լսա-
30 ծին պէս՝ շուտ մը ելաւ ու եկաւ անոր : Իսկ Յի-
սուս դեռ գեղը եկած չէր , հապա ան տեղն էր ,
31 ուր որ Մարթա զանիկայ դիմաւորեց : [է] Բայց
Հրեաները որ անոր հետ տանը մէջն էին ու կը
մխիթարէին զանիկայ , երբոր տեսան որ Մարիամ
շուտ մը ելաւ ու գնաց , իրենք ալ անոր ետեւէն
գացին , ըսելով թէ Գերեզմանը կ'երթայ որ հոն
32 տեղը լայ : Իսկ Մարիամ երբոր Յիսուսին եղած
տեղը եկաւ , ու զանիկայ տեսաւ , անոր ոտքը իյ-
նալով ըսաւ անոր , [ը] Տէ՛ր թէ որ հոս ըլլայիր ,
33 իմ եղբայրս չէր մեռներ : Յիսուս երբոր տեսաւ
զանիկայ որ կու լար , և անոր հետ եկող Հրեանե-
րը որ կու լային , իր հոգւոյն մէջ հառաչեց ու
34 խռովեցաւ , Ու ըսաւ , Ո՞ւր դրած էք զանիկայ .
35 ըսին իրեն , Տէ՛ր եկո՛ւր ու տես : [թ] Յիսուս լա-
36 ցաւ : Ուստի Հրեաները կ'ըսէին , Նայեցէ՛ք
37 ո՛րչափ կը սիրէր զանիկայ : Անոնցմէ ոմանք ալ
կ'ըսէին , Անիկայ [ժ] որ կոյրին աչքերը բացաւ ,
38 չէ՞ր կրնար ընել որ աս ալ չմեռնէր : Յիսուս
նորէն իր ոգւոյն մէջ հառաչելով՝ գերեզմանը կու
գայ . և անիկայ քարայր մըն էր , ու անոր վրայ
39 քար մը դրուած էր : Յիսուս ըսաւ , Մէկդի՛
ըրէք աս քարը . մեռելին քոյրը Մարթան ըսաւ
անոր , Տէ՛ր արդէն հոտած պիտի ըլլայ , ինչու որ
40 չորս օրուան է : Ըսաւ անոր Յիսուս , Քեզի
չըսի՞ որ եթէ հաւատաս , [ի] Աստուծոյ փառքը
41 պիտի տեսնես : Ան ատենը մէկդի ըրին քարը .
և Յիսուս իր աչքերը վեր վերցուց ու ըսաւ ,
Հա՛յր՝ շնորհակալ եմ քեզմէ , որ ինծի լսեցիր :
42 Ու ես գիտէի որ ամէն ատեն ինծի կը լսես . [լ] բայց
աս բոլորտիքս կայնող ժողովուրդին համար ըսի ,

է Հմր 19 ։
ը Հմր 21 ։
թ Ղու . ժթ . 41 ։
ժ Գւ . թ . 6 ։
ի Հմր 4 , 23 ։
լ Գւ . ժբ . 30 ։

43 որ հաւատան թէ դուն ղրկեցիր զիս : Ու աս
ըսելէն ետքը , մեծ ձայնով մը կանչեց , Ղազարոս
44 դո՛ւրս եկուր : Մեռելն ալ ելաւ ոտքերը ու ձեռ-
քերը պատանքով կապած , [խ] և երեսը վարշամակով
պատած . Յիսուս ըսաւ անոնց , Արձըկեցէ՛ք զանի-
կայ ու թողէ՛ք որ երթայ :
45 Ու Հրեաներէն շատերը որ Մարիամին եկեր
էին , [ծ] երբոր Յիսուսին ըրածը տեսան , հաւատա-
46 ցին իրեն : Բայց անոնցմէ ոմանք գացին փարիսե-
ցիներուն , ու Յիսուսին ըրածը անոնց պատմե-
ցին :
47 Ուստի [կ] քահանայապետները և փարիսեցիները
ժողով գումարեցին ու ըսին , [հ] Ի՞նչ ընենք ,
48 քանզի աս մարդը շատ հրաշքներ կ'ընէ : Թէ որ
զանիկայ ասանկ թող տանք , ամէնքն ալ անոր պի-
տի հաւատան , և Հռոմայեցիք պիտի գան ու
49 մեր տեղը ու ազգը պիտի վերցընեն : Ու անոնց-
մէ մէկը [ձ] Կայիափա անունով՝ որ ան տարւոյն քա-
հանայապետն էր , ըսաւ անոնց , Դուք բան մը
50 չէք գիտեր , [ղ] Ու չէք ալ խորհիր թէ աղէկ է
մեզի որ մէկ մարդ մը ժողովուրդին համար մեռնի ,
51 ու բոլոր ազգը չկորսուի : Բայց աս բանը չէ թէ
ինքիրմէն զրուցեց , հապա ան տարուան քահանա-
յապետը ըլլալով , մարգարէացաւ թէ Յիսուս
52 ազգին համար պիտի մեռնէր . [ճ] Ու չէ թէ մինակ
ազգին համար , [մ] հապա որ Աստուծոյ ցիրուցան
եղած որդիներն ալ մէկտեղ ժողվէ :
53 Ալ ան օրէն ետև խորհուրդ ըրին որ սպաննեն
54 զանիկայ : [յ] Ուստի Յիսուս անկէ ետքը համար-

խ Գւ . ի . 7 ։
ծ Գւ . բ . 23 ։ ժ . 42 ։ ժբ . 11 , 18 ։
կ Սաղ . բ . 2 ։ Մատ . իզ . 3 ։ Մար . ժդ . 1 ։ Ղու . իբ . 2 ։
հ Գւ . ժբ . 19 ։ Գոր . դ . 16 ։
ձ Ղու . գ . 2 ։ Գւ . ժը . 14 ։ Գոր . դ . 6 ։
ղ Գւ . ժը . 14 ։
ճ Եսա . խթ . 6 ։ Ա Յօհ . բ . 2 ։
մ Գւ . ժ . 16 ։ Եփե . բ . 14 , 15 , 16 , 17 ։
յ Գւ . դ . 1 , 3 ։ է . 1 ։

ձակ չէր պտըտեր Հրէից մէջ , հապա անկէ անապատին մօտ տեղ մը գնաց . մէկ քաղաք մը՝ որուն անունը Եփրայիմ էր , ու իր աշակերտներուն հետ մէկտեղ հոն կը կենար ։
55 ⊤Նաև Հրէից զատիկը մօտ էր , ու ան տեղէն շատ մարդիկ զատիկէն առաջ Երուսաղէմ ելան որ
56 ինքզինքնին մաքրեն . Նաև ⊦կը փնտռէին Յիսուսը , ու տաճարին մէջ կեցած ատեննին իրարու կ'ըսէին , Ձեզի ի՞նչպէս կ'երևնայ , թէ տօնին ընաւ պիտի չգա՞յ ։ Իսկ քահանայապետները ու փարիսեցիները պատուէր տուեր էին , որ եթէ մէկը գիտնայ անոր ո՛ւր ըլլալը՝ իմացընէ , որ անիկայ բռնեն ։

ԳԼ. ԺԲ

1 Յիսուս կը գովէ Մարիամը՝ որ իր ոտքը օծեց ։ 9 Ժողովուրդը կու գայ Ղազարոսը տեսնելու ։ 10 Քահանայապետները խորհուրդ կ'ընեն զանիկայ սպաննելու ։ 12 Քրիստոս իշու վրայ հեծած՝ Երուսաղէմ կը մտնէ ։ 20 Քանի մը Յոյներ կը ցանկան զինքը տեսնելու ։ 23 Քրիստոս իր մահը կը նախաձայնէ ։ 37 Հրէից կուրութիւնը ։ 42 Իշխաններէն շատերը կը հաւատան Յիսուսին , բայց փարիսեցիներէն վախնալով՝ զանիկայ յայտնի չեն դաւանիր ։

1 Իսկ Յիսուս զատիկէն վեց օր առաջ Բեթանիա
եկաւ , ⊤ուր էր Ղազարոս , մեռեալը , որն որ
2 Յիսուս մեռելներէն յարոյց ։ ⊢Նաև հոն անոր
ընթրիք մը ըրին . ու Մարթա սպասաւորութիւն
կ'ընէր , և Ղազարոս անոր հետ սեղան նստողնե-
3 րուն մէկն էր ։ Իսկ ‡Մարիամ մէկ լիտր նարդոսի
պատուական մեծագին եղ առնելով , Յիսուսի
ոտքերը օծեց , ու իր մազերովը անոր ոտքերը
սրբեց . և տունը եղին անուշահոտութեամբը լեցուե-
4 ցաւ . Ան ատենը աշակերտներուն մէկը Իսկարի-
ովտացի Սիմոնեան Յուդան՝ որ զանիկայ պիտի
5 մատնէր , ըսաւ , Ինչո՞ւ համար աս եղը չծախուե-

⊥ Տե՛ս Բ Մն. ժգ. 19 ։
⊤ Գղ. բ. 13 ։ ե. 1 ։ զ. 4 ։
⊦ Հմր 8 ։

⊤ Գղ. ժա. 1 , 43 ։
⊢ Մատ. իզ. 3 ։ Մար. ժդ. 3 ։
‡ Ղու. ժ. 38 , 39 ։ Գղ. ժա. 2 ։

ցաւ իրեք հարիւր դահեկանի , որ աղքատներուն
6 տրուէր ։ Ասիկա ըսաւ , չէ թէ աղքատներուն համար
իր հոգն էր , հապա որ գող էր , ⊤ու գանձանակը
ինքը կը պահէր , և ինչ որ ձգուէր՝ ինքը կը
7 կրէր ։ Իսկ Յիսուս ըսաւ , Թո՛ղ տուր ատոր .
ատ բանը իմ պատանքուելուս օրուանը համար
8 պահեց ։ ⊢Վասն զի աղքատները ամէն ատեն ձեր
հետը ունիք , բայց զիս ամէն ատեն չունիք ։
9 Ուստի Հրէաներէն շատ ժողովուրդ անոր հոն
ըլլալը իմացան , ու եկան , չէ թէ միայն Յիսուսի
համար , հապա որ Ղազարոսն ալ տեսնեն , ⊓որն
10 որ մեռելներէն յարոյց ։ ⊦Իսկ քահանայապետ-
ները խորհուրդ ըրին որ Ղազարոսն ալ մեռցընեն .
11 ⊏Ինչու որ Հրէաներէն շատերը անոր պատճառովը
կ'երթային ու կը հաւատային Յիսուսին ։
12 ⊩Հետևեալ օրը շատ ժողովուրդ որ տօնին
եկած էին , երբոր լսեցին թէ Յիսուս Երուսաղէմ
13 կու գայ , Արմաւենիի ոստեր առին ու ելան զա-
նիկայ դիմաւորելու , և կ'աղաղակէին , ⊥Ովսաննա՝
օրհնեալ է Իսրայէլի թագաւորը՝ որ Տէրոջը անուա-
14 նովը կու գայ ։ Նաև ‡Յիսուս աւանակ մը գտնելով՝
15 անոր վրայ նստաւ , ինչպէս որ գրուած է , ∟Մի՛
վախնար դու Սիոնի աղջիկ . ահա քու Թագաւորդ
16 կու գայ իշու աւանակի վրայ նստած ։ ⊧Նաև անոր
աշակերտները առաջ չիմացան աս բաները . ⊥բայց
երբոր Յիսուս փառաւորուեցաւ , ⌊ան ատենը միտ-
քերնին բերին , թէ աս բաները անոր համար
գրուած էր , և թէ իրե՛նք աս բաները ըրին անոր ։
17 Ϟ Նաև իր հետը եղող ժողովուրդը վկայութիւն կու

⊤ Գղ. ժգ. 29 ։
⊢ Մատ. իզ. 11 ։ Մար. ժդ. 7 ։
⊓ Գղ. ժա. 43 , 44 ։
⊦ Ղու. ժզ. 31 ։
⊏ Գղ. ժա. 45 ։ Հմր 18 ։
⊩ Մատ. իա. 8 ։ Մար. ժա. 8 ։ Ղու. ժթ. 35 , 36 , ևն ։

⊥ Սաղ. ճժը. 25 , 26 ։
‡ Մատ. իա. 7 ։
∟ Զաք. թ. 9 ։
⊧ Ղու. ժը. 34 ։
⊥ Գղ. ե. 39 ։
⌊ Գղ. ժդ. 26 ։
Ϟ Հմր 11 ։

տար թէ Ղազարոսը գերեզմանէն դուրս կանչեց ,
18 ու մեռելներէն յարուց զանիկայ ։ Անոր համար ալ
ժողովուրդը զանիկայ դիմաւորեց , վասն զի լսեցին
19 թէ անիկայ աս հրաշքը ըրած էր ։ Իսկ փարիսե-
ցիները իրարու կ'ըսէին , ձ Կը տեսնէ՞ք որ օգուտ
մը չէք կրնար ընել . ահա բոլոր աշխարհ անոր
ետեւէն գնաց ։
20 Նաեւ հոն Դրանի մը Յոյներ կային ճ տօնին երկրը-
21 պագութիւն ընելու եկողներուն մէջ ։ Ասոնք Փի-
լիպպոսին եկան , մ որ Գալիլեայի Բեթսայի-
դայէն էր , և կ'աղաչէին անոր ու կ'ըսէին , Տէ՛ր
22 կ'ուզենք Յիսուսը տեսնել ։ Փիլիպպոս եկաւ ու
Անդրէասին ըսաւ , և նորէն Անդրէաս ու Փիլիպպոս
23 [illegible] Յիսուսին ըսին ։ Յիսուս ալ պատասխան
տուաւ անոնց ու ըսաւ , յ Ժամանակը հասաւ , որ
24 փառաւորուի Որդին մարդոյ ։ Ճշմարիտ ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի , ն Թէ որ ցորենին հատը հողին
25 մէջ ինկալով չմեռնի , ինքը մինակ կը մնայ . հա-
պա թէ որ մեռնի , շատ արդիւնք կը բերէ ։ շ Ան
որ իր անձը կը սիրէ , պիտի կորսնցընէ զանիկայ .
և ան որ իր անձը աս աշխարհիս մէջ կ'ատէ ,
յաւիտենական կենաց համար պիտի պահէ զանի-
26 կայ ։ Թէ որ մէկը ինծի կը ծառայէ , թող իմ
ետեւէս գայ . ո ու ես ուր որ եմ , իմ ծառաս ալ
հոն պիտի ըլլայ . թէ որ մէկը ինծի կը ծառայէ ,
27 Հայրը պիտի պատուէ զանիկայ ։ չ Հիմա իմ հո-
գիս խռոված է , և ի՞նչ ըսեմ . Հայր , զիս
ազատէ աս ժամէն . պ Բայց ես ասոր համար եկայ

ձ Գղ. ժա. 47 , 48 ։
ղ Գոր. ժէ. 4 ։
ճ Գ Թագ. ը. 41 , 42 ։ Գոր. ը. 27 ։
մ Գղ. ա. 44 ։
յ Գղ. ժգ. 32 ։ ժէ. 1 ։
ն Ա Կոր. ժե. 36 ։
շ Մատ. ժ. 39 ։ ժզ. 25 ։ Մար. ը. 35 ։ Ղու. թ. 24 ։ ժէ. 33 ։
ո Գղ. ժդ. 3 ։ ժէ. 24 ։ Ա Թես. դ. 16 ։
չ Մատ. իզ. 38 , 39 ։ Ղու. ժբ. 50 ։ Գղ. ժգ. 21 ։
պ Ղու. իբ. 53 ։ Գղ. ժը. 37 ։

28 աս ժամին ։ Հայր՝ փառաւորէ քու անունդ .
ջ Ան ատենը ձայն մը եկաւ երկինքէն , Փառաւո-
29 րեցի ալ , ու նորէն պիտի փառաւորեմ ։ Նաեւ
ժողովուրդը որ կայներ էր ու կը լսէր , կ'ըսէին՝
Որոտում կ'ըլլայ . ոմանք ալ կ'ըսէին՝ Հրեշտակ
30 խօսեցաւ իրեն հետ ։ Յիսուս պատասխան
տուաւ ու ըսաւ , ռ Աս ձայնը ինծի համար չե-
31 կաւ , հապա ձեզի համար ։ Հիմա է աս աշ-
խարհիս դատաստանը , հիմա աս աշխարհիս ս իշ-
32 խանը դուրս պիտի ձգուի ։ վ Ես ալ երբոր երկ-
րէն բարձրանամ , տ ամէնն ալ ինծի պիտի քա-
33 շեմ ։ ր Աս բանս կը զրուցէր՝ իմացընելով թէ
34 ինչ կերպ մահով պիտի մեռնէր ։ Ժողովուրդը
անոր պատասխանեց , ց Մենք օրէնքէն լսեցինք որ
Քրիստոսը յաւիտեան կը մնայ , և դուն ինչո՞ւ
կ'ըսես թէ պէտք է Որդին մարդոյ բարձրանայ .
35 ո՞վ է աս Որդին մարդոյ ։ Նաեւ Յիսուս անոնց
ըսաւ , Քիչ մը ատեն ալ ւ լոյսը ձեր հետ է .
փ Քանի որ լոյսը ունիք՝ քալեցէք , որ չըլլայ թէ
մութը ձեր վրայ հասնի . ք ինչու որ խաւարի մէջ
36 քալողը չգիտեր թէ ուր կ'երթայ ։ Քանի որ լոյսը
ունիք , հաւատացէք ան լոյսին՝ օ որ լուսոյ որդիք
ըլլաք . Յիսուս աս բաները զրուցեց , ու գնաց
ֆ պահուեցաւ անոնցմէ ։
37 Նաեւ թէպէտ այնքան հրաշքներ ըրած էր անոնց
38 առջեւը , բայց անոնք չէին հաւատար իրեն . Որ

ջ Մատ. գ. 17 ։
ռ Գղ. ժա. 42 ։
ս Մատ. ժբ. 29 ։ Ղու. ժ. 18 ։ Գղ. ժդ. 30 ։ ժզ. 11 ։ Գոր. իզ. 18 ։ Բ Կոր. դ. 4 ։ Եփես. բ. 2 ։ զ. 12 ։
վ Գղ. գ. 14 ։ ը. 28 ։
տ Հռով. ե. 18 ։ Եբր. բ. 9 ։
ր Գղ. ժը. 32 ։
ց Սաղ. ձթ. 36 , 37 ։ ճժ. 4 ։ Ես. թ. 7 ։ ծգ. 8 ։ Եզեկ. լէ. 25 ։ Դան. բ. 44 ։ է. 14 , 27 ։ Միք. դ. 7 ։
ւ Գղ. ա. 9 ։ ը. 12 ։ թ. 5 ։ ժբ. 46 ։
փ Երեմ. ժգ. 16 ։ Եփես. ե. 8 ։
ք Գղ. ժա. 10 ։ Ա Յով. բ. 11 ։
օ Ղու. ժզ. 8 ։ Եփես. ե. 8 ։ Ա Թես. ե. 5 ։ Ա Յով. բ. 9 , 10 , 11 ։
ֆ Գղ. ը. 59 ։ ժա. 54 ։

կատարուի Եսայի մարգարէին խօսքը, որ ըսաւ. ա Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր տուած լուրին, և Տէ-
39 րոջը բազուկը որո՞ւ յայտնուեցաւ: Անոր համար չէին կրնար հաւատալ, որ դարձեալ կ'ըսէ Եսա-
40 յի, բ Անոնց աչքերը կուրցուց, և անոնց սիրտերը թմրեցուց, որ չըլլայ թէ աչքովնին տեսնեն ու սրտովնին իմանան և դարձի գան, ու ես անոնք
41 բժշկեմ: գ Աս խօսքը ըսաւ Եսայի երբոր տեսաւ
42 անոր փառքը, ու խօսեցաւ անոր վրայով: Այսու ամենայնիւ իշխաններէն ալ շատերը իրեն հաւատացին, դ բայց փարիսեցիներուն համար զանիկայ չէին դաւաներ, որ ժողովարանէն դուրս չձգուին.
43 ե Ինչու որ մարդոց փառքը Աստուծոյ փառքէն աւելի սիրեցին:
44 Իսկ Յիսուս կ'աղաղակէր ու կ'ըսէր, զ Ան որ ինծի կը հաւատայ՝ ինծի չհաւատար, հապա զիս
45 ղրկողին. է Ու ան որ զիս կը տեսնէ, զիս ղրկողը
46 կը տեսնէ: ը Ես լոյս եկայ աշխարհ, որ ամէն
47 ով որ ինծի հաւատայ, խաւարի մէջ չմնայ: Ու թէ որ մէկը իմ խօսքերս լսէ ու չհաւատայ, թ ես անիկայ չեմ դատեր. ժ քանզի ես չեկայ որ աշխարհը դատեմ, հապա որ աշխարհը փրկեմ:
48 ի Ան որ զիս կ'անարգէ և իմ խօսքերս չընդունիր, կայ մէկը որ զանիկայ կը դատէ. լ Ան խօսքը որ ես խօսեցայ, ան պիտի դատէ զանիկայ վերջին
49 օրը: Ինչու որ խ ես ինքիրմէս չխօսեցայ, հապա Հայրը որ զիս ղրկեց, ինքը ինծի պատուիրեց ծ ինչ որ պիտի ըսեմ՝ և ինչ որ պիտի խօսիմ:

ա Ես. ծգ. 1; Հռով. ժ. 16;
բ Ես. զ. 9, 10; Մատ. ժգ. 14;
գ Ես. զ. 1;
դ Գլ. է. 13; թ. 22;
ե Գլ. ե. 44;
զ Մար. թ. 36; Ա Պետ. ա. 21;
է Գլ. ժդ. 9;
ը Հմր 35, 36; Գլ. գ. 19; ը. 12; թ. 5, 39;
թ Գլ. ե. 45; ը. 15, 26;
ժ Գլ. գ. 17;
ի Ղու. ժ. 16;
լ Բ Օր. ժը. 19; Մար. ժզ. 16;
խ Գլ. ը. 38; ժդ. 10;
ծ Բ Օր. ժը. 18;

50 Ու գիտեմ որ անոր պատուիրածը յաւիտենական կեանք է. ուստի ինչ որ ես կը խօսիմ, ինչպէս որ Հայրը ինծի ըսաւ, անանկ կը խօսիմ:

ԳԼ. ԺԳ

1 Յիսուս իր աշակերտներուն ոտքերը կը լուայ, յորդորելով զանոնք որ խոնարհութեամբ և սիրով վարուին իրարու հետ. 18 կը նախաձայնէ Յուդային զինքը մատնելը, և մէկ նշանով մը մատնիչին ո՛վ ըլլալը կը յայտնէ Յովհաննէսին. 31 կը պատուիրէ իր աշակերտներուն մէկզմէկ սիրել, 36 և կ'իմացնէ Պետրոսին թէ պիտի ուրանայ զինքը:

1 ա Զատկի տօնէն առաջ՝ Յիսուս գիտնալով թէ բ իր ժամանակը հասեր է որ աս աշխարհէս ելլէ Հօրը քովը, սիրելով իրենները որ աշխարհի մէջ էին, մինչև վերջն ալ սիրեց զանոնք:
2 Ու ընթրիքը որ կ'ըլլար, (գ Սատանան արդէն Իսկարիովտացի Սիմոնեան Յուդային սրտին մէջը
3 դրեր էր, որ զանիկայ մատնէ.) Յիսուս գիտնալով թէ դ Հայրը ամէն բան իր ձեռքը տուաւ, ե և թէ ինքը Աստուծմէ ելաւ ու Աստուծոյ քովը
4 կ'երթայ, զ Ընթրիքէն ելաւ, և հանդերձները մէկդի դրաւ, ու զենջակ մը առնելով մէջքը
5 փաթթեց: Ետքը կոնքին մէջ ջուր լեցուց, ու սկսաւ աշակերտներուն ոտքերը լուալ, և ան իր
6 փաթթուած զենջակովը սրբել: Ուստի եկաւ Սիմոն Պետրոսին. ան ալ ըսաւ անոր, Տէ՛ր
7 է դո՞ւն իմ ոտքերս պիտի լուաս: Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Ես ինչ որ կ'ընեմ՝ դուն հիմա չես իմանար, ը հապա ետքը պի-
8 տի իմանաս: Պետրոս ըսաւ անոր, Բնաւ դուն իմ ոտքերս պիտի չլուաս. պատասխան տուաւ ա-

ա Մատ. իզ. 2;
բ Գլ. ժբ. 23; ժէ. 1, 11;
գ Ղու. իբ. 3; Հմր 27;
դ Մատ. ժա. 27; իը. 18; Գլ. գ. 35; ժէ. 2; Գոր. բ. 36; Ա Կոր. ժե. 27; Եբր. բ. 8;
ե Գլ. ը. 42; ժզ. 28;
զ Ղու. իբ. 27; Փիլ. բ. 7, 8;
է Տես Մատ. գ. 14;
ը Հմր 12;

նոր Յիսուս, ըԹէ որ քեզ չլուամ, դուն ինծի
9 հետ բաժին չունիս : Սիմոն Պետրոս ըսաւ անոր,
Տէ՛ր, չէ թէ միայն ոտքերս, հապա նաև ձեռ-
10 քերս ու գլուխս : Յիսուս ըսաւ անոր, Լուա-
ցուածին՝ ոտքերը լուալէն 'ի զատ ուրիշ բան
պէտք չէ, այլ բոլորովին մաքուր է. և թդուք
11 մաքուր էք, բայց ոչ թէ ամէնքդ : ժՎասն զի
գիտէր զանիկայ որ զինքը պիտի մատնէր. անոր
12 համար ըսաւ, Չէ թէ ամէնքդ ալ մաքուր էք : Ու
երբոր անոնց ոտքերը լուաց, և իր հանդերձները
առնելով նորէն սեղան նստաւ, ըսաւ անոնց,
13 Գիտէ՞ք ինչ ըրի ձեզի : լԴուք զիս Վարդապետ
ու Տէր կը կոչէք, և աղէկ կ'ըսէք, ինչու որ
14 այնպէս եմ : խՀապա թէ որ ես Տէրս ու վարդա-
պետս ձեր ոտքերը լուացի, ծպէտք է որ դուք ալ
15 իրարու ոտքերը լուաք : Վասն զի կձեզի մէկ օրի-
նակ մը տուի, որ ինչպէս ես ձեզի ըրի՝ դուք ալ
16 ընէք : հՃշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ծա-
ռան իր տիրոջմէն մեծ չէ, ոչ ալ խրկուածը զին-
17 քը խրկողէն մեծ է : ձԵթէ դուք աս բաները գի-
18 տէք, երանելի էք՝ թէ որ անոնք կատարէք : Չէ
թէ ձեր ամենուն համար կ'ըսեմ, վասն զի ես կը
ճանչնամ անոնք որ ես ընտրեցի, հապա որ ան
գրուածը կատարուի թէ ղԱն որ իմ հետս հաց
19 կ'ուտէր, ինծի դէմ կրունկ վերցուց : ճՀիմակ-
ուընէ կ'ըսեմ ձեզի՝ քանի որ չէ եղեր, որ երբոր

ը Գւլ. գ. 5 : ա Կոր. զ. 11 : Եփե. ե. 26 : Տիտ. գ. 5 : Եբր. ժ. 22 :
թ Գւլ. ժե. 3 :
ժ Գւլ. զ. 65 :
լ Մատ. իգ. 8, 10 : Ղու. զ. 46 : ա Կոր. ը. 6 : ժբ. 3 : Փիլ. բ. 11 :
խ Ղու. իբ. 27 :
ծ Հռովմ. ժբ. 10 : Գաղ. զ. 1, 2 : ա Պետ. ե. 5 :
կ Մատ. ժա. 29 : Փիլ. բ. 5 : ա Պետ. բ. 21 : ա Յով. բ. 6 :
հ Մատ. ժ. 24 : Ղու. զ. 40 : Գւլ. ժե. 20 :
ձ Յակ. ա. 25 :
ղ Սաղ. խա. 9 : Մատ. իզ. 23 : Հմր 21 :
ճ Գւլ. ժդ. 29 : ժզ. 4 :

20 ըլլայ՝ հաւատաք թէ ես եմ : մՃշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ա՛ն որ կ'ընդունի անի-
կայ որ ես կը խրկեմ, զիս կ'ընդունի. և ո՛վ որ
զիս կ'ընդունի, զիս խրկողը կ'ընդունի :
21 յՅիսուս երբոր աս ըսաւ, նԻր հոգիին մէջ
խռովեցաւ, և վկայեց ըսելով, Ճշմարիտ ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի, շոր ձեզմէ մէկը զիս պիտի
22 մատնէ : Ուստի աշակերտները տարակուսած իրա-
րու կը նայէին թէ որու համար կը զրուցէ :
23 ոՈւ աշակերտներէն մէկը կար Յիսուսին *քովը
24 նստած, որն որ Յիսուս կը սիրէր : Նաև Սիմոն
Պետրոս անոր աչք կ'ընէր հարցընելու թէ ո՛վ
25 պիտի ըլլայ անիկայ՝ որուն համար կը զրուցէ : Ան
ալ Յիսուսին կուրծքին վրայ ինկալով՝ ըսաւ ա-
26 նոր, Տէ՛ր, ո՞վ է ան : Յիսուս պատասխան
տուաւ, Անիկայ է՛ որուն որ պատառը թրջելով
կու տամ. և թրջելով պատառը Իսկարիով-
27 տացի Սիմոնեան Յուդային տուաւ : չՈւ պատա-
ռէն ետքը Սատանան անոր ներսը մտաւ : Նաև Յի-
սուս ըսաւ անոր, Ինչ որ պիտի ընես, շուտո՛վ
28 ըրէ : Բայց աս բանը սեղան նստողներէն մէկը
չհասկըցաւ, թէ ինչո՛ւ համար ըսաւ անոր :
29 Վասն զի ոմանք կը խորհէին թէ պորովհետև
գանձանակը Յուդան կը պահէր, Յիսուս անոր
կ'ըսէր, Ծախու առ ինչ որ մեզի աս տօնիս
պէտք է, կամ որ աղքատներուն բան մը տայ :
30 Անիկայ ալ պատառը առածին պէս շուտ մը
դուրս ելաւ, ու գիշեր էր :
31 Ու երբոր անիկայ դուրս ելաւ, Յիսուս ըսաւ,

մ Մատ. ժ. 40 : իե. 40 : Ղու. ժ. 16 :
յ Մատ. իզ. 21 : Մար. ժդ. 18 : Ղու. իբ. 21 :
ն Գւլ. ժբ. 27 :
շ Գործ. ա. 17 : ա Յով. բ. 19 :
ո Գւլ. ժթ. 26 : ի. 2 : իա. 7, 20, 24 :
* Յուն. ծոցը
չ Ղու. իբ. 3 : Գւլ. զ. 71 :
պ Գւլ. ժբ. 6 :

Ղ Հիմա փառաւորուեցաւ Որդին մարդոյ, Ճ ու
32 Աստուած փառաւորուեցաւ անով. Մ Թէ որ Աս-
տուած անով փառաւորուեցաւ, Աստուած ալ ա-
նիկայ իր անձովը պիտի փառաւորէ, Յ և շուտով
33 պիտի փառաւորէ զանիկայ։ Որդեակք՝ քիչ մը
ատեն ալ ձեզի հետ եմ. զիս պիտի փնտռէք.
Ն և ինչպէս որ Հրեաներուն ըսի թէ Ուր որ ես
կ'երթամ, դուք չէք կրնար գալ, հիմա ձեզի ալ
34 կ'ըսեմ։ Շ Նոր պատուիրան մը կու տամ ձեզի որ
մէկզմէկ սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի, որ
35 դուք ալ մէկզմէկ սիրէք։ Ո Ասով ամէնը պիտի
գիտնան թէ իմ աշակերտներս էք, թէ որ իրա-
36 րու վրայ սէր ունենաք։ Սիմոն Պետրոս ըսաւ ա-
նոր, Տէ՛ր, ո՞ւր կ'երթաս. Յիսուս պատասխան
տուաւ անոր, Ուր որ ես կ'երթամ, դուն հի-
մա չես կրնար իմ ետեւէս գալ, Չ բայց ետքը պի-
37 տի գաս իմ ետեւէս։ Պետրոս ըսաւ անոր, Տէ՛ր,
ինչո՞ւ հիմա չեմ կրնար քու ետեւէդ գալ. Պ ես իմ
38 կեանքս ալ քեզի համար պիտի դնեմ։ Յիսուս
պատասխան տուաւ անոր, Քու կեա՞նքդ պիտի
դնես ինծի համար. ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ
քեզի, հաւը պիտի չխօսի՝ մինչև որ դուն երեք
անգամ զիս ուրանաս։

Ղ Գլ. ԺԲ. 23 ։
Ճ Գլ. ԺԴ. 13 ։ Ա Պետ. Դ. 11 ։
Մ Գլ. ԺԷ. 1, 4, 5, 6 ։
Յ Գլ. ԺԲ. 23 ։
Ն Գլ. Է. 34 ։ Ը. 21 ։
Շ Ղև. ԺԹ. 18 ։ Գլ. ԺԵ. 12, 17 ։ Եփե. Ե. 2 ։ Ա Թես. Դ. 9 ։ Յակ. Բ. 8 ։ Ա Պետ. Ա. 22 ։ Ա Յօհ. Բ. 7, 8 ։ Գ. 11, 23 ։ Դ. 21 ։
Ո Ա Յօհ. Բ. 5 ։ Դ. 20 ։
Չ Գլ. ԻԱ. 18 ։ Բ Պետ. Ա. 14 ։
Պ Մատ. ԻԶ. 33, 34, 35 ։ Մար. ԺԴ. 29, 30, 31 ։ Ղուկ. ԻԲ. 33, 34 ։

ԳԼ. ԺԴ

1 Քրիստոս կը մխիթարէ իր աշակերտները՝ երկնային երջանկութեան յոյսը անոնց առջևը դնելով. 6 կը ծանուցանէ թէ ինքն է ճանապարհը՝ ճշմարտութիւնը և կեանքը, և թէ ինքը Հօրը հետ մէկ է. 13 կը խոստանայ որ իր անունովը եղած աղօթքը պիտի կատարուի. 15 կը պատուիրէ սէր և հնազանդութիւն ունենալ իրեն. 16 կը խոստանայ խրկել Մխիթարիչ Սուրբ Հոգին. 27 ու իր խաղաղութիւնը կու տայ անոնց։

1 Ա Սիրտերնիդ չխռովի. Աստուծո՛յ հաւատացէք,
2 ինծի՛ ալ հաւատացէք։ Իմ Հօրս տունը
շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ՝ ես ձեզի
պիտի ըսէի։ Բ Հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը
3 պատրաստեմ։ Ու թէ որ երթամ ու ձեզի տեղ
պատրաստեմ, Գ նորէն կու գամ և ձեզ քովս
կ'առնեմ, Դ որպէս զի ո՛ւր որ ես եմ՝ դուք ալ
4 հոն ըլլաք։ Ու ո՛ւր որ ես կ'երթամ՝ գիտէք, ու
ճամբան ալ գիտէք։
5 Թովմաս ըսաւ անոր, Տէ՛ր, չենք գիտեր ուր
կ'երթաս, և ի՞նչպէս կրնանք ճամբան գիտնալ։
6 Յիսուս ըսաւ անոր, Ե Ես եմ ճամբան ու Զ ճշմար-
տութիւնը ու Է կեանքը. Ը մէկը Հօրը քով
7 չգար, եթէ ոչ ինծմով։ Թ Թէ որ զիս ճանչնա-
յիք՝ իմ Հայրս ալ կը ճանչնայիք, և ասկէ ետև
կը ճանչնաք անիկայ ու տեսաք անիկայ։
8 Փիլիպպոս ըսաւ անոր, Տէ՛ր, Հայրը մեզի
9 ցուցո՛ւր, ու հերիք է մեզի։ Ըսաւ անոր Յի-
սուս, Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, և զիս
չճանչցա՞ր՝ Փի՛լիպպոս. Ժ ան որ զիս տեսաւ՝
Հայրը տեսաւ, և դուն ի՞նչպէս կ'ըսես թէ
10 Հայրը մեզի ցուցո՛ւր։ Չե՞ս հաւատար,
Ի թէ ես Հօրը մէջն եմ, ու Հայրը իմ մէջս
է. ան խօսքերը որ ես ձեզի կը խօսիմ, Լ չէ
թէ ինքիրմէս կը խօսիմ, հապա Հայրը որ իմ
մէջս բնակած է, անիկայ կը գործէ ան գործքերը։

Ա Հմր 27 ։ Գլ. ԺԶ. 3, 22 ։
Բ Գլ. ԺԳ. 33, 36 ։
Գ Հմր 18, 28 ։ Գործ. Ա. 11 ։
Դ Գլ. ԺԲ. 26 ։ ԺԷ. 24 ։ Ա Թես. Դ. 16 ։
Ե Եբր. Թ. 8 ։
Զ Գլ. Ա. 17 ։ Ը. 32 ։
Է Գլ. Ա. 4 ։ ԺԱ. 25 ։
Ը Գլ. Ժ. 9 ։
Թ Գլ. Ը. 19 ։
Ժ Գլ. ԺԲ. 45 ։ Կող. Ա. 15 ։ Եբր. Ա. 3 ։
Ի Հմր 20 ։ Գլ. Ժ. 38 ։ ԺԷ. 21, 23 ։
Լ Գլ. Ե. 19 ։ Է. 16 ։ Ը. 28 ։ ԺԲ. 49 ։

11 Հաւատացէ՛ք ինծի, թէ ես Հօրը մէջն եմ ու
12 Հայրը իմ մէջս է. ա Ապա թէ ոչ՝ գոնէ գործե-
րուն համար ինծի հաւատացէք։ բ Ճշմարիտ
ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի թէ Ան որ ինծի կը հա-
ւատայ, այն գործերը որ ես կը գործեմ, ինքն
ալ պիտի գործէ, և անոնցմէ աւելի մեծ գործեր
պիտի գործէ. ինչու որ ես Հօրս քովը կ՚երթամ։
13 գ Եւ իմ անունովս ինչ որ խնդրէք, պիտի կա-
տարեմ անիկայ, որ Հայրը Որդիովը փառաւո-
14 րուի. Թէ որ իմ անունովս բան մը խնդրէք,
15 անիկայ պիտի կատարեմ։ դ Թէ որ զիս կը սի-
16 րէք, իմ պատուիրանքներս պահեցէք։ Ես ալ
Հօրը պիտի աղաչեմ, ե և ուրիշ Մխիթարիչ մը
պիտի տայ ձեզի, որ յաւիտեան ձեզի հետ բնակի,
17 զ Ճշմարտութեան Հոգին, է որ աս աշխարհս
անիկայ չկրնար ընդունիլ, ինչու որ չտեսներ
անիկայ, ու չճանչնար անիկայ. բայց դուք
կը ճանչնաք անիկայ, ինչու որ ձեր քովը կը
18 բնակի, ը և ձեր հետը պիտի ըլլայ։ թ Ձեզ
19 որբ չեմ թողուր, ժ կու գամ ձեզի։ Քիչ
մը ատենէն ետև ալ աշխարհս զիս չտեսներ.
ի բայց դուք պիտի տեսնէք զիս, լ ինչու որ ես
կենդանի եմ, և դուք կենդանի պիտի ըլլաք։
20 Այն օրը պիտի գիտնաք խ թէ ես իմ Հօրս մէջն
21 եմ, և դուք իմ մէջս, ես ալ ձեր մէջը։ ծ Ան

ա Գլ. ե. 36 ; ժ. 38 ;
բ Մատ. իա. 21 ; Մար. ժզ. 17 ; Ղու. ժ. 17 ;
գ Մատ. է. 7 ; իա. 22 ; Մար. ժա. 24 ; Ղու. ժա. 9 ; Գլ. ժե. 7, 16 ; ժզ. 23, 24 ; Յակ. ա. 5 ; ա Յոհ. գ. 22 ; ե. 14 ;
դ Հմր 21, 23 ; Գլ. ժե. 10, 14 ; ա Յոհ. ե. 3 ;
ե Գլ. ժե. 26 ; ժզ. 7 ; Հռով. ը. 15, 26 ;
զ Գլ. ժե. 26 ; ժզ. 13 ; ա Յոհ. դ. 6 ;
է ա Կոր. բ. 14 ;
ը ա Յոհ. բ. 27 ;
թ Մատ. իը. 20 ;
ժ Հմր 3, 28 ;
ի Գլ. ժզ. 16 ;
լ ա Կոր. ժե. 20 ;
խ Հմր 10 ; Գլ. ժ. 38 ; ժէ. 21, 23, 26 ;
ծ Հմր 15, 23 ; ա Յոհ. բ. 5 ; ե. 3 ;

որ իմ պատուէրներս կը բռնէ ու կը պահէ ա-
նոնք, անիկայ է զիս սիրողը. և ան որ զիս կը
սիրէ՝ իմ Հօրմէս պիտի սիրուի. ու ես անիկայ
պիտի սիրեմ, և ինքզինքս անոր պիտի յայտնեմ։
22 Ըսաւ անոր կ Յուդա, (ոչ Իսկարիովտացին ;)
Տէ՛ր, ի՞նչպէս կ՚ըլլայ որ դուն ինքզինքդ մեզի պի-
23 տի յայտնես, և չէ՛ թէ աշխարհին։ Յիսուս
պատասխան տուաւ ու ըսաւ անոր, հ Թէ որ մէ-
կը զիս կը սիրէ՝ իմ խօսքս պիտի պահէ. ու իմ
Հայրս զանիկայ պիտի սիրէ, ձ և անոր պիտի
24 գանք, ու անոր քովը օթևան պիտի ընենք։ Ան
որ զիս չսիրեր, իմ խօսքերս չպահեր. ղ Ու ան
խօսքը որ կը լսէք՝ իմս չէ, հապա Հօրը՝ որ զիս
25 ղրկեց։ Աս բաները ձեզի խօսեցայ՝ քանի որ ձեր
26 քովն եմ։ ճ Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին՝
որ Հայրը իմ անունովս պիտի ղրկէ, մ անիկայ
ձեզի բոլորը պիտի սորվեցնէ, և ինչ որ ձեզի
27 ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ։ յ Խաղաղութիւն
կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ
ձեզի. չէ՛ թէ ինչպէս որ աշխարհս կու տայ՝ ես
ձեզի կու տամ. ն սիրտերնիդ չխռովի, ու չվախ-
28 նայ։ Լսեցիք որ շ ես ըսի ձեզի թէ՝ Կ՚եր-
թամ ու ձեզի կու գամ. ո թէ որ զիս սիրէիք,
պիտի ուրախանայիք, չ թէ ես Հօրը քով
կ՚երթամ, պ ինչու որ իմ Հայրս ինծմէ մեծ
29 է։ ջ Եւ հիմակուց դեռ չեղած ըսի ձեզի,
30 որ երբոր ըլլայ՝ հաւատաք։ Ալ ձեր հետը շատ
պիտի չխօսիմ, ռ ինչու որ աս աշխարհիս իշխանը

կ Ղու. զ. 16 ;
հ Հմր 15 ;
ձ ա Յոհ. բ. 24 ; Յայտ. գ. 20 ;
ղ Հմր 10 ; Գլ. ե. 19, 38 ; է. 16 ; ը. 28 ; ժբ. 49 ;
ճ Հմր 16 ; Ղու. իդ. 49 ; Գլ. ժե. 26 ; ժզ. 7 ;
մ Գլ. բ. 22 ; ժբ. 16 ; ժզ. 13 ; ա Յոհ. բ. 20, 27 ;
յ Փիլ. դ. 7 ; Կող. գ. 15 ;
ն Հմր 1 ;
շ Հմր 3, 18 ;
ո Հմր 12 ; Գլ. ժզ. 16 ; ի. 17 ;
չ Ոմանք՝ որ ըսի թէ
պ Գլ. ե. 18 ; ժ. 30 ; Փիլ. բ. 6 ;
ջ Գլ. ժգ. 19 ; ժզ. 4 ;
ռ Գլ. ժբ. 31 ; ժզ. 11 ;

31 կու գայ, և իմ վրաս բան մը չունի ։ Միայն թէ
աշխարհս գիտնայ որ ես Հայրը կը սիրեմ, ֆ ու
ինչպէս որ Հայրը ինծի պատուիրեց, անանկ կ'ը-
նեմ. ելէք ասկէ երթանք ։

ԳԼ. ԺԵ

1 Քրիստոսի ու իր անդամներուն մէջ եղած միաւորութիւնը և փոխադարձ սէրը որթին առակովը բացատրուած ։ 18 Քրիստոսի աշակերտներուն մխիթարութիւնը՝ երբոր անոնք աշխարհիս ատելի կ'ըլլան և կը հալածուին ։ 26 Սուրբ Հոգիին և առաքեալներուն պաշտօնը ։

1 Ես եմ ճշմարիտ որթը, և իմ Հայրս մշակն է ։
2 ա Ամէն ճիւղ որ իմ վրաս է ու պտուղ չբերեր,
կը կտրէ զանիկայ. և ամէնը որ պտուղ կը բերէ,
կը մաքրէ զանիկայ, որ ալ աւելի պտուղ բերէ ։
3 բ Դուք հիմակուընէ մաքուր էք ան խօսքովս՝ որ
4 ձեզի խօսեր եմ ։ գ Իմ մէջս կեցէք՝ ու ես ձեր
մէջը. ինչպէս որ ճիւղը չկրնար ինքնիրմէն պտուղ
բերել, թէ որ որթին վրայ հաստատուած չըլլայ,
նոյնպէս ալ դուք չէք կրնար, թէ որ իմ վրաս
5 հաստատուած չըլլաք ։ Ես որթն եմ ու դուք
ճիւղերն էք. ան որ իմ վրաս հաստատուած է՝ և
ես անոր վրայ, անիկայ շատ դ պտուղ կը բերէ,
ինչու որ առանց ինծի բան մը չէք կրնար ընել ։
6 Թէ որ մէկը իմ վրաս հաստատուած չէ, ե անի-
կայ ճիւղի մը պէս դուրս ձգուած ու չորցած է. և
կը ժողվեն զանոնք ու կրակը կը նետեն, ու
7 կ'այրին ։ Թէ որ դուք իմ մէջս կենաք՝ և իմ
խօսքերս ալ ձեր մէջը կենան, զ Ինչ որ ուզէք՝
8 պիտի խնդրէք, ու պիտի ըլլայ ձեզի ։ է Ասով

ֆ Գղ. ժ. 18, Փիլ. բ. 8, Եբր. ե. 8 ։
ա Մատ. ժե. 13 ։
բ Գղ. ժգ. 10, ժէ. 17, Եփե. ե. 26, ա Պետ. ա. 22 ։
գ Կող. ա. 33, ա Յով. բ. 6 ։
դ Ովս. ժդ. 8, Փիլ. ա. 11, դ. 13, Գոր. դ. 12 ։
ե Մատ. գ. 10, է. 19 ։
զ Հմր 16, Գղ. ժդ. 13, 14, ժզ. 23 ։
է Մատ. ե. 16, Փիլ. ա. 11 ։

իմ Հայրս փառաւորուեցաւ, որ դուք շատ պը-
տուղ բերէք, ը ու իմ աշակերտներս ըլլաք ։
9 Ինչպէս որ Հայրը զիս սիրեց, ես ալ ձեզ սի-
10 րեցի. իմ սիրոյս մէջ հաստատ կեցէք ։ թ Թէ որ
իմ պատուէրներս պահէք, իմ սիրոյս մէջը պիտի
կենաք. ինչպէս որ ես իմ Հօրս պատուէրները պա-
11 հեցի, և անոր սիրոյն մէջը կեցեր եմ ։ Աս բանե-
րը ձեզի խօսեցայ որ իմ ուրախութիւնս ձեր մէջը
12 մնայ, ժ ու ձեր ուրախութիւնը լման ըլլայ ։ ի Աս
է իմ պատուէրս որ մէկզմէկ սիրէք, ինչպէս որ ես
13 ձեզ սիրեցի ։ լ Ասկէ աւելի մեծ սէր մէկը չկրնար
ունենալ, որ մէկը իր կեանքը բարեկամներուն
14 համար դնէ ։ խ Դուք իմ բարեկամներս էք, թէ
որ ընելու ըլլաք ինչ որ ես ձեզի կը պատուիրեմ ։
15 Ասկէ ետքը ձեզ ծառայ չեմ անուաներ, ինչու որ
ծառան չգիտեր իր տէրը ինչ կ'ընէ. հապա ես
ձեզ բարեկամ անուանեցի, ծ ինչու որ ան ամէն
բաները որ իմ Հօրմէս լսեցի՝ ձեզի իմացուցի ։
16 կ Ոչ թէ դուք զիս ընտրեցիք, հապա ես ձեզ
ընտրեցի, հ ու դրի ձեզ, որ դուք երթաք և
պտուղ բերէք, ու ձեր պտուղը մնայ. ձ որպէս զի
իմ անունովս ինչ որ Հօրմէն խնդրէք, ձեզի տայ ։
17 ղ Աս կը պատուիրեմ ձեզի որ մէկզմէկ սիրէք ։
18 ճ Թէ որ աշխարհ ձեզ կ'ատէ, գիտցէք որ ձեզմէ
19 առաջ զիս ատեց ։ մ Թէ որ աշխարհէս եղած ըլ-
լայիք, աշխարհ իրենները կը սիրէր. յ բայց որով-

ը Գղ. ը. 31, ժգ. 35 ։
թ Գղ. ժդ. 15, 21, 23 ։
ժ Գղ. ժզ. 24, ժէ. 13, ա Յով. ա. 4 ։
ի Գղ. ժգ. 34, ա Թես. դ. 9, ա Պետ. դ. 8, ա Յով. գ. 11, դ. 21 ։
լ Գղ. ժ. 11, 15, Հռով. ե. 7, 8, Եփե. ե. 2, ա Յով. գ. 16 ։
խ Գղ. ժդ. 15, 23, Տես Մատ. ժբ. 50 ։
ծ Տես Ծն. ժը. 17, Գղ. ժէ. 26, Գոր. ի. 27 ։
կ Գղ. զ. 71, ժգ. 18, ա Յով. դ. 10, 19 ։
հ Մատ. իը. 19, Մար. ժզ. 15, Կող. ա. 6 ։
ձ Հմր 7, Գղ. ժդ. 13 ։
ղ Հմր 12 ։
ճ ա Յով. գ. 1, 13 ։
մ ա Յով. դ. 5 ։
յ Գղ. ժէ. 14 ։

հետեւ աշխարհէ չէք՝ հապա ես ձեզ աշխարհէն
ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ ։
20 Միտքերնիդ բերէք այն խօսքը որ ձեզի ըսի թէ
ն Ծառան իր տիրոջմէն մեծ չէ. թէ որ զիս հա-
լածեցին, ձեզ ալ պիտի հալածեն. շ թէ որ իմ
21 խօսքս պահեցին, ձերն ալ պիտի պահեն ։ ո Բայց
այս ամէն բաները պիտի ընեն ձեզի իմ անուանս
համար, ինչու որ չճանչցան անիկայ որ զիս խրկեց ։
22 չ Թէ որ ես եկած և անոնց խօսած չըլլայի, ա-
նոնք մեղք չէին ունենար. պ բայց հիմա իրենց
23 մեղքին պատճառանք մը չունին ։ ջ Ան որ զիս
24 կ'ատէ, իմ Հայրս ալ կ'ատէ ։ ռ Թէ որ այն
գործերը իրենց մէջը ըրած չըլլայի, որոնք ուրիշ
մէկը չէ ըրած, անոնք մեղք չէին ունենար. բայց
հիմա տեսան, ու ատեցին զիս ալ իմ Հայրս
25 ալ ։ Սակայն այս եղաւ որ կատարուի այն խօսքը
որ իրենց օրէնքին մէջ գրուած է թէ ս Զուր
26 տեղը զիս ատեցին ։ վ Բայց երբոր Մխիթարիչը
գայ՝ որ ես Հօրմէն ձեզի պիտի խրկեմ, այն Ճշմար-
տութեան Հոգին՝ որ Հօրմէն կ'ելլէ, տ անիկայ
27 ինծի համար պիտի վկայէ. ր Ու դուք ալ կը վկա-
յէք, ց ինչու որ սկիզբէն ՚ի վեր իմ հետս էք ։

ն Մատ. ժ. 24 ։ Ղու. զ. 40 ։ Գլ. ժգ. 16 ։
շ Եզեկ. գ. 7 ։
ո Մատ. ժ. 22 ։ իդ. 9 ։ Գլ. ժզ. 3 ։
չ Գլ. թ. 41 ։
պ Հռով. ա. 20 ։ Յակ. դ. 17 ։
ջ Ա Յովհ. բ. 23 ։
ռ Գլ. գ. 2 ։ է. 31 ։ թ. 32 ։
ս Սաղ. լե. 19 ։ կթ. 4 ։
վ Ղու. իդ. 49 ։ Գլ. ժդ. 17, 26 ։ ժզ. 7, 13 ։ Գործ. բ. 33 ։
տ Ա Յովհ. ե. 6 ։
ր Ղու. իդ. 48 ։ Գործ. ա. 8, 21, 22 ։ բ. 32 ։ գ. 15 ։ դ. 20, 33 ։ ե. 32 ։ ժ. 39 ։ ժգ. 31 ։ Ա Պետ. ե. 1 ։ Բ Պետ. ա. 16 ։
ց Ղու. ա. 2 ։ Ա Յովհ. ա. 1, 2 ։

ԳԼ. ԺԶ.

1 *Քրիստոս կը յիշեցնէ իր աշակերտներուն՝ անոնց կրելու նեղութիւնները, և կը մխիթարէ զանոնք Սուրբ Հոգին խրկելու խոստմունքով, և իր յարութիւնը ու երկինքը համբառնալը նախանձայնելով. 23 կը հաստատէ թէ իր Հայրը պիտի լսէ անոնց աղօթքը՝ որ իր անունովը կ'ընեն. 33 և թէ իրմով*

խաղաղութիւն պիտի ունենան, թէ և աշխարհի մէջ նեղութիւն պիտի կրեն ։

1 Այս բաները ձեզի խօսեցայ որ ա չգայթակղիք ։
2 Իրենց բ ժողովարաններէն դուրս պիտի ձգեն
ձեզ. ու ժամանակ ալ պիտի գայ գ որ ամէն ով
որ ձեզ սպաննէ, անանկ պիտի սեպէ թէ Աստու-
3 ծոյ պաշտօն կը մատուցանէ ։ դ Ու այս բաները
պիտի ընեն՝ անոր համար որ ոչ Հայրը ճանչ-
4 ցան ոչ ալ զիս ։ ե Բայց այս բաները ձեզի խօսե-
ցայ որ երբ ժամանակը գայ՝ միտքերնիդ բերէք
թէ ես ըսի ձեզի. և զաս բաները սկիզբէն չըսի
ձեզի, ինչու որ ես հետերնիդ էի ։
5 զ Սակայն հիմա ես կ'երթամ զիս խրկողին քովը,
և ձեզմէ մէկն ալ չհարցըներ ինծի թէ Ո՞ւր կ'եր-
6 թաս ։ Բայց որովհետեւ այս բաները ձեզի խօսեցայ,
7 է ձեր սիրտերը տրտմութիւնով լեցաւ ։ Բայց ես
ճշմարիտը կ'ըսեմ ձեզի, աղէկ է ձեզի թէ որ ես
երթամ. քանզի թէ որ ես չերթամ, ը Մխիթա-
րիչը ձեզի չգար. թ հապա թէ որ երթամ, անի-
8 կայ ձեզի կը խրկեմ ։ ժ Ու ինքը երբոր գայ՝ աշխար-
հը պիտի յանդիմանէ մեղքի համար, և արդա-
րութեան համար, ու դատաստանի համար ։
9 ի Մեղքի համար՝ որ ինծի չեն հաւատար.
10 լ Արդարութեան համար՝ խ որ ես իմ Հօրս քով
11 կ'երթամ, և ալ զիս չէք տեսներ. Ու ծ դատաս-
տանի համար՝ կ որ այս աշխարհիս իշխանը դատա-

ա Մատ. ժա. 6 ։ իզ. 10 ։ իզ. 31 ։
բ Գլ. թ. 22, 34 ։ ժբ. 42 ։
գ Գործ. է. 59 ։ թ. 1 ։ իզ. 9, 10, 11 ։
դ Գլ. ժե. 21 ։ Հռով. ժ. 2 ։ Ա Կոր. բ. 8 ։ Ա Տիմ. ա. 13 ։
ե Գլ. ժգ. 19 ։ ժդ. 29 ։
զ Տես Մատ. թ. 15 ։
է Հմր 10, 16 ։ Գլ. է. 33 ։ ժգ. 3 ։ ժդ. 28 ։
ը Հմր 22 ։ Գլ. ժդ. 1 ։
թ Գլ. է. 39 ։ ժդ. 16, 26 ։ ժե. 26 ։
ժ Գործ. բ. 33 ։ Եփես. դ. 8 ։
ի Գործ. բ. 22—37 ։
լ Գործ. բ. 32 ։
խ Գլ. գ. 14 ։ ե. 32 ։
ծ Գործ. իզ. 18 ։
կ Ղու. ժ. 18 ։ Գլ. ժբ. 31 ։ Եփես. բ. 2 ։ Կող. բ. 15 ։ Եբր. բ. 14 ։

12 պարտուած է ։ Ձեզի տակաւին շատ բաներ ունիմ
13 ըսելու , հ բայց հիմա չէք կրնար տանիլ ։ Իսկ
երբոր ինքը՝ ձ Ճշմարտութեան Հոգին գայ , ղ ամէն
ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի , քանզի որ
չէ թէ ինքիրմէն պիտի խօսի , հապա ինչ որ լսէ՝
ան պիտի խօսի ու գալիքները ձեզի պիտի պատմէ ։
14 Անիկայ զիս պիտի փառաւորէ , քանզի որ իմինէս
15 պիտի առնէ՝ ու ձեզի պատմէ ։ ճ Ամէն բանե-
րը որ Հայրը ունի , իմս է . անոր համար ձեզի
ըսի թէ իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ ։
16 մ Քիչ մը ատենէն՝ ալ զիս պիտի չտեսնէք , և
դարձեալ քիչ մը ատենէն զիս պիտի տեսնէք ,
յ քանզի ես Հօրը կ'երթամ ։
17 Անոր համար աշակերտներէն ոմանք իրարու կ'ը-
սէին , Ի՞նչ է աս որ մեզի կ'ըսէ թէ Քիչ մը
ատենէն՝ ալ զիս պիտի չտեսնէք , և դարձեալ քիչ
մը ատենէն զիս պիտի տեսնէք . և Քանզի ես Հօ-
18 րը կ'երթամ ։ Ու կ'ըսէին , Ի՞նչ պիտի ըլլայ
ան Քիչ մըն ալ՝ որ կ'ըսէ . չենք գիտեր ինչ կը
19 զրուցէ ։ Իսկ Յիսուս գիտնալով որ կ'ուզեն
իրեն հարցընել , ըսաւ անոնց , Անո՞ր համար ի-
րարու կը հարցընէք , որ ըսի թէ Քիչ մը ատե-
նէն՝ ալ զիս պիտի չտեսնէք , և դարձեալ քիչ մը
20 ատենէն զիս պիտի տեսնէք ։ Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի , դուք պիտի լաք ու ողբաք , բայց
աշխարհս պիտի ուրախանայ . դուք պիտի տրտ-
միք , սակայն ձեր տրտմութիւնը ուրախութեան
21 պիտի փոխուի ։ ն Կնիկ մը երբոր ծնանելու վրայ
է՝ տրտմութիւն կ'ունենայ , քանզի որ իր ժամը հա-
սած է . բայց երբոր տղան ծնանի , ալ նեղու-

հ Մար. դ. 33 ։ ա Կոր. գ. 2 ։ Եբր. ե. 12 ։
ձ Գլ. ժդ. 17 ։ ժե. 26 ։
ղ Գլ. ժդ. 26 ։ ա Յով. բ. 20, 27 ։
ճ Մատ. ժա. 27 ։ Գլ. գ. 35 ։ ժգ. 3 ։ ժէ. 10 ։
մ Հմր 10 ։ Գլ. է. 33 ։ ժգ. 33 ։ ժդ. 19 ։
յ Հմր 28 ։ Գլ. ժդ. 3 ։
ն Ես. իզ. 17 ։

թիւնը միտք չբերեր ուրախութենէն՝ որ աշխարհ
22 մարդ մը ծնաւ ։ շ Դուք ալ հիմա տրտ-
մութիւն ունիք . բայց ես ձեզ նորէն պիտի տես-
նեմ , ո և ձեր սիրտերը ուրախ պիտի ըլլան , ու
ձեր ուրախութիւնը մէկը ձեզմէ պիտի չհանէ ։
23 Եւ ան օրը ինծի բան մը պիտի չհարցընէք ։
չ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ իմ անու-
նովս ինչ որ խնդրէք Հօրմէն , պիտի տայ ձեզի ։
24 Մինչև հիմա իմ անունովս բան մը չխնդրեցիք .
խնդրեցէք ու պիտի առնէք , պ որ ձեր ուրախու-
25 թիւնը լման ըլլայ ։ Աս բաները առակներով
խօսեցայ ձեզի . բայց ժամանակ պիտի գայ , որ ալ
ձեզի առակներով պիտի չխօսիմ , հապա յայտ-
26 նապէս Հօրը վրայով պիտի պատմեմ ձեզի ։ ջ Ան
օրը իմ անունովս պիտի խնդրէք . և չեմ ըսեր
ձեզի թէ ես ձեզի համար պիտի աղաչեմ Հօրը .
27 ռ Քանզի որ ինքը Հայրը ձեզ կը սիրէ , վասն զի
դուք զիս սիրեցիք ս և հաւատացիք թէ ես Աս-
28 տուծմէ ելայ ։ վ Հօրմէն ելայ ու աշխարհ եկայ .
նորէն կը թողում աշխարհը և Հօրը կ'երթամ ։
29 Ըսին անոր իր աշակերտները , Ահա հիմա
յայտնապէս կը խօսիս , և առակ մըն ալ չես ըսեր ։
30 Հիմա իմացանք որ տ ամէն բանը գիտես , և [illegible]
[illegible] ալ պէտք չէ որ մէկը քեզի հարցընէ . ասով
31 ր կը հաւատանք որ Աստուծմէ ելար ։ Յիսուս
պատասխան տուաւ անոնց [illegible] , Հիմա կը
32 հաւատա՞ք . ց Ահա ժամանակ պիտի գայ , ու եկած
ալ է , որ ցիրուցան պիտի ըլլաք ւ ամէն մէկը իր

շ Հմր 6 ։
ո Ղու. իդ. 41, 52 ։ Գլ. ժդ. 1, 27 ։ ի. 20 ։ Գործ. ր. 46 ։ ժգ. 52 ։ ա Պետ. ա. 8 ։
չ Մատ. է. 7 ։ Գլ. ժդ. 13 ։ ժե. 16 ։
պ Գլ. ժե. 11 ։
ջ Հմր 23 ։
ռ Գլ. ժդ. 21, 23 ։
ս Հմր 30 ։ Գլ. գ. 13 ։ ժէ. 8 ։
վ Գլ. ժգ. 3 ։
տ Գլ. իա. 17 ։
ր Հմր 27 ։ Գլ. ժէ. 8 ։
ց Մատ. իզ. 31 ։ Մար. ժդ. 27 ։
ւ Գլ. ի. 10 ։

տեղը [~], ու զիս մինակ պիտի թողուք ․ [÷]բայց ես
33 մինակ չեմ, ինչու որ Հայրը իմ հետս է ։ Ես
բաները ձեզի խօսեցայ, [+]որ ինծմով խաղաղու–
թիւն ունենաք ․ [°]աշխարհի մէջ նեղութիւն պիտի
ունենաք, [‡]բայց քաջասիրտ եղէք ․ ես [—]աշխարհին
յաղթեցի ։

ԳԼ․ ԺԷ

1 Քրիստոս կ՚աղաչէ իր Հօրը որ փառաւորէ զինքը, 6 որ հաստատ պահէ իր առաքեալները 11 միութեան մէջ 17 և ճշմարտութեան մէջ, 20 որ երկնից մէջ իր հետը փառաւորէ զանոնք և ամէն ուրիշ հաւատացեալները ։

1 Յիսուս երբոր ասոնք խօսեցաւ, իր աչքերը դէպ
՚ի երկինքը վերցուց ու ըսաւ, Հայր՝ [—]ժա–
մանակը հասեր է, փառաւորէ՛ քու Որդիդ, որ
2 քու Որդիդ ալ քեզ փառաւորէ ․ [Ƒ]Ինչպէս որ
իրեն իշխանութիւն տուիր ամէն մարմնոյ վրայ, որ
յաւիտենական կեանք տայ անոնց որ [‡]իրեն
3 տուիր ։ [Ŧ]Եւ աս է յաւիտենական կեանքը, որ
ճանչնան քեզ [Ի]մի միայն ճշմարիտ Աստուածդ, ու
4 Յիսուս Քրիստոսը՝ [Ղ]որն որ դուն խրկեցիր ։ [Ի]Ես
քեզ երկրիս վրայ փառաւորեցի, [Ը]ան գործը [Ր]որ
5 ինծի տուիր ընելու՝ լմնցուցի ։ Եւ հիմա դու Հայր՝
փառաւորէ՛ զիս քու քովդ ան փառքովը՝ [Ժ]որ աշ–
6 խարհի ըլլալէն առաջ քովդ ունէի ։ [Ի]Քու անունդ

÷ Գլ․ ը․ 29 ։ ժզ․ 10, 11 ։
+ Ես․ թ․ 6 ։ Գլ․ ժդ․ 27 ։ Հռովմ․ ե․ 1 ։ Եփե․ բ․ 14 ։ Կող․ ա․ 20 ։
° Գլ․ ժե․ 19, 20, 21 ։ բ Տիմ․ գ․ 12 ։
‡ Գլ․ ժզ․ 1 ։
— Հռովմ․ ը․ 37 ։ ա Յօհ․ դ․ 4 ։ ե․ 4 ։
— Գլ․ ժբ․ 23 ։ ժգ․ 32 ։
Ƒ Դան․ է․ 14 ։ Մատ․ ժա․ 27 ։ իը․ 18 ։ Գլ․ գ․ 35 ։ ե․ 27 ։ ա Կոր․ ժե․ 25, 27 ։ Փիլ․ բ․ 10 ։ Եբր․ բ․ 8 ։
‡ Հմր 6, 9, 24 ։ Գլ․ զ․ 37 ։
Ŧ Ես․ ԽԴ․ 11 ։ Երեմ․ թ․ 24 ։
Ի ա Կոր․ ը․ 4 ։ ա Թեսս․ ա․ 9 ։
Ղ Գլ․ գ․ 34 ։ ե․ 36, 37 ։ զ․ 29, 58 ։ է․ 29 ։ ժ․ 36 ։ ժա․ 42 ։
Ի Գլ․ ժդ․ 31 ։ ժգ․ 13 ։
Ը Գլ․ դ․ 34 ։ ե․ 36 ։ թ․ 3 ։ ժթ․ 30 ։
Ր Գլ․ ժդ․ 31 ։ ժե․ 10 ։
Ժ Գլ․ ա․ 1, 2 ։ ժ․ 30 ։ ժդ․ 9 ։ Փիլ․ բ․ 6 ։ Կող․ ա․ 15, 17 ։ Եբր․ ա․ 3, 10 ։
Ի Հմր 26 ։ Սաղ․ իբ․ 22 ։

յայտնի ըրի ան մարդոցը՝ [լ]որոնք որ աշխարհէն ին–
ծի տուիր ․ քուկդ էին, ու ինծի տուիր անոնք, և
7 քու խօսքդ պահեցին ։ Հիմա գիտցան թէ ան ամէն
8 բաները որ ինծի տուիր, քեզմէ են ․ Ինչու որ ան
խօսքերը [խ]որ ինծի տուիր, ես անոնց տուի, ա–
նոնք ալ ընդունեցին, [ծ]և ճշմարտութեամբ իմա–
ցան որ ես քեզմէ ելայ, ու հաւատացին թէ դուն
9 խրկեցիր զիս ։ Ես անոնց համար կ՚աղաչեմ ․ [կ]չէ
թէ աշխարհի համար կ՚աղաչեմ, հապա անոնց
համար որոնք դուն ինծի տուիր, ինչու որ քուկդ
10 են անոնք ։ Եւ ինչ որ իմս է, ան բոլորը քուկդ
է, [հ]և ինչ որ քուկդ է, ան իմս է, ու ես ա–
11 նոնցմով փառաւորուած եմ ։ [ձ]Եւ ես ալ աշխար–
հի մէջ չեմ, բայց անոնք աշխարհի մէջ են, ու
ես քեզի կու գամ ․ ով Սուրբ Հայր՝ [ղ]քու ա–
նունովդ պահէ անոնք որ դուն ինծի տուիր, [ճ]որ–
պէս զի մէկ ըլլան, [մ]ինչպէս որ մենք մէկ ենք ։
12 Քանի որ աշխարհի մէջ անոնց հետ էի, [յ]ես կը
պահէի անոնք քու անունովդ ․ որոնք որ դուն ինծի
տուիր, ես պահեցի, [ն]և անոնցմէ մէկը չկորսուե–
ցաւ, [շ]միայն թէ ան կորստեան որդին, [ո]որ
13 գրուածը կատարուի ։ Եւ հիմա քեզի կու գամ,
ու աշխարհի մէջ աս բաները կը խօսիմ, որ իմ
ուրախութիւնս իրենց անձերուն մէջ կատարեալ
14 ունենան ։ [չ]Ես քու խօսքդ անոնց տուի, [պ]ու
աշխարհս անոնք ատեց ․ ինչու որ աշխարհէ չեն,
15 [ջ]ինչպէս որ ես աշխարհէ չեմ ։ Չեմ աղաչեր որ

լ Հմր 2, 9, 11 ։ Գլ․ զ․ 37, 39 ։ ժ․ 29 ։ ժե․ 19 ։
խ Գլ․ ը․ 28 ։ ժբ․ 49 ։ ժդ․ 10 ։
ծ Հմր 25 ։ Գլ․ ժզ․ 27, 30 ։
կ ա Յօհ․ ե․ 19 ։
հ Գլ․ ժզ․ 15 ։
ձ Գլ․ ժգ․ 1 ։ ժզ․ 28 ։
ղ ա Պետ․ ա․ 5 ։ Յուդ․ 1 ։
ճ Հմր 21, ԽԲ ։
մ Գլ․ ժ․ 30 ։
յ Գլ․ զ․ 39 ։ ժ․ 28 ։ Եբր․ բ․ 13 ։
ն Գլ․ ժը․ 9 ։ ա Յօհ․ բ․ 19 ։
շ Գլ․ զ․ 71 ։ ժգ․ 18 ։
ո Սաղ․ ճթ․ 8 ։ Գործ․ ա․ 20 ։
չ Հմր 8 ։
պ Գլ․ ժե․ 18, 19 ։ ա Յօհ․ գ․ 13 ։
ջ Գլ․ ը․ 23 ։ Հմր 16 ։

անոնք աշխարհէն վերցընես, հապա որ անոնք
16 չարէն պահես ։ Անոնք աշխարհէ չեն, ինչպէս որ
17 ես աշխարհէ չեմ ։ Սրբէ՛ անոնք քու ճշմարտու-
18 թիւնովդ. քու խօսքդ ճշմարտութիւն է ։ Ինչ-
պէս որ դուն զիս աշխարհք խրկեցիր, ես ալ ա-
19 նոնք աշխարհք խրկեցի ։ Ու անոնց համար ես
իմ անձս կը սրբեմ, որ իրենք ալ ճշմարտութիւ-
20 նով սրբուած ըլլան ։ Բայց չէ թէ մինակ անոնց
համար կ՚աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր
21 ինծի հաւատացողներուն համար ալ. Որ ամէնն
ալ մէկ ըլլան, ինչպէս որ դուն ով Հայր՝ իմ
մէջս, ու ես քու մէջդ, որ անոնք ալ մեր մէջը
մէկ ըլլան, որպէս զի աշխարհս հաւատայ թէ
22 դուն խրկեցիր զիս ։ Ու ան փառքը որ դուն ինծի
տուիր՝ ես անոնց տուի, որ մէկ ըլլան՝ ինչպէս որ
23 մենք մէկ ենք. (Ես անոնց մէջ՝ և դուն իմ մէջս,)
որ իրենք կատարեալ ըլլան միութեան մէջ. ու
աշխարհս գիտնայ թէ դուն խրկեցիր զիս, ու սի-
24 րեցիր անոնք՝ ինչպէս որ զիս սիրեցիր ։ Ո՛վ
Հայր՝ անոնք որ դուն ինծի տուիր, կ՚ուզեմ որ
ուր որ ես եմ, անոնք ալ իմ հետս ըլլան, որպէս
զի տեսնեն իմ փառքս որն որ ինծի տուիր. ին-
չու որ դուն զիս սիրեցիր աշխարհիս սկիզբէն ա-
25 ռաջ ։ Ո՛վ արդար Հայր՝ աշխարհս քեզ չճանչ-
ցաւ, բայց ես քեզ ճանչցայ, և ասոնք ճանչ-

Մատ. զ. 13 ։ Գաղ. ա. 4 ։ բ Թես. գ. 3 ։ ա Յոհ. ե. 18 ։
Հմր 14 ։
Գլ. ժե. 3 ։ Գոր. ժե. 9 ։ Եփե. ե. 26 ։ ա Պետ. ա. 22 ։
բ Թագ. է. 28 ։ Սաղ. ճժթ. 142, 151 ։ Գլ. ը. 40 ։
Գլ. ի. 21 ։
ա Կոր. ա. 2, 30 ։ ա Թես. գ. 7 ։ Եբր. ժ. 10 ։
Հմր 11, 22, 23 ։ Գլ. ժ. 16 ։ Հռով. ժբ. 5 ։ Գաղ. գ. 28 ։
Գլ. ժ. 38 ։ ժդ. 11 ։
Գլ. ժդ. 20 ։ ա Յոհ. ա. 3 ։ դ. 24 ։
Կող. դ. 14 ։
Գլ. ժբ. 26 ։ ժդ. 3 ։ ա Թես. դ. 16 ։
Հմր 5 ։
Գլ. ժե. 21 ։ ժզ. 3 ։
Գլ. է. 29 ։ ը. 55 ։ ժ. 15 ։
Հմր 8 ։ Գլ. ժզ. 27 ։

26 ցան թէ դուն զիս խրկեցիր ։ Ու քու անունդ
անոնց ճանչցուցի, ու պիտի ճանչցընեմ, որ ան
սէրը որով դուն զիս սիրեցիր, անոնց մէջը ըլլայ,
ու ես ալ անոնց մէջը ։

ԳԼ. ԺԸ

1 Յուդա կը մատնէ զՅիսուս ։ 6 Յիսուսի վրայ եկողները գետինը կը զարնուին ։ 10 Պետրոս սուրով կը կտրէ Մաղքոսին ականջը ։ 12 Յիսուս կը բռնուի ու կը տարուի Աննայի և Կայիափայի առջևը ։ 15 Պետրոսին ուրացութիւնը ։ 19 Յիսուս կը քննուի Կայիափային առջևը. 28 Կ՚ամբաստանուի Պիղատոսին առջևը ։ 36 Քրիստոսի թագաւորութիւնը ։ 40 Հրեայք կ՚ուզեն որ Բարաբբան արձակուի ։

1 Յիսուս աս բաները ըսելէն ետև՝ իր աշակերտ-
ներուն հետ մէկտեղ Կեդրոն հեղեղատին ան-
դին կողմը ելաւ, ուր որ պարտէզ մը կար, որուն
2 մէջը մտաւ ինքը ու իր աշակերտները ։ Ու Յու-
դա ալ որ զանիկայ պիտի մատնէր, գիտէր ան
տեղը, ինչու որ Յիսուս շատ անգամ իր աշա-
կերտներուն հետ մէկտեղ հոն ժողվուած էր ։
3 Ուստի Յուդա զինուորներուն գունդը ու քա-
հանայապետներէն և փարիսեցիներէն սպասաւորներ
հետը առնելով, ան տեղը եկաւ ջահերով ու լապ-
4 տերներով և զէնքերով ։ Իսկ Յիսուս իր վրայ
գալու բոլոր բաները գիտնալով՝ ելաւ ու ըսաւ ա-
5 նոնց, Ո՞վ կը փնտռէք ։ Պատասխան տուին
անոր, Նազովրեցի Յիսուսը. ըսաւ անոնց Յի-
սուս, Ես եմ. Յուդա ալ որ զանիկայ կը մատ-
6 նէր՝ անոնց հետ կայներ էր ։ Ու երբոր ըսաւ թէ
7 Ես եմ, ետ ետ գացին ու գետինը ինկան ։ Ու
նորէն հարցուց անոնց, Ո՞վ կը փնտռէք. անոնք
8 ալ ըսին, Նազովրեցի Յիսուսը ։ Յիսուս պա-
տասխան տուաւ, Ձեզի ըսի թէ Ես եմ. ուստի

Հմր 6 ։ Գլ. ժե. 15 ։
Գլ. ժե. 9 ։
Մատ. իզ. 36 ։ Մար. ժդ. 32 ։ Ղու. իբ. 39 ։
բ Թագ. ժե. 23 ։
Ղու. իա. 37 ։ իբ. 39 ։
Մատ. իզ. 47 ։ Մար. ժդ. 43 ։ Ղու. իբ. 47 ։ Գործ. ա. 16 ։

թէ որ զիս կը փնտռէք, թո՛ղ տուէք ասոնք որ
9 երթան։ Որ կատարուի այն խօսքը որ ինքը ը-
սեր էր թէ [ա] Անոնք որ ինծի տուիր, անոնցմէ մէկն
10 ալ չկորսնցուցի։ [բ] Այն ատենը Սիմոն Պետրոս
որ սուր մը ունէր, քաշեց անիկայ ու քահանա-
յապետին ծառային զարնելով՝ անոր աջ ականջը
կտրեց հանեց. և այն ծառային անունը Մաղքոս
11 էր։ Իսկ Յիսուս ըսաւ Պետրոսին, Սուրդ իր
պատեանը դիր. այն [գ] գաւաթը որ Հայրը ինծի
տուաւ, պիտի չխմե՞մ անիկայ։
12 Ուստի զինուորներուն գունդը ու հազարապետը
և Հրէից սպասաւորները բռնեցին Յիսուսը ու
13 կապեցին. Եւ առաջ զանիկայ [դ] Աննային [ե] տա-
րին, քանզի ինքը այն տարուան քահանայապետին
14 Կայիափային աները էր։ [զ] Եւ աս Կայիափան
էր, որ Հրէից խրատ տուաւ թէ Աղէկ է որ մէկ
15 մարդ մը կորսուի ժողովուրդին համար։ Ու Յի-
սուսին ետեւէն կ'երթային [է] Սիմոն Պետրոս և
ուրիշ աշակերտ մը. և այն աշակերտը քահանա-
յապետին ծանօթը ըլլալով՝ Յիսուսին հետ քա-
16 հանայապետին գաւիթը մտաւ։ [ը] Բայց Պետրոս
դուրսը դրանը քովը կը կենար. ուստի ելաւ միւս
աշակերտը որ քահանայապետին ծանօթն էր,
և ըսաւ դռնապանին, ու ներս մտցուց Պետրոսը։
17 Այն ատենը դռնապան աղջիկը ըսաւ Պետրոսին,
Միթէ դո՞ւն ալ այն մարդուն աշակերտներէն ես.
18 ան ալ ըսաւ, Չեմ։ Իսկ ծառաները ու սպա-
սաւորները հոն կայներ էին, և կրակ վառած կը
տաքնային, քանզի ցուրտ էր։ Պետրոս ալ ա-
19 նոնց հետ կայներ էր ու կը տաքնար։ Եւ քա-

ա Գլ. ժէ. 12։
բ Մատ. իզ. 51։ Մար. ժդ. 47։ Ղու. իբ. 49, 50։
գ Մատ. ի. 22։ իզ. 39, 42։
դ Ղու. գ. 2։
ե Տես Մատ. իզ. 57։
զ Գլ. ժա. 50։
է Մատ. իզ. 58։ Մար. ժդ. 54։ Ղու. իբ. 54։
ը Մատ. իզ. 69։ Մար. ժդ. 66։ Ղու. իբ. 54։

հանայապետը Յիսուսին հարցուց անոր աշակերտ-
20 ներուն ու վարդապետութեանը վրայով։ Յիսուս
պատասխան տուաւ անոր, [թ] Ես աշխարհին յայտնի
խօսեցայ. ես ամէն ատեն ժողովարաններուն մէջ
ու տաճարին մէջ սորվեցուցի, ուր որ բոլոր Հրէ-
աները կը ժողվուին, ու ծածկաբար բան մը
21 չխօսեցայ։ Ինչո՞ւ ինծի կը հարցընես, լսողնե-
րուն հարցուր թէ ինչ խօսեցայ իրենց. ահա ինչ
22 որ խօսեցայ, գիտեն իրենք։ Երբոր աս ըսաւ,
սպասաւորներէն մէկը որ հոն կայներ էր, [ժ] Յի-
սուսին ապտակ մը զարկաւ՝ ըսելով, Ատա՞նկ պա-
23 տասխան կու տաս քահանայապետին։ Յիսուս
անոր պատասխանեց. Թէ որ չար խօսեցայ, վկայէ
չարին համար. հապա թէ որ բարի խօսեցայ, ին-
24 չո՞ւ կը զարնես ինծի։ [ի] Եւ Աննա զանիկայ կա-
25 պած՝ Կայիափա քահանայապետին խրկեց։ Սի-
մոն Պետրոս ալ հոն կայներ էր ու կը տաքնար.
և [լ] ըսին իրեն, Միթէ դո՞ւն ալ անոր աշակերտ-
ներէն ես. անիկայ ուրացաւ ու ըսաւ թէ
26 Չեմ։ Քահանայապետին ծառաներէն մէկն ալ՝
այն մարդուն ազգականը որուն ականջը Պետրոս
կտրեր էր, ըսաւ, Չէ՞ որ ես քեզ տեսայ պար-
27 տէզին մէջը անոր հետ։ Այն ատենը Պետրոս
նորէն ուրացաւ, [խ] և շուտ մը հաւը խօսեցաւ։
28 [ծ] Ու Յիսուսը Կայիափայի տունէն դատաւորատունը
պալատը տարին, և դեռ առտու էր. [կ] ու իրենք
պալատը չմտան որ չպղծուին, հապա որ զատիկը
29 ուտեն։ Ուստի Պիղատոս դուրս ելաւ անոնց ու
ըսաւ, Ի՞նչ ամբաստանութիւն կը ներկայացը-
30 նէք աս մարդուն դէմ։ Պատասխան տուին ու

թ Մատ. իզ. 55։ Ղու. դ. 15։ Գլ. է. 14, 26, 28։ ը. 2։
ժ Երեմ. ի. 2։ Գոր. իգ. 2։
ի Մատ. իզ. 57։
լ Մատ. իզ. 69, 71։ Մար. ժդ. 69։ Ղու. իբ. 58։
խ Մատ. իզ. 74։ Մար. ժդ. 72։ Ղու. իբ. 60։ Գլ. ժգ. 38։
ծ Մատ. իէ. 2։ Մար. ժե. 1։ Ղու. իգ. 1։ Գոր. գ. 13։
կ Գոր. ժ. 28։ ժա. 3։

ըսին իրեն , Թէ որ անիկայ չարագործ մը չըլլար ,
31 քեզի չէինք մատներ զանիկայ : Ու ատենը Պի-
ղատոս ըսաւ անոնց , Դուք առէք անիկայ , ու ձեր
օրէնքին համեմատ անոր դատաստանը տեսէք :
Հրեաները իրեն ըսին , Մեզի օրինաւոր չէ մարդ
32 մը մեռցընել . ի Որ կատարուի Յիսուսի խօսքը ,
որ ըսաւ , իմացընելով թէ ինչ մահով պի-
33 տի մեռնէր : Իսկ լ Պիղատոս նորէն պալատը
մտաւ , կանչեց Յիսուսը ու ըսաւ անոր , Դո՞ւն
34 ես Հրէից Թագաւորը : Յիսուս պատասխան
տուաւ անոր , Նոյնկայ դուն քեզմէ՞ կ'ըսես , թէ
35 ինծի համար ուրիշները քեզի ըսին : Պատասխան
տուաւ Պիղատոս , Միթէ ես Հրեա՞յ եմ .
քու ազգդ և քահանայապետները քեզ ինծի մատ-
36 նեցին . ի՞նչ ըրած ես դուն : խ Յիսուս պատաս-
խան տուաւ , ծ Իմ թագաւորութիւնս աս աշ-
խարհէս չէ . թէ որ աս աշխարհէս ըլլար իմ թա-
գաւորութիւնս , իմ սպասաւորներս կը կռուէին՝
որ ես Հրէից ձեռքը չմատնուիմ . բայց հիմա իմ
37 թագաւորութիւնս ասկէ չէ : Ու ատենը Պի-
ղատոս ըսաւ անոր , Ուրեմն դուն թագաւո՞ր
մըն ես . պատասխան տուաւ Յիսուս , Դուն
կ'ըսես , քանզի թագաւոր եմ . ես աս բանիս համար
ծնած եմ , և ասոր համար աշխարհք եկած , որ
ճշմարտութեան համար վկայեմ . ան ամէնը
կ որ ճշմարտութենէն է , իմ ձայնիս ականջ կը
38 դնէ : Պիղատոս ըսաւ անոր , Ի՞նչ է ճշմար-
տութիւնը . և աս ըսելով՝ նորէն դուրս ելաւ
Հրեաներուն և ըսաւ անոնց , հ Ես մէկ յանցանք
39 մը չեմ գտներ անոր վրայ : ձ Բայց սովորութիւն

ի Մատ. ի. 19 : Գւ. ժբ. 32 , 33 :
լ Մատ. իէ. 11 :
խ ա Տիմ. զ. 13 :
ծ Դան. բ. 44 : է. 14 : Ղու. ժբ. 14 : Գւ. զ. 15 : ը. 15 :
կ Գւ. ը. 17 : ա Յով. դ. 19 : դ. 6 :
հ Մատ. իէ. 24 : Ղու. իգ. 4 : Գւ. ժթ. 4 , 6 :
ձ Մատ. իէ. 15 : Մար. ժե. 6 : Ղու. իգ. 17 :

ունիք որ մէկ հոգի մը արձակեմ ձեզի զատկին .
հիմա կ'ուզէ՞ք որ Հրէից Թագաւորը արձակեմ
40 ձեզի : ղ Ու ատենը ամէնքն ալ նորէն աղաղակե-
ցին՝ ըսելով , Մի՛ ասիկա , հապա Բա-
րաբբան . ճ ու Բարաբբա աւազակ մըն էր :

ԳԼ. ԺԹ

1 Յիսուս կը ծեծուի . զինուորներն ալ փշեայ պսակ կը դնեն անոր գլուխը , և անոր ապտակներ կը զարնեն : 4 Պիղատոս կ'ուզէ ազատել զՅիսուս , բայց Հրէից աղաղակներուն զիջանելով ձեռք կու տայ զանիկայ որ խաչուի : 23 Յիսուսի պատմուճանին վրայ վիճակ կը ձգեն : 26 Յիսուս իր մայրը Յովհաննէսին կը յանձնէ . 28 կը մեռնի : 34 Զինուոր մը Յիսուսի կողը կը խոցէ : 38 Յովսէփ և Նիկոդեմոս կը թաղեն զանիկայ :

1 Ու ատենը մ Պիղատոս առաւ Յիսուսը՝ ու ծե-
2 ծեց : Զինուորներն ալ փուշերէ պսակ հիւսե-
լով՝ անոր գլուխը դրին , և անոր ծիրանի հանդերձ
3 մը հագցուցին . Ու կ'ըսէին , Ողջո՜յն քեզ՝ Հրէից
Թագաւոր . և ապտակներ կը զարնէին անոր :
4 Պիղատոս նորէն դուրս ելաւ ու ըսաւ անոնց ,
Ահա անիկայ դուրս կը բերեմ ձեզի , յ որ գիտնաք
5 թէ ես անոր վրայ յանցանք մը չեմ գտներ : Ու
ատենը Յիսուս դուրս ելաւ , փշեղէն պսակ ու
ծիրանի հանդերձ հագած . և Պիղատոս ըսաւ ա-
6 նոնց , Ահա ան մարդը : ն Քահանայապետները ու
սպասաւորները երբոր տեսան անիկայ , աղաղակե-
ցին ու ըսին , Խաչը հանէ՛ խաչը հանէ ասիկայ :
Պիղատոս ըսաւ անոնց , Դո՛ւք առէք ասիկայ ու
խաչը հանեցէք . ինչու որ ես ասոր վրայ յանցանք
7 մը չեմ գտներ : Հրեաները պատասխան տուին
իրեն , շ Մենք օրէնք ունինք , և մեր օրէնքին հա-
մեմատ պէտք է որ մեռնի , ո ինչու որ ինքզինքը

ղ Գործ. գ. 14 :
ճ Ղու. իգ. 19 :
մ Մատ. ի. 19 : իէ. 26 : Մար. ժե. 15 : Ղու. ժը. 33 :
յ Գւ. ժը. 38 : Հմր 6 :
ն Գործ. գ. 13 :
շ Ղև. իդ. 16 :
ո Մատ. իզ. 65 : Գւ. ե. 18 : ժ. 33 :

8 Աստուծոյ Որդի ըրաւ ։ Երբոր Պիղատոս աս խօս-
9 քը լսեց , ալ աւելի վախցաւ ։ Ու նորէն պալատը
մտնելով՝ ըսաւ Յիսուսին , Ո՞ւսկից ես դուն ․
10 [զ] Բայց Յիսուս պատասխան չտուաւ անոր ։ Ուստի
Պիղատոս ըսաւ անոր , Ինծի հետ չե՞ս խօսիր ․
չե՞ս գիտեր որ ես իշխանութիւն ունիմ քեզ խաչը
հանելու , ու իշխանութիւն ունիմ քեզ արձակե-
11 լու ։ Յիսուս պատասխան տուաւ , [է] Դուն իմ
վրաս մէկ իշխանութիւն մըն ալ չէիր ունենար ,
թէ որ քեզի վերէն տրուած չըլլար ․ անոր համար՝
ան որ զիս քեզի մատնեց , անոր մեղքը աւելի մեծ
12 է ։ Ալ անկէ ետև Պիղատոս կը փնտռէր թէ ինչ-
պէս զանիկայ արձակէ ․ բայց Հրէաները կ'աղա-
ղակէին ու կ'ըսէին , [ը] Թէ որ ատիկայ արձակես ,
Կայսրին բարեկամը չես ․ [թ] Ամէն ով որ ինքզինքը
թագաւոր կ'անուանէ , անիկայ Կայսրին հակառակ
13 կը խօսի ։ Իսկ Պիղատոս երբոր աս խօսքը
լսեց , դուրս հանեց Յիսուսը , ու նստաւ
բեմին վրայ ան տեղը՝ որ Քարայատակ կ'ըսուէր ,
14 և Եբրայեցերէն Կապպաթա ․ ([ժ] Զատկին ուր-
բաթ օրն էր ու ժամը վեցին տեղերն էր ,) և
15 Հրէաներուն ըսաւ , Ահա ձեր թագաւորը ։ Բայց
անոնք աղաղակեցին , Վերցու՛ր վերցու՛ր , խաչը
հանէ ատիկայ ․ Պիղատոս ըսաւ անոնց , Ձեր
թագաւորը խա՞չը հանեմ ․ քահանայապետները
պատասխան տուին , [ի] Մենք Կայսրէն 'ի զատ թա-
16 գաւոր չունինք ։ [լ] Ան ատենը անոնց ձեռքը տուաւ
զանիկայ որ խաչուի ։
17 Անոնք ալ առին Յիսուսը ու կը տանէին ․ [խ] և

զ Ես․ ծգ․ 7 ։ Մատ․ իէ․ 12 , 14 ։
է Ղուկ․ իբ․ 53 ։ Գլ․ է․ 30 ։
ը Ղուկ․ իգ․ 2 ։
թ Գործ․ ժէ․ 7 ։
ժ Մատ․ իէ․ 62 ։
ի Ծն․ խթ․ 10 ։
լ Մատ․ իէ․ 26 , 31 ։ Մար․ ժե․ 15 ։ Ղուկ․ իգ․ 24 ։
խ Մատ․ իէ․ 31 , 33 ։ Մար․ ժե․ 21 , 22 ։ Ղուկ․ իգ․ 26 , 33 ։

ինքը իր խաչը վերցնելով , [ծ] ելաւ Գագաթ ը-
սուած տեղը , որ Եբրայեցերէն Գողգոթա կ'ը-
18 սուի ․ Հոն զանիկայ խաչը հանեցին , և անոր
հետ ուրիշ երկու ալ մէկ դիէն ու միւս դիէն ,
19 և մէջտեղը Յիսուսը ։ [կ] Տախտակ մըն ալ գրեց
Պիղատոս , ու դրաւ խաչին վրայ , և այսպէս
գրուած էր ․ ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱ-
20 ԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ ։ Աս ան տախտակը Հրէանե-
րէն շատերը կարդացին , վասն զի քաղաքին մօտ էր
ան տեղը՝ ուր որ Յիսուս խաչուեցաւ ․ ու գրուած
էր Եբրայեցերէն՝ Յունարէն և Լատիներէն ։
21 Ան ատենը Հրէից քահանայապետները Պիղատո-
սին ըսին , Մի՛ գրեր Թագաւոր Հրէից , հապա
22 թէ Ինքը ըսաւ , Թագաւոր եմ Հրէից ․ Պիղա-
տոս պատասխան տուաւ , Ինչ որ գրեցի՝ գրեցի ։
23 [հ] Աս զինուորները երբոր Յիսուսը խաչը հանե-
ցին , անոր հանդերձները առին , ու չորս բաժին
ըրին՝ ամէն մէկ զինուորին բաժին մը ․ նաև պատ-
մուճանը ․ իսկ պատմուճանը առանց կարի էր վե-
24 րէն 'ի վար բոլորը հիւսուած ․ Ուստի ըսին իրարու ,
Ատիկայ չպատռենք , հապա վիճակ ձգենք ատոր
վրայ թէ որու պիտի ըլլայ ․ որ կատարուի ան
գրուածը որ կ'ըսէ , [ձ] Իմ հանդերձներս իրենց
մէջը բաժնեցին , և իմ պատմուճանիս վրայ վիճակ
ձգեցին ․ ահա զինուորները աս բաները ըրին ։
25 [ղ] Աս Յիսուսի խաչին քովը կայներ էին իր մայրը
և իր մօրը քոյրը Մարիամ՝ [ճ] Կղէովպասին կինը
26 ու Մարիամ Մագդաղենացին ։ Ուստի Յիսուս
երբոր տեսաւ իր մայրը , [մ] և ան աշակերտը որ կը
սիրէր , որ մօտը կայներ էր , ըսաւ իր մօրը ,

ծ Թուոց․ ժե․ 36 ։ Եբր․ ժգ․ 12 ։
կ Մատ․ իէ․ 37 ։ Մար․ ժե․ 26 ։ Ղուկ․ իգ․ 38 ։
հ Մատ․ իէ․ 35 ։ Մար․ ժե․ 24 ։ Ղուկ․ իգ․ 34 ։
ձ Սաղ․ իա․ 18 ։
ղ Մատ․ իէ․ 55 ։ Մար․ ժե․ 40 ։ Ղուկ․ իգ․ 49 ։
ճ Ղուկ․ իդ․ 18 ։
մ Գլ․ ժգ․ 23 ։ ի․ 2 ։ իա․ 7 , 20 , 24 ։

27 [ժ] Ո՛վ կին՝ ահա քու որդիդ։ Յետոյ ըսաւ աշակեր-
տին, Ահա քու մայրդ. և այն ժամանակէն աշա-
կերտը զանիկայ [ի] իր քովը առաւ։
28 Անկէ ետև Յիսուս գիտնալով թէ արդէն ամէն
բան լմնցած է, ([լ] որպէս զի գրուածը կատա-
29 րուի,) ըսաւ, Ծարաւ եմ։ Եւ հոն քացախով
լեցուն աման մը կար. [խ] անոնք ալ քացախով
սպունգ մը լեցնելով՝ զոպայի մշտիկի վրայ փաթ-
30 թած, անոր բերնին մօտեցուցին։ Ուստի Յի-
սուս երբոր քացախը առաւ, ըսաւ, [ծ] Ամէն բան
կատարուեցաւ. ու գլուխը ծռելով հոգին աւան-
դեց։
31 Իսկ Հրեաները՝ [կ] որովհետև ուրբաթ օր էր,
[հ] որ չըլլայ թէ այն մարմինները խաչին վրայ մնան
մինչև շաբաթ օրը, (ինչու որ այն շաբաթը մեծ
օր էր,) Պիղատոսին աղաչեցին որ անոնց սրունք-
32 ները կոտրեն, ու վերցնեն։ Ուստի զինուոր-
ները եկան՝ և առջինին սրունքները կոտրեցին,
նաև միւսինը, որ անոր հետ խաչը ելած էր։
33 Բայց երբոր Յիսուսին եկան ու տեսան որ արդէն
34 մեռած էր, անոր սրունքները չկոտրեցին. Հա-
պա զինուորներէն մէկը գեղարդով անոր կողը խո-
35 ցեց, [ձ] և շուտ մը արիւն ու ջուր ելաւ։ Եւ ան
որ տեսաւ աս բաները՝ վկայեց, ու անոր վկայու-
թիւնը ճշմարիտ է, և ինքը գիտէ որ ճշմարիտ
36 կ'ըսէ, որ դուք [ալ] հաւատաք։ Ինչու որ աս
բաները եղաւ [ղ] որ կատարուի այն գրուածը թէ
37 Անոր մէկ ոսկորը պիտի չկոտրուի։ Եւ մէյմըն
ալ ուրիշ գրուած մը կ'ըսէ թէ [ճ] Պիտի նային
անոր՝ որ խոցեցին։

ժ Գլ. բ. 4։
ի Գլ. ա. 11։ ժզ. 32։
լ Սաղ. կթ. 21։
խ Մատ. իէ. 48։
ծ Գլ. ժէ. 4։
կ Հմր 42։ Մար. ժե. 42։
հ Բ Օր. իա. 23։
ձ Ա Յօհ. ե. 6, 8։
ղ Ել. ժբ. 46։ Թուե. թ. 12։ Սաղ. լդ. 20։
ճ Սաղ. իբ. 16, 17։ Զաք. ժբ. 10։ Յայտ. ա. 7։

38 [մ] Անկէ ետև Յովսէփ որ Արիմաթիայէն էր,
(Յիսուսի աշակերտ եղած՝ բայց գաղտուկ [յ] Հրեա-
ներուն վախէն,) աղաչեց Պիղատոսին, որ Յի-
սուսի մարմինը վերցնէ. Պիղատոս ալ հրաման
տուաւ. ուստի եկաւ ու վերցուց Յիսուսին մար-
39 մինը. [ն] Նիկոդեմոս ալ եկաւ, (որ ինքը առա-
ջուց գիշերով Յիսուսին եկեր էր,) ու բերաւ հա-
րիւր լիտրի չափ զմուռսի ու հալուէի խառնուրդ
40 մը։ Եւ Յիսուսին մարմինը առին՝ ու խունկե-
րով [շ] փաթթեցին զանիկայ կտաւներու մէջ, ինչ-
պէս որ Հրեայք սովորութիւն ունին թաղելու։
41 Եւ այն տեղը ուր որ խաչուեցաւ, պարտէզ մը
կար, ու այն պարտէզին մէջ նոր գերեզման մը,
42 որուն մէջը ամենևին մարդ դրուած չէր։ [ո] Հրեա-
ներուն ուրբաթին համար [չ] հոն դրին Յիսուսը,
ինչու որ գերեզմանը մօտ էր։

ԳԼ. Ի

1 Մարիամ գերեզմանը կ'երթայ. 3 Նմանապէս Պետրոս և Յովհաննէս հոն կ'երթան, չգիտնալով թէ Քրիստոս յարութիւն առած է։ 11 Յիսուս կ'երևնայ Մարիամ Մագդաղենացիին 19 և իր աշակերտներուն։ 24 Թովմասի թերահաւատութիւնը և դաւանութիւնը։ 30 Սուրբ Գիրքը բաւական է փրկութեան համար։

1 [պ] Եւ մէկշաբթի օրը Մարիամ Մագդաղենացին
առտուանց դեռ չլուսցած գերեզմանը կու
գայ, ու կը տեսնէ որ քարը գերեզմանին դռնէն
2 վերցուած է։ Յետոյ կը վազէ կու գայ Սիմոն
Պետրոսին [ջ] և միւս աշակերտին՝ որն որ Յիսուս
կը սիրէր, և կ'ըսէ անոնց, Տէրը գերեզմանէն
վերցուցին, ու չենք գիտեր ո՛ւր դրին զանիկայ։
3 [ռ] Ուստի ելաւ Պետրոս և միւս աշակերտը, ու

մ Մատ. իէ. 57։ Մար. ժե. 42։ Ղու. իգ. 50։
յ Գլ. թ. 22։ ժբ. 42։
ն Գլ. գ. 1, 2։ է. 50։
շ Գործ. ե. 6։
ո Հմր 31։
չ Եսա. ծգ. 9։
պ Մատ. իը. 1։ Մար. ժզ. 1։ Ղու. իդ. 1։
ջ Գլ. ժգ. 23։ ժթ. 26։ իա. 7, 20, 24։
ռ Ղու. իդ. 12։

4 դէպ 'ի գերեզմանը կու գային , Ու երկուքն ալ
մէկտեղ կը վազէին . և միւս աշակերտը Պետրո-
սէն աւելի շուտ վազելով՝ անկէ առաջ գերեզմանը
5 եկաւ : Ու ծռելով նայեցաւ , ու տեսաւ որ Քկը-
տաւները հոն կը կենային , բայց ինքը ներս չը-
6 մտաւ : Սիմոն Պետրոս ալ հասաւ , որ անոր
ետեւէն կու գար , ու գերեզմանը մտաւ , և տեսաւ
7 կտաւները որ հոն կը կենային . Ի Ու վարշամակը
որ անոր գլուխն էր , ոչ թէ կտաւներուն հետը
չէր , հապա ծալլած զատ մէկ կողմը դրուած էր :
8 Ան ատենը ներս մտաւ միւս աշակերտն ալ՝ որ ա-
ռաջ գերեզմանը եկեր էր , տեսաւ ու հաւատաց :
9 Ինչու որ դեռ Ղգրուածը չէին գիտեր թէ պէտք
10 է որ անիկայ մեռելներէն յարութիւն առնէ : Ետ-
քը աշակերտները նորէն իրենց տունը գացին :
11 Ի Բայց Մարիամ գերեզմանին դուրսը կայներ էր
և կու լար , ու երբոր կու լար՝ դէպ 'ի գերեզմանը
12 ծռեցաւ նայելու . Ու տեսաւ երկու հրեշտակներ
ճերմակ հանդերձներով , որ նստեր էին ուր որ Յի-
սուսի մարմինը դրուած էր , մէկը գլխուն կողմէն՝
13 ու միւսը ոտքին կողմէն : Ու անոնք իրեն ըսին ,
Կնիկ՝ ինչո՞ւ կու լաս . ըսաւ անոնց , Անոր համար
որ իմ Տէրս գերեզմանէն վերցուցին , ու չեմ գի-
14 տեր ուր դրին անիկայ . Է Աս որ ըսաւ , ետին
դարձաւ և տեսաւ Յիսուսը որ կայներ էր , Բ Ու
15 չէր գիտեր թէ Յիսուսն է : Յիսուս անոր ըսաւ ,
Կնիկ՝ ինչո՞ւ կու լաս , ո՞վ կը փնտռես : Ինքը
կարծելով թէ անիկայ պարտիզպանն է , ըսաւ ա-
նոր , Տէր՝ թէ որ դուն վերցուցիր անիկայ , ըսէ
16 ինծի ո՞ւր դրիր զան , որ ես անիկայ առնեմ : Յի-
սուս ըսաւ անոր , Մարիամ . ան ալ դարձաւ ու

Ք Գւ. ժթ. 40 .
Ի Գւ. ժա. 44 .
Ղ Սաղ. ժզ. 10 . Գործ. բ. 25—31 . ժգ. 34 , 35 .
Ի Մար. ժզ. 5 .
Է Մատ. իը. 9 . Մար. ժզ. 9 .
Բ Ղու. իդ. 16 , 31 . Գւ. իա. 4 .

*Եբրայեցերէն անոր ըսաւ , Ռաբբունի , որ
17 Վարդապետ ըսել է : Յիսուս ըսաւ անոր , Ին-
ծի մի՛ դպչիր , ինչու որ դեռ Հօրս քովը ելած
չեմ . հապա գնա ծեղբայրներուս , և ըսէ անոնց ,
Ե Ես կ'ելլեմ իմ Հօրս քովը ու ձեր Հօրը քովը ,
Լ Եւ իմ Աստուծոյս քովը ու ձեր Աստուծոյն քովը :
18 Խ Մարիամ Մագդաղենացին եկաւ ու աշակերտնե-
րուն պատմեց թէ ինքը Տէրը տեսաւ , և թէ ա-
նիկայ աս բաները իրեն զրուցեց :
19 Ժ Եւ նոյն օրը միաշաբթի իրիկունը՝ աշակերտ-
ներուն ժողվուած տեղին դռները գոց ըլլալով՝
Հրէաներէն վախնալնուն համար , Յիսուս եկաւ
և անոնց մէջտեղը կայնեցաւ , ու ըսաւ անոնց , Խա-
20 ղաղութիւն ձեզի : Ու աս ըսելով՝ իր ձեռքերը
ու կողը ցուցուց անոնց . Կ աշակերտներն ալ ու-
21 րախացան՝ երբոր Տէրը տեսան : Ու Յիսուս նո-
րէն ըսաւ անոնց , Խաղաղութիւն ձեզի . Հ Ինչ-
պէս որ Հայրը զիս ղրկեց , ես ալ ձեզ կը ղրկեմ :
22 Ու աս ըսելով՝ անոնց վրայ փչեց , ու ըսաւ ա-
23 նոնց , Առէք Հոգին Սուրբ . Յ Որոնց որ մեղ-
քերը թողուք , թողուած ըլլայ անոնց . և որոնց
որ մեղքերը ետ բռնէք , բռնուած ըլլայ :
24 Բայց տասուերկուքէն մէկը՝ Ղ Երկուորեակ ը-
սուած Թովմաս անոնց հետը չէր՝ երբոր Յիսուս
25 եկաւ : Ուստի միւս աշակերտները կ'ըսէին անոր
թէ Տէրը տեսանք . ան ալ ըսաւ անոնց , Թէ որ
իր ձեռքերուն վրայ բեւեռներուն նշանը չտեսնեմ ,

* Ոմանք չունին .
ծ Սաղ. իբ. 22 . Մատ. իը. 10 . Հռով. ը. 29 . Եբր. բ. 11 .
Ե Գւ. ժզ. 28 .
Լ Եփե. ա. 17 .
Խ Մատ. իը. 10 . Ղու. իդ. 10 .
Ժ Մար. ժզ. 14 . Ղու. իդ. 36 .
ա Կոր. ժե. 5 .
Կ Գւ. ժզ. 22 .
Հ Մատ. իը. 18 . Գւ. ժէ. 18 , 19 . Եբր. գ. 1 . Բ Տիմ. բ. 2 .
Յ Մատ. ժզ. 19 . ժը. 18 .
Ղ Գւ. ժա. 16 .

ու մատս բեւեռներուն տեղը չդնեմ, և իմ ձեռքս
անոր կողը չդնեմ, չեմ հաւատար :
26 Ու ութը օրէն ետև դարձեալ աշակերտները
ներսն էին, Թովմաս ալ անոնց հետ. եկաւ Յի-
սուս՝ դուները գոց ըլլալով, ու կայնեցաւ անոնց
27 մէջտեղը և ըսաւ, Խաղաղութիւն ձեզի : Ետքը
ըսաւ Թովմասին, Մատդ հոս բեր և նայէ իմ
ձեռքերս, ժու բեր քու ձեռքդ և իմ կողս խոթէ,
ու մի ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ :
28 Ու Թովմաս պատասխան տուաւ ու ըսաւ անոր,
29 Իմ Տէրս և իմ Աստուածս : Յիսուս ըսաւ անոր,
Որովհետև դուն զիս տեսար, հաւատացիր. իԵ-
րանի անոնց որ տեսած չեն ու կը հաւատան :
30 լՈւ Յիսուս շատ ուրիշ նշաններ ալ ըրաւ իր
աշակերտներուն առջին, որ աս գրքիս մէջ գրուած
31 չեն. խԲայց ասոնք գրուեցան, որ հաւատաք թէ
Յիսուսը Քրիստոսն է Աստուծոյ Որդին, ծև որ
հաւատալով կեանք ունենաք անոր անունովը :

ԳԼ. ԻԱ.

1 Քրիստոս դարձեալ իր աշակերտներուն կ'երևնայ, ու շատ ձուկ բռնել տալուն հրաշքովը կը ճանչցուի. 12 անոնց հետ ճաշ կ'ընէ. 15 պատուէր կու տայ Պետրոսին որ իր գառները և ոչխարները արածէ. 18 կ'իմացընէ անոր թէ ինչ կերպով պիտի մեռնի. 22 և կը յանդիմանէ անոր հետաքրքրութիւնը Յովհաննէսին վրայով : 25 Վերջաբանութիւն :

1 Ասկէ ետև Յիսուս նորէն ինքզինքը իր աշակերտ-
ներուն յայտնեց Տիբերիայի ծովուն եզերքը,
2 և ասանկ յայտնեց : Մէկտեղ էին Սիմոն Պետ-
րոս ու Թովմաս՝ Երկուորեակ ըսուածը, և աՆա-
թանայէլ որ Գալիլեայի Կանայ քաղաքէն էր, ու
բԶեբեդէոսի որդիքը և աշակերտներէն ուրիշ

ժ ա Յօհ. ա. 1 :
ի բ Կոր. ե. 7 : ա Պետ. ա. 8 :
լ Գլ. իա. 25 :
խ Ղու. ա. 4 :
ծ Գլ. գ. 15, 16 : և 24 : ա Պետ. ա. 9 :
ա Գլ. ա. 45 :
բ Մատ. դ. 21 :

3 երկուք ալ : Սիմոն Պետրոս ըսաւ անոնց, Ես
ձուկ որսալու կ'երթամ. ըսին անոր, Մենք ալ կու
գանք քեզի հետ. ելան և շուտ մը նաւը մտան, ու
4 ան գիշերը բան մը չբռնեցին : Ու երբոր ալ
առտու եղաւ, Յիսուս ծովուն եզերքը կայներ էր,
բայց աշակերտները գչճանչցան թէ Յիսուսն է :
5 Իսկ դՅիսուս ըսաւ անոնց, Տղա՛ք՝ ուտելու բան
մը ունի՞ք. պատասխան տուին իրեն, Ո՛չ :
6 Ու ըսաւ անոնց, եՈւռկանը նաւին աջ կողմը
ձգեցէք ու պիտի գտնէք. ուստի ձգեցին, և ձու-
կերուն շատութենէն՝ ալ չէին կրնար զանիկայ
7 քաշել : զԱն ատենը ան աշակերտը որն որ
Յիսուս կը սիրէր, ըսաւ Պետրոսին, Անիկայ
Տէրն է. իսկ Սիմոն Պետրոս երբոր լսեց թէ
Տէրն է, վերարկուն վրան առաւ, ինչու որ մերկ
8 էր, ու ծովը նետուեցաւ : Ու միւս աշակերտները
նաւակովը եկան, (ինչու որ ցամաքէն հեռու չէին,
միայն թէ երկու հարիւր կանգունի չափ,) ու ուռ-
9 կանը ձուկերովը կը քաշէին : Ու երբոր ցամաքը
ելան, հոն վառած կրակ տեսան, ու վրան ձուկ
10 դրուած, և հաց : Յիսուս ըսաւ անոնց, Բե-
րէք աս ձուկերէն որ դուք հիմա բռնեցիք :
11 Սիմոն Պետրոս նաւը *մտաւ, և ուռկանը ցամա-
քը քաշեց հարիւր յիսունուերեք խոշոր ձուկերով
լեցուն. և այնչափ բան կար ու չպատռեցաւ
12 ուռկանը : Յիսուս ըսաւ անոնց, էԵկէք ճաշ
ըրէք. ու աշակերտներէն մէկն ալ չէր համարձա-
կեր անոր հարցընելու թէ Դուն ո՞վ ես. ինչու որ
13 գիտէին թէ Տէրն է : Ան ատենը Յիսուս եկաւ
ու առաւ հացը և անոնց տուաւ, նոյնպէս ալ ձու-
14 կը : ըԱս երրորդ անգամն է որ Յիսուս իր աշա-

գ Գլ. ի. 14 :
դ Ղու. իդ. 41 :
ե Ղու. ե. 4, 6, 7 :
զ Գլ. ժգ. 23 : ի. 2 :
* Յուն. ելաւ :
է Գոր. ժ. 41 :
ը Գլ. ի. 19, 26 :

կերուններուն երեցաւ՝ մեռելներէն յարութիւն առ-
նելէն ետեւ ։
15 Ու երբոր ճաշը ըրին, Յիսուս ըսաւ Սիմոն
Պետրոսին, Սիմոն՝ Յովնանի որդի, զիս ա-
սոնցմէ աւելի կը սիրե՞ս. անիկայ ըսաւ անոր, Այո՛
Տէր, դուն գիտես որ քեզ կը սիրեմ. ըսաւ
16 անոր, Արածէ իմ գառնուկներս ։ Նորէն երկ-
րորդ անգամ ըսաւ անոր, Սիմոն՝ Յովնանի որդի,
զիս կը սիրե՞ս. ըսաւ անոր, Այո՛ Տէր, դուն
գիտես որ քեզ կը սիրեմ. բ ըսաւ անոր, Արածէ
17 իմ ոչխարներս ։ Ըսաւ անոր երրորդ անգամ,
Սիմոն՝ Յովնանի որդի, զիս կը սիրե՞ս. Պետ-
րոս տրտմեցաւ որ երեք անգամ իրեն ըսաւ թէ
Զիս կը սիրե՞ս. եւ ըսաւ անոր, Տէր՝ գ դուն
ամէն բան գիտես, դուն գիտես որ ես քեզ կը
սիրեմ. ըսաւ անոր Յիսուս, Արածէ իմ ոչ-
18 խարներս ։ դ Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ քեզի,
որ երբ դուն պատանի էիր, ինքզինքդ գօտի կը
կապէիր, ու կ՚երթայիր ուր որ ուզէիր. բայց
երբոր ծերանաս, ձեռքերդ վեր պիտի բռնես, եւ
ուրիշը քեզի գօտի պիտի կապէ ու պիտի տանի
19 ուր որ չես ուզեր ։ Աս բանը ըսաւ, ցուցնելով
թէ ե ինչպիսի մահով պիտի փառաւորէ զԱս-
տուած. ու երբոր աս զրուցեց, ըսաւ անոր,
20 Եկուր իմ ետեւէս ։ Ու Պետրոս դարձաւ ու
տեսաւ այն աշակերտը զ որն որ Յիսուս կը սի-
րէր, որ ետեւէն կ՚երթար, (որ նաեւ ընթրիքին
ատենը անոր կուրծքին վրայ ինկեր եւ ըսեր էր,
21 Տէր՝ ո՞վ է որ քեզ պիտի մատնէ ։) Պետրոս ա-
նիկայ տեսնելով, ըսաւ Յիսուսին, Տէր՝ հապա
22 ասիկայ ի՞նչ պիտի ըլլայ ։ Յիսուս ըսաւ անոր,

բ Գոր․ ի․ 28 ։ Եբր․ ժգ․ 20 ։ ա Պետ․ բ․ 25 ։ ե․ 2, 4 ։
գ Գւ․ բ․ 24, 25 ։ ժզ․ 30 ։
դ Գւ․ ժգ․ 36 ։ Գոր․ ժբ․ 3, 4 ։
ե բ Պետ․ ա․ 14 ։
զ Գւ․ ժգ․ 23, 25 ։ ի․ 2 ։

Թէ որ ես ուզեմ որ ասիկայ կենայ է մինչեւ որ
ես գամ, քու ի՞նչ հոգդ է. դուն իմ ետեւէս
23 եկուր ։ Ալ աս խօսքը ելաւ եղբայրներուն մէջ
թէ այն աշակերտը պիտի չմեռնի. սակայն Յիսուս
չըսաւ անոր թէ պիտի չմեռնի, հապա՝ Թէ որ ես
ուզեմ՝ որ ասիկայ կենայ մինչեւ որ ես գամ, քու
ի՞նչ հոգդ է ։
24 Ասիկայ այն աշակերտն է, որ կը վկայէ աս բա-
ներուս համար, որ գրեց ալ աս բաները. ը Ու
25 գիտենք որ անոր վկայութիւնը ճշմարիտ է ։ թ Ու-
րիշ շատ բաներ ալ կան, որ Յիսուս ըրաւ,
որոնք եթէ մէկիկ մէկիկ գրուած ըլլային, ժ կար-
ծեմ թէ աշխարհս ալ բաւական պիտի չըլլար
պարունակելու այն գիրքերը որ գրուած ըլլային ։

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Քրիստոս դեռ երկինք չհամբարձած՝ իր աշակերտներուն կը
պատուիրէ Երուսաղէմի մէջ Հոգւոյն Սրբոյ գալստեանը ըս-
պասել, խոստանալով որ քիչ օրերէ ետեւ պիտի խրկէ զա-
նիկայ ։ 9 Իր համբարձումէն ետեւ երկու հրեշտակներ կ՚ե-
րեւնան անոնց, որ իր երկրորդ գալստեանը վրայով կը խօ-
սին ։ 12 Առաքեալները Երուսաղէմ կը դառնան, ու ա-
ղօթքի կը պարապին, եւ Մատաթիան առաքեալ կ՚ընտրեն
մատնիչ Յուդային տեղը ։

1 Առջի պատմութիւնը ըրի, ո՛վ ա Թէոփիլոս,
այն ամէն բաներուն վրայ որ Յիսուս սկսաւ
2 ընել եւ սորվեցընել, բ Մինչեւ այն օրը որ Հոգւոյն

է Մատ․ ժզ․ 27, 28 ։ իե․ 31 ։ ա Կոր․ դ․ 5 ։ ժա․ 26 ։ Յայտ․ բ․ 25 ։ գ․ 11 ։ իբ․ 7, 20 ։
ը Գւ․ ժթ․ 35 ։ գ Յովհ․ 12 ։
թ Գւ․ ի․ 30 ։
ժ Ամով․ է․ 10 ։
ա Ղու․ ա․ 3 ։
բ Մատ․ իը․ 19 ։ Մար․ ժզ․ 15 ։ Յովհ․ ի․ 21 ։ Գւ․ ժ․ 41, 42 ։

Սրբոյ միջոցաւը պատուէր տուաւ իր ընտրած ա-
3 ռաքեալներուն , գու համբարձաւ . դՈր անոնց
ինքզինքը ցուցուց կենդանի իր չարչարանքներէն
ետև շատ ապացոյցներով , քառասուն օրուան
մէջ անոնց երևնալով ու Աստուծոյ թագաւորու-
4 թեանը վրայ խօսելով ։ եՆա անոնց հետ մէկտեղ
*գտնուած ատենը կ'ապսպրէր անոնց որ Երուսա-
ղէմէն չհեռանան , հապա սպասեն Հօրը խոստ-
5 մունքին , զոր ան ինծմէ լսեցիք կ'ըսէր ։ էԻնչու
որ իրաւ Յովհաննէս ջրով մկրտեց , ըբայց դուք
ասկէ շատ օրեր չանցած՝ Սուրբ Հոգիով պիտի
6 մկրտուիք ։ Անոնք ալ մէկտեղ գալով կը հար-
ցընէին իրեն ու կ'ըսէին , թՏէ՛ր ժԻսրայէլի թա-
գաւորութիւնը աս ժամանակի՞ս մէջ նորէն պիտի
7 հաստատես ։ Նա ըսաւ անոնց , իՁեզի չվերաբե-
րիր ժամերը և ժամանակները գիտնալը , որն որ
8 Հայրը իր իշխանութեանը մէջ դրաւ . Բայց լՀո-
գւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը խզօրութիւն
պիտի առնէք , ծու ինծի համար վկաներ պիտի
ըլլաք Երուսաղէմի մէջ և բոլոր Հրէաստանի ու
9 Սամարիայի մէջ ու մինչև երկրի ծայրերը ։ կՆա
աս բաները որ ըսաւ , երբոր անոնք կը նայէին ,
հհամբարձաւ , և ամպ մը զանիկայ անոնց աչքէն
10 առաւ ։ Ու քանի որ աչքերնին տնկած դէպ 'ի
երկինքը կը նայէին անոր երթալուն վրայ , ահա

գ Մար. ժզ. 19 ։ Ղու. թ. 51 ։ իդ. 51 ։ Հմր 9 ։ ա Տիմ. գ. 16 ։
դ Մար. ժզ. 14 ։ Ղու. իդ. 36 ։ Յոհ. ի. 19, 26 ։ իա. 1, 14 ։ ա Կոր. ժե. 5 ։
ե Ղու. իդ. 43, 49 ։
* Կամ հաց կերած
զ Ղու. իդ. 49 ։ Յոհ. ժդ. 16, 26, 27 ։ ժե. 26 ։ ժզ. 7 ։ Գր. բ. 33 ։
է Մատ. գ. 11 ։ Գր. ժա. 16 ։ ժթ. 4 ։
ը Յովէլ. գ. 18 ։ Գր. բ. 4 ։ ժա. 15 ։
թ Մատ. իդ. 3 ։
ժ Ես. ա. 26 ։ Դան. է. 27 ։ Ամով. թ. 11 ։
ի Մատ. իդ. 36 ։ Մար. ժգ. 32 ։ ա Թես. ե. 1 ։
լ Ղու. իդ. 49 ։
խ Գր. բ. 1, 4 ։
ծ Ղու. իդ. 48 ։ Յոհ. ժե. 27 ։ Հմր 22 ։ Գր. բ. 32 ։
կ Ղու. իդ. 51 ։ Յոհ. զ. 53 ։
հ Հմր 2 ։

երկու մարդ իրենց քովը կայնեցան ձճերմակ հան-
11 դերձներով , Որոնք նաև ըսին , ղՈ՛վ Գալիլեացի
մարդիկ ինչո՞ւ կայներ դէպ 'ի երկինքը կը նայիք .
աս Յիսուսը որ ձեզմէ երկինքը համբարձաւ ,
ճասանկ պիտի գայ՝ ինչպէս որ տեսաք անոր երկինք
12 երթալը ։ մԱն ատենը Երուսաղէմ դարձան
Ձիթենեաց ըսուած լեռնէն , որ շաբաթ օրուան
13 ճամբու չափ մօտ է Երուսաղէմին ։ Ու երբոր
ներս մտան , ելան յվերնատունը , ուր որ կը
բնակէին նՊետրոս և Յակոբոս , Յովհաննէս և
Անդրէաս , Փիլիպպոս և Թովմաս , Բարթուղի-
մէոս և Մատթէոս , Յակոբոս Ալփէոսեան ու շՍի-
մոն Նախանձայոյզ և ոՅուդա Յակոբեան ։
14 չԱնոնք ամէնը միաբանութեամբ միշտ աղօթք ու
աղաչանք կ'ընէին պկիներուն հետ , և Յիսուսի
մօրը Մարիամին ջու անոր եղբայրներուն հետ
մէկտեղ ։
15 Նա ան օրերը ելաւ Պետրոս աշակերտներուն
մէջը , (ու որ հարիւր քսան հոգիի չափ ժողովուած
16 բազմութիւն կար ,) ու ըսաւ , Մարդիկ եղբայր-
ներ՝ պէտք էր որ կատարուէր աս գրուածը , ռորն
որ առաջուց Հոգին Սուրբ Դաւիթին բերնովը
ըսաւ Յուդային համար՝ որ Յիսուսը բռնողներուն
17 սառաջնորդ եղաւ . Ինչու որ վանիկայ մեզի հետ
էր մեր համրանքին մէջ , տև աս պաշտօնէն ու

ձ Մատ. իը. 3 ։ Մար. ժզ. 5 ։ Ղու. իդ. 4 ։ Յոհ. ի. 12 ։ Գր. ժ. 3, 30 ։
ղ Գր. բ. 7 ։ ժգ. 31 ։
ճ Դան. է. 13 ։ Մատ. իդ. 30 ։ Մար. ժգ. 26 ։ Ղու. իա. 27 ։ Յոհ. ժդ. 3 ։ ա Թես. ա. 10 ։ դ. 15 ։ բ Թես. ա. 10 ։ Յայտ. ա. 7 ։
մ Ղու. իդ. 52 ։
յ Գր. թ. 37, 39 ։ ի. 8 ։
ն Մատ. ժ. 2, 3, 4 ։
շ Ղու. զ. 15 ։
ո Յուդ. 1 ։
չ Գր. բ. 1, 46 ։
պ Ղու. իգ. 49, 55 ։ իդ. 10 ։
ջ Մատ. ժգ. 55 ։
ռ Սաղ. խա. 9 ։ Յոհ. ժգ. 18 ։
ս Ղու. իբ. 47 ։ Յոհ. ժը. 3 ։
վ Մատ. ժ. 4 ։ Ղու. զ. 16 ։
տ Հմր 25 ։ Գր. ժբ. 25 ։ ի. 24 ։ իա. 19 ։

18 բաժին ունէր ։ Ասիկայ ɾ անիրաւութեան վարձ-
քով ɔ ագարակ մը ստացաւ, ու գլխիվար իյնալով
մէջտեղէն ճեղքուեցաւ, եւ իր ամէն փորոտիքը
19 դուրս թափեցաւ ։ Ու այս բանը Երուսաղէմ
բնակողներուն ամենուն յայտնի եղաւ, մինչեւ որ
իրենց լեզուովը այն ագարակին անունը Ակեղդամա
20 դրուեցաւ, այսինքն Արեան ագարակ ։ Քանզի որ
Սաղմոսաց գրքին մէջ գրուած է թէ − Անոր
բնակարանը աւերակ ըլլայ, ու անոր մէջը բնակող
մը չըլլայ, ÷ եւ անոր պաշտօնը ուրիշը առնէ ։
21 Ուրեմն պէտք է որ այս մարդիկներէն՝ որ մեր հետը
եղան այն բոլոր ատենը, որ Տէր Յիսուս մէջերնիս
22 մտաւ ու ելաւ, + Յովհաննէսին մկրտութենէն
սկսած՝ մինչեւ այն օրը • որ մեզմէ համբարձաւ,
ասոնցմէ մէկը ‡ մեզի հետ վկայ ըլլայ անոր յարու-
23 թեանը ։ Եւ երկու հոգի կայնեցուցին, Յովսէփը՝
որ = Բարսաբայ կը կոչուէր, որ Յուստոս ալ մա-
24 կանուանեցաւ, ու Մատաթիան ։ Եւ աղօթք ընե-
լով ըսին, Դուն՝ ով Տէր, ⊦ որ ամենուն սիրտը
գիտես, այս երկուքէս մէկը որն որ ընտրեցիր,
25 Դուն յայտնէ ։ ‡ Որ այս պաշտօնիս եւ առաքելու-
թեանս վիճակը առնէ, որ անկէ Յուդա ինկաւ
26 իր տեղը երթալու ։ Եւ անոնց համար վիճակ
ձգեցին, ու վիճակը Մատաթիային ելաւ, եւ անի-
կայ տասնումէկ առաքելոց հետ սեպուեցաւ ։

ɾ Մատ. իզ. 15 ։ բ Պետ. բ. 15 ։
ɔ Մատ. իէ. 5, 7, 8 ։
− Սաղ. կթ. 25 ։
÷ Սաղ. ճթ. 8 ։
+ Մար. ա. 1 ։
• Հմր 9 ։
‡ Յոհ. ժե. 27 ։ Հմր 8 ։ Գլ. դ. 33 ։
= Գլ. ժե. 22 ։
⊦ ա Թագ. ժզ. 7 ։ ա Մն. իը. 9 ։ իթ. 17 ։ Երեմ. ժա. 20 ։ ժէ. 10 ։ Գլ. ժե. 8 ։ Յայտ. բ. 23 ։
‡ Հմր 17 ։

ԳԼ. Բ

1 Առաքեալները Սուրբ Հոգիով լեցուած՝ զանազան լեզուներ կը խօսին. ոմանք կը զարմանան անոնց վրայ, եւ ոմանք ալ ծաղր կ'ընեն զանոնք ։ 14 Պետրոս պատասխան կու տայ ա-

նոնց, եւ կը ցուցնէ թէ առաքեալները Սուրբ Հոգիին զօրութեամբը կը խօսէին, թէ Յիսուս մեռելներէն յարութիւն առած երկինքը համբարձած է, եւ թէ այն նոյն Սուրբ Հոգին ղրկած է ։ 37 Շատ մարդիկ դարձի գալով կը մկրտուին. 41 որոնք ջերմեռանդութեամբ եւ սիրով կը միաբանին զԱստուած պաշտելու ։ 43 Առաքեալները շատ հրաշքներ եւ նշաններ կ'ընեն, եւ Աստուած ամէն օր իր եկեղեցին կ'աճեցնէ ։

1 Եւ = Պենտէկոստէին օրը հասնելուն՝ ⊧ ամէնքն
2 ալ միաբան մէկտեղ էին ։ Ու յանկարծակի
երկինքէն ձայն մը եղաւ սաստկաշունչ հովի մը
հոսանքին պէս, ‡ եւ բոլոր տունը լեցուց՝ ուր որ նստեր
3 էին ։ Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց
որպէս թէ կրակէ, ու ամէն մէկուն վրայ նստաւ ։
4 Եւ ŧ ամէնքն ալ Հոգւով Սրբով լեցուեցան,
⊦ ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս որ
5 Հոգին իրենց խօսիլ կու տար ։ Ու Երուսաղէմի
մէջ բնակած Հրեաներ կային՝ աստուածավախ
մարդիկ երկինքին տակը եղած բոլոր ազգերէն
6 ժողվուած ։ Ու երբոր այս ձայնը եղաւ, բազմու-
թիւնը մէկտեղ եկաւ ու խռովեցաւ. քանզի որ կը
լսէին որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը
7 խօսէին ։ Ամէնքն ալ կը սքանչանային ու կը
զարմանային եւ իրարու կ'ըսէին, Չէ՞ որ ահա
ասոնք ամէնն ալ որ կը խօսին, ղ Գալիլեացի
8 են ։ Եւ ի՞նչպէս կը լսենք մենք մեր ամէն մէկ
9 լեզուովը՝ որ անոր մէջը ծնած ենք ։ Պարթեւք եւ
Մարք ու Եղամացիք, եւ անոնք որ կը բնակին Մի-
ջագետքի մէջ, եւ Հրէաստանի ու Կապադովկիայի
10 մէջ, Պոնտոսի ու Ասիայի մէջ, Փռիւգիայի եւ
Պամփիւլիայի մէջ, Եգիպտոսի մէջ, եւ Կիւրենէի
մօտ Լիբէացւոց կողմերուն մէջ, նաեւ Հռոմայե-

= Ղև. իգ. 15 ։ բ Օր. ժզ. 9 ։ Գլ. ի. 16 ։
⊧ Գլ. ա. 14 ։
‡ Գլ. դ. 31 ։
ŧ Գլ. ա. 5 ։
⊦ Մար. ժզ. 17 ։ Գլ. ժ. 46 ։ ժթ. 6 ։ ա Կոր. ժբ. 10, 28, 30 ։ ժգ. 1 ։ ժդ. 2, [illegible] ։
ղ Գլ. ա. 11 ։

11 ցի պանդուխտներ , թէ Հրեաներ և թէ նորա-
հաւատներ , Կրետացիներ և Արաբացիներ , կը
լսենք անոնցմէ որ մեր լեզուներով կը խօսին Աս-
12 տուծոյ մեծամեծ բաները : Կը զարմանային ա-
մէնքն ալ ու տարակուսած իրարու կ'ըսէին , Ի՞նչ
13 պիտի ըլլայ աս : Ոմանք ալ ծաղր ընելով կ'ը-
սէին թէ Անոնք նոր գինիով լեցուեր են :
14 Բայց Պետրոս ելաւ տասնումէկին հետ մէկտեղ ,
ձայնը վերցուց ու խօսեցաւ անոնց , Ով Հրէայ
մարդիկ՝ և դուք ամէնքդ որ Երուսաղէմ կը բնա-
կիք , աս ձեզի յայտնի ըլլայ , ու ականջ դրէք
15 իմ խօսքերուս : Քանզի չէ թէ ասոնք գինովցած
են , ինչպէս որ դուք կը կարծէք · է ինչու որ դեռ
16 օրուան երրորդ ժամն է · Հապա ասիկայ ան է
17 որ Յովէլ մարգարէին ձեռքովը ըսուեցաւ · ը Նաև
պիտի ըլլայ որ վերջին օրերը՝ կ'ըսէ Աստուած ,
թ իմ Հոգիէս ամէն մարմնոյ վրայ պիտի թափեմ ,
ու ձեր տղաքը ժ և ձեր աղջիկները պիտի մարգա-
րէանան , ու ձեր երիտասարդները տեսիլքներ պի-
տի տեսնեն , և ձեր ծերերը երազներ պիտի տես-
18 նեն · Նաև իմ ծառաներուս վրայ ու իմ աղախիննե-
րուս վրայ ալ ան օրերը իմ Հոգիէս պիտի թա-
19 փեմ , ի և պիտի մարգարէանան : լ Ու վերը եր-
կինքը հրաշքներ պիտի ցուցընեմ , ու վարը երկիրը
նշաններ , արիւն ու կրակ և ծուխի մառախուղ ·
20 խ Արևը խաւարի պիտի դառնայ , և լուսինը արիւ-
21 նի , դեռ Տէրոջը մեծ ու երևելի օրը չեկած : Նաև
պիտի ըլլայ որ ծ ամէն ով որ Տէրոջը անունը կան-
22 չէ , պիտի փրկուի : Ով Իսրայէլացի մարդիկ՝

է ա Թես . ե . 7 :
ը Ես . խդ . 3 : Եզեկ . ժա . 19 : լզ . 27 : Յովել . բ . 28 , 29 : Զաք . ժբ . 10 : Յոհ . է . 38 :
թ Գր . ժ . 45 :
ժ Գր . իա . 9 :
ի Գր . իա . 4 , 9 , 10 : ա Կոր . ժբ . 10 , 28 : ժդ . 1 , լթ :
լ Յովել . բ . 30 , 31 :
խ Մատ . իդ . 29 : Մար . ժգ . 24 : Ղու . իա . 25 :
ծ Հռով . ժ . 13 :

ճանչցէք աս խօսքերը · Յիսուս Նազովրեցին՝ Աս-
տուծմէ ձեզի ցուցուած մարդ մը կ զօրութիւններով
ու հրաշքներով և նշաններով , որ Աստուած անոր
ձեռքովը ըրաւ ձեր մէջը , ինչպէս որ դուք ալ գի-
23 տէք · Անիկայ հ Աստուծոյ որոշած խորհուրդովը և
կանխագիտութեամբը մատնուած ըլլալով՝ ձ ա-
ռիք և * անօրէններու ձեռքով փայտի վրայ գամե-
24 լով սպաննեցիք · ղ Որն որ Աստուած յարուց՝ մա-
հուան ցաւերը քակելով , քանզի չէր կրնար որ ան-
25 քը անկէ բռնուի : Ինչու որ Դաւիթ անոր հա-
մար կ'ըսէ , ճ Առաջուս ամէն ատեն Տէրը կը տես-
նէի իմ առջիս , քանզի իմ աջ կողմս է , որ
26 չսասանիմ · Անոր համար ուրախ եղաւ իմ սիրտս ,
ու իմ լեզուս ցնծաց , նաև իմ մարմինս ալ յու-
27 սով պիտի հանգստանայ · Վասն զի իմ անձս
գերեզմանին մէջը պիտի չթողուս, ու քու Սուրբիդ
28 ալ ապականութիւն տեսնել պիտի չտաս : Կե-
նաց ճամբաները ինծի ճանչցուցիր · քու երեսիդ
29 ուրախութիւնովը զիս պիտի լեցընես : Մարդիկ
եղբայրներ՝ արժան է համարձակ զրուցել ձեզի
մ Դաւիթ նահապետին համար , թէ մեռաւ ու
թաղուեցաւ , և անոր գերեզմանը մինչև աս օրս
30 մեր մէջն է : Արդ որովհետև անիկայ մարգարէ
էր , և յ գիտէր թէ Աստուած հաստատ երդում
ըրաւ իրեն , թէ իր երիկամանցը պտուղէն մարմնոյ
կողմանէ Քրիստոսը պիտի յարուցանէ որ իր աթո-
31 ռը նստի , Ինքը կանխատեսութեամբ խօսեցաւ

կ Յոհ . գ . 2 : ժդ . 10 , 11 : Գր . ժ . 38 : Եբր . բ . 4 :
հ Մատ . իզ . 24 : Ղու . իբ . 22 : իդ . 44 : Գր . գ . 18 : դ . 28 :
ձ Գր . ե . 30 :
* Կամ անօրէն
ղ Հմր 32 : Գր . գ . 15 : դ . 10 : ժ . 40 : ժգ . 30 , 34 : ժէ . 31 : Հռով . դ . 24 : ը . 11 : ա Կոր . զ . 14 : ժե . 15 : բ Կոր . դ . 14 : Գաղ . ա . 1 : Եփե . ա . 20 : Կող . բ . 12 : ա Թես . ա . 10 : Եբր . ժգ . 20 : ա Պետ . ա . 21 :
ճ Սաղ . ժզ . 8 :
մ գ Թագ . բ . 10 : Գր . ժգ . 36 :
յ բ Թագ . է . 12 , 13 : Սաղ . ճլբ . 11 : Ղու . ա . 32 , 69 : Հռով . ա . 3 : բ Տիմ . բ . 8 :

[ի]Քրիստոսի յարութեանը համար, թէ անոր ան-
ձը գերեզմանը չթողուեցաւ, և անոր մարմինը
32 ապականութիւն չտեսաւ: [լ]Այս Յիսուսը Աս-
տուած յարուց, [խ]որուն մենք ամէնքս ալ վկայ
33 ենք: Ուստի [ծ]Աստուծոյ աջ ձեռքովը բարձրա-
նալով, ու [կ]Հոգւոյն Սրբոյ խոստումը Հօրմէն
առնելով՝ [հ]տարածեց ասիկա, որ դուք հիմա կը
34 տեսնէք և կը լսէք: Ինչու որ Դաւիթ երկինքը
չելաւ, բայց ինքը կ'ըսէ, [ձ]Տէրը իմ Տէրոջս ը-
35 սաւ, [ղ]Նստէ իմ աջ կողմս, Մինչև որ քու
թշնամիներդ ոտքերուդ պատուանդան դնեմ:
36 Ուստի բոլոր Իսրայէլի տունը ճշմարտապէս թող
գիտնայ, որ [ճ]Աստուած զանիկա Տէր ալ ըրաւ
Օծեալ ալ, այն Յիսուսը որ դուք խաչեցիք:
37 Ու [մ] որ լսեցին՝ իրենց սրտերուն մէջ զղջացին
և ըսին Պետրոսին ու միւս առաքեալներուն, Մար-
38 դի՛կ եղբայրներ՝ ի՞նչ ընենք: Եւ Պետրոս ըսաւ ա-
նոնց, [յ]Ապաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը
թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը մե-
ղաց թողութեան համար, և Հոգւոյն Սրբոյ
39 պարգևը պիտի ընդունիք: Ինչու որ խոստումը
ձեզի է [ն]ու ձեր որդւոցը, [շ]և ամէն հեռու
եղողներուն՝ որոնք որ մեր Տէր Աստուածը պիտի
40 կանչէ: Եւ ուրիշ շատ խօսքերով վկայութիւն կու
տար, ու կը յորդորէր զանոնք և կ'ըսէր, Այս խոտո-
41 րած ազգէն ինքզինքնիդ ազատեցէք: Եւ անոնք որ
սրտանց ընդունեցին անոր խօսքերը, մկրտուեցան.

ի Սաղ. ժզ. 10: Գղ. ժգ. 35:
լ Հմր 24:
խ Գղ. ա. 8:
ծ Գղ. ե. 31: Փիլ. բ. 9: Եբր. ժ. 12:
կ Յոհ. ժդ. 26: ժե. 26: ժզ. 7, 13: Գղ. ա. 4:
հ Գղ. ժ. 45: Եփե. դ. 8:
ձ Սաղ. ճժ. 1: Մատ. իբ. 44:
ղ Ա Կոր. ժե. 25: Եփե. ա. 20: Եբր. ա. 13:
ճ Գղ. ե. 31:
մ Զաք. ժբ. 10: Ղուկ. գ. 10: Գղ. թ. 6: ժզ. 30:
յ Ղուկ. իդ. 47: Գղ. գ. 19:
ն Յովել. բ. 28: Գղ. գ. 25:
շ Գղ. ժ. 45: ժա. 15, 18: ժդ. 26: ժե. 3, 8, 14: Եփե. բ. 13, 17:

ու այն օրը իրեք հազար հոգիի չափ աւելցան:
42 [ս]Եւ միշտ առաքելոց վարդապետութեանը հետևէ
էին, ու միաբանութեանը և հաց կտրելուն
ու աղօթքներուն:
43 Եւ ամէն մարդու վրայ վախ ինկաւ. և [տ]առա-
քելոց ձեռքովը շատ հրաշքներ ու նշաններ կը գոր-
44 ծուէին: Ու բոլոր հաւատացեալները մէկտեղ
45 էին, [ր]և ամէն բաներնին հասարակաց էր: Ու
ստացուածքնին և ունեցած բաներնին կը ծախէին,
[ց]ու անոնց գինը կը բաժնէին ամենուն, որուն որ
46 բան մը պէտք ըլլար: Եւ [ւ]ամէն օր միաբանու-
թեամբ [փ]տաճարը երթալու հետևէ էին, [ք]և տու-
ներնին հաց կը կտրէին, ու կերակուրնին կ'ուտէին
47 ուրախութեամբ և միամտութեամբ սրտի. Զաս-
տուած կ'օրհնէին, [օ]ու բոլոր ժողովուրդին առջևը
շնորհք կը գտնէին. [ֆ]և Տէրը օրէ օր փըր-
կուածները կ'աւելցընէր եկեղեցիին:

ԳԼ. Գ

1 Պետրոս կը քարոզէ բժշկուած կաղը տեսնելու եկող ժողովրդոց. 12 կը խոստովանի որ այն բժշկութիւնը չէ՛ թէ իրեն կամ Յովհաննէսին զօրութեամբը եղաւ, այլ Աստուծոյ և իր Որդւոյն Յիսուսին ձեռօքը, ու անոր անուանը հաւատքովը. 13 նաև կը յանդիմանէ զանոնք Յիսուսը խաչելնուն համար, 19 և կը յորդորէ զանոնք զղջումով ու հաւատքով թողութիւն խնդրելու իրենց մեղքերուն, և փրկուելու նոյն Յիսուսին ձեռքովը:

1 Արդ Պետրոս ու Յովհաննէս [ա]իններորդ ժամու
աղօթքին ատենը մէկտեղ [բ]տաճարը կ'ելլէին:
2 [գ]Եւ իր մօրը որովայնէն կաղ ծնած մարդ մը կը
բերուէր, որ զանիկա ամէն օր տաճարին Գեղեցիկ

ս Հմր 46: Գղ. ա. 14: Հռով. ժբ. 12: Եփե. զ. 18: Կող. դ. 2: Եբր. ժ. 25:
տ Մար. ժզ. 17: Գղ. դ. 33: ե. 12:
ր Գղ. դ. 32, 34:
ց Ես. ծը. 7:
ւ Գղ. ա. 14:
փ Ղուկ. իդ. 53: Գղ. ե. 42:
ք Գղ. ի. 7:
օ Ղուկ. բ. 52: Գղ. դ. 33: Հռով. ժդ. 18:
ֆ Գղ. ե. 14: ժա. 24:
ա Սաղ. ծե. 17:
բ Գղ. բ. 46:
գ Գղ. ժդ. 7:

կոչուած դրանը քով կը դնէին, [ա] որ տաճարը
3 մտնողներէն ողորմութիւն խնդրէ : Նոյնկայ տես-
նելով Պետրոսը և Յովհաննէսը՝ որ տաճարը
մտնելու վրայ էին, կ'աղաչէր որ ողորմութիւն
4 առնէ : Իսկ Պետրոս Յովհաննէսին հետ մէկտեղ
5 անոր նայեցաւ ու ըսաւ, Մեզի նայէ · Ան ալ
դէպ 'ի անոնց դարձաւ ու կը յուսար անոնցմէ
6 բան մը առնել : Նաև Պետրոս ըսաւ, Արծաթ ու
ոսկի չունիմ, հապա ինչ որ ունիմ՝ ան քեզի կու
տամ · [բ] Նազովրեցի Յիսուս Քրիստոսին անու-
7 նովը ելիր ու քալէ : Ու անոր աջ ձեռքէն բռնեց՝
վերցուց զանիկայ, ու իսկոյն անոր ոտքին թաթերը
8 ու կոճերը զօրացան : [գ] Ու վեր ցատկելով կայ-
նեցաւ ու կը քալէր, և անոնց հետ տաճարը
մտաւ, քալելով ու ցատկելով և զԱստուած
9 օրհնելով : [դ] Ու բոլոր ժողովուրդը տեսաւ զանի-
10 կայ, որ կը քալէր ու կ'օրհնէր զԱստուած · Ու
կը ճանչնային թէ անիկայ էր, [ե] որ ողորմութեան
համար տաճարին Գեղեցիկ կոչուած դրանը քով
կը նստէր · և զարմանքով ու ապշութեամբ լե-
ցուեցան անոր եղած բանին համար :
11 Ու քանի որ * անիկայ Պետրոսին ու Յովհաննէ-
սին յարեր էր, բոլոր ժողովուրդը զարմացած մէկ-
տեղ վազեցին անոնց քովը ան սրահը [զ] որ Սողոմո-
12 նինը կ'ըսուէր : Ու տեսնելով Պետրոս, պա-
տասխան տուաւ ժողովուրդին, Ով Իսրայելացի
մարդիկ՝ ինչո՞ւ զարմացեր էք ասոր վրայ, կամ
ինչո՞ւ աչքերնիդ տնկած մեզի կը նայիք, որպէս
թէ մենք մեր զօրութեամբը կամ բարեպաշտու-
13 թեամբը ասոր քալել տուած ըլլանք : [է] Աբրա-
համին ու Իսահակին և Յակոբին Աստուածը՝ մեր

ա Յոհ. թ. 8 ;
բ Գլ. դ. 10 ;
գ Եսա. լե. 6 ;
դ Գլ. դ. 16, 21 ;
ե Յոհ. թ. 8 ;
* Ոմանք՝ ան բժշկուած կաղը
զ Յոհ. ժ. 23 ; Գլ. ե. 12 ;
է Գլ. ե. 30 ;

հայրերուն Աստուածը՝ [ը] փառաւորեց իր * Որդին
Յիսուսը, [թ] որն որ դուք մատնեցիք, [ժ] և ուրացաք
Պիղատոսին առջեւը՝ երբոր ինքը վճռեց որ արձակէ :
14 Բայց դուք ան [ի] Սուրբը և [լ] Արդարը ուրացաք, ու
խնդրեցիք որ մարդասպան մարդ մը ձեզի շնորհուի ·
15 Ու կենաց Առաջնորդը սպաննեցիք, [խ] որ զանիկայ
Աստուած մեռելներէն յարուց, [ծ] որուն մենք վկայ
16 ենք · Ու անոր անուանը հաւատքով, [կ] Անոր
անունը հաստատեց ասիկայ՝ որն որ դուք կը տես-
նէք ու գիտէք · և ան հաւատքը որ անով է՝ աս
առողջութիւնը ասոր տուաւ ձեր ամենուն առջեւը :
17 Ու հիմա եղբայրներ՝ [հ] գիտեմ որ չգիտնալով ը-
18 րիք, ինչպէս որ ձեր իշխաններն ալ : [ձ] Բայց
Աստուած ինչ որ առաջուց [ղ] իր բոլոր մարգարէ-
ներուն բերնովը յայտներ էր Քրիստոսի չարչա-
19 րուելուն վրայով, այսպէս կատարեց : [ճ] Ուստի
ապաշխարեցէք ու դարձի եկէք, որ մեղքերնիդ
20 ջնջուի · Որպէս զի սփոփանաց ժամանակները
գան Տէրոջը երեսէն, և առաջուց ձեզի քա-
21 րոզուած Յիսուս Քրիստոսը խրկէ : [մ] Որ զա-
նիկայ պէտք է որ երկինքը ընդունի մինչև ան
ատենները՝ [յ] որ ամէն բաները կարգադրուին,
[ն] որոնց համար Աստուած սկիզբէն 'ի վեր իր սուրբ
22 մարգարէներուն բերնովը խօսած է : Մովսէս Դր

ը Յոհ. է. 39 ; ժբ. 16 ; ժէ. 1 ;
* Կամ ծառան
թ Մատ. իէ. 2 ;
ժ Մատ. իէ. 20 ; Մար. ժե. 11 ; Ղու. իգ. 18, 20, 21 ; Յոհ. ժը. 40 ; ժթ. 15 ; Գլ. ժգ. 28 ;
ի Սաղ. ժզ. 10 ; Մար. ա. 24 ; Ղու. ա. 35 ; Գլ. բ. 27 ; դ. 27 ;
լ Գլ. է. 52 ; իբ. 14 ;
խ Գլ. բ. 24 ;
ծ Գլ. բ. 32 ;
կ Մատ. թ. 22 ; Գլ. դ. 10 ; ժդ. 8 ;
հ Ղու. իգ. 34 ; Յոհ. ժզ. 3 ; Գլ. ժգ. 27 ; ա Կոր. բ. 8 ; ա Տիմ. ա. 13 ;
ձ Ղու. իդ. 44 ; Գլ. իգ. 22 ;
ղ Սաղ. իբ ; Եսա. ծ. 6 ; ծգ. 5, [illegible] ; Դան. թ. 26 ; ա Պետ. ա. 10, 11 ;
ճ Գլ. բ. 38 ;
մ Գլ. ա. 11 ;
յ Մատ. ժէ. 11 ;
ն Ղու. ա. 70 ;

հայրերուն ըսաւ թէ ղՔեր Տէր Աստուածը ձեր
եղբայրներէն ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ
ձեզի , անոր մտիկ ըրէք՝ ամէն ինչ որ ձեզի
23 խօսի ։ Եւ պիտի ըլլայ թէ ամէն մէկ որ այն
մարգարէին մտիկ չընէ , ժողովուրդին մէջէն
24 պիտի կորսուի ։ Ու բոլոր մարգարէները՝ որ
Սամուէլէն 'ի վեր խօսեցան , աս օրերուս համար
25 ալ իմացուցին ։ ճ Դուք էք մարգարէներուն
որդիքը և այն ուխտին , որ Աստուած մեր հայ-
րերուն հետ ըրաւ , ու ըսաւ Աբրահամին , մԵւ
քու սերունդովդ պիտի օրհնուին երկրի բոլոր ազ-
26 գերը ։ յ Աստուած իր Որդին յարուցանելով
ն առաջ ձեզի ղրկեց զանիկայ որ ձեզ օրհնէ ,
ո ամէն մէկերնիդ ձեր չարութիւններէն դարձը-
նելով ։

ԳԼ. Դ

1 Հրէից իշխանները Պետրոսին քարոզութեանը վրայ բարկանալով՝ կը բանտարկեն զանիկայ Յովհաննէսին հետ , 4 այսու ամենայնիւ Աստուծոյ խօսքը լսողներէն հազարաւոր անձինք դարձի կու գան ։ 5 Ետքը երբոր իշխանները զանոնք դատաստանի կը հանեն , Պետրոս համարձակ կը հաստատէ թէ այն կաղը Յիսուսի անունովը բժշկուեցաւ , և թէ միայն նոյն Յիսուսին անունովը կրնանք փրկուիլ ։ 13 բայց իշխանները սպառնալիքներով կը պատուիրեն Պետրոսին ու Յովհաննէսին որ մէյմըն ալ այն անունով չքարոզեն ։ 23 ասոր վրայ եկեղեցւոյ անդամները աղօթքի կը պարապին , 31 և Աստուած շարժելով անոնց գտնուած տեղը , վկայութիւն կու տայ թէ անոնց աղօթքը լսած է , ու կը հաստատէ եկեղեցին՝ Սուրբ Հոգիին շնորհքը և միաբանական սէր պարգևելով անոր ։

1 Ու երբոր անոնք ժողովուրդին կը խօսէին , քահա-
նաները ու տաճարին իշխանը և սադուկեցի-
2 ները անոնց վրայ հասան , Դժուարելով որ ա-

ղ բ Օր. ժը. 15, 18, 19 ։ Գէ. է. 37 ։
ճ Գէ. բ. 39 ։ Հռով. թ. 4, 8 ։ ժե. 8 ։ Գաղ. գ. 26 ։
մ Ծն. ժբ. 3 ։ ժը. 18 ։ իբ. 18 ։ իզ. 4 ։ իը. 14 ։ Գաղ. գ. 8 ։
ն Մատ. ժ. 5 ։ ժե. 24 ։ Ղու. իդ. 47 ։ Գէ. ժգ. 32, 33, 46 ։
յ Հմր 22 ։
ո Մատ. ա. 21 ։

նոնք ժողովուրդին կը սորվեցնէին , և Յիսուսի
միջոցովը ռ մեռելներէն յարութիւն առնելը կը քա-
3 րոզէին ։ Ու ձեռք զարկին անոնց և բանտը դրին
զանոնք մինչև հետևեալ օրը , ինչու որ ալ իրիկուն
4 էր ։ Բայց այն խօսքը լսողներէն շատերը հաւա-
տացին , ու մարդոց թիւը հինգ հազարի չափ ե-
ղաւ ։
5 Ու եղաւ որ հետևեալ օրը մէկտեղ ժողվուեցան
անոնց իշխանները և ծերերը ու դպիրները Երու-
6 սաղեմի մէջ , ս Աննա քահանայապետը ու
Կայիափան և Յովհաննէսը ու Աղէքսանդրոսը
7 և այն ամէնը որ քահանայապետի ցեղէ էին ։ Եւ
զանոնք մէջտեղը կայնեցուցած՝ կը հարցնէին ,
տ Ի՞նչ զօրութիւնով կամ ի՞նչ անունով ըրիք
8 դուք աս բանը ։ ր Այն ատենը Պետրոս Հոգւով
Սրբով լեցուած՝ ըսաւ անոնց , Ով ժողովուրդին
9 իշխանները և Իսրայէլի ծերերը , Թէ որ մենք այս-
օր տկար մարդու մը եղած բարիքին համար կը
քննուինք , թէ ինչ միջոցով անիկայ բժշկուեցաւ ,
10 Յայտնի ըլլայ ձեզի ամէնքնուդ ու բոլոր Իսրա-
յէլի ժողովուրդին , ց որ Նազովրեցի Յիսուս Քրի-
ստոսի անունովը՝ որն որ դուք խաչեցիք , ւ Զորն
որ Աստուած մեռելներէն յարուց , անոր անունով ա-
11 նիկայ ձեր առջևը բժշկուած կեցեր է ։ փ Անիկայ
է այն քարը ձեզմէ շինողներէդ անարգուած , որ
12 անկիւնի գլուխ եղաւ ։ ք Եւ ուրիշ մէկով մը
փրկութիւն չկայ ։ ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ
անուն մը չկայ երկնքին տակը մարդոց մէջ տր-
13 ուած , որ անով կարող ըլլանք փրկուելու ։ Իսկ
անոնք Պետրոսին ու Յովհաննէսին համարձակու-

ռ Մատ. իբ. 23 ։ Գէ. իգ. 8 ։
ս Ղու. գ. 2 ։ Յով. ժա. 49 ։ ժը. 13 ։
տ Ել. բ. 14 ։ Մատ. իա. 23 ։ Գէ. է. 27 ։
ր Ղու. ժբ. 11, 12 ։
ց Գէ. գ. 6, 16 ։
ւ Գէ. բ. 24 ։
փ Սաղ. ճժը. 22 ։ Ես. իը. 16 ։ Մատ. իա. 42 ։
ք Մատ. ա. 21 ։ Գէ. ժ. 43 ։ Ա Տիմ. բ. 5, 6 ։

թեանը նայելով, բԵւ հասկընալով որ տգէտ ու
առանց ուսման մարդիկ են, կը զարմանային. և
14 իմացան որ անոնք Յիսուսին հետ էին. Ու ան
բժշկուած մարդը տեսնելով որ գանոնց հետ կայ-
15 ներ էր, չէին կրնար անոնց դէմ բան մը խօսիլ: Եւ
հրամայելով անոնց որ ատեանէն դուրս ելլեն,
16 իրարու հետ խորհուրդ ըրին, Եւ ըսին, դԻ՞նչ
ընենք աս մարդոցը, ինչու որ եԵրուսաղեմի բոլոր
բնակիչներուն յայտնի է թէ ասոնց ձեռքովը երեւելի
հրաշք մը եղաւ, ու մենք չենք կրնար ուրանալ:
17 Միայն թէ ժողովուրդին մէջը ալ աւելի չտարա-
ծուելու համար՝ սաստիկ սպառնալիք ընենք անոնց,
որ ան անունով մէյմըն ալ չըլլայ որ մարդու բան
18 խօսին: զԵւ զանոնք կանչելով պատուիրեցին
անոնց՝ որ ամենեւին չխօսին և չսորվեցընեն Յիսուսի
19 անունովը: Բայց Պետրոս ու Յովհաննէս պա-
տասխան տուին անոնց ու ըսին, էԹէ որ Աստու-
ծոյ առջեւը ուղիղ է որ Աստուծմէ աւելի ձեզի մտիկ
20 ընենք, դուք դատեցէք: Վասն զի մենք ըան որ
21 տեսանք ու լսեցինք, թչենք կրնար չխօսիլ: Իսկ
անոնք նորէն սպառնալիք ընելէն ետեւ արձակեցին
զանոնք, բան մը չգտնելով թէ ինչպէս պատժեն
զանոնք ժժողովուրդին համար, ինչու որ ամէնքն
ալ իԱստուած կը փառաւորէին եղած բանին հա-
22 մար: Վասն զի ան մարդը քառասուն տարեկանէն
աւելի էր, որուն վրայ աս բժշկութեան հրաշքը
եղաւ:

23 Եւ անոնք արձակուելով՝ լիրենցներուն քովը ե-
կան, ու պատմեցին ինչ որ քահանայապետները

բ Մատ. ժա. 25; ա Կոր. ա. 27:
գ Գծ. գ. 11:
դ Յօհ. ժա. 47:
ե Գծ. գ. 9, 10:
զ Գծ. ե. 40:
է Գծ. ե. 29:
ը Գծ. իբ. 15; ա Յօհ. ա. 1, 3:
թ Գծ. ա. 8; բ. 32:
ժ Մատ. իա. 26; Ղու. ի. 6, 19; իբ. 2; Գծ. ե. 26:
ի Գծ. գ. 7, 8:
լ Գծ. ժբ. 12:

24 և ծերերը իրենց ըսին: Անոնք ալ երբոր լսեցին,
միաբանութեամբ ձայներնին Աստուծոյ վերցուցին՝
ըսելով, մՈ՛վ Տէր, դուն ես ան Աստուածը՝
որ երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր անոնց
25 մէջ եղածները ստեղծեցիր, Որ քու ծառայիդ
Դաւիթին բերնովը խօսեցար, յԻնչո՞ւ հեթա-
նոսները խռովութիւն ըրին, ու ժողովուրդնե-
26 րը պարապ բաներ մտածեցին. Երկրի թագա-
ւորները պատրաստ կայնեցան, և իշխանները մէկ-
տեղ ժողվուեցան Տէրոջը դէմ և անոր Օծեալին
27 դէմ: նՔանզի արդարև [աս քաղաքիս մէջ] ժող-
վուեցան քու սուրբ Որդւոյդ Յիսուսին վրայ՝ շորն
որ դուն օծեցիր, ոՀերովդէս և Պոնտացի Պիղա-
տոս ազգերուն հետ ու Իսրայէլի ժողովուրդնե-
28 րուն հետ, չԸնել՝ ինչ որ քու ձեռքդ և խոր-
29 հուրդդ սահմանեց առաջուց որ ըլլայ: Եւ հիմա
ով Տէր՝ նայէ անոնց սպառնալիքներուն, ու
շնորհէ քու ծառաներուդ պոր բոլոր համարձակու-
30 թիւնով քու խօսքդ խօսինք, ջՔու ձեռքդ երկըն-
ցնելով բժշկելու, և Քու սուրբ Որդւոյդ Յի-
սուսին ռանունովը սնշաններ ու հրաշքներ ըլլա-
31 լու: Ու երբոր անոնք աղօթք ըրին, վշարժեցաւ
ան տեղը՝ ուր որ ժողվուած էին, և ամէնքը
Հոգւով Սրբով լեցուեցան, տու Աստուծոյ խօս-
քը համարձակ կը խօսէին:
32 Եւ հաւատացեալներուն բազմութիւնը րմէկ
սիրտ ու մէկ հոգի ունէին. ցև անոնցմէ մէկը չէր

մ դ Թագ. ժթ. 15:
յ Սաղ. բ. 1:
ն Մատ. իզ. 3; Ղու. իբ. 2; իգ. 1, 8:
շ Ղու. ա. 35:
ո Ղու. դ. 18; Յօհ. ժ. 36:
չ Գծ. բ. 23; գ. 18:
պ Հմր 13, 31; Գծ. թ. 27; ժգ. 46; ժդ. 3; ժթ. 8; իզ. 26; իը. 32; Եփե. զ. 19:
ջ Հմր 27:
ռ Գծ. գ. 6, 16:
ս Գծ. բ. 43; ե. 12:
վ Գծ. բ. 2, 4; ժզ. 26:
տ Հմր 29:
ր Գծ. ե. 12; Հռով. ժե. 5, 6; բ Կոր. ժգ. 11; Փիլ. ա. 27; բ. 2; ա Պետ. գ. 8:
ց Գծ. բ. 44:

ըսեր իր ստացուածներէն մէկուն համար՝ թէ՝ իրն
է , հապա իրենց ամէն բաները հասարակաց կը
33 սեպէին ։ – Եւ մեծ զօրութիւնով առաքեալները
÷ վկայութիւն կու տային Տէր Յիսուսին յարու-
թեանը , + և անոնց ամենուն վրայ մեծ շնորհք
34 կար ։ Ու անոնց մէջ կարօտութիւն քաշող մը
չկար , • վասն զի անոնք որ ագարակներու կամ
տուներու տէր էին , կը ծախէին և ծախուածնե-
35 րուն գիները կը բերէին , ‡ Ու առաքելոց ոտքը կը
դնէին . – և ամէն մէկուն իր կարօտութեանը նա-
36 յելով կը բաժնուէր ։ Եւ Յովսէս որ առաքեալ-
ներէն Բառնաբաս մականուանեցաւ , (որ կը
թարգմանուի Մխիթարութեան որդի ,) Ղևտա-
37 ցի , ծննդեամբ Կիպրացի , ‡ Ագարակ մը ունենա-
լով՝ ծախեց ու ստակը բերաւ առաքելոց ոտքը
դրաւ ։

ԳԼ. Ե

1 Անանիա ու իր կնիկը Սափիրա իրենց կեղծաւորութեանը համար Պետրոսէն յանդիմանուելով՝ կը մեռնին ։ 12 Առաքելոց շատ հրաշքներ ընելովը՝ 14 հաւատացեալները կը շատնան . 17 յետոյ առաքեալները վերստին բանտը կը դրուին , 19 բայց Տէրոջը հրեշտակը ազատելով զանոնք՝ կը պատուիրէ որ համարձակ քարոզեն ամենուն ։ 21 Ուստի անոնք սորվեցընելով թէ տաճարին մէջ 29 և թէ ատեանին առջևը , 33 սպաննուելու վտանգի մէջ կ'իյնան , բայց Գամաղիէլին խրատովը ողջ կը մնան , 40 միայն ծեծ կ'ուտեն , որուն համար փառք կու տան Աստուծոյ , և ամէն օր չեն դադարիր քարոզելէն ։

1 Բայց մէկ մարդ մը Անանիա անունով իր կնկանը
Սափիրային հետ մէկտեղ ստացուածք մը ծա-
2 խեց . Եւ անոր գինէն խորեց , որ կնիկն ալ գի-
տէր , – ու մէկ բաժինը բերաւ առաքելոց ոտքը
3 դրաւ ։ ‡ Եւ Պետրոս ըսաւ , Անանիա՛ ինչո՞ւ

– Գծ. ա. 8 ։
÷ Գծ. ա. 22 ։
+ Գծ. բ. 47 ։
• Գծ. բ. 45 ։
‡ Հմր 37 ։ Գծ. ե. 2 ։

– Գծ. բ. 45 ։ գ. 1 ։
‡ Հմր 34 , 35 ։ Գծ. ե. 1 , 2 ։
– Գծ. դ. 37 ։
‡ Թու. լ. 2 ։ բ Օր. իգ. 21 ։ Ժող. ե. 4 ։

÷ Սատանան քու սիրտդ լեցուց՝ որ դուն Հոգւոյն
Սրբոյ ստէ խօսիս , ու ագարակին գինէն խորես .
4 Չէ՞ որ քուկդ էր ան՝ քանի որ կեցեր էր , ու ծա-
խուած ալ՝ քու իշխանութեանդ տակն էր , ատ
ի՞նչ է որ քու սրտիդ մէջ աս բանը դրիր . չէ
թէ մարդոց ստէ խօսեցար , հապա Աստուծոյ ։
5 Եւ Անանիա աս խօսքերը լսելով՝ ÷ ինկաւ ու
հոգի տուաւ . և մեծ վախ ինկաւ ամենուն վրայ որ
6 աս լսեցին ։ Ու երիտասարդները ելան ու
+ պատնեցին անիկայ , և դուրս հանելով թաղե-
7 ցին ։ Ու երբոր իրեք ժամու չափ վրան անցաւ ,
անոր կնիկը չգիտնալով ինչ որ եղեր էր , ներս
8 մտաւ . Եւ Պետրոս ըսաւ անոր , Ըսէ ինծի ,
ագարակը այնչափ գնով ծախեցիք . ան ալ ըսաւ ,
9 Այո՛ , այնչափ ։ Ու Պետրոս ըսաւ անոր , Աս
ի՞նչ է որ դուք միաբանեցաք ∼ Տէրոջը Հոգին
փորձելու . ահա քու էրիկդ թաղողներուն ոտքերը
դրանը քովն են , քեզ ալ դուրս պիտի հանեն ։
10 + Եւ իսկոյն անոր ոտքերուն քովը ինկաւ ու հոգի
տուաւ . և երիտասարդները ներս մտնելով անիկայ
մեռած գտան , ու հանեցին իր էրկանը քովը թա-
11 ղեցին ։ ⁑ Եւ մեծ վախ մը ինկաւ բոլոր եկեղե-
ցիին վրայ ու ամենուն վրայ որ աս բաները լսե-
ցին ։
12 ⁑ Եւ առաքեալներուն ձեռքովը շատ նշաններ ու
հրաշքներ կ'ըլլային ժողովուրդին մէջ . ‡ և ամէնը
միաբանութեամբ Սողոմոնի սրահին մէջն էին ։
13 ‡ Եւ ուրիշներէն մէկը չէր համարձակեր անոնց
յարելու , ∟ հապա ժողովուրդը կը մեծարէր ա-

÷ Ղու. իբ. 3 ։
÷ Հմր 10 , 11 ։
+ Յոհ. ժթ. 40 ։
∼ Հմր 3 ։ Մատ. դ. 7 ։
+ Հմր 5 ։
⁑ Հմր 5 ։ Գծ. բ. 43 ։ ժթ. 17 ։
⁑ Գծ. բ. 43 ։ ժդ. 3 ։ ժթ. 11 ։ Հռոմ. ժե. 19 ։ բ Կոր. ժբ. 12 ։ Եբր. բ. 4 ։
‡ Գծ. գ. 11 ։ դ. 32 ։
‡ Յոհ. թ. 22 ։ ժբ. 42 ։ ժթ. 38 ։
∟ Գծ. բ. 47 ։ դ. 21 ։

14 նոնք ։ Եւ Տէրոջը հաւատացողները ալ աւելի կը
շատնային , բազմութիւն էրիկ մարդոց ու կնիկ-
15 ներու ․ Այնպէս որ հիւանդները հրապարակները
կը հանէին , և պատգարակներով ու մահիճներով
կը դնէին , ժ որ Պետրոսին անցնելու ատենը՝ գոնէ
16 անոր շուքը անոնց մէկուն վրայ հասնի ։ Ու
շրջակայ քաղաքներուն բազմութիւնը Երուսաղէմ
կը ժողվուէր , ի հիւանդներ և պիղծ ոգիներէ նե-
ղութիւն կրողներ բերելով , որոնք ամէնն ալ կը
բժշկուէին ։
17 լ Ոտք ելաւ քահանայապետը և՝ բոլոր իր հետը
եղողները , որոնք սադուկեցւոց աղանդէն էին՝ նա-
18 խանձով լեցուած , խ Ու առաքեալներուն ձեռք
զարկին , և հասարակաց բանտը դրին զանոնք ։
19 ծ Բայց Տէրոջը հրեշտակը գիշերով բանտին դռնե-
րը բացաւ , ու դուրս հանելով զանոնք ըսաւ ,
20 Գացէք և տաճարին մէջը կայնելով՝ ժողովուրդին
21 խօսեցէք կ այս կենաց բոլոր խօսքերը ։ Ու երբոր
ասիկա լսեցին , տաճարը մտան առտուանց ։ և կը
սորվեցնէին ․ իսկ հ քահանայապետը եկաւ ու իր
հետը եղողները՝ ու մէկտեղ կանչեցին ժողովքը
ու Իսրայէլի որդւոցը բոլոր ծերակոյտը , և մարդ
22 խրկեցին բանտը՝ որ զանոնք բերեն ։ Ու երբոր
սպասաւորները գացին , զանոնք բանտին մէջ
23 չգտնելով՝ ետ դարձան պատմեցին , Եւ ըսին թէ
Բանտը ամէն զգուշութիւնով գոցուած գտանք ,
ու պահապանները դռներուն առջևը կայնած , բայց
24 բանալով՝ ներսը մարդ չգտանք ։ Ու երբոր
քահանան , և ձ տաճարին իշխանը ու քահանայա-
պետները լսեցին աս խօսքերը , կը զարմանային ա-

ժ Մատ. թ. 21 ։ ժդ. 36 ։ Գլ. ժթ. 12 ։
ի Մար. ժզ. 17, 18 ։ Յոհ. ժդ. 12 ։
լ Գլ. դ. 1, 2, 6 ։
խ Ղու. խա. 12 ։
ծ Գլ. ժբ. 7 ։ ժզ. 26 ։
կ Յոհ. զ. 69 ։ ժէ. 3 ։ Ա Յոհ. ե. 11 ։
հ Գլ. դ. 5, 6 ։
ձ Ղու. իբ. 4 ։ Գլ. դ. 1 ։

25 նոնց համար թէ ինչ պիտի ըլլայ ան ։ Եւ մէկը
եկաւ պատմեց անոնց թէ Ահա ան մարդիկը որ
բանտը դրիք , տաճարը կայներ են և ժողովուր-
26 դին կը սորվեցնեն ։ Ան ատենը իշխանը սպա-
սաւորներովը մէկտեղ գնաց զանոնք բերաւ առանց
բռնութեան , յ քանզի ժողովուրդէն կը վախնային
27 որ չքարկոծուին ։ Ու բերին զանոնք ատեանը կայ-
նեցուցին ․ և քահանայապետը անոնց հարցուց ,
28 Ըսելով , ն Չէ՞ որ սաստիկ պատուիրեցինք ձեզի
որ աս անունով չսորվեցնէք ․ և ահա Երուսաղէ-
մը ձեր ուսմունքովը լեցուցիք , և ան մարդուն նա-
րիւնը շ կ'ուզէք մեր վրայ բերել ։
29 Պատասխան տուաւ Պետրոս և միւս առաքեալ-
ները ու ըսին , չ Աւելի Աստուծոյ հնազանդիլ
30 պէտք է քան թէ մարդոց ։ պ Մեր հայրերուն Աս-
տուածը Յիսուսը յարուց , ջ որն որ դուք փայտէն
31 կախելով սպաննեցիք ։ ռ Զանիկայ Աստուած իր
աջ ձեռքովը ս Առաջնորդ ու վ Փրկիչ ըլլալ
բարձրացուց , տ Իսրայէլին ապաշխարութիւն և
32 մեղաց թողութիւն տալու ։ ր Եւ մենք աս բանե-
րուս համար անոր վկաներ ենք , ու Սուրբ Հոգին
ալ՝ ց որն որ Աստուած իրեն հնազանդ եղողներուն
33 տուաւ ։ Եւ ւ անոնք աս լսելով խիստ կատղեցան ,
ու կը խորհէին որ զանոնք մեռցընեն ։
34 Եւ ատեանին մէջ փարիսեցի մը ոտքի վրայ ելաւ՝
որուն անունը փ Գամաղիէլ էր , օրինաց վարդա-
պետ մը՝ բոլոր ժողովուրդին առջևը պատուաւոր

յ Մատ. իա. 26 ։
ն Գլ. դ. 18 ։
շ Մատ. իգ. 35 ։ իէ. 25 ։
ո Գլ. բ. 23, 36 ։ գ. 15 ։ է. 52 ։
չ Գլ. դ. 19 ։
պ Գլ. գ. 13, 15 ։ իբ. 14 ։
ջ Գլ. ժ. 39 ։ ժգ. 29 ։ Գաղ. գ. 13 ։ Ա Պետ. բ. 24 ։
ռ Գլ. բ. 33, 36 ։ Փիլ. բ. 9 ։ Եբր. բ. 10 ։ ժբ. 2 ։
ս Գլ. գ. 15 ։
վ Մատ. ա. 21 ։
տ Ղու. իդ. 47 ։ Գլ. գ. 26 ։ ժգ. 38 ։ Եփե. ա. 7 ։ Կող. ա. 14 ։
ր Յոհ. ժե. 26, 27 ։
ց Գլ. բ. 4 ։ ժ. 44 ։
ւ Գլ. բ. 37 ։ է. 54 ։
փ Գլ. իբ. 3 ։

մէկը, ու հրաման ըրաւ որ առաքեալները քիչ մը
35 դուրս հանեն. Եւ ըսաւ անոնց, Ո՛վ Իսրայելացի
մարդիկ՝ դուք ձեզի զգուշացէք աս մարդոցը համար
36 թէ ինչ պիտի ընէք. Քանզի աս օրերէս առաջ
Թեւդաս ելաւ, իրեն համար ըսելով թէ երեւելի
մէկ մըն է, ու թուով չորս հարիւրի չափ մարդիկ
իրեն յարեցան. որ ինքը սպաննուեցաւ, եւ անոնք
ամէնը որ իրեն հպատակեր էին՝ ցրուեցան ու ոչ-
37 ինչ եղան։ Անոր ետեւէն Յուդա Գալիլեացին ե-
լաւ աշխարհագիր եղած օրերը, եւ շատ ժողովուրդ
իր կողմը ձգեց. ինքն ալ կորսուեցաւ, եւ անոնք ա-
մէնը որ իրեն հպատակեր էին՝ ցրուեցան եղան։
38 Եւ հիմա ձեզի կ'ըսեմ, Աս մարդոցմէ մէկդի կե-
ցէք ու թող տուէք զանոնք, ա ինչու որ եթէ աս
խորհուրդը կամ գործը մարդոցմէ է, պիտի քա-
39 կուի. բ Հապա թէ որ Աստուծմէ է, չէք կրնար
ատիկայ քակել, գ չըլլայ թէ Աստուծոյ դէմ
40 մարտնչող ալ գտնուիք։ Եւ անոնք հաւանութիւն
տուին անոր. դ ու առաքեալները կանչելով՝ ե ծե-
ծեցին, եւ պատուիրելով որ Յիսուսի
41 անունովը չխօսին, արձակեցին զանոնք։ Անոնք
ալ ժողովքին առջեւէն գացին, զ ուրախանալով որ
Տէրոջը անուանը համար արժանի եղան անարգուե-
42 լու։ Եւ ամէն օր է տաճարը ու տուներուն մէջ
ը չէին դադարեր սորվեցընելէն ու Յիսուս Քրիս-
տոսը քարոզելէն։

ա Առակ. իա. 30. Եսա. ը. 10. Մատ. ժե. 13.
բ Ղուկ. իա. 15. ա Կոր. ա. 25.
գ Գւ. է. 51. թ. 5. իգ. 9.
դ Գւ. դ. 18.
ե Մատ. ժ. 17. իգ. 34. Մար. ժգ. 9.
զ Մատ. ե. 12. Հռով. ե. 3. բ Կոր. ժբ. 10. Փիլ. ա. 29. Եբր. ժ. 34. Յակ. ա. 2. ա Պետ. դ. 13, 16.
է Գւ. բ. 46.
ը Գւ. դ. 20, 29.

ԳԼ. Զ.

1 Առաքեալները ուզելով որ աղքատներուն կերակուրին հոգ տարուի, նաեւ փոյթ ունենալով որ իրենք Աստուծոյ խօսքը՝

հոգիին կերակուրը մատակարարեն, 3 սարկաւագութեան պաշտօնը կը յանձնեն եօթը ընտրուած մարդոց, 5 որոնց մէկն էր Ստեփաննոս՝ հաւատքով եւ Հոգւով Սրբով լեցուն. 12 որուն հետ վիճաբանողները չկրնալով պատասխան տալ՝ կը բռնեն զանիկայ, 13 եւ զրպարտութեամբ կ'ամբաստանեն իբրեւ հայհոյիչ օրինաց եւ տաճարին։

1 ա Եւ այն օրերը աշակերտները որ շատցան,
բ * Հելլենացիներուն կողմէն տրտունջ մը ելաւ
Եբրայեցւոց դէմ, ինչու որ իրենց որբեւարիները
գ ամէն օրուան ողորմութեան մատակարարութենէն
2 մէջ անտես կ'ըլլային։ Եւ տասներկուքը կանչե-
ցին աշակերտներուն բազմութիւնը ու ըսին,
դ Անգի չվայլեր Աստուծոյ խօսքը ձգել ու սեղան-
3 ներու ծառայութիւն ընել։ Ուստի եղբայրներ՝
ե ձեզմէ եօթը հոգի ընտրեցէք՝ բարի վկայուած՝
Հոգւով Սրբով եւ իմաստութիւնով լեցուն, որ
4 զանոնք աս գործիս վրայ դնենք. զ Եւ մենք աղօթ-
քի ու Աստուծոյ խօսքին պաշտօնին պարապինք։
5 Եւ այս խօսքը բոլոր բազմութեան առջեւ հաճոյ
երեւցաւ. ու ընտրեցին Ստեփաննոսը՝ է հաւատ-
քով եւ Հոգւով Սրբով լեցուն մարդ մը, ը ու
Փիլիպպոսը, եւ Պրոքորոնը ու Նիկանովրան,
եւ Տիմոնեան, ու Պարմենան, թ եւ Նիկողայոս
6 նորահաւատ Անտիոքացին. Անոնք առաքեալներուն
առջեւը կայնեցուցին. ժ անոնք ալ աղօթք ընելով՝
7 ի ձեռքերնին անոնց վրայ դրին։ Եւ լ Աստուծոյ
խօսքը կ'աճէր, ու աշակերտներուն թիւը խիստ
կը շատնար Երուսաղէմի մէջ. խ Եւ քահանանե-

ա Գւ. բ. 41. դ. 4. ե. 14. Հմր 7.
բ Գւ. թ. 29.
* Յն. Հելլենախօս Հրէից
գ Գւ. դ. 35.
դ Ել. ժբ. 17.
ե բ Օր. ա. 13. Գւ. ա. 21. ժզ. 2. ա Տիմ. գ. 7.
զ Գւ. բ. 42.
է Գւ. ժա. 24.
ը Գւ. ը. 5, 26. իա. 8.
թ Յայտ. բ. 6, 15.
ժ Գւ. ա. 24.
ի Գւ. ը. 17. թ. 17. ժգ. 3. ա Տիմ. դ. 14. ե. 22. բ Տիմ. ա. 6.
լ Գւ. ժբ. 24. ժթ. 20. Կող. ա. 6.
խ Յոհ. ժբ. 42.

րէն մեծ բազմութիւն՝ հաւատքին կը հնազանդէին ։
8 Եւ Ստեփաննոս որ հաւատքով ու զօրութիւնով
լեցուած մարդ մըն էր, մեծ հրաշքներ և նշաններ
9 կ՚ընէր ժողովուրդին մէջ ։ Բայց ոմանք այն ժողովարանէն՝ որ Ազատացւոց և Կիւրենացւոց ու
Աղեքսանդրացւոց ժողովարան կ՚ըսուէր, և անոնք որ
Կիլիկիայէն ու Ասիայէն էին, ելան ու Ստեփան-
10 նոսին հետ վիճաբանութիւն կ՚ընէին ։ ժԵւ չէին
կրնար դէմ դնել այն իմաստութեանը ու հոգիին,
11 որով կը խօսէր ։ էԱն ատենը հրապուրեցին քանի
մը մարդիկ, որ ըսեն թէ Մենք լսեցինք որ ատիկայ հայհոյական խօսքեր կը խօսի Մովսէսին ու Աս-
12 տուծոյ դէմ ։ Եւ գրգռեցին ժողովուրդը ու ծերերը և դպիրները, ու վրան հասնելով զինքը
13 բռնեցին ու ատեանը տարին ։ Եւ սուտ վկաներ
կայնեցուցին, որոնք կ՚ըսէին, Աս մարդը չդադարիր հայհոյական բաներ խօսելէն սուրբ տեղիս և
14 օրէնքին դէմ ։ ըՔանզի լսեցինք ատկէ որ կ՚ըսէր
թէ Աս Նազովրեցի Յիսուսը թպիտի քակէ աս
տեղը, ու պիտի փոխէ Մովսէսին մեզի աւանդած
15 սովորութիւնները ։ Եւ ատեանը նստողներուն ամէնը երբոր անոր նայեցան, անոր երեսը հրեշտակի
երեսի պէս տեսան ։

ժ Ղու. իա. 15 ։ Գլ. ե. 39 ։ Տես Ել. դ. 12 ։ Ես. ծդ. 17 ։
է Գ Թագ. իա. 10, 13 ։ Մատ. իզ. 59, 60 ։
ը Գլ. իե. 8 ։
թ Դան. թ. 26 ։

ԳԼ. Է.

1 Ստեփաննոս իրեն դէմ եղած ամբաստանութեանը պատասխան տալով, 2 կը ցուցնէ թէ ինչպէս Աստուած ընտրեր էր իրենց հայրերը, 37 և թէ Մովսէս վկայութիւն ըրած էր Քրիստոսի համար. 51 կը յանդիմանէ Հրեաները որ ապըստամբ գտնուելով Աստուծոյ դէմ, սպաննեցին զՔրիստոս՝ այն Արդարը որուն համար մարգարէները կանխաձայներ էին թէ աշխարհք պիտի գայ ։ 54 Ասոր վրայ Հրեայք կը քարկոծեն Ստեփաննոսը, որ իր հոգին Յիսուսի յանձնելով՝ խոնարհութեամբ աղօթք կ՚ընէ անոնց համար ։

1 Ան ատենը քահանայապետը ըսաւ, Ինչպէս է
2 աս բաները ատա՞նկ են ։ Եւ անիկայ ըսաւ.
աՄարդի՛կ եղբայրներ ու հայրեր՝ մտի՛կ ըրէք. բՓառաց Աստուածը մեր հօրը Աբրահամին երեւցաւ, քանի որ Միջագետքի մէջ էր, դեռ Խառա-
3 նի մէջ չբնակած. և ըսաւ անոր, գԵլի՛ր քու
երկրէդ և քու ազգականներէդ, ու եկուր այն եր-
4 կիրը որ ես քեզի պիտի ցուցնեմ ։ Ան ատենը
դՔաղդէացւոց երկրէն ելլելով՝ Խառանի մէջ բնակեցաւ. և անոր հօրը մեռնելէն ետև անկէ փոխադրեց զանիկայ աս երկիրը, ուր որ դուք հիմա կը
5 բնակիք ։ Եւ ասոր մէջ անոր ժառանգութիւն
չտուաւ, ո՛չ ալ ոտքի քայլ մը տեղ, եԲայց
խոստացաւ որ անիկայ իրեն տայ իբրև կալուածք,
և իրմէ ետև իր սերունդին, երբոր դեռ ինքը որդի
6 չունէր ։ Եւ Աստուած այսպէս խօսեցաւ թէ զԱ-
նոր սերունդը օտար երկրի մէջ պանդուխտ պիտի
ըլլայ, ու պիտի ծառայեցնեն անիկայ ու չար-
7 չարեն չորս հարիւր տարի ։ Եւ այն ազգը՝ որուն
պիտի ծառայեն, ես պիտի դատեմ, ըսաւ Աստուած, և անկէ ետև պիտի ելլեն էու աս տեղս զիս
8 պաշտեն ։ ըԵւ անոր թլփատութեան ուխտը
տուաւ, թու ետքը Աբրահամ Իսահակը ծնաւ, և
թլփատեց զանիկայ ութերորդ օրը. ժԻսահակ
ալ Յակոբը ծնաւ, իՅակոբ ալ տասուերկու
9 նահապետները ։ լԵւ նահապետները Յովսէփին

ա Գլ. իբ. 1 ։
բ Ծն. ժբ. 1 ։
գ Ծն. ժա. 31 ։ ժբ. 4, 5 ։
դ Ծն. ժբ. 7 ։ ժգ. 15 ։ ժե. 8, 18 ։ ժէ. 8 ։ իզ. 3 ։
ե Ծն. ժե. 13, 16 ։
զ Ել. ժբ. 40 ։ Գաղ. գ. 17 ։
է Ել. գ. 12 ։
ը Ծն. ժէ. 9, 10, 11 ։
թ Ծն. իա. 2, 3, 4 ։
ժ Ծն. իե. 26 ։
ի Ծն. իթ. 31, ... ։ լ. 5, ... ։ լե. 18, 23 ։
լ Ծն. լէ. 4, 11, 28 ։ Սաղ. ճե. 17 ։

վրայ նախանձելով՝ Եգիպտոս տարուելու ծախե-
10 ցին . ե Բայց Աստուած անոր հետ էր , Ու փրկեց
զանիկայ իր ամէն նեղութիւններէն , զ և անոր
շնորհք ու իմաստութիւն տուաւ Եգիպտոսի փա-
րաւոն թագաւորին առջևը . ան ալ զանիկայ իշ-
խան դրաւ Եգիպտոսի ու իր բոլոր տանը վրայ :
11 է Ու Եգիպտոսի և Քանանու բոլոր երկրին վրայ
սով մը եկաւ , ու մեծ նեղութիւն , և մեր հայ-
12 րերը ուտելիք չէին գտներ : ը Եւ Յակոբ երբոր
լսեց թէ Եգիպտոսի մէջ ցորեն կը գտնուի , առջի
13 անգամին մեր հայրերը խրկեց : թ Եւ երկրորդ
անգամին Յովսէփ իր եղբայրներուն ճանչցուց ինք-
զինքը . ու Յովսէփին ազգը փարաւոնին յայտնի
14 եղաւ : ժ Եւ Յովսէփ խրկեց՝ ու կանչեց իր հայրը
Յակոբը ի ու բոլոր ազգատոհմը , եօթանասունու-
15 հինգ հոգի : լ Եւ Յակոբ Եգիպտոս իջաւ ,
16 խ ու մեռաւ ինքը ու մեր հայրերը : ծ Եւ Սիւ-
քէմ տարուելով՝ կ ան գերեզմանին մէջը դրուե-
ցան , որն որ Աբրահամ արծաթի գնով ծախու
առեր էր Սիւքէմի հօրը Եմովրի որդիներէն :
17 հ Ու երբոր մօտեցաւ խոստմունքին ատենը , որ
Աստուած երդումով խոստացեր էր Աբրահամին ,
ձ ժողովուրդը աճեցաւ ու շատցաւ Եգիպտոսի
18 մէջ , Մինչև որ ուրիշ թագաւոր մը ելաւ՝ որ
19 Յովսէփը չէր ճանչնար : Անիկայ չարք բանե-
ցուց մեր ազգին դէմ ու չարչարեց մեր հայրերը ,
մինչև անգամ ղ անոնց տղաքը դուրս ձգել տալով
20 որ չապրին : ճ Այն ժամանակը Մովսէս ալ ծնաւ ,

ե Ծն. լթ. 2, 21, 23 .
զ Ծն. խա. 37 . խբ. 6 .
է Ծն. խա. 54 .
ը Ծն. խբ. 1 .
թ Ծն. խե. 4, 16 .
ժ Ծն. խե. 9, 27 .
ի Ծն. խզ. 27 . Բ Օր. ժ. 22 .
լ Ծն. խզ. 5 .
խ Ծն. խթ. 33 . Ել. ա. 6 .
ծ Ել. ժգ. 19 . Յես. իդ. 32 .
կ Ծն. իգ. 16 . լգ. 19 .
հ Ծն. ժե. 13 . Հմր 6 .
ձ Ել. ա. 7, 8, 9 . Սաղ. ճե. 24, 25 .
ղ Ել. ա. 22 .
ճ Ել. բ. 2 .

մ և՝ Աստուծոյ առջևը գեղեցիկ էր , որ իր հօրը
21 տունը մեծցաւ երեք ամիս : յ Ու երբոր անիկայ
դուրս ձգուեցաւ , փարաւոնին աղջիկը զանիկայ
22 վերցուց , և իրեն իբրև որդի մեծցուց : Ու Մով-
սէս Եգիպտացւոց բոլոր իմաստութիւնովը վար-
ժուեցաւ , ն և զօրաւոր էր իր խօսքերովը ու գործ-
23 քերովը : շ Ու երբոր քառասուն տարեկան եղաւ ,
իր սիրտը ինկաւ իր եղբայրներուն՝ Իսրայէլի որ-
24 դւոցը այցելութիւն ընել : Ու Իսրայէլացիներէն
մէկը հարստահարուած տեսնելով՝ պաշտպանեց ,
և զրկուածին վրէժը առաւ՝ ան Եգիպտացին սպան-
25 նելով : Ու կարծէր թէ իր եղբայրները պիտի
իմանային որ Աստուած իր ձեռքովը անոնց ազա-
տութիւն պիտի տար , բայց անոնք չիմացան :
26 ո Ու հետևեալ օրը անոնց դիմացը ելաւ՝ երբոր կը
կռուէին , և խաղաղութիւն ընելու ստիպեց զա-
նոնք , ըսելով , Մարդիկ՝ դուք եղբայրներ էք ,
27 ինչու՞ մէկզմէկ կը զրկէք : Բայց ան որ ընկերը
կը զրկէր , մերժեց զանիկայ ու ըսաւ , չ Ո՞վ
28 քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ . Զի՞ս
ալ սպաննել կ'ուզես , ինչպէս որ երէկ Եգիպտա-
29 ցին սպաննեցիր : պ Եւ Մովսէս աս խօսքին վրայ
փախաւ , ու Մադիամու երկրին մէջ պանդուխտ
30 եղաւ , ուր որ երկու որդի ծնաւ : ջ Եւ քառասուն
տարի անցնելէն ետև՝ Սինայ լեռանը անապատին
մէջ Տէրոջը հրեշտակը երևցաւ անոր մորենիի
31 կրակի բոցով : Մովսէս ալ երբոր տեսաւ՝ զար-
մացաւ ան տեսիլքին վրայ , ու երբոր մօտեցաւ
գննելու , Տէրոջը ձայնը եկաւ անոր ըսելով ,
32 ռ Ես եմ քու հայրերուդ Աստուածը , Աբրահամին

մ Եբր. ժա. 23 .
յ Ել. բ. 3-10 .
ն Ղուկ. իդ. 19 .
շ Ել. բ. 11, 12 .
ո Ել. բ. 13 .
չ Տես Ղուկ. ժբ. 14 . Գղ. դ. 7 .
պ Ել. բ. 15, 22 . դ. 20 . ժը. 3, 4 .
ջ Ել. գ. 2 .
ռ Մատ. իբ. 32 . Եբր. ժա. 16 .

Աստուածը, ու Իսահակին Աստուածը, և Յակո-
բին Աստուածը. Մովսէս ալ վախէն դողալով
33 չէր համարձակեր նայելու: ա Եւ Տէրը ըսաւ
անոր, Ոտքերուդ կօշիկները հանէ, ինչու որ այն
34 տեղը որ դուն կայներ ես, սուրբ երկիր է: բ Յի-
րաւի Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս չարչա-
րանքը տեսայ, ու լսեցի անոնց հառաչանքը, և
իջայ զանոնք ազատելու. և հիմա եկուր քեզ
35 Եգիպտոս խրկեմ: Այն Մովսէսը որ ուրացան ու
կ'ըսէին, Ո՞վ քեզ իշխան ու դատաւոր դրաւ,
Աստուած զանիկա իշխան և փրկիչ խրկեց գ անոր
հրեշտակին ձեռքովը՝ որ մորենիին մէջ անոր երև-
36 ցաւ: դ Անիկայ հանեց զանոնք՝ ե հրաշքներ ու
նշաններ ընելով Եգիպտոսի երկրին զ ու Կարմիր
ծովուն մէջ, է և անապատին մէջ քառասուն տարի:
37 Աս Մովսէսն է որ ըսաւ Իսրայէլի որդւոցը, ը Ձեր
Տէր Աստուածը ձեր եղբայրներէն ինծի պէս Մար-
գարէ մը պիտի հանէ ձեզի, թ անոր մտիկ ըրէք:
38 ժ Անիկայ ան է որ անապատը ժողովքին մէջն էր,
Սինայ լեռան վրայ իրեն խօսող ի հրեշտակին հետ
ու մեր հայրերուն հետ. լ որ կենդանի խ պատգամ-
39 ներ առաւ մեզի տալու. Որուն մեր հայրերը չու-
զեցին հնազանդ ըլլալ, հապա մերժեցին և
40 իրենց սրտերովը Եգիպտոս դարձան: ծ Եւ ըսին
Ահարոնին, Մեզի աստուածներ շինէ որ մեր
առջևէն երթան. քանզի ան Մովսէսը որ մեզ
Եգիպտոսի երկրէն հանեց, չենք գիտեր թէ ինչ

ա Ել. գ. 5; Յես. ե. 15:
բ Ել. գ. 7:
գ Ել. ժգ. 19; Թուոց. ի. 16:
դ Ել. ժբ. 41; Լգ. 1:
ե Ել. է. ը. թ. ժ. ժա. ժգ; Սաղ. ճե. 27:
զ Ել. ժդ. 21, 27, 28, 29:
է Ել. ժզ. 1, 35:
ը Բ Օր. ժը. 15, 18; Գլ. գ. 22:
թ Մատ. ժէ. 5:
ժ Ել. ժթ. 3, 17:
ի Ես. կգ. 9; Գաղ. գ. 19; Եբր. բ. 2:
լ Ել. իա. 1; Բ Օր. ե. 27, 31; Լգ. 4; Յօհ. ա. 17:
խ Հռով. գ. 2:
ծ Ել. լբ. 1:

41 եղաւ անոր: կ Եւ ան օրերը որթ մը շինեցին, ու
կուռքին զոհ մատուցին, և իրենց ձեռացը գործ-
42 քերովը կը զուարճանային: հ Աստուած ալ երես
դարձուց, ու թողուց զանոնք որ ձ երկնից զօրքը
պաշտեն. ինչպէս որ գրուած է մարգարէից գրքին
մէջ, Միթէ ղ անապատին մէջ քառասուն տարի
զոհեր ու պատարագնե՞ր մատուցիք ինծի՛ ո՛վ Իս-
43 րայէլի տունը. Եւ Մողոքին վրանը առիք ու ձեր
Հռեմփա աստուծոյն աստղը, ան պատկերները որ
շինեցիք՝ անոնց երկրպագութիւն ընելու. ես ալ
ձեզ Բաբելոնէն անդին պիտի փոխադրեմ:
44 Վկայութեան խորանը անապատին մէջ մեր հայրե-
րուն հետն էր, ինչպէս որ Մովսէսին հետ խօսողը
հրաման ըրաւ՝ ճ որ տեսած օրինակին պէս շինէ զա-
45 նիկայ. մ Որ մեր հայրերն ալ յաջորդաբար առնե-
լով՝ Յեսուին հետ բերին զանիկայ ան ազգերուն
կալուածքը, յ որոնք Աստուած վռնտեց մեր հայ-
46 րերուն առջևէն մինչև Դաւիթին օրերը, ն Որ
Աստուծոյ առջևը շնորհք գտաւ, շ և ուզեց որ
47 Յակոբին Աստուծոյն բնակարան մը գտնէ: ո Ու
48 Սողոմոն անոր տուն մը շինեց: չ Սակայն Բարձ-
րեալը ձեռքով շինուած տաճարներու մէջ չբնակիր,
49 ինչպէս որ մարգարէն կ'ըսէ, պ Երկինքը իմ ա-
թոռս է, ու երկիրը իմ ոտքերուս պատուան-
դանն է. Ի՞նչպիսի տուն պիտի շինէք ինծի, կ'ըսէ

կ Բ Օր. թ. 16; Սաղ. ճզ. 19:
հ Սաղ. ձա. 12; Եզեկ. ի. 25, 39; Հռով. ա. 24; Բ Թես. բ. 10:
ձ Բ Օր. դ. 19; ժէ. 3; Դ Թագ. ժէ. 16; իա. 3; Երեմ. ժթ. 13:
ղ Ամով. ե. 25, 26:
ճ Ել. իե. 40; իզ. 30; Եբր. ը. 5:
մ Յես. գ. 14:
յ Նեեմ. թ. 24; Սաղ. խդ. 2; հբ. 55; Գլ. ժգ. 19:
ն Ա Թագ. ժզ. 1; Բ Թագ. է. 1; Սաղ. ձթ. 19; Գլ. ժգ. 22:
շ Գ Թագ. ը. 17; Ա Մն. իբ. 7; Սաղ. ճլա. 4, 5:
ո Գ Թագ. զ. 1; ը. 20; Ա Մն. ժէ. 12; Բ Մն. գ. 1:
չ Գ Թագ. ը. 27; Բ Մն. բ. 6; զ. 18; Գլ. ժէ. 24:
պ Ես. կզ. 1, 2; Մատ. ե. 34, 35; իգ. 22:

Տէրը ։ կամ ի՞նչ պէտք է ըլլայ իմ հանգստութեանս
50 տեղը․ Չէ՞ որ աս ամէնը իմ ձեռքս շիներ է ։
51 ն Ո՛վ խստապարանոցներ ու ¬ սրտով և ականջով
անթլփատուածներ, դուք ամէն ատեն Հոգւոյն
Սրբոյ հակառակ կը կենաք, ինչպէս ձեր հայրերը՝
52 անանկ ալ դուք ։ Ղ Մարգարէներէն ո՞րը չհալա-
ծեցին ձեր հայրերը, ու սպաննեցին զանոնք որ
առաջուց պատմեցին անոր – Արդարին գալուն հա-
մար, որ դուք հիմա անոր մատնիչները և սպան-
53 նողները եղաք․ - Դուք որ օրէնքը առիք հրեշտակ-
ներուն մատակարարութեամբը՝ ու չպահեցիք ։
54 Հ Երբ անոնք աս բաները լսելով՝ սրտերնուն մէջ
կը կատղէին ու ակռաներնին անոր վրայ կը կրճը-
55 տէին ։ Բայց անիկայ † Հոգւով Սրբով լեցուած
երկինքը նայեցաւ և տեսաւ Աստուծոյ փառքը, ու
Յիսուսն ալ որ Աստուծոյ աջ կողմը կայներ էր, և
ըսաւ, ր Ահա կը տեսնեմ երկինքը բացուած, ȝ ու
56 Որդին մարդոյ՝ Աստուծոյ աջ կողմը կայնած ։ Իսկ
անոնք մեծաձայն աղաղակելով՝ ականջներնին գոցե-
57 ցին, և ամէնը մէկէն վազեցին անոր վրայ․ – Ու
քաղաքէն դուրս հանելով՝ ÷ կը քարկոծէին զա-
նիկայ․ և + վկաները իրենց հանդերձները պահ կը
դնէին երիտասարդի մը ոտքերուն քովը, որ
58 Սօղոս կ՚ըսուէր ։ Եւ կը քարկոծէին Ստեփա-
նոսը, • որ աղօթք կ՚ընէր ու կ՚ըսէր, Տէ՛ր Յիսուս՝

ն Ել․ լբ․ 9 ։ լգ․ 3 ։ Ես․ խը․ 4 ։
¬ Ղև․ իզ․ 41 ։ բ Օր․ ժ․ 16 ։ Երեմ․ դ․ 4 ։ զ․ 10 ։ թ․ 26 ։ Եզեկ․ խդ․ 9 ։
Ղ բ Մն․ լզ․ 16 ։ Մատ․ իա․ 35 ։ իգ․ 34, 37 ։ ա Թես․ բ․ 15 ։
– Գլ․ գ․ 14 ։
- Ել․ ի․ 1 ։ Գաղ․ գ․ 19 ։ Եբր․ բ․ 2 ։
Հ Գլ․ ե․ 33 ։
† Գլ․ զ․ 5 ։
ր Եզեկ․ ա․ 1 ։ Մատ․ գ․ 16 ։ Գլ․ ժ․ 11 ։
ȝ Դան․ է․ 13 ։
– գ Թագ․ իա․ 13 ։ Ղու․ դ․ 29 ։ Եբր․ ժգ․ 12 ։
÷ Ղև․ իդ․ 16 ։
+ բ Օր․ ժզ․ 9, 10 ։ ժէ․ 7 ։ Հմր 59 ։ Գլ․ իբ․ 20 ։
• Գլ․ թ․ 14 ։

59 ֆ ընդունէ՛ իմ հոգիս ։ Ու – ծնկան վրայ գալով
բարձրաձայն աղաղակեց, ⊧ Տէ՛ր, աս մեղքը մի՛
սեպեր ատոնց․ և աս ըսելով ննջեց․ ÷ Սօղոս
ալ կամակից էր անոր սպաննուելուն ։

ԳԼ․ Ը

1 Երուսաղէմի հալածումը առիթ կ՚ըլլայ որ Սամարիայի մէջ եկեղեցի մը կը հաստատուի 5 Փիլիպպոսի ձեռօքը, որ քարոզեց՝ հրաշքներ ըրաւ և շատերը մկրտեց, որոնց մէջն էր Սիմոն մոգը ։ 14 Պետրոս ու Յովհաննէս հոն կ՚երթան եկեղեցիին հաստատութիւն տալու, ու աղօթքով և ձեռքերնին ժողովրդոց վրայ դնելով Սուրբ Հոգին կը տրուի անոնց ։ 18 Երբոր Սիմոն կ՚ուզէ ստակով ծախու առնել իրենց ունեցած իշխանութիւնը, 20 Պետրոս սաստիկ կը յանդիմանէ անոր սրտին չարութիւնը, ու զղջալու կը յորդորէ․ ետքը Յովհաննէսին հետ Աստուծոյ խօսքը քարոզելով Երուսաղէմ կը դառնայ ։ 26 Տէրոջը հրեշտակը կը խրկէ Փիլիպպոսը՝ որ երթայ քարոզէ Եթեովպացի ներքինիին, և մկրտէ զանիկայ ։

1 Եւ այն օրը մեծ հալածում եղաւ Երուսաղէմի
մէջ եղող եկեղեցիին վրայ, – և առաքեալներէն
՚ի զատ ամէնն ալ ցիրուցան եղան Հրէաստանի
2 ու Սամարիայի երկիրներուն մէջ ։ Եւ աստուա-
ծավախ մարդիկ Ստեփաննոսը վերցուցին, ⊧ ու ա-
3 նոր վրայ մեծ ողբ ըրին ։ Բայց Սօղոս ÷ եկեղեցիին
շատ վնաս կու տար, տուները կը մտնէր, էրիկ
ու կնիկ մարդիկները կը քաշէր՝ բանտը դնել կու
տար ։
4 † Եւ այն ցիրուցան եղածները կը պտըտէին ու
5 խօսքը կը քարոզէին ։ ⊦ Փիլիպպոս ալ Սամա-
րիայի մէկ քաղաքը իջնելով՝ Քրիստոսը կը
6 քարոզէր անոնց ։ Եւ ժողովուրդները միա-
բան հաւանութեամբ Փիլիպպոսին բաններուն

ֆ Սաղ․ լա․ 5 ։ Ղու․ իգ․ 46 ։
– Գլ․ թ․ 40 ։ ի․ 36 ։ իա․ 5 ։
⊧ Մատ․ ե․ 44 ։ Ղու․ գ․ 28 ։ իգ․ 34 ։
÷ Հմր 57 ։ Գլ․ իբ․ 20 ։
– Գլ․ ժա․ 19 ։
⊧ Ծն․ իգ․ 2 ։ ծ․ 10 ։ բ Թագ․ գ․ 31 ։
÷ Գլ․ ե․ 57 ։ թ․ 1, 13, 21 ։ իբ․ 4 ։ իգ․ 10, 11 ։ ա Կոր․ ժե․ 9 ։ Գաղ․ ա․ 13 ։ Փիլ․ գ․ 6 ։ ա Տիմ․ ա․ 13 ։
† Մատ․ ժ․ 23 ։ Գլ․ ժա․ 19 ։
⊦ Գլ․ զ․ 5 ։

ուշադրութիւն կու տային՝ լսելով ու տեսնելով ան
7 'նշանները որ կ'ընէր : դՎասն զի շատ դիւահար-
ներէն պիղծ ոգիները մեծաձայն աղաղակելով կ'ել-
8 լէին : Ու շատ անդամալոյծներ ու կաղեր կը
9 բժշկուէին . Ու մեծ ուրախութիւն եղաւ այն քա-
ղաքին մէջ : Բայց Սիմոն անունով մարդ մը կար՝
որ առաջուց այն քաղաքին մէջ եմոգութիւն կ'ընէր ,
ու Սամարացւոց ազգը կ'ապշեցընէր , զիրեն
10 համար ըսելով՝ թէ մեծ մէկ մըն է . Որ անոր ու-
շադրութիւն կու տային ամէնն ալ պզտիկէն մինչև
մեծը , և կ'ըսէին , Ասիկայ Աստուծոյ մեծ [ըսուած]
11 զօրութիւնն է : Շատ ժամանակէ 'ի վեր կախար-
դութիւններով զանոնք ապշեցընելուն համար՝ իրեն
12 ուշադրութիւն կու տային : Բայց երբոր Փիլիպ-
պոսին հաւատացին՝ էոր Աստուծոյ թագաւորու-
թեանը ու Յիսուս Քրիստոսի անուանը վրայով
կը քարոզէր , կը մկրտուէին թէ էրիկ մարդիկ և
13 թէ կնիկ մարդիկ : Ու Սիմոն ինքն ալ հաւատաց ,
ու մկրտուելով միշտ Փիլիպպոսին հետն էր . և
տեսնելով այն 'նշանները ու մեծ զօրութիւնները
14 որ կ'ըլլային , կը զարմանար : Իսկ Երուսաղէմի
մէջ եղող առաքեալները երբոր լսեցին թէ
Սամարացիք Աստուծոյ խօսքը ընդուներ են , Պետ-
15 րոսը ու Յովհաննէսը անոնց խրկեցին . Որոնք իջ-
նելով՝ աղօթք ըրին անոնց համար ըոր Սուրբ
16 Հոգին առնեն . (թԻնչու որ դեռ անոնց մէ-
կուն վրայ իջած չէր , հապա միայն ժՏէր Յի-
17 սուսի անունովը իմկրտուած էին .) լԱն ա-
տենը ձեռքերնին դրին անոնց վրայ , ու Սուրբ
18 Հոգին կ'առնէին : Երբոր տեսաւ Սիմոն թէ

դ Մար . ժզ . 17 :
ե Գլ . ժգ . 6 :
զ Գլ . ե . 36 :
է Գլ . ա . 3 :
ը Գլ . բ . 38 :

թ Գլ . ժթ . 2 :
ժ Գլ . ժ . 48 : ժթ . 5 :
ի Մատ . իը . 19 : Գլ . բ . 38 :
լ Գլ . զ . 6 : ժթ . 6 : Եբր . զ . 2 :

առաքեալները անոնց վրայ ձեռք դնելով՝ Սուրբ
Հոգին կը տրուի , անոնց ստակ մատուց , ու ը-
19 սաւ , Ինծի ալ աս իշխանութիւնը տուէք՝ որպէս
զի որուն վրայ ձեռք դնեմ , անիկայ Սուրբ Հոգին
20 առնէ : Բայց Պետրոս ըսաւ անոր , Քու արծաթդ
քեզի հետ թող կորսուի , ինչու որ կԱստուծոյ
պարգևը կարծեցիր թէ հստակով կ'առնուի :
21 Դուն աս բանին մէջ մասն ու բաժին չունիս ,
ինչու որ քու սիրտդ Աստուծոյ առջևը շիտակ չէ :
22 Ուստի աս քու չարութենէդ զղջի՛ եկուր , ու
Աստուծոյ աղաչէ՛ , ձգուցէ ներուի քեզի քու սըր-
23 տիդ չար խորհուրդը : Ինչու որ ես քեզ ղմաղձի
դառնութեան մէջ և անիրաւութեան կապին
24 մէջ կը տեսնեմ : Սիմոն պատասխան տուաւ ու
ըսաւ , ճԴուք ինծի համար աղօթք ըրէք Տէրոջը ,
որ ատ ձեր ըսածներէն բան մը իմ վրաս չգայ :
25 Անոնք ալ վկայութիւն տալով Աստուծոյ խօսքը
խօսելէն ետև , դարձան Երուսաղէմ . և Սամա-
րացւոց շատ գեղերուն մէջ աւետարանը քարոզե-
ցին :
26 Ու Տէրոջը հրեշտակը Փիլիպպոսին խօսեցաւ՝
ըսելով , Ելի՛ր ու գնա՛ դուն հարաւային կողմը՝
այն ճամբան , որ Երուսաղէմէն դէպ 'ի Գազա
27 կ'իջնէ , որ անապատ տեղ մըն է : Ան ալ ելաւ
գնաց . և ահա՛ մԵթէովպացի ներքինի մարդ մը՝
Եթէովպացւոց Կանդակա թագուհիին մէկ զօրա-
ւորը , որ ինքը անոր բոլոր գանձերուն վրայ էր ,
որ յԵրուսաղէմ եկեր էր երկրպագութիւն ընելու .
28 Ու անիկա ետ կը դառնար , ու իր կառքը նստած՝
29 Եսայի մարգարէին գիրքը կը կարդար : Ու Հոգին

կ Գլ . բ . 38 : ժ . 45 : ժա . 17 :
հ Մատ . ժ . 8 : Տես դ Թագ . ե . 16 :
ձ Դան . դ . 27 : բ Տիմ . բ . 25 :
ղ Եբր . ժբ . 15 :

ճ Ծն . ի . 7 , 17 : Ել . ը . 8 : Թու . իա . 7 : գ Թագ . ժգ . 6 : Յոբ . խբ . 8 : Յակ . ե . 16 :
մ Սոփ . գ . 10 :
յ Յով . ժբ . 20 :

ըսաւ Փիլիպպոսին , Մօտեցի՛ր և այս կառքին քո՛-
30 վը գնա ։ Փիլիպպոս ալ վազելով մօտ գնաց՝ ու
մտիկ կ'ընէր որ Եսայի մարգարէին գիրքը կը կար-
դար , և ըսաւ , Կարդացածդ կը հասկընա՞ս ար-
31 դեօք ։ Ան ալ ըսաւ , Ինչպէ՞ս կրնամ հասկընալ,
թէ որ մէկը ինծի չառաջնորդէ ․ ու աղաչեց Փի-
32 լիպպոսին որ ելլէ իր քովը նստի ։ Եւ գրքին
մէջ կարդացած տեղը աս էր ․ ն Ոչխարի պէս մոր-
թուելու տարուեցաւ , ու իր խուզողին առջևը
մունջ կեցող գառնուկի պէս՝ անանկ իր բերանը
33 չբանար ․ Իր խոնարհութեանը մէջ իր դատաս-
տանը վերցուեցաւ , և անոր ազգատոհմը ո՞վ պի-
տի պատմէ ․ ինչու որ անոր կեանքը երկրէն կը
34 վերցուի ։ Ներքինին պատասխան տուաւ Փիլիպ-
պոսին ու ըսաւ , Կ'աղաչեմ քեզի , մարգարէն
որո՞ւ համար կ'ըսէ աս ․ իրե՞ն համար՝ թէ մէկ
35 ուրիշի մը համար ։ Իսկ Փիլիպպոս իր բերանը
բացաւ , շ և գրքին աս խօսքէն սկսելով՝ Յիսուսը
36 քարոզեց անոր ։ Ու երբոր ճամբան կ'եր-
թային , ջուրի մը քով եկան ․ ու ըսաւ ներքինին ,
Ահա ջուր , ո ալ ի՞նչ բան զիս կ'արգիլէ մկրտուե-
37 լէն ։ [* Եւ Փիլիպպոս ըսաւ անոր , չ Եթէ որ
քու բոլոր սրտովդ կը հաւատաս , կարելի է ․ ա-
նիկայ պատասխան տուաւ ու ըսաւ , պ Կը հաւա-
տամ թէ Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ է ։]
38 Ու հրաման ըրաւ որ կառքը կայնեցընեն ․ և եր-
կուքնին ալ ջուրը իջան՝ Փիլիպպոսը ու ներքի-
39 նին , և մկրտեց զանիկայ ։ Ու երբոր ջուրէն
դուրս ելան , ջ Տէրոջը Հոգին յափշտակեց Փի-

ն Եսա․ ծգ․ 7, 8 ։
շ Ղու․ իդ․ 27 ։ Գր․ ժը․ 28 ։
ո Գր․ ժ․ 47 ։
* Շատ օրինակներ չունին աս 37 համարը ։
չ Մատ․ իը․ 19 ։ Մար․ ժզ․ 16 ։
պ Մատ․ ժզ․ 16 ։ Յով․ զ․ 70 ։ թ․ 35, 38 ։ ժա․ 27 ։ Գր․ թ․ 20 ։ Ա Յով․ դ․ 15 ։ ե․ 5, 13 ։
ջ Գ Թագ․ ժը․ 12 ։ Դ Թագ․ բ․ 16 ։ Եզեկ․ գ․ 12, 14 ։

լիպպոսը , և ալ ներքինին զանիկա չտեսաւ , ու
40 իր ճամբան կ'երթար ուրախութեամբ ։ Իսկ
Փիլիպպոս Ազովտոսի մէջ գտնուեցաւ ․ ու պը-
տըտելով բոլոր քաղաքներուն աւետարան կը քա-
րոզէր , մինչև որ ինքը Կեսարիա եկաւ ։

ԳԼ․ Թ

1 Սօղոս Դամասկոս երթալու ճամբուն վրայ 4 գետինը կ'իյնայ , և կը տեսնէ զՅիսուս ․ 10 առաքելական պաշտօնին կը կանչուի , 18 և Անանիայէն կը մկրտուի ․ 20 համարձակ զՔրիստոս կը քարոզէ ։ 23 Հրեայք կը խորհին զանիկայ սպաննել ․ 29 նմանապէս Յոյները ․ բայց Սօղոս անոնց ձեռքէն կը փախչի ։ 31 Եկեղեցին խաղաղութիւն կը վայելէ ․ Պետրոս կը բժշկէ Ենեա անուն անդամալոյծը , 36 և Տաբիթան կը յարուցանէ ։

1 ա Բայց Սօղոս տակաւին Տէրոջը աշակերտներուն
դէմ սպառնալիք ու մահ փչելով՝ քահանա-
2 յապետին քովը գնաց ․ Եւ անկէ թուղթեր ուզեց
Դամասկոս ժողովարանները տանելու , որ եթէ ան
ճամբուն հետեւողներ գտնելու ըլլայ , էրիկ մարդիկ
կամ կնիկ մարդիկ կապած Երուսաղէմ բերէ ։
3 բ Ու երբոր կ'երթար ու Դամասկոսին մօտեցաւ ,
յանկարծ իր բոլորտիքը երկինքէն լոյս մը փայլա-
4 տակեց ․ Եւ ինքը գետինը իյնալով՝ մէկ ձայն մը
լսեց որ կ'ըսէր իրեն , Սաւո՛ւղ՝ Սաւուղ , գ ինչո՞ւ
5 զիս կը հալածես ։ Եւ անիկայ ըսաւ , Ո՞վ ես
դուն՝ Տէր ․ և Տէրը ըսաւ , Ես եմ Յիսուսը՝
որ դուն կը հալածես ․ դ * դժուար բան է քեզի
6 խթանի դէմ կից զարնել ։ Ան ալ դողալով ու
ապշութեամբ ըսաւ , Տէ՛ր՝ ե ի՞նչ կ'ուզես որ ը-
7 նեմ ։ Եւ Տէրը ըսաւ անոր , Ելի՛ր ու քա-
ղաքը մտիր , և քեզի պիտի զրուցուի ինչ որ

ա Գր․ ը․ 3 ։ Գաղ․ ա․ 13 ։ Ա Տիմ․ ա․ 13 ։
բ Գր․ իբ․ 6 ։ իզ․ 12 ։ Ա Կոր․ ժե․ 8 ։
գ Մատ․ իե․ 40 , 45 ։
դ Գր․ ե․ 39 ։
* Ոմանք չունին ։
ե Ղու․ գ․ 10 ։ Գր․ բ․ 37 ։ ժզ․ 30 ։
զ Դան․ ժ․ 7 ։ Տես Գր․ իբ․ 9 ։ իզ․ 13 ։

պարտիս ընել . Իսկ այն մարդիկը որ իր հետը
կ'երթային , ապշած կեցեր էին , ձայնը միայն կը
8 լսէին , բայց մէկը չէին տեսներ ։ Եւ Սօղոս
գետնէն ելաւ , ու բաց աչքերով մէկը չէր տես-
ներ . ուստի անոր ձեռքէն բռնեցին ու Դամասկոս
9 մտցուցին ։ Եւ երեք օր կեցաւ առանց տեսնելու ,
և ո՛չ կերաւ , ո՛չ ալ խմեց ։
10 Ու ե Անանիա անունով աշակերտ մը կար Դա-
մասկոսի մէջ . և Տէրը տեսիլքի մէջ անոր ըսաւ ,
Անանիա . ան ալ ըսաւ , Տէ՛ր՝ ահա հոս եմ ։
11 Եւ Տէրը ըսաւ անոր , Ելի՛ր ու գնա այն փողոցը
որ Ուղիղ կ'ըսուի , և հոն Յուդային տանը մէջ
փնտռէ Սօղոս անունով զ Տարսոնացի մը . վասն
12 զի ահա անիկայ աղօթք կ'ընէ . Ու տեսիլքի մէջ
մարդ մը տեսաւ Անանիա անունով՝ ներս մտած և
13 ձեռքը իր վրայ դրած , որ տեսնէ ։ Անանիա ալ
պատասխան տուաւ , Տէ՛ր՝ շատերէն լսեցի այն
մարդուն համար թէ է որչափ չարիքներ ըրաւ քու
14 սուրբերուդ Երուսաղէմի մէջ . Եւ հոս ալ քա-
հանայապետներէն իշխանութիւն ունի կապելու
15 այն ամէնը , ը որ քու անունդ կը կանչեն ։ Եւ
Տէրը ըսաւ անոր , Գնա դուն , թ ինչու որ անի-
կայ ինծի ընտիր աման մըն է , իմ անունս կրելու
ժ հեթանոսներուն ու ի թագաւորներուն և Իսրա-
16 յէլի որդւոցը առջև . լ Քանզի ես անոր պիտի
ցուցընեմ թէ որչափ պէտք է իրեն իմ անունիս
17 համար նեղութիւն կրել ։ Եւ խ Անանիա գնաց

ե Գլ. իբ. 12 ։
զ Գլ. իա. 39 ։ իբ. 3 ։
է Հմր 1 ։
ը Հմր 21 ։ Գլ. է. 59 ։ իբ. 16 ։ ա Կոր. ա. 2 ։ բ Տիմ. բ. 22 ։
թ Գլ. ժգ. 2 ։ իբ. 21 ։ իզ. 17 ։ Հռով. ա. 1 ։ ա Կոր. ժե. 10 ։ Գաղ. ա. 15 ։ Եփ. գ. 7, 8 ։ ա Տիմ. բ. 7 ։ բ Տիմ. ա. 11 ։
ժ Հռով. ա. 5 ։ ժա. 13 ։ Գաղ. բ. 7, 8 ։
ի Գլ. իե. 22, 23 ։ իզ. 1, ևն ։
լ Գլ. ի. 23 ։ իա. 11 ։ բ Կոր. ժա. 23 ։
խ Գլ. իբ. 12, 13 ։

ու այն տունը մտաւ , ծ և ձեռքերը անոր վրայ դնե-
լով ըսաւ , Սաւո՛ւղ եղբայր՝ Տէրը զիս ղրկեց ,
այն Յիսուսը որ ճամբուն մէջ քեզի երեւցաւ երբոր
կու գայիր , որպէս զի տեսութիւնդ առնես , ու
18 կ Հոգւով Սրբով լեցուիս ։ Եւ շուտ մը անոր
աչքերէն թեփերու պէս բաներ ինկան . և իսկոյն
19 տեսաւ ու ելաւ մկրտուեցաւ . Եւ կերակուր
ուտելով ոյժը վրան եկաւ , Ու քանի մը օր
Դամասկոսի մէջ եղող աշակերտներուն հետը կե-
ցաւ ։
20 Եւ անմիջապէս ժողովարաններուն մէջ կը քա-
րոզէր Յիսուսը , ձ թէ անիկայ է Աստուծոյ Որդին ։
21 Եւ ամէն լսողները մեծապէս զարմացեր էին , ու
կ'ըսէին , ղ Անիկայ ան չէ՞ , որ Երուսաղէմի մէջ
կը կործանէր անոնք որ աս անունը կը կանչէին . և
հոս ալ ան բանին համար եկած էր , որ անոնք կա-
22 պած քահանայապետներուն տանի ։ Բայց Սօղոս՝
ալ աւելի կը զօրանար , և ճ Դամասկոսի մէջ բնա-
կող Հրեաները կը պապանձեցընէր , ապացու-
23 ցանելով թէ Քրիստոսը անիկայ է ։ Ու շատ
օրեր անցնելէն ետքը՝ մ Հրեաները խորհուրդ ըրին
24 որ անիկայ սպաննեն ։ յ Բայց Սօղոսին յայտնուե-
ցաւ անոնց նենգութիւնը . և ցորեկ ու գիշեր
25 դռները կը սպասէին որ անիկայ սպաննեն ։ Իսկ
աշակերտները գիշերով առին զանիկայ , ն ու զամ-
բիւղով մը կախելով պատէն վար իջեցուցին ։
26 շ Երբոր Սօղոս Երուսաղէմ եկաւ , կը ջանար
աշակերտներուն յարելու , բայց ամէնն ալ կը

ծ Գլ. ը. 17 ։
կ Գլ. բ. 4 ։ դ. 31 ։ ը. 17 ։ ժգ. 52 ։
հ Գլ. իզ. 20 ։
ձ Գլ. ը. 37 ։
ղ Գլ. ը. 3 ։ Հմր 1 ։ Գաղ. ա. 13, 23 ։
ճ Գլ. ժը. 28 ։
մ Գլ. իգ. 12 ։ իե. 3 ։ բ Կոր. ժա. 26 ։
յ բ Կոր. ժա. 32 ։
ն Յես. բ. 15 ։ ա Թագ. ժթ. 12 ։
շ Գլ. իբ. 17 ։ Գաղ. ա. 17, 18 ։

վախնային անկէ, չհաւատալով թէ անիկայ աշա-
27 կերտ էր ։ Բայց Բառնաբաս անիկայ առնելով
առաքեալներուն տարաւ, ու պատմեց անոնց թէ
ինչպէս ճամբուն վրայ Տէրը տեսաւ, և թէ անոր
հետ խօսեցաւ, և թէ ինչպէս Դամասկոսի մէջ
28 համարձակ քարոզեց Յիսուսի անունովը ։ Ու
Երուսաղէմի մէջ անոնց հետ կը մտնէր ու կ'ելլէր,
Տէր Յիսուսին անունովը համարձակ քարոզելով ։
29 Նաև *Հելլենացեաց դէմ կը խօսէր և վիճաբա-
նութիւն կ'ընէր. Հանոնք ալ կը փնտռէին անի-
30 կայ սպաննել ։ Իսկ եղբայրները իմանալով՝ զա-
նիկայ Կեսարիա իջեցուցին, և անկէ Տարսոն խըր-
կեցին զանիկայ ։
31 Այն ատենը եկեղեցիները բոլոր Հրէաստանի և
Գալիլեայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն ու-
նեցան, և շինութիւն կ'ընդունէին, ու Տէրոջը
երկիւղովը և Հոգւոյն Սրբոյ մխիթարութեամբը
քալելով կ'աճէին ։
32 Ու երբոր Պետրոս ամէն տեղ կը պտըտէր,
Լիւդդեա բնակող սուրբերուն քովն ալ իջաւ ։
33 Հոն մէկ մարդ մը գտաւ, որուն անունը Էնեա
էր, ութը տարիէ 'ի վեր մահիճը պառկած ան-
34 դամալոյծ. Եւ ըսաւ անոր Պետրոս, Էնեա՛
Յիսուս Քրիստոս քեզ կը բժշկէ. ելի՛ր ու քու
35 անկողինդ շինէ. ան ալ շուտ մը ելաւ ։ Եւ
Լիւդդեայի ու Սարոնի մէջ բնակողներուն ամէ-
36 նը անիկայ տեսան, ու Տէրոջը դարձան ։ Եւ
Յոպպէի մէջ աշակերտ եղած կնիկ մը կար՝ անու-
նը Տաբիթա, (որ թարգմանուելով Այծեամնիկ
կ'ըսուի.) ասիկայ լեցուած էր բարի գործ-

Գլ. Դ. 36 ։ ԺԴ. 2 ։
Հմր 20, 22 ։
Գաղ. Ա. 18 ։
Գլ. Զ. 1 ։
* Յն՝ Հելլենախօս Հրէից
Հմր 23 ։ Բ Կոր. ԺԱ. 26 ։
Տես Գլ. Ը. 1 ։
Գլ. Ը. 14 ։
Գլ. Գ. 6, 16 ։ Դ. 10 ։
Ա Մն. Ե. 16 ։
Գլ. ԺԱ. 21 ։
Ա Տիմ. Բ. 10 ։ Բ Տիմ. Գ. 8 ։

քերով ու ողորմութիւններով, որ ինքը կ'ը-
37 նէր ։ Ու եղաւ որ այն օրերը ինքը հիւանդացաւ
ու մեռաւ. լուացին անիկայ և վերի սենեակ
38 մը դրին ։ Ու Լիւդդեա Յոպպէին մօտ էր.
ուստի աշակերտները լսելով թէ Պետրոս հոն է,
անոր երկու մարդ խրկեցին, աղաչելով որ չուշա-
39 նայ իրենց գալու ։ Պետրոս ալ ելաւ անոնց
հետը եկաւ. ու երբոր եկաւ, վերի սենեակը հա-
նեցին զանիկայ. և բոլոր որբևայրիները անոր
բոլորտիքը կայնեցան, կու լային ու կը ցուցընէին
այն բաճկոնները և հանդերձները որ կ'ընէր Այ-
40 ծեամնիկը, քանի որ իրենց հետն էր ։ Պետրոս
ալ ամէնը դուրս հանելով՝ ծունկի վրայ եկաւ
ու աղօթք ըրաւ, և դէպ 'ի մարմինը դառնալով՝
ըսաւ, Տաբիթա՛ ելի՛ր կայնէ. ան ալ իր աչ-
քերը բացաւ, ու Պետրոսը տեսնելով՝ ելաւ
41 շիտակ նստաւ ։ Ինքն ալ ձեռքը անոր տուաւ,
ու վերցուց զանիկայ. և սուրբերը ու որբևայրի-
ները կանչելով՝ անոնց առջևը ողջ կայնեցուց զա-
42 նիկայ ։ Եւ աս բանը բոլոր Յոպպէին մէջ իմա-
43 ցուեցաւ, ու շատերը Տէրոջը հաւատացին ։ Եւ
եղաւ որ ինքը շատ օրեր Յոպպէ կեցաւ Սիմոն
անունով կաշի բանողի մը քով ։

Գլ. Ա. 13 ։
Մատ. Թ. 25 ։
Գլ. Է. 59 ։
Մար. Ե. 41, 42 ։ Յովհ. ԺԱ. 48 ։
Յովհ. ԺԱ. 45 ։ ԺԲ. 11 ։
Գլ. Ժ. 6 ։

ԳԼ. Ժ.

1 Կոռնելիոս անունով բարեպաշտ մարդ մը 5 Աստուծոյ հրեշտակէն հրաման առած՝ կանչել կու տայ Պետրոսը, 11 որ մէկ տեսիլքի մը մէջ կը սորվի չզարշիլ հեթանոսներէն ։ 34 Պետրոս զՔրիստոս կը քարոզէ Կոռնելիոսին ու անոր տանը մէջ եղողներուն, 44 և դեռ իր խօսքը չլմնցուցած՝ Սուրբ Հոգին կը հանգչի անոնց վրայ, 48 և կը մկրտուին ։

1 Կեսարիայի մէջ մարդ մը կար Կոռնելիոս անու-
նով, հարիւրապետ՝ Իտալացի ըսուած գուն-

2 դէն ։ ա Բարեպաշտ ու բ աստուածավախ իր բոլոր
տունովը , որ ժողովուրդին շատ ողորմութիւններ
կու տար , և ամէն ատեն Աստուծոյ աղօթք կ'ը-
3 նէր ։ գ Անիկայ օրուան ժամը իննին ատենները
տեսիլքի մէջ Աստուծոյ հրեշտակը յայտնի տեսաւ ,
4 որ իր քովը մտաւ և իրեն ըսաւ , Կոռնելիոս ։ Ան
ալ անոր նայելով ու խիստ վախնալով , ըսաւ ,
Ի՞նչ է Տէր ։ Ան ալ ըսաւ անոր , Քու աղօթք-
ներդ ու ողորմութիւններդ Աստուծոյ առջեւ ելան
5 յիշատակի համար ։ Եւ հիմա Յոպպէ մարդի՛կ
ղրկէ , ու կանչէ՛ Սիմոն անունով մէկը որ Պետ-
6 րոս մականուանեալ է ։ Անիկայ իբրեւ հիւր կը կե-
նայ դ Սիմոն անունով կաշի բանողի մը քով ,
7 որուն տունը ծովուն մօտ է * ։ Ու երբոր գնաց ան
հրեշտակը՝ որ իր հետը կը խօսէր , իր ծառաներէն
երկուքը կանչեց , ու իր քովը սպասողներէն ալ
8 բարեպաշտ զինուոր մը , Եւ բոլորը անոնց պատ-
մելով՝ Յոպպէ ղրկեց զանոնք ։
9 Ու հետեւեալ օրը երբոր անոնք ճամբայ երթա-
լով՝ քաղաքին մօտեցան , ե Պետրոս ժամը վեցին
10 ատենները տանիքը ելաւ աղօթք ընելու ։ Եւ
խիստ անօթեցած ըլլալով՝ կ'ուզէր ճաշ ընել ։
ու քանի որ անոնք պատրաստութիւն կը տես-
նէին , իր վրայ մտքի յափշտակութիւն մը եկաւ ։
11 զ Եւ տեսաւ երկինքը բացուած , ու չորս ծայրէն
կապուած ամանի մը մեծ կտաւի մը պէս , որ իջաւ
12 երկրի վրայ ։ Որուն մէջը կար երկրի բոլոր չորքո-
տանիները ու գազանները և սողունները ու երկ-
13 նից թռչունները ։ Եւ ձայն մը եկաւ իրեն ,
14 Ելի՛ր Պե՛տրոս՝ մորթէ՛ ու կե՛ր ։ Բայց Պետրոս

ա Հմր 22 ։ Գլ․ Ը․ 2 ։ ԻԲ․ 12 ։
բ Հմր 35 ։
գ Հմր 30 ։ Գլ․ ԺԱ․ 13 ։
դ Գլ․ Թ․ 43 ։
* Ոմանք կ'աւելցնեն՝ անիկայ քեզի պիտի զրուցէ ինչ որ պարտիս ընել ։
ե Գլ․ ԺԱ․ 5 , եւն ։
զ Գլ․ Է․ 55 ։ Յայտ․ ԺԹ․ 11 ։

ըսաւ , Քա՛ւ լիցի Տէ՛ր , է ինչու որ ես ամենեւին
15 պիղծ կամ անմաքուր բան կերած չեմ ։ Նորէն մէ-
մըն ալ ձայն եկաւ իրեն , ը Ան որ Աստուած մաք-
16 րեց , դուն պիղծ մի՛ սեպեր ։ Ասիկայ երեք անգամ
17 եղաւ , և ամանը երկինքը վերցաւ ։ Ու Պետրոս
երբոր իր մտքին մէջ կը զարմանար թէ ինչ պիտի
ըլլայ ան իր տեսած տեսիլքը , ահա Կոռնելիոսէն
ղրկուած մարդիկը Սիմոնին տունը հարցուցին ,
18 ու դրանը առջեւը կայնեցան ։ Եւ կանչելով կը
հարցընէին թէ Սիմոնը որ Պետրոս կ'ըսուի ,
19 հո՞ս կը կենայ ։ Ու երբոր Պետրոս ան տեսիլքին
վրայով կը մտածէր , թ Հոգին Սուրբ ըսաւ անոր ,
20 Ահա երեք մարդիկ քեզ կը փնտռեն ։ ժ Ուստի
ելի՛ր իջի՛ր , և անոնց հետը գնա առանց խղճահա-
21 րութեան , ինչու որ ես ղրկեցի անոնք ։ Պետրոս
ալ ան մարդիկներուն քովը իջնելով՝ ըսաւ , Ահա
ես եմ անիկայ որ դուք կը փնտռէք ։ Ի՞նչ բանի
22 համար եկած էք ։ Անոնք ալ ըսին , ի Կոռնելիոս
հարիւրապետը՝ արդար և աստուածավախ մարդ՝
և բոլոր Հրէից ազգէն վկայուած՝ սուրբ հրեշտակէ
մը հրաման առաւ , որ քեզ իր տունը կանչէ և
23 քեզմէ խօսքեր լսէ ։ Ան ատենը ներս կանչեց
անոնք և իր քովը վար դրաւ ։
Ու հետեւեալ օրը Պետրոս ելաւ՝ անոնց հետը
գնաց , ժա և քանի մըն ալ Յոպպէէն եղող
24 եղբայրներէն իր հետը գացին ։ Ու հետեւեալ
օրը Կեսարիա մտան ։ Կոռնելիոս ալ իր
ազգականները և մտերիմ բարեկամները կանչած՝
25 անոնց կը սպասէր ։ Ու երբոր Պետրոս ներս
կը մտնէր , Կոռնելիոս անոր դիմացը ելաւ , ու ա-

է Ղև․ ԺԱ․ 4 ։ Ի․ 25 ։ Բ Օր․ ԺԴ․ 3 , 7 ։ Եզեկ․ Դ․ 14 ։
ը Մատ․ ԺԵ․ 11 ։ Հմր 28 ։ Հռոմ․ ԺԴ․ 14 , 17 , 20 ։ Ա Կոր․ Ժ․ 25 ։ Ա Տիմ․ Դ․ 4 ։ Տիտ․ Ա․ 15 ։
թ Գլ․ ԺԱ․ 12 ։
ժ Գլ․ ԺԵ․ 7 ։
ի Հմր 1 , 2 , եւն ։
լ Գլ․ ԻԲ․ 12 ։
ի Հմր 45 ։ Գլ․ ԺԱ․ 12 ։

նոր ոտքը իյնալով՝ երկրպագութիւն կ՚ընէր ։
26 Բայց Պետրոս անիկայ կանգնեցուց ու ըսաւ, զԵ-
27 լի՛ր կայնէ․ ես ինքնս ալ մարդ եմ ։ Եւ անոր
հետը խօսակցելով ներս մտաւ, ու հոն շատ մար-
28 դիկ ժողվուած գտաւ․ Եւ ըսաւ անոնց, Դուք
գիտէք թէ էինչպէս ապօրինաւոր բան է Հրեայ
մարդու մը օտարազգիի հետ հաղորդակցութիւն
ընելը կամ անոր մօտենալը․ բայց ըԱստուած ինծի
ցուցուց որ մարդիկներէն մէկուն պիղծ կամ անմա-
29 քուր չըսեմ ։ Անոր համար ես ալ որ կանչուե-
ցայ՝ առանց դէմ խօսելու եկայ․ բայց հիմա կը
հարցընեմ, ի՞նչ բանի համար զիս կանչեցիք ։
30 Կոռնելիոս ալ ըսաւ, Չորս օր առաջ մինչև աս
ժամս ծոմ կը պահէի, ու ժամը իննին տանս մէջ
աղօթք կ՚ընէի․ և ահա թփայլուն հանդերձներով
31 ժմարդ մը կայնեցաւ առջևս ու ըսաւ, Կոռնե-
լիոս՝ իքու աղօթքդ լսուեցաւ, լև քու ողորմու-
32 թիւններդ Աստուծոյ առջևը յիշուեցան․ Ուստի
մարդ խրկէ Յոպպէ, ու կանչէ՛ Սիմոնը՝ որ Պետ-
րոս ալ կ՚ըսուի․ անիկայ ծովուն մօտ Սիմոն ա-
նունով կաշի բանողի մը տանը մէջ իբրև հիւր կը
33 կենայ․ որ երբոր գայ, քեզի պիտի խօսի ։ Ուս-
տի անմիջապէս մարդիկ խրկեցի քեզի․ դուն ալ
աղէկ ըրիր որ եկար․ և հիմա մենք ամէնքս Աս-
տուծոյ առջևը կեցեր ենք լսելու ան ամէն բաները,
որ Աստուծմէ հրամայուած է քեզի ։
34 Պետրոս իր բերանը բացաւ ու ըսաւ, խՃշմար-
տութեամբ կը հասկընամ որ Աստուծոյ քով ա-

զ Գրծ. ժդ. 14։ Յայտ. ժթ. 10։ իբ. 9։
է Յօհ. դ. 9։ ժը. 28։ Գրծ. ժա. 3։ Գաղ. բ. 12, 14։
ը Գրծ. ժե. 8, 9։ Եփե. գ. 6։
թ Գրծ. ա. 10։
ժ Մատ. իը. 3։ Մար. ժզ. 5։ Ղու. իդ. 4։
ի Հմր 4, Ա։ Դան. ժ. 12։
լ Եբր. զ. 10։
խ բ Օր. ժ. 17։ բ Մն. ժթ. 7։ Յոբ. լդ. 19։ Հռով. բ. 11։ Գաղ. բ. 6։ Եփե. զ. 9։ Կող. գ. 25։ ա Պետ. ա. 17։

35 չառութիւն չկայ․ ծՀապա ամէն ազգի մէջ ան
որ անկէ կը վախնայ ու արդարութիւն կը գործէ,
36 անոր ընդունելի է ։ Ան խօսքը որ Իսրայէլի որ-
դւոցը ղրկեց Աստուած կխաղաղութիւն քարոզե-
լու Յիսուս Քրիստոսի ձեռքովը, (հանիկայ է
37 ամենուն Տէրը․) Դուք աղէկ գիտէք ան բանը,
որ բոլոր Հրէաստանի մէջ եղաւ ձԳալիլեայէն
սկսած՝ ան մկրտութենէն ետև որ Յովհաննէս քա-
38 րոզեց․ Յիսուսը որ Նազարեթէն էր, ղոր Աս-
տուած զանիկա օծեց Սուրբ Հոգիով և զօրութիւ-
նով, որ պտըտեցաւ բարիք ընելով ու Սա-
տանայէն բոլոր տանջուածները բժշկելով, քանզի
39 Աստուած իր հետն էր ։ մԵւ մենք վկայ ենք ան
ամէն բաներուն որ ըրաւ Հրէաստանի երկրին մէջ
ու Երուսաղէմի մէջ, յորն որ փայտէն կախած
40 սպաննեցին ալ ։ նԱստուած զանիկա երրորդ օրը
41 յարուց, և յայտնի ըրաւ զանիկայ, շՈչ թէ
բոլոր ժողովուրդին, հապա մեզի առաջուց Աս-
տուծմէ վկայ ըլլալու ընտրուածներուս, ոոր մենք
իրեն հետ կերանք ու խմեցինք ալ անոր մեռելներէն
42 յարութիւն առնելէն ետքը ։ չԵւ ինքը պատուի-
րեց մեզի որ ժողովուրդին քարոզենք ու վկայու-
թիւն տանք, պթէ անիկայ է Աստուծմէ սահմա-
նուած՝ ջկենդանիներուն ու մեռելներուն Դատաւո-

ծ Գրծ. ժե. 9։ Հռով. բ. 13, 27։ գ. 22, 29։ ժ. 12, 13։ ա Կոր. ժբ. 13։ Գաղ. գ. 28։ Եփե. բ. 13, 18։ գ. 6։
կ Ես. ծէ. 19։ Եփե. բ. 14, 16, 17։ Կող. ա. 20։
հ Մատ. իը. 18։ Հռով. ժ. 12։ ա Կոր. ժե. 27։ Եփե. ա. 20, 22։ ա Պետ. գ. 22։ Յայտ. ժէ. 14։ ժթ. 16։
ձ Ղու. դ. 14։
ղ Ղու. դ. 18։ Գրծ. բ. 22։ դ. 27։ Եբր. ա. 9։
ճ Յօհ. գ. 2։
մ Գրծ. բ. 32։
յ Գրծ. ե. 30։
ն Գրծ. բ. 24։
շ Յօհ. ժդ. 17, 22։ Գրծ. ժգ. 31։
ո Ղու. իդ. 30, 43։ Յօհ. իա. 13։
չ Մատ. իը. 19, 20։ Գրծ. ա. 8։
պ Յօհ. ե. 22, 27։ Գրծ. ժէ. 31։
ջ Հռով. ժդ. 9, 10։ բ Կոր. ե. 10։ բ Տիմ. դ. 1։ ա Պետ. դ. 5։

43 րը ։ *Ասոր կը վկայեն բոլոր մարգարէները ՝ թէ
ամէն իրեն հաւատացողները իր անունովը մեղաց
թողութիւն կ'առնեն ։
44 Ու երբոր Պետրոս աս խօսքերը կը խօսէր ,
* Հոգին Սուրբ իջաւ ամենուն վրայ , որոնք խօսքը
45 կը լսէին ։ Եւ * թլփատութեններէն եղող հաւա-
տացեալները որոնք Պետրոսին հետը եկած էին ,
զարմացան՝ * որ հեթանոսներուն վրայ ալ Հոգւոյն
46 Սրբոյ պարգեւը կը լցուէր ։ Քանզի կը լսէին
անոնցմէ որ օտար լեզուներով կը խօսէին , և
47 զԱստուած կը փառաւորէին ։ Այն ատենը Պետ-
րոս պատասխան տուաւ , Արդեօք մէկը ջուրը ար-
գիլէ՞ որ ասոնք չմկրտուին , որոնք Հոգին Սուրբն
48 ալ ընդունեցին * մեզի պէս ։ * Ու հրաման ըրաւ
* որ Տէրոջը անունովը մկրտուին ․ ան ատենը իրեն
աղաչեցին որ քանի մը օր հոն մնայ ։

ԳԼ․ ԺԱ

1 Պետրոս հեթանոսներուն մէջ մտնելուն համար ամբաստա-
նուած ըլլալով՝ 5 իր իրաւունքը կը ցուցընէ , 18 որ ընդու-
նելի կ'ըլլայ ։ 19 Աւետարանը կը տարածուի Փիւնիկէ՝
Կիպրոս և Անտիոք ․ ու Բառնաբաս կը խրկուի հաւատա-
ցեալները հաստատելու ։ 26 Աշակերտները նախ և առաջ
Անտիոքի մէջ Քրիստոնեայ կ'անուանին ․ 27 անոնք օգնու-
թիւն կը խրկեն Հրէաստան սովի ժամանակ ։

1 Եւ առաքեալները ու եղբայրները որ Հրէաստա-
նի կողմերն էին , լսեցին որ հեթանոսներն ալ
2 Աստուծոյ խօսքը ընդուներ են ։ Ու երբոր
Պետրոս Երուսաղէմ ելաւ , * թլփատութեններէն
3 եղողները անոր հետ կը վիճէին , Ու կ'ըսէին թէ

* Դուն անթլփատ մարդոց քովը մտար , * և անոնց
4 հետ հաց կերար ։ Պետրոս ալ սկսաւ բոլորը
5 * կարգով պատմել անոնց , ու ըսաւ , * Ես Յոպ-
պէ քաղաքը աղօթք կ'ընէի , ու մտքի յափշտա-
կութեան մէջ տեսիլք մը տեսայ ․ մէկ աման մը
մեծ կտաւի պէս՝ չորս ծայրերէն երկինքէն կախուած
6 իջաւ , ու մինչև ինծի հասաւ ․ Որուն վրայ աչքս
տնկեր կը նայէի , և տեսայ երկրի չորքոտանիներ-
րը ու գազանները , և սողունները ու երկնից
7 թռչունները ։ Եւ ձայն մը լսեցի որ կ'ըսէր ին-
8 ծի , Ելի՛ր՝ Պետրոս՝ մորթէ՛ ու կե՛ր ։ Բայց ես
ըսի , Քաւ լիցի Տէ՛ր , ինչու որ պիղծ կամ ան-
մաքուր բան մը ամենեւին մտած չէ իմ բերանս ։
9 Պատասխան տուաւ ինծի երկրորդ անգամ *
ձայնը երկինքէն , Այն որ Աստուած մաքրեց , դուն
10 պիղծ մի՛ սեպեր ։ Աս իրեք անգամ եղաւ , ու
11 նորէն բոլորը երկինքը քաշուեցաւ ։ Եւ աՀա
նոյն իրեք մարդ Կեսարիայէն ինծի խրկուած՝
12 * եկան իմ եղած տանս առջեւը կեցան ։ * Հոգին
ալ ինծի ըսաւ որ անոնց հետը երթամ առանց
խղճահարութեան ․ * աս վեց եղբայրներն ալ ինծի
հետ գացին , ու մտանք ան մարդուն տունը ։
13 * Եւ անիկայ մեզի պատմեց թէ ինչպէս իր տանը
մէջ հրեշտակը տեսաւ՝ որ կայներ էր և իրեն
կ'ըսէր , Մարդ խրկէ Յոպպէ՝ ու կանչէ՛ Սիմոնը
14 որ Պետրոս ալ կը կոչուի ․ Որ ան քեզի խօսքեր
պիտի խօսի , որոնցմով փրկուիս դուն և քու բո-
15 լոր տունդ ։ Ու երբոր սկսայ խօսիլ , Հոգին
Սուրբ անոնց վրայ իջաւ , * ինչպէս որ առաջուց
16 մեր վրայ ալ ։ Այն ատենը յիշեցի Տէրոջը խօսքը

* Եա․ ծգ․ 11 ։ Երեմ․ լա․ 34 ։
* Դան․ թ․ 24 ։ Միք․ է․ 18 ։
Զաք․ ժգ․ 1 ։ Մաղ․ դ․ 2 ։
* Գլ․ իզ․ 22 ։
* Գլ․ ժե․ 9 ։ իզ․ 18 ։ Հռով․
* ժ․ 11 ։ Գաղ․ գ․ 22 ։
* Գլ․ դ․ 31 ։ ը․ 15 , 16 , 17 ։
ժա․ 15 ։
* Հմր 23 ։
* Գլ․ ժա․ 18 ։ Գաղ․ գ․ 14 ։
* Գլ․ ժա․ 17 ։ ժե․ 8 , 9 ։
Հռով․ ժ․ 12 ։
* Կոր․ ա․ 17 ։
* Գլ․ ը․ 38 ։ ը․ 16 ։
* Գլ․ ժ․ 45 ։ Գաղ․ բ․ 12 ։

* Գլ․ ժ․ 28 ։
* Գաղ․ բ․ 12 ։
* Ղու․ ա․ 3 ։
* Գլ․ ժ․ 9 , ա ։
* Յով․ ժզ․ 13 ։ Գլ․ ժ․ 19 ։
ժե․ 7 ։
* Գլ․ ժ․ 23 ։
* Գլ․ ժ․ 30 ։
* Գլ․ բ․ 4 ։

որ կ'ըսէր, ե Յովհաննէս ջրով մկրտեց, զ բայց
17 դուք Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք։ է Ուրեմն
թէ որ Աստուած մի և նոյն շնորհքը տուաւ
անոնց՝ ինչպէս որ մեզի ալ, երբոր Տէր Յիսուս
Քրիստոսի հաւատացին, ը ես ո՛վ էի որ կարենա-
18 յի Աստուծոյ դէմ դնել։ Ասոնք լսելով
ձայներնին կտրեցին, և Աստուած կը փառաւորէին
ու կ'ըսէին, թ Ուրեմն Աստուած հեթանոսներուն
ալ կենաց համար ապաշխարութիւն տուաւ։
19 ի Իսկ Ստեփաննոսին մահուանը վրայ եկած նե-
ղութենէն ցիրուցան եղածները մինչև Փիւնիկէ ու
Կիպրոս և Անտիոք հասան, ու մէկու մը Աստուծոյ
խօսքը չէին խօսեր, միայն թէ Հրեաներուն։
20 Բայց անոնցմէ ոմանք Կիպրացի և Կիւրենացի
մարդիկ էին, որոնք երբոր Անտիոք մտան, Հելլե-
նացիներուն հետ կը խօսէին՝ Տէր Յիսուսը քարոզե-
21 լով։ հ Ու Տէրոջը ձեռքը անոնց հետ էր, և
բազմաթիւ մարդիկ հաւատալով ձ Տէրոջը դար-
22 ձան։ Իսկ անոնց վրայով լուրը Երուսաղէմի
եկեղեցիին ականջը հասաւ. ու ղ Բառնաբասը
23 ղրկեցին որ մինչև Անտիոք երթայ. Ան երբոր
եկաւ և Աստուծոյ շնորհքը տեսաւ, ուրախացաւ,
ճ ու կը յորդորէր ամէնն ալ՝ որ յօժար սրտով
24 Տէրոջը հետ կապուած մնան. Քանզի ինքը բարի
մարդ էր, մ ու Սուրբ Հոգիով և հաւատքով լե-
ցուն. յ ու Տէրոջը շատ ժողովուրդ աւելցաւ։
25 Ետքը Բառնաբաս ն Տարսոն ելաւ՝ Սօղոսը փնտռե-
26 լու, և զանիկայ գտնելով՝ Անտիոք բերաւ։ Ու
եղաւ որ անոնք լման տարի մը եկեղեցիին հետ

ե Մատ. գ. 11; Յոհ. ա. 26, 33; Գրծ. ա. 5; ժթ. 4։
զ Ես. խդ. 3; Յովել. բ. 28; գ. 18։
է Գրծ. ժե. 8, 9։
ը Գրծ. ժ. 47։
թ Հռով. ժ. 12, 13; ժե. 9, 16։
ի Գրծ. ը. 1։
հ Ղու. ա. 66; Գրծ. բ. 47։
ձ Գրծ. թ. 35։
ղ Գրծ. թ. 27։
ճ Գրծ. ժգ. 43; ժդ. 21։
մ Գրծ. զ. 5։
յ Հմր 21; Գրծ. ե. 14։
ն Գրծ. թ. 30։

մէկտեղ ժողվուելով, շատ ժողովուրդի սորվեցու-
ցին. ու պինտ առաջ Անտիոքի մէջ աշակերտները
Քրիստոնեայ անուանեցան։
27 Այն օրերը Երուսաղէմէն շ մարգարէներ իջան
28 Անտիոք։ Ու անոնցմէ մէկը ո Ագաբոս անունով՝
ելաւ իմացուց Հոգիին զօրութեամբը թէ մեծ
սով մը պիտի ըլլայ բոլոր աշխարհ, որ և՛ եղաւ
29 Կղօդիոսին օրերը։ Ու աշակերտները որոշեցին
որ իրենցմէ ամէն մէկը ձեռքէն եկածին չափ
Հրէաստանի մէջ բնակող եղբայրներուն չ օգնու-
30 թիւն ղրկեն. պ Որ կատարեցին ալ, երէցներուն
ղրկելով Բառնաբասին ու Սօղոսին ձեռքովը։

ԳԼ. ԺԲ

1 Հերովդէս թագաւորը կը հալածէ քրիստոնեաները. Յակոբոսը կը սպաննէ, և Պետրոսը բանտը դնել կու տայ. որուն համար եկեղեցին աղօթք ընելով, Տէրոջը հրեշտակը կ'ազատէ զանիկայ։ 20 Հերովդէս իր հպարտութեամբը Աստուծոյ վայելուչ եղած պատիւը իրեն առնելով՝ Տէրոջը հրեշտակէն կը զարնուի, և չարաչար կը մեռնի։ 24 Անոր մեռնելէն ետև Աստուծոյ խօսքը յաջողութեամբ կը տարածուի։

1 Այն ատենները Հերովդէս թագաւորը ձեռք զար-
կաւ եկեղեցիէն մէկ քանիները չարչարելու։
2 Ու ջ Յովհաննէսին եղբայրը Յակոբոսը սրով
3 սպաննեց։ Ու տեսնելով որ Հրեաներուն հա-
ճելի է, անոր վրայ Պետրոսն ալ բռնեց. ռ ու
4 բաղարջակերաց օրերն էին։ ս Զանիկայ երբոր
բռնեց՝ բանտը դրաւ, և չորս կարգ չորսական զի-
նուորներու յանձնեց որ պահեն, և կ'ուզէր զատ-
5 կէն ետև ժողովուրդին հանել զանիկայ։ Ուստի
Պետրոս բանտին մէջը պահուած էր, բայց եկեղե-
ցին անդադար աղօթք կ'ընէր Աստուծոյ անոր հա-

շ Գրծ. բ. 17; ժգ. 1; ժե. 32; իա. 9; ա Կոր. ժբ. 28; Եփե. դ. 11։
ո Գրծ. իա. 10։
չ Հռով. ժե. 26; ա Կոր. ժզ. 1; բ Կոր. թ. 1։
պ Գրծ. ժբ. 25։
ջ Մատ. դ. 21; ի. 23։
ռ Ել. ժբ. 14, 15; իգ. 15։
ս Յոհ. իա. 18։

6 մար : Ու երբոր Հերովդէս ուզեց զանիկա դուրս
բերել , ան գիշերը Պետրոս երկու զինուորներու
մէջտեղը կը քնանար՝ կրկին շղթաներով կա-
պուած . ու պահապանները դրանը առջևը բանտը
7 կը պահպանէին : Ու ահա դ Տէրոջը հրեշտակը
ե եկաւ վրան կայնեցաւ , ու տանը մէջ լոյս մը
ծագեց , և Պետրոսին կողը խթելով արթըն-
ցուց զանիկայ , ու ըսաւ , զ Շուտով ելիր . ու
8 շղթաները անոր ձեռքերէն վար ինկան : Ու հրեշ-
տակը ըսաւ անոր , Գօտիդ կապէ ու հողաթափ-
ներդ ոտքդ հագիր . անիկայ ալ այնպէս ըրաւ . և
ըսաւ անոր , Հանդերձդ վրադ առ ու եկուր իմ
9 ետևէս : Ան ալ ելլելով անոր ետևէն կ'երթար ,
է և չէր գիտեր թէ ան հրեշտակէն եղած բանը ի-
րաւ է , հապա կը կարծէր թէ ը տեսիլք կը տես-
10 նէ : Ու երբոր անոնք առաջին ու երկրորդ պա-
հապաններէն անցան , եկան մինչև երկաթի դու-
ռը , որ քաղաքին մէջը կը հանէր , թ որ ան ինք-
նիրմէ բացուեցաւ անոնց . և ասկէ ելլելով՝ մէկ
փողոց մը անցան . հրեշտակն ալ իսկոյն անկէ
11 զատուեցաւ : Ու Պետրոս ինքզինքին գալով
ըսաւ , Հիմա ճշմարտապէս գիտեմ ժ որ Տէրը իր
հրեշտակը ղրկեց , ի և ազատեց զիս Հերովդէսին
ձեռքէն ու Հրէից ժողովուրդին բոլոր ակնկա-
12 լութենէն : Ու մտածելով՝ ժ եկաւ Մարկոս ը-
սուած Յովհաննէսին մօրը լ Մարիամին տունը ,
13 ուր որ շատերը ժողվուած աղօթք կ'ընէին : Ու
տանը դուրսի դուռը որ զարկաւ , Հռոդէ անու-
14 նով աղախին մը գնաց ականջ դնելու . Ու երբոր

դ Գլ. ե. 19 :
ե Սաղ. ճիդ. 1 :
զ Գլ. ժ. 3, 17 : ժա. 5 :
է Գլ. ժդ. 26 :
ը Սաղ. լդ. 7 : Դան. գ. 28 : զ. 22 : Եբր. ա. 14 :

թ Յոր. ե. 19 : Սաղ. լգ. 18, 19 : լդ. 22 : խա. 2 : դէ. 10 : բ Կոր. ա. 10 : բ Պետ. բ. 9 :
ժ Գլ. ժե. 37 :
ի Գլ. դ. 23 :
լ Հմր 5 :

Պետրոսին ձայնը ճանչցաւ , ուրախութենէն դու-
ռը չբացաւ , հապա ներս վազելով պատմեց թէ
15 Պետրոս դրանը առջևը կայներ է : Իսկ անոնք
ըսին անոր , Խենդեցեր ես . բայց ինքը կը պնդէր
թէ անանկ է . անոնք ալ կ'ըսէին , խ Անոր հրեշ-
16 տակը պիտի ըլլայ : Սակայն Պետրոս անդադար
կը զարնէր . ու երբոր բացին , զինքը տեսնելով
17 ապշեցան : Բայց անիկայ ծ ձեռքով նշան կ'ընէր
անոնց որ լուռ կենան , ու պատմեց անոնց թէ
ինչպէս Տէրը զինքը բանտէն հանեց , և ըսաւ ,
Ասիկայ Յակոբոսին ու եղբայրներուն պատմե-
18 ցէք . և ելաւ ուրիշ տեղ գնաց : Ու երբոր
առտու եղաւ , մեծ խռովութիւն կար զինուորնե-
րուն մէջը թէ արդեօք ի՞նչ եղաւ Պետրոսը :
19 Հերովդէս ալ երբոր ուզեց զանիկա ու չգտաւ ,
պահապաններուն հարցափորձ ընելով՝ հրաման
ըրաւ որ սպաննուին . և ինքը Հրէաստանէն Կե-
սարիա իջաւ , ու հոն կը կենար :
20 Ու Հերովդէս խիստ թշնամացած էր Տիւրացի-
ներուն ու Սիդոնացիներուն հետ . անոնք ալ միա-
բան հաւանութեամբ իրեն եկան , ու թագաւորին
Բղաստոս սենեկապետը համոզելով՝ հաշտութիւն
կը խնդրէին . կ ինչու որ իրենց երկիրը թագաւո-
21 րին երկրէն ապրուստ կ'առնէր : Ու մէկ որոշուած
օր մը Հերովդէս թագաւորական հանդերձը հա-
գած ու ատեանը նստած՝ անոնց ատենաբանու-
22 թիւն կ'ընէր : Ժողովուրդն ալ կ'աղաղակէր
թէ Ասիկայ Աստուծոյ ձայն է , ու չէ թէ մար-
23 դու : Ու իսկոյն Տէրոջը հրեշտակը հ զանիկայ
զարկաւ , ձ Աստուծոյ փառք չտալուն համար . և
որդնալից ըլլալով մեռաւ :

խ Ծն. խբ. 16 : Մատ. ժբ. 10 :
ծ Գլ. ժգ. 16 : ժթ. 33 : իա. 40 :
կ Գ Թագ. ե. 9, 11 : Եզեկ. իէ. 17 :

հ Ա Թագ. իե. 28 : Բ Թագ. իդ. 17 :
ձ Սաղ. ճժե. 1 :

24 Իսկ Աստուծոյ խօսքը կ'աճէր ու կը շատնար ։
25 Իսկ Բառնաբաս ու Սօղոս երբոր իրենց յանձնուած
պաշտօնը լմնցուցին՝ Երուսաղէմէն դարձան, Մար-
կոս ըսուած Յովհաննէսն ալ հետերնին առնելով ։

ԳԼ. ԺԳ

1 Պօղոս ու Բառնաբաս կ'ընտրուին հեթանոսներուն երթալու ։ 7 Սերգիոս Պօղոսը և Եղիմաս մոգը ։ 14 Պօղոս կը քարոզէ Անտիոքի մէջ թէ Յիսուսն է աշխարհի Փրկիչը ։ 42 Հեթանոսները կը հաւատան . 45 բայց Հրեայք կը հակառակին և հայհոյութիւն կ'ընեն ։ 46 Ասոր վրայ Պօղոս և Բառնաբաս հեթանոսներուն կը դառնան ։ 48 Քրիստոնէական հաւատքը կ'ընդունին անոնք որ յաւիտենական կենաց սահմանուած էին ։

1 Եւ Անտիոքի մէջ եղած եկեղեցիէն քանի մը
մարգարէներ ու վարդապետներ կային, Բառ-
նաբաս ու Շմաւոն որ Նիգեր կ'ըսուէր, և
Ղուկիոս Կիւրենացի ու Մանայէն՝ Հերովդէս
2 չորրորդապետին սնդակիցը, և Սօղոս ։ Երբոր
ասոնք Տէրոջը պաշտօնին մէջն էին՝ և ծոմ կը պա-
հէին, Հոգին Սուրբը ըսաւ, Զատեցէք ինծի
Բառնաբասը և Սօղոսը ան գործին համար, որուն
3 ես կանչեր եմ զանոնք ։ Այն ատենը ծոմ պահե-
լով և աղօթք ընելով, ձեռք դրին անոնց վրայ ու
խրկեցին ։
4 Անոնք ալ Սուրբ Հոգիէն խրկուած Սելեւկիա
5 իջան, ու անկէ նաւով Կիպրոս գացին ։ Եւ Սա-
ղամինա հասնելով՝ Հրէից ժողովարաններուն մէջ
Աստուծոյ խօսքը կը քարոզէին, ու Յովհաննէսն

Ես. ծե. 11 ։ Գլ. զ. 7 ։ ժթ. 20 ։ Կող. ա. 6 ։
Գլ. ժա. 29, 30 ։
Հմր 12 ։
Գլ. ժդ. 5, 13 ։ ժե. 37 ։
Գլ. ժա. 27 ։ ժգ. 25 ։ ժե. 35 ։
Գլ. ժա. 22–26 ։
Հռով. ժզ. 21 ։
Թուոց. ը. 14 ։ Գլ. թ. 15 ։ իբ. 21 ։ Հռով. ա. 1 ։ Գաղ. ա. 15 ։ բ. 9 ։
Մատթ. թ. 38 ։ Գլ. ժդ. 25 ։ Հռով. ժ. 15 ։ Եփես. գ. 7, 8 ։ ա Տիմ. բ. 7 ։ բ Տիմ. ա. 11 ։ Եբր. ե. 4 ։
Գլ. զ. 6 ։
Գլ. դ. 36 ։
Հմր 46 ։
Գլ. ժբ. 25 ։ ժե. 37 ։

6 ալ իրենց սպասաւոր ունէին ։ Եւ պտըտելով ան
[բոլոր] կղզին մինչև Պափոս, հոն գտան կախարդ մար-
գարէ՝ Հրեայ մոգ մը, որուն անունը Բարյեսու
7 էր . Որ ինքը փոխանորդ բդեշխին հետն էր, որ
կ'ըսուէր Սերգիոս Պօղոս, խելացի մարդ մը . ա-
սիկայ Բառնաբասը և Սօղոսը հրաւիրելով՝ ուզեց
8 Աստուծոյ խօսքը լսել ։ Սակայն անոնց դէմ կե-
ցաւ Եղիմաս մոգը, (քանզի այսպէս կը թարգմա-
նուի անոր անունը,) որ կ'ուզէր փոխանորդ բդեշ-
9 խը հաւատքէն դարձընել ։ Բայց Սօղոս որ Պօղոս
ալ կ'ըսուի, Հոգւով Սրբով լեցուած՝ աչքե-
10 րը անոր վրայ տնկեց, Ու ըսաւ, Ո՜վ ամէն խա-
բեբայութիւնով և ամէն խորամանկութիւնով լե-
ցուած Սատանայի որդի՝ թշնամի բոլոր արդա-
րութեան, պիտի չդադարի՞ս Տէրոջը շիտակ ճամ-
11 բաները ծռելէն ։ Եւ հիմա Տէրոջը ձեռքը աչ
քու վրադ է . ու կոյր պիտի ըլլաս՝ ատեն մը արեւը
չտեսնելով ։ Եւ իսկոյն անոր վրայ մէգ ու խաւար
մը իջաւ, ու պտըտելով առաջնորդ կը փնտռէր ։
12 Այն ատենը փոխանորդ բդեշխը աս բաները
որ տեսաւ՝ հաւատաց, մեծապէս զարմանալով Տէ-
րոջը վարդապետութեանը վրայ ։
13 Եւ Պօղոս ու իր ընկերները Պափոսէն ելան, ու
եկան Պամփիւլիայի Պերգէն . բայց Յովհաննէս
14 անոնցմէ զատուելով՝ Երուսաղէմ դարձաւ ։ Ա-
նոնք ալ Պերգէէն գացին ու եկան Պիսիդիայի
Անտիոքը, և շաբաթ օրը ժողովարանը մտնելով՝
15 նստան ։ Ու օրէնքը և մարգարէները կարդացուե-
լէն ետև՝ ժողովրդապետները մարդ խրկեցին իրենց
ու ըսին, Մարդի՛կ եղբայրներ՝ եթէ որ դուք ժո-

Գլ. ը. 9 ։
Ել. է. 11 ։ բ Տիմ. գ. 8 ։
Գլ. դ. 8 ։
Մատթ. ժգ. 38 ։ Յովհ. ը. 44 ։ ա Յովհ. գ. 8 ։
Ել. թ. 3 ։ ա Թագ. ե. 6 ։
Գլ. ժե. 38 ։
Գլ. ժգ. 13 ։ ժէ. 2 ։ ժը. 4 ։
Ղուկ. դ. 16 ։ Հմր 27 ։
Եբր. ժգ. 22 ։

ժողովուրդին խօսելու յորդորական խօսք մը ունիք ,
16 խօսեցէ՛ք ։ Ան ատենը Պօղոս ոտքի վրայ կայնելով ,
ա ձեռքը շարժեց ու ըսաւ , Ո՛վ Իսրայելացի մարդիկ
բ և դուք որ Աստուծմէ կը վախնաք , մտի՛կ ըրէք ։
17 Աս Իսրայէլ ժողովուրդին Աստուածը գ մեր հայրերը
ընտրեց , ու ժողովուրդը բարձրացուց դ Եգիպ-
տոսի երկրին մէջ պանդխտութեան ատենը , ե և
18 բարձր բազուկով զանոնք անկէ հանեց ։ Ու զ քառա-
սուն տարուան ժամանակի չափ անապատին մէջ
19 կերակրեց զանոնք ։ է Ու Քանանու երկրին մէջ
եօթը ազգ կործանելով , ը անոնց երկիրը իրենց
20 տուաւ որ ժառանգեն ։ Ու անկէ ետև թ չորս հա-
րիւր յիսուն տարիի չափ դատաւորներ տուաւ ա-
21 նոնց ժ մինչև Սամուէլ մարգարէն , ի Ու ետքը
թագաւոր ուզեցին . և Աստուած Կիսի որդին
Սաւուղը տուաւ անոնց՝ Բենիամինի ցեղէն մարդ
22 մը , քառասուն տարի ։ լ Ու երբոր զանիկայ փո-
խեց , խ Դաւիթը հանեց իրենց թագաւոր , որուն
համար վկայութիւն տալով ըսաւ , ծ Յեսսէի որ-
դին Դաւիթը գտայ կ իմ սրտիս համեմատ մարդ ,
23 որ իմ բոլոր կամքս պիտի կատարէ ։ հ Ասոր սե-
րունդէն Աստուած ձ իր խոստմունքին պէս Իսրայէ-
24 լին ղ Փրկիչ Յիսուսը հանեց . ճ Նա դեռ անիկայ

ա Գլ. ժբ. 17 ։
բ Հմր 26 ; Գլ. ժ. 35 ։
գ Բ Օր. է. 6, 7 ։
դ Ել. ա. 1 ; Սաղ. ճե. 23, 24 ; Գլ. է. 17 ։
ե Ել. զ. 6 ; ժգ. 14, 16 ։
զ Ել. ժզ. 35 ; Թու. ժդ. 33, 34 ; Սաղ. ղե. 9, 10 ; Գլ. է. 36 ։
է Բ Օր. է. 1 ։
ը Յեսու. ժդ. 1, 2 ; Սաղ. հը. 55 ։
թ Դատ. բ. 16 ։
ժ ա Թագ. գ. 20 ։
ի ա Թագ. ը. 5 ; ժ. 1 ։
լ ա Թագ. ժե. 23, 26, 28 ; ժզ. 1 ; Ովս. ժգ. 11 ։
խ ա Թագ. ժզ. 13 ; բ Թագ. բ. 4 ; ե. 3 ։
ծ Սաղ. ձթ. 20 ։
կ ա Թագ. ժգ. 14 ; Գլ. է. 46 ։
հ Ես. ժա. 1 ; Ղու. ա. 32, 69 ; Գլ. բ. 30 ; Հռով. ա. 3 ։
ձ բ Թագ. է. 12 ; Սաղ. ճլբ. 11 ։
ղ Մատ. ա. 21 ; Հռով. ժա. 26 ։
ճ Մատ. գ. 1 ; Ղու. գ. 3 ։

իր գալուստէն չեկած՝ Յովհաննէս առաջուց Իսրայէ-
լի բոլոր ժողովուրդին ապաշխարութեան մկրտու-
25 թիւնը քարոզեց . Ու երբոր Յովհաննէս իր ըն-
թացքը կը կատարէր , ըսաւ , մ Ո՞վ կը կարծէք
թէ եմ . ես Քրիստոսը չեմ , հապա անիկայ ահա
իմ ետևէս կու գայ , որ ես արժանի չեմ անոր
26 ոտքերուն կօշիկները քակելու ։ Մարդի՛կ եղբայր-
ներ՝ Աբրահամի տոհմին որդիքը , ու անոնք որ ձեր
մէջը աստուածավախ են , այս փրկութեան խօսքը
27 յ ձեզի ղրկուեցաւ ։ Քանզի Երուսաղէմ բնակող-
ները և անոնց իշխանները ն ոչ անիկայ ճանչցան ,
ոչ ալ մարգարէներուն ձայները , շ որ ամէն շա-
բաթ օրերը կը կարդացուին . հապա զանոնք կա-
28 տարեցին՝ զինք ո դատապարտելով . Ու չ մահուան
պատճառ մըն ալ չգտած՝ պ Պիղատոսէն խնդրեցին
29 որ անիկայ սպաննուի ։ ջ Ու երբոր անոր համար բո-
լոր գրուած բաները կատարեցին , ռ փայտէն վար
30 իջեցնելով՝ գերեզմանի մէջ դրին . ս Բայց Աս-
տուած զանիկա յարուց մեռելներէն . վ որ իրեն
31 շատ օրեր երևցաւ անոնց , Որ իր հետը տ Գալիլեա-
յէն Երուսաղէմ ելեր էին , ր որոնք հիմա անոր
32 վկաներն են ժողովուրդին առջևը ։ Մենք ալ
ձեզի կը քարոզենք ց այն խոստմունքը որ հայրերուն

մ Մատ. գ. 11 ; Մար. ա. 7 ; Ղու. գ. 16 ; Յով. ա. 20, 27 ։
յ Մատ. ժ. 6 ; Ղու. իդ. 47 ; Հմր 46 ; Գլ. գ. 26 ։
ն Ղու. իգ. 34 ; Գլ. գ. 17 ; ա Կոր. բ. 8 ։
շ Հմր 14, 15 ; Գլ. ժե. 21 ։
ո Ղու. իդ. 20, 44 ; Գլ. իզ. 22 ; իը. 23 ։
չ Մատ. իէ. 22 ; Մար. ժե. 13, 14 ; Ղու. իգ. 21, 22 ; Յով. ժթ. 6, 15 ։
պ Գլ. գ. 13, 14 ։
ջ Ղու. ժը. 31 ; իդ. 44 ; Յով. ժթ. 28, 30, 36, 37 ։
ռ Մատ. իէ. 59 ; Մար. ժե. 46 ; Ղու. իգ. 53 ; Յով. ժթ. 38 ։
ս Մատ. իը. 6 ; Գլ. բ. 24 ; գ. 13, 15, 26 ; ե. 30 ։
վ Մատ. իը. 16 ; Գլ. ա. 3 ; ա Կոր. ժե. 5, 6, 7 ։
տ Գլ. ա. 11 ։
ր Գլ. ա. 8 ; բ. 32 ; գ. 15 ; ե. 32 ։
ց Ծն. գ. 15 ; ժբ. 3 ; իբ. 18 ; Գլ. իզ. 6 ; Հռով. դ. 13 ; Գաղ. գ. 16 ։

33 եղած էր , Որ զանիկա Աստուած կատարեց մեզի
որ անոնց զաւակներն ենք՝ Յիսուսը յարուցանե-
լով , ինչպէս որ երկրորդ սաղմոսին մէջն ալ գը-
րուած է , ծ Դուն իմ Որդիս ես , ես այսօր քեզ
34 ծնայ : Նաեւ որ զանիկայ մեռելներէն յարուց , ու
մէյմըն ալ ապականութիւն պիտի չտեսնէ , ասանկ
կ'ըսէ թէ · կ Ձեզի պիտի տամ Դաւիթին հաւա-
35 տարիմ սուրբ խոստմունքները : Ասոր ուրիշ սաղ-
մոսի մը մէջ ալ կ'ըսէ · հ Քու Սուրբդ ապակա-
36 նութիւն տեսնել պիտի չտաս : Ինչու որ Դաւիթ
իր դարուն մէջ Աստուծոյ կամքը ծառայելով՝
ձ մեռաւ , ու իր հայրերուն քովը դրուեցաւ և
37 ապականութիւն տեսաւ : Բայց ան որ Աստուած
38 յարուց , ապականութիւն չտեսաւ : Ուրեմն
յայտնի ըլլայ ձեզի՝ մարդի՛կ եղբայրներ , ղ որ ա-
սոր միջոցովը ձեզի մեղաց թողութիւն կը քարո-
39 զուի · Նաեւ ան ամէն բաներէն՝ որ Մովսէսին օրէն-
քովը չկրցաք արդարանալ , ճ ասով՝ ամէն ով որ
40 հաւատայ , կ'արդարանայ : Արդ զգուշացէ՛ք որ
չըլլայ թէ ձեր վրայ գայ ան որ մ մարգարէներուն
41 մէջ ըսուած է , Նայեցէ՛ք՝ արհամարհողներ՝ և
զարմացէ՛ք ու ոչնչացէ՛ք · ինչու որ գործ մը պի-
տի ընեմ ձեր օրերուն մէջ , անանկ գործ մը՝ որ
եթէ մէկը ձեզի պատմէ , պիտի չհաւատաք :
42 Ու երբոր անկէ դուրս ելան , կ'աղաչէին որ
* հետեւեալ շաբաթ" ալ նոյն խօսքերը իրենց
43 խօսուի : Նաեւ ժողովուրդը երբոր արձակեցաւ ,
Հրէաներէն ու նորահաւատ բարեպաշտներէն շա-
տերը Պօղոսին ու Բառնաբասին ետեւէն կ'երթա-

ծ Սաղ. բ. 7. Եբր. ա. 5. ե. 5.
կ Եսա. ծե. 3.
հ Սաղ. ժզ. 10. Գր. բ. 31.
ձ Գ Թագ. բ. 10. Գր. բ. 29.
ղ Երեմ. լա. 34. Դան. թ. 24. Ղուկ. իդ. 47. Ա Յովհ. բ. 12.
ճ Եսա. ծգ. 11. Հռով. գ. 28. ը. 3. Եբր. է. 19.
մ Եսա. իթ. 14. Ամբ. ա. 5.
* Կամ՝ շաբթու մէջ

յին : որոնք կը խօսէին անոնց հետ , ու յ կը յոր-
դորէին զանոնք , որ միշտ ն Աստուծոյ շնորհքին
44 մէջը հաստատ կենան : Նաեւ հետեւեալ շաբաթ
օրը գրեթէ բոլոր քաղաքը ժողվուեցաւ Աստուծոյ
45 խօսքը լսելու : Իսկ Հրէաները երբոր տեսան ան
բազմութիւնը , նախանձով լեցուեցան , ու շ Պօ-
ղոսի գրուածներուն դէմ կը խօսէին հակառակե-
46 լով ու հայհոյութիւն ընելով : Ան ատենը Պօ-
ղոս և Բառնաբաս համարձակեցան ու ըսին ,
Պէտք էր որ ո առաջ ձեզի խօսուի Աստուծոյ
խօսքը՝ , չ բայց որովհետեւ դուք անիկայ կը մեր-
ժէք , ու ինքզինքնիդ յաւիտենական կենաց արժա-
նի չէք սեպեր , պ ահա մենք հեթանոսներուն կը
47 դառնանք : Ինչու որ Տէրը ասանկ պատուիրած
է մեզի · ջ Քեզ հեթանոսներուն լոյս դրի , որ
դուն փրկութեան պատճառ ըլլաս մինչև երկրի
48 ծայրերը : Ու լսելով հեթանոսները կ'ուրախա-
նային , ու Աստուծոյ խօսքը կը փառաւորէին · ռ և
որոնք որ յաւիտենական կենաց սահմանուած էին ,
49 հաւատացին : Ու Տէրոջը խօսքը բոլոր գաւառը
50 կը տարածուէր : Բայց Հրէաները գրգռեցին բա-
րեպաշտ և պատուաւոր կիները ու քաղաքին մեծե-
րը , և ս Պօղոսին ու Բառնաբասին վրայ հալա-
ծանք հանելով՝ զանոնք իրենց սահմաններէն դուրս
51 ըրին : վ Անոնք ալ իրենց ոտքերուն փոշին անոնց
52 դէմ թօթուելով՝ Իկոնիոն եկան : Ու աշակերտ-

յ Գր. ժա. 23. ժդ. 21.
ն Տիտ. բ. 11. Եբր. ժբ. 15. Ա Պետ. ե. 12.
շ Գր. ժը. 6. Ա Պետ. դ. 4. Յուդ. 10.
ո Մատ. ժ. 6. Գր. գ. 26. Հմր 26. Հռով. ա. 16.
չ Ել. լբ. 10. Բ Օր. լբ. 21. Եսա. ծե. 5. Մատ. իա. 43. Հռով. ժ. 19.
պ Գր. ժը. 6. իը. 28.
ջ Եսա. իբ. 6. իթ. 6. Ղուկ. բ. 32.
ռ Գր. բ. 47.
ս Բ Տիմ. գ. 11.
վ Մատ. ժ. 14. Մար. զ. 11. Ղուկ. թ. 5. Գր. ժը. 6.

ները Փ ուրախութեամբ և Հոգւով Սրբով կը լեցուէին :

ԳԼ. ԺԴ

1 Պօղոս և Բառնաբաս հալածուելով կը փախչին Իկոնիոնէն : 7 Լիւստրայի մէջ Պօղոս կը բժշկէ 'ի ծնէ կաղ մը , և ատ պատճառով անոնք աստուածներ ըլլալ կը կարծուին : 19 Պօղոս կը քարկոծուի : 21 Անոնք զանազան եկեղեցիներ կը պտըտին , հաստատելով աշակերտները հաւատքի և համբերութեան մէջ . 26 ետքը Անտիոք դառնալով՝ կը պատմեն եղբայրներուն ո՛րչափ բան որ Աստուած ըրեր էր իրենց :

1 Ու եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք մէկտեղ Հրէաներուն ժողովարանը մտան , և այնպէս խօսեցան որ խիստ շատ Հրէաներ և Յոյներ հաւա-
2 տացին : Բայց չհաւատացող Հրէաները գրգռե-
ցին ու չարութեան գրգռեցին հեթանոսներուն
3 սիրտը եղբայրներուն դէմ : Իսկ անոնք շատ ժամանակ հոն կենալով՝ համարձակ կը քարոզէին Տէրոջմով , որ իր շնորհաց խօսքին Ա կը վկայէր , և նշաններ ու հրաշքներ ընել կու տար անոնց
4 ձեռքովը : Իսկ քաղաքին բազմութեանը մէջ երկպառակութիւն մը եղաւ . ոմանք Հրէաներուն
5 կողմէն եղան , ոմանք ալ Բ առաքեալներուն : Ու երբոր հեթանոսները և Հրէաները իրենց իշխաններովը վրանին յարձակեցան՝ Գ զանոնք նախատելու ու
6 քարկոծելու , Իրենք իմանալով Լիկայոնացւոց քաղաքները Դ փախան՝ Լիւստրա ու Դերբէ և շրջակայ տեղուանքը , ու հոն աւետարանը կը քարոզէին :
7 Ե Իսկ Լիւստրայի մէջ մարդ մը նստեր էր ոտքերովը տկար , իր մօրը որովայնէն կաղ ծնած , որ
8 բնաւ քալած չէր : Ասիկա Պօղոսին խօսքերը մտիկ կ'ընէր . ան ալ աչքը անոր տնկելով Զ տես-

Փ Մատ. ե. 12 : Յով. ժզ. 22 : Գլ. բ. 46 :
Ա Մար. ժզ. 20 : Եբր. բ. 4 :
Բ Գլ. ժգ. 3 :
Գ Բ Տիմ. գ. 11 :
Դ Մատ. ժ. 23 :
Ե Գլ. գ. 2 :
Զ Մատ. ը. 10 : թ. 28, 29 :

9 նելով թէ բժշկուելու հաւատք ունի , Բարձր ձայնով մը ըսաւ , Է Ելի՛ր ոտքերուդ վրայ շիտակ
10 կայնէ . ան ալ ցատկելով կը քալէր : Իսկ ժողովուրդները երբոր Պօղոսին ըրածը տեսան՝ ձայներնին վերցնելով Լիկայոներէն ըսին , Ը Աստուածները մարդոց նմանութիւնով մեզի իջեր
11 են : Ու Բառնաբասին Դիոս կը կանչէին , և Պօղոսին Հերմէս , ինչու որ անիկայ էր գլխաւոր
12 խօսողը : Իսկ քաղաքին առջեւը եղած Դիոսին քուրմը ցուլեր և պսակներ բերելով դռներուն առջեւը , բազմութեանը հետ մէկտեղ Թ կ'ուզէր որ
13 զոհ ընէ : Բայց Բառնաբաս ու Պօղոս առաքեալները՝ երբոր լսեցին , Ժ իրենց հանդերձները պատռելով՝ դուրս ցատկեցին բազմութեանը մէջ ,
14 կ'աղաղակէին Ու կ'ըսէին , Մարդի՛կ՝ Ի ինչո՞ւ համար աս բաները կ'ընէք . Լ մենք ալ ձեզի պէս կիրքեր ունեցող մարդիկ ենք , ու կը քարոզենք ձեզի Խ որ աս փուճ բաներէն Ծ կենդանի Աստուծոյն դառնաք , Կ որ ինքը ստեղծեց երկինքը ու երկիրը և
15 ծովը ու բոլոր անոնց մէջի եղածները : Հ Որ անցած դարերուն մէջ թող տուաւ ամէն ազգերուն
16 իրենց ճամբաները երթալու : Ձ Սակայն ամենայնիւ ինքզինքը առանց վկայութեան չթողուց , բարերարութիւնով Ղ երկինքէն * մեզի անձրեւներ ու պտղաբեր եղանակներ տալով , կերակուրներով և
17 ուրախութիւնով † մեր սիրտերը լեցնելով : Ու

Է Եսա. լե. 6 :
Ը Գլ. ը. 10 : իը. 6 :
Թ Դան. բ. 46 :
Ժ Մատ. իզ. 65 :
Ի Գլ. ժ. 26 :
Լ Յակ. ե. 17 : Յայտ. ժթ. 10 :
Խ Ա Թագ. ժբ. 21 : Գ Թագ. ժզ. 13 : Երեմ. ժզ. 22 : Ամով. բ. 4 : Ա Կոր. ը. 5 :
Ծ Ա Թես. ա. 9 :
Կ Ծն. ա. 1 : Սաղ. լգ. 6 : ճխզ. 6 : Յայտ. ժդ. 7 :
Հ Սաղ. ձա. 12 : Գլ. ժէ. 30 : Ա Պետ. դ. 3 :
Ձ Գլ. ժէ. 27 : Հռով. ա. 20 :
Ղ Ղեւ. իզ. 4 : Բ Օր. ժա. 14 : Յոբ. ե. 10 : Սաղ. կե. 10 : կը. 9 : ճխէ. 8 : Երեմ. ժդ. 22 : Մատ. ե. 45 :
* Ոմանք՝ ձեզի
† Ոմանք՝ ձեր

աս բաները ըսելով՝ հազիւ կրցան ժողովուրդները
դադրեցընել, որ իրենց զոհ չընեն :
18 Սակայն [ճ] Անտիոքէն ու Իկոնիոնէն Հրէաներ
հասան, ու ժողովուրդները համոզեցին, [մ] և Պօ-
ղոսը քարկոծեցին ու քաղաքէն դուրս քաշեցին՝
19 կարծելով թէ մեռած է : Բայց աշակերտները
երբոր անոր բոլորտիքը պատեցին, ելաւ քաղաքը
մտաւ, ու հետեւեալ օրը Բառնաբասին հետ մէկ-
20 տեղ Դերբէ ելաւ : Եւ անոնք այն քաղաքին մէջ
աւետարանը քարոզելով, [յ] ու շատերը աշակերտ
ընելով՝ Լիւստրա և Իկոնիոն և Անտիոք դարձան,
21 [ն] Աշակերտներուն սիրտերը հաստատելով, և յոր-
դորելով որ հաստատ մնան հաւատքին մէջ. և
ըսելով՝ [շ] թէ շատ նեղութիւններով պէտք է մե-
22 զի Աստուծոյ թագաւորութիւնը մտնել : [ո] Ու
երբոր անոնց ամէն մէկ եկեղեցիին երէցներ ձեռ-
նադրեցին, ծոմապահութեամբ աղօթք ընելով
զանոնք յանձնեցին Տէրոջը՝ որուն հաւատացեր էին :
23 Եւ Պիսիդիայի մէջէն պտըտելով եկան Պամփիւ-
24 լիա : Պերգէի մէջ ալ Տէրոջը խօսքը խօսելէն
25 ետեւ Ատալիա իջան : Անկէ ալ նաւով Անտիոք
գացին, [չ] ուսկից որ [պ] Աստուծոյ շնորհքին յանձ-
նուած էին այն գործին համար որ կատարեցին :
26 Ու երբոր եկան, եկեղեցին մէկտեղ ժողվելով՝
[ջ] պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց
հետ, և որ [ռ] հեթանոսներուն հաւատքի դուռ բա-
27 ցեր էր : Ու հոն շատ ժամանակ աշակերտներուն
հետ կեցան :

ճ Գր. ժգ. 45 ։
մ բ Կոր. ժա. 25 ։ բ Տիմ. գ. 11 ։
յ Մատ. իբ. 19 ։
ն Գր. ժա. 23 ։ ժգ. 43 ։
շ Մատ. ժ. 38 ։ ժզ. 24 ։ Ղուկ. իբ. 28, 29 ։ Հռով. ը. 17 ։ բ Տիմ. բ. 11, 12 ։ գ. 12 ։
ո Տիտ. ա. 5 ։
չ Գր. ժգ. 1, 3 ։
պ Գր. ժե. 40 ։
ջ Գր. ժե. 4, 12 ։ իա. 19 ։
ռ ա Կոր. ժզ. 9 ։ բ Կոր. բ. 12 ։ Կող. դ. 8 ։ Յայտ. գ. 8 ։

ԳԼ. ԺԵ

1 Մեծ հակառակութիւն կը ծագի թլփատութեան վրայով ։
6 Ասոր համար առաքեալները խորհուրդ կ'ընեն, 22 և նա-
մակ գրելով եկեղեցիներուն, իրենց վճիռը կը ղրկեն անոնց ։
36 Պօղոս և Բառնաբաս կը խորհին որ մէկտեղ երթան եկե-
ղեցիներուն այցելութիւն ընելու, բայց մէջերնին վէճ մը
ծագելով իրարմէ կը զատուին ։

1 Եւ [ա] մէկ քանիները Հրէաստանէն իջած՝ եղբայր-
ներուն կը սորվեցընէին որ [բ] եթէ Մովսէսին
աւանդած սովորութեանը համեմատ [գ] չթլփա-
2 տուիք, չէք կրնար փրկուիլ : Ուստի Պօղոս
և Բառնաբաս անոնց դէմ շատ մը հակառա-
կութիւն ու վէճ ընելէն ետքը, վճռեցին որ
[դ] Պօղոս ու Բառնաբաս և մէկ քանիներն ալ
անոնցմէ՝ Երուսաղէմ ելլեն առաքեալներուն ու
3 երէցներուն աս խնդրոյս համար : [ե] Անոնք
ալ եկեղեցիէն ճամբայ դրուած՝ Փիւնիկէէն ու
Սամարիայէն անցնելով, [զ] հեթանոսաց դարձի
գալը կը պատմէին, և մեծ ուրախութիւն կու-
4 տային բոլոր եղբայրներուն : Ու երբոր Երուսա-
ղէմ հասան, եկեղեցիէն ու առաքեալներէն և ե-
րէցներէն ընդունուեցան, և [է] պատմեցին ինչ որ
5 Աստուած ըրեր էր իրենց հետ : Փարիսեցւոց ա-
ղանդէն հաւատացեալներէն ոմանք ելան ու կ'ըսէ-
ին թէ [ը] Պէտք է թլփատել անոնք ու պա-
տուիրել որ Մովսէսի օրէնքը պահեն :
6 Եւ առաքեալները ու երէցները ժողվուեցան աս
7 բանիս վրայով խորհելու : Եւ շատ վիճաբա-
նութիւն ըլլալէն ետեւ՝ Պետրոս ոտքի վրայ ելաւ
ու ըսաւ անոնց, [թ] Մարդիկ եղբայրներ՝ դուք գի-
տէք որ առջի օրերէն Աստուած [ժ] ընտրեց մեր

ա Գաղ. բ. 12 ։
բ Ծն. ժէ. 10 ։ Ղև. ժբ. 3 ։
գ Յովհ. է. 22 ։ Հմր 5 ։ Գաղ. ե. 2 ։ Փիլ. գ. 2 ։ Կող. բ. 8, 11, 16 ։
դ Գաղ. բ. 1 ։
ե Հռով. ժե. 24 ։ ա Կոր. ժզ. 6, 11 ։
զ Գր. ժգ. 36 ։
է Հմր 12 ։ Գր. ժդ. 26 ։ իա. 19 ։
ը Գր. ա ։
թ Գր. ժ. 20 ։ ժա. 12 ։

մէջէն, որ իմ բերնովս հեթանոսները աւետարա-
8 նի խօսքը լսեն ու հաւատան ։ Եւ ծ սրտագէտն
Աստուած վկայեց անոնց, է Հոգին Սուրբը տա-
9 լով անոնց՝ ինչպէս որ մեզի ալ ։ ւ Եւ մէկ խտրո-
րութիւն մը չըրաւ մեր ու անոնց մէջը, հաւատ-
10 քով անոնց սիրտերը ե մաքրելով ։ Ուստի հիմա
ինչո՞ւ Աստուած կը փորձէք, ծ աշակերտներուն
պարանոցին վրայ անանկ լուծ մը դնելով, որ ա-
նիկայ ո՛չ մեր հայրերը՝ ո՛չ ալ մենք կրցանք վեր-
11 ցընել ։ Բայց է կը հաւատանք որ Տէր Յիսուսի
շնորհքովը կը փրկուինք մենք, ինչպէս որ անոնք
ալ ։
12 Եւ բոլոր ժողովուրդը լուռ կեցաւ ու մտիկ կ'ը-
նէր Բառնաբասին ու Պօղոսին, որոնք կը պատմէին
թէ Աստուած ո՛րչափ նշաններ և հրաշքներ ըրեր էր
13 հ հեթանոսներուն մէջ իրենց ձեռքովը ։ Եւ անոնք
խօսքերնին կտրելէն ետեւ՝ յ Յակոբոս պատասխան
տուաւ ու ըսաւ, Մարդիկ եղբայրներ՝ ինծի մտիկ
14 ըրէք. ն Շմաւոն պատմեց թէ Աստուած ինչ-
պէս առաջ այցելութիւն ըրաւ, որ հեթանոսնե-
15 րէն ժողովուրդ առնէ իր անուանը համար ։ Եւ
աս բանիս մարգարէից խօսքերն ալ կը միաբանին,
16 ինչպէս որ գրուած է, ձ Ասկէ ետեւ պիտի դառ-
նամ ու Դաւիթին ինկած խորանը նորէն պիտի
շինեմ, և անոր կործանուած տեղուանքը նորէն
17 պիտի շինեմ, և կանգնեմ անիկայ. Որ մնացած
մարդիկը Տէրը փնտռեն, և բոլոր հեթանոսները՝
որոնց վրայ իմ անունս կոչուած է, կ'ըսէ Տէրը որ
18 աս ամէն բաները կ'ընէ ։ Յայտնի է Աստուծոյ իր
19 բոլոր գործքերը աշխարհիս սկիզբէն հետէ ։ Ասոր

ծ ա Մն. իը. 9 ։ Գլ. ա. 24 ։
է Գլ. ժ. 44 ։
ւ Հռով. ժ. 12 ։
ե Գլ. ժ. 15, 28, 43 ։ ա Կոր. ա. 2 ։ ա Պետ. ա. 22 ։
ծ Մատ. իգ. 4 ։ Գաղ. ե. 1 ։
է Հռով. գ. 24 ։ Եփե. բ. 8 ։ Տիտ. բ. 11 ։ գ. 4, 5 ։
հ Գլ. ժգ. 26 ։
յ Գլ. ժբ. 17 ։
ն Հմր 7 ։
ձ Ամով. թ. 11, 12 ։

համար ժ ես յարմար կը դատեմ նեղութիւն չտալ
անոնց որ հեթանոսներէն ժ Աստուծոյ կը դառնան.
20 Հապա թուղթ մը գրել անոնց՝ որ ետ կենան
ն կռոց պղծութիւններէն և շ պոռնկութենէ ու
21 խեղդուածէ ո և արիւնէ ։ Ինչու որ Մովսէս հին
դարերէն ՚ի վեր ամէն քաղաքի մէջ զինքը քարո-
զողներ ունի, ն և ժողովարաններու մէջ ամէն շա-
բաթ օր կը կարդացուի ։
22 Ան ատենը առաքեալներուն ու երէցներուն՝ բո-
լոր եկեղեցիին հետ մէկտեղ աղէկ երեւցաւ որ
իրենցմէ մարդիկ ընտրելով Անտիոք խրկեն Պօղո-
սին ու Բառնաբասին հետ, պ Բարսաբա մակ-
անուանեալ Յուդան և Շիղան՝ որոնք գլխաւոր
23 մարդիկ էին եղբայրներուն մէջ. Ու անոնց ձեռ-
քովը թուղթ մը խրկեցին այսպէս գրուած.
Առաքեալներ ու երէցներ և եղբայրներ՝ Անտիոքի
ու Ասորիքի և Կիլիկիայի մէջ հեթանոսներէն ե-
24 ղած եղբայրներուդ ողջոյն ։ Որովհետեւ լսեցինք
թէ ջ ոմանք մեր մէջէն ելլելով՝ ձեզ խօսքերով
խռովեցուցեր են և ձեր անձերը խախտեր են, ըսե-
լով թէ պէտք է թլփատուիլ ու օրէնքը պահել,
25 որ անոնց մենք այսպէս չպատուիրեցինք ։ Մեզի
միաբանութեամբ ժողովուածներուս աղէկ երեւցաւ,
որ մարդիկ ընտրելով ձեզի խրկենք մեր սիրելինե-
26 րուն Բառնաբասին ու Պօղոսին հետ, ռ Որոնք
մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուանը համար
27 անձերնին մատնած մարդիկ են ։ Ուստի խրկե-
ցինք Յուդան և Շիղան, որ իրենք ալ բերնով

ժ Տես Հմր 28 ։
ժ ա Թես. ա. 9 ։
ն Ծն. լե. 2 ։ Ել. ի. 3, 23 ։ Եզեկ. ի. 30 ։ ա Կոր. ը. 1 ։ ժ. 20, 28 ։ Յայտ. բ. 14, 20 ։
շ ա Կոր. զ. 9, 18 ։ Գաղ. ե. 19 ։ Եփե. ե. 3 ։ Կող. գ. 5 ։ ա Թես. դ. 3 ։ ա Պետ. դ. 3 ։
ո Ծն. թ. 4 ։ Ղե. գ. 17 ։ բ Օր. ժբ. 16, 23 ։
ն Գլ. ժգ. 15, 27 ։
պ Գլ. ա. 23 ։
ջ Հմր 1 ։ Գաղ. բ. 4 ։ ե. 12 ։ Տիտ. ա. 10, 11 ։
ռ Գլ. ժգ. 50 ։ ժդ. 19 ։ ա Կոր. ժե. 30 ։ բ Կոր. ժա. 23, 26 ։

28 նոյն բաները ձեզի լսցնեն ։ Ինչու որ աղէկ երեւ-
ցաւ Սուրբ Հոգիին ու մեզի ալ՝ ձեր վրայ աւելի
29 բեռ չդնել, այս հարկաւոր բաներէն 'ի զատ, ա Որ
ետ կենաք կուռքերու զոհուածէ՝ բ եւ արիւնէ ու
խեղդուածէ եւ պոռնկութենէ. որ այս բաներէն
ինքզինքնիդ պահելով աղէկ պիտի ընէք ։ Ողջ
եղէք ։
30 Անոնք ալ ճամբայ դրուելով՝ Անտիոք գացին,
եւ ժողովուրդը մէկտեղ ժողվելով թուղթը տուին ։
31 Ու երբոր կարդացին, ուրախացան այն մխիթա-
32 րութեանը վրայ ։ Իսկ Յուդա ու Շիղա՝ որ
իրենք ալ մարգարէ էին, գ շատ խօսքերով յոր-
33 դորեցին եղբայրները ու հաստատեցին ։ Ու
ատեն մը հոն կենալէն ետեւ՝ դ եղբայրներէն խաղա-
ղութեամբ ճամբայ դրուեցան առաքեալներուն
34 դառնալու ։ Բայց Շիղային աղէկ երեւցաւ հոն
35 մնալ ։ ե Պօղոս ու Բառնաբաս ալ Անտիոքի մէջ
կը կենային, եւ ուրիշ շատերու հետ Տէրոջը խօս-
քը կը սորվեցընէին ու կը քարոզէին ։
36 Ու քանի մը օրերէ ետեւ Պօղոս ըսաւ Բառնա-
բասին, Դառնանք ու այցելութիւն ընենք եղբայր-
ներուն՝ զ ամէն մէկ քաղաքները, ուր որ Տէրոջը
խօսքը քարոզեցինք, ու տեսնենք թէ ինչպէս են ։
37 Իսկ Բառնաբաս կ'ուզէր որ է Յովհաննէսն ալ
38 առնէ, որ Մարկոս կ'ըսուէր. Բայց Պօղոս արժան
չսեպեց որ ը Պամփիլիայի մէջ իրենցմէ զատուողը
ու իրենց հետը գործի չեկողը հետերնին առնեն ։
39 Այսպէս վէճերնին դժտութիւն մը եղաւ, մին-
չեւ որ իրարմէ զատուեցան. եւ Բառնաբաս առաւ
40 Մարկոսը ու նաւով Կիպրոս գնաց ։ Պօղոս ալ

ա Հմր 20. Գլ. իա. 25. Յայտ. բ. 14, 20.
բ Ղև. ժէ. 14.
գ Գլ. ժդ. 21. ժը. 23.
դ ա Կոր. ժզ. 11. Եբր. ժա. 31.
ե Գլ. ժգ. 1.
զ Գլ. ժգ. 4, 13, 14, 51. ժդ. 1, 6, 23, 24.
է Գլ. ժբ. 12, 25. ժգ. 5. Կող. դ. 10. բ Տիմ. դ. 11. Փիլիմ. 24.
ը Գլ. ժգ. 13.

Շիղան ընտրեց ու ելաւ, թ եղբայրներէն Աստու-
41 ծոյ շնորհքը յանձնուելով ։ Ու Սուրիայի ու
Կիլիկիայի մէջ կը պտըտէր, ժ ու եկեղեցիները
կը հաստատէր ։

ԳԼ. ԺԶ.

1 Պօղոս կը թլփատէ Տիմոթէոսը. 7 Սուրբ Հոգիին հրամա-
նովը քաղաքները կը պտըտի. 14 Լիդիան հաւատքի կը բե-
րէ, 16 եւ հարցուկ ոգի ունեցող աղախին մը կը բժշկէ. 19
Ասոր պատճառով Պօղոս ու Շիղա կը ծեծուին, եւ բանտը կը
դրուին. 26 Բանտին դռները հրաշքով կը բացուին. 31
Բանտապետը դարձի կու գայ. 37 եւ անոնք կ'ազատուին.

1 Ու հասաւ ա Դերբէ ու Լիւստրա. եւ ահա հոն
աշակերտ մը կար բ Տիմոթէոս անունով, գ որ
հաւատացեալ Հրէայ կնկան մը զաւակ էր, եւ
2 հայրը Յոյն էր. Որ Լիւստրացի ու Իկոնացի եղ-
3 բայրներէն ալ դ բարի վկայուած էր ։ Պօղոս ու-
զեց որ ասիկա իր հետը ելլէ, ե եւ առաւ թլփա-
տեց զանիկայ այն տեղուանքը եղած Հրէաներուն
համար, ինչու որ ամէնն ալ գիտէին թէ անոր
4 հայրը Յոյն էր ։ Ու քաղաքներէն անցնելով,
զ Երուսաղէմ եղած առաքեալներէն ու երէցներէն
ապսպրուած հրամանները կ'աւանդէին անոնց որ
5 պահեն ։ է Եկեղեցիներն ալ հաւատքի մէջ կը
հաստատուէին, եւ օրէ օր անոնց թիւը կ'աւելնար ։
6 Ու Փռիւգիա ու Գաղատացւոց կողմերը պտը-
տեցան. եւ Սուրբ Հոգիէն արգիլուելով որ Աս-
7 տուծոյ խօսքը Ասիայի մէջ չխօսին, Միւսիայի
կողմերը որ եկան, կը ջանային դէպ 'ի Բիւթա-
նիա երթալ՝. եւ * Յիսուսի Հոգին թող չտուաւ

թ Գլ. ժդ. 25.
ժ Գլ. ժզ. 5.
ա Գլ. ժդ. 6.
բ Գլ. ժթ. 22. Հռով. ժզ. 21. ա Կոր. դ. 17. Փիլ. բ. 19. ա Թես. գ. 2. ա Տիմ. ա. 2. բ Տիմ. ա. 2.
գ բ Տիմ. ա. 5.
դ Գլ. զ. 3.
ե ա Կոր. թ. 20. Տես Գաղ. բ. 3. ե. 2.
զ Գլ. ժե. 28, 29.
է Գլ. ժե. 41.
* Ոմանք չունին.
ը բ Կոր. բ. 12. բ Տիմ. դ. 13.

8 անոնց ։ ա Եւ Միւսիայի քովէն անցնելով՝ բՏրո-
9 վադա իջան ։ Եւ հոն գիշերը Պօղոսին տեսիլք
մը երեւցաւ . Մակեդոնացի մարդ մը կայներ կ'ա-
ղաչէր անոր ու կ'ըսէր , Մակեդոնիա անցիր և
10 օգնէ մեզի ։ Ու երբոր այն տեսիլքը տեսաւ , շուտ
մը ուզեցինք գՄակեդոնիա ելլել , հասկընալով
որ Տէրը մեզ կը հրաւիրէ անոնց աւետարան քա-
րոզելու ։
11 Ուստի նաւով Տրովադայէն ելանք ու շիտակ
Սամոթրակէ գացինք , ու հետեւեալ օրը Նէապո-
12 լիս . Եւ անկէ ալ դՓիլիպպէ , որ է Մակեդոնիա-
յի Ա. մասին գլխաւոր քաղաքը՝ * կողոնիա . և
13 այն քաղաքին մէջ քանի մը օր կեցանք . Ու շա-
բաթ օրը քաղաքէն դուրս ելանք գետեզերքին քո-
վը՝ ուր որ սովորութիւն ունէին աղօթք ընելու ,
ու նստելով ժողվուած կիներուն կը խօսէինք ։
14 Եւ Թիւատիր քաղաքէն ծիրանավաճառ կին մը
Լիդիա անուն , որ աստուածավախ մէկ մըն էր ,
մտիկ կ'ընէր . եՈրուն սիրտը Տէրը բացաւ Պօղո-
15 սին խօսքերուն ուշադրութիւն ընելու ։ Ու երբ-
որ մկրտուեցաւ ինքը և իր տունը , աղաչեց ու ը-
սաւ . Թէ որ զիս Տէրոջը հաւատացեալ կը սե-
պէք , իմ տունս մտէք բնակեցէք . զԵւ ստիպե-
լով տարաւ մեզ ։
16 Ու եղաւ որ երբ մենք աղօթքի կ'երթայինք ,
աղախին մը պատահեցաւ մեզի որ էհարցուկ ոգի
ունէր , ըոր գուշակութիւն ընելով՝ իր տէրերուն
17 շատ վաստակ կը բերէր ։ Ասիկայ Պօղոսին և մեր
ետեւէն իյնալով կը պոռար ու կ'ըսէր , Այս մար-
դիկը Բարձրեալ Աստուծոյ ծառաներն են , որ

բ Գլ. ժ. 30 ։
գ բ Կոր. բ. 13 ։
դ Փիլ. ա. 1 ։
* Յն՝ գաղթականաց տեղ ։
ե Ղու. իդ. 45 ։
զ Ծն. ժթ. 3 ; լգ. 11 ; Դատ. ժթ. 21 ; Ղու. իդ. 29 ; Եբր. ժգ. 2 ։
է ա Թագ. իը. 7 ։
ը Գլ. ժթ. 24 ։

18 * մեզի փրկութեան ճամբան կը քարոզեն ։ Եւ աս
բանը շատ օրեր կ'ընէր . իսկ Պօղոս թվշտանալով
դարձաւ ու ըսաւ այն ոգիին , Յիսուս Քրիստոսի
անունովը հրաման կ'ընեմ՝ քեզի , ելի՛ր ատկէ . ժԵւ
19 նոյն ժամուն ելաւ ։ իԵրբոր տեսան անոր տէրե-
րը որ իրենց վաստակին յոյսը կորսուեցաւ , լՊօղոսը
ու Շիղան բռնեցին ու խհրապարակը քաշեցին
20 իշխաններուն առջին ։ Եւ տարին զանոնք զօրա-
գլուխներուն քովը ու ըսին , Այս մարդիկները ծմեր
21 քաղաքը իրար կ'անցընեն . իրենք Հրեայ են , Եւ
անանկ սովորութիւններ կը քարոզեն , որ արժան
չէ մեզի ընդունիլ , ո՛չ ալ ընել , քանզի որ Հռ-
22 ոմայեցի ենք ։ Եւ բազմութիւնը անոնց վրայ
դիզուեցաւ . զօրագլուխներն ալ բռնութեամբ ա-
նոնց հանդերձները հանեցին , կԵւ հրաման ըրին որ
23 գանով ծեծեն . Եւ անոնց շատ վէրքեր տալէն ետե-
բանտը դրին , պատուիրելով բանտապետին որ
24 զգուշութեամբ պահէ զանոնք ։ Ան ալ անանկ
հրաման առնելով զանոնք ներսի բանտը դրաւ , ու
ոտքերնին կոճղի մէջ ամրցուց ։
25 Եւ կէս գիշերին Պօղոս ու Շիղա աղօթք կ'ը-
նէին և զԱստուած կ'օրհնէին , ու բանտարկեալներն
26 ալ անոնց մտիկ կ'ընէին ։ հԵւ յանկարծակի
մեծ շարժ մը եղաւ , անանկ որ բանտին հիմերը
սասանեցան , և անմիջապէս ձբոլոր դռները բա-
ցուեցան , ու ամենուն կապերը արձըկուեցան ։
27 Եւ բանտապետը երբոր արթնցաւ ու բանտին
դռները բացուած տեսաւ , թուրը քաշեց և ինք-
զինքը պիտի սպաննէր , կարծելով թէ կապուած-
28 ները փախեր են ։ Բայց Պօղոս բարձր ձայնով

* Ոմանք՝ ձեզի
թ Տես Մար. ա. 25, 34 ։
ժ Մար. ժզ. 17 ։
ի Գլ. ժթ. 25, 26 ։
լ բ Կոր. զ. 5 ։
խ Մատ. ժ. 18 ։
ծ գ Թագ. ժը. 17 ; Գլ. ժէ. 6 ։
կ բ Կոր. զ. 5 ; ժա. 23, 25 ; ա Թես. բ. 2 ։
հ Գլ. դ. 31 ։
ձ Գլ. ե. 19 ; ժբ. 7, 10 ։

կանչեց ու ըսաւ, Դուն քու անձիդ վնաս մը մի՛
29 ըներ, ինչու որ ամէնքս ալ հոս ենք ։ Ու անիկայ
ճրագ մը ուզեց ու ներս վազեց, և դողալով Պօ-
30 ղոսին ու Շիղային առջևը ինկաւ ․ Ու անոնք
դուրս բերելով ըսաւ, Տէ՛րեր՝ ինծի ի՞նչ պէտք
31 է ընել, որ փրկուիմ ։ Անոնք ալ ըսին, ղ Հաւա-
տա՛ Տէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փըր-
32 կուիս դուն և քու տունդ ։ Ու Տէրոջը խօսքը
խօսեցան անոր, ու ան ամենուն որ իր տանը մէջն
33 էին ։ Ու առաւ զանոնք գիշերուան նոյն ժամուն
ու անոնց վէրքերը լուաց, և շուտ մը մկրտուեցաւ
34 ինքը ու բոլոր իրենները ։ Ու զանոնք իր տունը
տանելով, յ անոնց առջևը սեղան դրաւ, և բոլոր
տունովը ուրախ եղաւ՝ Աստուծոյ հաւատալով ։
35 Ու երբոր առտու եղաւ, զօրագլուխները խրկեցին
սպասաւորները ու ըսին, Արձակէ՛ այն մարդիկը ։
36 Բանտապետն ալ այն խօսքերը Պօղոսին պատմեց
թէ Զօրագլուխները խրկեցին որ արձակուիք ․
ուստի հիմա ելէք՝ և խաղաղութեամբ գացէք ։
37 Բայց Պօղոս ըսաւ անոնց, Մեզ յայտնապէս ծե-
ծելով՝ որ չդատապարտուած ն Հռովմայեցի մար-
դիկ ենք, բանտը դրին, ու հիմա գաղտո՞ւկ կը
հանեն մեզ ․ ատանկ չէ, հապա թող իրե՛նք
38 գան ու մեզ հանեն ։ Ու սպասաւորները զօրա-
գլուխներուն պատմեցին այն խօսքերը ․ անոնք
ալ երբոր լսեցին թէ Հռովմայեցի են, վախ-
ցան, ու եկան քաղցրութեամբ խօսեցան անոնց
39 հետ ․ Ու դուրս հանելով՝ շ կ'աղաչէին որ այն
40 քաղաքէն ելլեն ։ Անոնք ալ բանտէն ելլելով՝
ո Լիդիային տունը մտան, ու եղբայրները տեսնե-
լով մխիթարեցին զանոնք, և գացին ։

ղ Ղու. գ. 10 ։ Գլ. բ. 37 ։ թ. 6 ։
ճ Յօհ. գ. 16, 36 ։ զ. 47 ։ Ա Յօհ. ե. 10 ։
յ Ղու. ե. 29 ։ ժթ. 6 ։
ն Գլ. իբ. 25 ։
շ Մատ. ը. 34 ։
ո Հմր 14 ։

ԳԼ. ԺԷ.

1 Պօղոս կը քարոզէ Թեսաղոնիկէի մէջ, 4 ուր ոմանք կը հաւատան, և ոմանք կը հալածեն զանիկայ ։ 10 Պօղոս Բերիա կը խրկուի, ու հոն ալ կը քարոզէ ․ 13 Թեսաղոնիկեցիներէն հալածուած՝ 15 Աթէնք կ'երթայ, և հոն կը քարոզէ անոնց չճանչցած կենդանի Աստուածը ։ 34 Շատ մարդիկ Քրիստոսի կը հաւատան ։

1 Ու Ամփիպօլիսէն ու Ապողոնիայէն պտըտելով՝
Թեսաղոնիկէ եկան, ուր էր Հրեաներուն
2 ժողովարանը ։ Պօղոս ալ իր սովորութեանը պէս
պ անոնց մէջը մտաւ, և երեք շաբաթ օր խօսե-
3 ցաւ անոնց հետ գիրքերէն, Մեկնելով և առջևնին
դնելով թէ ջ պէտք էր Քրիստոսի չարչարուիլ,
ու մեռելներէն յարութիւն առնել, և թէ Ան
Յիսուսը որ ես ձեզի կը քարոզեմ, ըսաւ, Քրիս-
4 տոսն է ։ ռ Ու անոնցմէ ոմանք հաւատացին ու
Պօղոսին և ս Շիղային հետ միացան, աստուա-
ծավախ Յոյներէն ալ մեծ բազմութիւն, ու երևելի
կիներէն ալ հաւատացողները քիչուոր չէին ։
5 Բայց չհաւատացող Հրեաները նախանձեցան, և
քանի մը դատարկապորտ անօրէն մարդիկ առնե-
լով՝ աղմուկ հանեցին ու քաղաքը տակնուվրայ
ըրին, և վ Յասոնին տանը վրայ յարձակելով՝
6 կ'ուզէին զանոնք ժողովքին առջևը տանիլ ։ Ու
երբոր զանոնք չգտան, Յասոնը ու մէկ քանի եղ-
բայրներ քաշելով տարին քաղաքապետներուն
առջևը, կանչըռտելով թէ տ Անոնք որ աշխարհը
7 տակնուվրայ ըրին, հոս ալ հասեր են ․ Որոնք
Յասոն ընդուներ է ․ և ասոնք ամէնը Կայսրին
հրամանացը դէմ կը գործեն, ր ըսելով թէ ուրիշ
8 թագաւոր մը կայ Յիսուս ։ Ու խռովեցուցին ժո-

պ Ղու. դ. 16 ։ Գլ. թ. 20 ։ ժգ. 5, 14 ։ ժդ. 1 ։ ժզ. 13 ։ ժթ. 8 ։
ջ Ղու. իդ. 26, 46 ։ Գլ. ժը. 28 ։ Գաղ. գ. 1 ։
ռ Գլ. իը. 24 ։
ս Գլ. ժե. 22, 27, 32, 40 ։
վ Հռով. ժզ. 21 ։
տ Գլ. ժզ. 20 ։
ր Ղու. իգ. 2 ։ Յօհ. ժթ. 12 ։ Ա Պետ. բ. 13 ։

ղօղուրդը ու քաղաքապետները, որ աս բաները կը
9 լսէին ։ Բայց երբոր Յասոնէն և ուրիշներէն երաշ-
10 խաւորութիւն առին, արձակեցին զանոնք ։ Եւ եղբայրները շուտ մը գիշերով Պօղոսը և Շիղան Բերիա խրկեցին. որոնք հոն հասնելով՝ բՀրէից
11 ժողովարանը գացին ։ Ասոնք Թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ մարդիկ էին, որ Աստուծոյ խօսքը կատարեալ յօժարութեամբ ընդունեցին, և գամէն օր Գիրքերը կը քննէին թէ աս
12 բաները ասա՞նկ է ։ Ասոր անոնցմէ շատերը հաւատացին, և պատուաւոր Յոյն կիններէն ու մարդիկներէն հաւատացողներն ալ քիչ չէին ։
13 Բայց երբոր իմացան Թեսաղոնիկեցի Հրեաները թէ Բերիայի մէջ ալ Աստուծոյ խօսքը քարոզուեցաւ Պօղոսէն, հոն ալ եկան ու ժողովուրդը
14 գրգռեցին ։ դԱյն ատենը եղբայրները շուտ մը Պօղոսը խրկեցին որ մինչև ծովեզերքը երթայ. բայց
15 Շիղա ու Տիմոթէոս հոն մնացին ։ Եւ անոնք որ Պօղոսը կը տանէին, մինչև Աթէնք բերին անիկայ. եև իրմէն հրաման առնելով Շիղային ու Տիմոթէոսին համար որ շուտով իրեն գան, գացին ։
16 ❡ Եւ Պօղոս Աթէնքի մէջ անոնց սպասելով՝ զիր հոգին անհանգիստ էր ներսի դին, վասն զի քաղաքը բոլորովին կռապաշտութեան մէջ ընկղմած
17 կը տեսնէր ։ Ասոր ժողովարանին մէջ կը խօսէր Հրեաներուն ու բարեպաշտ մարդոց, և ամէն օր
18 հրապարակներուն մէջ որոնց որ պատահէր ։ Ու Եպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաներէն մէկ քանիները իրեն հետ հակաճառութիւն կ'ընէին. և ոմանք կ'ըսէին, Աս սերմնաքաղը ի՞նչ ըսել կ'ուզէ. ուրիշներն ալ կ'ըսէին, Կ'երևի թէ ասիկա մը օտար աստուածներու քարոզիչ է. ինչու որ

բ Գլ. Թ. 25 ։ Հմր 14 ։
գ Ես. ԼԴ. 16 ։ Ղու. ԺԶ. 29 ։ Յօհ. Ե. 39 ։
դ Մատ. Ժ. 23 ։
ե Գլ. ԺԲ. 5 ։
զ Բ Պետ. Բ. 8 ։

Յիսուսը ու յարութիւնը կ'աւետարանէր անոնց ։
19 Եւ առին անիկայ Արիսպագոսը տարին, ու կ'ը-
սէին, Կրնա՞նք իմանալ թէ ինչ է աս նոր վար-
20 դապետութիւնը որ դուն կը զրուցես. Քանզի մեր ականջներուն օտար բաներ կը բերես. ուրեմն կ'ուզենք իմանալ թէ ինչ պիտի ըլլան անոնք.
21 (Ինչու որ Աթենացիները ամէնն ալ, ու հոն կեցող օտարականները ուրիշ բանի չէին պարապեր, բայց միայն նոր բան զրուցելու կամ լսելու ։)
22 Այն ատենը Պօղոս Արիսպագոսին մէջը կայնեցաւ ու ըսաւ, Ո՛վ Աթենացի մարդիկ՝ ամէն կողմանէ
23 խիստ կրօնասէր կը տեսնեմ ձեզ ։ Քանզի ես պտըտելով ու ձեր պաշտամունքը զննելով՝ մէկ սեղան մը գտայ, որուն վրայ գրուած էր ԱՆԾԱ-ՆՕԹ ԱՍՏՈՒԾՈՅՆ. ասոր անիկայ որ դուք չճանչնալով կը պաշտէք, ես նոյնը ձեզի կը
24 քարոզեմ ։ էԱստուած որ աշխարհը ստեղծեց, և անոր մէջի բոլոր բաները, անիկայ երկնից ու երկրի ըՏէրն ըլլալով, թչ ձեռագործ տաճար-
25 ներու մէջ կը բնակի, Ո՛չ ալ մարդոց ձեռքովը կը պաշտուի ժբանի մը կարօտի պէս. իքանզի ինքը կու տայ ամենուն կեանք ու շունչ և ամէն
26 բան. Ու բոլոր մարդոց ազգերը մէկ արիւնէ մը ըրաւ՝ որ բոլոր երկրի երեսին վրայ բնակին. և որոշուած ժամանակներ հաստատեց, լու անոնց բնակութեան սահմանները, խԱստուած փնտռե-
27 լու, Որ ըլլայ թէ խարխափելով զինքը գտնեն.
28 ծթէպէտև մեր ամէն մէկէն ալ հեռու չէ. Ինչու որ կանով կ'ապրինք և կը շարժինք ու կանք,

է Գլ. ԺԴ. 14 ։
ը Մատ. ԺԱ. 25 ։
թ Գլ. Է. 48 ։
ժ Սաղ. Ծ. 10-13 ։
ի Ծն. Բ. 7 ։ Թուոց. ԺԶ. 22 ։ Յոբ. ԺԲ. 10 ։ ԻԷ. 3 ։ ԼԳ. 4 ։ Ես. ԽԲ. 5 ։ ԾԷ. 16 ։ Զաք. ԺԲ. 1 ։
լ Բ Օր. ԼԲ. 8 ։
խ Հռով. Ա. 20 ։
ծ Գլ. ԺԴ. 16 ։
կ Կող. Ա. 17 ։ Եբր. Ա. 3 ։

ն ինչպէս որ ձեր բանաստեղծներէն մէկ քանիներն
29 ալ ըսին, Քանզի մենք անոր ցեղէն ալ ենք։ Ուս-
տի որովհետեւ Աստուծոյ ցեղէն ենք, շ պէտք չէ
որ անանկ սեպենք թէ Աստուածութիւնը նման
ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի, որ մար-
դուս ճարտարութիւնովը ու խելքովը քանդա-
30 կուած է։ Արդ Աստուած տգիտութեան ա-
տենները անտես ընելով, հիմա ամէն տեղ կը
31 պատուիրէ բոլոր մարդոց որ ապաշխարեն։ Ին-
չու որ ինքը մէկ օր մը սահմանեց, պ որուն մէջ
աշխարհս արդարութեամբ պիտի դատէ այն մար-
դուն ձեռքովը, որն որ որոշեց, ու ամենուն հա-
ւատացուց՝ զանիկայ մեռելներէն յարուցանելով։
32 Երբոր մեռելոց յարութիւնը լսեցին, ոմանք
ծաղր կ'ընէին, ոմանք ալ կ'ըսէին, Ասոր բանին
համար ուրիշ անգամ մտիկ պիտի ընենք քեզի։
33 Ու այսպէս Պօղոս անոնց մէջէն ելաւ։ (34) Սա-
կայն քանի մը մարդիկ իրեն յարելով հաւատա-
ցին, որոնց մէջն էր Դիոնեսիոս Արիսպագացին,
եւ Դամարիս անունով կնիկ մը, ու անոնց հետ ու-
րիշներ ալ։

ԳԼ. ԺԸ

1 Պօղոս իր արհեստը կը բանի, եւ Կորնթոսի մէջ հեթանոսներուն կը քարոզէ։ 9 Տէրը տեսիլքի մէջ կը քաջալերէ Պօղոսը. 12 որ կ'ամբաստանուի փոխանորդ Գաղիոնին առջեւ, բայց կ'ազատի. 18 ետքը քաղաքէ քաղաք պտըտելով՝ աշակերտները կը հաստատէ. 24 Ապողոս աւելի ճշդիւ սորվելով ճշմարտութիւնը Ակիւղասէն ու Պրիսկիղայէն՝ 28 զՔրիստոս կը քարոզէ մեծ ազդեցութեամբ։

1 Ասկէ ետեւ Պօղոս Աթենքէն զատուելով Կորնթոս
2 եկաւ, Ու մէկ Հրեայ մը գտաւ ռ Ակիւղաս

ն Տիտ. ա. 12։
շ Եսա. խ. 18։
ո Գործ. ժդ. 15։ Հռովմ. գ. 25։
չ Ղուկ. իդ. 47։ Տիտ. բ. 11, 12։ ա Պետ. ա. 14։ դ. 3։
պ Գործ. ժ. 42։ Հռովմ. բ. 16։ ժդ. 10։
ջ Գործ. բ. 24։
ռ Հռովմ. ժզ. 3։ ա Կոր. ժզ. 19։ բ Տիմ. դ. 19։

անունով ծննդեամբ Պոնտացի, որ իր Պրիսկիղա
կնկանը հետ նոր եկեր էր Իտալիայէն, (Կղօդիո-
սին հանած հրամանին համար որ բոլոր Հրեաները
Հռոմէն հեռանան,) ու անոնց քովը գնաց։
3 Ու որովհետեւ ինքը արհեստակից էր՝ անոնց քովը
կեցաւ բ Եւ կը բանէր, ինչու որ արհեստով
4 վրանագործ էին։ գ Ու ամէն շաբաթ օրերը ժո-
ղովարանին մէջ կը խօսէր, եւ Հրեաները ու
5 Յոյները կը համոզէր։ դ Ու երբոր Շիղա եւ
Տիմոթէոս Մակեդոնիայէն իջան, ե Պօղոսին հո-
գին եռանդով վառուած ըլլալով, Հրեաներուն
վկայութիւնով կը հաստատէր թէ Յիսուսը
6 Քրիստոսն է։ զ Անոնք ալ երբոր դէմ կեցան
ու կը հայհոյէին, է ինքը հանդերձները թօթվե-
լով ըսաւ անոնց, ը Ձեր արիւնը ձեր գլուխը,
թ ես անպարտ եմ, ժ ասկէ ետեւ հեթանոսներուն
7 պիտի երթամ։ Ու անկէ երթալով մտաւ մէ-
կու մը տունը, որուն անունը * Յուստոս էր՝ աս-
տուածավախ մարդ մը, որուն տունը ժողովարանին
8 կից էր։ ի Ու ժողովրդապետը Կրիսպոս իր բոլոր
տունովը հաւատաց Տէրոջը. եւ Կորնթացիներէն
շատերը լսելով հաւատացին ու մկրտուեցան։
9 Ու գիշերը տեսիլքի մէջ լ Տէրը ըսաւ Պօղոսին,
Մի վախնար՝ հապա խօսէ եւ լուռ մի կենար,
10 խ Ինչու որ ես քեզի հետ եմ, եւ մէկը քեզի դէմ
պիտի չելլէ քեզի վնաս մը հասցնելու. քանզի
աս քաղաքիս մէջ ես շատ ժողովուրդ ունիմ։

բ Գործ. ի. 34։ ա Կոր. դ. 12։ ա Թես. բ. 9։ բ Թես. գ. 8։
գ Գործ. ժէ. 2։
դ Գործ. ժէ. 14, 15։
ե Յոբ. լբ. 18։ Գործ. ժէ. 3։ Հմր 28։
զ Գործ. ժգ. 45։ ա Պետ. դ. 4։
է Նեեմ. ե. 13։ Մատ. ժ. 14։ Գործ. ժգ. 51։
ը Ղեւ. ի. 9, 11, 12։ բ Թագ. ա. 16։ Եզեկ. ժը. 13։ լգ. 4։
թ Եզեկ. գ. 18, 19։ լգ. 9։ Գործ. ի. 26։
ժ Գործ. ժգ. 46։ իը. 28։
* Ոմանք՝ Տիտոս Յուստոս
ի ա Կոր. ա. 14։
լ Գործ. իգ. 11։
խ Երեմ. ա. 18, 19։ Մատ. իը. 20։

11 Եւ հոն տարի մը ու վեց ամիս կեցաւ, ու Աստու-
ծոյ խօսքը անոնց մէջ կը սորվեցընէր:
12 Եւ Աքայիայի փոխանորդ ըլլալուն Գաղիոնին
օրերը Հրէայք միաբանելով՝ Պօղոսին դէմ ելան,
13 և զանիկայ ատեանը տարին, Ըսելով թէ Ասի-
կայ կը հրապուրէ մարդիկ օրէնքէն դուրս Աս-
14 տուած պաշտելու: Ու երբոր Պօղոս իր բերանը
բանալու պատրաստ էր, Գաղիոն ըսաւ Հրէանե-
րուն. ծ Եթէ որ անիրաւութեան մը կամ չար
գործքի մը համար ըլլար՝ ո՛վ Հրէաներ, արժան
15 էր ինծի որ ձեզի մտիկ ընէի: Բայց թէ որ վէճը
խօսքի ու անուններու և ձեր օրէնքին վրայով է,
դուք ձեզմէն տեսէք. ինչու որ ես ատանկ բանե-
16 րու դատաւոր ըլլալ չեմ ուզեր: Եւ զանոնք
17 ատեանէն վռնտեց: Ու ատենը բոլոր Յոյները
կ Սոսթենէս ժողովրդապետը բռնեցին ու ատեա-
նին առջևը կը ծեծէին. և աս բաներուս վրայով
Գաղիոն բնաւ հոգ չէր ըներ:
18 Պօղոս ալ տակաւին խել մը օրեր հոն մնալէն
ետքը՝ եղբայրներէն հրաժարելով, նաւով դէպ ՚ի
Ասորիս գնաց. ու իր հետն ալ Պրիսկիղա և
Ակիւղաս, առաջ հ Կենքրայի մէջ ձ իր գլուխը
19 փոքրած, ինչու որ ուխտաւոր էր: Ու Եփեսոս
որ հասաւ, անոնք հոն ձգեց, և ինքը ժողովարա-
20 նը մտնելով՝ Հրէաներուն հետ կը խօսէր: Եւ
իրեն կ'աղաչէին որ ալ աւելի ժամանակ իրենց
21 քովը մնայ, բայց յանձնառու չեղաւ. Հապա
հրաժարեցաւ անոնցմէ ըսելով, * Պէտք է որ ան-
պատճառ աս առաջիկայ տօնը Երուսաղէմի մէջ
ընեմ. բայց ղ Աստուծոյ կամքովը նորէն ձեզի կը
դառնամ. ու Եփեսոսէն նաւով ճամբայ ելաւ:

ծ Գլ. իգ. 29. իե. 11, 19.
կ ա Կոր. ա. 1:
հ Հռով. ժզ. 1.
ձ Թուոց. զ. 18. Գլ. իա. 24.

* Ոմանք չունին:

ղ ա Կոր. դ. 19. Եբր. զ. 3. Յակ. դ. 15.

22 Եւ Կեսարիա համնելով Երուսաղէմ ելաւ, ու ե-
կեղեցիին բարև տուաւ, ու ետքը իջաւ Անտիոք.
23 Եւ ատեն մը հոն կենալէն ետև ելաւ, ու կարգով
ճ Գաղատացւոց երկիրը և Փռիւգիա կը պտըտէր,
մ ու բոլոր աշակերտները կը հաստատէր:
24 Եւ յ Ապողոս անունով Հրեայ մը, ծննդեամբ
Աղեքսանդրացի՝ ճարտասան մարդ մը եկաւ հասաւ
Եփեսոս. որ ինքը զօրաւոր էր սուրբ գիրքերով:
25 Ասիկայ Տէրոջը ճամբուն մէջ վարժուած էր, ն և
ջերմեռանդ հոգի ունենալով, կը խօսէր ու կը
սորվեցընէր ճշդութեամբ Տէրոջը վրայով. բայց
շ թէեւ միայն Յովհաննէսին մկրտութիւնը գիտէր:
26 Ասիկայ սկսաւ ժողովարանին մէջ համարձակ խօ-
սիլ. ու երբոր Ակիւղաս ու Պրիսկիղա լսեցին
անկէ, ալ զանիկայ իրենց քովը առին, և աւելի
27 ճշդիւ Աստուծոյ ճամբան անոր հասկըցուցին: Ու
երբոր անիկայ ուզեց Աքայիա երթալ, եղբայր-
ները քաջալերեցին զանիկայ, ու գիր գրեցին ան-
տեղի աշակերտներուն որ զանիկայ ընդունին. որ
հոն համնելով՝ ո շատ օգտակար եղաւ շնորհքով
28 հաւատացեալներուն. չ Քանզի հրապարակաւ սաս-
տիկ կը յանդիմանէր Հրէաները, սուրբ գիր-
քերէն ցուցընելով թէ Յիսուսը Քրիստոս է:

ճ Գաղ. ա. 2. դ. 14.
մ Գլ. ժդ. 21. ժե. 32, 41.
յ ա Կոր. ա. 12. գ. 5, 6. դ. 6. Տիտ. գ. 13.
ն Հռով. ժբ. 11.
շ Գլ. ժթ. 3.
ո ա Կոր. գ. 6.
չ Գլ. թ. 22. ժէ. 3. Հմր 5.

ԳԼ. ԺԹ

1 Սուրբ Հոգին կը տրուի հաւատացեալներուն՝ Պօղոսին ձե-
ռօքը. 9 Հրէայք կը հայհոյեն Պօղոսի վարդապետութիւ-
նը՝ որ հրաշքներով կը հաստատուի. 13 Երդմնեցուցիչ
Հրէայք 16 ծեծ կ'ուտեն դիւահարէն. 19 Կախարդական
գրքերը կ'այրուին. 24 Դեմետրիոս իր արծաթագործու-
թեամբը մեծ աղմուկ կը հանէ Պօղոսին դէմ, 35 որն որ ա-
տենադպիրը կը հանդարտեցընէ.

1 Եւ քանի որ [ա]Ապողոս Կորնթոսի մէջ էր, Պօ-
ղոս վերի կողմերը պտըտելով Եփեսոս եկաւ,
2 և քանի մը աշակերտներ գտնելով, Ըսաւ անոնց,
Երբոր հաւատացիք՝ Սուրբ Հոգին առի՞ք ար-
դեօք. անոնք ալ ըսին իրեն, [բ]Բայց մենք լսած
3 ալ չենք թէ Սուրբ Հոգի կայ։ Եւ ըսաւ անոնց,
Հապա ինչո՞վ մկրտուեցաք. անոնք ալ ըսին,
4 [գ]Յովհաննէսին մկրտութիւնովը։ Պօղոս ալ
ըսաւ, [դ]Յովհաննէս ապաշխարութեան մկրտու-
թիւնով մկրտեց, ժողովուրդին ըսելով՝ թէ ան
որ իրմէ ետքը պիտի գայ՝ անոր հաւատան, այ-
5 ինքն Քրիստոս Յիսուսին։ Եւ երբոր [illegible] լսե-
6 ցին, [ե]Տէր Յիսուսի անունովը մկրտուեցան։ Եւ
Պօղոս երբոր [զ]անոնց վրայ ձեռք դրաւ, Սուրբ
Հոգին անոնց վրայ եկաւ, [է]և լեզուներ կը խօ-
7 սէին ու կը մարգարէանային։ Եւ ան բոլոր մար-
8 դիկը տասնըերկուքի չափ էին։ [ը]Եւ ժողովարա-
նը մտնելով՝ երեք ամիս համարձակութեամբ [թ]Աս-
տուծոյ թագաւորութեանը վրայով կը խօսէր ու
9 կը համոզէր։ [ժ]Իսկ երբոր մէկ քանիները կը
յամառէին ու դէմ կը դնէին բազմութեան առ-
ջևը [ի]ան ճամբան բամբասելով, ինքը անոնցմէ
հեռացաւ և աշակերտները զատեց, ու ամէն օր
Տիւրան անուն մէկու մը դպրատանը մէջ կը խօ-
10 սէր։ [լ]Եւ աս երկու տարի քշեց՝ մինչև որ բոլոր
Ասիայի մէջ բնակող Հրեաները ու Յոյները
11 *Տէրոջը խօսքը լսեցին։ [խ]Եւ Աստուած նշանա-

ա Կոր. ա. 12 ; գ. 5, 6 ;
բ Գւ. ը. 16 ; Տես ա Թագ. գ. 7 ;
գ Գւ. ժը. 25 ;
դ Մատ. գ. 11 ; Յօհ. ա. 15, 27, 30 ; Գւ. ա. 5 ; ժա. 16 ; ժգ. 24, 25 ;
ե Գւ. ը. 16 ;
զ Գւ. զ. 6 ; ը. 17 ;
է Գւ. բ. 4 ; ժ. 46 ;
ը Գւ. ժէ. 2 ; ժը. 4 ;
թ Գւ. ա. 3 ; իը. 23 ;
ժ Բ Տիմ. ա. 15 ; Բ Պետ. բ. 2 ; Յուդ. 10 ;
ի Տես Գւ. թ. 2 ; իբ. 4 ; իդ. 14 ; Համր 23 ;
լ Տես Գւ. ի. 31 ;
* Ոմանք՝ Տէր Յիսուսին
խ Մար. ժզ. 20 ; Գւ. ժդ. 3 ;

12 ու հրաշքներ կ'ընէր Պօղոսին ձեռքովը։ [ծ]Այնանկ
որ անոր մարմինէն թաշկինակներ ու գոգնոցներ
կը տանէին հիւանդներուն, և իրենց ցաւերէն կը
13 բժշկուէին, ու չար ոգիները կ'ելլէին։ [կ]Բայց
աստանդական Հրեաներէն մէկ քանիները որ
երդմնեցուցիչ էին, [հ]յանդգնեցան Տէր Յիսուսի
անունը կանչել անոնց վրայ որոնք չար ոգիներ ու-
նէին, և կ'ըսէին, Ձեզ կ'երդմնցընենք Յիսու-
14 սով, որն որ Պօղոս կը քարոզէ։ Եւ աս բանը
ընողները Սկևա ըսուած Հրեայ քահանայապետի
15 մը եօթը որդիքն էին։ Իսկ չար ոգին պատաս-
խան տուաւ ու ըսաւ, Յիսուսը կը ճանչնամ ու
16 Պօղոսը գիտեմ, բայց դուք ո՞վ էք։ Եւ ան
մարդը որուն ներսի դին էր չար ոգին, անոնց վրայ
ցաթկելով՝ բռնեց զանոնք ու յաղթեց, մինչև որ
ան տունէն մերկ ու վիրաւորուած դուրս փախան։
17 Եւ աս բանը Եփեսոսի մէջ բնակող բոլոր
Հրեաներուն ու Յոյներուն յայտնի եղաւ.
[ձ]և անոնց ամէնուն վրայ վախ մը ինկաւ, ու
18 Տէր Յիսուսի անունը կը մեծարուէր։ Եւ
հաւատացեալներէն շատերը կու գային, [ղ]ու
կը խոստովանէին ու կը պատմէին իրենց ըրած-
19 ները։ Եւ կախարդութեան հետևողներուն շա-
տերը գիրքերնին մէկտեղ բերելով՝ ամէնուն
առջևը կ'այրէին. և անոնց գինը հաշուեցին ու
20 յիսուն հազար արծաթ դահեկան գտան։ [ճ]Այս-
պէս Տէրոջը խօսքը մեծապէս կ'աճէր և կը զօրա-
նար։
21 Եւ երբոր աս բաները լմնցան, [մ]Պօղոս միտքը
դրաւ որ Մակեդոնիայէն ու Աքայիայէն պտըտե-

ծ Գւ. ե. 15 ; Տես դ Թագ. դ. 29 ;
կ Մատ. ժբ. 27 ;
հ Տես Մար. թ. 38 ; Ղու. թ. 49 ;
ձ Ղու. ա. 65 ; է. 16 ; Գւ. բ. 43 ; ե. 5, 11 ;
ղ Մատ. գ. 6 ;
ճ Գւ. զ. 7 ; ժբ. 24 ;
մ Գւ. ի. 22 ;

յով՝ [ա]Երուսաղէմ երթայ ․ ու կ՚ըսէր թէ Հոն
երթալէս ետքը [բ]պէտք է ինծի որ Հռոմ ալ
22 տեսնեմ ։ [գ]Եւ իրեն սպասաւորութիւն ընողներէն
երկուքը՝ Տիմոթէոսը ու [դ]Երաստոսը խրկեց Մակեդոնիա , ու ինքը ատեն մըն ալ Ասիայի մէջ կեցաւ ։
23 Եւ [ե]ան ատենները շատ խռովութիւն եղաւ Տէ-
24 րոջը [զ]ճամբուն համար ։ Քանզի Դեմետրիոս ա-
նունով արծաթագործ մը Արտեմիսին փոքրիկ տա-
ճարներ կը շինէր արծաթէ , [է]Ու քիչ շահ չէր
25 բերեր վարպետներուն ․ Որոնք ասիկայ մէկտեղ
ժողվեց նոյն արհեստին բանուորներուն հետ , ու ը-
սաւ , Մարդի՛կ դուք գիտէք որ աս գործէս է մեր
26 շահը ․ Եւ կը տեսնէք ու կը լսէք որ աս Պօղոսը
ոչ թէ միայն Եփեսացւոց , հապա գրեթէ բոլոր
Ասիացւոց շատ ժողովուրդները համոզելով՝ մոլորե-
նին դարձուց , ըսելով թէ [ը]Ձեռքով շինուած-
27 ները աստուածներ չեն ։ Ասոր վտանգ կայ որ ոչ
թէ միայն աս մեր *կողմը պիտի նախատուի , հա-
պա մեծ աստուածուհւոյն Արտեմիսին տաճարն ալ
ոչինչ պիտի սեպուի , և անոր մեծափառութիւնը
պիտի խափանուի , որն որ բոլոր Ասիա ու աշխարհք
28 կը պաշտէին ։ Ու երբոր ասոնք լսեցին , բարկութեամբ
լեցուած կը կանչըռտէին ու կ՚ըսէին , Մեծ է
29 Եփեսացւոց Արտեմիսը ։ Եւ բոլոր քաղաքը խռո-
վութեամբ լեցուեցաւ ․ և յափշտակելով [թ]Գայիոս
ու [ժ]Արիստարքոս Մակեդոնացիները՝ Պօղոսին
ճանապարհորդակիցները , ամէնը մէկէն թէատրո-

[ա] Հռով. ժե. 25; Գաղ. բ. 1;
[բ] Գլ. իգ. 11; Հռով. ժե. 24—28;
[գ] Գլ. ժգ. 5;
[դ] Հռով. ժզ. 23; բ Տիմ. դ. 20;
[ե] բ Կոր. ա. 8;
[զ] Տես գլ. թ. 2;
[է] Գլ. ժզ. 16, 19;
[ը] Սաղ. ճժե. 4; Ես. խդ. 10—20; Երեմ. ժ. 3;
* Կամ արհեստը
[թ] Հռով. ժզ. 23; ա Կոր. ա. 14;
[ժ] Գլ. ի. 4; իէ. 2; Կող. դ. 10; Փիլեմ. 24;

30 նը վազեցին ։ Իսկ Պօղոս երբոր ուզեց ժողովուր-
դին մէջը մտնել , աշակերտները թող չտուին
31 զինքը ։ Ասիապետներէն ալ ոմանք որ իր բարե-
կամներն էին , մարդ խրկելով իրեն կ՚աղաչէին որ
32 չհամարձակի թէատրոնը երթալու ։ Ասոր մէկը
մէկ կերպ ու միւսը ուրիշ կերպ բան կը կան-
չըռտէին ․ ինչու որ ժողովքը շփոթութեան մէջ
էր , և շատերը չէին գիտեր թէ ինչ բանի համար
33 ժողվուած են ։ Եւ բազմութեանը մէջէն առաջ
բերին Աղեքսանդրոսը , որն որ Հրէայք առաջ
քշեցին ․ [ժա]Աղեքսանդրոս ալ [ժբ]ձեռքը շարժելով՝
34 կ՚ուզէր որ ժողովուրդին պատասխան տայ ։ Իսկ
երբոր գիտցան թէ անիկայ Հրէայ է , ամէնքը մէկ
բերան եղած՝ երկու ժամու չափ կը կանչըռտէին
35 թէ ՝ Մեծ է Եփեսացւոց Արտեմիսը ։ Սակայն
ատենադպիրը բազմութիւնը հանդարտեցնելով՝
ըսաւ , Ո՛վ Եփեսացի մարդիկ , ո՞ր մարդն է որ
չգիտնայ թէ Եփեսացւոց քաղաքը մեծ Արտեմիսին
և Դիոսէն ինկած կուռքին տաճարին պաշտօնեան
36 է ։ Ուրեմն աս որ անվիճելի բան մըն է , պէտք է
ձեզի հանդարտ կենալ , և յանդգնութեամբ բան
37 մը չընել ։ Քանզի դուք աս մարդիկը հոս բերիք ,
որոնք ո՛չ տաճար կողոպտողներ են , ո՛չ ալ ձեր
38 աստուածուհւոյն հայհոյանք ըրեր են ։ Ասոր թէ
որ Դեմետրիոս և իր հետը եղած վարպետները մէ-
կու մը հետ բան մը ունին , դատի օրեր կան , ու
փոխանորդ բդեշխ կայ , թող իրարու դէմ ամբաս-
39 տանութիւն ընեն ․ Հապա թէ որ ուրիշ բանե-
րու համար է ձեր պահանջմունքը , օրինաւոր ժո-
40 ղովքի մէջ թող որոշուի ։ Ինչու որ մենք ալ աս
օրուան եղածին համար իբրև խռովայոյզ մարդիկ
ամբաստանուելու վտանգի մէջ ենք ․ քանզի պատ-
ճառ մը չկայ որով կարող ըլլանք աս խառնամբոխ

[ժա] ա Տիմ. ա. 20; բ Տիմ. դ. 14; | [ժբ] Գլ. ժբ. 17;

բազմութեանը՝ համար պատասխան տալ ։ Ու
ասանկ ըսելով՝ ժողովքը արձակեց ։

ԳԼ. Ի.

1 Պօղոս Մակեդոնիա կ'երթայ. 7 Տէրունական ընթրիքը կը կատարէ ու կը քարոզէ ։ 9 Եւտիքոս վար ինալով կը մեռնի, 10 և Պօղոս կը յարուցանէ զանիկայ ։ 17 Պօղոս Միլետոսի մէջ ժողվելով երէցները, կը զգուշացէ անոնց իրեն պատահելու անցքերը. 28 կը պատուիրէ անոնց՝ Աստուծոյ հօտին հոգ տանիլ, 29 ու կը զգուշացընէ խաբերայ վարդապետներէն. 32 ապա զանոնք Աստուծոյ յանձնելով՝ 36 աղօթք կ'ընէ անոնց հետը ու կը մեկնի ։

1 Ու աղմուկը դադարելէն ետև՝ Պօղոս աշակերտ-
ները իրեն կանչեց, ու հրաժարական ողջոյն
2 տալով ա ելաւ որ Մակեդոնիա երթայ ։ Ու ան
կողմերը պտըտելէն ու շատ խօսքերով զանոնք յոր-
3 դորելէն ետև Յունաստան եկաւ ։ Ու հոն երեք
ամիս կենալէն ետքը, բ Հրեաները իրեն դէմ
նենգութեան խորհուրդ ըրին՝ երբոր կ'ուզէր
Ասորիք երթալ. անոր համար որոշեց Մակեդոնի-
4 այի վրայէն դառնալ ։ Ու մինչև Ասիա իր հետը
կ'երթար Բերիացի * Պիւռոսի որդին՝ Սոպատրոս,
և Թեսաղոնիկեցիներէն գ Արիստարքոս ու Սե-
կունդոս, և դ Գայիոս Դերբեցին ու ե Տիմո-
թէոս, և Ասիացիք զ Տիւքիկոս ու է Տրոփիմոս ։
5 Ասոնք առաջ գացին ու Տրովադայի մէջ մեզի կը
6 սպասէին ։ Մենք ալ ը բաղարջակերաց օրերէն
ետև Փիլիպպէէն նաւեցինք, և հինգ օրուան մէջ
թ Տրովադա եկանք անոնց քովը, ու հոն եօթը օր
կեցանք ։

ա ա Կոր. ժզ. 5 ։ ա Տիմ. ա. 3 ։
բ Գւ. թ. 23 ։ իգ. 12 ։ իե. 3 ։ բ Կոր. ժա. 26 ։
* Ոմանք չունին ։
գ Գւ. ժթ. 29 ։ իէ. 2 ։ Կող. դ. 10 ։
դ Գւ. ժթ. 29 ։
ե Գւ. ժզ. 1 ։
զ Եփես. զ. 21 ։ Կող. դ. 7 ։ բ Տիմ. դ. 12 ։ Տիտ. գ. 12 ։
է Գւ. իա. 29 ։ բ Տիմ. դ. 20 ։
ը Ել. ժբ. 14, 15 ։ իգ. 15 ։
թ Գւ. ժզ. 8 ։ բ Կոր. բ. 12 ։ բ Տիմ. դ. 13 ։

7 ժ Ու մէկշաբթի օրը երբոր ժողվուեր էինք ի հաց
կտրելու, Պօղոս անոնց կը քարոզէր, ինչու որ
հետևեալ օրը ճամբայ պիտի ելլէր. և խօսքը եր-
8 կընցուց մինչև կէս գիշեր ։ Ու շատ լապտերներ
կային ան վերի սենեակը՝ ուր որ մենք ժողվուած
9 էինք ։ Ու մէկ երիտասարդ մը Եւտիքոս անուն
պատուհանին վրայ նստած՝ խորունկ քնոյ մէջ մտեր
էր. երբոր Պօղոս խօսքը երկընցուց, անիկայ խո-
րունկ քնով բռնուած՝ երրորդ դստիկոնէն վար
10 ինկաւ, ու զանիկայ մեռած վերցուցին ։ Ու
Պօղոս վար իջնելով՝ խ անոր վրայ ինկաւ ու
դրկեց զանիկայ՝ ու կ'ըսէր, ծ Մի խռովիք, ինչու
11 որ ասոր հոգին իր մէջն է ։ Ու վեր ելլելով՝ հա-
ցը կտրեց ու կերաւ. ու երկար խօսելով մինչև
12 առտու, ետքը ելաւ գնաց ։ Ու ան պատանին
13 ողջ բերին ու մեծապէս մխիթարուեցան ։ Իսկ
մենք նաւը մտնելով ճամբայ ելանք դէպ 'ի Ասոն,
որ անկէ Պօղոսը պիտի առնէինք, ինչու որ ասանկ
ապսպրեր էր, որովհետև ինքը ցամաքով պիտի
14 երթար ։ Ու երբոր Ասոնի մէջ մեզի հանդիպե-
15 ցաւ, առինք անիկայ և Միտիլենէ եկանք ։ Անկէ
ալ նաւելով՝ հետևեալ օրը Քիոսին դիմացը հա-
սանք. և միւս օրը Սամոս հասանք. ու [illegible] Տրո-
16 գիլիոն կենալով՝ միւս օրը Միլետոս եկանք. Ինչու
որ Պօղոս միտքը դրեր էր որ նաւով անցնի Եփեսո-
սին քովէն, որ չըլլայ թէ Ասիայի մէջ ժամանակ
անցընէ, որովհետև կ կ'արտորար որ եթէ կարելի
է իրեն, հ Պենտէկոստէին օրը ձ Երուսաղէմ
ըլլայ ։
17 Ու Միլետոսէն մարդ խրկեց Եփեսոս ու եկեղե-
18 ցիին երէցները կանչեց ։ Ու երբոր իրեն եկան,

ժ ա Կոր. ժզ. 2 ։ Յայտ. ա. 16 ։
ի Գւ. բ. 42, 46 ։ ա Կոր. ժ. 16 ։ ժա. 20, ևն ։
լ Գւ. ա. 13 ։
խ գ Թագ. ժէ. 21 ։ դ Թագ. դ. 34 ։
ծ Մատ. թ. 24 ։
կ Գւ. ժթ. 21 ։ իա. 4, 12 ։
հ Գւ. բ. 1 ։ ա Կոր. ժզ. 8 ։
ձ Գւ. իդ. 17 ։

ըսաւ անոնց , Դուք գիտէք ղ որ առջի օրէն
հետէ որ ես Ասիա եկայ , ինչպէս ձեր հետը վարուե-
19 ցայ բոլոր ժամանակը . Ամենայն խոնարհութեամբ
Տէրոջը ծառայելով , և շատ արցունքով ու փոր-
ձութիւններով , ճ որ Հրէից նենգութիւններէն
20 ինծի պատահեցան . մ Ինչպէս վախնալով ետ չկե-
ցայ օգտակար բաներուն բնաւ մէկը ձեզի ցուցնե-
լէն , ու ձեզի հրապարակաւ և տուն մէջ սորվեցը-
21 նելէն . յ Վկայութիւն տալով Հրէից և Յունաց
ալ՝ ն դէպ 'ի Աստուած ապաշխարութեան
համար , ու մեր Տէր Յիսուս Քրիստոսին վրայ
22 եղած հաւատքին համար : Եւ հիմա շ ահա ես
Հոգւով կապուած Երուսաղէմ կ'երթամ , և
հոն ինչ որ ինծի պիտի պատահի՝ չեմ գիտեր .
23 Միայն թէ ո Հոգին Սուրբ ամէն քաղաքի մէջ
ինծի կը վկայէ ու կ'ըսէ թէ կապեր ու նեղու-
24 թիւններ ինծի կը սպասեն : չ Բայց ես բանի մը
համար հոգ չեմ ըներ , և իմ անձս պատուական
չեմ սեպեր , պ միայն թէ իմ ընթացքս ուրախու-
թեամբ կատարեմ , Նև այն պաշտօնը՝ ջ որ Տէր
Յիսուսէն առի Աստուծոյ շնորհացը աւետարանին
25 վկայ ըլլալու : Եւ հիմա ահա ռ ես գիտեմ որ ալ
իմ երեսս պիտի չտեսնէք դուք ամէնքդ , որ մէջերնիդ
պտըտեցայ Աստուծոյ թագաւորութիւնը քարո-
26 զելով : Ուստի աս օրս կը վկայեմ ձեզի , որ ես
27 ս անպարտ եմ ամենուն արիւնէն . Ինչու որ տ ես
չքաշուեցայ ր Աստուծոյ բոլոր կամքը ձեզի յայտնելէն :

ղ Գղ. ժը. 19 ; ժթ. 1 , 10 ;
ճ Հմր 3 ;
մ Հմր 27 ;
յ Գղ. ժը. 5 ;
ն Մար. ա. 15 ; Ղու. իդ. 47 ; Գղ. բ. 38 ;
շ Գղ. ժթ. 21 ;
ո Գղ. իա. 4 , 11 ; ա Թես. գ. 3 ;
չ Գղ. իա. 13 ; Հռոմ. ը. 35 ; բ Կոր. դ. 16 ;
պ բ Տիմ. դ. 7 ;
ջ Գղ. ա. 17 ; բ Կոր. դ. 1 ;
ռ Գաղ. ա. 1 ; Տիտ. ա. 3 ;
ս Հմր 38 ; Հռոմ. ժե. 23 ;
վ Գղ. ժը. 6 ; բ Կոր. ե. 2 ;
տ Հմր 20 ;
ր Ղու. է. 30 ; Յոհ. ժե. 15 ; Եփս. ա. 11 ;

28 ց Ուրեմն զգուշացէք ձեր անձերուն և բոլոր հօ-
տին , որուն վրայ Հոգին Սուրբ ւ ձեզ տեսուչ
դրաւ՝ * Աստուծոյ եկեղեցին հովուելու , որն որ
29 փ իր արիւնովը ք ստացաւ : Քանզի գիտեմ որ իմ
գացուելէս ետքը ձեր մէջը օ † յափշտակող գայլեր
30 պիտի մտնեն , որ պիտի չխնայեն հօտին : Եւ
ֆ ձեզմէ ալ անանք մարդիկ պիտի ելլեն՝ որ ծուռ
բաներ պիտի խօսին , աշակերտները իրենց ետևէն
31 քաշելու համար : Ուստի արթուն կեցէք , և
միտքերնիդ բերէք՝ ա որ երեք տարի գիշեր ու ցորեկ
չդադարեցայ ամէն մէկը արցունքով խրատելէն :
32 Եւ հիմա՝ եղբայրներ՝ կը յանձնեմ ձեզ Աստուծոյ ,
ու բ անոր շնորհացը խօսքին , որ կարող է գ շինե-
լու և դ բոլոր սրբուածներուն հետ ձեզի ժառանգ-
33 ութիւն տալու : ե Մէկուն մը արծաթին կամ
34 ոսկիին կամ հագուստին չցանկացայ . Դուք ձեզմէ
գիտէք որ ինծի և իմ հետս եղողներուն պէտք
35 եղածը զ աս ձեռքերս հոգացին : Ամէն բան ձեզի
ցուցուցի , է թէ ասանկ պէտք է աշխատիլ ու
տկարներուն օգնութիւն ընել , և միտք բերել Տէր
Յիսուսին խօսքը , որ ինքը ըսաւ , Աւելի երանելի
36 է տալը քան թէ առնելը : Եւ աս որ ըսաւ , ա-
նոնց ամենուն հետ ը ծնկան վրայ գալով աղօթք ը-

ց ա Տիմ. դ. 16 ; ա Պետ. ե. 2 ;
ւ ա Կոր. ժբ. 28 ;
* Ոմանք՝ Տէրոջը
փ Տես Եբր. թ. 14 ;
ք Եփս. ա. 7 , 14 ; Կող. ա. 14 ; Եբր. թ. 12 ; ա Պետ. ա. 19 ; Յայտ. ե. 9 ;
օ Մատ. է. 15 ; բ Պետ. բ. 1 ;
† Կամ վտանգաւոր
ֆ ա Տիմ. ա. 20 ; ա Յոհ. բ. 19 ;
ա Գղ. ժթ. 10 ;
բ Եբր. ժգ. 9 ;
գ Գղ. թ. 31 ;
դ Գղ. իզ. 18 ; Եփս. ա. 18 ; Կող. ա. 12 ; գ. 24 ; Եբր. թ. 15 ; ա Պետ. ա. 4 ;
ե ա Թագ. ժբ. 3 ; ա Կոր. թ. 12 ; բ Կոր. է. 2 ; ժա. 9 ; ժբ. 17 ;
զ Գղ. ժը. 3 ; ա Կոր. դ. 12 ; ա Թես. բ. 9 ; բ Թես. գ. 8 ;
է Հռոմ. ժե. 1 ; ա Կոր. թ. 12 ; բ Կոր. ժա. 9 , 12 ; ժբ. 13 ; Եփս. դ. 28 ; ա Թես. դ. 11 ; ե. 14 ; բ Թես. գ. 8 ;
ը Գղ. է. 59 ; իա. 5 ;

37 լալու։ Ամէնքն ալ սաստիկ կու լային, ու Պօղոսին
[ը]պարանոցին վրայ իյնալով զանիկայ կը համբու-
38 րէին։ Սիրտերնին կը ցաւէր մանաւանդ ան խօսքին
համար, [ժ]որ կ'ըսէր թէ ալ պիտի չտեսնեն իր
երեսը. և զանիկայ ճամբայ դրին մինչև նաւը եր-
թալով։

ԳԼ. ԻԱ

1 Պօղոս բնաւ չհամոզուիր Երուսաղէմ երթալէն ետ կենալու ։ 9 Փիլիպպոսին մարգարէ աղջիկները ։ 17 Պօղոս Երուսաղէմ կ'երթայ ։ 27 ուր տեղ կը բռնուի ու մեծ վտանգի մէջ կ'իյնայ . 31 բայց հազարապետը ազատելով զանիկայ, հրաման կու տայ որ ժողովուրդին խօսի ։

1 Ու երբոր ելանք ու անոնցմէ զատուեցանք՝ շիտակ
նաւելով Կով եկանք, և միւս օրը Հռոդոս,
2 ու անկէ Պատարա։ Ու նաւ մը գտանք որ Փիւ-
նիկէ կ'երթար, ու անոր մէջը մտնելով՝ ճամբայ
3 ելանք։ Ու Կիպրոս որ երևցաւ, զանիկայ ձախ
կողմերնիս թող տալով՝ դէպ 'ի Սիւրիա նաւե-
ցինք և Տիւրոս ելանք, ինչու որ նաւը հոն պի-
4 տի թափէր իր բեռը։ Ու աշակերտները գտնե-
լով՝ եօթը օր հոն կեցանք, որոնք Հոգիով
5 [ա]կ'ըսէին Պօղոսին որ Երուսաղէմ չելլէ։ Ու
երբոր ան օրերը անցուցինք, ելանք ու կ'երթա-
յինք. ամէնն ալ կիններով ու տղաքներով
մինչև քաղաքէն դուրս մեզ ճամբայ դրին. [բ]և
ծովուն եզերքը ծնկան վրայ գալով՝ աղօթք ըրինք։
6 Ու իրարու հրաժարական ողջոյն տալով՝ մենք
7 նաւը ելանք, անոնք ալ տեղերնին դարձան։ Իսկ
մենք Տիւրոսէն չուելով և ծովու ճամբորդու-
թիւնը լմնցնելով Պտղեմայիս հասանք, ու
եղբայրները բարևելով օր մը քովերնին կեցանք։
8 Ու հետևեալ օրը անկէ ելանք ու Կեսարիա եկանք,
և [գ]Փիլիպպոս աւետարանչին տունը մտնելով,

[ը] Ծն. խե. 14 . խզ. 29 .
[ժ] Հմր 25 .
[ա] Հմր 12 ; Գլ. ի. 23 .
[բ] Գլ. ի. 36 .
[գ] Եփե. դ. 11 . բ Տիմ. դ. 5 .

[դ]Որ ինքը եօթնէն մէկն էր, անոր քովը կեցանք։
9 Անիկայ չորս կոյս աղջիկ ունէր, [ե]որ մար-
10 գարէութիւն կ'ընէին։ Ու հոն շատ օրեր որ կե-
ցանք, Հրէաստանէն մարգարէ մը իջաւ [զ]Ագաբոս
11 անունով. Ու երբոր մեզի եկաւ, Պօղոսին գօ-
տին առնելով իր ձեռքերը ու ոտքերը կապեց, և
ըսաւ, Ասանկ կ'ըսէ Հոգին Սուրբ. Ան մարդը՝
որունն է աս գօտին, [է]ասանկ պիտի կապեն Հրէա-
ները Երուսաղէմի մէջ, ու հեթանոսներուն
12 ձեռքը պիտի մատնեն։ Ու երբոր աս լսեցինք, ա-
ղաչեցինք մենք ալ և տեղացիք ալ որ Երուսաղէմ
13 չելլէ։ Իսկ Պօղոս պատասխան տուաւ, [ը]Ի՞նչ
կ'ընէք, ինչո՞ւ կու լաք ու իմ սիրտս կը ճմլէք.
քանզի ես չէ՛ թէ միայն Երուսաղէմի մէջ կապուե-
լու, հապա նաև մեռնելու ալ պատրաստ եմ Տէր
14 Յիսուսի անուանը համար։ Ու ինքը որ մտիկ չը-
րաւ, լուռ կեցանք, ու ըսինք՝ [թ]Տէրոջը կամքը
թող ըլլայ։
15 Ու ան օրերէն ետև պատրաստուելով՝ Երուսա-
16 ղէմ ելանք։ Կեսարացի աշակերտներէն ալ մէ-
քանիները մեր հետը եկան, և մեզ տարին նախնի ա-
շակերտ մը՝ Կիպրացի Մնասոնին, որուն քովը
17 պիտի կենայինք։ [ժ]Ու երբոր Երուսաղէմ մտանք,
եղբայրները ուրախութեամբ մեզ ընդունեցին։
18 Ու հետևեալ օրը Պօղոս մեզի հետ [ի]Յակոբոսին
19 քովը գնաց, ու բոլոր երէցներն ալ եկան։ Ու
զանոնք բարևելով՝ մի ըստ միոջէ [լ]կը պատմէր
ինչ որ Աստուած հեթանոսներուն մէջը ըրաւ [խ]իր
20 ծառայութիւնովը։ Անոնք ալ լսելով փառք կու

[դ] Գլ. զ. 5 . ը. 26, 40 .
[ե] Յովէլ. բ. 28 . Գլ. ը. 17 .
[զ] Գլ. ժա. 28 .
[է] Հմր 33 . Գլ. ի. 23 .
[ը] Գլ. ի. 24 .
[թ] Մատ. զ. 10 . իզ. 42 . Ղու. ժա. 2 . իբ. 42 .
[ժ] Գլ. ժե. 4 .
[ի] Գլ. ժե. 13 . Գաղ. ա. 19 . բ. 9 .
[լ] Գլ. ժե. 4, 12 . Հռով. ժե. 18, 19 .
[խ] Գլ. ա. 17 . ի. 24 .

տային Տէրոջը ․ և ըսին իրեն, Կը տեսնե՞ս
եղբայր՝ քանի՜ բիւրաւոր հաւատացեալ Հրէաներ
կան, ու ամէնն ալ [ծ] օրէնքին նախանձաւոր են ։
21 Բայց քու վրայովդ իմացան թէ դուն բոլոր հեթա-
նոսներուն մէջ եղած Հրէաներուն Մովսէսէն
ապստամբիլ կը սորվեցնես, ըսելով որ տղաքնին
չթլփատեն, և սովորութիւններուն համեմատ չը-
22 վարուին ։ Արդ ի՞նչ պիտի ըլլայ ․ անշուշտ
բազմութիւն պիտի ժողվուի ․ ինչու որ պիտի լսեն
23 թէ եկեր ես ։ Ուստի աս բանը ըրէ՛ որ քեզի կ'ը-
սենք ․ Մեր քովը չորս մարդ կայ, որոնք իրենց
24 վրայ ուխտ դրած են ․ Անոնք առ՝ իրենց հետը
մաքրուէ՛, և անոնց համար ծախք ըրէ, որ [կ] իրենց
գլուխը ածիլեն ․ որպէս զի ամէնն ալ գիտնան թէ
քու վրայովդ իմացած բաներնին ոչինչ է, հապա
դուն ալ դեռ հետը կը քալես օրէնքը պահելու մէջ ։
25 Բայց հաւատքի եկող հեթանոսներուն համար
[հ] մենք թուղթ խրկեցինք՝ ինչպէս որ որոշեցինք, որ
անոնք բնաւ ասանկ բաներ չպահեն ․ միայն թէ
զգուշանան կուռքերու զոհուածէ ու արիւնէ և
26 խեղդուածէ ու պոռնկութենէ ։ Ան ատենը Պօ-
ղոս այն մարդիկը առաւ, ու հետևեալ օրը ա-
նոնց հետ մաքրուած՝ [ձ] տաճարը մտաւ ․ [ղ] մաքրու-
թեան օրերը լմննալը ցուցնելու համար, մինչև
որ անոնց ամէն մէկուն համար պատարագ մատու-
ցուեցաւ ։
27 Ու երբոր եօթը օրերը լմննալու վրայ էին,
Ասիացի [ճ] Հրէաները զանիկայ տաճարին մէջը
տեսնելով՝ բոլոր բազմութիւնը խռովեցուցին,
28 [մ] և անոր ձեռք զարկած՝ կը կանչըռտէին, Իս-
րայէլացի՛ մարդիկ՝ օգնութեան հասէ՛ք ․ աս այն

[ծ] Գլ. ԻԲ. 3 ։ Հռով. Ժ. 2 ։ Գաղ. Ա. 14 ։
[կ] Թուոց. Զ. 2, 13, 18 ։ Գլ. ԺԸ. 18 ։
[հ] Գլ. ԺԵ. 20, 29 ։
[ձ] Գլ. ԻԴ. 18 ։
[ղ] Թուոց. Զ. 13 ։
[ճ] Գլ. ԻԴ. 18 ։
[մ] Գլ. ԻԶ. 21 ։

մարդն է [յ] որ ամէն տեղ ժողովուրդին և օրէնքին
ու աս տեղին դէմ բան կը սորվեցընէ ամենուն ․
մինչև որ տաճարին մէջը Յոյներ ալ մտցուց, և
29 աս սուրբ տեղը պղծեց ․ (Ինչու որ առաջուց
Եփեսացի [ն] Տրոփիմոսը իրեն հետ քաղաքին մէջը
տեսեր էին, և կը կարծէին թէ Պօղոս զանիկա
30 տաճարը մտցուց ․) [շ] Ու բոլոր քաղաքը շարժե-
ցաւ և ժողովուրդը դիզուեցաւ, ու բռնեցին
Պօղոսը տաճարէն դուրս քաշեցին ․ և շուտ մը
31 դռները գոցուեցան ։ Ու երբոր անոնք կ'ուզէին
անիկայ սպաննել, լուր հասաւ գունդին հազա-
րապետին թէ բոլոր Երուսաղէմ իրար անցեր է ։
32 [ո] Ան ալ անմիջապէս զինուորներ և հարիւրա-
պետներ առած՝ անոնց վրայ վազեց ․ անոնք ալ
հազարապետը ու զինուորները տեսնելով՝ Պօղոսը
33 ծեծելէն դադարեցան ։ Ան ատենը հազարապետը
մօտենալով՝ բռնեց զանիկայ, [չ] և հրաման ըրաւ
որ կրկին շղթայով կապեն ․ ու կը հարցընէր թէ
34 անիկայ ո՞վ է ․ ու ի՞նչ ըրեր է ։ Իսկ բազմու-
թեանը մէջէն մէկը մէկ կերպ՝ ու միւսը ուրիշ
կերպ բան կը կանչըռտէին ․ իսկ երբոր չկրցաւ
ան շփոթութենէն ստոյգը գիտնալ, հրաման ը-
35 րաւ որ զանիկայ բերդը տանին ։ Ու երբոր սան-
դուխը հասաւ, անանկ պատահեցաւ որ զինուոր-
ները վեր վերցընեն անիկայ՝ ժողովուրդին բռնու-
36 թեանը համար ․ Ինչու որ ժողովուրդին բազմու-
թիւնը ետևէն կ'երթար, ու կ'ըսէին, [պ] Վերցո՛ւր
37 զանիկայ ։ Ու երբոր Պօղոս բերդը մտնելու վրայ
էր, հազարապետին ըսաւ, Արդեօք կարելի՞ է որ
քեզի բան մը խօսիմ ։ Ան ալ ըսաւ, Յունարէն
38 գիտե՞ս ․ [ջ] Չէ՞ որ դուն այն Եգիպտացին ես, որ

[յ] Գլ. ԻԴ. 5, 6 ։
[ն] Գլ. Ի. 4 ։
[շ] Գլ. ԻԶ. 21 ։
[ո] Գլ. ԻԳ. 27 ։ ԻԴ. 7 ։
[չ] Համր 11 ։ Գլ. Ի. 22 ։
[պ] Ղուկ. ԻԳ. 18 ։ Յովհ. ԺԹ. 15 ։ Գլ. ԻԲ. 22 ։
[ջ] Տես Գլ. Ե. 36 ։

այս օրերէս առաջ չորս հազար * սրիկայ մարդիկ
ապստամբեցուցիր , ու անապատը հանեցիր ։
39 Պօղոս ալ ըսաւ , ա Ես Հրեայ մարդ մըն եմ Կի-
լիկիոյ Տարսոնէն , չէ՛ թէ աննշան քաղաքի մը
քաղաքացի , ու կ'աղաչեմ քեզի՛ ինծի հրաման
տուր որ ժողովուրդին խօսիմ ։
40 Ու երբոր անիկայ հրաման տուաւ , Պօղոս սան-
դուխին վրայ կայնելով՝ բ ձեռքը շարժեց ժողո-
վուրդին , ու երբոր աղէկ մը լռութիւն եղաւ ,
Եբրայական լեզուով խօսեցաւ անոնց , ու ըսաւ ,

ԳԼ . ԻԲ

1 Պօղոս մի ըստ միոջէ կը պատմէ իր դարձի գալը , 17 և իր առաքելութեան կանչուիլը . 22 բայց հեթանոսներուն խօսքը ընելուն պէս՝ ժողովուրդը բարձրաձայն կ'աղաղակեն անոր դէմ ։ 24 Հազարապետը հրաման կ'ընէ որ ծեծեն Պօղոսը . 25 բայց անիկայ իր Հռովմայեցի ըլլալը իմացընելով կ'ազատի ։

1 Մարդի՛կ ա եղբայրներ և հայրեր , ինծի մտիկ
ըրէք որ հիմա ձեզի պատասխան կու տամ .
2 (Երբոր լսեցին որ Եբրայական լեզուով կը խօսէր
3 իրենց , ալ աւելի լուռ կեցան . Ու անիկայ ը-
սաւ ,) բ Ես Հրեայ մարդ մըն եմ Կիլիկիոյ Տար-
սոնին մէջ ծնած՝ և այս քաղաքիս մէջ գ Գամաղիէ-
լին դ ոտքը մեծցած , ե ու մեր հայրենի օրէնքին
ճշդութեանը պէս կրթուած , զ նախանձաւոր էի
Աստուծոյ՝ է ինչպէս որ այսօր դուք ամէնքդ էք ։
4 ը Որ ես երիկ մարդիկ ու կնիկ մարդիկ կա-
պելով , ու բանտերու մատնելով այս ճամ-
5 բան հալածեցի մինչև 'ի մահ . Ինչպէս որ

* Յուն . սիկարեան , այ դաշնակակիր մարդասպան ։
ա Գլ . Թ . 11 ։ Իբ . 3 ։
բ Գլ . Ժբ . 17 ։
ա Գլ . Է . 2 ։
բ Գլ . Իա . 39 ։ բ Կոր . Ժա . 22 ։ Փիլ . Գ . 5 ։
գ Գլ . Ե . 34 ։
դ բ Օր . Լգ . 3 ։ Գ Թագ . Դ . 38 ։ Ղուկ . Ժ . 39 ։
ե Գլ . Իզ . 5 ։
զ Գլ . Իա . 20 ։ Գաղ . Ա . 14 ։
է Հռովմ . Ժ . 2 ։
ը Գլ . Ը . 3 ։ Իզ . 9 , 10 , 11 ։ Փիլ . Գ . 6 ։ Ա Տիմ . Ա . 13 ։

քահանայապետն ալ՝ կը վկայէ ինծի համար՝ ը և
բոլոր ծերակոյտը . թ որ իրենցմէ թուղթեր ալ
առնելով եղբայրներուն՝ Դամասկոս կ'երթայի , որ
հոն եղածներն ալ կապուած Երուսաղէմ բերեմ ,
6 որ պատժուին ։ ժ Ու եղաւ որ երբ կ'երթայի ու
Դամասկոսին մօտեցայ , կէս օրուան դէմ յանկար-
ծակի երկինքէն մեծ լոյս մը փայլատակեց իմ բոլոր-
7 տիքս . Ու գետինը ինկայ , ու ձայն մը լսեցի որ
ինծի կ'ըսէր , Սաւո՛ւղ՝ Սաւուղ , ինչո՞ւ զիս կը
8 հալածես ։ Ես ալ պատասխան տուի թէ Ո՞վ
ես՝ Տէ՛ր . ան ալ ինծի ըսաւ , Ես Յիսուս
9 Նազովրեցին եմ , որ դուն կը հալածես ։ ի Բայց
անոնք որ իմ հետս էին՝ լոյսը տեսան ու վախով
լեցուեցան , սակայն ինծի խօսողին ձայնը չլսեցին ։
10 Ես ըսի , Ի՞նչ ընեմ՝ Տէ՛ր . և Տէրը ինծի ըսաւ ,
Ելիր գնա Դամասկոս , ու հոն քեզի պիտի զրու-
ցուի ան ամէն բաներուն համար , որ սահմանուած
11 է որ ընես ։ Ու երբոր չէի տեսներ ան լոյսին
փառքէն , հետս եղողները ձեռքէս բռնած՝ Դա-
12 մասկոս մտայ ։ լ Ու Անանիա անուն մարդ մը՝
օրէնքին համեմատ աստուածավախ , ու Դամասկոս
բնակող բոլոր խ Հրեաներէն ծ բարի վկայուած ,
13 ինծի եկաւ , ու քովս կայնելով ինծի ըսաւ ,
14 Սաւո՛ւղ եղբայր , վե՛ր նայէ ։ Ես ալ նոյն
ժամուն վեր նայեցայ իրեն . և անիկայ ը-
սաւ , կ Մեր հայրերուն Աստուածը առաջուց
հ քեզ ընտրեց , որ իր կամքը ճանչնաս ու ան
ձ Արդարը ղ տեսնես , ճ և անոր բերնէն ձայն լսես .
15 մ Քանզի բոլոր մարդոց առջև անոր վկայ պիտի

ը Ղուկ . Իբ . 66 ։ Գլ . Դ . 5 ։
թ Գլ . Թ . 2 ։ Իզ . 10 , 12 ։
ժ Գլ . Թ . 3 ։ Իզ . 12 , 13 ։
ի Գլ . Թ . 7 ։ Դան . Ժ . 7 ։
լ Գլ . Թ . 17 ։
խ Ա Տիմ . Գ . 7 ։
ծ Գլ . Ժ . 22 ։
կ Գլ . Գ . 13 ։ Ե . 30 ։
հ Գլ . Թ . 15 ։ Իզ . 16 ։
ձ Գլ . Գ . 14 ։ Է . 52 ։
ղ Ա Կոր . Թ . 1 ։ Ժե . 8 ։
ճ Ա Կոր . Ժա . 23 ։ Գաղ . Ա . 13 ։
մ Գլ . Իգ . 11 ։

ըլլաս ան բաներուն համար, որ տեսար ու լսե-
16 ցիր ։ Եւ հիմա ալ ի՞նչ կ'ուշանաս ։ ելի՛ր
մկրտուէ՛, ու մեղքերդ լուա՛ * անոր անունը
17 կանչելով ։ Եւ եղաւ որ երբոր Երուսաղէմ դար-
ձայ՝ ու տաճարին մէջ աղօթք կ'ընէի, մտքի յա-
18 փշտակութիւն մը եկաւ վրաս, Եւ զինքը տե-
սայ, որ ինծի կ'ըսէր, Շտապեցի՛ր՝ շուտով
Երուսաղէմէն ելի՛ր. ինչու որ քու ինծի համար
19 ըրած վկայութիւնդ պիտի չընդունին ։ Ես ալ
ըսի, Տէ՛ր, իրենք աղէկ գիտեն թէ ես էի որ քե-
զի հաւատացողները բանտը կը դնէի, և ժողո-
20 վարաններուն մէջ կը ծեծէի ։ Ու երբոր քու Ստե-
փաննոս վկայիդ արիւնը կը թափուէր, ես ինքս ալ
ներկայ էի, և կամակից էի † անոր սպաննուե-
լուն". ու զանիկայ սպաննողներուն հանդերձները
21 ես կը պահէի ։ Եւ ինծի ըսաւ, Գնա՛, ինչու որ
ես քեզ հեռաւոր հեթանոսներուն պիտի ղրկեմ ։
22 Եւ անոնք մինչև այս խօսքս ականջ դրին իրեն,
ետքը ձայներնին վերցուցին ու ըսին, Վերցո՛ւր
աշխարհէն ատանկ մարդը, քանզի չվայլեր ա-
23 տոր ողջ մնալ ։ Ու երբոր կը կանչըռտէին
ու հանդերձնին կը նետէին, և փոշին դէպ 'ի օդը
24 կը ցանէին, հազարապետը հրաման ըրաւ որ զանի-
կայ բերդը մտցընեն, ու ըսաւ որ ծեծով հարցու-
փորձ ընեն անոր, որ գիտնայ թէ ինչ յանցանքի
25 համար անոր դէմ անանկ կը կանչըռտէին ։ Ու

ն Գրծ. դ. 20 ։ իզ. 16 ։
շ Գրծ. բ. 38 ։ Եբր. ժ. 22 ։
ո Գրծ. թ. 14 ։ Հռովմ. ժ. 13 ։
* Ոմանք՝ Տէրոջը
չ Գրծ. թ. 26 ։ բ Կոր. ժբ. 2 ։
պ Հմր 14 ։
ջ Մատ. ժ. 14 ։
ռ Հմր 4 ։ Գրծ. ը. 3 ։
ս Մատ. ժ. 17 ։
վ Գրծ. է. 57 ։
տ Ղուկ. ժա. 48 ։ Գրծ. է. 59 ։ Հռովմ. ա. 32 ։
† Ոմանք չունին ։
ր Գրծ. թ. 15 ։ ժգ. 2, 46, 47 ։ ժը. 6 ։ իզ. 17 ։ Հռովմ. ա. 5 ։ ժա. 13 ։ ժե. 16 ։ Գաղ. ա. 15, 16 ։ բ. 7, 8 ։ Եփե. գ. 7, 8 ։ ա Տիմ. բ. 7 ։ բ Տիմ. ա. 11 ։
ց Գրծ. իա. 36 ։
ւ Գրծ. իե. 24 ։

երբոր կաշի կապերով զինքը կապեցին, Պօղոս
մերձակայ հարիւրապետին ըսաւ, Արժա՞ն է
ձեզի Հռովմայեցի ու չդատապարտուած մարդ մը
26 ծեծել ։ Հարիւրապետը երբոր ասիկա լսեց, գնաց
հազարապետին պատմեց ու ըսաւ, * Ի՞նչ պիտի
27 ընես, ինչու որ այս մարդը Հռովմայեցի է ։ Հա-
զարապետն ալ քովը գնաց ու ըսաւ անոր, Ըսէ՛
ինծի, դուն Հռովմայեցի՞ ես. ան ալ ըսաւ,
28 Այո՛ ։ Հազարապետը պատասխան տուաւ, Ես
շատ ստակով ձեռք բերի այս քաղաքացիութեան
իրաւունքը. և Պօղոս ըսաւ, Ես բուն ազատ մէջը
29 ծնած եմ ։ Ու անոնք որ իրեն հարցուփորձ պիտի
ընէին, շուտ մը ետ կեցան իրմէն. և հազարա-
պետն ալ վախցաւ, երբոր իմացաւ թէ Հռովմա-
յեցի է, և որովհետև զանիկայ կապեր էր ։
30 Ու հետևեալ օրը ուզելով որ ճշդիւ գիտնայ
թէ ինչ է Հրեաներուն ըրած ամբաստանութիւնը
անոր դէմ, արձակեց զանիկա, և հրաման ըրաւ որ
քահանայապետները ու բոլոր ժողովքը մէկտեղ
գան. և Պօղոսը իջեցնելով անոնց առջևը կայ-
նեցուց ։

ԳԼ. ԻԳ

1 Երբոր Պօղոս զինքը կը պաշտպանէր, 2 Անանիա կը հրամայէ որ անոր բերնին զարնեն ։ 7 Երկպառակութիւն կը ծագի Պօղոսի դատախազներուն մէջտեղը ։ 11 Աստուած կը քաջալերէ զանիկայ ։ 12 Հրեայք Պօղոսի համար որոգայթ կը լարեն ։ 20 Հազարապետը իմանալով այս բանը, 27 Փելիքս կուսակալին կը ղրկէ Պօղոսը ։

1 Եւ Պօղոս իր աչքերը ժողովքին վրայ դարձնե-
լով ըսաւ, Մարդիկ եղբայրներ, ես բոլո-
րովին բարի խղճմտանքով կեանք վարեր եմ Աս-
2 տուծոյ առջևը մինչև այս օրս ։ Անանիա քահա-
նայապետն ալ հրաման ըրաւ իր քովը կայնող-

ձ Գրծ. ժզ. 37 ։
* Ոմանք՝ Նայէ՛ ինչ
ա Գրծ. իդ. 16 ։ ա Կոր. դ. 4 ։ բ Կոր. ա. 12 ։ դ. 2 ։ բ Տիմ. ա. 3 ։ Եբր. ժգ. 18 ։

3 ներուն՝ բ որ անոր բերնին զարնեն ։ Այն ատե-
նը Պօղոս ըսաւ անոր , Աստուած քեզի պիտի
զարնէ՝ ծեփած պատ , որ դուն նստեր ես օրէնքին
համեմատ զիս դատելու , և գ օրէնքէն դուրս հրա-
4 ման կ'ընես որ զիս զարնեն ։ Նոյն բոլորտիքը
կայնողները ըսին , Աստուծոյ քահանայապետը կը
5 նախատես ։ Պօղոս ալ ըսաւ , Ես չգիտէի եղբայրներ՝ դ
թէ քահանայապետ է . վասն զի գրուած է ,
ե Քու ժողովուրդիդ իշխանին դէմ չարախօսու-
6 թիւն մի ըներ ։ Նոյն Պօղոս գիտնալով որ մէկ
կողմը սադուկեցիներ են ու միւսը փարիսեցի-
ներ , կ'աղաղակէր ժողովքին մէջ , զ Մարդիկ եղ-
բայրներ , Ես փարիսեցի եմ՝ փարիսեցիի որդի .
մեռելոց յարութեանը է յոյսին համար կը դա-
7 տուիմ ։ Ու երբոր ասիկա ըսաւ , փարիսեցւոց և
սադուկեցւոց մէջը երկպառակութիւն ինկաւ , և
8 բազմութիւնը բաժնուեցաւ ։ ը Քանզի սադու-
կեցիք կ'ըսեն թէ յարութիւն չկայ , և ո՛չ հրեշ-
տակ , ո՛չ ալ հոգի . բայց փարիսեցիք երկուքն
9 ալ կը դաւանին ։ Նոյն մեծ աղաղակ մը եղաւ .
ու փարիսեցւոց կողմէն եղող դպիրները ոտքի
վրայ ելլելով՝ դէմ կը կենային ու կ'ըսէին ,
թ Մենք աս մարդուն վրայ չարութիւն մը չենք
գտներ . ժ հապա թէ որ հոգի մը կամ հրեշտակ
10 մը անոր խօսած է , * Ի՞նչ ։ Ու երբոր աղմու-
կը շատցաւ , հազարապետը վախնալով՝ որ չըլլայ
թէ Պօղոս անոնցմէ պատառուի , զինուորներուն
հրաման ըրաւ որ իջնեն զանիկայ անոնց մէջէն

բ Գ. Թագ. իբ. 24 ։ Երեմ. ի. 2 ։ Յովհ. ժը. 22 ։
գ Ղև. ժթ. 35 ։ բ Օր. իե. 1 , 2 ։ Յովհ. է. 51 ։
դ Գլ. իդ. 17 ։
ե Ել. իբ. 28 ։ Ժող. ժ. 20 ։ բ Պետ. բ. 10 ։ Յուդ. 8 ։
զ Գլ. իզ. 5 ։ Փիլ. գ. 5 ։
է Գլ. իգ. 15 , 21 ։ իզ. 6 ։ իը. 20 ։
ը Մատ. իբ. 23 ։ Մար. ժբ. 18 ։ Ղուկ. ի. 27 ։
թ Գլ. իե. 25 ։ իզ. 31 ։
ժ Գլ. իբ. 7 , 17 , 18 ։
* Ոմանք՝ Աստուծոյ հետ չմարտընչինք ։

11 յափշտակեն ու բերդը բերեն ։ ժա Նոյն հետևեալ
գիշերը Տէրը անոր քովը կայնեցաւ ու ըսաւ , Քա-
ջասիրտ եղիր՝ Պօ՛ղոս , վասն զի ինչպէս որ Երու-
սաղէմի մէջ ինծի համար վկայեցիր , անանկ պէտք
է քեզի որ Հռոմայ մէջ ալ վկայես ։
12 Ու երբոր առտու եղաւ , ժբ Հրէաներէն ոմանք
միաբանեցան , ու ինքզինքնին անէծքի տակ դրին ,
ըսելով որ չուտեն ու չխմեն մինչև որ Պօղոսը
13 սպաննեն ։ Նոյն քառսունէն աւելի էին որ աս եր-
14 դումը իրարու հետ ըրին . Որ ասոնք քահանայա-
պետներուն և ծերերուն գացին ու ըսին ; Անէծ-
քով անիծեցինք անձերնիս՝ որ բան մը չուտենք
15 մինչև որ Պօղոսը սպաննենք ։ Ուստի դուք ժո-
ղովքին հետ մէկտեղ հազարապետին իմացուցէք
որ վաղը զանիկա ձեզի իջեցընէ , որպէս թէ դուք
աւելի ճիշդ քննութիւն ընել կ'ուզէք անոր վրա-
յով . և մենք անոր մօտ գալէն առաջ պատրաստ
16 ենք զանիկայ սպաննելու ։ Նոյն Պօղոսին քրոջը որ-
դին երբոր աս դաւաճանութիւնը լսեց , եկաւ բեր-
17 դը մտաւ ու Պօղոսին պատմեց ։ Պօղոս ալ հա-
րիւրապետներուն մէկը իրեն կանչելով՝ ըսաւ ; Աս
պատանին հազարապետին տար , ինչու որ բան մը
18 ունի անոր իմացընելու ։ Ան ալ առաւ զանիկայ և
տարաւ հազարապետին՝ ու ըսաւ , Բանտարկեալ
Պօղոսը զիս կանչեց , և աղաչեց որ աս պատանին
19 քեզի բերեմ , որ քեզի խօսելիք ունի ։ Նոյն հազա-
րապետը անոր ձեռքէն բռնելով մէկդի գնաց , ու
հարցուց թէ Ի՞նչ բան ունիս ինծի իմացընելու ։
20 Նոյն անիկայ ըսաւ , ժգ Հրէաները միաբանեցան
քեզի աղաչելու որ վաղը Պօղոսը ատեանը իջեցը-
նես , որպէս թէ կ'ուզեն աւելի ճիշդ քննութիւն
21 մը ընել անոր վրայով . Բայց դուն անոնց միտք
չընես , ինչու որ անոնցմէ քառսունէն աւելի մար-

ժա Գլ. ժը. 9 ։ իէ. 23 , 24 ։
ժբ Հմր 21 , 30 ։ Գլ. իե. 3 ։
ժգ Հմր 12 ։

դէմ դարանամուտ եղած են անոր համար, որոնք
իրենքզիրենք անէծքի տակ դրին որ չուտեն ու
չխմեն, մինչև որ անիկայ սպաննեն. ու հիմա
22 պատրաստ են, և քու հրամանիդ կը սպասեն: Ան
ատենը հազարապետը պատանին ճամբեց, պա-
տուիրելով թէ Մէկու մը մի՛ ըսեր որ աս բաները
ինծի իմացուցիր:
23 Ու հարիւրապետներէն երկուքը կանչեց ու ը-
սաւ. Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք, ու
եօթանասուն ձիաւոր և երկու հարիւր գեղար-
դաւոր, որ մինչև Կեսարիա երթան գիշերուան
24 ժամը իրեքին. Ու գրաստներ պատրաստեցէք, որ
Պօղոսը հեծցընեն ու ապահովութեամբ Փելիքս
25 կուսակալին տանին: Ու թուղթ մը գրեց աս օրի-
26 նակին պէս. Կղօդիոս Լիւսիաս՝ պատուական Փե-
27 լիքս կուսակալիդ ողջոյն: ծԱս մարդը Հրէանե-
րէն բռնուեր էր, և անոնցմէ պիտի սպաննուէր,
իսկ ես զինուորներով վրայ հասած՝ ազատեցի զա-
28 նիկայ, իմանալով որ Հռոմայեցի է: Ու լուու-
զելով պատճառը գիտնալ՝ որուն համար ատոր
վրայ ամբաստանութիւն կ'ընէին, իջեցուցի ատե-
29 նայ անոնց ատեանը. Որ գտայ ամբաստանուած
հիրենց օրէնքին վէճերուն խնդիրներու համար,
յև մեռնելու կամ կապուելու արժանի յանցանք
30 մը չունէր: ղՈւ երբոր լուր առի որ Հրէայք աս
մարդուն համար որոգայթ պիտի լարեն, իսկոյն
քեզի խրկեցի, ճհրաման ընելով ամբաստանողնե-
րուն ալ՝ որ քու առջևդ խօսին ատոր վրայով: Ո՛ղջ
եղիր:
31 Զինուորներն ալ իրենց հրամայուածին հա-
մեմատ առին Պօղոսը ու գիշերով Անտի-
32 պատրիս տարին: Ու հետևեալ օրը թողու-

ծ Գլ. իա. 33. իդ. 7.
լ Գլ. իբ. 30.
հ Գլ. ժը. 15. իե. 19.
յ Գլ. իդ. 31.
ղ Հմր 20.
ճ Գլ. իդ. 8. իե. 6.

ցին ձիաւորները անոր հետ երթալու, ու իրենք
33 բերդը դարձան: Անոնք ալ Կեսարիա մտան, ու
թուղթը կուսակալին տուին. և Պօղոսը անոր
34 առջևը կայնեցուցին: Երբոր կարդաց, հարցուց
թէ ո՛ր գաւառէն է, և իմանալով որ մԿիլիկիա-
35 յէն է, Ըսաւ, յԿիտի լսեմ քեզի՝ երբոր քու
ամբաստանողներդ ալ գան. և հրաման ըրաւ որ
զանիկայ նՀերովդէսին պալատը պահեն:

ԳԼ. ԻԴ

1 Պօղոս Տերտիւղոսէն ամբաստանուած՝ 10 պատասխան կու
տայ իր վարքին և վարդապետութեանը համար. 24 կը քա-
րոզէ Քրիստոս կուսակալին ու անոր տիկնոջը. 26 Կուսա-
կալը կը յուսայ կաշառք առնել Պօղոսէն. 27 վերջապէս իր
պաշտօնէն ելլելով՝ Պօղոսը կապուած կը թողու:

1 Ու ոհինգ օրէն ետքը չԱնանիա քահանայապե-
տը ծերերուն հետ ու Տերտիւղոս անուն ճար-
տասանի մը հետ իջաւ. և ատոնք կուսակալին իմա-
ցուցին իրենց ամբաստանութիւնը Պօղոսին դէմ:
2 Ու երբոր կանչեցին անիկայ, Տերտիւղոս սկսաւ
ամբաստանել ու ըսել, Որովհետև քու ձեռքովդ
շատ խաղաղութիւն, ու քու խնամքովդ աս ազգին
բաներուն աղէկ կարգադրութիւնը կը վայելենք,
3 Ամէն կերպով ու ամէն տեղ բոլորովին գոհ ըլլա-
լով՝ շնորհակալ ենք՝ ո՛վ պատուական Փելիքս:
4 Բայց չըլլայ որ ալ աւելի ձանձրութիւն տամ
քեզի, կ'աղաչեմ որ քու քաղցրութեամբդ մեզի
ականջ դնես, որ համառօտաբար պիտի խօսինք:
5 պԻնչու որ մենք աս մարդը գտանք ապականիչ և
խռովարար բոլոր Հրէաներուն որ աշխարհիս մէջ
6 են, և Նազովրեցւոց աղանդին առաջնորդ. ջՈր
տաճարն ալ ուզեց պղծել. որն որ բռնեցինք,

մ Գլ. իա. 39.
յ Գլ. իդ. 1, 10. իե. 16.
ն Մատ. իէ. 27.
ո Գլ. իա. 27.
չ Գլ. իդ. 2, 30, 35. իե. 2.
պ Ղու. իգ. 2. Գլ. գ. 13. ժգ. 20. ժէ. 6. իա. 28. ա Պետ. բ. 12, 15.
ջ Գլ. իա. 28.

ե ու մեր օրէնքին համեմատ ուզեցինք դատաստանը
7 ընել ․ Բայց զ Լիւսիաս հազարապետը եկաւ մեծ
8 բռնութեամբ մեր ձեռքէն առաւ , Եւ է հրաման
ըրաւ որ անոր դատախազները քեզի գան , որն որ
դուն քննելով՝ կարող պիտի ըլլաս տեղեկանալ
ան ամէն բաներուն , որոնց համար մենք ամբաս-
9 տանութիւն կ'ընենք անոր վրայ ։ Հրեաներն ալ
ամէնը մէկ եղած՝ ըսին թէ Այդպէս է ։
10 Պատասխան տուաւ Պօղոս ,(երբոր կուսակալը
անոր աչք ըրաւ որ խօսի ․) Գիտնալով որ շատ
տարիներէ հետէ դուն աս ազգին դատաւորն ես ,
աւելի յօժարութեամբ ինծի վերաբերեալ բանե-
11 րուն համար պատասխան կու տամ ․ Որովհետեւ
կրնաս գիտնալ որ ես տասներկու օրէն աւելի չէ
քանի որ Երուսաղէմ ելայ ը երկրպագութիւն ընե-
12 լու ։ թ Եւ զիս տաճարին մէջ մէկու մը հետ վիճա-
բանութիւն ընելու վրայ՝ կամ բազմութիւնը մէկ-
տեղ ժողված չգտան , ոչ ալ ժողովարաններուն
13 մէջ , Եւ ոչ քաղաքին մէջ ․ ոչ ալ կրնան ա-
պացուցանել ան բաները , որոնց համար հիմա ամ-
14 բաստանութիւն կ'ընեն ինծի դէմ ։ Բայց աս կը
խոստովանիմ քեզի թէ ժ ան ճամբուն համեմատ
որ անոնք հերձուած կ'ըսեն , ես անանկ կը պաշ-
տեմ իմ ի հայրենի Աստուածս , հաւատալով ան
ամէն բաներուն որ Օրինաց և մարգարէից մէջ
15 գրուած են ։ խ Եւ յոյս ունիմ առ Աստուած՝ ին-
տոր որ անոնք ալ ակնկալութիւն ունին , որ մե-
ռելոց յարութիւն պիտի ըլլայ , ծ թէ արդարնե-
16 րուն և թէ մեղաւորներուն ։ կ Եւ ես աս բանիս
համար կը ջանամ , որ ամէն ատեն մաքուր

ե Յոհ. ժը. 31 ։
զ Գլ. իա. 33 ։
է Գլ. իգ. 30 ։
ը Հմր 17 ։ Գլ. իա. 26 ։
թ Գլ. իե. 8 ։ իը. 17 ։
ժ Տես Ամով. ը. 14։ Գլ. թ. 2։
ի բ Տիմ. ա. 3 ։
լ Գլ. իզ. 22 ։ իը. 23 ։
խ Գլ. իգ. 6 ։ իզ. 6, 7 ։ իը. 20 ։
ծ Դան. ժբ. 2 ։ Յոհ. ե. 28, 29 ։
կ Գլ. իգ. 1 ։

, խղճմտանք ունենամ Աստուծոյ առջևը ու մարդոց
17 առջևը ։ Արդ ես շատ տարիներէ ետև հ եկայ իմ
ազգիս ողորմութիւններ բերելու ու ընծաներ
18 տալու ․ ձ Ասանկով քանի մը Ասիացի Հրեաներ
զիս տաճարին մէջը մաքրուած գտան՝ ոչ բազմու-
19 թիւնով և ոչ ամբոխով , ղ Որ անոնց պէտք էր
առջևդ գալ ու ամբաստանութիւն ընել , թէ որ
20 իմ վրայովս ըսելու բան մը ունէին ․ Կամ թէ ա-
սոնք իրենք թող ըսեն՝ ինչ անիրաւութիւն գտան
21 իմ վրաս , երբոր ատեանը կայներ էի ․ Միայն թէ
աս մէկ խօսքիս համար՝ որ երբ մէջերնին կայներ էի ,
կանչեցի թէ ճ Մեռելոց յարութեանը համար ես
22 այսօր ձեզմէ կը դատուիմ ։ Եւ Փելիքս ուրիշ
անգամի թողուց անոնք , ինչու որ աղէկ տեղե-
կութիւն ունէր ան ճամբուն վրայով ․ ու ըսաւ ,
Երբոր մ Լիւսիաս հազարապետը հոս իջնէ , պիտի
23 քննեմ ձեր գործը ։ Եւ հարիւրապետին հրաման
ըրաւ որ զանիկայ պահէ , և ընդարձակութիւն
տայ , յ ու իրեններէն մէկը չարգիլէ անոր սպասա-
ւորութիւն ընելէն կամ անոր քովը երթալէն ։
24 Եւ քանի մը օրէն ետև Փելիքս եկաւ իր Դրու-
սիղա կնկանը հետ որ Հրեայ էր , ու Պօղոսը
կանչել տուաւ , և լսեց անկէ ան հաւատքին
25 համար որ Քրիստոս Յիսուսի վրայ է ։ Ու երբոր
անիկայ արդարութեան ու ժուժկալութեան և
գալու դատաստանին վրայով կը խօսէր , Փելիքս
զարհուրելով պատասխան տուաւ , Դուն հիմա
գնա , ու երբոր ժամանակ ունենամ՝ ես քեզ նորէն
26 կը կանչեմ ։ Նաև յոյս ունէր որ ն Պօղոսին կող-
մէն իրեն ստակ * տրուի , անոր համար շատ ան-

հ Գլ. ժա. 29, 30 ։ ի. 16 ։ Հռով. ժե. 25 ։ բ Կոր. ը. 4 ։ Գաղ. բ. 10 ։
ձ Գլ. իա. 26, 27 ։ իգ. 21 ։
ղ Գլ. իգ. 30 ։ իե. 16 ։
ճ Գլ. իգ. 6 ։ իը. 20 ։
մ Հմր 7 ։
յ Գլ. իէ. 3 ։ իը. 16 ։
ն Ել. իգ. 8 ։
* Ոմանք՝ տրուի , որ զանիկայ արձակէ ,

գամ կանչել կու տար զանիկայ ու հետը կը խօ-
27 սակցէր : Բայց երկու տարի որ եղաւ, Փելիքսին
տեղը Պորկիոս Փեստոս եկաւ. Փելիքս ալ
ն Հրեաներուն շնորհք ընել ուզելով, Պօղոսը
կապուած թողուց :

ԳԼ. ԻԵ

2 Հրեայք Պօղոսին դէմ ամբաստանութիւն կ'ընեն Փեստոսին առջեւ ։ 8 Պօղոս պատասխան կու տայ, 11 և Կայսրին կը բողոքէ ։ 14 Ետքը Փեստոս անոր գործը կը պատմէ Ագրիպպաս թագաւորին, 23 և Պօղոսը անոր առջեւ բերել տալով, 25 կը ծանուցանէ թէ անիկայ մահուան արժանի բան մը ըրած չէ ։

1 Արդ՝ երբոր Փեստոս իր իշխանութեանը գաւառը
հասաւ, իրեք օրէն ետեւ Կեսարիայէն Երուսա-
2 ղէմ ելաւ : ա Ու քահանայապետը ու Հրէից
գլխաւորները անոր իմացուցին իրենց ամբաստանու-
3 թիւնը Պօղոսին դէմ, Ու կ'աղաչէին իրեն ու
շնորհք կը խնդրէին անոր դէմ, որ զանիկայ Ե-
րուսաղէմ բերել տայ. բ ու իրենք դարան կը
պատրաստէին ճամբուն մէջ զանիկայ սպաննելու :
4 Բայց Փեստոս պատասխան տուաւ, որ Պօղոսը
Կեսարիայի մէջ պահուի, և որ ինքը շատ չան-
5 ցած հոն պիտի երթար : Ուստի ձեզմէ որոնք որ
կարող են՝ ըսաւ, իմ հետս թող իջնեն, գ և թէ
որ այն մարդուն վրայ յանցանք մը կայ, թող անոր
6 դէմ ամբաստանութիւն ընեն : Ու հոն ութը
կամ՝ տասը օրէն աւելի չկենալով, Կեսարիա
իջաւ. ու հետեւեալ օրը ատեանը նստելով՝ հրա-
7 ման ըրաւ որ Պօղոսը բերեն : Ու երբոր անիկայ
եկաւ, Երուսաղեմէն իջնող Հրեաները անոր բո-
լորտիքը կայնելով, դ շատ ու ծանր ամբաստանու-
թիւններ կը բերէին Պօղոսին դէմ, որոնք չէին

ն Եւ. իդ. 2 ։ Գլ. ժբ. 3 ։
ա իե. 9, 14 ։
բ Գլ. իգ. 1 ։ Հմր 15 ։
գ Գլ. իգ. 12, 15 ։
դ Գլ. ժբ. 14 ։ Հմր 18 ։
ե Մար. ժե. 3 ։ Ղու. իգ. 2, 10 ։ Գլ. իգ. 5, 13 ։

8 կրնար ապացուցանել. Ինչու որ Պօղոս պատաս-
խան կու տար թէ ե Ես ոչ Հրեաներուն օրէն-
քին և ոչ տաճարին՝ ոչ ալ Կայսրին դէմ յան-
9 ցանք մը ըրած եմ : Բայց Փեստոս Հուզելով
որ Հրեաներուն շնորհք ընէ, պատասխան տուաւ
Պօղոսին ու ըսաւ, զ Կ'ուզե՞ս Երուսաղէմ ելլել,
և հոն աս բաներուն վրայով իմ առջեւս դատուիլ :
10 Պօղոս ալ ըսաւ, Կայսրին ատեանը կայներ եմ,
ուր որ պէտք է ինծի դատուիլ. ես Հրեաներուն
անիրաւութիւն մը ըրած չեմ, ինչպէս որ դուն ալ
11 աղէկ գիտես : է Քանզի թէ որ անիրաւութիւն
մը և մահուան արժանի բան մը ըրած եմ, ես մեռ-
նելէն չեմ քաշուիր. բայց թէ որ չկայ իմ վրաս ան
բաներէն մէկն ալ՝ որոնց համար ասոնք ինծի դէմ
ամբաստանութիւն կ'ընեն, մէկը չկրնար զիս ա-
12 սոնց շնորհել : ը Կայսրին կը բողոքեմ : Ան ա-
տենը Փեստոս խորհրդականաց հետ խօսելով՝ պա-
տասխան տուաւ թէ, Կայսրին բողոքեցիր, Կայս-
րին պիտի երթաս :
13 Ու քանի մը օր անցնելէն ետեւ՝ Ագրիպպաս թա-
գաւորը և Բերենիկէ Կեսարիա եկան Փեստոսը
14 ողջունելու : Ու շատ օրեր որ հոն անցուցին,
Փեստոս Պօղոսին համար թագաւորին իմացուց
ու ըսաւ, թ Հոս մարդ մը կայ՝ որն որ Փելիքս
15 բանտարկուած թողուցեր է, ժ Որուն վրայով՝
երբոր Երուսաղէմ գացի, քահանայապետները ու
Հրէից ծերերը իմացուցին ինծի, և կը խնդրէին
որ անոր դէմ դատապարտութեան վճիռ տրուի.
16 ի Որոնց պատասխան տուի թէ Հռոմայեցւոց
սովորութիւնը չէ մարդ մը կորսնցնելու շնորհել,

ե Գլ. դ. 13 ։ իդ. 12 ։ իը. 17 ։
զ Գլ. իդ. 27 ։
է Հմր 20 ։
ը Հմր 25 ։ Գլ. ժը. 14 ։ իգ. 29 ։ իգ. 31 ։
թ Գլ. իդ. 32 ։ իը. 19 ։
ժ Գլ. իդ. 27 ։
ի Հմր 2, 3 ։
լ Հմր 4, 5 ։

մինչև որ ամբաստանուածը ամբաստանողները դի-
մացը չունենայ , ու ան ամբաստանութեանը պա-
տասխան տալու պատեհութիւն չառնու իրեն ։
17 Ուստի երբոր անոնք իմ հետս հոս եկան , ե ամե-
նևին չուշացուցի , հապա հետևեալ օրը ատեանը
18 նստելով՝ հրաման ըրի որ մարդը բերեն ։ Անոր
դատախազներն ալ ներկայանալով , իմ կասկած
ըրած յանցանքներէս մէկն ալ յառաջ չէին բերեր ։
19 ժ Հապա մէկ քանի խնդիրներ ունէին անոր հետ
իրենց կրօնքին վրայ , և Յիսուս անունով մեռածի
մը վրայ , որուն համար Պօղոս կ'ըսէր թէ կենդա-
20 նի է ։ Ու երբոր տարակուսանքի մէջ էի աս բա-
նիս քննութեանը վրայով , ըսի թէ Կ'ուզե՞ս Ե-
րուսաղէմ երթալ , և հոն աս բաներուն համար
21 դատուիլ ։ Բայց Պօղոս երբոր բողոքեց որ պա-
հուի Սեբաստափառ Կայսրին դիմացը ելլելու , հրաման
ըրի որ զինքը պահեն՝ մինչև որ Կայսրին խրկեմ ։
22 Եւ ի Ագրիպպաս ըսաւ Փեստոսին , Ես ալ կ'ու-
զէի աս մարդը մտիկ ընել ։ Ան ալ ըսաւ , Վաղը
մտիկ կ'ընես ։
23 Ու հետևեալ օրը երբոր Ագրիպպաս ու Բերի-
նիկէ մեծ հանդէսով եկան ու ատեանը մտան հա-
զարապետներով և քաղաքին պատուաւոր մար-
դիկներովը մէկտեղ , Փեստոս ալ հրաման ընե-
24 լով՝ բերին Պօղոսը ։ Եւ ըսաւ Փեստոս , Ագ-
րիպպա՛ս արքայ՝ և դուք ալ բոլոր մարդիկ որ մեր
հետն էք , ասիկայ կը տեսնէք ։ ասոր վրայով
ձ Հրէից բոլոր բազմութիւնը ինծի ներկայացան
Երուսաղէմի մէջ և հոս ալ , ու կ'աղաղակէին թէ
25 ձ Պէտք չէ որ ալ ասիկայ ողջ մնայ ։ Բայց ես որ
հասկըցայ թէ մահուան արժանի բան մը

ե Հմր 6 ։
ժ Գլ. ժը. 15 ։ իգ. 29 ։
է Գլ. Թ. 15 ։
ձ Հմր 2 ։ 3 , 7 ։
ձ Գլ. իբ. 22 ։
ղ Գլ. իգ. 9 , 29 ։ իզ. 31 ։

ըրած չէ , ե և ինքը որ Սեբաստափառ Կայսրին բողո-
26 քեց , որոշեցի որ խրկեմ զանիկայ ։ Որուն հա-
մար մէկ հաստատ բան մը չունիմ գրելու իմ տի-
րոջս ։ ուստի ասիկայ ձեր առջևը բերի , և մա-
նաւանդ քու առջևդ՝ ով Ագրիպպաս արքայ , որ-
պէս զի քննութիւն ըլլալէն ետև՝ գրելու բան մը
27 ունենամ ։ Ինչու որ ինծի անվայել կ'երևնայ որ
մէկ բանտարկեալ մը խրկեմ , և անոր վրայ
դրուած յանցանքները չիմացընեմ ։

ԳԼ. ԻԶ.

2 Պօղոս Ագրիպպասին առջևը կը պատմէ իր վարքը իր տղա-յութենէն 'ի վեր ։ 12 և հրաշքով իր դարձի գալը ու առա-քելական պաշտօնին կանչուիլը ։ 24 Փեստոս յիմար կը կոչէ զՊօղոս , բայց անիկայ պարկեշտութեամբ կը պա-տասխանէ ։ 28 Ագրիպպաս գրեթէ կը համոզուի քրիստո-նեայ ըլլալու ։ 31 Բոլոր ժողովականները կը խոստովանին անոր անմեղ ըլլալը ։

1 Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսին , Հրաման է քեզի
որ դուն քեզի համար խօսիս ։ Ան ատենը Պօղոս
ձեռքը երկնցընելով իրեն համար պատասխան
2 տուաւ . Հրէաներուն իմ վրաս ըրած բոլոր ամբաս-
տանութիւններուն համար՝ ով Ագրիպպաս արքայ՝
ես զիս երանելի կը սեպեմ , որ այսօր քու առջևդ
3 պատասխան պիտի տամ ։ Մանաւանդ որ դուն
Հրէաներուն բոլոր սովորութիւնները և խնդիրնե-
րը աղէկ գիտես , անոր համար կ'աղաչեմ որ եր-
4 կայնմտութեամբ ինծի մտիկ ընես ։ Արդ իմ
մանկութենէս 'ի վեր իմ ինչպէս ապրելս՝ սկիզ-
բէն Երուսաղէմ իմ ազգիս մէջը ըլլալովս , բոլոր
5 Հրէաները տեղեակ են ։ Ինծի առաջուց 'ի
վեր զիս գիտեն , (թէ որ ուզեն վկայել ,) ա որ
մեր կրօնքին պինդ զգուշաւոր ճամբուն պէս փա-
6 րիսեցի ապրեր եմ ։ ե Եւ հիմա ատեանը կեցեր կը

ն Հմր 11 , 12 ։ 15 ։ 21 ։ Փիլ. գ. 5 ։
ա Գլ. իբ. 3 ։ իգ. 6 ։ իդ. ։
ե Գլ. իգ. 6 ։

դատուիմ՝ Աստուծմէ մեր հայրերուն եղած զ խոստ-
7 մունքին յուսոյն համար . Որ է մեր տասուերկու-
ցեղը անդադար ը գիշեր ու ցորեկ պաշտելով՝ թ կը
յուսան անոր հասնելու . ես աս յոյսին համար
Հրեաներէն կ'ամբաստանուիմ՝ ով Ագրիպպաս
8 թագաւոր : Ի՞նչ . չհաւատալի՞ բան կ'երևնայ
ձեզի թէ Աստուած մեռելները կը յարուցանէ :
9 ի Ես ինքս ալ ինծի պարտք կը սեպէի Յիսուս
Նազովրեցիին անուանը դէմ շատ բաներ ընել .
10 լ Որ ըրի ալ Երուսաղէմի մէջ , և խ Քահանայա-
պետներէն իշխանութիւն առած՝ սուրբերէն շատե-
րը բանտարկեցի , ու անոնց սպաննուած ատենը
11 հաւանութիւն տուի : ծ Եւ բոլոր ժողովարան-
ներուն մէջը շատ անգամ զանոնք պատժելով՝ կը
բռնադատէի որ հայհոյեն , և անոնց դէմ սաստիկ
կատղած՝ մինչև օտար քաղաքները կը հալածէի :
12 կ Ասանկով երբոր Դամասկոս ալ կ'երթայի՝ քա-
հանայապետներէն իշխանութիւն ու հրաման ա-
13 ռած , Կէս օրուան ատենը ճամբուն վրայ՝ ով թա-
գաւոր , երկինքէն լոյս մը տեսայ արևին լուսաւո-
րութենէն աւելի՝ բոլորտիքս ծագած , նաև անոնց
14 բոլորտիքը որ իմ հետս կ'երթային : Եւ երբոր
մենք ամէնքս գետինը ինկանք , ձայն մը լսեցի որ
Եբրայական լեզուով ինծի կ'ըսէր , Սաւուղ՝ Սաւ-
ուղ , ինչո՞ւ զիս կը հալածես . դժուար բան է
15 քեզի խթանի դէմ կից զարնել : Ես ալ ըսի ,
Դուն ո՞վ ես՝ Տէ՛ր . և անիկայ ըսաւ , Ես եմ Յի-

զ Ծն . գ . 15 ; իբ . 18 ; իզ . 4 ; իթ . 10 ; բ Օր . ժը . 15 ; բ Թագ . է . 12 ; Սաղ . ճլբ . 11 ; Ես . գ . 2 ; է . 14 ; թ . 6 ; խ . 10 ; Երեմ . իգ . 5 ; լգ . 14 , 15 , 16 ; Եզեկ . լդ . 23 ; լէ . 24 ; Դան . թ . 24 ; Միք . է . 20 ; Գլ . ժգ . 32 ; Հռով . ժե . 8 ; Տիտ . բ . 13 ;
է Յակ . ա . 1 ;
ը Ղու . բ . 37 ; ա Տիմ . ե . 5 ; ա Թես . գ . 10 ;
թ Փիլ . գ . 11 ;
ի Յոհ . ժզ . 2 ; ա Տիմ . ա . 13 ;
լ Գլ . ը . 3 ; Գաղ . ա . 13 ;
խ Գլ . թ . 14 , 21 ; իբ . 5 ;
ծ Գլ . իբ . 19 ;
կ Գլ . թ . 3 ; իբ . 6 ;

16 սուսը որ դուն կը հալածես . Բայց՝ ելի՛ր ու ոտքիդ-
վրայ կայնէ . Ինչու որ ասոր համար քեզի երևցայ ,
հ որ քեզ ձեռք առնեմ պաշտօնեայ և վկայ ըլլալու
ան բաներուն որ տեսար ; ու ան բաներուն որոնց-
17 մով պիտի երևնամ քեզի , Քեզ ազատելով աս
ժողովուրդէն ու հեթանոսներէն , ձ որոնց հիմա
18 քեզ կը ղրկեմ , ղ Անոնց աչքերը բանալու ,
ճ խաւարէն՝ լոյսի , ու Սատանայի իշխանութենէն
Աստուծոյ դարձնելու , մ որ անոնք մեղաց թո-
ղութիւն առնեն , յ և սուրբերուն հետ ն մասնակից
19 ըլլան ինծի հաւատալով : Ուստի՝ Ագրիպպա՛ս
թագաւոր՝ ան երկնային տեսիլքին անհնազանդ չեղայ
20 ես . շ Հապա առաջ Դամասկոս ու Երուսաղէմ
եղողներուն , և բոլոր Հրէաստանի երկիրը ու հե-
թանոսներուն քարոզեցի որ ապաշխարեն , ու Աս-
տուծոյ դառնան , ո և ապաշխարութեան արժա-
21 նաւոր գործքեր գործեն : Ասոր պատճառով չ Հրէ-
աները զիս տաճարին մէջը բռնեցին , և կը ջա-
22 նային որ սպաննեն : Սակայն Աստուծմէ օգնու-
թիւն հասնելով՝ մինչև աս օրս ողջ մնացի , պզտի-
կին ու մեծին վկայութիւն տալով , բան մը չըսե-
լով ան բաներէն դուրս՝ որ պ մարգարէները և
23 ջ Մովսէս խօսեցան թէ պիտի ըլլային . ռ Թէ
Քրիստոս պիտի չարչարուէր , ս և թէ անիկայ
պիտի առաջ մեռելներէն յարութիւն առած՝ տ լոյս

հ Գլ . իբ . 15 ;
ձ Գլ . իբ . 21 ;
ղ Ես . լե . 5 ; խբ . 7 ; Ղու . ա . 79 ; Յոհ . ը . 12 ; բ Կոր . դ . 4 ; Եփե . ա . 18 ; ա Թես . ե . 5 ;
ճ բ Կոր . զ . 14 ; Եփե . դ . 18 ; ե . 8 ; Կող . ա . 13 ; ա Պետ . բ . 9 , 25 ;
մ Ղու . ա . 77 ;
յ Գլ . ի . 32 ;
ն Եփե . ա . 11 ; Կող . ա . 12 ;
շ Գլ . թ . 20 , 22 , 29 ; ժա . 26 ; ժգ . ժդ . ժզ . ժէ . ժը . ժթ . ի . իա ;
ո Մատ . գ . 8 ;
չ Գլ . իա . 30 , 31 ;
պ Ղու . իդ . 27 , 44 ; Գլ . իդ . 14 ; իը . 23 ; Հռով . գ . 21 ;
ջ Յոհ . ե . 46 ;
ռ Ղու . իդ . 26 , 46 ;
ս ա Կոր . ժե . 20 ; Կող . ա . 18 ; Յայտ . ա . 5 ;

պիտի քարոզէր ժողովուրդին ու հեթանոսներուն։
24 Եւ քանի որ անիկայ ասանկ պատասխան կու-
տար իրեն համար, Փեստոս բարձր ձայնով մը ը-
սաւ, Կը խելագարիս Պօղոս. շատ կարդացո-
25 ղութիւնդ քեզ կը յիմարեցնէ։ Պօղոս ալ
ըսաւ, Ես չեմ խելագարիր՝ ով պատուական
Փեստոս, հապա ճշմարտութեան և զգաստութեան
26 խօսքեր կը գրուցեմ։ Քանզի աս բաները թա-
գաւորը գիտէ, որուն առջեւը ես ալ համարձակ կը
խօսիմ. ինչու որ չեմ կարծեր թէ ասոնցմէ մէկ
բան մը անկէ ծածկուած ըլլայ, վասն զի աս բանը
27 մէկ անկիւնի մը մէջ եղած չէ։ Մարգարէներուն
կը հաւատա՞ս Ագրիպպա՛ս արքայ. գիտեմ որ կը
28 հաւատաս։ Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսին,
Քիչ մնաց որ զիս համոզես քրիստոնեայ ըլլալու։
29 Պօղոս ալ ըսաւ. Աստուծմէ կը խնդրէի որ թէ
քիչով և թէ շատով՝ չէ թէ մինակ դուն, հապա
ամէնքն ալ որ այսօր ինծի կը լսեն, անանկ ըլլան
ինչպէս որ ես եմ, աս կապերէս 'ի զատ։
30 Ասոր վրայ ելաւ թագաւորը և կուսակալը ու
Բերենիկէ, և անոնք որ իրենց հետը նստեր էին։
31 Ու դուրս ելլելէն ետեւ, իրարու հետ խօսեցան ու
ըսին թէ Աս մարդը մեռնելու կամ կապուելու
32 արժանի բան մը չըներ։ Ագրիպպաս ալ Փեստոսին
ըսաւ, Կարելի էր աս մարդը արձակել, եթէ որ
Կայսրին բողոքած չըլլար։

դ Ղու. բ. 32։
ե Դ Թագ. Թ. 11։ Յոհ. Ժ. 20։ Ա Կոր. Ա. 28։ Բ. 13, 14։ Դ. 10։
զ Ա Կոր. Է. 7։
է Գլ. Իգ. 9, 29։ Իե. 25։
ը Գլ. Իե. 11։

ԳԼ. ԻԷ

1 Պօղոս նաւով ճամբայ կ'ելլէ Հռոմ երթալու. 10 կը նախաձայնէ ճամբուն վտանգները, 11 բայց իր խօսքին չեն հաւատար։ 14 Սակայն ալէկոծութեան կը պատահին, 41 և նաւաբեկութիւն կը կրեն, 44 բայց ամէնքն ալ անվտանգ ցամաքը կ'ելլեն։

1 Երբոր որոշուեցաւ որ նաւով Իտալիա երթանք,
Պօղոս և ուրիշ քանի մը կապուածներ յանձ-
նեցին հարիւրապետի մը՝ որուն անունը Յուլիոս
2 էր, Օգոստեան գունդէն։ Եւ մէկ Ադրամիւ-
տացի նաւ մը մտնելով ճամբայ ելանք, ու Ասիայի
կողմերէն պիտի նաւէինք. Թեսաղոնիկէէն եղող
Արիստարքոս Մակեդոնացին ալ մեր հետն էր։
3 Եւ հետեւեալ օրը Սիդոն իջանք. և Յուլիոս
մարդասիրութիւն ցուցընելով Պօղոսին՝ հրաման
տուաւ որ բարեկամներուն երթայ ու դարման
4 գտնէ։ Եւ անկէ ելլելով՝ Կիպրոսին վարի կողմէն
5 նաւեցինք հովը դէմ ըլլալուն համար։ Ետքը
Կիլիկիայի ու Պամփիւլիայի ծովուն մէջտեղէն
6 նաւելով՝ Լիկիայի Միւռա քաղաքը իջանք։ Եւ
հարիւրապետը հոն Աղեքսանդրացի նաւ մը գտնե-
լով՝ որ Իտալիա կ'երթար, մեզ անոր մէջ մտց-
7 ուց։ Եւ շատ օրեր կամաց կամաց նաւելով՝ հա-
զիւ թէ Կնիդոսին քովերը հասանք. և հովը մեզի
դէմ ըլլալով՝ Կրետէին վարի կողմէն Սաղմոնայի
8 քովէն նաւեցինք։ Եւ դժուարաւ անկէ անցնելով՝
մէկ տեղ մը եկանք, որ Գեղեցիկ նաւահանգիստ
կ'ըսուէր, որուն մօտ էր Ղասեա քաղաքը։
9 Ու երբոր շատ ժամանակ անցաւ, և նաւին ճամ-
բայ ելլելն ալ վտանգաւոր էր, ծոմին ատենն
ալ արդէն անցած ըլլալով, Պօղոս խրատ կու-
10 տար, Եւ կ'ըսէր անոնց, Մարդիկ՝ ես կը տեսնեմ
որ աս նաւիս ճամբայ ընելը տառապանքով ու շատ
վնասով պիտի ըլլայ, չէ թէ մինակ բեռին ու
11 նաւին՝ հապա մեր անձերուն ալ։ Բայց հարիւրա-
պետը աւելի նաւապետին և նաւատէրին միտ կ'ը-
12 նէր, քան թէ Պօղոսին խօսքերուն։ Եւ որովհետեւ
ան նաւահանգիստը յարմար չէր ձմեռը հոն անցը-
նելու, շատերը խորհեցան անկէ երթալ, որ

ա Գլ. Իե. 12, 25։
բ Գլ. Ժթ. 29։
գ Գլ. Իդ. 23։ Իը. 16։
դ Ղև. Իգ. 27, 29։

'գուցէ կարող ըլլան Փիւնիկէ հասնելու ու ձմեռը
հոն կենալու, որ Կրետէի նաւահանգիստ մըն է,
ու դէպ 'ի հարաւ և արևմուտեան հիւսիս կը նայի։
13 Ու երբոր հարաւային մեղմ հով մը փչեց, կար-
ծելով թէ իրենց դիտաւորութեանը հասեր են,
ճամբայ ելան ու Կրետէին քովէրէն կ'անցնէին։
14 Եւ շատ ատեն չանցած՝ մրրկալից հով մը ելաւ ա-
15 նոր դէմ, որ Եւրակիկլոն կ'ըսուի։ Երբոր նաւը
յափշտակուեցաւ, և հովին դէմ չկրցաւ դիմանալ,
16 թող տուած կ'երթայինք ու կու գայինք. Եւ դէպ
'ի մէկ փոքր կղզիի մը տակի կողմը դիմելով՝ որ
Կղօդա կ'ըսուէր, հազիւ կրցանք մակոյկը բռնել.
17 Որն որ առին՝ ու օգնութիւններ գործածելով նաւը
տակէն կապեցին. և վախնալով որ չըլլայ թէ
*յորձանուտը իյնան, առագաստը իջեցուցած ա-
18 նանկ կ'երթային ու կու գային։ Եւ սաստիկ ալէ-
կոծութեան մէջ որ էինք, հետևեալ օրը բեռերը
19 դուրս նետեցին։ Ու երրորդ օրը Ե նաւին գործիք-
20 ները ձեռքովնիս դուրս նետեցինք։ Ու երբոր շատ
օրեր ոչ արև՝ ոչ ալ աստղեր կ'երևնային, և փո-
թորիկը քիչ չէր վրանիս, ալ բոլորովին մեր ա-
21 զատուելու յոյսը վերցաւ։ Եւ որովհետև շատ
օրերէ 'ի վեր անօթի էին, ան ատենը Պօղոս ա-
նոնց մէջը կայնելով ըսաւ. Ով մարդիկ՝ պէտք էր
ձեզի որ ինծի մտիկ ընէիք ու Կրետէէն չելլէիք,
22 և աս տառապանքը ու վնասը չքաշէիք։ Ու հիմա
ձեզ կը յորդորեմ որ սիրտ առնէք, քանզի ձեզմէ
մէկուն անձին վնաս մը պիտի չըլլայ՝ բայց միայն
23 նաւին. Զ Ինչու որ աս գիշեր երևցաւ ինծի ան
Աստուծոյն հրեշտակը, որ ես Անորն եմ Է ու զԱ-
24 նիկայ կը պաշտեմ. Եւ ըսաւ, Մի վախնար Պօ-
ղոս՝ Կայսրին դիմացը պէտք է որ ելլես դուն. և

* Կամ ծանծաղուտը

Ե Յովն. ա. 5։

Զ Գլ. իգ. 11։
Է Դան. զ. 16։ Հռով. ա. 9։
բ Տիմ. ա. 3։

ահա Աստուած քեզի շնորհեց ան ամէնը՝ որ քու
25 հետդ նաւին մէջն են։ Ասոր համար՝ սիրտ առէք,
Ը ինչու որ ես կը հաւատամ Աստուծոյ՝ որ անանկ
պիտի ըլլայ, ինչպէս որ ինծի զրուցուեցաւ,
26 Միայն թէ պէտք է որ Թ մէկ կղզի մը իյնանք։
27 Ու երբոր տասնուչորսերորդ գիշերն էր որ Ադ-
րիական ծովուն մէջ կը տարուբերէինք, կէս
գիշերին նաւավարները կը կարծէին թէ մէկ
28 երկրի մը մօտեցեր են. Եւ գնտակը ձգելով՝ քսան
գրկաչափ գտան. ու քիչ մըն ալ յառաջ երթա-
լով՝ նորէն ձգեցին, և տասնուհինգ գրկաչափ գը-
29 տան. Ու վախնալով որ չըլլայ թէ քարոտ տե-
ղուանք իյնան, ետևի կողմէն չորս խարիսխ ձգե-
30 ցին, և առտու ըլլալուն կը փափաքէին։ Իսկ
նաւավարները նաւէն փախչիլ ուզելով՝ մակոյկը
ծովը իջեցուցին, պատճառելով որպէս թէ առջևի
31 կողմէն ալ խարիսխներ պիտի ձգեն։ Բայց Պօ-
ղոս ըսաւ հարիւրապետին ու զինուորներուն. Թէ
որ ասոնք նաւին մէջը չկենան՝ դուք չէք կրնար ա-
32 զատիլ։ Ան ատենը զինուորները մակոյկին
չուանները կտրեցին, և թողուցին որ դուրս իյ-
33 նայ։ Ու երբոր առտու ըլլալու վրայ էր, Պօղոս
կ'աղաչէր ամենուն որ կերակուր ուտեն, ըսելով.
Այսօր տասնուչորս օր է՝ որ դուք սպասելով անօ-
34 թի մնացեր էք, ու բան մը կերած չէք։ Ասոր
կ'աղաչեմ ձեզի որ կերակուր ուտէք, ինչու որ աս
ալ ձեր ազատութեանը համար է, Ժ քանզի ձեզմէ
35 մէկուն գլխէն մազ մը պիտի չկորսուի։ Եւ այս-
պէս ըսելով, հաց առաւ, ու Ի ամենուն առջևը
Աստուծմէ գոհացաւ, և կտրելով սկսաւ ուտել։
36 Եւ ամէնն ալ սիրտ առին, ու իրենք ալ կերա-

Ը Ղու. ա. 45։ Հռով. դ. 20,
21։ բ Տիմ. ա. 12։
Թ Գլ. իը. 1։
Ժ գ Թագ. ա. 52։ Մատ. ժ.
30։ Ղու. ժբ. 7։ իա. 18։
Ի ա Թագ. Թ. 18։ Մատ. ժե.
36։ Մար. ը. 6։ Յով. զ.
11։ ա Տիմ. դ. 3, 4։

37 կուր կերան ։ Եւ նաւին մէջը ամէնքս երկու հա-
38 րիւր եօթանասունըվեց հոգի էինք ։ Երբոր կշտ-
տացան կերակուրով՝ նաւը թեթեւցուցին՝ ցորենը
ծովը թափելով ։
39 Ու երբոր առտու եղաւ, ցամաքը չէին ճանչ-
նար, միայն թէ մէկ ծոց մը կը նշմարէին որ ծո-
վեզերք ունէր, ու կը խորհէին որ եթէ կարելի է
40 նաւը անոր մէջը մտնեն ։ Եւ խարիսխները կտրե-
լով՝ ծովը ձգեցին, ու ղեկերուն կապերը թու-
ցուցին, և առագաստը հովին բանալով՝ դէպ 'ի
41 ան ծովեզերքը կ'երթային ։ Եւ անանկ տեղ մը
իյնալով որ երկու կողմը ծով էր, ՝նաւը նստե-
ցուցին. և նաւին առջեւի կողմը խրելով՝ անշարժ
մնաց, ու ետեւի կողմը ալիքներուն սաստկու-
42 թենէն կը քակուէր ։ Զինուորներն ալ խոր-
հուրդ ըրին որ կապուածները սպաննեն, որ չըլ-
43 լայ թէ մէկը լողայ ու փախչի ։ Բայց հարիւրա-
պետը որ Պօղոսը ազատել կ'ուզէր, արգիլեց
զանոնք ան խորհուրդէն, և հրաման ըրաւ թէ
որոնք որ կրնան լողալ, թող անոնք առաջ նե-
44 տուին ու ցամաքը ելլեն. Եւ մնացածները՝ ոմանք
տախտակներով և ոմանք նաւին ուրիշ բաներովը.
և այսպէս ի ամէնը ազատեցան՝ ցամաքը ելան ։

ԳԼ. ԻԸ

1 Պօղոս և իր ընկերները նաւաբեկութենէն ետքը մարդասիրութիւն կը տեսնեն բարբարոսներէն, 5 Իժ մը Պօղոսին ձեռքը կը բռնէ, բայց չվնասեր, 8 Պօղոս շատ հիւանդներ կը բժշկէ կղզին մէջ. 11 Ճամբայ կ'ելլէ Հռոմ երթալու. 17 կ'իմացընէ Հրէից իր գալուն պատճառը. 24 իր քարոզութեամբը ոմանք կը հաւատան Քրիստոսի, ոմանք ալ չեն հաւատար. 30 այսու ամենայնիւ երկու տարի կը քարոզէ Հռոմայ մէջ ։

1 Ու երբոր ազատեցան՝ գիտցան որ ա ան կղզին
անունը Մելիտէ էր. բ Եւ բարբարոսները քիչ

ւ բ Կոր. ժա. 25.

ի Հմր 22.

ա Գլ. իէ. 26.

բ Հռով. ա. 14. ա Կոր. ժդ. 11. Կող. գ. 11.

2 մարդասիրութիւն չցուցուցին մեզի ։ Ինչու որ
կրակ վառեցին, և մեզ ամէնքս ալ ընդունեցին՝
վրանիս հասած անձրեւին համար ու ցուրտին հա-
3 մար ։ Ու երբոր Պօղոս շատ մը խռիւ ժողվեց, և
կրակին վրայ դրաւ, տաքութենէն իժ մը ելաւ
4 անոր ձեռքը բռնեց ։ Բարբարոսներն ալ երբոր
ան գազանը տեսան անոր ձեռքէն կախուած՝ իրա-
րու կ'ըսէին, Անշուշտ ասիկայ մարդասպան մըն
է, որ թէպէտ ծովէն ազատեցաւ, գ Բայց իրաւուն-
5 քը թող չտուաւ որ ապրի ։ Իսկ անիկայ գազանը
կրակին մէջը թօթուելով՝ ե իրեն մէկ վնաս մը չե-
6 ղաւ ։ Ու անոնք կը սպասէին որ անիկայ ուռենայ
կամ յանկարծակի մեռած իյնայ. բայց երբոր
շատ մը սպասեցին, ու տեսան որ իրեն վնաս մը
չեղաւ, կարծիքնին փոխելով, դ կ'ըսէին թէ աս-
7 տուած մըն է ։ Եւ ան տեղին բոլորտիքը՝ կղզի-
ին գլխաւոր մարդուն ագարակները կային, ո-
րուն անունը Պոպղիոս էր. որ ինքը մեզ ընդու-
նեց և իրեք օր հիւրասիրութեամբ իր քովը պա-
8 հեց ։ Ու եղաւ որ Պոպղիոսին հայրը ջերմով և
թանչքով հիւանդցած պառկած էր. ու Պօղոս
անոր քովը մտաւ, և ե աղօթք ընելով՝ զ ձեռքերը
9 վրան դրաւ ու բժշկեց զանիկայ ։ Ու երբոր ա-
սիկայ եղաւ, ուրիշ հիւանդներ որ ան կղզին
10 մէջն էին, կու գային և կը բժշկուէին. Անոնք
շատ է պատիւներով ալ մեզ պատուեցին, ու եր-
թալու ատեննիս պէտք եղած բաները տուին ։
11 Եւ իրեք ամիսէն ետեւ Աղեքսանդրացի նաւով մը
ճամբայ ելանք, որ ձմեռը ան կղզին անցուցեր էր,
12 ու Դիոսկուրացւոց նշանը ունէր ։ Եւ Սիրակու-
13 սա իջնելով՝ իրեք օր հոն կեցանք ։ Անկէ ալ

գ Մար. ժզ. 18. Ղու. ժ. 19.

դ Գլ. ժդ. 10.

ե Յակ. ե. 13, 15.

զ Մար. զ. 5. է. 32. ժզ. 18. Ղու. դ. 41. Գլ. ժթ. 11, 12. ա Կոր. ժբ. 9, 28.

է Մատ. ժե. 6. ա Տիմ. ե. 17.

պտոյտ մը ընելով՝ Հռեգիոն հասանք . և մէկ օրէն
ետև որ հարաւ փչեց , երկրորդ օրը Պուտիողոս ե–
14 կանք ։ Ու հոն եղբայրներ գտանք , որոնք աղաչե–
ցին որ եօթը օր իրենց քովը մնանք . ու ետքը Հռ–
15 ոմ ելանք ։ Ու անկէ եղբայրները երբոր մեր
վրայով լսեցին , մեզ դիմաւորելու ելան մինչև
Ապփիոսի վաճառանոցը ու Երեք պանդոկները ։ և
Պօղոս անոնք տեսնելով , գոհութիւն տուաւ Աս–
տուծոյ և սիրտ առաւ ։
16 Ու երբոր Հռոմ մտանք , հարիւրապետը կա–
պուածները զօրապետին յանձնեց . ը Իսկ Պօղոսին
հրաման եղաւ որ իր պահապան զինուորին հետ
17 զատ կենայ ։ Ու եղաւ որ երեք օրէն ետև անիկայ
Հրէից գլխաւորները կանչեց . ու երբոր մէկտեղ
եկան՝ ըսաւ անոնց . Մարդիկ եղբայրներ՝ թ ես ժո–
ղովուրդին կամ հայրենական սովորութեանց դէմ
բան մը չըրած , ժ Երուսաղէմէն կապուած՝ Հռով–
18 մայեցւոց ձեռքը մատնուեցայ . ի Որոնք երբոր զիս
քննեցին , ուզեցին որ արձակեն . ինչու որ իմ
19 վրաս մեռնելու յանցանք մը չկար ։ Բայց երբոր
Հրէաները հակառակ կեցան , ստիպուած եղայ որ
Կայսրին բողոքեմ , չէ թէ իմ ազգիս դէմ ամբաս–
20 տանութիւն մը ունեցողի պէս ։ Ուստի աս պատ–
ճառով աղաչեցի որ ձեզ տեսնեմ ու ձեզի խօսիմ .
լ ինչու որ Իսրայէլի յուսոյն համար ես ծ աս շղթան
21 վրաս ունիմ ։ Անոնք ալ ըսին իրեն , Մենք քու վրա–
յովդ Հրէաստանէն ոչ թուղթեր առինք , և ոչ
եղբայրներէն մէկը հոս գալով՝ քու վրայովդ չարու–
22 թիւն մը պատմեց կամ խօսեցաւ ։ Բայց կ'աղա–
չենք որ քեզմէ լսենք թէ դուն ինչ մտքի վրայ ես .
ինչու որ մենք աս աղանդին վրայով տեղեկացած

ը Գլ․ իդ․ 25 ․ իէ․ 3 ․
թ Գլ․ իդ․ 12 , 13 ․ իե․ 8 ․
ժ Գլ․ իա․ 33 ․
ի Գլ․ իբ․ 24 ․ իդ․ 10 ․ իե․ 8 ․ իզ․ 31 ․
լ Գլ․ իե․ 11 ․
խ Գլ․ իզ․ 6 , 7 ․
ծ Գլ․ իզ․ 29 ․ Եփե․ գ․ 1 ․ դ․ 1 ․ զ․ 20 ․ բ Տիմ․ ա․ 16 ․ բ․ 9 ․ Փիլիմ․ 10 , 13 ․

23 ենք՝ որ ամէն տեղ անոր նդէմ կը խօսին ։ Ու
մէկ օր մը որոշելով անոր՝ շատերը անոր գա–
ցին իր բնակած տեղը , կ որոնց Աստուծոյ թագա–
ւորութիւնը կը ծանուցանէր վկայութիւնով , և
կը համոզէր զանոնք Յիսուսի վրայով հ Մովսէսին
օրէնքէն ու մարգարէներէն՝ առտուընէ մինչև իրի–
24 կուն ։ ձ Ու ոմանք կը հաւատային ըսածներուն ,
25 ու ոմանք չէին հաւատար ։ Ու իրարու հետ չմիա–
բանած գացին՝ երբոր Պօղոս մէկ խօսք մը ըսաւ ,
թէ Հոգին Սուրբ աղէկ խօսեցաւ մեր հայրերուն՝
26 Եսայի մարգարէին ձեռքովը , Ու ըսաւ ․ ղ Գնա
աս ժողովուրդին ու ըսէ ․ ճ Լսելով պիտի լսէք՝ ու
չիմանաք , և տեսնելով պիտի տեսնէք՝ ու չտես–
27 նէք ․ Ինչու որ աս ժողովուրդին սիրտը թանձրա–
ցաւ , և իրենց ականջներովը ծանր լսեցին , ու աչ–
քերնին գոցեցին , որ չըլլայ թէ իրենց աչքերովը
տեսնեն , ու ականջներովը լսեն , և սրտերովը
իմանան , ու դարձի գան , և ես բժշկեմ զանոնք ։
28 Ուստի յայտնի ըլլայ ձեզի որ Աստուծոյ փրկու–
թիւնը մ հեթանոսներուն խրկուեցաւ , և անոնք
29 մտիկ պիտի ընեն ։ *Ու երբոր աս ըսաւ ,
Հրէաները դուրս ելան , շատ վիճաբանութիւն
ունենալով մէջերնին ։"

30 Ու լման երկու տարի իր վարձքով բռնած տունը
31 կեցաւ ․ Ու իրեն եկողներուն ամէնը կ'ընդունէր ,
32 յ Կը քարոզէր Աստուծոյ թագաւորութիւնը , և
Տէր Յիսուս Քրիստոսի վրայով առանց արգիլուե–
լու կը սորվեցընէր բոլոր համարձակութիւնով ։

կ Ղու․ բ․ 34 ․ Գլ․ իդ․ 5 ․ 14 ․ ա Պետ․ բ․ 12 ․ դ․ 14 ․
հ Ղու․ իդ․ 27 ․ Գլ․ ժէ․ 3 ․ ժթ․ 8 ․
ձ Տես Գլ․ իզ․ 6 , 22 ․
ղ Գլ․ ժգ․ 4 ․ ժէ․ 4 ․ ժթ․ 9 ․
ճ Ես․ զ․ 9 ․ Երեմ․ ե․ 21 ․ Եզեկ․ ժբ․ 2 ․ Մատ․ ժգ․ 14 , 15 ․ Մար․ դ․ 12 ․ Ղու․ ը․ 10 ․ Յով․ ժբ․ 40 ․ Հռով․ ժա․ 8 ․
մ Մատ․ իա․ 41 , 43 ․ Գլ․ ժգ․ 46 , 47 ․ ժը․ 6 ․ իբ․ 21 ․ իզ․ 17 , 18 ․ Հռով․ ժա․ 11 ․
* Ոմանք չունին — 29 համարը ․
յ Գլ․ դ․ 31 ․ Եփե․ զ․ 19 ․

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ կը ծանուցանէ Հռովմայեցւոց իր առաքելական պաշտօնին կանչուիլը, 9 նաև իր սրտին փափաքը անոնց երթալու, 16 և թէ ինչ է իր քարոզած աւետարանը ու աւետարանին ցուցուցած արդարութիւնը. 18 թէ Աստուած բարկացած է ամէն տեսակ մեղքի դէմ, 21 և թէ հեթանոսներուն մեղքերը ինչ են։

1 Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ ա առաքեալ
ըլլալու կանչուած, Աստուծոյ աւետարանին
2 համար բ որոշուած, (Ան որ գ առաջուց իր մար-
գարէներուն ձեռքովը սուրբ գիրքերով դ խոստա-
3 ցաւ,) Իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսին
վրայով՝ որ ե մարմնոյ կողմանէ զ Դաւիթի սերուն-
4 դէն եղաւ, Ան որ է սրբութեան հոգիին կողմանէ
Որդի Աստուծոյ յայտնուեցաւ ը զօրութեամբ, մե-
5 ռելներէն յարութիւն առնելով. Որով թ շնորհք և ա-
ռաքելութիւն առինք՝ ժ հաւատքի հնազանդութեան
համար բոլոր ազգերուն մէջ, ի Անոր անուանը
6 համար. Որ անոնց մէջը դուք ալ Յիսուս Քրիս-
7 տոսի կանչուածներն էք. Ձեր ամենուն որ Հռ-

ա Գործ. ի. 21։ ա Կոր. ա. 1։ Գաղ. ա. 1։ ա Տիմ. ա. 11։ բ. 7։ բ Տիմ. ա. 11։
բ Գործ. թ. 15։ ժգ. 2։ Գաղ. ա. 15։
գ Գլ. գ. 21։ ժզ. 26։ Գաղ. գ. 8։
դ Տե՛ս Գործ. իզ. 6։ Տիտ. ա. 2։
ե Յօհ. ա. 14։ Գաղ. դ. 4։
զ Մատ. ա. 6, 16։ Ղու. ա. 32։ Գործ. բ. 30։ բ Տիմ. բ. 8։
է Գործ. ժգ. 33։
ը Եբր. թ. 14։
թ Գլ. ժբ. 3։ ժե. 15։ ա Կոր. ժե. 10։ Գաղ. ա. 15։ բ. 9։ Եփե. գ. 8։
ժ Գործ. զ. 7։ Գլ. ժզ. 26։
ի Գործ. թ. 15։

ովմայ մէջ էք՝ Աստուծոյ սիրելիներուդ, լ Սուրբ
ըլլալու կանչուածներուդ՝ խ շնորհք և խաղաղու-
թիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յի-
սուս Քրիստոսէն։
8 Նախ ծ կը գոհանամ իմ Աստուծմէս Յիսուս
Քրիստոսի ձեռքովը ձեր ամենուն համար, որ կ ձեր
9 հաւատքը բոլոր աշխարհ կը պատմուի։ Քանզի
հ վկայ է ինծի Աստուած, ձ որն որ ես կը պաշտեմ
10 իմ հոգիովս անոր Որդւոյն աւետարանին մէջ, ղ Թէ
ինչպէս անդադար ձեզ կը յիշեմ, ամէն ատեն
իմ աղօթքներուս մէջ ճ խնդրելով՝ որ գուցէ ան-
գամ մը մ Աստուծոյ կամքովը ինծի յաջողութիւն
11 մը ըլլայ ձեզի գալու։ Քանզի կը փափաքիմ
ձեզ տեսնելու, յ որ ձեզի հոգևոր շնորհք մը հա-
12 ղորդեմ՝ որպէս զի հաստատուիք. Այսինքն՝ ն ձեր
հետը ես ալ մխիթարակից ըլլամ իմ ու ձեր փո-
13 խադարձ հաւատքին միջոցովը։ Սակայն չեմ
ուզեր որ չգիտցող ըլլաք՝ եղբայրներ՝ շ որ շատ
անգամ ուզեցի գալ ձեզի, (և ո մինչև հիմա ար-
գիլուեցայ,) չ որ ձեր մէջն ալ պտուղ մը ունե-
նամ, ինչպէս որ ուրիշ հեթանոսաց մէջ ալ։
14 Յոյներուն ու Բարբարոսներուն, իմաստուններուն
15 ու անմիտներուն ալ պ պարտական եմ։ Ասոր
որչափ որ ձեռքէս կու գայ՝ յօժարութիւն ունիմ
ձեզի ալ որ Հռովմայ մէջ էք՝ աւետարանը քա-
րոզելու։

լ Գլ. թ. 24։ ա Կոր. ա. 2։ ա Թես. դ. 7։
խ ա Կոր. ա. 3։ բ Կոր. ա. 2։ Գաղ. ա. 3։
ծ ա Կոր. ա. 4։ Փիլ. ա. 3։ Կող. ա. 3, 4։ ա Թես. ա. 2։ Փիլմ. 4։
կ Գլ. ժզ. 19։ ա Թես. ա. 8։
հ Գլ. թ. 1։ բ Կոր. ա. 23։ Փիլ. ա. 8։ ա Թես. բ. 5։
ձ Գործ. իէ. 23։ բ Տիմ. ա. 3։
ղ ա Թես. գ. 10։
ճ Գլ. ժե. 23, 32։ ա Թես. գ. 10։
մ Յակ. դ. 15։
յ Գլ. ժե. 29։
ն Տիտ. ա. 4։ բ Պետ. ա. 1։
շ Գլ. ժե. 23։
ո Տե՛ս Գործ. ժզ. 7։ ա Թես. բ. 18։
չ Փիլ. դ. 17։
պ ա Կոր. թ. 16։

16 Ինչու որ Ես ամօթ չեմ սեպեր * աւետարանը ,
վասն զի Աստուծոյ զօրութիւնն է ան բոլոր
հաւատացեալներուն փրկութեան համար , առաջ
17 Հրէային ու ետքը Յոյնին ։ Ինչու որ անով
Աստուծոյ արդարութիւնը՝ որ է հաւատքէն ,
հաւատքի համար կը յայտնուի . ինչպէս որ գրուած
է թէ Արդարը հաւատքէն պիտի ապրի ։
18 Քանզի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը
յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութեանը և ան-
իրաւութեանը վրայ , որոնք ճշմարտութիւնը ան-
19 իրաւութեամբ բռներ են ։ Վասն զի Աստուծոյ
վրայով գիտնալու բանը իրենց մէջը յայտնի է ,
20 որովհետև Աստուած անոնց յայտնեց ։ Ինչու որ
իր աներևոյթ բաները աշխարհի սկիզբէն ստեղ-
ծուածներովը կ'իմացուին կը տեսնուին , այսինքն է
իր մշտնջենաւոր զօրութիւնը ու աստուածութիւ-
21 նը , որպէս զի անպատասխանի ըլլան ։ Ինչու որ
իրենք Աստուած ճանչնալով՝ Աստուծոյ պէս չփա-
ռաւորեցին , կամ շնորհակալ չեղան . հա-
պա իրենց խորհուրդներուն մէջ ունայնացան ,
և սիրտերնին անմտութիւնով խաւարեցաւ ։
22 Իրենք իմաստուն ենք՝ ըսելով , յիմարեցան .
23 Ու անեղծ Աստուծոյ փառքը փոխեցին՝ նման-
ցընելով եղծանելի մարդու , և թռչուններու ,

Սաղ. խ. 9, 10 ։ Մար. ը. 38 ։ բ Տիմ. ա. 8 ։
* Ոմանք՝ Քրիստոսի աւետարանը .
ա Կոր. ա. 18 ։ ժե. 2 ։
Ղու. բ. 30, 31, 32 ։ Եգ. 47 ։ Գոր. գ. 26 ։ ժգ. 26, 46 ։ Գղ. բ. 9 ։
Գղ. գ. 21 ։
Ամբ. բ. 4 ։ Յօհ. գ. 36 ։ Գաղ. գ. 11 ։ Փիլ. գ. 9 ։ Եբր. ժ. 38 ։
Գոր. ժէ. 30 ։ Եփե. ե. 6 ։ Կող. գ. 6 ։
Գոր. ժդ. 16 ։
Յօհ. ա. 9 ։
Սաղ. ժթ. 1 , և ։ Գոր. ժդ. 16 ։ ժէ. 27 ։
դ Թագ. ժէ. 15 ։ Երեմ. բ. 5 ։ Եփե. գ. 17, 18 ։
Երեմ. ժ. 14 ։
բ Օր. դ. 16 , և ։ Սաղ. ճզ. 20 ։ Ես. խ. 18, 25 ։ Երեմ. բ. 11 ։ Եզեկ. ը. 10 ։ Գոր. ժէ. 29 ։

ու չորքոտանիներու և սողուններու պատկե-
24 րին ։ Անոր համար Աստուած ալ պղծու-
թեան մատնեց զանոնք իրենց սիրտերուն ցան-
կութիւններովը՝ իրենց մարմինները իրենց
25 մէջը խայտառակելու . Որոնք Աստուծոյ ճշմար-
մարտութիւնը սուտի հետ փոխեցին , ու երկրը-
պագութիւն և պաշտօն մատուցին ստեղծուած-
ներուն քան թէ Ստեղծողին , ան որ յաւիտեան
26 օրհնեալ է ։ Ամէն ։ Անոր համար Աստուած զա-
նոնք անարգ կիրքերու մատնեց , որ իրենց էգերը
անգամ բնական պէտքը բնութեան դէմ եղող
27 պէտքի փոխեցին ։ Նոյնպէս ալ արուները կնկան
բնական պէտքը թողուցած՝ իրենց ցանկութիւնովը
իրարու հետ վառուեցան . արուները արուներու
հետ խայտառակութիւն կը գործէին , և իրենց մո-
լորութեանը վայլած հատուցումը իրենց վրայ կ'ըն-
28 դունէին ։ Ու որովհետև չուզեցին զԱստուած
իրենց գիտութեանը մէջ պահել , Աստուած ալ
զանոնք անարգ խորհուրդներու մատնեց անվայել
29 բաներ ընելու . Որոնք լեցուած էին ամէն անիրա-
ւութիւնով , պոռնկութիւնով , անզգամութիւ-
նով , ագահութիւնով , չարութիւնով , նախան-
ձով լեցուն , մարդասպանութիւնով , հակառա-
կութիւնով , նենգութիւնով , չարասրտութիւ-
30 նով , էին քսուներ , Չարախօսներ , Աստուած
ատողներ , նախատողներ , հպարտներ , ամբարտա-
ւաններ , չար բաներ հնարողներ , ծնողաց անհնա-
31 զանդներ , Անմիտներ , ուխտ չպահողներ , ան-
32 գութներ , անհաշտներ , անողորմներ . Որոնք

Սաղ. ծա. 12 ։ Գոր. է. 42 ։ Եփե. գ. 18, 19 ։ բ Թես. բ. 10 ։
Ղև. ժը. 22 ։
ա Կոր. զ. 18 ։ ա Թես. դ. 4 ։ ա Պետ. դ. 3 ։
ա Թես. ա. 9 ։ ա Յօհ. ե. 20 ։
Ես. խդ. 20 ։ Երեմ. ժ. 14 ։ ժզ. 25 ։ Ամով. բ. 4 ։
Ղև. ժը. 22, 23 ։ Եփե. ե. 12 ։ Յուդ. 10 ։
Եփե. ե. 4 ։
Գղ. բ. 2 ։

գիտնալով Աստուծոյ դատաստանը՝ թէ անոնք որ
այսանկ բաներ կ'ընեն՝ ի մահուան արժանի են,
չէ թէ միայն այն բաները կ'ընեն, ծ հապա ընող-
ներուն հաւանութիւն ալ կու տան :

ԳԼ. Բ.

1 Անոնք որ ուրիշները կը դատապարտեն իբրեւ մեղաւորներ, թէ որ իրենք ալ այն մեղքերը կը գործեն, չեն կրնար իրենք զիրենք արդարացընել. 6 ո՛չ ալ կրնան ազատ մնալ Աստուծոյ դատաստանէն, 9 թէ՛ Հրեայ ըլլան՝ թէ հեթանոս. 14 քանզի ինչոր որ հեթանոսները չեն կրնար ազատ մնալ, անանկ ալ Հրեաները. 25 որոնց թլփատութիւնը օգուտ մը պիտի չընէ, թէ որ օրինազանց գտնուին.

1 Ուստի ո՛վ մարդ՝ — ո՛վ որ ըլլաս դուն որ կը դա-
տես, պատասխան չունիս տալու. ի քանզի ինչ
բանով որ ուրիշը կը դատես, անով քու անձդ կը
դատապարտես, վասն զի դուն ալ որ կը դատես,
2 նոյն բաները կ'ընես : Բայց գիտենք որ Աստուծոյ
դատաստանը ճշմարտութիւնով կ'ըլլայ անոնց
3 վրայ, որ անանկ բաներ կը գործեն : Արդ՝ ո՛վ
մարդ, դուն որ այսանկ բաներ ընողները կը դա-
տես, և դուն նոյն բաները կ'ընես, ա՛ս միթէ
կ'անցընե՞ս թէ դուն Աստուծոյ դատաստանէն
4 ազատ պիտի մնաս. ե Կամ թէ անոր անչափ
քաղցրութիւնը ու և համբերութիւնը ի ու եր-
կայնմտութիւնը կ'արհամարհե՞ս, չգիտնալով որ
Աստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպ 'ի ապաշխա-
5 րութիւն կ'առաջնորդէ : Բայց դուն քու խստու-
թիւնովդ և անզեղջ սրտովդ քու անձիդ բարկու-
թիւն կը դիզես՝ ի բարկութեան և Աստուծոյ ար-
դար դատաստանին յայտնուելու օրուանը համար.

Ի Գլ. զ. 21.
ծ Ովս. է. 3. Սաղ. ծ. 18.
— Գլ. ա. 20.
Ի բ Թագ. ժբ. 5, 6, 7. Մատ. է. 1, 2. Յօհ. ը. 9.
ե Գլ. թ. 23. Եփես. ա. 7. բ. 4, 7.
ու Գլ. գ. 25.
Ի Ել. լդ. 6.
ղ Ես. լ. 18. բ Պետ. գ. 9, 15.
Ի բ Օր. լբ. 35. Յակ. ե. 3.

6 ը Որ ամէն մէկուն իր գործքերուն փոխարէնը
7 պիտի հատուցանէ. Յաւիտենական կեանքը ա-
նոնց որ բարի գործքերու մէջ համբերութեամբ
յարատեւելով, փառք ու պատիւ և անմահու-
8 թիւն կը խնդրեն. Բայց անոնց որ հակառակ են,
ի և ճշմարտութեան անհնազանդ ու անիրաւութեան
9 հնազանդած, բարկութիւն և սրտմտութիւն, նե-
ղութիւն և տառապանք պիտի ըլլայ ամէն մարդու
վրայ որ չար կը գործէ, ծ առաջ Հրէային ու
10 ետքը Յոյնին. ե Իսկ փառք ու պատիւ և խաղա-
ղութիւն այն ամենուն որ բարի կը գործէ, առաջ
11 Հրէային ու ետքը Յոյնին : Լ Ինչու որ Աստու-
12 ծոյ քովը աչառութիւն չկայ : Քանզի անոնք որ ա-
ռանց օրէնքի մեղք գործեցին, առանց օրէնքի պի-
տի կորսուին. և անոնք որ օրէնքի տակ մեղք գործե-
13 ցին, օրէնքով պիտի դատուին, (Ի Ինչու որ չէ
թէ օրէնքը լսողները Աստուծոյ առջեւը արդար են,
հապա օրէնքը կատարողները պիտի արդարանան :
14 Քանզի հեթանոսները որ օրէնք չունին՝ երբոր բնա-
կանաբար օրէնքին գործքերը կը գործեն, օրէնք
չունենալով՝ իրենց անձերուն օրէնքը բուն իրենք
15 կ'ըլլան. Որ օրէնքին գործքը իրենց սրտին մէջը
գրուած կը ցուցընեն իրենց խղճմտանքին վկայու-
թեամբը, և իրենց խորհուրդներուն իրար յանդի-
16 մանելովը՝ կամ իրաւունք տալովը,) ծ Այն օրը որ
Աստուած մարդոց ծածուկ բաները պիտի դատէ

ը Յոբ. լդ. 11. Սաղ. կբ. 12. Առակ. իդ. 12. Երեմ. ժէ. 10. լբ. 19. Մատ. ժզ. 27. Գլ. ժդ. 12. ա Կոր. գ. 8. բ Կոր. ե. 10. Յայտ. բ. 23. ի. 12. իբ. 12.
Ի Յոբ. իդ. 13. Գլ. ա. 18. բ Թես. ա. 8.
ծ Ամով. գ. 2. Ղուկ. ժբ. 47, 48. ա Պետ. դ. 17.
ե ա Պետ. ա. 7.
Լ բ Օր. ժ. 17. բ Մն. ժթ. 7. Յոբ. լդ. 19. Գործ. ժ. 34. Գաղ. բ. 6. Եփես. զ. 9. Կող. գ. 25. ա Պետ. ա. 17.
Ի Մատ. է. 21. Յակ. ա. 22, 23, 25. ա Յօհ. գ. 7.
ծ Ժող. ժբ. 14. Մատ. իե. 31. Յօհ. ժբ. 48. Գլ. գ. 6. ա Կոր. դ. 5. Յայտ. ի. 12.

Յիսուս Քրիստոսի ձեռքովը՝ իմ քարոզած աւե-
տարանիս համեմատ ։
17 Ահա դուն Հրեայ ըսուեր ես, ու օրէնքին
18 կռթներ ես, ու Աստուծով կը պարծենաս, Ա-
նոր կամքը գիտես, ու տարբեր բաները կը զա-
19 նազանես՝ օրէնքէն խրատուած ըլլալով. Ու քու
անձիդ վրայ վստահութիւն ունիս թէ կոյրերուն
20 առաջնորդ ես, խաւարածներուն լոյս, Անմիտնե-
րուն խրատ տուող, տղայոց վարժապետ, ու թէ
գիտութեան ու ճշմարտութեան կերպարանքը օ-
21 րէնքէն ունիս ։ Իսկ արդ դուն որ ընկերիդ կը
սորվեցնես, քու անձիդ չե՞ս սորվեցներ. որ կը
22 քարոզես գողութիւն չընել, կը գողնա՞ս. Որ
կ'ըսես շնութիւն չընել, շնութի՞ւն կ'ընես. որ
կը զզուիս կուռքերէն, սրբապղծութի՞ւն կ'ընես.
23 Որ օրէնքով կը պարծենաս, օրինազանց ըլլա-
24 լով՝ զԱստուած կ'անարգե՞ս ։ Ինչու որ Աստուծոյ
անունը ձեր պատճառովը հեթանոսաց մէջ կը հայ-
հոյուի, ինչպէս որ գրուած է ։
25 Արդ թլփատութիւնը շահ կ'ունենայ, թէ որ
օրէնքը պահես. իսկ թէ որ օրէնքին դէմ յանցա-
ւոր ես, քու թլփատութիւնդ անթլփատութիւն
26 եղաւ ։ Ուստի թէ որ անթլփատութիւնը օրէն-
քին իրաւունքները պահէ, չէ՞ որ անոր անթլփա-
27 տութիւնը թլփատութիւն պիտի սեպուի. Ու 'ի

Յոհ. ե. 22 ։ Գոր. ժ. 42 ։ ժէ. 31 ։ բ Տիմ. դ. 1, 8 ։ ա Պետ. դ. 5 ։	Մատ. ժե. 14 ։ իգ. 16, 17, 19, 24 ։ Յոհ. թ. 34, 40, 41 ։
Գղ. ժզ. 25 ։ ա Տիմ. ա. 11 ։ բ Տիմ. բ. 8 ։	Գղ. զ. 17 ։ բ Տիմ. ա. 13 ։ գ. 5 ։
Մատ. գ. 9 ։ Յոհ. ը. 33 ։ Գղ. թ. 6, 7 ։ բ Կոր. ժա. 22 ։	Սաղ. ծ. 16, ևն ։ Մատ. իգ. 3, ևն ։
Միք. գ. 11 ։ Գղ. թ. 4 ։	Սաղ. գ. 8 ։
Եսա. խե. 25 ։ խը. 2 ։ Յոհ. ը. 41 ։	Հմր 17 ։
բ Օր. դ. 8 ։ Սաղ. ճխէ. 19, 20 ։	բ Թագ. ժբ. 14 ։ Եզ. ծբ. 5 ։ Եզեկ. լզ. 20, 23 ։
Փիլ. ա. 10 ։	Գաղ. ե. 3 ։
	Գոր. ժ. 34, 35 ։

բնէ եղած անթլփատութիւնը օրէնքը կատարելով՝
պիտի դատապարտէ քեզ, որ գիրով ու թլ-
28 փատութիւնով օրէնքին յանցաւոր ես ։ Ինչու որ
Հրեայ չէ ան որ դրսուանց է, և թլփատու-
29 թիւն չէ ան որ դրսուանց մարմինով է. Հապա
Հրեայ ան է որ ներսուանց է, և թլփատու-
թիւն սրտինը՝ հոգիով, ու չէ թէ գիրով.
որուն գովութիւնը չէ թէ մարդիկներէն է, հա-
պա Աստուծմէ ։

ԳԼ. Գ

1 Հրէից արտօնութիւնը, 3 որն որ բնաւ չկորսնցուցին. 9 բայց օրէնքը կը ցուցնէ թէ անոնք ալ մեղքի տակ են. 20 ուստի բնաւ մարմին մը չարդարանար օրէնքով, 28 այլ ամէն մարդիկ առանց խտրութեան միայն հաւատքով կ'արդարանան. 31 սակայն ասով օրէնքը չխափանուիր ։

1 Ուրեմն Հրէան ի՞նչ աւելի բան ունի, կամ
2 թլփատութենէն ի՞նչ շահ կայ ։ Շատ՝ ամէն
կերպով. պինտ առաջ ան՝ որ Աստուծոյ պատ-
3 գամները անոնց հաւատացուեցաւ ։ Բանզի թէ որ
անոնցմէ ոմանք չհաւատացին, ի՞նչ. միթէ անոնց
անհաւատութիւնը Աստուծոյ հաւատարմութիւնը
4 կը խափանէ՞ր. Քաւ լիցի ։ Սակայն Աստուած
ճշմարիտ թող ըլլայ, ու բոլոր մարդիկ՝ սուտ.
ինչպէս որ գրուած է, Որ քու խօսքերուդ մէջ
արդար ըլլաս, և դատուելու ատենդ դուն յաղ-
5 թես ։ Ուրեմն թէ որ մեր անիրաւութիւնը Աս-
տուծոյ արդարութիւնը յայտնի կը ցուցնէ, ի՞նչ
ըսենք. արդեօք անիրաւ է Աստուած որ իր բար-

Մատ. ժբ. 41, 42 ։	բ Օր. դ. 7, 8 ։ Սաղ. ճխէ. 19, 20 ։ Գղ. բ. 18 ։ թ. 4 ։
Մատ. գ. 9 ։ Յոհ. ը. 39 ։ Գղ. թ. 6, 7 ։ Գաղ. զ. 15 ։ Յայտ. բ. 9 ։	Գղ. ժ. 16 ։ Եբր. դ. 2 ։
ա Պետ. գ. 4 ։	Թու. իգ. 19 ։ Գղ. թ. 6 ։ ժա. 29 ։ բ Տիմ. բ. 13 ։
Կող. բ. 11 ։ Փիլ. գ. 3 ։	Յոբ. խ. 8 ։
Գղ. է. 6 ։ բ Կոր. գ. 6 ։	Յոհ. գ. 33 ։
ա Կոր. դ. 5 ։ բ Կոր. ժ. 18 ։ ա Թես. բ. 4 ։	Սաղ. կբ. 9 ։ ճժզ. 11 ։
	Սաղ. ծա. 4 ։

6 կութիւնը վրէժ կը բերէ. ([ը]Մարդկօրէն կ՚ը-
սեմ.) Քաւ լիցի. [թ]Ապա թէ չէ ի՞նչպէս Աս-
7 տուած պիտի դատէ աշխարհը։ Ինչու որ եթէ
Աստուծոյ ճշմարտութիւնը իմ ստութիւնովս կ՚ա-
ւելնայ իր փառքին համար, ալ ես ինչո՞ւ մեղա-
8 ւորի մը պէս կը դատուիմ։ Ու ինչո՞ւ համար
պէտք չէ ըսել, ինչպէս որ ոմանք մեր վրայ չարա-
խօսութիւն ընելով կ՚ըսեն թէ մենք կ՚ըսենք,
[ժ]Չարը գործենք՝ որ բարին գայ. որոնց դատա-
պարտութիւնը իրաւունքով է։
9 Ուստի ալ ի՞նչ ըսենք. բանով մը աւելի՞ ենք
Հեթանոսներէն. Իրաւ որ բանով մըն ալ չէ. ին-
չու որ առաջ մեղադրեցինք Հրեաները և հե-
10 թանոսները [ի]թէ ամէնքը մեղաց տակ են. Ինչ-
պէս որ գրուած է թէ, [լ]Արդար մը չկայ՝ ոչ մէկ
11 հատ մը. Մէկը չկայ որ հասկընայ, մէկը չկայ որ
12 Աստուած փնտռէ։ Ամէնքը խոտորեցան, մէկտեղ
անպիտան եղան. աղէկութիւն ընող մը չկայ,
13 մէկ մըն ալ չկայ։ [խ]Անոնց կոկորդը բաց գերեզ-
ման է. իրենց լեզուովը նենգաւոր եղան. [ծ]Իժե-
14 րու թոյն կայ անոնց շրթունքներուն տակը. [կ]Ա-
նոնց բերանը անէծքով ու դառնութեամբ լեցուն
15 է. [հ]Անոնց ոտքերը շուտ են արիւն թափելու.
16 Կործանում և թշուառութիւն կայ իրենց ճամբա-
17 ներուն մէջը. Ու խաղաղութեան ճամբան չճանչ-
18 ցան։ [ձ]Աստուծոյ վախը չկայ անոնց աչքերուն
19 առջին։ [ղ]Սակայն գիտենք որ օրէնքը ինչ որ
կ՚ըսէ, անոնց կ՚ըսէ՝ որ օրէնքին տակն են. [ճ]որ-

[ը] Գլ. զ. 19 ; Գաղ. գ. 15 ։
[թ] Ծն. ժը. 25 ; Յոբ. ը. 3 ; լդ. 17 ։
[ժ] Գլ. ե. 20 ; զ. 1, 15 ։
[ի] Հմր 23 ; Գաղ. գ. 22 ։
[լ] Սաղ. ժդ. 1, 2, 3 ; ծգ. 1 ։
[խ] Սաղ. ե. 9 ; Երեմ. ե. 16 ։
[ծ] Սաղ. ճխ. 3 ։
[կ] Սաղ. ժ. 7 ։
[հ] Առակ. ա. 16 ; Եսա. ծթ. 7, 8 ։
[ձ] Սաղ. լզ. 1 ։
[ղ] Յոհ. ժ. 34 ; ժե. 25 ։
[ճ] Յոբ. ե. 16 ; Սաղ. ճէ. 42 ; Եզեկ. ժզ. 63 ; Գլ. ա. 20 ; բ. 1 ։

պէս զի ամէն բերան գոցուի, [մ]և բոլոր աշխարհ
20 դատապարտուած ըլլայ Աստուծոյ առջևը։ [յ]Ին-
չու որ անոր առջևը մէկ մարմին մը պիտի չարդա-
րանայ օրէնքին գործքերովը, քանզի [ն]օրէնքով է
մեղքը ճանչնալը։
21 [շ]Բայց հիմա առանց օրէնքի Աստուծոյ արդա-
րութիւնը յայտնուած է, [ո]օրէնքէն և [չ]մարգարէ-
22 ներէն վկայուած ըլլալով. Այսինքն Աստուծոյ ար-
դարութիւնը որ [պ]Յիսուս Քրիստոսի հաւատքէն
է ամէն հաւատացողներուն, ու անոնց ամենուն վրայ
23 կ՚ըլլայ. [ջ]քանզի խտրութիւն չկայ։ [ռ]Ինչու որ ա-
մէնքը մեղք գործեցին, և Աստուծոյ փառքէն պակ-
24 սած են։ [ս]Ու անոր շնորհքովը ձրի կ՚արդարանան
25 [վ]Յիսուս Քրիստոսով եղած փրկութեամբը. Որ
զանիկայ առաջուց սահմանեց Աստուած՝ [տ]քաւու-
թիւն ըլլալու [ր]անոր արեանը հաւատքով, Աստու-
ծոյ երկայնմտութեան ատենները [ց]առաջուց գոր-
ծուած մեղքերուն [ւ]թողութիւն տալովը իր ար-
26 դարութիւնը ցուցընելու համար. Այսինքն իր ար-
դարութիւնը աս ժամանակիս մէջ ցուցընելու հա-
մար, որ ինքը արդար ըլլայ, և արդարացընէ
27 Յիսուսի հաւատքէն եղողը։ [փ]Ուրեմն ո՞ւր մնաց
պարծենալը. Խափանեցաւ. Ո՞ր օրէնքէն, գործ-
քերո՞ւն օրէնքէն. Չէ, հապա հաւատքի օրէնքէն։

[մ] Հմր 9, 23 ; Գլ. բ. 2 ։
[յ] Սաղ. ճխգ. 2 ; Գործ. ժգ. 39 ; Գաղ. բ. 16 ; գ. 11 ; Եփե. բ. 8, 9 ; Տիտ. գ. 5 ։
[ն] Գլ. է. 7 ։
[շ] Գործ. ժե. 11 ; Գլ. ա. 17 ; Փիլ. գ. 9 ; Եբր. ժա. 4, &c ։
[ո] Յոհ. ե. 46 ; Գործ. իզ. 22 ։
[չ] Գլ. ա. 2 ; ա Պետ. ա. 10 ։
[պ] Գլ. դ ։
[ջ] Գլ. ժ. 12 ; Գաղ. գ. 28 ; Կող. գ. 11 ։
[ռ] Հմր 9 ; Գլ. ժա. 32 ; Գաղ. գ. 22 ։
[ս] Գլ. դ. 16 ; Եփե. բ. 8 ; Տիտ. գ. 5, 7 ։
[վ] Մատ. ի. 28 ; Եփե. ա. 7 ; Կող. ա. 14 ; ա Տիմ. բ. 6 ; Եբր. թ. 12 ; ա Պետ. ա. 18, 19 ։
[տ] Ղև. ժզ. 15 ; ա Յոհ. բ. 2 ; դ. 10 ։
[ր] Կող. ա. 20 ։
[ց] Գործ. ժգ. 38, 39 ; ա Տիմ. ա. 15 ։
[ւ] Գործ. ժէ. 30 ; Եբր. թ. 15 ։
[փ] Գլ. բ. 17, 23 ; գ. 2 ; ա Կոր. ա. 29, 31 ; Եփե. բ. 9 ։

28 Ինչու՛ որ կը՛ սեպենք [+]թէ մարդը հաւատքով
29 կ'արդարանայ առանց օրէնքին գործքերուն ։ Մի-
թէ Աստուած միայն Հրէաներո՞ւնն է ու հեթա-
նոսներունը չէ՞ • այո՛ , հեթանոսներունն ալ ։
30 [•]Որովհետեւ Աստուած մէկ է՛ որ թլփատութիւնը
հաւատքէն կ'արդարացնէ , և անթլփատութիւնը
31 նոյն հաւատքով ։ Ուստի մենք հաւատքով օրէնքը
կը խափանե՞նք • քա՛ւ լիցի • հապա օրէնքը կը
հաստատենք ։

ԳԼ • Դ

1 Աբրահամին հաւատքը իրեն արդարութիւն սեպուեցաւ՝ 10 իր թլփատուելէն առաջ ։ 13 Միայն հաւատքով ինքը ու իր սերունդը խոստմունքը առին ։ 16 Աբրահամ բոլոր հաւատացեալներուն հայրն է ։ 24 Մեր հաւատքն ալ մեզի արդարութիւն պիտի սեպուի ։

1 Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք թէ գտաւ [ա]Աբրահամ
2 մեր նահապետը մարմնոյ կողմանէ ։ Ինչու որ
եթէ Աբրահամ [բ]գործքով արդարացած ըլլար ,
[illegible] պարծանք կ'ունենար , բայց չէ՛ թէ Աս-
3 տուծոյ առջեւ ։ Քանզի գիրքը ի՞նչ կ'ըսէ •
[գ]Աբրահամ Աստուծոյ հաւատաց , և ան իրեն ար-
4 դարութիւն սեպուեցաւ ։ [դ]Բայց ան որ գործ մը
կ'ընէ , վարձքը շնորհքէ եղած չսեպուիր անոր ,
5 հապա պարտքէ ։ Իսկ ան որ չգործեր , բայց կը
հաւատայ անոր [ե]որ ամբարիշտը կ'արդարացնէ ,
անոր հաւատքը իրեն արդարութիւն կը սեպուի ։
6 Ինչպէս որ Դաւիթ ալ՛ կը՛ կոչէ ան մարդուն
երանութիւնը , որուն Աստուած արդարութիւն կը
7 սեպէ՛ առանց գործքերու ։ [զ]Երանի՜ անոնց ,
որոնց անօրէնութիւնները ներուեցան , և որոնց

[+] Գոր • ժգ • 38 , 39 ։ Հմր 20 , 21 , 22 ։ Գղ • ը • 3 ։ Գաղ • բ • 16 ։
[•] Գղ • ժ • 12 , 13 ։ Գաղ • գ • 8 , 20 , 28 ։
[ա] Ես • ծա • 2 ։ Մատ • գ • 9 ։ Յոհ • ը • 33 , 39 ։ բ Կոր • ժա • 22 ։
[բ] Գղ • գ • 20 , 27 , 28 ։
[գ] Ծն • ժե • 6 ։ Գաղ • գ • 6 ։ Յակ • բ • 23 ։
[դ] Գղ • ժա • 6 ։
[ե] Յես • իդ • 2 ։
[զ] Սաղ • լբ • 1 , 2 ։

8 մեղքերը ծածկուեցան ։ Երանի՜ այն մարդուն որ
9 Տէրը մեղք չսեպեր անոր ։ Ուստի աս երանու-
թիւնը թլփատութեա՞ն վրայ է , թէ անթլփա-
տութեան վրայ ալ • քանզի կ'ըսենք թէ Հա-
ւատքը Աբրահամին արդարութիւն սեպուեցաւ ։
10 Ուրեմն ինչպէ՞ս սեպուեցաւ • թլփատութեա՞ն մէջ
եղած ատենը , թէ անթլփատութեան մէջ • չէ՛
թէ թլփատութեան մէջ , հապա անթլփատու-
11 թեան • [է]Ու թլփատութեան նշանը առաւ՝
իբրեւ անթլփատութեան ատենէն ունեցած հաւատ-
քին արդարութեանը մէկ կնիք մը , [ը]որ ինքը հայր
ըլլայ ան բոլոր հաւատացողներուն՝ որոնք անթըլ-
փատութենէ են , (անոնց ալ արդարութիւն սե-
12 պուելու համար ,) Ու հայր թլփատութեան՝ չէ՛
թէ միայն թլփատութենէ եղողներուն , հապա ա-
նոնց ալ՝ որ մեր հօրը Աբրահամին անթլփատու-
թեան ատենի հաւատքին շաւիղներուն մէջը կը
13 քալեն ։ Ինչու որ Աբրահամին և անոր սերունդին՝
[թ]աշխարհը ժառանգելու համար տրուած խոստ-
մունքը չէ՛ թէ օրէնքով եղաւ , հապա հաւատքին
14 արդարութիւնովը ։ [ժ]Քանզի եթէ օրէնքէն եղող-
ները ժառանգ ըլլան , հաւատքը փուճ պիտի ըլ-
15 լար , և խոստմունքը պիտի խափանուէր ։ [ի]Վասն
զի օրէնքը բարկութիւն կը գործէ • քանզի ուր որ
16 օրէնք չկայ , օրինազանցութիւն ալ չկայ ։ Անոր
համար ժառանգ ըլլալը հաւատքէն է , [լ]որ շնորհ-
քով եղած ըլլայ , [խ]խոստմունքը հաստատուն ըլ-
լալու համար բոլոր սերունդին , չէ՛ թէ միայն ա-
նոր որ օրէնքէն է , հապա անոր ալ՝ որ Աբրահա-

[է] Ծն • ժէ • 10 ։
[ը] Ղու • ժթ • 9 ։ Հմր 12 , 16 ։ Գաղ • գ • 7 ։
[թ] Ծն • ժէ • 4 , ... ։ Գաղ • գ • 29 ։
[ժ] Գաղ • գ • 18 ։
[ի] Գղ • գ • 20 ։ ե • 13 , 20 ։ է • 8 , 10 , 11 ։ ա Կոր • ժե • 56 ։ բ Կոր • գ • 7 , 9 ։ Գաղ • գ • 10 , 19 ։ ա Յոհ • գ • 4 ։
[լ] Գղ • գ • 24 ։
[խ] Գաղ • գ • 22 ։

մին հաւատքէն է, ծ որ մեր ամենուն հայրն է,
17 (Ինչպէս որ գրուած է թէ՝ կ Քեզ շատ ազգերու
հայր ըրի,) Աստուծոյ առջեւը, որուն ինք հաւա-
տաց, հ ան որ մեռելները կ'ողջնցնէ, ձ և չեղած
18 բաները եղածներու պէս կը կանչէ: Որ չյուսա-
ցուելու բանին յուսով հաւատաց՝ թէ ինք շատ
ազգերու հայր պիտի ըլլայ, (ինչպէս որ ըսուեցա-
ւ թէ՝ ղ Քու սերունդդ անանկ պիտի ըլլայ.)
19 Եւ ինք հաւատքի մէջ չտկարացած, ճ չնայեցաւ
իր մարմինին արդէն մեռածի պէս ըլլալուն, (ո-
րովհետև ինք հարիւր տարեկանի չափ էր,) ոչ
20 ալ Սառային արգանդին մեռած ըլլալուն: Եւ
անհաւատութիւնով չտարակուսեցաւ Աստուծոյ
խոստմունքէն, հապա հաւատքով զօրացած՝ Աս-
21 տուծոյ փառք տուաւ, Եւ իր մտքին մէջ հաստատ
պահեց թէ ան որ խոսք տուաւ, մ ինք կարող է
22 ընելու ալ: Ասոր համար իրեն արդարութիւն սե-
պուեցաւ:
23 յ Բայց չէ թէ միայն անոր համար գրուեցաւ
24 որ իրեն սեպուեցաւ, Հապա մեզի համար ալ՝
որոնց պիտի սեպուի. ն որ կը հաւատանք անոր
25 որ մեռելներէն յարոյց մեր Տէր Յիսուսը, շ Ան
որ մեր յանցանացը համար մատնուեցաւ, ո և
մեզ արդարացնելու համար յարութիւն առաւ:

ծ Ես. ծա. 2: Գլ. Թ. 8:
կ Ծն. ժէ. 5:
հ Գլ. ը. 11: Եփե. բ. 1, 5:
ձ Գլ. Թ. 25: ա Կոր. ա. 28: ա Պետ. բ. 10:
ղ Ծն. ժե. 5:
ճ Ծն. ժէ. 17: ժը. 11: Եբր. ժա. 11, 12:
մ Սաղ. ճժե. 3: Ղուկ. ա. 37, 45: Եբր. ժա. 19:
յ Գլ. ժե. 4: ա Կոր. ժ. 6, 11:
ն Գործ. բ. 24: ժգ. 30:
շ Ես. ծգ. 5, 6: Գլ. գ. 25: ե. 6: ը. 32: բ Կոր. ե. 21: Գաղ. ա. 4: ա Պետ. բ. 24: գ. 18: Եբր. Թ. 28:
ո ա Կոր. ժե. 17: ա Պետ. ա. 21:

ԳԼ. Ե

1 Հաւատքով արդարացած՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ, 2 և պարծանք՝ մեր յուսոյն մէջ. 8 վասն զի թէ որ

Քրիստոսի արիւնովը հաշտուեցանք՝ թշնամի եղած ատեննիս, 10 ալ աւելի պիտի ապրինք հաշտուած ըլլալովնիս: 12 Ինչպէս որ մեղքը ու մահը աշխարհ մտան Ադամով, 17 ալ աւելի արդարութիւնը և կեանքը Յիսուս Քրիստոսով: 20 Ուր որ մեղքը շատցաւ, հոն շնորհքը աւելի առատացաւ:

1 ա Ուստի մենք հաւատքով արդարացած ըլլալով՝
բ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր
2 Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը. գ Որուն մի-
ջոցովը ընդունեցինք հաւատքով աս շնորհքիս մօ-
տենալն ալ, դ որուն մէջը կեցեր ենք, ե և Աստու-
3 ծոյ փառաց յուսովը կը պարծինք: Եւ ոչ միայն
այսքան՝ զ հապա նաև նեղութիւններու մէջ կը
պարծինք. է ինչու որ գիտենք թէ նեղութիւնը
4 համբերութիւն կը գործէ, Եւ ը համբերութիւնը՝
5 փորձառութիւն, ու փորձառութիւնը՝ յոյս. թ Եւ
յոյսը ամօթով չձգեր. ժ ինչու որ Աստուծոյ սէրը
մեր սրտերուն մէջը տարածուած է Հոգւոյն Սրբոյ
6 ձեռքովը, որ մեզի տրուեցաւ: Վասն զի երբոր
մենք դեռ տկար էինք, յարմար ժամանակին ժա Քրի-
7 ստոս ամբարիշտներուն համար մեռաւ: Ինչու
որ արդարի մը համար հազիւ կ'ըլլայ որ մէկը
մեռնի. (բայց մէկ բարի մարդու մը համար կա-
8 րելի է որ մէկը համարձակի մեռնելու.) ժբ Աս-
կայն Աստուած իր սէրը որ մեր վրայ ունի՝ յայտ-
9 նեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի
համար մեռաւ. ժգ Ուրեմն հիմա որ իր արիւնովը

ա Ես. լբ. 17: Յոհ. ժզ. 33: Գլ. գ. 28, 30:
բ Եփե. բ. 14: Կող. ա. 20:
գ Յոհ. ժ. 9: ժզ. 6: Եփե. բ. 18: գ. 12: Եբր. ժ. 19:
դ ա Կոր. ժե. 1:
ե Եբր. գ. 6:
զ Մատ. ե. 11, 12: Գործ. ե. 41: բ Կոր. ժբ. 10: Փիլ. բ. 17: Յակ. ա. 2, 12: ա Պետ. գ. 14:
է Յակ. ա. 3:
ը Յակ. ա. 12:
թ Փիլ. ա. 20:
ժ բ Կոր. ա. 22: Գաղ. դ. 6: Եփե. ա. 13, 14:
ժա Հմր 8: Գլ. դ. 25:
ժբ Յոհ. ժե. 13: ա Պետ. գ. 18: ա Յոհ. գ. 16: դ. 9, 10:
ժգ Գլ. գ. 25: Եփե. բ. 13: Եբր. Թ. 14: ա Յոհ. ա. 7:

արդարացանք ․ ծ որչափ աւելի իրմով պիտի ազա-
10 տինք բարկութենէն ։ կ Վասն զի թէ որ թշնամի
եղած ատեննիս հ Աստուծոյ հետ հաշտուեցանք իր
Որդւոյն մահովը , որչափ աւելի մեր հաշտուած
11 ատենը պիտի ազատինք ձ անոր կեանքովը ։ Ու ոչ
միայն այս , ղ հապա Աստուծով ալ կը պարծենանք
մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսին ձեռքովը , որով
հիմա հաշտութիւնը ընդունեցինք ։
12 ճ Վասն զի ինչպէս որ մէկ մարդէ մը մեղքը աշ-
խարհք մտաւ , մ և ան մեղքէն մահը , և այնպէս
ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը , * քան-
13 զի ամէնքը մեղանչեցին ։ (Վասն զի մինչև օրէն-
քին ատենը աշխարհի մէջ մեղք կար ․ յ բայց մեղք
14 չսեպուիր՝ ուր որ օրէնք չկայ ։ Սակայն մահը
Ադամէն մինչև Մովսէս թագաւորեց , նաև Ադա-
մին յանցանքին նման չմեղանչողներուն վրայ ալ ,
ն որ ան օրինակ էր անոր որ ետքէն պիտի գար ։
15 Բայց չէ թէ ինչպէս յանցանքը՝ անանկ ալ
շնորհքն է ․ ինչու որ եթէ մէկուն յանցանքովը
շատերը մեռան , ալ որչափ աւելի Աստուծոյ
շնորհքը և ան պարգևը որ Յիսուս Քրիստոս մէկ
մարդուն շնորհքովն է , շ շատերուն վրայ աւելցաւ ։
16 Ու չէ թէ այս պարգևը անանկ է՝ ինչպէս մէկէ մը
որ մեղանչեց ․ ինչու որ դատաստանը մէկ մեղքէն
դատապարտութեան մէջ ձգեց ․ բայց շնորհքը շատ
17 մեղքերէն արդարութեան համար ։ Վասն զի թէ որ
մէկ մարդուն մեղքովը մահը թագաւորեց ան մէկո-
վը , որչափ աւելի անոնք որ շնորհքի՝ ու արդարու-

ծ Գլ. ա. 18 ։ ա Թես. ա. 10 ։
կ Գլ. ը. 32 ։
հ բ Կոր. ե. 18, 19 ։ Եփե. բ. 16 ։ Կող. ա. 20, 21 ։
ձ Յոհ. ե. 26 ։ ժդ. 19 ։ բ Կոր. դ. 10, 11 ։
ղ Գլ. բ. 17 ։ գ. 29, 30 ։ Գաղ. դ. 9 ։
ճ Ծն. գ. 6 ։ ա Կոր. ժե. 21 ։
մ Ծն. բ. 17 ։ Գլ. զ. 23 ։ ա Կոր. ժե. 21 ։
* Կամ՝ որով
յ Գլ. դ. 15 ։ ա Յոհ. գ. 4 ։
ն ա Կոր. ժե. 21, 22, 45 ։
շ Եսա. ծգ. 11 ։ Մատ. ի. 28 ։ իզ. 28 ։

թեան պարգևին առատութիւնը կ'առնեն , կենաց
մէջ պիտի թագաւորեն՝ մէկ Յիսուս Քրիստոսին
18 ձեռքովը ։) Ուրեմն ինչպէս որ մէկուն յանցան-
քովը բոլոր մարդոց դատապարտութեան վճի-
ռ եղաւ , անանկ ալ մէկուն արդարութիւնովը ո բո-
լոր մարդոց կենաց արդարութեան շնորհք եղաւ ․
19 Վասն զի ինչպէս որ մէկ մարդուն անհնազանդու-
թիւնովը շատերը մեղաւոր եղան , անանկ ալ մէ-
կուն հնազանդութիւնովը շատերը արդար պիտի
20 ըլլան ։ չ Սակայն օրէնքը մէջտեղը ինկաւ՝ որ
յանցանքը շատնայ ․ բայց ուր որ աւելի եղաւ
21 մեղքը , պ ալ աւելի եղաւ շնորհքը ․ Որ ինչպէս
մեղքը թագաւորեց մահուամբ , անանկ ալ
շնորհքը թագաւորէ արդարութեամբ մինչև յա-
ւիտենական կեանքը մեր Տէրոջը Յիսուս Քրիս-
տոսի ձեռքովը ։

ԳԼ. Զ.

1 Պէտք չէ մեղքի մէջ մնալ , 2 քանի որ մեռած ենք մեղքին , 3 ինչպէս որ մկրտութիւնը կը ցուցնէ ․ 12 ուստի ալ մեղքը թող չթագաւորէ մեր վրայ ․ 18 վասն զի մենք մեր մարմինները պատրաստեցինք արդարութեան ծառաներ ըլլալու , 23 և վասն զի մեղաց վարձքը մահ է ։

1 Ու հիմա ինչ պիտի ըսենք ․ ջ մեղքերու մէջ
2 մնա՞նք արդեօք , որ շնորհքը շատնայ ։ Քաւ
լիցի ․ ռ մենք որ մեղքին մեռանք , ինչպէս դեռ
3 անոր մէջը կենանք ։ Չէ՞ք գիտեր , ս թէ մենք որ
Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք , վ անոր մա-
4 հուանը մկրտուեցանք ։ տ Անոր հետ թաղուեցանք
մկրտութիւնով մահուան համար , որ ինչպէս
Քրիստոս ր Հօրը փառքովը ց յարութիւն առաւ

ո Յոհ. ժբ. 32 ։ Եբր. բ. 9 ։
չ Յոհ. ժե. 22 ։ Գլ. դ. 20 ։ է. 8 ։ Գաղ. գ. 19, 23 ։
պ Ղուկ. է. 47 ։ ա Տիմ. ա. 14 ։
ջ Գլ. գ. 8 ։ Հմր 15 ։
ռ Հմր 11 ։ Գլ. է. 4 ։ Գաղ. բ. 19 ։ գ. 14 ։
ս Կող. գ. 3 ։ ա Պետ. բ. 24 ։
վ ա Կոր. ժե. 29 ։
տ Կող. բ. 12 ։
ր Յոհ. բ. 11 ։ ժա. 40 ։
ց Գլ. ը. 11 ։ ա Կոր. զ. 14 ։ բ Կոր. ժգ. 4 ։

մեռելներէն , ը անանկ ալ մենք կենաց նորոգու-
5 թեան մէջ պտըտինք : թ Ինչու որ եթէ մենք
տնկակից եղանք անոր մահուանը նմանութիւնովը ,
նաև անոր յարութեանը նմանութիւնովն ալ
6 պիտի ըլլանք : Աս գիտնանք որ ժ մեր հին մարդը
անոր հետը խաչուեցաւ , ի որ մեղաց մարմինը փը-
7 ճանայ , որ ասկէ ետև մեղքի չծառայենք : լ Ասան
զի ան որ մեռած է՝ մեղքէն արդարացած է :
8 խ Արդ՝ թէ որ մենք Քրիստոսի հետ մեռանք , կը
հաւատանք որ անոր հետը պիտի ապրինք ալ :
9 Քանզի գիտենք որ ծ Քրիստոս մեռելներէն յարու-
թիւն առած ըլլալով՝ նորէն չմեռնիր , ալ մահը
10 անոր վրայ իշխանութիւն չունի : Ասան զի քանի
որ մեռաւ՝ կ մեղքին մեռաւ մէկ անգամ , և որ կեն-
11 դանի է՝ հ Աստուծոյ կենդանի է : ձ Նմանակ ալ
դուք ձեր անձերը մեղքին մեռած սեպեցէք , ղ բայց
Աստուծոյ կենդանի՝ մեր Տէրոջը Քրիստոս Յիսու-
12 սին ձեռքովը : ճ Ուստի ալ մեղքը չթագաւորէ
ձեր մահկանացու մարմնին վրայ , որ անոր ցան-
13 կութիւններուն հնազանդիք : մ Եւ ձեր անդամները
անիրաւութեան գործիք ըլլալու մի՛ ընծայէք մեղ-
քին , յ հապա ձեր անձերը Աստուծոյ ընծայեցէք՝
որպէս թէ մեռելներէն ողջընցած . և ձեր անդամները
14 արդարութեան գործիքներ՝ Աստուծոյ : ն Քանզի
մեղքը վրանիդ պիտի չիշխէ . ինչու որ օրէնքի
տակ չէք , հապա շնորհաց տակ :

ը Գաղ. զ. 15 ; Եփե. դ. 22, 23, 24 ; Կող. գ. 10 :
թ Փիլ. գ. 10, 11 :
ժ Գաղ. բ. 20 ; ե. 24 ; զ. 14 ; Եփե. դ. 22 ; Կող. գ. 5, 9 :
ի Կող. բ. 11 :
լ ա Պետ. դ. 1 :
խ բ Տիմ. բ. 11 :
ծ Յայտ. ա. 18 :
կ Եբր. թ. 27, 28 :
հ Ղու. ի. 38 :
ձ Հմր 2 :
ղ Գաղ. բ. 19 :
ճ Սաղ. ժթ. 13 ; ճժթ. 133 :
մ Գլ. է. 5 ; Կող. գ. 5 ; Յակ. դ. 1 :
յ Գլ. ժբ. 1 ; ա Պետ. բ. 24 ; դ. 2 :
ն Գլ. է. 4, 6 ; ը. 2 ; Գաղ. ե. 8 :

15 Ուրեմն ի՞նչ . մե՞ղք գործենք՝ շ որ օրէնքի տակ
16 չենք , հապա շնորհքի տակ . քաւ լիցի : Չէ՞ք
գիտեր ո թէ որուն որ անձերնիդ ծառայ կ'ընծայէք
հնազանդելու , ծառայ էք անոր՝ որուն որ կը հնա-
զանդիք , թէ՛ մեղքի՝ որ մահուան կը տանի , և թէ
17 հնազանդելու՝ որ արդարութեան : Բայց գոհու-
թիւն Աստուծոյ , որ թէև դուք մեղաց ծառայ էիք ,
չ սակայն սրտանց հնազանդեցաք այն վարդապետու-
թեան գաղափարին որ ձեզի յանձնուեցաւ :
18 պ Ուստի դուք մեղքէն ազատ ըլլալով՝ արդարու-
19 թեան ծառայ եղաք . (Մարդու սովորութեան պէս
կ'ըսեմ՝ ձեր մարմնին տկարութեանը համար .)
քանզի ինչպէս որ ձեր անդամները անօրէնութեան
համար ընծայեցիք՝ պղծութեան և անօրէնութեան
ծառաներ ըլլալու , անանկ ալ հիմա ձեր անդամ-
ները սրբութեան համար ընծայեցէք՝ արդարու-
20 թեան ծառաներ ըլլալու : ջ Ասան զի երբոր դուք
մեղաց ծառաներ էիք , արդարութենէն ազատ
21 էիք : ռ Ուրեմն այն ժամանակը ի՞նչ պտուղ ու-
նէիք այն բաներէն՝ որոնցմով հիմա կ'ամչնաք .
22 ս ինչու որ անոնց վերջը մահ է : վ Բայց հիմա մեղ-
քէն ազատուած և Աստուծոյ ծառաներ եղած՝ ձեր
պտուղը ունիք սրբութիւնով , ու վերջը յաւիտե-
23 նական կեանք : տ Քանզի մեղաց վարձքը մահ է ,
ր բայց Աստուծոյ ձրի պարգևը յաւիտենական
կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը :

շ ա Կոր. թ. 21 :
ո Մատ. զ. 24 ; Յոհ. ը. 34 ; բ Պետ. բ. 19 :
չ բ Տիմ. ա. 13 :
պ Յոհ. ը. 32 ; ա Կոր. է. 22 ; Գաղ. ե. 1 ; ա Պետ. բ. 16 :
ջ Յոհ. ը. 34 :
ռ Գլ. է. 5 :
ս Գլ. ա. 32 :
վ Յոհ. ը. 32 :
տ Ծն. բ. 17 ; Գլ. ե. 12 ; Յակ. ա. 15 :
ր Գլ. բ. 7 ; ե. 17, 21 ; ա Պետ. ա. 4 :

ԳԼ. Է.

1 Օրէնքը մարդուն վրայ կ'իշխէ՝ քանի որ անիկայ ողջ է . 4 սակայն մենք մեռանք օրէնքին . 7 այսու ամենայնիւ օրէնքը

մեղք չէ, 12 հապա սուրբ՝ արդար և բարի է ։ 16 Պօղոս կը վկայէ անանկ ըլլալը, բայց կը ցաւի որ ինքը կարող չէ զանի-կայ պահելու ։

1 Միթէ չէ՞ք գիտեր՝ եղբայրներ, (քանզի ես օրէն-
քը գիտցողներուն կը խօսիմ,) որ օրէնքը
մարդուս վրայ կ'իշխէ՝ որչափ ժամանակ որ ողջ է ։
2 [ա]Ինչու որ էրիկ ունեցող կնիկը իր ողջ էրիկանը
կապուած է օրէնքով. բայց թէ որ էրիկը մեռնի,
3 արձակուած է էրիկանը օրէնքէն ։ Ուրեմն [բ]քանի
որ էրիկը ողջ է, շուն պիտի ըսուի՝ թէ որ ուրիշ
էրկան մը ըլլայ. բայց թէ որ էրիկը մեռնի, ան
օրէնքէն ազատ կ'ըլլայ, անանկ որ շնացող չըլլար,
4 թէ որ ուրիշ էրկան մը ըլլայ ։ Ուստի դուք ալ
իմ եղբայրներս՝ [գ]Քրիստոսի մարմինովը օրէնքին
մեռաք, որ ուրիշի մը ըլլաք, անոր՝ որ մեռելնե-
րէն յարութիւն առեր է, [դ]որ Աստուծոյ պտուղ
5 բերող ըլլանք. Քանզի քանի որ մենք մարմնով
էինք՝ մեղաց կիրքերը որ օրէնքով կ'ըլլային, [ե]մեր
անդամներուն մէջը կը ներգործէին, [զ]որ մենք մա-
6 հուան պտուղ բերենք ։ Բայց հիմա ան օրէնքէն
արձակուեցանք. ինչու որ մեռանք անոր՝ որով
բռնուած էինք, [է]որ մենք ծառայենք հոգւոյն նո-
րոգութեամբը, և չէ՛ թէ գրոյն հնութեամբը ։
7 Ուրեմն ի՞նչ ըսենք. օրէնքը մե՞ղք է. քաւ
լիցի. [ը]բայց ես մեղքը չէի ճանչնար, եթէ ոչ
օրէնքով. ինչպէս ցանկութիւնն ալ չէի գիտեր,
8 թէ որ օրէնքը ըսած չըլլար, [թ]Մի՛ ցանկար ։ [ժ]Բայց
մեղքը պատուիրանքէն առիթ առնելով՝ իմ մէջս
բոլոր ցանկութիւնները գոյացուց. [ի]ինչու որ

[ա] ա Կոր. է. 39 ։
[բ] Մատ. ե. 32 ։
[գ] Գլ. ը. 2 ։ Գաղ. բ. 19 ։ ե. 18 ։ Եփե. բ. 15 ։ Կող. բ. 14 ։
[դ] Գաղ. ե. 22 ։
[ե] Գլ. զ. 13 ։
[զ] Գլ. զ. 21 ։ Գաղ. ե. 19 ։ Յակ. ա. 15 ։
[է] Գլ. բ. 29 ։ բ Կոր. գ. 6 ։
[ը] Գլ. գ. 20 ։
[թ] Ել. ի. 17 ։ բ Օր. ե. 21 ։ Գոր. ի. 33 ։ Գլ. ժգ. 9 ։
[ժ] Գլ. դ. 15 ։ ե. 20 ։
[ի] ա Կոր. ժե. 56 ։

9 առանց օրէնքի մեղքը մեռած է ։ Ես ալ առանց
օրէնքի ատեն մը կենդանի էի. բայց երբոր պա-
10 տուիրանքը վրայ հասաւ, մեղքը ողջընցաւ, Ու ես
մեռայ. ու ան պատուիրանքը [լ]որ կենաց համար
11 էր, նոյնը ինծի մահուան համար եղաւ ։ Ինչու որ
մեղքը պատուիրանքէն առիթ առնելով՝ իս խա-
12 բեց, ու անով մեռցուց ։ [խ]Ուստի օրէնքը սուրբ
է, ու պատուիրանքը սուրբ և արդար ու բարի ։
13 Ուրեմն բարին ինծի մա՞հ եղաւ. քաւ լիցի.
հապա մեղքը, որպէս զի երեւնայ մեղքը որ ան
բարի բանով ինծի մահ գործեց, որ մեղքը պա-
14 տուիրանքով աւելի մեղաւոր ըլլայ ։ Վասն զի
գիտենք որ օրէնքը հոգեւոր է, բայց ես մարմնաւոր
15 եմ՝ [ծ]մեղքի տակ ծախուած ։ Քանզի ինչ որ
կ'ընեմ՝ չեմ ճանչնար. [կ]չէ՛ թէ ինչ որ կ'ուզեմ՝
ան կ'ընեմ, հապա ինչ որ կ'ատեմ՝ ան կ'ընեմ ։
16 Բայց թէ որ չուզածս կ'ընեմ, հաւանութիւն կու
17 տամ օրէնքին թէ բարի է ։ Իսկ արդ չէ՛ թէ ես
կ'ընեմ անիկայ, հապա մեղքը՝ որ իմ ներսի դիս
18 կը բնակի ։ Քանզի գիտեմ որ [հ]իմ ներսի դիս՝
այսինքն իմ մարմնիս մէջ մէկ բարի բան մը չբը-
նակիր. ինչու որ կամեցողութիւն կայ քովս, բայց
19 բարին 'ի գործ դնելը չեմ գտներ ։ Քանզի չէ՛ թէ
բարին որ կ'ուզեմ՝ կ'ընեմ, հապա չարը որ չեմ
20 ուզեր՝ ան կ'ընեմ ։ Իսկ թէ որ չուզած բանս
կ'ընեմ, ալ չէ՛ թէ ես կ'ընեմ անիկայ, հապա
21 մեղքը՝ որ իմ ներսի դիս բնակած է ։ Ուստի ես
կը գտնեմ օրէնք մը՝ որ երբ բարին ընելը կը կա-
22 մենամ, չարը իմ քովս է ։ [ձ]Վասն զի ներսի
մարդուն նայելով՝ [ղ]Աստուծոյ օրէնքին կը հաւ-

[լ] Ղև. ժը. 5 ։ Եզեկ. ի. 11, 13, 21 ։ բ Կոր. գ. 7 ։
[խ] Սաղ. ժթ. 8 ։ ճժթ. 38, 137 ։ ա Տիմ. ա. 8 ։
[ծ] գ Թագ. իա. 20, 25 ։ դ Թագ. ժէ. 17 ։
[կ] Գաղ. ե. 17 ։
[հ] Ծն. զ. 5 ։ ը. 21
[ձ] բ Կոր. դ. 16 ։ Եփե. գ. 16 ։ Կող. գ. 9, 10 ։
[ղ] Սաղ. ա. 2 ։

23 նիմ ․ ժԲայց ուրիշ օրէնք մը կը տեսնեմ ի իմ
անդամներուս մէջ՝ որ իմ մտքիս օրէնքին դէմ կը
պատերազմի, և զիս գերի կ'ընէ մեղաց օրէնքին
24 որ իմ անդամներուս մէջն է ։ Ինչ խղճալի մարդ
եմ ես ․ ո՞վ զիս պիտի ազատէ աս մահացու մար-
25 մինէն ։ լԳոհութիւն Աստուծոյ մեր Տէրոջը
Յիսուս Քրիստոսի ձեռքովը ․ ուրեմն ես ինքնս
մտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ, ու մարմ-
նով՝ մեղաց օրէնքին ։

ԳԼ․ Ը

1 Անոնք որ Քրիստոսի մէջ են, և Հոգիին ուզածին պէս կ'ապրին, ազատ են դատապարտութենէ ։ 5, 13 Թէ ի՛նչ վնաս կը ծագի մարմինէն, 6, 14 և ի՛նչ շահ՝ Հոգիէն, 17 և ի՛նչ՝ Աստուծոյ որդիք ըլլալէն, 19 որոնց փառաւոր ազատութիւնը՝ որ ամէն ստեղծուածները մեծ փափաքով կը սպասեն անոր, 29 յառաջագոյն սահմանուած է Աստուծմէ ։ 38 Ո՞վ կրնայ զատել մեզ Քրիստոսի սէրէն ։

1 Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս
Յիսուսով եղողներուն՝ որոնք մարմնաւոր կեր-
2 պով չեն վարուիր ։ Ինչու որ խՔրիստոս Յի-
սուսով կենաց հոգիին ծօրէնքը զիս ազատեց կմե-
3 ղաց և մահուան օրէնքէն ։ հՎասն զի ան որ
անկարելի էր օրէնքին՝ որովհետև տկար էր մարմ-
նով, ձԱստուած իր Որդին ղրկեց մեղանչական
մարմնի նմանութեամբ ու մեղքի համար, և
4 դատապարտեց մեղքը ան մարմնին մէջ ․ Որ օրէն-
քին արդարութիւնը կատարուի մեր մէջը, ղոր
մարմնաւորապէս չենք քալեր՝ հապա հոգևորա-
5 պէս ։ ճԻնչու որ մարմնաւոր եղողները մարմնին
բաները կը մտածեն, ու հոգևոր եղողները՝ մհո-

ժ Գաղ․ ե․ 17 ։
ի Գղ․ զ․ 13, 19 ։
լ ա Կոր․ ժե․ 57 ։
խ ա Կոր․ ժե․ 45 ։ բ Կոր․ գ․ 6 ։
ծ Յօհ․ ը․ 36 ։ Գղ․ զ․ 18, 22 ։ Գաղ․ բ․ 19 ։ ե․ 1 ։
կ Գղ․ է․ 24, 25 ։
հ Գոր․ ժգ․ 39 ։ Գղ․ գ․ 20 ։ Եբր․ է․ 18, 19 ։ ժ․ 1, 2, 10, 14 ։
ձ Գաղ․ գ․ 13 ։ բ Կոր․ ե․ 21 ։
ղ Հմր 1 ։
ճ Յօհ․ գ․ 6 ։ ա Կոր․ բ․ 14 ։
մ Գաղ․ ե․ 22, 25 ։

6 գիին բաները ։ յՎասն զի մարմնաւոր խորհուր-
դը մահ է, և հոգևոր խորհուրդը կեանք ու խա-
7 ղաղութիւն ։ նՔանզի մարմնաւոր խորհուրդը
Աստուծոյ դէմ թշնամութիւն է ․ ինչու որ Աս-
տուծոյ օրէնքին չհնազանդիր, շմանաւանդ չկրնար
8 ալ ։ Վասն զի մարմնով եղողները չեն կրնար
9 Աստուծոյ հաճոյ ըլլալ ։ Բայց դուք մարմնով
չէք, հապա հոգիով, ոթէ որ Աստուծոյ Հոգին
ձեր մէջը բնակած է ․ չիսկ թէ որ մէկը Քրիստո-
10 սի Հոգին չունի, անիկայ անորը չէ ։ Ու թէ որ
Քրիստոս ձեր մէջն է, ալ մարմինը մեռած է
մեղքի համար, ու հոգին կենդանի է արդարու-
11 թեան համար ։ Իսկ թէ որ Յիսուսը մեռելնե-
րէն պյարուցանողին Հոգին ձեր մէջը բնակած է,
ջալ անիկայ որ Քրիստոսը մեռելներէն յարուց,
պիտի կենդանացընէ ձեր մահկանացու մարմինները
իր Հոգիովը որ ձեր մէջը կը բնակի ։
12 ռԱպա ուրեմն եղբայրներ՝ պարտապան ենք, չէ
13 թէ մարմնին՝ մարմնաւորապէս ապրելու ․ սԻնչու
որ եթէ մարմնաւորապէս ապրելու ըլլաք, պիտի
մեռնիք ․ բայց թէ որ Հոգիով վմարմնին գործ-
14 քերը սպաննէք, պիտի ապրիք ։ տՎասն զի որոնք
որ Աստուծոյ Հոգիովը կ'առաջնորդուին, անոնք
15 Աստուծոյ որդիքն են ։ րԻնչու որ դուք ծառայու-
թեան հոգին չառիք կրկին ցվախնալու, ւհապա
որդեգրութեան հոգին առիք, որ անով կը կան-

յ Գղ․ զ․ 21 ։ Հմր 13 ։ Գաղ․ զ․ 8 ։
ն Յակ․ դ․ 4 ։
շ ա Կոր․ բ․ 14 ։
ո ա Կոր․ գ․ 16 ։ զ․ 19 ։
չ Յօհ․ գ․ 34 ։ Գաղ․ դ․ 6 ։ Փիլ․ ա․ 19 ։ ա Պետ․ ա․ 11 ։
պ Գոր․ բ․ 24 ։
ջ Գղ․ զ․ 4, 5 ։ ա Կոր․ զ․ 14 ։ բ Կոր․ դ․ 14 ։ Եփե․ բ․ 5 ։
ռ Գղ․ զ․ 7, 14 ։
ս Հմր 6 ։ Գաղ․ զ․ 8 ։
վ Եփե․ դ․ 22 ։ Կող․ գ․ 5 ։
տ Գաղ․ ե․ 18 ։
ր ա Կոր․ բ․ 12 ։ Եբր․ բ․ 15 ։
ց բ Տիմ․ ա․ 7 ։ ա Յօհ․ դ․ 18 ։
ւ Եսա․ ծզ․ 5 ։ Գաղ․ դ․ 5, 6 ։

16 չենք «ն Աբբա՛ Հայր»: ո Նոյն ինքն Հոգին վկայու-
թիւն կու տայ մեր հոգիին հետ, թէ մենք Աստու-
17 ծոյ որդիքն ենք. Ու թէ որ որդիք, ուրեմն ժա-
ռանգներ, չ Աստուծոյ ժառանգներ ու Քրիստոսի
ժառանգակիցներ. պ որ եթէ իր չարչարանացը
կցորդ ըլլանք, իր փառացն ալ հաղորդ ըլլանք:
18 Վասն զի ես այսպէս կը դատեմ որ ջ այս ժա-
մանակիս չարչարանքները բան մը չեն գալու
19 փառքին քով, որ մեզի պիտի յայտնուի: ռ Ինչու
որ ստեղծուածոց եռանդուն ակնկալութիւնը
ս Աստուծոյ որդւոցը յայտնուելուն կը սպասէ:
20 վ Ինչու որ ունայնութեան հպատակեցան ստեղ-
ծուածները՝ (ոչ թէ իրենց կամքովը, հապա անոր
21 համար ՙոր հպատակեցուց՛,) Որ յուսով՝ որ
ստեղծուածները իրենք ալ ապականութեան ծա-
ռայութենէն ազատելով՝ Աստուծոյ որդւոցը փա-
22 ռաւոր ազատութեանը հասնին: Քանզի գիտենք
որ ամէն ստեղծուածները մինչեւ հիմա տ մէկտեղ
23 կը հառաչեն ու ծնանելու ցաւ կը քաշեն: Ու
ոչ միայն անոնք, ր հապա մենք ալ որ Հոգիին
առջի պտուղը ունինք, ց մենք մեզմէ մեր անձերուն
մէջ կը հառաչենք ւ որդեգրութեան՝ այսինքն փ մեր
24 մարմինին ազատութեանը սպասելով: Ինչու որ
յուսով փրկուեցանք. ք բայց յոյսը որ կը տեսնուի՝
յոյս չէ. վասն զի ան բանը որ կը տեսնէ մէկը՝ ալ
25 ինչո՞ւ պիտի յուսայ: Հապա թէ որ չտեսած
բաներնուս կը յուսանք, ալ համբերութիւնով կը
26 սպասենք անոր: Նմանկ ալ Հոգին օգնութեան կը

հասնի մեր տկարութիւններուն՝, օ քանզի ինչ
բանի համար աղօթելու ենք ըստ արժանւոյն, չենք
գիտեր. ֆ բայց ինքը Հոգին բարեխօս կ'ըլլայ
27 մեզի համար անբարբառ հառաչանքներով: ա Ու
սիրտերը Քննողը գիտէ Հոգիին ինչ խորհիլը.
բ քանզի Աստուծոյ կամացը համեմատ բարեխօսու-
թիւն կ'ընէ սուրբերուն համար:
28 Սակայն գիտենք որ ամէն բաները բարիի գոր-
ծակից կ'ըլլան անոնց՝ որ Աստուած կը սիրեն,
գ որոնք անոր նախասահմանութեամբը կանչուած
29 են: դ Վասն զի անոնք որ առաջ կը ճանչնար,
ե առաջուց ալ սահմանեց իր զ Որդւոյն պատկերին
կերպարանակից ըլլալու. է որ անիկայ անդրանիկ
30 ըլլայ շատ եղբայրներու մէջ: Ու որոնք որ առա-
ջուց սահմանեց, ը նաեւ կանչեց զանոնք. և որոնք
որ կանչեց, թ նաեւ արդարացուց զանոնք. և որոնք
որ արդարացուց, ժ նաեւ փառաւորեց զանոնք:
31 Ուրեմն ի՞նչ ըսենք ասոր բաներուս համար. ի թէ
որ Աստուած մեր կողմն է՝ ո՞վ պիտի ըլլայ մեզի
32 հակառակ: լ Ան որ իր Որդւոյն չխնայեց, խ հա-
պա մեր ամենուն համար մատնեց զանիկայ, ալ
ի՞նչպէս անոր հետը ամէն բաները մեզի չպար-
33 գեւեր: Ո՞վ է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ

ն Մար. ժդ. 36:
ո բ Կոր. ա. 22; ե. 5; Եփե. ա. 13; դ. 30:
չ Գոր. իզ. 18; Գաղ. դ. 7:
պ Գոր. ժդ. 21; Փիլ. ա. 29; բ Տիմ. բ. 11, 12:
ջ բ Կոր. դ. 17; ա Պետ. ա. 6, 7; դ. 13:
ռ բ Պետ. գ. 13:
ս ա Յոհ. գ. 2:
վ Հմր 22; Ծն. գ. 19:
տ Երեմ. ժբ. 11:
ր բ Կոր. ե. 5; Եփե. ա. 14:
ց բ Կոր. ե. 2, 4:
ւ Ղու. ի. 36:
փ Ղու. իա. 28; Եփե. դ. 30:
ք բ Կոր. ե. 7; Եբր. ժա. 1:

օ Մատ. ի. 22; Յակ. դ. 3:
ֆ Զաք. ժբ. 10; Եփե. զ. 18:
ա ա Մն. իը. 9; Սաղ. է. 9; Առակ. ժէ. 3; Երեմ. ժա. 20; ժէ. 10; ի. 12; Գոր. ա. 24; ա Թես. բ. 4; Յայտ. բ. 23:
բ ա Յոհ. ե. 14:
գ Գլ. թ. 11, 23, 24; բ Տիմ. ա. 9:
դ Ել. լգ. 12, 17; Սաղ. ա. 6; Երեմ. ա. 5; Մատ. է. 23; Գլ. ժա. 2; բ Տիմ. բ. 19; ա Պետ. ա. 2:
ե Եփե. ա. 5, 11:
զ Յոհ. ժէ. 22; բ Կոր. գ. 18; Փիլ. գ. 21; ա Յոհ. գ. 2:
է Կող. ա. 15, 18; Եբր. ա. 6; Յայտ. ա. 5:
ը Գլ. ա. 6; թ. 24; Եփե. դ. 4; Եբր. թ. 15; ա Պետ. բ. 9:
թ ա Կոր. զ. 11:
ժ Յոհ. ժէ. 22; Եփե. բ. 6:
ի Թու. ժդ. 9; Սաղ. ճժը. 6:
լ Գլ. ե. 6, 10:
խ Գլ. դ. 25:

մեղադիր ըլլայ . ծ Աստուած է որ կ'արդարացընէ .
34 կ Ուրեմն ո՞վ է որ կը դատապարտէ . Քրիստոս
է որ մեռաւ , մանաւանդ թէ յարութիւն ալ
առաւ , հ ու Աստուծոյ աջ կողմն է , ձ որ նաև
35 մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ . Ուրեմն ո՞վ
պիտի զատէ մեզ Քրիստոսի սէրէն . տառա-
պա՞նքը , կամ նեղութի՞ւնը , կամ հալածա՞նքը ,
կամ սո՞վը , կամ մերկութի՞ւնը , կամ վտա՞նգը ,
36 կամ սո՞ւրը . (Ինչպէս որ գրուած է , ղ Ամէն օր
քեզի համար կը սպաննուինք , մորթուելու ոչխա-
37 րի պէս կը սեպուինք ։) ճ Բայց աս ամէն բանե-
րուն մէջ՝ ալ աւելի յաղթող կ'ըլլանք անով որ
38 մեզ սիրեց ։ Ինչու որ ես հաստատ գիտեմ թէ
ո՛չ մահը , և ո՛չ կեանքը , ու ո՛չ հրեշտակները ,
մ և ո՛չ իշխանութիւնները , ու ոչ զօրութիւնները ,
և ոչ ներկայ բաները , ու ոչ գալու բաները ,
39 Ու ո՛չ բարձրութիւնը , ու ո՛չ խորունկութիւ-
նը , և ո՛չ մէկ ուրիշ արարած մը կրնայ մեզ
զատել Աստուծոյ սէրէն , որ Քրիստոս Յիսուս
մեր Տէրոջմով է ։

ծ Եսա. ծ. 8, 9 ։ Յոբ. ժբ. 10, 11 ։
կ Յոբ. լդ. 29 ։
հ Մար. ժզ. 19 ։ Կող. գ. 1 ։ Եբր. ա. 3 ։ ը. 1 ։ ժբ. 2 ։ ա Պետ. գ. 22 ։
ձ Եբր. է. 25 ։ թ. 24 ։ ա Յօհ. բ. 1 ։
ղ Սաղ. խդ. 22 ։ ա Կոր. ժե. 30, 31 ։ բ Կոր. դ. 11 ։
ճ ա Կոր. ժե. 57 ։ բ Կոր. բ. 14 ։ ա Յօհ. դ. 4, 5 ։ Յայտ. ժբ. 11 ։
մ Եփե. ա. 21 ։ զ. 12 ։ Կող. ա. 16 ։ բ. 15 ։ ա Պետ. գ. 22 ։

ԳԼ. Թ.

1 Պօղոս կը յայտնէ իր տրտմութիւնը Հրէից ազգին համար ։ 7 Չէ թէ Աբրահամի բոլոր սերունդը խոստմունքի որդիք էին ։ 18 Աստուած որուն որ կ'ուզէ՝ կ'ողորմի ։ 21 Բրուտը կրնայ կաւը իր ուզածին պէս գործածել ։ 25 Հեթանոսաց կոչումը և Հրէից մերժուիլը մարգարէները նախաձայնած էին ։ 32 Ի՞նչ պատճառաւ այնքան քիչ Հրէաներ ընդունեցին հաւատքով արդարութիւնը ։

1 ա Ստոյգը կ'ըսեմ Քրիստոսով ու չեմ ստեր ,
(իմ խիղճս ալ ինծի կը վկայէ Հոգւով
2 Սրբով ,) բ Որ մեծ տրտմութիւն է ինծի , ու
3 իմ սրտիս անդադար ցաւ ։ գ Քանզի ես ինքս կը
խնդրէի նզովեալ ըլլալ Քրիստոսէն՝ իմ մարմնոյ
կողմանէ եղբայրներուս ու ազգականներուս համար ,
4 դ Որոնք Իսրայէլացի են . ե որ իրենցն է որդեգրու-
թիւնը զ ու փառքը է և ուխտերը ը ու օրէ-
նսդրութիւնը , թ և պաշտօնը , ժ ու խոստմունք-
5 ները . ի Իրենցն են նահապետները , լ իրենցմէ
է Քրիստոս ալ մարմնոյ կողմանէ . խ որ ինքն է
ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս ։
6 Ամէն ։ ծ Բայց ոչ իբր թէ Աստուծոյ խօսքը գե-
տինը ինկած է . կ Քանզի չէ թէ ամէն Իսրայէլէն
7 եղողները Իսրայէլացի են . Ու հ չէ թէ Աբրա-
համի սերունդ ըլլալնուն համար՝ ամէնը որդիք են .
ձ հապա Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի ։
8 Այսինքն՝ չէ թէ անոնք որ մարմնի որդիք են ,
Աստուծոյ որդիք ալ են , ղ հապա խոստմունքի որ-
9 դիքը սերունդ կը սեպուին ։ Ինչու որ խոստմուն-
քին խօսքը աս էր թէ ճ Աս ատենս պիտի գամ ,
10 ու Սառա որդի պիտի ունենայ ։ Ու ոչ միայն
այսքան , մ հապա Ռեբեկային ալ յայտնի է որ

ա Գլ. ա. 9 ։ բ Կոր. ա. 23 ։ ժա. 31 ։ ժբ. 19 ։ Գաղ. ա. 20 ։ Փիլ. ա. 8 ։ ա Տիմ. բ. 7 ։
բ Գլ. ժ. 1 ։
գ Ել. լբ. 32 ։
դ բ Օր. է. 6 ։
ե Ել. դ. 22 ։ բ Օր. ժդ. 1 ։ Երեմ. լա. 9 ։
զ ա Թագ. դ. 21 ։ գ Թագ. ը. 11 ։ Սաղ. կդ. 2 ։ հը. 61 ։
է Գոր. գ. 25 ։ Եբր. ը. 8, 9, 10 ։
ը Սաղ. ճխէ. 19 ։
թ Եբր. թ. 1 ։
ժ Գոր. ժգ. 32 ։ Գլ. դ. 2 ։ Եփե. բ. 12 ։
ի բ Օր. ժ. 15 ։ Գլ. ժա. 28 ։
լ Ղու. գ. 23 ։ Գլ. ա. 3 ։
խ Երեմ. իգ. 6 ։ Յօհ. ա. 1 ։ Գոր. ի. 28 ։ Եբր. ա. 8 ։ ա Յօհ. ե. 20 ։
ծ Թու. իգ. 19 ։ Գլ. գ. 3 ։
կ Յօհ. ը. 39 ։ Գլ. բ. 28, 29 ։ դ. 12, 16 ։ Գաղ. զ. 16 ։
հ Գաղ. դ. 23 ։
ձ Ծն. իա. 12 ։ Եբր. ժա. 18 ։
ղ Գաղ. դ. 28 ։
ճ Ծն. ժը. 14 ։
մ Ծն. իե. 21 ։

յղացաւ մէկէ մը , այսինքն մեր Իսահակ հօրմէն .
11 Ինչու որ տղաքը դեռ չծնած , և դեռ մէկ աղէկ
կամ գէշ բան մը չգործած , (որ Աստուծոյ նա-
խասահմանութիւնը հաստատ մնայ ընտրութեամբ
12 պէս՝ Չէ թէ գործքերէն , ջ հապա անկէ որ կան-
13 չեց ,) իրեն ըսուեցաւ , ռ Մեծը պզտիկին
պիտի ծառայէ . ինչպէս որ գրուած է թէ ս Յա-
կոբը սիրեցի , բայց Եսաւը ատեցի :
14 Ուրեմն ի՞նչ ըսենք . վ միթէ Աստուծոյ քով
15 անիրաւութի՞ւն կայ . քաւ լիցի : Ինչու որ Մով-
սէսին կ'ըսէ , տ Որու որ պիտի ողորմիմ՝ կ'ողոր-
միմ , ու որու վրայ որ պիտի գթամ՝ կը
16 գթամ : Ուրեմն ոչ անկէ է՛ որ կը կամի , ու ոչ
անկէ որ կը վազէ , հապա Աստուծմէ որ կ'ողոր-
17 մի : ր Քանզի գիրքը Փարաւոնին կ'ըսէ , ց Ասոր
համար քեզ վերցուցի , որ իմ զօրութիւնս քեզ-
մով ցուցնեմ , ու բոլոր երկրի մէջ իմ անունս
18 պատմուի : Ուստի որու որ կ'ուզէ՝ կ'ողորմի , և
19 որն որ կ'ուզէ՝ կը խստացնէ : Ուրեմն ինծի պի-
տի ըսես թէ Ան ինչո՞ւ մեղադիր կ'ըլլայ .
20 ւ վասն զի ո՞վ անոր կամքը դէմ դրաւ : Բայց
դուն ո՞վ ես , մարդ , որ Աստուծոյ դէմ պատասխան
կու տաս . փ միթէ ստեղծուածը իր Ստեղծողին կըր-
21 նա՞յ ըսել թէ Զիս ինչո՞ւ ասանկ շինեցիր : ք Բրու-
տը իշխանութիւն չունի՞ կաւին վրայ՝ նոյն շա-
ղուածքէն աման շինելու , օ մէկը պատուոյ և
22 միւսը անարգանաց համար : Հապա ի՞նչ ըսենք

ջ Գլ. դ. 17 ; ը. 28 ;
ռ Ծն. իե. 23 ;
ս Մաղ. ա. 2, 3 ; Տե՛ս բ Օր. իա. 15 ; Առակ. ժգ. 24 ; Մատ. ժ. 37 ; Ղու. ժդ. 26 ; Յօհ. ժբ. 25 ;
վ բ Օր. լբ. 4 ; բ Մն. ժթ. 7 ; Յոբ. ը. 3 ; լդ. 10 ; Սաղ. ղբ. 15 ;
տ Ել. լգ. 19 ;
ր Գաղ. գ. 8, 22 ;
ց Ել. թ. 16 ;
ւ բ Մն. ի. 6 ; Յոբ. թ. 12 ; իգ. 13 ; Դան. դ. 35 ;
փ Ես. իթ. 16 ; խե. 9 ; կդ. 8 ;
ք Առակ. ժզ. 4 ; Երեմ. ժը. 6 ;
օ բ Տիմ. բ. 20 ;

[illegible] , թէ որ Աստուած էր բարկութիւնը
ցուցնել ու իր զօրութիւնը յայտնել ուզելով ,
շատ երկայնմտութեամբ համբերեց կորսուելու
23 պատրաստուած բարկութեան ամաններուն . Նաև
կամ որ իր փառքին մեծութիւնը յայտնի ընէ ողոր-
մելու ամաններուն վրայ , որոնք որ փառքի համար
24 առաջուց պատրաստեց . Այսինքն մեզ որ կանչեց ,
չէ՛ թէ միայն Հրեաներէն , հապա հեթանոսնե-
25 րէն ալ . Ինչպէս Ովսէէին մէջ ալ կ'ըսէ , Իմ
ժողովուրդս չեղողին իմ ժողովուրդս պիտի կանչեմ ,
26 ու սիրելի չեղողին՝ սիրելի : Նաև պիտի ըլլայ թէ
ան տեղը որ անոնց ըսուեցաւ թէ Դուք իմ ժողո-
վուրդս չէք , հոն անոնք Կենդանի Աստուծոյն որ-
27 դիքը պիտի ըսուին : Եսայի ալ Իսրայէլին համար
կը կանչէ , Թէև Իսրայէլի որդւոցը թիւը ծովու
աւազին պէս ըլլայ , միայն մնացորդ մը պիտի ա-
28 զատի : Քանզի Տէրը համառօտ և կարճ բան մը
կ'ընէ արդարութեամբ . ինչու որ Տէրը կարճ
29 բան մը պիտի ընէ երկրի վրայ : Նաև ինչպէս որ
Եսայի առաջուց ըսաւ , Թէ որ զօրաց Տէրը
մեզի սերունդ մը թողուցած չըլլար , մենք Սո-
դոմին պէս պիտի ըլլայինք , ու Գոմորին պիտի
նմանէինք :
30 Ուրեմն ի՞նչ ըսենք . Թէ հեթանոսները որ
արդարութեան չէին հետևեր՝ արդարութեան հա-
սան , ան արդարութեանը որ հաւատքէն է .
31 Բայց Իսրայէլ որ արդարութեան օրէնքին կը
հետևէր , արդարութեան օրէնքին չհասաւ :

ա Պետ. բ. 8 ; Յուդ. 4 ;
ա Թես. ե. 9 ;
Գլ. բ. 4 ; Եփե. ա. 7 ; Կող. ա. 27 ;
Գլ. ը. 28, 29, 30 ;
Գլ. գ. 29 ;
Ովս. բ. 23 ; ա Պետ. բ. 10 ;
Ովս. ա. 10 ;
Ես. ժ. 22, 23 ;
Գլ. ժա. 5 ;
Ես. իը. 21 ;
Ես. ա. 9 ; Ողբ. գ. 22 ;
Ես. ժգ. 19 ; Երեմ. ծ. 40 ;
Գլ. դ. 11 ; ժ. 20 ;
Գլ. ա. 17 ;
Գլ. ժ. 2 ; ժա. 7 ;
Գաղ. ե. 4 ;

32 Ինչո՞ւ համար . վասն զի չէ՛ թէ հաւատքէն , հա-
պա որպէս թէ օրինաց գործքերէն ուզեցին արդարա-
նալ . ժ Ինչու որ գայթակղութեան վէմին վրայ
33 գլորեցան . Ինչպէս որ գրուած է , ի Ահա Սիոնի
մէջ գայթակղութեան քար մը կը դնեմ , լ ու
գլորելու վէմ մը . և ամէն ով որ անոր հաւատայ՝
պիտի չամչնայ :

ԳԼ . Ժ

5 Սուրբ Գիրքը կը ցուցնէ օրէնքէն եղած արդարութեանը և հաւատքէն եղած արդարութեանը մէջտեղի տարբերութիւնը . 11 կը հաստատէ թէ ամէնն ալ՝ Հրեայ և հեթանոս երբոր հաւատան , պիտի չամչնան , 18 և թէ հեթանոսները պիտի ընդունին Աստուծոյ խօսքը ու հաւատան ; 19 Իսրայէլ ալ բաներուն անտեղեակ չէր ;

1 Եղբայրներ՝ իմ սրտիս փափաքը ու աղօթքը առ
Աստուած *Իսրայէլին փրկուելուն համար է :
2 Ինչու որ ես կը վկայեմ անոնց համար խ թէ Աս-
տուծոյ նախանձաւորութիւնը ունին , բայց ոչ
3 թէ գիտութեամբ : ծ Վասն զի անոնք Աս-
տուծոյ արդարութիւնը չգիտնալով , կ ու իրենց
արդարութիւնը հաստատել ուզելով , Աստուծոյ
4 արդարութեանը չհնազանդեցան : հ Քանզի օրէն-
քին վախճանը Քրիստոս է ամէն հաւատացեալին
արդարութեանը համար :
5 Ինչու որ Մովսէս օրէնքէն եղած արդարութիւնը
կը ստորագրէ թէ ձ Զանոնք կատարող մարդը
6 անոնցմով պիտի ապրի : Բայց հաւատքէն եղած
արդարութիւնը ասանկ կ'ըսէ . ղ Մի՛ ըսեր քու

ժ Ղու . բ . 34 ; Ա Կոր . ա . 23 ;
ի Սաղ . ճժը . 22 ; Եսա . ը . 14 ; իը . 16 ; Մատ . իա . 42 ; Ա Պետ . բ . 6 , 7 , 8 ;
լ Գղ . ժ . 11 ;
* Ոմանք՝ անոնց ;
խ Գործ . իա . 20 ; իբ . 3 ; Գաղ . ա . 14 ; դ . 17 ; Տես Գղ . թ . 31 ;
ծ Գղ . ա . 17 ; թ . 30 ;
կ Փիլ . գ . 9 ;
հ Մատ . ե . 17 ; Գաղ . գ . 24 ;
ձ Ղև . ժը . 5 ; Նեեմ . թ . 29 ; Եզեկ . ի . 11 , 13 , 21 ; Գաղ . գ . 12 ;
ղ Բ Օր . լ . 12 , 13 ;

սրտիդ մէջը , Ո՞վ պիտի ելլէ երկինքը ; (այսինքն
7 Քրիստոսը իջեցնելու .) Կամ թէ Ո՞վ պիտի
իջնէ անդունդը , (այսինքն Քրիստոսը մեռելնե-
8 րէն հանելու :) Հապա ի՞նչ կ'ըսէ . ճ Խօսքը
մօտ է , քու բերնիդ մէջը և քու սրտիդ մէջն է ,
այսինքն հաւատքին խօսքը որ մենք կը քարոզենք :
9 Ինչու որ մ եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոս-
տովանիս , ու քու սրտիդ մէջը հաւատաս թէ Աս-
տուած զանիկա մեռելներէն յարուց , պիտի փըր-
10 կուիս . (Վասն զի սրտով կը հաւատայ մէկը ար-
դարանալու , ու բերնով կը խոստովանի փրկուե-
11 լու :) Քանզի գիրքը կ'ըսէ , յ Ամէն ով որ ա-
12 նոր հաւատայ՝ պիտի չամչնայ : Ինչու որ ն խըտ-
րութիւն չկայ Հրէային ու Յոյնին մէջտեղը .
շ Վասն զի ամենուն Տէրը նոյնն է , չ առատ ամե-
13 նուն որ իրեն կը կանչեն : Քանզի ով որ պ Տէ-
րոջը անունը ջ կանչէ՝ պիտի փրկուի :
14 Ուրեմն ի՞նչպէս պիտի կանչեն անոր՝ որուն որ
չհաւատացին . կամ ի՞նչպէս պիտի հաւատան
անոր՝ որուն վրայով չլսեցին . ռ կամ ինչո՞վ պիտի
15 լսեն՝ առանց մէկու մը քարոզելուն . Կամ ի՞նչպէս
պիտի քարոզեն՝ թէ որ չղրկուին . ինչպէս որ
գրուած է , ս Ինչո՜ր գեղեցիկ են խաղաղութիւն
աւետարանողներուն ու բարի բաներու աւետիս
16 տուողներուն ոտքերը : վ Բայց ամէնը հնազանդ
չեղան աւետարանին . քանզի Եսայի կ'ըսէ ,
17 տ Տէ՛ր ո՞վ հաւատաց մեր տուած լուրին : Ուրեմն
հաւատքը լսելէն է , ու լսելը Աստուծոյ խօսքէն :

ճ Բ Օր . լ . 14 ;
մ Մատ . ժ . 32 ; Ղու . ժբ . 8 ; Գործ . ը . 37 ;
յ Եսա . իը . 16 ; խթ . 23 ; Երեմ . ժէ . 7 ; Գղ . թ . 33 ;
ն Գղ . գ . 22 ; Գործ . ժե . 9 ; Գաղ . գ . 28 ;
շ Գործ . ժ . 36 ; Գղ . գ . 29 ; Ա Տիմ . բ . 5 ;
չ Եփե . ա . 7 ; բ . 4 , 7 ;
պ Գործ . թ . 14 ;
ջ Յովել . բ . 32 ; Գործ . բ . 21 ;
ռ Տիտ . ա . 3 ;
ս Եսա . ծբ . 7 ; Նաւ . ա . 15 ;
վ Գղ . գ . 3 ; Եբր . դ . 2 ;
տ Եսա . ծգ . 1 ; Յով . ժբ . 38 ;

18 Բայց կ'ըսեմ, Միթէ չլսեցի՞ն. ճ ամենեւանդ. Բո-
լոր երկիրը ելաւ անոնց ձայնը, մ ու անոնց խօս-
19 քը մինչեւ աշխարհի ծայրերը։ Բայց կ'ըսեմ,
Միթէ Իսրայէլ չգիտցա՞ւ. առաջ Մովսէս կ'ըսէ,
յ Ես ձեզ նախանձի պիտի գրգռեմ անպիտան ժո-
ղովուրդով մը, ն ու անմիտ ազգով մը ձեզ պիտի
20 բարկացնեմ։ Բայց Եսայի կը համարձակի
ու կ'ըսէ, շ Ես անոնց գտնուեցայ՝ որ զիս չէին
փնտռեր, յայտնի եղայ անոնց՝ որ զիս չէին հար-
21 ցըներ։ Սակայն Իսրայէլին վրայով կ'ըսէ, ո Բո-
լոր օրը իմ ձեռքերս երկընցուցի անհնազանդ ու
հակառակող ժողովուրդի մը։

ԳԼ. ԺԱ.

1 Առաքեալը կը յայտնէ թէ Աստուած բոլոր Իսրայէլը մերժած չէր, 7 և թէ ոմանք ընտրուած էին, թէեւ ուրիշները խստացած էին ։ 16 Անոնց դարձի գալուն յոյս կայ ։ 18 Կը ցուցընէ թէ հեթանոսները պիտի չկրնան պարծենալ անոնց դէմ ։ 26 վասն զի անոնց փրկուելուն համար խոստմունք մը եղած է ։ 33 Որչափ անքննելի են Աստուծոյ դատաստանները ։

1 Ուրեմն կ'ըսեմ, չ Միթէ Աստուած իր ժողո-
վուրդը մերժե՞ց. քաւ լիցի. պ ինչու որ ես ալ
Իսրայէլացի եմ, Աբրահամի սերունդէն՝ Բենիա-
2 մինի ցեղէն։ Չմերժեց Աստուած իր ժողովուրդը՝
ջ որն որ ինքը առաջուց ճանչցաւ. միթէ չէ՞ք գի-
տեր Եղիային պատմութեանը մէջ՝ գիրքը ի՞նչ կ'ը-
սէ. ինչո՛ր անիկայ Իսրայէլին համար դանդատ կ'ը-
3 նէ Աստուծոյ, ըսելով, ռ Տէ՛ր, քու մարգարէներդ
մեռցուցին, ու քու սեղաններդ փլցուցին, ու մինակ
4 ես մնացեր եմ, և իմ անձս կը փնտռեն։ Բայց

ճ Սաղ. ժթ. 4 ; Մատ. իդ. 14 ; իը. 19 ; Մար. ժզ. 15 ; Կող. ա. 6, 23 ;
մ Տես գ Թագ. ժը. 10 ; Մատ. դ. 6 ;
յ բ Օր. լբ. 21 ; Գլ. ժա. 11 ;
ն Տիտ. գ. 3 ;
շ Ես. կե. 1 ; Գլ. թ. 30 ;
ո Ես. կե. 2 ;
չ ա Թագ. ժբ. 22 ; Երեմ. լա. 37 ;
պ բ Կոր. ժա. 22 ; Փիլ. գ. 5 ;
ջ Գլ. ը. 29 ;
ռ գ Թագ. ժթ. 10, 14 ;

ի՞նչ կ'ըսէ անոր՝ աստուածային պատասխանը.
ս Ինծի թողուցի՝ կ'ըսէ, եօթը հազար մարդիկ,
5 որոնք Բահաղին ծնրադրութիւն չըրին։ վ Նմանապէս
ալ աս առենս շնորհքին ընտրութեանը համեմատ
6 մնացորդ մը կայ. տ Եւ թէ որ շնորհքով, ու-
րեմն ալ գործքերէն չէ. ապա թէ ոչ՝ շնորհքը
ալ շնորհք չըլլար. * իսկ թէ որ գործքերէն է, ալ
շնորհք չէ. ապա թէ ոչ՝ գործը ալ գործ չըլլար։"
7 Ուրեմն ի՞նչ. ր Իսրայէլ չհասաւ ան բանին որ
կը փնտռէր. բայց ընտրուածները հասան, ու
8 մնացածները կուրցան, (ց Ինչպէս որ գրուած է,
ւ Աստուած անոնց թմրութեան ոգի տուաւ. աչ-
քեր՝ որոնցմով պիտի չտեսնեն, ու ականջներ՝
որոնցմով պիտի չլսեն,) մինչեւ աս օրուան օրս։
9 Եւ Դաւիթ կ'ըսէ, փ Անոնց սեղանը իրենց որո-
գայթ ու որս և գայթակղութիւն ու հատուցում
10 ըլլայ. ք Անոնց աչքերը մթնան որ չտեսնեն, ու
11 անոնց կռնակը միշտ վար ծռէ։ Ուրեմն կ'ը-
սեմ, Միթէ անո՞ր համար անոնք յանցանք ըրին,
որ կործանին. քաւ լիցի. օ Հապա իրենց յան-
ցանքովը հեթանոսաց փրկութիւն եղաւ, որ զա-
12 րենք նախանձի գրգռէ։ Ուստի թէ որ անոնց
յանցանքը աշխարհի մեծութիւն եղաւ, ու անոնց
նուաստութիւնը՝ հեթանոսներուն մեծութիւն, ալ
13 որչափ աւելի անոնց լրութիւնը։ Բայց ձեզի կ'ը-
սեմ հեթանոսներուդ, ֆ Որովհետեւ հեթանոսնե-

ս գ Թագ. ժթ. 18 ;
վ Գլ. թ. 27 ;
տ Գլ. դ. 4, 5 ; Գաղ. ե. 4 ; Տես բ Օր. թ. 4, 5 ;
* Ոմանք չունին ;
ր Գլ. թ. 31 ; ժ. 3 ; բ Կոր. գ. 14 ;
ց Ես. իթ. 10 ;
ւ բ Օր. իթ. 4 ; Ես. զ. 9 ; Երեմ. ե. 21 ; Եզեկ. ժբ. 2 ; Մատ. ժգ. 14 ; Յօհ. ժբ. 40 ; Գործ. իը. 26, 27 ;
փ Սաղ. կթ. 22 ;
ք Սաղ. կթ. 23 ;
օ Գործ. ժգ. 36 ; ժը. 6 ; իբ. 18, 21 ; իը. 24, 28 ; Գլ. ժ. 10 ;
ֆ Գործ. թ. 15 ; ժգ. 2 ; իբ. 21 ; Գլ. ժե. 16 ; Գաղ. ա. 16 ; բ. 2, 7, 8, 9 ; Եփե. գ. 8 ; ա Տիմ. բ. 7 ; բ Տիմ. ա. 11 ;

րուն առաքեալ եմ՝ իմ պաշտօնս կը մեծարեմ .
14 Որ գուցէ իմ մարմինս եղողները նախանձի գրգռեմ ,
15 [կ]ու անոնցմէ մէկ քանիները ապրեցընեմ ։ Վասն
զի թէ որ անոնց մերժուիլը աշխարհին հաշտու-
թիւն է , հապա անոնց ընդունուիլը ի՞նչ պիտի
ըլլայ , բայց եթէ մեռելներէն կենդանի ըլլալ ։
16 [հ]Եթէ որ երախայրին սուրբ է , նաև զան-
գուածը . և թէ որ արմատը սուրբ է , ուրեմն
17 ճիւղերն ալ ։ [ձ]Ու թէ որ ան ճիւղերէն մէկ քանի-
ները կոտրեցան , [ղ]ու դուն որ վայրենի ձիթենի
էիր՝ անոնց մէջ պատուաստեցար , ու ձիթենիին
արմատին և պարարտութեանը հաղորդ եղար ,
18 [ճ]Ճիւղերուն դէմ մի՛ պարծենար . հապա թէ որ
պարծենաս , չէ՛ թէ դուն արմատը վեր բռներ ես ,
19 հապա արմատը քեզ ։ Ուրեմն պիտի ըսես ,
Ճիւղերը կոտրեցան որ ես պատուաստուիմ ։
20 Աղէկ , անոնք անհաւատութիւնով կոտրեցան , ու
դուն հաւատքով հաստատուեցար . [մ]մի՛ հպարտա-
21 նար , [յ]հապա վախցի՛ր . Ինչու որ եթէ Աստուած
բնական ճիւղերուն չխնայեց , գուցէ քեզի ալ չխնա-
22 յէ ։ Ուստի տե՛ս Աստուծոյ քաղցրութիւնը ու
խստութիւնը , կործանուածներուն վրայ խստու-
թիւնը՝ և քու վրադ քաղցրութիւնը , [ն]թէ որ ան
քաղցրութեանը մէջ կենաս . ապա թէ ոչ՝ [շ]դուն
23 ալ պիտի կտրուիս ։ [ո]Ու անոնք ալ՝ թէ որ
իրենց անհաւատութեանը մէջ չկենան , պիտի պա-
տուաստուին . ինչու որ կարող է Աստուած անոնք
24 նորէն պատուաստել ։ Քանզի եթէ դուն քեզ

[կ] ա Կոր . է . 16 ։ թ . 22 ։ ա Տիմ . դ . 16 ։ Յակ . ե . 20 ։
[հ] Ղև . իգ . 10 ։ Թու . ժե . 18 , 19 , 20 , 21 ։
[ձ] Երեմ . ժա . 16 ։
[ղ] Գործ . բ . 39 ։ Եփե . բ . 12 , 13 ։
[ճ] ա Կոր . ժ . 12 ։
[մ] Գղ . ժբ . 16 ։
[յ] Առակ . իը . 14 ։ Ես . կզ . 2 ։ Փիլ . բ . 12 ։
[ն] ա Կոր . ժե . 2 ։ Եբր . գ . 6 , 14 ։
[շ] Յոհ . ժե . 2 ։
[ո] բ Կոր . գ . 16 ։

բնական եղող վայրենի ձիթենիէն կտրուեցար , ու
ան բարի ձիթենիին վրայ որ քեզ բնական չէր ,
պատուաստեցար , ալ ո՛րչափ աւելի անոնք որ
բնական ճիւղեր են , պիտի պատուաստուին իրենց
25 ձիթենիին վրայ ։ Վասն զի չեմ ուզեր եղբայր-
ներ՝ որ չգիտնաք աս խորհուրդս , ([չ]որպէս զի
ինքզինքնիդ իմաստուն չսեպէք .) [պ]որ ըստ մա-
սին կուրութիւն եղաւ Իսրայէլին , [ջ]մինչև որ հե-
26 թանոսներուն լրութիւնը մտնէ . Ու այսպէս բոլոր
Իսրայէլ պիտի փրկուի . ինչպէս որ գրուած է ,
[ռ]Սիոնէն պիտի գայ Փրկիչը , ու Յակոբէն ամբարշ-
27 տութիւնները մէկդի պիտի դարձընէ . [ս]Ու աս է
իմ ուխտս անոնց , երբոր անոնց մեղքերը վերցընեմ ։
28 Աւետարանին նայելով՝ անոնք թշնամի են ձեր սի-
րոյն համար . բայց ընտրութեանը նայելով՝ [վ]սի-
29 րելի են իրենց հարցը սիրոյն համար ։ Ինչու որ
Աստուծոյ պարգևները ու կոչումը [տ]առանց զղջա-
30 նալու են ։ [ր]Վասն զի ինչպէս որ դուք ալ ատեն
մը Աստուծոյ չէիք հաւատար , ու հիմա ողորմու-
31 թիւն գտաք *անոնց անհաւատութիւնովը , Ա-
նանկ ալ անոնք հիմա անհաւատ եղան , որ ձեր
ողորմութիւն գտնելովը՝ անոնք" ալ ողորմու-
32 թիւն գտնեն ։ [ց]Ինչու որ Աստուած ամենն ալ
անհաւատութեան մէջ արգիլեց , որ ամենուն
ողորմի ։
33 Ո՜վ Աստուծոյ մեծութեան ու իմաստութեան
և գիտութեան խորունկութիւնը . [ւ]Ի՜նչպէս անքըն-

[չ] Գղ . ժբ . 16 ։
[պ] Հմր 7 ։ բ Կոր . գ . 14 ։
[ջ] Ղու . իա . 24 ։ Յայտ . է . 9 ։
[ռ] Ես . ծթ . 20 ։ Տես Սաղ . ժդ . 7 ։
[ս] Ես . իէ . 9 ։ Երեմ . լա . 31 , 33 ։ Եբր . ը . 8 ։ ժ . 16 ։
[վ] բ Օր . է . 8 ։ թ . 5 ։ ժ . 15 ։
[տ] Թու . իգ . 19 ։
[ր] Եփե . բ . 2 ։ Կող . գ . 7 ։
* Կամ անոնց անհաւատութեան ատենը , Անանկ ալ անոնք հիմա անհաւատ եղան ձեր ողորմութիւն գտած ատենը՝ որ անոնք
[ց] Գղ . գ . 9 ։ Գաղ . գ . 22 ։
[ւ] Սաղ . լզ . 6 ։

նելի են իր դատաստանները, ու անքննելի են
34 իր ճամբաները: Վասն զի ո՞վ գիտցաւ Տէ-
րոջը միտքը. կամ ո՞վ անոր խորհրդակից եղաւ.
35 Կամ ո՞վ առաջուց անոր բան մը տուաւ, որ
36 փոխարէնը իրեն տրուի: Ինչու որ ամէն բա-
ները անկէ ու անով՝ և անոր համար են. իրեն
փառք յաւիտեանս: Ամէն:

ԳԼ. ԺԲ

1 Պէտք է որ մենք Աստուծոյ ողորմութիւններէն շարժուած՝ ջանանք Աստուծոյ հաճոյ ըլլալու. 3 Պէտք չէ որ մէկը իր վրայ բարձր գաղափար ունենայ, 6 հապա ամէն մարդ պարտի կատարել ան պաշտօնը, որուն որ կանչուած է. 9 Հրամայուած է մեզի սէր ունենալ՝ և ուրիշ շատ պարտաւորութիւններ կատարել. 19 Վրէժխնդրութիւնը յատկապէս արգիլուած է.

1 Արդ կ'աղաչեմ ձեզի եղբայրներ՝ Աստուծոյ
ողորմութեամբը, որ ձեր մարմինները ըն-
ծայէք կենդանի զոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հա-
2 ճելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը. Ու մի՛
կերպարանիք աս աշխարհիս կերպարանքովը, հա-
պա ձեր մտքին նորոգութեամբը նորոգուեցէք,
որ քննէք թէ ինչ է Աստուծոյ կամքը, ան որ
3 բարի ու հաճելի և կատարեալ է: Վասն զի
ինծի տրուած շնորհքովը աս կ'ըսեմ ձեր
մէջը եղող ամէն մէկուն, Որ արժան եղածը

Յոբ. ժա. 7. Սաղ. ղզ. 5.
Յոբ. ժե. 8. Եսա. խ. 13. Երեմ. իգ. 18. ա Կոր. բ. 16.
Յոբ. լզ. 22.
Յոբ. լե. 7. խա. 11.
ա Կոր. ը. 6. Կող. ա. 16.
Գաղ. ա. 5. ա Տիմ. ա. 17. բ Տիմ. դ. 18. Եբր. ժգ. 21. ա Պետ. ե. 11. բ Պետ. գ. 18. Յուդ. 25. Յայտ. ա. 6.
բ Կոր. ժ. 1.
ա Պետ. բ. 5.
Սաղ. ծ. 13, 14. Գլ. զ. 13, 16, 19. ա Կոր. զ. 13, 20.
Եբր. ժ. 20.
ա Պետ. ա. 14. ա Յով. բ. 15.
Եփե. ա. 18. դ. 23. Կող. ա. 21, 22. գ. 10.
Եփե. ե. 10, 17. ա Թես. դ. 3.
Գլ. ա. 5. ժե. 45. ա Կոր. գ. 10. ժե. 10. Գաղ. բ. 9. Եփե. գ. 2, 7, 8.
Առակ. իե. 27. Ժող. է. 16. Գլ. ժա. 20.

մտածելէն աւելի բան չմտածէ, հապա զգաստ կե-
նալ մտածէ, ինչպէս որ Աստուած ամէն մէկուն
4 բաժնեց հաւատքին չափը: Վասն զի ինչ-
պէս որ մէկ մարմինի մէջ շատ անդամներ ունինք,
ու ան ամէն անդամները մի և նոյն գործը չունին.
5 Նոյնպէս ալ մենք շատուորներս մէկ մարմին մըն
ենք Քրիստոսով, և ամէն մէկերնիս իրարու ան-
6 դամներ ենք: Ուստի մենք զանազան պարգև-
ներ ունենալով այն շնորհքին համեմատ որ մեզի
տրուած է, թէ որ մարգարէութիւն՝ հաւատքին
7 չափովը գործածենք, Թէ որ սպասաւորութիւն՝
սպասաւորութեան մէջ ըլլանք. Թէ ան որ կը
8 սորվեցընէ՝ սորվեցընելու եռանդ ըլլայ. Թէ ան որ
կը յորդորէ՝ յորդորելու եռանդ. Ան որ կը բաշխէ՝
պարզմտութեամբ թող ընէ, ան որ վերակացու
է՝ ջանքով, ան որ կ'ողորմի՝ յօժարութեամբ.
9 Սէրը առանց կեղծաւորութեան ըլլայ. չարէն
10 զզուելով՝ բարիին յարելով. Եղբայրսիրու-
թեան մէջ իրարու վրայ գորովալից եղէք. պա-
11 տուելու մէջ իրարմէ անցէք. Ջանքի մէջ թու-
լասիրտ չըլլաք. հոգիով բորբոքեցէք. Տէրոջը
12 ծառայեցէք. Յուսով ուրախ եղէք, նեղութեան

ա Կոր. ժբ. 7, 11. Եփե. դ. 7.
ա Կոր. ժբ. 12. Եփե. դ. 16.
ա Կոր. ժ. 17. ժբ. 20, 27. Եփե. ա. 23. դ. 25.
ա Կոր. ժբ. 4. ա Պետ. դ. 10, 11.
Հմր 3.
Գոր. ժա. 27. ա Կոր. ժբ. 10, 28. ժգ. 2. ժդ. 1, 6, 29, 31.
Գոր. ժգ. 1. Եփե. դ. 11. Գաղ. զ. 6. ա Տիմ. ե. 17.
Գոր. ժե. 32. ա Կոր. ժդ. 3.
Մատ. զ. 1, 2, 3. բ Կոր. ը. 2.
Գոր. ի. 28. ա Տիմ. ե. 17. Եբր. ժգ. 7, 24. ա Պետ. ե. 2.
բ Կոր. թ. 7.
ա Տիմ. ա. 5. ա Պետ. ա. 22.
Սաղ. լդ. 14. լզ. 4. ղէ. 10. Ամով. ե. 15.
Եբր. ժգ. 1. ա Պետ. ա. 22. բ. 17. գ. 8. բ Պետ. ա. 7.
Փիլ. բ. 3. ա Պետ. ե. 5.
Ղու. ժ. 20. Գլ. ե. 2. ժե. 13. Փիլ. գ. 1. դ. 4. ա Թես. ե. 16. Եբր. գ. 6. ա Պետ. դ. 13.
Ղու. իա. 19. ա Տիմ. զ. 11. Եբր. ժ. 36. ժբ. 1. Յակ. ա. 4. ե. 7. ա Պետ. բ. 19, 20.

13 մէջ համբերեցէ՛ք. Հաստատ աղօթքի կեցէ՛ք. Սուր-
բերուն պիտոյքը հաղորդեցէ՛ք. հիւրասիրու-
14 թեան ետեւէ եղէք. Ձեզ հալածողները օրհնե-
15 ցէ՛ք, օրհնեցէ՛ք ու մի՛ անիծէք. Խնդացողներուն
հետ խնդացէ՛ք, և լացողներուն հետ լացէ՛ք.
16 Իրարու վրայ մի և նոյն խորհուրդը ունեցէք.
ամբարտաւանութիւն մի՛ ընէք, հապա խոնարհնե-
րուն հետ խոնարհեցէ՛ք. Ինքզինքնիդ իմաստուն
17 տեղ մի՛ դնէք. Չարութեան փոխարէն մէկուն
չարութիւն մի՛ հատուցանէք. ամէն մարդոց առ-
18 ջեւ բարի բաներ ընելու հոգ տարէք: Որչափ որ
կարելի է ձեզի՝ ամէն մարդոց հետ խաղաղութիւն
19 ունեցէք: Սիրելի՛ք՝ վրէժխնդրութիւն մի՛ ընէք
ձեր անձերուն համար, հապա բարկութեան տեղ
տուէք. ինչու որ գրուած է, Վրէժխնդրու-
թիւնը իմս է, ես պիտի հատուցանեմ՝ կ՚ըսէ Տէ-
20 րը: Ուստի թէ որ քու թշնամիդ անօթեցեր է՝
հաց տուր անոր, և թէ որ ծարաւ է՝ ջուր տուր
անոր. քանզի աս ընելով՝ անոր գլխուն վրայ կրա-
21 կի կայծեր պիտի դիզես: Չարէն մի՛ յաղթուիր,
հապա բարիով յաղթէ չարին:

Ղու. ժբ. 1. Գոր. բ. 42. ժբ. 5. Կող. դ. 2. Եփե. զ. 18. ա Թես. ա. 17.
ա Կոր. ժզ. 1. բ Կոր. թ. 1, 12. Եբր. զ. 10. ժգ. 16. ա Յօհ. գ. 17.
ա Տիմ. գ. 2. Տիտ. ա. 8. Եբր. ժգ. 2. ա Պետ. դ. 9.
Մատ. ե. 44. Ղու. զ. 28. իգ. 34. Գոր. է. 59. ա Կոր. դ. 12. ա Պետ. բ. 23. գ. 9.
ա Կոր. ժբ. 26.
Գլ. ժե. 5. ա Կոր. ա. 10. Փիլ. բ. 2. դ. 16. ա Պետ. գ. 8.
Սաղ. ձլա. 1, 2. Երեմ. խե. 5.
Առակ. գ. 7. իզ. 12. Ես. ե. 21. Գլ. ժա. 25.
Առակ. ի. 22. Մատ. ե. 39. ա Թես. ե. 15. ա Պետ. գ. 9.
Գլ. ժդ. 16. բ Կոր. ը. 21.
Մար. թ. 49. Գլ. ժդ. 19. Եբր. ժբ. 14.
Ղև. ժթ. 18. Առակ. իդ. 29. Հմր 17.
բ Օր. լբ. 35. Եբր. ժ. 30.
Ել. իգ. 4, 5. Առակ. իե. 21, 22. Մատ. ե. 44.

ԳԼ. ԺԳ

1 Պարտինք հնազանդ ըլլալ իշխաններուն, և անոնց վերաբերեալ մեր ամէն պարտաւորութիւնները կատարել: 8 Օրէնքին լրումը սէրն է: 11 Զեղխութիւն, գինովութիւն և խաւարին գործքերը անվայել են քրիստոնեաներուն:

1 Ամէն մարդ իր վրան եղած իշխանութիւններուն
թող հնազանդի. վասն զի չկայ իշխանու-
թիւն մը որ Աստուծմէ չըլլայ. և անոնք որ կան՝
2 Աստուծմէ կարգուած են. Ուրեմն ան որ իշխա-
նութեան դէմ կը կենայ, Աստուծոյ հրամանին դէմ
կը կենայ. և անոնք որ դէմ կը կենան, անձերնուն
3 դատապարտութիւն կ՚ընդունին: Վասն զի իշ-
խանները բարի գործքերու վախ տալու չեն, հա-
պա չարերու. կ՚ուզե՞ս չվախնալ իշխանութե-
նէն. բարի գործէ, ու անկէ գովութիւն պիտի ըն-
4 դունիս. Ինչու որ անիկայ Աստուծոյ սպասաւորն
է քեզի բարիի համար. բայց թէ որ դուն չար կը
գործես, վախցիր. ինչու որ դատարկ տեղը մէջ-
քը թուր չէ կապեր, քանզի Աստուծոյ սպասաւորն
է, և վրէժխնդիր՝ բարկութիւն հասցնելու անոր
5 վրայ որ չար կը գործէ: Անոր համար պէտք է
հնազանդ ըլլալ, չէ թէ միայն բարկութեանը
6 համար՝ հապա խղճմտանքի համար ալ: Աս
պատճառով է որ տուրք ալ կու տաք. ինչու որ
Աստուծոյ սպասաւորներն են ան նոյն բանին հոգ
7 տանելու: Ուստի հատուցէք պէտք եղածը ա-
մենուն. որուն որ տուրք տալու է՝ տուրքը,
որուն որ մաքս՝ մաքսը, որուն որ վախ՝ վախնալը,
որուն որ պատիւ՝ պատիւը:
8 Բնաւ մէկուն պարտական մի՛ գտնուիք, միայն

Տիտ. գ. 1. ա Պետ. բ. 13.
Առակ. ը. 15, 16. Դան. բ. 21. դ. 32. Յօհ. ժթ. 11.
Տիտ. գ. 1.
ա Պետ. բ. 14. գ. 13.
Ժող. ը. 2.
ա Պետ. բ. 19.
Մատ. իբ. 21. Մար. ժբ. 17. Ղու. ի. 25.

թէ մէկզմէկ սիրելու. ը Վասն զի ով որ ընկերը կը
9 սիրէ, օրէնքը կը կատարէ. թ Ինչու որ ան Մի
շնար, Մի սպաններ, Մի գողնար, Սուտ
վկայութիւն մի՛ ըներ, Մի ցանկար, եւ ուրիշ
ինչ պատուէր որ կայ՝ Բոլորը աս խօսքին մէջ կը
բովանդակուի թէ, ժ Քու ընկերդ սիրես քու ան-
10 ձիդ պէս: Սէրը ընկերին գէշութիւն չըներ. ու-
րեմն ի օրէնքին լրումը սէրն է:
11 Ու այսպէս ըրէ՛ք՝ գիտնալով աս ատենս, լ Որ
հիմա ժամանակ է մեզի քունէ արթըննալու. ին-
չու որ հիմա մօտ է մեզի փրկութիւնը՝ քան թէ ան
12 ատենը որ հաւատացինք: Գիշերը շատ անցած է
ու ցորեկը մօտեցած. խ Ուստի մէկդի ընենք խաւա-
րին գործերը, ծ ու վրանիս հագնինք լուսոյ զէն-
13 քերը: կ Որպէս թէ ցորեկ ատեն պարկեշտու-
թեամբ պտըտինք, հ չէ՛ թէ անառակութիւննե-
րով ու գինովութիւններով, ձ չէ՛ թէ խառնակ
անկողիններով, ու պղծութիւններով, ղ չէ՛ թէ
14 հակառակութիւնով ու նախանձով. ճ Հապա
հագէ՛ք Տէր Յիսուս Քրիստոսը, մ ու մարմ-
նոյ խնամք մի՛ տանիք ցանկութիւններու համար:

ը Հմր 10; Գաղ. ե. 14; Կող. գ. 14; ա Տիմ. ա. 5; Յակ. բ. 8;
թ Ել. ի. 13, եւն; բ Օր. ե. 17, եւն; Մատ. ժթ. 18;
ժ Ղև. ժթ. 18; Մատ. իբ. 39; Մար. ժբ. 31; Գաղ. ե. 14; Յակ. բ. 8;
ի Մատ. իբ. 40; Հմր 8;
լ ա Կոր. ժե. 34; Եփե. ե. 14; ա Թես. ե. 5, 6;
խ Եփե. ե. 11; Կող. գ. 8;
ծ Եփե. զ. 13; ա Թես. ե. 8;
կ Փիլ. դ. 8; ա Թես. դ. 11; ա Պետ. բ. 12;
հ Առակ. իգ. 20; Ղու. իա. 34; ա Պետ. դ. 3;
ձ ա Կոր. զ. 9; Եփե. ե. 5;
ղ Յակ. գ. 14;
ճ Գաղ. գ. 27; Եփե. դ. 24; Կող. գ. 10;
մ Գաղ. ե. 16; ա Պետ. բ. 11;

ԳԼ. ԺԴ

1 Պէտք չէ որ մարդիկ անտարբեր բաներու համար մէկզմէկ անարգեն եւ մէկզմէկ դատեն. 13 Հապա զգուշանան որ անոնցմով գայթակղութիւն չտան իրենց եղբայրներուն: 15 Առաքեալը շատ պատճառներով կը ցուցընէ աս վարմունքին անփոյթել ըլլալը:

1 ա Հաւատքի մէջ տկար եղողը ընդունեցէ՛ք՝ չէ թէ
2 տարակուսական որոշմունքներով: Մէկը կը
հաւատայ բ որ ամէն բան կրնայ ուտել. եւ ան որ
3 տկար է՝ կանանչեղէն կ'ուտէ: Ան որ կ'ուտէ՝ չու-
տողը թող չանարգէ, գ ու ան որ չուտեր՝ ուտողը
թող չդատէ. ինչու որ Աստուած զանիկայ ընդու-
4 ներ է: դ Դուն ո՞վ ես որ ուրիշին ծառան կը դա-
տես. իր Տէրոջը կը կանգնի կամ կ'իյնայ. բայց
պիտի կանգնի, ինչու որ Աստուած կարող է զանի-
5 կայ կանգնեցընել: ե Մէկը մէկ օրը ուրիշ օրէն ա-
ւելի կը սեպէ, մէկն ալ ամէն օրը մէկ կը սեպէ.
6 թող ամէն մարդ իր միտքը հաճեցընէ: զ Ան որ
կը հոգայ օրը, Տէրոջը կը հոգայ, եւ ան որ չհոգար
օրը, Տէրոջը չհոգար. ու ան որ կ'ուտէ, Տէրոջը
կ'ուտէ, է քանզի Աստուծմէ կը գոհանայ. եւ ան որ
չուտեր, Տէրոջը չուտեր, ու Աստուծմէ կը գոհա-
7 նայ: ը Ինչու որ մեզմէ մէկը իր անձին համար
չապրիր, ու մէկը ինքզինքին համար չմեռնիր:
8 Քանզի թէ որ ապրինք, Տէրոջը համար կ'ապրինք,
եւ թէ որ մեռնինք, Տէրոջը համար կը մեռնինք.
ուրեմն թէ՛ ապրինք եւ թէ մեռնինք, մենք Տէ-
9 րոջն ենք: Վասն զի թ Քրիստոս ալ անոր համար
մեռաւ *ու ապրեցաւ, ժ որ աս հաւասար մեռել-
10 ներուն ու կենդանիներուն իշխէ: Իսկ դուն ինչո՞ւ
քու եղբայրդ կը դատես, կամ դուն ինչո՞ւ քու
եղբայրդ կ'անարգես. ի Վասն զի ամէնքս ալ
11 Քրիստոսի ատեանին առջեւը պիտի կայնինք: Ինչու

ա Գլ. ժե. 1, 7; ա Կոր. ը. 9, 11; թ. 22;
բ Հմր 14; ա Կոր. ժ. 25; ա Տիմ. դ. 4; Տիտ. ա. 15;
գ Կող. բ. 16;
դ Յակ. դ. 12;
ե Գաղ. դ. 10; Կող. բ. 16;
զ Գաղ. դ. 10;
է ա Կոր. ժ. 31; ա Տիմ. դ. 3;
ը ա Կոր. զ. 19, 20; Գաղ. բ. 20; ա Թես. ե. 10; ա Պետ. դ. 2;
թ բ Կոր. ե. 15;
* Ոմանք՝ ու յարութիւն առաւ, եւ նորէն
ժ Գործ. ժ. 36;
ի Մատ. իե. 31, 32; Գործ. ժ. 42; ժէ. 31; բ Կոր. ե. 10; Յուդ. 14, 15;

որ գրուած է, լ «Ես կենդանի եմ՝ կ՚ըսէ Տէրը, որ
ամէն ծունկ ինծի պիտի ծռի, և ամէն լեզու Աս-
12 տուծոյ պիտի խոստովանի»։ խ Ուրեմն մեզմէ ամէն
մէկը Աստուծոյ հաշիւ պիտի տայ իր անձին համար։
13 Ասկէ ետեւ իրար չդատենք, հապա աւելի ասոր որո-
շումը ըրէք մտքերնուդ մէջ՝ ծ խոչ կամ գայթակ-
14 ղութիւն չդնել եղբօրը։ Ես գիտեմ ու հաստա-
տուած եմ Տէր Յիսուսով, կ որ մէկ բան մը ինք-
իրմէ պիղծ չէ, բայց հ անոր որ պիղծ կը սեպէ մէկ
15 բան մը, անոր պիղծ է ան։ Իսկ թէ որ կերա-
կուրի համար քու եղբայրդ տրտմի, ալ դուն սի-
րով չվարուեցար. ձ Դուն կերակուրովդ մի՛ կորսնց-
ըներ անիկայ՝ որուն համար որ Քրիստոս մեռաւ։
16 ղ Ուրեմն չըլլայ որ ձեր բարիին համար չար խօսին։
17 ճ Ինչու որ Աստուծոյ արքայութիւնը կերակուր ու
խմելիք չէ՛, հապա արդարութիւն և խաղաղու-
18 թիւն ու խնդութիւն Հոգւով Սրբով։ Քանզի
թէ որ մէկը ասոր բաներով Քրիստոսի կը ծառայէ,
մ անիկայ Աստուծոյ հաճելի է՝ ու մարդոց գովելի։
19 յ Ասոր ուրեմն խաղաղութեան ն և իրարու շինու-
20 թեան ետեւէ ըլլանք։ շ Չըլլայ որ կերակուրի պատ-
ճառով Աստուծոյ գործը քակես. ո ամէն բան մա-
քուր է. չ միայն թէ ան մարդուն է գէշ՝ որ գայթ-
21 ակղութիւն տալով կ՚ուտէ։ պ Աղէկ է
միս չուտել և գինի չխմել, ոչ ալ բան մը ընել,
որով քու եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի
22 կամ կը տկարանայ։ Դուն հաւատք ունի՞ս. ա-

լ Եսա. խե. 23 ; Փիլ. բ. 10 ;
խ Մատ. ժբ. 36 ; Գաղ. զ. 5 ; ա Պետ. դ. 5 ;
ծ ա Կոր. ը. 9, 13 ; ժ. 32 ;
կ Գործ. ժ. 15 ; Հռ 2, 20 ; ա Կոր. ժ. 25 ; ա Տիմ. դ. 4 ; Տիտ. ա. 15 ;
հ ա Կոր. ը. 7, 10 ;
ձ ա Կոր. ը. 11 ;
ղ Գլ. ժբ. 17 ;
ճ ա Կոր. ը. 8 ;
մ բ Կոր. ը. 21 ;
յ Սաղ. լդ. 14 ; Գլ. ժբ. 18 ;
ն Գլ. ժե. 2 ; ա Կոր. ժդ. 12 ; ա Թես. ե. 11 ;
շ Հռ 15 ;
ո Մատ. ժե. 11 ; Գործ. ժ. 15 ; Հռ 14 ; Տիտ. ա. 15 ;
չ ա Կոր. ը. 9, 10, 11, 12 ;
պ ա Կոր. ը. 13 ;

նիկայ քեզի՛ պահէ Աստուծոյ առջեւը. ջ Երանի՜
անոր որ իր անձը չդատապարտեր անով՝ որ ինք
23 * կ՚ընդունի։ Բայց ան որ խիղճ կ՚ընէ, թէ որ
ուտէ՝ կը դատապարտուի, վասն զի չէ թէ հաւատ-
քով կ՚ուտէ. ռ քանզի ինչ բան որ հաւատքով
չէ, մեղք է։

ԳԼ. ԺԵ.

1 Հաւատքի մէջ զօրաւորները պէտք է որ տկարներուն համբերեն ; 2 Մենք մեր անձին հաճոյ ըլլալու չենք ; 3 վասն զի Քրիստոս ալ իր անձին հաճոյ չեղաւ. 7 հապա մէկզմէկ ընդունելու ենք, ինչպէս որ Քրիստոս ալ մեզ ամէնքս ընդունեց ; 8 թէ՛ Հրեաները 9 և թէ հեթանոսները ; 15 Պօղոս իր գրած թուղթին պատճառը կը ցուցնէ ; 28 կը յուսայ զանոնք տեսնելու ; 30 և անոնց աղօթքը կը խնդրէ ;

1 ս Պէտք է մեզի որ կարող ենք, վ տկարներուն
տկարութիւնը վերցընել, և չէ թէ միայն մեր
2 անձին հաճոյ ըլլալ. տ Հապա մեզմէ ամէն մէկը
ր շինութեան համար իր ընկերին հաճոյ ըլլայ
3 բարի բաներու մէջ։ ց Քանզի Քրիստոս ալ
չէ՛ թէ իր անձին հաճոյ եղաւ, հապա ինչպէս
որ գրուած է, ւ «Քեզ նախատողներուն նախա-
4 տինքները իմ վրաս ինկան»։ փ Վասն զի ինչ որ
առաջուց գրուեցաւ, մեր սորվելուն համար գրուե-
ցաւ, որ համբերութիւնով ու Գիրքերուն մխի-
5 թարութիւնովը յոյս ունենանք։ ք Եւ համբե-
րութեան ու մխիթարութեան Աստուածը տայ ձե-
զի իրարու հետ մի և նոյն խորհուրդը ունենալ
6 Քրիստոս Յիսուսի օրէնքին պէս. օ Որ մէկ սրտով
ու մէկ բերնով փառաւորէք զԱստուած ու մեր

ջ ա Յով. գ. 21 ;
* Կամ կը փորձէ ;
ռ Տիտ. ա. 15 ;
ս Գաղ. զ. 1 ;
վ Գլ. ժդ. 1 ;
տ ա Կոր. թ. 19, 22 ; ժ. 24, 33 ; ժդ. 5 ; Փիլ. բ. 4, 5 ;
ր Գլ. ժդ. 19 ;
ց Մատ. իզ. 39 ; Յով. ե. 30 ; զ. 38 ;
ւ Սաղ. կթ. 9 ;
փ Գլ. դ. 23, 24 ; ա Կոր. թ. 9, 10 ; ժ. 11 ; բ Տիմ. գ. 16, 17 ;
ք Գլ. ժբ. 16 ; ա Կոր. ա. 10 ; Փիլ. գ. 16 ;
օ Գործ. դ. 24, 32 ;

7 Տէրոջը Յիսուս Քրիստոսի Հայրը ։ ժ Անոր հա-
մար մէկզմէկ ընդունեցէք, ի ինչպէս որ Քրիստոս
ալ մեզ ընդունեց Աստուծոյ փառքին համար ։
8 Բայց կ՚ըսեմ լ թէ Յիսուս Քրիստոսի թլփա-
տութեան պաշտօնեայ ըլլալը Աստուծոյ ճշմար-
տութեանը համար էր, խ որ նախահայրերուն
9 տրուած խոստումները հաստատէ ․ ծ Սակայն
հեթանոսները ողորմութեան համար զԱստուած
փառաւորեն ․ ինչպէս որ գրուած է, կ Անոր համար
ազգերուն մէջը քեզ պիտի գովեմ, և քու ա-
10 նուանդ սաղմոս պիտի երգեմ ։ Նաև դարձեալ
կ՚ըսէ թէ հ Ո՛վ ազգեր՝ անոր ժողովուրդին ուրա-
11 խակի՛ց եղէք ։ Նաև դարձեալ թէ ձ Օրհնեցէ՛ք
Տէրը՝ ո՛վ բոլոր ազգեր, ու գովեցէ՛ք անիկա՝ ո՛վ
12 բոլոր ժողովուրդներ ։ Նաև դարձեալ Եսայի կ՚ը-
սէ ; ղ Յեսսէին մէկ արմատը պիտի ըլլայ, ու ան
որ ազգերուն իշխան պիտի կայնի, ազգերը անոր
13 պիտի յուսան ։ ճ Արդ յուսոյ Աստուածը ձեզ
լեցընէ բոլոր ուրախութիւնով ու խաղաղութիւ-
նով հաւատալու մէջ ; որ առատանաք յուսով
Հոգւոյն Սրբոյ զօրութեամբը ։
14 մ Ես ինքս ալ հաստատուած եմ ձեզի համար՝
իմ եղբայրներս, որ դուք լեցուն էք բարութիւ-
նով, յ լեցուած էք ամէն գիտութիւնով, և
15 կրնաք մէկզմէկ խրատել ։ Սակայն մէկ կողմանէ
համարձակաբար գրեցի ձեզի՝ իմ եղբայրներս, որ-
պէս թէ միտքերնիդ ձգեմ աս բաները ն ան շնորհ-

ժ Գլ. ժդ. 1, 3 ։
ի Գլ. ե. 2 ։
լ Մատ. ժե. 24 ։ Յովհ. ա. 11 ։ Գործ. գ. 25, 26 ։ ժգ. 46 ։
խ Գլ. դ. 3 ։ բ Կոր. ա. 20 ։
ծ Յովհ. ժ. 16 ։ Գլ. թ. 24 ։
կ Սաղ. ժը. 49 ։
հ բ Օր. լբ. 43 ։
ձ Սաղ. ճժէ. 1 ։
ղ Ես. ժա. 1, 10 ։ Յայտ. ե. 5 ։ իբ. 16 ։
ճ Գլ. ժբ. 12 ։ ժդ. 17 ։
մ բ Պետ. ա. 12 ։ ա Յովհ. բ. 21 ։
յ ա Կոր. ը. 1, 7, 10 ։
ն Գլ. ա. 5 ։ ժբ. 3 ։ Գաղ. ա. 15 ։ Եփ. գ. 7, 8 ։

քին պատճառաւը՝ որ Աստուծմէ ինծի տրուած է,
16 շ Որ ես Յիսուս Քրիստոսի սպասաւորը ըլլամ
հեթանոսներուն մէջ, և Աստուծոյ աւետարանը մա-
տակարարեմ, որպէս զի ո հեթանոսաց ընծայու-
մը ընդունելի ըլլայ՝ Սուրբ Հոգիով սրբուելով ։
17 Ուստի Աստուծոյ քովը պարծանք ունիմ Քրիստոս
18 Յիսուսով ։ չ Ինչու որ չեմ համարձակիր խօսելու
ան բաներէն մէկը, որ Քրիստոս իմ ձեռքովս գոր-
ծած չէ պ հեթանոսները հնազանդեցընելու համար՝
19 խօսքով ու գործքով ․ ջ Նշաններու ու հրաշքներու
զօրութիւնով, * Աստուծոյ Հոգւոյն զօրութիւնովը․
այնանկ որ ես Երուսաղէմէն սկսած՝ և շրջան ընելով
մինչև Իլիւրիկեցւոց կողմերը Քրիստոսի աւետարա-
20 նը լեցուցի ։ Այնանկ ջանացի աւետարանը քարո-
զելու ՝ չէ թէ ուր որ Քրիստոսի անունը յիշուած
էր, որ չըլլայ թէ ռ մէկ ուրիշի մը դրած հիմին վրայ
21 շինեմ, հապա ինչպէս որ գրուած է ․ ս Թէ որոնց
որ չպատմուեցաւ անոր վրայով՝ պիտի տեսնեն, ու
22 որոնք որ չլսեցին՝ պիտի իմանան ։ վ Անոր համար
23 ալ շատ արգիլուեցայ ձեզի գալէն ։ Բայց հիմա
որ աս կողմերը ալ ինծի տեղ չկայ, տ ու շատ
տարիներէ ՚ի վեր խիստ կը փափաքիմ ձեզի գա-
24 լու, Երբոր դէպ ի Սպանիա երթամ, ր կը յու-
սամ որ անցնելու ատենս ձեզ տեսնեմ, ու ձեզմէ
յուղարկուիմ հոն երթալու, թէ որ առաջ քիչ մը
25 ձեզմով լեցուիմ ։ ց Բայց հիմա Երուսաղէմ կ՚եր-
26 թամ սուրբերուն սպասաւորելու ։ ւ Վասն զի

շ Գլ. ժա. 13 ։ Գաղ. բ. 7, 8, 9 ։ ա Տիմ. բ. 7 ։ բ Տիմ. ա. 11 ։ Փիլ. բ. 17 ։
ո Ես. կզ. 20 ։ Փիլ. բ. 17 ։
չ Գործ. իա. 19 ։ Գաղ. բ. 8 ։
պ Գլ. ա. 5 ։ ժզ. 26 ։
ջ Գործ. ժթ. 11 ։ բ Կոր. ժբ. 12 ։
* Ոմանք՝ Սուրբ
ռ բ Կոր. ժ. 13, 15, 16 ։
ս Ես. ծբ. 15 ։
վ Գլ. ա. 13 ։ ա Թես. բ. 17, 18 ։
տ Գործ. ժթ. 21 ։ Հմր 32 ։ Գլ. ա. 11 ։
ր Գործ. ժե. 3 ։ Հմր 32 ։
ց Գործ. ժթ. 21 ։ ի. 22 ։ իդ. 17 ։
ւ ա Կոր. ժզ. 1, 2 ։ բ Կոր. ը. 1 ։ թ. 2, 12 ։

Մակեդոնացիք և Աքայեցիք յօժարեցան՝ որ Ե-
րուսաղէմի մէջ եղած աղքատ սուրբերուն քիչ մը
27 հաղորդութիւն ընեն ․ Յօժարեցան , ինչու որ
անոնց պարտական ալ են ․ ‡ վասն զի թէ որ ա-
նոնց հոգևոր բաներուն հաղորդ եղան հեթանոս-
ները , † կը պարտաւորին որ հաղորդութիւն ընեն
28 անոնց՝ մարմնաւոր բաներու մէջ ալ ։ Ուրեմն
ասիկայ կատարելով՝ • ու կնքելով անոնց աս պը-
29 տուղը , ձեզմէ Սպանիա պիտի անցնիմ ։ Եւ
§ աս գիտեմ որ իմ ձեզի գալու ատենս՝ Քրիստոսի
* աւետարանին լեցուն օրհնութիւնովը պիտի գամ ։
30 Ձեզի կ'աղաչեմ եղբայրներ՝ մեր Տէր Յիսուս
Քրիստոսով , — ու Հոգւոյն սիրովը , ⊧ որ ինծի
հետ պատերազմակից ըլլաք ջերմ աղօթքներուն մէջ
31 առ Աստուած ինծի համար , ‡ Որ Հրէաստանի
մէջ հաւատքի չհնազանդողներէն ազատուիմ , ⊤ ու
իմ Երուսաղէմ ընելու սպասաւորութիւնս սուր-
32 բերուն ընդունելի ըլլայ , ⊦ Որպէս զի Աստուծոյ
կամքովը ուրախութեամբ ⁊ ձեզի գալով՝ ⊦ ձեզի հետ
33 հանգչիմ ։ ⊏ Եւ խաղաղութեան Աստուածը ձեր
ամենուն հետը ըլլայ ։ Ամէն ։

ԳԼ. ԺԶ.

3 Պօղոս կը խնդրէ եղբայրներէն՝ շատերուն բարև տալ , 17 և
կը խրատէ զանոնք զգոյշ ըլլալ հերձուածողներէն և գայ-
թակղութիւն տուողներէն ․ 21 զանազան բարևներէն ետև
կը վերջացընէ իր թուղթը փառք և գոհութիւն տալով Աս-
տուծոյ ։

‡ Գլ. ժա. 17 ։
† ա Կոր. թ. 11 ։ Գաղ. զ. 6 ։
• Փիլ. դ. 17 ։
§ Գլ. ա. 11 ։
* Ոմանք չունին ։
— ա Փիլ. բ. 1 ։
⊧ բ Կոր. ա. 11 ։ Կող. դ. 12 ։
‡ բ Թես. գ. 2 ։
⊤ բ Կոր. ը. 4 ։
⊦ Գոր. ժը. 21 ։ ա Կոր. դ. 19 ։ Յակ. դ. 15 ։
⁊ Գլ. ա. 10 ։
⊦ ա Կոր. ժզ. 18 ։ բ Կոր. է. 13 ։ բ Տիմ. ա. 16 ։ Փիլիմ. 7 , 20 ։
⊏ Գլ. ժզ. 20 ։ ա Կոր. ժդ. 33 ։ բ Կոր. ժգ. 11 ։ Փիլ. դ. 9 ։ ա Թես. ե. 23 ։ բ Թես. գ. 16 ։ Եբր. ժգ. 20 ։

1 Ձեզի կը յանձնեմ մեր Փիբէ քոյրը , — որ Կենք-
2 րայի եկեղեցիին սպասաւորն է ․ ⊧ Որ անիկայ
ընդունիք Տէրոջմով՝ ինչպէս որ սուրբերուն արժան
է , և անոր խնամք տանիք ինչ բանի մէջ որ ձեր
օգնութեանը կարօտի ․ քանզի ինքն ալ շատերուն
խնամք տարաւ , ու ինծի ալ ։
3 Բարև ըրէք ‡ Պրիսկէին ու Ակիւղասին՝ Քրիս-
4 տոս Յիսուսով իմ գործակիցներուս ․ (Որոնք իմ
կեանքիս համար իրենց պարանոցները տուին ․ որ
անոնցմէ չէ թէ մինակ ես շնորհակալ կ'ըլլամ ,
հապա հեթանոսներուն բոլոր եկեղեցիներն ալ ․)
5 ⊤ Եւ անոնց տանը մէջի եկեղեցիին ալ ։ Բարև
ըրէք Եպենետոս իմ սիրելիիս , ⊦ որ * Աքայիայէն
6 առջի պտուղ մըն է Քրիստոսի ։ Բարև ըրէք
Մարիամին , որ մեր վրայ շատ աշխատեցաւ ։
7 Բարև ըրէք Անդրոնիկոսին ու Յունիային՝ իմ ազ-
գականներուս , և գերութեան ընկերներուս , որոնք
առաքեալներուն մէջը երևելիներ են , ⁊ որոնք ինծ-
8 մէ ալ առաջ Քրիստոսի եղան ։ Բարև ըրէք
9 Ամպղիա իմ սիրելիիս Տէրոջմով ։ Բարև ըրէք
Ուրբանոս մեր գործակիցին Քրիստոսով , ու
10 Ստաքէս իմ սիրելիիս ։ Բարև ըրէք Ապեղեսին
11 որ ընտրեալ է Քրիստոսով ։ Բարև ըրէք անոնց
որ Արիստաբուղոսի տունէն են ։ Բարև ըրէք
Հերովդիոն իմ ազգականիս ։ Բարև ըրէք անոնց
12 որ Նարկէսին տունէն են Տէրոջմով ։ Բարև ը-
րէք Տրիփոնէին ու Տրիփոսէին՝ Տէրոջմով աշխա-
տողներուն ։ Բարև ըրէք Պերսիդէ սիրելիին ,
13 որ շատ աշխատեցաւ Տէրոջմով ։ Բարև ըրէք
Ռուփոսին՝ Տէրոջմով ⊦ ընտրուածին , ու անոր
14 մօրը և իմին ։ Բարև ըրէք Ասինկրիտոսին ,

— Գոր. ժը. 18 ։
⊧ Փիլ. բ. 29 ։ գ Յով. ե. 5 , 6 ։
‡ Գոր. ժը. 2 , 18 , 26 ։ բ Տիմ. դ. 19 ։
⊤ ա Կոր. ժզ. 19 ։ Կող. դ. 15 ։ Փիլիմ. 2 ։
⊦ ա Կոր. ժզ. 15 ։
* Կամ Ասիայէն ։
⁊ Գաղ. ա. 22 ։
⊦ բ Յով. 1 ։

Փղեգոնին , Երմասին , Պատրոբային , Երմեսին ,
15 ու անոնց հետ եղող եղբայրներուն ։ Բարեւ ը-
րէք Փիղողոգոսին ու Յուլիային , Ներէոսին
ու անոր քրոջը , եւ Ողիմպասին ու անոնց հետ
16 եղող բոլոր սուրբերուն ։ [ը] Բարեւ ըրէք իրարու
սրբութեան համբուրով ։ Բարեւ կ'ընեն ձեզի
Քրիստոսի[բոլոր]եկեղեցիները ։
17 Կ'աղաչեմ ձեզի եղբայրներ , որ դիտէք անանկ-
ները՝ [թ] որոնք ձեր սորված վարդապետութենէն
դուրս հերձուածողութիւններ ու գայթակղու-
18 թիւններ կ'ընեն , [ժ] եւ անոնցմէ ետ կեցէք . [ի] Ինչու
որ անանկները մեր Տէրոջը Քրիստոսին չեն ծառա-
յեր , [լ] հապա իրենց որովայնին . եւ անոյշ խօս-
քերով ու գովութիւններով՝ պարզամիտներուն
19 սիրտերը կը խաբեն ։ [խ] Քանզի ձեր հնազանդու-
թիւնը ամենուն հասած է . ուստի ձեր վրայ ուրախ
եմ . [ծ] բայց կ'ուզեմ որ դուք իմաստուն ըլլաք
20 բարիին , ու միամիտ՝ չարին ։ [կ] Եւ խաղաղու-
թեան Աստուածը [հ] խորտակէ Սատանան շուտով
ձեր ոտքին տակը ։ [ձ] Մեր Տէր Յիսուս Քրիստո-
սի շնորհքը ձեր հետը ըլլայ ։
21 [ղ] Բարեւ կ'ընէ ձեզի Տիմոթէոս՝ իմ գործակիցս ,
[ճ] եւ Ղուկիոս [մ] ու Յասոն [յ] եւ Սոսիպատրոս՝ իմ ազ-
22 գականներս ։ (Բարեւ կ'ընեմ ձեզի Տէրոջմով ես
23 ալ Տերտիոս , որ աս թուղթը գրեցի ։) [ն] Բարեւ

ը ա Կոր . ժզ . 20 ։ բ Կոր . ժգ . 12 ։ ա Թես . ե . 26 ։ ա Պետ . ե . 14 ։
թ Գոր . ժե . 1, 5, 24 ։ ա Տիմ . զ . 3 ։
ժ ա Կոր . ե . 9, 11 ։ բ Թես . գ . 6, 14 ։ բ Տիմ . գ . 5 ։ Տիտ . գ . 10 ։ բ Յօհ . 10 ։
ի Փիլ . գ . 19 ։ ա Տիմ . զ . 5 ։
լ Կող . բ . 4 ։ բ Տիմ . գ . 6 ։ Տիտ . ա . 10 ։ բ Պետ . բ . 3 ։
խ Գլ . ա . 8 ։
ծ Մատ . ժ . 16 ։ ա Կոր . ժդ . 20 ։
կ Գլ . ժե . 33 ։
հ Ծն . գ . 15 ։
ձ Հմր 24 ։ ա Կոր . ժզ . 23 ։ բ Կոր . ժգ . 13 ։ Փիլ . դ . 24 ։ ա Թես . ե . 28 ։ բ Թես . գ . 18 ։ Յայտ . իբ . 21 ։
ղ Գոր . ժզ . 1 ։ Կող . ա . 1 ։ Փիլ . բ . 19 ։ ա Թես . գ . 2 ։ ա Տիմ . ա . 2 ։ Եբր . ժգ . 23 ։
ճ Գոր . ժգ . 1 ։
մ Գոր . ժէ . 5 ։
յ Գոր . ի . 4 ։
ն ա Կոր . ա . 14 ։

կ'ընէ ձեզի Գայիոս՝ իմ ու բոլոր եկեղեցիին հիւր-
ընկալը ։ [ո] Բարեւ կ'ընէ ձեզի Երաստոս՝ քաղաքին
24 գանձապետը , ու Կուարտոս եղբայրը ։ [չ] Մեր
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն
հետը ըլլայ ։ Ամէն ։
25 [պ] Արդ անոր՝ որ կարող է ձեզ հաստատել [ջ] իմ
աւետարանիս պէս ու Յիսուս Քրիստոսի քարո-
զութեանը պէս , [ռ] ան խորհուրդին յայտնուելուն
պէս , [ս] որ յաւիտենական ատեններէն 'ի վեր ծած-
26 կուած էր , [վ] Եւ հիմա յայտնուեցաւ , ու մարգա-
րէական գիրքերով յաւիտենական Աստուծոյ հրա-
մանովը բոլոր հեթանոսներուն ճանչցուեցաւ [տ] հա-
27 ւատքի հնազանդելու համար , [ր] Մի միայն իմաս-
տուն Աստուծոյն՝ Յիսուս Քրիստոսի ձեռքովը
փառք յաւիտեանս ։ Ամէն ։

ո Գոր . ժթ . 22 ։ բ Տիմ . դ . 20 ։
չ Հմր 20 ։ ա Թես . ե . 28 ։
պ Եփե . գ . 20 ։ ա Թես . գ . 13 ։ բ Թես . բ . 16 ։ գ . 3 ։ Յուդ . 24 ։
ջ Գլ . բ . 16 ։
ռ Եփե . ա . 9 ։ գ . 3, 4, 5 ։ Կող . ա . 27 ։
ս ա Կոր . բ . 7 ։ Եփե . գ . 5, 9 ։ Կող . ա . 26 ։
վ Եփե . ա . 9 ։ բ Տիմ . ա . 10 ։ Տիտ . ա . 2, 3 ։ ա Պետ . ա . 20 ։
տ Գոր . զ . 7 ։ Գլ . ա . 5 ։ ժե . 18 ։
ր ա Տիմ . ա . 17 ։ զ . 16 ։ Յուդ . 25 ։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ իր բարեւը տալէն եւ Աստուծոյ շնորհակալ ըլլալէն ետեւ՝ 10 կը յորդորէ Կորնթացիները միաբան ըլլալու , 12 եւ կը յանդիմանէ անոնց երկպառակութիւնները ։ 18 Աստուած իմաստուններուն իմաստութիւնը կը կործն-

ցընէ 21 քարոզութեան յիմարութիւնովը, 26 և՛ չկանչեր իմաստունները, զօրաւորները ու ազնուականները. 27 բայց յիմարները, տկարները և անարգները.

1 Պօղոս՝ ա Աստուծոյ կամքովը բ Յիսուս Քրիստոսի
առաքեալ ըլլալու կանչուած, գ ու Սոսթենէս
2 եղբայրը, դ Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկե-
ղեցիին՝ ե Քրիստոս Յիսուսով սրբուածներուն՝
զ սուրբեր ըլլալու կանչուածներուն, ու ամենուն
հետ՝ որ ամէն տեղ է մեր Տէր Յիսուս Քրիստոսի
3 ը անունը կը կանչեն, թ իրենցը ու մերը. ժ Ձեզի
շնորհք և խաղաղութիւն Աստուծմէ մեր Հօրմէն
ու Տէր Յիսուս Քրիստոսէն:
4 ի Ամէն ատեն իմ Աստուծմէս ձեզի համար կը
գոհանամ Աստուծոյ շնորհքին վրայ, որ ձեզի
5 տրուած է Քրիստոս Յիսուսով. Որ դուք անով
ամէն բանի մէջ հարստացաք լ ամէն խօսքով ու
6 ամէն գիտութիւնով. խ Ինչպէս որ Քրիստոսի
7 վկայութիւնը ձեր մէջը հաստատուեցաւ. Որ
դուք բնաւ մէկ շնորհքով մըն ալ չնուազիք՝ ծ մեր
Տէր Յիսուս Քրիստոսի յայտնուելուն սպասելով.
8 կ Որ նաև ձեզ պիտի հաստատէ մինչև վերջը՝ հ ան-
մեղադրելի ըլլալու մեր Տէր Յիսուս Քրիստոսի
9 օրը: ձ Հաւատարիմ է Աստուած, որ իրմով
կանչուեցաք ղ հաղորդ ըլլալու իր Որդւոյն՝ մեր
Տէր Յիսուս Քրիստոսին:

ա Հռովմ. ա. 1.
բ Բ Կոր. ա. 1. Եփե. ա. 1. Կող. ա. 1.
գ Գործ. ժը. 17.
դ Յուդ. 1.
ե Յոհ. ժէ. 19. Գործ. ժե. 9.
զ Հռովմ. ա. 7. Բ Տիմ. ա. 9.
է Գլ. ը. 6.
ը Գործ. թ. 14, 21. իբ. 16. Բ Տիմ. բ. 22.
թ Հռովմ. գ. 22. ժ. 12.
ժ Հռովմ. ա. 7. Բ Կոր. ա. 2. Եփե. ա. 2. Ա Պետ. ա. 2.
ի Հռովմ. ա. 8.
լ Գլ. ժբ. 8. Բ Կոր. ը. 7.
խ Գլ. բ. 1. Բ Տիմ. ա. 8. Յայտ. ա. 2.
ծ Փիլ. գ. 20. Տիտ. բ. 13. Բ Պետ. գ. 12. Կող. գ. 4.
կ Ա Թես. գ. 13.
հ Կող. ա. 22. Ա Թես. ե. 23.
ձ Եսա. խթ. 7. Գլ. ժ. 13. Ա Թես. ե. 24. Բ Թես. գ. 3. Եբր. ժ. 23.
ղ Յոհ. ժե. 4. ժէ. 21. Ա Յոհ. ա. 3. գ. 13.

10 Ձեզի կ'աղաչեմ եղբայրներ՝ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի անունովը, ճ որ մի և նոյն խօսքը ունե-
նաք ամէնքդ, ու երկպառակութիւններ չըլլայ ձեր
մէջը. հապա դուք մէկ միտքի ու մէկ խորհուրդի
11 վրայ հաստատուած ըլլաք: Ինչու որ ձեզի համար
ինծի լուր հասաւ՝ եղբայրներ՝ Քղուէի տունէն
եղողներէն, թէ ձեր մէջը հակառակութիւններ
12 կայ: Հիմա աս կը զրուցեմ, մ որ ձեզմէ ամէն մէկը
կ'ըսէ եղեր թէ Ես Պօղոսեան եմ, ու միւսը՝ թէ
յ Ես Ապողոսեան, և ուրիշը՝ թէ ն Ես Կեփասեան;
13 ու միւսը՝ թէ Ես Քրիստոսեան: շ Միթէ Քրիս-
տոս բաժնուա՞ծ է. միթէ Պօղո՞ս խաչը ելաւ ձեզի
համար, կամ թէ Պօղոսի՞ անունովը մկրտուե-
14 ցաք: Կը գոհանամ Աստուծմէ որ ձեզմէ մէկը
չմկրտեցի, ո միայն թէ Կրիսպոսը ու չ Գայիո-
15 սը. որ մէկը չըսէ, թէ իմ անունովս մկրտեցի:
16 Իրաւ պ Ստեփանեանին ընտանիքն ալ մկրտեցի. ալ
ուրիշ մէկը չեմ գիտեր ամենևին թէ մկրտեցի:
17 Ինչու որ Քրիստոս զիս մկրտելու չղրկեց, հա-
պա աւետարանը քարոզելու, ջ չէ թէ խօսքերու
ճարտարութիւնով, որ Քրիստոսի խաչը ոչինչ
18 չըլլայ: ռ Քանզի խաչին քարոզութիւնը կոր-
սուածներուն ս յիմարութիւն է, վ բայց մեզի
փրկուածներուս տ Աստուծոյ զօրութիւնն է:
19 Վասն զի գրուած է, ր Իմաստուններուն իմաս-
տութիւնը պիտի կորսնցնեմ, ու հանճարեղնե-

ճ Հռովմ. ժբ. 16. ժե. 5. Բ Կոր. ժգ. 11. Փիլ. բ. 2. գ. 16. Ա Պետ. գ. 8. Գլ. ժա. 18.
մ Գլ. գ. 4.
յ Գործ. ժը. 24. ժթ. 1. Գլ. ժզ. 12.
ն Յոհ. ա. 42.
շ Բ Կոր. ժա. 4. Եփե. դ. 5.
ո Գործ. ժը. 8.
չ Հռովմ. ժզ. 23.
պ Գլ. ժզ. 15, 17.
ջ Գլ. բ. 1, 4, 13. Բ Պետ. ա. 16.
ռ Բ Կոր. բ. 15.
ս Գործ. ժէ. 18. Գլ. բ. 14.
վ Գլ. ժե. 2.
տ Հռովմ. ա. 16. Հմր 24.
ր Յոբ. ե. 12, 13. Եսա. իթ. 14. Երեմ. ը. 9.

20 րուն հանճարը պիտի խափանեմ ։ ɔ Ո՞ւր է ի-
մաստունը , ո՞ւր է դպիրը , ո՞ւր է աս աշխարհիս
քննողը՝ . ⊢ չէ՞ որ Աստուած յիմարեցուց աս աշ-
21 խարհիս իմաստութիւնը ։ Քանզի ÷ որովհետեւ
Աստուծոյ իմաստութեամբը աշխարհ չճանչցաւ
զԱստուած՝ իր իմաստութիւնովը , Աստուած հա-
ճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատա-
22 ցեալները փրկելու ։ + Քանզի որ Հրեաները
նշան կ'ուզեն , և Յոյները իմաստութիւն կը
23 փնտռեն . Իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիս-
տոսը՝ • Հրեաներուն գայթակղութիւն , ու Յոյ-
24 ներուն ‡ յիմարութիւն . Բայց անոնց որ կան-
չուած են , թէ՛ Հրեաներուն և թէ Յոյներուն ,
— Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը ⊧ և Աս-
25 տուծոյ իմաստութիւնը ։ Քանզի որ Աստուծոյ
յիմարը մարդիկներէն աւելի իմաստուն է , և Աս-
տուծոյ տկարը մարդիկներէն աւելի զօրաւոր է ։
26 Արդարեւ դուք ձեր կոչումը կը տեսնէք՝ եղբայրներ ,
÷ որ չէ թէ մարմնոյ կողմանէ շատ իմաստուններ ,
⊢ չէ թէ շատ զօրաւորներ , ⊢ չէ թէ շատ ազ-
27 նուականներ կանչուեցան . ⊤ Բայց Աստուած աշ-
խարհիս յիմարները ընտրեց , որ ամօթով ընէ
իմաստունները . ու աշխարհիս տկարները ընտրեց
28 Աստուած , որ ամօթով ընէ զօրաւորները . Ու
աշխարհիս ցածազգիները ու անարգները ընտրեց
Աստուած՝ ⊦ և ոչինչները , ⊣ որ բան մը եղողները

ɔ Ես . լգ . 18 ։
⊢ Յոբ . ժբ . 17 , 20 , 24 ; Ես . խդ . 25 ; Հռով . ա . 22 ;
÷ Հռով . ա . 20 , 21 , 28 . Մատ . ժա . 25 ; Ղու . ժ . 21 ;
+ Մատ . ժբ . 38 ; ժզ . 1 ; Մար . ը . 11 ; Ղու . ժա . 16 ; Յով . դ . 48 ։
• Ես . ը . 14 ; Մատ . ժա . 6 ; ժգ . 57 ; Ղու . բ . 34 ; Յով . զ . 61 , 67 ; Հռով . թ . 32 ; Գաղ . ե . 11 ; ա Պետ . բ . 8 ։
‡ Հմր 18 ; Գլ . բ . 14 ։
— Հռով . ա . 4 , 16 ; Հմր 18 ։
⊧ Կող . բ . 3 ։
÷ Յով . է . 48 ։
⊤ Մատ . ժա . 25 ; Յակ . բ . 5 ; Տես Սաղ . ը . 2 ։
⊦ Հռով . դ . 17 ։
⊣ Գլ . բ . 6 ։

29 խափանէ . ⊢ Որպէս զի մէկ մարմին մը չպարծի
30 Աստուծոյ առջին ։ Իսկ դուք անկէ էք Քրիստոս
Յիսուսով , ⊏ որ ան մեզի Աստուծմէ իմաստու-
թիւն՝ ⊏ արդարութիւն՝ ⊣ սրբութիւն ⊢ և փրկու-
31 թիւն եղաւ . Որ ինչպէս գրուած է , ⊢ Ան որ կը
պարծենայ՝ Տէրոջմով թող պարծենայ ։

ԳԼ . Բ

1 Առաքեալը կը ծանուցանէ թէ իր քարոզութիւնը խօսքերու ճարտարութիւնով կամ մարդկային իմաստութիւնով չէ , 4 հապա Աստուծոյ զօրութիւնովն է . և այնքան գերազանց է 6 աս աշխարհիս իմաստութենէն 9 ու մարդկային գիտութենէն , 14 որ մարմնաւոր մարդը կարող չէ զանիկայ իմանալու ։

1 Ու ես եղբայրներ՝ որ ձեզի եկայ , — չէ թէ խօսքի
կամ իմաստութեան գերազանցութիւնով մը
⊧ Աստուծոյ վկայութիւնը ձեզի յայտնելու եկայ ։
2 Վասն զի ես միտքս չդրի ձեր մէջը ուրիշ բան մը
գիտնալ , ÷ բայց միայն Յիսուս Քրիստոսը՝ , ու
3 ան՝ խաչը ելած ։ ⊤ Ու ես տկարութիւնով ու վա-
4 խով և շատ դողով ⊢ ձեր քովը կեցայ . ⊣ Ու իմ
խօսքս և քարոզութիւնս չէ թէ մարդկային իմաս-
տութեան համոզիչ խօսքերով էր , ⊢ հապա Հոգւոյն
5 և զօրութեան ապացուցութեամբը . Որպէս զի
ձեր հաւատքը մարդոց իմաստութիւնովը չըլլայ ,
6 ⊏ հապա Աստուծոյ զօրութիւնովը ։ ⊏ Սակայն կա-
տարեալներուն հետ իմաստութիւն՝ կը խօսինք ,

⊢ Հռով . գ . 27 ; Եփե . բ . 9 ։
⊏ Հմր 24 ։
⊏ Երեմ . խգ . 5 , 6 ; Հռով . դ . 25 ; բ Կոր . ե . 21 ; Փիլ . գ . 9 ։
⊣ Յով . ժէ . 19 ։
⊢ Եփե . ա . 7 ։
⊢ Երեմ . թ . 23 , 24 ; բ Կոր . ժ . 17 ։
— Գլ . ա . 17 ; Հմր 4 , 13 ; բ Կոր . ժ . 10 ; ժա . 6 ։
⊧ Գլ . ա . 6 ։
÷ Գաղ . զ . 14 ; Փիլ . գ . 8 ։
⊤ բ Կոր . դ . 7 ; ժ . 1 , 10 ; ժա . 30 ; ժբ . 5 , 9 ; Գաղ . դ . 19 ։
⊢ Գոր . ժը . 1 , 6 , 12 ։
⊣ Հմր 1 ; Գլ . ա . 17 ; բ Պետ . ա . 16 ։
⊢ Հռով . ժե . 19 ; ա Թես . ա . 5 ։
⊏ բ Կոր . գ . 7 ; զ . 7 ։
⊏ Գլ . ժդ . 20 ; Եփե . դ . 13 ; Փիլ . գ . 15 ; Եբր . ե . 14 ։

զ բայց չէ թէ աս աշխարհիս իմաստութիւնը, և
ո՛չ աս աշխարհիս է ոչնչանալու իշխաններունը :
7 Հապա Աստուծոյ ծածուկ իմաստութիւնը կը խօ-
սինք խորհրդով, ը որ աշխարհէն առաջ սահմա-
8 նեց Աստուած մեր փառքին համար . թ Որ զանիկայ
աս աշխարհիս իշխաններէն մէկը չճանչցաւ . ժ քան-
զի թէ որ ճանչցած ըլլային, ալ փառաց Տէրը
9 խաչը չէին հաներ . Հապա ինտոր որ գրուած է,
ի Ան բաները որ աչք չէ տեսեր և ականջ չէ լսեր
ու մարդու սրտին մէջ չէ ինկեր, Աստուած զինքը
10 սիրողներուն պատրաստեց : լ Բայց Աստուած մե-
զի յայտնեց իր Հոգիովը, ինչու որ Հոգին ամէն
բան կը քննէ, Աստուծոյ խորունկ բաներն ալ :
11 Վասն զի մարդիկներէն ո՞վ գիտէ մարդուն բանե-
րը, խ բայց միայն մարդուն հոգին որ իր մէջն է .
ծ նմանն ալ Աստուծոյ բաները մէկը չգիտեր, բայց
12 միայն Աստուծոյ Հոգին : Իսկ մենք չէ թէ աս
աշխարհիս հոգին առինք, կ հապա ան Հոգին՝ որ
Աստուծմէ է . որ մենք ճանչնանք ան բաները որ
13 Աստուծմէ տրուեցաւ մեզի . հ Որոնք նաև կը խօ-
սինք, չէ թէ մարդկային իմաստութեան սորվե-
ցուցած խօսքերով, հապա Հոգիին սորվեցուցած-
ներովը, և հոգևոր բաները հոգևորի հետ կը յար-
14 մարցընենք : ձ Իսկ շնչաւոր մարդը Աստուծոյ
Հոգիին բաները չընդունիր, ղ ինչու որ անոնք

զ Գլ. ա. 20 ։ գ. 19 ։ Հմր 1 ։ 13 ։ բ Կոր. ա. 12 ։ Յակ. գ. 15 ։
է Գլ. ա. 28 ։
ը Հռովմ. ժզ. 25, 26 ։ Եփե. գ. 5, 9 ։ Կող. ա. 26 ։ բ Տիմ. ա. 9 ։
թ Մատթ. ժա. 25 ։ Յօհ. է. 48 ։ Գործ. ժգ. 27 ։ բ Կոր. գ. 14 ։
ժ Ղու. իգ. 34 ։ Գործ. գ. 17 ։ Տես Յօհ. ժզ. 3 ։
ի Եսա. կդ. 4 ։
լ Մատթ. ժզ. 11 ։ ժզ. 17 ։ Յօհ. ժզ. 26 ։ ժզ. 13 ։ ա Յօհ. բ. 27 ։
խ Առակ. ի. 27 ։ իէ. 19 ։ Երեմ. ժէ. 9 ։
ծ Հռովմ. ժա. 33, 34 ։
կ Հռովմ. ը. 15 ։
հ բ Պետ. ա. 16 ։ Գլ. ա. 17 ։ Հմր 4 ։
ձ Մատթ. ժգ. 23 ։
ղ Գլ. ա. 18, 23 ։

իրեն յիմարութիւն են, ճ ու չկրնար ալ գիտնալ,
15 ինչու որ հոգևոր կերպով կը քննուին : մ Բայց
ան որ հոգևոր է՝ ամէն բան կը քննէ, ու ինքը
16 մէկէ մը չքննուիր : յ Քանզի ո՞վ գիտցաւ Տէ-
րոջը միտքը, որ անոր խրատ տուող ալ ըլլայ .
ն բայց մենք Քրիստոսի միտքը ունինք :

ԳԼ. Գ

2 Տղայոց առաջ կաթ կը տրուի՝ և ո՛չ թէ կերակուր ։ 3 Կռիւը ու նախանձը մարմնաւոր մտքի պտուղներ են ։ 7 Տնկողը ու ջուր տուողը բան մը չեն ։ 9 Աւետարանի պաշտօնեաները Աստուծոյ գործակիցներն են ։ 11 Քրիստոս է մի միայն հիմը ։ 16 Մարդիկ Աստուծոյ տաճարներն են, որոնք պարտին սուրբ պահուիլ ։ 19 Աս աշխարհիս իմաստութիւնը Աստուծոյ առջևը յիմարութիւն է ։

1 Ես ալ եղբայրներ՝ չկրցայ խօսիլ ձեզի՝ շ որպէս
թէ հոգևորներու, ո հապա որպէս թէ մարմնա-
2 ւորներու, չ Որպէս թէ Քրիստոսով տղայոց . պ ձե-
զի կաթ կերցուցի՝ և չէ թէ կերակուր . ջ ինչու
որ դեռ կարող չէիք, ու հիմա ալ տակաւին կա-
3 րող չէք, վասն զի դեռ մարմնաւոր էք : ռ Որով-
հետև տակաւին ձեր մէջը նախանձ ու հակառակու-
թիւն և բաժանումներ կան, չէ՞ որ մարմնաւոր
4 էք, ու մարդկօրէն կը քալէք : Քանզի երբոր
ձեզմէ մէկը կ'ըսէ թէ ս Ես Պօղոսին եմ, և միւ-
սը՝ թէ Ես Ապողոսին, չէ՞ որ մարմնաւոր էք :
Ուրեմն ո՞վ է Պօղոս կամ ո՞վ է Ապողոս .
5 վ Պաշտօնեաներ են, որոնցմով հաւատացիք .
տ և ինչպէս որ Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն :

ճ Հռովմ. ը. 5, 6, 7 ։ Յուդ. 19 ։
մ Առակ. իը. 5 ։ ա Թեսս. ե. 21 ։ ա Յօհ. դ. 1 ։
յ Յոբ. ժե. 8 ։ Եսա. խ. 13 ։ Երեմ. իգ. 18 ։ Հռովմ. ժա. 34 ։
ն Յօհ. ժե. 15 ։
շ Գլ. բ. 15 ։
ո Գլ. բ. 14 ։
չ Եբր. ե. 13 ։
պ Եբր. ե. 12, 13 ։ ա Պետ. բ. 2 ։
ջ Յօհ. ժզ. 12 ։
ռ Գլ. ա. 11 ։ ժա. 18 ։ Գաղ. ե. 20, 21 ։ Յակ. գ. 16 ։
ս Գլ. ա. 12 ։
վ Գլ. դ. 1 ։ բ Կոր. գ. 3 ։
տ Հռովմ. ժբ. 3, 6 ։ ա Պետ. դ. 11 ։

6 զ Ես տնկեցի, է Ապողոս ջուր տուաւ, ը բայց
7 Աստուած աճեցուց: թ Ուստի ո՛չ տնկողը բան
մըն է, և ո՛չ ջուր տուողը, հապա Աստուած՝ որ
8 աճեցուց: Տնկողը ու ջուր տուողը մէկ են, ժ և
ամէն մէկը իր վարձքը պիտի առնէ իր աշխատու-
9 թեանը չափովը: ի Ինչու որ մենք Աստուծոյ գոր-
ծակից ենք, դուք Աստուծոյ մշակութիւնն էք,
10 լ Աստուծոյ շինութիւնն էք: խ Աստուծոյ շնոր-
հացը չափովը որ ինծի տրուեցաւ, ծ իմաստուն
ճարտարապետի մը պէս հիմ դրի, բայց ուրիշ վրայ
շինողը ուրիշ է. կ միայն թէ ամէն մէկը թող
11 զգուշանայ թէ ինտոր կը շինէ: հ Ինչու որ մէկը՝
ալ ուրիշ հիմ չկրնար դնել ձ դրուածէն ՚ի զատ,
12 ղ որ է Յիսուս Քրիստոս: Թէ որ մէկը աս հի-
մին վրայ կը շինէ ոսկի՝ արծաթ՝ պատուական
13 քարեր՝ փայտ՝ խոտ՝ եղէգ, ճ Ամէն մէկուն գործը
յայտնի պիտի ըլլայ. մ քանզի օրը երեւան պիտի
հանէ, յ ինչու որ կրակով պիտի յայտնուի. և
ամէն մէկուն գործին ինչ տեսակ ըլլալը կրակը
14 պիտի փորձէ: Թէ որ մէկուն շինած գործը մնա-
15 լու ըլլայ, ը ինքը վարձք պիտի առնէ. Եւ թէ որ
մէկուն շինածը այրելու ըլլայ, անիկայ վնաս պի-
տի քաշէ. բայց ինքը պիտի ազատի, ն սակայն
16 անանկ՝ իբր թէ կրակի մէջէն: շ Չէ՞ք գիտեր որ

զ Գործ. ժը. 4, 8, 11: Գլ. գ. 15: Թ. 1: ժե. 1: Բ Կոր. ժ. 14, 15:
է Գործ. ժը. 24, 27: ժթ. 1:
ը Գլ. ա. 30: ժե. 10: Բ Կոր. գ. 5:
թ Բ Կոր. ժբ. 11: Գաղ. զ. 3:
ժ Սաղ. կբ. 12: Հռով. բ. 6: Գլ. գ. 5: Գաղ. զ. 4, 5: Յայտ. բ. 23: իբ. 12:
ի Գործ. ժե. 4: Բ Կոր. զ. 1:
լ Եփե. բ. 20: Կող. բ. 7: Եբր. գ. 3, 4: ա Պետ. բ. 5:
խ Հռով. ա. 5: ժբ. 3:
ծ Հռով. ժե. 20: Հմր 6: Գլ. գ. 15: Յայտ. իա. 14:
կ ա Պետ. դ. 11:
հ Ես. իը. 16: Մատ. ժզ. 18: Բ Կոր. ժա. 4: Գաղ. ա. 7:
ձ Եփե. բ. 20:
ղ Գլ. գ. 5:
ճ ա Պետ. ա. 7: դ. 12:
մ Ղու. բ. 35:
յ Գլ. գ. 5:
ն Յուդ. 23:
շ Գլ. զ. 19: Բ Կոր. զ. 16: Եփե. բ. 21, 22: Եբր. գ. 6: ա Պետ. բ. 5:

Աստուծոյ տաճար էք դուք՝ և Աստուծոյ Հոգին
17 ձեր մէջը բնակած է: Թէ որ մէկը Աստուծոյ
տաճարը կ՚ապականէ, Աստուած զանիկա պիտի
ապականէ, ինչու որ Աստուծոյ տաճարը սուրբ
է, որ դուք էք:
18 ո Չըլլայ որ մէկը ինքզինքը խաբէ. թէ որ
ձեզմէ մէկը զինքը իմաստուն կը սեպէ աս աշխար-
հիս մէջ, թող յիմար ըլլայ՝ որ իմաստուն ըլլայ.
19 չ Ինչու որ աս աշխարհիս իմաստութիւնը Աստու-
ծոյ առջեւը յիմարութիւն է. վասն զի գրուած է
թէ պ Անիկայ իմաստունները իրենց խորամանկու-
20 թեանը մէջ կը բռնէ: Եւ դարձեալ թէ ջ Տէ-
րը գիտէ իմաստուններուն խորհուրդները, որ ու-
21 նայն են: Ուրեմն ռ մէկը թող չպարծենայ մար-
22 դոցմով. ս Ինչու որ ամէն բան ձերն է, թէ Պօ-
ղոս, թէ Ապողոս, թէ Կեփաս, թէ աշխարհ,
թէ կեանք, թէ մահ, թէ ներկայ բաները
23 և թէ գալիքները՝ ամէն բան ձերն է. վ Դուք
ալ Քրիստոսինն էք, և Քրիստոս՝ Աստու-
ծոյ:

ԳԼ. Դ

1 Քրիստոսի պաշտօնեաները ինչ համարում ունենալու են: 7 Բան մը չունինք որ առած չըլլանք: 8 Առաքեալները տեսարան եղան աշխարհի, հրեշտակներուն և մարդոց, 13 աշխարհի աղտեղութիւնը և ամենուն անարգը. 15 այսու ամենայնիւ Քրիստոսով մեր հայրերն են, 16 որոնց օրինակին հետեւելու ենք:

1 Թող մարդիկ մեզ աանկ սեպեն՝ տ որպէս թէ
Քրիստոսի սպասաւորները, ր ու Աստուծոյ
2 խորհուրդներուն տնտեսները: Ուստի տնտեսնե-
ն

ո Առակ. ե. 7: Ես. ե. 21:
չ Գլ. ա. 20: բ. 6:
պ Յոբ. ե. 13:
ջ Սաղ. ղդ. 11:
ռ Գլ. ա. 12: գ. 6: Հմր 4, 5, 6:
ս Բ Կոր. դ. 5, 15:
վ Հռով. ժդ. 8: ժա. 3: Բ Կոր. ժ. 7: Գաղ. գ. 29:
տ Մատ. իդ. 45: Գլ. գ. 5: թ. 17: Բ Կոր. դ. 4: Կող. ա. 25:
ր Ղու. ժբ. 42: Տիտ. ա. 7: ա Պետ. դ. 10:

րուն մէջ կը փնտռուի՝ որ մէկը հաւատարիմ
3 գտնուի ։ Բայց ինծի ասիկայ ոչինչ բան մըն է,
որ ձեզմէ դատուիմ՝ կամ մարդոց * դատողութե-
նէն, մանաւանդ որ ես ալ իմ անձս չեմ դատեր ։
4 (Վասն զի ես իմ անձիս վրայով բան մը չեմ
գիտեր ։ ե բայց չէ թէ ասով կ՚արդարանամ ։)
5 հապա զիս դատողը Տէրն է ։ զ Ուրեմն ժամանա-
կէն առաջ դատողութիւն մի ընէք, մինչեւ որ
գայ Տէրը՝ է որ խաւարին գաղտնիքը ՚ի լոյս պիտի
հանէ, ու սրտերուն խորհուրդները յայտնի պիտի
ընէ ։ ը Ու ան ատենը ամէն մէկուն գովութիւնը
Աստուծմէ պիտի ըլլայ ։
6 թ Ասոնք օրինակ բերի եղբայրներ՝ իմ վրաս ու
Ապողոսին վրայ ձեզի համար, ժ որ դուք մեզմէ
սորվիք [illegible] գրուածէն աւելի բան մը
չխորհիլ, ի որ չըլլայ թէ ձեզմէ մէկը հպարտանայ
7 մէկու մը համար ուրիշի մը դէմ ։ Քանզի ո՞վ է
ան որ քեզ տարբեր կ՚ընէ ուրիշներէն ։ լ Եւ ի՞նչ
ունիս որ չես առեր դուն ։ Եւ թէ որ առիր՝ ինչո՞ւ
չառածի պէս կը պարծենաս ։
8 Արդէն կշտացած էք, խ արդէն հարստացաք, ա-
ռանց մեզի թագաւորեցիք ։ Եւ երանի թէ թա-
գաւորէիք, որ մենք ալ ձեր հետը թագաւորէինք ։
9 ծ Քանզի կարծեմ թէ Աստուած յետիններ ըրաւ
մեզ առաքեալներս ու մահապարտներու նման ։
կ ինչու որ տեսարան եղանք աշխարհի, և հրեշ-

* Յուն․ օրուընէն
ե Յոբ․ Թ․ 2 ; Սաղ․ ՃԼ․ 3 ; ՃԽԳ․ 2 ; Առակ․ ԻԱ․ 2 ; Հռով․ Գ․ 20 ; Դ․ 2 ;
զ Մատ․ Է․ 1 ; Հռով․ Բ․ 1, 16 ; ԺԴ․ 4, 10, 13 ; Յայտ․ Ի․ 12 ;
է Գլ․ Գ․ 13 ;
ը Հռով․ Բ․ 29 ; Բ Կոր․ Ե․ 10 ;
թ Գլ․ Ա․ 12 ; Գ․ 4 ;
ժ Հռով․ ԺԲ․ 3 ;
ի Գլ․ Գ․ 21 ; Ե․ 2, 6 ;
լ Յոհ․ Գ․ 27 ; Յակ․ Ա․ 17 ; Ա Պետ․ Դ․ 10 ;
խ Յայտ․ Գ․ 17 ;
ծ Սաղ․ ԽԴ․ 23 ; Հռով․ Ը․ 36 ; Գլ․ ԺԵ․ 30, 31 ; Բ Կոր․ Դ․ 11 ; Զ․ 9 ;
կ Եբր․ Ժ․ 33 ;

10 տակներուն ու մարդիկներուն ։ հ Մենք ձ յիմարներ
ենք Քրիստոսի համար, և դուք իմաստուններ
Քրիստոսով ։ ղ Մենք տկար՝ և դուք զօրաւոր ։
11 դուք փառաւորեալ՝ ու մենք անարգեալ ։ ճ Մինչեւ
աս օրուան ատենը կ՚անօթենանք ալ, կը ծարա-
ւինք ալ, մ մերկ ալ կը մնանք, յ կը ծեծուինք
12 ալ, աստանդական ալ կը պտըտինք, ն Ու մեր
ձեռքերովը գործելով կ՚աշխատինք ։ երբոր շ մեզ
կը նախատեն՝ կ՚օրհնենք ։ երբոր կը հալա-
13 ծեն՝ կը համբերենք ։ Երբոր գէշ կը խօսին
կ՚աղաչենք ։ ո իբրեւ աշխարհի աղտեղութիւ-
նը՝ ամենուն անարգը ըլլալով մինչեւ հիմա ։
14 Ասս բաները կը գրեմ՝ չէ թէ ձեզ ամչցընե-
լու համար, չ հապա կը խրատեմ ձեզ սիրե-
15 լի որդիներուս պէս ։ Վասն զի թէեւ դուք տա-
սը հազար վարժապետներ ունենաք Քրիստոսով,
բայց չէ թէ շատ հայրեր ունիք, պ ինչու որ Քրիս-
16 տոս Յիսուսով ես ձեզ ծնայ աւետարանովը ։ Ու-
17 րեմն կ՚աղաչեմ ձեզի՝ ջ ինծի նմանող եղէք ։ Ասոր
համար ձեզի ղրկեցի ռ Տիմոթէոսը, ս որ իմ սի-
րելի որդիս է ու Տէրոջմով հաւատարիմ ։ վ որ
անիկայ ձեր միտքը պիտի ձգէ Քրիստոսով իմ
բռնած ճամբաներս, տ ինչպէս որ ամէն տեղ ամէն

հ Գլ․ Բ․ 3 ;
ձ Գոր․ ԺԷ․ 18 ; ԻԶ․ 24 ; Գլ․ Ա․ 18, 23 ; Բ․ 14 ; Գ․ 18 ; Տես Դ Թագ․ Թ․ 11 ;
ղ Բ Կոր․ ԺԳ․ 9 ;
ճ Բ Կոր․ Դ․ 8 ; ԺԱ․ 23-27 ; Փիլ․ Դ․ 12 ;
մ Յոբ․ ԻԲ․ 6 ; Հռով․ Ը․ 35 ;
յ Գոր․ ԻԳ․ 2 ;
ն Գոր․ ԺԸ․ 3 ; Ի․ 34 ; Ա Թես․ Բ․ 9 ; Բ Թես․ Գ․ 8 ; Ա Տիմ․ Դ․ 10 ;
շ Մատ․ Ե․ 44 ; Ղուկ․ Զ․ 28 ; ԻԳ․ 34 ; Գոր․ Է․ 59 ; Հռով․ ԺԲ․ 14, 20 ; Ա Պետ․ Բ․ 23 ; Գ․ 9 ;
ո Ողբ․ Գ․ 45 ;
չ Ա Թես․ Բ․ 11 ;
պ Գոր․ ԺԸ․ 11 ; Հռով․ ԺԵ․ 20 ; Գլ․ Գ․ 6 ; Գաղ․ Դ․ 19 ; Փիլեմ․ 10 ; Յակ․ Ա․ 18 ;
ջ Գլ․ ԺԱ․ 1 ; Փիլ․ Գ․ 17 ; Ա Թես․ Ա․ 6 ; Բ Թես․ Գ․ 9 ;
ռ Գոր․ ԺԹ․ 22 ; Գլ․ ԺԶ․ 10 ; Փիլ․ Բ․ 19 ; Ա Թես․ Գ․ 2 ;
ս Ա Տիմ․ Ա․ 2 ; Բ Տիմ․ Ա․ 2 ;
վ Գլ․ ԺԱ․ 2 ;
տ Գլ․ ԺԴ․ 33 ;

18 եկեղեցիներուն մէջ կը սորվեցնեմ ։ Մէկ
քանիները հպարտացան, որպէս թէ ես պիտի
19 չգամ ձեզի ։ Բայց շուտով պիտի գամ ձեզի՝
թէ որ Տէրը կամենայ, և պիտի հասկընամ ոչ
թէ հպարտացողներուն խօսքերը, հապա զօրու-
20 թիւնը ։ Վասն զի Աստուծոյ թագաւորութիւ-
նը ոչ թէ խօսքով է, հապա զօրութիւնով ։
21 Ի՞նչպէս կ'ուզէք, գաւազանով գամ ձեզի, թէ
սիրով և հեզութեան հոգիով ։

ԳԼ. Ե

1 Պօղոս կ'իմացընէ Կորնթացւոց թէ ազգապիղծ անձը 6 յաւէտ ամօթոյ պատճառ մըն է իրենց՝ քան թէ պարծանաց ․ 7 կ'իմացընէ թէ պէտք է հին խմորը մէկդի ձգել ․ 10 թէ պէտք է եղեռնագործները ամչցընել, և անոնցմէ ետ քաշուիլ ։

1 Ու հասարակ կը լսուի ձեր մէջը պոռնկութիւն ըլ-
լալ, և անանկ պոռնկութիւն՝ որ հեթանոս-
ներուն մէջ ալ *չկայ, որպէս թէ մէկը իր հօրը
2 կնիկը ունենայ ։ Ու դուք հպարտացեր էք,
և ոչ մանաւանդ սուգ ըրիք, որ ձեր մէջէն վեր-
3 ցուի աս բանը ընողը ։ Ինչու որ թէպէտ ես
մարմնով հեռու եմ, բայց հոգիով ներկայ եմ ․
ուստի հիմա որպէս թէ ներկայ ըլլալով որոշեցի,
4 որ աս բանը ընողը՝ Երբոր մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի անունովը մէկտեղ ժողվուիք դուք՝ ու իմ
հոգիս մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնո-
5 վը, Անանկը Սատանային մատնէք՝ մարմինը

Գլ. ե. 17 ։
Գլ. ի. 2 ։
Գոր. ժթ. 21 ։ Գլ. ժզ. 5 ։ բ Կոր. ա. 15, 23 ։
Գոր. ժը. 21 ։ Հռով. ժե. 32 ։ Եբր. զ. 3 ։ Յակ. դ. 15 ։
Գլ. բ. 4 ։ ա Թես. ա. 5 ։
բ Կոր. ժ. 2 ։ ժգ. 10 ։
* Ոմանք՝ չյիշուիր ․
Ղև. ժը. 8 ։ բ Օր. իբ. 30 ։ իէ. 20 ։
բ Կոր. է. 12 ։
Գլ. գ. 18 ։
բ Կոր. է. 7, 10 ։
Կող. բ. 2 ։
Մատ. ժզ. 19 ։ ժը. 18 ։ Յոհ. ի. 23 ։ բ Կոր. բ. 10 ։ ժգ. 3, 10 ։
Գոր. իզ. 18 ։
Յոբ. բ. 6 ։ Սաղ. ծթ. 6 ։ ա Տիմ. ա. 20 ։

կորսուելու համար, որ հոգին փրկուի Տէր Յի-
6 սուսի օրը ։ Ձեր պարծանքը աղէկ չէ ․ չէ՞ք
գիտեր որ քիչ մը խմորը բոլոր զանգուածը կը
7 խմորէ ։ Մաքրեցէք հին խմորը մէկդի, որ ըլլաք
նոր զանգուած, ինչպէս որ անխմոր էք ․ ինչու որ
Քրիստոս մեր Զատիկը մեզի համար զոհուեցաւ ։
8 Ուստի տօն կատարենք՝ ոչ թէ հին խմորով և
ոչ թէ չարութեան ու անզգամութեան խմորով,
հապա անկեղծութեան ու ճշմարտութեան անխմոր
9 հացովը ։ Գրեցի ձեզի թուղթին մէջ, որ պոռ-
10 նիկներուն հետ չխառնուիք ։ Ու գրածս՝ չէ՛ թէ
աս աշխարհիս պոռնիկներուն հետ, կամ ագահ-
ներուն հետ, կամ յափշտակողներուն հետ, կամ
կռապաշտներուն հետ ․ հապա թէ չէ՝ պէտք էր
11 որ դուք աշխարհէս դուրս ելլէիք ։ Բայց հիմա
ձեզի գրեցի չխառնուիլ, այսինքն թէ որ մէկը
եղբայր ըսուած՝ կամ պոռնիկ ըլլայ, կամ ագահ,
կամ կռապաշտ, կամ նախատող, կամ գինով,
կամ յափշտակող, անանկին հետ հաց ալ չու-
12 տել ։ Վասն զի ի՞նչ պէտք է ինծի դուրսին-
ներն ալ դատել ․ չէ՞ որ դուք ներսինները կը
13 դատէք ․ Իսկ դուրսինները Աստուած պիտի դա-
տէ ․ ուստի չարը ձեր մէջէն վերցուցէք ։

Հմր 2 ։ Գլ. գ. 21 ։ զ. 19 ։ Յակ. դ. 16 ։
Գլ. ժե. 33 ։ Գաղ. ե. 9 ։ բ Տիմ. բ. 17 ։
Ես. ծգ. 7 ։ Յոհ. ա. 29 ։ Գլ. ժե. 3 ։ ա Պետ. ա. 19 ։ Յայտ. ե. 6, 12 ։
Յոհ. ժթ. 14 ։
Ել. ժբ. 15 ։ ժգ. 6 ։
բ Օր. ժգ. 3 ։
Մատ. ժզ. 6, 12 ։ Մար. ը. 15 ։ Ղու. ժբ. 1 ։
Տես Հմր 2, 7 ։ բ Կոր. զ. 14 ։ Եփե. ե. 11 ։ բ Թես. գ. 14 ։
Գլ. ա. 20 ։
Գլ. ժ. 27 ։
Յոհ. ժէ. 15 ։ ա Յոհ. ե. 19 ։
Մատ. ժը. 17 ։ Հռով. ժզ. 17 ։ բ Թես. գ. 6, 14 ։ բ Յոհ. 10 ։
Գաղ. բ. 12 ։
Մար. դ. 11 ։ Կող. դ. 5 ։ ա Թես. դ. 11 ։ ա Տիմ. գ. 7 ։
Գլ. զ. 1, 2, 3, 4 ։
բ Օր. ժգ. 5 ։ ժէ. 7 ։ իա. 21 ։ իբ. 21, 22, 24 ։

ԳԼ. Զ.

1 Առաքեալը կը ծանուցանէ թէ պէտք չէ որ իրենց եղբայրները նեղեն՝ զանոնք դատի կանչելով, 6 մանաւանդ անհաւատներուն առջեւ. 9 թէ անիրաւները Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգեր. 15 թէ մեր մարմինները Քրիստոսի անդամներ են, 19 և Սուրբ Հոգիին տաճարները, 16 ուրեմն պէտք չէ որ զանոնք պղծենք։

1 Ձեզմէ մէկը՝ թէ որ մէկ բան մը ունենայ իր ըն-
կերին հետ, կը համարձակի՞ անիրաւներուն
առջեւ դատուիլ, ու չէ թէ սուրբերուն առջեւ։
2 [ա] Չէ՞ք գիտեր որ սուրբերը պիտի դատեն աշխար-
հը. ու թէ որ աշխարհս ձեզմէ կը դատուի, ու-
րեմն արժանի չէ՞ք դուք չնչին դատեր տեսնելու։
3 [բ] Չէ՞ք գիտեր որ մենք հրեշտակներ պիտի դատենք.
4 ո՜ւր կը մնան հապա աշխարհային բաները։ [գ] Ու-
րեմն թէ որ ձեր մէջը աշխարհային դատեր ունիք,
եկեղեցիին անարգները ձեզի դատաւոր դրէք։
5 Ձեր ամչնալուն համար կը գրեմ. այնչափ
եղաւ որ ձեր մէջը մէկ իմաստուն մը չկայ, որ կա-
րող ըլլայ իրաւունքը որոշել իր եղբայրներուն
6 մէջ. Հապա եղբայր եղբօր հետ դատի կը մտնէ,
7 ան ալ անհաւատներուն առջեւ։ Արդարեւ բո-
լորովին յանցանք մըն է ասա ձեր մէջը, որ իրարու
հետ դատեր ունիք. [դ] ինչո՞ւ մանաւանդ դուք ան-
իրաւութիւն չէք կրեր. ինչո՞ւ մանաւանդ դուք
8 զրկանք չէք քաշեր։ Հապա դուք անիրաւութիւն
9 ու զրկանք կ'ընէք, [ե] և ան ալ եղբայրներուն։ Չէ՞ք
գիտեր որ անիրաւները Աստուծոյ արքայութիւնը
պիտի չժառանգեն. մի՛ խաբուիք, ո՛չ պոռնիկ-
10 ները՝ [զ] ո՛չ կռապաշտները՝ ո՛չ շնացողները՝ ո՛չ

ա Սաղ. խթ. 14 : Դան. է. 22 : Մատ. ժթ. 28 : Ղու. իբ. 30 : Յայտ. բ. 26 : գ. 21 : ի. 4 :
բ Բ Պետ. բ. 4 : Յուդ. 6 :
գ Գլ. ե. 12 :
դ Առակ. ի. 22 : Մատ. ե. 39, 40 : Ղու. զ. 29 : Հռով. ժբ. 17, 19 : Ա Թես. ե. 15 :
ե Ա Թես. դ. 6 :
զ Գլ. ժե. 50 : Գաղ. ե. 21 : Եփես. ե. 5 : Ա Տիմ. ա. 9 : Եբր. ժբ. 14 : ժգ. 4 : Յայտ. իբ. 15 :

իգացեալները՝ ո՛չ արուագէտները՝ ո՛չ գողերը՝ ո՛չ
ագահները՝ ո՛չ գինեմոլները՝ ո՛չ նախատողները ու
ո՛չ յափշտակողները Աստուծոյ թագաւորութիւնը
11 պիտի չժառանգեն։ [է] Եւ դուք մէկ քանիներդ ա-
նանկներ էիք. [ը] բայց լուացուեցաք, բայց սրբուե-
ցաք, բայց արդարացաք Տէր Յիսուսի անունովը
ու մեր Աստուծոյ Հոգիովը։
12 [թ] Ամէն բան ինծի օրինաւոր է, բայց չէ՛ թէ ա-
մէն բան օգտակար. ամէն բան ինծի օրինաւոր է,
բայց ես մէկ բանի մը իշխանութեան տակ պիտի
13 չըլլամ։ [ժ] Կերակուրները փորին համար է, փորն
ալ կերակուրներուն. բայց Աստուած ասոր ալ՝ ա-
նոնք ալ պիտի խափանէ։ Իսկ մարմինը պոռնկու-
թեան համար չէ՛, [ի] հապա Տէրոջը, [լ] ու Տէրը՝
14 մարմնին համար։ [խ] Եւ Աստուած որ Տէրը յա-
րուց, [ծ] մեզ ալ պիտի յարուցանէ իր զօրութիւ-
15 նովը։ Չէ՞ք գիտեր որ [կ] ձեր մարմինները Քրիս-
տոսի անդամներն են. ուստի Քրիստոսի անդամ-
ները առնելով՝ պոռնիկի անդամնե՞ր ընեմ. քա՛-
16 լիցի։ Չէ՞ք գիտեր թէ ան որ պոռնիկի կը մօտե-
նայ, անոր հետ մէկ մարմին կ'ըլլայ. [հ] քանզի
17 կ'ըսէ, Երկուքը մէկ մարմին պիտի ըլլան։ [ձ] Իսկ
ան որ Տէրոջը կը մօտենայ, անոր հետ մէկ հոգի
18 կ'ըլլայ։ [ղ] Պոռնկութենէն փախէք. ամէն մեղք
որ մարդ կը գործէ՝ իր մարմինէն դուրս է. բայց

է Գլ. ժբ. 2 : Եփես. բ. 2 : դ. 22 : ե. 8 : Կող. գ. 7 : Տիտ. գ. 3 :
ը Գլ. ա. 30 : Եբր. ժ. 22 :
թ Գլ. ժ. 23 :
ժ Մատ. ժե. 17 : Հռով. ժգ. 17 : Կող. բ. 22, 23 :
ի Հմր. 15, 19, 20 : Ա Թես. դ. 3, 7 :
լ Եփես. ե. 23 :
խ Հռով. զ. 5, 8 : ը. 11 : Բ Կոր. դ. 14 :
ծ Եփես. ա. 19, 20 :
կ Հռով. ժբ. 5 : Գլ. ժբ. 27 : Եփես. դ. 12, 15, 16 : ե. 30 :
հ Ծն. բ. 24 : Մատ. ժթ. 5 : Եփես. ե. 31 :
ձ Յոհ. ժէ. 21, 22, 23 : Եփես. դ. 4 : ե. 30 :
ղ Հռով. զ. 12, 13 : Եբր. ժգ. 4 :

ան որ կը պոռնկի՝ [ց] իր մարմինին դէմ կը մեղանչէ ։
19 [ւ] Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են
Սուրբ Հոգիին՝ որ ձեր մէջն է, որ անիկայ Աս-
տուծմէ ունիք. [փ] ու դուք ձեր անձին տէրը չէք.
20 [ք] Քանզի գնով ծախու առնուեցաք. ուստի փա-
ռաւորեցէ՛ք զԱստուած ձեր մարմիններուն ու հո-
գիներուն մէջը, որ Աստուծոյ են ։

ԳԼ. Է.

1 Առաքեալը կը խօսի ամուսնութեան վրայով, 4 ցուցնելով թէ ան մէկ դարման մըն է պոռնկութեան դէմ. 10 թէ ամուսնութեան կապը պէտք չէ որ դիւրաւ լուծուի. 18 թէ ամէն մարդ պարտի գոհ ըլլալ իր վիճակէն. 25 թէ կուսութիւնը ինչ դիտաւորութեամբ կրնայ պահուիլ, 35 և թէ ինչ պատճառով կրնանք ամուսնանալ՝ կամ անկէ ետ կենալ ։

1 Արդ՝ ան բաներուն համար որ դուք ինծի գրեցիք,
2 [ա] աղէկ է մարդուս որ կնկան չմօտենայ ։ Բայց
պոռնկութիւնը արգիլելու համար ամէն մարդ թող
իր կինը ունենայ, ու ամէն կին իր էրիկը թող
3 ունենայ. [բ] Էրիկը իր կնկանը թող պարտքը
4 վճարէ, նոյնպէս կինն ալ իր էրկանը ։ Կինը
իր մարմինին չիշխեր, հապա էրիկը. անանկ ալ
էրիկը իր մարմինին չիշխեր, հապա կինը ։
5 [գ] Մէկզմէկ մի՛ զրկէք, եթէ ոչ միաբանութեամբ
ատեն մը՝ աղօթքի պարապելու համար, ու նորէն
իրարու դարձէ՛ք, [դ] որ Սատանան ձեզ չփորձէ ձեր
6 անժուժկալութեանը համար ։ Աս կը զրուցեմ
7 թոյլ տալով, [ե] և ոչ թէ հրամայելով ։ [զ] Քանզի
կ'ուզէի որ ամէն մարդիկ [է] ինծի պէս ըլլային .

ց Հռով. ա. 24 ։ ա Թես. դ. 4 ։
ւ Գլ. գ. 10 ։ բ Կոր. զ. 16 ։
փ Հռով. ժդ. 7, 8 ։
ք Գոր. ի. 28 ։ Գլ. է. 23 ։ Գաղ. գ. 13 ։ Եբր. թ. 12 ։ ա Պետ. ա. 18, 19 ։ բ Պետ. բ. 1 ։ Յայտ. ե. 9 ։
ա Հմր 8, 26 ։
բ Եփ. ե. 10 ։ ա Պետ. գ. 7 ։
գ Յովէլ. բ. 16 ։ Զաք. է. 3 ։ Տես Ել. ժթ. 15 ։ ա Թագ. իա. 4, 5 ։
դ ա Թես. գ. 5 ։
ե Հմր 12, 25 ։ բ Կոր. ը. 8 ։ ժա. 17 ։
զ Գոր. իզ. 29 ։
է Գլ. թ. 5 ։

[ը] բայց ամէն մէկը իր պարգևը ունի Աստուծմէ,
8 մէկը ասանկ՝ ու միւսը անանկ ։ Բայց չամուսնա-
ցածներուն ու որբևարիներուն կ'ըսեմ, [թ] Աղէկ է
9 անոնց՝ թէ որ ինծի պէս կենան ։ [ժ] Հապա թէ որ
ժուժկալութիւն չունին, թող ամուսնանան, ին-
չու որ աղէկ է ամուսնանալը քան թէ բորբոքիլը ։
10 Բայց ամուսնացածներուն կը պատուիրեմ [ի] չէ՛ թէ
ես, հապա Տէրը, [լ] որ կինը էրիկէն չզատուի,
11 (Իսկ թէ որ զատուի ալ՝ առանց ամուսնանալու
մնայ, կամ իր էրկանը հետ հաշտուի՝,) ու էրիկը
12 իր կինը թող չձգէ ։ Բայց ուրիշներուն ես կ'ը-
սեմ՝ [խ] չէ՛ թէ Տէրը. թէ որ մէկ եղբայր մը ան-
հաւատ կնիկ ունենայ, ու անոր հաճելի ըլլայ իրեն
13 հետ բնակիլը, թող չձգէ զանիկայ ։ Ու կնիկ մը
որ անհաւատ էրիկ ունենայ, ու անոր հաճելի ըլ-
14 լայ իրեն հետ բնակիլը՝ թող չձգէ զանիկայ ։ Ին-
չու որ անհաւատ էրիկը սրբուած է կնիկովը, և
անհաւատ կնիկը սրբուած է էրիկովը. [ծ] հապա թէ
ոչ՝ ձեր որդիքը պիղծ պիտի ըլլային. բայց հիմա
15 սուրբ են ։ Իսկ թէ որ անհաւատը զատուի, թող
զատուի. եղբայր մը կամ քոյր մը անանկ պարա-
գաներու մէջ գերի չէ. [կ] սակայն Աստուած խաղա-
16 ղութեան կանչեց մեզ ։ Քանզի ի՞նչ գիտես դուն
կի՛նիկ՝ [հ] գուցէ քու էրիկդ պիտի ապրեցնես. կամ
դուն ի՞նչ գիտես է՛րիկ՝ գուցէ քու կնիկդ պիտի
17 ապրեցնես ։ Միայն թէ ամէն մէկուն ինչպէս որ
Տէրը բաժնեց, ամէն մէկը ինչպէս որ Աստուած
կանչեց, անանկ թող երթայ, [ձ] ու ամէն եկեղե-
ցիներուն մէջ ես ասանկ պատուէր կու տամ ։

ը Մատ. ժթ. 12 ։ Գլ. ժբ. 11 ։
թ Հմր 1, 26 ։
ժ ա Տիմ. ե. 14 ։
ի Տես Հմր 12, 25, 40 ։
լ Մաղ. բ. 14, 16 ։ Մատ. ե. 32 ։ ժթ. 6, 9 ։ Մար. ժ. 11, 12 ։ Ղուկ. ժզ. 18 ։
խ Հմր 6 ։
ծ Մաղ. բ. 15 ։
կ Հռով. ժբ. 18 ։ ժդ. 19 ։ Գլ. ժդ. 33 ։ Եբր. ժբ. 14 ։
հ ա Պետ. գ. 1 ։
ձ Գլ. դ. 17 ։ բ Կոր. ժա. 28 ։

18 Թէ որ թլփատուած մէկը [illegible] կանչուե-
ցաւ, թող նորէն անթլփատ չըլլայ, չթլփա-
տուածներէն մէկը կանչուեցաւ, ղ թող չթլփա-
19 տուի։ ճ Ինչու որ թլփատութիւնը բան մը չէ,
ու անթլփատութիւնը բան մը չէ. մ հապա Աս-
տուծոյ պատուիրանքներուն պահպանութիւնը պէտք
20 է։ Բայց ամէն մէկը ինչ կոչումի մէջ որ կան-
21 չուեցաւ, թող անոր մէջը կենայ։ Ծառա՛յ
կանչուեցար, հոգ չըլլայ քեզի. բայց թէ որ կրը-
22 նաս ազատ ըլլալ, ան ընտրէ։ Վասն զի ան ծառան
որ Տէրոջմով կանչուած է, յ Տէրոջը ազատագրեալն
է անիկայ. նոյնպէս ալ ան ազատը որ կանչուած
23 է, ն Քրիստոսին ծառան է։ շ Դուք գնով ծախու
24 առնուեցաք, մարդոց ծառայ մի՛ ըլլաք։ ո Եղ-
բայրներ՝ ամէն մէկը ինչ կոչումի մէջ որ կանչուե-
ցաւ, թող անոր մէջը կենայ Աստուծոյ առջեւ։
25 Բայց կոյսերուն համար չ Տէրոջմէն հրաման մը
չունիմ, միայն թէ Տէրոջմէն պ հաւատարիմ ըլ-
լալու ջ ողորմութիւն գտածի մը պէս խրատ կու
26 տամ։ Ուրեմն ես կը սեպեմ որ ասիկայ աղէկ է
հիմակուան նեղութեանը համար, այսինքն ռ աղէկ
27 է մարդուս որ ասանկ ըլլայ։ Կապուա՞ծ ես կնկան,
մի՛ փնտռեր արձակուիլ. արձակուա՞ծ ես կնիկէ,
28 մի՛ փնտռեր կնիկ։ Իսկ թէ որ ամուսնանաս՝
չմեղանչեցիր, և թէ որ կոյսը ամուսնանայ՝ չմե-
ղանչեց. բայց անանկները մարմնոյ նեղութիւն պի-
29 տի ունենան. սակայն ես ձեզի կը խնայեմ։ ս Բայց

ղ Գործ. ժե. 1, 5, 19, 24, 28։ Գաղ. ե. 2։
ճ Գաղ. ե. 6։ զ. 15։
մ Յոհ. ժե. 14։ ա Յոհ. բ. 3։ գ. 24։
յ Յոհ. ը. 36։ Հռով. զ. 18, 22։ Փիլիմ. 16։
ն Գլ. թ. 21։ Գաղ. ե. 13։ Եփե. զ. 6։ ա Պետ. բ. 16։
շ Գլ. զ. 20։ ա Պետ. ա. 18, 19։ Տես Ղւ. իե. 42։
ո Հմր 20։
չ Հմր 6, 10, 40։ բ Կոր. ը. 8, 10։
պ Գլ. դ. 2։ ա Տիմ. ա. 12։
ջ ա Տիմ. ա. 16։
ռ Հմր 1, 8։
ս Հռով. ժգ. 11։ ա Պետ. դ. 7։ բ Պետ. գ. 8, 9։

այս կ'ըսեմ, Եղբայրներ, որ ժամանակը կար-
ճցած է. ալ անոնք որ կնիկ ունին, անանկ ըլլան
30 որպէս թէ չունին, Եւ անոնք որ կու լան, որպէս
թէ չեն լար, ու անոնք որ կը խնդան, որպէս թէ
չեն խնդար, և անոնք որ ծախու կ'առնեն, որպէս
31 թէ բան մը չունին. Եւ անոնք որ աշխարհս կը
գործածեն՝ որպէս թէ նգէշ կերպով չեն գործա-
ծեր. տ Ինչու որ այս աշխարհիս կերպարանքը
32 կ'անցնի։ Բայց ես կ'ուզեմ որ դուք անհոգ ըլ-
լաք. ր Վասն զի չամուսնացած մարդը Տէրոջը բա-
ները կը հոգայ, թէ ինչպէս Տէրոջը հաճելի ըլլայ.
33 Իսկ ամուսնացածը աշխարհիս բաները կը հոգայ,
34 թէ ինչպէս իր կնկանը հաճելի ըլլայ։ Եւ ամուս-
նացած կնիկը ու կոյսը կը տարբերին իրարմէ.
ց Ինչու որ կոյսը Տէրոջը բաները կը հոգայ, որ
ինքը սուրբ ըլլայ հոգւով ու մարմնով. իսկ ա-
մուսնացած կնիկը աշխարհիս բաները կը հոգայ,
35 թէ ինչպէս իր էրկանը հաճելի ըլլայ։ Բայց աս
բանը ձեր օգուտին համար կը զրուցեմ, չէ թէ
ձեր վրայ վարմ մը ձգելու, հապա պարկեշտու-
թեան համար ու առանց զբաղմանց Տէրոջը ծա-
36 ռայելու համար։ Իսկ թէ որ մէկը ամօթ կը սե-
պէ իր կոյսին համար՝ թէ որ չափը անցեր է, ու
պէտք է անանկ ըլլալ, ինչ որ կ'ուզէ՝ թող ընէ,
37 մեղք չգործեր. թող ամուսնանան։ Բայց ան որ
իր սրտին մէջ հաստատ կը կենայ, ու իր վրայ հարկ
մըն ալ չկայ, հապա իր կամքին վրայ իշխանու-
թիւն ունի, ու իր սրտին մէջ այսպէս որոշեր է
38 որ իր կոյսը պահէ, աղէկ կ'ընէ։ ւ Ուստի ան որ
իր կոյսը կ'ամուսնացընէ, աղէկ կ'ընէ. ու ան որ
39 չամուսնացըներ, աւելի աղէկ կ'ընէ։ փ Կնիկը

վ Գլ. թ. 18։
տ Սաղ. լթ. 6։ Յակ. ա. 10։ դ. 14։ ա Պետ. ա. 24։ դ. 7։ ա Յոհ. բ. 17։
ր ա Տիմ. ե. 5։ Հմր 34։
ց Ղու. ժ. 40, [illegible]։
ւ Եբր. ժգ. 4։
փ Հռով. է. 2։

կապուած է որչափ ժամանակ որ իր էրիկը ողջ է ·
հապա թէ որ իր էրիկը մեռնի , ազատ է ամուս-
նանալու որու որ ուզէ , ամիայն թէ Տէրոջմով ։
40 բԲայց իմ դատումիս նայելով աւելի երանելի է
թէ որ անանկ կենայ · գև կարծեմ թէ ես ալ Աս-
տուծոյ Հոգին ունիմ ։

ԳԼ. Ը

1 Կուռքերուն զոհուած միսէն ետ կենալու վրայով ։ 8 Պէտք չէ որ մեր քրիստոնէական ազատութիւնը ան կերպովը գործածենք՝ որ գայթակղութիւն տանք մեր եղբայրներուն , 11 հապա մեր գիտութիւնը սիրով սանձելու ենք ։

1 դԲայց կուռք զոհերուն վրայով՝ եգիտենք որ ա-
մէնքս ալ գիտութիւն ունինք · զգիտու-
թիւնը կը հպարտացնէ , բայց սէրը շինութիւն
2 կ'ընէ ։ էՆա թէ որ մէկը կը կարծէ թէ բան մը
գիտէ , դեռ բնաւ մէկ բան մը չգիտեր՝ ինչպէս որ
3 պէտք է գիտնալ ։ Իսկ թէ որ մէկը զԱստուած
4 կը սիրէ · ըինքը անկէ ճանչցուած է ։ Ուստի
կուռք զոհուածները ուտելու վրայով՝ թգիտենք որ
կուռքը ոչինչ է աշխարհքիս մէջ , ժև որ մէկէն 'ի
5 զատ ուրիշ Աստուած մը չկայ ։ իՔանզի թէև
ըլլան ալ անունով աստուածներ՝ թէ երկինքը և
թէ երկրիս վրայ , (ինչպէս որ կան շատ աստուած-
6 ներ ու շատ տէրեր ·) լԲայց մենք մէկ Աստուած
ունինք Հայրը , խուսկից են ամէն բաները , և
մենք ալ *անով · ծև մէկ Տէր՝ Յիսուս Քրիստոս ,

ա բ Կոր. զ. 14 ։
բ Հմր 25 ։
գ ա Թես. դ. 8 ։
դ Գոր. ժե. 20, 29 ։ Գլ. ժ. 19 ։
ե Հռով. ժդ. 14, 22 ։
զ Հռով. ժդ. 3, 10 ։
է Գլ. ժգ. 8, 9, 12 ։ Գաղ. զ. 3 ։ ա Տիմ. զ. 4 ։
ը Եւ. լզ. 12, 17 ։ Նաւ. ա. 7 ։ Մատ. է. 23 ։ Գաղ. դ. 9 ։ բ Տիմ. բ. 19 ։
թ Եա. խա. 24 ։ Գլ. ժ. 19 ։
ժ բ Օր. դ. 39 ։ զ. 4 ։ Եսա. խզ. 8 ։ Մար. ժբ. 29 ։ Հմր 6 ։ Եփե. դ. 6 ։ ա Տիմ. բ. 5 ։
ի Յոհ. ժ. 34 ։
լ Մաղ. բ. 10 ։ Եփե. դ. 6 ։
խ Գոր. ժէ. 28 ։ Հռով. ժա. 36 ։
* Կամ անոր համար
ծ Յոհ. ժգ. 13 ։ Գոր. բ. 36 ։ Գլ. ժբ. 3 ։ Եփե. դ. 5 ։ Փիլ. բ. 11 ։

կոր անով են ամէն բաները , ու մենք ալ անով ։
7 Բայց ամենուն քովը գիտութիւն չկայ · և ոմանք
կուռքի վրայով հխղճմտանք ունենալով՝ մինչև
հիմա կ'ուտեն կուռք զոհուածի պէս , և իրենց
խղճմտանքը որովհետև տկար է՝ ձկը պղծուի ։
8 ղՍակայն կերակուրը մեզ Աստուծոյ առջև չը-
կեցըներ · քանզի ոչ եթէ ուտենք՝ կ'աւել-
նանք , և ոչ եթէ չուտենք՝ կը պակսինք ։
9 ճԲայց զգուշ կեցէք , որ չըլլայ թէ այս ձեր իշ-
խանութիւնը մտկարներուն գայթակղութիւն ըլ-
10 լայ ։ Քանզի եթէ մէկը տեսնէ քեզ՝ որ գի-
տութիւն ունիս , կռատունի մէջ սեղան նստած ,
չէ՞ որ յան տկար մարդուն խղճմտանքը համարձա-
կութիւն պիտի առնէ կուռք զոհուածը ուտելու ,
11 նՈւ քու գիտութեամբդ ան տկար եղբայրը կոր-
12 սուի , որուն համար որ Քրիստոս մեռաւ ։ շՈւ
այսպէս եղբայրներուն դէմ մեղանչելով՝ ու անոնց
տկար խղճմտանքը վիրաւորելով , Քրիստոսի դէմ
13 կը մեղանչէք ։ Ուստի ոթէ որ կերակուրը կը
գայթակղեցնէ իմ եղբայրս , միս պիտի չուտեմ
յաւիտեան՝ որ իմ եղբայրս չգայթակղեցնեմ ։

կ Յոհ. ա. 3 ։ Կող. ա. 6 ։ Եբր. ա. 2 ։
հ Գլ. ժ. 28, 29 ։
ձ Հռով. ժդ. 14, 23 ։
ղ Հռով. ժդ. 17 ։
ճ Գաղ. ե. 13 ։
մ Հռով. ժդ. 13, 20 ։
յ Գլ. ժ. 28, 32 ։
ն Հռով. ժդ. 15, 20 ։
շ Մատ. իե. 40, 45 ։
ո Հռով. ժդ. 21 ։ բ Կոր. ժա. 29 ։

ԳԼ. Թ

1 Առաքեալը կը ցուցնէ թէ ինքը ազատ է , 7 և թէ աւետարանի պաշտօնեաները աւետարանէն պիտի ապրին · 15 սակայն ինքը կամաւ հրաժարած է , 18 որ անոնց ծանրութիւն մը չըլլայ , 22 կամ որ և իցէ մէկուն գայթակղութիւն չտայ անտարբեր բաներու մէջ ։ 24 Մեր կեանքը ասպարէզի մը կը նմանի ։

1 Չէ՞որ ես առաքեալ եմ. ա չէ՞ որ ես ազատ եմ.
բ չէ՞ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը տե-
2 սայ. գ չէ՞ որ դուք էք իմ գործս Տէրոջմով։ Թէպէտ
ուրիշներուն առաքեալ չըլլամ ալ, բայց անտա-
րակոյս ձեզի եմ. դ ինչու որ իմ առաքելութեանս
3 կնիքը դուք էք Տէրոջմով։ Իմ պատասխանս
4 անոնց որ զիս կը քննեն՝ աս է. ե Միթէ մենք իշ-
5 խանութիւն չունի՞նք ուտելու ու խմելու։ Միթէ
մենք իշխանութիւն չունի՞նք Քրիստոնեայ քոյր
եղող կնիկ մը մեր հետը պտըտցընելու, ինչպէս որ
ուրիշ առաքեալները զ ու Տէրոջը եղբայրները
6 է ու Կեփաս կ'ընեն։ Միթէ ես ու Բառնաբա՞ս
7 միայն ը իշխանութիւն չունինք չգործելու։ թ Ո՞վ
իր ապրուստովը զինուորութիւն կ'ընէ. ժ ո՞վ այգի
կը տնկէ ու անոր պտուղէն չուտեր. կամ ի ո՞վ
ոչխարներ կ'արածէ ու ոչխարներուն կաթէն չու-
8 տեր։ Միթէ մարդկօրէ՞ն կը զրուցեմ աս բանե-
րը, կամ չէ՞ որ օրէնքն ալ նոյնը կը զրուցէ։
9 Վասն զի Մովսէսին օրէնքին մէջն ալ գրուած է,
լ Կալի մէջ աշխատող եզին դունչը չկապես։ Մի-
10 թէ եզներո՞ւն համար Աստուծոյ հոգն էր. Չէ՞ որ
մանաւանդ մեզի համար կ'ըսէ. վասն զի մեզի հա-
մար գրուեցաւ. խ որովհետեւ ան որ կը հերկէ պէտք
է որ յուսով հերկէ, և ան որ ցորենը կը ծեծէ՝
11 պէտք է որ վայելելու յուսով ընէ։ ծ Թէ որ մենք

ա Գոր. թ. 15։ ժգ. 2։ իգ. 17։ բ Կոր. ժբ. 12։ Գաղ. բ. 7, 8։ ա Տիմ. բ. 7։ բ Տիմ. բ. 7։
բ Գոր. թ. 3, 17։ ժբ. 9։ իբ. 14, 18։ իգ. 11։ Գլ. ժե. 8։
գ Գլ. գ. 6։ դ. 15։
դ բ Կոր. գ. 2։ ժբ. 12։
ե Հմր 14։ ա Թես. բ. 6։ բ Թես. գ. 9։
զ Մատ. ժգ. 55։ Մար. զ. 3։ Ղու. զ. 15։ Գաղ. ա. 19։
է Մատ. ը. 14։
ը բ Թես. գ. 8, 9։
թ բ Կոր. ժ. 4։ ա Տիմ. ա. 18։ զ. 12։ բ Տիմ. բ. 3։ դ. 7։
ժ բ Օր. ի. 6։ Առակ. իէ. 18։ Գլ. գ. 6, 7, 8։
ի Յօհ. իա. 15։ ա Պետ. ե. 2։
լ բ Օր. իե. 4։ ա Տիմ. ե. 28։
խ բ Տիմ. բ. 6։
ծ Հռով. ժե. 27։ Գաղ. զ. 6։

ձեզի հոգեւոր բաներ սերմանեցինք, մե՞ծ բան մըն
12 է թէ որ ձեզմէ մարմնաւոր բաներ հնձենք։ Թէ
որ ուրիշները ձեր վրայ աս իշխանութիւնը ունին,
չէ՞ որ ալ աւելի մենք. կ բայց մենք աս իշխանու-
թիւնը չգործածեցինք, հապա ամէն բանի կը
համբերենք, հ որ Քրիստոսին աւետարանին արգելք
13 մը չըլլանք։ ձ Չէ՞ք գիտեր որ տաճարին մէջ աշ-
խատողները տաճարէն կ'ուտեն, ու անոնք որ սե-
ղանին պաշտօնեաներն են, սեղանէն բաժին կ'առ-
14 նեն։ ղ Այնպէս ալ Տէրը հրաման տուաւ, ճ որ
աւետարանը քարոզողները աւետարանէն ապրին։
15 մ Բայց ես աս բաներուն մէկը չգործածեցի, ու ալ
աս բաները գրեցի որ ինծի ասանկ ըլլայ. յ քանզի
աւելի աղէկ է ինծի որ մեռնիմ, քան թէ մէկը իմ
16 պարծանքս պարապ հանէ։ Վասն զի թէ որ ես
աւետարանը քարոզեմ, ինծի պարծանք մը չկայ,
ն ինչու որ իմ վրաս հարկ մըն է. մանաւանդ վա՜յ
17 է ինծի՝ թէ որ աւետարանը չքարոզեմ։ Ինչու
որ եթէ սիրով կամաւ ընեմ, շ վարձք կ'ունե-
նամ. իսկ եթէ ակամայ, ո ինծի յանձնուած
18 անտեսութիւն մըն է։ Ուրեմն ի՞նչ վարձք կ'ըլ-
լայ ինծի. ան կ'ըլլայ չ որ քարոզելու ատենս Քրիս-
տոսին աւետարանը ձրի տամ, պ որ չըլլայ թէ աւե-
տարանին մէջ իմ իշխանութիւնս դէշ կերպով
19 գործածեմ։ ջ Վասն զի թէեւ ես ամենէն ազատ

կ Գոր. ի. 33։ Հմր 15, 18։ բ Կոր. ժա. 7, 9։ ժբ. 13։ ա Թես. բ. 6։
հ բ Կոր. ժա. 12։
ձ Ղև. զ. 16, 26։ է. 6, [illegible]։ Թու. ե. 9, 10։ ժը. 8-20։ բ Օր. ժ. 9։ ժը. 1։
ղ Մատ. ժ. 10։ Ղու. ժ. 7։
ճ Գաղ. զ. 6։ ա Տիմ. ե. 17։
մ Հմր 12։ Գոր. ժը. 3։ ի. 34։ Գլ. դ. 12։ ա Թես. բ. 9։ բ Թես. գ. 8։
յ բ Կոր. ժա. 10։
ն Հռով. ա. 14։
շ Գլ. գ. 8, 14։
ո Գլ. դ. 1։ Գաղ. բ. 7։ Փիլ. ա. 16։ Կող. ա. 25։
չ Գլ. ժ. 33։ բ Կոր. դ. 5։ ժա. 7։
պ Գլ. ե. 31։
ջ Հմր 1։

էի , [ժ]իմ անձս ամենուն ծառայ ըրի , [ի]որ շա-
20 տերը շահիմ ։ [լ]Հրեաներուն հետ Հրեայի պէս
21 եղայ՝ որ Հրեաները շահիմ · Օրէնքի տակ եղող-
ներուն հետ օրէնքի տակ եղողի պէս եղայ , [չէ
թէ ես օրէնքի տակ էի ,] որ օրէնքի տակ եղողներն
ալ շահիմ · [խ]օրէնքի տակ չեղողներուն հետ
օրէնքի տակ չեղողի պէս եղայ , ([ծ]չէ թէ ես Աս-
տուծմէ օրէնք չունէի , հապա Քրիստոսի օրէնքին
տակն էի) որ օրէնք չունեցողներն ալ շահիմ ·
22 [կ]Տկարներուն հետ տկարի պէս եղայ , որ տկարնե-
րը շահիմ · [հ]ամենուն հետ ամէն բան եղայ , [ձ]որ
23 ըլլայ թէ մէկ քանիները ապրեցընեմ ։ Ու ասի-
կայ աւետարանին համար կ'ընեմ , որ անոր կը-
24 ցորդ ըլլամ ։ Չէ՞ք գիտեր որ ասպարէզին մէջ
վազողները իրաւ կը վազեն ամէնը , բայց մէկը
կ'առնէ մրցանակը · [ղ]անանկ վազեցէք որ հաս-
25 նիք ։ [ճ]Ու ամէն ով որ կը մրցի՝ ամէն բա-
նի մէջ չափաւորութիւն կը պահէ · անոնք եղ-
ծանելի պսակը առնելու համար , [մ]ու մենք՝ անեղ-
26 ծանելին ։ Ուստի ես անանկ կը վազեմ , [յ]չէ թէ
որպէս թէ անստուգութեամբ · ես անանկ բռնա-
մարտութիւն կ'ընեմ , չէ թէ որպէս թէ հովը
27 ծեծելով · [ն]Բայց իմ մարմինս կը ճնշեմ [շ]ու կը
նուաճեմ , որ չըլլայ թէ ուրիշներուն քարոզելէս
ետեւ [ո]ես ինքս խոտելի գտնուիմ ։

[ժ] Գաղ. ե. 13 ։
[ի] Մատ. ժը. 15 ; ա Պետ. գ. 1 ։
[լ] Գործ. ժզ. 3 ; ժը. 18 ; իա. 23, 26 ։
[խ] Հռով. բ. 12, 14 ։
[ծ] Գլ. է. 22 ։
[կ] Հռով. ժե. 1 ; բ Կոր. ժա. 29 ։
[հ] Գլ. ժ. 33 ։
[ձ] Հռով. ժա. 14 ; Գլ. է. 16 ։
[ղ] Գաղ. բ. 2 ; ե. 7 ; Փիլ. բ. 16 ; գ. 14 ; բ Տիմ. դ. 7 ; Եբր. ժբ. 1 ։
[ճ] Եփե. զ. 12 ; ա Տիմ. զ. 12 ; բ Տիմ. բ. 5 ; դ. 7 ։
[մ] բ Տիմ. դ. 8 ; Յակ. ա. 12 ; ա Պետ. ա. 4 ; ե. 4 ; Յայտ. բ. 10 ; գ. 11 ։
[յ] բ Տիմ. բ. 5 ։
[ն] Հռով. ը. 13 ; Կող. գ. 5 ։
[շ] Հռով. զ. 18, 19 ։
[ո] Երեմ. զ. 30 ; բ Կոր. ժգ. 5, 6 ։

ԳԼ. Ժ.

1 Հրէից եղած բաները մեզի օրինակներ էին ։ 14 Կռապաշտութենէ փախչելու ենք ։ 21 Պէտք չէ որ Տէրոջը սեղանը դեւերու սեղանի ընենք ։ 24 Զգոյշ կենանք որ անտարբեր բաներու մէջ մեր եղբայրներուն գայթակղութիւն չտանք ։

1 Չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք եղբայրներ , [ա]որ
մեր հայրերը ամէնքն ալ ամպին տակն էին ,
2 [բ]Ու ամէնքն ալ ծովէն անցան , և ամէնքն ալ
Մովսէսով մկրտուեցան ամպին ու ծովին մէջ ,
3 [գ]Ու ամէնքն ալ նոյն հոգեւոր կերակուրը կերան ,
4 [դ]Ու ամէնքն ալ նոյն հոգեւոր խմելիքը խմեցին ,
ինչու որ կը խմէին այն հոգեւոր վէմէն որ անոնց
հետը կ'երթար · ու այն վէմը Քրիստոս էր ։
5 Բայց չէ թէ անոնցմէ շատերուն հաւնեցաւ Աս-
տուած , [ե]ինչու որ անապատին մէջ փռուած ին-
6 կան ։ Ու այն բաները մեզի օրինակ եղան , որ չար
բաներու ցանկացող չըլլանք · [զ]Ինչպէս որ անոնք
7 ցանկացան ։ [է]Մի՛ ալ կռապաշտ ըլլաք , ինչպէս
որ անոնցմէ ոմանք · ինչպէս որ գրուած է , [ը]Ժո-
ղովուրդը նստաւ ուտելու ու խմելու , ու ելան
8 խաղալու ։ [թ]Ու պոռնկութիւն չընենք , ինչպէս որ
անոնցմէ ոմանք պոռնկեցան , [ժ]ու մէկ օրուան մէջ
9 քսանուերեք հազար հոգի ինկան ։ Ու Քրիստոսը
չփորձենք , [ի]ինչպէս որ անոնցմէ ոմանք փորձեցին ,
10 [լ]ու օձերէն ջարդուեցան ։ Ու տրտունջ չընէք ,

[ա] Ել. ժգ. 21 ; խ. 34 ; Թուոց. թ. 18 ; ժդ. 14 ; բ Օր. ա. 33 ; Նեեմ. թ. 12, 19 ; Սաղ. հը. 14 ; ճե. 39 ։
[բ] Ել. ժդ. 22 ; Թուոց. լգ. 8 ; Յես. դ. 23 ; Սաղ. հը. 13 ։
[գ] Ել. ժզ. 15, 35 ; Նեեմ. թ. 15, 20 ; Սաղ. հը. 24 ։
[դ] Ել. ժէ. 6 ; Թուոց. ի. 11 ; Սաղ. հը. 15 ; բ Օր. թ. 21 ; Սաղ. ճե. 41 ։
[ե] Թուոց. ժդ. 29, 32, 35 ; իզ. 64, 65 ; Սաղ. ճզ. 26 ; Եբր. գ. 17 ; Յուդ. 5 ։
[զ] Թուոց. ժա. 4, 33, 34 ; Սաղ. ճզ. 14 ։
[է] Հմր 14 ։
[ը] Ել. լբ. 6 ։
[թ] Գլ. զ. 18 ; Յայտ. բ. 14 ։
[ժ] Թուոց. իե. 1, 9 ; Սաղ. ճզ. 29 ։
[ի] Ել. ժէ. 2, 7 ; Թուոց. իա. 5 ; բ Օր. զ. 16 ; Սաղ. հը. 18, 56 ; ղե. 9 ; ճզ. 14 ։
[լ] Թուոց. իա. 6 ։

ե ինչպէս որ անոնցմէ ոմանք տրտունջ ըրին , զ ու
11 սատակիչէն կորսուեցան : Բայց աս ամէն բաները
իբրեւ օրինակ կը պատահէր անոնց . է իսկ մեզի ո-
րոնց դարերուն վերջը հասաւ , ը խրատ ըլլալու
12 համար գրուեցաւ : թ Աստի ան որ կը սեպէ թէ
հաստատուն կեցած է , թող զգուշանայ որ չըլ-
13 լայ թէ իյնայ : Ձեզի մարդկային փորձութենէ 'ի
զատ ուրիշ չէ պատահած . ժ բայց Աստուած հա-
ւատարիմ է , ժա որ ձեզ պիտի չթողու ձեր կարո-
ղութենէն աւելի փորձուելու , ժբ հապա փորձու-
թեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի
տայ , որ կարող ըլլաք համբերելու :
14 Անոր համար իմ սիրելիներս՝ ժգ կռապաշտութե-
15 նէ փախէք : ժդ Որպէս թէ իմաստուններու հետ կը
խօսիմ . դո՛ւք դատեցէք ինչ որ կը զրուցեմ :
16 ժե Օրհնութեան գաւաթը որ մենք կ'օրհնենք , չէ՞
որ Քրիստոսի արեանը հաղորդութիւնն է . ժզ Հացը
որ մենք կը կտրենք , չէ՞ որ Քրիստոսի մարմնոյն
17 հաղորդութիւնն է : ժէ Ինչու որ մենք շատերնիս
մէկ հաց՝ մէկ մարմին ենք , վասն զի ամէնքս ալ ան
18 մէկ հացէն կը վայելենք : ժը Նայեցէք մարմնաւոր
ժթ Իսրայէլին . ի չէ՞ որ ան զոհուածները ուտողները
19 սեղանին հաղորդ են : Արդ՝ ի՞նչ կ'ըսեմ , իա թէ
կուռքը բա՞ն մըն է , կամ թէ կռոց զոհուածը
20 բա՞ն մըն է : Բայց իբ կ'ըսեմ թէ ան բաները որ

ե Ել. ժզ. 2 ; ժէ. 2 ; Թու. ժդ. 2 , 29 ; ժզ. 41 ;
զ Ել. ժբ. 23 ; բ Թագ. իդ. 16 ; ա Մն. իա. 15 ;
է Թու. ժդ. 37 ; ժզ. 49 ;
ը Գլ. է. 29 ; Փիլ. դ. 5 ; Եբր. ժ. 25 , 37 ; ա Յով. բ. 18 ;
թ Հռով. ժե. 4 ; Գլ. թ. 10 ;
ժ Հռով. ժա. 20 ;
ժա Գլ. ա. 9 ;
ժբ Սաղ. ճիե. 3 ; բ Պետ. բ. 9 ;
ժգ Երեմ. իթ. 11 ;
ժդ Հմր 7 ; բ Կոր. զ. 17 ; ա Յով. ե. 21 ;
ժե Գլ. ը. 1 ;
ժզ Մատ. իզ. 26 , 27 , 28 ;
ժէ Գործ. բ. 42 , 46 ; Գլ. ժա. 23 , 24 ;
ժը Հռով. ժբ. 5 ; Գլ. ժբ. 27 ;
ժթ Հռով. դ. 1 ; թ. 3 , 5 ; բ Կոր. ժա. 18 ;
ի Հռով. դ. 12 ; Գաղ. գ. 16 ;
իա Ղեւ. գ. 3 ; է. 15 ;
իբ Գլ. ը. 4 ;

իգ հեթանոսները զոհ կ'ընեն , դեւերուն կը զոհեն .
ու չէ թէ Աստուծոյ . ու չեմ ուզեր որ դուք դեւե-
րուն հաղորդ ըլլաք . իդ չէք կրնար խմել Տէրոջը
21 գաւաթը իե ու դեւերուն գաւաթը . Չէք կրնար
վայելել Տէրոջը սեղանէն ու դեւերուն սեղանէն :
22 իզ Նախանձի՞ գրգռենք Տէրը . իէ միթէ մենք անկէ
զօրաւո՞ր ենք :
23 իը Ամէն բան ինծի օրինաւոր է , բայց չէ թէ ա-
մէն բան օգտակար . ամէն բան ինծի օրինաւոր է ,
24 բայց չէ թէ ամէն բան շինութիւն կ'ընէ : իթ Չըլ-
լայ որ մէկը միայն իր անձին օգուտը փնտռէ , հա-
25 պա իր ընկերինն ալ : լ Ամէն ինչ որ սպանդանոցին
մէջը կը ծախուի՝ կերէք , ու քննութիւն մի՛ ընէք
26 խղճմտանքի համար . լա Ինչու որ երկիրը իր լիու-
27 թեամբը Տէրոջն է : Եւ թէ որ անհաւատներէն
մէկը ձեզ կերակուրի հրաւիրէ , եւ ուզէք երթալ ,
լբ ամէն ինչ որ առջեւնիդ դրուի՝ կերէք , ու քննու-
28 թիւն մի՛ ընէք խղճմտանքի համար : Հապա թէ
որ մէկը ձեզի ըսէ թէ Ասիկայ կուռքի զոհուած է ,
լգ մի՛ ուտէք իրեն համար որ ձեզ իմացուց , ու
29 խղճմտանքի համար մի՛ ուտէք . Սակայն խղճմը-
տանք կ'ըսեմ՝ չէ թէ ձերը , հապա ընկերինը :
լդ Բայց ինչո՞ւ իմ ազատութիւնս պիտի դատուի
30 ուրիշին խղճմտանքէն . լե Թէ որ ես շնորհակալութեամբ
կը վայելեմ , ինչո՞ւ հայհոյուիմ , անոր համար որ
31 կը գոհանամ : լզ Արդ թէ ուտէք՝ թէ խմէք եւ թէ
ինչ գործ որ ընէք , ամէն բան Աստուծոյ փառքին

իգ Ղեւ. ժէ. 7 ; բ Օր. լբ. 17 ; Սաղ. ճզ. 37 ; Յայտ. թ. 20 ;
իդ բ Կոր. զ. 15 , 16 ;
իե բ Օր. լբ. 38 ;
իզ բ Օր. լբ. 21 ;
իէ Եզեկ. իբ. 14 ;
իը Գլ. զ. 12 ;
իթ Հռով. ժե. 1 , 2 ; Հմր 33 ; Գլ. ժգ. 5 ; Փիլ. բ. 4 , 21 ;
լ ա Տիմ. դ. 4 ;
լա Ել. ժթ. 5 ; բ Օր. ժ. 14 ; Սաղ. իդ. 1 ; ծ. 12 ; Հմր 28 ;
լբ Ղուկ. ժ. 7 ;
լգ Գլ. ը. 10 , 12 ;
լդ Հռով. ժդ. 16 ;
լե Հռով. ժդ. 6 ; ա Տիմ. դ. 3 , 4 ;
լզ Կող. գ. 17 ; ա Պետ. դ. 11 ;

32 համար ըրէք ։ ե Գայթակղութեան պատճառ մի
ըլլաք, ոչ Հրեաներուն, ոչ * Հեթանոսներուն
33 և ոչ Աստուծոյ եկեղեցիին. զ Ինչպէս որ ես ալ
ամէն կերպով ամենուն հաճոյ կ'ըլլամ, է ու չեմ
փնտռեր իմ անձիս օգուտը, հապա շատերունը՝ որ
փրկուին ։

ԳԼ. ԺԱ.

4 Պօղոս կը յանդիմանէ Կորնթացիները որ իրենց հոգևոր ժողովներուն մէջ երիկ մարդիկ գլուխնին գոց աղօթք կ'ընէին, 6 և կնիկները բաց գլխով, 17 և որ ընդհանրապէս իրենց ժողովները չէ՛ թէ աղէկին՝ այլ գէշին կ'երթային, 21 ինչպէս որ իրենց ընթրիքներովը Տէրունական ընթրիքը կ'անարգէին ։ 25 Վերջը կը յիշեցնէ անոնց Տէրունական ընթրիքին սահմանադրութիւնը ։

1 թ Ինծի նմանող եղէք, ինչպէս որ ես ալ Քրիս-
2 տոսի ։ Արդ ձեզ կը գովեմ՝ ո՛վ եղբայրներ,
ժ որ ամէն բանի մէջ զիս կը յիշէք, ի ու աւան-
դածներս կը բռնէք՝ ինչպէս որ ես ձեզի աւանդեցի ։
3 Բայց կ'ուզեմ որ գիտնաք, լ թէ ամէն երիկ մար-
դուն գլուխը Քրիստոս է, խ ու կնկանը գլուխը՝
երիկ մարդը, ծ և Քրիստոսին գլուխը՝ Աստուած ։
4 Ամէն երիկ մարդ որ գլուխը գոց աղօթքի կը կայ-
նի կ կամ մարգարէութիւն կ'ընէ, անպատիւ
5 կ'ընէ իր գլուխը ։ հ Իսկ ամէն կնիկ որ գլուխը
բաց աղօթքի կը կայնի, կամ մարգարէութիւն
կ'ընէ, անպատիւ կ'ընէ իր գլուխը. ինչու որ մի
և նոյն բանն է ձ որպէս թէ ածիլուած էր ։

ե Հռով. ժդ. 13։ Գլ. ը. 13։ բ Կոր. զ. 3։
* Յուն. Յոյներուն.
զ Գոր. ի. 38։ Գլ. ժա. 22։ ա Տիմ. գ. 5։
է Հռով. ժե. 2։ Գլ. թ. 19, 22։
ը Հմր 24։
թ Գլ. դ. 16։ Եփե. ե. 1։ Փիլ. գ. 17։ ա Թես. ա. 6։ բ Թես. գ. 9։
ժ Գլ. դ. 17։
ի Գլ. է. 17։ բ Թես. բ. 14։ գ. 6։
լ Եփե. ե. 23։
խ Ծն. գ. 16։ ա Տիմ. բ. 11, 12։ ա Պետ. գ. 1, 5, 6։
ծ Յով. ժդ. 28։ Գլ. գ. 23։ ժե. 27, 28։ Փիլ. բ. 7, 8, 9։
կ Գլ. ժբ. 10, 28։ ժդ. 1, [illegible]։
հ Գործ. իա. 9։
ձ բ Օր. իա. 12։

6 Վասն զի թէ որ կնիկը չծածկուիր, թող իր մա-
զերն ալ կտրէ. ղ Հապա թէ որ ամօթ է կնկան
մը իր մազերը կտրել կամ ածիլուիլ, թող ծած-
7 կուի ։ Երիկ մարդու պէտք չէ իր գլուխը ծած-
կել, ճ ինչու որ Աստուծոյ պատկերը ու փառքն է.
8 բայց կնիկը իր էրկանը փառքն է ։ մ Քանզի չէ՛
թէ երիկ մարդը կնիկէն է, հապա կնիկը՝ երիկ
9 մարդէն ։ յ Ինչու որ երիկ մարդը չստեղծուեցաւ
կնկանը համար, հապա կնիկը՝ էրկանը համար ։
10 ն Ասոր համար պէտք է որ կնիկը իր գլխուն շուք
11 դնէ շ հրեշտակներուն համար ։ ո Բայց ոչ կնիկը
առանց երիկ մարդու կ'ըլլայ, ու ոչ երիկ մարդը
12 առանց կնկան՝ Տէրոջմով ։ Վասն զի ինչպէս որ
կնիկը երիկ մարդէն է, անանկ ալ երիկ մարդը
13 կնկան միջոցով, չ բայց ամէնը Աստուծմէ ։ Դուք
ձեզմէ դատեցէք. կը վայլէ՞ կնիկ մարդու գլուխը
14 բաց աղօթքի կայնիլ Աստուծոյ առջևը. Չէ՞ որ
բնութիւնն ալ կը սորվեցնէ ձեզի որ երիկ մարդ
մը թէ որ երկար մազերով է, իրեն անարգանք է.
15 Բայց կնիկը թէ որ երկար մազերով է, իրեն
փառք է. ինչու որ մազերը ծածկոցի տեղ տրուած
16 են իրեն ։ պ Սակայն թէ որ մէկը հակառակող
ըլլալ կ'ուզէ, մենք անանկ սովորութիւն չունինք,
ջ ոչ ալ Աստուծոյ եկեղեցիները ։
17 Բայց աս պատուիրելով ձեզ չեմ գովեր, ինչու
որ ձեր ժողվուիլը չէ՛ թէ աղէկ՝ հապա գէշ ար-
18 դիւնք կ'ունենայ ։ Քանզի նախ՝ երբոր մէկտեղ
կը ժողվուիք եկեղեցւոյն մէջ, ռ կը լսեմ որ բա-
ժանմունքներ կան ձեր մէջը, և ըստ մասին կը հա-

ղ Թու. ե. 18։ բ Օր. իբ. 5։
ճ Ծն. ա. 26, 27։ ե. 1։ թ. 6։
մ Ծն. բ. 21, 22։
յ Ծն. բ. 18, 21, 23։
ն Ծն. իդ. 65։
շ Ժող. ե. 6։
ո Գաղ. գ. 28։
չ Հռով. ժա. 36։
պ ա Տիմ. զ. 4։
ջ Գլ. է. 17։ ժդ. 33։
ռ Գլ. ա. 10, 11, 12։ գ. 3։

19 ւատամ : Վասն զի հարկաւ յձեր մէջը հերձուա-
ծողութիւններ ալ պիտի ըլլան , նոր ձեր մէջը ե-
20 ղող ընտիրները երեւնան : Ուստի դուք որ մէկ-
տեղ կը ժողվուիք , ատիկայ Տէրունական ընթրի-
21 քը ուտել չէ . Ինչու որ ուտելու ատենը ամէն
մէկը առաջ իր ընթրիքը կ'առնէ . ու մէկը անօթի
22 կը մնայ շու մէկալը կը գինովնայ : Միթէ ու-
տելու ու խմելու համար տուն չունի՞ք , ոկամ թէ
Աստուծոյ եկեղեցի՞ն կ'անարգէք , չև ամօթով
կ'ընէք չքաւորները . ձեզի ի՞նչ ըսեմ , ձեզ գո-
23 վե՞մ . ատ բանին մէջ չեմ գովեր : պԻնչու որ
ես Տէրոջմէն ընդունեցի ան որ ձեզի ալ աւանդեցի՝
ջթէ Տէր Յիսուս իր մատնուած գիշերը հաց ա-
24 ռաւ . Եւ գոհանալով՝ կոտրեց ու ըսաւ , Առէք
ու կերէք . աս է իմ մարմինս որ ձեզի համար կը
կոտրուի . ատիկայ ըրէք զիս յիշելու համար :
25 Նոյնպէս ալ գաւաթը ընթրիքէն ետեւ առաւ ու
ըսաւ , Աս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս .
ատիկայ ըրէք՝ քանի անգամ որ խմելու ըլլաք՝ զիս
26 յիշելու համար : Վասն զի քանի անգամ որ աս
հացը ուտէք , ու աս գաւաթը խմէք , Տէ-
րոջը մահը կը պատմէք , ռմինչեւ որ ինք գայ :
27 սՈւստի ով որ աս հացը ուտէ կամ Տէրոջը
գաւաթը խմէ անարժանաբար , պարտական պի-
28 տի ըլլայ Տէրոջը մարմնոյն և արեանը : Ու-
րեմն վԹող մարդ իր անձը փորձէ , ու այսպէս

յ Մատ . ժը . 7 : Ղու . ժէ . 1 : Գոր . ի . 30 : ա Տիմ . դ . 1 : բ Պետ . բ . 1 , 2 :
ն Ղու . բ . 35 : ա Յօհ . բ . 19 : Տես բ Օր . ժգ . 3 :
շ բ Պետ . բ . 13 : Յուդ . 12 :
ո Գլ . ժ . 32 :
չ Յակ . բ . 6 :
պ Գլ . ժե . 3 : Գաղ . ա . 1 , 11 , 12 :
ջ Մատ . իզ . 26 : Մար . ժդ . 22 : Ղու . իբ . 19 :
ռ Յօհ . ժդ . 3 : իա . 22 : Գոր . ա . 11 : Գլ . դ . 5 : ժե . 23 : ա Թեսս . դ . 15 : բ Թեսս . ա . 10 : Յուդ . 14 : Յայտ . ա . 7 :
ս Թու . Թ . 10 , 13 : Յօհ . զ . 51 , 64 , 65 : ժգ . 27 : Գլ . Ժ . 21 :
վ բ Կոր . ժգ . 5 : Գաղ . զ . 4 : Հռով . ժգ . 2 :

29 ան հացէն ուտէ . և ան գաւաթէն խմէ : Վասն
զի ան որ անարժանաբար կ'ուտէ ու կը խմէ , իր
անձին դատապարտութիւնը կ'ուտէ ու կը խմէ ,
30 ինչու որ Տէրոջը մարմինը չորոշեր : Ասոր համար
ձեր մէջը շատ հիւանդներ ու ցաւագարներ կան , և
31 շատեր ալ կը ննջեն : տԻնչու որ եթէ ինքզինք-
32 նիս դատելու ըլլայինք , պիտի չդատուէինք : Իսկ
երբոր կը դատուինք , րՏէրոջմէ կը խրատուինք ,
33 որ աշխարհի հետ չդատապարտուինք : Ուստի
իմ եղբայրներս՝ երբոր մէկտեղ կը ժողվուիք
34 ուտելու , իրարու սպասեցէք : ցԻսկ թէ որ
մէկը անօթի է , ւթող իր տանը մէջը ուտէ , որ
չըլլայ թէ դատապարտութեան համար ժողվուիք :
փԵւ ուրիշ բաները՝ ինք եկած ատենս քպիտի
պատուիրեմ :

ԳԼ · ԺԲ

1 Հոգեւոր պարգեւները 4 զանազան են , 7 բայց ամէնն ալ օգուտի համար են . 8 և մի և նոյն վախճանի համար զանազան պարգեւներ տրուած են ։ 12 Ինչոր որ բնական մարմնոյն անդամները ան նոյն մարմնոյն 16 վայելչութեանը , 22 ծառայութեանը 26 և օգուտին համար՝ իրարու հետ միացած՝ մէկզմէկու օգնութիւն կ'ընեն , 27 նմանապէս մենք ալ մէկզմէկու ընելու ենք՝ Քրիստոսի խորհրդաւոր մարմինը կազմելու համար ։

1 օԲայց հոգեւոր պարգեւներուն վրայով չեմ ուզեր՝
2 եղբայրներ , որ չգիտցող ըլլաք : Դուք
գիտէք ֆոր երբ հեթանոս էիք , ամունջ կուռ-
քերուն կը տարուէիք՝ ինչպէս որ կ'առաջնորդուէ-
3 իք : Ուստի ձեզի կ'իմացընեմ բթէ մէկը
չըլլար որ Աստուծոյ Հոգիովը խօսի՝ ու Յիսուսը

տ Սաղ . լբ . 5 : ա Յօհ . ա . 9 :
ր Սաղ . ղդ . 12 , 13 : Եբր . ժբ . 5—11 :
ց Հմր 21 :
ւ Հմր 22 :
փ Գլ . դ . 19 :
ք Գլ . է . 17 : Տիտ . ա . 5 :
օ Գլ . ժդ . 1 , 37 :
ֆ Գլ . զ . 11 : Եփե . բ . 11 , 12 : ա Թեսս . ա . 9 : Տիտ . գ . 3 : ա Պետ . դ . 3 :
ա Սաղ . ճժե . 5 :
բ Մար . Թ . 38 : ա Յօհ . դ . 2 , 3 :

նզովեալ կոչէ. աԵւ մէկն ալ չկրնար Յիսուսը՝
Տէր կոչել, եթէ ոչ Հոգւով Սրբով։
4 բԵւ պարգեւները զանազան են, գբայց նոյն
5 Հոգին է։ դՆաեւ պաշտօնները զանազան են,
6 բայց նոյն Տէրն է։ եՆոյնպէս ներգործութիւննե-
րը զանազան են, բայց նոյն Աստուածն է որ կը
7 ներգործէ ամէնը ամէն բանի մէջ։ զԲայց ամէն
մէկուն Հոգւոյն յայտնութիւնը տրուած է օգու-
8 տի համար։ էՄէկու մը՝ Հոգիով իմաստութեան
խօսք տրուած է, ըուրիշին գիտութեան խօսք՝
9 նոյն Հոգիին տուած չափովը. թՄիւսին հաւատք՝
նոյն Հոգիով. ժուրիշին բժշկութեան պարգե-
10 ներ՝ նոյն Հոգիով. իՈւրիշին՝ հրաշագործու-
թիւններ, լուրիշին՝ մարգարէութիւն, խուրիշին՝
հոգւոց ընտրութիւն, ծուրիշին զանազան լեզու-
ներ, ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն։
11 Բայց աս ամէնը մի եւ նոյն Հոգին կը ներգործէ,
կեւ ամէն մէկուն զատ զատ կը բաժնէ՝ հինչպէս որ
կ'ուզէ։
12 ձՔանզի ինչպէս որ մարմինը մէկ է՝ ու շատ ան-
դամներ ունի, եւ այն մարմինին բոլոր անդամները որ
շատ են՝ մէկ մարմին են, ղնմանապէս ալ Քրիստոս։

ա Մատ. ժզ. 17։ Յոհ. ժե. 26։ բ Կոր. գ. 5։
բ Հռով. ժբ. 4, եւն։ Եբր. բ. 4։ ա Պետ. դ. 10։
գ Եփե. դ. 4։
դ Հռով. ժբ. 6, 7, 8։ Եփե. դ. 11։
ե Եփե. ա. 23։
զ Հռով. ժբ. 6, 7, 8։ Գլ. ժգ. 26։ Եփե. դ. 7։ ա Պետ. դ. 10, 11։
է Գլ. բ. 6, 7։
ը Գլ. ա. 5։ ժգ. 2։ բ Կոր. բ. 7։
թ Մատ. ժէ. 19։ Գլ. ժգ. 2։ բ Կոր. դ. 13։
ժ Մար. ժզ. 18։ Յակ. ե. 14։
ի Հմր 28, 29։ Մար. ժզ. 17։ Գաղ. գ. 5։
լ Հռով. ժբ. 6։ Գլ. ժգ. 2։ ժդ. 1, եւն։
խ Գլ. ժդ. 29։ ա Յոհ. դ. 1։
ծ Գործ. բ. 4։ ժ. 46։ Գլ. ժդ. 1։
կ Հռով. ժբ. 6։ Գլ. է. 7։ բ Կոր. ժ. 13։ Եփե. դ. 7։
հ Յոհ. գ. 8։ Եբր. բ. 4։
ձ Հռով. ժբ. 4, 5։ Եփե. դ. 4, 16։
ղ Հմր 27։ Գաղ. գ. 16։

13 ճԻնչու որ մենք ամէնքս մէկ Հոգիով մէկ մարմին
ըլլալու մկրտուեցանք, մթէ Հրեաներ, թէ հե-
թանոսներ, թէ ծառաներ, թէ ազատներ, յեւ
14 ամէնքս ալ մէկ Հոգիէ խմեցինք։ Ինչու որ մար-
15 մինը մէկ անդամ մը չէ, հապա շատ։ Եթէ որ
ոտքը ըսէ, Որովհետեւ ես ձեռք չեմ՝ մարմինէն
16 չեմ, չէ՞ թէ անով ան մարմինէն չէ։ Եւ թէ որ
ականջը ըսէ, Որովհետեւ ես աչք չեմ՝ մարմինէն
17 չեմ, չէ՞ թէ անով ան մարմինէն չէ։ Եթէ որ
բոլոր մարմինը աչք ըլլար, լսելիքը ո՞ւր պիտի
ըլլար. եւ թէ որ բոլորը լսելիք ըլլար, ո՞ւր պի-
18 տի ըլլար հոտոտելիքը։ նԲայց հիմա Աստուած
անդամները դրաւ՝ անոնց ամէն մէկը մարմինին
19 մէջ, շինչպէս որ ինքը ուզեց։ Հապա թէ որ
ամէնը մէկ անդամ ըլլար, մարմինը ո՞ւր պիտի
20 ըլլար։ Բայց հիմա անդամները շատ են, ու
21 մարմինը՝ մէկ։ Չկրնար աչքը ըսել ձեռքին թէ
Դուն ինծի պէտք չես. եւ ոչ դարձեալ գլուխը
22 ոտքերուն թէ՝ Ինծի պէտք չէք։ Մանաւանդ
մարմնոյն այն անդամները որ շատ տկար կ'երեւնան՝
23 աւելի հարկաւոր են. Ու մարմնոյն այն անդամնե-
րը որ յաւէտ անպատիւ ըլլալ կը սեպենք, ա-
նոնց վրայ աւելի պատիւ կը դնենք. ու [illegible]
մեր անվայելուչ անդամները աւելի վայելչութիւն
24 ունին։ Ու մեր վայելուչ անդամներուն բան մը
պէտք չէ. բայց Աստուած մարմինը բարեխառ-
նեց, ու պակասութիւն ունեցողին աւելի պատիւ
25 տուաւ, Որպէս զի մարմնոյն մէջ երկպառակու-
թիւն չըլլայ, հապա անդամները մի եւ նոյն հոգը
26 ունենան իրարու վրայ։ Եւ թէ որ մէկ անդամը
նեղութիւն քաշէ, բոլոր անդամները կը նեղին

ճ Հռով. զ. 5։
մ Գաղ. գ. 28։ Եփե. բ. 13, 14, 16։ Կող. գ. 11։
յ Յոհ. զ. 64։ է. 37, 38, 39։
ն Հմր 28։
շ Հռով. ժբ. 3։ Գլ. գ. 5։ Հմր 11։

անոր հետը · և թէ որ փառաւորի մէկ անդամը ,
բոլոր անդամները կ'ուրախանան անոր հետը ։
27 ոԱրդ դուք Քրիստոսի մարմինն էք , չու մասնա-
28 ւորապէս անոր անդամները ։ պԵւ Աստուած ե-
կեղեցիին մէջ դրաւ մէկ քանիները , ջնախ՝
առաքեալներ , ռերկրորդ՝ մարգարէներ , երրորդ՝
վարդապետներ , սետքը հրաշքներ , վետքը բը-
ժշկութիւններու պարգեւներ , տօգնութիւններ ,
րկառավարութիւններ , լեզուներու տեսակներ ։
29 Միթէ ամէնը առաքեալնե՞ր են · միթէ ամէնը
մարգարէնե՞ր են · միթէ ամէնը վարդապետնե՞ր
30 են · միթէ ամէնը հրաշքնե՞ր կը գործեն ։ Միթէ
ամէնը բժշկութեան պարգեւնե՞ր ունին · միթէ
ամէնը լեզունե՞ր կը խօսին · միթէ ամէնը թարգ-
մանութի՞ւն կ'ընեն ։
31 ցԲայց դուք նախանձաւոր եղէք ան շնորհքնե-
րուն որ լաւագոյն են · և ես՝ աւ աւելի աղէկ ճամ-
բայ մը կը ցուցընեմ ձեզի ։

ԳԼ · ԺԳ

1 Առաքեալը կը ցուցնէ թէ ամէն տեսակ պարգեւները 2 ո՛րչափ ազնիւ և գերազանց ըլլան , առանց սիրոյ ոչինչ են ։ 4 Սիրոյ գովութիւնները , 13 և յոյսէն ու հաւատքէն նախամեծար ըլլալը ։

1 Թէ որ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօ-
սիմ՝ և սէր չունենամ , ես ձայն տուող պղինձի
2 պէս եղայ , կամ ՚հնչեցող ծնծղաներու պէս ։ ւԵւ
թէ որ մարգարէութիւն ունենամ , ու հասկընամ

ո Հռով . ժբ . 5 ։ Եփե . ա . 23 ։ դ . 12 ։ ե . 23 , 30 ։ Կող . ա . 24 ։
չ Եփե . ե . 30 ։
պ Եփե . դ . 11 ։
ջ Եփե . բ . 20 ։ գ . 5 ։
ռ Գոր . ժգ . 1 ։ Հռով . ժբ . 6 ։
ս Հմր 10 ։
վ Հմր 9 ։
տ Թու . ժա . 17 ։
ր Հռով . ժբ . 8 ։ ա Տիմ . ե . 17 ։ Եբր . ժգ . 17 , 24 ։
ց Գլ . ժդ . 1 , 39 ։
ւ Գլ . ժբ . 8 , 9 , 10 , 28 ։ ժդ . 1 , [illegible] ։ Տես Մատ . է . 22 ։

ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը , և
թէ որ քունենամ ամէն հաւատքը ք մինչև լեռները
տեղափոխելու , ու սէր չունենամ , ոչինչ եմ ։
3 օԵւ թէ որ իմ բոլոր ստացուածքս աղքատներուն
կերցընեմ , ու իմ մարմինս այրուելու տամ , և
4 սէր չունենամ , օգուտ մը չեմ ունենար ։ ֆՍէրը
երկայնամիտ է , քաղցր է · սէրը չնախանձիր · ,
5 սէրը չգոռոզանար , չհպարտանար , Անվայել վար-
մունք չունենար , աիրենը չփնտռեր , բարկութեան
6 չգրգռուիր , չարութիւն չխորհիր , բԱնիրաւու-
թեան վրայ չխնդար , գհապա ճշմարտութեան
7 խնդակից կ'ըլլայ , դԱմէն բանի կը դիմանայ , ամէն
բանի կը հաւատայ , ամէն բանի կը յուսայ , ամէն
8 բանի կը համբերէ ։ Սէրը բնաւ չիյնար · բայց
թէ որ մարգարէութիւններ ըլլան՝ պիտի խափանին ,
թէ որ լեզուներ՝ պիտի դադարին , թէ որ գիտու-
9 թիւն՝ պիտի խափանի ։ եԻնչու որ շատ քիչը
10 գիտենք՝ ու շատ քիչը կը մարգարէանանք · Բայց
երբոր կատարեալը գայ , այն ատենը շատ քիչը
11 պիտի խափանի ։ Երբոր տղայ էի՝ տղայի պէս կը
խօսէի , տղայի պէս կը խորհէի , տղայի պէս հա-
մարում ունէի · բայց երբոր այր եղայ , տղա-
12 յութեան բաները մէկդի ձգեցի ։ զՔանզի հիմա
մենք որպէս թէ հայելիի մէջ կը տեսնենք աղօտ
կերպով , էբայց այն ատենը երես առ երես · Հի-
մա շատ քիչ մը տեղեակ եմ , բայց այն ա-
տենը անանկ պիտի ճանչնամ՝ ինչպէս որ ճանչ-
13 ցուեցայ ։ Արդ հիմա կը մնայ հաւատք՝ յոյս՝
սէր՝ այս իրեքը , ու ասոնց մեծագոյնը սէրն է ։

ք Մատ . ժէ . 19 ։ Մար . ժա . 23 ։ Ղու . ժէ . 6 ։
օ Մատ . զ . 1 , 2 ։
ֆ Առակ . ժ . 12 ։ ա Պետ . դ . 8 ։
ա Գլ . ժ . 24 ։ Փիլ . բ . 4 ։
բ Սաղ . ժ . 3 ։ Հռով . ա . 32 ։
գ բ Յով . 4 ։
դ Հռով . ժե . 1 ։ Գաղ . զ . 2 ։ բ Տիմ . բ . 24 ։
ե Գլ . ը . 2 ։
զ բ Կոր . գ . 18 ։ ե . 7 ։ Փիլ . գ . 12 ։
է Մատ . ժը . 10 ։ ա Յով . գ . 2 ։

ԳԼ · ԺԴ

1 Պօղոս կը գովէ մարգարէութիւն ընելը , 2 և լեզուներ խօսելէն աւելի յարգի կը համարի զանիկայ՝ 6 նուագարանի ձայնը օրինակ բերելով · 12 կը ցուցնէ թէ երկուքն ալ պէտք է որ եկեղեցիին օգուտին համար ըլլան , 22 որ ան է իրենց ճշմարիտ և սեփհական վախճանը · 26 կը սորվեցնէ թէ անոնց ամէն մէկը ինչպէս պէտք է գործածել ։ 34 Կանանց հրաման չկայ եկեղեցիին մէջ խօսելու ։

1 Սիրոյ ետևէն գացէք , ա ու հոգևոր պարգևնե-
րուն նախանձաւո՛ր եղէք , բ մանաւանդ մարգա-
2 րէութիւն ընելու ։ Վասն զի գ ան որ օտար լե-
զուով կը խօսի՝ չէ՛ թէ մարդոց կը խօսի , հապա
Աստուծոյ · ինչու որ մէկը չկայ որ իմանայ , բայց
3 անիկայ դ հոգիով խորհուրդներ կը խօսի ։ Սա-
կայն ան որ կը մարգարէանայ , մարդոց կը խօսի՝
շինութիւն ու յորդորանք և մխիթարութիւն տա-
4 լու ։ Ան որ օտար լեզուով կը խօսի , իր անձին
շինութիւն կ՚ընէ · ու ան որ կը մարգարէանայ ,
5 եկեղեցիին շինութիւն կ՚ընէ ։ Կ՚ուզեմ որ դուք
ամէնքդ լեզուներ խօսիք , բայց մանաւանդ որ
մարգարէութիւն ընէք , ինչու որ ալ աղէկ է ան՝
որ կը մարգարէանայ , քան թէ ան՝ որ լեզուներ կը
խօսի · միայն թէ թարգմանելու ըլլայ , որ եկեղե-
ցին ալ շինութիւն առնէ ։
6 Իսկ հիմա եղբայրներ՝ թէ որ ես ձեզի գամ լե-
զուներ խօսելով , ի՞նչ օգուտ պիտի ընեմ ձեզի՝
թէ որ չխօսիմ ձեզի՝ ե կամ յայտնութիւնով ,
կամ գիտութիւնով , կամ մարգարէութիւնով ,
7 կամ վարդապետութիւնով ։ Իսկ ձայն տուող
անկենդան բաները անգամ , թէ սրինգ և թէ
քնար , եթէ ձայներու զանազանութիւն չընեն ,
ի՞նչպէս պիտի ճանչցուի սրինգով կամ քնարով
8 զարնուածը ։ Ինչու որ եթէ փողն ալ անորոշ ձայն
հանէ , ո՞վ պիտի պատրաստուի պատերազմի ։

ա Գլ. ժբ. 31 ։
բ Թուոց. ժա. 25, 29 ։
գ Գործ. բ. 4 ։ ժ. 46 ։ ժթ. 9 ։
դ Հմր 26 ։

9 Անանկ ալ դուք՝ թէ որ լեզուով բացայայտ խօսք
չզրուցէք , խօսուածը ինչպէ՞ս պիտի հասկցուի ·
10 ինչու որ օդին խօսողներ պիտի ըլլաք ։ Ահա
աշխարհի մէջ այնքան տեսակ ձայներ կան , և
11 անոնց մէկը առանց նշանակութեան չէ ։ Ուստի
թէ որ ան ձայնին զօրութիւնը չգիտնամ , ես խօ-
սողին բարբարոս մը պիտի ըլլամ , խօսողն ալ ին-
12 ծի բարբարոս մը պիտի ըլլայ ։ Անանկ ալ դուք
որովհետև հոգևոր պարգևներու նախանձաւոր էք ,
եկեղեցւոյն շինութեանը համար խնդրեցէք որ
13 աւելնաք նոյն պարգևներովը ։ Անոր համար ան որ
օտար լեզուով կը խօսի , աղօթք թող ընէ որ
14 թարգմանէ ալ ։ Քանզի թէ որ ես աղօթք
ընեմ օտար լեզուով , իմ հոգիս աղօթք
15 կ՚ընէ , բայց միտքս անպտուղ է ։ Ուրեմն
ի՞նչ է · աղօթք ընեմ հոգիով , աղօթք ը-
նեմ մտաւորութեամբ ալ · զ սաղմոս երգեմ հո-
գիով , է սաղմոս երգեմ մտաւորութեամբ ալ ։
16 Ապա թէ չէ՛ թէ որ դուն հոգիով օրհնութիւն
ընես , անիկայ որ տգէտի տեղ կայներ է՝ ը ինչպէ՞ս
Ամէն պիտի ըսէ քու գոհութիւն տալու ատենդ ·
17 ինչու որ ան քու ըսածդ չիմանար ։ Որ թէ-
պէտ դուն աղէկ գոհութիւն կ՚ընես , բայց միւսը
18 շինութիւն չառներ ։ Աստուծմէ կը գոհանամ որ
19 ձեր ամէնէն աւելի լեզուներով կը խօսիմ · Բայց
եկեղեցիին մէջ կ՚ուզեմ հինգ խօսք մտաւորութեամբս
խօսիլ , որ ուրիշներուն ալ սորվեցնեմ , քան
թէ բիւրաւոր խօսքեր օտար լեզուով ։
20 Եղբայրներ՝ ը միտքով տղայ մի՛ ըլլաք , թ հապա
չարութիւն գիտնալու կողմէ՝ տղայ եղէք , ու միտ-

ե Եփե. ե. 19 ։ Կող. գ. 16 ։
զ Սաղ. խէ. 7 ։
է Գլ. ժա. 24 ։
ը Սաղ. ճլա. 2 ։ Մատ. ժա. 25 ։ ժը. 3 ։ ժթ. 14 ։ Հռոմ. ժզ. 19 ։ Գլ. գ. 2 ։ Եփե. դ. 14 ։ Եբր. ե. 12, 13 ։
թ Մատ. ժը. 3 ։ ա Պետ. բ. 2 ։ Գլ. բ. 6 ։

21 քով չափահաս եղէք ։ ճ Օրէնքին մէջ մ գրուած է
թէ Օտար լեզուներով ու օտար շրթունքներով
աս ժողովուրդին հետ պիտի խօսիմ , սակայն և
այնպէս ինծի մտիկ պիտի չընեն , կ՚ըսէ Տէրը ։
22 Ուրեմն լեզուները նշանի համար են՝ չէ թէ հա-
ւատացեալներուն , հապա անհաւատներուն , բայց
մարգարէութիւնը չէ թէ անհաւատներուն , հապա
23 հաւատացեալներուն ։ Արդ թէ որ բոլոր եկեղեցին
մէկտեղ գայ , ու ամէնն ալ օտար լեզուներով
խօսելու ըլլան , և հոն մտնեն տգէտներ կամ ան-
հաւատներ , յ պիտի չըսե՞ն թէ դուք խենթեցեր
24 էք ։ Իսկ թէ որ ամէնն ալ մարգարէանան , ու
հոն մէկ անհաւատ մը կամ տգէտ մը մտնէ , ամե-
նէն ալ կը յանդիմանուի , ամէնէն ալ կը քննուի ,
25 Ու անոր սրտին ծածուկ բաները յայտնի կ՚ըլլան .
և այսպէս երեսի վրայ ինկած՝ Աստուծոյ երկրպա-
գութիւն պիտի ընէ , ու խոստովանի ն թէ իրաւ-
ցընէ Աստուած ձեր մէջն է ։
26 Ուստի ի՞նչ է՝ եղբայրներ . երբոր մէկտեղ կը
ժողվուիք , ձեզմէ ամէն մէկը սաղմոս ունի ,
շ վարդապետութիւն ունի , լեզու ունի , յայտնու-
թիւն ունի , թարգմանութիւն ունի . ո Ամէնը շի-
27 նութեան համար թող ըլլայ ։ Թէ որ մէկը օտար
լեզու կը խօսի , երկու հոգի , և թէ շատը՝ երեք
թող ըլլան , և ան ալ մէկիկ մէկիկ , ու մէկը թող
28 թարգմանէ ։ Բայց թէ որ թարգմանող չըլլայ ,
եկեղեցւոյն մէջ լուռ թող կենայ , և ինքնիրեն ու
29 Աստուծոյ թող խօսի ։ Իսկ մարգարէները երկու
կամ երեք հոգի՛ թող խօսին , չ ու միւսները թող
30 քննութիւն ընեն ։ Հապա թէ որ նստողներէն
ուրիշ մէկուն ալ բան մը յայտնուելու ըլլայ , պ ա-

ճ Յոհ . ժ . 34 ։
մ Ես . իը . 11 , 12 ։
յ Գոր . բ . 13 ։
ն Ես . խե . 14 ։ Զաք . ը . 23 ։
շ Հմր 6 ։ Գլ . ժբ . 8 , 9 , 10 ։
ո Գլ . ժբ . 7 ։ բ Կոր . ժբ . 19 ։ Եփե . դ . 12 ։
չ Գլ . ժբ . 10 ։
պ ա Թես . ե . 19 , 20 ։

31 ռաջինը թող լռէ ։ Ինչու որ ամէնքդ ալ կրնաք
մէկիկ մէկիկ մարգարէանալ , որ ամէնն ալ սոր-
32 վին ու ամէնն ալ մխիթարուին ։ ջ Եւ մարգա-
րէներուն հոգիները մարգարէներուն հնազանդ են ։
33 Ինչու որ Աստուած խռովութեան Աստուած չէ ,
հապա խաղաղութեան , ռ ինչպէս որ սուրբերուն
բոլոր եկեղեցիներուն մէջը ։
34 Ձեր ս կիները եկեղեցիներուն մէջ լուռ կենան ,
ինչու որ անոնց հրաման չկայ խօսելու , վ հապա
հնազանդ ըլլալու , տ ինչպէս որ օրէնքն ալ կ՚ըսէ ։
35 Բայց թէ որ բան սորվիլ կ՚ուզեն , տունը իրենց
էրիկներուն թող հարցընեն . քանզի կիներուն
36 անվայել է եկեղեցւոյ մէջ խօսիլը ։ Միթէ Աս-
տուծոյ խօսքը ձեզմէ՞ ելաւ , կամ թէ միայն ձեզի՞
37 հասաւ ։ ր Եթէ որ մէկը կը կարծէ թէ ինքը մար-
գարէ է , կամ հոգևոր , թող հաստատ գիտնայ
թէ ինչ որ ձեզի գրեցի՝ Տէրոջը պատուէրներն են .
38 Բայց թէ որ մէկը տգէտ է , թող տգէտ ըլլայ ։
39 Ուստի , եղբայրներ , ց մարգարէութիւն ընելու
նախանձաւոր եղէք , ու լեզուներ խօսիլն ալ մի
40 արգիլէք ։ ւ Եւ ամէն բան վայելչութեամբ և կար-
գաւ թող ըլլայ ։

ԳԼ. ԺԵ

1 Առաքեալը Քրիստոսի յարութեամբը 12 կը ցուցնէ մեր յարութեան ստուգութիւնը , մարմինին յարութեանը չհաւատացողներուն դէմ . 21 կը ցուցնէ յարութեան պտուղը 35 ու եղանակը , 51 և թէ ինչպէս պիտի փոխուին անոնք որ կենդանի կը մնան վերջին օրը ։

1 Եղբայրներ՝ ձեզի կ՚իմացընեմ այն աւետարանը
փ որ ես ձեզի քարոզեցի , որ նաև ընդունեցիք

ջ ա Յոհ . դ . 1 ։
ռ Գլ . ժա . 16 ։
ս ա Տիմ . բ . 11 , 12 ։
վ Գլ . ժա . 3 ։ Եփե . ե . 22 ։ Կող . գ . 18 ։ Տիտ . բ . 5 ։ ա Պետ . գ . 1 ։
տ Ծն . գ . 16 ։
ր բ Կոր . ժ . 7 ։ ա Յոհ . դ . 6 ։
ց Գլ . ժբ . 31 ։ ա Թես . ե . 20 ։
ւ Հմր 33 ։
փ Գաղ . ա . 11 ։

2 [բ]Ու՛ անոր վրայ հաստատուած էք. [գ]Որով կը
փրկուիք ալ, թէ որ ամուր բռնէք այն խօսքը որ
ես ձեզի քարոզեցի, [դ]միայն եթէ պարապ տեղը
3 հաւատացած չէք։ [ե]Ինչու որ ամէնէն առաջ ես
ձեզի [զ]աւանդեցի անիկայ՝ որն որ ես ալ ընդունե-
ցի, թէ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ
4 [է]գիրքերուն [illegible] համեմատ, Եւ թէ թաղուե-
ցաւ ու յարութիւն առաւ երրորդ օրը՝ [ը]գիր-
5 քերուն [illegible] համեմատ. [թ]Եւ թէ երեւցաւ Կե-
6 փասին, [ժ]ու ետքը տասներկուքին. Ետքը
հինգ հարիւրէն աւելի եղբայրներուն մէկտեղ
երեւցաւ, որոնցմէ շատերը մինչեւ հիմա կան,
7 և ոմանք ալ ննջեցին. Ու ետքը երեւցաւ Յակո-
8 բոսին, [ի]ետքը բոլոր առաքեալներուն։ [լ]Ամենէն
ետքը որպէս թէ վիժածի մը՝ ինծի ալ երեւցաւ։
9 [խ]Վասն զի ես առաքեալներուն ամենէն յետինն
եմ, որ արժանի ալ չեմ առաքեալ ըսուելու,
10 [ծ]ինչու որ Աստուծոյ եկեղեցին հալածեցի։ [կ]Մի-
այն թէ Աստուծոյ շնորհօքն եմ՝ ինչ որ եմ. և
անոր շնորհքը որ իմ վրաս է, պարապ բան մը
չեղաւ, [հ]հապա ես անոնց ամենէն աւելի աշխատե-
ցայ. [ձ]Եւ չէ թէ ես, հապա Աստուծոյ շնորհքը

[բ] Հռով. ե. 2։
[գ] Հռով. ա. 16։ Գլ. ա. 21։
[դ] Գաղ. գ. 4։
[ե] Գլ. ժա. 2, 23։
[զ] Գաղ. ա. 12։
[է] Սաղ. իբ. 15, ՟՟։ Եսա. ծգ. 5, 6, ՟՟։ Դան. թ. 26։ Զաք. ժգ. 7։ Ղուկ. իդ. 26, 46։ Գործ. գ. 18։ իգ. 23։ Ա Պետ. ա. 11։ բ. 34։
[ը] Սաղ. բ. 7։ ժզ. 10։ Եսա. ծգ. 10։ Ղուկ. իդ. 26, 46։ Գործ. բ. 25—31։ ժգ. 33, 34, 35։ իզ. 22, 23։ Ա Պետ. ա. 11։
[թ] Ղուկ. իդ. 34։
[ժ] Մատ. իը. 17։ Մար. ժզ. 14։ Ղուկ. իդ. 36։ Յովհ. ի. 19, 26։ Գործ. ժ. 41։
[ի] Ղուկ. իդ. 50։ Գործ. ա. 3, 4։
[լ] Գործ. թ. 4, 17։ իբ. 14, 18։ Գլ. թ. 1։
[խ] Եփե. գ. 8։
[ծ] Գործ. ը. 3։ թ. 1։ Գաղ. ա. 13։ Փիլ. գ. 6։ Ա Տիմ. ա. 3։
[կ] Եփե. բ. 7, 8։
[հ] Բ Կոր. ժա. 23։ ժբ. 11։
[ձ] Մատ. ժ. 20։ Հռով. ժե. 18, 19։ Բ Կոր. գ. 5։ Գաղ. բ. 8։ Եփե. գ. 7։ Փիլ. բ. 13։

11 որ իմ՝ հետս էր։ Ուստի թէ՛ ես և թէ անոնք
անանկ կը քարոզենք, ու դուք անանկ հաւատա-
ցիք։
12 Ուրեմն թէ որ Քրիստոս կը քարոզուի՝ որ մե-
ռելներէն յարութիւն առած է, ի՞նչպէս ձեզմէ
մէկ քանիները կ՚ըսեն թէ Մեռելոց յարութիւն
13 չկայ։ Թէ որ մեռելոց յարութիւն չկայ, [ղ]ու-
14 րեմն Քրիստոս ալ յարութիւն առած չէ. Եւ
թէ որ Քրիստոս յարութիւն առած չէ, ու-
րեմն մեր քարոզութիւնը պարապ է, ու ձեր հա-
15 ւատքն ալ պարապ է. Եւ մենք ալ Աստուծոյ
սուտ վկաները գտնուած կ՚ըլլանք. [ճ]որովհետեւ
Աստուծոյ համար վկայութիւն տուինք թէ Ինքը
մեռելներէն յարուց Քրիստոսը. որ իրաւ չյարուց
զանիկա, թէ որ մեռելները յարութիւն չեն առ-
16 ներ. Քանզի թէ որ մեռելները յարութիւն չեն
17 առներ, Քրիստոս ալ յարութիւն առած չէ. Եւ
թէ որ Քրիստոս յարութիւն առած չէ, ձեր հա-
ւատքը պարապ է, [մ]դուք տակաւին ձեր մեղքերուն
18 մէջն էք. Նոյնպէս ալ Քրիստոսով ննջողները
19 կորսուած են։ [յ]Թէ որ միայն աս կեանքիս հա-
մար Քրիստոսի յուսացած ենք, մենք բոլոր մար-
20 դիկներէն աւելի խղճալի ենք։ [ն]Բայց հիմա
Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է՝ [շ]ննջե-
21 ցելոց առջի պտուղը։ [ո]Քանզի որովհետեւ
մարդով եղաւ մահը, [չ]մարդով ալ մեռելոց յա-
22 րութիւնը։ Վասն զի ինչպէս որ Ադամով ամէնը
կը մեռնին, անանկ ալ Քրիստոսով ամէնը կեն-
23 դանի պիտի ըլլան. [պ]Բայց ամէն մէկը իր կարգո-
վը, առջի պտուղը Քրիստոս, ետքը Քրիստոսին-

[ղ] Ա Թես. դ. 13։
[ճ] Գործ. բ. 24, 32։ դ. 10, 33։ ժգ. 30։
[մ] Հռով. դ. 25։
[յ] Բ Տիմ. գ. 12։
[ն] Ա Պետ. ա. 3։
[շ] Գործ. իզ. 23։ Հմր 23։ Կող. ա. 18։ Յայտ. ա. 5։
[ո] Հռով. ե. 12, 17։
[չ] Յովհ. ժա. 25։ Հռով. զ. 23։
[պ] Հմր 20։ Ա Թես. դ. 14, 15, 16։

24 ներըՙ իր գալու ատենը ։ Անկէ ետեւ կու գայ վախ-
ճանը , ջերբոր թագաւորութիւնը պիտի տայ
Աստուծոյ ու Հօրը ձեռքը , երբոր խափանէ ամէն
իշխանութիւնը եւ ամէն պետութիւնը ու զօրու-
25 թիւնը ։ Ինչու որ անոր պէտք է թագաւորու-
թիւն ընել , ռմինչեւ որ բոլոր թշնամիները իր
26 ոտքերուն տակը դնէ ։ սՎերջին թշնամին որ պիտի
խափանի , մահն է ։ վասն զի գիրքը կ'ըսէ , վԱմէն
27 բան անոր ոտքերուն տակը հնազանդեցուց ։ Բայց
երբոր կ'ըսէ թէ Ամէն բան անոր հնազանդած է ,
յայտնի է թէ բաց ՚ի անկէ որ ամէնը անոր հնազան-
28 դեցուց ։ տՈւ երբոր ամէնը անոր հնազանդ ըլլայ ,
րայն ատենը Որդին ինքն ալ պիտի հնազանդի
անոր , որ իրեն հնազանդեցուց ամէնը , որպէս զի
29 Աստուած ըլլայ ամէնը ամէն բանի մէջ ։ Հապա
թէ չէ , ի՞նչ պիտի ընեն անոնք որ մեռելներուն
համար կը մկրտուին , թէ որ մեռելները բնաւ
յարութիւն չառնեն . ցինչո՞ւ ուրեմն անոնց հա-
30 մար կը մկրտուին ։ Ինչո՞ւ համար մենք ալ վտան-
31 գի մէջ կը մնանք ամէն ժամ ։ Վկայ կը բերեմ
ւայն պարծանքըՙ որ ձեր վրայ ունիմ Քրիստոս
Յիսուս մեր Տէրոջմով , որ ես փամէն օր կը մեռ-
32 նիմ ։ Թէ որ քԵփեսոսի մէջ մարդոց նման գա-
զաններու հետ մարտնչեցայ , ի՞նչ օգուտ է *ին-
ծի , թէ որ մեռելները յարութիւն չառնեն . օՈւ-
33 տենք ու խմենք , ինչու որ վաղը կը մեռնինք ։ Մի
խաբուիք . ֆչար ընկերակցութիւնները աղէկ բար-

ջ Դան. է. 14, 27 ։
ռ Սաղ. ճժ. 1 ։ Գործ. բ. 34, 35 ։ Եփս. ա. 22 ։ Եբր. ա. 13 ։ ժ. 13 ։
ս բ Տիմ. ա. 16 ։ Յայտ. ի. 14 ։
վ Սաղ. ը. 6 ։ Մատ. իը. 18 ։ Եբր. բ. 8 ։ ա Պետ. գ. 22 ։
տ Փիլ. գ. 21 ։
ր Վր. գ. 23 ։ ժա. 3 ։
ց բ Կոր. ժա. 26 ։ Գաղ. ե. 11 ։
ւ ա Թես. բ. 19 ։
փ Հռով. ը. 36 ։ Վր. դ. 9 ։ բ Կոր. դ. 10, 11 ։ ժա. 23 ։
ք բ Կոր. ա. 8 ։
* Կամ ինծի . թէ որ մեռելները յարութիւն չառնեն , ուտենքՙ ևն ։
օ Ես. իբ. 13 ։ ծզ. 12 ։ Ժող. բ. 24 ։ Ղուկ. ժբ. 19 ։
ֆ Վր. ե. 6 ։

34 քը կ'ապականեն ։ աԱրդարութիւնով զգաստա-
ցէ՛ք ու մեղք մի՛ գործէք , բինչու որ ո-
մանք Աստուծոյ գիտութիւնը չունին . գձեզ ամչ-
ցընելու համար կը զրուցեմ ։
35 Բայց պիտի ըսէ մէկը թէ դԻնտո՞ր մեռելները
յարութիւն կ'առնեն , կամ թէ ինչ մարմնով կու
36 գան ։ Անմի՛տ եդուն անիկայ որ կը սերմանես ,
37 թէ որ չմեռնի՝ չկենդանանար . Ու ան որ կը սեր-
մանես , չէ՛ թէ ան մարմինը որ պիտի բուսնի՝
կը սերմանես , հապա մերկ հատ մը՝ թէ ցորենի
38 ըլլայ եւ թէ մէկ ուրիշ սերմի . Ու Աստուած անոր
մարմին կու տայ ինչպէս որ կ'ուզէ , եւ ամէն մէկ
39 սերմին իր յատուկ մարմինը ։ Ամէն մարմին մէկ
մարմին չէ , հապա մարդոց մարմինը ուրիշ է , ու
անասնոց մարմինը ուրիշ , ձուկերուն ալ ուրիշ ,
40 եւ թռչուններունը ուրիշ ։ Երկնաւոր մարմիններ
ալ կան , երկրաւոր մարմիններ ալ . բայց երկնա-
ւորներուն փառքը ուրիշ է , ու երկրաւորներունը
41 ուրիշ ։ Արեւուն փառքը ուրիշ է , ու լուսնին
փառքը ուրիշ , եւ աստղերուն փառքը ուրիշ . ու
42 մէկ աստղը միւս աստղէն տարբեր է փառքով ։ զԱ-
սանկ ալ է մեռելոց յարութիւնը . մարմինը ապակա-
նութիւնով կը սերմանուի , անապականութիւ-
43 նով յարութիւն կ'առնէ . էԱնարգութիւնով կը
սերմանուի , փառքով յարութիւն կ'առնէ .
տկարութիւնով կը սերմանուի , զօրութիւնով
44 յարութիւն կ'առնէ . Կը սերմանուի շնչաւոր
մարմին , յարութիւն կ'առնէ հոգեւոր մարմին .
շնչաւոր մարմին կայ , հոգեւոր մարմին ալ կայ ։
45 Ու այսպէս գրուած է . Առջի մարդը Ադամ
ըկենդանի շունչ եղաւ , թվերջի Ադամըՙ կեն-

ա Հռով. ժգ. 11 ։ Եփս. ե. 14 ։
բ ա Թես. դ. 5 ։
գ Վր. զ. 5 ։
դ Եզեկ. լէ. 3 ։
ե Յոհ. ժբ. 24 ։
զ Դան. ժբ. 3 ։ Մատ. ժգ. 43 ։
է Փիլ. գ. 21 ։
ը Ծն. բ. 7 ։
թ Հռով. ե. 14 ։

46 դանարար զ հոգի։ Բայց չէ թէ առաջ հոգեւորը, հա-
47 պա շնչաւորը , ու ետքը հոգեւորը · է Առջի մարդը
երկրէն է՝ և հողեղէն , բայց երկրորդ մարդը՝ Տէր
48 է՝ ը երկինքէն ։ Ինչպէս էր հողեղէնը , անանկ
ալ հողեղէնները · թ ու ինչպէս երկնաւորը , անանկ
49 ալ երկնաւորները · ժ Ու ինչպէս որ հողեղէնին
կերպարանքը հագեր ենք , ի երկնաւորին կերպա-
50 րանքն ալ պիտի հագնինք ։ Բայց աս կ'ըսեմ՝
եղբայրներ , լ որ մարմին ու արիւն Աստուծոյ
թագաւորութիւնը չեն կրնար ժառանգել · ոչ
ալ ապականութիւնը կը ժառանգէ անապակա-
նութիւն ։
51 Ահա ձեզի խորհուրդ մը կը յայտնեմ · ծ Ամենքս
պիտի չննջենք , կ բայց ամենքս ալ պիտի փո-
52 խուինք , Յանկարծակի աչք գոցել բանալու մէջ՝
վերջին փողին հնչուելու ատենը , հ որովհետեւ
փողը պիտի հնչուի , ու մեռելները յարութիւն
պիտի առնեն առանց ապականութեան , և մենք
53 ալ պիտի փոխուինք ։ Վասն զի պէտք է որ աս
ապականացու մարմինը անապականութիւն հագնի ,
ձ ու աս մահկանացուս անմահութիւն հագնի ։
54 Բայց երբոր աս ապականացու մարմինը անապակա-
նութիւն հագնի , և աս մահկանացուս անմահու-
թիւն հագնի , ան ատենը պիտի կատարուի ան
խօսքը որ գրուեցաւ թէ ղ Մահը յաղթութեան
55 մէջ ընկղմեցաւ ։ ճ Ո՞ւր է ով մահ՝ քու խայ-

զ Յոհ. ե. 21 ; զ. 33, 39, 40, 54, 67 ; Փիլ. գ. 21 ; Կող. գ. 4 ;
է Յոհ. գ. 31 ;
ը Ծն. բ. 7 ; գ. 19 ;
թ Յոհ. գ. 13, 31 ;
ժ Փիլ. գ. 20, 21 ;
ի Ծն. ե. 3 ;
լ Հռով. ը. 29 ; Բ Կոր. գ. 18 ; գ. 11 ; Փիլ. գ. 21 ; Ա Յոհ. գ. 2 ;
խ Մատ. ժզ. 17 ; Յոհ. գ. 3, 5 ;
ծ Ա Թես. դ. 14, 15, 16 ;
կ Փիլ. գ. 21 ;
հ Զաք. թ. 14 ; Մատ. իդ. 31 ; Յոհ. ե. 25 ; Ա Թես. դ. 15 ;
ձ Բ Կոր. ե. 4 ;
ղ Եսա. իե. 8 ; Եբր. բ. 14, 15 ; Յայտ. ի. 14 ;
ճ Ովս. ժգ. 14 ;

թոյնդ , ո՞ւր է ով գերեզման՝ քու յաղթութիւնդ ։
56 Մահին խայթոցը մեղքն է , մ ու մեղքին ոյժը՝ օրէն-
57 քը ։ յ Բայց գոհութիւն Աստուծոյ , ն որ մեզի յաղ-
թութիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
58 ձեռքովը ։ շ Ուստի իմ սիրելի եղբայրներս՝ հաս-
տատ եղէք , անշարժ կեցէք և ամէն ատեն աւելցէք
Տէրոջը գործին մէջ , ո գիտնալով որ ձեր աշ-
խատութիւնը պարապ չէ Տէրոջմով ։

ԳԼ. ԺԶ.

1 Առաքեալը կը յորդորէ Կորնթացիները որ Երուսաղէմի եղբայրներուն կարօտութիւնը լեցնեն · 10 բարի վկայութիւն կու տայ Տիմոթէոսին վրայով , 13 և բարեկամական խրատներէն ետեւ՝ 16 իր թուղթը կը վերջացընէ զանազան բարեւներով ։

1 չ Բայց սուրբերուն համար ողորմութիւն ժողվե-
լու վրայով , ինչպէս որ պատուէր տուի Գա-
ղատացւոց եկեղեցիներուն , դուք ալ անանկ ը-
2 րէք ։ պ Ամէն մէկշաբթի օրերը ձեզմէ ամէն մէկը
3 իր քովը թող դնէ ինչ որ կը յաջողի , Որ չըլլայ
թէ երբոր գամ , ան ատենը ժողովումներ ըլլան ·
ու երբոր գամ , ջ որոնց որ դուք * հաւնիք , ես
զանոնք թուղթերով " պիտի խրկեմ՝ ձեր պարգե-
4 ները Երուսաղէմ տանելու ։ ռ Ու թէ որ իմ
երթալս ալ արժան սեպուի , իմ հետս թող եր-
5 թան ։ Սակայն ես ձեզի պիտի գամ՝ երբոր Մակե-
դոնիայէն անցնիմ · ս (քանզի Մակեդոնիայէն կ'անց-
6 նիմ ·) Ու կարելի է որ ձեր քովը մնամ , կամ
ձմեռն ալ անցընեմ · վ որ դուք զիս ճամբայ

մ Հռով. դ. 15 ; ե. 13 ; է. 5, 13 ;
յ Հռով. է. 25 ;
ն Ա Յոհ. ե. 4, 5 ;
շ Բ Պետ. գ. 14 ;
ո Գղ. գ. 8 ;
չ Գործ. ժա. 29 ; իդ. 17 ; Հռով. ժե. 26 ; Բ Կոր. ը. 4 ; թ. 1, 12 ; Գաղ. բ. 10 ;
պ Գործ. ի. 7 ; Յայտ. ա. 10 ;
ջ Բ Կոր. ը. 19 ;
* Կամ յանձնարարութիւն ընէք թուղթերով , ես զանոնք
ռ Բ Կոր. ը. 4, 19 ;
ս Գործ. ժթ. 21 ; Բ Կոր. ա. 16 ;
վ Գործ. ժե. 3 ; ժէ. 15 ; իա. 5 ; Հռով. ժե. 24 ; Բ Կոր. ա. 16 ;

7 դնէք, ուր որ ես պիտի երթամ ։ Ինչու որ չեմ
ուզեր ձեզ հիմա հարեւանցի մը տեսնել, բայց
յոյս ունիմ որատեն մը ձեր քովը կենամ, ե թէ
8 որ Տէրը հրաման տայ ։ Սակայն հիմա ես Եփեսոս
9 պիտի մնամ մինչեւ Պենտէկոստէ ․ զ Ինչու որ ին-
ծի մեծ ու արդիւնաւոր դուռ մը բացուած է,
է ու շատ հակառակորդներ կան ։
10 ը Երդ թէ որ Տիմոթէոսը գայ, նայեցէք որ
ձեր քովը առանց վախի ըլլայ ․ էքանզի անիկայ
Տէրոջը գործը կը գործէ, ինչպէս որ ես ալ ։
11 թ Ուստի չըլլայ որ մէկը անիկայ արհամարհէ,
ժ հապա խաղաղութեամբ անիկայ ճամբայ դրէք,
որ ինծի գայ ․ ինչու որ անոր կը սպասեմ եղբայր-
12 ներով մէկտեղ ։ ի Իսկ Ապողոս եղբօրը համար,
շատ աղաչեցի անոր՝ որ ձեզի գայ եղբայրներուն
հետ մէկտեղ ․ ու բնաւ կամք չունեցաւ որ հիմա
գայ, բայց պիտի գայ՝ երբոր յարմար ժամանակ
գտնէ ։
13 լ Արթուն կեցէք, խ հաւատքի մէջ հաստատ
14 կեցէք, ժիր եղէք, ծ զօրացէք ։ կ Ձեր ամէն
բաները սիրով ըլլայ ։
15 Կ'աղաչեմ ձեզ՝ եղբայրներ, (հ գիտէք դուք
Ստեփանանեսին ընտանիքը ձ թէ Աքայիայի առջի
պտուղն է, ղ ու անձերնին սուրբերուն սպասաւորու-
16 թեանը նուիրեցին ․) ճ Որ հնազանդ ըլլաք անանկ-

ե Գործ . ժը . 21 ։ Գղ . գ . 19 ։ Յակ . դ . 15 ։
զ Գործ . ժզ . 26 ։ բ Կոր . բ . 12 ։ Կող . դ . 3 ։ Յայտ . գ . 8 ։
է Գործ . ժթ . 9 ։
ը Գործ . ժթ . 22 ։ Գղ . դ . 17 ։
թ Հռով . ժզ . 21 ։ Փիլ . բ . 20 , 22 ։ ա Թես . գ . 2 ։
ժ ա Տիմ . դ . 12 ։
ի Գործ . ժե . 33 ։
լ Գղ . ա . 12 ։ գ . 5 ։
խ Մատ . իդ . 42 ։ իե . 13 ։ ա Թես . ե . 6 ։ ա Պետ . ե . 8 ։
ծ Գղ . ժե . 1 ։ Փիլ . ա . 27 ։ դ . 1 ։ ա Թես . գ . 8 ։ բ Թես . բ . 14 ։
կ Եփե . զ . 10 ։ Կող . ա . 11 ։
հ Գղ . ժգ . 1 ։ ա Պետ . դ . 8 ։
ձ Գղ . ա . 16 ։
ղ Հռով . ժզ . 5 ։
ճ բ Կոր . ը . 4 ։ թ . 1 ։ Եբր . զ . 10 ։
մ Եբր . ժգ . 17 ։

ներուն, և ամենուն որ անոնց հետ մէկտեղ կը գոր-
17 ծէ ն ու կ'աշխատի ։ Ուրախ եմ ես Ստեփան-
նեսին ու Փորտունատոսին ու Աքայիկոսին գալուն
վրայ, շ որ ձեր պակասութիւնը անոնք լեցուցին ․
18 ո Քանզի հանգստացուցին իմ հոգիս ու ձերը ․
չ Ուստի անանկները ճանչցէք ։
19 Բարեւ կ'ընեն ձեզի Ասիայի եկեղեցիները ․ շատ
բարեւ կ'ընեն ձեզի Տէրոջմով Ակիւղաս ու Պրիս-
կիղա Իրենց տանը մէջի եկեղեցիով մէկտեղ ։
20 Բարեւ կ'ընեն ձեզի բոլոր եղբայրները ․ պ բարեւ
տուէք իրարու սուրբ համբուրով ։
21 ջ Աս բարեւը իմ ձեռքիս՝ Պօղոսինն է ։
22 ռ Եթէ որ մէկը Տէր Յիսուս Քրիստոսը չսիրեր,
23 ս Նզովեալ ըլլայ՝ *[illegible] մեր Տէրը գայ'' ։ վ Տէր
24 Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հետը ․ Իմ սէրս
ձեր ամենուդ հե՛տը ըլլայ Քրիստոս Յիսուսով ։
Ամէն ։

ն Եբր . զ . 10 ։
շ բ Կոր . ժա . 9 ։ Փիլ . բ . 30 ։ Փիլիմ . 13 ։
ո Կող . դ . 8 ։
չ ա Թես . ե . 12 ։ Փիլ . բ . 29 ։
պ Հռով . ժզ . 5 , 15 ։ Փիլիմ . 2 ։
ջ Հռով . ժզ . 16 ։
ռ Կող . դ . 18 ։ բ Թես . գ . 17 ։
ս Եփե . զ . 24 ։
վ Գաղ . ա . 8 , 9 ։
* Յուն . Մարանաթայ ։
տ Յուդ . 14 , 15 ։
ր Հռով . ժզ . 20 ։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

3 Առաքեալը կը յորդորէ Կորնթացիները համբերող ըլլալ նեղութեան մէջ, ցուցնելով անոնց թէ ինչպէս Աստուած մխիթարեց զինքը իր ամէն վիշտերուն մէջ և ազատեց, 8

մանաւանդ Ասիայի մէջ իր վերջին նեղութեան առնը․ 12 և վկայ բերելով իր ու անոնց խղճմտանքը՝ իր անկեղծութեամբ աւետարանին անփոփոխ ճշմարտութիւնը քարոզելուն․ 15 կը ցուցընէ թէ իր անոնց չերթալը ո՛չ թէ թեթեւամտութենէ կը ծագի, հապա անոնց վրայ ունեցած իր կարեկցութենէն ։

1 Պօղոս [ա] առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝ Աստու-
ծոյ կամքովը, ու Տիմոթէոս մեր եղբայրը․
Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին, և բո-
լոր [բ] Աքայիայի մէջ եղող ամէն սուրբերուն․
2 [գ] Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր
Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէն ։
3 [դ] Օրհնեալ ըլլայ Աստուած ու մեր Տէր Յիսուս
Քրիստոսի Հայրը, գթութեանց Հայրը և ամէն
4 մխիթարութեան Աստուածը․ Ան որ մեզ կը
մխիթարէ մեր ամէն նեղութիւններուն մէջ, որ
մենք կարող ըլլանք մխիթարել զանոնք՝ որ ամէն
նեղութիւններու մէջ են, ան մխիթարութիւնովը՝
5 որով մենք Աստուծմէ կը մխիթարուինք ։ [ե] Քան-
զի ինչպէս որ Քրիստոսի չարչարանքները մեր վրայ
շատ եղան, նմանապէս Քրիստոսի ձեռքովը մեր
6 մխիթարութիւնն ալ շատ կ'ըլլայ ։ Ու թէ՛ նե-
ղութիւն քաշենք, [զ] ձեր մխիթարութեանը ու
փրկութեանը համար է, և թէ մխիթարուինք, ձեր
մխիթարութեանը ու փրկութեանը համար է, որ
կը յաջողի համբերելով այն չարչարանքներուն՝
7 որոնցմով մենք ալ կը չարչարուինք․ Ու մեր յոյ-
սը հաստատուն է ձեզի համար, [է] ինչու որ գի-
տենք թէ ինչպէս որ չարչարանքներուն հաղորդ էք,
8 անանկ ալ մխիթարութեանը պիտի ըլլաք ։ Վասն

[ա] Ա Կոր․ ա․ 1 ։ Եփե․ ա․ 1 ։ Կող․ ա․ 1 ։ Ա Տիմ․ ա․ 1 ։ Բ Տիմ․ ա․ 1 ։
[բ] Փիլ․ ա․ 1 ։ Կող․ ա․ 2 ։
[գ] Հռով․ ա․ 7 ։ Ա Կոր․ ա․ 3 ։ Գաղ․ ա․ 3 ։ Փիլ․ ա․ 2 ։ Կող․ ա․ 3 ։ Ա Թես․ ա․ 2 ։ Բ Թես․ ա․ 2 ։ Փիլեմ․ 3 ։
[դ] Եփե․ ա․ 3 ։ Ա Պետ․ ա․ 3 ։
[ե] Գործ․ թ․ 4 ։ Գլ․ դ․ 10 ։ Կող․ ա․ 24 ։
[զ] Գլ․ դ․ 15 ։
[է] Հռով․ ը․ 17 ։ Բ Տիմ․ բ․ 12 ։

զի [ը] Ասիայի մէջ մեզի պատահած նեղութիւննե-
րուն վրայով՝ չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք՝ եղ-
բայրներ, թէ մեր կարողութենէն շատ աւելի ծան-
րաբեռնեցանք, մինչև որ կեանքերնուս ալ անյոյս
9 եղանք ։ Բայց մահուան վճիռը մենք վրանիս պա-
հեցինք, [թ] որ ինքզինքնուս չյուսանք, [ժ] հապա
10 Աստուծոյ՝ որ մեռելները կը յարուցանէ․ [ի] Որ
ինքը անանկ մեծ մահուանէ մեզ փրկեց ու կը
11 փրկէ․ Որուն կը յուսանք թէ տակաւին պիտի
փրկէ, [լ] մեզի համար ձեր ըրած աղօթքին օգնակա-
նութիւնովը․ [խ] որ շատերուն անձերուն պատճառովը
մեզի եղած շնորհքին համար՝ շատերէն գոհութիւն
տրուի մեզի համար ։
12 Ինչու որ մեր պարծանքը աս է, մեր խղճմտան-
քին վկայութիւնը՝ [ծ] թէ մենք Աստուծոյ առջևը
պարզմտութեամբ ու անկեղծութեամբ, [կ] և ոչ
թէ մարմնաւոր իմաստութիւնով մը, հապա
Աստուծոյ շնորհքովը աշխարհի մէջ վարուեցանք,
13 բայց աւելի դէպ 'ի ձեզի ։ Քանզի ուրիշ բան
չենք գրեր ձեզի, հապա ան որ դուք կը կարդաք
ու կը ճանչնաք․ և կը յուսամ թէ մինչև վերջը
14 պիտի ճանչնաք․ Ինչպէս որ քիչ շատ ճանչցաք
մեզ, [հ] որ ձեր պարծանքն ենք, [ձ] ինչպէս որ դուք
ալ մերը՝ Տէր Յիսուսի օրը ։
15 Ու աս վստահութիւնով կ'ուզէի առաջ ձեզի
գալ, [ղ] որ դուք երկրորդ անգամ շնորհք ընդու-
16 նիք․ Ու ձեզմէ անցնիլ դէպ 'ի Մակեդոնիա,
[ճ] և դարձեալ Մակեդոնիայէն ձեզի գալ, ու ձեզ-

[ը] Գործ․ ժթ․ 23 ։ Ա Կոր․ ժե․ 32 ։ ժզ․ 9 ։
[թ] Երեմ․ ժէ․ 5, 7 ։
[ժ] Բ Պետ․ բ․ 9 ։
[ի] Հռով․ ժե․ 30 ։ Փիլ․ ա․ 19 ։ Փիլեմ․ 22 ։
[լ] Գլ․ դ․ 15 ։
[խ] Գլ․ բ․ 17 ։ դ․ 2 ։
[ծ] Ա Կոր․ բ․ 4, 13 ։
[կ] Գլ․ ե․ 12 ։
[հ] Փիլ․ բ․ 16 ։ դ․ 1 ։ Ա Թես․ բ․ 19, 20 ։
[ձ] Ա Կոր․ դ․ 19 ։
[ղ] Հռով․ ա․ 11 ։
[ճ] Ա Կոր․ ժզ․ 5, 6 ։

17 մէ ձամբայ դրուիլ դէպ 'ի Հրէաստան։ Ուս-
տի ասոր որ ես մտածեցի, միթէ թեթեւութիւ-
նո՞վ շարժեցայ. կամ թէ ան որ ես կը խոր-
հիմ, մմարմնաւորապէ՞ս կը խորհիմ, *որ իմ
18 կողմանէս այո այո և ո՛չ ոչ ըլլայ"։ Սակայն
հաւատարիմ է Աստուած, որ մեր խօսքը ձեզի որ
19 հասաւ, այո և ո՛չ չէր։ յԻնչու որ Աստուծոյ
Որդին Յիսուս Քրիստոս՝ որ մեզմով ձեզի քարո-
զուեցաւ, (ինծմով և Սիղուանոսով ու Տիմոթէո-
սով,) այո ու ո՛չ չեղաւ, նհապա իր մէջը եղաւ
20 այոն. շՔանզի որչափ որ Աստուծոյ խոստմունք-
ները կան, իր մէջը Այո են, ու իր մէջը Ամէն են՝
21 Աստուծոյ փառքին համար մեր ձեռքովը։ Բայց
ան որ մեզ ձեզի հետ մէկտեղ Քրիստոսով հաս-
22 տատեց, ոու մեզ օծեց, Աստուած է. չՈր մեզ
կնքեց ալ, պև մեզի տուաւ Հոգւոյն գրաւը մեր
23 սրտերուն մէջը։ ջԲայց ես զԱստուած վկայ կը
կանչեմ իմ անձիս, ռոր ձեզ խնայելուս համար
տակաւին Կորնթոս չեկայ. սԱնանկ չէ՛ թէ ձեր
հաւատքին վրայ կը տիրապետենք, հապա գործա-
կից ենք ձեր ուրախութեանը. վԻնչու որ դուք
հաւատքով կը կենաք։

մ Գլ. Ժ. 2։
* Կամ՝ չէ. հապա որ իմ կողմանէս այոն այո՛ ըլլայ, ու ոչը ո՛չ։
յ Մար. Ա. 1։ Ղու. Ա. 35։ Գոր. Թ. 20։
ն Եբր. ԺԳ. 8։
շ Հռով. ԺԵ. 8, 9։
ո Ա Յօհ. Բ. 20, 27։
չ Եփե. Ա. 13։ Դ. 30։ Բ Տիմ. Բ. 19։ Յայտ. Բ. 17։
պ Գլ. Ե. 5։ Եփե. Ա. 14։
ջ Հռով. Ա. 9։ Գլ. ԺԱ. 31։ Գաղ. Ա. 20։ Փիլ. Ա. 8։
ռ Ա Կոր. Դ. 21։ Գլ. Բ. 3։ ԺԲ. 20։ ԺԳ. 2, 10։
ս Ա Կոր. Գ. 5։ Ա Պետ. Ե. 3։
վ Հռով. ԺԱ. 20։ Ա Կոր. ԺԵ. 1։

ԳԼ. Բ

1 Պօղոս ցուցնելով իր անոնց չերթալուն պատճառը, 6 կը խնդրէ որ եկեղեցիին հաղորդակցութենէն կտրուած անձին ներեն՝ ու մխիթարեն զանիկայ, 10 ինտոր որ ինքն ալ անոր անկեղծ դէմքը նայելով՝ ներած է, 12 Կը ծանուցանէ

Տրովադայէն Մակեդոնիա անցնելուն պատճառը, 14 և ամէն տեղ Աստուծմէ իր քարոզութեանը տրուած բարի յաջողութիւնը։

1 Սակայն ես ինծմէ ասոր որոշեցի, աոր նորէն տրտ-
2 մութիւնով չգամ ձեզի։ Ինչու որ եթէ ես
ձեզ տրտմեցընեմ, ալ ո՞վ է որ զիս պիտի ուրա-
3 խացընէ, թէ չէ ան՝ որ ինծմէ կը տրտմի։ Ու
աս գրեցի, որ չըլլայ թէ երբոր գամ՝ բտրտմու-
թիւն մը կրեմ անոնցմէ, ուսկից որ պէտք է ինծի
ուրախ ըլլալ. քանզի գձեր ամենուն վրայ վստահ
4 եմ, որ իմ ուրախութիւնս ձեր ամենունն է։ Ին-
չու որ շատ նեղութենէ և սրտի տագնապէ ես ձեզի
գրեցի շատ արցունքով. դչէ՛ թէ որ դուք տըրտ-
միք, հապա որ գիտնաք ան սէրը՝ որ ես ունիմ ա-
ւելի ձեր վրայ։
5 եԲայց թէ որ մէկը տրտմեցուց, զչէ՛ թէ զիս
տրտմեցուց, հապա *ըստ մասին (որ խօսքս ծանր
6 չընեմ) ձեզ ամէնքդ"։ Հերիք է անանկ մար-
7 դուն ան պատիժը, էոր շատերէն եղաւ։ ըՈւստի
ընդհակառակն պէտք է աւելի ներել անոր ու մխի-
թարել, որ չըլլայ թէ անանկը աւելի տրտմութե-
8 նէն ընկղմի։ Ուստի կաղաչեմ ձեզ, որ անոր վրայ
9 ձեր սէրը հաստատէք. (Քանզի ասոր համար ալ
գրեցի, որ ձեզ փորձելով՝ գիտնամ թթէ ամէն
10 բանի մէջ հնազանդ էք։ Եւ որուն որ դուք բան
մը կը ներէք, ես ալ կը ներեմ. ինչու որ եթէ ես
ալ ներեմ, որուն որ ներեմ՝ ձեզի համար է Քրիս-
11 տոսի կողմանէ.) Որ չըլլայ թէ զրկանք մը կրենք

ա Գլ. Ա. 23։ ԺԲ. 20, 21։ ԺԳ. 10։
բ Գլ. ԺԲ. 21։
գ Գլ. Է. 16։ Ը. 22։ Գաղ. Ե. 10։
դ Գլ. Է. 8, 9, 12։
ե Ա Կոր. Ե. 1։
զ Գաղ. Դ. 12։
* Կամ՝ ըստ մասին, որ ձեր ամենուն վրայ ծանրութիւն չդնեմ։
է Ա Կոր. Ե. 4, 5։ Ա Տիմ. Ե. 20։
ը Գաղ. Զ. 1։
թ Գլ. Է. 15։ Ժ. 6։

Սատանայէն . քանզի անոր խորհուրդները չգիտ-
ցող չենք ։
12 [զ] Արդ երբոր ես Տրովադա հասայ Քրիստոսի ա-
ւետարանը քարոզելու, [է] և ինծի դուռ մը բաց էր
13 Տէրոջմով, [ը] Իմ հոգւոյս մէջ հանգստութիւն
չունէի, ինչու որ իմ Տիտոս եղբայրս հոն չգտայ.
հապա անոնցմէ հրաժարելով՝ Մակեդոնիա գացի ։
14 Բայց գոհութիւն Աստուծոյ՝ որ միշտ յաղթող
կ'ընէ մեզ Քրիստոսով, ու զինքը ճանչնալուն
15 [թ] հոտը մեզմով յայտնի կ'ընէ ամէն տեղ . Ինչու
որ մենք Աստուծոյ առջեւ Քրիստոսի անոյշ հոտն
ենք [ժ] փրկուածներուն մէջ [ի] և կորսուածներուն
16 մէջ . [լ] Ոմանց մահուան հոտ դէպ 'ի մահ, և ոմանց
կենդանութեան հոտ դէպ 'ի կեանք . [խ] Եւ աս բա-
17 ներուն ո՞վ բաւական է ։ Քանզի մենք շատերուն
պէս չենք, [ծ] որ Աստուծոյ խօսքին խարդախութիւն
կ'ընեն . հապա [կ] որպէս թէ անկեղծութեամբ,
հապա որպէս թէ Աստուծմէ՝ Աստուծոյ առջեւ
Քրիստոսով կը խօսինք ։

ԳԼ. Գ

1 Առաքեալը կը ցուցնէ թէ Կորնթացւոց հաւատքը և շնորհքները բաւական վկայութիւն են իր պաշտօնին, որ սուտ վարդապետները անպարծութեան յանցանքով չամբաստանեն զինքը . 6 և օրէնքին ու աւետարանին պաշտօնեաներուն մէջտեղը բաղդատութիւն մը ընելով՝ 12 փաստերով կը հաստատէ որ իր պաշտօնը խիստ գերազանց է, ճիշդ ինչպէս որ կենաց և ազատութեան օրէնքը գերազանց է դատապարտութեան օրէնքէն ։

1 [հ] Կը սկսի՞նք նորէն անձերնիս յանձն ընել .
կամ թէ ոմանց պէս պէ՞տք է մեզի [ձ] յանձ-

զ Գործ. ժզ. 8 ։ ի. 6 ։
է ա Կոր. ժզ. 9 ։
ը Գլ. է. 5, 6 ։
թ Երգ. ա. 3 ։
ժ ա Կոր. ա. 18 ։
ի Գլ. դ. 3 ։
լ Ղու. բ. 34 ։ Յոհ. թ. 39 ։ ա Պետ. բ. 7, 8 ։
խ ա Կոր. ժե. 10 ։ Գլ. գ. 5, 6 ։
ծ Գլ. դ. 2 ։ ժա. 13 ։ բ Պետ. բ. 3 ։
կ Գլ. ա. 12 ։ դ. 2 ։
հ Գլ. ե. 12 ։ ժ. 8, 12 ։ ժբ. 11 ։
ձ Գործ. ժը. 27 ։

նարարութեան թուղթեր ձեզի, կամ ձեզմէ ։
2 [ղ] Հապա մեր թուղթը դուք էք մեր սրտերուն
մէջը գրուած, ճանչցուած ու կարդացուած ամէն
3 մարդիկներէն . Յայտնի ըլլալով [ճ] որ դուք
Քրիստոսի թուղթն էք մեր սպասաւորութիւ-
նովը, չէ թէ մելանով գրուած, հապա կեն-
դանի Աստուծոյ Հոգիովը . [մ] չէ թէ քարեղէն
տախտակներու վրայ, [յ] հապա սրտին մարմնե-
4 ղէն տախտակներուն վրայ ։ Եւ ասանկ վստա-
հութիւն ունինք մենք Աստուծոյ վրայ Քրիստո-
5 սի ձեռքովը . [ն] Ոչ թէ մենք ինքնիրեննիս բա-
ւական ենք բան մը խորհելու՝ որպէս թէ մեզմէ,
6 [շ] հապա մեր բաւականութիւնը Աստուծմէ է . Որ
մեզ բաւական ալ ըրաւ [ո] Նոր կտակարանին [չ] պաշ-
տօնեաներ ըլլալու՝ [պ] չէ թէ գիրին, հապա հոգիին .
[ջ] ինչու որ գիրը կը սպաննէ, [ռ] բայց հոգին կ'ապրե-
7 ցնէ ։ [ս] Իսկ թէ որ քարերու վրայ [վ] գրով փորուած
մահուան պաշտօնը փառքով եղաւ, [տ] որ Իսրայէլի
որդիքը կարող չեղան Մովսէսին երեսը նայելու՝
անոր երեսին փառացը համար, որ պիտի խափա-
8 նուէր . [ր] Ուրեմն Հոգիին պաշտօնը ի՞նչպէս աւելի
9 փառքով պիտի չըլլայ ։ Ինչու որ եթէ դատա-
պարտութեան պաշտօնը փառքով էր, [ց] ո՜րչափ
աւելի արդարութեան պաշտօնը փառքով պիտի
10 ըլլայ ։ Վասն զի ան որ փառաւոր էր, աս մասին

ղ ա Կոր. թ. 2 ։
ճ ա Կոր. գ. 5 ։
մ Ել. իդ. 12 ։ լդ. 1 ։
յ Սաղ. խ. 8 ։ Երեմ. լա. 33 ։ Եզեկ. ժա. 19 ։ լզ. 26 ։ Եբր. ը. 10 ։
ն Յոհ. ժե. 5 ։ Գլ. բ. 16 ։
շ ա Կոր. ժե. 10 ։ Փիլ. բ. 13 ։
ո Երեմ. լա. 31 ։ Մատ. իզ. 28 ։ Եբր. ը. 6, 8 ։
չ ա Կոր. գ. 5 ։ ժե. 10 ։ Գլ. ե. 18 ։ Եփե. գ. 7 ։ Կող. ա. 25, 29 ։ ա Տիմ. ա. 11, 12 ։ բ Տիմ. ա. 11 ։
պ Հռով. բ. 27, 29 ։ է. 6 ։
ջ Հռով. գ. 20 ։ դ. 15 ։ է. 9, 10, 11 ։ Գաղ. գ. 10 ։
ռ Յոհ. զ. 64 ։ Հռով. ը. 2 ։
ս Հռով. է. 10 ։
վ Ել. լդ. 1, 28 ։ բ Օր. ժ. 1, եւն ։
տ Ել. լդ. 29, 30, 35 ։
ր Գաղ. գ. 5 ։
ց Հռով. ա. 17 ։ գ. 21 ։

փառաւոր չէ գերազանց փառքին պատճառովը ։
11 Քանզի եթէ ան որ պիտի խափանուէր՝ փառքով
էր, ո՜րչափ աւելի ան որ կը կենայ՝ փառքով պէ-
12 տք է ըլլայ ։ Ուստի ասանկ յոյս որ ունինք, ճ շատ
համարձակութեամբ կը վարուինք մեր խօսքին մէջ .
13 Ու չէ թէ ինչպէս որ մ Մովսէս իր երեսին վրայ
ծածկոց կը դնէր, յ որ Իսրայէլի որդիքը չնային
14 ան խափանուելու բաներուն վախճանին ։ ն Սա-
կայն անոնց միտքերը կուրցան . ինչու որ մինչև
այսօրուան օրս նոյն ծածկոյթը ձգուած է հին կտա-
կարանին ընթերցմունքին վրայ, ու չվերնար,
15 (ինչու որ Քրիստոսով կը խափանուի,) Հապա
մինչև ցայսօր երբոր Մովսէսին գիրքը կը կարդան,
16 անոնց սրտին վրայ ծածկոց մը կը կենայ ։ շ Բայց
երբոր Տէրոջը դառնան, ո ան ատենը պիտի վեր-
17 նայ ան ծածկոցը ։ չ Արդ Տէրը Հոգին է . և
ուր որ Տէրոջը Հոգին կայ, հոն ազատութիւն կայ ։
18 Բայց մենք ամէնքս բաց երեսով պ Տէրոջը փառքը
ջ որպէս թէ հայելիի մէջ տեսնելով, ռ նոյն պատ-
կերին կը նորոգուինք փառաց 'ի փառս, որպէս թէ
Տէրոջը Հոգիէն ։

ճ Գլ. է. 4 ։ Եփե. զ. 19 ։
մ Ել. լդ. 33, 35 ։
յ Հռով. ժ. 4 ։ Գաղ. գ. 23 ։
ն Եսա. զ. 10 ։ Մատ. ժգ. 11, 14 ։ Յոհ. ժբ. 40 ։ Գործ. իը. 26 ։ Հռով. ժա. 7, 8, 25 ։ Գլ. դ. 4 ։
շ Ել. լդ. 34 ։ Հռով. ժա. 23, 26 ։
ո Եսա. իե. 7 ։
չ Հմր 6 ։ ա Կոր. ժե. 45 ։
պ Գլ. դ. 4, 6 ։ ա Տիմ. ա. 11 ։
ջ ա Կոր. ժգ. 12 ։
ռ Հռով. ը. 29 ։ ա Կոր. ժե. 49 ։ Կող. գ. 10 ։

ԳԼ. Դ

1 Կը ծանուցանէ թէ ինչպէս անկեղծութեամբ և հաւատարիմ եռանդով քարոզեց աւետարանը, 7 և թէ ինչպէս աւետարանին համար իր ամէն օր կրած նեղութիւնները և հալածանքները պատճառ եղան աւելցընելու Աստուծոյ զօրութեան փառքը, 12 եկեղեցւոյ օգուտը 16 և իր անձին յաւիտենական փառքը ։

1 ա Ուստի այս պաշտօնը ունենալով, բ ինչպէս որ
ողորմութիւն գտանք, չենք ձանձրանար .
2 Հապա հրաժարեցանք ամօթալի ծածուկ բանե-
րէն, ու խորամանկութիւնով չենք վարուիր, գ և
խարդախութիւն չենք ըներ Աստուծոյ խօսքին մէջ .
դ հապա ճշմարտութիւնը յայտնելով՝ ե անձերնիս
մարդոց ամէն խղճմտանքին կ'ընծայենք Աստուծոյ
3 առջևը ։ Իսկ թէ որ մեր աւետարանը ծածկուած
ալ է, զ կորսուածներուն մէջ ծածկուած է .
4 է Որոնց մէջ այս աշխարհիս աստուածը ը անհա-
ւատներուն միտքերը կուրցուց, թ որ Քրիստոսի
փառաց աւետարանին լոյսը անոնց վրայ չծագէ,
5 ժ որ ինքն է Աստուծոյ պատկերը ։ ի Ինչու որ չէ
թէ անձերնիս կը քարոզենք, հապա Քրիստոս
Յիսուս Տէրը, լ ու մեզ՝ ձեր ծառաները Յիսուսի
6 համար ։ Վասն զի Աստուած խ որ հրաման ըրաւ
խաւարէն լոյս ծագել, ծ ինքը մեր սրտերուն մէջ
ծագեց՝ կ Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը տա-
7 լու համար Յիսուս Քրիստոսի անձովը ։ Արդ
մենք այս գանձը հ հողէ ամաններու մէջ ունինք,
ձ որ զօրութեան առաւելութիւնը Աստուծմէ ըլ-
8 լայ, ու չէ թէ մեզմէ ։ ղ Ամէն կողմանէ վշտա-
ցած ենք, բայց նեղը ինկած չենք . կարօտեալ
9 ենք, բայց յուսահատած չենք . Հալածուած ենք,
բայց երբեք ձգուած չենք . ճ վար ձգուած ենք,

ա Գլ. գ. 6 ։
բ ա Կոր. է. 25 ։ ա Տիմ. ա. 13 ։
գ Գլ. բ. 17 ։ ա Թես. բ. 3, 5 ։
դ Գլ. զ. 4, 7 ։ է. 14 ։
ե Գլ. ե. 11 ։
զ ա Կոր. ա. 18 ։ Գլ. բ. 15 ։ բ Թես. բ. 10 ։
է Յոհ. ժբ. 31 ։ ժդ. 30 ։ ժզ. 11 ։ Եփե. զ. 12 ։
ը Եսա. զ. 10 ։ Յոհ. ժբ. 40 ։ Գլ. գ. 14 ։
թ Գլ. գ. 8, 9, 11, 18 ։ Հմր 6 ։
ժ Յոհ. ա. 18 ։ ժբ. 45 ։ ժդ. 9 ։ Փիլ. բ. 6 ։ Կող. ա. 15 ։ Եբր. ա. 3 ։
ի ա Կոր. ա. 13, 23 ։ ժ. 33 ։
լ ա Կոր. թ. 19 ։ Գլ. ա. 24 ։
խ Ծն. ա. 3 ։
ծ բ Պետ. ա. 19 ։
կ Հմր 4 ։ ա Պետ. բ. 9 ։
հ Գլ. ե. 1 ։
ձ ա Կոր. բ. 5 ։ Գլ. ժբ. 9 ։
ղ Գլ. է. 5 ։
ճ Սաղ. լէ. 24 ։

10 բայց կորսուած չենք . [ժ] Ամէն ատեն Յիսուսի մա-
հը մեր մարմիններուն մէջը կը կրենք, [ի] որ Յի-
սուսի կեանքն ալ մեր մարմիններուն մէջը յայտ-
11 նուի : Վասն զի մենք որ կենդանի ենք՝ [լ] Յիսուսի
համար միշտ մահուան կը մատնուինք, որ Յիսու-
սի կեանքն ալ մեր մահկանացու մարմիններուն
12 մէջը յայտնի ըլլայ : [խ] Ուստի մահը մեր մէջը կը
13 ներգործէ, և կեանքը ձեր մէջը : [ծ] Բայց հաւատ-
քին նոյն Հոգին ունինք, ինչպէս որ գրուած է,
[կ] Հաւատացի, անոր համար խօսեցայ . մենք ալ
14 կը հաւատանք, ու անոր համար կը խօսինք . Ու
գիտնալով [հ] թէ ան որ Տէր Յիսուսը յարոյց, մեզ
ալ Յիսուսով պիտի յարուցանէ, ու անոր առջևը
15 պիտի կայնեցընէ ձեզմով մէկտեղ . [ձ] Ինչու որ
ամէն բան ձեզի համար է, [ղ] որ ան շնորհքը առա-
տացած՝ շատերուն գոհութիւն ընելովը աւելնայ
Աստուծոյ փառքին համար :
16 Վասն որոյ չենք ձանձրանար . բայց թէպէտ ալ
մեր դուրսի մարդը կ'ապականի, [ճ] սակայն մեր
17 ներսի մարդը օրէ օր կը նորոգուի : [մ] Ինչու որ
մեր վայրկենական թեթև նեղութիւնը առաւել
քան զառաւել փառաց յաւիտենական գերազանցու-
18 թիւն կը գործէ մեզի : [յ] Վասն զի մենք երևցած
բաներուն չենք նայիր, հապա չերևցածներուն .

[ժ] ա Կոր. ժե. 31, Գղ. ա. 5, 9,
[ի] Գաղ. զ. 17, Փիլ. գ. 10, Հռով. ը. 17, բ Տիմ. բ. 11, 12, ա Պետ. դ. 13,
[լ] Սաղ. խդ. 22, Հռով. ը. 36, ա Կոր. ժե. 31, 49, Գղ. ա. 8, 9,
[խ] Գղ. ժգ. 9,
[ծ] Հռով. ա. 12, բ Պետ. ա. 1,
[կ] Սաղ. ճժզ. 10,
[հ] Հռով. ը. 11, ա Կոր. զ. 14,
[ձ] ա Կոր. գ. 22, Գղ. ա. 6, Կող. ա. 24, բ Տիմ. բ. 10,
[ղ] Գղ. ա. 11, ը. 19, թ. 11, 12,
[ճ] Հռով. է. 22, Եփե. գ. 16, Կող. գ. 10, ա Պետ. գ. 4,
[մ] Մատ. ե. 12, Հռով. ը. 18, ա Պետ. ա. 6, ե. 10,
[յ] Հռով. ը. 24, Գղ. դ. 18, Եբր. ժա. 1,

ինչու որ երևցած բաները ժամանակաւոր են,
բայց չերևցածները՝ յաւիտենական :

ԳԼ. Ե

1 Կը ծանուցանէ թէ ինքը հաստատուն յոյս ունենալով անմահ փառաց, 9 և սպասելով ան փառքին և ընդհանուր դատաստանին, կը ջանայ մաքուր խղճմտանք ունենալ, 12 ո՛չ թէ անով պարծենալու համար, 14 այլ իբրև Քրիստոսէն կենդանութիւն ունեցող մէկը՝ կ'աշխատի որ միայն Քրիստոսի կենդանի ըլլայ իբրև նոր արարած մը, 18 ու իր հաշտութեան պաշտօնովը ուրիշներն ալ Աստուծոյ հետ հաշտեցընէ :

1 Վասն զի գիտենք որ [ն] եթէ մեր վրանի [շ] ձևն երկ-
րաւոր տունը քակուի, մէկ շինուածք մը ու-
նինք Աստուծմէ, անձեռագործ յաւիտենական
2 տուն մը երկնից մէջ : [ո] Իրաւ ասոր
մէջ կը հառաչենք՝ մեր երկնաւոր բնակութիւնը
3 հագնելու փափաքելով . Միայն թէ [չ] երբոր ան
4 հագնելու ըլլանք, մերկ չգտնուինք : Վասն զի
մենք որ աս վրանին տակն ենք՝ կը հառաչենք ծան-
րութիւն քաշելով . ինչու որ չենք ուզեր վրանուս
հանել, [պ] հապա անիկա ասոր վրայէն հագնիլ,
5 որ մահկանացութիւնը ընկղմի կեանքէն : [ջ] Իսկ
ան որ մեզ աս բանիս կը պատրաստէ՝ Աստուած
6 է, [ռ] որ նաև մեզի տուաւ Հոգւոյն գրաւը : Ուս-
տի ամէն ատեն վստահութիւն ունինք, և գիտենք՝
թէ որչափ որ մարմնի մէջ կը կենանք, Տէրոջմէ
7 հեռու ենք . ([ս] Ինչու որ հաւատքով կը քալենք,
8 ու ոչ թէ երևութով .) Ուստի վստահութիւն ու-
նինք՝ [վ] և ալ աւելի կ'ուզենք մարմնէն հեռանալ,
9 ու Տէրոջը քովը կենալ : Ասոր համար կը ջա-

[ն] Յոբ. դ. 19, Գղ. դ. 7,
[շ] բ Պետ. ա. 13, 14,
[ո] Հռով. ը. 23,
[չ] Յայտ. գ. 18, ժզ. 15,
[պ] ա Կոր. ժե. 53, 54,
[ջ] Ես. իթ. 23, Եփե. բ. 10,
[ռ] Հռով. ը. 23, Գղ. ա. 22, Եփե. ա. 14, դ. 30,
[ս] Հռով. ը. 24, 25, Գղ. դ. 18, ա Կոր. ժգ. 12, Եբր. ժա. 1,
[վ] Փիլ. ա. 23,

նանք ալ, որ թէ կենանք և թէ հեռանանք,
10 անոր հաճոյ ըլլանք: թ Վասն զի պէտք է որ ա-
մէնքս ալ Քրիստոսի ատեանին առջևը ներկայա-
նանք, ժ որ ամէն մէկը իր մարմնովը ըրածներուն
փոխարէնը առնէ ինչ որ գործեր է, թէ բարի և
թէ չար:
11 ի Ուստի Տէրոջը վախը գիտնալով՝ մարդոց միտ-
քը կը հաճեցնենք. լ Սակայն մենք Աստուծոյ
առջևը յայտնի ենք, և կը յուսամ որ ձեր խղճմը-
12 տանքին մէջն ալ յայտնի ենք: խ Չէ թէ նորէն
անձերնիս ձեզի կ'ընծայենք. ծ հապա առիթ կու-
տանք ձեզի՝ մեր վրայով պարծենալու. որ բան մը
ունենաք պատասխանելու անոնց՝ որ աչքի երևցա-
13 ծովը կը պարծենան, ու ոչ թէ սրտով: կ Ին-
չու որ եթէ խելըռած ենք՝ ան Աստուծոյ համար է,
14 և թէ որ զգաստ ենք՝ ան ձեզի համար է. Ինչու որ
Քրիստոսի սէրը մեզ կը ստիպէ. քանզի մեր
դատումը աս է որ հ եթէ մէկը ամենուն համար
15 մեռաւ, ուրեմն ամէնն ալ մեռան. Ու ամե-
նուն համար մեռաւ, ձ որ կենդանի եղողները՝ ալ
իրենց անձերուն կենդանի չըլլան, հապա անոր՝
որ իրենց համար մեռաւ ու յարութիւն առաւ:
16 ղ Ուստի ասկէ ետև մենք մէկ մը մարմնով չենք
գիտեր. ու թէև Քրիստոսը մարմնով ճանչ-
ցանք, ճ բայց հիմա՝ ալ անանկ չենք ճանչնար:
17 մ Ուրեմն թէ որ մէկը Քրիստոսի մէջ է,

թ Մատ. իե. 31, 32: Հռով. ժդ. 10:
ժ Հռով. բ. 6: Գաղ. զ. 8: Եփե. զ. 8: Կող. գ. 24, 25: Յայտ. իբ. 12:
ի Յոբ. լա. 23: Եբր. ժ. 31: Յուդ. 23:
լ Գլ. դ. 2:
խ Գլ. գ. 1:
ծ Գլ. ա. 14:
կ Գլ. ժա. 1, 16, 17: ժբ. 6, 11:
հ Հռով. ե. 15:
ձ Հռով. զ. 11, 12: ժդ. 7, 8: Ա Կոր. զ. 19: Գաղ. բ. 20: Ա Թես. ե. 10: Ա Պետ. դ. 2:
ղ Մատ. ժբ. 50: Յով. ժե. 14: Գաղ. ե. 6: Փիլ. գ. 7, 8: Կող. գ. 11:
ճ Յով. զ. 64:
մ Հռով. ը. 9: ժզ. 7: Գաղ. զ. 15:

յ անիկայ նոր ստեղծուած մըն է. ն հինները անցան,
18 և ահա ամէն բան նոր եղաւ: Սակայն ամէն բան
Աստուծմէ է, շ որ մեզ իրեն հետ հաշտեցուց Յի-
սուս Քրիստոսի ձեռքովը, ու տուաւ մեզի հաշ-
19 տութեան պաշտօնը. ո Այսինքն Աստուած էր, որ
Քրիստոսով աշխարհս իրեն հետ հաշտեցուց, և
անոնց յանցանքները իրենց չսեպեց, ու հաշտու-
20 թեան խօսքը մեր մէջը դրաւ: Ուրեմն Քրիս-
տոսի կողմանէ չ դեսպանութիւն կ'ընենք, պ իբրև
թէ Աստուած կը բարեխօսէր մեզմով. կ'աղաչենք
ձեզի Քրիստոսի կողմանէ, հաշտուեցէք Աստուծոյ
21 հետ: ջ Վասն զի Աստուած զանիկա որ մեղք չէր
գիտեր, մեզի համար մեղաւոր սեպեց, ռ որ մենք
անոր միջոցովը Աստուծոյ արդարները ըլլանք:

ԳԼ. Զ.

1 Առաքեալը կը ծանուցանէ որ իր անձը ընծայած է իբրև Քրիստոսի հաւատարիմ պաշտօնեայ, թէ իր յորդորանքներովը, 3 թէ իր անարատ վարքովը, 4 և թէ աւետարանին համար համբերութեամբ տանելով ամէն տեսակ վիշտերու ու նեղութիւններու: 14 Կը յորդորէ զանոնք որ ետ կենան կռապաշտական ընկերութիւններէն և պղծութիւններէն՝ մտածելով որ իրենց անձերը կենդանի Աստուծոյ տաճարն են:

1 Ուստի մենք ալ ս գործակից ըլլալով՝ վ կ'աղա-
չենք որ Աստուծոյ շնորհքը տ պարապ տեղը
2 ընդունած չըլլաք: ր Ինչու որ՝ Ընդունելի
ժամանակի մը մէջ լսեցի քեզի, կ'ըսէ, և փըր-
կութեան օրը օգնութիւն ըրի քեզի. ահա հիմա
է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան

յ Գաղ. ե. 6: զ. 15:
ն Ես. խգ. 18, 19: կե. 17: Եփե. բ. 15: Յայտ. իա. 5:
շ Հռով. ե. 10: Եփե. բ. 16: Կող. ա. 20: Ա Յով. բ. 2: դ. 10:
ո Հռով. գ. 24, 25:
չ Յոբ. լգ. 23: Մաղ. բ. 7: Գլ. գ. 6: Եփե. զ. 20:
պ Գլ. զ. 1:
ջ Ես. ծգ. 6, 9, 12: Գաղ. գ. 13: Ա Պետ. բ. 22, 24: Ա Յով. գ. 5:
ռ Հռով. ա. 17: ե. 19: ժ. 3:
ս Ա Կոր. գ. 9:
վ Գլ. ե. 20:
տ Եբր. ժբ. 15:
ր Ես. խթ. 8:

3 օրը ։ ե Բնաւ մէկ բանով մը գայթակղութիւն
4 չենք տար, որ մեր պաշտօնը չպարսաւուի․ Բայց
ամէն բանի մէջ մեր անձը կ'ընծայենք զ Աստուծոյ
սպասաւորներու պէս՝ շատ համբերութիւնով վիշ-
տերու մէջ, տառապանքներու, նեղութիւններու,
5 է Ծեծերու, բանտերու, խռովութիւններու,
աշխատութիւններու, հսկումներու, ծոմերու մէջ,
6 Սրբութիւնով, գիտութիւնով, երկայնմտու-
թիւնով, քաղցրութիւնով, Սուրբ Հոգիով;
7 անկեղծ սիրով, ը Ճշմարտութեան խօսքով,
թ Աստուծոյ զօրութիւնով, ժ արդարութեան զէն-
8 քերով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է․ Փառքով
ու անարգութիւնով, պարսաւանքով և գովու-
թիւնով․ մոլորեցնողներու պէս՝ ու ճշմարիտներ․
9 Անծանօթներու պէս՝ ի և ծանօթներ․ լ Մեռնողնե-
րու պէս՝ և ահա կենդանի ենք․ խ պատժուած-
10 ներու պէս, ու չսպաննուածներ․ Տրտմածներու
պէս՝ ու միշտ ուրախ ենք․ աղքատներու պէս՝ ու
շատերը կը հարստացընենք․ բան մը չունեցողնե-
11 րու պէս՝ և ամէն բան ստացած ենք ։ Մեր բերա-
նը ձեզի բացուած է՝ ո՛վ Կորնթացիք, ծ և մեր
12 սիրտը լայնցած ։ Դուք մեր կողմէն չէք նեղուիր,
կ հապա ձեր սեղմուած գթոյն կողմէ կը նեղուիք ։
13 Ուստի անոր հատուցումը ընելու համար (հ իբրև
որդիներուս կը խօսիմ ձեզի,) դուք ալ դէպ 'ի
ինծի լայնցէ՛ք ։
14 ձ Անհաւատներուն հետ օտարախառն լծակից մի՛

ե Հռով․ ժգ․ 13 ։ ա Կոր․ թ․ 12 ։ ժ․ 32 ։
զ ա Կոր․ դ․ 1 ։
է Գլ․ ժա․ 23, ‹?› ։
ը Գլ․ դ․ 2 ։ է․ 14 ։
թ ա Կոր․ բ․ 4 ։
ժ Գլ․ ժ․ 4 ։ Եփե․ զ․ 11, 13 ։ բ Տիմ․ դ․ 7 ։
ի Գլ․ գ․ 2 ։ ե․ 11 ։ ժա․ 6 ։
լ ա Կոր․ դ․ 9 ։ Գլ․ ա․ 9 ։ դ․ 10, 11 ։
խ Սաղ․ ճժը․ 18 ։
ծ Գլ․ է․ 3 ։
կ Գլ․ ժբ․ 15 ։
հ ա Կոր․ դ․ 14 ։
ձ բ Օր․ է․ 2, 3 ։ ա Կոր․ ե․ 9 ։ է․ 39 ։

ըլլաք․ ղ Քանզի ի՞նչ մասնակցութիւն ունի ար-
դարութիւնը անօրէնութեան հետ ; և ի՞նչ հա-
15 ղորդութիւն ունի լոյսը խաւարին հետ․ Եւ ի՞նչ
միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարին հետ,
կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին
16 հետ․ Եւ ի՞նչ յարմարութիւն ունի Աստուծոյ
տաճարը կռոց հետ․ ճ Վասն զի դուք կենդանի Աս-
տուծոյ տաճարն էք, ինչպէս որ Աստուած ըսաւ
թէ մ Անոնց մէջը պիտի բնակիմ, ու անոնց մէջը
պիտի քալեմ, և անոնց Աստուած պիտի ըլլամ,
17 ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան ։ յ Ասոր
համար ելէ՛ք անոնց մէջէն ու զատուեցէ՛ք, կ'ըսէ
18 Տէրը, և պիղծ բանի մի՛ դպչիք․ Ու ես ձեզ պի-
տի ընդունիմ, ն և ես ձեզի Հայր պիտի ըլլամ,
ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք՝
կ'ըսէ Ամենակալ Տէրը ։

ԳԼ․ Է

1 Իր խօսքը շարունակելով կը յորդորէ զանոնք սուրբ վարք ունենալու, 2 և իրեն ցուցընելու ան նոյն սէրը որ ինքը անոնց վրայ ունէր․ 3 կը ծանուցանէ թէ իր նեղութիւններուն մէջ որչափ մխիթարութիւն ունեցաւ՝ երբոր Տիտոս իրեն պատմեց անոնց անկեղծ ապաշխարութիւնը որ իր առջի նամակը պատճառեր էր․ 13 և թէ անոնց Տիտոսին ցուցուցած սէրը ու հնազանդութիւնը արդարացուցին իր պարծանքը անոնց վրայով ։

1 Ուստի սիրելի՛ք, որովհետև մենք շ աս խոստումնե-
րը ունինք, մեր անձերը մարմնի ու հոգիի
ամէն կերպ պղծութենէն մաքրենք, և սրբութիւնը
կատարելագործենք Աստուծոյ վախովը ։
2 * Ընդունեցէ՛ք մեզ․ մէկու մը վնաս չտուինք,

ղ ա Թագ․ ե․ 2, 3 ։ դ Թագ․ ժը․ 21 ։ ա Կոր․ ժ․ 20, 21 ։ Եփե․ ե․ 7, 11 ։
ճ ա Կոր․ գ․ 16 ։ զ․ 19 ։ Եփե․ բ․ 21, 22 ։ Եբր․ գ․ 6 ։
մ Ել․ իթ․ 45 ։ Ղև․ իզ․ 12 ։ Երեմ․ լա․ 33 ։ լբ․ 38 ։ Եզեկ․ ժա․ 20 ։ լզ․ 28 ։ լէ․ 26, 27 ։ Զաք․ ը․ 8 ։ ժգ․ 9 ։
յ Եսա․ ծբ․ 11 ։ Գլ․ է․ 1 ։ Յայտ․ ժը․ 4 ։
ն Երեմ․ լա․ 1, 9 ։ Յայտ․ իա․ 7 ։
շ Գլ․ զ․ 18 ։ ա Յովհ․ գ․ 3 ։
* Կամ Համբերեցէ՛ք

3 ոչ մէկը եղծեցինք , բ ու ոչ մէկը զրկեցինք ։ Չէ
թէ ձեզ դատապարտելու համար աս կը գրեմ .
գ որովհետեւ ես առաջուց ըսեր եմ , որ դուք մեր
սրտերուն մէջն էք՝ մեռնելու ու ապրելու ձեզի
4 հետ ։ դ Շատ է իմ համարձակութիւնս ձեր վրայ .
ե շատ է իմ պարծանքս ձեզի համար . զ Լեցուն եմ
մխիթարութիւնով , աւելցած եմ ուրախութիւ–
5 նով մեր ամէն նեղութիւններուն մէջ ։ է Վասն զի
երբոր մենք Մակեդոնիա հասանք , բնաւ մեր մար–
մինը հանգստութիւն չունեցաւ , ը հապա ամէն
կողմանէ նեղութիւն կը քաշէինք . թ դուրսէն պա–
6 տերազմներ կային , ու ներսէն՝ վախեր ։ ժ Բայց
Աստուած որ խոնարհները կը մխիթարէ , ի մեզ
7 մխիթարեց Տիտոսի գալովը ։ Ու չէ թէ միայն
անոր գալովը , հապա այն մխիթարութիւնովն ալ՝
որով ինքը մխիթարուեր էր ձեզմով , երբոր մեզի
պատմեց ձեր բաղձանքը , ձեր ողբը , ձեր ինծի հա–
մար ունեցած նախանձաւորութիւնը , անանկ որ
8 ալ աւելի ուրախ եղայ ։ Ինչու որ եթէ ձեզ
տրտմեցուցի այն թուղթովը , չեմ զղջար , (ու թէեւ
զղջացեր էի ,) քանզի կը տեսնեմ որ այն թուղթը
9 ձեզ տրտմեցուց , թէեւ քիչ մը ատեն ։ Արդ ու–
րախ եմ , չէ թէ որ տրտմեցաք , հապա որ ա–
պաշխարութեան համար տրտմեցաք . որովհետեւ
դուք Աստուծոյ ուզածին պէս տրտմեցաք , անանկ
10 որ բանով մըն ալ մեզմէ վնաս չքաշէք ։ խ Ինչու
որ Աստուծոյ ուզածին պէս եղած տրտմութիւնը
փրկութեան համար ապաշխարութիւն կը գործէ ,

բ Գոր. ի. 33 ։ Գլ. ժբ. 17 ։
գ Գլ. զ. 11, 12 ։
դ Գլ. գ. 12 ։
ե Ա Կոր. ա. 4 ։ Գլ. ա. 14 ։
զ Գլ. ա. 4 ։ Փիլ. բ. 17 ։ Կող. ա. 24 ։
է Գլ. բ. 13 ։
ը Գլ. գ. 8 ։
թ Բ Օր. լբ. 25 ։
ժ Գլ. ա. 4 ։
ի Տես Գլ. բ. 13 ։
լ Գլ. բ. 4 ։
խ Բ Թագ. ժբ. 13 ։ Մատ. իզ. 75 ։

որ զղջանալու բան չէ . ծ բայց աշխարհի տրտմու–
11 թիւնը մահ կը գործէ ։ Քանզի ահա աս բանը՝ որ
դուք Աստուծոյ ուզածին պէս տրտմեցաք , ձեր մէջը
որչափ ջանք գործեց , որչափ չքմեղութիւն , որչափ
սրտմտութիւն , որչափ վախ , որչափ բաղձանք ,
որչափ նախանձաւորութիւն , որչափ վրէժխնդրու–
թիւն . ամէն կերպով ինքզինքնիդ ցուցուցիք թէ
12 աս բանին մէջ մաքուր էք ։ Ուրեմն այն որ ես ձեզի
գրեցի , չէ թէ զրկանքը ընողին համար էր , և չէ
թէ զրկանքը կրողին համար , կ հապա որ ձեր վրայ
մեր ունեցած հոգը յայտնի ըլլայ ձեզի Աստուծոյ
13 առջեւը ։ Ուստի ան ձեր մխիթարութեանը համար
մենք մխիթարուեցանք . շատ աւելի ալ ուրախա–
ցանք Տիտոսի ուրախութեանը համար , հ ինչու որ
անոր հոգին ձեր ամէնէն հանգստութիւն գտեր էր ։
14 Վասն զի ինչ որ ես անոր առջեւը ձեզի համար
պարծեցայ՝ ամօթով չեղայ . հապա ինչպէս որ ա–
մէն բան ճշմարտութիւնով խօսեցանք ձեզի , ա–
նանկ ալ Տիտոսին առջեւը պարծենալնիս ճշմարիտ
15 եղաւ ։ Նաեւ անոր սէրը աւելի է ձեր վրայ , ձ երբ–
որ կը յիշէ ձեր ամենուն հնազանդութիւնը , թէ
ինչպէս վախով ու դողով անիկայ ընդունեցեր էք ։
16 Ուստի ուրախ եմ ղ որ ամէն բանի մէջ ձեր վրայ
վստահութիւն ունիմ ։

ծ Առակ. ժէ. 22 ։
կ Գլ. բ. 4 ։
հ Հռով. ժե. 32 ։
ձ Գլ. բ. 9 ։ Փիլ. բ. 12 ։
ղ Բ Թես. գ. 4 ։ Փիլմ. 8, 21 ։

ԳԼ. Ը

1 Առաքեալը օրինակ բերելով Մակեդոնացիները՝ կը յորդորէ Կորնթացիները որ առատաձեռնութեամբ օգնութիւն ընեն Երուսաղէմի աղքատ սուրբերուն . 7 կը յիշեցնէ իրենց առջի ջանքը , 9 Քրիստոսի օրինակը , 14 և այն հոգևոր օգուտը որ ունենալու էին այն օգնութիւնը ընելովնին . 16 գովութեամբ կը խօսի Տիտոսին և ուրիշ եղբայրներուն յանձնարարութեանը վրայով՝ որոնք իր խնդրանօքը և իր յորդորանքովը անոնց գացեր էին բուն աս գործին համար ։

1 Սրբ՝ Եղբայրնե՛ր, ձեզի կը ծանուցանենք Աստուծոյ
շնորհքը, որ Մակեդոնիացւոց եկեղեցիներուն
2 տրուած է. Որ նեղութեան մեծ փորձին մէջ ի-
րենց ուրախութեանը առատութիւնը եւ ա
և իրենց ծանր աղքատութիւնը աւելի մեծ առա-
3 տաձեռնութիւն եղաւ։ Ինչու որ ես կը վկայեմ որ
իրենց կարողութեանը չափովը՝ ու կարողութենէն
4 ալ աւելի յօժարակամ ըլլալով, Շատ աղաչան-
քով կ'աղաչէին՝ որ տուրքերը բ ու սուրբերուն հա-
մար եղած պաշտօնին մասնակցութիւնը ընդունինք։
5 Եւ ոչ թէ որչափ որ մենք կը յուսայինք, հապա ան-
ձերնին ալ տուին, առաջ Տէրոջը ու ետքը մեզի
6 Աստուծոյ կամքովը. գ Որ Տիտոսին աղաչեցինք թէ
ինչպէս որ անկից առաջուց սկսեց, նմանն ալ
7 ձեր մէջը կատարէ այս շնորհքն ալ։ դ Բայց ինչ-
պէս որ ամէն բանով առատացած էք դուք, (հա-
ւատքով ու խօսքով ու գիտութիւնով և ամէն
ջանքով ու ձեզմէ մեր վրայ եղած սիրովը,) ե Նա-
8 յեցէ՛ք որ այս շնորհքով ալ առատանաք. զ Չէ
թէ հրամայելով մը կը զրուցեմ, հապա ուրիշնե-
րուն ջանքին պատճառովը, և որ փորձեմ ձեր սի-
9 րոյն հարազատութիւնը։ Քանզի դուք գիտէք մեր
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, է թէ ինքը ձեզի
համար աղքատ եղաւ՝ ան որ հարուստ էր, որ դուք
10 անոր աղքատանալովը հարստանաք։ ը Եւ աս
բանիս մէջ խրատ մը կու տամ. թ Ինչու որ ասի-
կայ ձեր օգտին համար է, դուք որ չէ թէ միայն
ընելը, ժ հապա կամենալն ալ առաջուց սկսեցիք

ա Մար. ժբ. 44։
բ Գործ. ժա. 29։ իգ. 17։ Հռով. ժե. 25, 26։ ա Կոր. ժզ. 1, 3, 4։ Գլ. թ. 1։
գ Հմր 17։ Գլ. ժբ. 18։
դ ա Կոր. ա. 5։ ժբ. 8։
ե Գլ. թ. 8։
զ ա Կոր. է. 6։
է Մատ. ը. 20։ Ղու. թ. 58։ Փիլ. բ. 6, 7։
ը ա Կոր. է. 25։
թ Առակ. ժթ. 17։ Մատ. ժ. 42։ ա Տիմ. զ. 18, 19։ Եբր. ժգ. 16։
ժ Գլ. թ. 2։

11 անցած տարուընէ հետէ. Ուստի հիմա ընելն ալ
կատարեցէք, որ ինչպէս կամաց յօժարութիւն կայ,
նոյնպէս ալ ընելը ունեցածներնուդ չափովը ըլլայ։
12 ի Վասն զի թէ որ առաջ յօժարութիւնը ըլլայ՝
մարդ ունեցածին չափովը ընդունելի է, ու չէ թէ
13 չունեցածին չափովը։ Ինչու որ չէ թէ ես ուրիշ-
ներուն հանգստութիւն կ'ուզեմ, ու ձեզի նեղու-
14 թիւն. Հապա հաւասարութիւնով՝ հիմակուան
ատենս ձեր աւելին անոնց պակասութիւնը լեցնէ,
որպէս զի անոնց աւելին ալ օր մը օգնութիւն ըլլայ
ձեր պակասութեանը, որ հաւասարութիւն ըլլայ.
15 Ինչպէս որ գրուած է, լ Թէ Ան որ շատ ժողվեց,
16 չաւելցաւ, ու ան որ քիչ, չպակսեցաւ։ Բայց
գոհութիւն Աստուծոյ, որ նոյն հոգը ձեր վրայ
17 Տիտոսին սիրտը դրեց. Ինչու որ խ մեր աղաչանքը
ընդունեց, և իր յօժարամտութիւնը շատ ըլլալով՝
18 իր կամքովը ելաւ ձեզի գալու։ Ու անոր հետ խրկե-
ցինք ծ ան եղբայրը, որուն գովութիւնը աւետա-
19 րանին մէջն է բոլոր եկեղեցիներուն մէջ. Եւ ոչ
միայն այսքան, կ հապա նաև եկեղեցիներէն ընտ-
րուեցաւ մեզի ճամբորդութեան ընկեր ըլլալու աս
տուրքերուն մէջ, հ որ մենք կը ծառայենք Տէրոջը
փառքին համար, ու ձեր յօժարութեամբը։
20 Բայց աս մասին զգուշութիւն կ'ընէինք, որ չըլ-
լայ թէ մէկը արատ մը դնէ մեր վրայ աս առա-
տութեանս մէջ, որուն մենք կը ծառայենք։
21 Քանզի ոչ միայն Տէրոջը առջեւը, ձ հապա
մարդոց առջեւն ալ բարի բաներ ընելու հոգ կը
22 տանինք։ Եւ անոնց հետը մեր եղբայրը խրկե-
ցինք, որն որ շատ բաներու մէջ փորձելով՝ շատ

ի Մար. ժբ. 43, 44։ Ղու. իա. 3։
լ Ել. ժզ. 18։
խ Հմր 6։
ծ Գլ. ժբ. 18։
կ ա Կոր. ժզ. 3, 4։ Հմր 4, 6, 7։ Գլ. թ. 8։
հ Գլ. գ. 15։
ձ Հռով. ժբ. 17։ Փիլ. դ. 8։ ա Պետ. բ. 12։

անգամ՝ յօժարամիտ գտեր ենք․ ու հիմա՛ ալ
աւելի յօժարամիտ՝ ան մեծ վստահութիւնովը որ
23 ձեր վրայ ունի։ Բայց թէ որ Տիտոսին համար կը
հարցնէք, ղ անիկայ իմ ընկերս է, և ձեր մէջ իմ
գործակիցս․ իսկ թէ որ մեր եղբայրներուն համար,
անոնք եկեղեցիներուն խրկածներն են, ու Քրիս-
24 տոսի փառքը։ Ուստի ձեր սիրոյն ճ և մեր ձեր
վրայով պարծենալուն ապացոյցը անոնց վրայ ցու-
ցուցէ՛ք եկեղեցիներուն առջեւ։

ԳԼ․ Թ․

1 Առաքեալը կը ցուցնէ պատճառը թէ ինչո՛ւ համար, (թէեւ ինքը գիտէր անոնց յօժարամտութիւնը,) յառաջագոյն խրկեց Տիտոսը և միւս եղբայրները․ 6 կը յորդորէ որ առատ ողորմութիւն տան, իբր թէ ան տուածնին տեսակ մը սերմ ցանել էր՝ 10 որ առատօրէն պտուղ պիտի տար իրենց, 13 և պատճառ պիտի ըլլար որ մեծ շնորհակալութիւն մատուցուի Աստուծոյ։

1 մ Քանզի սուրբերուն ըլլալու պաշտօնին վրայով
2 ինծի աւելորդ է ձեզի գրել․ յ Ինչու որ
գիտեմ ես ձեր յօժարամտութիւնը, ն որուն վրա-
յով կը պարծենամ ձեզի համար Մակեդոնացւոց
մէջ, շ թէ Աքայեցիք անցած տարուընէ հետէ
պատրաստ են․ ու ձեր բարի նախանձը շատերը
3 գրգռեց։ Նաեւ ո եղբայրները խրկեցի, որ մեր
ձեզի համար պարծենալը աս մասին մէջ պարապ
չելլէ, հապա պատրաստ գտնուիք՝ ինչպէս որ ըսեր
4 եմ․ Որ չըլլայ թէ երբոր Մակեդոնացիք իմ հետս
գան ու ձեզ անպատրաստ գտնեն, ալ մենք (որ
չըսենք թէ դուք,) ամօթով մնանք աս *պար-
5 ծանքին վստահութեանը մէջ։ Ուստի հարկաւոր
սեպեցի եղբայրներուն աղաչել, որ առաջուց ձեզի

ղ Փիլ․ բ․ 25։
ճ Գլ․ ե․ 14; Թ․ 2։
մ Գոր․ ժա․ 29; Հռով․ ժե․ 26; ա Կոր․ ժզ․ 1; Գլ․ ը․ 4; Գաղ․ բ․ 10։
յ Գլ․ ը․ 19։
ն Գլ․ ը․ 24։
շ Գլ․ ը․ 10։
ո Գլ․ ը․ 6, 17, 18, 22։
* Ոմանք չունին։

գան, ու առաջուց կարգի դնեն ան ձեր առաջուց
ծանուցուած ընծան՝ որ պատրաստ ըլլայ, անանկ
որ ընծայի պէս ըլլայ, ու չէ՛ թէ ագահութեան
6 պէս։ չ Բայց ասիկայ կը ծանուցանեմ թէ ան որ
խնայելով կը սերմանէ՝ խնայելով պիտի հնձէ, ու
ան որ առատութիւնով կը սերմանէ՝ առատութիւ-
7 նով պիտի հնձէ։ Ամէն մէկը ինչպէս որ իր սրտո-
վը կը յօժարի, թող անանկ տայ, պ չէ՛ թէ
տրտմութեամբ կամ ստիպմամբ․ ջ Ինչու որ Աս-
8 տուած յօժարակամ տուողը կը սիրէ։ ռ Բայց
կարող է Աստուած բոլոր շնորհքները ձեզի առա-
տօրէն տալու, որ ամէն բանի մէջ ամէն ատեն բո-
լոր ձեզի պէտք եղածը ունենալով, ամէն բարի
9 գործքերով առատանաք․ Ինչպէս որ գրուած է,
ս Տարածեց ու աղքատներուն տուաւ․ անոր ար-
10 դարութիւնը յաւիտեան կը մնայ։ վ Նա անիկայ
որ սերմ ցանողին սերմ կը պարգեւէ, * և կերա-
կուրի համար հաց, ձեր սերմանիքը պարգեւէ
և աւելցընէ," տ ու ձեր արդարութեան պտուղ-
11 ները շատցընէ․ Որ ամէն բանի մէջ հարստա-
նաք ամէն կերպ առատութիւնով, ր որ մեր ձեռ-
քովը կը պատճառէ գոհութիւն առ Աստուծոյ։
12 Ինչու որ աս պաշտօնիս մատակարարութիւնը չէ՛
թէ միայն ց սուրբերուն պակասութիւնը լեցընելու
համար է, հապա նաեւ աւելի շատցընելու Աստու-
13 ծոյ գոհութիւն տալը․ Երբոր ւ աս ձեր պաշտօնին
փորձովը փառաւորեն զԱստուած՝ Քրիստոսի աւե-

չ Առակ․ ժա․ 24; ժթ․ 17; իբ․ 9; Գաղ․ զ․ 8, 9։
պ Բ Օր․ ժե․ 7։
ջ Ել․ իե․ 2; լե․ 5; Առակ․ ժա․ 25; Հռով․ ժբ․ 8; Գլ․ ը․ 12։
ռ Առակ․ ժա․ 24, 25; իը․ 27; Փիլ․ դ․ 19։
ս Սաղ․ ճժբ․ 9։
վ Ես․ ծե․ 10։
* Ոմանք կերակուրի համար հաց ալ պիտի պարգեւէ, և ձեր սերմանիքը պիտի աւելցընէ։
տ Ովս․ ժ․ 12։
ր Գլ․ ա․ 11; դ․ 15։
ց Գլ․ ը․ 14։
ւ Մատ․ ե․ 16։

տարանը խոստովանելնուդ հնազանդութեանը հա-
մար, [հ] ու առատաձեռնութեանը համար որով
14 հաղորդակցութիւն կ'ընէք անոնց ու ամենուն. Եւ
իրենց աղօթքը ձեզի համար մօտեցնեն, [ձ] փափաք
ունենալով ձեր վրայ՝ Աստուծոյ գերազանց շնորհ-
15 քին համար որ ձեր մէջն է ։ Եւ գոհութիւն Աս-
տուծոյ՝ [ղ] անոր չպատմուելու պարգեւին համար ։

ԳԼ. Ժ.

1 Առաքեալը իր անձը և մարմնին երեւոյթը արհամարհող սուտ առաքեալներուն դէմ՝ յառաջ կը բերէ իր հոգեւոր իշխանութիւնը, 7 հաստատելով որ իր գալու ատենը այնչափ զօրաւոր պիտի ըլլայ իր խօսքովը, որչափ որ իր նամակովը է իր հեռաւորութեան ատենը. 12 կը յանդիմանէ զանոնք չափէ դուրս առաջ անցնելնուն և ուրիշին աշխատանքովը պարծենալնուն համար ։

1 [ճ] Բայց ես Պօղոս ձեզի կ'աղաչեմ Քրիստոսի հե-
զութիւնովը ու քաղցրութիւնովը, [մ] որ երեսն
առ երես գտնուած ատենս՝ խոնարհ եմ ձեր մէջը ,
2 բայց հեռուէն կը համարձակիմ ձեզի. Կ'աղաչեմ՝
[յ] որ չըլլայ թէ մօտէն ալ համարձակիմ այն վստա-
հութիւնովը՝ որով միտք ունիմ յանդգնիլ մէկ
քանիներուն վրայ, որոնք որ մեր վրայով անանկ
կը կարծեն թէ մարմնաւորապէս կը քալենք ։
3 Վասնզի թէպէտ մարմնի մէջ կը քալենք, բայց
չէ թէ մարմնաւորապէս զինուորութիւն կ'ընենք.
4 [ն] Ինչու որ մեր զինուորութեան [շ] զէնքերը մարմնա-
ւոր չեն, [ո] հապա Աստուծմէ զօրութիւն առած՝
[չ] ամրոցները քակելու. [պ] մենք խորհուրդներ կը քա-
5 կենք, Եւ Աստուծոյ գիտութեանը դէմ բո-
լոր հպարտացած բարձր բաները, ու բոլոր միտ-

հ Եբր. ժգ. 16։
ձ Գլ. ը. 1։
ղ Յակ. ա. 17։
ճ Հռով. ժբ. 1։
մ Հմր 10։ Գլ. ժբ. 5, 7, 9։
յ ա Կոր. դ. 21։ Գլ. ժգ. 2, 10։
ն ա Տիմ. ա. 18։ բ Տիմ. բ. 3։
շ Եփե. զ. 13։ ա Թես. ե. 8։
ո Գործ. է. 22։ ա Կոր. բ. 5։ Գլ. զ. 7։ ժգ. 3, 4։
չ Երեմ. ա. 10։
պ ա Կոր. ա. 19։ գ. 19։

քերը Քրիստոսի հնազանդութեանը գերի կ'ընենք.
6 Եւ պատրաստութիւն ունինք վրէժ առնելու ա-
մէն անհնազանդութենէ, [ռ] երբոր ձեր հնազանդու-
7 թիւնը կատարեալ ըլլայ ։ [ս] Դուրսի երեւոյթին
կը նայիք. [վ] Եթէ որ մէկը վստահ ըլլայ իր անձին
վրայ՝ թէ ինքը Քրիստոսինն է, աս նորէն ինքիրմէ
խորհի՝ որ ինչպէս ինքը Քրիստոսինն է, [տ] անանկ
8 ալ մենք ։ Վասնզի թէ որ աւելի ալ պարծենալու
ըլլամ աս [ր] մեր իշխանութեանը վրայով՝ որ Տէրը
մեզի տուաւ ձեզ շինելու, ու չէ թէ քակելու
9 համար, [ց] պիտի չամչնամ. Որ անանկ չսեպուիմ՝
որպէս թէ ես թուղթերովս ձեզի վախ մը կը
10 ձգեմ. Վասնզի՝ Անոր թուղթերը, կ'ըսէ Ջէը,
ծանր ու զօրաւոր են, [ւ] բայց անոր մարմնոյն
11 երեւոյթը տկար է, [փ] ու խօսքը անարգ. Անանկ
մարդը աս թող խորհի, որ մենք հեռուէն ինչպէս
որ ենք խօսքով մեր թուղթերովը, մօտէն ալ ա-
12 նանկ պիտի ըլլանք գործքով ։ [ք] Ինչու որ մենք
չենք համարձակիր մեր անձը կշիռքի դնել ու
բաղդատել ոմանց հետ, որ ինքզինքնին կը գովեն.
բայց անոնք իրենցմով իրենց անձերը չափելով,
և զիրենք իրենց հետ բաղդատելով՝ չեն հասկը-
13 նար ։ [օ] Բայց մենք չափէ դուրս բաներով պիտի
չպարծենանք, հապա այն կանոնին չափովը, որ
Աստուած մեզի բաժին տուաւ մինչև ձեզի հաս-
14 նելու, Չէ թէ որպէս թէ մենք ձեզի հասած
չենք. ու ինքզինքնիս չափէն աւելի կ'երկընցընենք.

ջ Գլ. ժգ. 2, 10։
ռ Գլ. ը. 9։ է. 15։
ս Յով. է. 24։ Գլ. ե. 12։ ժա. 18։
վ ա Կոր. ժդ. 37։ ա Յով. դ. 6։
տ ա Կոր. գ. 23։ Թ. 1։ Գլ. ժա. 23։
ր Գլ. ժգ. 10։
ց Գլ. է. 14։ ժբ. 6։
ւ ա Կոր. բ. 3, 4։ Հմր 1։ Գլ. ժբ. 5, 7, 9։ Գաղ. դ. 13։
փ ա Կոր. ա. 17։ բ. 1, 4։ Գլ. ժա. 6։
ք Գլ. դ. 1։ ե. 12։
օ Հմր 15։

մ Ինչու որ Քրիստոսի աւետարանովը մինչեւ ձեզի
15 հասանք։ Ու չէ՛ թէ չափէ դուրս բաներով՝ յ ու-
րիշներուն աշխատանքովը կը պարծենանք. հապա
յոյս ունինք որ ձեր հաւատքը աճելովը՝ մեր կա-
16 նոնին չափովը ձեզմով աւելի ընդարձակինք, Ձեզ-
մէ անդին կողմերը աւետարանը քարոզելու, եւ չէ՛
թէ պատրաստ բաներու վրայ պարծենալու ուրիշի
17 մը կանոնով։ ն Բայց ան որ կը պարծենայ, Թող
18 Տէրոջմով պարծենայ։ շ Վասն զի չէ՛ թէ ան որ
իր անձը կը գովէ, անիկայ է ընտրուածը, ո հա-
պա ան որ Տէրը զանիկայ կը գովէ։

ԳԼ. ԺԱ.

1 Նախանձով լեցուած Կորնթացւոց վրայ՝ որոնք կ'երեւնայ թէ սուտ առաքեալները աւելի պատուաւոր կը համարէին, կը ստիպուի իր անձին վրայ պարծենալ, 5 թէ ինքը հաւասար է երեւելի առաքեալներուն, 7 եւ թէ ինքը աւետարանը ձրի քարոզեց անոնց՝ բնաւ մէկուն նեղութիւն չտալով իր ապրուստին համար. 13 կը ցուցընէ թէ ինքը օրէնքին կողմանէ ստոր չէ ան խաբեբայ գործաւորներէն, 23 եւ Քրիստոսի ծառայութեանը ու իր պաշտօնին համար իր կրած նեղութիւններուն մէջ շատ գերազանց է անոնցմէ։

1 Երանի թէ քիչ մը ներէիք չ իմ անմտութեանս.
2 Եւ իրաւցընէ համբերեցէ՛ք ինծի։ պ Վասն զի
ձեր վրայ նախանձաւոր եմ Աստուծոյ նախանձովը.
ջ Ինչու որ ես ձեզ մէկ էրկան մը նշանեցի՝ ռ մա-
քուր կոյսի մը պէս ս Քրիստոսի դիմացը հանելու։
3 Միայն թէ կը վախնամ՝ վ չըլլայ թէ ինչպէս որ
օձը Եւան խաբեց իր խորամանկութիւնովը, տ ա-

մ ա Կոր. գ. 5, 10։ դ. 15։ թ. 1։
յ Հռով. ժե. 20։
ն Ես. կե. 16։ Երեմ. թ. 24։ ա Կոր. ա. 31։
շ Առակ. իէ. 2։
ո Հռով. բ. 29։ ա Կոր. դ. 5։
չ Հմր 16։ Գլ. ե. 13։
պ Գաղ. դ. 17, 18։
ջ Ովս. բ. 19, 20։ ա Կոր. դ. 15։
ռ Ղև. իա. 13։
ս Կող. ա. 28։
վ Ծն. գ. 4։ Յոհ. ը. 44։
տ Եփե. դ. 24։ Կող. բ. 4, 8, 18։ ա Տիմ. ա. 3։ դ. 1։ Եբր. ժգ. 9։ բ Պետ. գ. 17։

ռանկ ալ ձեր միտքերը ապականին Քրիստոսի
4 վրայ եղած միամտութենէն։ Վասն զի թէ որ
մէկը գալու ըլլայ եւ ուրիշ Յիսուս քարոզէ՝ որ
մենք ան չքարոզեցինք, կամ ուրիշ հոգի առնէք՝
որ չառիք, ը կամ ուրիշ աւետարան՝ որն որ չէք
ընդունած, անոնցմէ աղէկ կը համբերէիք։
5 Բանզի ես սաանկ կը սեպեմ՝ թ որ ամենէն երեւելի
առաքեալներէն բանով մըն ալ պակաս չեմ։
6 ժ Ու թէպէտ խօսքի կողմէ անկիրթ եմ, ի բայց չէ՛
թէ գիտութեան կողմէ, լ սակայն ամէն բանի մէջ
7 բոլորովին անձերնիս ձեզի յայտնի ըրինք։ Միթէ
յանցա՞նք գործած եղայ՝ խ որ Աստուծոյ աւետա-
րանը ձեզի ձրի քարոզելով իմ անձս խոնարհեցու-
8 ցի, որ դուք բարձրանաք։ Ուրիշ եկեղեցիները
կողոպտեցի՝ անոնցմէ թոշակ առնելով ձեզի ծառա-
9 յելու համար։ Ու ձեր քովը գտնուած ատեն՝
երբոր պակասութիւն մը ունեցայ, ծ ոչ մէկուն
ծանրութիւն չտուի. կ Ինչու որ իմ պակասութիւնս
լեցուցին Մակեդոնիայէն եկող եղբայրները. հ Եւ
ամէն կերպով ձեզի ծանրութիւն տալէն իմ անձս
10 պահեցի՝ ու պիտի պահեմ ալ։ ձ Քրիստոսի ճշ-
մարտութիւնը իմ ներսի դին է, ղ որ աս իմ պար-
ծենալս պիտի չխափանուի ինծմէ Աքայիայի կող-
11 մերը։ Ինչո՞ւ. ճ որպէս թէ չե՞մ սիրեր ձեզ.
12 — Աստուած գիտէ։ Բայց ան որ կ'ընեմ՝ պիտի
ընեմ ալ, մ որ կտրեմ անոնց պատճառը՝ որոնք
պատճառ կը փնտռեն, որ ինչ բանով կը պարծե-

ը Գաղ. ա. 7, 8։
թ ա Կոր. ժե. 10։ Գլ. ժբ. 11։ Գաղ. բ. 6։
ժ ա Կոր. ա. 17։ բ. 1, 13։ Գլ. ժ. 10։
ի Եփե. գ. 4։
լ Գլ. դ. 2։ ե. 11։ ժբ. 12։
խ Գործ. ժը. 3։ ա Կոր. թ. 6, 12։ Գլ. ժ. 1։
ծ Գործ. ի. 33։ Գլ. ժբ. 13։ ա Թես. բ. 9։ բ Թես. գ. 8, 9։
կ Փիլ. դ. 10, 15, 16։
հ Գլ. ժբ. 14, 16։
ձ Հռով. թ. 1։
ղ ա Կոր. թ. 15։
ճ Գլ. զ. 11։ է. 3։ ժբ. 15։
մ ա Կոր. թ. 12։

13 նան, իրենք ալ մեզի պէս գտնուին ։ յԻնչու՛ որ
անանկները սուտ առաքեալներ՝ նխաբեբայ բան-
ւորներ ըլլալով, Քրիստոսի առաքեալներուն կեր-
14 պարանքը վրանին կ'առնեն ։ Ու զարմանք մը չէ ․
ինչու որ ինքը Սատանան ալ շլուսաւոր հրեշ-
15 տակի կերպարանք կ'առնէ ․ Ու մեծ բան մը
չէ, որ անոր պաշտօնեաներն ալ ոարդարութեան
պաշտօնեաներու նման կերպարանք կ'առնեն ․
չորոնց վերջը իրենց գործքերուն համեմատ պիտի
16 ըլլայ ։ պԿրկնեալ կ'ըսեմ ՝ չըլլայ որ մէկը զիս
անմիտ սեպէ, հապա թէ չէ՛ գոնէ անմիտի մը պէս
զիս ընդունեցէք, որ ես ալ քիչ մը պարծենամ ։
17 Ան որ ես կը խօսիմ՝ ջչէ թէ Տէրոջը կամացը պէս
կը խօսիմ, հապա որպէս թէ անմտութիւնով մը
18 ռաստ պարծենալուն վստահութիւնովը ։ սՈրով-
հետեւ շատերը մարմնոյ կողմանէ կը պարծենան, ես
19 ալ պիտի պարծենամ ։ վՔանզի դուք իմաստուն
ըլլալով՝ յօժարութեամբ կը համբերէք անմիտնե-
20 րուն ։ Ինչու որ կը համբերէք, տթէ որ մէկը
ձեզ ծառայեցընէ, թէ որ մէկը ձեր ստացուածքը
ուտէ, թէ որ մէկը ձեզմէ բան մը առնէ, թէ որ
մէկը ձեր վրայ հպարտանայ, թէ որ մէկը ձեր երե-
21 սին զարնէ ։ Քամահրանքի ձեւով կը խօսիմ,
րիբր թէ մենք տկար էինք ․ ցբայց ինչ բանով որ
մէկը պարծենալու կը համարձակի (անմտութեամբ
22 կը խօսիմ,) ես ալ կը համարձակիմ ։ Անոնք
Եբրայեցի՞ են, ւես ալ ․ Իսրայելացի՞ են, ես

յ Գոր. ժե. 24 ; Հռով. ժզ. 18 ; Գաղ. ա. 7 ; գ. 12 ; Փիլ. ա. 15 ; բ Պետ. բ. 1 ; ա Յօհ. դ. 1 ; Յայտ. բ. 2 ;
ն Գղ. ր. 17 ; Փիլ. գ. 2 ; Տիտ. ա. 10, 11 ;
շ Գաղ. ա. 8 ;
ո Գղ. գ. 9 ;
չ Փիլ. գ. 19 ;
պ Հմր 1 ; Գղ. ժր. 6, 11 ;
ջ ա Կոր. է. 6, 12 ;
ռ Գղ. թ. 4 ;
ս Փիլ. գ. 3, 4 ;
վ ա Կոր. գ. 10 ;
տ Գաղ. բ. 4 ; գ. 9 ;
ր Գղ. ժ. 10 ;
ց Փիլ. գ. 4 ;
ւ Գոր. իր. 3 ; Հռով. ժա. 1 ; Փիլ. գ. 5 ;

23 ալ ․ Աբրահամի սերունդ են, ես ալ ․ Քրիստոսի
պաշտօնեանե՞ր են, (յիմարաբար կը խօսիմ՝) ալ
աւելի ես ։ փաշխատանքներով՝ աւելի, քծեծերով՝
ալ աւելի, բանտարկութիւններով՝ աւելի, օմա-
24 հուան վտանգներով՝ շատ անգամ ․ ֆՀրեաներէն
հինգ անգամ քառասունէն մէկ մը պակաս ծեծ կե-
25 րայ ․ Իրեք անգամ ձաղկով ծեծուեցայ ․ մէկ
անգամ քարկոծուեցայ ․ իրեք անգամ նաւաբե-
կութեան հանդիպեցայ ․ գիշեր մը ու ցորեկ մը
26 ծովին անդունդը մնացի ․ Շատ անգամ ճամբոր-
դութեանց մէջ չարչարուեցայ ․ գետերէն վտանգներ,
աւազակներէն վտանգներ, իմ ազգէս վտանգներ,
հեթանոսներէն վտանգներ, քաղաքի մէջ վտանգ-
ներ, անապատի մէջ վտանգներ, ծովի վրայ վտանգ-
ներ, սուտ եղբայրներու մէջ վտանգներ քաշեցի ․
27 Ջանքի ու աշխատանքի մէջ, շատ անգամ քնա-
հատութեան մէջ, անօթութեան ու ծարաւու-
թեան մէջ, շատ անգամ ծոմ կենալու մէջ,
28 ցուրտի ու մերկութեան մէջ եղայ ․ Զատ արտաքին
նեղութիւններէն, ամէն օրուան զբաղմունքը՝ բոլոր
29 եկեղեցիներուն հոգը վրաս կը դիզուէր ։ Ո՞վ
կը տկարանայ, ու ես չեմ տկարանար ․ ո՞վ
30 կը գայթակղի, ու իմ սիրտս չայրիր ։ Թէ որ
պարծենալ պէտք ըլլայ, տկարութեանս բանե-
31 րուն վրայ պարծենամ ։ Աստուած և մեր Տէր

փ ա Կոր. ժե. 10 ;
ք Գոր. թ. 16 ; ի. 23 ; իա. 11 ; Գղ. գ. 4, 5 ;
օ ա Կոր. ժե. 30, 31, 32 ; Գղ. ա. 9, 10 ; գ. 11 ; գ. 9 ;
ֆ բ Օր. իե. 3 ;
Գոր. ժզ. 22 ;
Գոր. ժգ. 18 ;
Գոր. իէ. 41 ;
Գոր. թ. 23 ; ժգ. 50 ; ժդ. 5 ; ժէ. 5 ; ի. 3 ; իա. 31 ; իգ. 10, 11 ; իե. 3 ;
Գոր. ժդ. 5 ; ժթ. 24 ;
Գոր. ի. 31 ; Գղ. գ. 5 ;
ա Կոր. գ. 11 ;
Տես Գոր. ի. 18, 35 ; Հռով. ա. 14 ;
ա Կոր. ը. 13 ; թ. 22 ;
Գղ. ժբ. 5, 9, 10 ;
Հռով. ա. 9 ; թ. 1 ; Գղ. ա. 23 ; Գաղ. ա. 3 ; ա Թես. բ. 5 ;

Յիսուս Քրիստոսի Հայրը, ւ որ յաւիտեան
32 օրհնեալ է, գիտէ որ սուտ չեմ զրուցեր ։ փ Դա-
մասկոսի մէջ Արետա թագաւորին ազգապետը զիս
բռնել ուզելով՝ Դամասկացւոց քաղաքը պահա-
33 պաններ դրեր էր ։ Ու ես պատուհանէ մը զամ-
բիւղով պարսպէն վար թող տրուեցայ, ու անոր
ձեռքէն փախայ ։

ԳԼ. ԺԲ

1 Պօղոս իր առաքելութիւնը գովելու համար՝ թէև կրնար պարծենալ իրեն եղած յայտնութիւններուն վրայ, 9 բայց աւելի աղէկ կը համարի իր տկարութեանցը վրայ պարծենալ, 11 յանդիմանելով զանոնք որ ստիպեցին զինքը այսպէս պարծենալու. 14 կը խոստանայ նորէն իրենց երթալ հայրական սիրով մը. 20 բայց կը վախնայ որ ինքը պիտի ցաւի՝ շատ գայթակղութիւններ և անկարգութիւններ գտնելով մէջերնին ։

1 Պարծենալ իրաւցընէ ինծի անօգուտ է. միայն
թէ Տէրոջը տեսիլքներուն ու յայտնութիւն-
2 ներուն գամ ։ Մարդ մը գիտեմ ա Քրիստոսով
տասնուչորս տարի առաջ, (եթէ մարմինով էր՝ չեմ
գիտեր, և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր,
Աստուած գիտէ,) որ բ անանկ մէկը յափշտակուե-
3 ցաւ մինչև երրորդ երկինքը ։ Ու գիտեմ անանկ
մարդ մը, (եթէ մարմինով և եթէ առանց մարմինի,
4 չեմ գիտեր, Աստուած գիտէ,) Որ գ դրախտը յա-
փշտակուեցաւ ու լսեց չպատմուելու խօսքեր, որ
5 մարդու արժան չէ խօսիլ ։ Ասանկին համար
պիտի պարծենամ. դ բայց իմ անձիս համար պիտի
չպարծենամ, հապա միայն տկարութեանս վրայ ։
6 ե Ինչու որ եթէ պարծենալ ալ ուզեմ՝ անմիտ
պիտի չըլլամ, որովհետև ճշմարիտը պիտի զրուցեմ.
բայց կը խնայեմ խօսելու՝ որ չըլլայ թէ մէկը իմ
վրաս աւելի համարում ունենայ, քան որչափ որ

ւ Հռով. Թ. 5 ;
փ Գործ. Թ. 24, 25 ;
ա Հռով. ԺԶ. 7 ; ԳԼ. Ե. 17 ;
Գաղ. Ա. 22 ;
բ Գործ. ԻԲ. 17 ;
գ Ղուկ. ԻԳ. 43 ;
դ ԳԼ. ԺԱ. 30 ;
ե ԳԼ. Ժ. 8 ; ԺԱ. 16 ;

7 իմ վրաս կը տեսնէ, կամ ինծմէ կը լսէ ։ Ու որ
չըլլայ թէ ես հպարտանամ խիստ շատ յայտնու-
թիւններուն համար, ինծի զ մարմինի խայթոց մը
տրուեցաւ՝ է Սատանայի հրեշտակ մը՝ զիս նեղելու
8 համար, որ չըլլայ թէ հպարտանամ ։ ը Անոր հա-
մար երեք անգամ աղաչեցի Տէրոջը, որ մէկդի
9 ընէ ինծմէ ։ Ու ըսաւ ինծի, թ Իմ շնորհքս հերիք
է քեզի, ինչու որ իմ զօրութիւնս տկարութեան
մէջ կը կատարուի. ուստի մեծ յօժարութեամբ
ժ աւելի իմ տկարութիւններուս վրայ պիտի պար-
ծենամ, ի որ Քրիստոսի զօրութիւնը իմ վրաս
10 հանգչի ։ լ Անոր համար հաճեր եմ ես տկա-
րութիւններու, նախատինքներու, տառապանք-
ներու, հալածանքներու, ու նեղութիւններու՝
Քրիստոսի համար. խ ինչու որ երբոր կը տկարա-
11 նամ, ան ատենը զօրաւոր եմ ։ ծ Ես անմիտ ե-
ղայ [պարծենալով.] դուք ստիպեցիք զիս. վասն
զի ինծի պէտք էր ձեզմէ վկայութիւն առնել,
կ քանզի ես երևելի առաքեալներէն բանով մը պա-
12 կաս չգտնուեցայ, հ թէև ես ոչինչ եմ ։ ձ Յիրա-
ւի ձեր մէջը առաքեալի նշաններ գործուեցան ամէն
համբերութիւնով, նշաններով և սքանչելիքնե-
13 րով ու զօրութիւններով ։ ղ Վասն զի ալ ի՞նչ
կայ, որ անով պակաս գտնուեցաք ուրիշ եկեղե-
ցիներէն, միայն թէ անով՝ որ ես ձեզի ծանրու-
թիւն չտուի. ճ Ներեցէ՛ք ինծի աս յանցանքը ։
14 մ Ահա աս երրորդ անգամ է որ կը պատրաստուիմ

զ Տես Եզեկ. ԻԸ. 24 ; Գաղ. Դ. 13, 14 ;
է Յոբ. Բ. 7 ; Ղուկ. ԺԳ. 16 ;
ը Տես Բ Օր. Գ. 23-27 ; Մատ. ԻԶ. 44 ;
թ ԳԼ. ԺԱ. 30 ;
ժ Ա Պետ. Դ. 14 ;
ի Հռով. Ե. 3 ; ԳԼ. Է. 4 ;
լ ԳԼ. ԺԳ. 4 ;
խ ԳԼ. ԺԱ. 1, 16, 17 ;
ծ ԳԼ. ԺԱ. 5 ; Գաղ. Բ. 6, 7, 8 ;
կ Ա Կոր. Գ. 7 ; ԺԵ. 8, 9 ; Եփե. Գ. 8 ;
հ Հռով. ԺԵ. 18, 19 ; Ա Կոր. Թ. 2 ; ԳԼ. Գ. 2 ; Դ. 4 ; ԺԱ. 6 ;
ձ Ա Կոր. Ա. 7 ;
ղ Ա Կոր. Թ. 12 ; ԳԼ. ԺԱ. 9 ;
ճ ԳԼ. ԺԱ. 7 ;
մ ԳԼ. ԺԳ. 1 ;

ձեզի գալու․ և ես ձեզի ծանրութիւն պիտի չըլ–
լամ, ժ ինչու որ ես ձեր ունեցածը չեմ փնտռեր,
հապա ձեզ․ ի որովհետև որդիները պարտաւոր
չեն ծնողքներուն համար բան դիզել, հապա ծը–
15 նողքները՝ որդիներուն համար։ լ Ես ալ մեծ յօ–
ժարութեամբ ծախք պիտի ընեմ, ու ծախք պիտի
ըլլամ ալ ծ ձեր անձերուն համար, կ թէպէտև ձեզ
աւելի սիրելովս չնչին քիչ սիրուիմ ալ։
16 Սակայն թող ըլլայ որ հ ես ձեզի ծանրութիւն
մը չտուի, բայց գուցէ մէկը ըսէ թէ խորագէտ ըլ–
17 լալովս նենգութեամբ ձեզ բռնեցի։ ձ Միթէ իմ
ձեզի խրկածներուս մէկուն ձեռքովը ձեզմէ բան մը
18 քաշեցի՞։ ղ Տիտոսին աղաչեցի, ճ ու անոր հետ
ան եղբայրը խրկեցի․ միթէ Տիտոս ձեզմէ բան մը
քաշե՞ց․ չէ՞ որ երկուքնիս ալ նոյն հոգիով քալե–
ցինք, չէ՞ որ նոյն ճամբով պտըտեցանք։
19 մ Դարձեալ կը կարծէք որ ձեր առջին ջատագո–
վութի՞ւն կ'ընենք մեր անձերուն․ յ Աստուծոյ առ–
ջև Քրիստոսով կը խօսինք․ ն և ամէն բան՝ սի–
20 րելիք՝ ձեր շինութեանը համար է․ Քանզի կը
վախնամ որ չըլլայ թէ երբոր գամ, ձեզ ուզա–
ծիս պէս չգտնեմ, շ և ես ալ ձեզի ձեր չուզածին
պէս գտնուիմ․ չըլլայ թէ ձեր մէջ գտնուին վէճեր,
նախանձներ, սրտմտութիւններ, գրգռութիւններ,
չարախօսութիւններ, բանսարկութիւններ, ամ–
21 բարտաւանութիւններ, խռովութիւններ․ Չըլլայ
թէ երբոր նորէն գամ՝ ո իմ Աստուածս զիս նկուն
ընէ ձեր քովը, ու սուգ ընեմ շատերուն համար՝ չ որ

ժ Գոր․ ի․33։ ա Կոր․ ժ․33։
ի ա Կոր․ դ․14, 15։
լ ա Թես․ բ․8։ Փիլ․ բ․17։
ծ Յոհ․ ժ․11։ Գլ․ ա․6։
Կող․ ա․24։ բ Տիմ․ բ․10։
կ Գլ․ զ․12, 13։
հ Գլ․ ժա․9։
ձ Գլ․ է․2։
ղ Գլ․ ը․6, 16, 22։
ճ Գլ․ ը․18։
մ Գլ․ ե․12։
յ Հռով․ թ․1։ Գլ․ ժա․31։
ն ա Կոր․ ժ․33։
շ ա Կոր․ դ․21։ Գլ․ ժ․2։
ժգ․2, 10։
ո Գլ․ բ․1, 4։
չ Գլ․ ժգ․2։

առաջուց մեղք գործեցին, ու չապաշխարեցին իրենց
գործած պղծութեանը պ և պոռնկութեանը ու գի–
ճութեանը վրայ։

ԳԼ․ ԺԳ

1 Կը ծանուցանէ թէ ինքը անողոք պիտի ըլլայ, և իր առա–
քելական իշխանութիւնը պիտի բանեցնէ յամառեալ մեղա–
ւորներուն դէմ․ 5 և յորդորելով որ իրենց հաւատքը փոր–
ձեն, 7 ու իրենց մեղքերէն դառնան՝ դեռ ինքը անոնց չգա–
ցած, 11 իր թուղթը կը վերջացընէ ընդհանուր յորդորան–
քով մը և աղօթքով։

1 ջ Աս երրորդ անգամ է որ ձեզի կու գամ․ ռ Եր–
կու կամ երեք վկաներու բերնէ պիտի հաս–
2 տատուի ամէն բան։ ս Առաջուց ըսեր եմ՝ և նո–
րէն առաջուց կը զրուցեմ (որպէս թէ երկրորդ
անգամ ներկայ կը գտնուիմ՝ թէև հիմա հեռուէն
կը գրեմ) վ առջի մեղանչողներուն և ուրիշ ամե–
նուն, որ եթէ նորէն գամ՝ տ պիտի չխնայեմ․
3 Որովհետև ր Քրիստոսի ինծմով խօսելուն ապա–
ցոյցը կը փնտռէք, որ ինքը ձեր վրայ տկարացած
4 չէ, ց հապա ձեր մէջը զօրացած է․ ւ Որ թէպէտ
խաչուեցաւ տկարութիւնով, փ բայց կենդանի է
Աստուծոյ զօրութեամբը․ ք քանզի մենք ալ թէ–
պէտ կը տկարանանք անով, բայց կենդանի պիտի
ըլլանք անոր հետ Աստուծոյ զօրութեամբը ձեր մէ–
5 ջը։ և Փորձեցէ՛ք ձեր անձերը թէ հաւատքին մէջն
էք․ քննեցէ՛ք ձեր անձերը․ չէ՞ք գիտեր ինքզինք–
նիդ, օ որ Յիսուս Քրիստոս ձեր մէջն է, ֆ միայն
6 թէ որ խոտելի չըլլաք։ Բայց կը յուսամ որ պի–

պ ա Կոր․ ե․1։
ջ Գլ․ ժբ․14։
ռ Թուոց․ լե․30։ բ Օր․ ժէ․
6։ ժթ․15։ Մատ․ ժր․
16։ Յոհ․ ը․17։ Եբր․ ժ․
28։
ս Գլ․ ժ․2։
վ Գլ․ ժբ․21։
տ Գլ․ ա․23։
ր Մատ․ ժ․20։ ա Կոր․ ե․
4։ Գլ․ բ․10։
ց ա Կոր․ թ․2։
ւ Փիլ․ բ․7, 8։ ա Պետ․ գ․
18։
փ Հռով․ զ․4։
ք Տես Գլ․ ժ․3, 4։
և ա Կոր․ ժա․28։
օ Հռով․ ը․10։ Գաղ․ գ․19։
ֆ ա Կոր․ թ․27։

7 տի գիտնաք թէ մենք խոտելի չենք ։ Եւ կը խնդ-
րեմ Աստուծմէ որ դուք մէկ չարութիւն մը չը-
նէք . չէ՛ թէ որ մենք ընտիր երեւինք , հապա որ
դուք բարին գործէք ծ թէեւ մենք խոտելի ըլ-
8 լանք ։ Ինչու որ ճշմարտութեան դէմ կարողու-
թիւն մը չունինք , հապա ճշմարտութեան համար ։
9 Ուրախ ենք՝ կ երբոր մենք կը տկարանանք ու
դուք զօրաւոր կ'ըլլաք , հ և մենք ալ աս ձեր հաս-
10 տատութեանը համար կ'աղօթենք ։ ձ Ասոր աս
կը գրեմ ձեզի հեռուէն , որ չըլլայ թէ երբոր գամ՝
ղ սաստկութեամբ վարուիմ ճ ան իշխանութեանը
համեմատ , որ Տէրը ինծի տուաւ շինելու և չէ
թէ քակելու համար ։
11 Վերջապէս , եղբայրներ , ողջ եղէք , հաստատ
կեցէք , մխիթարուեցէք , մ միաբան եղէք , խա-
ղաղութիւն ըրէք . յ և սիրոյ ու խաղաղութեան
12 Աստուածը ձեր հետը պիտի ըլլայ ։ ն Բարեւ
տուէք իրարու սուրբ համբուրով . բարեւ կ'ընեն
13 ձեզի բոլոր սուրբերը ։ շ Տէր Յիսուս Քրիստոսի
շնորհքը և Աստուծոյ սէրը ո ու Հոգւոյն Սրբոյ
հաղորդութիւնը ձեր ամենուն հետը ըլլայ ։ Ամէն ։

ծ Գղ. գ. 9 ։
կ ա Կոր. գ. 10 ։ Գղ. ժա. 30 ։ ժբ. 5, 9, 10 ։
հ ա Թես. գ. 10 ։
ձ ա Կոր. դ. 21 ։ Գղ. բ. 3 ։ ժ. 2 ։ ժբ. 20, 21 ։
ղ Տիտ. ա. 13 ։
ճ Գղ. ժ. 8 ։
մ Հռով. ժբ. 16, 18 ։ ժե. 5 ։ ա Կոր. ա. 10 ։ Փիլ. բ. 2 ։ գ. 16 ։ ա Պետ. գ. 8 ։
յ Հռով. ժե. 33 ։
ն Հռով. ժզ. 16 ։ ա Կոր. ժզ. 20 ։ ա Թես. ե. 26 ։ ա Պետ. ե. 14 ։
շ Հռով. ժզ. 24 ։
ո Փիլ. բ. 1 ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

6 Առաքեալը կը զարմանայ որ Գաղատացիք այնքան շուտով թող տուին զինքը , ու իր քարոզած աւետարանը , 8 և կը նզովէ ան մարդիկը որ իր քարոզած աւետարանէն զատ ուրիշ աւետարան մը կը քարոզեն . 11 կը ցուցնէ թէ ինքը չէ՛ թէ մարդոցմէ , այլ Աստուծմէ սորված է աւետարանը . 14 թէ ինքը ի՛նչ էր իր կոչումէն առաջ , 17 և թէ ի՛նչ ըրաւ անմիջապէս ետքը ։

1 Պօղոս առաքեալ եղած ա չէ՛ թէ մարդոցմէ ու
չէ՛ թէ մարդու ձեռքով , բ հապա Յիսուս
Քրիստոսի ձեռքովը , և Հօր Աստուծոյ՝ գ որ զա-
2 նիկայ մեռելներէն յարոյց , դ Ու բոլոր եղբայրները
որ իմ հետս են՝ ե Գաղատիոյ եկեղեցիներուդ .
3 զ Շնորհք և խաղաղութիւն ձեզի Հօր Աստուծմէ
4 ու մեր Տէր Յիսուս Քրիստոսէն , է Ան որ իր ան-
ձը տուաւ մեր մեղքերուն համար , ը որ մեզ փրկէ
հիմակուան չար աշխարհէն՝ Աստուծոյ ու մեր Հօրը
5 կամքը համեմատ . Որուն փառք յաւիտեանս
յաւիտենից ։ Ամէն ։
6 Կը զարմանամ որ այդպէս շուտով ուրիշ աւե-
տարանի կը փոխուիք թ անկէ՝ որ ձեզ Քրիստոսի
7 շնորհքը կանչեց . ժ Որ չկայ ուրիշ աւետարան .

ա Հմր 11, 12 ։
բ Գոր. թ. 7 ։ իբ. 10, 15, 21 ։ իզ. 16 ։ Տիտ. ա. 3 ։
գ Գոր. բ. 24 ։
դ Փիլ. բ. 22 ։ գ. 22 ։
ե ա Կոր. ժզ. 1 ։
զ Հռով. ա. 7 ։ ա Կոր. ա. 3 ։ բ Կոր. ա. 2 ։ Եփե. ա. 2 ։ Փիլ. ա. 2 ։ Կող. ա. 3 ։ ա Թես. ա. 2 ։ բ Թես. ա. 2 ։ բ Յոհ. 3 ։
է Մատ. ի. 28 ։ Հռով. դ. 25 ։ Գղ. բ. 20 ։ Տիտ. բ. 14 ։
ը Տես Եսա. կե. 17 ։ Յոհ. ժե. 19 ։ ժէ. 14 ։ Եբր. բ. 5 ։ գ. 5 ։ ա Յոհ. ե. 19 ։
թ Գղ. ե. 8 ։
ժ բ Կոր. ժա. 4 ։

էմիայն թէ կան ոմանք՝ որ ձեզ կը խռովեցնեն,
ու կ'ուզեն Քրիստոսի աւետարանը խանգարել ։
8 ըԲայց թէ որ մենք կամ երկինքէն հրեշտակ մը
գայ աւետարանէ ձեզի անկէ ուրիշ՝ որ մենք աւե-
9 տարանեցինք ձեզի, նզովեալ ըլլայ ։ Ինչպէս որ
առաջ ըսինք, հիմա ալ նորէն կ'ըսեմ, թԵթէ որ
մէկը ձեր ընդունածէն ուրիշ աւետարան քարոզե-
10 լու ըլլայ ձեզի, նզովեալ ըլլայ ։ ժՔանզի հիմա
իմարդիկնե՞րը կը հաճեցնեմ՝ թէ զԱստուած ։
լկամ մարդո՞ց հաճելի ըլլալ կը փնտռեմ ։ Ինչու
որ եթէ՛ ես տակաւին մարդոց հաճելի ըլլայի, ալ
Քրիստոսի ծառայ չէի ըլլար ։
11 խԿը ծանուցանեմ ձեզի եղբայրներ՝ այն աւետա-
րանը որ ինծմէ քարոզուեցաւ, թէ անիկայ մար-
12 դու բան չէ ։ ծՈրովհետեւ ես ալ մարդէ չառի զա-
նիկայ, և ոչ ալ սորվեցայ, կհապա Յիսուս
13 Քրիստոսի յայտնութենէն ։ Վասն զի լսած էք
դուք իմ առջի ժամանակի վարմունքս Հրէութեան
մէջ, հինչպէ՜ս չափէ դուրս կը հալածէի Աստու-
14 ծոյ եկեղեցին՝ ձու կը կործանէի զանիկայ ։ Եւ իմ
ղհայրենի աւանդութիւններուս շատ նախան-
ձաւոր ըլլալով՝ իմ ազգիս մէջ եղած շատ հասա-
կակիցներէս աւելի յառաջադէմ էի Հրէութեան
15 մէջ ։ Բայց երբոր ուզեց Աստուած՝ (մոր որոշեց
զիս իմ մօրս որովայնէն, և իր շնորհքովը զիս կան-

է Գոր. ժե. 1, 24 ։ բ Կոր. բ. 17 ։ ժա. 13 ։ Գղ. ե. 10, 12 ։
ը ա Կոր. ժզ. 22 ։
թ բ Օր. դ. 2 ։ ժբ. 32 ։ Առակ. լ. 6 ։ Յայտ. իբ. 18 ։
ժ ա Թես. բ. 4 ։
ի ա Թագ. իդ. 7 ։ Մատ. իբ. 14 ։ ա Յօհ. գ. 9 ։
լ ա Թես. բ. 4 ։ Յակ. դ. 4 ։
խ ա Կոր. ժե. 1 ։
ծ ա Կոր. ժե. 1, 3 ։ Հմր 1 ։
կ Եփե. գ. 3 ։
հ Գոր. թ. 1 ։ իբ. 4 ։ իզ. 11 ։ ա Տիմ. ա. 13 ։
ձ Գոր. ը. 3 ։
ղ Երեմ. թ. 14 ։ Մատ. ժե. 2 ։ Մար. է. 5 ։
ճ Գոր. իբ. 3 ։ իզ. 9 ։ Փիլ. գ. 6 ։
մ Ես. խթ. 1, 5 ։ Երեմ. ա. 5 ։ Գոր. թ. 15 ։ ժգ. 2 ։ իբ. 14, 15 ։ Հռով. ա. 1 ։

16 չեց,) յ*ինծի իր Որդին յայտնել, նոր զանի-
կայ հեթանոսաց մէջ քարոզեմ, մէկէն 'ի մէկ
17 բան մը չիմացուցի շմարմինին ու արիւնին, Ո՛չ
ալ Երուսաղէմ ելայ ինծմէ առաջ առաքեալ ե-
ղողներուն քովը, հապա Արաբիա գացի, ու նորէն
18 Դամասկոս դարձայ ։ Ետքը երեք տարիէն ետեւ
ոԵրուսաղէմ ելայ Պետրոսը տեսնելու, և տասնու-
19 հինգ օր անոր քովը կեցայ ։ Սակայն չառաքեալ-
ներէն ուրիշ մէկը չտեսայ, պբայց միայն Յակոբոս՝
20 Տէրոջը եղբայրը ։ Բայց աս որ կը գրեմ ձեզի՝
ջահա Աստուծոյ առջեւը կը հաստատեմ, որ սուտ
21 չեմ գրուցեր ։ ռԸնկէ ետքը եկայ Սիւրիայի ու
22 Կիլիկիայի կողմերը ։ սԵւ զիս դէմ առ դէմ
չէին ճանչնար այն եկեղեցիները՝ վոր Հրէաս-
23 տանի մէջ էին Քրիստոսով ։ Միայն թէ անոնք
լսած էին թէ Ան որ առաջ մեզ կը հալածէր,
հիմա ինքը այն հաւատքը կը քարոզէ՝ որ ատեն մը
24 կը կործանէր ։ Ու ինծմով զԱստուած կը փառա-
ւորէին ։

ԳԼ. Բ

1 Առաքեալը կը ծանուցանէ թէ երբ ինքը վերստին Երուսաղէմ ելաւ՝ և ինչ նպատակով, 3 թէ Տիտոս չթլփատուեցաւ, 11 թէ ինքը Պետրոսին դէմ կեցաւ, պատճառը անոր իմացընելով 14 թէ ինչո՛ւ ինքը և ուրիշ Հրեաները Քրիստոսի կը հաւատան՝ որ հաւատքով արդարանան և չէ թէ գործքով ։ 20 կը հաստատէ թէ մեղքի մէջ պիտի չմնան անոնք՝ որ այսպէս արդարացած են ։

1 Ետքը տասնուչորս տարիէն ետեւ նորէն Երուսա-
ղէմ ելայ Բառնաբասին հետ՝ Տիտոսն ալ մէկ-
2 տեղ առնելով ։ Ու ելայ յայտնութիւնով, ու և

յ բ Կոր. դ. 6 ։
* Կամ ինծմով
ն Գոր. թ. 15 ։ իբ. 21 ։ իզ. 17, 18 ։ Հռով. ժա. 13 ։ Եփե. գ. 8 ։
շ Մատ. ժզ. 17 ։ ա Կոր. ժե. 50 ։ Եփե. զ. 12 ։
ո Գոր. թ. 26 ։
չ ա Կոր. թ. 5 ։
պ Մատ. ժգ. 55 ։ Մար. զ. 3 ։
ջ Հռով. թ. 1 ։
ռ Գոր. թ. 30 ։
ս ա Թես. բ. 14 ։
վ Հռով. ժզ. 7 ։
տ Գոր. ժե. 2 ։
ր Գոր. ժե. 12 ։

անոնց իմացուցի այն աւետարանը՝ որ հեթանոսներուն մէջ կը քարոզեմ, բայց առանձին անոնց
որ երեւելիներ էին, գ որ չըլլայ թէ պարապ տեղը
3 վազեմ կամ վազած ըլլամ։ Բայց չէ՛ թէ իմ
հետս եղող Տիտոսն ալ՝ որ Յոյն էր, պարտաւո-
4 րեցաւ թլփատուիլ. դ Մանաւանդ ներս սպրդուող
սուտ եղբայրներուն համար՝ որոնք սահելով ներս
մտան ե Քրիստոս Յիսուսով մեր ունեցած ազա-
տութիւնը լրտեսելու համար, զ որ մեզ ծառայե-
5 ցնեն. Որ անոնց քիչ մը ատեն անգամ մոլիկ
չըրինք հնազանդելու, է որ աւետարանին ճշմար-
6 տութիւնը հաստատուն մնայ ձեր մէջը։ ը Բայց
անոնք որ կը կարծուէին բան մը ըլլալ, ինչ
որ էին՝ ինծի հոգս չէ. թ Աստուած մար-
դոյ աչառութիւն չըներ. ժ վասն զի անոնք
կարծուածները բան մը չիմացուցին ինծի։
7 Հապա անոր հակառակը՝ ի երբոր տեսան որ անթլ-
փատներուն աւետարանը ինծի յանձնուած
է, ինչպէս Պետրոսին ալ թլփատուածնե-
8 րունը. (Վասն զի ան որ Պետրոսին յաջողեց
թլփատուածներուն առաքելութիւն ընելու, խ ին-
9 ծի ալ ծ յաջողեց հեթանոսներունը.) կ Ու
երբոր ինծի տրուած շնորհքը գիտցան Յակոբոս
ու Կեփաս եւ Յովհաննէս՝ հ որոնք սիւներ սեպուած
էին, աջ ձեռքերնին տուին ինծի ու Բառնաբասին

գ Փիլ. բ. 16 ։ ա Թես. գ. 5 ։
դ Գործ. ժե. 1, 24 ։ բ Կոր. ժա. 26 ։
ե Գղ. գ. 25 ։ ե. 1, 13 ։
զ բ Կոր. ժա. 20 ։ Գղ. գ. 3, 9 ։
է Հռմ 14 ։ Գղ. գ. 1 ։ գ. 16 ։
ը Գղ. զ. 3 ։
թ Գործ. ժ. 34 ։ Հռով. բ. 11 ։
ժ բ Կոր. ժբ. 11 ։
ի Գործ. ժգ. 46 ։ Հռով. ա. 5 ։ ժա. 13 ։ ա Տիմ. բ. 7 ։ բ Տիմ. ա. 11 ։
լ ա Թես. բ. 4 ։
խ Գործ. թ. 15 ։ ժգ. 2 ։ իբ. 21 ։ իզ. 17, 18 ։ ա Կոր. ժե. 10 ։ Գղ. ա. 16 ։ Կող. ա. 29 ։
ծ Գղ. գ. 5 ։
կ Հռով. ա. 5 ։ ժբ. 3, 6 ։ ժե. 15 ։ ա Կոր. ժե. 10 ։ Եփե. գ. 8 ։
հ Մատ. ժզ. 18 ։ Եփե. բ. 20 ։ Յայտ. իա. 14 ։

՚ի նշան հաղորդակցութեան, որ մենք հեթանոսնե-
րուն մէջը երթանք, ու անոնք՝ թլփատուածներուն.
10 Միայն թէ կը խնդրէին որ աղքատները յիշենք. Զոր ես
11 ալ փոյթ ունեցայ այն բանը ընելու։ ղ Բայց երբ-
որ Պետրոս Անտիոք եկաւ, ես անոր դէմ կեցայ.
12 որովհետեւ ինքը մեղադրուելու էր։ Ինչու որ
դեռ Յակոբոսին քովէն մէկ քանի հոգի չեկած,
ճ ինքը հեթանոսներուն հետ անխտրաբար կ'ուտէր.
բայց երբոր եկան՝ մէկդի կը քաշուէր, ու ինքզին-
քը կը զատէր, վախնալով անոնցմէ՝ որ թլփա-
13 տուածներէն էին։ Ու անոր հետ կեղծաւորեցան
միւս Հրեաներն ալ, անանկ որ Բառնաբաս
14 ալ անոնց կեղծաւորութեանը ծռեցաւ։ Բայց ես
երբոր տեսայ մ որ աւետարանին ճշմարտութեանը
մէջ շիտակ չեն քալեր, յ ամենուն առջին Կեփասին
ըսի, ն Եթէ դուն որ Հրեայ ես, հեթանոսի
պէս՝ ու չէ՛ թէ Հրեայի պէս կ'ապրիս, ինչպէս
հեթանոսները կը ստիպես Հրեայի պէս վարուե-
15 լու։ շ Մենք որ բուն Հրեայ ենք, ո և չէ՛ թէ
16 հեթանոսներէն մեղաւորներ, չ Սա գիտնալով՝ որ
մարդ օրէնքին գործքերէն չկրնար արդարանալ,
պ հապա Յիսուս Քրիստոսի հաւատքէն, մենք ալ
Քրիստոս Յիսուսի հաւատացինք՝ որ արդարա-
նանք Քրիստոսի հաւատքէն, և չէ՛ թէ օրէնքին
գործքերէն, ջ որովհետեւ օրէնքին գործքերէն մէկ
17 մարմին մը պիտի չարդարանայ։ Իսկ եթէ մենք
որ կ'ուզենք Քրիստոսով արդարանալ, ռ մեղա-
ւոր գտնուինք, ուրեմն Քրիստոս մեղաց պաշտօ-

ձ Գործ. ժա. 30 ։ իզ. 17 ։ Հռով. ժե. 25 ։ ա Կոր. ժզ. 1 ։ բ Կոր. ը. թ ։
ղ Գործ. ժե. 35 ։
ճ Գործ. ժ. 28 ։ ժա. 3 ։
մ Հմր 5 ։
յ ա Տիմ. ե. 20 ։
ն Գործ. ժ. 28 ։ ժա. 3 ։
շ Գործ. ժե. 10, 11 ։
ո Մատ. թ. 11 ։ Եփե. բ. 3, 12 ։
չ Գործ. ժգ. 38, 39 ։
պ Հռով. ա. 17 ։ գ. 22, 28 ։ ը. 3 ։ Գղ. գ. 24 ։ Եբր. է. 18, 19 ։
ջ Սաղ. ճխդ. 2 ։ Հռով. գ. 20 ։ Գղ. գ. 11 ։
ռ ա Յով. գ. 8, 9 ։

18 նեա՞յ եղաւ . քաւ լիցի ։ Քանզի թէ որ ես իմ
քակած բաներս նորէն կը շինեմ , իմ անձս յան֊
19 ցաւոր կը ցուցընեմ ։ ա Ինչու որ ես օրէնքով
բ մեռայ օրէնքին , գ որ Աստուծոյ կենդանի ըլլամ ։
20 դ Քրիստոսի հետ խաչը ելայ . Եւ աւ կենդանի եմ
չէ՛ թէ ես՝ հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս .
բայց ես որ հիմա մարմնովս կ'ապրիմ՝ ե Աստուծոյ
Որդւոյն հաւատքովը կ'ապրիմ , զ ան որ զիս սի֊
21 րեց ու իր անձը ինծի համար մատնեց ։ Ես Աս֊
տուծոյ շնորհքը չեմ խափաներ . է Ինչու որ եթէ
արդարութիւնը օրէնքէն էր , ուրեմն Քրիստոս
պարապ տեղը մեռաւ ։

ԳԼ . Գ

1 Կը հարցընէ թէ ի՛նչ պատճառով հաւատքը կը թողուն և օրէնքին կը դառնան . 6 կը ցուցընէ թէ անոնք որ կը հաւատան՝ կ'արդարանան , 9 և կ'օրհնուին Աբրահամին հետ . 10 ու շատ փաստերով կը հաստատէ ասիկայ ։

1 Ո՛վ անմիտ Գաղատացիք՝ ը ո՞վ ձեզ հրապու֊
րեց* . որ ձեր աչքերուն առջևը Յիսուս Քրիս֊
2 տոս ձեր մէջը խաչը ելած նկարագրուեցաւ ։ Ա֊
սիկայ միայն կ'ուզեմ ձեզմէ սորվիլ . թ Օրէնքի՞ն
գործքերովը դուք Հոգին առիք՝ ժ թէ հաւատքին
3 լսելովը ։ Այդչափ անմի՞տ էք . ժա հոգիով սկսե֊
4 ցիք , ժբ ու հիմա մարմնո՞վ կը վերջանաք ։ ժգ Այն֊
չափ դիպուածները պարա՞պ տեղը ձեր վրայէն

ա Հռովմ . ը . 2 ։
բ Հռովմ . զ . 14 ։ է . 4 , 6 ։
գ Հռովմ . զ . 11 ։ բ Կոր . ե . 15 ։ ա Թես . ե . 10 ։ Եբր . թ . 14 ։ ա Պետ . դ . 2 ։
դ Հռովմ . զ . 6 ։ Գղ . ե . 24 ։ զ . 14 ։
ե բ Կոր . ե . 15 ։ ա Թես . ե . 10 ։ ա Պետ . դ . 2 ։
զ Գղ . ա . 4 ։ Եփե . ե . 2 ։ Տիտ . բ . 14 ։
է Գղ . գ . 21 ։ Եբր . է . 11 ։ Տես Հռովմ . ժա . 6 ։ Գղ . ե . 4 ։
ը Գղ . ե . 7 ։
* Ոմանք կ'աւելցընեն ճշմարտութեանը չհնազանդելու .
թ Գոր . բ . 38 ։ ը . 15 ։ ժ . 47 ։ ժե . 8 ։ Հմր 14 ։ Եփե . ա . 13 ։ Եբր . գ . 4 ։
ժ Հռովմ . ժ . 16 , 17 ։
ժա Գղ . դ . 9 ։
ժբ Եբր . է . 16 ։ թ . 10 ։
ժգ Եբր . ժ . 35 , 36 ։ բ Յովհ . 8 ։

5 անցան , (թէ որ պարապ ըլլայ աւ ։) ժդ Ուստի
ան որ ձեզի Հոգին բաշխեց , և ձեր մէջը զօրու֊
թիւններ գործեց , օրէնքի՞ն գործքերովն էր՝ թէ
6 հաւատքին լսելովը ։ ժե Ինչպէս որ Աբրահամ Աս֊
տուծոյ հաւատաց , ու անոր արդարութիւն սե֊
7 պուեցաւ ։ Ուրեմն գիտցէք թէ ժզ անոնք որ հա֊
8 ւատքէն են , անոնք են Աբրահամին որդիքը ։ ժէ Եւ
գիրքը առաջուց գիտնալով թէ Աստուած հեթա֊
նոսները հաւատքով կ'արդարացընէ , առաջուց
աւետիս տուաւ Աբրահամին թէ ժը Քեզմով պիտի
9 օրհնուին բոլոր ազգերը ։ Ուստի անոնք որ հաւատ֊
քէն են՝ կ'օրհնուին հաւատացեալ Աբրահամին հետ ։
10 Վասն զի անոնք որ օրէնքին գործքերէն են , անէծ֊
քի տակ են . ինչու որ գրուած է թէ ժթ Նզովեալ
ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը ամէն գրուած֊
11 ներուն մէջ չկենար՝ որ զանոնք կատարէ ։ ի Եւ
թէ օրէնքով մէկը չըլլար արդարանալ Աստուծոյ
առջևը , ան յայտնի է . քանզի իա Արդարը հաւատ֊
12 քէն պիտի ապրի ։ իբ Բայց օրէնքը հաւատքէն չէ ,
հապա իգ Ան որ կը կատարէ ան բաները՝ անոնցմով
13 պիտի ապրի ։ իդ Քրիստոս մեզ ծախու առաւ
օրէնքին անէծքէն՝ ինքը մեզի համար անէծք ըլլա֊
լով . (ինչու որ գրուած է թէ իե Նզովեալ է ան
14 ամէնը՝ որ փայտէ կը կախուի .) իզ Որ Աբրահամին
օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս

ժդ բ Կոր . գ . 8 ։
ժե Ծն . ժե . 6 ։ Հռովմ . դ . 3 , 9 , 21 , 22 ։ Յակ . բ . 23 ։
ժզ Յովհ . ը . 39 ։ Հռովմ . դ . 11 , 12 , 16 ։
ժէ Տես Հռովմ . թ . 17 ։ Հմր 22 ։
ժը Ծն . ժբ . 3 ։ ժը . 18 ։ իբ . 18 ։ Գործ . գ . 25 ։
ժթ բ Օր . իէ . 26 ։ Երեմ . ժա . 3 ։
ի Գղ . բ . 16 ։
իա Ամբ . բ . 4 ։ Հռովմ . ա . 17 ։ Եբր . ժ . 38 ։
իբ Հռովմ . դ . 4 , 5 ։ ժ . 5 , 6 ։ ժա . 6 ։
իգ Ղև . ժը . 5 ։ Նեեմ . թ . 29 ։ Եզեկ . ի . 11 ։ Հռովմ . ժ . 5 ։
իդ Հռովմ . ը . 3 ։ բ Կոր . ե . 21 ։ Գղ . դ . 5 ։
իե բ Օր . իա . 23 ։
իզ Հռովմ . դ . 9 , 16 ։

Յիսուսով . ի որ մենք ալ Հոգւոյն խոստումը
15 առնենք հաւատքով : Մարդու սովորութեան պէս
կը զրուցեմ՝ եղբայրներ . ժ իրաւ որ մարդու մը
հաստատած կտակը մէկը չխափաներ , ոչ ալ
16 անոր վրայ ուրիշ պատուէր մը կ'աւելցնէ : Արդ
խոստումները Աբրահամին ու անոր սերունդին
եղան . չըսեր , Եւ սերունդներուդ՝ որպէս թէ
շատերու համար , հապա որպէս թէ մէկու մը հա-
մար , Եւ քու սերունդիդ , որ այն Քրիստոսն է :
17 Բայց աս կը զրուցեմ . այն կտակը՝ որ առաջուց
Աստուծմէ հաստատուեցաւ Քրիստոսով , օրէնքը
չորս հարիւր երեսուն տարիէն ետեւ որ դրուեցաւ ,
չկրնար անվաւեր ընել խոստումը խափանելու
18 համար : Վասն զի թէ որ ժառանգութիւնը օրէն-
քէն կ'ըլլայ , ուրեմն ալ խոստումնքէն չէ . բայց
Աբրահամին խոստումով շնորհեց Աստուած :
19 Հապա ինչու համար է օրէնքը . յանցանաց
համար վրայ աւելցաւ , (մինչեւ որ գայ այն սե-
րունդը՝ որուն որ խոստացուեր էր ,) հրեշտակնե-
20 րով տրուած՝ միջնորդի մը ձեռքով : Բայց
միջնորդը մէկու մը միջնորդ չէ . բայց Աս-
21 տուած մէկ է : Ուրեմն օրէնքը հակառակ բան մը
է Աստուծոյ խոստումներուն . քաւ լիցի . քան-
զի թէ որ տրուած ըլլար անանկ օրէնք մը՝ որ կա-
րող ըլլար կենդանի ընելու , այն ատենը իրաւցընէ

Ես . ԽԲ . 15 ; Խդ . 3 ; Երեմ . ԼԱ . 33 ; ԼԲ . 40 ; Եզեկ . ԺԱ . 19 ; ԼԶ . 27 ; Յովել . Բ . 28 , 29 ; Զաք . ԺԲ . 10 ; Յոհ . Է . 39 ; Գոր . Բ . 33 ;
Եբր . Թ . 17 ;
Ծն . ԺԲ . 3 , 7 ; ԺԷ . 7 ; Հմր 8 ;
ա Կոր . ԺԲ . 12 ;
Ել . ԺԲ . 40 , 41 ;
Հռովմ . Դ . 13 , 14 ; Հմր 21 ;
Հռովմ . Ը . 17 ;
Հռովմ . Դ . 14 ;
Յոհ . ԺԵ . 22 ; Հռովմ . Դ . 15 ; Ե . 20 ; Է . 8 , 13 ; ա Տիմ . Ա . 9 ;
Հմր 18 ;
Գոր . Է . 53 ; Եբր . Բ . 2 ;
Ել . Ի . 19 , 21 , 22 ; Բ Օր . Ե . 5 , 22 , 23 , 27 , 31 ; Յոհ . Ա . 17 ; Գոր . Է . 38 ; ա Տիմ . Բ . 5 ;
Հռովմ . Դ . 29 , 30 ;
Գղ . Բ . 21 ;

22 արդարութիւնը օրէնքէն կ'ըլլար : Բայց գիրքը
ամէնը մեղքի տակ գոցեց , որ խոստումը Յի-
սուս Քրիստոսի հաւատքովը տրուի հաւատա-
23 ցեալներուն : Բայց քանի որ հաւատքը չէր եկած ,
օրէնքին տակը գոցուած կը պահուէինք , սպասելով
24 այն հաւատքին՝ որ պիտի յայտնուէր : Ուրեմն
օրէնքը մեր դաստիարակը եղաւ՝ մինչեւ Քրիստոսի
[illegible] , որ մենք հաւատքով արդարանանք :
25 Բայց երբոր հաւատքը եկաւ , ալ դաստիարակի
26 տակ չենք : Ինչու որ ամէնքդ ալ Աստուծոյ
որդիք էք՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատ-
27 քով : Քանզի դուք ամէնքդ որ Քրիստոսով
մկրտուեցաք , Քրիստոսը վրանիդ հագած էք .
28 Այսուհետեւ ոչ Հրեայ կայ , ոչ ալ Յոյն . ոչ
ծառայ կայ , ոչ ալ ազատ . ոչ արու կայ , ոչ
ալ էգ . Ինչու որ դուք ամէնքդ ալ մէկ էք Քրի-
29 ստոս Յիսուսով : Հապա թէ որ դուք
Քրիստոսինն էք , ուրեմն Աբրահամին սերունդն
էք , ու խոստումին նայելով՝ ժառանգներ :

Հմր 8 ;
Հռովմ . Գ . 9 , 19 , 23 ; ԺԱ . 32 ;
Հռովմ . Գ . 11 , 12 , 16 ;
Մատ . Ե . 17 ; Հռովմ . Ժ . 4 ; Կող . Բ . 17 ; Եբր . Թ . 9 , 10 ;
Գոր . ԺԳ . 39 ; Գղ . Բ . 16 ;
Յոհ . Ա . 12 ; Հռովմ . Ը . 14 , 15 , 16 ; Գղ . Դ . 5 ; ա Յոհ . Գ . 1 , 2 ;
Հռովմ . Զ . 3 ;
Հռովմ . ԺԴ . 14 ;
Հռովմ . Ժ . 12 ; ա Կոր . ԺԲ . 13 ; Գղ . Ե . 6 ; Կող . Գ . 11 ;
Յոհ . Ժ . 16 ; ԺԷ . 20 , 21 ; Եփե ; Բ . 14 , 15 , 16 ; Դ . 4 , 15 ;
Ծն . ԽԱ . 10 , 12 ; Հռովմ . Թ . 7 ; Եբր . ԺԱ . 18 ;
Հռովմ . Ը . 17 ; Գղ . Դ . 7 , 28 ; Եփե . Գ . 6 ;

ԳԼ . Դ

1 Առաքեալը կը ծանուցանէ թէ մենք օրէնքին տակն էինք մինչեւ Քրիստոսի աշխարհ գալը , ճիշդ ինչպէս որ ժառանգը խնամակալներու տակ է մինչեւ իր չափահաս ըլլալը . 5 բայց Քրիստոս մեզ ազատեց օրէնքէն . 7 ուստի ալ այսուհետեւ օրէնքին ծառաները չենք ; 14 Կը յիշեցընէ անոնց սէրը իր վրայ , ու իրենը անոնց վրայ , 22 և կը ցուցընէ թէ մենք Աբրահամու որդիքն ենք ազատ կնիկէն ծնած ;

1 Բայց կը զրուցեմ, որչափ ժամանակ որ ժա-
ռանգը տղայ է՝ ծառայէն տարբերութիւն մը
2 չունի, թէեւ ամենուն տէրն է. Հապա խնա-
մակալներու ու հոգաբարձուներու տակ է՝ մինչեւ
3 հօրը որոշած ժամանակը: Անանկ ալ մենք եր-
բոր տղայ էինք, ա աշխարհիս սկզբունքներուն
4 տակը ծառայ եղած էինք: բ Բայց երբոր ժա-
մանակը լեցուեցաւ, ղրկեց Աստուած իր Որ-
դին՝ գ որ կնիկէ մը դ եղաւ, ե օրէնքի տակ
5 մտաւ. զ Որպէս զի օրէնքի տակ եղողները փըր-
կէ, է որ մենք որդեգրութիւնը ընդունինք:
6 Եւ որովհետեւ դուք որդիք էք, ը Աստուած իր
Որդիին Հոգին *ձեր սիրտերուն մէջը ղրկեց, որ
7 կ'աղաղակէ Աբբա՛ Հայր: Ուստի ալ ծառայ չես,
հապա որդի. թ Եւ թէ որ որդի, ալ Աստուծոյ
8 ժառանգը Քրիստոսով: ժ Բայց ան ատենը որ
չէիք գիտեր զԱստուած, ի կը ծառայէիք անոնց՝
9 որոնք 'ի բնէ աստուածներ չէին: լ Սակայն հիմա
որ ճանչցաք զԱստուած՝ մանաւանդ որ դուք Աս-
տուծմէ ճանչցուեցաք, խ ինչո՞ւ նորէն կը դառնաք
ծ ան տկար ու չքաւոր սկզբունքներուն, որոնց նո-
10 րէն կ'ուզէք ծառայութիւն ընել: կ Օրերը կը

ա Հռ. 9: Գղ. գ. 23: ե. 1: Կող. բ. 8, 20: Եբր. թ. 10:
բ Ծն. խթ. 10: Դան. թ. 24: Մար. ա. 15: Եփե. ա. 10:
գ Ծն. գ. 15: Եսա. է. 14: Միք. ե. 3: Մատ. ա. 23: Ղու. ա. 31: բ. 7:
դ Յօհ. ա. 14: Հռով. ա. 3: Փիլ. բ. 7: Եբր. բ. 14:
ե Մատ. ե. 17: Ղու. բ. 27:
զ Մատ. ի. 28: Գղ. գ. 13: Տիտ. բ. 14: Եբր. թ. 12: Եփե. ա. 7: ա Պետ. ա. 18, 19:
է Յօհ. ա. 12: Գղ. գ. 26: Եփե. ա. 5:
ը Հռով. ե. 5: ը. 15:
* Ոմանք՝ մեր
թ Հռով. ը. 16, 17: Գղ. գ. 3, 29:
ժ Եփե. բ. 12: ա Թես. դ. 5:
ի Հռով. ա. 25: ա Կոր. ժբ. 2: Եփե. բ. 11, 12: ա Թես. ա. 9:
լ ա Կոր. ը. 3: ժգ. 12: բ Տիմ. բ. 19:
խ Գղ. գ. 3: Կող. բ. 20:
ծ Հռով. ը. 3: Եբր. է. 18:
կ Հռով. ժդ. 5: Կող. բ. 16:

զանազանէք, ու ամիսները եւ ժամանակները ու
11 տարիները: Կը վախնամ ձեզմէ, հ որ զուցէ պա-
րապ տեղը ձեր վրայ աշխատած ըլլամ:
12 Ինծի պէս եղէք, ինչու որ ես ալ ձեզի պէս եղայ.
Եղբայրներ, ձեզի կ'աղաչեմ. ձ Դուք ինծի վնաս մը
13 հասուցած չէք: Գիտէք դուք ղ որ մարմնոյս տկա-
րութեամբը ձեզի ճ առջի անգամ աւետարանը քա-
րոզեցի. Եւ իմ մարմնիս վրայ կրած փորձութիւնս
14 Զանարգեցիք ու չարհամարհեցիք. մ հապա Աս-
տուծոյ հրեշտակի մը պէս զիս ընդունեցիք՝ յ Քրիս-
15 տոս Յիսուսի պէս: Ուրեմն ի՞նչ էր ան ձեր երանու-
թիւնը. քանզի ես կը վկայեմ ձեզի, որ եթէ կա-
րելի էր՝ ձեր աչքերը պիտի հանէիք ու ինծի տա-
16 յիք: Ուստի ձեր թշնամի՞ն եղայ ն ձեզի ճշմարիտը
17 խօսելուս համար: շ Ձեզի նախանձաւոր են ա-
նոնք՝ չէ թէ բարիին, և կուզեն *ձեզ արգիլել,
18 որ իրենց նախանձաւոր ըլլաք: Սակայն աղէկ է
ամէն ատեն բարիին նախանձաւոր ըլլալ, ու չէ
19 թէ միայն երբոր ձեր մէջը ըլլամ: ո Իմ որդեակ-
ներս, որ ձեզմով նորէն ծննդական ցաւ կը քաշեմ,
20 մինչեւ որ Քրիստոս ձեր մէջը ձեւակերպի: Կ'ուզէի
հիմա ձեր մէջը ներկայ ըլլալ, ու փոխել իմ ձայնս.
ինչու որ ես ձեր վրայով տարակուսած եմ:
21 Ըսէք ինծի, դուք որ օրէնքին տակը կ'ուզէք
22 ըլլա՛լ, օրէնքը չէ՞ք լսեր: Վասն զի գրուած է
թէ Աբրահամ երկու որդի ունէր, չ մէկը՝ աղա-
23 խինէն, պ ու միւսը՝ ազատ կնիկէն: Բայց ան որ

հ Գղ. բ. 2: ե. 2, 4: ա Թես. գ. 5:
ձ բ Կոր. բ. 5:
ղ ա Կոր. բ. 3: բ Կոր. ժա. 30: ժբ. 7, 9:
ճ Գղ. ա. 6:
մ բ Թագ. ժթ. 27: Մաղ. բ. 7: Տես Զաք. ժբ. 8:
յ Մատ. ժ. 40: Ղու. ժ. 16: Յօհ. ժգ. 20: ա Թես. բ. 13:
ն Գղ. բ. 5, 14:
շ Հռով. ժ. 2:
* Ոմանք՝ մեզ
ո ա Կոր. դ. 15: Փիլեմ. 10: Յակ. ա. 18:
չ Ծն. ժզ. 15:
պ Ծն. իա. 2:

աղախինէն էր՝ Ֆ մարմնոյ կողմանէ ծնած էր , — իսկ
24 ան որ ազատ կնիկէն՝ խոստմունքին համեմատ . Աս
աս բաները այլաբանօրէն կը մեկնուին . ինչու որ
ասոնք են երկու կտակարանները , մէկը ~ Սինայ
լեռնէն՝ որ ծառայութեան համար կը ծնանի , որ է
25 Հագար . Ինչու որ Հագար Արաբիայի մէջ
Սինայ լեռն է , և կը համեմատի հիմակուան Երու-
սաղէմին՝ որ իր զաւակներովը մէկտեղ կը ծա-
26 ռայէ : ⅃ Բայց վերի Երուսաղէմը ազատ է , որ
27 մեր * ամենուն մայրն է : Ինչու որ գրուած է ,
⊤ Ո՛վ չծնանող ամուլ՝ ցնծա . ո՛վ ծննդական ցաւ
չքաշող՝ գոչէ և աղաղակէ . քանզի երեսէ ձգուա-
ծին տղաքները երիկ ունեցողին տղաքներէն շատ պի-
28 տի ըլլայ : Ուստի մենք՝ ո՛վ եղբայրներ՝ ⁝ Իսահակին
29 պէս խոստմունքին որդիներն ենք : ↄ Բայց ինչպէս
որ ան ատենը մարմնոյ կողմանէ ծնածը կը հալա-
ծէր զանիկայ որ Հոգիին կողմանէ էր , — անանկ ալ
30 հիմա : ÷ Սակայն գիրքը ի՞նչ կ'ըսէ . + Դո՛ւրս
հանէ աս աղախինը ու անոր որդին , • ինչու որ
աղախինին որդին ազատ կնկանը որդւոյն հետ ժա-
31 ռանգութիւն պիտի չառնէ : Ուստի՝ ո՛վ եղբայրներ՝
մենք աղախինին զաւակները չենք , ‡ հապա ազա-
տին :

Ֆ Հռովմ. Թ. 7, 8 ;
— Ծն. ԺԸ. 10, 14 ; ԻԱ. 1, 2 ; Եբր. ԺԱ. 11 ;
~ Բ Օր. ԼԳ. 2 ;
⅃ Ես. Բ. 2 ; Եբր. ԺԲ. 22 ; Յայտ. Գ. 12 ; ԻԱ. 2, 10 ;
* Ոմանք չունին ;
⊤ Ես. ԾԴ. 1 ;
⁝ Գոր. Գ. 25 ; Հռովմ. Թ. 8 ; Գղ. Գ. 29 ;
ↄ Ծն. ԻԱ. 9 ;
— Գղ. Ե. 11 ; Զ. 12 ;
÷ Գղ. Գ. 8, 22 ;
+ Ծն. ԻԱ. 10, 12 ;
• Յօհ. Ը. 35 ;
‡ Յօհ. Ը. 36 ; Գղ. Ե. 1, 13 ;

ԳԼ. Ե

1 Կը յորդորէ զանոնք հաստատ կենալ իրենց ազատութեանը մէջ , 3 և թլփատութիւնը չպահել , 13 այլ մանաւանդ իրարու վրայ սէր ունենալ , որ օրէնքին բովանդակութիւնն է . 19 կը համրէ մարմնին գործքերը , 22 և Հոգիին պտուղները . 25 ու կը յորդորէ Գաղատացիները որ Հոգիով քալեն :

1 Ուստի ամուր կեցէք Ա ան ազատութիւնովը՝ որով
Քրիստոս մեզ ազատեց , Բ և նորէն ծառայու-
2 թեան լուծի տակ մի՛ մտնէք : Ահա ես Պօղոս կը
գրուցեմ ձեզի Գ որ եթէ թլփատուիք , Քրիստոս
3 ձեզի օգուտ մը չըներ : Նաև դարձեալ ամէն թլփա-
տուող մարդու կը վկայեմ թէ Դ պարտական է
4 բոլոր օրէնքը կատարելու : Ե Խափանած էք դուք
Քրիստոսէն , որ օրէնքով արդարանալ կ'ուզէք ,
5 Զ շնորհքէն ինկած էք : Է Ինչու որ մենք Հո-
գիով կը սպասենք արդարութեան յոյսին՝ հաւատ-
6 քովը : Ը Վասն զի Քրիստոս Յիսուսի քով ո՛չ
թլփատութիւնը բանի մը կարող է , ո՛չ ալ անթլ-
փատութիւնը , Թ հապա հաւատքը՝ որ սիրով 'ի գործ
7 կը դրուի : Ժ Դուք աղէկ կը վազէիք . Ի ո՞վ ձեզ
ետ կեցուց՝ որ ճշմարտութեան չհնազանդիք :
8 Աս դրդումը անկէ չէ Լ որ ձեզ կանչեց :
9 Խ Քիչ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ :
10 Ծ Բայց ես յոյս ունիմ ձեր վրայ Տէրոջմով , որ
ուրիշ կերպ բան մը պիտի չխորհիք . Կ և ան
որ ձեզ կը խռովեցնէ , Հ դատապարտութիւն
11 պիտի կրէ՝ ո՛վ որ ըլլայ : Ձ Սակայն եղբայրներ՝
թէ որ ես տակաւին թլփատութիւն կը քա-
րոզեմ , Ղ ալ ինչո՞ւ կը հալածուիմ . Ճ ուրեմն
12 խաչին գայթակղութիւնը խափանուած է : Մ Ե-

Ա Յօհ. Ը. 32 ; Հռովմ. Զ. 18 ; Ա Պետ. Բ. 16 ;
Բ Գոր. ԺԵ. 10 ; Գղ. Բ. 4 ; Դ. 9 ;
Գ Գոր. ԺԵ. 1 ; Տե՛ս Գոր. ԺԶ. 3 ;
Դ Գղ. Գ. 10 ;
Ե Հռովմ. Թ. 31, 32 ; Գղ. Բ. 21 ;
Զ Եբր. ԺԲ. 15 ;
Է Հռովմ. Ը. 24, 25 ; Բ Տիմ. Դ. 8 ;
Ը Ա Կոր. Է. 19 ; Գղ. Գ. 28 ; Զ. 15 ; Կող. Գ. 11 ;
Թ Ա Թես. Ա. 3 ; Յակ. Բ. 18, 20, 22 ;
Ժ Ա Կոր. Թ. 24 ;
Ի Գղ. Գ. 1 ;
Լ Գղ. Ա. 6 ;
Խ Ա Կոր. Ե. 6 ; ԺԵ. 33 ;
Ծ Բ Կոր. Բ. 3 ; Ը. 22 ;
Կ Գղ. Ա. 7 ;
Հ Կոր. Ժ. 6 ;
Ձ Գղ. Զ. 12 ;
Ղ Ա Կոր. ԺԵ. 30 ; Գղ. Դ. 29 ; Զ. 17 ;
Ճ Ա Կոր. Ա. 23 ;
Մ Յես. Է. 25 ; Ա Կոր. Ե. 13 ; Գղ. Ա. 8, 9 ;

րանի՛ թէ բոլորովին կտրուէին անոնք յ որ ձեզ կը
խռովեցընեն ։
13 Վասն զի դուք ազատութեան կանչուած էք՝
եղբայրներ . ն միայն թէ չէ ազատութիւնը մարմ-
նոյ ցանկութիւններուն պատճառ չըլլայ , շ հապա
14 սիրով իրարու ծառայութիւն ըրէք ։ ո Ինչու որ
բոլոր օրէնքը աս մէկ խօսքին մէջ կը կատարուի
15 թէ ՝ չ Դրացիդ սիրես քու անձիդ պէս ։ Հա-
պա թէ որ իրար խածնէք և ուտէք , զգոյշ կե-
16 ցէք որ չըլլայ թէ իրարմէ սպառիք ։ Միայն թէ
աս կը զրուցեմ . պ Հոգիով գացէք , ու մար-
17 մինին ցանկութիւնը պիտի չկատարէք ։ ջ Ինչու
որ մարմինը կը ցանկայ Հոգիին հակառակ , ու
Հոգին մարմինին հակառակ . և ասոնք իրարու հա-
կառակ են , որ ռ չըլլայ թէ ինչ որ կ'ուզէք՝ ան
18 ընէք ։ ս Բայց թէ որ Հոգիէն կ'առաջնորդուիք ,
19 ալ օրէնքին տակը չէք ։ վ Մարմինին գործ-
քերը յայտնի են , որ ասոնք են . շնութիւն , պոռ-
20 նկութիւն , պղծութիւն , գիճութիւն , Կռապաշ-
տութիւն , կախարդութիւն , թշնամութիւններ ,
կռիւներ , նախանձներ , բարկութիւններ , հակառա-
կութիւններ , երկպառակութիւններ , բաժանում-
21 ներ , Չար նայուածքներ , մարդասպանութիւններ ,
գինովութիւններ , անառակութիւններ , ու ինչ որ
ասոնց նման են . որ հիմակուց ևս ձեզի կը զրու-
ցեմ , ինչպէս առաջուց ալ կը զրուցէի , տ որ
ասանկ բաներ գործողները Աստուծոյ արքայու-

յ Գործ . ժե . 1 , 2 , 24 ։
ն ա Կոր . ը . 9 ։ ա Պետ . բ . 16 ։ բ Պետ . բ . 19 ։ Յուդ . 4 ։
շ ա Կոր . թ . 19 ։ Գղ . զ . 2 ։
ո Մատ . է . 12 ։ իբ . 40 ։ Յակ . բ . 8 ։
չ Ղև . ժթ . 18 ։ Մատ . իբ . 23 ։ Հռովմ . ժգ . 8 , 9 ։
պ Հռովմ . զ . 12 ։ ը . 1 , 4 , 12 ։ ժգ . 14 ։ Հմր 25 ։ ա Պետ . բ . 11 ։
ջ Հռովմ . է . 23 ։ ը . 6 , 7 ։
ռ Հռովմ . է . 15 , 19 ։
ս Հռովմ . զ . 14 ։ ը . 2 ։
վ ա Կոր . գ . 3 ։ Եփե . ե . 3 ։ Կող . գ . 5 ։ Յակ . գ . 14 , 15 ։
տ ա Կոր . զ . 9 ։ Եփե . ե . 5 ։ Կող . գ . 6 ։ Յայտ . իբ . 15 ։

22 թիւնը պիտի չժառանգեն ։ ր Բայց Հոգիին
պտուղը աս է . սէր , խնդութիւն , խաղաղու-
23 թիւն , երկայնմտութիւն , ց Քաղցրութիւն ,
ւ բարութիւն , փ հաւատարմութիւն , հեզութիւն ,
ժուժկալութիւն . ք ասանկ բաներուն դէմ օրէնք
24 չկայ ։ Իսկ անոնք որ Քրիստոսինն են՝ օ իրենց
մարմինը խաչ հանեցին բնական կիրքերով ու ցան-
25 կութիւններով մէկտեղ ։ ֆ Թէ որ Հոգիով
26 կ'ապրինք , Հոգիին համեմատ քալենք ։ − Անպ-
արծ չըլլանք մէկզմէկ գրգռելով , ու իրարու
վրայ նախանձելով ։

ԳԼ . Զ.

1 Պօղոս կը յորդորէ Գաղատացիները որ հեզութեամբ վարուին յանցանքի մէջ գտնուող եղբայրներուն հետ , 2 և իրարու բեռերը վերցընեն . 6 առատաձեռն ըլլան դէպ 'ի իրենց 'վարդապետներուն , 9 և բարի գործելէն ետ չկենան . 12 կը ցուցընէ թէ թլփատութիւն քարոզողներուն միտքը ինչ է . 14 թէ ինքը ուրիշ բանով չպարծենար , բայց միայն Քրիստոսի խաչովը ։

1 Եղբայրներ՝ ա թէ որ մէկը յանկարծ ինչ և իցէ
յանցանքով բռնուելու ըլլայ , բ դուք որ հոգևոր
էք՝ գ անանկը հեզութեան հոգիով ուղղութեան
բերէք . քու անձիդ ալ զգուշութիւն ըրէ դ որ
2 չըլլայ թէ փորձութեան մէջ իյնաս ։ ե Իրարու
նեղութիւնները կրեցէք , զ ու անանկ Քրիստոսի
3 օրէնքը կատարեցէք ։ է Քանզի թէ որ մէկը ինք-
զինքը բան մը ըլլալ կը սեպէ ը ու չէ , անիկա իր

ր Յոհ . ժե . 2 ։ Եփե . ե . 9 ։
ց Կող . գ . 12 ։ Յակ . գ . 17 ։
ւ Հռովմ . ժե . 14 ։
փ ա Կոր . ժգ . 7 ։
ք ա Տիմ . ա . 9 ։
օ Հռովմ . զ . 6 ։ ժգ . 14 ։ Գղ . բ . 19 ։ ա Պետ . բ . 11 ։
ֆ Հռովմ . ը . 4 , 5 ։ Հմր 16 ։
− Փիլ . բ . 3 ։
ա Հռովմ . ժդ . 1 ։ ժե . 1 ։ Եբր . ժբ . 13 ։ Յակ . ե . 19 ։
բ ա Կոր . բ . 15 ։ գ . 1 ։
գ ա Կոր . դ . 21 ։ բ Թես . գ . 15 ։ բ Տիմ . բ . 25 ։
դ ա Կոր . է . 5 ։ ժ . 12 ։
ե Հռովմ . ժե . 1 ։ Գղ . ե . 13 ։ ա Թես . ե . 14 ։
զ Յոհ . ժգ . 14 , 15 , 34 ։ ժե . 12 ։ Յակ . բ . 8 ։ ա Յոհ . դ . 21 ։
է Հռովմ . ժբ . 3 ։ ա Կոր . ը . 2 ։ Գղ . բ . 6 ։
ը բ Կոր . գ . 5 ։ ժբ . 11 ։

4 անձը կը խաբէ ։ [թ] Բայց ամէն մարդ իր գործը
թող կշռէ , ու նոյնը միայն իր՝ անձին վրայ պար-
5 ծանք ունենայ , [ժ] և ոչ թէ ուրիշին վրայ ։ [ի] Ինչու
որ ամէն մէկը իր բեռը պիտի կրէ ։
6 [լ] Խօսքին աշակերտութիւն ընողը իր վարժա-
7 պետը ամէն բարի բաներու մասնակից ընէ ։ [խ] Մի՛
8 խաբուիք՝ [ծ] Աստուած ծաղր չըլլար ։ [կ] Վասն զի
ինչ որ մէկ մարդ մը կը սերմանէ՝ նոյնը պիտի
հնձէ . [հ] ան որ իր մարմնին կը սերմանէ՝ ան մար-
մինէն ապականութիւն պիտի հնձէ . ու ան որ
Հոգիին կը սերմանէ , ան Հոգիէն յաւիտենական
9 կեանք պիտի հնձէ ։ [ձ] Բայց բարի գործելէն չձանձ-
րանանք , [ղ] քանզի յարմար ժամանակին պիտի հնձենք՝
10 թէ որ չթուլնանք ։ [ճ] Ուստի քանի որ ժամանա-
կը ձեռքերնիս է , [մ] բարիք ընենք ամենուն՝ [յ] մա-
նաւանդ հաւատքին ընտանիներուն ։
11 Նայեցէ՛ք՝ ինչպէս գիրերով գրեցի ձեզի իմ ձեռ-
12 քովս ։ Անոնք որ կ՚ուզեն մարմնոյ կողմանէ բարի
երեւնալ , [ն] անոնք ձեզ կը ստիպեն որ թլփա-
տուիք , [շ] միայն որ [ո] Քրիստոսի խաչին համար
13 չհալածուին ։ Քանզի անոնք ալ որ թլփատուած
են , իրենք օրէնքը չեն պահեր , հապա կ՚ուզեն որ
դուք թլփատուիք , որ իրենք ձեր մարմնովը պար-
14 ծենան ։ [չ] Բայց ես՝ քաւ լիցի որ պարծենամ ,

[թ] Ա Կոր. ժա. 28 ։ Բ Կոր. ժգ. 5 ։
[ժ] Տես Ղու. ժը. 11 ։
[ի] Հռովմ. բ. 6 ։ Ա Կոր. գ. 8 ։
[լ] Հռովմ. ժե. 27 ։ Ա Կոր. թ. 11, 14 ։
[խ] Ա Կոր. զ. 9 ։ ժե. 33 ։
[ծ] Յոբ. ժգ. 9 ։
[կ] Ղու. ժզ. 25 ։ Հռովմ. բ. 6 ։ Բ Կոր. թ. 6 ։
[հ] Յոբ. դ. 8 ։ Առակ. ժա. 18 ։ Իր. 8 ։ Ովս. ը. 7 ։ ժ. 12 ։ Հռովմ. ը. 13 ։ Յակ. գ. 18 ։
[ձ] Բ Թես. գ. 13 ։ Ա Կոր. ժե. 58 ։
[ղ] Մատ. իդ. 13 ։ Եբր. գ. 6, 14 ։ ժ. 36 ։ ժբ. 3, 5 ։ Յայտ. բ. 10 ։
[ճ] Յոհ. թ. 4 ։ ժբ. 35 ։
[մ] Ա Թես. ե. 15 ։ Ա Տիմ. զ. 18 ։ Տիտ. գ. 8 ։
[յ] Եփե. բ. 19 ։ Եբր. գ. 6 ։
[ն] Գղ. բ. 3, 14 ։
[շ] Փիլ. գ. 18 ։
[ո] Գղ. ե. 11 ։
[չ] Փիլ. գ. 3, 7, 8 ։

հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խա-
չովը , [պ] որ անով աշխարհ ինծի խաչը ելած է ,
15 ես ալ աշխարհի ։ [ջ] Ինչու որ Քրիստոս Յիսու-
սով ո՛չ թլփատութիւնը բան մըն է , ոչ ալ
անթլփատութիւնը . [ռ] հապա նոր ստեղծուած ըլ-
16 լալն է բանը ։ [ս] Ու ան ամէնը [վ] որ աս կանոնիս
համեմատ կը քալեն , խաղաղութիւն ու ողորմու-
թիւն ըլլայ անոնց վրայ , [տ] ու Աստուծոյ Իսրայէ-
17 լին վրայ ։ Ասկէ ետև մէկը զիս թող չյոգնե-
ցընէ . [ր] ինչու որ ես Տէր Յիսուսին վէրքի նշան-
18 ները իմ մարմնոյս վրայ կը կրեմ ։ Եղբայրնե՛ր՝
[ց] մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին
հետը ըլլայ ։ Ամէն ։

[պ] Հռովմ. զ. 6 ։ Գղ. բ. 19 ։
[ջ] Ա Կոր. է. 19 ։ Գղ. ե. 6 ։ Կող. գ. 11 ։
[ռ] Բ Կոր. ե. 17 ։
[ս] Սաղ. ճիե. 5 ։
[վ] Փիլ. գ. 16 ։
[տ] Հռովմ. բ. 29 ։ դ. 12 ։ թ. 6, 7, 8 ։ Գղ. գ. 7, 9, 29 ։ Փիլ. գ. 3 ։
[ր] Բ Կոր. ա. 5 ։ դ. 10 ։ ժա. 23 ։ Գղ. ե. 11 ։ Կող. ա. 24 ։
[ց] Բ Տիմ. դ. 22 ։ Փիլիմ. 25 ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաքեալը Եփեսացիները բարեւելէն՝ 3 և անոնց համար գոհութիւն տալէն ետև , 4 կը խօսի շնորհքով եղած մեր ընտրութեանը 6 և որդեգրութեանը վրայ , 11 որ ան է մարդկային փրկութեան ճշմարիտ աղբիւրը . 13 և որովհետև աս խորհուրդիս գերազանցութիւնը դիւրաւ չհասկցուիր , 16 աղօթք կ՚ընէ որ անոնք 18 կատարելապէս հասկընան , 20 և ունենան զանիկայ Քրիստոսով ։

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը ա Աստուծոյ
կամքովը , բ Եփեսոսի մէջ եղած սուրբերուն՝
2 գ և Քրիստոս Յիսուսի հաւատացեալներուն . դ Շը-
նորհք և խաղաղութիւն ձեզի՝ Աստուծմէ մեր Հօր-
մէն ու Տէր Յիսուս Քրիստոսէն ։
3 ե Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս
Քրիստոսի Հայրը , ան որ մեզ օրհնեց ամէն հո-
գևոր օրհնութիւններով երկնաւորներուն մէջ Քը-
4 րիստոսով . զ Ինչպէս որ մեզ անով աշխարհիս
սկիզբէն առաջ է ընտրեց , ը որ մենք սուրբ ու ան-
5 արատ ըլլանք իր առջևը սիրով . Եւ թ առաջուց
մեզ սահմանեց ժ իրեն որդեգիր ըլլալու Յիսուս
Քրիստոսի ձեռքովը ի իր կամքին հաճութեանը
6 պէս , Իր փառաւոր շնորհացը գովութեանը հա-
մար , լ որով մեզ զարդարեց խ Սիրելիին ձեռքովը .
7 ծ Որ անով փրկութիւն ունինք մենք իր արեանը
միջոցով , մեղաց թողութիւնը՝ կ իր շնորհքին ճո-
8 խութեանը չափովը . Որ մեր վրայ աւելցուց բոլոր
9 իմաստութեամբ ու գիտութեամբ , հ Մեզի յայտ-
նելով իր կամքին խորհուրդը իր հաճութեանը
պէս , ձ որն որ նախասահմաներ էր իր մէջը .
10 ղ Որ ժամանակաց լրմանլուն տնտեսութեանը մէջ

ա բ Կոր. ա. 1։
բ Հռով. ա. 7։ բ Կոր. ա. 1։
գ Կող. ա. 2։
դ Գաղ. ա. 3։ Տիտ. ա. 4։
ե բ Կոր. ա. 3։ ա Պետ. ա. 3։
զ ա Պետ. ա. 2, 20։
է Հռով. ը. 28։ բ Թես. բ. 12։ բ Տիմ. ա. 9։ Յակ. բ. 5։ ա Պետ. ա. 2։ բ. 9։
ը Ղու. ա. 75։ Գլ. բ. 10։ ե. 27։ Կող. ա. 22։ ա Թես. դ. 7։ Տիտ. բ. 12։
թ Հռով. ը. 29, 30։ Հմր 11։
ժ Յօհ. ա. 12։ Հռով. ը. 15։ բ Կոր. զ. 18։ Գաղ. դ. 5։ ա Յօհ. գ. 1։
ի Մատ. ժա. 26։ Ղու. ժբ. 32։ ա Կոր. ա. 21։ Հմր 9։
լ Հռով. գ. 24։ ե. 15։
խ Մատ. գ. 17։ ժէ. 5։ Յօհ. գ. 35։ ժ. 17։
ծ Գործ. ի. 28։ Հռով. գ. 24։ Կող. ա. 14։ Եբր. թ. 12։ ա Պետ. ա. 18, 19։ Յայտ. ե. 9։
կ Հռով. բ. 4։ գ. 24։ թ. 23։ Գլ. բ. 7։ գ. 8, 16։ Փիլ. դ. 19։
հ Հռով. ժզ. 25։ Գլ. գ. 4, 9։ Կող. ա. 26։
ձ Գլ. գ. 11։ բ Տիմ. ա. 9։
ղ Գաղ. դ. 4։ Եբր. ա. 2։ թ. 10։ ա Պետ. ա. 20։

ճ ամէն բան մ բովանդակէ Քրիստոսով՝ ինչ որ
11 երկինքը ու ինչ որ երկրի վրայ կայ , անով՝ յ Ո-
րով մենք ալ ժառանգութիւն առինք՝ ն առաջուց
որոշուած ըլլալով անոր նախասահմանութիւնովը ,
շ որ ամէն բան իր կամքին խորհրդովը 'ի գործ կը
12 դնէ . ո Որ մենք անոր փառքին գովութիւն ըլլանք՝
13 չ առաջուց Քրիստոսի վրայ յուսացողներս . Որուն
վրայ դուք ալ յուսացիք՝ երբոր լսեցիք պ ճշմար-
տութեան խօսքը՝ ձեր փրկութեան աւետարանը ,
որուն նաև հաւատալով՝ ջ խոստացեալ Սուրբ
14 Հոգիին [illegible] կնքուեցաք . ռ Որ ան մեր ժա-
ռանգ. ըլլալուն գրաւն է ս մինչև ստացուածքին
վ փրկութիւնը՝ տ իր փառացը գովութեանը համար ։
15 ր Ուստի ես ալ երբոր լսեցի Տէր Յիսուսին վը-
րայ ունեցած հաւատքնիդ , ու բոլոր սուրբերուն
16 վրայ ձեր ունեցած սէրը , ց Չեմ դադարիր ձեզի
համար գոհութիւն ընելէն՝ ձեզ իմ աղօթքներուս
17 մէջ յիշելով . ւ Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
Աստուածը՝ փ փառաց Հայրը տայ ձեզի իմաստու-
թեան ու յայտնութեան հոգին իր գիտութիւնովը .
18 Որպէս զի ք սրտերնուդ աչքերը լուսաւորուելով՝
օ գիտնաք թէ ինչ է անոր ձեզ կանչելուն յոյսը ,
ֆ ու ինչ է անոր ժառանգութեանը փառքին ճո-
19 խութիւնը սուրբերուն մէջ , Եւ ինչ է իր զօ-

ճ ա Կոր. գ. 22, 23։ ժա. 3։ Գլ. բ. 15։ գ. 15։
մ Փիլ. բ. 9, 10։ Կող. ա. 20։
յ Գործ. ի. 32։ իզ. 18։ Հռով. ը. 17։ Կող. ա. 12։ գ. 24։ Տիտ. գ. 7։ Յակ. բ. 5։ ա Պետ. ա. 4։
ն Հմր 5։
շ Ես. խզ. 10, 11։
ո Հմր 6, 14։ բ Թես. բ. 13։
չ Յակ. ա. 18։
պ Յօհ. ա. 17։ բ Կոր. զ. 7։
ջ բ Կոր. ա. 22։ Գլ. դ. 30։
ռ բ Կոր. ա. 22։ ե. 5։
ս Գործ. ի. 28։
վ Ղու. իա. 28։ Հռով. ը. 23։ Գլ. դ. 30։
տ Հմր 6, 12։
ր Կող. ա. 4։ Փիլմ. 5։
ց Հռով. ա. 9։ Փիլ. ա. 3, 4։ Կող. ա. 3։ ա Թես. ա. 2։ բ Թես. ա. 3։
ւ Յօհ. ի. 17։
փ Կող. ա. 9։
ք Գործ. իզ. 18։
օ Գլ. բ. 12։ դ. 4։
ֆ Հմր 11։

րութեանը գերազանց մեծութիւնը հաւատացեալ-
ներուս մէջ՝ ա իր կարող զօրութեանը գործադրու-
20 թեամբը, Որն որ Քրիստոսի վրայ 'ի գործ դրաւ,
բ երբոր զանիկա մեռելներէն յարուց, գ ու նստե-
21 ցուց իր աջ կողմը երկինքին մէջ դ Ամէն ե իշխանու-
թեան ու պետութեան և զօրութեան ու տէրու-
թեան վրայ՝ և ամէն անուան վրայ որ կ'անուանի,
չէ թէ միայն աս աշխարհիս մէջ, հապա գալիքին
22 մէջ ալ. զ Ու ամէն բան անոր ոտքերուն տակը
հնազանդեցուց, է և զանիկա ամէն բաներու վրայ
23 եկեղեցիին գլուխ դրաւ, ը Որ ան անոր մարմինն
է, թ անոր լրումը, ժ որ կը լեցնէ ամէնը ամէն
բանի մէջ :

ԳԼ. Բ

1 Առաքեալը մեր բնական վիճակը՝ շնորհքով եղած մեր հիմա-
կուան վիճակին հետ բաղդատելով, 10 կը ծանուցանէ թէ
մենք բարի գործքերու համար ստեղծուած ենք, 13 և Քրիս-
տոսով մօտեցած ըլլալով՝ 11 հեթանոսներու և օտարներու
վարմունք ունենալու չենք՝ ինտոր որ ատեն մը ունէինք. 19
այլ իբրև սուրբերուն քաղաքակիցները և Աստուծոյ ընտանի-
քը:

1 ի Եւ դուք լ որ յանցանքներու ու մեղքերու մէջ
2 մեռած էիք, ձեզ ալ կենդանացուց. խ Ո-
րոնց մէջը ատենօք կը քալէիք աս աշխարհիս բռնած
ճամբովը, ծ օդուս իշխանութեանը իշխանին

ա Գղ. գ. 7 ։ Կող. ա. 29 ։ բ. 12 ։
բ Գոր. բ. 24, 33 ։
գ Սաղ. ճժ. 1 ։ Գոր. է. 55 ։ Կող. գ. 1 ։ Եբր. ա. 3 ։ ժ. 12 ։
դ Փիլ. բ. 9, 10 ։ Կող. բ. 10 ։ Եբր. ա. 4 ։
ե Հռոմ. ը. 38 ։ Կող. ա. 16 ։ բ. 15 ։
զ Սաղ. ը. 6 ։ Մատ. իը. 18 ։ ա Կոր. ժե. 27 ։ Եբր. բ. 8 ։
է Գղ. գ. 15, 16 ։ Կող. ա. 18 ։ Եբր. բ. 7 ։
ը Հռոմ. ժբ. 5 ։ ա Կոր. ժբ. 12, 27 ։ Գղ. գ. 12 ։ ե. 23, 30 ։ Կող. ա. 18, 24 ։
թ Կող. բ. 9, 10 ։
ժ ա Կոր. ժբ. 6 ։ Գղ. գ. 10 ։ Կող. գ. 11 ։
ի Յօհ. ե. 24 ։ Կող. բ. 13 ։
լ Հմր 5 ։ Գղ. դ. 18 ։
խ ա Կոր. զ. 11 ։ Գղ. դ. 22 ։ Կող. ա. 21 ։ գ. 7 ։ ա Յօհ. ե. 19 ։
ծ Գղ. զ. 12 ։

ուզածին պէս, այն ոգիին՝ կ որ հիմա ապստամբու-
3 թեան որդւոցը ներսի դին կը ներգործէ. հ Որ ա-
տենօք մենք ամէնքս ալ անոնց մէջը կը պտըտէինք
ձ մեր մարմնին ցանկութիւններովը, և մարմնին
ու միտքին ուզածը կը կատարէինք. ղ Եւ բնու-
թեամբ բարկութեան որդիք էինք՝ ինչպէս ուրիշ-
4 ները. ճ Բայց Աստուած որ մեծ է ողորմութիւնով՝
5 իր առատ սիրոյն համար՝ որով մեզ սիրեց, մ Երբ-
որ յանցանքներու մէջ մեռած էինք, յ մեզ Քրիս-
տոսի հետ կենդանացուց, (դուք շնորհքով փըր-
6 կուած էք,) Եւ անոր հետ զմեզ յարուց, ն ու անոր
հետ նստեցուց երկնաւորներուն մէջ Քրիստոս Յի-
7 սուսով, Որ գալու դարերուն մէջը ցուցընէ իր
շնորհքին գերազանց մեծութիւնը՝ Քրիստոս Յի-
սուսով մեզի ցուցուցած քաղցրութիւնովը:
8 շ Վասն զի շնորհքով փրկուած էք դուք ո հաւատքի
միջոցով. և աս չէ թէ ձեզմէ է, չ հապա Աս-
9 տուծոյ պարգեւն է. պ Ոչ թէ գործքերէն, որ
10 մէկը չպարծի. ջ Ինչու որ մենք անոր ձեռագործն
ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած բարի գործ-
քերու համար, ռ որոնց Աստուած առաջուց պատ-
րաստեց զմեզ, որ անոնց մէջը քալենք:
11 ս Ուստի միտքերնիդ բերէք, որ դուք ատեն մը

կ Գղ. ե. 6 ։ Կող. գ. 6 ։
հ Տիտ. գ. 3 ։ ա Պետ. դ. 3 ։
ձ Գաղ. ե. 16 ։
ղ Սաղ. ծա. 5 ։ Հռոմ. ե. 12, 14 ։
ճ Հռոմ. ժ. 12 ։ Գղ. ա. 7 ։ Հմր 7 ։
մ Հռոմ. ե. 6, 8, 10 ։ Հմր 1 ։
յ Հռոմ. զ. 4, 5 ։ Կող. բ. 12, 13 ։ գ. 1, 3 ։
ն Գղ. ա. 20 ։
շ Տիտ. գ. 4 ։
ո Հմր 5 ։ Հռոմ. գ. 24 ։ բ Տիմ. ա. 9 ։
չ Հռոմ. գ. 16 ։
պ Մատ. ժզ. 17 ։ Յօհ. զ. 44, 66 ։ Հռոմ. ժ. 14, 15, 17 ։ Գղ. ա. 19 ։ Փիլ. ա. 29 ։
ջ Հռոմ. գ. 20, 27, 28 ։ դ. 2 ։ թ. 11 ։ ժա. 6 ։ ա Կոր. ա. 29, 30, 31 ։ բ Տիմ. ա. 9 ։ Տիտ. գ. 5 ։
ռ բ Օր. լբ. 6 ։ Սաղ. ճ. 3 ։ Ես. ժթ. 25 ։ իթ. 23 ։ խզ. 21 ։ Յօհ. գ. 3, 5 ։ ա Կոր. գ. 9 ։ բ Կոր. ե. 5, 17 ։ Գղ. դ. 24 ։ Տիտ. բ. 14 ։
ս Գղ. ա. 4 ։
վ ա Կոր. ժբ. 2 ։ Գղ. ե. 8 ։ Կող. ա. 21 ։ բ. 13 ։

մարմինով հեթանոսներ ըլլալով , (որոնք անթլ-
փատութիւն կ՚ըսուին անոնցմէ՝ յ որ թլփատու-
թիւն կ՚ըսուին մարմինի մէջ ձեռքով եղած ,)
12 ն Որ այն ատենը դուք առանց Քրիստոսի էիք , շ ու
հեռացած էիք Իսրայէլի քաղաքակցութենէն , ո և
օտարացած խոստմունքին ուխտերէն , չ ու յոյս մը
ալ չունէիք , պ և աշխարհի մէջ անաստուած էիք :
13 ջ Բայց հիմա Քրիստոս Յիսուսով ռ դուք որ ատեն
մը հեռաւոր էիք , մերձաւոր եղաք Քրիստոսի ա-
14 րիւնովը : ս Վասն զի անիկա է մեր խաղաղու-
թիւնը , վ որ երկուքը մէկ ըրաւ , ու մէջ տեղի
բաժանող պատը՝ այսինքն իրարու հետ եղած
15 տ թշնամութիւնը իր մարմինովը քակեց , ր Եւ
հրամաններով եղած պատուիրանքներուն օրէնքը
խափանեց . ց որ իրմով այն երկուքը մէկ նոր մարդ
մը հաստատէ , ու այսպէս խաղաղութիւն ընէ .
16 ւ Եւ երկուքն ալ մէկ մարմին եղած հաշտե-
ցընէ Աստուծոյ հետ իր խաչովը . փ ինչու որ
17 անով սպաննեց թշնամութիւնը . ք Եւ եկաւ
խաղաղութիւն քարոզեց ձեզի որ հեռուն էիք ,
18 օ ու անոնց՝ որ մօտ էին : ֆ Քանզի անոր ձեռ-
քովը մենք երկուքնիս ալ ա մէկ Հոգիով Հօրը
19 մօտենալու իրաւունքը ունինք : Ուրեմն ալ

յ Հռով. բ. 28, 29 ; Կող. բ. 11 ;
ն Գղ. դ. 18 ; Կող. ա. 21 ;
շ Տես Եզեկ. ժգ. 9 ; Յով. ժ. 16 ;
ո Հռով. թ. 4, 8 ;
չ ա Թես. դ. 12 ;
պ Գաղ. գ. 8 ; ա Թես. դ. 5 ;
ջ Գաղ. գ. 28 ;
ռ Գոր. բ. 39 ; Հմր 17 ;
ս Միք. ե. 5 ; Յով. ժզ. 33 ; Գոր. ժ. 36 ; Հռով. ե. 1 ; Կող. ա. 20 ;
վ Յով. ժ. 16 ; Գաղ. գ. 28 ;
տ Կող. ա. 22 ;
ր Կող. բ. 14, 20 ;
ց բ Կոր. ե. 17 ; Գաղ. զ. 15 ; Գղ. դ. 24 ;
ւ Կող. ա. 20, 21, 22 ;
փ Հռով. զ. 6 ; ը. 3 ; Կող. բ. 14 ;
ք Ես. ծէ. 19 ; Զաք. թ. 10 ; Գոր. բ. 39 ; ժ. 36 ; Հռով. ե. 1 ; Հմր 13, 14 ;
օ Սաղ. ճխը. 14 ;
ֆ Յով. ժ. 9 ; ժդ. 6 ; Հռով. ե. 2 ; Գղ. գ. 12 ; Եբր. դ. 16 ; ժ. 19, 20 ; ա Պետ. գ. 18 ;
ա ա Կոր. ժբ. 13 ; Գղ. դ. 4 ;

ասկէ ետև դուք օտար ու պանդուխտ չէք , բ հա-
պա սուրբերուն քաղաքակիցները գ և Աստուծոյ ըն-
20 տանիքը՝ դ Առաքեալներուն ու մարգարէներուն
ե հիման վրայ զ շինուած , է որ անոր անկիւնին
21 գլուխը Յիսուս Քրիստոս է . ը Որով բոլոր շէն-
քը միասին յարմարութեամբ կազմուած՝ կ՚աճի
22 թ սուրբ տաճար մը կ՚ըլլայ Տէրոջմով . ժ Որ անով
դուք ալ միասին կը շինուիք՝ Աստուծոյ բնակա-
րան ըլլալու Հոգւով Սրբով :

ԳԼ. Գ

1 Առաքեալը կը ծանուցանէ թէ յայտնութեամբ իրեն ցուցուած է 5 այն ծածկուած խորհուրդը՝ 6 թէ հեթանոսները պիտի փրկուին , 8 և թէ իրեն տրուած է 9 զանիկայ քարոզելու շնորհքը ; 13 Կը խնդրէ որ անոնք իր նեղութիւններուն պատճառովը չձանձրանան , 14 և աղօթք կ՚ընէ որ 19 անոնք կարող ըլլան Քրիստոսի իրենց վրայ ունեցած մեծ սէրը հասկընալու ;

1 Ուստի ես Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի ա կապուա-
2 ծը բ ձեզի հեթանոսներուդ համար . գ Որ դուք
անշուշտ լսած էք Աստուծոյ շնորհքին տնտեսու-
3 թիւնը , դ որ ինծի տրուած է ձեզի համար , ե Թէ
զ ինծի այն խորհուրդը է յայտնութիւնով ցուցուե-
ցաւ . (ը ինչպէս առաջուց ալ ձեզի համառօտա-

բ Փիլ. գ. 20 ; Եբր. ժբ. 22, 23 ;
գ Գաղ. զ. 10 ; Գղ. դ. 15 ;
դ ա Կոր. ժբ. 28 ; Գղ. դ. 11 ;
ե Մատ. ժզ. 18 ; Գաղ. բ. 9 ; Յայտ. իա. 14 ;
զ ա Կոր. գ. 9, 10 ; Գղ. դ. 12 ; ա Պետ. բ. 4, 5 ;
է Սաղ. ճժը. 22 ; Ես. իը. 16 ; Մատ. իա. 42 ;
ը Գղ. դ. 15, 16 ;
թ ա Կոր. գ. 17 ; զ. 19 ; բ Կոր. զ. 16 ;
ժ ա Պետ. բ. 5 ;
ի Գոր. իա. 33 ; իբ. 17, 20 ;
Գղ. դ. 1 ; զ. 20 ; Փիլ. ա. 7, 13, 14, 17 ; Կող. դ. 3, 18 ; բ Տիմ. ա. 8 ; բ. 9 ; Փիլեմ. 1, 9 ;
բ Կող. ա. 24 ; բ Տիմ. բ. 10 ;
գ Հռով. ա. 5 ; ժա. 13 ; ա Կոր. դ. 1 ; Գղ. դ. 7 ; Կող. ա. 25 ;
դ Գոր. թ. 15 ; ժգ. 2 ; Հռով. ժբ. 3 ; Գաղ. ա. 16 ; Հմր 8 ;
ե Գոր. իբ. 17, 21 ; իզ. 17, 18 ;
զ Հռով. ժզ. 25 ; Կող. ա. 26, 27 ;
է Գաղ. ա. 12 ;
ը Գղ. ա. 9, 10 ;

4 բար գրեցի , Որով կրնաք կարդալ ու միտք առ-
նել իմ տեղեակ ըլլալս թ Քրիստոսի խորհուրդին
5 վրայով ․) ժ Որ ուրիշ դարերուն մէջ մարդոց
որդիներուն չերեցաւ , ի ինչպէս որ հիմա Հոգւով
Սրբով յայտնուեցաւ իր սուրբ առաքեալներուն ու
6 մարգարէներուն ․ լ Որ հեթանոսները Քրիստոսով
ժառանգակից խ ու մարմնակից և անոր ծ խոստ-
7 մունքին հաղորդ ըլլան աւետարանով ․ կ Որուն ես
սպասաւոր եղայ՝ հ Աստուծոյ շնորհաց պարգեւին
համեմատ՝ որ ինծի տրուեցաւ ձ իր զօրութեանը
8 ներգործութիւնովը , (Ինծի՝ ղ որ ամէն սուրբե-
րուն փոքրագոյնն եմ , աս շնորհքը տրուեցաւ ,) ճ հե-
թանոսներուն մէջ մ Քրիստոսի անքննելի ճոխու-
9 թիւնը քարոզելու , յ Ու ամէնը լուսաւորելու , որ
գիտնան թէ ինչ է ան խորհուրդին անօրէնութիւ-
նը , ն որ 'ի յաւիտենից ծածկուած էր Աստուծոյ
10 քով , շ որ ամէն բանը ստեղծեց ․ ո Որ հիմա Աս-
տուծոյ բազմատեսակ չ իմաստութիւնը եկեղեցիին
ձեռքովը յայտնի ըլլայ երկինքը եղող պ իշխանու-
11 թիւններուն ու պետութիւններուն , ջ Իր յաւի-
տենական նախասահմանութեանը համեմատ , որ
ըրաւ մեր Տէրոջը Քրիստոս Յիսուսի ձեռքովը ․

թ ա Կոր. դ. 1 : Գլ. զ. 19 :
ժ Գոր. ժ. 28 : Հռմ. ժզ. 25 : Հմր 9 :
ի Գլ. բ. 20 :
լ Գաղ. գ. 28, 29 : Գլ. բ. 14 :
խ Գլ. բ. 15, 16 :
ծ Գաղ. գ. 14 :
կ Հռմ. ժե. 16 : Կող. ա. 23, 25 :
հ Հռմ. ա. 5 :
ձ Հռմ. ժե. 18, 19 : Գլ. ա. 19 : Կող. ա. 29 :
ղ ա Կոր. ժե. 9 : ա Տիմ. ա. 13, 15 :
ճ Գաղ. ա. 16 : բ. 8 : ա Տիմ. բ. 7 : բ Տիմ. ա. 11 :
մ Գլ. ա. 7 : ա. 27 :
յ Հմր 3 : Գլ. ա. 9 :
ն Հռմ. ժզ. 25 : Հմր 5 : ա Կոր. բ. 7 : Կող. ա. 26 :
շ Սաղ. լգ. 6 : Յոհ. ա. 3 : Կող. ա. 16 : Եբր. ա. 2 :
ո ա Պետ. ա. 12 :
չ ա Կոր. բ. 7 : ա Տիմ. գ. 16 :
պ Հռմ. ը. 38 : Գլ. ա. 21 : Կող. ա. 16 : ա Պետ. գ. 22 :
ջ Գլ. ա. 9 :

12 ռ Որով մենք ալ համարձակութիւն ս ու մօտենա-
լու [illegible] ունինք վստահութեամբ՝ իրեն
հաւատալով :
13 վ Ուստի կ'աղաչեմ որ չձանձրանաք իմ նեղու-
թիւններուս պատճառովը , տ որ ձեզի համար են ,
14 ր և որ ձեր փառքն են : Ասոր համար ծունկս վրայ
գալով մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը առջեւ ,
15 ց Ուսկից որ բոլոր ազգատոհմը երկինքի մէջ ու
16 երկրի վրայ անուն կ'առնէ , Կ'աղաչեմ ւ որ տայ ձե-
զի իր փառաց ճոխութեանը չափովը՝ փ զօրութիւ-
նով հաստատուիլ իր Հոգիովը ք ներսի մարդուն
17 մէջ ․ օ Որ Քրիստոս հաւատքով ձեր սրտերուն
մէջը բնակի , և դուք ֆ սիրով արմատացած ու
18 հաստատուած ըլլաք , — Որ կարենաք հասկնալ
բոլոր սուրբերուն հետ մէկտեղ , թէ ինչ է լայ-
նութիւնը ու երկայնութիւնը և խորութիւնը ու
19 բարձրութիւնը ․ Այսինքն ճանչնալ Քրիստոսի
սէրը որ գիտութենէ գերազանց է , F որ լեցուիք
20 Աստուծոյ ամէն լրութիւնովը : ÷ Արդ անոր որ
կարող է առատութեամբ ընել ⊤ ամէն բաներէն
աւելի՝ որ մենք կը խնդրենք կամ կը խորհինք ,
⊦ ան զօրութիւնովը որ մեր մէջը կը ներգործուի ․
21 ղ Իրեն փառք եկեղեցւոյն մէջ Քրիստոս Յիսու-
սով բոլոր դարերուն մէջ յաւիտեանս յաւիտե-
նից : Ամէն :

ռ Եբր. դ. 16 :
ս Գլ. բ. 18 :
վ Գոր. ժդ. 21 : Փիլ. ա. 14 : ա Թես. գ. 3 :
տ Հմր 1 :
ր բ Կոր. ա. 6 :
ց Գլ. ա. 10 : Փիլ. բ. 9, 10, 11 :
ւ Հռմ. թ. 23 : Գլ. ա. 7 : Փիլ. դ. 19 : Կող. ա. 27 :
փ Գլ. զ. 10 : Կող. ա. 11 :
ք Հռմ. է. 22 : բ Կոր. դ. 16 :
օ Յոհ. ժդ. 23 : Գլ. բ. 22 :
ֆ Կող. ա. 23 : բ. 7 :
— Գլ. ա. 18 :
F Յոհ. ա. 16 : Գլ. ա. 23 : Կող. բ. 9, 10 :
÷ Հռմ. ժզ. 25 : Յուդ. 24 :
⊤ ա Կոր. բ. 9 :
⊦ Հմր 7 : Կող. ա. 29 :
ղ Հռմ. ժա. 36 : ժզ. 27 : Եբր. ժգ. 21 :

ԳԼ. Դ

1 Առաքեալը կը յորդորէ զանոնք միաբան ըլլալու, 7 և կը ծանուցանէ թէ Աստուած անոնց զանազան պարգևներ տուաւ, 13 որ իր եկեղեցին շինութիւն առնէ 16 ու աճի Քրիստոսով. 18 կը պատուիրէ անոնց մէկդի ձգել հեթանոսական պիղծ գործքերը, 24 նոր մարդը հագնիլ, 25 ստութիւնը 29 և ամէն ապականեալ խօսքերը մէկդի ձգելով։

1 [ա] Ուստի կ'աղաչեմ ձեզի ես որ Տէրոջը համար
կապուած եմ, [բ] որ դուք այնպէս քալէք՝
ինչպէս որ կը վայլէ ան կոչմանը որով կանչուե
2 ցաք, [գ] Բոլոր խոնարհութիւնով ու հեզութիւնով, երկայնմտութեամբ, սիրով իրարու ներո
3 ղամիտ ըլլալով. [դ] Ջանալով Հոգւոյն Սրբոյ
միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահել.
4 [ե] Մէկ մարմին [զ] ու մէկ հոգի, [է] ինչպէս որ կան
5 չուեցաք ձեր կոչմանը մէկ յուսովը. [ը] Տէրը մէկ է,
6 [թ] հաւատքը մէկ, [ժ] մկրտութիւնը մէկ. [ի] Մէկ է
Աստուած և ամենուն [լ] Հայրը, որ ամենուն վրայ
ու ամենուն հետ, և [*] ձեր ամենուն մէջն է։
7 [խ] Բայց մեր ամէն մէկուն ալ շնորհք տրուած է
8 Քրիստոսի պարգևին չափովը։ Անոր համար
կ'ըսէ թէ [ծ] Բարձրը ելաւ, [կ] գերութիւնը գերի
9 բռնեց, ու մարդոց պարգևներ տուաւ։ [հ] Ան ելաւ
ըսելը ի՞նչ է, միայն թէ որ ինքը առաջ երկրին
10 վարի կողմերը իջաւ։ Ան որ իջաւ՝ նոյն ինքն է,

ա Գլ. գ. 1 ։ Փիլմ. 1, 9 ։
բ Փիլ. ա. 27 ։ Կող. ա. 10 ։ Ա Թես. բ. 12 ։
գ Գոր. ի. 19 ։ Գաղ. ե. 22, 23 ։ Կող. գ. 12, 13 ։
դ Կող. գ. 14 ։
ե Հռով. ժբ. 5 ։ Ա Կոր. ժբ. 12, 13 ։ Գլ. բ. 16 ։
զ Ա Կոր. ժբ. 4, 11 ։
է Գլ. ա. 18 ։
ը Ա Կոր. ա. 13 ։ ը. 6 ։ ժբ. 5 ։ Բ Կոր. ժա. 4 ։
թ Յուդ. 3 ։ Հմր 13 ։
ժ Գաղ. գ. 27, 28 ։ Եբր. զ. 6 ։
ի Մաղ. բ. 10 ։ Ա Կոր. ը. 6 ։ ժբ. 6 ։
լ Հռով. ժա. 36 ։
* Ոմանք՝ մեր
խ Հռով. ժբ. 3, 6 ։ Ա Կոր. ժբ. 11 ։
ծ Սաղ. կը. 18 ։
կ Դատ. ե. 12 ։ Կող. բ. 15 ։
հ Յոհ. գ. 13 ։ զ. 33, 63 ։

[ձ] որ բոլոր երկինքներէն վեր ելաւ, [ղ] որ ամէն բան
11 լեցնէ։ [ճ] Ու ինքը մէկ քանին տուաւ առաքեալներ ըլլալ, մէկ քանին մարգարէներ,
[մ] մէկ քանին աւետարանիչներ, [յ] մէկ քանին հո
12 վիւներ ու [ն] վարդապետներ. [շ] Սուրբերուն կատարելութեանը համար, պաշտօնին գործքին համար, [ո] Քրիստոսի մարմնոյն [չ] շինութեանը
13 համար. Մինչև որ ամէնքս ալ հասնինք հաւատքին ու [պ] Աստուծոյ Որդւոյն ճանչնալուն միաբանութեանը, [ջ] կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի
14 լման հասակին չափը ունենալու. [ռ] Որ ալ ասկէ
ետև տղայ չըլլանք [ս] երերած ու վարդապետութեան ամէն հովերէն ասդին անդին տարուբերուած՝ մարդոց խաբէութիւնովը, [տ] որ խորաման
15 կութեամբ կը խաբեն մոլորցնելու. [ր] Հապա
սիրով ճշմարտութեան հետևելով՝ [ց] ամէն բան Անով աճեցնենք՝ [ւ] որ գլուխ է այսինքն Քրիստոս.
16 [փ] Որ անկէ բոլոր մարմինը մէկտեղ կազմուած և
ամէն յօդուածները իրարու հաղորդուելով կըցուած՝ ամէն մէկ մասին չափով ներգործելով մարմնին աճում կու տայ իրեն շինութեանը համար
սիրով։
17 Ուստի աս կ'ըսեմ, ու Տէրոջմով վկայութիւն կ'ընեմ. [ք] որ դուք մէյմըն ալ անանկ չքալէք, ինչպէս որ ուրիշ հեթանոսները կը քա

ձ Գործ. ա. 9, 11 ։ Ա Տիմ. գ. 16 ։ Եբր. դ. 14 ։ է. 26 ։ ը. 1 ։ թ. 24 ։
ղ Գործ. բ. 33 ։
ճ Ա Կոր. ժբ. 28 ։ Գլ. բ. 20 ։
մ Գործ. իա. 8 ։ Բ Տիմ. դ. 5 ։
յ Գործ. ի. 28 ։
ն Հռով. ժբ. 7 ։
շ Ա Կոր. ժբ. 7 ։
ո Գլ. ա. 23 ։ Կող. ա. 24 ։
չ Ա Կոր. ժդ. 26 ։
պ Կող. բ. 2 ։
ջ Ա Կոր. ժդ. 20 ։ Կող. ա. 28 ։
ռ Ես. իը. 9 ։ Ա Կոր. ժդ. 20 ։
ս Եբր. ժգ. 9 ։
վ Մատ. ժա. 7 ։
տ Հռով. ժզ. 18 ։ Բ Կոր. բ. 17 ։
ր Զաք. ը. 16 ։ Բ Կոր. դ. 2 ։ Հմր 25 ։ Ա Յոհ. գ. 18 ։
ց Գլ. ա. 22 ։ բ. 21 ։
ւ Կող. ա. 18 ։
փ Կող. բ. 19 ։
ք Գլ. բ. 1, 2, 3 ։ Հմր 22 ։ Կող. գ. 7 ։ Ա Պետ. դ. 3 ։

18 լեն [ա] իրենց մտքին ունայնութեանը մէջ . [բ] Որոնց
իմացողութիւնը խաւարած է , [գ] ու օտարացած են
Աստուծոյ կեանքէն՝ իրենց մէջը եղած տգիտու-
թեան պատճառովը [դ] իրենց սրտին կուրութեանը
19 համար . [ե] Որոնք անզգայ ըլլալով , [զ] ինքզինքնին
անառակութեան տուին , ամէն կերպ պղծութիւն
20 գործելու * ագահութիւնով : Բայց դուք ասանկ
21 չսորվեցաք Քրիստոսը , [է] Թէ որ անոր վրայով լսե-
ցիք ու անկէ սորված էք , ինչպէս որ ճշմարտութի-
22 նը Յիսուսի մէջ է . [ը] Որ ձեր վրայէն մէկդի հա-
նէք [թ] ձեր առջի վարմունքին պէս եղած [ժ] հին
մարդը՝ խաբէբայ ցանկութիւններով ապականուա-
23 ծը . [ի] Ու ձեր մտքին հոգիովը նորոգուիք ,
24 [լ] Ու նոր մարդը վրանիդ հագնիք , [խ] ան որ Աս-
տուծոյ պատկերին պէս ստեղծուած է արդարու-
25 թիւնով ու ճշմարիտ սրբութիւնով : Ուստի
ստութիւնը մէկդի ձգելով , [ծ] ճշմարտութիւն
խօսեցէք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ , [կ] Ինչու
26 որ մենք իրարու անդամներ ենք : [հ] Թէ որ բար-
կանաք՝ մեղք մի՛ գործէք . արեւը ձեր բարկու-
27 թեանը վրայ մարը չմտնէ : [ձ] Ու Սատանային տեղ
28 մի՛ տաք : Ան որ գողութիւն կ՚ընէր , ալ թող
չգողնայ . [ղ] այլ մանաւանդ աղէկ գործի մը պարա-

[ա] Հռով. ա. 21.
[բ] Գոր. իզ. 18.
[գ] Գղ. բ. 12. Գաղ. դ. 8. ա Թես. դ. 5.
[դ] Հռով. ա. 21.
[ե] ա Տիմ. դ. 2.
[զ] Հռով. ա. 24, 26. ա Պետ. դ. 3.
* Կամ՝ անյագութիւնով
[է] Գղ. ա. 13.
[ը] Կող. բ. 11. գ. 8, 9. Եբր. ժբ. 1. ա Պետ. բ. 1.
[թ] Գղ. բ. 2, 3. Հմր 17. Կող. գ. 7. ա Պետ. դ. 3.
[ժ] Հռով. զ. 6.
[ի] Հռով. ժբ. 2. Կող. գ. 10.
[լ] Հռով. զ. 4. բ Կոր. ե. 17. Գաղ. զ. 15. Գղ. զ. 11. Կող. գ. 10.
[խ] Գղ. բ. 10.
[ծ] Զաք. ը. 16. Հմր 15. Կող. գ. 9.
[կ] Հռով. ժբ. 5.
[հ] Սաղ. դ. 4. լէ. 8.
[ձ] բ Կոր. բ. 10, 11. Յակ. դ. 7. ա Պետ. ե. 9.
[ղ] Գոր. ի. 35. ա Թես. դ. 11. բ Թես. գ. 8, 11, 12.

պելով՝ իր ձեռքերովը աշխատի , [ճ] որ կարող ըլլայ
29 տալ կարօտ եղողին : [մ] Ձեր բերնէն ապա-
կանեալ խօսք մը չելլէ . [յ] հապա ինչ որ աղէկ է՝
պէտք եղած շինութեանը համար , [ն] որ լսողներուն
30 շնորհք տայ : [շ] Ու Աստուծոյ Սուրբ Հոգին մի՛
տրտմեցընէք , [ո] որով դուք կնքուեցաք [չ] փրկու-
31 թեան օրուանը համար : [պ] Ամէն դառնութիւն և
բարկութիւն ու սրտմտութիւն և աղաղակ [ջ] ու
հայհոյութիւն վերցուի ձեզմէ [ռ] ամէն չարութիւն-
32 ներով մէկտեղ : [ս] Ու իրարու հետ քաղցր եղէք ,
գթած , [վ] ներելով իրարու , ինչպէս որ Աստուած
Քրիստոսով ներեց ձեզի :

ԳԼ. Ե

1 Նախ ընդհանուր կերպով մը կը յորդորէ սէր ունենալու , 3 պոռնկութենէ 4 և ամէն տեսակ պիղծ գործքերէ ետ կենալու , 7 չարերուն հետ հաղորդակցութիւն չընելու , 15 ուղղութեամբ քալելու , 18 և Հոգիով լեցուելու . 22 ետքը կը խօսի մասնաւոր պարտաւորութեանց վրայով , թէ կնիկները պարտին հնազանդիլ իրենց էրիկներուն , 25 և էրիկները պարտին սիրել իրենց կնիկները , 32 ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին .

1 [տ] Արդ Աստուծոյ նմանող եղէք սիրելի զաւակնե-
2 րու պէս . [ր] Ու սիրով վարուեցէք՝ [ց] ինչպէս
որ Քրիստոս ալ մեզ սիրեց , ու իր անձը մեզի
համար մատնեց՝ [ւ] անուշահոտ պատարագ ու զոհ

[ճ] Ղու. գ. 11.
[մ] Մատ. ժբ. 36. Գղ. ե. 4. Կող. գ. 8.
[յ] Կող. դ. 6. ա Թես. ե. 11.
[ն] Կող. գ. 16.
[շ] Ես. է. 13. կգ. 10. Եզեկ. ժզ. 43. ա Թես. ե. 19.
[ո] Գղ. ա. 13.
[չ] Ղու. իա. 28. Հռով. ը. 23. Գղ. ա. 14.
[պ] Կող. գ. 8, 19.
[ջ] Տիտ. գ. 2. Յակ. դ. 11. ա Պետ. բ. 1.
[ռ] Տիտ. գ. 3.
[ս] բ Կոր. բ. 10. Կող. գ. 12, 13.
[վ] Մատ. զ. 14. Մար. ժա. 25.
[տ] Մատ. ե. 45, 48. Ղու. զ. 36. Գղ. դ. 32.
[ր] Յոհ. ժգ. 34. ժե. 12. ա Թես. դ. 9. ա Յոհ. գ. 11, 23. դ. 21.
[ց] Գաղ. ա. 4. բ. 20. Եբր. է. 27. թ. 14, 26. ժ. 10, 12. ա Յոհ. գ. 16.
[ւ] Ծն. ը. 21. Ղև. ա. 9. բ Կոր. բ. 15.

3 ըլլալով Աստուծոյ : ե Բայց պոռնկութեան և
ամէն կերպ պղծութեան կամ ագահութեան զա-
նունը անգամ չյիշուի ձեր մէջը , (ինչպէս որ կը
4 վայելէ սուրբերուն ,) է Ու գարշելի բաներ կամ
յիմարական խօսքեր կամ խեղկատակութիւն , ը որ
5 չվայլեր , այլ մանաւանդ գոհութիւն . *Քան-
զի աս գիտէք ,“ թ որ ամէն պոռնիկ կամ պիղծ
կամ ագահ՝ ժ որ կռապաշտ է , ի Քրիստոսի ու
Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգու-
6 թիւն չունի : լ Զըլլայ որ մէկը ձեզ խաբէ փուճ
խօսքերով . խ Ինչու որ աս բաներուն համար Աս-
տուծոյ բարկութիւնը կու գայ ծ անհնազանդու-
7 թեան որդւոց վրայ : Ուստի անոնց հաղորդ մի՛
8 ըլլաք : կ Քանզի բէն ատեն մը դուք խաւար
էիք , հ բայց հիմա լոյս էք Տէրոջմով . ձ Լուսոյ
9 որդիներու պէս քալեցէք . ղ Ինչու որ Հոգւոյն
պտուղը ամէն կերպ բարութիւնով և արդարութիւ-
10 նով ու ճշմարտութիւնով է : ճ Քննեցէք ինչ է
11 Տէրոջը հաճելին . մ Ու կցորդ մի՛ ըլլաք յ խաւա-
րին անպտուղ գործքերուն , ն այլ մանաւանդ զա-
12 նոնք յանդիմանեցէք : շ Ինչու որ անոնց մէջը

ե Հռով. զ. 13 : ա Կոր. զ. 18 : բ Կոր. ժբ. 21 : Գլ. դ. 19, 20 : Կող. գ. 5 : ա Թես. դ. 3, 7 :
զ ա Կոր. ե. 1 :
է Մատ. ժբ. 35 : Գլ. դ. 29 :
ը Հռով. ա. 28 :
* Կամ Աս իմանալով գիտնաք ,
թ ա Կոր. զ. 9 : Գաղ. ե. 19 - 21 :
ժ Կող. գ. 5 : ա Տիմ. զ. 17 :
ի Գաղ. ե. 21 : Յայտ. իբ. 15 :
լ Երեմ. իթ. 8 : Մատ. իդ. 4 : Կող. բ. 4, 8, 18 : բ Թես. բ. 3 :
խ Հռով. ա. 18 :
ծ Գլ. բ. 2 : Կող. գ. 6 :
կ Ես. թ. 2 : Մատ. դ. 16 : Գործ. իզ. 18 : Հռով. ա. 21 : Գլ. բ. 11, 12 : դ. 18 : Տիտ. գ. 3 : ա Պետ. բ. 9 :
հ Յոհ. ը. 12 : ժբ. 46 : բ Կոր. դ. 18 : գ. 6 : ա Թես. ե. 5 : ա Յոհ. բ. 9 :
ձ Ղու. ժզ. 8 : Յոհ. ժբ. 36 :
ղ Գաղ. ե. 22 :
ճ Հռով. ժբ. 2 : Փիլ. ա. 10 : ա Թես. ե. 21 : ա Տիմ. բ. 3 :
մ ա Կոր. ե. 9, 11 : ժ. 20 : բ Կոր. զ. 14 : բ Թես. գ. 6, 14 :
յ Հռով. գ. 21 : ժգ. 12 : Գաղ. գ. 8 :
ն Ղև. ժթ. 17 : ա Տիմ. ե. 20 :
շ Հռով. ա. 24, 26 : Հմր 3 :

զաղտուկ գործուած բաները խօսիլն ալ ամօթ է :
13 ո Բայց ամէն բան յանդիմանուած՝ լուսով յայտնի
կ՚ըլլայ . ինչու որ ամէն բան որ յայտնի կ՚ըլլայ ,
14 լոյս է : Անոր համար կ՚ըսէ , չ Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս , պ և կանգնէ՛ մեռելներէն , ու
Քրիստոս քեզի լոյս պիտի տայ :
15 ջ Ուստի նայեցէ՛ք թէ ինչպէս զգուշութեամբ
16 պիտի քալէք , չէ թէ անմիտներու պէս . հապա
իմաստուններու պէս . ռ ժամանակը ծախու առէք ,
17 ս ինչու որ օրերս չար են : վ Անոր համար անմիտ
մի՛ ըլլաք , տ հապա իմացէ՛ք ր թէ ի՛նչ է Տէրոջը
18 կամքը : ց Ու մի՛ գինովնաք գինիով , որուն մէջ
անառակութիւն կայ , հապա Հոգիով լեցուեցէ՛ք .
19 ւ Ու սաղմոսներով ու օրհնութիւններով և հոգևոր
երգերով մէջերնիդ խօսակցելով , երգեցէ՛ք ու
20 սաղմոս ըսէք Տէրոջը ձեր սրտերուն մէջ : փ Ամէն
ատեն ամէն բանի համար գոհութիւն տուէք Աս-
տուծոյ ու Հօրը՝ ք մեր Տէր Յիսուս Քրիստոսի ա-
նունովը :
21 օ Իրարու հնազանդ եղէք * Աստուծոյ՝ վախովը :
22 ֆ Կիները իրենց էրիկներուն հնազանդ ըլլան՝ ա որ-
23 պէս թէ Տէրոջը . բ Ինչու որ էրիկը կնկանը գը-

ո Յոհ. գ. 20, 21 : Եբր. դ. 13 :
չ Ես. կ. 1 : Հռով. ժգ. 11, 12 : ա Կոր. ժե. 34 : ա Թես. ե. 6 :
պ Յոհ. ե. 25 : Հռով. զ. 4, 5 : Գլ. բ. 5 : Կող. գ. 1 :
ջ Կող. դ. 5 :
ռ Կող. դ. 5 : Գաղ. զ. 10 :
ս Ժող. ժա. 2 : ժբ. 1 : Յոհ. ժբ. 35 : Գլ. զ. 13 :
վ Կող. դ. 5 :
տ Հռով. ժբ. 2 :
ր ա Թես. դ. 3 : ե. 18 :
ց Առակ. ի. 1 : իգ. 29, 30 : Ես. ե. 11, 22 : Ղու. իա. 34 :
ւ Գործ. ժզ. 25 : ա Կոր. ժդ. 26 : Կող. գ. 16 : Յակ. ե. 13 :
փ Սաղ. լդ. 1 : Ես. կգ. 7 : Կող. գ. 17 : ա Թես. ե. 18 : բ Թես. ա. 3 :
ք Եբր. ժգ. 15 : ա Պետ. բ. 5 : դ. 11 :
օ Փիլ. բ. 3 : ա Պետ. ե. 5 :
* Ոմանք՝ Քրիստոսի
ֆ Ծն. գ. 16 : ա Կոր. ժդ. 34 : Կող. գ. 18 : Տիտ. բ. 5 : ա Պետ. գ. 1 :
ա Գլ. զ. 5 :
բ ա Կոր. ժա. 3 :

լուխն է , ժ ինչպէս որ Քրիստոս ալ եկեղեցւոյն
24 գլուխն է , ի ու ինքը մարմինին փրկիչն է ։ Ուս-
տի ինչպէս որ եկեղեցին հնազանդ կ՚ըլլայ Քրիստո-
սի , անանկ ալ կնիկները լ ամէն բանի մէջ իրենց
25 էրիկներուն ։ խ Էրիկներ՝ սիրեցէք ձեր կնիկնե-
րը , ինչպէս որ Քրիստոս ալ սիրեց եկեղեցին ,
26 ծ ու իր անձը մատնեց անոր համար . Որ զանիկայ
սրբէ ու մաքրէ կ աւազանին ջրովը՝ հ խօսքով .
27 ձ Որ ինքը իր դիմացը փառաւոր կեցնէ եկեղեցին ,
ղ որ մէկ արատ մը կամ խորշոմութիւն կամ ուրիշ
ասոնց պէս բան մը չունենայ , ճ հապա որ սուրբ
28 ու անարատ ըլլայ ։ Նոյնպէս ալ պէտք է որ
էրիկները իրենց կնիկները սիրեն իրենց մարմիննե-
րուն պէս . ան որ իր կնիկը կը սիրէ՝ իր անձը կը
29 սիրէ . Ինչու որ մէկը բնաւ իր անձը չատեր , հա-
պա կը սնուցանէ ու կը խնամէ զանիկայ , ինչպէս
30 Տէրն ալ եկեղեցին . մ Վասն զի մենք անոր
մարմինին անդամներն ենք՝ անոր մարմինէն ու անոր
31 ոսկորներէն ։ յ Ասոր համար մարդը պիտի ձգէ իր
հայրը ու մայրը , և իր կնկանը պիտի յարի , ն ու
32 երկուքը մէկ մարմին պիտի ըլլան ։ Աս խորհուրդը
մեծ է , բայց ես կը զրուցեմ Քրիստոսի ու եկեղե-
33 ցւոյն վրայով ։ շ Սակայն ձեզմէ ամէն մէկն ալ իր
կնիկը անանկ սիրէ՝ որպէս թէ իր անձը , ո ու կնի-
կը իր էրիկէն ակնածութիւն ընէ ։

ժ Գլ. ա. 22 ; դ. 15 ; Կող. ա. 18 ;
ի Գլ. ա. 23 ;
լ Կող. գ. 20, 22 ; Տիտ. բ. 9 ;
խ Կող. գ. 19 ; ա Պետ. գ. 7 ;
ծ Գոր. ի. 28 ; Գաղ. ա. 4 ; բ. 20 ; Հմր 2 ;
կ Յօհ. գ. 5 ; Տիտ. գ. 5 ; Եբր. ժ. 22 ; ա Յօհ. ե. 6 ;
հ Յօհ. ժե. 3 ; ժէ. 17 ;
ձ բ Կոր. ժա. 2 ; Կող. ա. 22 ;
ղ Երգ. դ. 7 ;
ճ Գլ. ա. 4 ;
մ Ծն. բ. 23 ; Հռով. ժբ. 5 ; ա Կոր. զ. 15 ; ժբ. 27 ;
յ Ծն. բ. 24 ; Մատ. ժթ. 5 ; Մար. ժ. 7, 8 ;
ն ա Կոր. զ. 16 ;
շ Հմր 25 ; Կող. գ. 19 ;
ո ա Պետ. գ. 6 ;

ԳԼ. Զ.

1 Կը ծանուցանէ տղայոց պարտաւորութիւնը դէպ 'ի իրենց ծնողքները . 5 ծառաներուն պարտաւորութիւնը դէպ 'ի իրենց տէրերը . 10 թէ մեր կեանքը զինուորութիւն մըն է , 12 ո՛չ միայն մարմինի ու արիւնի դէմ , հապա նաև հոգևոր թշնամիներու դէմ . 13 քրիստոնէային զէնքերը ինչ են , 18 և ինչպէս գործածել պէտք է զանոնք ։ 21 Տիւքիկոսի վրայով յանձնարարութիւն ։

1 Որդիք՝ ա ձեր ծնողացը հնազանդ եղէք Տէրոջմով ,
2 որ ան է արժանը ։ բ Պատուէ՛ քու հայրդ ու
մայրդ , (որ առջի պատուիրանքն է խոստմունքով ,)
3 Որ քեզի աղէկ ըլլայ , ու երկար կեանք ունենաս
4 երկրի վրայ ։ Ու դուք գ հայրեր՝ ձեր որդիները մի՛
բարկացընէք , դ հապա անոնք մեծցուցէք Տէրոջը
5 վարժութիւնովը ու խրատովը ։ ե Ծառաներ՝ հնա-
զանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն զ վախով ու
դողով՝ է ձեր սրտին միամտութիւնովը , որպէս թէ
6 Քրիստոսի . ը Ոչ թէ մարդահաճոյի պէս աչքի
առջև ծառայելով , հապա Քրիստոսի ծառաներու
7 պէս՝ սրտանց Աստուծոյ կամքը ընելով . Յօժարու-
թեամբ ծառայելով որպէս թէ Տէրոջը , ու չէ
8 թէ մարդոց . թ Գիտնալով որ ամէն մէկը ինչ
բարիք որ ընէ , նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի ,
9 ժ թէ ծառայ ըլլայ և թէ ազատ ։ ի Դուք ալ
տէրեր՝ նոյնը ըրէք անոնց , լ ու սպառնալիքը
թող տուէք , խ գիտնալով որ անոնց ալ ձեր ալ

ա Առակ. իգ. 22 ; Կող. գ. 20 ;
բ Ել. ի. 12 ; բ Օր. ե. 16 ; իէ. 16 ; Երեմ. լե. 18 ; Եզեկ. իբ. 7 ; Մաղ. ա. 6 ; Մատ. ժե. 4 ; Մար. է. 10 ;
գ Կող. գ. 21 ;
դ Ծն. ժը. 19 ; բ Օր. զ. 7, 20 ; ժա. 19 ; Սաղ. հը. 4 ; Առակ. ժթ. 18 ; իբ. 6 ; իթ. 17 ;
ե Կող. գ. 22 ; ա Տիմ. զ. 1 ; Տիտ. բ. 9 ; ա Պետ. բ. 18 ;
զ բ Կոր. է. 15 ; Փիլ. բ. 12 ;
է ա Մն. իթ. 17 ; Կող. գ. 22 ;
ը Կող. գ. 22, 23 ;
թ Հռով. բ. 6 ; բ Կոր. ե. 10 ; Կող. գ. 24 ;
ժ Գաղ. գ. 28 ; Կող. գ. 11 ;
ի Կող. դ. 1 ;
լ Ղև. իե. 43 ;
խ Յօհ. ժգ. 13 ; ա Կոր. է. 22 ;

Տէրը երկինքն է, ու անոր քով աչառութիւն
չկայ։
10 Ալ ասկէ ետեւ՝ եղբայրներս՝ զօրացէք Տէրոջմով
11 ու անոր զօրութեան կարողութիւնովը։ Աստուա-
ծոյ հագէք Աստուծոյ սպառազինութիւնը, որ
կարող ըլլաք Սատանային հնարքներուն դէմ դնե-
12 լու։ Վասն զի մեր պատերազմը արիւնի ու
մարմինի հետ չէ. հապա իշխանութիւններու ու
պետութիւններու հետ, այս խաւար աշխարհի
իշխաններուն հետ, երկնաւորներուն մէջ եղող չար
13 ոգիներուն հետ։ Անոր համար վրանիդ առէք
Աստուծոյ սպառազինութիւնը, որ կարող ըլլաք
14 չարութեան օրը դէմ դնելու, ու ամէն բանը
լմնցնելէն ետեւ՝ հաստատուն կենալու։ Ուստի
ելէք կայնեցէք, մէջքերնիդ ճշմարտութեամբ
ամուրցնելով. ու արդարութեան զրահը հագ-
15 նելով. Ու ոտքերնուդ հագցնելով խաղա-
ղութեան աւետարանին պատրաստութիւնը.
16 Ու ամէն բանին վրայ հաւատքին վահանը առէք,
որով կարող պիտի ըլլաք չարին ամէն կրակոտ
17 նետերը մարելու. Ու փրկութեան սաղաւարտը
առէք, ու Հոգիին սուրը՝ որ Աստուծոյ խօսքն
18 է. Ամէն աղօթքով ու խնդրուածքով ամէն ա-

ծ Հռով. բ. 11; Կող. գ. 25.
կ Գղ. ա. 19; գ. 16; Կող. ա. 11.
հ Հռով. ժգ. 12; բ Կոր. զ. 7; Հմր 13; ա Թես. ե. 8.
ձ Մատ. ժզ. 17; ա Կոր. ժե. 50.
ղ Հռով. ը. 38; Գղ. ա. 21; Կող. բ. 15.
ճ Ղու. իբ. 53; Յով. ժբ. 31; ժդ. 30; Գղ. բ. 2; Կող. ա. 13.
մ բ Կոր. ժ. 4; Հմր 11.
յ Գղ. ե. 16.
ն Եսա. ժա. 5; Ղու. ժբ. 35; ա Պետ. ա. 13.
շ Եսա. ծթ. 17; բ Կոր. զ. 7; ա Թես. ե. 8.
ո Եսա. ծբ. 7; Հռով. ժ. 15.
չ ա Յով. ե. 4.
պ Եսա. ծթ. 17; ա Թես. ե. 8.
ջ Եբր. դ. 12; Յայտ. ա. 16; բ. 16; ժթ. 15.
ռ Ղու. ժը. 1; Հռով. ժբ. 12; Կող. դ. 2; ա Թես. ե. 17.

տեն աղօթք ըրէք Հոգիով, ու ասոր համար վրայ
հսկեցէք կատարեալ յարատեւութեամբ ու աղա-
19 չանքով՝ բոլոր սուրբերուն համար, Ինծի համար
ալ, որ ինծի խօսք տրուի որ բերանս բանամ
համարձակութեամբ աւետարանին խորհուրդը
20 յայտնելու. Որուն համար ես դեսպանութիւն
կ'ընեմ կապանքովս, որ անով համարձակու-
թիւն ունենամ խօսելու՝ ինչպէս որ պէտք է։
21 Բայց որ դուք ալ գիտնաք իմ վրայօքս՝ թէ
ինչ կ'ընեմ ես, ամէն բանը պիտի ցուցնէ ձեզի
Տիւքիկոս սիրելի եղբայրը ու հաւատարիմ պաշ-
22 տօնեան Տէրոջմով. Զոր որ յատկապէս ասոր բա-
նին համար ձեզի խրկեցի, որ գիտնաք դուք մեր
վրայով, ու ինքը ձեր սիրտերը մխիթարէ։
23 Խաղաղութիւն եղբայրներուն եւ սէր հաւատ-
քով մէկտեղ Հօր Աստուծմէն՝ ու Տէր Յիսուս
24 Քրիստոսէն։ Շնորհք անոնց ամենուն հետ՝ որոնք
մեր Տէր Յիսուս Քրիստոսը անեղծութեամբ կը
սիրեն։ Ամէն։

ս Մատ. իզ. 41; Մար. ժգ. 33.
վ Գղ. ա. 16; Փիլ. ա. 4; ա Տիմ. բ. 1.
տ Գոր. դ. 29; Կող. դ. 3; բ Թես. գ. 1.
ր բ Կոր. գ. 12.
ց բ Կոր. ե. 20.
ւ Գոր. իզ. 29; իը. 20; Գղ. գ. 1; Փիլ. ա. 7, 13, 14; բ Տիմ. ա. 16; բ. 9; Փիլմ. 10.
փ Գոր. իը. 31; Փիլ. ա. 20; ա Թես. բ. 2.
ք Կող. դ. 7.
օ Գոր. ի. 4; բ Տիմ. դ. 12; Տիտ. գ. 12.
ֆ Կող. դ. 8.
ա Պետ. ե. 14.
Տիտ. բ. 7.

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

3 Պօղոս կը յայտնէ իր գոհութիւնը առ Աստուած, և իր սէրը որ ունի Փիլիպպեցւոց վրայ՝ իրենց հաւատքի պտուղին համար, և իր չարչարանացը հաղորդ ըլլալնուն համար. 9 Թէ ամէն օր աղօթք կ'ընէ որ անոնք շնորհօք աճին. 12 Կը պատմէ թէ Հռովմայ մէջ իր կրած նեղութիւններովը Քրիստոսի հաւատքը մեծ յաջողութիւն ունեցաւ, 21 և թէ ինք միշտ պատրաստ է Քրիստոսը փառաւորելու թէ՛ իր ապրելովը և թէ մեռնելովը. 27 Կը յորդորէ զանոնք որ միաբան ըլլան, 28 և քաջասիրտ՝ հալածման ժամանակ.

1 Պօղոս և Տիմոթէոս՝ Յիսուս Քրիստոսի ծառա-
ները, ա Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբե-
րուն՝ որ Փիլիպպեցւոց կողմերն են՝ եպիսկոպոսնե-
2 րով ու սարկաւագներով. բ Շնորհք ու խաղա-
ղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր
Յիսուս Քրիստոսէն:
3 գ Կը գոհանամ իմ Աստուծմէս ամէն անգամ որ
4 ձեզ կը յիշեմ, (Միշտ իմ ամէն խնդրուածքիս
մէջ ձեր ամենուն համար ուրախութեամբ աղօթք
5 կ'ընեմ,) դ Աւետարանին հաղորդ ըլլալնուդ
6 համար առջի օրուընէ մինչև հիմա. Աս
մասին վստահ ըլլալով՝ ե թէ ան որ ձեր մէջը
բարի գործ մը սկսաւ, զ մինչև Յիսուս Քրիս-
7 տոսի օրը պիտի կատարէ. Ինչպէս որ ինծի ար-

ա Կոր. ա. 2.
բ Հռով. ա. 7; բ Կոր. ա. 2; ա Պետ. ա. 2.
գ Հռով. ա. 8, 9; ա Կոր. ա. 4; Եփե. ա. 15, 16; Կող. ա. 3; ա Թես. ա. 2; բ Թես. ա. 3.
դ Հռով. ժբ. 13; ժե. 26; բ Կոր. ը. 1; Գղ. դ. 14, 15.
ե Յովհ. զ. 29; ա Թես. ա. 3.
զ Հմր 10.

ժան ալ է ձեր ամենուն վրայ աս բանը խորհիլ՝
է *ձեզ իմ սրտիս մէջը ունենալուս՝՝ համար ը իմ
կապերուս մէջ, թ և Աւետարանին ջատագովու-
թեանը ու հաստատութեանը մէջ, ժ և ամէնքդ
ինծի եղած շնորհքին հաղորդ ըլլալնուդ համար:
8 Վասնզի ի վկայ է ինծի Աստուած, որ ինչպէս փա-
փաք ունիմ ձեր ամենուն վրայ Քրիստոս Յիսուսի
9 գութովը: Եւ աս աղօթքը կ'ընեմ, լ որ ձեր սէ-
րը հետզհետէ աւելի շատնայ գիտութիւնով ու
10 բոլոր ընտրողութիւնով, ծ Որ դուք տարբեր բա-
ները զանազանէք, կ որպէս զի մինչև հ Քրիստոսի
օրը անկեղծ և առանց գայթակղութեան ըլլաք:
11 ձ Արդարութեան պտուղներով լեցուած Յիսուս Քր-
իստոսի ձեռքովը՝ ղ Աստուծոյ փառքին ու գովես-
տին համար:
12 Կ'ուզեմ որ գիտնաք՝ եղբայրներ, թէ ինչ որ
ինծի պատահեցաւ՝ ալ աւելի Աւետարանին յա-
13 ռաջադիմութեանը պատճառ եղաւ. Մինչև իմ
կապերս որ Քրիստոսի համար են, ճ բոլոր պալա-
տին մէջը և ուրիշ ամենուն ալ յայտնի եղան.
14 Եւ Տէրոջմով եղբայրներուն շատերը սիրտ առին
իմ կապերէս ալ աւելի համարձակիլ Աստուծոյ
15 խօսքը խօսելու առանց վախի: Ոմանք նախանձէ
մ ու հակառակութենէ, և ոմանք բարեսիրութենէ
16 [illegible] Քրիստոսը կը քարոզեն. Անոնք հակա-
ռակութեան համար Քրիստոսը կը պատմեն, չէ

է բ Կոր. գ. 2; է. 3.
* Կամ՝ զիս ձեր սրտերուն մէջը ունենալնուդ
ը Եփե. գ. 1; զ. 20; Կող. դ. 3, 18; բ Տիմ. ա. 8.
թ Հմր 17.
ժ Գղ. դ. 14.
ի Հռով. ա. 9; թ. 1; Գաղ. ա. 20; ա Թես. բ. 5.
լ Գղ. բ. 26; դ. 1.
խ ա Թես. գ. 12; Փիլիմ. 6.
ծ Հռով. բ. 18; ժբ. 2; Եփե. ե. 10.
կ Գոր. իդ. 16; ա Թես. գ. 13; ե. 23.
հ ա Կոր. ա. 8.
ձ Յովհ. ժե. 4, 5; Եփե. բ. 10; Կող. ա. 6.
ղ Յովհ. ժե. 8; Եփե. ա. 12, 14.
ճ Գղ. դ. 23.
մ Գղ. բ. 3.

թէ անկեղծութեամբ, կարծելով վիշտ աւելցը-
17 նել իմ կապերուս վրայ ․ Իսկ ասոնք սիրոյ հա-
մար ․ ինչու որ գիտեն թէ ես աւետարանին համար
18 պատասխան տալու կեցեր եմ ․ Բայց ի՞նչ է ․ ո՛ր
կերպով որ ըլլայ՝ թէ՛ պատճառանքով և թէ
ճշմարտութիւնով՝ Քրիստոս կը պատմուի ․ ու
ասոր վրայ ուրախ եմ, և ուրախ ալ պիտի ըլլամ ։
19 Քանզի գիտեմ որ ասոր վախճանը իմ փրկու-
թեանս համար պիտի ըլլայ ն ձեր խնդրուածքովը,
շ ու Յիսուս Քրիստոսի Հոգւոյն օգնականու-
20 թեամբը, ո Իմ ակնկալութեանս ու իմ
յոյսիս համեմատ, չ որ բանով մը ամօթով պիտի
չըլլամ ․ պ հապա կատարեալ համարձակութիւ-
նով ինչպէս որ ամէն ատեն՝ անանկ ալ հիմա
Քրիստոս իմ մարմինիս մէջ պիտի փառաւորի՝
21 թէ՛ ապրելովս և թէ մեռնելովս ։ Ինչու որ ինծի
համար՝ ապրիլը Քրիստոս է, ու մեռնիլը օգուտ ։
22 Հապա թէ որ մարմինի մէջ ապրիլս իմ գործոյս
պտուղ կը բերէ, ալ չեմ գիտեր ո՛րը ընտրեմ ։
23 Երկու կողմանէ ալ նեղը մնացած եմ, ջ մեկնելու ու
Քրիստոսի հետ ըլլալու փափաք ունենալով ․ քանզի
24 ան շատ աւելի աղէկ է ․ Բայց մարմինի մէջ կենա-
25 լը՝ ձեզի համար աւելի հարկաւոր ։ ռ Եւ աս բանիս
համոզուած ըլլալով՝ գիտեմ որ ձեր ամենուն հե-
տը պիտի կենամ ու մնամ, որ դուք զարգանաք
26 և ուրախ ըլլաք հաւատքով ․ ս Որ ձեր պարծանքը
իմ վրայովս աւելի ըլլայ Քրիստոս Յիսուսով, իմ
նորէն ձեզի գալուս պատճառովը ։
27 վ Միայն թէ Քրիստոսի աւետարանին ինչպէս
որ կը վայլէ՝ անանկ վարուեցէք ․ որ եթէ գամ ու

յ Հմր 7 ։
ն բ Կոր. ա. 11 ։
շ Հռով. ը. 9 ։
ո Հռով. ը. 19 ։
չ Հռով. ե. 5 ։
պ Եփես. զ. 19, 20 ։
ջ բ Կոր. ե. 8 ։
ռ բ Տիմ. դ. 6 ։
ս Փլ. բ. 24 ։
վ բ Կոր. ա. 14 ։ ե. 12 ։
տ Եփես. դ. 1 ։ Կող. ա. 10 ։ ա Թես. բ. 12 ։ դ. 1 ։

ձեզ տեսնեմ, և կամ հեռու ըլլամ, ձեր վրայովը
լսեմ ր որ դուք հաստատուն կը կենաք մէկ հո-
գիով, ց ու մէկ շունչով ւ պատերազմակից կ՚ըլ-
28 լաք աւետարանին հաւատքին համար ․ Եւ մէկ
բանով մըն ալ մի՛ զարհուրիք հակառակորդնե-
րէն, փ որ անոնց կորստեան ապացոյց մըն է, ք ու
29 ձեզի՝ փրկութեան ․ Ան ալ Աստուծմէ է ․ օ Ինչու
որ ձեզի տրուեցաւ Քրիստոսի համար՝ ֆ չէ՛ թէ
միայն անոր հաւատալ, հապա անոր համար չար-
30 չարուիլ ալ, աա Նոյն պատերազմը ունենալով՝
բբ որ իմ վրաս տեսաք ու հիմա իմ վրայովս կը
լսէք ։

ԳԼ. Բ

1 Կը խրատէ զանոնք միաբան և խոնարհամիտ ըլլալու, ցու-
ցնելով անոնց՝ Քրիստոսի խոնարհութիւնը և բարձրու-
թիւնը ։ 12 Կը յորդորէ որ ջանք ընեն փրկութեան ճամ-
բուն մէջ յառաջանալու, որ լուսաւորներու պէս ըլլան աս
չար աշխարհիս մէջ, 16 և մխիթարութիւն տան իրեն՝ որ
անոնց առաքեալն է, ու պատրաստ կը կենայ Աստուծոյ զոհ
ըլլալու ։ 19 Կը յուսայ որ Տիմոթէոսը խրկէ անոնց, որուն
վրայով բարի վկայութիւն կու տայ ․ 25 Նմանապէս Եպաֆ-
րոդիտոսին վրայով ալ՝ որն որ նոյն ատենը անոնց կը խրկէ ։

1 Ուստի թէ որ Քրիստոսով մխիթարութիւն մը
կայ, թէ սիրոյ սփոփանք մը, գգ թէ Հոգիի հա-
ղորդութիւն մը, դդ թէ գթութիւն ու ողորմու-
2 թիւն մը ․ եե Իմ ուրախութիւնս դուք լեցուցէք,
զզ նոյն խորհուրդը ունեցէք, մի և նոյն սէրը ձեր-
նէ ունենալով, մէկ շունչ, մէկ մտածմունք ․
3 էէ Բան մը գրգռութիւնով կամ սնապարծութիւ-

ր Փլ. դ. 1 ։
ց ա Կոր. ա. 10 ։
ւ Յուդ. 3 ։
փ բ Կոր. ա. 5 ։
ք Հռով. ը. 17 ։ բ Տիմ. բ. 11 ։
օ Գործ. ե. 41 ։ Հռով. ե. 3 ։
ֆ Եփես. բ. 8 ։
աա Կող. բ. 1 ։
բբ Գործ. ժզ. 19, 22 ։ ա Թես. բ. 2 ։
գգ բ Կոր. ժգ. 13 ։
դդ Կող. գ. 12 ։
եե Յօհ. գ. 29 ։
զզ Հռով. ժբ. 16 ։ ժե. 5 ։ ա Կոր. ա. 10 ։ բ Կոր. ժգ. 11 ։ Փլ. ա. 27 ։ գ. 16 ։ դ. 2 ։ ա Պետ. գ. 8 ։
էէ Գաղ. ե. 26 ։ Փլ. ա. 15, 17 ։ Յակ. գ. 14 ։

նով՝ մի՛ ընէք․ դ Հապա խոնարհութիւնով մէկ-
4 զմէկ ձեր անձէն լաւ սեպեցէք․ ե Մինակ անձեր-
նուդ լաւը մի՛ նայիք․ հապա ամէն մէկը իր ընկե-
5 րինն ալ ։ զ Ձեզմէ ամէն մէկը նոյն միտքը թող
6 ունենայ, որ Քրիստոս Յիսուսի մէջն էր․ է Որ
Աստուծոյ կերպարանքը ունենալով, ը* յափշտա-
կութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւասար ըլլալը․
7 թ Հապա անձը ունայնացուց ժ ծառայի կերպարանք
առնելով՝ ի մարդոց նման ըլլալով․ եւ կերպա-
8 րանքով մարդու պէս գտնուելով, Ինքզինքը
խոնարհեցուց՝ լ մինչեւ մահուան հնազանդ եղաւ,
9 ու ան ալ խաչին մահուանը ։ խ Անոր համար
Աստուած ալ զանիկա խիստ բարձրացուց, ծ ու
անոր անուն մը տուաւ՝ որ ամէն անունէն
10 վեր է․ կ Որ Յիսուսի անունին ամէն ծունկ
ծռի՝ երկնաւորներուն ու երկրաւորներուն,
11 եւ սանդարամետականներուն․ հ Ու ամէն լեզու
դաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է Հօր Աս-
12 տուծոյ փառքին համար ։ Ասոր իմ սիրելինե՛րս
ձ ինչպէս որ ամէն ատեն հնազանդ եղաք՝ ո՛չ միայն
իմ ներկայութեանս, հապա ալ աւելի հիմա՝ իմ
բացակայութեանս ատենը, ղ ահով ու դողով

դ Հռով․ ժբ․ 10 ։ Եփե․ ե․ 21 ։ ա Պետ․ ե․ 5 ։
ե ա Կոր․ ժ․ 24, 33 ։ ժգ․ 5 ։
զ Մատ․ ժա․ 29 ։ Յոհ․ ժգ․ 15 ։ ա Պետ․ բ․ 21 ։ ա Յոհ․ բ․ 6 ։
է Յոհ․ ա․ 1, 2 ։ ժէ․ 5 ։ բ Կոր․ դ․ 4 ։ Կող․ ա․ 15 ։ Եբր․ ա․ 3 ։
ը Յոհ․ ե․ 18 ։ ժ․ 33 ։
* Կամ յափշտակելու բան
թ Սաղ․ իբ․ 6 ։ Եսա․ ծգ․ 3 ։ Դան․ թ․ 26 ։ Մար․ թ․ 11 ։ Հռով․ ժե․ 3 ։
ժ Եսա․ խբ․ 1 ։ խթ․ 3, 6 ։ ծբ․ 13 ։ ծգ․ 11 ։ Եզեկ․ լդ․ 23, 24 ։ Զաք․ գ․ 8 ։ Մատ․ ի․ 28 ։ Ղու․ իբ․ 27 ։
ի Յոհ․ ա․ 14 ։ Հռով․ ա․ 3 ։ ը․ 3 ։ Գաղ․ դ․ 4 ։ Եբր․ բ․ 14, 17 ։
լ Մատ․ իզ․ 39, 42 ։ Յոհ․ ժ․ 18 ։ Եբր․ ե․ 8 ։ ժբ․ 2 ։
խ Յոհ․ ժէ․ 1, 2, 5 ։ Գոր․ բ․ 33 ։ Եբր․ բ․ 9 ։
ծ Եփե․ ա․ 20, 21 ։ Եբր․ ա․ 4 ։
կ Եսա․ խե․ 23 ։ Մատ․ իը․ 18 ։ Հռով․ ժդ․ 11 ։ Յայտ․ ե․ 13 ։
հ Յոհ․ ժգ․ 13 ։ Գոր․ բ․ 36 ։ Հռով․ ժդ․ 9 ։ ա Կոր․ ը․ 6 ։ ժբ․ 3 ։
ձ Գլ․ ա․ 5 ։
ղ Եփե․ զ․ 5 ։

13 անձերնուդ փրկութիւնը գործեցէք․ ճ Ինչու որ
Աստուած է որ ձեր մէջը կը ներգործէ կամենալը
14 ու ընելը իր հաճութեանը համար ։ մ Ամէն բան
առանց տրտունջներու յ ու վիճաբանութիւններու
15 ըրէք․ ն Որ ըլլաք ամբիծ ու անարատ՝ Աստուծոյ
որդիներ շ առանց մեղադրանքի՝ ո կամակոր ու
խոտորեալ ազգին մէջ, չ որոնց մէջը դուք
լուսաւորներու պէս կը փայլիք աշխարհիս մէջ․
16 Կենաց խօսքը ամուր բռնելով՝ պ ինծի պարծանք
ըլլալու համար Քրիստոսի օրը, ջ թէ պարապ
տեղը չվազեցի, եւ պարապ տեղը չաշխատեցայ ։
17 ռ Բայց թէպէտեւ ձեր հաւատքին պատարագին ս ու
պաշտօնին վրայ ընծայուիմ, վ կ'ուրախանամ եւ
18 ձեր ամենուն հետը ուրախակից կ'ըլլամ․ Նոյնպէս
ալ դուք ուրախացէք ու իմ հետս ուրախակից
եղէք ։
19 Երդ կը յուսամ Տէր Յիսուսով, որ տ Տիմո-
թէոսը շուտով ձեզի խրկեմ, որ իմ սիրտս ալ
20 հանգչի, երբոր ձեր վիճակը գիտնամ ։ ր Ինչու
որ անոր նման սրտակից մէկը չունիմ, որ մտերմա-
21 բար ձեզի համար հոգ տանի ։ ց Քանզի ամէնը
իրենցը կը փնտռեն, ու չէ թէ Յիսուս Քրիստո-
22 սինը ։ Բայց դուք անոր փորձը գիտէք, ւ որ
ինչպէս որդի մը հօրը հետ՝ անանկ ինծի հետ ծառա-
23 յութիւն ըրաւ աւետարանին մէջ ։ Ասոր կը յու-
սամ անիկայ խրկել, շուտ մը իմ ինչպէս ըլլալիքս
24 տեսածիս պէս ։ փ Բայց վստահութիւն ունիմ

ճ բ Կոր․ գ․ 5 ։ Եբր․ ժգ․ 21 ։
մ ա Կոր․ ժ․ 10 ։ ա Պետ․ դ․ 9 ։
յ Հռով․ ժդ․ 1 ։
ն Մատ․ ե․ 45 ։ Եփե․ ե․ 1 ։
շ ա Պետ․ բ․ 12 ։
ո բ Օր․ լբ․ 5 ։
չ Մատ․ ե․ 14, 16 ։ Եփե․ ե․ 8 ։
պ բ Կոր․ ա․ 14 ։ ա Թես․ բ․ 19 ։
ջ Գաղ․ բ․ 2 ։ բ Թես․ գ․ 5 ։
ռ բ Տիմ․ դ․ 6 ։
ս Հռով․ ժե․ 16 ։
վ բ Կոր․ է․ 4 ։ Կող․ ա․ 24 ։
տ Հռով․ ժզ․ 21 ։ ա Թես․ գ․ 2 ։
ր Սաղ․ ծե․ 13 ։
ց ա Կոր․ ժ․ 24, 33 ։ ժգ․ 5 ։ բ Տիմ․ գ․ 9, 16 ։
ւ ա Կոր․ դ․ 17 ։ ա Տիմ․ ա․ 2 ։ բ Տիմ․ ա․ 2 ։
փ Գլ․ ա․ 25 ։ Փիլիմ․ 22 ։

Տէրոջմով՝ որ ես ալ քիչ ատենէն պիտի գամ:
25 Միայն թէ հարկաւոր սեպեցի հիմա ձեզի խրկել
ա Եպափրոդիտոս իմ եղբայրս եւ գործակիցս բ ու-
զինուորակիցս՝ գ ձեր խրկածը դ ու իմ պիտոյից
26 ծառայողը: ե Որովհետեւ ինքն ալ շատ փափաք
ունէր ձեզ ամէնքդ ալ [տեսնելու] . ու կը տրտմէր,
27 որ դուք լսած էիք թէ ինքը հիւանդացաւ: Ի-
րաւ ալ ինքը հիւանդացաւ մահուան մօտ, բայց
Աստուած ողորմեցաւ անոր. չէ թէ միայն անոր՝
հապա ինծի ալ, որ տրտմութեան վրայ տրտմու-
28 թիւն չունենամ: Ասոր համար աւելի փութով
խրկեցի որ դուք զանիկայ տեսնելով նորէն ուրախ
29 ըլլաք, ու ես առանց տրտմութեան ըլլամ: Ու-
րեմն ընդունեցէք անիկայ Տէրոջմով ամէն ուրա-
խութեամբ, զ ու անանկները պատուականներու
30 կարգը բռնեցէք. Քանզի Քրիստոսի գործին
համար մինչեւ մահուան մօտեցաւ՝ իր կեանքը վը-
տանգի մէջ ձգելով, է որ ձեր ինծի ծառայելու
պակասութիւնը ինքը լեցնէ:

ԳԼ. Գ

1 Առաքեալը կը պատուիրէ որ հեռու կենան թլփատութիւն քարոզող սուտ վարդապետներէն, 4 ցուցընելով թէ ինքը անոնցմէ աւելի իրաւունք ունէր օրէնքին արդարութեամբը պարծենալու, 7 բայց սակայն ինքը վնաս եւ աղտեղութիւն կը համարի ան, որ Քրիստոսը ու անոր արդարութիւնը շահի. 12 այսու ամենայնիւ կը խոստովանի իր անկատարութիւնը. 15 կը յորդորէ զանոնք իրեն պէս խորհելու, 17 իրեն նմանող ըլլալու, 18 եւ մարմնաւոր քրիստոնեաներուն չար ճամբաներէն հեռու մնալու:

1 Ուստի իմ եղբայրներս ը ուրախ եղէք Տէրոջմով.
Նոյն բաները ձեզի գրելը ինծի ձանձրութիւն

ա Գլ. դ. 18:
բ Փիլիմ. 2:
գ Կոր. ը. 23:
դ բ Կոր. ժա. 9: Գլ. դ. 18:
ե Գլ. ա. 3:
զ ա Կոր. ժզ. 18: ա Թես. ե. 12: ա Տիմ. ե. 17:
է ա Կոր. ժզ. 17: Գլ. դ. 10:
ը բ Կոր. ժգ. 11: Գլ. դ. 4: ա Թես. ե. 16:

2 չէ, ու ձեզի ապահովութիւն է: ա Զգուշացէք
շուներէն, բ զգուշացէք չար մշակներէն, գ զգու-
3 շացէք կրճատութենէն: դ Ինչու որ թլփատու-
թիւնը մենք ենք, ե որ հոգիով Աստուած կը պաշ-
տենք, զ ու կը պարծենանք Քրիստոս Յիսուսով,
4 եւ մարմինի վրայ չէ վստահութիւննիս: է Թէպէտ ես
ալ նոյն վստահութիւնը ունիմ մարմինի վրայ.
թէ որ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն
5 ունի մարմինի վրայ, ալ աւելի ես. ը Ութ օրուան
թլփատուած, թ Իսրայէլի ազգէն, ժ Բենիամինի
ցեղէն, ի Եբրայեցի Եբրայեցիներէ, լ օրէնքին
6 նայելով փարիսեցի. խ Նախանձաւոր ըլլալու կող-
մանէ՝ ծ եկեղեցին կը հալածէի, կ օրէնքին արդա-
7 րութեանը կողմանէ հ անարատ էի: ձ Բայց ինչ
որ ինծի շահ էր, անոնք Քրիստոսի համար վնաս
8 սեպեցի: Նաեւ իրաւ բոլոր բաներն ալ վնաս կը
սեպեմ ղ իմ Տէրոջս Քրիստոս Յիսուսի գերազանց
գիտութեանը համար. որուն համար ամէն բաներէն
զրկուեցայ, եւ աղտեղութիւն կը սեպեմ, որ
9 Քրիստոսը շահիմ, Ու իր մէջը գտնուիմ, ճ չէ
թէ իմ արդարութիւնս ունենալով որ օրէնքէն է,
մ հապա Քրիստոսի հաւատքովը եղած արդարու-
10 թիւնը որ Աստուծմէ է հաւատքով. Ճանչնա-
լու զանիկա եւ անոր յարութեանը զօրութիւնը՝

ա Եսա. ծզ. 10: Գաղ. ե. 15:
բ բ Կոր. ժա. 13:
գ Հռովմ. բ. 28: Գաղ. ե. 2:
դ բ Օր. ժ. 16: լ. 6: Երեմ. դ. 4: Հռովմ. բ. 29: դ. 11, 12: Կող. բ. 11:
ե Յոհ. դ. 23, 24: Հռովմ. է. 6:
զ Գաղ. զ. 14:
է բ Կոր. ժա. 18, 21:
ը Ծն. ժէ. 12:
թ բ Կոր. ժա. 22:
ժ Հռովմ. ժա. 1:
ի բ Կոր. ժա. 22:
լ Գործ. իգ. 6: իզ. 4, 5:
խ Գործ. իբ. 3: Գաղ. ա. 13, 14:
ծ Գործ. ը. 3: թ. 1:
կ Հռովմ. ժ. 5:
հ Ղուկ. ա. 6:
ձ Մատ. ժգ. 44:
ղ Եսա. ծգ. 11: Երեմ. թ. 23, 24: Յոհ. ժէ. 3: ա Կոր. բ. 2: Կող. բ. 2:
ճ Հռովմ. ժ. 3, 5:
մ Հռովմ. ա. 17: գ. 21, 22: թ. 30: ժ. 3, 6: Գաղ. բ. 16:

ն ու անոր չարչարանքներուն հաղորդ ըլլալը , անոր
11 մահուան կերպարանքը առնելով . շ Որ ըլայ
12 թէ մեռելներուն յարութեանը հասնիմ ։ Ոչ թէ ես ո արդէն առեր եմ , չ կամ արդէն կատարեալ եղեր եմ , հապա ետեւէ ինկած եմ որ բռնեմ մրցանակը , որուն համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէն ։
13 Եղբայրնե՛ր՝ ես չեմ սեպեր որ բռներ եմ . բայց մէկ բան մը կայ , պ որ ետեւի եղածները մոռցած եմ , ջ ու առջեւի եղածներուն
14 կը դիմեմ . ռ Նպատակը դիտելով՝ Քրիստոս Յիսուսով եղած ս Աստուծոյ վերին կոչմանը մրցա-
15 նակին կը վազեմ ։ Ուստի մենք ամէնքս վ որ կատարեալ ենք , տ ասիկայ խորհինք , և թէ որ բան մը ուրիշ կերպով խորհելու ըլլաք , զանիկա ալ
16 ձեզի պիտի յայտնէ Աստուած ։ Միայն թէ ինչ աստիճանի որ հասեր ենք՝ ր նոյն կանոնին համեմատ
17 քալենք , ց նոյն խորհուրդը ունենանք ։ ւ Դուք նմանող եղէք՝ եղբայրներ , ու նայեցէ՛ք անոնց որ այնպէս կը քալեն , փ ինչպէս որ մեզ ձեզի օրինակ
18 ունիք ։ Ինչու որ շատերը կը քալեն , որոնց համար շատ անգամ ձեզի կ'ըսէի , և հիմա լալով ալ կը զրուցեմ , այսինքն ք Քրիստոսի խաչին թշնա-
19 միներուն համար . օ Որ անոնց վերջը կորուստ է ,

ն Հռով . զ . 3 , 4 , 5 ։ ը . 17 ։ բ Կոր . դ . 10 , 11 ։ բ Տիմ . բ . 11 , 12 ։ ա Պետ . դ . 13 ։
շ Գոր . իզ . 7 ։
ո ա Տիմ . զ . 12 ։
չ Եբր . ժբ . 23 ։
պ Սաղ . խե . 10 ։ Ղու . թ . 62 ։ բ Կոր . ե . 16 ։
ջ ա Կոր . թ . 24 , 26 ։ Եբր . զ . 1 ։
ռ բ Տիմ . դ . 7 , 8 ։ Եբր . ժբ . 1 ։
ս Եբր . գ . 1 ։
վ ա Կոր . բ . 6 ։ ժդ . 20 ։
տ Գաղ . ե . 10 ։
ր Գաղ . զ . 16 ։
ց Հռով . ժբ . 16 ։ ժե . 5 ։ Գղ . բ . 2 ։
ւ ա Կոր . դ . 16 ։ ժա . 1 ։ Գղ . գ . 9 ։ ա Թես . ա . 6 ։
փ ա Պետ . ե . 3 ։
ք Գաղ . ա . 7 ։ բ . 21 ։ զ . 12 ։ Գղ . ա . 15 , 17 ։
օ բ Կոր . ժա . 15 ։ բ Պետ . բ . 1 ։

ա որոնց աստուածը իրենց որովայնն է , բ ու անոնց փառքը իրենց ամօթն է , գ որոնք միայն երկրաւոր
20 բաները կը մտածեն ։ դ Բայց մեր *քաղաքականութիւնը երկինքն է , ե ուսկից ալ զ Փրկչին կ'սպա-
21 սենք՝ Տէր Յիսուս Քրիստոսին . է Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր ը փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու , այն զօրութիւնովը որ կարող է թ ամէնը իր տակը հնազանդեցընելու ։

ԳԼ . Դ

1 Մանաւոր խրատներէն ետև՝ 4 ընդհանուր յորդորանքներ կ'ընէ , 10 ցուցընելով թէ ինչպէս ինքը ուրախացաւ անոնց առատաձեռնութեանը վրայ որ ցուցուցին իրեն՝ իր բանտարկուած ատենը , ո՛չ այնքան իր պիտոյքը լեցընելնուն համար , հապա անոնց մէջը եղած Աստուծոյ շնորհքին համար . 19 և այսպէս իր թուղթը կը վերջացընէ աղօթքով և բարևներով ։

1 Ուստի իմ սիրելի ժ ու բաղձալի եղբայրներս՝ ի իմ ուրախութիւնս ու պսակս , լ այսպէս հաստատուն կեցէք Տէրոջմով՝ սիրելիներս ։
2 Եւոդիային կ'աղաչեմ ու Սիւնտիքին կ'աղաչեմ՝ խ որ մի և նոյն խորհուրդը ունենան Տէ-
3 րոջմով ։ Իրաւ քեզի ալ կ'աղաչեմ՝ իմ հարազատ լծակիցս , դուն ալ օգնական եղիր անոնց , ծ որոնք իմ հետ աշխատեցան աւետարանին մէջ Կղեմէսին և իմ ուրիշ գործակիցներուս հետ , կ որոնց անունները կենաց գրքին

ա Հռով . ժզ . 18 ։ ա Տիմ . զ . 5 ։ Տիտ . ա . 11 ։
բ Ովս . դ . 7 ։ բ Կոր . ժա . 12 ։ Գաղ . զ . 13 ։
գ Հռով . ը . 5 ։
դ Եփե . բ . 6 , 19 ։ Կող . գ . 1 , 3 ։
* Կամ՝ կենցաղավարութիւնը
ե Գոր . ա . 11 ։
զ ա Կոր . ա . 7 ։ ա Թես . ա . 10 ։ Տիտ . բ . 13 ։
է ա Կոր . ժե . 43 , 48 , 49 ։ Կող . գ . 4 ։ ա Յոհ . գ . 2 ։
ը Եփե . ա . 19 ։
թ ա Կոր . ժե . 26 , 27 ։
ժ Գղ . ա . 8 ։
ի բ Կոր . ա . 14 ։ Գղ . բ . 16 ։ ա Թես . բ . 19 , 20 ։
լ Գղ . ա . 27 ։
խ Գղ . բ . 2 ։ դ . 16 ։
ծ Հռով . ժզ . 3 ։ Գղ . ա . 27 ։
կ Ել . լբ . 32 ։ Սաղ . կթ . 28 ։ Դան . ժբ . 1 ։ Ղու . ժ . 20 ։ Յայտ . գ . 5 ։ ժգ . 8 ։ ի . 12 ։ իա . 27 ։

4 մէջն են։ ե Ուրախ եղէք Տէրոջմով ամէն ատեն.
5 դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք։ Ձեր քաղցրու-
թիւնը ամէն մարդոց թող յայտնի ըլլայ. է Տէրը
6 մօտ է։ ը Ոչինչի մը համար հոգ մի՛ ընէք. հապա
ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, գո-
հութիւնով մէկտեղ ձեր խնդրուածքը Աստուծոյ
7 յայտնի ըլլայ։ թ Եւ Աստուծոյ խաղաղութիւնը
որ ամէն միտքէ վեր է, ձեր սիրտերը ու միտքերը
8 Քրիստոս Յիսուսով պիտի պահպանէ։ Վերջա-
պէս, ո՛վ եղբայրներ, ինչ որ ճշմարտութիւնով է,
ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարու-
թիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով,
ժ ինչ որ բարի համբաւով, ինչ առաքինութիւն
և ինչ գովութիւն որ կայ, ան բաները խորհե-
9 ցէք։ ի Ինչ որ սորվեցաք ու առիք և լսեցիք ու
տեսաք իմ վրաս, ան ըրէք. լ և խաղաղութեան
Աստուածը ձեր հետը պիտի ըլլայ։
10 Մեծապէս ուրախացայ Տէրոջմով, խ որ իմ վրաս
ունեցած հոգերնիդ հիմա նորոգուեցաւ, ինչպէս
որ կը հոգայիք ալ, միայն թէ պատեհութիւն
11 չունէիք։ Ոչ թէ կարօտութեան համար կ'ը-
սեմ, ծ ինչու որ ես սորվեցայ գոհ ըլլալ իմ գըտ-
12 նուած վիճակիս մէջ։ կ Գիտեմ չքաւորութիւն
քաշելը, գիտեմ շատը ունենալը. ամէն բանի մէջ
ամէն կերպով աղէկ սորվեր եմ թէ՛ կշտանալը,
թէ՛ անօթենալը, թէ՛ շատ ունենալը և թէ՛ պակ-

ե Հռով. ժբ. 12; Փլ. գ. 1; ա Թես. ե. 16; ա Պետ. դ. 13;
է Եբր. ժ. 25; Յակ. ե. 8; ա Պետ. դ. 7; բ Պետ. գ. 8, 9; Տիմ բ Թես. բ. 2;
ը Սաղ. ծե. 22; Առակ. ժզ. 3; Մատթ. զ. 25; Ղուկ. ժբ. 22; ա Պետ. ե. 7;
թ Յովհ. ժդ. 27; Հռով. ե. 1; Կող. գ. 15;
ժ ա Թես. ե. 22;
ի Փլ. գ. 17;
լ Հռով. ժե. 33; ժզ. 20; ա Կոր. ժդ. 33; բ Կոր. ժգ. 11; ա Թես. ե. 23; Եբր. ժգ. 20;
խ բ Կոր. ժա. 9;
ծ ա Տիմ. զ. 6, 8;
կ ա Կոր. դ. 11; բ Կոր. զ. 10; ժա. 27;

13 սութիւն քաշելը։ ձ Ամէն բանի կարող եմ * ա-
14 նով՝ որ զիս զօրացուց։ Բայց աղէկ ըրիք ղ որ
15 իմ նեղութեանս մէջ ինծի հաղորդ եղաք։ Դուք
ալ գիտէք Փիլիպպեցիներ, որ աւետարանին
սկիզբը երբոր ես Մակեդոնիայէն ելայ, ճ մէկ եկե-
ղեցի մըն ալ հետս հաղորդութիւն չըրաւ տալու և
16 առնելու կողմէ, հապա միայն դուք. Որ Թեսա-
ղոնիկէի մէջ ալ մէկ երկու անգամ ինծի պէտք ե-
17 ղածը խրկեցիք։ Ոչ թէ ես տուրք կը փնտռեմ,
մ հապա պտուղ կը փնտռեմ որ ձեր հաշիւին վրայ
18 աւելնայ։ Բայց ես ամէն բան առած եմ ու ա-
ռատօրէն ունիմ. յ լեցուած եմ՝ Եպափրոդիտոսին
ձեռքովը ձեր խրկածները ընդունելով, ն որ անուշ
հոտ մըն է՝ շ ընդունելի պատարագ՝ Աստուծոյ հա-
19 ճելի։ ո Եւ իմ Աստուածս ձեր ամէն պիտոյքը
պիտի լեցնէ չ իր ճոխութեանը չափովը փառքով,
20 Քրիստոս Յիսուսի ձեռքովը։ պ Արդ Աստուծոյ
ու մեր Հօրը փառք յաւիտեանս յաւիտենից։
Ամէն։
21 Բարեւ ըրէք բոլոր սուրբերուն Քրիստոս Յի-
22 սուսով։ ջ Ձեզի բարեւ կ'ընեն իմ հետս եղող
23 եղբայրները։ Ձեզի բարեւ կ'ընեն բոլոր սուրբե-
րը, ռ մանաւանդ անոնք որ Կայսրին տունէն են։
24 ս Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուդ
հետը ըլլայ։ Ամէն։

ձ Յովհ. ժե. 5; բ Կոր. ժբ. 9;
* Ոմանք՝ Քրիստոսով.
ղ Փլ. ա. 7;
ճ բ Կոր. ժա. 8, 9;
մ Հռով. ժե. 28; Տիտ. գ. 14;
յ Փլ. բ. 25;
ն Եբր. ժգ. 16;
շ բ Կոր. թ. 12;
ո Սաղ. իգ. 1; բ Կոր. թ. 8;
չ Եփես. ա. 7; գ. 16;
պ Հռով. ժզ. 27; Գաղ. ա. 5;
ջ Գաղ. ա. 2;
ռ Փլ. ա. 13;
ս Հռով. ժզ. 24;

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաքեալը իր բարեւը տալէն ետեւ՝ կը գոհանայ Աստուծմէ Կողոսացի քրիստոնեից հաւատքին համար . 7 կը հաստատէ Եպափրասի վարդապետութիւնը . 9 նաեւ աղօթք կ'ընէ որ անոնք շնորհօք աճին . 14 կը նկարագրէ ճշմարիտ Քրիստոսը . 21 կը քաջալերէ զանոնք՝ Յիսուս Քրիստոսը ընդունելու , ու կը յիշեցնէ իր պաշտօնը ։

1 Պօղոս՝ [ա] Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստու-
2 ծոյ կամքովը , ու Տիմոթէոս եղբայրը , Կողո-
սայի մէջ եղող սուրբ [բ] ու հաւատացեալ եղբայր-
3 ներուն Քրիստոսով . [գ] Շնորհք ու խաղաղութիւն
ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն * ու Տէր Յիսուս
Քրիստոսէն" ։
[դ] Ամէն ատեն ձեզի համար աղօթք ընելով՝ կը
գոհանանք Աստուծմէ ու մեր Տէր Յիսուս Քրիս-
4 տոսին Հօրմէն , [ե] Լսելով ձեր հաւատքը՝ որ Քրիս-
տոս Յիսուսի վրայ , [զ] ու այն սէրը՝ որ բոլոր սուր-
5 բերուն վրայ ունիք . Այն յոյսին համար [է] որ եր-
կինքը կը պահուի ձեզի , որուն վրայով առաջուց
լսեցիք աւետարանին ճշմարտութեան խօսքովը .
6 Որ ձեզի հասաւ , [ը] ինչպէս որ բոլոր աշխարհ , [թ] ու
պտղաբեր ըլլալով [կ'աճի], ինչպէս ձեր մէջն ալ ,
այն օրուընէն որ դուք լսեցիք [ժ] ու ճանչցաք Աստու-

[ա] Եփե . ա . 1 ։
[բ] ա Կոր . դ . 17 ։ Եփե . զ . 21 ։
[գ] Գաղ . ա . 3 ։
* Ոմանք չունին ։
[դ] ա Կոր . ա . 4 ։ Եփե . ա . 16 ։ Փիլ . ա . 3 ։ դ . 6 ։
[ե] Հմր 9 ։ Եփե . ա . 15 ։ Փիլեմ . 5 ։
[զ] Եբր . զ . 10 ։
[է] բ Տիմ . դ . 8 ։ ա Պետ . ա . 4 ։
[ը] Մատ . իդ . 14 ։ Մար . ժզ . 15 ։ Հռով . ժ . 18 ։ Հմր 23 ։
[թ] Մար . դ . 8 ։ ա Յոհ . ժե . 16 ։ Փիլ . ա . 11 ։
[ժ] բ Կոր . զ . 1 ։ Եփե . գ . 2 ։ Տիտ . բ . 11 ։ ա Պետ . ե . 12 ։

7 ծոյ շնորհքը ճշմարտութիւնով . [ժա] Ինչպէս որ սոր-
վեցաք մեր սիրելի ծառայակիցէն՝ Եպափրասէն ,
[ժբ] որ ձեզի համար հաւատարիմ պաշտօնեայ մըն է
8 Քրիստոսի . Որ ինքն ալ մեզի պատմեց [ժգ] ձեր սէ-
րը հոգիով ։
9 [ժդ] Անոր համար մենք ալ այն օրուընէ որ լսեցինք՝
չենք դադարիր ձեզի համար աղօթք ընելէն ու
խնդրուածք մատուցանելէն , [ժե] որ կատարեալ ըլ-
լաք [ժզ] անոր կամքին գիտութեամբը՝ [ժէ] բոլոր իմաս-
10 տութիւնով ու հոգեւոր հանճարով . [ժը] Որ դուք
Տէրոջը արժանի կերպով քալէք [ժթ] ամէն բանի մէջ
[ի] հաճեցնելով , [իա] ամէն բարի գործքերու
մէջ պտղաբեր ըլլալով , ու աճեցում՝ Աստուծոյ
11 գիտութիւնովը . Իր փառաւոր զօրութեանը համե-
մատ ամէնայն ուժով ուժովցած՝ [իբ] բոլոր համբերու-
թեան ու երկայնմտութեան համար [իգ] ուրախու-
12 թեամբ . [իդ] Գոհանալով Հօր Աստուծոյ , որ մեզ
լուսոյ մէջ [իե] եղող սուրբերուն վիճակին մասնակից
13 ըլլալու արժանացուց . [իզ] Որ մեզ ազատեց խաւա-
րին իշխանութենէն , [իէ] ու իր սիրելի Որդւոյն թա-
14 գաւորութեանը փոխադրեց , [իը] Որ անով մենք
փրկութիւն ունինք իր արիւնովը , [իթ] մեղաց
15 թողութիւն . [լ] Որ ինքը աներեւոյթ Աստուծոյ
պատկերն է [լա] բոլոր ստեղծուածներուն անդրանի-
16 կը . [լբ] Ինչու որ անով ամէն բան ստեղծուեցաւ ,

[ժա] Գլ . դ . 12 ։ Փիլեմ . 23 ։
[ժբ] բ Կոր . ժա . 23 ։ ա Տիմ . դ . 6 ։
[ժգ] Հռով . ժե . 30 ։
[ժդ] Եփե . ա . 15 , 16 ։ Հմր 3 , 4 ։
[ժե] ա Կոր . ա . 5 ։
[ժզ] Հռով . ժբ . 2 ։ Եփե . ե . 10 , 17 ։
[ժէ] Եփե . ա . 8 ։
[ժը] Եփե . դ . 1 ։ Փիլ . ա . 27 ։ ա Թես . բ . 12 ։
[ժթ] ա Թես . դ . 1 ։
[ի] Յոհ . ժե . 16 ։ բ Կոր . թ . 8 ։ Փիլ . ա . 11 ։ Տիտ . գ . 1 ։ Եբր . ժգ . 21 ։
[իա] Եփե . գ . 16 ։ զ . 10 ։
[իբ] Եփե . դ . 2 ։
[իգ] Գոր . ե . 41 ։ Հռով . ե . 3 ։
[իդ] Եփե . ե . 20 ։ Գլ . գ . 15 ։
[իե] Գոր . իզ . 18 ։ Եփե . ա . 11 ։
[իզ] Եփե . զ . 12 ։ Եբր . բ . 14 ։ ա Պետ . բ . 9 ։
[իէ] ա Թես . բ . 12 ։ բ Պետ . ա . 11 ։
[իը] Եփե . ա . 7 ։
[իթ] բ Կոր . դ . 4 ։ Եբր . ա . 3 ։
[լ] Յայտ . գ . 14 ։
[լա] Յոհ . ա . 3 ։ ա Կոր . ը . 6 ։ Եփե . գ . 9 ։ Եբր . ա . 2 ։

ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ , անոնք
որ կ'երեւնան և անոնք որ չեն երեւնար , թէ
աթոռները՝ [ր] թէ տէրութիւնները՝ թէ պետու-
թիւնները՝ թէ իշխանութիւնները . [ց] բոլոր բա-
ները անով ու անոր համար ստեղծուեցան .
17 [ւ] Ու անիկայ ամէն բանէն առաջ է , և ամէն
18 բան անով հաստատ կը կենայ . [փ] Ու անի-
կայ է մարմինին՝ այսինքն եկեղեցիին գլուխը . որ
ինքը սկիզբն է՝ [ք] մեռելներէն անդրանիկը , որ
19 ինքը ըլլայ ամէն բանի մէջ նախապատիւ . Քանզի
որ Հօրը հաճեցաւ որ [օ] Աստուածութեան բոլոր
20 լեցունութիւնը անոր մէջը բնակի . Ու անով
[ֆ] ամէնը [ա] հաշտեցընէ իրեն հետ , [բ] խաղաղու-
թիւն ընելով անոր խաչին վրայ թափուած արիւնովը ,
թէ երկրի վրայ և թէ երկինքի մէջ եղողները :
21 Ու ձեզ ալ՝ [գ] որ ատեն մը օտարացած էիք ,
[դ] ու չար գործքերով թշնամիներ ձեր խորհուրդնե-
22 րովը , [ե] հիմա հաշտեցուց բուն իր մարմինովը՝ մա-
հուամբ , [զ] որ ձեզ անոր դիմացը սուրբ ու անբիծ
23 և անարատ կայնեցընէ . [է] Եթէ որ կենաք հաւատ-
քին մէջ հիմնուած ու հաստատ [ը] և առանց խախ-
տելու աւետարանին յոյսէն՝ որ լսեցիք , [թ] որ եր-
կինքին տակը եղած բոլոր ստեղծուածներուն [ժ] քա-

ր Հռով . ը . 38 ; Եփե . ա . 21 ; Գղ . բ . 10 , 15 ; ա Պետ . գ . 22 ;
ց Հռով . ժա . 36 ; Եբր . բ . 10 ;
ւ Յօհ . ա . 1 , 3 ; ժէ . 5 ; ա Կոր . ը . 6 ;
փ Եփե . ա . 10 , 22 ; դ . 15 ; ե . 23 ; ա Կոր . ժա . 3 ;
ք Գոր . իզ . 23 ; ա Կոր . ժե . 20 , 23 ; Յայտ . ա . 5 ;
օ Յօհ . ա . 16 ; գ . 34 ; Գղ . բ . 9 ; գ . 11 ;
ֆ Եփե . ա . 10 ;
ա բ Կոր . ե . 18 ;
բ Եփե . բ . 14 , 15 , 16 ;
գ Եփե . բ . 1 , 2 , 12 , 19 ; դ . 18 ;
դ Տիտ . ա . 15 , 16 ;
ե Եփե . բ . 15 , 16 ;
զ Ղու . ա . 75 ; Եփե . ա . 4 ; ե . 27 ; ա Թես . գ . 7 ; Տիտ . բ . 14 ; Յուդ . 24 ;
է Եփե . գ . 17 ; Գղ . բ . 7 ;
ը Յօհ . ժե . 6 ;
թ Հմր 6 ;
ժ Հռով . ժ . 18 ;

րոզուեցաւ , [ի] որուն ես Պօղոս սպասաւոր եղայ :
24 [լ] Հիմա ուրախ եմ իմ [խ] ձեզի համար քաշած չար-
չարանքներուս վրայ , [ծ] ու Քրիստոսի քաշած նե-
ղութիւններուն պակասութիւնը իմ մարմինիս մէ-
ջը կը լեցընեմ [կ] անոր մարմինին համար , որ եկե-
25 ղեցին է . Որուն ես սպասաւոր եղայ [հ] Աստուծոյ
տնտեսութիւնովը՝ որ ինծի տրուեցաւ ձեզի համար՝
26 Աստուծոյ խօսքը լման քարոզելու , [ձ] Այն խորհուր-
դը՝ որ ծածկուած էր առջի դարերէն ու ազգերէն
հետէ , [ղ] ու հիմա իր սուրբերուն յայտնուեցաւ .
27 [ճ] Որոնց ուզեց Աստուած գիտցընել , [մ] թէ ինչ է
աս խորհուրդին փառաւոր ճոխութիւնը հեթա-
նոսներուն մէջ . որ ան է Քրիստոս ձեր մէջը՝
28 [յ] փառաց յոյսը . Որ անիկայ մենք կը քարոզենք ,
[ն] ու ամէն մարդ կը խրատենք , և կը սորվեցընենք
ամէն մարդ բոլոր իմաստութիւնով , [շ] որ ամէն
մարդ կատարեալ կեցընենք Քրիստոս Յիսուսով .
29 [ո] Որուն համար ես ալ կ'աշխատիմ [չ] ջանք ընելով
[պ] իր ներգործութեանը համեմատ՝ որ զօրութիւ-
նով իմ մէջս 'ի գործ կը դրուի :

ի Գոր . ա . 17 ; բ Կոր . գ . 6 ; դ . 1 ; ե . 18 ; Եփե . գ . 7 ; Հմր 25 ; ա Տիմ . բ . 7 ;
լ Հռով . ե . 3 ; բ Կոր . է . 4 ;
խ Եփե . գ . 1 , 13 ;
ծ բ Կոր . ա . 5 , 6 ; Փիլ . գ . 10 ; բ Տիմ . ա . 8 ; բ . 10 ;
կ Եփե . ա . 23 ;
հ ա Կոր . թ . 17 ; Գաղ . բ . 7 ; Եփե . գ . 2 ; Հմր 23 ;
ձ Հռով . ժզ . 25 ; ա Կոր . բ . 7 ; Եփե . գ . 9 ;
ղ Մատ . ժգ . 11 ; բ Տիմ . ա . 10 ;
ճ բ Կոր . բ . 14 ;
մ Հռով . թ . 23 ; Եփե . ա . 7 ; գ . 8 ;
յ ա Տիմ . ա . 1 ;
ն Գոր . ի . 20 , 27 , 31 ;
շ բ Կոր . ժա . 2 ; Եփե . ե . 27 ; Հմր 22 ;
ո ա Կոր . ժե . 10 ;
չ Գղ . բ . 1 ;
պ Եփե . ա . 19 ; գ . 7 , 20 ;

ԳԼ . Բ

1 Դարձեալ կը յորդորէ զանոնք Քրիստոսի հաւատքին մէջ հաստատ կենալ . 8 կը զգուշացընէ հեթանոսական փիլիսոփայութենէ և փուճ աւանդութիւններէ ; 18 հրեշտակաց կրօնքէն 20 և օրինական ծէսերէն , որոնք Քրիստոսով վերջացած են :

1 Քանզի կ'ուզեմ որ գիտնաք ա թէ ինչպէս մեծ
անձկութիւն ունիմ ձեզի համար ու Լաւոդի-
կեցւոց համար, ու ամէն անոնց համար՝ որ իմ ե-
2 րեսս մարմնով չեն տեսեր. բ Որ անոնց
սիրտերը մխիթարուին՝ գ սիրով միացած, ու
կատարեալ իմացողութեան բոլոր ճոխութեա-
նը հասնին, այսինքն դ Հօր Աստուծոյ և
3 Քրիստոսի խորհուրդին գիտութեանը. ե Որուն
մէջ իմաստութեան ու գիտութեան բոլոր գան-
4 ձերը պահուած են։ Եւ աս կ'ըսեմ, զ որ չըլլայ
թէ մէկը հրապուրական խօսքերով ձեզ մոլորցնէ։
5 է Որ թէպէտ մարմնով հեռու եմ, բայց հոգւով
ձեզի հետ եմ, և ը կ'ուրախանամ երբոր ձեր բա-
րեկարգութիւնը կը տեսնեմ, թ Ու ձեր հաւատքին
6 հաստատութիւնը Քրիստոսի վրայ։ ժ Ուստի ինչ-
պէս որ ընդունեցիք Քրիստոս Յիսուս Տէրը՝ ա-
7 նով քալեցէք, ի Արմատ կապած ու անոր վրայ
շինուած և հաւատքին մէջ հաստատուած ինչպէս
որ սորվեցաք, և անոր մէջը աճեցէ՛ք գոհութիւ-
8 նով։ լ Զգուշացէք՝ չըլլայ որ մէկը ձեզ գերի
վարէ փիլիսոփայութիւնով ու փուճ խաբէութիւ-
նով, խ որ մարդոց աւանդութեան պէս է ծ ու
աշխարհքիս սկզբունքներուն պէս, և ոչ թէ Քրիս-
9 տոսի վարդապետութեանը պէս. կ Ինչու որ անոր
մէջը կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունու-

ա Գղ. ա. 29 ; Փիլ. ա. 30 ; ա Թես. բ. 2 ;
բ բ Կոր. ա. 6 ;
գ Գղ. գ. 14 ;
դ Փիլ. գ. 8 ; Գղ. ա. 9 ;
ե ա Կոր. ա. 24 ; բ. 6, 7 ; Եփե. ա. 8 ; Գղ. ա. 9 ;
զ Հռով. ժզ. 18 ; բ Կոր. ժա. 13 ; Եփե. դ. 14 ; ե. 6 ; Հմր 8, 18 ;
է ա Կոր. ե. 3 ; ա Թես. բ. 17 ;
ը ա Կոր. ժդ. 40 ;
թ ա Պետ. ե. 9 ;
ժ ա Թես. դ. 1 ; Յուդ. 3 ;
ի Եփե. բ. 21, 22 ; գ. 17 ; Գղ. ա. 23 ;
լ Երեմ. իթ. 8 ; Հռով. ժզ. 17 ; Եփե. ե. 6 ; Հմր 18 ; Եբր. ժգ. 9 ;
խ Մատ. ժե. 2 ; Գաղ. ա. 14 ; Հմր 22 ;
ծ Գաղ. դ. 3, 9 ; Հմր 20 ;
կ Յոհ. ա. 14 ; Գղ. ա. 19 ;

10 թիւնը՝ մարմնապէս։ հ Եւ դուք ալ անով լեցուած
էք, ձ որ ինքը գլուխ է ղ բոլոր իշխանու-
11 թեան ու պետութեան. ճ Որ անով դուք անձե-
ռագործ թլփատութիւնով թլփատուեցաք՝
մ մեղաց մարմինը մերկանալով Քրիստոսի թլփա-
12 տութիւնովը. յ Թաղուելով անոր հետ մկրտու-
թիւնով, ն որով նաև անոր հետ յարութիւն ա-
ռիք շ Աստուծոյ զօրութեանը հաւատալով, ո որ
13 ինքը զանիկայ մեռելներէն յարուց։ չ Եւ ձեզ՝ որ
ատեն մը յանցանքներու մէջ ու ձեր մարմնին ան-
թլփատութեանը մէջ մեռած էիք, կենդանացուց
անոր հետը. մեր ամէն յանցանքները ներելով մեզի,
14 պ Ու հրամաններով եղած մեզի հակառակ եղող
ձեռագիրը՝ որ մեզի դէմ կը կենար, ջնջեց, զա-
նիկայ մէջտեղէն վերցուց ու խաչափայտին վրայ
15 գամեց. ջ Եւ իշխանութիւնները ու պետութիւն-
ները ռ մերկացուց, ու յայտնապէս խայտառակեց՝
յաղթելով անոնց * անով։
16 ս Ուստի ալ մէկը թող չդատէ ձեզ վ ուտելու
կամ խմելու՝ տ կամ տօներու կամ ամսագլուխնե-
17 րու կամ շաբաթներու կողմանէ. ր Որոնք գալու
բաներուն շուքն են, բայց բուն մարմինը Քրիս-
18 տոսինն է։ ց Չըլլայ որ մէկը զրկէ ձեզ մրցանա-

հ Յոհ. ա. 16 ;
ձ Եփե. ա. 20, 21 ; ա Պետ. գ. 22 ;
ղ Գղ. ա. 16 ;
ճ բ Օր. ժ. 16 ; լ. 6 ; Երեմ. դ. 4 ; Հռով. բ. 29 ; Փիլ. գ. 3 ;
մ Հռով. զ. 6 ; Եփե. դ. 22 ; Գղ. գ. 8, 9 ;
յ Հռով. զ. 4 ;
ն Գղ. գ. 1 ;
շ Եփե. ա. 19 ; գ. 7 ;
ո Գործ. բ. 24 ;
չ Եփե. բ. 1, 5, 6, 11 ;
պ Եփե. բ. 14—16 ;
ջ Եփե. զ. 12 ;
ռ Ծն. գ. 15 ; Սաղ. կը. 18 ; Ես. ծգ. 12 ; Մատ. ժբ. 29 ; Ղու. ժ. 18 ; ժա. 22 ; Յոհ. ժբ. 31 ; ժզ. 11 ; Եփե. դ. 8 ; Եբր. բ. 14 ;
* Կամ իր անձովը ;
ս Հռով. ժդ. 3, 10, 12 ;
վ Հռով. ժդ. 2, 17 ; ա Կոր. ը. 8 ;
տ Հռով. ժդ. 5 ; Գաղ. դ. 10 ;
ր Եբր. ը. 5 ; թ. 9 ; ժ. 1 ;
ց Հմր 4 ;

կէն, որ ուզէ խոնարհութիւնով ու հրեշտակներու կրօնքով չտեսած բաներուն միջամուխ ըլլալ,
իր մարմինոյն միտքովը փուճ տեղը հպարտանալով.
19 Ու չբռնէ Գլուխը՝ ուսկից որ բոլոր մարմինը
յօդուածներով ու խաղերով հաղորդուած ու մէկ-
20 տեղ կցուած՝ Աստուծոյ աճումովը կ'աճի։ Իսկ ե-
թէ դուք Քրիստոսի հետ աս աշխարհիս սկզբունքներէն մեռաք, ալ ինչո՞ւ համար աշխարհիս մէջ
կենդանի եղողներու պէս տեսակ կանոններու կը
21 հնազանդիք, ըսելով, Մի՛ մօտենար, համը մի՛
22 առներ, մի՛ դպչիր, (Որոնց ամէնը ապականութեան համար են գործածութեամբ,) մարդոց
պատուիրանքներուն ու սորվեցուցածներուն համե-
23 մատ, Որոնք իմաստութեան կերպարանք մը ունին ինքնակամ կրօնքով ու խոնարհութիւնով
և մարմինի չխնայելով, բայց չէ թէ պատիւ մը արժանի են, հապա մարմինը յագեցնելու կը ծառայեն։

ԳԼ. Գ

1 Առաքեալը կը ցուցնէ թէ ո՛ւր փնտռելու ենք զՔրիստոս. 5 կը յորդորէ երկրաւոր անդամները սպաննել, 10 հին մարդը վրայէ հանել, և Քրիստոսը հագնիլ. 12 սիրոյ՝ խոնարհութեան և ուրիշ պարտաւորութեանց վրայով խրատ կու տայ։

1 Արդ թէ որ Քրիստոսի հետ յարութիւն առիք, ուրեմն վերի բաները փնտռեցէք, ուր
2 որ Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ կողմը։ Վերի
բաները մտածեցէք, չէ՛ թէ աս երկրիս վրայինները։
3 ըը։ Ինչու որ դուք մեռաք, ու ձեր կեանքը

Եզեկ. ժգ. 3 ; ա Տիմ. ա. 7 ;
Եփե. դ. 15, 16 ;
Հմր 8 ; Գաղ. բ. 19 ; Եփե. բ. 15 ;
Հռով. զ. 3, 5 ; է. 4, 6 ;
Գաղ. դ. 3, 9 ;
ա Տիմ. դ. 3 ;
Եսա. իթ. 13 ; Մատ. ժե. 9 ; Տիտ. ա. 14 ;
ա Տիմ. դ. 8 ;
Հմր 18 ;
Հռով. զ. 5 ; Եփե. բ. 6 ; Գղ. բ. 12 ;
Հռով. ը. 34 ; Եփե. ա. 20 ;
Հռով. զ. 2 ; Գաղ. բ. 20 ; Գղ. բ. 20 ;
բ Կոր. ե. 7 ; Գղ. ա. 5 ;

պահուած է Աստուծոյ քովը Քրիստոսի հետ։
4 Երբոր Քրիստոս մեր կեանքը յայտնուի, անատենը դուք ալ անոր հետ փառքով պիտի
յայտնուիք։
5 Ուստի ձեր երկրաւոր անդամները մեռցուցէք. պոռնկութիւնը, պղծութիւնը, անառակ
կիրքը, չար ցանկութիւնը և ագահութիւնը՝
6 որ կռապաշտութիւն է. Որոնց համար Աստուծոյ բարկութիւնը անհնազանդութեան որդւոց
7 վրայ կու գայ. Որ ատեն մը դուք ալ անոնց մէջը
8 կը քալէիք, երբոր անոնց մէջը կ'ապրէիք։ Բայց
հիմա մէկդի ձգեցէք դուք ալ ան ամէնը. բարկութիւնը, սրտմտութիւնը, չարութիւնը, հայհոյութիւնը, յանհամեստ խօսքերը ձեր բերաններէն։
9 Իրարու սուտ մի՛ զրուցէք. Հին մարդը
10 իր գործերովը ձեր վրայէն հանեցէք. Ու հագէք
ան նորը գիտութիւնով նորոգուած՝ իր Ստեղ-
11 ծողին պատկերին պէս. Ուր որ Յոյն ու Հրեայ,
թլփատութիւն ու անթլփատութիւն, Բարբարոս,
Սկիւթացի, ծառայ կամ ազատ չկայ. հապա
12 Քրիստոս է ամէնը՝ և ամէն բանի մէջ։ Ուստի
Աստուծոյ ընտրեալ սուրբերու ու սիրելիներու

ա Յօհ. գ. 2 ;
Յօհ. ժա. 25 ; ժդ. 6 ;
ա Կոր. ժե. 43 ; Փիլ. գ. 21 ;
Հռով. ը. 13 ; Գաղ. ե. 24 ;
Հռով. զ. 13 ;
Եփե. ե. 3 ;
ա Թես. դ. 5 ;
Եփե. ե. 5 ;
Հռով. ա. 18 ; Եփե. ե. 6 ; Յայտ. իբ. 15 ;
Եփե. բ. 2 ;
Հռով. զ. 19, 20 ; է. 5 ; ա Կոր. զ. 11 ; Եփե. բ. 2 ; Տիտ. գ. 3 ;
Եփե. դ. 22 ; ա Պետ. բ. 1 ; Եբր. ժբ. 1 ; Յակ. ա. 21 ;
Եփե. դ. 29 ; ե. 4 ;
Ղև. ժթ. 11 ; Եփե. դ. 25 ;
Եփե. դ. 22, 24 ;
Հռով. ժբ. 2 ;
Եփե. բ. 10 ;
Եփե. դ. 23, 24 ;
Հռով. ժ. 12 ; ա Կոր. ժբ. 13 ; Գաղ. գ. 28 ; ե. 6 ; Եփե. զ. 8 ;
Եփե. ա. 23 ;
ա Թես. ա. 4 ; ա Պետ. ա. 2 ; բ Պետ. ա. 10 ;

պէս ղ վրանիդ հագէք Գթութը, ողորմութիւնը,
քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը,
13 երկայնմտութիւնը, մ Իրարու համբերելով և իրա-
րու ներելով՝ թէ որ մէկը մէկու մը դէմ տրտունջ
մը ունենայ. ինչպէս որ Քրիստոս ձեզի ներեց,
14 անանկ ալ դուք։ յ Եւ ասոնց ամէն բաներուն վրայ
Սէրը հագէք, շ որ կատարելութեան կապն է.
15 ո Ու * Աստուծոյ խաղաղութիւնը ձեր սրտերուն
մէջը թագաւորէ, չ որ դուք անոր կանչուեցաք պ մէկ
16 մարմինով. ջ ու գոհացող եղէք։ Քրիստոսի խօսքը
ձեր մէջը բնակի առատապէս ամէն իմաստութիւնով՝
իրար սորվեցնելու ու խրատելու, ռ սաղմոսներով
և օրհնութիւններով ու հոգևոր երգերով ս ձեր
սրտերուն մէջը շնորհքով զԱստուած օրհնելու։
17 վ Եւ ամէն ինչ որ կ՚ընէք թէ խօսքով և թէ
գործքով, բոլորը Տէր Յիսուսին անունովը ըրէք,
տ Աստուծոյ ու Հօրը գոհութիւն մատուցանելով
անոր ձեռքովը։
18 ր Կնիկներ՝ հնազանդ եղէք ձեր էրիկներուն,
19 ց ինչպէս որ կը վայլէ Տէրոջմով։ ւ Էրիկներ՝
սիրեցէք ձեր կնիկները, փ ու դառն մի ըլլաք ա-
20 նոնց։ ք Որդիներ՝ օ ամէն բանի մէջ հնազանդ եղէք

ղ Եփե. դ. 24։
ճ Գաղ. ե. 22։ Փիլ. բ. 1։ Եփե. դ. 2, 32։
մ Մար. ժա. 25։ Եփե. դ. 2, 32։
յ ա Պետ. դ. 8։
ն Յով. ժգ. 34։ Հռով. ժգ. 8։ ա Կոր. ժգ։ Եփե. ե. 2։ Գղ. բ. 2։ ա Թես. դ. 9։ ա Տիմ. ա. 5։ ա Յով. գ. 23։ դ. 21։
շ Եփե. դ. 3։
ո Հռով. ժդ. 17։ Փիլ. դ. 7։
* Ոմանք՝ Քրիստոսի
չ ա Կոր. է. 15։
պ Եփե. բ. 16, 17։ դ. 4։
ջ Գղ. բ. 7։ Հմր 17։
ռ ա Կոր. ժդ. 26։ Եփե. ե. 19։
ս Գղ. գ. 6։
վ ա Կոր. ժ. 31։
տ Հռով. ա. 8։ Եփե. ե. 20։ Գղ. ա. 12։ բ. 7։ ա Թես. ե. 18։ Եբր. ժգ. 15։
ր Եփե. ե. 22։ Տիտ. բ. 5։ ա Պետ. գ. 1։
ց Եփե. ե. 3։
ւ Եփե. ե. 25, 28, 33։ ա Պետ. գ. 7։
փ Եփե. դ. 31։
ք Եփե. զ. 1։
օ Եփե. ե. 24։ Տիտ. բ. 9։

ձեր ծնողքներուն, ինչու որ ան է Տէրոջը առջևը
21 հաճելի։ ա Հայրեր՝ ձեր որդիները մի բարկացը-
22 նէք, որ չվհատին։ բ Ծառաներ՝ գ ամէն բանի
մէջ հնազանդ եղէք դ ձեր մարմնաւոր տէրերուն. չէ
թէ աչքի առջև ծառայելով մարդահաճոներու
պէս, հապա սրտի միամտութեամբ՝ Տէրոջմէ վախ-
23 նալով. ե Ինչ որ կ՚ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ
24 Տէրոջը ու չէ թէ մարդոց, զ Գիտնալով որ ժա-
ռանգութեան հատուցումը Տէրոջմէ պիտի առնէք.
25 է ինչու որ Տէր Քրիստոսին կը ծառայէք. Բայց
ը անօրէնը իր անօրէնութեանը պատիժը պիտի ըն-
դունի, թ և աչառութիւն չկայ։

ԳԼ. Դ

1 Կը յորդորէ ջերմեռանդութեամբ աղօթք ընել, 5 խելացութեամբ վարուիլ անոնց հետ՝ որոնք դեռ Քրիստոսի կատարեալ գիտութիւնը չունին. 10 իր բարևը կը մատուցանէ անոնց, և ամէն կերպ յաջողութիւն կը խնդրէ։

1 Տէրեր՝ ժ ձեր ծառաներուն իրաւունք ու հաւա-
սարութիւն տուէք, գիտնալով որ դուք ալ
Տէր ունիք երկինքը։
2 ի Շարունակ աղօթքի ետևէ եղէք, անոր մէջը
3 արթուն մնալով լ գոհութեամբ։ խ Աղօթք ը-
րէք նաև մեզի համար, ծ որ Աստուած խօսքին
դուռը բանայ մեզի կ Քրիստոսի խորհուրդը խօսե-
4 լու, հ որուն համար կապուած ալ եմ, Որ

ա Եփե. զ. 4։
բ Եփե. զ. 5, 6։ ա Տիմ. զ. 1։ Տիտ. բ. 9։ ա Պետ. բ. 18։
գ Հմր 20։
դ Փիլիմ. 16։
ե Եփե. զ. 6, 7։
զ Եփե. զ. 8։
է ա Կոր. է. 22։
ը Հռով. բ. 11։ Եփե. զ. 9։ ա Պետ. ա. 17։ Տես բ Օր. ժ. 17։
թ Եփե. զ. 9։
ժ Ղու. ժբ. 1։ Հռով. ժբ. 12։ Եփե. զ. 18։ ա Թես. ե. 17, 18։
ի Գղ. բ. 7։ գ. 15։
լ Եփե. զ. 19։ բ Թես. գ. 1։
խ ա Կոր. ժզ. 9։ բ Կոր. բ. 12։
ծ Մատ. ժգ. 11։ ա Կոր. դ. 1։ Եփե. զ. 19։ Գղ. ա. 26։ բ. 2։
կ Եփե. զ. 20։ Փիլ. ա. 7։

յայտնի ընեմ զանիկա՝ ինչպէս որ ինծի կը վայլէ
5 խօսիլ ։ ա Խոհեմութեամբ վարուեցէք դուրսիներ-
ներուն հետ, բ ժամանակը ծախու առնելով ։
6 Ձեր խօսքը ամէն ատեն գ շնորհքով՝ դ աղով բե-
աղով համեմուած ըլլայ, ե որ գիտնաք թէ ինչպէս
կը վայլէ ձեզի ամէն մէկուն պատասխան տալ ։
7 զ Ալ իմ վրայովս բոլորը պիտի իմացընէ ձեզի
Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ պաշտօ-
8 նեան ու ծառայակիցը Տէրոջմով ․ է Որն որ աս
բանին համար ձեզի խրկեցի, որ *գիտնայ ձեր
վրայով, ու ինքը ձեր" սիրտերը մխիթարէ,
9 ը Ոնեսիմոս հաւատարիմ ու սիրելի եղբօրը հետ
մէկտեղ՝ որ ձեզմէ մէկն է ․ իրենք ամէն բանը ձեզի
10 պիտի իմացընեն՝ ինչ որ հոս կայ ։ թ Բարեւ կ՚ընէ
ձեզի Արիստարքոս՝ իմ գերութեան ընկերս, ժ և
Մարկոս՝ Բառնաբասին եղբօրորդին, (որուն հա-
մար պատուէր առիք ․ թէ որ ձեզի գալու ըլլայ,
11 ընդունեցէք անիկա ,) Նաև Յիսուս՝ որ Յուստոս
կոչուած է, որոնք թլփատութենէն են ․ ասոնք
միայն ինծի գործակից եղան Աստուծոյ թագաւո-
րութեանը մէջ, որոնք ինծի մխիթարութիւն
12 եղան ։ ի Բարեւ կ՚ընէ ձեզի Եպափրաս՝ Քրիս-
տոսի ծառան, որ ձեզմէ մէկն է, լ ամէն ատեն ա-
ղօթքի մէջ ձեզի համար ջանք ընելով, խ որ դուք
կատարեալ ու լման կենաք Աստուծոյ բոլոր կամ-
13 քը մէջ ։ Քանզի անոր վրայով ես կը վկայեմ,
թէ շատ նախանձաւորութիւն ունի ձեզի համար
ու Լաւոդիկէի և Յերապոլիսի մէջ եղողներուն

ա Եփե. ե. 15 ; ա Թես. դ. 11 ;
բ Եփե. ե. 16 ;
գ Ժող. ժ. 12 ; Գղ. դ. 16 ;
դ Մար. թ. 49 ;
ե Ա Պետ. գ. 15 ;
զ Եփե. զ. 21 ;
է Եփե. զ. 22 ;
* Ոմանք՝ որ գիտնաք մեր վրայով, ու ինքը ձեր

ը Փիլիմ. 10 ;
թ Գործ. ժթ. 29 ; ի. 4 ; իէ. 2 ; Փիլիմ. 24 ;
ժ Գործ. ժե. 37 ; Բ Տիմ. դ. 11 ;
ի Գղ. ա. 7 ; Փիլիմ. 23 ;
լ Հռով. ժե. 30 ;
խ Մատ. ե. 48 ; Ա Կոր. բ. 6 ; ժդ. 20 ; Փիլ. գ. 15 ; Եբր. ե. 14 ;

14 համար ։ Բարեւ կ՚ընէ ձեզի սիրելի ծ Ղուկաս
15 բժիշկը կ և Դեմաս ։ Բարեւ ըրէք եղբայրնե-
րուն՝ որ Լաւոդիկիա են, և Նիմփասին հ ու անոր
16 տանը մէջի եկեղեցւոյն ։ ձ Ու երբոր աս թուղթը
ձեր մէջը կարդացուի, Լաւոդիկեցւոց եկեղեցւոյն
մէջն ալ կարդալ տուէք ․ և դուք ալ Լաւոդի-
17 կիայէն եկած թուղթը կարդացէք ։ ղ Ու ըսէք
Արքիպպոսին, ճ Զգուշ եղիր քու սպասաւորու-
թեանդ՝ որ Տէրոջմով առիր, որ անիկա կատա-
18 րես ։ մ Ասիկա բարեւը իմ ձեռքիս՝ Պօղոսինն է ․
յ իմ կապերս միտքերնիդ թող ըլլան ։ ն Շնորհ-
քը ձեզի հետ ։ Ամէն ։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաքեալը կը ծանուցանէ Թեսաղոնիկեցւոց թէ ինքը ամէն ատեն կը յիշէ զանոնք իր գոհութեանը ու աղօթքին մէջ, 5 և թէ ինքը աղէկ համոզուած է թէ անոնց հաւատքը ճշմարիտ ու անկեղծ է, և թէ Աստուծոյ դարձած են ։

1 Պօղոս և շ Սիղուանոս ու Տիմոթէոս՝ Թեսաղոնի-
կեցւոց եկեղեցւոյն՝ Հայր Աստուծով՝ ու Տէր
2 Յիսուս Քրիստոսով ․ ո Շնորհք և խաղաղու-

ծ Բ Տիմ. դ. 11 ;
կ Բ Տիմ. դ. 9 ; Փիլիմ. 24 ;
հ Հռով. ժզ. 4 ; Ա Կոր. ժզ. 19 ;
ձ Ա Թես. ե. 27 ;
ղ Փիլիմ. 2 ;
ճ Ա Տիմ. դ. 6 ;

մ Ա Կոր. ժզ. 21 ; Բ Թես. գ. 17 ;
յ Եբր. ժգ. 3 ;
ն Եբր. ժգ. 25 ;
շ Բ Կոր. ա. 19 ; Բ Թես. ա. 1 ; Ա Պետ. ե. 12 ;
ո Եփե. ա. 2 ;

թիւն ձեզի *Աստուծմէ մեր Հօրմէն՝ ու Տէր Յի-
սուս Քրիստոսէն":
ա Կը գոհանանք Աստուծմէ ամէն ատեն ձեր ա-
մենուն համար՝ բ ձեզ յիշելով մեր աղօթքներուն
3 մէջը. Անդադար յիշելով գ ձեր հաւատքին գոր-
ծը ու դ սիրոյ աշխատութիւնը և մեր Տէր Յիսուս
Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու
4 մեր Հօրը առջևը. Ու գիտնալով՝ Աստուծմէ սի-
5 րուած եղբայրներ՝ ե ձեր ընտրութիւնը. զ Որ մեր
աւետարանը չէ թէ միայն խօսքով եղաւ ձեզի,
հապա զօրութիւնով ալ է և Հոգւով Սրբով
ը ու շատ ապահովութիւնով, թ ինչպէս որ գիտէք
ալ թէ ինչոր կեցանք ձեր մէջը ձեզի համար:
6 ժ Դուք ալ մեզի ու Տէրոջը նմանող ըլլալով՝ ըն-
դունեցիք խօսքը շատ նեղութեան մէջ՝ ի Հոգւոյն
7 Սրբոյ ուրախութիւնովը. Այնպէս որ դուք օրինակ
եղաք բոլոր հաւատացեալներուն՝ որոնք Մակեդո-
8 նիայի ու Աքայիայի մէջ են: լ Ինչու որ ձեզմէ
հնչակուեցաւ Տէրոջը խօսքը, չէ թէ միայն Մա-
կեդոնիայի ու Աքայիայի մէջ, խ հապա նաև ամէն
տեղ ձեր հաւատքը որ դէպ 'ի Աստուած է տարա-
ծուեցաւ, այնպէս որ ալ պէտք չէ մեզի բան մը
9 խօսիլ: Քանզի իրենք կը պատմեն մեզի համար,
ծ թէ ինչպէս եղաւ մեր ձեր քով մտնելը, կ և
ինչպէս դուք կուռքերէն Աստուծոյ դարձաք՝ կեն-

* Ոմանք չունին.
ա Հռով. ա. 8. Եփես. ա. 16. Փիլիմ. 4.
բ Գլ. բ. 13.
գ Յովհ. զ. 29. Գաղ. ե. 6. Գլ. գ. 6. բ Թես. ա. 3, 11. Յակ. բ. 17.
դ Հռով. ժզ. 6. Եբր. զ. 10.
ե Կող. գ. 12. բ Թես. բ. 12.
զ Մար. ժզ. 20. ա Կոր. բ. 4; դ. 20.
է բ Կոր. գ. 6.
ը Կող. բ. 2.
թ Գլ. բ. 1, 5, 10, 11. բ Թես. գ. 7.
ժ ա Կոր. դ. 16; ժա. 1. Փիլ. գ. 17. Գլ. բ. 14. բ Թես. գ. 9.
ի Գործ. ե. 41. Եբր. ժ. 34.
լ Հռով. ժ. 18.
խ Հռով. ա. 8. բ Թես. ա. 4.
ծ Գլ. բ. 1.
կ ա Կոր. ժբ. 2. Գաղ. դ. 8.

10 դանի ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու, հ Ու
սպասելու անոր Որդւոյն ձ երկինքէն. ղ որ ինքը
մեռելներէն յարուց զանիկայ՝ այսինքն Յիսուսը,
ճ որ կ'ազատէ մեզ գալու բարկութենէն:

ԳԼ. Բ

1 Առաքեալը կը ցուցնէ թէ ինչպէս աւետարանը Թեսաղոնիկէ մտաւ ու քարոզուեցաւ, և ինչպէս անոնք ալ ընդունեցին. 18 պատճառը կ'իմացընէ թէ ինքը ինչո՛ւ այնքան երկար ատեն հեռու մնաց անոնցմէ, և թէ ինչո՛ւ այնքան մեծ փափաք ունէր զանոնք տեսնելու:

1 մ Քանզի եղբայրներ՝ դուք ինքնիրեննիդ գիտէք
ձեր մէջը մտնելնիս՝ որ պարապ տեղը չեղաւ.
2 Հապա առաջ յ Փիլիպպէի մէջ չարչարանք կր-
րելով ու անարգուելով՝ ինչպէս որ գիտէք, ն հա-
մարձակութիւն ըրինք մեր Աստուծովը՝ շ ձեզի
պատմելու Աստուծոյ աւետարանը ո մեծ հակառա-
3 կութեան մէջ: չ Ինչու որ մեր յորդորանքը ոչ
մոլորութենէ է ու ոչ պղծութենէ և ոչ խա-
4 բէութեամբ. պ Հապա ինչպէս որ մենք Աստուծմէ
ընտրուեցանք ջ ու աւետարանը մեզ հաւատացուե-
ցաւ, այնպէս կը խօսինք, ռ չէ թէ մարդոց հա-
ճոյ ըլլալու համար, հապա Աստուծոյ՝ ս որ մեր
5 սիրտերը կը քննէ. վ Ինչու որ մենք բնաւ շողոքոր-
թութեան խօսքեր չգործածեցինք, ինչպէս որ գի-
տէք, ոչ ալ ագահութեան պատճառանք, տ Աս-

հ Հռով. բ. 7. Փիլ. գ. 20. Տիտ. բ. 13. բ Պետ. գ. 12. Յայտ. ա. 7.
ձ Գործ. ա. 11. Գլ. դ. 15. բ Թես. ա. 7.
ղ Գործ. բ. 24.
ճ Մատ. գ. 7. Հռով. ե. 9.
մ Գլ. ա. 5, 9.
յ Գործ. ժզ. 22.
ն Գլ. ա. 5.
շ Գործ. ժէ. 2.
ո Փիլ. ա. 30. Կող. բ. 1.
չ բ Կոր. է. 2. Հմր 5. բ Պետ. ա. 16.
պ ա Կոր. է. 25. ա Տիմ. ա. 11, 12.
ջ ա Կոր. թ. 17. Գաղ. բ. 7. Տիտ. ա. 3.
ռ Գաղ. ա. 10.
ս Առակ. ժէ. 3. Հռով. ը. 27.
վ Գործ. ի. 33. բ Կոր. բ. 17; դ. 2; է. 2; ժբ. 17.
տ Հռով. ա. 9.

6 տուած վկայ է , Ոչ մարդոցմէ փառք չփնտռե-
7 ցինք , ո՛չ ձեզմէ , ոչ ալ ուրիշներէն , թէեւ
կրնայինք իբրեւ Քրիստոսի առաքեալներ ծան-
րութիւն տալ . բայց մենք հեզ եղանք ձեր մէջը ,
ինչպէս որ դայեակ մը իր երախաները կը խնամէ :
8 Այնպէս ալ մենք ձեր վրայ փափաք ունենալով
կը յօժարէինք , ոչ միայն Աստուծոյ աւետարանը
ձեզի տալ , հապա մեր անձերն ալ , քանզի որ
9 դուք մեզի սիրելիներ եղաք : Քանզի կը յի-
շէք՝ ո՛վ եղբայրներ՝ մեր աշխատութիւնը ու ջանքը ,
որ ձեզմէ մէկու մը ծանրութիւն չտալու համար
գիշեր ու ցորեկ գործելով , ձեզի Աստուծոյ աւե-
10 տարանը քարոզեցինք : Դուք վկայ էք , եւ Աս-
տուած ալ , թէ ինչպէս սրբութիւնով ու ար-
դարութիւնով եւ անարատութիւնով վարուեցանք
11 ձեզի հետ՝ որ հաւատացիք . Ինչպէս գիտէք ալ , որ
ձեզմէ ամէն մէկը՝ ինչպէս հայր մը իր որդիները՝
12 Անոնք կը յորդորէինք ու կը մխիթարէինք եւ վկա-
յութիւն կը դնէինք որ դուք Աստուծոյ վայելածին
պէս քալէք , Նա որ ձեզ իր թագաւորութեանը
13 ու փառքին կանչեց : Աոր համար մենք ալ ան-
դադար կը գոհանանք Աստուծմէ , որ մեզմէ
Աստուծոյ խօսքը լսելով ընդունեցիք , Ոչ՛ թէ
իբրեւ մարդոց խօսք , հապա ինչպէս որ ճշմարտապէս

ի Յօհ . ե . 41 , 44 : ժբ . 43 :
ա Տիմ . ե . 17 :
ծ ա Կոր . թ . 4 , 6 , 12 , 18 :
բ Կոր . ժ . 1 , 2 , 10 , 11 :
ժգ . 10 : բ Թեսս . գ . 9 :
Փիլեմ . 8 , 9 :
կ ա Կոր . թ . 1 , 2 , 5 :
հ բ Կոր . ժա . 9 : ժբ . 13 , 14 :
բ Թեսս . գ . 8 :
ձ ա Կոր . բ . 3 : թ . 22 : բ
Կոր . ժգ . 4 : բ Տիմ . բ . 24 :
ղ Հռով . ա . 11 : ժե . 29 :
ճ բ Կոր . ժբ . 15 :
մ բ Կոր . ժբ . 13 , 14 :
յ Գործ . ի . 34 : ա Կոր . գ .
12 : բ Կոր . ժա . 9 : բ Թեսս .
գ . 8 :
ն Գղ . ա . 5 :
շ բ Կոր . է . 2 : բ Թեսս . գ .
7 :
ո Եփես . դ . 1 : Փիլ . ա . 27 :
Կող . ա . 10 : Գղ . գ . 1 :
չ ա Կոր . ա . 9 : Գղ . ե . 24 :
բ Թեսս . բ . 13 : բ Տիմ . ա .
9 :
պ Գղ . ա . 2 :
ջ Մատ . ժ . 40 : Գաղ . դ .
14 : բ Պետ . գ . 2 :

է , Աստուծոյ խօսք , որ նաեւ կը ներգործէ ձեր
14 մէջը որ կը հաւատաք : Քանզի դուք ո՛վ եղբայրներ՝
նմանող եղաք Աստուծոյ եկեղեցիներուն՝ որ Հրէ-
աստանի մէջ են Քրիստոս Յիսուսով . քանզի որ
դուք ալ նոյն չարչարանքները կրեցիք ձեր համազ-
գիներէն , ինչպէս որ անոնք ալ Հրէաներէն .
15 Որոնք Տէր Յիսուսն ալ մեռցուցին՝ մարգարէ-
ներն ալ , եւ մեզ հալածեցին , ու Աստուծոյ ան-
16 հաճոյ՝ եւ բոլոր մարդոց հակառակ են . Ու մեզ
կ'արգիլեն հեթանոսներուն խօսելէն անոնց փրկու-
թեանը համար , որ իրենց մեղքերուն չափը լե-
ցընեն ամէն ատեն . եւ բարկութիւնը անոնց վրայ
հասեր է մինչեւ վերջը :
17 Իսկ մենք ո՛վ եղբայրներ՝ քիչ մը ատեն ձեզ-
մէ որբ մնացինք երեսով , ու չէ՛ թէ սրտով ,
բայց աւելի ջանացինք ձեր երեսը տեսնելու մեծ
18 փափաքով : Անոր համար ես Պօղոս մէկ երկու
անգամ ուզեցի ձեզի գալ , բայց Սատանան մեզ
19 արգիլեց : Քանզի որ ո՞վ է մեր յոյսը կամ ու-
րախութիւնը կամ Պարծանքին պսակը , եթէ
ոչ դուք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի առջեւը իր ա-
20 նոր գալու ատենը : Որովհետեւ դուք էք մեր
փառքը եւ ուրախութիւնը :

ռ Գաղ . ա . 22 :
ս Գործ . ժէ . 5 , 13 :
վ Եբր . ժ . 33 , 34 :
տ Գործ . բ . 23 : գ . 15 : ե .
30 : է . 52 :
ր Մատ . ե . 12 : իգ . 34 , 37 :
Ղու . ժգ . 33 , 34 : Գործ .
է . 52 :
ց Եսթ . գ . 8 :
ւ Ղու . ժա . 52 : Գործ . ժգ .
50 : ժդ . 5 , 18 : ժէ . 5 ,
13 : ժը . 12 : ժթ . 9 : իբ .
21 , 22 :
փ Ծն . ժե . 16 : Մատ . իգ .
32 :
ք Մատ . իդ . 6 , 14 :
օ ա Կոր . ե . 3 : Կող . բ . 5 :
ֆ Գղ . գ . 10 :
ա Հռով . ա . 13 : ժե . 22 :
բ բ Կոր . ա . 14 : Փիլ . բ .
16 : դ . 1 :
գ Առակ . ժզ . 31 :
դ ա Կոր . ժե . 23 : Գղ . գ .
13 : Յայտ . ա . 7 : իբ . 12 :

ԳԼ. Գ.

1 Պօղոս կը յայտնէ իր մեծ սէրը որ ունէր Թեսաղոնիկեցւոց
վրայ , թէ՛ Տիմոթէոսը անոնց ղրկելով՝ որ հաստատէ և

մխիթարէ զանոնք, թէ անոնց բարեգործութեանցը վրայ ուրախանալով, 10 և թէ աղօթք ընելով անոնց համար, և անվտանգ անոնց երթալու փափաքելով ։

1 ա Ասոր համար ալ չկրնալով աւելի համբերել, բ աղէկ
2 երևցաւ մեզի մինակ Աթէնք մնալ. գ Եւ
Տիմոթէոս մեր եղբայրը ու Աստուծոյ պաշտօնեան
և մեր գործակիցը Քրիստոսի աւետարանին մէջ՝
խրկեցինք ձեզ հաստատելու ու մխիթարելու ձեր
3 հաւատքին համար. դ Որ աս նեղութիւններուն
մէջ [illegible] մէկը չխախտի. ինչու որ դուք ինքնի-
րմնիդ գիտէք ե որ մենք աս բաներուն համար կե-
4 ցեր ենք ։ զ Քանզի երբոր մենք ձեր քովն էինք,
առաջուց ձեզի կը զրուցէինք թէ նեղութիւններու
պիտի հանդիպինք, ինչպէս որ եղաւ ալ, ու գի-
5 տէք ։ է Ասոր համար ես ալ չկրնալով աւելի համ-
բերել, [illegible] խրկեցի ձեր հաւատքը գիտնալու,
ը որ չըլլայ թէ փորձողը ձեզ փորձած ըլլայ, թ և
6 մեր աշխատութիւնը պարապ ըլլայ ։ ժ Բայց հիմա
երբոր Տիմոթէոս ձեզմէ մեզի եկաւ, ու ձեր հա-
ւատքին և սիրոյն աւետիսը մեզի տուաւ, որ ամէն
ժամանակ մեր բարի յիշատակը [illegible] ունիք,
և կը փափաքիք մեզ տեսնելու, ի ինչպէս որ մենք
7 ալ ձեզ, Ասոր համար եղբայրներ՝ լ ձեր վրայ մխի-
թարուեցանք մեր բոլոր վիշտերուն ու նեղութիւն-
8 ներուն վրայ՝ ձեր հաւատքովը. Ինչու որ հիմա
կենդանի ենք մենք, խ թէ որ դուք հաստատուն
9 կենաք Տէրոջմով ։ ծ Քանզի ի՞նչ գոհութիւն

ա Հմր 5 ։
բ Գոր. ժէ. 15 ։
գ Հռովմ. ժզ. 21 ։ ա Կոր. ժզ. 10 ։ բ Կոր. ա. 19 ։
դ Եփե. գ. 13 ։
ե Գոր. թ. 16 ։ ժդ. 21 ։ ի. 23 ։ իա. 11 ։ ա Կոր. դ. 9 ։ բ Տիմ. գ. 12 ։ ա Պետ. բ. 21 ։
զ Գոր. ի. 23 ։
է Հմր 1 ։
ը ա Կոր. է. 5 ։ բ Կոր. ժա. 3 ։
թ Գաղ. բ. 2 ։ դ. 11 ։ Փիլ. բ. 16 ։
ժ Գոր. ժը. 1, 5 ։
ի Փիլ. ա. 8 ։
լ բ Կոր. ա. 4 ։ է. 6, 7, 13 ։
խ Փիլ. դ. 1 ։
ծ Գղ. ա. 2 ։

կրնանք մատուցանել Աստուծոյ ձեր վրայով՝ այն
ամէն ուրախութեանը համար որ կ'ուրախանանք
10 ձեզի համար մեր Աստուծոյ առջևը, Եւ ձ գիշեր ու
ցորեկ ղ խիստ շատ աղաչանք կ'ընենք ճ ձեր երեսը
տեսնելու, մ ու ձեր հաւատքին պակսութիւնները
11 լեցնելու ։ Բայց Աստուած ինքն ու մեր Հայրը
և մեր Տէրը Յիսուս Քրիստոս յ մեր ճամբան դէպ
12 'ի ձեզի յաջողէ ։ ն Եւ Տէրը աճեցընէ ու աւել-
ցնէ ձեր սէրը շ իրարու վրայ ու ամենուն վրայ,
13 ինչպէս որ մենք ալ ձեր վրայ ունինք, ո Հաստա-
տելով ձեր սիրտերը անարատ սրբութեան մէջ
Աստուծոյ և մեր Հօրը առջևը՝ մեր Տէրոջը Յի-
սուս Քրիստոսի գալու ատենը չ իր բոլոր սուրբե-
րուն հետ մէկտեղ ։

ԳԼ. Դ

1 Կը յորդորէ զանոնք որ ամէն կերպով յառաջ երթան աստուածպաշտութեան մէջ, 6 որ սուրբ ու արդար վարմունք ունենան, 9 որ մէկզմէկ սիրեն, 11 որ ամէն մէկը խաղաղութեամբ իր գործը գործէ, 13 ու վերջապէս ննջեցեալներուն վրայով իրենց տրտմութիւնը չափաւոր ըլլայ ։ 17 Առաքեալը աս վերջին յորդորանքին վրայ համառօտ կերպով մը կը նկարագրէ մեռելոց յարութիւնը, և Քրիստոսի երկրորդ գալուստը դատաստանի համար ։

1 Ալ հիմա, եղբայրներ, ձեզի կ'աղաչենք՝ ու կը
յորդորենք Տէր Յիսուսով, ա որ ինչպէս մեզմէ
առիք՝ բ թէ ինչպէս պէտք է ձեզի քալել ու գ Աս-
տուծոյ հաճոյ ըլլալ, ալ աւելի անոր մէջ յառա-
2 նաք ։ Քանզի գիտէք թէ ինչ պատուէրներ
3 տուինք ձեզի Տէր Յիսուսով ։ Ինչու որ դ Աս-

ձ Գոր. իզ. 7 ։ բ Տիմ. ա. 3 ։
ղ Հռովմ. ա. 10, 11 ։ ժե. 32 ։
ճ Գղ. բ. 17 ։
մ բ Կոր. ժգ. 9, 11 ։ Կող. դ. 12 ։
յ Մար. ա. 3 ։
ն Գղ. գ. 10 ։
շ Գղ. գ. 9 ։ ե. 15 ։ բ Պետ. ա. 7 ։
ո ա Կոր. ա. 8 ։ Փիլ. ա. 10 ։ Գղ. ե. 23 ։ բ Թես. բ. 16 ։ ա Յոհ. գ. 20, 21 ։
չ Զաք. ժդ. 5 ։ Յուդ. 14 ։
ա Փիլ. ա. 27 ։ Կող. բ. 6 ։
բ Գղ. բ. 12 ։
գ Կող. ա. 10 ։
դ Հռովմ. ժբ. 2 ։ Եփե. ե. 17 ։

տուծոյ կամքը աս է՝ այսինքն [ի] ձեր սուրբ ըլլալը ,
4 [լ] որ դուք ետ կենաք պոռնկութենէ . [խ] Ձեզմէ
ամէն մէկը գիտնայ իր ամանը սրբութիւնով ու
5 պատուով ստանալ . [ծ] Չէ թէ ցանկութեան կիր-
քով՝ [կ] ինչպէս հեթանոսները՝ [հ] որոնք Աստուած
6 չեն ճանչնար : [ձ] Չըլլայ որ * այս բանին" մէջ
չափէ անցնի մէկը ու իր եղբայրը զրկէ . [ղ] Ինչու որ
Տէրը աս բոլոր բաներուն համար վրէժխնդիր է .
ինչպէս առաջուց ըսինք ձեզի ու վկայութիւն
7 տուինք : Ինչու որ Աստուած մեզ պղծութեան
8 չկանչեց , [ճ] հապա սրբութեան : [մ] Ուստի ան որ
կ'անարգէ , չէ թէ անիկայ մարդ մը կ'անարգէ ,
հապա Աստուած՝ [յ] որ իր Սուրբ Հոգին ալ † մեզի
տուաւ :

9 Բայց եղբայրսիրութեան վրայով [ն] պէտք չէ ձե-
զի բան գրել . [շ] ինչու որ դուք ինքնիրեննիդ Աս-
10 տուծմէ սորված էք [ո] մէկզմէկ սիրել . [չ] Ու իրա-
ւ բանը կ'ընէք դուք բոլոր Մակեդոնիայի մէջ
եղող ամէն եղբայրներուն , սակայն կ'աղաչենք ձե-
11 զի՝ եղբայրներ՝ [պ] որ ալ աւելի առատանաք . [ջ] Ու
ջանք ընէք որ հանդարտ կենաք . ու ամէն մէկեր-
նիդ իր գործը գործէ , [ռ] ու ձեր ձեռքերովը աշխա-

[ի] Եփե . ե . 27 :
[լ] ա Կոր . զ . 15 , 18 : Եփե . ե . 3 : Կող . գ . 5 :
[խ] Հռով . զ . 19 : ա Կոր . զ . 15 , 18 :
[ծ] Կող . գ . 5 : Հռով . ա . 24 , 26 :
[կ] Եփե . դ . 17 , 18 :
[հ] ա Կոր . ժե . 34 : Գաղ . դ . 8 : Եփե . բ . 12 : դ . 18 : բ Թես . ա . 8 :
[ձ] Ղե . ժթ . 11 , 13 : ա Կոր . զ . 8 :
* Կամ բանի մը
[ղ] բ Թես . ա . 8 :
[ճ] Ղե . ժա . 44 : ժթ . 2 : ա Կոր . ա . 2 : Եբր . ժբ . 14 : ա Պետ . ա . 15 , 16 :
[մ] Ղու . ժ . 16 :
[յ] ա Կոր . բ . 10 : է . 40 : ա Յով . գ . 24 :
† Ոմանք ձեզի
[ն] Գլ . ե . 1 :
[շ] Երեմ . լա . 34 : Յով . զ . 45 : ժգ . 26 : Եբր . ը . 11 : ա Յով . բ . 20 , 27 :
[ո] Մատ . իբ . 39 : Յով . ժգ . 34 : ժե . 12 : Եփե . ե . 2 : ա Պետ . դ . 8 : ա Յով . գ . 11 , 23 : դ . 21 :
[չ] Գլ . ա . 7 :
[պ] Գլ . գ . 12 :
[ջ] բ Թես . գ . 11 : ա Պետ . դ . 15 :
[ռ] Գործ . ի . 35 : Եփե . դ . 28 : բ Թես . գ . 7 , 8 , 12 :

տիք , (ինչպէս որ ձեզի պատուիրեցինք ,) [ս] որ
դուրսիններուն հետը պարկեշտութեամբ վարուիք ,
ու * բանի մը կարօտ չըլլաք :
12 Չենք ուզեր՝ եղբայրներ՝ որ անգէտ ըլլաք ննջե-
ցեալներուն վրայով , որ չտրտմիք [վ] ինչպէս ուրիշ-
13 ները՝ [տ] որոնք յոյս չունին : [ր] Քանզի [ց] թէ որ կը
հաւատանք թէ Յիսուս մեռաւ ու յարութիւն
առաւ , նմանապէս ալ Աստուած ննջեցեալները Յի-
14 սուսով պիտի բերէ անոր հետ : [ւ] Վասն զի աս
կը զրուցենք ձեզի Տէրոջը խօսքովը , [փ] թէ մենք որ
մինչեւ Տէրոջը գալուստը ողջ կը մնանք , բնաւ
15 ննջեցեալներէն առաջ պիտի չանցնինք : [ք] Ինչու
որ Տէրը ինքն ազդարարութեան հրամանով՝ հրեշ-
տակապետին ձայնովը [օ] ու Աստուծոյ փողովը եր-
կինքէն պիտի իջնէ , [ֆ] եւ Քրիստոսով մեռածները
16 առաջ յարութիւն պիտի առնեն : [ա] Ետքը մենք
ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով մէկտեղ [բ] պիտի
յափշտակուինք ամպերով Տէրոջը առջեւը ելլելու
օդին մէջը , [գ] եւ անանկ յաւիտեան Տէրոջը հետ
17 պիտի ըլլանք : [դ] Ուստի մէկզմէկ մխիթարեցէք
աս խօսքերով :

[ս] Հռով . ժգ . 13 : բ Կոր . ը . 21 : Կող . դ . 5 : ա Պետ . բ . 12 :
* Կամ մէկու
[վ] Տես Ղե . ժթ . 28 : բ Օր . ժդ . 1 , 2 : բ Թագ . ժբ . 20 :
[տ] Եփե . բ . 12 :
[ր] ա Կոր . ժե . 13 :
[ց] ա Կոր . ժե . 18 , 23 : Գլ . գ . 13 :
[ւ] գ Թագ . ժգ . 17 , 18 : ի . 35 :
[փ] ա Կոր . ժե . 51 :
[ք] Մատ . իդ . 30 , 31 : Գործ . ա . 11 : բ Թես . ա . 7 :
[օ] ա Կոր . ժե . 52 :
[ֆ] ա Կոր . ժե . 23 , 52 :
[ա] ա Կոր . ժե . 51 :
[բ] Գործ . ա . 9 : Յայտ . ժա . 12 :
[գ] Յով . ժբ . 26 : ժդ . 3 : ժէ . 24 :
[դ] Գլ . ե . 11 :

ԳԼ . Ե

1 Կը շարունակէ իր նկարագրութիւնը Քրիստոսի դատաստանի գալուն վրայով , 16 ու զանազան խրատներ տալով՝ 23 իր թուղթը կը վերջացընէ :

1 ա Բայց ժամերուն ու ժամանակներուն համար՝
եղբայրներ՝ բ պէտք չէ բան մը գրել ձեզի.
2 Քանզի դուք ինքնիրեննիդ աղէկ գիտէք թէ գ Տէ-
րոջը օրը գիշերուան գողի պէս անանկ կը հասնի։
3 Երբոր ըսելու ըլլան թէ խաղաղութիւն ու ապա-
հովութիւն է, դ այն ատենը կորուստը յանկարծա-
կի անոնց վրայ պիտի հասնի ե յղիին երկունքը պէս,
4 ու պիտի չազատին։ զ Բայց դուք եղբայրներ՝
խաւարի մէջ չէք, որ ա օրը գողի մը պէս ձեր
5 վրայ հասնի. է Ինչու որ դուք ամէնքդ լուսոյ որ-
դիք էք ու ցորեկուան որդիք. գիշերուան չենք,
6 խաւարինը չենք։ ը Ուրեմն չքնանանք ինչպէս որ
ուրիշները, թ հապա արթուն ու զգաստ ըլլանք։
7 ժ Քանզի անոնք որ կը քնանան՝ գիշերը կը քնա-
նան, և անոնք որ կ'արբենան՝ ի գիշերը կ'արբենան։
8 Բայց մենք որովհետև ցորեկուան ենք, զգաստ ըլ-
լանք, և լ հաւատքին ու սիրոյն զրահը վրանիս
հագնինք, ու փրկութեան յուսոյն սաղաւարտը
9 գլուխնիս դնենք։ խ Ինչու որ Աստուած մեզ բար-
կութեան համար չորոշեց, ծ հապա փրկու-
թիւն ստանալու համար մեր Տէր Յիսուս Քրիս-
10 տոսի ձեռքովը. կ Որ ինքը մեզի համար մեռաւ.
որպէս զի թէ արթուն ըլլանք և թէ քնանանք,
11 իր հետը միասին ապրինք։ հ Անոր համար մէկ-

ա Մատ. իդ. 3, 36; Գոր. ա. 7.
բ Գլ. դ. 9.
գ Մատ. իդ. 43, 44; իե. 13; Ղու. ժբ. 39, 40; բ Պետ. գ. 10; Յայտ. գ. 3; ժզ. 15.
դ Ես. ժգ. 6-9; Ղու. ժէ. 27, 28, 29; իա. 34, 35; բ Թես. ա. 9.
ե Երեմ. ժգ. 21; Ովս. ժգ. 13.
զ Հռով. ժգ. 12, 13; ա Յովհ. բ. 8.
է Եփե. ե. 8.
ը Մատ. իե. 5.
թ Մատ. իդ. 42; իե. 13; Հռով. ժգ. 11, 12, 13; ա Պետ. ե. 8.
ժ Ղու. իա. 34, 36; Հռով. ժգ. 13; ա Կոր. ժե. 34; Եփե. ե. 14.
ի Գոր. բ. 15.
լ Ես. ծթ. 17; Եփե. զ. 14, 16, 17.
խ Հռով. թ. 22; Գլ. ա. 10; ա Պետ. բ. 8; Յուդ. 4.
ծ բ Թես. բ. 12, 13.
կ Հռով. ժդ. 8, 9; բ Կոր. ե. 15.
հ Գլ. դ. 17.

զմէկ մխիթարեցէք և իրարու շինութիւն տուէք,
ինչպէս որ կ'ընէք ալ։
12 Եւ ձեզի կ'աղաչենք՝ եղբայրներ՝ ձ որ ճանչնաք ձեր
աշխատաւորները ու վերակացուները Տէրոջմով,
13 ու ձեզի խրատ տուողները. Եւ զանոնք մեծապէս
պատուեցէք սիրով իրենց գործքին համար. ղ Ի-
14 րարու հետ խաղաղութիւն ունեցէք. Եւ ձեզի
կ'աղաչենք՝ եղբայրներ՝ ճ անկարգ վարմունք ու-
նեցողները խրատեցէք, մ վատասիրտները մխի-
թարեցէք, յ տկարներուն ձեռնտու եղէք, ն ամե-
15 նուն ալ երկայնամիտ եղէք։ շ Զգուշացէք՝
չըլլայ որ մէկը չարութեան փոխարէն չարութիւն
հատուցանէ մէկու մը. ո հապա ամէն ատեն բա-
րիք ընելու ետևէ եղէք թէ իրարու և թէ ամե-
16 նուն։ չ Ամէն ատեն ուրախ եղէք։ (17) պ Ան-
18 դադար աղօթք ըրէք։ ջ Ամէն բանի մէջ գոհու-
թիւն տուէք. ինչու որ աս է Աստուծոյ կամքը
19 Քրիստոս Յիսուսով ձեր վրայ։ ռ Սուրբ Հոգին
20 մի մարէք։ ս Մարգարէութիւնները մի արհա-
21 մարհէք։ վ Ամէն բան փորձեցէք, տ բարին ա-
22 մուր բռնեցէք։ ր Ամէն տեսակ գէշ բաներէն հեռու
23 կեցէք։ ց Եւ ինքը խաղաղութեան Աստուածը

ձ ա Կոր. ժզ. 18; Փիլ. բ. 29; ա Տիմ. ե. 17; Եբր. ժգ. 7, 17.
ղ Մար. թ. 49.
ճ բ Թես. գ. 11, 12.
մ Եբր. ժբ. 12.
յ Հռով. ժդ. 1; ժե. 1; Գաղ. զ. 1, 2.
ն Գաղ. ե. 22; Եփե. դ. 2; Կող. գ. 12; բ Տիմ. դ. 2.
շ Ղև. ժթ. 18; Առակ. ի. 22; իդ. 29; Մատ. ե. 39, 44; Հռով. ժբ. 17; ա Կոր. զ. 7; ա Պետ. գ. 9.
ո Գաղ. զ. 10; Գլ. դ. 12.
չ բ Կոր. զ. 10; Փիլ. դ. 4.
պ Ղու. ժբ. 1; իա. 36; Հռով. ժբ. 12; Եփե. զ. 18; Կող. դ. 2; ա Պետ. դ. 7.
ջ Եփե. ե. 20; Կող. գ. 17.
ռ Եփե. դ. 30; ա Տիմ. դ. 14; բ Տիմ. ա. 6; Տես ա Կոր. ժդ. 30.
ս ա Կոր. ժդ. 1, 39.
վ ա Կոր. բ. 11, 15; ա Յովհ. դ. 1.
տ Փիլ. դ. 8.
ր Գլ. դ. 11.
ց Փիլ. դ. 9.

ձեզ բոլորովին սուրբ ընէ ; ու ձեր բոլոր հոգին
և շունչը ու մարմինը անարատ պահուի մեր
24 Տէր Յիսուս Քրիստոսի գալուստին : Հա-
ւատարիմ է ան որ ձեզ կանչեց, որ ինքը պիտի
կատարէ ալ :
25 Եղբայրներ՝ աղօթք ըրէք մեզի համար :
26 Բարև՛ տուէք բոլոր եղբայրներուն սուրբ համ-
27 բուրով : Կ'երդմնցընեմ ձեզ Տէրոջմով, որ
այս թուղթը բոլոր սուրբ եղբայրներուն կարդա-
28 ցուի : Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը
ձեր հետը ըլլայ : Ամէն :

Գղ . գ . 13 ;
ա Կոր . ա . 8 ;
ա Կոր . ա . 9 ; ժ . 13 ; բ Թես . գ . 3 ;
Կող . դ . 3 ; բ Թես . գ . 1 ;
Հռով . ժզ . 16 ;
ա Կող . դ . 16 ; բ Թես . գ . 14 ;
Հռով . ժզ . 20, 24 ; բ Թես . գ . 18 ;

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ կը յայտնէ Թեսաղոնիկեցւոց իր բարի գաղափարը որ ունէր անոնց հաւատքին՝ սիրոյն և համբերութեանը վրայ. 11 և միանգամայն հալածանքի ժամանակ մխիթարութիւն ունենալու զանազան պատճառներ յառաջ կը բերէ, որոնց գլխաւորը Աստուծոյ արդար դատաստանէն կ'առնէ :

1 Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս՝ Թեսաղո-
նիկեցւոց եկեղեցիին. մեր Հայր Աստուծով
2 ու Տէր Յիսուս Քրիստոսով . Շնորհք և խա-
ղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր
Յիսուս Քրիստոսէն :

բ Կոր . ա . 19 ;
ա Թես . ա . 1 ;
ա Կոր . ա . 3 ;

3 Պարտինք ամէն ատեն Աստուծմէ գոհանալ
ձեզի համար՝ եղբայրներ, ինչպէս որ կը վայլէ.
քանզի ձեր հաւատքը շատ աճելու վրայ է, և ձեր
ամէն մէկուն սէրը իրարու վրայ կը շատնայ.
4 Այնպէս որ մենք ալ ձեզմով կը պարծենանք Աս-
տուծոյ եկեղեցիներուն մէջը՝ ձեր համբերութեա-
նը ու հաւատքին համար ձեր բոլոր հալածանքնե-
րուն ու նեղութիւններուն մէջ, որոնց որ դուք կը
5 համբերէք. Որ է Աստուծոյ արդար դատաստա-
նին ապացոյցը՝ որ դուք արժանանաք Աստուծոյ
թագաւորութեանը, որուն համար ալ նեղութիւն
6 կը կրէք. Քանզի Աստուծոյ առջևը իրաւունք
է ձեզի նեղութիւն տուողներուն նեղութիւն հա-
7 տուցանել, Ու ձեզի նեղութիւն կրողներուդ՝
մեզի հետ հանգիստ, Տէր Յիսուսին երկինքէն
յայտնուելու ատենը իր զօրաւոր հրեշտակներովը,
8 Բորբոքած կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ
Աստուած չեն ճանչնար, և որ մեր Տէր Յիսուս
9 Քրիստոսի աւետարանին չեն հնազանդիր. Որոնք
պիտի պատժուին յաւիտենական սատակումով՝
Տէրոջը երեսէն ու անոր զօրութեանը փառքէն,
10 Երբոր ինքը գայ փառաւորուելու իր սուրբերուն
մէջը, և հիանալի ըլլալու բոլոր հաւատացեալ-
ներուն մէջը, (ինչու որ մեր վկայութիւնը ձեր
11 մէջը հաւատացուեցաւ,) այն օրը : Ասոր պատ-
ճառաւ ալ ամէն ատեն ձեզի համար աղօթք

ա Թես . ա . 2 ; 3 ; գ . 6 ; 9 ; Գղ . բ . 12 ;
բ Կոր . է . 14 ; թ . 2 ; ա Թես . բ . 19 ; 20 ;
ա Թես . ա . 3 ;
ա Թես . բ . 14 ;
Փիլ . ա . 28 ;
ա Թես . բ . 14 ;
Յայտ . դ . 10 ;
Յայտ . ժդ . 13 ;
ա Թես . դ . 15 ; Յուդ . 14 ;
Եբր . ժ . 27 ; ժբ . 29 ; բ Պետ . գ . 7 ; Յայտ . ի . 8 ;
Սաղ . հթ . 6 ; ա Թես . դ . 5 ;
Հռով . բ . 8 ;
Փիլ . դ . 19 ; բ Պետ . գ . 7 ;
բ Օր . լգ . 2 ; Ես . բ . 19 ; Գղ . բ . 8 ;
Սաղ . ձթ . 7 ;
Սաղ . կը . 35 ;

կ՚ընենք , մ որ մեր Աստուածը ձեզ արժանի
ընէ իր կոչմանը , եւ իր բարութեան բոլոր
հաճութիւնը կատարէ , յ ու հաւատքին գոր-
12 ծը զօրութիւնով . ն Որ մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսին անունը փառաւորուի ձեր մէջը , եւ դուք
ալ անոր մէջը՝ մեր Աստուծոյն ու Տէր Յիսուս
Քրիստոսին շնորհացը համեմատ ։

ԳԼ. Բ

1 Կը խնդրէ անոնցմէ որ հաստատ կենան իրենց ընդունած ճըշմարտութեանը մէջ . 3 կը ցուցընէ թէ ամենք հաւատքէն պիտի ապստամբին , 9 եւ Նեռը պիտի յայտնուի Տէրոջը օրը գալէն առաջ . 15 իր առջի յորդորանքները կը կրկնէ , ու աղօթք կ՚ընէ անոնց համար ։

1 Կ՚աղաչենք ձեզի եղբայրներ՝ ա մեր Տէր Յիսուս
Քրիստոսի գալստեանը բ ու մեր անոր քով
2 ժողվուելուն համար , գ Չըլլայ որ շուտ մը խախ-
տիք ձեր միտքէն , ու չըլլայ որ խռովիք՝ ո՛չ հո-
գիով ու ո՛չ խօսքով , ո՛չ ալ թուղթով մը իբր
թէ մեզմէ գրուած , որպէս թէ Տէրոջը օրը եկած
3 հասած ըլլայ ։ դ Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ մէկ
կերպով մը . ինչու որ ան օրը պիտի չգայ՝ ե թէ որ
ապստամբութիւնը առաջ չգայ , զ ու յայտնուի
4 մեղաց մարդը՝ է կորստեան որդին , ը Ան հակառա-
կորդը հպարտացած թ ամենուն վրայ՝ որ Աստուած
կ՚ըսուի կամ կը պաշտուի , մինչեւ անիկայ Աս-
տուծոյ տաճարին մէջ պիտի նստի , եւ ինքզինքը
5 ցուցընէ թէ Աստուած է ։ Չէ՞ք յիշեր որ երբ
6 ձեր քովն էի , աս բաները կ՚ըսէի ձեզի ։ Եւ հի-

մ Հմր 5 ։
յ ա Թես. ա. 3 ։
ն ա Պետ. ա. 7 ; դ. 14 ։
ա ա Թես. դ. 15 ։
բ Մատ. իդ. 31 ; Մար. ժգ. 27 ; ա Թես. դ. 16 ։
գ Մատ. իդ. 4 ; Եփե. ե. 6 ; ա Յոհ. դ. 1 ։
դ Մատ. իդ. 4 ; Եփե. ե. 6 ։
ե ա Տիմ. դ. 1 ։
զ Դան. է. 25 ; ա Յոհ. բ. 18 ; Յայտ. ժգ. 11 , եւն ։
է Յոհ. ժէ. 12 ։
ը Ես. ժդ. 13 ; Եզեկ. իը. 2 , 6 , 9 ; Դան. է. 25 ; ժա. 36 ; Յայտ. ժգ. 6 ։
թ ա Կոր. ը. 5 ։

մա դուք [illegible] գիտէք ինչ է ան որ կ՚ար-
7 գիլէ , որ ինքը իր ատենին յայտնուի ։ ժ Ինչու որ
անօրէնութեան խորհուրդը հիմակուընէ կը գործա-
նայ . բայց ան որ հիմա կ՚արգիլէ , պիտի արգիլէ՝
8 մինչեւ որ ինքը մէջտեղէն վերնայ ։ Ու նոր պի-
տի յայտնուի ան անօրէնը , որն որ Տէր [Յիսուս]
ի իր բերնին հոգիովը լ պիտի սպառէ , խ ու իր գա-
9 լուն յայտնուելովը պիտի կորսնցընէ . ծ Որուն
գալը Սատանային ազդեցութիւնովն է բոլոր զօ-
րութիւնով կ եւ նշաններով ու սուտ հրաշքներով ,
10 հ Ու կորուսեալներուն վրայ անիրաւութեան բոլոր
խաբէութիւնովը , որովհետեւ անոնք ճշմարտու-
թեան սէրը չընդունեցին՝ որ փրկուին . ձ անոր
համար Աստուած ալ պիտի խրկէ անոնց ուժով մո-
11 լորութիւն մը՝ ղ որ սուտին հաւատան . Որ դա-
տապարտուին ամէն անոնք որ չհաւատացին ճշմար-
տութեան , ճ հապա անօրէնութեան յօժարեցան ։
12 մ Բայց մեզի պէտք է միշտ Աստուծմէ գոհանալ
ձեզի համար՝ Տէրոջմէ սիրուած եղբայրներ , ինչու
որ Աստուած յ առաջուց ն ձեզ ընտրեց փրկուելու
շ Հոգիին սրբելովը ու ճշմարտութեան հաւատ-
13 քովը . Որուն ձեզ կանչեց մեր աւետարանելովը՝
ո մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքը ստանալու ։
14 Ուստի եղբայրներ՝ չ հաստատ կեցէք , պ ու պինդ

ժ ա Յոհ. բ. 18 ; դ. 3 ։
ի Յոբ. դ. 9 ; Ես. ժա. 4 ; Ովս. զ. 5 ; Յայտ. բ. 16 ; ժթ. 15 , 20 , 21 ։
լ Դան. է. 10 , 11 ։
խ Գղ. ա. 8 , 9 ; Եբր. ժ. 27 ։
ծ Յոհ. ը. 41 , 44 ; Եփե. բ. 2 ; Յայտ. ժբ. 23 ։
կ Տես բ Օր. ժգ. 1 ; Մատ. իդ. 24 ; Յայտ. ժգ. 13 ; ժթ. 20 ։
հ բ Կոր. բ. 15 ; դ. 3 ։
ձ Հռովմ. ա. 24 , եւն ; Տես դ. Թագ. իբ. 22 ; Եզեկ. ժդ. 9 ։
ղ Մատ. իդ. 5 , 11 ; ա Տիմ. դ. 1 ։
ճ Հռովմ. ա. 32 ։
մ Գղ. ա. 3 ։
յ Եփե. ա. 4 ։
ն ա Թես. ա. 4 ։
շ Ղուկ. ա. 75 ; ա Պետ. ա. 2 ։
ո Յոհ. ժէ. 22 ; ա Թես. բ. 12 ; ա Պետ. ե. 10 ։
չ ա Կոր. ժզ. 13 ; Փիլ. դ. 1 ։
պ ա Կոր. ժա. 2 ; Գղ. դ. 6 ։

բռնեցէք այն աւանդութիւնները որ սորվեցաք՝ թէ
15 խօսքով ու թէ մեր թուղթովը։ ջ Իսկ ինքը մեր
Տէր Յիսուս Քրիստոս ու մեր Հայրն Աստուած,
ռ որ մեզ սիրեց ու տուաւ մեզի յաւիտենական
16 մխիթարութիւն ս և բարի յոյս շնորհքով, Ձեր
սիրտերը մխիթարէ վ և ձեզ հաստատէ ամէն բարի
խօսքերու և գործքերու մէջ։

ԳԼ. Գ.

1 Կը խնդրէ որ անոնք աղօթք ընեն իրեն համար, 3 անոնց վրայ իր ունեցած վստահութիւնը կը յայտնէ, 5 անոնց համար Աստուծոյ աղօթք կ'ընէ, 6 զանազան պատուէրներ կու տայ, մանաւանդ ծուլութենէ և անառակ ընկերներէ հեռու կենալու վրայով, 16 և իր թուղթը աղօթքով ու բարևներով կը վերջացընէ։

1 Վերջապէս եղբայրներ՝ տ մեզի համար աղօթք ը-
րէք, որ Տէրոջը խօսքը յառաջանայ ու փա-
2 ռաւոր ըլլայ, ինչպէս որ ձեր մէջը. ր Եւ որ անի-
րաւ ու չար մարդիկներէն ազատինք. ց ինչու որ
3 ամէնը * հաւատք չունին. ւ Բայց Տէրը հաւատա-
րիմ է, որ ձեզ պիտի հաստատէ փ ու չարէն պա-
4 հէ։ Եւ ք ձեր վրայ վստահութիւն ունինք Տէրոջ-
մով, թէ ինչ որ ձեզի պատուիրեցինք՝ կ'ընէք,
5 ու պիտի ընէք ալ։ ա Եւ Տէրը ձեր սիրտերը
Աստուծոյ սիրոյն ու Քրիստոսի համբերութեանը
ուղղէ։
6 Եւ ձեզի կը պատուիրենք՝ եղբայրներ՝ մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունովը, բ որ ետ քաշուիք
գ ամէն եղբօրմէ՝ դ որ անկարգութեամբ կը վարուի,

ջ Գլ. ա. 1, 2։
ռ ա Յով. դ. 10։ Յայտ. ա. 5։
ս ա Պետ. ա. 3։
վ ա Կոր. ա. 8։ ա Թես. գ. 13։ ա Պետ. ե. 10։
տ Եփես. զ. 19։ Կող. դ. 3։ ա Թես. ե. 25։
ր Հռով. ժե. 31։
ց Գործ. իը. 24։ Հռով. ժ. 16։
* Կամ հաւատարմութիւն
ւ ա Կոր. ա. 9։ ա Թես. ե. 24։
փ Յօհ. ժէ. 15։ բ Պետ. բ. 9։
ք բ Կոր. է. 16։ Գաղ. ե. 10։
ա ա Մն. իթ. 18։
բ Հռով. ժզ. 17։ Հմր 14։ ա Տիմ. զ. 5։ բ Յօհ. 10։
գ ա Կոր. ե. 11, 13։
դ ա Թես. դ. 11։ ե. 14։ Հմր 11, 12, 14։

ե ու չէ թէ այն աւանդութեանը պէս՝ որ մեզմէ ա-
7 ռաւ։ զ Ինչու որ դուք ինքնիրնիդ գիտէք թէ
ինչպէս պարտիք մեզի նմանող ըլլալ. է Քանզի
մենք ձեր մէջը անկարգութեամբ չվարուեցանք,
8 Ոչ ալ մէկուն հացը ձրի կերանք. ը հապա ջան-
քով և աշխատանքով գիշեր ու ցորեկ կը գործէինք՝
9 ձեզմէ մէկուն ծանրութիւն չտալու համար. թ Ոչ
թէ որ մենք իշխանութիւն չունէինք, ժ հապա որ
անձերնիս ձեզի օրինակ ընենք՝ որ մեզի նմանող ըլ-
10 լաք։ Վասն զի երբոր մենք ձեր քովը էինք՝ աս ձեզի
կը պատուիրէինք, ի թէ ան որ չուզեր գործ գոր-
11 ծել, հաց ալ թող չուտէ։ Արդ կը լսենք որ ձեր
մէջէն ոմանք լ անկարգութեամբ կը վարուին, խ ու
գործ մը չեն գործեր, հապա հետաքրքիր կը պտը-
12 տին։ ծ Անանկներուն պատուէր կու տանք ու
կ'աղաչենք մեր Տէր Յիսուս Քրիստոսով, կ որ
հանդարտութեամբ գործեն և իրենց հացը ու-
13 տեն։ Բայց դուք՝ եղբայրներ՝ հ մի՛ ձանձրանաք
14 բարիք գործելէն։ Իսկ թէ որ մէկը չհնազանդիր
մեր խօսքին աս թուղթով, դուք նշանակեցէք ա-
նիկայ, ձ ու անոր հետը մի՛ խառնուիք, որ ամըչ-
15 նայ։ ղ Բայց չըլլայ թէ թշնամիի պէս սեպէք զա-
16 նիկայ, ճ հապա եղբօր պէս խրատեցէք։ մ Եւ ին-
քը խաղաղութեան Տէրը ամէն կերպով ձեզի խա-

ե Գլ. բ. 14։
զ ա Կոր. դ. 16։ ժա. 1։ ա Թես. ա. 6, 7։
է ա Թես. բ. 10։
ը Գործ. ժը. 3։ ի. 34։ բ Կոր. ժա. 9։ ա Թես. բ. 9։
թ ա Կոր. թ. 6։ ա Թես. բ. 6, 7։
ժ Հմր 7։
ի Ծն. գ. 19։ ա Թես. դ. 11։
լ Հմր 6։
խ ա Թես. դ. 11։ ա Տիմ. ե. 13։ ա Պետ. դ. 15։
ծ ա Թես. դ. 11։
կ Եփես. դ. 28։
հ Գաղ. զ. 9։
ձ Մատ. ժը. 17։ ա Կոր. ե. 9, 11։ Հմր 6։
ղ Ղև. ժթ. 17։ ա Թես. ե. 14։
ճ Տիտ. գ. 10։
մ Հռով. ժե. 33։ ժզ. 20։ ա Կոր. ժդ. 33։ բ Կոր. ժգ. 11։ ա Թես. ե. 23։

խաղաղութիւն տայ ամէն ատեն · Տէրը ձեր ամենուն
հետ ըլլայ :
17 Հ Աս ողջոյնը իմ ձեռքիս՝ Պօղոսինն է , որ ամէն
թուղթերուն մէջ նշան է · ասանկ կը գրեմ :
18 Ա Մեր Տէր Յիսուս Քրիստոսին շնորհքը ձեր ամե-
նուն հետը ըլլայ : Ամէն :

Հ ա Կոր · ժզ · 21 · Կող · դ · 18 · | Ա Հռով · ժզ · 24 ·

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաքեալը Տիմոթէոսին միտքը կը ձգէ այն պատուէրը որ ինքը Մակեդոնիա գացած ատենը տուեր էր անոր · 5 կը խօսի օրէնքին ուղիղ գործածութեանը և նպատակին վրայով · 11 իր առաքելական պաշտօնին կանչուելուն վրայով , 20 և Հիմենոսին ու Աղեքսանդրոսին վրայով ·

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսին առաքեալը Ա մեր Փրկիչ
Աստուծոյ և Բ մեր յոյսը եղող Քրիստոս Յի-
2 սուսին Գ հրամանովը , Դ Տիմոթէոսին Ե իմ հարազատ
որդւոյս հաւատքով · Զ Շնորհք՝ ողորմութիւն ու
խաղաղութիւն Աստուծմէ մեր Հօրմէն և Քրիս-
տոս Յիսուս մեր Տէրոջմէն :
3 Ինչպէս որ քեզի աղաչեցի Եփեսոս մնալու ,
Է երբոր ես Մակեդոնիա կ'երթայի , Ը որ պատուի-

Ա Գլ · բ · 3 · գ · 10 · Տիտ · ա · 3 · բ · 10 · գ · 4 · Յուդ · 25 ·
Բ Կող · ա · 27 ·
Գ Գոր · թ · 15 · Գաղ · ա · 1 , 12 ·
Դ Գոր · ժզ · 1 · ա Կոր · դ · 17 · Փիլ · բ · 19 · ա Թես · գ · 2 ·
Ե Տիտ · ա · 4 ·
Զ Գաղ · ա · 3 · բ Տիմ · ա · 2 · ա Պետ · ա · 2 ·
Է Գոր · ի · 1 , 3 · Փիլ · բ · 24 ·
Ը Գաղ · ա · 6 , 7 · Գլ · զ · 3 , 10 ·

րես մէկ քանիներուն օտար ուսմունք չսորվեցնել ,
4 Թ Ու չնայիլ առասպելներու ու ազգահամարնե-
րու՝ որ վերջ չունին · Ժ որոնք աւելի վէճեր կը
պատճառեն , քան թէ Աստուծոյ հաճելի *շի-
5 նութիւնը՝ որ կ'ըլլայ հաւատքով : Ի Իսկ պա-
տուիրանքին վախճանը սէր է սուրբ սրտով
ու բարի խղճմտանքով և անկեղծ հաւատքով ·
6 Որոնցմէ խոտորելով ոմանք Լ փուճ խօսքերու ետեւէ
7 գացին · Օրինաց վարդապետ ըլլալ կ'ուզեն ,
Խ բայց իրենք չեն հասկնար ինչ որ կը խօսին ,
ոչ ալ այն բաները՝ որոնց համար ուժ կը կոխեն :
8 Ծ Արդ գիտենք որ օրէնքը աղէկ է , թէ որ մէկը
անիկայ օրինաւոր կերպով գործածելու ըլլայ :
9 Կ Բայց աս թող գիտնայ՝ որ արդարներուն համար
չէ օրէնքը , հապա անօրէններուն ու անհնազանդ-
ներուն համար , ամբարիշտներուն և մեղաւորնե-
րուն , անսուրբներուն և պիղծերուն , հայր ու
10 մայր զարնողներուն , մարդասպաններուն , Պոռ-
նիկներուն , արուագէտներուն , մարդ գողցողնե-
րուն , սուտզրուցներուն , սուտ երդում ընողնե-
րուն , Ձ և թէ ուրիշ ինչ որ հակառակ է ողջամիտ
11 վարդապետութեան , Ղ Որ երանելի Աստուծոյ
փառաւոր աւետարանին համեմատ է , Ճ այն որ ին-
12 ծի յանձնուեցաւ : Ու շնորհակալ եմ անոր՝ Մ որ
զիս զօրացուց , այսինքն Քրիստոս Յիսուս մեր Տէ-

Թ Գլ · դ · 7 · զ · 4 , 20 · բ Տիմ · բ · 14 , 16 , 23 · Տիտ · ա · 14 · գ · 9 ·
Ժ Գլ · զ · 4 ·
* Կամ կենցաղավարութիւնը
Ի Հռով · ժգ · 8 , 10 · Գաղ · ե · 14 ·
Լ բ Տիմ · բ · 22 ·
Խ Գլ · զ · 4 , 20 ·
Ծ Գլ · զ · 4 ·
Կ Հռով · է · 12 ·
Հ Գաղ · գ · 19 · ե · 23 ·
Ձ Գլ · զ · 3 · բ Տիմ · դ · 3 · Տիտ · ա · 9 · բ · 1 ·
Ղ Գլ · զ · 15 ·
Ճ ա Կոր · թ · 17 · Գաղ · բ · 7 · Կող · ա · 25 · ա Թես · բ · 4 · Գլ · բ · 7 · բ Տիմ · ա · 11 · Տիտ · ա · 3 ·
Մ բ Կոր · ժբ · 9 ·

բոլ, ժ որ հաւատարիմ սեպելով զիս՝ ն այս սպա-
13 սաւորութեանը մէջ դրաւ. շ Որ առաջուց հայ-
հոյիչ էի ու հալածող և թշնամանող. բայց ո-
ղորմութիւն գտայ, ո ինչու որ անհաւատութեան
14 մէջ չգիտնալով ըրի. չ Եւ մեր Տէրոջը շնորհքը
խիստ շատ եղաւ ինծի պ հաւատքով ջ ու սիրով՝ որ
15 Քրիստոս Յիսուսով է: ռ Այս խօսքը հաւատարիմ
է ու բոլորովին ընդունելութեան արժանի, ս որ
Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ մեղաւորները
16 փրկելու, որոնց գլխաւորը ես եմ. Բայց անոր համար
ողորմութիւն գտայ, որ պէտք առաջ Յիսուս Քրի-
ստոս իմ վրաս ցուցնէ բոլոր երկայնմտութիւնը՝
օրինակ ըլլալու անոնց որ պիտի հաւատային ի-
17 րեն յաւիտենական կենաց համար: վ Արդ յա-
ւիտենական Թագաւորին՝ որ տ անեղծ ու ր ան-
երեւոյթ է, ց մի * միայն Աստուծոյն ւ փառք ու
պատիւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:
18 փ Այս պատուէրը կ'աւանդեմ քեզի՝ իմ որդեակս
Տիմոթէոս, ք քու վրայովդ առաջուց եղած մարգա-
րէութիւններուն համեմատ, որ անոնցմով պատե-
19 րազմիս ֆ այն բարի պատերազմը, ա Եւ ունենաս
հաւատք ու մաքուր խղճմտանք, որն որ մէկ քանի-

յ ա Կոր. է. 25:
ն բ Կոր. գ. 5, 6: դ. 1: Կող. ա. 25:
շ Գոր. ը. 3: թ. 1: ա Կոր. ժե. 9: Փիլ. գ. 6:
ո Ղու. իգ. 34: Յոհ. թ. 39, 41: Գոր. գ. 17: իզ. 9:
չ Հռով. ե. 20: ա Կոր. ժե. 10:
պ բ Տիմ. ա. 13:
ջ Ղու. է. 47:
ռ Գղ. գ. 1: դ. 9: բ Տիմ. բ. 11: Տիտ. գ. 8:
ս Մատ. թ. 13: Մար. բ. 17: Ղու. ե. 32: ժթ. 10: Հռով. ե. 8: ա Յոհ. գ. 5:
վ բ Կոր. դ. 1:
տ Սաղ. ժ. 16: Ճնն. 13: Դան. է. 14: Գղ. գ. 15, 16:
ր Հռով. ա. 22:
ց Յոհ. ա. 18: Եբր. ժա. 27: ա Յոհ. դ. 12:
ւ Հռով. ժզ. 27: Յուդ. 25:
* Ոմանք՝ միայն իմաստուն
փ ա Մն. իթ. 11:
ք Գղ. գ. 13, 14, 20: բ Տիմ. բ. 2:
օ Գղ. դ. 14:
ֆ Գղ. գ. 12: բ Տիմ. բ. 8: դ. 7:
ա Գղ. գ. 9:

ները իրենցմէ մերժելով՝ բ նաւաբեկութիւն
20 կրեցին հաւատքին կողմանէ. Որոնցմէ են գ Հիմե-
նոս ու դ Աղեքսանդրոս, ե որոնք ես Սատանա-
յին մատնեցի, զ որ սորվին հայհոյութիւն չընել:

ԳԼ. Բ

1 Կը յորդորէ աղօթք ու գոհութիւն մատուցանել ամէն մար-
դոց համար, և ասոր պատճառն ալ յառաջ կը բերէ. 9 կը
ցուցնէ թէ կիները ինչո՛վ զարդարուելու են. 12 թէ ա-
նոնց թոյլտուութիւն չկայ սորվեցնելու, 15 և թէ պիտի
փրկուին որդեծնութեամբ՝ թէ որ հաւատքի մէջ կենան:

1 Արդ կ'աղաչեմ ամէն բանէն առաջ աղօթք
ընել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն
2 ամէն մարդոց համար, է Թագաւոր-
ներուն և ը բոլոր իշխանաւորներուն համար. որ
խաղաղ ու հանդարտ կեանք վարենք բոլորովին
աստուածպաշտութիւնով ու պարկեշտութիւնով:
3 թ Ինչու որ ան է աղէկը ու ընդունելին ժ մեր Փըր-
4 կիչ Աստուծոյն առջեւը. ի Որ կ'ուզէ թէ ամէն
մարդիկ փրկուին լ ու ճշմարտութիւնը ճանչնալու
5 գան: խ Քանզի մէկ Աստուած մը կայ, ծ ու մէկ
միջնորդ մը Աստուծոյ ու մարդոց մէջ՝ Քրիստոս
6 Յիսուս մարդը, կ Որ իր անձը ամենուն տեղը
փրկանք տուաւ՝ հ իր ատենին ձ վկայութիւն ըլլա-
7 լու. ղ Որ ես անոր քարոզիչ ու առաքեալ դրուե-
ցայ, (ճ Ճշմարիտ կ'ըսեմ * Քրիստոսով և սուտ

բ Գղ. գ. 9:
գ բ Տիմ. բ. 17:
դ բ Տիմ. դ. 14:
ե ա Կոր. ե. 5:
զ Գոր. ժգ. 45:
է Եզր. գ. 10: Երեմ. իթ. 7:
ը Հռով. ժգ. 1:
թ Հռով. ժբ. 2: Գղ. ե. 4:
ժ Գղ. ա. 1: բ Տիմ. ա. 9:
ի Եզեկ. ժը. 23: Յոհ. գ. 16, 17: Տիտ. բ. 11: բ Պետ. գ. 9:
լ Յոհ. ժէ. 3: բ Տիմ. բ. 35:
խ Հռով. գ. 29, 30: ժ. 12: Գաղ. գ. 20:
ծ Եբր. ը. 6: թ. 15:
կ Մատ. ի. 28: Մար. ժ. 45: Եփե. ա. 7: Տիտ. բ. 14:
հ Հռով. ե. 6: Գաղ. դ. 5: Եփե. ա. 10: գ. 5: Տիտ. ա. 3:
ձ ա Կոր. ա. 6: բ Թես. ա. 10: բ Տիմ. ա. 8:
ղ Եփե. գ. 7, 8: բ Տիմ. ա. 11:
ճ Հռով. թ. 1:
* Ոմանք չունին:

չեմ խօսիր ,) [ծ] հեթանոսներուն վարդապետ եղայ
8 հաւատքով ու ճշմարտութիւնով ։ Արդ կ՚ուզեմ
որ էրիկ մարդիկ [կ] ամէն տեղ աղօթք ընեն՝ [հ] սուրբ
ձեռքեր վերցնելով առանց բարկութեան ու երկ-
9 մտութեան ։ [ձ] Նոյնպէս ալ կիները վայելուչ
հագուստով , ամօթխածութեամբ և պարկեշտու-
թեամբ ինքզինքնին զարդարեն , ոչ թէ հիւ-
սուածքներով կամ ոսկիով կամ մարգարիտնե-
10 րով՝ կամ մեծածախ հանդերձներով , [ղ] հապա
բարի գործքերով՝ ինչպէս որ կը վայլէ աստուածպաշ-
11 տութիւնը դաւանող կիներուն ։ Կնիկ մարդը
թող սորվի լռութեամբ՝ ամէն հնազանդութիւնով ։
12 [ճ] Բայց կնիկ մարդու հրաման չեմ տար սորվեցնե-
լու , [մ] ոչ ալ էրիկ մարդուն իշխելու , հապա լուռ
13 կենալու ։ [յ] Ինչու որ առաջ Ադամ ստեղծուե-
14 ցաւ , ետքը Եւա ։ [ն] Եւ Ադամ չխաբուե-
ցաւ , հապա կինը խաբուեցաւ՝ ու յանցանք գոր-
15 ծեց ։ Սակայն պիտի փրկուի անիկա զաւակծնու-
թեամբ , թէ որ կենան հաւատքի և սիրոյ ու սըր-
բութեան մէջ պարկեշտութիւնով ։

ԳԼ . Գ

1 Կը ցուցնէ թէ եպիսկոպոսները՝ սարկաւագները ու անոնց կիները ինչ վարմունքի տէր ըլլալու են , 14 թէ ինչ նպատակով ինքը այս բաները գրեց Տիմոթէոսին . 15 կը խօսի եկեղեցիին վրայով և անոր մէջը քարոզուած ու ընդունուած սուրբ վարդապետութեանը վրայով ։

1 [շ] Սա խօսքը հաւատարիմ է , [ո] թէ որ մէկը ե-
պիսկոպոսութեան կը ցանկայ՝ [չ] աղէկ գործի
2 կը ցանկայ ։ [պ] Ասոր պէտք է եպիսկոպոսին ան-

ծ Հռով . ժա . 13 ; ժե . 16 ; Գաղ . ա . 16 ;
կ Մաղ . ա . 11 ; Յովհ . դ . 21 ;
հ Սաղ . ճլդ . 2 ; Եսա . ա . 15 ;
ձ ա Պետ . գ . 3 ;
ղ ա Պետ . գ . 4 ;
ճ ա Կոր . ժդ . 34 ;
մ Եփե . ե . 24 ;
յ Ծն . ա . 27 ; բ . 18 , 22 ; ա Կոր . ժա . 8 , 9 ;
ն Ծն . գ . 6 ; բ Կոր . ժա . 3 ;
շ Գլ . ա . 15 ;
ո Գործ . ի . 28 ; Փիլ . ա . 1 ;
չ Եփե . դ . 12 ;
պ Տիտ . ա . 6 , ևն ;

արատ ըլլալ , [ջ] մէկ կնկան մը էրիկ , զգաստ , խո-
հեմ , պարկեշտ , հիւրասէր , [ռ] սորվեցնող .
3 [ս] Ոչ գինեմոլ , [վ] ոչ զարնող , [տ] հապա հան-
4 դարտ , ոչ կռուող , [ր] ոչ արծաթասէր . Որ իր
տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլայ , [ց] իր
զաւակները հնազանդութեան մէջ պահելով բո-
5 լոր ծանրաբարոյութեամբ . (Հապա թէ որ
մէկը իր տանը վերակացութիւն ընելը չգիտնայ ,
ինչպէս Աստուծոյ եկեղեցիին հոգաբարձու պիտի
6 ըլլայ .) Ոչ ալ նորահաւատ ըլլայ , [ւ] որ չըլլայ
թէ հպարտանալով Սատանային դատապարտու-
7 թեանը մէջ իյնայ ։ [փ] Հապա պէտք է անոր
դուրսէն եղողներէն ալ բարի վկայութիւն ունե-
նալ , որ չըլլայ թէ նախատինքի մէջ ու [ք] Սատա-
նային որոգայթին մէջը իյնայ ։
8 [կ] Նոյնպէս ալ սարկաւագները ըլլան ծանրաբա-
րոյ , ոչ երկլեզու , [հ] ոչ գինեսէր , ոչ անարգ
9 շահախնդրութեան ետեւէ եղող . [ձ] Հապա հաւատ-
քին խորհուրդը պահեն մաքուր խղճմտանքով ։
10 Եւ ասոնք ալ առաջ թող փորձուին , ետքը՝ թէ
որ անմեղադրելի գտնուին , սարկաւագութեան
11 պաշտօնը կատարեն ։ [ղ] Անանկ ալ անոնց կիննե-
րը ծանրաբարոյ ըլլան , ոչ չարախօս , հապա
12 զգաստ , ամէն բանի մէջ հաւատարիմ ։ Սար-
կաւագները մէկ կնկան մը էրիկ ըլլան , և իրենց
զաւակներուն ու իրենց տանը աղէկ վերակացու-
13 թիւն ընող ըլլան ։ [ճ] Քանզի անոնք որ սարկա-
ւագութեան պաշտօնը աղէկ կը կատարեն , բարի

ջ Գլ . ե . 9 ;
ռ բ Տիմ . բ . 24 ;
ս Հմր 8 ; Տիտ . ա . 7 ;
վ բ Տիմ . բ . 24 ;
տ բ Տիմ . բ . 24 ;
ր ա Պետ . ե . 2 ;
ց Տիտ . ա . 6 ;
ւ Եսա . ժդ . 12 ;
փ Գործ . իբ . 12 ; ա Կոր . ե . 12 ; ա Թես . դ . 11 ;
ք Գլ . զ . 9 ; բ Տիմ . բ . 26 ;
կ Գործ . զ . 3 ;
հ Հմր 3 ; Ղև . ժ . 9 ; Եզեկ . խդ . 21 ;
ձ Գլ . ա . 19 ;
ղ Տիտ . բ . 3 ;
ճ Տես Մատ . իե . 21 ;

աստիճան մը իրենց կը շահին ու Քրիստոս Յի-
սուսի վրայ եղած հաւատքին մէջ շատ համարձա-
կութիւն:
14 Ասոնք բաները կը գրեմ քեզի, յուսալով մօտերս
15 քեզի գալ. Բայց եթէ ուշանալու ըլլամ, որ
գիտնաս թէ ինչպէս պէտք է քեզի ժ Աստուծոյ տա-
նը մէջ պտըտիլ, որ կենդանի Աստուծոյ եկեղե-
ցին է, ճշմարտութեան սիւնը ու հաստատութիւ-
16 նը: Եւ յայտնապէս մեծ է աստուածպաշտու-
թեան խորհուրդը. յ Աստուած մարմինով յայտ-
նուեցաւ, ն Հոգիով արդարացաւ, շ հրեշտակ-
ներուն երեւցաւ, ո հեթանոսաց մէջ քարոզուեցաւ,
չ աշխարհի մէջ հաւատացուեցաւ, պ փառքով
համբարձաւ:

ԳԼ. Դ.

1 Առաքեալը կը նախաձայնէ թէ վերջի ժամանակները ոմանք հաւատքէն պիտի մոլորին. 6 զանազան պատուէրներ կու տայ Տիմոթէոսին, որ իրեն յանձնուած պաշտօնին մէջ թերութիւն մը չցուցնէ:

1 ջ Բայց Հոգին յայտնի կ'ըսէ, ռ թէ վերջի ատեն-
ները մէկ քանիները հաւատքէն պիտի ապըս-
տամբին, ս և մոլորեցուցիչ ոգիներու վ ու դի-
ւաց ուսմունքներու ուշադրութիւն պիտի տան,
2 տ Ստախօսներուն կեղծաւորութեամբը, ր որոնց

ժ Եփե. բ. 21, 22. բ Տիմ. բ. 20.
յ ա Յօհ. ա. 14. ա Յօհ. ա. 2.
ն Մատ. գ. 16. Յօհ. ա. 32, 33. ժե. 26. ժզ. 8, 9. Հռով. ա. 4. ա Պետ. գ. 18. ա Յօհ. ե. 6, 7.
շ Մատ. իը. 2. Մար. ժզ. 5. Ղու. բ. 13. իդ. 4. Յօհ. ի. 12. Եփե. գ. 10. ա Պետ. ա. 12.
ո Գործ. ժ. 34. ժգ. 46, 48. Գաղ. բ. 8. Եփե. գ. 5, 6, 8. Հռով. ժ. 18. Կող. ա. 27, 28. Գլ. բ. 7.
չ Կող. ա. 6, 23.
պ Ղու. իդ. 51. Գործ. ա. 19. ա Պետ. գ. 22.
ջ Յօհ. ժզ. 13. բ Թես. բ. 3. բ Տիմ. գ. 1, 7. բ Պետ. գ. 3. ա Յօհ. բ. 18. Յուդ. 4, 18.
ռ ա Պետ. ա. 20.
ս բ Տիմ. գ. 13. բ Պետ. բ. 1. Յայտ. ժզ. 14.
վ Դան. ժա. 35, 37, 38. Յայտ. թ. 20.
տ Մատ. է. 15. Հռով. ժզ. 18. բ Պետ. բ. 3.
ր Եփե. դ. 9.

3 խղճմտանքը խանձուած է. ց Որոնք ամուսնանալէն
պիտի արգիլեն, ու այն պիտի պահեն կերակուր-
ներէն՝ որ Աստուած ստեղծեր է փ որ հաւատա-
ցեալները և ճշմարտութիւնը ճանչցողները ք գո-
4 հութեամբ վայելեն: և Ինչու որ Աստուծոյ ամէն
ստեղծածը բարի է ու մերժելու բան մը չկայ,
5 թէ որ գոհութեամբ ընդունուի. Քանզի Աստու-
6 ծոյ խօսքովը ու աղօթքով կը սրբուի: Ասոնք բա-
ները եղբայրներուն յիշեցնելով՝ Յիսուս Քրիս-
տոսի բարի պաշտօնեայ մը պիտի ըլլաս, օ ու պի-
տի սնանիս հաւատքին խօսքերովը և այն բարի վար-
7 դապետութիւնովը, որուն հետեւող եղար: ֆ Բայց
պիղծ ու պառաւական առասպելներէն ետ կեցիր,
ա և քու անձդ աստուածպաշտութեան վարժեցուր.
8 բ Ինչու որ մարմինին վարժութիւնը քիչ բանի
օգտակար է, գ բայց աստուածպաշտութիւնը ա-
մէն բանի օգտակար է, դ որ թէ ներկայ և թէ
9 ապառնի կենաց խոստումները ունի: ե Այս խօսքը
հաւատարիմ է և բոլորովին ընդունելու արժա-
10 նի: զ Ինչու որ բուն ատոր համար կ'աշխատինք
ու նախատինք կը կրենք. է վասն զի կենդանի Աս-
տուծոյ յուսացեր ենք, ը որ ամէն մարդոց Փրկիչն
11 է, մանաւանդ հաւատացեալներուն: թ Ասոնք բա-
12 ները պատուիրէ ու սորվեցուր: ժ Չըլլայ որ
մէկը քու մանկութիւնդ անարգէ. ի հապա դուն

ց ա Կոր. է. 28, 36, 38. Կող. բ. 20, 21. Եբր. ժգ. 4.
ւ Հռով. ժդ. 3, 17. ա Կոր. ը. 8.
փ Հռով. ժդ. 6. ա Կոր. ժ. 30.
ք Ծն. ա. 29. թ. 3.
և Հռով. ժդ. 14, 20. ա Կոր. ժ. 25. Տիտ. ա. 15.
օ բ Տիմ. գ. 14, 15.
ֆ Գլ. ա. 4. զ. 20. բ Տիմ. բ. 16, 23. դ. 4. Տիտ. ա. 14.
ա Եբր. ե. 14.
բ ա Կոր. ը. 8. Կող. բ. 23.
գ Գլ. զ. 6.
դ Սաղ. լէ. 4. ձգ. 11. Ճժր. 2, 3. Ճխե. 19. Մատ. զ. 33. ժթ. 29. Մար. ժ. 30. Հռով. ը. 28.
ե Գլ. ա. 15.
զ ա Կոր. դ. 11, 12.
է Գլ. զ. 17.
ը Սաղ. լզ. 6. Ճէ. 2, 6, 7.
թ Գլ. զ. 2.
ժ ա Կոր. ժզ. 11. Տիտ. բ. 15.
ի Տիտ. բ. 7. ա Պետ. ե. 3.

օրինակ եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վար-
մունքով, սիրով, հաւատքով և մաքրութեամբ։
13 Մինչև որ ես գամ՝ միտք դիր կարդալու, յոր-
14 դորելու, սորվեցնելու։ Անհոգ մի ըլլար
քու վրադ եղած պարգևին վրայով, որ մարգա-
րէութեամբ քեզի տրուեցաւ՝ Երէցներուն ձեռ-
15 քերը քու վրադ դրուելովը։ Ասոնց վրայ խորհէ
ու ասոնց մէջը պարապէ, որ քու յառաջադիմու-
16 թիւնդ * ամենուն յայտնի ըլլայ։ Զգուշացիր
քու անձիդ ու վարդապետութեանը՝ միշտ ա-
սոնց մէջը կեցիր. քանզի այսպէս ընելով, քեզ
ալ պիտի ազատես, նաև անոնք ալ՝ որ քեզի
մտիկ կ'ընեն։

ԳԼ. Ե

1 Կանոններ կու տայ յանդիմանելու վրայով. 3 որբևայրինե-
րու 17 և ծերերու վրայով. 23 յատուկ պատուէր մըն ալ կու
տայ Տիմոթէոսին առողջութեանը վրայով. 24 կը ծանուցա-
նէ թէ ոմանց մեղքերը իրենցմէ առաջ դատաստանի կ'եր-
թան, և ոմանց մեղքերը իրենց ետևէն կու գան։

1 Ծերը սաստիկ մի յանդիմաներ, հապա հօր
պէս յորդորէ զանիկայ. երիտասարդները՝
2 եղբայրներու պէս, Պառաւները՝ մայրերու պէս,
դեռահասակ կնիկները՝ քոյրերու պէս ամէն
3 մաքրութիւնով։ Որբևայրիները պատուէ՝ անոնք
4 որ ճշմարտապէս որբևայրի են։ Հապա թէ որ մէկ
որբևայրի մը զաւակներ կամ թոռներ ունենայ,
թող անոնք առաջ սորվին իրենց տանը մէջ որդիա-
կան գութ ցուցընել, ու փոխարէն հատուցանել
իրենց ծնողացը. Ինչու որ ան է բարի և ըն-

ն Բ Տիմ. ա. 6։
շ Գլ. ա. 18։
ո Գոր. գ. 6։ ը. 17։ ժգ. 3։ ժթ. 6։ Գլ. ե. 22։ Բ Տիմ. ա. 6։
* Կամ՝ ամէն բանի մէջ
չ Գոր. ի. 28։
պ Եզեկ. ԼԳ. 9։
ջ Հռով. ժա. 14։ ա Կոր. թ. 22։ Յակ. ե. 20։
ա Ղև. ժթ. 32։
բ Հմր 5, 16։
գ Տես Ծն. խե. 10, 11։ Մատ. ժե. 4։ Եփե. զ. 1, 2։
դ Գլ. բ. 3։

5 դունելի Աստուծոյ առջևը։ Բայց ան որ ճշմար-
տապէս որբևայրի է ու մինակ մնացած, իր յոյսը
Աստուծոյ վրայ դրած է, և գիշեր ցորեկ աղօթ-
6 քի ու աղաչանքի կը պարապի. Բայց փափ-
7 կասէր որբևայրին կենդանւոյն մեռած է։ Ա-
ս բաները պատուիրէ՝ որ անարատ ըլլան։
8 Բայց թէ որ մէկը իրեններուն ու մանաւանդ իր
ընտանեացը հոգ չտանիր, անիկայ հաւատքը ու-
9 րացած է, և անհաւատէ մըն ալ գէշ է։ Որ-
բևայրին որբևայրիներուն կարգը թող սեպուի, որ
վաթսուն տարուընէ պակաս չէ, մէկ էրկան մը
10 կնիկ եղած, Բարի գործերով վկայուած. թէ
զաւակներ մեծցուցած ըլլայ, թէ հիւրեր ընդու-
նած ըլլայ, թէ սուրբերուն ոտքերը լուացած
ըլլայ, թէ նեղեալներուն օգնութիւն բրած ըլ-
լայ, թէ ամէն տեսակ բարեգործութեան մէջ յա-
11 րատևած ըլլայ։ Բայց դեռահասակ որբևայրիները
մերժէ. քանզի երբոր Քրիստոսի դէմ յանդգնելով
հեշտասիրութեան անձնատուր կ'ըլլան, ամուսնա-
12 նալ կ'ուզեն. Ու դատապարտութիւն կ'ընդու-
նին, ինչու որ առջի հաւատքնին մէկդի ձգեցին։
13 Նաև ծոյլ ըլլալ կը սորվին, տունէ տուն պտը-
տողներ. և ոչ միայն ծոյլ, հապա շատախօսներ
ու հետաքրքիրներ, և անպատեհ բաներ կը խօսին։
14 Ուստի կ'ուզեմ որ դեռահասակ կնիկները ամուս-
նանան, զաւակներ ծնանին, տնաշէն ըլլան.
նախատանաց պատճառ չտան հակառակորդին։
15 Քանզի արդէն ոմանք Սատանային ետևէն ելեր են։

ե ա Կոր. է. 32։
զ Գոր. իզ. 7։
է Ղու. բ. 37։ ժը. 1։
ը Յակ. ե. 5։
թ Գլ. ա. 3։ դ. 11։ զ. 17։
ժ Ես. ծբ. 7։ Գաղ. զ. 10։
ի Բ Տիմ. գ. 5։ Տիտ. ա. 16։
լ Մատ. ժը. 17։
խ Ղու. բ. 36։ Գլ. գ. 2։
ծ Գոր. ժզ. 15։ Եբր. ժգ. 2։ ա Պետ. դ. 9։
կ Ծն. ժը. 4։ ժթ. 2։ Ղու. է. 38, 44։ Յով. ժգ. 5, 14։
հ Բ Թես. գ. 11։
ձ ա Կոր. է. 9։
ղ Գլ. զ. 1։ Տիտ. բ. 8։

16 խոտորեցան ։ Եթէ որ հաւատացեալ էրիկ մարդ-
մը կամ կնիկ մը որբեւայրիներ ունենայ , թող օգ-
նութիւն ընէ անոնց , և եկեղեցին չծանրաբեռնի ,
ձ որ ճշմարտապէս որբեւայրիներուն օգնութիւն ընէ ։
17 ղ Աղէկ վերակացութիւն ընող երէցները ճ կրկին
պատուոյ արժանի թող սեպուին ․ մանաւանդ ա-
նոնք որ կ'աշխատին խօսքը քարոզելով ու սորվեցը-
18 նելով ։ Ինչու որ գիրքը կ'ըսէ թէ մ Կալի մէջ
աշխատող եզին դունչը չկապես ․ և թէ յ Մշակը
19 իր վարձքին արժանի է ։ Երէցի վրայով ամբաս-
տանութիւն մի ընդունիր , ն բայց միայն երկու
20 կամ երեք վկաներով ։ շ Անոնք որ մեղք կը գոր-
ծեն , ամենուն առջեւը յանդիմանէ , ո որ ուրիշ-
21 ներն ալ վախնան ։ չ Վկայութիւն կը դնեմ Աս-
տուծոյ առջեւը և Յիսուս Քրիստոսի ու ընտ-
րեալ հրեշտակներուն , որ ասիկա պահես ա-
ռանց նախապաշարման , բան մը աչառութեամբ
22 չընելով ։ պ Շուտով մէկուն վրայ ձեռք չդնես ,
ջ և ուրիշներուն մեղացը հաղորդ չըլլաս ․ դուն
քեզ մաքուր պահէ ։
23 Ասկէ ետեւ լոկ ջուր չխմես , հապա քիչ մըն ալ
գինի գործածէ՝ քու ստամոքսիդ ու յաճախ հի-
ւանդութիւններուդ համար ։
24 ս Կան մարդիկ՝ որ իրենց մեղքերը յայտնի են ,
ու առաջուց դատաստանի հասած ․ և կան՝ որ
25 իրենց ետեւէն կ'երթան ։ Նմանապէս ալ ոմանց բարի

ձ Հմր 3 . 5 ։
ղ Հռով . ժբ . 8 ; ա Կոր . թ . 10 , 14 ; Գաղ . զ . 6 ; Փիլ . բ . 29 ; ա Թես . ե . 12 , 13 ; Եբր . ժգ . 7 , 17 ։
ճ Գոր . իբ . 10 ։
մ բ Օր . իե . 4 ; ա Կոր . թ . 9 ։
յ Ղև . ժթ . 13 ; բ Օր . իդ . 14 , 15 ; Մատ . ժ . 10 ; Ղու . ժ . 7 ։
ն բ Օր . ժթ . 15 ։
շ Գաղ . բ . 11 , 14 ; Տիտ . ա . 13 ։
ո բ Օր . ժգ . 11 ։
չ Գլ . զ . 13 ; բ Տիմ . բ . 14 ; դ . 1 ։
պ Գոր . զ . 6 ; ժգ . 3 ; Գլ . դ . 14 ; բ Տիմ . ա . 6 ։
ջ բ Յով . 11 ։
ռ Սաղ . ճդ . 15 ։
ս Գաղ . ե . 19 ։

գործքերը յայտնի են ․ ու անոնք որ ուրիշ կերպ
բան մըն են , չեն կրնար ծածուկ մնալ ։

ԳԼ . Զ

1 Կը սորվեցընէ թէ ծառաները ինչ պարտաւորութիւն ունին ․ 3 և թէ պէտք չէ նորաձև վարդապետներուն հետեւիլ ․ 6 թէ աստուածպաշտութիւնը մեծ վաստակ մըն է , 10 և արծաթսիրութիւնը ամէն չարիքներուն արմատն է ․ 11 թէ Տիմոթէոս ինչ բանէ փախչելու էր , և ինչ բանի ետեւէ երթալու էր , 17 և ինչ բանի վրայով հարուստներուն պատուէր տալու էր ․ 20 կը պատուիրէ Տիմոթէոսին որ ճշմարիտ վարդապետութիւնը մաքուր պահէ , և պիղծ խօսքերէն ու հակառակութիւններէն հեռու կենայ ։

1 ա Ան ամէնքը որ ծառայութեան լուծի տակ են ,
իրենց տէրերը ամէն պատուոյ արժանի սե-
պեն , բ որ Աստուծոյ անունը ու վարդապետու-
2 թիւնը չհայհոյուի ։ Ու անոնք որ հաւատացեալ
տէրեր ունին , թող չարհամարհեն՝ գ եղբայրներ
ըլլալնուն պատճառաւը ․ հապա աւելի ծառայու-
թիւն ընեն , ինչու որ անոնք հաւատացեալ են ու
սիրելի , որոնք բարերարութիւն ընելու մէջ մաս-
նակից են ․ դ Ասոնք սորվեցուր ու յորդորէ ։
3 ե Եթէ որ մէկը ուրիշ կերպ բան մը սորվեցընէ ,
զ ու մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի
ողջամիտ խօսքերուն , է և այն վարդապետութեա-
4 նը որ աստուածպաշտութեան համեմատ է , Այնպի-
սին հպարտացած է ը ու բան մը չգիտեր , թ հապա
վէճերով ու հակառակութիւններով ախտացած է ․
որոնցմէ կ'ըլլայ նախանձ , կռիւ , հայհոյութիւն-
5 ներ , գէշ կասկածներ , ժ Մտքով ապականած ու
ճշմարտութենէն հեռացած մարդոց ի զրպարտանու-

ա Եփե . զ . 5 ; Կող . գ . 22 ; Տիտ . բ . 9 ; ա Պետ . բ . 18 ։
բ Եսա . ծբ . 5 ; Հռով . բ . 24 ; Տիտ . բ . 5 , 8 ։
գ Կող . դ . 1 ։
դ Գլ . դ . 11 ։
ե Գլ . ա . 3 ։
զ Գլ . ա . 10 ; բ Տիմ . ա . 13 ; դ . 3 ; Տիտ . ա . 9 ։
է Տիտ . ա . 1 ։
ը ա Կոր . ը . 2 ; Գլ . ա . 7 ։
թ Գլ . ա . 4 ; բ Տիմ . բ . 23 ; Տիտ . գ . 9 ։
ժ բ Տիմ . գ . 8 ։
ի Գլ . ա . 6 ։

թիւնները, ւ որոնք աստուածպաշտութիւնը շա-
հավաճառութիւն մը կը սեպեն. փ անանկներէն
6 մէկդի կեցիր ։ ք Սակայն աստուածպաշտութիւնը
գոհունակութիւնով մէկտեղ մեծ շահավաճառու-
7 թիւն մըն է ։ օ Ինչու որ բան մը չբերինք աշխարհ,
ու յայտնի է որ չենք կրնար անկէ բան մը տանիլ ։
8 ֆ Հապա կերակուր ու հանդերձ ունենալով, անոնց-
9 մով բաւականանանք ։ ա Բայց անոնք որ հարստա-
նալ կ'ուզեն, կ'իյնան փորձութեան ու որոգայ-
թի և շատ յիմարական ու վնասակար ցանկութիւն-
ներու մէջ, բ որոնք սատակումի ու կորստեան մէջ
10 կ'ընկղմեն մարդիկ ։ դ Ինչու որ ամէն չարութիւն-
ներուն արմատը արծաթսիրութիւնն է. որուն մէկ
քանիները անձնատուր ըլլալով՝ հաւատքէն մոլո-
րեցան, ու ինքզինքնին շատ ցաւերով խոցեցին ։
11 ե Բայց դուն զ ո՛վ մարդ Աստուծոյ՝ փախի՛ր աս
բաներէն, ու գնա արդարութեան՝ աստուածպաշ-
տութեան՝ հաւատքի՝ սիրոյ՝ համբերութեան ու
12 հեզութեան ետևէն. է Պատերազմէ՛ հաւատքին
բարի պատերազմը, ը բռնէ՛ յաւիտենական կեան-
քը՝ որուն որ կանչուեցար, թ և շատ վկաներու
13 առջև դաւանեցար բարի դաւանութիւնը ։ ժ Ես
պատուիրեմ քեզի Աստուծոյ առջևը՝ ի որ կենդանի
կ'ընէ բոլորը, և Քրիստոս Յիսուսի առջևը՝ լ որ
Պոնտացի Պիղատոսին առջին վկայեց բարի դաւա-

ւ Տիտ. ա. 11 ; բ Պետ. բ. 3 ;
փ Հռովմ. ժզ. 17 ; բ Տիմ. գ. 5 ;
ք Սաղ. լէ. 16 ; Առակ. ժե. 16 ; ժզ. 8 ; Եբր. ժգ. 5 ;
օ Յոբ. ա. 21 ; Սաղ. խթ. 17 ; Առակ. իէ. 24 ; Ժող. ե. 15 ;
ֆ Ծն. իը. 20 ; Եբր. ժգ. 5 ;
ա Առակ. ժե. 27 ; ի. 21 ; իը. 20 ; Մատ. ժգ. 22 ; Յակ. ե. 1 ;
բ Գլ. գ. 7 ;
գ Գլ. ա. 19 ;
դ Ել. իգ. 8 ; բ Օր. ժզ. 19 ;
ե բ Տիմ. բ. 22 ;
զ բ Օր. լգ. 1 ; բ Տիմ. գ. 17 ;
է ա Կոր. թ. 25, 26 ; Գլ. ա. 18 ; բ Տիմ. դ. 7 ;
ը Փիլ. գ. 12, 14 ; Համր 19 ;
թ Եբր. ժ. 23 ;
ժ Գլ. ե. 21 ;
ի բ Օր. լբ. 39 ; ա Թագ. բ. 6 ; Յօհ. ե. 21 ;
լ Մատ. իէ. 11 ; Յօհ. ժը. 37 ; Յայտ. ա. 5 ; գ. 14 ;

14 նութիւնը, Որ դուն այն պատուէրը անբիծ ան-
արատ պահես՝ խ մինչև մեր Տէրոջը Յիսուս Քրիս-
15 տոսին յայտնութիւնը. Որն որ իր ատենին պիտի
ցուցընէ՝ ծ Երանելին ու մի միայն Հզօրը, կ Թա-
գաւորներուն Թագաւորը ու տէրերուն Տէրը.
16 հ Որ ինքը միայն ունի անմահութիւն՝ անմերձենալի
լուսոյ մէջ բնակած. ձ Զորն որ մարդոցմէն մէկը
չտեսաւ, ո՛չ ալ տեսնելու կարող է, ղ որուն
պատիւ և զօրութիւն յաւիտենանս ։ Ամէն ։
17 Աս աշխարհիս մէջ հարուստ եղողներուն պա-
տուէ՛ր տուր՝ որ չհպարտանան, ճ և անստոյգ
հարստութեան վրայ մ յոյսերնին չդնեն, յ հապա
կենդանի Աստուծոյ վրայ՝ ն որ ամէն բանը մեզի
18 առատօրէն կու տայ վայելելու, Բարիք գործեն,
շ բարի գործքերով հարստանան, ո առատաձեռն,
19 և չ տուրքին պատրաստ հաղորդ ըլլան. պ Բարի հիմ
գանձեն անձերնուն հանդերձեալին համար, ջ որ
յաւիտենական կեանքը ձեռք ձգեն ։
20 ռ Ո՛վ Տիմոթէոս՝ քեզի յանձնուած աւանդը պահէ՛,
ս փախչելով պիղծ ունայնաբանութիւններէն և
սուտանուն գիտութեան հակառակութիւններէն,
21 Որն որ մէկ քանիները դաւանելով՝ վ հաւատքէն
մոլորեցան ։ Շնորհքը քու հետդ ըլլայ ։ Ամէն ։

խ Փիլ. ա. 6, 10 ; ա Թես. գ. 13 ; ե. 23 ;
ծ Գլ. ա. 11, 17 ;
կ Յայտ. ժէ. 14 ; ժթ. 16 ;
հ Գլ. ա. 17 ;
ձ Ել. լգ. 20 ; Յօհ. զ. 46 ;
ղ Եփե. գ. 21 ; Փիլ. դ. 20 ; Յուդ. 25 ; Յայտ. ա. 6 ; դ. 11 ; ե. 12 ;
ճ Առակ. իգ. 5 ;
մ Յոբ. լա. 24 ; Սաղ. ծբ. 7 ; կբ. 10 ; Մար. ժ. 24 ; Ղու. ժբ. 21 ;
յ ա Թես. ա. 9 ; Գլ. դ. 15 ; դ. 10 ;
ն Գործ. ժդ. 16 ; ժէ. 25 ;
շ Ղու. ժբ. 21 ; Գլ. ե. 10 ; Տիտ. գ. 8 ; Յակ. բ. 5 ;
ո Հռովմ. ժբ. 13 ;
չ Գաղ. զ. 6 ; Եբր. ժգ. 16 ;
պ Մատ. զ. 20 ; ժթ. 21 ; Ղու. ժբ. 33 ; ժզ. 9 ;
ջ Համր 12 ;
ռ բ Տիմ. ա. 14 ; Տիտ. ա. 9 ; Յայտ. գ. 3 ;
ս Գլ. ա. 4, 6 ; դ. 7 ; բ Տիմ. բ. 14, 16, 23 ; Տիտ. ա. 14 ; գ. 9 ;
վ Գլ. ա. 6, 19 ; բ Տիմ. բ. 18 ;

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս կը յիշէ իր սէրը Տիմոթէոսի վրայ, և անոր զուտ հա-
ւատքը որ Տիմոթէոս՝ իր մայրը ու մեծ մայրը ունէին. 6 կը
յորդորէ Տիմոթէոսը որ իր վրայ եղած Աստուծոյ շնորհքը
արծարծէ, 8 որ հալածման մէջ համառ ու համբերող ըլլայ,
13 ու ամուր բռնէ իրմէն սորված վարդապետութեան եղա-
նակը ու ճշմարտութիւնը. 15 կը յիշէ Փիգեղոսը և Հերմո-
գենէսը՝ ..., ու Ոնեսիփորոսին վրայով բարի վկայութիւն
կու տայ։

1 ա Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստու-
ծոյ կամքովը բ կենաց խոստմունքին պէս, որ
2 Քրիստոս Յիսուսով է, գ Տիմոթէոս իմ սիրելի
որդիիս՝ շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն
Հօր Աստուծմէն ու Քրիստոս Յիսուս մեր Տէ-
րոջմէն։
3 դ Շնորհակալ եմ Աստուծոյ՝ ե որուն որ կը պաշ-
տեմ իմ նախնիքներէս մաքուր խղճմտանքով,
(զ երբոր անդադար քեզ իմ աղօթքներուս մէջ
4 կը յիշեմ գիշեր ու ցորեկ, է Ցանկալով
քեզ տեսնել, ու միտք բերելով քու ար-
ցունքներդ, որ ուրախութիւնով լեցուիմ.)
5 ը Միտք բերելով քու վրադ եղած անկեղծ հաւատքը,
որ առաջ քու մեծ մօրդ Լովիսային ու քու մօրդ
Եւնիկէին վրայ բնակեցաւ, և համոզուած եմ որ

ա բ Կոր. ա. 1։	14։ իէ. 23։ Հռով. ա. 9։
բ Եփե. գ. 6։ Տիտ. ա. 2։	Գաղ. ա. 14։
Եբր. թ. 15։	զ ա Թես. ա. 2։ գ. 10։
գ ա Տիմ. ա. 2։	է Գղ. գ. 9, 21։
դ Հռով. ա. 8։ Եփե. ա. 16։	ը ա Տիմ. ա. 6։ դ. 6։
ե Գործ. իբ. 3։ իգ. 1։ իդ.	թ Գործ. ժզ. 1։

6 քու վրադ ալ կայ։ Անոր համար քու միտքդ կը
ձգեմ ժ որ արծարծես Աստուծոյ պարգևը, որ քեզի
տրուած է իմ ձեռքերուս քու վրադ դրուելովը։
7 ի Ինչու որ Աստուած մեզի երկչոտութեան հոգի
չտուաւ, լ հապա զօրութեան ու սիրոյ և զգաս-
8 տութեան։ խ Ուստի ամօթ մի՛ սեպեր ծ մեր
Տէրոջը վկայութիւնը, կ ոչ ալ զիս անոր համար
կապուածս. հ հապա մասնակից եղիր աւետարա-
նին չարչարանքներուն՝ Աստուծոյ զօրութեանը հա-
9 մեմատ. ձ Որ մեզ փրկեց ղ ու սուրբ կոչումով
կանչեց՝ ճ չէ թէ մեր գործքերուն նայելով, մ հապա
իր նախասահմանութեանը ու շնորհացը նայելով,
որ Քրիստոս Յիսուսով մեզի տրուեցաւ յ յաւիտե-
10 նական դարերէն առաջ. ն Բայց հիմա յայտնուեցաւ
մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի երևնալովը. շ Որ
մահը խափանեց, և 'ի լոյս հանեց կեանքը ու ան-
11 մահութիւնը աւետարանին միջոցովը. ո Որ ես
անոր քարոզիչ ու առաքեալ դրուեցայ ու հեթա-
12 նոսներուն վարդապետ։ չ Անոր համար աս չար-
չարանքներն ալ կը կրեմ. բայց ամօթ մը չեմ
սեպեր, պ ինչու որ գիտեմ թէ որու եմ հաւատա-
ցեր, և համոզուած եմ Ան իմ իրեն աւանդած
13 բանս կրնայ պահել ջ մինչև ան օրը։ ռ Առող-

ժ ա Թես. ե. 19։ ա Տիմ. դ. 14։	գ. 11։ Տիտ. ա. 2։ ա Պետ. ա. 20։
ի Հռով. ը. 15։	ն Հռով. ժզ. 26։ Եփե. ա. 9։
լ Ղուկ. իդ. 49։ Գործ. ա. 8։	Կող. ա. 26։ Տիտ. ա. 3։
խ Հռով. ա. 16։	ա Պետ. ա. 20։
ծ ա Տիմ. բ. 6։ Յայտ. ա. 2։	շ ա Կոր. ժե. 54, 55։ Եբր. բ. 14։
կ Եփե. գ. 1։ Փիլ. ա. 7։	ո Գործ. թ. 15։ Եփե. գ. 7, 8։ ա Տիմ. բ. 7։ Գղ. գ. 17։
հ Կող. ա. 24։ Գղ. գ. 5։	չ Եփե. գ. 1։ Գղ. բ. 9։
ձ ա Տիմ. ա. 1։ Տիտ. գ. 4։	պ ա Պետ. դ. 19։
ղ ա Թես. դ. 7։ Եբր. գ. 1։	ջ ա Տիմ. զ. 20։
ճ Հռով. գ. 20։ թ. 11։ Տիտ. գ. 5։	ռ Հմր 18։ Գղ. դ. 8։
մ Հռով. ը. 28։	ս Գղ. դ. 14։ Տիտ. ա. 9։
յ Հռով. ժզ. 25։ Եփե. ա. 4։	Եբր. ժ. 23։ Յայտ. բ. 25։

ռնէ Զան ողջամիտ խօսքերուն օրինակը որ ինծ-
մէ լսեցիր, հաւատքով ու սիրով՝ որ Քրիստոս
Յիսուսով է։
14 Այն բարի աւանդը պահէ Հոգւոյն Սրբոյ ձեռ-
15 քովը որ մեր մէջը բնակած է։ Աս գիտես որ
ինծմէ երես դարձուցին ան ամէնը որ Ասիա էին,
16 որոնցմէ են Փիգեղոս ու Հերմոգինէս։ Տէ-
րը ողորմութիւն տայ Ոնեսիփորոսին տանը,
ինչու որ շատ անգամ զիս հանգստացուց, ու
17 իմ շղթաս ամօթ չսեպեց. Հապա երբոր Հռովմ
եկաւ, շատ ջանքով փնտռեց զիս ու գտաւ։
18 (Տէրը իրեն տայ որ ան օրը Տէրոջմէ ողորմու-
թիւն գտնէ.) Եւ Եփեսոսի մէջ ալ որչափ սպա-
սաւորութիւն որ ըրաւ ինծի, դուն անիկայ շատ
աղէկ գիտես։

ԳԼ. Բ

1 Դարձեալ կը յորդորէ զՏիմոթէոս հաստատուն ու համբերող ըլլալու, և Տէրոջը հաւատարիմ պաշտօնեայի մը պէս իր պարտաւորութիւնը կատարելու՝ ճշմարտութիւնը ուղիղ բաժանելով, և պիղծ ու պարապ խօսքերէն հեռու կենալով. 17 Հիմենոս ու Փիղետոս. 19 Աստուծոյ հիմը հաստատուն կը կենայ. 22 Կը սորվեցնէ թէ ի՛նչ բանէ փախչելու է, և ի՛նչ բանի հետևելու է, և թէ Տէրոջը ծառան ի՛նչ վարք ունենալու է.

1 Արդ դուն՝ իմ որդեակս՝ զօրացիր ան շնորհքո-
3 վը որ Քրիստոս Յիսուսով է։ Եւ ան բանե-
րը որ ինծմէ լսեցիր շատ վկաներով՝ հաւատարիմ
մարդոց յանձնէ, որոնք կարող ըլլան ուրիշնե-

Հռովմ. ր. 20. գ. 17. ա Տիմ. ա. 10. գ. 3.
Գղ. ր. 2.
ա Տիմ. ա. 14.
ա Տիմ. գ. 20.
Հռովմ. ը. 11.
Գղ. դ. 9, 16.
Գոր. ժթ. 10.
Մատ. ե. 7.
Գղ. դ. 19.
Փիլիմ. 7.
Գոր. իը. 20. Եփե. գ. 20.
Հմր 8.
ր Թես. ա. 10. Հմր 12.
Մատ. իե. 34-40.
Եբր. զ. 10.
ա Տիմ. ա. 2. Գղ. ա. 2.
Եփե. գ. 10.
Գղ. ա. 13. դ. 10, 14.
ա Տիմ. ա. 18.
ա Տիմ. դ. 2. Տիտ. ա. 9.

3 րուն ալ սորվեցնելու։ Արդ դուն նեղութիւն-
ներու համբերէ Քրիստոս Յիսուսի բարի զի-
4 նուորի մը պէս։ Մէկ զինուորեալ մը կեանքիս
գործառնութիւններովը չզբաղիր, որ զօրավարին
5 հաճոյ ըլլայ։ Նաև թէ որ մէկը մրցի, չպսակուիր՝
6 թէ որ ըստ օրինի չմրցի։ Աշխատող երկրագործին
7 պէտք է առաջ պտուղներէն վայելել։ Խմացիր
ինչ որ կ՚ըսեմ. Տէրը քեզի իմաստութիւն տայ
8 ամէն բանի մէջ. Միտքդ բեր Դաւիթի ցեղէն եղող
Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարութիւն ա-
ռած՝ իմ աւետարանիս համեմատ.
9 Որուն մէջը չարագործի մը պէս կը չարչարուիմ
մինչև անգամ կապերով. բայց Աստուծոյ խօսքը
10 կապուած չէ։ Ասոր ամէն բանի կը համբերեմ
ընտրեալներուն համար, որ անոնք ալ հասնին
ան փրկութեանը որ Քրիստոս Յիսուսով է յա-
11 ւիտենական փառքով։ Աս խօսքը հաւատարիմ
է. վասն զի թէ որ անոր հետ մեռանք, անոր
12 հետ ալ պիտի ապրինք. Թէ որ համբերենք,
անոր հետ ալ պիտի թագաւորենք. թէ որ
զինքը ուրանանք, ինքն ալ մեզ պիտի ուրանայ.
13 Թէ որ չհաւատանք, ինքը հաւատարիմ կը մը-
14 նայ, իր անձը չկրնար ուրանալ։ Աս բաները
անոնց միտքը ձգէ՝ Տէրոջը առջևը վկայութիւն

Գղ. ա. 8. գ. 5.
ա Տիմ. ա. 18.
ա Կոր. թ. 25.
ա Կոր. թ. 25, 26.
ա Կոր. թ. 10.
Հռովմ. ա. 3, 4. Գոր. ր. 30. ժգ. 23.
ա Կոր. ժե. 1, 4, 20.
Հռովմ. ր. 16.
Գոր. թ. 16. Գղ. ա. 12.
Եփե. գ. 1. Փիլ. ա. 7. Կող. գ. 3, 18.
Գոր. իը. 31. Եփե. զ. 19, 20. Փիլ. ա. 13, 14.
Եփե. գ. 13. Կող. ա. 24.
բ Կոր. ա. 6.
ա Տիմ. ա. 15.
Հռովմ. զ. 5, 8. բ Կոր. դ. 10.
Հռովմ. ը. 17. ա Պետ. դ. 13.
Մատ. ժ. 33. Մար. ը. 38. Ղու. ժբ. 9.
Հռովմ. գ. 3. թ. 6.
Թւ. իգ. 19.
ա Տիմ. ե. 21. գ. 13. Գղ. դ. 1.

դնելով, դ խօսքերու վրայ վէճ չընել որ բանի մը
օգտակար չէ, հապա միայն լսողներուն կործանմանը
15 համար է: ե Ջանք ըրէ քու անձդ ընտիր ցուցնե-
լու Աստուծոյ առջեւ, անամօթ բանուոր մը ըլլալով
որ պիտի չամչնայ, ճշմարտութեան խօսքը շիտակ
16 բաժանելով: զ Բայց պիղծ ու փուճ խօսքերէն
մէկդի կեցիր, քանզի անոնք աւելի յառաջ կ՚եր-
17 թան ամբարշտութեան մէջ: Եւ անոնց խօսքը
քաղցկեղի պէս կը ճարակէ. է որոնց կարգն են
18 Հիմենոս ու Փիղետոս. ը Որոնք ճշմարտութենէն
մոլորեցան, ըսելով թէ Մեռելներուն յարու-
թիւնը արդէն եղած է, եւ կը կործանեն մէկ քա-
19 նիներուն հաւատքը: թ Բայց Աստուծոյ հիմը
հաստատուն կը կենայ, ու աս կնիքը ունի, ժ թէ
Տէրը կը ճանչնայ անոնք որ իրն են, եւ՝ Անիրա-
ւութենէ մէկդի թող կենայ ան ամէնը որ Քրիստո-
20 սի անունը կ՚անուանէ: ի Սակայն մէկ մեծ տան
մը մէջ չէ թէ միայն ոսկիէ ու արծաթէ ամաններ
կան, հապա փայտէ ու հողէ ամաններ ալ կան.
եւ լ ոմանք պատուոյ համար են ու ոմանք անար-
21 գանաց համար: խ Ուստի թէ որ մէկը իր անձը
անանկ բաներէն մաքրէ, անիկայ մէկ պատուական
անօթ մը պիտի ըլլայ՝ սրբուած ու իր Տէրոջը պի-
տանի՝ ծ ամէն բարի գործքերու համար պատրաս-
22 տուած: Երիտասարդական ցանկութիւններէն ալ
փախիր, կ ու գնա արդարութեան՝ հաւատքի՝ սի-
րոյ՝ խաղաղութեան ետեւէ հ անոնց հետ որ Տէրոջը

դ ա Տիմ. ա. 4. դ. 4. Տիտ. գ. 9, 11.
ե ա Տիմ. դ. 7. զ. 20. Տիտ. ա. 14.
զ ա Տիմ. ա. 20.
է ա Տիմ. զ. 21.
ը ա Կոր. ժե. 12.
թ Մատ. իդ. 24. Հռովմ. ը. 35. ա Յովհ. բ. 19.
ժ Նաւ. ա. 7. Յովհ. ժ. 14, 27. Տես Թու. ժզ. 5.
ի ա Տիմ. զ. 15.
լ Հռովմ. թ. 21.
խ Տես Ես. ծբ. 11.
ծ Գլ. գ. 17. Տիտ. գ. 1.
կ ա Տիմ. զ. 11.
հ Գործ. թ. 14. ա Կոր. ա. 2.

23 անունը կը կանչեն ձ մաքուր սրտով: ղ Բայց յի-
մարական ու անխրատ վէճերէն մէկդի քաշուէ,
24 գիտնալով որ անոնցմէ կռիւներ կը ծնանին. ճ Ու
Տէրոջը ծառային պէտք չէ կռիւ ընել, հապա հե-
զահոգի ըլլալ ամենուն, մ սորվեցնող, ու
25 չպահող. յ Հեզութեամբ խրատել հակառակ
կեցողները, ն որ ըլլայ թէ Աստուած ապաշխա-
րութիւն տայ անոնց՝ շ ճշմարտութիւնը ճանչնալու
26 համար, ո Եւ Սատանային որոգայթէն զգաստա-
նան, որ անկէ բռնուած են՝ իր կամքին ծառայե-
լու:

ԳԼ. Գ

1 Կը ծանուցանէ գալու ժամանակներուն վրայով. 6 կը նկա-
րագրէ ճշմարտութեան թշնամիները. կ՚առաջարկէ անոր
իր օրինակին հետեւիլ, 16 եւ կը գովէ սուրբ գիրքերը:

1 Նաեւ աս գիտցիր ա որ վերջի օրերը չար ժամանակ-
2 ներ պիտի գան. բ Ինչու որ մարդիկ պիտի ըլ-
լան անձնասէր, գ արծաթասէր, դ ամբարտաւան,
ե հպարտ, զ հայհոյիչ, է ծնողաց անհնազանդ,
3 ապերախտ, անսուրբ, ը Անգութ, թ անհաշտ,
բանսարկու, ժ անժուժկալ, դաժանաբարոյ,
4 բարին չսիրող, ի Մատնիչ, յանդուգն, գոռոզ,
5 լ Աւելի հեշտասէր քան թէ աստուածասէր. Որոնք
աստուածպաշտութեան կերպարանքը ունին,

ձ ա Տիմ. ա. 5. զ. 12.
ղ ա Տիմ. ա. 4. դ. 7. զ. 4. Հմր 16. Տիտ. գ. 9.
ճ Տիտ. գ. 2.
մ ա Տիմ. գ. 2, 3. Տիտ. ա. 9.
յ Գաղ. զ. 1. ա Տիմ. զ. 11. ա Պետ. գ. 15.
ն Գոր. ը. 22.
շ ա Տիմ. բ. 4. Գլ. գ. 7. Տիտ. ա. 1.
ո ա Տիմ. գ. 7.
ա ա Տիմ. դ. 1. Գլ. գ. 3. բ Պետ. գ. 3. ա Յովհ. բ. 18. Յուդ. 18.
բ Փիլ. բ. 21.
գ բ Պետ. բ. 3.
դ ա Տիմ. զ. 4.
ե Յուդ. 16.
զ ա Տիմ. ա. 20. բ Պետ. բ. 12. Յուդ. 10.
է Հռովմ. ա. 30.
ը Հռովմ. ա. 31.
թ Հռովմ. ա. 31.
ժ բ Պետ. գ. 3.
ի բ Պետ. բ. 10.
լ Փիլ. գ. 19. բ Պետ. բ. 13, ժդ. Յուդ. 4, 19.

ե բայց անոր զօրութիւնը ուրացած են ։ զ Եւ դուն
6 ասոնցմէ մէկդի կեցիր ։ է Ինչու որ ասոնցմէ են որ
տուներէն ներս կը մտնեն, ու գերի կ'ընեն մեղքով
բեռնաւորուած տկարամիտ կնիկները՝ զանազան
7 ցանկութիւններէ վարուած, Որ միշտ կը սորվին,
ը ու բնաւ ճշմարտութիւնը ճանչնալու չեն կրնար
8 հասնիլ ։ թ Հապա ինչպէս որ Յանէս ու Յամ-
բրէս հակառակ կեցան Մովսէսին, անանկ ալ ա-
սոնք ճշմարտութեանը հակառակ կը կենան . ժ Ապա-
կանած մտքով մարդիկներ, ի հաւատքի մէջ
9 անպիտաններ են ։ Բայց աւելի յառաջ պիտի
չերթան, ինչու որ ասոնց անմտութիւնը ամենուն
յայտնի պիտի ըլլայ, լ ինչպէս որ անոնցը եղաւ ։
10 խ Իսկ դուն տեղեակ եղար իմ վարդապետութեանս,
վարմունքիս, դիտաւորութեանս, հաւատքիս,
երկայնմտութեանս, սիրոյս, համբերութեանս,
11 Հալածանքներուս, չարչարանքներուս, ինչպէս որ
ինծի եղան ծ Անտիոքի կ ու Իկոնիոնի եւ հ Լիւստ-
րայի մէջ, ինտոր հալածանքներու համբերեցի,
12 ձ ու ամենէն ալ ազատեց Տէրը ։ Եւ ղ ամէն
անոնք որ կ'ուզեն աստուածպաշտութեամբ ապրիլ
Քրիստոս Յիսուսով՝ հալածանք պիտի կրեն ։
13 ճ Բայց չար ու խաբեբայ մարդիկները չարութեան
մէջ պիտի յառաջանան՝ մոլորցնելով ու մոլորե-
14 լով ։ մ Սակայն դուն հաստատուն կեցիր ան
բաներուն մէջ որ սորվեցար ու հաւատացիր, ին-

ե ա Տիմ. ե. 8 ։ Տիտ. ա. 16 ։
զ բ Թես. գ. 6 ։ ա Տիմ. զ. 5 ։
է Մատ. իգ. 14 ։ Տիտ. ա. 11 ։
ը ա Տիմ. բ. 4 ։
թ Ել. է. 11 ։
ժ ա Տիմ. զ. 5 ։
ի Հռով. ա. 28 ։ բ Կոր. ժգ. 5 ։ Տիտ. ա. 16 ։
լ Ել. է. 12 ։ ը. 18 ։ թ. 11 ։
խ Փիլ. բ. 22 ։ ա Տիմ. դ. 6 ։
ծ Գործ. ժգ. 45, 50 ։
կ Գործ. ժդ. 2, 5 ։
հ Գործ. ժդ. 18, 19 ։
ձ Սաղ. լդ. 19 ։ բ Կոր. ա. 10 ։ Գլ. դ. 17 ։
ղ Սաղ. լդ. 19 ։ Գործ. ժդ. 21 ։ Մատ. ժզ. 24 ։ Յով. ժէ. 14 ։ ա Կոր. ժե. 19 ։ ա Թես. գ. 3 ։
ճ բ Թես. բ. 11 ։ ա Տիմ. դ. 1 ։ Գլ. բ. 16 ։
մ Գլ. ա. 13 ։ բ. 2 ։

15 չու որ գիտես թէ ումէ սորված ես . Նաև տղա-
մանկութենէդ 'ի վեր ս սուրբ գիրքերը գիտես,
որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկութեան՝
Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը ։
16 վ* Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է, տ և օգտա-
կար'' է սորվեցնելու, յանդիմանելու, շիտկելու
17 ու արդարութեան խրատելու համար . ր Որ Աս-
տուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ց ամէն բարի
գործքերու պատրաստուած ։

ԳԼ. Դ

1 Պօղոս կը յորդորէ Տիմոթէոսը բոլոր ջանքով ու արթնութեամբ իր պաշտօնը կատարելու . 6 կը յայտնէ անոր թէ իր մահը մօտ է . 9 կ'ուզէ որ անիկայ շուտով իրեն գայ, ու իր հետը բերէ Մարկոսը և քանի մը բաներ . 14 կը պատուիրէ որ զգուշանայ դարբին Աղեքսանդրոսէն . 16 կը ծանուցանէ անոր՝ ինչ որ պատահեր էր իրեն՝ առջի անգամ ատեանին ներկայանալուն, 19 և ապա կը վերջացընէ իր թուղթը ։

1 Ըս ւ վկայութիւնը կը դնեմ Աստուծոյ առ-
ջեւ և Յիսուս Քրիստոսի, փ որ պիտի
դատէ կենդանիները ու մեռելները իր յայտ-
2 նուելուն ու թագաւորութեանը ատենը . Խօս-
քը քարոզէ, մտադրութեամբ գործէ՛ պարա-
պէ ատեններն ու ատենէ դուրս, յանդիմանէ՛,
ք սաստէ՛, օ յորդորէ՛ ամէն երկայնմտութիւնով ու
3 վարդապետութիւնով ։ ֆ Ինչու որ ժամանակ
պիտի գայ՝ ա որ ողջամիտ վարդապետութեանը պի-
տի չհամբերեն . բ հապա իրենց ականջքերնին եւքովը
իրենց ցանկութիւններուն համեմատ վարդապետ-
4 ներ պիտի դիզեն իրենց . Եւ ճշմարտութենէն

ս Յոհ. ե. 39 ։
վ բ Պետ. ա. 20, 21 ։
* Կամ Բոլոր աստուածաշունչ Գիրքը օգտակար ալ
տ Հռով. ժե. 4 ։
ր ա Տիմ. զ. 11 ։
ց Գլ. բ. 21 ։
ւ ա Տիմ. ե. 21 ։ զ. 13 ։
Գլ. բ. 14 ։
փ Գործ. ժ. 42 ։
ք ա Տիմ. ե. 20 ։ Տիտ. ա. 13 ։ բ. 15 ։
օ ա Տիմ. դ. 13 ։
ֆ Գլ. գ. 1 ։
ա ա Տիմ. ա. 10 ։
բ Գլ. գ. 6 ։

ականջներնին պիտի դարձընեն , է ու առաս-
5 պելներու ետեւէ պիտի մոլորին ։ Բայց դուն ա-
մէն բանի մէջ արթուն կեցիր , ը նեղութիւն-
ներու համբերէ , թ աւետարանիչի գործ գործէ ,
6 քու պաշտօնդ կատարէ ։ ժ Վասն զի ես արդէն
զոհ ըլլալու նուիրուած եմ , ի ու իմ մեկնելուս ա-
7 տենը հասեր է ։ լ Բարի պատերազմը պատերազ-
մեցայ , ընթացքը կատարեցի , հաւատքը պահե-
8 ցի ։ խ Ասկէ ետեւ կայ կը մնայ ինծի արդարու-
թեան պսակը , որ Տէրը՝ արդար Դատաւորը պի-
տի հատուցանէ ինծի ծ ան օրը , ու չէ թէ միայն
ինծի , հապա անոնց ամենուն ալ՝ որ անոր յայտնու-
թը սիրեցին ։
9 Ջանք ըրէ շուտով ինծի գալու . Վասն զի
որ կ Դեմաս զիս թողուց՝ հ ու աս աշխարհը սի-
10 րեց , և գնաց Թեսաղոնիկէ . Կրեսկէս ձ գնաց Գա-
11 ղատիա , Տիտոս՝ Դաղմատիա . ղ Միայն Ղու-
կաս իմ հետս է . ճ Մարկոսը առնես քու հետդ
բերես , ինչու որ ինծի օգտակար է պաշտօնու-
12 թեան համար ։ Իսկ ես մ Տիւքիկոսը Եփեսոս
13 ղրկեցի ։ Այն վերարկուն՝ որ Տրովադա թողուցի
Կարպոսին քովը , երբոր գաս՝ բեր , գիրքերն ալ ,
14 մանաւանդ մագաղաթները ։ յ Դարբին Աղեք-
սանդրոսը շատ չարութիւն ըրաւ ինծի . ն Տէ-
րը անոր հատուցանէ իր գործքերուն համեմատ ։

է ա Տիմ. ա. 4. դ. 7. Տիտ. ա. 14.
ը Գլ. ա. 8. բ. 3.
թ Գործ. իա. 8. Եփե. դ. 11.
ժ Փիլ. բ. 17.
ի Փիլ. ա. 23. Տես բ Պետ. ա. 14.
լ ա Կոր. թ. 24, 25. Փիլ. գ. 14. ա Տիմ. զ. 12. Եբր. ժբ. 1.
խ ա Կոր. թ. 25. Յակ. ա. 12. ա Պետ. ե. 4. Յայտ. բ. 10.
ծ Գլ. ա. 12.
կ Կող. դ. 14. Փիլիմ. 24.
հ ա Յով. բ. 15.
ձ Տես գլ. ա. 15.
ղ Կող. դ. 14. Փիլիմ. 24.
ճ Գործ. ժբ. 25. ժե. 37. Կող. դ. 10.
մ Գործ. ի. 4. Եփե. զ. 21. Կող. դ. 7. Տիտ. գ. 12.
յ Գործ. ժթ. 33. ա Տիմ. ա. 20.
ն բ Թագ. գ. 39. Սաղ. իը. 4. Յայտ. ժը. 6.

15 Դուն ալ անկէ զգուշացիր , ինչու որ մեր խօսքե-
16 րուն շատ դէմ կեցաւ ։ Առջի անգամ ատեանին
առջեւ պատասխան տալուս՝ իմ կողմանէս մէկը
չկայնեցաւ ինծի հետ , շ հապա ամէնն ալ զիս
17 թողուցին . ո չաս իրենց չսեպուի ։ չ Բայց Տէրը
իմ քովս կայնեցաւ ու զիս զօրացուց , պ որ քա-
րոզութիւնը իմ միջոցովս լման ըլլայ , ու բոլոր
հեթանոսները լսեն . ջ և ես առիւծին բերնէն
18 ազատեցայ ։ Ու ռ Տէրը ամէն չար գործէ պիտի
ազատէ զիս , և ապահովութեամբ իր երկնային
թագաւորութեանը պիտի հասցընէ . ս իրեն փառք
յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։
19 վ Բարեւ տուր Պրիսկէին և Ակիւղասին , տ ու
20 Ոնեսիփորոսին տանը ։ ր Երաստոս Կորնթոսի
մէջ մնաց . և ց Տրոփիմոսը Միլէտոսի մէջ թողու-
21 ցի հիւանդացած ։ ւ Ջանք ըրէ ձմեռէն առաջ
գալ ։ Բարեւ կ'ընեն քեզի Եւբուղոս ու Պու-
դէս և Լինոս ու Կղօդիա և բոլոր եղբայրները ։
22 փ Տէր Յիսուս Քրիստոս քու հոգիիդ հետը ըլլայ .
շնորհքը ձեզի հետ ։ Ամէն ։

շ Գլ. ա. 15.
ո Գործ. է. 59.
չ Մատ. ժ. 19. Գործ. իգ. 11. իէ. 23.
պ Գործ. թ. 15. իզ. 17, 18. Եփե. գ. 8.
ջ Սաղ. իբ. 21. բ Պետ. բ. 9.
ռ Սաղ. ճիա. 7.
ս Հռով. ժա. 36. Գաղ. ա. 5. Եբր. ժգ. 21.
վ Գործ. ժը. 2. Հռով. ժզ. 3.
տ Գլ. ա. 16.
ր Գործ. ժթ. 22. Հռով. ժզ. 23.
ց Գործ. ի. 4. իա. 29.
ւ Հմր 9.
փ Գաղ. զ. 18. Փիլիմ. 25.

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաքեալը կը ծանուցանէ թէ ինչ բանի համար զանիկայ Կրետէ թողուց. 6 թէ քարոզչութեան պաշտօնին ընտրուելու մարդիկ ինչ վարմունքի տէր ըլլալու են։ 11 Կը պատուիրէ չար վարդապետներուն բերանը պապանձեցնել. 12 եւ անոնց բնութիւնը կը ստորագրէ։

1 Պօղոս Աստուծոյ ծառայ եւ Յիսուս Քրիստոսի
առաքեալ, Աստուծոյ ընտրեալներուն հաւատ-
քին՝ ու աստուածպաշտութեան հետ կից եղող
ճշմարտութեանը գիտութեանը համեմատ,
2 Յաւիտենական կենաց յուսովը, որ ինքն ան-
սուտ Աստուածն խոստացաւ յաւիտենական դա-
3 րերէն առաջ, Բայց իր խօսքը իր ժամանակին
յայտնեց քարոզութիւնով, որ ինծի յանձնուե-
4 ցաւ մեր Փրկչին Աստուծոյ հրամանովը, Տիտո-
սին հարազատ որդւոյս հասարակաց հաւատ-
քովը՝ շնորհք եւ խաղաղութիւն Հօր Աստուծմէն
ու մեր Փրկչէն՝ Տէր Յիսուս Քրիստոսէն։
5 Անոր համար քեզ Կրետէ թողուցի, որ
ինչ պակաս բան որ կայ, շտկես, ու ամէն մէկ
քաղաքի մէջ երէցներ կարգես, ինչպէս որ ես քեզի

ա ա Տիմ. գ. 16։ դ. 3։
բ բ Տիմ. բ. 25։
գ բ Տիմ. ա. 1։ Գլ. գ. 7։
դ Թու. իգ. 19։ բ Տիմ. բ. 13։
ե Հռով. ժզ. 25։ բ Տիմ. ա. 9։ ա Պետ. ա. 20։
զ բ Տիմ. ա. 10։
է ա Թես. բ. 4։ ա Տիմ. ա. 11։
ը ա Տիմ. ա. 1։ բ. 3։ դ. 10։
թ բ Կոր. բ. 13։ է. 13։ ը. 6, 16, 23։ ժբ. 18։ Գաղ. բ. 3։
ժ ա Տիմ. ա. 2։
ի Հռով. ա. 12։ բ Կոր. դ. 13։ բ Պետ. ա. 1։
լ Եփե. ա. 2։ Կող. ա. 3։ ա Տիմ. ա. 2։ բ Տիմ. ա. 2։
խ ա Կոր. ժա. 35։
ծ Գործ. ժդ. 22։ բ Տիմ. բ. 2։

6 պատուիրեցի. Թէ որ մէկը անմեղադրելի ըլլայ՝
մէկ կնկան մը էրիկ, հաւատացեալ զաւակներ
ունենայ, որ անառակութեան համար ամբաստա-
7 նուած կամ անհնազանդ չըլլան։ Ինչու որ եպիս-
կոպոսին պէտք է անմեղադրելի ըլլալ՝ Աստուծոյ
տնտեսին պէս. ոչ յանդուգն, ոչ բարկացող,
ոչ գինեմոլ, ոչ զարնող, ոչ անարգ շա-
8 հախնդրութեան ետեւէ եղող, Հապա հիւրա-
սէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժ-
9 կալ, Հաստատ բռնելով վարդապետութեան
հաւատարիմ խօսքը, որ կարող ըլլայ ողջամիտ
վարդապետութիւնով յորդորել, եւ հակառակ
10 կեցողները յանդիմանել։ Քանզի շատ են ան-
հնազանդները, ունայնութիւն խօսողները, ու
միտք խաբողները, մանաւանդ անոնք որ թլփա-
11 տութենէն են. Որոնք պէտք է պապանձեցնել,
որ ամբողջ տուներ կը կործանեն, ու անպատեհ
բաներ կը սորվեցնեն անարգ շահախնդրութեան
12 համար։ Անոնցմէ մէկը զրուցեց՝ որ իրենց բուն
մարգարէն էր. Կրետացիները միշտ ստախօս են,
13 չար գազաններ, դատարկապորտներ։ Այս վկայու-
թիւնը ճշմարիտ է. անոր համար սաստիկ յան-
դիմանէ անոնք, որ առողջանան հաւատքին մէջ.
14 Ու չնային Հրէական առասպելներուն, եւ

կ ա Տիմ. գ. 2, ևն։
հ ա Տիմ. գ. 12։
ձ ա Տիմ. գ. 4, 12։
ղ Մատ. իդ. 45։ ա Կոր. դ. 1, 2։
ճ Ղև. ժ. 9։ ա Տիմ. գ. 3, 8։ Եփե. ե. 18։
մ ա Տիմ. գ. 3, 8։ ա Պետ. ե. 2։
յ ա Տիմ. գ. 2։
ն ա Տիմ. գ. 3։ բ Տիմ. բ. 2։
շ ա Տիմ. ա. 10։ դ. 3։ բ Տիմ. դ. 3։ Գլ. բ. 1։
ո ա Տիմ. ա. 6։
չ Հռով. ժզ. 18։
պ Գործ. ժե. 1։
ջ Մատ. իգ. 14։ բ Տիմ. գ. 6։
ռ ա Տիմ. զ. 5։
ս Գործ. ժէ. 28։
վ բ Կոր. ժգ. 10։ բ Տիմ. դ. 2։
տ Գլ. բ. 2։
ր ա Տիմ. ա. 4։ դ. 7։ բ Տիմ. դ. 4։
ց Ես. իթ. 13։ Մատ. ժե. 9։ Կող. բ. 22։

ճշմարտութենէ հեռացող մարդոց պատուէրներուն ։
15 Ամէն բան մաքուր է մաքուրներուն , բայց պղծերուն ու անհաւատներուն մէկ բան մը մաքուր չէ . հապա անոնց միտքն ալ խղճմտանքն ալ
16 պղծուած են ։ Կը խոստովանին թէ զԱստուած կը ճանչնան , և իրենց գործքովը կ՚ուրանան , պիղծ ու անհնազանդ ըլլալովնին , և ամէն բարի գործի անպիտան ։

ԳԼ. Բ

1 Պատուէրներ կու տայ Տիտոսին թէ՛ իր վարդապետութեանը և թէ իր վարքին վրայով . 9 կը խօսի ծառաներուն և ընդհանրապէս բոլոր քրիստոնեաներուն պարտաւորութեանցը վրայով ։

1 Բայց դուն խօսէ՛ ինչ որ կը վայլէ ողջամիտ
2 վարդապետութեանը ։ Ծերերուն զգաստ ըլլալ , ծանրաբարոյ , խոհեմ , ողջամիտ՝ հաւատ-
3 քով , սիրով , համբերութիւնով ։ Նոյնպէս ալ պառաւներուն անանկ վարմունք ունենալ , ինչպէս որ կը վայլէ սրբութեան , ոչ բանսարկու ըլլալ ,
4 ոչ * գինեմոլ , հապա բարի խրատ տուող . Որ խրատեն նորահասակ կիները՝ էրիկնին սիրող ,
5 զաւակնին սիրող ըլլալ , Խոհեմ , ողջախոհ , տնաշէն , բարեգործ , իրենց էրիկներուն հնազանդ , որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը հայհո-
6 յուի ։ Նոյնպէս ալ երիտասարդները յորդորէ խո-
7 հեմ ըլլալ . Ամէն կողմէ քու անձդ բարի գործքերու օրինակ ցուցնելով , վարդապետութեան

Ղու . ժա . 39 , 40 , 41 ։ Հռոմ . ժդ . 14 , 30 ։ ա Կոր . զ . 12 ։ ժ . 23 , 25 ։ ա Տիմ . դ . 3 , 4 ։
Հռոմ . ժդ . 23 ։
բ Տիմ . գ . 5 ։ Յուդ . 4 ։
Հռոմ . ա . 28 ։ բ Տիմ . գ . 8 ։
ա Տիմ . ա . 10 ։ զ . 3 ։ բ Տիմ . ա . 13 ։ Գլ . ա . 9 ։
Գլ . ա . 13 ։
ա Տիմ . բ . 9 , 10 ։ գ . 11 ։ ա Պետ . գ . 3 , 4 ։
* Յուն . շատ գինիի ծառայ եղած ,
ա Տիմ . ե . 14 ։
ա Կոր . ժդ . 34 ։ Եփե . ե . 22 ։ Կող . գ . 18 ։ ա Տիմ . բ . 11 ։ ա Պետ . գ . 1 , 5 ։
Հռոմ . բ . 24 ։ ա Տիմ . զ . 1 ։
ա Տիմ . դ . 12 ։ ա Պետ . ե . 3 ։

մէջ անեղծութիւն , պարկեշտութիւն , Ողջամիտ ու անմեղադրելի խօսք , որ հակառակ կեցողը ամչնայ , ու մեր վրայով գէշ բան մը չունենայ
9 ըսելու ։ Ծառաներուն յորդորէ՛ որ իրենց տէրերուն հնազանդ ըլլան , և ամէն բանի մէջ հաճելի .
10 ոչ հակառակախօսներ , Ոչ խորողներ , հապա բոլորովին բարի հաւատարմութիւն ցուցնեն , որ մեր փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը ամէն
11 բանի մէջ զարդարեն ։ Ինչու որ Աստուծոյ փրկա-
12 բար շնորհքը բոլոր մարդոց երեւցաւ . Որ մեզ կը խրատէ՛ որ ամբարշտութիւնը ու աշխարհային ցանկութիւնները ուրանանք , և զգաստութիւնով ու արդարութիւնով և բարեպաշտու-
13 թիւնով ապրինք այս աշխարհիս մէջ , Ու սպասենք այն երջանիկ յոյսին , և մեծ Աստուծոյ ու մեր փրկիչ Յիսուս Քրիստոսին փառացը յայտ-
14 նուելուն . Որ իր անձը մեզի համար տուաւ , որ մեզ ամէն անօրէնութենէ ազատէ , ու մաքրէ իրեն սեփհական ժողովուրդ մը՝ բարի գործ-
15 քերու նախանձաւոր ։ Աս բաները խօսէ՛ և յոր-

ա Տիմ . զ . 3 ։
Նեեմ . ե . 9 ։ ա Տիմ . ե . 14 ։ ա Պետ . բ . 12 , 15 ։ գ . 16 ։
բ Թես . գ . 14 ։
Եփե . զ . 5 ։ Կող . գ . 22 ։ ա Տիմ . զ . 1 , 2 ։ ա Պետ . բ . 18 ։
Եփե . ե . 24 ։
Մատ . ե . 16 ։ Փիլ . բ . 15 ։
Հռոմ . ե . 15 ։ Գլ . գ . 4 , 5 ։ ա Պետ . ե . 12 ։
Ղու . գ . 6 ։ Յով . ա . 9 ։ ա Տիմ . բ . 4 ։
Հռոմ . զ . 19 ։
ա Պետ . դ . 2 ։ ա Յով . բ . 16 ։
Ղու . ա . 75 ։ Եփե . ա . 4 ։ Կող . ա . 22 ։ ա Թես . դ . 7 ։
ա Կոր . ա . 7 ։ Փիլ . գ . 20 ։ բ Պետ . գ . 12 ։
Գոր . իդ . 15 ։ Կող . ա . 5 , 23 ։ Գլ . ա . 2 ։ գ . 7 ։
Կող . գ . 4 ։ բ Տիմ . դ . 1 , 8 ։ Եբր . թ . 28 ։ ա Պետ . ա . 7 ։ ա Յով . գ . 3 ։
Գաղ . ա . 4 ։ բ . 20 ։ Եփե . ե . 2 ։ ա Տիմ . բ . 6 ։
Եբր . թ . 14 ։
Եզ . ժե . 16 ։ ժթ . 5 ։ բ Օր . է . 6 ։ ժդ . 2 ։ իզ . 18 ։ ա Պետ . բ . 9 ։
Եփե . բ . 10 ։ Գլ . գ . 8 ։
բ Տիմ . դ . 2 ։

դորէ՛ ու յանդիմանէ՛ բոլորովին սաստելով․ [ը] Չըլլայ որ մէկը քեզ անարգէ ։

ԳԼ․ Գ

1 Դարձեալ պատուէրներ կու տայ Տիտոսին թէ՛ սորվեցնելու և թէ չսորվեցնելու բաներուն համար․ 10 կը խրատէ նաև յամառեալ հերետիկոսներէն ետ քաշուիլ․ 12 և կը պատուիրէ որ իրեն գայ, նշանակելով անոր՝ թէ ե՛րբ և թէ ու՛ր պիտի գտնէ զինքը․ ու այսպէս իր թուղթը կը վերջացընէ ։

1 Անոնց մի՛տքը ձգէ [ա] իշխանութիւններուն և պե–
տութիւններուն հնազանդիլ ու հպատակ ըլ–
լալ, [բ] ու ամէն բարի գործքերու պատրաստ գըտ–
2 նուիլ․ [գ] Մէկու մը հայհոյութիւն չընել,
[դ] կռուարար չըլլալ, [ե] Հեզահոգի, [զ] Ա–
մէն մարդոց բոլորովին քաղցրութիւն ցու–
3 ցընել ։ [է] Ինչու որ մենք ալ ատեն մը անմիտ
էինք, անհնազանդ, մոլորեալ, և զանազան ցան–
կութիւններու ու հեշտութիւններու կը ծառա–
յէինք․ չարութիւնով ու նախանձով կը վարուէ–
4 ինք, ատելի էինք և մէկզմէկ կ'ատէինք ։ Բայց
երբոր մեր [ը] Փրկիչ Աստուծոյն [թ] քաղցրութիւնը ու
5 մարդասիրութիւնը յայտնուեցաւ, [ժ] Ոչ թէ ար–
դարութեան գործքերէն՝ որ մենք ըրինք, հապա իր
ողորմութեանը համեմատ մեզ փրկեց նորէն ծը–
նանելու աւազանին միջոցովը ու Սուրբ Հոգիին
6 նորոգելովը, [լ] Որն որ առատօրէն թափեց մեր վրայ

[ը] ա Տիմ․ դ․ 12 ։
[ա] Հռով․ ժգ․ 1 ։ ա Պետ․ բ․ 13 ։
[բ] Կող․ ա․ 10 ։ բ Տիմ․ բ․ 21 ։ Եբր․ ժգ․ 21 ։
[գ] Եփե․ դ․ 31 ։
[դ] բ Տիմ․ բ․ 24, 25 ։
[ե] Փիլ․ դ․ 5 ։
[զ] Եփե․ դ․ 2 ։ Կող․ գ․ 12 ։
[է] ա Կոր․ զ․ 11 ։ Եփե․ բ․ 1 ։ Կող․ ա․ 21 ։ գ․ 7 ։ ա Պետ․ դ․ 3 ։
[ը] ա Տիմ․ բ․ 3 ։
[թ] Գլ․ բ․ 11 ։
[ժ] Հռով․ գ․ 20 ։ թ․ 11 ։ ժա․ 6 ։ Գաղ․ բ․ 16 ։ Եփե․ բ․ 4, 8, 9 ։ բ Տիմ․ ա․ 9 ։
[ի] Յոհ․ գ․ 3, 5 ։ Եփե․ ե․ 26 ։ ա Պետ․ գ․ 21 ։
[լ] Եզեկ․ լզ․ 25 ։ Յովէլ․ բ․ 28 ։ Յոհ․ ա․ 16 ։ Գործ․ բ․ 33 ։ ժ․ 45 ։ Հռով․ ե․ 5 ։

7 Յիսուս Քրիստոս մեր Փրկչին ձեռքովը, [խ] Որ
անոր շնորհքովը արդարացած՝ [ծ] յաւիտենական կե–
8 նաց յուսով [կ] ժառանգ ըլլանք ։ [հ] Աս խօսքը հա–
ւատարիմ է․ և կ'ուզեմ որ ասոնք հաստատես,
որ Աստուծոյ հաւատացողները հոգ տանին [ձ] բարի
գործքեր ընելու վրայ ըլլալ․ ասոնք են բարի ու
9 մարդոց օգտակար բաները ։ [ղ] Բայց դուն յիմա–
րական վէճերէն ու ազգահամարներէն ու հակառա–
կութիւններէն և օրէնքի վրայով եղած կռիւնե–
րէն մէկդի կեցիր, [ճ] ինչու որ անօգուտ են ու սնո–
10 տի ։ Հերձուածող մարդէն՝ [մ] առաջին ու երկրորդ
11 անգամ խրատելէն ետև [յ] ետ քաշուէ, Գիտնալով
որ անանկը խոտորած է, և մեղք կը գործէ [ն] ինքզին–
քը դատապարտելով ։
12 Երբոր Արտեման կամ [շ] Տիւքիկոսը քեզի խըր–
կեմ, ջանք ըրէ ինծի գալու Նիկոպոլիս, ինչու
13 որ միտքս դրի ձմեռը հոն անցընելու ։ Զենաս
օրինականը [ո] ու Ապողոսը փութով ճամբայ դիր,
14 հոգ տանելով որ անոնց բան մը չպակսի ։ Եւ մե–
րիններն ալ թող սորվին [չ] բարի գործքեր ընելու
վրայ ըլլալ հարկաւոր պարագաներու մէջ, [պ] որ
15 անպտուղ չըլլան ։ Բարև կ'ընեն քեզի ամէնն ալ
որ իմ հետս են․ բարե՛ւ տուր անոնց որ մեզ կը
սիրեն հաւատքով․ շնորհքը ձեր ամենուն հետը
ըլլայ ։ Ամէն ։

[խ] Հռով․ գ․ 24 ։ Գաղ․ բ․ 16 ։ Գլ․ բ․ 11 ։
[ծ] Գլ․ ա․ 2 ։
[կ] Հռով․ ը․ 23, 24 ։
[հ] ա Տիմ․ ա․ 15 ։ Գլ․ ա․ 6 ։
[ձ] Հմր 1, 14 ։ Գլ․ բ․ 14 ։
[ղ] ա Տիմ․ ա․ 4 ։ բ Տիմ․ բ․ 23 ։ Գլ․ ա․ 14 ։
[ճ] բ Տիմ․ բ․ 14 ։
[մ] բ Կոր․ ժգ․ 2 ։
[յ] Մատ․ ժը․ 17 ։ Հռով․ ժզ․ 17 ։ բ Թեսս․ գ․ 6, 14 ։ բ Տիմ․ գ․ 5 ։ բ Յոհ․ 10 ։
[ն] Գործ․ ժգ․ 46 ։
[շ] Գործ․ ի․ 4 ։ բ Տիմ․ դ․ 12 ։
[ո] Գործ․ ժը․ 24 ։
[չ] Հմր 8 ։ Եփե․ դ․ 28 ։
[պ] Հռով․ ժե․ 28 ։ Փիլ․ ա․ 11 ։ դ․ 17 ։ Կող․ ա․ 10 ։ բ Պետ․ ա․ 8 ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

ԳԼՈՒԽ Ա

4 Պօղոս իր ուրախութիւնը կը յայտնէ՝ Փիլիմոնի հաւատքը ու սէրը լսած ըլլալով. 9 կը խնդրէ անկէ որ թողութիւն տայ Ոնեսիմոսին որ իր ծառան էր, ու դարձեալ սիրով ընդունի զանիկայ:

1 ա Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի կապեալը՝ և Տիմո-
թէոս եղբայրը, Փիլիմոնի մեր սիրելիին բ ու
2 գործակցին, Եւ Ապփիա սիրելիին, գ ու Արքիպ-
պոս դ մեր զինուորակցին, ե ու քու տանդ մէջի
3 եկեղեցիին. զ Շնորհք և խաղաղութիւն ձեզի
Աստուծմէ մեր Հօրմէն և Տէր Յիսուս Քրիստո-
սէն:
4 է Կը գոհանամ միշտ իմ Աստուծմէս, քեզ իմ
5 աղօթքներուս մէջ յիշելով. ը Երբոր կը լսեմ
քու սէրդ ու հաւատքդ՝ որ ունիս Տէր Յիսուսի
6 վրայ և բոլոր սուրբերուն վրայ. Որ քու հաւատ-
քիդ հաղորդակցութիւնը թ պտղաբեր ըլլայ, Քր-
իստոս Յիսուսով * ձեր վրայ եղած ամէն բարու-
7 թեանը ճանչցուելովը: Քանզի շատ ուրախու-
թիւն և մխիթարութիւն ունինք քու սիրոյդ վրայ,
ժ որ սուրբերուն սիրտերը քեզմով հանգստացած
են՝ եղբայր:

ա Եփես. գ. 1, դ. 1, ա Տիմ. ա. 8, Հմր 9:
բ Փիլ. բ. 25:
գ Կող. դ. 17:
դ Փիլ. բ. 25:
ե Հռովմ. ժզ. 5, ա Կոր. ժզ. 19:
զ Եփես. ա. 2:
է Եփես. ա. 16, ա Թես. ա. 2, բ Թես. ա. 3:
ը Եփես. ա. 15, Կող. ա. 4:
թ Փիլ. ա. 9, 11:
* Ոմանք՝ մեր
ժ բ Կոր. է. 13, բ Տիմ. ա. 16, Հմր 20:

8 ի Ասոր համար թէև շատ համարձակութիւն ու-
նիմ Քրիստոսով՝ վայելուչ եղածը քեզի հրամա-
9 յելու, Բայց յաւէտ սիրոյ համար կ'աղաչեմ,
անանկ մէկը ըլլալով՝ ինտոր որ եմ ես Պօղոս ծե-
րացած, լ ու հիմա Յիսուս Քրիստոսի համար
10 կապուած ալ: խ Կ'աղաչեմ քեզի իմ որդւոյս
Ոնեսիմոսին համար՝ ծ որն որ իմ կապանքներուս
11 մէջը ծնայ. Որ ատեն մը անպիտան էր քեզի,
12 բայց հիմա քեզի ալ ինծի ալ պիտանի է. Անիկայ
ես խրկեցի. դուն ալ ընդունէ զանիկա որ է իմ
13 աղիքս. Որն որ կ'ուզէի իմ քովս պահել, կ որ
քու տեղդ ինծի սպասաւորութիւն ընէ աւետարա-
14 նին կապանքներուն մէջ: Բայց առանց քու կամ-
քիդ չուզեցի բան մը ընել, հ որ քու բարերա-
րութիւնդ իբր թէ ստիպմամբ եղած չըլլայ, հա-
15 պա կամաւ: ձ Քանզի գուցէ աս պատճառով ա-
նիկայ քիչ մը ատեն զատուեցաւ, որ զանիկայ յա-
16 ւիտեան ունենաս, Ոչ թէ ալ ծառայի մը պէս,
հապա ծառայէն վեր՝ ղ սիրելի եղբօր պէս. Եւ թէ որ
ինծի այսպէս սիրելի է, որչափ աւելի պիտի ըլլայ
քեզի ճ թէ մարմինի կողմանէ ու թէ Տէրոջը:
17 մ Ուստի թէ որ զիս քեզի հաղորդ կը սեպես, ըն-
18 դունէ անիկայ՝ որպէս թէ զիս: Եւ թէ որ քեզի
անիրաւութիւն մը ըրած է կամ պարտք մը ու-
19 նի, ան իմ հաշիւիս անցուր. Ես Պօղոս իմ
ձեռքովս գրեցի, ես կը վճարեմ, որ չըսեմ քեզի
թէ դուն ալ քու անձդ ինծի պարտական ես:
20 Այո՛ եղբայր՝ թող քեզմէ ունենամ աս օգուտը
Տէրոջմով. յ հանգչեցուր իմ աղիքս Տէրոջմով:

ի ա Թես. բ. 7:
լ Հմր 1:
խ Կող. դ. 9:
ծ ա Կոր. դ. 15, Գաղ. դ. 19:
կ ա Կոր. ժզ. 17, Փիլ. բ. 30:
հ բ Կոր. թ. 7:
ձ Ծն. խե. 5, 8:
ղ Մատ. իգ. 8, ա Տիմ. զ. 2:
ճ Կող. գ. 22:
մ բ Կոր. ը. 23:
յ Հմր 7:

21 Հնազանդութեանդ վստահանալով քեզի
գրեցի. գիտնալով որ ըսածէս ալ աւելի պի-
տի ընես։
22 Նաեւ 'ի գլուխ ինծի բնակարան մը ալ պատ-
րաստէ. որովհետեւ կը յուսամ թէ ձեր աղօթք-
23 ներուն միջոցով ձեզի պիտի շնորհուիմ։ Բարեւ
կ'ընէ ձեզի Եպափրաս՝ իմ գերութեան ընկերս
24 Քրիստոս Յիսուսով. Նաեւ Մարկոս՝ Արիս-
տարքոս՝ Դեմաս՝ Ղուկաս՝ իմ գործակիցներս։
25 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հո-
գիին հետը ըլլայ։ Ամէն։

ն բ Կոր. է. 16։
շ Փիլ. ա. 25։ բ. 24։
ո բ Կոր. ա. 11։
չ Կող. ա. 7։ դ. 12։
պ Գոր. ժբ. 12, 25։
ջ Գոր. ժթ. 29։ իէ. 2։ Կող. դ. 10։
ռ Կող. դ. 14։
ս բ Տիմ. դ. 11։
վ բ Տիմ. դ. 22։

ԹՈՒՂԹ

[ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ]

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաքեալը կը ցուցնէ թէ Քրիստոս աս վերջի ատեններս Հայրմէն մեզի գալով 4 հրեշտակներէն գերագոյն եղաւ թէ՛ անձամբ և թէ պաշտօնով։

1 Շատ մասերով ու շատ կերպերով առաջուց
խօսելով Աստուած հայրերուն հետ մարգա-
2 րէներով, Աս վերջի օրերս իր Որդիովը խօսեցաւ
մեր հետը, որ զանիկայ ամէն բանի ժառանգ

ա Թուոց. ժբ. 6, 8։
բ բ Օր. դ. 30։ Գաղ. դ. 4։ Եփե. ա. 10։
գ Յով. ա. 17։ ժե. 15։ Գլ. բ. 2։
դ Սաղ. բ. 8։ Մատ. իա. 38։ իը. 18։ Յով. գ. 35։ Հռով. ը. 17։

3 դրաւ, որ անով աշխարհքն ալ ստեղծեց. Որ
անիկայ իր փառացը լոյսն է և իր էութեանը
բուն պատկերը. ան որ իր զօրութեան խօսքովը
ամէն բան կը բռնէ, իր անձովը մեր մեղքերը
սրբելով, բարձրերը՝ Աստուծոյ մեծութեանը աջ
4 կողմը նստաւ։ Ու այնչափ աւելի եղաւ հրեշտակնե-
րէն, որչափ որ անոնցմէ աւելի աղէկ անուն ժա-
5 ռանգեց։ Ինչու որ հրեշտակներէն որո՞ւն ըսաւ
երբեք, Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ
ծնայ. և դարձեալ՝ Ես անոր Հայր պիտի ըլ-
6 լամ, ու անիկայ ինծի Որդի պիտի ըլլայ. Ու
դարձեալ՝ երբոր անդրանիկը աշխարհք կը
մտցնէ, կ'ըսէ, Աստուծոյ բոլոր հրեշտակներն
7 ալ անոր երկրպագութիւն թող ընեն։ Ու
հրեշտակներուն վրայով կ'ըսէ, Որ իր հրեշտակ-
ները հոգիներ կ'ընէ, ու իր պաշտօնեաները կրակի
8 բոց։ Բայց Որդիին կ'ըսէ, Քու աթոռդ՝ ով
Աստուած՝ յաւիտեանս յաւիտենից է. քու թագա-
ւորութեան գաւազանդ ուղղութեան գաւազան է.
9 Արդարութիւնը սիրեցիր ու անօրէնութիւնը ատե-
ցիր. անոր համար՝ ով Աստուած՝ քու Աստուածդ
ուրախութեան եղով օծեց քեզ՝ քու ընկերներէդ
10 աւելի։ Ու՝ Դուն ով Տէր՝ սկիզբէն երկրին հի-
մերը դրիր, ու երկինքը քու ձեռքերուդ գործքն

ե Յով. ա. 3։ ա Կոր. ը. 6։ Կող. ա. 16։
զ Յով. ա. 14։ ժգ. 9։ բ Կոր. դ. 4։ Կող. ա. 15։
է Յով. ա. 4։ Կող. ա. 17։ Յայտ. դ. 11։
ը Գլ. է. 27։ թ. 12, 14, 16։
թ Սաղ. ճժ. 1։ Եփե. ա. 20։ Գլ. ը. 1։ ժ. 12։ ժբ. 2։ ա Պետ. գ. 22։
ժ Եփե. ա. 21։ Փիլ. բ. 9, 10։
ի Սաղ. բ. 7։ Գոր. ժգ. 33։ Գլ. ե. 5։
լ բ Թագ. է. 14։ ա Մն. ի. 10։ իբ. 6։ Սաղ. ձթ. 26, 27։
խ Հռով. ը. 29։ Կող. ա. 18։ Յայտ. ա. 5։
ծ Տես Սաղ. ղէ. 7։ ա Պետ. գ. 22։
կ Սաղ. ճդ. 4։
հ Սաղ. խե. 6, 7։
ձ Ես. կա. 1։ Գոր. դ. 27։ ժ. 38։
ղ Սաղ. ճբ. 25, ...։

11 է . ճ Անոնք պիտի կորսուին , բայց դուն կը կենաս
ու կը մնաս . ու ամէնը լաթի պէս պիտի մաշին ,
12 Ու վերարկուի պէս պիտի ղալարես զանոնք՝ և պի-
տի փոխուին . բայց դուն նոյն ինքն ես , ու քու
13 տարիներդ պիտի չպակսին ։ Իսկ հրեշտակներէն
որո՞ւն ըսաւ երբէք , մ Իմ աջ կողմս նստէ , մինչև
որ քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան
14 դնեմ ։ յ Չէ՞ որ անոնք ամէնը սպասաւորող
հոգիներ են , որոնք սպասաւորութեան կը ղրկուին
անոնց համար՝ ն որ փրկութիւն պիտի ժառանգեն ։

ԳԼ. Բ

1 Կը սորվեցնէ թէ պարտինք հնազանդ ըլլալ Քրիստոս Յիսուսի , 5 վասն զի մեր բնութիւնը իր վրայ առնելու խոնարհեցաւ , 14 ճիշդ ինչպէս որ հարկաւոր էր ։

1 Անոր համար պէտք է մեզի ալ աւելի ուշադրու-
թիւն տալ մեր լսած բաներուն , որ չըլլայ թէ
2 երբէք պակսինք ։ Վասն զի թէ որ ան խօսքը ա որ
հրեշտակներուն ձեռքովը գրուեցաւ , հաստա-
տուն եղաւ , բ և ամէն յանցաւորութիւն ու ան-
3 հնազանդութիւն արդար հատուցում առաւ , գ Ապա
մենք ինչպէ՞ս պիտի ազատինք՝ թէ որ անհոգ
ըլլանք անանկ մեծ փրկութենէ մը , դ որ խօսելուն
սկիզբը Տէրոջմէն առաւ , ե ու լսողներուն ձեռքո-
4 վը մեզի հաստատուեցաւ . զ Աստուած ալ վկայեց

ճ Եսայ. լդ. 4 ; ծա. 6 ; Մատ. իդ. 35 ; բ Պետ. գ. 7, 10 ; Յայտ. իա. 1 ;
մ Սաղ. ճժ. 1 ; Մատ. իբ. 44 ; Մար. ժբ. 36 ; Ղուկ. ի. 42 ; Գլ. ժ. 12 ; ա. 3 ;
յ Ծն. ժթ. 16 ; լբ. 1, 2, 24 ; Սաղ. լդ. 7 ; ղա. 11 ; ճգ. 20, 21 ; Դան. գ. 28 ; է. 10 ; ժ. 11 ; Մատ. ժը. 10 ; Ղուկ. ա. 19 ; բ. 9, 13 ; Գործ. ժբ. 7, ժե ; իէ. 23 ;
ն Հռով. ը. 17 ; Տիտ. գ. 7 ; Յակ. բ. 5 ; ա Պետ. գ. 7 ;
ա բ Օր. լգ. 2 ; Սաղ. կը. 17 ; Գործ. է. 53 ; Գաղ. գ. 19 ;
բ Թուոց. ժե. 30, 31 ; բ Օր. դ. 3 ; ժէ. 2, 5, 12 ; իէ. 26 ;
գ Գլ. ժ. 28, 29 ; ժբ. 25 ;
դ Մատ. դ. 17 ; Մար. ա. 14 ; Գլ. ա. 2 ;
ե Ղուկ. ա. 2 ;
զ Մար. ժզ. 20 ; Գործ. ժդ. 3 ; ժթ. 11 ; Հռով. ժե. 18, 19 ; ա Կոր. բ. 4 ;

է Նշաններով ու հրաշքներով և զանազան զօրու-
թիւններով ը ու Սուրբ Հոգիին պարգևներովը՝
թ ինչպէս որ ինքը կամեցաւ ։
5 Ինչու որ չէ՛ թէ հրեշտակներուն հնազանդեցուց
ժ ան գալու աշխարհը , որուն վրայով մենք կը խօ-
6 սինք . Հապա մէկը մէկ տեղ մը վկայեց ու ըսաւ ,
ի Մարդը ի՞նչ է՝ որ զանիկայ կը յիշես , կամ մար-
7 դու որդին՝ որ անոր այցելութիւն կ'ընես . Քիչ
մը վար ըրիր զանիկայ հրեշտակներէն . փառքով
ու պատուով պսակեցիր զանիկայ , և քու ձեռացդ
8 գործքերուն վրայ կեցուցիր զանիկայ . լ Ամէն բան
անոր ոտքերուն տակը հնազանդեցուցիր . Ուստի
ամէնը որ անոր հնազանդեցուց , անոր չհնազանդած
բան մը չձգեց . խ բայց հիմա դեռ չենք տեսներ ա-
9 մէնը անոր հնազանդած . ծ Սակայն Յիսուսը փառ-
քով ու պատուով պսակուած կը տեսնենք՝ կ որ
հրեշտակներէն քիչ մը վար եղած էր մահուան չար-
չարանքին համար , որ Աստուծոյ շնորհքովը հ ամե-
10 նուն համար մահ ճաշակէ ։ ձ Որովհետև կը վայ-
լէր Անոր , (ղ որուն համար ամէնը՝ և անով ամէն
բաները եղած են ,) շատ որդիներ փառքին մէջ
մտցընելու ատենը՝ ճ անոնց փրկութեան Առաջնոր-
դը մ չարչարանքով կատարել ։
11 յ Վասն զի ան որ կը սրբէ ու ան որ կը սրբուի ,
ն ամէնն ալ մէկէ մըն են . շ անոր համար ինքը ա-

է Գործ. բ. 22, 43 ;
ը ա Կոր. ժբ. 4, 7, 11 ;
թ Եփե. ա. 5, 9 ;
ժ Գլ. զ. 5 ; բ Պետ. գ. 13 ;
ի Յոբ. է. 17 ; Սաղ. ը. 4, ճխդ. 3 ;
լ Մատ. իը. 18 ; ա Կոր. ժե. 27 ; Եփե. ա. 22 ; Գլ. ա. 13 ;
խ ա Կոր. ժե. 25 ;
ծ Գործ. բ. 33 ;
կ Փիլ. բ. 7, 8, 9 ;
հ Յովհ. գ. 16 ; ժբ. 32 ; Հռով. ե. 18 ; ը. 32 ; բ Կոր. ե. 15 ; ա Տիմ. բ. 6 ; ա Յովհ. բ. 2 ; Յայտ. ե. 9 ;
ձ Ղուկ. իդ. 46 ;
ղ Հռով. ժա. 36 ;
ճ Գործ. գ. 15 ; ե. 31 ; Գլ. ժբ. 2 ;
մ Ղուկ. ժգ. 32 ; Գլ. ե. 9 ;
յ Գլ. ժ. 10, 14 ;
ն Գործ. ժէ. 26 ;
շ Մատ. իը. 10 ; Յովհ. ի. 17 ; Հռով. ը. 29 ;

12 մօթ չսեպեր եղբայր կոչել զանոնք՝ ըսելով, ա Քու
անունդ եղբայրներուս պիտի պատմեմ, ժողովքին
13 մէջ քեզ պիտի գովեմ։ Եւ դարձեալ՝ բ Ես ա-
նոր պիտի յուսամ. ու դարձեալ՝ գ Ահա ես ու
14 այն զաւակները դ զոր Աստուած ինծի տուաւ։ Ուս-
տի որովհետև զաւակները մարմինին ու արիւնին
հաղորդ եղան, ե ինքն ալ նմանապէս անոնց բա-
ժանորդ եղաւ. զ որ իր մահովը խափանէ զանիկա
որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն է
15 Սատանան. է Եւ ազատէ զանոնք որ մահուան վա-
16 խովը միշտ ծառայութեան մէջ կ'ապրէին։ Քան-
զի բնաւ հրեշտակներուն ձեռք չառներ, հապա Աբ-
17 րահամի սերունդին ձեռք կը առնէ։ ը Անոր հա-
մար պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման
ըլլալ, թ որ ինքը ողորմած ըլլայ ու հաւատարիմ
քահանայապետ Աստուծոյ կողմանէ, ժողովուրդին
18 մեղքերը քաւելու համար։ ժ Քանզի ինչ բանով
որ ինքը չարչարուեցաւ՝ փորձութիւն կրելով,
կրնայ փորձուածներուն ալ օգնական ըլլալ։

ԳԼ. Գ

1 Քրիստոս Մովսէսէն աւելի փառքի արժանաւոր է. 7 ուստի թէ որ մենք իրեն չհաւատանք՝ աւելի պատժոյ արժանի պիտի ըլլանք, քան թէ խստասիրտ Իսրայէլացիները։

1 Ուստի սուրբ եղբայրներ՝ ա երկնային կոչմանը
մասնակիցներ, բ նայեցէք մեր դաւանութեանը
Առաքեալին ու Քահանայապետին՝ Քրիստոս Յի-

ա Սաղ. իբ. 22, 25։
բ Սաղ. ժը. 2; Ես. ժբ. 2։
գ Ես. ը. 18։
դ Յօհ. ժ. 29; ժէ. 6, 9, 11, 12։
ե Յօհ. ա. 14; Հռով. ը. 3; Փիլ. բ. 7։
զ ա Կոր. ժե. 54, 55; Կող. բ. 15; բ Տիմ. ա. 10։
է Ղուկ. ա. 74; Հռով. ը. 15; բ Տիմ. ա. 7։
ը Փիլ. բ. 7։
թ Գլ. դ. 15; ե. 1, 2։
ժ Գլ. դ. 15, 16; ե. 2; է. 25։
ա Հռով. ա. 7; ա Կոր. ա. 2; Եփե. դ. 1; Փիլ. գ. 14; բ Թես. ա. 11; բ Տիմ. ա. 9; բ Պետ. ա. 10։
բ Հռով. ժե. 8; Գլ. բ. 17; դ. 14; ե. 5; զ. 20; ը. 1; թ. 11; ժ. 21։

2 սուսի. Որ հաւատարիմ է անոր՝ որ զինքը դրաւ,
գ ինչպէս որ Մովսէս ալ՝ անոր բոլոր տանը
3 մէջ։ Ինչու որ ինքը Մովսէսէն այնչափ աւելի
փառքի արժանացաւ, դ որչափ որ աւելի պատիւ
4 կ'ունենայ տունը շինողը քան թէ տունը։ Քան-
զի ամէն տուն մէկէ մը կը շինուի. ե բայց ան որ
5 ամէն բաները ըրաւ՝ Աստուած է։ Եւ զ Ի-
րաւի Մովսէս անոր բոլոր տանը մէջ հաւատա-
րիմ էր է ծառայի մը պէս՝ ը զրուցուելու բաներուն
6 վկայ ըլլալու համար. թ Բայց Քրիստոս որդիի մը
պէս իր տանը վրայ, ժ որուն տունը մենք ենք,
ժա միայն թէ այն համարձակութիւնը և յոյսին պար-
ծանքը մինչև վերջը հաստատ բռնենք։
7 ժբ Ուստի ինչպէս որ կ'ըսէ Հոգին Սուրբ. ժգ Այս-
8 օր թէ որ անոր ձայնին պիտի լսէք, Ձեր սիրտե-
րը մի՛ խստացնէք բարկացնելու ատենին պէս ա-
9 նապատին մէջ փորձութեան օրը. Ուր որ ձեր
հայրերը զիս փորձեցին, քննեցին զիս՝ թէպէտև
10 քառասուն տարի իմ գործերս տեսան. Անոր համար
զզուեցայ այն ազգէն, ու ըսի. Միշտ մոլորած են
սրտովին, և իմ ճամբաներս չճանչցան անոնք.
11 Ուստի երդում ըրի իմ բարկութեանս մէջ թէ Իմ
12 հանգիստս պիտի չմտնեն։ Նայեցէ՛ք, եղբայրներ,
չըլլայ որ ձեզմէ մէկուն ներսի դին անհաւատու-
թեան չար սիրտ ըլլայ՝ ապստամբ ըլլալու կենդա-
13 նի Աստուծմէն. Հապա ամէն օր մէկզմէկ յորդո-

գ Թուոց. ժբ. 7; Համ. 5։
դ Զաք. զ. 12; Մատ. ժզ. 18։
ե Եփե. բ. 10; գ. 9; Գլ. ա. 2։
զ Համ. 2։
է Ել. ժդ. 31; Թուոց. ժբ. 7; բ Օր. գ. 24; Յես. ա. 2; ը. 31։
ը բ Օր. ժը. 15, 18, 19։
թ Գլ. ա. 2։
ժ ա Կոր. գ. 16; զ. 19; բ Կոր. զ. 16; Եփե. բ. 21, 22; ա Տիմ. գ. 15; ա Պետ. բ. 5։
ժա Համ. 14; Մատ. ժ. 22; իդ. 13; Հռով. ե. 2; Կող. ա. 23; Գլ. զ. 11; ժ. 35։
ժբ բ Թագ. իգ. 2; Գործ. ա. 16։
ժգ Համ. 15; Սաղ. ղե. 7։

րեցէք՝ քանի որ այսօր կ'ըսուի , որ չըլլայ թէ
ձեզմէ մէկը խստանայ մեղքին խաբէութիւնովը :
14 Քանզի մենք Քրիստոսի մասնակից եղած ենք ,
միայն թէ այն հաստատութեան սկիզբը մինչև
15 վերջը պինդ բռնենք . Քանի որ կ'ըսուի , Այսօր
թէ որ անոր ձայնին պիտի լսէք , ձեր սիրտերը մի
16 խստացնէք բարկացնելու ատենին պէս : Քանզի
* ոմանք լսեցին ու բարկացուցին , բայց չէ թէ "
այն ամէնը որ Եգիպտոսէն ելած էին Մովսէսին
17 ձեռքովը : Որոնցմէ՞ զզուեցաւ այն քառասուն տա-
րին . չէ՞ որ մեղանչողներէն , որոնց ոսկորները
18 անապատին մէջը ինկան : Եւ որո՞նց համար եր-
դում ըրաւ իր հանգիստը չմտնելու , եթէ ոչ՝ ան-
19 հաւատներուն համար : Եւ կը տեսնենք որ չկրր-
ցան մտնել իրենց անհաւատութեանը համար :

ԳԼ. Դ

1 Քրիստոնեաները հաւատքով ձեռք պիտի բերեն իրենց հանգիստը : 12 Աստուծոյ խօսքին ազդեցութիւնը : 14 Որովհետև մենք մեծ քահանայապետ ունինք Յիսուս Աստուծոյ Որդին , որ մեր տկարութիւններուն հաղորդ եղաւ , բայց առանց մեղքի , 16 կարող ենք և պարտինք անոր միջոցովը համարձակօրէն երթալ շնորհաց աթոռին առջևը :

1 Ուրեմն ալ վախնանք , որ չըլլայ թէ անոր հան-
գիստը մտնելու խոստումը որ ձգած մնացեր
2 է , ձեզմէ մէկը անկէ զրկուած գտնուի : Ինչու որ
մենք ալ անոնց պէս աւետիս առած ենք . բայց ա-
նոնց շահ մը չըրաւ այն խօսքը լսելը , քանզի հա-
3 ւատքով խառնուած չէր լսողներուն մէջ : Իսկ
մենք որ հաւատացինք , հանգիստը կը մտնենք .

ծ Հմր 6 :
կ Հմր 7 :
հ Թու. ժդ. 2, 4, 11, 24, 30 : Բ Օր. ա. 34, 36, 38 :
* Կամ որո՞նք լսեցին ու բարկացուցին , չէ՞ որ
ձ Թու. ժդ. 22, 29, [illegible] : իզ. 65 : Սաղ. ճզ. 26 : Ա Կոր. ժ. 5 : Յուդ. 5 :
ղ Թու. ժդ. 30 : Բ Օր. ա. 34, 35 :
ճ Գլ. գ. 6 :
մ Գլ. ժբ. 15 :
յ Գլ. գ. 14 :

ինչպէս որ ըսաւ , Ասոր համար երդում ըրի իմ բար-
կութեանս մէջ թէ Իմ հանգիստս պիտի չմտնեն .
թէև իր գործերը աշխարհի սկիզբէն եղած էին :
4 Ինչու որ Գիրքը ասանկ կ'ըսէ մէկ տեղ մը եօթնե-
րորդ օրուանը համար , Եւ Աստուած եօթնե-
5 րորդ օրը հանգչեցաւ իր բոլոր գործերէն . Ու
հոս նորէն կ'ըսէ թէ Իմ հանգիստս պիտի չմտնեն :
6 Ասոր որովհետև ոմանց կը մնայ հոն մտնել , և
անոնք որ առաջուց աւետիսը առած էին , անհա-
7 ւատութեան համար չմտան . Նորէն օր մը կը
սահմանէ՝ ու կ'ըսէ , Այսօրը Դաւիթին բերնովը
այնքան ժամանակէ ետև , ինչպէս որ ըսուեցաւ ,
Այսօր թէ որ անոր ձայնին պիտի լսէք , ձեր սիր-
8 տերը մի խստացնէք : Ինչու որ եթէ Յեսու
հանգչեցուցած ըլլար զանոնք , ալ անկէ ետքը ու-
9 րիշ օրուան համար չէր գուցեր : Ուրեմն Աստու-
ծոյ ժողովուրդին [illegible] հանգիստ մը կը մնայ :
10 Վասն զի ան որ անոր հանգիստը մտաւ , ալ
հանգչեցաւ իր գործերէն , ինչպէս որ Աստուած
11 ալ իրեններէն : Ուրեմն ջանանք այն հանգիստը
մտնելու , որ չըլլայ թէ մէկը նոյն անհաւատու-
12 թեան օրինակին պէս իյնայ : Ինչու որ Աստուծոյ
խօսքը կենդանի է ու զօրեղ՝ և ամէն երկսայրի
սուրէ կտրուկ , որ կը թափանցէ մինչև շունչը ու
ոգին և յօդուածները ու ծուծը բաժնելու , և
կը քննէ սրտին խորհուրդները ու մտածմունքները .
13 Եւ չկայ մէկ արարած մը անոր դիմացը չերևցած ,

ն Սաղ. ղե. 11 : Գլ. գ. 11 :
շ Ծն. բ. 2 : Ել. ի. 11 : լա. 17 :
ո Գլ. գ. 19 :
չ Սաղ. ղե. 7 : Գլ. գ. 7 :
պ Գլ. գ. 12, 18, 19 :
ջ Ես. խթ. 2 : Երեմ. իգ. 29 : Բ Կոր. ժ. 4, 5 : Ա Պետ. ա. 23 :
ռ Առակ. ե. 4 :
ս Եփե. զ. 17 : Յայտ. ա. 16 : բ. 16 :
վ Ա Կոր. ժդ. 24, 25 :
տ Սաղ. լգ. 13, 14 : ղ. 8 : ճլթ. 11, 12 :

խ Հապա ամէն բան բաց ու՝ յայտնի է անոր աչքե-
րուն առջեւը, որուն պէտք տրուի մեր հաշիւը։
14 ծ Արդ մենք որ մեծ Քահանայապետ մը ունինք
կ երկինքը անցած, Յիսուսը Աստուծոյ Որդին,
15 հ ամո՛ւր բռնենք մեր դաւանութիւնը։ ձ Քանզի
չէ թէ անանկ քահանայապետ մը ունինք՝ որ կարող
չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալու,
ղ հապա ինքը ամէն կերպով փորձը առած է մեզի
16 նման, ճ բայց առանց մեղքի։ մ Ուստի ալ հա-
մարձակութիւնով մօտենանք շնորհաց աթոռին
առջեւը, որ ողորմութիւն ընդունինք ու շնորհք
գտնենք պէտք եղած ատենը մեզի օգնելու։

ԳԼ. Ե

1 Մեր Փրկչին քահանայական իշխանութիւնը և պատիւը։ 11 Առաքեալը կը յանդիմանէ աս բանին գիտութեանը վրայով անհոգ եղողները։

1 Ինչու որ ամէն քահանայապետ մարդոց մէջէն առ-
նուած՝ ա մարդոց համար կը կենայ բ Աստուծոյ
կողմը, գ որ պատարագներ ու զոհեր մատուցանէ
2 մեղքերու համար. դ Նա կարող է կարեկից ըլլալ
անոնց՝ որ տգէտ ու մոլորեալ են, ե ինչու որ
3 ինքն ալ տկարութիւնով պաշարուած է. զ Նա
աս պատճառով պարտաւոր է ինչպէս ժողովուրդին
համար՝ անանկ ալ իր անձին համար մեղքի պա-
4 տարագ մատուցանել։ է Նա չէ թէ մէկը ինք-
իրմէ աս պատիւը կ'առնէ, հապա ան որ Աս-

խ Յոբ. իզ. 6; լդ. 21; Առակ. ժե. 11։
ծ Գլ. գ. 1։
կ Գլ. է. 26; թ. 12, 24։
հ Գլ. ժ. 23։
ձ Ես. ծգ. 3; Գլ. բ. 18։
ղ Ղու. իբ. 28։
ճ Բ Կոր. ե. 21; Գլ. է. 26; Ա Պետ. բ. 22; Ա Յոհ. գ. 5։
մ Եփե. բ. 18; գ. 12; Գլ. ժ. 19, 21, 22։
ա Գլ. ը. 3։
բ Գլ. բ. 17։
գ Գլ. ը. 3, 4; թ. 9; ժ. 11; ժա. 4։
դ Գլ. բ. 18; դ. 15։
ե Գլ. է. 28։
զ Ղեւ. դ. 3; թ. 7; ժզ. 6, 15, 16, 17; Գլ. է. 27; թ. 7։
է Բ Մն. իզ. 18; Յոհ. գ. 27։

5 տուծմէ կանչուած է՝ ը ինչպէս որ Ահարոն։ թ Ա-
նանկ ալ Քրիստոս չէ՛ թէ իր անձը մեծարեց
քահանայապետ ըլլալու, հապա անիկայ՝ որ զը-
րուցեց անոր թէ ժ Դուն իմ Որդիս ես, ես այսօր
6 քեզ ծնայ. Ինչպէս ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ,
ի Դուն յաւիտեան քահանայ ես Մելքիսեդեկի
7 կարգին պէս։ Որ իր մարմինին օրերը լ սաստիկ
գոչումով ու արցունքով խ աղօթք և աղաչանք
մատուց անոր՝ ծ որ կարող էր զինքը մահուանէ ազա-
տելու, ու լսուեցաւ իր *բարեպաշտութեանը պատ-
8 ճառով". կ Թէպէտ ինքը Որդի է, հ բայց իր չարչա-
9 րանքներէն հնազանդութիւն սորվեցաւ. ձ Ու եր-
բոր կատարուեցաւ, բոլոր իրեն հնազանդողներուն
10 յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ. Ու
Աստուծմէ կոչուեցաւ Քահանայապետ ճ Մելքիսե-
11 դեկի կարգին պէս. մ Որուն վրայով շատ ըսելիք
ունինք, որ դժուարին ալ է մեկնելու, յ ինչու
12 որ ձեր լսելիքները բթացած են. Որ պէտք էր ձեզի
ժամանակին նայելով սորվեցնող ըլլալ. բայց
նորէն պէտք է ձեզի սորվիլ թէ ինչ են ն Աստու-
ծոյ պատգամներուն առջի սկզբունքները. շ Ու
դուք կաթի կարօտ եղաք, և չէ թէ հաստատուն
13 կերակուրի։ Քանզի ան ամէնը որ կաթնկեր է,
արդարութեան խօսքին անհմուտ է, ո որովհետև

ը Ել. իը. 1; Թու. ժզ. 5, 40; Ա Մն. իգ. 13։
թ Յոհ. ը. 54։
ժ Սաղ. բ. 7; Գլ. ա. 5։
ի Սաղ. ճժ. 4; Գլ. է. 17, 21։
լ Սաղ. իբ. 1; Մատ. իէ. 46, 50; Մար. ժե. 34, 37։
խ Մատ. իզ. 39, 42, 44; Մար. ժդ. 36, 39; Յոհ. ժէ. 1։
ծ Մատ. իզ. 53; Մար. ժդ. 36։
կ Մատ. իզ. 37; Մար. ժդ. 33; Ղու. իբ. 43; Յոհ. ժբ. 27։
* Կամ՝ երկիւղէն ազատուելով։
հ Գլ. գ. 6։
ձ Փիլ. բ. 8։
ղ Գլ. բ. 10; ժա. 40։
ճ Հմր 6; Գլ. զ. 20։
մ Յոհ. ժզ. 12; Բ Պետ. գ. 16։
յ Մատ. ժզ. 15։
ն Գլ. զ. 1։
շ Ա Կոր. գ. 1, 2, 3։
ո Ա Կոր. ժգ. 11; ժդ. 20; Եփե. դ. 14; Ա Պետ. բ. 2։

14 տղայ է։ Բայց հաստատուն կերակուրը կատա-
րեալներուն է, որոնց զգայարանքները սովորու-
թեամբ կրթուած են բարին ու չարը զանազանե-
լու։

ԳԼ. Զ

1 Կը յորդորէ որ հաւատքէն չիյնան, 11 հապա հաստատուն
12 և ջանացող ըլլան, ու համբերութեամբ Աստուծոյ ապա-
ւինին, 13 վասն զի Աստուած հաստատուն է իր խոստումնե-
րուն մէջ։

1 Ուստի Քրիստոսի վրայով առջի սորվելիքները
ձգելով՝ կատարելին գանք. առանց նորէն
հիմ ձգելու մեռած գործերէն ապաշխարելու ու
2 առ Աստուած հաւատք ունենալու, Ու մկր-
տութիւններուն վարդապետութեանը, ու ձեռք
դնելուն, և մեռելներուն յարութեանը, ու
3 յաւիտենական դատաստանին։ Ու աս պիտի
4 ընենք, եթէ որ Աստուած հրաման տայ։ Վասն զի
որ անկար է մէկ անգամ լուսաւորուածներուն՝
որոնք երկնաւոր պարգևին համը առին, ու
5 Հոգւոյն Սրբոյ հաղորդ եղան, Ու Աստուծոյ բարի
խօսքին ու գալու աշխարհին զօրութիւններուն
6 համը առին, Թէ որ իյնան, նորէն ապաշխարու-
թիւնով նորոգուիլ. որովհետև կրկին Աստուծոյ
Որդին խաչը կը հանեն իրենց անձին, ու կը խայ-
7 տառակեն։ Վասն զի ան երկիրը՝ որ իր վրայ շատ
անգամ եկած անձրևը կը խմէ, և արդիւնք կը
բերէ պիտանի անոնց՝ որոնց համար որ կը մշակուի,

ա Եսա. է. 15։ ա Կոր. բ. 14, 15։
բ Փիլ. գ. 12, 13, 14։ Գլ. ե. 12։
գ Գլ. թ. 14։
դ Գոր. ժթ. 4, 5։
ե Գոր. ը. 14, 15, 16, 17։ ժթ. 6։
զ Գոր. ժէ. 31, 32։
է Գոր. իդ. 25։ Հռով. բ. 16։
ը Գոր. ժբ. 21։ ա Կոր. գ. 19։
թ Մատ. ժբ. 31, 32։ Գլ. ժ. 26։ բ Պետ. բ. 20, 21։ ա Յովհ. ե. 16։
ժ Գլ. ժ. 32։
ի Յովհ. գ. 10։ զ. 32։ Եփե. բ. 8։
լ Գաղ. գ. 2, 5։ Գլ. բ. 4։
խ Գլ. բ. 5։
ծ Գլ. ժ. 29։

8 Աստուծմէ օրհնութիւն կ'ընդունի. Բայց ան
որ փուշեր ու տատասկներ կը բերէ՝ անպիտան
է, ու անէծքի մօտ, և անոր վերջը այրուիլ է։
9 Իսկ մենք սիրելիներ՝ ձեր վրայով լաւագոյն և փըր-
կութեան վերաբերեալ յոյսեր ունինք, թէև
10 ասանկ կը խօսինք։ Վասն զի Աստուած անիրաւ
չէ, որ ձեր գործը մոռնայ, ու ան սէրը որ իր
անուանը համար ցուցուցիք, որ սուրբերուն ծա-
ռայեցիք ու կը ծառայէք։
11 Բայց մենք կը բաղձանք որ ձեզմէ ամէն մէկը
նոյն ջանքը ցուցընէ յոյսին հաստատութեան մինչև
12 վերջը. Որ դուք չծուլանաք, հապա նմանող
ըլլաք անոնց որ հաւատքով ու համբերութիւնով
13 խոստումները ժառանգեցին։ Վասն զի երբոր
Աստուած Աբրահամին խոստումը ըրաւ, որովհե-
տև իրմէ մեծը չկար՝ որ անոր վրայ երդում ընէր,
14 Իր անձին վրայ երդում ըրաւ ու ըսաւ, Այո՛
օրհնելով պիտի օրհնեմ քեզ, ու շատցնելով պի-
15 տի շատցնեմ քեզ։ Ու այսպէս համբերելով
16 խոստումին հասաւ։ Վասն զի մարդիկ իրենցմէ
մեծին վրայ երդում կ'ընեն, ու անոնց բոլոր
հակառակութեանը հաստատ վերջ տուողը եր-
17 դումն է։ Որ անով Աստուած իր խորհուրդին
անփոփոխ ըլլալը աւելի ցուցընել ուզելով
խոստումին ժառանգաւորներուն, երդումը մէջ
18 ձգեց. Որ երկու անփոփոխելի բաներով՝ որոնցմով
անկարելի է Աստուծոյ սուտ գտուիլ, հաստատուն
մխիթարութիւն ունենանք մենք՝ որ ապաւինե-

ծ Սաղ. կե. 10։
կ Եսա. ե. 6։
հ Առակ. ժդ. 31։ Մատ. ժ. 42։ իե. 40։ Յովհ. ժգ. 20։
ձ Հռով. դ. 4։ բ Թես. ա. 6, 7։
ղ ա Թես. ա. 3։
ճ Հռով. ժե. 25։ բ Կոր. ը. 4։ թ. 1, 12։ բ Տիմ. ա. 18։
մ Գլ. գ. 6, 14։
յ Գլ. ժ. 36։
ն Ծն. իբ. 16, 17։ Սաղ. ճե. 9։ Ղուկ. ա. 73։
շ Ել. իբ. 11։
ո Հռով. ժա. 29։
չ Գլ. ժա. 9։

ցանք ¬ առջևնիս դրուած յոյսը ամուր բռնելու ։
19 Որ ան յոյսը ունինք իբրև մէկ հաստատ ու ան-
շարժ խարիսխ մը մեր անձին, Ձ որ վարագոյրին
20 ներսի կողմն ալ կը մտնէ ։ – Ուր որ Յիսուս իբրև
Առաջնորդ մտաւ մեզի համար՝ ˭ յաւիտենական
քահանայապետ ըլլալով Մելքիսեդեկի կարգին
պէս ։

ԳԼ. Է.

1 Առաքեալը կը ցուցնէ թէ Յիսուս Քրիստոս քահանայապետ է Մելքիսեդեկի կարգին պէս, 11 և աս պատճառով խիստ գերազանց է Ահարոնի կարգէն եղող քահանաներէն ։

1 Քանզի աս — Մելքիսեդեկը Սաղէմի թագաւորն
էր՝ Բարձրեալ Աստուծոյ քահանան. որ ինքը
Աբրահամը դիմաւորեց՝ երբոր անիկայ թագաւոր-
ներուն կոտորածէն կը դառնար, ու օրհնեց զանի-
2 կայ. Որուն՝ Աբրահամ ալ տասանորդ տուաւ բո-
լոր բաներէն. որ նախ արդարութեան թագաւոր
կը թարգմանուի, ետքը Սաղէմի թագաւոր՝ որ է
3 խաղաղութեան թագաւոր. Առանց հօր՝ առանց մօր՝
ազգահամար չունեցող, որ ոչ անոր օրերուն սկիզ-
բը կայ՝ ոչ ալ կեանքին վերջը. և Աստուծոյ
Որդւոյն նման ըլլալով՝ կը կենայ ու կը մնայ միշտ
քահանայ ։
4 Արդ նայեցէ՛ք թէ որչափ մեծ մէկ մըն էր ասի-
կայ, Ի որ անոր Աբրահամ նահապետն ալ տա-
5 սանորդ տուաւ աւարէն ։ Ու ‡ Ղևիի որդիներէն
եղողները որ քահանայութիւն կ'առնեն, պատուէր
ունին որ ժողովուրդէն տասանորդ առնեն օրէնքին
համեմատ, այսինքն իրենց եղբայրներէն. թէ-
6 պէտև անոնք Աբրահամին երանքէն ելեր են. Բայց
անիկայ՝ որուն ազգահամարը անոնցմէ չէր, Աբրա-
համէն տասանորդ առաւ, ⊤ ու օրհնեց զանիկայ՝ որ

¬ Գլ. ժբ. 1 ։
Ձ Ղև. ժզ. 15 ։ Գլ. թ. 7 ։
– Գլ. դ. 14 ։ ը. 1 ։ թ. 24 ։
˭ Գլ. գ. 1 ։ ե. 6, 10 ։ է. 17 ։
— Ծն. ժդ. 18, ... ։
Ի Ծն. ժդ. 20 ։
‡ Թու. ժը. 21, 26 ։
⊤ Ծն. ժդ. 19 ։

7 Ի խոստմունքները առած էր ։ Սակայն [illegible] ան-
հակառակելի բան մըն է, որ պզտիկը մեծէն
կ'օրհնուի ։
8 Ու հոս մահկանացու մարդիկ տասանորդ կ'առ-
նեն, Ղ բայց հոն անիկայ կ'առնէ, որուն համար
9 վկայուած է թէ կենդանի է ։ Ու կրնայ ըսուիլ
թէ Ղևին ալ որ տասանորդ կ'առնէ, Աբրահա-
10 մին ձեռքովը տասանորդ տուաւ. Ինչու որ տա-
կաւին իր հօրը երանքն էր, երբոր Մելքիսեդեկ
զանիկայ դիմաւորեց ։
11 Արդ Ւ թէ որ կատարելութիւնը Ղևտացւոց
քահանայութեան ձեռքովն ըլլար, (որովհետև ժո-
ղովուրդը անոր ատենը օրէնքին տակը դրուեցաւ,)
Ի՞նչ պէտք էր որ Մելքիսեդեկի կարգին պէս ուրիշ
քահանայ մը ելլէ, ու չըսուի Ահարոնի կարգին
12 պէս ։ Արդ քահանայութիւնը փոխուելուն պէս,
հարկ էր որ օրէնքին ալ փոփոխութիւն ըլլայ ։
13 Ա— իրա— եղա—, ինչու որ ան՝ որուն համար
ասանկ կ'ըսուի, ուրիշ ցեղի հաղորդութիւն
ունեցաւ, որ ան ցեղէն բնաւ մէկը սեղանին չմօ-
14 տեցաւ. Քանզի յայտնի է թէ Ը Յուդայի ցեղէն
յառաջ եկաւ մեր Տէրը, որ ան ցեղին վրայով
Մովսէս բան մը չզրուցեց քահանայութեան հա-
15 մար ։ Ու ալ աւելի յայտնի է որ [illegible],
քանի որ Մելքիսեդեկին նմանութիւնովը ուրիշ
16 քահանայ մը կ'ելլէ, Որ ան չէ թէ մարմնաւոր
պատուէրի օրէնքին պէս եղաւ, հապա անվախճան
17 կենաց զօրութեանը պէս ։ Ինչու որ կը վկայէ
թէ Ր Դուն յաւիտեան քահանայ ես Մելքիսեդեկի
18 կարգին պէս ։ Քանզի առջի պատուէրը կը խա-
փանուի Ժ իր տկարութեանը ու անշահութեանը

Ի Հռով. գ. 13 ։ Գաղ. գ. 16 ։
Ղ Գլ. ե. 6 ։ զ. 20 ։
Ւ Գաղ. բ. 21 ։ Հռ. 18, 19 ։ Գլ. ը. 7 ։
Ը Ես. ժա. 1 ։ Մատ. ա. 3 ։
Ղու. գ. 33 ։ Հռով. ա. 3 ։ Յայտ. ե. 5 ։
Ր Սաղ. ճժ. 4 ։ Գլ. ե. 6, 10 ։ զ. 20 ։
Ժ Հռով. ը. 3 ։ Գաղ. դ. 9 ։

19 համար, ([ժ]Քանզի որ օրէնքը մէկ բան մը կատա-
րեալ չըրաւ,) և [ի]անոր տեղը կը մտնէ լաւագոյն
յոյս մը՝ որով [լ]Աստուծոյ կը մօտենանք։
20 Եւ որքան որ Յիսուս չէ թէ առանց երդումի
քահանայ եղաւ. (Քանզի որ անոնք առանց երդումի
21 քահանայ եղած են. Բայց ասիկայ երդումով՝ անոր
ձեռքովը որ իրեն ըսաւ, [խ]Տէրը երդում ըրաւ
ու պիտի չզղջայ, Դուն յաւիտեան քահանայ ես
22 Մելքիսեդեկի կարգին պէս.) Այնքան [ծ]աւելի
աղէկ ուխտի մը երաշխաւոր եղաւ Յիսուս։
23 Ու անոնք շատ քահանաներ եղած են, իրենց
միշտ մնալուն մահը արգելք ըլլալուն համար.
24 Բայց ասիկայ յաւիտեան կենալուն համար՝ անան-
25 ցանելի ունի քահանայութիւնը. Ուստի բոլորովին
կարող ալ է ապրեցնելու անոնք՝ որ իրմով Աս-
տուծոյ կու գան. որովհետեւ ինքը միշտ կենդանի է
[կ]անոնց համար բարեխօս ըլլալու։
26 Վասն զի մեզի ճիշդ ասանկ քահանայապետ մը կը
վայլէր, [հ]սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորներէն
27 զատուած ու [ձ]երկինքէն վեր բարձրացած. Որուն
ամէն օր հարկ չէ ինչպէս ուրիշ քահանայապետ-
ներուն՝ [ղ]առաջ իր մեղքերուն համար պատարագ
մատուցանել, ու [ճ]ետքը ժողովուրդին մեղքերուն
համար. վասն զի ինքը [մ]մէկ անգամ մը ըրաւ ա-
28 սիկայ, իր անձը պատարագ մատուցանելով։ Քանզի
որ օրէնքը [յ]տկարութիւնով պաշարուած մարդիկը
քահանայապետ կը կարգէ, բայց երդումին խօսքը

ժ Գոր. ժգ. 39։ Հռով. գ. 20, 21, 28։ ը. 3։ Գաղ. բ. 16։ Գլ. թ. 9։
ի Գլ. զ. 18։ ը. 6։ Գաղ. գ. 24։
լ Հռով. ե. 2։ Եփե. բ. 18։ գ. 12։ Գլ. դ. 16։ ժ. 19։
խ Սաղ. ճժ. 4։
ծ Գլ. ը. 6։ թ. 15։ ժբ. 24։
կ Հռով. ը. 34։ Ա Տիմ. բ. 5։ Գլ. թ. 24։ Ա Յով. բ. 1։
հ Գլ. դ. 15։
ձ Եփե. ա. 20։ դ. 10։ Գլ. ը. 1։
ղ Ղև. թ. 7։ ժզ. 6, 11։ Գլ. ե. 3։ թ. 7։
ճ Ղև. ժզ. 15։
մ Հռով. զ. 10։ Գլ. թ. 12, 28։ ժ. 12։
յ Գլ. ե. 1, 2։

որ օրէնքէն ետք էր, Որդին՝ որ [ն]յաւիտեան կա-
տարեալ է։

ԳԼ. Ը

1 Քրիստոսի յաւիտենական քահանայութեամբը խափանուած է Ղեւտական քահանայութիւնը. 7 Նմանապէս նախահայրերուն հետ եղած ժամանակաւոր ուխտը խափանուած է աւետարանին յաւիտենական ուխտովը։

1 Եւ զրուցած խօսքերուս բովանդակութիւնը այս
է. անանկ քահանայապետ մը ունինք մենք՝
[շ]որ ինքը երկինքը Աստուծոյ մեծութեան աթո-
2 ռին աջ կողմը նստաւ. [ո]Սրբարանին պաշտօնեայ,
ու [չ]ճշմարիտ խորանին՝ որ Տէրը կանգնեց և
3 չէ թէ մարդ։ [պ]Քանզի ամէն քահանայա-
պետ պատարագներ ու զոհեր մատուցանելու
համար որոշուած է. ուստի [ջ]հարկ է որ ասիկայ
4 ալ բան մը ունենայ մատուցանելու։ Որ եթէ
երկրի վրայ ըլլար, քահանայ անգամ պիտի չըլլար,
քանզի որ կան քահանաներ՝ որոնք պատարագներ կը
5 մատուցանեն օրէնքին համեմատ. (Որ անոնք երկ-
նային բաներուն նմանութիւնովը ու [ռ]շուքովը կը
ծառայեն, ինչպէս որ Մովսէսին հրամայուեցաւ՝
երբոր խորանը պիտի շինէր. քանզի ըսաւ, [ս]Նա-
յէ որ լեռը քեզի ցուցուած օրինակին պէս շինես
6 ամէնը.) Բայց հիմա Յիսուս՝ [վ]աւելի գերա-
զանց պաշտօնի մը հասաւ, որչափ որ լաւագոյն
խոստումներով հաստատուած լաւագոյն ուխտի
մը միջնորդ է։
7 [տ]Քանզի որ եթէ առաջինը անմեղադրելի ըլլար,
8 ուրիշ երկրորդին տեղ չէր փնտռուէր։ Քանզի

ն Գլ. բ. 10։ ե. 9։
շ Եփե. ա. 20։ Կող. գ. 1։ Գլ. ա. 3։ ժ. 12։ ժբ. 2։
ո Գլ. թ. 8, 12, 24։
չ Գլ. թ. 11։
պ Գլ. ե. 1։
ջ Եփե. ե. 2։ Գլ. թ. 14։
ռ Կող. բ. 17։ Գլ. թ. 23։ ժ. 1։
ս Ել. իե. 40։ իզ. 30։ իէ. 8։ Թու. ը. 4։ Գոր. է. 44։
վ Բ Կոր. գ. 6, 8, 9։ Գլ. է. 22։
տ Գլ. է. 11, 18։

կը յանդիմանէ անոնք ու կ՚ըսէ , զ Ահա օրեր կու-
գան՝ կ՚ըսէ Տէրը , որ Իսրայէլի տանը հետ ու
9 Յուդայի տանը հետ նոր ուխտ պիտի ընեմ , Ոչ
թէ այն ուխտին պէս՝ որ անոնց հայրերուն հետ ը-
րի , այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի՝ զանոնք Ե-
գիպտոսի երկրէն հանելու համար . ինչու որ անոնք
իմ ուխտիս մէջ չկեցան , ես ալ անհոգ եղայ ա-
10 նոնց վրայով՝ կ՚ըսէ Տէրը ։ Քանզի է աս է այն
ուխտը՝ որ Իսրայէլի տանը հետ պիտի ընեմ այն
օրերէն ետքը՝ կ՚ըսէ Տէրը . իմ օրէնքներս անոնց
միտքին մէջը պիտի դնեմ , և անոնց սրտին վրայ
պիտի գրեմ զանոնք , ու ը ես անոնց Աստուած
պիտի ըլլամ , և անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլ-
11 լան ։ Ու թ բնաւ պիտի չսորվեցնեն ամէն մէկը
իր ընկերին , և ամէն մէկը իր եղբօրը , ըսե-
լով թէ Տէրը ճանչցիր . ինչու որ անոնց պզտի-
12 կէն մինչև մեծը ամէնը զիս պիտի ճանչնան . Վասն
զի ես անոնց անիրաւութիւններուն ներող պիտի
ըլլամ , ժ և անոնց մեղքերը ու անօրէնութիւննե-
րը ալ պիտի չյիշեմ ։
13 ի Նոր ուխտ ըսելովը առաջինը հինցուց . ու այն
որ կը հիննայ և կը ծերանայ , ալ կորսուելու մօտ է ։

ԳԼ. Թ.

1 Առաջնոյն օրէնքին ծէսերը և արիւնով եղած զոհերը նկա-րագրելով՝ 11 կը ցուցնէ թէ անոնք շատ ստորին էին Քրիստոսի զոհին և արիւնին արժանաւորութեանը ու կատարելութեանը նայելով ։

1 Արդարև առաջին ուխտն ալ ունէր պաշտամունքին
կանոնադրութիւնները ու լ աշխարհային սուրբ
2 տեղը ։ խ Ինչու որ առաջին խորանը որ Սրբու-
թիւն կ՚ըսուէր , շինուեցաւ , ծ որուն մէ-

զ Երեմ. լա. 31, 32, 33, 34 ։
է Գլ. ժ. 16 ։
ը Զաք. ը. 8 ։
թ Ես. ծդ. 13 ; Յոհ. զ. 45 ; ա Յոհ. բ. 27 ։
ժ Հռով. ժա. 27 ; Գլ. ժ. 17 ։
ի բ Կոր. ե. 17 ։
լ Ել. իե. 8 ։
խ Ել. իզ. 1 ։
ծ Ել. իզ. 35 ; խ. 4 ։

ջը կ աշտանակը ու հ սեղանը և առաջաւորու-
3 թեան հացը ։ ձ Ու երկրորդ վարագոյրին ետին
այն խորանը՝ որ Սրբութիւն սրբութեանց կ՚ըսուէր .
4 Որուն մէջն էր ոսկի բուրվառը , և ղ ուխտին տա-
պանակը ամէն կողմէն ոսկիով պատած . որուն
մէջն էր ճ ոսկիէ սափորը մանանայով լեցուն , և
մ Ահարոնին գաւազանը՝ որ ծաղկեցաւ , և յ ուխ-
5 տին տախտակները . Ու ն անոր վրայէն փառաց
քերովբէները՝ որ քաւութիւնին վրայ հովանի կ՚ը-
նէին . որոնց համար պէտք չէ հիմա մէկիկ մէկիկ
զրուցել ։
6 Ու աս բաները այսպէս կարգադրուած ըլլալով ,
առաջին խորանը ամէն ատեն շ կը մտնէին քահա-
7 նաները պաշտամունքը կատարելու . Բայց երկ-
րորդը՝ ո տարին անգամ մը միայն քահանայապե-
տը կը մտնէր . ան ալ չէ՛ թէ առանց արիւնի ,
չ որն որ իրեն համար ու ժողովուրդին սխալմունք-
8 ներուն համար կը մատուցանէր , պ Հոգին Սուրբ
աս ցուցնելով՝ թէ ջ սրբարանին ճանապարհը
յայտնի եղած չէր , քանի որ տակաւին առջի խո-
9 րանը կը կենար . Որ այն օրինակ մըն էր այն ժա-
մանակին՝ որ պատարագներ ու զոհեր կը մատու-
ցուէին , ռ որոնք խղճմտանքի կողմանէ չէին կրնար
կատարեալ ընել պաշտօն մատուցանողը , հապա
10 միայն ս կերակուրներով ու խմելիքներով , Ու

կ Ել. իե. 31 ։
հ Ել. իե. 23, 30 ; Ղև. իդ. 5, 6 ։
ձ Ել. իզ. 31, 33 ; խ. 3, 21 ; Գլ. զ. 19 ։
ղ Ել. իե. 10 ; իզ. 33 ; խ. 3, 21 ։
ճ Ել. ժզ. 33, 34 ։
մ Թու. ժէ. 10 ։
յ Ել. իե. 16, 21 ; լդ. 29 ; խ. 20 ; բ Օր. ժ. 2, 5 ; գ Թագ. ը. 9, 21 ; բ Մն. ե. 10 ։
ն Ել. իե. 18, 22 ; Ղև. ժզ. 2 ; գ Թագ. ը. 6, 7 ։
շ Թու. իը. 3 ; Դան. ը. 11 ։
ո Ել. լ. 10 ; Ղև. ժզ. 2, 11, 12, 15, 34 ; Հմր 25 ։
չ Գլ. ե. 3 ; է. 27 ։
պ Գլ. ժ. 19, 20 ։
ջ Յոհ. ժդ. 6 ։
ռ Գաղ. դ. 21 ; Գլ. ե. 18, 19 ; ժ. 1, 11 ։
ս Ղև. ժա. 2 ; Կող. բ. 16 ։

ճ կերպ կերպ լուացումներով՝ մ մարմնաւոր արարո-
ղութիւններ էին, որոնք մինչև ուղղութեան ատե-
11 նը կը կենային ։ Բայց Քրիստոս որ եկաւ՝ յ գա-
լու բարիքներուն ն Քահանայապետը՝ շ աւելի մեծ
ու կատարեալ անձեռագործ խորանով, այսինքն
12 ան որ աս ստեղծուածներէն չէ, Ո՛չ ալ ո նոխազ-
ներու ու զուարակներու արիւնով, հապա չ իր
արիւնովը պ մէկ անգամ մը սրբարանը մտաւ՝
13 ջ յաւիտենական փրկութիւն ստանալով ։ Վասն
զի թէ որ ռ ցուլերուն ու նոխազներուն արիւնը
և ս երինջին մոխիրը սրսկուելով՝ պղծուածները
14 կը սրբէր մարմնի մաքրութեան կողմանէ, Ա՛լ
ո՛րչափ աւելի վ Քրիստոսի արիւնը՝ տ որ յաւի-
տենական Հոգիին ձեռքովը ր իր անձը անարատ
պատարագ մատոյց Աստուծոյ, ց պիտի սրբէ ձեր
խղճմտանքը ւ մեռած գործքերէն՝ փ կենդանի Աս-
տուածը պաշտելու ։
15 Եւ ք ասոր համար ինքը օ Նոր ուխտին միջնորդն
է, որ ֆ իր մահը առջի ուխտին ժամանակը գոր-
ծուած յանցանքներուն քաւութեանը համար եղած
ըլլալով, ա հրաւիրուածները յաւիտենական ժա-
16 ռանգութեան խոստումները առնեն ։ Քանզի ուր
որ կտակ մը ըլլայ, հարկ է որ կտակը ընողին

ճ Թու. ԺԹ. 7, Ճ։
մ Եփե. Բ. 15։ Կող. Բ. 20։ Գլ. Ե. 16։
յ Գլ. Ժ. 1։
ն Գլ. Գ. 1։
շ Գլ. Ը. 2։
ո Գլ. Ժ. 4։
չ Գոր. Ի. 28։ Եփե. Ա. 7։ Կող. Ա. 14։ Ա Պետ. Ա. 19։ Յայտ. Ա. 5։ Ե. 9։
պ Զաք. Գ. 9։ Հմր 26, 28։ Գլ. Ժ. 10։
ջ Դան. Թ. 24։
ռ Ղև. ԺԶ. 14, 16։
ս Թուոց ԺԹ. 2, 17, Ճ։
վ Ա Պետ. Ա. 19։ Ա Յոհ. Ա. 7։ Յայտ. Ա. 5։
տ Հռով. Ա. 4։ Ա Պետ. Գ. 18։
ր Եփե. Ե. 5։ Տիտ. Բ. 14։ Գլ. Է. 27։
ց Գլ. Ա. 3։ Ժ. 22։
ւ Գլ. Զ. 1։
փ Ղուկ. Ա. 74։ Հռով. Զ. 13, 22։ Ա Պետ. Դ. 2։
ք Ա Տիմ. Բ. 5։
օ Գլ. Է. 22։ Ը. 6։ ԺԲ. 24։
ֆ Հռով. Գ. 25։ Ե. 6։ Ա Պետ. Գ. 18։
ա Գլ. Գ. 1։

17 մահը մէջը մտնէ ․ Ինչու որ բ կտակը մեռնելէն
ետև հաստատ կ՚ըլլայ ․ քանզի ընաւ վաւերակա-
նութիւն չունենար, քանի որ կտակը ընողը ողջ
18 է ։ գ Անոր համար առջի ուխտն ալ առանց արիւնի
19 չէր հաստատուեր ։ Վասն զի երբոր Մովսէս
օրէնքին ամէն պատուէրները բոլոր ժողովուրդին
պատմեց, դ ցուլերուն ու նոխազներուն արիւնը
առնելով՝ ե ջուրով ու կարմիր բուրդով և զոպա-
յով բուն գիրքին և բոլոր ժողովուրդին վրայ
20 սրսկեց ․ Եւ ըսաւ, զ Ասիկայ է ան ուխտին արիւ-
21 նը, որ Աստուած ձեզի պատուիրեց ։ Եւ է խո-
րանին վրայ ու պաշտօնին բոլոր գործիքներուն
22 վրայ նոյնպէս սրսկեց արիւնը ։ Եւ գրեթէ ամէն
բան արիւնով կը մաքրուի օրէնքին նայելով, ու
ը արիւն չթափուած թողութիւն չըլլար ։
23 Ուստի հարկ էր որ թ երկնաւոր բաներուն օրի-
նակները ասոնցմով մաքրուէին ․ բայց բուն երկնա-
24 ւորները ասոնցմէ աւելի աղէկ զոհերով ։ Քանզի
ժ Քրիստոս չէ թէ ձեռագործ սրբարանը մտաւ,
ի որ ճշմարիտին օրինակն է, հապա բուն երկինքը՝
որ հիմա մեզի համար լ Աստուծոյ առջևը ներկայա-
25 նայ ․ Ոչ թէ որ շատ անգամ իր անձը պատարագ
մատուցանէ, ինչպէս խ քահանայապետը՝ որ ամէն
տարի սրբարանը կը մտնէ իրը չեղած արիւնով ․
26 Ապա թէ ո՛չ՝ պէտք էր իրեն աշխարհի սկիզբէն
հետէ շատ անգամ չարչարուիլ ․ բայց հիմա ծ մէկ

բ Գաղ. Գ. 15։
գ Ել. ԻԴ. 6, Ճ։
դ Ել. ԻԴ. 5, 6, 8։ Ղև. ԺԶ. 14, 15, 18։
ե Ղև. ԺԴ. 4, 6, 7, 49, 51, 52։
զ Ել. ԻԴ. 8։ Մատ. ԻԶ. 28։
է Ել. ԻԹ. 12, 36։ Ղև. Ը. 15, 19։ ԺԶ. 14, 15, 16, 18, 19։
ը Ղև. ԺԷ. 11։
թ Գլ. Ը. 5։
ժ Գլ. Զ. 20։
ի Գլ. Ը. 2։
լ Հռով. Ը. 34։ Գլ. Է. 25։ Ա Յոհ. Բ. 1։
խ Հմր 7։
ծ Հմր 12։ Գլ. Է. 27։ Ժ. 10։ Ա Պետ. Գ. 18։

անգամ մը կդարերուն վերջը իր անձին պատարա-
գովը յայտնուեցաւ՝ մեղքը մէկդի ձգելու համար ։
27 Եւ ինչպէս որ մարդոց հսահմանուած է մէկ անգամ
28 մը մեռնիլ, ու ձանկէ ետքը դատաստան, Անանկ
ալ ղՔրիստոս մէկ անգամ մը ճպատարագուած մա-
տուցուեցաւ՝ մշատերուն մեղքերը վերցնելու հա-
մար, բայց երկրորդ անգամին առանց մեղքի պի-
տի յայտնուի փրկութեան համար անոնց յորոնք
անոր կը սպասեն ։

ԳԼ. Ժ.

1 Օրէնքի զոհերուն տկարութիւնը ։ 10 Քրիստոսի մարմնին մէկ անգամ պատարագուիլը 14 մշտնջենաւորապէս սրբեց մեղքերը ։ 19 Առաքեալը կը յորդորէ որ հաւատքը ամուր բռնեն համբերութեամբ և շնորհակալութեամբ ։

1 Քանզի օրէնքը նգալու բարիքներուն շշուքը, ու-
չէ թէ այն բաներուն բուն կերպարանքը ունե-
նալով, միշտ ամէն տարի մատուցուած նոյն զոհե-
րով ոերբեք չկրնար չկատարեալ ընել անոնք որ
2 կը մօտենան ։ Ապա թէ ոչ՝ պիտի չդադարէի՞ն
մատուցուելէն, պաշտօն մատուցանողները մէկ
անգամ մաքրուելէն ետեւ՝ ալ մեղքի վրայով
խղճմտանքի յանդիմանութիւն մը չունենալնուն
3 համար ։ պԲայց անոնցմով ամէն տարի մեղաց յի-
4 շատակութիւն կ'ըլլայ ։ Ինչու որ ջնոխազներուն
ու ցուլերուն արիւնը չկրնար մեղքերը վերցնել ։
5 Անոր համար իր աշխարհ մտնելու ատենը կ'ըսէ,
ռ„Զոհ ու ընծայ չուզեցիր դուն, հապա ինծի

կ աԿոր. Ժ. 11 ; Գաղ. Դ. 4 ; Եփե. Ա. 10 ;
հ Ծն. Գ. 19 ; Ժող. Գ. 20 ;
ձ բԿոր. Ե. 10 ; Յայտ. Ի. 12, 13 ;
ղ Հռով. Զ. 10 ; աՊետ. Գ. 10 ;
ճ Մատ. ԻԶ. 28 ; Հռով. Ե. 15 ;
մ աՊետ. Բ. 24 ; աՅով. Գ. 5 ;
յ Տիտ. Բ. 13 ; բՊետ. Գ. 12 ;
ն Գղ. Թ. 11 ;
շ Կող. Բ. 17 ; Գղ. Ը. 5 ; Թ. 23 ;
ո Գղ. Թ. 9 ;
չ Հմր 14 ;
պ Ղև. ԺԶ. 21 ; Գղ. Թ. 7 ;
ջ Միք. Զ. 6, 7 ; Գղ. Թ. 13 ; Հմր 11 ;
ռ Սաղ. Խ. 6, եւն ; Ծ. 8, եւն ; Եսա. Ա. 11 ; Երեմ. Զ. 20 ; Ամով. Ե. 21, 22 ;

6 մարմին մը պատրաստեցիր ։ Ողջակէզներու ու մեղ-
7 քի պատարագներու չհաւանեցար ։ Այն ատենը
ըսի, Ահա կու գամ ես, (գիրքի տոմարի մէջ ին-
ծի համար գրուած է,) քու կամքդ ընելու՝ ով
8 Աստուած ։ Վերը ըսելով թէ „Զոհ ու ընծայ և
ողջակէզներ ու մեղքի պատարագներ չուզեցիր՝ ու-
անոնց չհաւանեցար, (որոնք օրէնքին համեմատ կը
9 մատուցուին,) Ետքը կ'ըսէ, Ահա կու գամ ես
քու կամքդ ընելու՝ ով Աստուած ։ առջինը կը
10 հերքէ որ երկրորդը հաստատէ ։ սՈր այն կամ-
քովը մենք ալ սրբուեցանք՝ վՅիսուս Քրիստոսի
մարմնին մէկ անգամ պատարագուելովը ։
11 Եւ ամէն քահանայ տօր ըստ օրէ իր պաշտօնին
մէջ կը կենայ, և նոյն զոհերը շատ անգամ կը
մատուցանէ, րորոնք երբեք չեն կրնար մեղքերը
12 վերցնել ։ ցԲայց ասիկայ մէկ զոհ մը մատուցանե-
նելով մեղքերու համար, մշտնջենաւորապէս Աս-
13 տուծոյ աջ կողմը նստաւ ։ Եւ ասկէ ետեւ կը սպա-
սէ՝ ւմինչև որ իր թշնամիները իր ոտքերուն պա-
14 տուանդան դրուին ։ Ինչու որ մէկ պատարագով
մը մշտնջենաւորապէս փկատարեց սրբուածները ։
15 Բայց Հոգին Սուրբ ալ մեզի վկայութիւն կու
16 տայ ։ քանզի առաջուց ըսելէն ետեւ Թէ քԱյս է
այն ուխտը՝ որ ես անոնց հետ պիտի ընեմ այն օրե-
րէն ետքը, (կ'ըսէ Տէրը,) իմ օրէնքներս անոնց
սրտին մէջը պիտի դնեմ, ու անոնց միտքին մէջը
17 պիտի գրեմ զանոնք ։ Ետքը կ'ըսէ թէ Անոնց
մեղքերը և անոնց անօրէնութիւնները ալ պիտի
18 չյիշեմ ։ Իսկ ուր որ ասոնց թողութիւն կայ,
ալ մեղքի համար պատարագ պէտք չէ ։

ս Յոհ. ԺԷ. 19 ; Գղ. ԺԳ. 12 ;
վ Գղ. Թ. 12 ;
տ Թուոց ԻԸ. 3 ; Գղ. Է. 27 ;
ր Հմր 4 ;
ց Գղ. Ա. 3 ; Կող. Գ. 1 ;
ւ Սաղ. ՃԺ. 1 ; Գործ. Բ. 35 ; աԿոր. ԺԵ. 25 ; Գղ. Ա. 13 ;
փ Հմր 1 ;
ք Երեմ. ԼԱ. 33, 34 ; Գղ. Ը. 10, 12 ;

19 Ուրեմն՝ եղբայրնե՛ր, [հ] համարձակութիւն ունենալով [ձ] սուրբ տեղը մտնելու Յիսուսի արիւնովը,
20 [ղ] Այն նոր ու կենդանի ճամբովը՝ որ բացաւ մեզի
21 [ճ] վարագոյրին մէջէն՝ որ է իր մարմինը: Եւ [մ] մեծ քահանայ մը ունենալով [յ] Աստուծոյ տանը վրայ,
22 [ն] Մօտենանք ճշմարիտ սրտով՝ [շ] լեցուն հաւատքով, սրտերնիս [ո] չար խղճէն մաքրուած, [չ] ու մարմիննիս
23 մաքուր ջուրով լուացուած. [պ] Անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը, քանզի որ [ջ] հաւատարիմ
24 է անիկայ որ խոստացաւ: Եւ իրարու հոգ տա-
25 նինք՝ սիրոյ և բարեգործութեան գրգռելով. Եւ [ռ] մէկտեղ ժողովուիլը չթողունք, ինչպէս ոմանք սովորութիւն ունին. հապա զիրար յորդորենք, [ս] ու այնչափ աւելի՛ որչափ որ [վ] այն օրուան մօտենալը կը տեսնէք:

26 Վասն զի [տ] թէ որ ճշմարտութեան գիտութիւնը ընդունելէն ետև [ր] կամաւ մեղք գործելու ըլլանք, ալ անկէ ետև մեղքերու համար ուրիշ զոհ
27 մը չմնար. Հապա մէկ զարհուրելի սպասել մը դատաստանին, ու [ց] կրակի բարկութիւն մը [illegible]
28 [illegible], որ պիտի լափէ հակառակորդները: [ւ] Մէկը թէ որ Մովսէսին օրէնքը անարգեր, առանց ողորմութեան [փ] երկու կամ երեք վկաներով կը մեռնէր.

[հ] Հռով. ե. 2; Եփե. բ. 18. գ. 12.
[ձ] Գղ. թ. 8, 12.
[ղ] Յովհ. ժ. 9; ժդ. 6; Գղ. թ. 8.
[ճ] Գղ. թ. 3.
[մ] Գղ. դ. 14.
[յ] ա Տիմ. գ. 15.
[ն] Գղ. դ. 16.
[շ] Եփե. գ. 12; Յակոբ. ա. 6.
[ո] Գղ. թ. 15.
[չ] Եզեկ. լզ. 25.
[պ] Գղ. դ. 14.
[ջ] ա Կոր. ա. 9; ժ. 13; ա Թեսա. ե. 24; բ Թեսա. գ. 3; Գղ. ժա. 11.
[ռ] Գործ. բ. 42; Յուդ. 19.
[ս] Հռով. ժգ. 11.
[վ] Փիլ. դ. 5; բ Պետ. գ. 9, 11, 14.
[տ] բ Պետ. բ. 20, 21.
[ր] Թուոց. ժե. 30; Գղ. զ. 4.
[ց] Եզեկ. լզ. 5; Սոփ. ա. 18. գ. 8; բ Թեսա. ա. 8; Գղ. ժբ. 29.
[ւ] Գղ. բ. 2.
[փ] բ Օր. ժէ. 2, 6; ժթ. 15; Մատ. ժը. 16; Յովհ. ը. 17; բ Կոր. ժգ. 1.

29 [ք] Ալ որչափ սաստիկ պատիժ արժանի պիտի սեպուի անիկայ, որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ, և [օ] ուխտին արիւնը անմաքուր սեպեց, որ անով ինքը սրբուեցաւ, և [ֆ] շնորհաց Հոգին նա-
30 խատեց: Քանզի գիտենք անիկայ որ ըսաւ, [ա] Իմս է վրէժխնդրութիւնը, ես պիտի հատուցանեմ՝ կըսէ Տէրը. և դարձեալ՝ [բ] Տէրը պիտի դատէ իր
31 ժողովուրդը: [գ] Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը:
32 Արդ [դ] միտքերնիդ բերէք այն առջի օրերը՝ որ [ե] լուսաւորուելէն ետև [զ] շատ սաստիկ չարչարանք-
33 ներ կրեցիք. Երբեմն նախատինքներով ու վիշտերով [է] խայտառակուած, երբեմն ալ ասանկ վի-
34 ճակի մէջ եղողներուն [ը] կցորդ ըլլալով: Ինչու որ [թ] իմ կապերուս մէջ ինծի չարչարակից եղաք, ու [ժ] ձեր ստացուածքին կողոպտուիլը ուրախութեամբ ընդունեցիք, գիտնալով որ [ի] լաւագոյն և մնայուն
35 ստացուածքներ ունիք ձեզի երկինքը: Ուստի [illegible] մի՛ ձգէք ձեր վստահութիւնը, [լ] որ այն մեծ
36 վարձքի հատուցում ունի: [խ] Ինչու որ պէտք է ձեզի համբերութիւն, որ Աստուծոյ կամքը ընե-
37 լով՝ [ծ] խոստումները վայելէք. Քանզի [կ] ալ անկէ քիչ մը ատենէն [հ] այն որ գալու է, պիտի գայ, ու

[ք] Գղ. բ. 3; ժբ. 25.
[օ] ա Կոր. ժա. 29; Գղ. ժգ. 20.
[ֆ] Մատ. ժբ. 31, 32; Եփե. դ. 30.
[ա] բ Օր. լբ. 35; Հռով. ժբ. 19.
[բ] բ Օր. լբ. 36; Սաղ. ծ. 4; ճլե. 14.
[գ] Ղու. ժբ. 5.
[դ] Գաղ. գ. 4; բ Յով. 8.
[ե] Գղ. զ. 4.
[զ] Փիլ. ա. 29, 30; Կող. բ. 1.
[է] ա Կոր. դ. 9.
[ը] Փիլ. ա. 7; դ. 14; ա Թեսա. բ. 14.
[թ] Փիլ. ա. 7; բ Տիմ. ա. 16.
[ժ] Մատ. ե. 12; Գործ. ե. 41; Յակ. ա. 2.
[ի] Մատ. զ. 20; ժթ. 21; Ղու. ժբ. 33; ա Տիմ. զ. 19.
[լ] Մատ. ե. 12; ժ. 32.
[խ] Ղու. իա. 19; Գաղ. զ. 9; Գղ. ժբ. 1.
[ծ] Կող. գ. 24; Գղ. թ. 15; ա Պետ. ա. 9.
[կ] Ղու. ժը. 8; բ Պետ. գ. 9.
[հ] Ամբ. բ. 3, 4.

38 պիտի չուշանայ ։ Եւ հԱրդարը հաւատքէն պիտի
ապրի . ու թէ որ մէկը ձետ քաշուի , իմ հոգիս
39 անոր չհաճիր ։ Բայց մենք ետ չենք քաշուիր որ
կորսուինք , հապա ղկը հաւատանք որ մեր հոգին
փրկուի ։

ԳԼ. ԺԱ

1 Հաւատքը ինչ է ։ 6 Առանց հաւատքի չենք կրնար Աստուծոյ հաճելի ըլլալ ։ 7 Հաւատքին արդիւնաւոր պտուղները որ հին ատենը նահապետներուն վրայ երեւցան ։

1 Արդ հաւատքը յուսացուած բաներուն հաստա-
տութիւնն ու ճչերեւցած բաներուն ապացոյցն
2 է . Վասն զի մանով առջինները վկայութիւն ըն-
դունեցին ։
3 Հաւատքով կ'իմանանք թէ աաշխարհքը Աս-
տուծոյ խօսքովը հաստատուեցաւ , ու աներեւոյթ
բաներէն այս երեւցածները եղան ։
4 Հաւատքով բԱբէլ Կայէնէն աւելի աղէկ զոհ
մատուց Աստուծոյ , որ անով վկայուեցաւ արդար
ըլլալը . ինչու որ իր պատարագներուն վրայ Աս-
տուծմէ վկայութիւն եղաւ իրեն . և անով , թէպէտ
մեռաւ , գդեռ տակաւին կը խօսի ։
5 Հաւատքով դԵնովք երկինք փոխադրուեցաւ ,
որ մահ չտեսնէ . ու մէկ տեղ մը չէր գտնուեր ,
ինչու որ Աստուած փոխադրեց զանիկա . քանզի
անոր փոխադրուելէն առաջ վկայուեցաւ թէ Աս-
6 տուծոյ հաճելի էր ։ Բայց առանց հաւատքի ան-
կար է Աստուծոյ հաճոյ ըլլալ . վասն զի ան որ
Աստուծոյ կը մօտենայ , պէտք է որ հաւատայ թէ
Աստուած կայ , և թէ վարձահատոյց կ'ըլլայ անոնց
որ զինքը կը փնտռեն ։

հ Հռով. ա. 17 ։ Գաղ. գ. 11 ։
ձ բ Պետ. բ. 20, 21 ։
ղ Գործ. ժզ. 30, 31 ։ ա Թես. ե. 9 ։ բ Թես. բ. 13 ։
ճ Հռով. ը. 24, 25 ։ բ Կոր. դ. 18 ։ ե. 7 ։
մ Հմր 39 ։
ա Ծն. ա. 1 ։ Սաղ. լգ. 6 ։ Յոհ. ա. 3 ։ Գլ. ա. 2 ։ բ Պետ. գ. 5 ։
բ Ծն. դ. 4 ։ ա Յոհ. գ. 12 ։
գ Ծն. դ. 10 ։ Մատ. իգ. 35 ։ Գլ. ժբ. 24 ։
դ Ծն. ե. 22, 24 ։

7 Հաւատքով եՆոյ պատգամ առնելով Աս-
տուծմէ՝ դեռ չերեւցած բաներուն համար , վախնա-
լով էտապանը շինեց՝ իր տունը փրկելու համար ,
որով աշխարհս դատապարտեց , և ժառանգաւոր
եղաւ ըայն արդարութեանը՝ որ հաւատքով կ'ըլլայ ։
8 Հաւատքով թԱբրահամ երբոր կանչուեցաւ՝
մտիկ ըրաւ ան տեղը ելլելու , որն որ ժառանգու-
թիւն պիտի առնէր . և ելաւ գնաց , ու չէր գիտեր
9 թէ ուր կ'երթայ ։ Հաւատքով պանդխտացաւ
աւետեաց երկրին մէջ՝ որպէս թէ օտարութեան
մէջ , և ժվրաններու մէջ բնակեցաւ Իսահակին ու
Յակոբին հետ մէկտեղ , իորոնք իր հետը ժառան-
10 գորդ էին նոյն խոստմունքին . Ինչու որ ինքը կը
սպասէր լայն հիմերով հաստատուած քաղաքին ,
խորուն ճարտարապետը ու արարիչը Աստուած է ։
11 Հաւատքով ինքը ծՍառան ալ [illegible]
սերմը առնելու զօրութիւն ընդունեց , կև տարիքը
անցած հասակի մէջ զաւակ ծնաւ . ինչու որ հհա-
ւատարիմ սեպեց զանիկայ՝ որ խոստմունքը ըրեր
12 էր ։ Ուստի ան մէկէն ծնան , (ձան ալ մեռածի
պէս ,) շատութեան կողմէ ղերկինքի աստղերուն
պէս , ու ծովեզերքը եղած աւազին պէս առանց
համրանքի ։
13 Ասոնք ամէնն ալ հաւատքով մեռան՝ ճխոստ-
մունքները չառած , հապա մհեռուէն տեսան զա-

ե Ծն. զ. 13, 22 ։
է ա Պետ. գ. 20 ։
ը Հռով. դ. 22 ։ դ. 13 ։ Փիլ. գ. 9 ։
թ Ծն. ժբ. 1, 4 ։ Գործ. է. 2, 3, 4 ։
ժ Ծն. ժբ. 8 ։ ժգ. 3, 18 ։ ժը. 1, 9 ։
ի Գլ. զ. 17 ։
լ Գլ. ժբ. 22 ։ ժգ. 14 ։
խ Գլ. գ. 4 ։ Յայտ. իա. 2, 10 ։
ծ Ծն. ժէ. 19 ։ ժը. 11, 14 ։ իա. 2 ։
կ Տես Ղու. ա. 36 ։
հ Հռով. դ. 21 ։ Գլ. ժ. 23 ։
ձ Հռով. դ. 19 ։
ղ Ծն. իբ. 17 ։ Հռով. դ. 18 ։
ճ Հմր 39 ։
մ Հմր 27 ։ Յոհ. ը. 56 ։

նոնք ու ողջունեցին, և ն խոստովանեցան թէ ի-
րենք օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ ։
14 Քանզի անոնք որ այսանկ բաներ կը խօսին,
շ յայտնի կ'ընեն թէ մէկ գաւառ մը կը փնտռեն ։
15 Եւ յիրաւի թէ որ անիկայ յիշէին՝ ուսկից որ ե-
16 լան, ժամանակ ունէին հոն դառնալու ։ Բայց
հիմա լաւագոյն գաւառի մը կը փափաքին, այսինքն
երկնաւորին ։ Ուստի ամօթ չսեպեր Աստուած
ո անոնց Աստուածը ըսուիլը, ինչու որ չ ինքը ա-
նոնց քաղաք մը պատրաստեց ։
17 Հաւատքով պ Աբրահամ իր փորձուած ատենը
Իսահակը պատարագ մատոյց ։ և ան որ խոստ-
մունքները առած էր, իր մէկ հատիկ որդին կը
18 մատուցանէր ։ Որուն ըսուեցաւ թէ ռ Իսահակով
19 քեզի սերունդ պիտի կոչուի ։ Քանզի կը մտածէր
ս թէ Աստուած մեռելներէն ալ կարող է յարու-
ցանել ։ ուսկից օրինակով մը ընդունեց զանիկայ ։
20 Հաւատքով վ Իսահակ գալու բաներուն համար
մարգարէանալով՝ օրհնեց Յակոբը ու Եսաւը ։
21 Հաւատքով Յակոբ իր մեռնելու ատենը՝ տ Յով-
սէփին որդիներէն ամէն մէկը օրհնեց, ու ր երկր-
պագութիւն ըրաւ իր գաւազանին գլխուն վրայ ։
22 Հաւատքով ց Յովսէփ իր վախճանելու ատենը
յիշեցուց Իսրայէլի որդւոցը Եգիպտոսէն ելլելը, ու
իր ոսկորներուն համար պատուէր տուաւ ։
23 Հաւատքով՝ ւ երբոր ծնաւ Մովսէս, իր ծնողք-
ներուն ձեռքովը երեք ամիս գաղտուկ պահուեցաւ,

ն Ծն. ԻԳ. 4 ։ ԽԷ. 9 ։ Ա Մն. ԻԹ. 15 ։ Սաղ. ԼԹ. 12 ։ ՃԺԹ. 19 ։ Ա Պետ. Ա. 17 ։ Բ. 11 ։
շ Գլ. ԺԳ. 14 ։
ո Ել. Գ. 6, 15 ։ Մատ. ԻԲ. 32 ։ Գոր. Է. 32 ։
չ Փիլ. Գ. 20 ։ Գլ. ԺԳ. 14 ։
պ Ծն. ԻԲ. 1, 9 ։
ջ Յակ. Բ. 21 ։
ռ Ծն. ԻԱ. 12 ։ Հռով. Թ. 7 ։
ս Հռով. Դ. 17, 19, 21 ։
վ Ծն. ԻԷ. 27, 39 ։
տ Ծն. ԽԸ. 5, 16, 20 ։
ր Ծն. ԽԷ. 31 ։
ց Ծն. Ծ. 24, 25 ։ Ել. ԺԳ. 19 ։
ւ Ել. Բ. 2 ։ Գոր. Է. 20 ։

ինչու որ տղան գեղեցիկ տեսան, ու չվախցան
24 թագաւորին փ հրամանէն ։ Հաւատքով ք Մովսէս
երբոր մեծցաւ, չընդունեց Փարաւոնի աղջկանը
25 որդի ըսուիլը ։ օ Քանզի աւելի աղէկ սեպեց Աս-
տուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ
մեղաց ժամանակաւոր զուարճութիւնը վայելել ։
26 Եւ աւելի մեծ հարստութիւն սեպեց ֆ Քրիստոսի
նախատինքը, քան թէ Եգիպտոսի գանձերը,
ինչու որ դիտելով կը սպասէր վարձքի հատուց-
27 մանը ։ Հաւատքով Եգիպտոսը թողուց, ու
չվախցաւ թագաւորին բարկութենէն, ինչու որ
համբերեց՝ որպէս թէ Անտեսանելին կը տեսնէր ։
28 Հաւատքով զատիկը ըրաւ և արեան սրսկելը,
որ անդրանիկները սատկեցնողը իրենց չդպչի ։
29 Հաւատքով Կարմիր ծովէն անցան որպէս թէ
ցամաքէ ։ որուն փորձը ընելով Եգիպտացիները
ընկղմեցան ։
30 Հաւատքով Երիքովի պարիսպները ինկան՝
եօթը օր անոնց բոլորտիքը պտըտելով ։
31 Հաւատքով Ռախաբ պոռնիկը անհաւատնե-
րուն հետ չկորսուեցաւ, որ լրտեսները խաղաղու-
թեամբ ընդունեց էր ։
32 Եւ ալ ի՞նչ ըսեմ ։ ինչու որ ժամանակը բա-
ւական չէ որ պատմեմ Գեդէոնին ու Բարակին
և Սամփսոնին ու Յեփթայէին և Դաւիթին
ու Սամուէլին և ուրիշ մարգարէներուն համար ։
33 Որոնք հաւատքով թագաւորութիւններու յաղ-

փ Ել. Ա. 16, 22 ։
ք Ել. Բ. 10, 11 ։
օ Սաղ. ՁԳ. 10 ։
ֆ Գլ. ԺԳ. 13 ։
Գլ. Ժ. 35 ։
Ել. Ժ. 28, 29 ։ ԺԲ. 37 ։ ԺԳ. 17, 18 ։
Հմր 13 ։
Ել. ԺԲ. 21, ևն ։
Ել. ԺԴ. 22, 29 ։
Յես. Զ. 20 ։
Յես. Զ. 23 ։ Յակ. Բ. 25 ։
Յես. Բ. 1 ։
Դատ. Զ. 11 ։
Դատ. Դ. 6 ։
Դատ. ԺԳ. 24 ։
Դատ. ԺԱ. 1 ։ ԺԲ. 7 ։
Թագ. ԺԶ. 1, 13 ։ ԺԷ. 45 ։
Ա Թագ. Ա. 20 ։ ԺԲ. 20 ։

թեցին [զ], արդարութիւն գործեցին, [է] խոստմունք-
ներու հասան, [ը] առիւծներու բերանները գոցեցին,
34 [թ] Կրակի զօրութիւնը մարեցին, [ժ] սուրի բերնէ ա-
զատեցան, [ի] տկարութենէ ուժովցան, պատերազ-
մի մէջ զօրաւոր եղան, [լ] օտարներու բանակներ
35 ցրուեցին, [խ] Կիներ իրենց մեռելները ընդունե-
ցին յարութիւն առած. ոմանք [ծ] չարչարուեցան
և չընդունեցին ազատութիւնը, որ լաւագոյն յա-
36 րութեան հասնին. Ուրիշներ ալ նախատինքներու
ու ծեծերու, նաև [կ] կապերու ու բանտերու փորձը
37 առին. [հ] Քարկոծուեցան, սղոցուեցան, փորձան-
քի մէջ ինկան, սրով սպաննուելով մեռան, [ձ] ոչխա-
րի մորթերով ու այծի մորթերով [ղ] պտըտեցան,
կարօտութիւն քաշելով, նեղը իյնալով, չարչա-
38 րուելով, (Որ անոնց արժանի չէր աշխարհս,)
անապատներու ու լեռներու և այրերու ու երկրի
[ճ] խոռոչներու մէջ մոլորելով։
39 Ու ասոնք ամէնը հաւատքով [մ] վկայուած՝ խոստ-
40 մունքը չառին. Քանզի Աստուած [յ] մեզի համար
աւելի աղէկ բան մը նախապատրաստեց, որ ա-
նոնք առանց մեզի [ն] չկատարուին.

է բ Թագ. է. 11, ևն ։
ը Դատ. ժդ. 5, 6 ։ ա Թագ. ժէ. 34, 35 ։ Դան. զ. 22 ։
թ Դան. գ. 25 ։
ժ ա Թագ. ի. 1 ։ գ Թագ. ժթ. 8 ։ դ Թագ. զ. 16 ։
ի դ Թագ. ի. 7, ևն ։ Յոբ. իբ. 10 ։ Սաղ. զ. 8 ։
լ Դատ. ժե. 8, 15 ։ ա Թագ. ժդ. 13, ևն ։ ժէ. 51, 52 ։ բ Թագ. ը. 1, ևն ։
խ գ Թագ. ժէ. 22 ։ դ Թագ. դ. 35 ։
ծ Գոր. իբ. 25 ։
կ Ծն. լթ. 20 ։ Երեմ. ի. 2 ։ լէ. 15 ։
հ գ Թագ. իա. 13 ։ բ Մն. իդ. 21 ։ Գոր. է. 58 ։ ժդ. 18 ։
ձ դ Թագ. ա. 8 ։ Մատ. գ. 4 ։
ղ Զաք. ժգ. 4 ։
ճ գ Թագ. ժը. 4 ։ ժթ. 9 ։
մ Հմր 2, 13 ։
յ Գլ. է. 22 ։ ը. 6 ։
ն Գլ. ե. 9 ։ ժբ. 23 ։ Յայտ. զ. 11 ։

ԳԼ. ԺԲ

1 Առաքեալը կը յորդորէ հաստատուն հաւատք՝ համբերութիւն և աստուածպաշտութիւն ունենալու. 22 կը ցուցնէ թէ նոր ուխտը հինէն գերազանց է ։

1 Ասոր համար մենք ալ՝ որ այսչափ վկաներուն [*] բազմու-
թիւնը մեր բոլորտիքը պատած ունինք, [ա] ամէն
ծանրութիւնը մեր վրայէն մէկդի ձգենք և դիւ-
րաւ պաշարող մեղքը, ու [բ] համբերութիւնով
[գ] վազենք մեր առջևը դրուած ասպարէզի ընթաց-
2 քը. Յիսուսի նայինք՝ մեր հաւատքին առաջնոր-
դին ու կատարողին. [դ] որ ինքը անոր ուրախութեա-
նը համար՝ [ե] որ իր առջևը կեցած էր, խաչը յանձն
առաւ, ամօթը արհամարհեց, ու Աստուծոյ աթո-
ռին աջ կողմը նստաւ։
3 [զ] Արդ մի՛տք բերէք անիկայ, որ այսանկ համբե-
րեց մեղաւորներուն իրեն դէմ հակառակ խօսելուն,
[է] որ չըլլայ թէ ձեր անձովը յոգնիք ու թուլնաք։
4 [ը] Տակաւին արիւն թափելու չափ պատերազմելով
5 հակառակ չկեցաք մեղքին. Ու մոռցաք այն յոր-
դորանքը որ ձեր հետը կը խօսի որպէս թէ որդի-
ներու հետ, [թ] Որդեակ իմ՝ Տէրոջը խրատը մի՛ ան-
արգեր, ու անկէ յանդիմանուելով՝ մի՛ թուլնար։
6 Վասն զի [ժ] Տէրը իր սիրածը կը խրատէ, և կը
7 ծեծէ ամէն որդին՝ որ ինքը կ՚ընդունի։ [ի] Եթէ որ
խրատի համբերէք, Աստուած ձեզի հետ որպէս
թէ որդիներու հետ կը վարուի. քանզի ո՞ր որդին
8 է ան՝ որ հայրը չպատժեր զանիկայ։ Իսկ թէ որ
դուք առանց խրատի ըլլաք, [լ] որուն ամէնը մասնա-
կից եղան, ուրեմն խորթ էք դուք՝ ու չէ թէ որ-
9 դիներ։ Նաև մեր մարմնաւոր հայրերը մեզ խրա-

* Յուն. ամպը
ա Կող. գ. 8 ։ ա Պետ. բ. 1 ։
բ Հռով. ժբ. 12 ։ Գլ. ժ. 36 ։
գ ա Կոր. թ. 24 ։ Փիլ. գ. 13, 14 ։
դ Ղուկ. իդ. 26 ։ Փիլ. բ. 8, ևն ։ ա Պետ. ա. 11 ։
ե Սաղ. ճժ. 1 ։ Գլ. ա. 3, 13 ։ ը. 1 ։ ա Պետ. գ. 22 ։
զ Մատ. ժ. 24, 25 ։ Յովհ. ժե. 20 ։
է Գաղ. զ. 9 ։
ը ա Կոր. ժ. 13 ։ Գլ. ժ. 32, 33, 34 ։
թ Յոբ. ե. 17 ։ Առակ. գ. 11 ։
ժ Սաղ. ղգ. 12 ։ ճժթ. 75 ։ Առակ. գ. 12 ։ Յակ. ա. 12 ։ Յայտ. գ. 19 ։
ի բ Օր. ը. 5 ։ բ Թագ. է. 14 ։ Առակ. ժգ. 24 ։ ժթ. 18 ։ իգ. 13 ։
լ Սաղ. հգ. 14 ։ ա Պետ. ե. 9 ։

տիչ ունենալով՝ անոնցմէ կ'ամչնայինք . չէ՞ որ
ալ աւելի պիտի հնազանդինք հոգիներուն Հօրը
10 ու ապրինք : Ինչու որ անոնք քիչ օրեր Դեռ կը
խրատէին իրենց հաճոյ երեւցածին պէս , բայց անի-
կայ մեր օգուտին համար՝ որ իր սրբութեանը հա-
11 ղորդ ըլլանք : Իսկ ամէն խրատ նոյն ատենը
ուրախարար չթուիր , հապա տրտմական , բայց
ետքը արդարութեան խաղաղարար պտուղը կը
հատուցանէ անով վարժուողներուն :
12 Ուստի թուլցած ձեռքերը ու տկար ծունկերը
13 հաստատեցէք . Ու շիտակ ճամբաներ բրէք ձեր
ոտքերուն , որ չըլլայ թէ ան որ կաղ է *խոտորի ,
14 հապա մանաւանդ բժշկուի : Խաղաղութեան
ետեւէ եղէք ամենուն հետ՝ և սրբութեան , որ
15 առանց անոր մէկը պիտի չտեսնէ Տէրը : Զգու-
շացէք , չըլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ
մնայ . չըլլայ որ դառնութեան արմատ մը վեր
ելնելով՝ ձեզ նեղէ , ու անով շատերը պղծուին .
16 Չըլլայ որ մէկը պոռնիկ ըլլայ , կամ անսուրբ՝
Եսաւին պէս , որ կերակուրի մը համար իր անդ-
17 րանկութիւնը ծախեց : Վասնզի գիտէք որ թէ-
պէտ ետքը ուզեց օրհնութիւնը ժառանգել , բայց
մերժուեցաւ . Ինչու որ ապաշխարութեան տեղ
չգտաւ հօրը վրայ , թէպէտեւ արցունքով խնդրեց
զանիկայ :

ի Թուոց . ժգ . 22 ; իէ . 16 ; Յոբ . ժբ . 10 ; Ժող . ժբ . 7 ; Եսա . խբ . 5 ; ծէ . 16 ; Զաք . ժբ . 1 ;
ծ Ղև . ժա . 44 ; ժթ . 2 ; ա Պետ . ա . 15 , 16 ;
կ Յակ . գ . 18 ;
հ Յոբ . դ . 3 , 4 ; Եսա . լե . 3 ;
ձ Առակ . դ . 26 , 27 ;
* Կամ գլորի ;
ղ Գաղ . զ . 1 ;
ճ Սաղ . լդ . 14 ; Հռով . ժբ . 18 ; ժդ . 19 ; բ Տիմ . բ . 22 ;
մ Մատ . ե . 8 ; բ Կոր . է . 1 ; Եփե . ե . 5 ;
յ բ Կոր . զ . 1 ; Գաղ . ե . 4 ;
ն բ Օր . իթ . 18 ; Գլ . գ . 12 ;
շ Եփե . ե . 3 ; Կող . գ . 5 ; ա Թես . դ . 3 ;
ո Ծն . իե . 33 ;
չ Ծն . իէ . 34 , 36 , 38 ;
պ Գլ . զ . 6 ;

18 Ինչու որ դուք մօտեցած չէք շօշափելի լերա-
նը , որ կրակով կը վառէր , ոչ ալ մէգին ու
19 խաւարին ու մրրիկին , Ու փողին ձայնին ,
ու խօսքերուն ձայնին , որ անիկայ լսողները
աղաչեցին որ մէյմըն ալ ան խօսքը չըսուի
20 իրենց . Ինչու որ չէին կրնար տանիլ ան հրամա-
նին , Թէ որ գազան մըն ալ լեռանը դպչի՝ պի-
21 տի քարկոծուի . Ու այնպէս ահագին էր ան
երեւոյթը՝ որ Մովսէս ըսաւ , Սաստիկ կը վախնամ
22 ու կը դողամ : Բայց դուք Սիոն լեռանը մօտե-
ցեր էք՝ ու կենդանի Աստուծոյ քաղաքին՝ երկնա-
ւոր Երուսաղէմին , և բիւրաւոր հրեշտակներուն ,
23 Ու երկինքը գրուած անդրանիկներուն հանդի-
սաւոր ժողովին ու եկեղեցիին , և Աստուծոյ՝ որ
ամենուն Դատաւորն է , ու արդարոց հոգիներուն՝
24 որ կատարուեր են , Ու Յիսուսի՝ որ նոր ուխ-
տին միջնորդն է , ու սրսկուելու արեանը՝ որ
Աբելին արիւնէն աւելի աղէկ կը խօսի :
25 Զգուշացէք՝ չըլլայ որ մերժէք զանիկայ որ ձեզի
կը խօսի . Վասն զի թէ որ անոնք երկրի վրայ
Աստուծոյ պատգամները խօսողը մերժելով չազա-
տեցան , որչափ աւելի մենք՝ թէ որ երկինքէն
26 խօսողէն երես դարձընենք . Որ անոր ձայնը
ան ատենը երկիրը շարժեց , և հիմա խոստա-
ցեր է ու կ'ըսէ , Նորէն պիտի շարժեմ՝ չէ թէ

ջ Ել . ժթ . 12 , 18 , 19 ; ի . 18 ; բ Օր . դ . 11 ; ե . 22 ; Հռով . զ . 14 ; ը . 15 ; բ Տիմ . ա . 7 ;
ռ Ել . ի . 19 ; բ Օր . ե . 5 , 25 ; ժբ . 16 ;
ս Ել . ժթ . 13 ;
վ Ել . ժթ . 16 ;
տ Գաղ . դ . 26 ; Յայտ . գ . 12 ; իա . 2 , 10 ;
ր Փիլ . դ . 20 ;
ց բ Օր . լգ . 2 ; Սաղ . կը . 17 ; Յուդ . 14 ;
ւ Ղուկ . ժ . 20 ; Փիլ . դ . 3 ; Յայտ . ժգ . 8 ;
փ Ել . դ . 22 ; Յակ . ա . 18 ; Յայտ . ժդ . 4 ;
ք Ծն . ժը . 25 ; Սաղ . ղդ . 2 ;
և Փիլ . գ . 12 ; Գլ . ժա . 40 ;
օ Գլ . ը . 6 ; թ . 15 ;
ֆ ա Պետ . ա . 2 ;
ա Ծն . դ . 10 ; Գլ . ժա . 4 ;
բ Գլ . բ . 2 , 3 ; գ . 17 ; ժ . 28 , 29 ;
գ Ել . ժթ . 18 ;
դ Անգ . բ . 6 ;

27 միայն երկիրը՝ հապա նաև երկինքը ։ Իսկ այն
«Նորէն» խօսքը կը ցուցնէ շարժուած բաներուն
յեղափոխութիւնը շինուած բաներու պէս, որ
28 անշարժ բաները հաստատուն մնան ։ Ուստի ան-
շարժ թագաւորութիւնը առած ըլլալով՝ ամուր
բռնենք այն շնորհքը, որով Աստուած պաշտենք
հաճոյական կերպով, ակնածութեամբ և բարեպաշ-
29 տութեամբ. ճ Ինչու որ մեր Աստուածը մաշող կրակ է։

ԳԼ. ԺԳ

1 Զանազան յորդորանքներ կ'ընէ սէր ունենալու վրայով, 4 պարկեշտ վարմունք ունենալու, 5 ագահութենէ ետ կենալու, 7 Աստուծոյ խօսքին քարոզիչները պատուելու, 9 օտար վարդապետութիւններէ հեռանալու ։ 10 Քրիստոսը դաւանելու, 16 ողորմութիւն տալու 17 և առաջնորդներուն հնազանդելու վրայով. 18 Նաև կը խնդրէ իրեն համար աղօթք ընել ։ 20 Վերջաբանութիւն ։

1 ա Եղբայրսիրութիւնը ձեր մէջ հաստատ մնայ ։
2 բ Հիւրասիրութիւնը մի՛ մոռնաք, գ ինչու
որ անով ոմանք հրեշտակներ ընդունեցին չգիտնա-
3 լով ։ դ Միտքերնիդ ըլլան կապուածները, որպէս
թէ անոնց հետ դուք ալ կապուած էք, և չարչա-
րուածները, որպէս թէ դուք ալ մարմին ունեցող
4 էք ։ Ամուսնութիւնը բոլորովին պատուական է,
ու անկողինը անարատ է. ե բայց պոռնիկները ու
5 շնացողները Աստուած պիտի դատէ ։ Վարքերնիդ
արծաթասէր չըլլայ, զ բաւական սեպեցէք որչափ

ղ Սաղ. ճբ. 26 ։ Մատ. իդ. 35 ։ բ Պետ. գ. 10 ։ Յայտ. իա. 1 ։
ճ Ել. իդ. 17 ։ բ Օր. դ. 24 ։ թ. 3 ։ Սաղ. ծ. 3 ։ ղէ. 3 ։ Ես. կզ. 15 ։ բ Թես. ա. 8 ։ Գլ. ժ. 27 ։
ա Հռով. ժբ. 10 ։ ա Թես. դ. 9 ։ ա Պետ. ա. 22 ։ բ. 17 ։ դ. 8 ։ գ. 8 ։ բ Պետ. ա. 7 ։ ա Յոհ. գ. 11, [illegible] ։ դ. 7, 20, 21 ։
բ Մատ. իե. 35 ։ Հռով. ժբ. 13 ։ ա Տիմ. գ. 2 ։ ա Պետ. դ. 9 ։
գ Ծն. ժը. 3 ։ ժթ. 2 ։
դ Մատ. իե. 36 ։ Հռով. ժբ. 15 ։ ա Կոր. ժբ. 26 ։ Կող. դ. 18 ։ ա Պետ. գ. 8 ։
ե ա Կոր. զ. 9 ։ Գաղ. ե. 19, 21 ։ Եփե. ե. 5 ։ Կող. գ. 5, 6 ։ Յայտ. իբ. 15 ։
զ Մատ. զ. 25, 34 ։ Փիլ. դ. 11, 12 ։ ա Տիմ. զ. 6, 8 ։

բան որ ձեռքերնիդ կայ. ինչու որ ինքը զրուցեց
թէ է Բնաւ քեզ պիտի չթողում, ու բնաւ քեզ
6 երեսէ պիտի չձգեմ ։ Անանկ որ համարձակ ըլլանք
ըսելու, ը Տէրը իմ օգնականս է, ու ես պիտի
7 չվախնամ, մարդը ինծի ի՞նչ պիտի ընէ ։ թ Յի-
շեցէ՛ք ձեր առաջնորդները՝ որ Աստուծոյ խօսքը
ձեզի խօսեցան, և անոնց վարմունքին վախճանին
8 նայելով՝ ժ իրենց հաւատքին նմանող եղէք ։ ի Յի-
սուս Քրիստոս նոյն է երէկ ու այսօր և յաւի-
տեան ։

9 լ Ալերպ կերպ և օտարաձայն ուսմունքներով մի՛
տարուբերիք. քանզի աղէկ է որ սիրտը շնորհքով
հաստատուի խ ու չէ թէ կերակուրներով. որ ա-
նոնցմով օգուտ մը չունեցան անոնք որ անանկ գա-
10 ցին ։ ծ Սեղան մը ունինք մենք՝ ուսկից իշխանու-
թիւն չունին ուտելու անոնք որ խորանին ծառա-
11 յութիւն կ'ընեն ։ կ Քանզի որ անասուններուն
արիւնը որ սուրբ տեղը կը տարուի մեղաց համար
քահանայապետին ձեռքովը, անոնց մարմինները
12 բանակէն դուրս կ'այրուին ։ Ուստի Յիսուս ալ
իր արիւնովը ժողովուրդը սրբելու համար, հ դռնէն
13 դուրս չարչարուեցաւ ։ Ուրեմն ելե՛ք իրեն ելլենք
բանակէն դուրս, ձ վրանիս առնելով անոր նախա-
14 տինքը ։ ղ Ինչու որ մենք հոս մնայուն քաղաք չու-
15 նինք, հապա հանդերձեալը կը փնտռենք ։ ճ Ուս-

է Ծն. իը. 15 ։ բ Օր. լա. 6, 8 ։ Յես. ա. 5 ։ ա Մն. իը. 20 ։ Սաղ. լէ. 25 ։
ը Սաղ. իէ. 1 ։ ծզ. 4, 11, 12 ։ ճժը. 6 ։
թ Հմր 17 ։
ժ Գլ. զ. 12 ։
ի Յոհ. ը. 58 ։ Գլ. ա. 12 ։ Յայտ. ա. 4 ։
լ Եփե. դ. 14 ։ ե. 6 ։ Կող. բ. 4, 8 ։ ա Յոհ. դ. 1 ։
խ Հռով. ժդ. 17 ։ Կող. բ. 16 ։ ա Տիմ. դ. 3 ։
ծ ա Կոր. թ. 13 ։ ժ. 18 ։
կ Ել. իթ. 14 ։ Ղև. դ. 11, 12, 21 ։ զ. 30 ։ թ. 11 ։ ժզ. 27 ։ Թու. ժթ. 3 ։
հ Յոհ. ժթ. 17, 18 ։ Գոր. է. 57 ։
ձ Գլ. ժա. 26 ։ ա Պետ. դ. 14 ։
ղ Միք. բ. 10 ։ Փիլ. գ. 20 ։ Գլ. ժա. 10, 16 ։ ժբ. 22 ։
ճ Եփե. ե. 20 ։ ա Պետ. բ. 5 ։

տի անոր ձեռքովը ամէն ատեն Աստուծոյ օրհնու-
թեան պատարագ մատուցանենք , այսինքն մեր
շրթունքներուն պտուղը՝ որ իր անունը կը դաւա-
16 նին ։ Իսկ բարերարութիւնը ու
հաղորդակցութիւնը մի մոռնաք . ինչու որ
Աստուած անանկ պատարագներուն կը հաճի ։
17 Ձեր առաջնորդներուն մտիկ ըրէք ու անոնց
հպատակ կեցէք , ինչու որ անոնք ձեր հոգիներ-
ուն համար կը հսկեն , որպէս թէ հաշիւ պիտի
տան . որ խնդութիւնով ընեն ան գործը , և չէ
թէ հառաչելով , որ ան ձեզի օգտակար չէ ։
18 Մեզի համար աղօթք ըրէք , ինչու որ մենք հա-
մոզուած ենք թէ աղէկ խղճմտանք ունինք , և ա-
մէն բանի մէջ կ'ուզենք աղէկ վարմունք ունենալ ։
19 Ու մանաւանդ կ'աղաչեմ որ աս ընէք , որ աւելի
շուտով ձեզի դառնամ ։
20 Ու խաղաղութեան Աստուածը՝ որ մեռելնե-
րէն յարուց մեր Տէր Յիսուսը , որ յաւիտենա-
կան ուխտին արիւնովը ոչխարներուն մեծ Հովիւն
21 է , Ձեզ ամէն բարի գործի մէջ հաստատէ իր
կամքը ընելու , և ձեր մէջը իր առջեւը հաճոյ ե-

Ղև . է . 12 ; Սաղ . ծ . 14 , 23 ; կթ . 30 , 31 ; ճէ . 22 ; ճժզ . 17 ։
Ովս . ժդ . 2 ։
Հռով . ժբ . 13 ։
բ Կոր . թ . 12 ; Փիլ . դ . 18 ; Գղ . զ . 10 ։
Փիլ . բ . 29 ; ա Թես . ե . 12 ; ա Տիմ . ե . 17 ; Հմր 7 ։
Եզեկ . գ . 17 ; լգ . 2 , 7 ; Գոր . ի . 26 , 28 ։
Հռով . ժե . 30 ; Եփե . զ . 19 ; Կող . դ . 3 ; ա Թես . ե . 25 ; բ Թես . գ . 1 ։
Գոր . իգ . 1 ; իդ . 16 ; բ Կոր . ա . 12 ։
Փիլեմ . 22 ։
Հռով . ժե . 33 ; ա Թես . ե . 23 ։
Գոր . բ . 24 , 32 ; Հռով . դ . 24 ; ը . 11 ; ա Կոր . զ . 14 ; ժե . 15 ; բ Կոր . դ . 14 ; Գաղ . ա . 1 ; Կող . բ . 12 ; ա Թես . ա . 10 ; ա Պետ . ա . 21 ։
Զաք . թ . 11 ; Գղ . ժ . 29 ։
Ես . խ . 11 ; Եզեկ . լդ . 23 ; լէ . 24 ; Յով . ժ . 11 , 14 ; ա Պետ . բ . 25 ; ե . 4 ։
բ Թես . բ . 16 ; ա Պետ . ե . 10 ։
Փիլ . բ . 13 ։

ղածը ընէ Յիսուս Քրիստոսի ձեռքովը . որուն
փառք յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։
22 Կ'աղաչեմ ձեզի՝ եղբայրներ՝ այս յորդորական
խօսքիս համբերել . ինչու որ համառօտաբար գրե-
23 ցի ձեզի ։ Գիտցէք որ մեր եղբայրը Տիմոթէոս
արձակուած է , որուն հետ՝ թէ որ շուտով գայ՝
24 պիտի տեսնեմ ձեզ ։ Բարեւ ըրէք ձեր բոլոր ա-
ռաջնորդներուն , ու բոլոր սուրբերուն . ձեզի
25 բարեւ կ'ընեն անոնք որ Իտալիայէն են ։ Շնորհ-
քը ձեր ամենուն հետը ըլլայ ։ Ամէն ։

Գաղ . ա . 5 ; բ Տիմ . դ . 18 ; Յայտ . ա . 6 ։
ա Պետ . ե . 12 ։
ա Թես . գ . 2 ։
Հմր 7 , 17 ։
Տիտ . գ . 15 ։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՅԱԿՈԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Պէտք է որ ուրախ ըլլանք նեղութեան ժամանակ , 5 Աստուծմէ համբերութիւն խնդրենք , 13 և մեր փորձութիւններուն մէջ չըսենք թէ մեր տկարութեանը կամ մեղքին պատճառը Աստուած է , 19 այլ մանաւանդ խօսքին մտիկ ընողներ ըլլանք , անոր վրայով խորհինք և զանիկայ 'ի գործ դնենք . 26 եթէ ոչ՝ կրնանք կրօնաւոր երեւնալ , բայց անկարելի է որ ճշմարտապէս անանկ ըլլանք ։

1 ա Յակոբոս՝ բ Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստո-
սի ծառան , գ տասներկու ցեղերուն՝ դ որ
ամէն կողմ ցրուած էք , ողջոյն ։
2 Ո՛վ եղբայրներ՝ ե բոլորովին ուրախութեան արժանի

ա Գոր . ժբ . 17 ; ժե . 13 ; Գաղ . ա . 19 ; բ . 19 ; Յուդ . 1 ։
բ Տիտ . ա . 1 ։
գ Գոր . իզ . 7 ։
դ բ Օր . լբ . 26 ; Յով . է . 35 ; Գոր . բ . 5 ; ը . 1 ; ա Պետ . ա . 1 ։
ե Մատ . ե . 12 ; Գոր . ե . 41 ; Եբր . ժ . 34 ; ա Պետ . դ . 13 , 16 ։

բան սեպեցէք , ղ երբոր կերպ կերպ փորձանքներու
3 մէջ կ՚իյնաք , է Գիտնալով որ ձեր հաւատքին
4 փորձառութիւնը համբերութիւն կը գործէ : Բայց
համբերութիւնը կատարեալ գործ թող ունենայ ,
որ կատարեալ ու ամբողջ ըլլաք , ու բանի մը պակ-
սութիւն չունենաք :
5 ը Հապա թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ պակ-
սած ըլլայ , թ թող խնդրէ Աստուծմէ՝ որ ամենուն
առատապէս կու տայ ու չնախատեր , ժ և անոր
6 պիտի տրուի : ի Միայն թէ հաւատքով թող
խնդրէ ու չերկմտի , վասն զի ան որ երկմիտ է ,
ծովուն հողմակոծեալ ու տատանեալ ալիքներուն
7 նման է . Ան մարդը թող չկարծէ՝ որ Տէրոջմէ բան
8 մը պիտի առնէ . լ Երկմիտ մարդը անհաստատ է
իր բոլոր ճամբաներուն մէջ :
9 Խոնարհ եղբայրը իր բարձրութեանը վրայ թող
10 պարծենայ , Իսկ ան որ հարուստ է , իր խոնարհու-
թեանը վրայ , ինչու որ խ անիկայ խոտի ծաղիկի
11 մը պէս պիտի անցնի . Քանզի արեւը սաստիկ տա-
քութիւնով մը կը ծագի ու կը ցամքեցնէ խոտը ,
և անոր ծաղիկը կը թափի , ու անոր երեւյթին
գեղեցկութիւնն ալ կը կորսուի . անանկ ալ հա-
րուստը իր ճամբաներուն մէջ պիտի թառամի :
12 ծ Երանելի է ան մարդը որ փորձութեան կը
համբերէ . ինչու որ եթէ փորձուելով ընտիր գըտ-

ղ ա Պետ. ա. 6 :
է Հռով. ե. 3 :
ը Գ Թագ. գ. 9 , 11 , 12 : Առակ. բ. 3 :
թ Մատ. է. 7 : իա. 22 : Մար. ժա. 24 : Ղուկ. ժա. 9 : Յոհ. ժդ. 13 : ժե. 7 : ժզ. 23 :
ժ Երեմ. իթ. 12 : ա Յոհ. ե. 14 , 15 :
ի Մար. ժա. 24 : ա Տիմ. բ. 8 :
լ Յակ. դ. 8 :
խ Յոբ. ժդ. 2 : Սաղ. լէ. 2 : ղ. 5 , 6 : ճբ. 11 : ճդ. 15 : Ես. խ. 6 : ա Կոր. է. 31 : Յակ. դ. 14 : ա Պետ. ա. 24 : ա Յոհ. բ. 17 :
ծ Յոբ. ե. 17 : Առակ. գ. 11 , 12 : Եբր. ժբ. 5 : Յայտ. գ. 19 :

նուի , կ կենաց պսակը պիտի առնէ , հ որն որ Տէրը
13 զինքը սիրողներուն խոստացաւ : Չըլլայ որ մէկը
որ փորձութեան մէջ է՝ ըսէ թէ Աստուծմէ կը
փորձուիմ . ինչու որ Աստուած չար բաներով չը-
14 փորձուիր , ո՛չ ալ ինքը մէկը կը փորձէ : Սա-
կայն ամէն մէկը կը փորձուի՝ իր ցանկութիւններէն
15 հրապուրուած ու խաբուած . ձ Անկէ ետև ցանկու-
թիւնը յղանալով , մեղք կը ծնանի . և մեղքը որ
16 կատարուի , ղ մահ կը ծնանի : Մի՛ խաբուիք իմ
17 սիրելի՛ եղբայրներս . ճ Ամէն բարի տուրք ու ամէն
կատարեալ պարգև վերէն է , և լուսոց Հօրմէն
կ՚իջնէ , մ որուն մէջ ընաւ փոփոխութիւն կամ
18 դառնալու շուք մը չկայ : յ Իր ուզելովը մեզ
ծնաւ ճշմարտութեան խօսքովը , ն որ մենք իր
19 ստեղծածներուն շ երախայրի մը ըլլանք : Ուստի
իմ սիրելի՛ եղբայրներս , ո ամէն մարդ թող շուտ
ըլլայ լսելու , չ ու ծանր՝ խօսելու , պ և ծանր՝
20 բարկանալու . Ինչու որ մարդուն բարկութիւնը
Աստուծոյ արդարութիւնը չգործեր :
21 ջ Ուստի ամէն աղտեղութիւնը ու չարութեան
առաւելութիւնը մէկդի ձգելով , հեզութեամբ
ընդունեցէ՛ք ձեր մէջը սերմանուած խօսքը , ռ որ
կրնայ ձեր հոգիները փրկել :
22 ս Բայց խօսքը կատարողնե՛ր եղէք , և ոչ թէ

կ ա Կոր. թ. 25 : բ Տիմ. դ. 8 : Յակ. բ. 5 : ա Պետ. ե. 4 : Յայտ. բ. 10 :
հ Մատ. ժ. 22 : ժթ. 28 , 29 : Յակ. բ. 5 :
ձ Յոբ. ժե. 35 : Սաղ. է. 14 :
ղ Հռով. զ. 21 , 23 :
ճ Յոհ. գ. 27 : ա Կոր. դ. 7 :
մ Թուոց. իգ. 19 : ա Թագ. ժե. 29 : Մաղ. գ. 6 : Հռով. ժա. 29 :
յ Յոհ. ա. 13 : գ. 3 : ա Կոր. դ. 15 : ա Պետ. ա. 23 :
ն Եփես. ա. 12 :
շ Երեմ. բ. 3 : Յայտ. ժդ. 4 :
ո Ժող. ե. 1 :
չ Առակ. ժ. 19 : ժէ. 27 : Ժող. ե. 2 :
պ Առակ. ժդ. 17 : ժզ. 32 : Ժող. է. 9 :
ջ Կող. գ. 8 : ա Պետ. բ. 1 :
ռ Գործ. ժգ. 26 : Հռով. ա. 16 : ա Կոր. ժե. 2 : Եփես. ա. 13 : Տիտ. բ. 11 : Եբր. բ. 3 : ա Պետ. ա. 9 :
ս Մատ. է. 21 : Ղուկ. զ. 46 : ժա. 28 : Հռով. բ. 13 : ա Յոհ. գ. 7 :

23 միայն լսողներ՝ ինքզինքնիդ խաբելով : Ինչու որ
եթէ մէկը միայն լսող ըլլայ խօսքին ու կատարող
չըլլայ , անիկայ նման է մարդու մը՝ որ հայելիի մէջ
24 աչքերը անկած իր բնական երեսը կը դիտէ . Ին-
չու որ դիտելով տեսաւ ինքզինքը ու անցաւ գնաց ,
25 և շուտ մը մոռցաւ թէ ինչպիսի մէկ մըն էր : Բայց
ան որ ազատութեան կատարեալ օրէնքին աչք
տնկելով կը նայի , և անոր մէջը կը կենայ , ա-
նիկայ խօսքը լսող ու մոռցող չըլլալով՝ հապա
գործը կատարող , երանելի պիտի ըլլայ իր
26 կատարելուն մէջ : Թէ որ մէկը զինքը կրօնա-
ւոր կը սեպէ ու իր լեզուին սանձ չդներ , հա-
պա իր սիրտը կը խաբէ , անանկին կրօնասի-
27 րութիւնը փուճ է : Աստուծոյ ու Հօրը քով
մաքուր ու անարատ կրօնասիրութիւնը աս է ,
Որբերուն ու որբևայրիներուն տես երթալ իրենց
նեղութեան ատենը , ու անձը անարատ պահել
աշխարհէն :

ԳԼ. Բ

1 Քրիստոնէական կրօնքին անվայել բան է հարուստ եղբայր-
ները պատուել և աղքատները անարգել : 13 Պարտինք
իրարու վրայ սէր ունենալ և գթած ըլլալ : 14 Պէտք չէ
պարծենալ հաւատքին վրայ՝ երբոր առանց գործոց է . 17
վասն զի ան հաւատքը մեռած հաւատք է , 19 դևերու հա-
ւատք է , 21 և չէ թէ Աբրահամին 25 և Ռախաբին հա-
ւատքը :

1 Իմ եղբայրներս՝ չըլլայ որ աչառութեամբ բռնէք
մեր Տէր Յիսուս Քրիստոսի հաւատքը , որ
2 փառաց Տէրն է : Քանզի թէ որ ձեր ժողով-

Ժ Ղուկ. զ. 47 ; Ճ ; Տես Գլ. բ. 14 ; Ճ ;
Ի Գլ. բ. 12 ;
Լ Ա Կոր. գ. 18 ;
Խ Յոհ. ժգ. 17 ;
Ծ Սաղ. լզ. 13 ; լթ. 1 ; Ա Պետ. գ. 10 ;
Կ Եսայ. ա. 16 , 17 ; ծբ. 6 ; 7 ; Մատ. իե. 36 ;
Հ Հռով. ժբ. 2 ; Գլ. դ. 4 ; Ա Յոհ. ե. 18 ;
Ա Ղև. ժթ. 15 ; Բ Օր. ա. 17 ; ժզ. 19 ; Առակ. իդ. 23 ; իը. 21 ; Մատ. իբ. 16 ; Հմր 9 ; Յուդ. 16 ;
Բ Ա Կոր. բ. 8 ;

քին մէջ մէկ մարդ մը մտնելու ըլլայ՝ որ ունենայ
ոսկի մատանի և փառաւոր հանդերձներ , հոն
մէկ աղքատ մըն ալ մտնելու ըլլայ աղտոտ հան-
3 դերձներով , Ու նայիք անոր վրայ որ փառաւոր
հանդերձներ ունի , ու ըսէք թէ Դուն հոս նստէ
պատուով , և ան աղքատին ըսէք թէ Դուն հոդ
ոտքի վրայ կայնէ , կամ թէ Եկուր նստէ պա-
4 տուանդանիս քովը , Ձեր մէջը խտրութիւններ
ընող , ու չար խորհուրդներու դատաւոր չէ՞ք
5 ըլլար : Մտիկ ըրէք՝ սիրելի եղբայրներս . չէ՞
որ Աստուած աշխարհիս աղքատները ընտրեց ,
որոնք հաւատքով հարուստ են , ու ժառանգաւոր
արքայութեանը , որ զինքը սիրողներուն խոստա-
6 ցաւ : Բայց դուք աղքատները անարգեցիք .
հարուստները չէ՞ն որ ձեզ կը հարստահարեն ,
7 ու ձեզ դատաստաններուն կը քաշեն : Ա-
նոնք չէ՞ն որ կը հայհոյեն ան բարի անունը՝ որ
8 ձեր վրայ կանչուած է : Երբ թէ որ դուք ար-
քունական օրէնքը կը կատարէք Գրքին
համեմատ թէ Դու ընկերդ սիրես քու անձիդ
9 պէս , աղէկ կ'ընէք . Բայց թէ որ աչառութիւն
կ'ընէք , մեղք կը գործէք , ու օրէնքէն կը յանդի-
10 մանուիք օրինազանցներու պէս : Քանզի ով որ
բոլոր օրէնքը պահէ , ու մէկ բանի մը մէջ յանց-
ւոր ըլլայ , անիկայ ամենուն պարտական կ'ըլ-
11 լայ : Վասն զի ան որ ըսաւ թէ Շնութիւն մի՛
ըներ , ըսաւ ալ թէ Մի՛ սպաններ . ուստի թէ

Գ Յոհ. է. 48 ; Ա Կոր. ա. 26 , 28 ;
Դ Ղուկ. ժբ. 21 ; Ա Տիմ. զ. 18 ; Յայտ. բ. 9 ;
Ե Ել. ի. 6 ; Ա Թագ. բ. 30 ; Առակ. բ. 17 ; Մատ. ե. 3 ; Ղուկ. զ. 20 ; ժբ. 32 ; Ա Կոր. բ. 9 ; Բ Տիմ. դ. 8 ; Գլ. ա. 12 ;
Զ Ա Կոր. ժա. 22 ;
Է Գործ. ժգ. 50 ; ժէ. 6 ; ժը. 12 ; Գլ. ե. 6 ;
Ը Ղև. ժթ. 18 ; Մատ. իբ. 39 ; Հռով. ժգ. 8 , 9 ; Գաղ. ե. 14 ; զ. 2 ;
Թ Համր 1 ;
Ժ Բ Օր. իէ. 26 ; Մատ. ե. 19 ; Գաղ. գ. 10 ;
Ի Ել. ի. 13 , 14 ;

որ շնութիւն չընես բայց սպանութիւն ընես , օրի-
12 նազանց կ'ըլլաս ։ Այնպէս խօսեցէք և այնպէս
ըրէք՝ [ւ]որպէս թէ ազատութեան օրէնքովը պիտի
13 դատուիք ։ [փ]Վասն զի դատաստանը անողորմ
պիտի ըլլայ անոր , որ ողորմութիւն չըներ ․ [ք]և
ողորմութիւնը կը պարծենայ դատաստանին դի-
մացը ։
14 [օ]Ի՞նչ օգուտ է եղբայրներս , թէ որ մէկը ըսէ
թէ հաւատք ունի , ու գործք չունենայ ․ միթէ
15 հաւատքը կրնա՞յ փրկել զանիկայ ։ [ֆ]Թէ որ եղբայր
մը կամ քոյր մը մերկ ըլլայ՝ կամ օրուան կերակու-
16 րին կարօտ , [ա]Ու ձեզմէ մէկը անոնց ըսէ , Գնացէք
խաղաղութեամբ , տաքցէք ու կշտացէք ․ և մարմի-
նին պէտք եղած բաները անոնց չտաք , ի՞նչ օգուտ
17 է ։ Այնպէս ալ հաւատքը թէ որ հետը գործ չունե-
18 նայ , ըստ ինքեան մեռած է ։ [բ]Նաև կրնայ մէկը
ըսել թէ Դուն հաւատք ունիս , ես ալ գործքեր
ունիմ ․ դուն քու հաւատքդ ցուցուր ինծի առանց
գործքերու , [գ]ու ես քեզի ցուցընեմ իմ հաւատքս
19 իմ գործքերէս ։ Դուն կը հաւատաս որ Աս-
տուած մէկ է , աղէկ կ'ընես ․ [դ]դևերն ալ կը
20 հաւատան և կը սարսափին ։ Բայց կ'ուզե՞ս գիտ-
նալ դուն՝ ո՛վ ունայն մարդ , որ հաւատքը ա-
21 ռանց գործքերու մեռած է ։ Աբրահամ մեր հայրը
գործքերով չարդարացա՞ւ , [ե]երբոր իր որդին
22 Իսահակը սեղանին վրայ հանեց զոհ ընելու ։ Կը
տեսնե՞ս , որ հաւատքը անոր գործքերուն հետ
մէկտեղ գործեց , ու անի գործքերով հաւատքը
23 կատարեալ եղաւ ․ Ու Գրքին խօսքը կատարուե-

ւ Գղ. ա. 25 ;
փ Յոբ. իբ. 6 , և ; Առակ. իա. 13 ; Մատ. զ. 15 ; ժը. 35 ; իե. 41 , 42 ;
ք ա Յոհ. գ. 17 , 18 ;
օ Մատ. է. 26 ; Գղ. ա. 23 ;
ֆ Տե՛ս Յոբ. լա. 19 , 20 ; Ղուկ. գ. 11 ;
ա ա Յոհ. գ. 18 ;
բ Գղ. գ. 13 ;
գ Մատ. ը. 29 ; Մար. ա. 24 ; ե. 7 ; Ղուկ. դ. 34 ; Գործ. ժզ. 17 ; ժթ. 15 ;
դ Ծն. իբ. 9 , 12 ;
ե Եբր. ժա. 17 ;

ցաւ որ կ'ըսէ ․ [զ]Աբրահամ Աստուծոյ հաւատաց ,
ու անի իրեն արդարութիւն սեպուեցաւ ․ [է]և Իրեն
24 Աստուծոյ բարեկամ ըսուեցաւ ։ Կը տեսնէ՞ք որ
մարդս գործքերով կ'արդարանայ , ու չէ՛ թէ մի-
25 նակ հաւատքով ։ Նոյնպէս ալ [ը]Ռախաբ պոռ-
նիկը չէ՞ որ գործքերով արդարացաւ , երբոր լըր-
տեսները ներս առաւ , և ուրիշ ճամբայով արձա-
26 կեց զանոնք ։ Քանզի ինչպէս որ մարմինը առանց
հոգիի մեռած է , նոյնպէս ալ հաւատքը առանց
գործքերու մեռած է ։

ԳԼՈՒԽ Գ

1 Պէտք չէ որ անխոհեմութեամբ կամ չարութեամբ ուրիշները յանդիմանենք ․ 5 այլ մանաւանդ սանձենք լեզունիս , որ թէև պզտիկ անդամ մըն է , բայց զօրաւոր գործիք մըն է թէ՛ բարիի և թէ չարի համար ։ 13 Ճշմարտապէս իմաստունը հեզ և խաղաղասէր կ'ըլլայ , առանց նախանձու և հակառակութեան ։

1 Եղբայրներս՝ [թ]շատ վարդապետներ մի՛ ըլլաք ․
[ժ]գիտնալով որ աւելի մեծ դատաստան պիտի
2 ընդունինք ․ [ի]Ինչու որ ամէնքս ալ շատ յանցանք-
ներ կ'ընենք ․ [լ]Թէ որ մէկը խօսքով յանցանք
չընէ , [խ]անիկայ կատարեալ մարդ է , որ կարող է
3 բոլոր մարմինն ալ սանձելու ։ [ծ]Տե՛ս որ ձիերուն
բերանը սանձ կը դնենք՝ որ անոնք մեզի հնազան-
դին , ու անոնց բոլոր մարմինը կը կառավարենք ․
4 Ահա նաւերն ալ՝ որչափ մեծ բաներ են , և սաս-
տիկ հովերէն կը քշուին , բայց ամենափոքր ղեկով
մը կը կառավարուին՝ ղեկավարին կամքը ո՛ր կողմը
5 որ ուզէ ։ [կ]Այնպէս ալ լեզուն մէկ պզտիկ անդամ

զ Ծն. ժե. 6 ; Հռով. դ. 3 ; Գաղ. գ. 6 ;
է բ Մն. ի. 7 ; Եսա. խա. 8 ;
ը Յես. բ. 1 ; Եբր. ժա. 31 ;
թ Մատ. իգ. 8 , 10 ; Հռով. բ. 20 , 21 ; ա Պետ. ե. 3 ;
ժ Ղուկ. զ. 37 ;
ի գ Թագ. ը. 46 ; բ Մն. զ. 36 ; Առակ. ի. 9 ; Ժող. է. 20 ; ա Յոհ. ա. 8 ;
լ Սաղ. լգ. 13 ; Գղ. ա. 26 ; ա Պետ. գ. 10 ;
խ Մատ. ժբ. 37 ;
ծ Սաղ. լա. 9 ;
կ Առակ. ժբ. 18 ; ժե. 2 ;

մըն է , ե ու մեծ բաներ կը խօսի . ահա քիչ մը
6 կրակը ո՛րչափ բան բոցի կու տայ : զ Լեզուն ալ
կրակ մըն է՝ անիրաւութեան տիեզերք մը . լեզուն
մեր անդամներուն մէջ անանկ դրուած է , է որ
բոլոր մարմինը կ'ապականէ , և բնութեան շրջանը
կը բոռնկցնէ , ու ինքը գեհենէն կը բռնկի :
7 Բոլոր գազաններուն ու թռչուններուն և սողուն-
ներուն ու ծովու մէջ եղածներուն բնութիւնը կը
նուաճուի և նուաճուած է մարդկային բնութենէն :
8 Բայց լեզուն մարդոց մէկը չկրնար նուաճել . ա-
նիկայ անզուսպ չար է , ը մահաբեր թոյնով
9 լեցուն . Անով կ'օրհնենք զԱստուած ու Հայ-
րը , և անով կ'անիծենք մարդիկ՝ թ որոնք Աստու-
10 ծոյ նմանութեամբը ստեղծուած են : Մի և նոյն
բերնէն կ'ելլեն օրհնութիւն ու անէծք . Ո՛վ եղբայր-
11 ներս՝ պէտք չէ որ աս ասանկ ըլլայ : Միթէ աղբիւր
12 մը մի և նոյն բերնէն անոյշ ու լեղի կը բղխէ՞ : Մի-
թէ կարելի՞ է ո՛վ եղբայրներս՝ որ թզենին ձիթապտ-
ուղ բերէ , կամ որթը՝ թուզ . նմանապէս կա-
րելի չէ որ մէկ աղբիւրէ մը աղի ու անոյշ ջուր ելլէ :
13 ժ Ձեր մէջը իմաստուն ու խելացի ո՞վ կայ . թող
անիկայ բարի վարմունքովը ցուցնէ՛ ի իր գործերը
14 լ իմաստութեան հեզութիւնով : խ Հապա թէ որ
դառն նախանձ և հակառակութիւն ունենաք սրտեր-
նուդ մէջ , ծ մի՛ պարծենաք ու ճշմարտութիւնը
15 սուտ հանէք : կ Աս իմաստութիւնը վերէն իջած
չէ , հապա երկրաւոր՝ շնչաւոր և դիւական է :
16 հ Քանզի ո՛ւր որ նախանձ ու կռիւ կայ , հոն է ան-

ե Սաղ . ժբ . 3 ; հգ . 8 , 9 ;
զ Առակ . ժզ . 27 ;
է Մատ . ժե . 11 , 18 , 19 , 20 ;
Մար . է . 15 , 20 , 23 ;
ը Սաղ . ճխ . 3 ;
թ Ծն . ա . 26 ; ե . 1 ; թ . 6 ;
ժ Գաղ . զ . 4 ;
ի Յկ . բ . 18 ;
լ Յկ . ա . 21 ;
խ Հռով . ժգ . 13 ;
ծ Հռով . բ . 17 , 23 ;
կ Յկ . ա . 17 ; Փիլ . գ . 19 ;
հ ա Կոր . գ . 3 ; Գաղ . ե .
20 ;

17 կարգութիւնը և ամէն չար բաները : ձ Հապա
վերին իմաստութիւնը նախ սուրբ է , ետքը խա-
ղաղարար , հեզ , հլու , ողորմութիւնով ու բա-
րի պտուղներով լեցուն , անկողմնասէր , ղ ու ան-
18 կեղծ : ճ Եւ արդարութեան պտուղը խաղաղու-
թիւնով կը սերմանուի անոնց՝ որոնք խաղաղու-
թիւն կ'ընեն :

ԳԼ . Դ

1 Պէտք է որ դէմ դնենք ագահութեան , 4 անժուժկալութեան , 5 հպարտութեան , 11 բամբասանքի և ուրիշները զուր տեղը դատելու : 13 Պէտք չէ որ աշխարհային գործառնութեանց յաջողութեանը վստահինք , բայց միշտ խորհինք թէ աս կեանքս ո՛րչափ անստոյգ է , և մեր անձերը ու մեր բոլոր գործքերը Աստուծոյ նախախնամութեանը յանձնենք :

1 Ո՞ւսկից են պատերազմները , և ո՞ւսկից կռիւնե-
րը ձեր մէջը . չէ՞ որ ձեր ցանկութիւններէն ,
2 մ որ ձեր անդամներուն մէջ կը պատերազմին : Կը
ցանկաք ու չունիք , կը սպաննէք ու կը նախան-
ձիք , և չէք կրնար ձեր ուզածին հասնիլ . կը պա-
տերազմիք ու կը կռուիք , բայց չունիք , ինչու որ
3 չէք խնդրեր . յ Կը խնդրէք ու չէք առներ , ն ին-
չու որ չարաչար կը խնդրէք , որ ձեր ցանկու-
4 թիւններուն բանեցնէք : շ Շնացողներ՝ չէ՞ք
գիտեր ո որ աս աշխարհիս սէրը Աստուծոյ դէմ
թշնամութիւն է . չ Ուստի ո՛վ որ կ'ուզէ աշխար-
հի բարեկամ ըլլալ , ինքզինքը Աստուծոյ թշնամի
5 կ'ընէ : Կամ թէ կը կարծէք որ Գիրքը պարապ

ձ ա Կոր . բ . 6 , 7 ;
ղ Հռով . ժբ . 9 ; ա Պետ . ա .
22 ; բ . 1 ; ա Յովհ . գ . 18 ;
ճ Առակ . ժա . 18 ; Ովս . ժ .
12 ; Մատ . ե . 9 ; Փիլ . ա .
11 ; Եբր . ժբ . 11 ;
մ Հռով . է . 23 ; Գաղ . ե .
17 ; ա Պետ . բ . 11 ;
յ Յոբ . իէ . 9 ; լե . 12 ; Սաղ .
ժը . 41 ; Առակ . ա . 28 ;
Եսայ . ա . 15 ; Երեմ . ժա .
11 ; Միք . գ . 4 ; Զաք .
է . 13 ;
ն Սաղ . կզ . 18 ; ա Յովհ .
գ . 22 ; ե . 14 ;
շ Սաղ . հգ . 27 ;
ո ա Յովհ . բ . 16 ;
չ Յովհ . ժե . 19 ; ժէ . 14 ;
Գաղ . ա . 10 ;

տեղը *կ՚ըսէ թէ ե «Նախանձի կը փափաքի մեր
6 մէջը բնակող հոգին» ։ Սակայն աւելի շնորհք կու
տայ . անոր համար կ՚ըսէ , զ «Աստուած ամբար-
տաւաններուն հակառակ կը կենայ , բայց խոնարհ-
7 ներուն շնորհք կու տայ» ։ Ուստի հնազանդեցէ՛ք
Աստուծոյ . է Սատանային հակառակ կեցէք , և
8 անիկայ ձեզմէ պիտի փախչի ։ ը Աստուծոյ մօտե-
ցէք , ու անիկայ ձեզի պիտի մօտենայ . թ սրբեցէ՛ք
ձեռքերնիդ՝ մե՛ղաւորներ , ժ և մաքրեցէ՛ք սրտեր-
9 նիդ՝ ի ե՛րկմիտներ . լ Տառապա՛նք քաշեցէք , սուգ
ըրէք ու լացէք . ձեր ծիծաղը սուգի դառնայ , ու
10 ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան ։ խ Տէրոջը
առջև խոնարհեցէ՛ք , ու ան ձեզ պիտի բարձրա-
ցընէ ։
11 ծ Մէկզմէկ մի՛ բամբասէք՝ եղբայրներ . ան որ
իր եղբայրը կը բամբասէ կ կամ իր եղբայրը կը
դատէ , օրէնքը կը բամբասէ և օրէնքը կը
դատէ . հապա թէ որ օրէնքը դատես , ալ դուն
12 օրէնքը կատարող չե՛ս՝ հապա դատաւոր ։ Միայն
մէկ Օրէնսդիր [ու Դատաւոր] մը կայ , հ որ ինքը
կարող է փրկելու և կորսնցնելու . ձ դուն ո՞վ
ես որ ուրիշը կը դատես ։
13 ղ Հիմա մօտի՛կ ըրէք դուք որ կ՚ըսէք .

* Կամ կը խօսի . Նախանձի՞ կը փափաքի մեր մէջը բնակող Հոգին .
ե Տես Ծն . զ . 5 ; ը . 21 ; Թու . ժա . 29 ; Առակ . իա . 10 ;
զ Յոբ . իբ . 29 ; Սաղ . ճլ . 6 ; Առակ . գ . 34 ; իթ . 23 ; Մատ . իգ . 12 ; Ղուկ . ա . 52 ; ժդ . 11 ; ժը . 14 ; ա Պետ . ե . 5 ;
է Եփե . դ . 27 ; զ . 11 ; ա Պետ . ե . 9 ;
ը բ Մն . ժե . 2 ;
թ Եսա . ա . 16 ;
ժ ա Պետ . ա . 22 ; ա Յով . գ . 3 ;
ի Գլ . ա . 8 ;
լ Մատ . ե . 4 ;
խ Յոբ . իբ . 29 ; Մատ . իգ . 12 ; Ղուկ . ժդ . 11 ; ժը . 14 ; ա Պետ . ե . 6 ;
ծ Եփե . դ . 31 ; ա Պետ . բ . 1 ;
կ Մատ . է . 1 ; Ղուկ . զ . 37 ; Հռով . բ . 1 ; ա Կոր . դ . 5 ;
հ Մատ . ժ . 28 ;
ձ Հռով . ժդ . 4 , 13 ;
ղ Առակ . իէ . 1 ; Ղուկ . ժբ . 18 ; [illegible] ;

Այսօր կամ վաղը երթանք այս անուն քա-
ղաքը , ու հոն տարի մը կենանք , և առու-
14 տուր ընենք ու վաստըկինք . (Դուք որ վաղը չէք
15 գիտեր . մ Քանզի ի՞նչ է ձեր կեանքը . յիրաւի
շոգի մըն է , որ քիչ մը ատեն կ՚երևնայ ու ետքը
կ՚ոչնչանայ .) անոր տեղը ըսելու էիք , յ Թէ որ
Տէրը կամենայ ու ապրինք , աս կամ ան բանը
16 ընենք ։ Բայց հիմա ձեր ամբարտաւանութիւնովը
կը պարծենաք . ն բոլոր ասանկ պարծանքները չա-
17 րութիւն են ։ շ Ուստի ով որ բարին ընելը գիտ-
նայ ու չընէ , ան մեղք է անոր ։

ԳԼ . Ե

1 Չար հարուստները պէտք է որ վախնան Աստուծոյ վրէժխնդրութենէն ։ 7 Պարտինք նեղութեան մէջ համբերող ըլլալ՝ մարգարէներուն և Յոբին օրինակին պէս ։ 12 Պէտք է որ երդում ընելէն ետ կենանք ։ 13 Նեղութեան ատեն աղօթք ընենք , ուրախութեան ատեն երգենք ։ 16 մեր յանցանքները իրարու խոստովանինք , իրարու համար աղօթք ընենք ։ 19 և մոլորեալ եղբայրը ճշմարտութեան դարձընենք ։

1 ո Եկէ՛ք հիմա՝ հարուստներ՝ լացէ՛ք ու ողբացէ՛ք ան
թշուառութիւններուն համար՝ որ ձեր վրայ
2 պիտի գան ։ Ձեր հարստութիւնը ապականած է ,
չ ու ձեր հանդերձները ցեցի կերակուր եղած ։
3 Ձեր ոսկին ու արծաթը ժանգոտած է , և անոնց
ժանգը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ , ու ձեր մար-
մինը պիտի ուտէ կրակի պէս . պ վերջի օրերուն
4 համար գանձ դիզեցի՛ք ։ ջ Ահա ձեր արտերը հըն-
ձող բանուորներուն վարձքը որ ետ պահեցի՛ք ,
կ՚աղաղակէ , ռ ու հնձողներուն բողոքը զօրութեանց

մ Յոբ . է . 7 ; Սաղ . ճբ . 3 ; Գլ . ա . 10 ; ա Պետ . ա . 24 ; ա Յով . բ . 17 ;
յ Գործ . ժը . 21 ; ա Կոր . դ . 19 ; ժզ . 7 ; Եբր . զ . 3 ;
ն ա Կոր . ե . 6 ;
շ Ղուկ . ժբ . 47 ; Յով . թ . 41 ; ժե . 22 ; Հռով . ա . 20 , 21 , 32 ; բ . 17 , 18 , 23 ;
ո Առակ . ժա . 28 ; Ղուկ . զ . 24 ; ա Տիմ . զ . 9 ;
չ Յոբ . ժգ . 28 ; Մատ . զ . 20 ; Գլ . բ . 2 ;
պ Հռով . բ . 5 ;
ջ Ղուկ . ժթ . 13 ; Յոբ . իդ . 10 , 11 ; Երեմ . իբ . 13 ; Մաղ . գ . 5 ;
ռ բ Օր . իդ . 15 ;

5 Տէրոջը ականջներուն հասաւ ։ դ Երկրի վրայ
փափկութեամբ և հեշտութեամբ ապրեցաք , սիր-
տերնիդ սնուցիք՝ որպէս թէ մորթուելու օրուան
6 համար ։ ե Դատապարտեցիք ու սպաննեցիք
արդարը , որ ձեզի հակառակ չէնար ։
7 Ուստի համբերող եղէք՝ եղբայրներ՝ մինչև Տէ-
րոջը գալուստը ։ Ահա երկրագործը կը սպասէ
երկրի պատուական պտուղին , անոր համար համ-
բերելով , զ մինչև որ առջի ու վերջի անձրևը առ-
8 նէ ։ Դուք ալ համբերութիւն ըրէք , սիրտերնիդ
հաստատ բռնեցէք ։ է Ինչու որ Տէրոջը գալուստը
9 մօտ է ։ ը Իրարու դէմ մի՛ հառաչէք՝ եղբայրներ ,
որ չդատապարտուիք ։ թ Ահա Դատաւորը դրանը
10 քովը կայներ է ։ Եղբայրներս՝ չարչարանքներու-
ու համբերութեան օրինակ առէք ժ մարգարէները ,
11 որոնք Տէրոջը անունովը խօսեցան ։ ի Ահա համ-
բերողներուն երանի կու տանք ։ լ Յոբին համբե-
րութիւնը լսեցիք դուք , խ և Տէրոջը անոր ըրած
վախճանը տեսաք , ծ որ Տէրը բազմագութ ու
ողորմած է ։
12 Բայց ամէն բանէն առաջ՝ եղբայրներս՝ կ երդում
չընէք , ոչ երկինքի վրայ՝ ոչ երկրի վրայ , ոչ ալ
մէկ ուրիշ երդում մը ։ Հապա ձեր այոն այո ըլ-
լայ , և ոչը՝ ոչ , որ չըլլայ թէ դատապարտու-
թեան տակ իյնաք ։
13 Թէ որ ձեզմէ մէկը նեղութեան մէջ է , աղօթք
թող ընէ ։ Թէ որ մէկը ուրախ է , հ սաղմոս թող

դ Յոբ . իա . 13 ։ Ամով . զ . 1 , 4 ։ Ղու . ժզ . 19 , 25 ։ ա Տիմ . ե . 6 ։
ե Գլ . բ . 6 ։
զ բ Օր . ժա . 14 ։ Երեմ . ե . 24 ։ Ովս . զ . 3 ։ Յովէլ . բ . 23 ։ Զաք . ժ . 1 ։
է Փիլ . դ . 5 ։ Եբր . ժ . 25 , 37 ։ ա Պետ . դ . 7 ։
ը Գլ . դ . 11 ։
թ Մատ . իդ . 33 ։ ա Կոր . դ . 5 ։
ժ Մատ . ե . 12 ։ Եբր . ժա . 35 , ևն ։
ի Սաղ . ղդ . 12 ։ Մատ . ե . 10 , 11 ։ ժ . 22 ։
լ Յոբ . ա . 21 , 22 ։ բ . 10 ։
խ Յոբ . խբ . 10 , ևն ։
ծ Թւ . ժդ . 18 ։ Սաղ . ճգ . 8 ։
կ Մատ . ե . 34 , ևն ։
հ Եփե . ե . 19 ։ Կող . գ . 16 ։

14 երգէ ։ Թէ որ ձեզմէ մէկը հիւանդ է , եկեղե-
ցիին երէցները թող կանչէ , ու անոր վրայ աղօթք
թող ընեն , ու ձ Տէրոջը անունովը եղով օծեն զա-
15 նիկայ ։ Ու հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ
հիւանդը , ու Տէրը զանիկա ոտք պիտի հանէ ։ ղ և
թէ որ մեղք ալ գործեր է , պիտի ներուի անոր ։
16 Ձեր յանցանքները իրարու խոստովանեցէք , ու ա-
ղօթք ըրէք իրարու համար որ բժշկուիք ։ ճ արդա-
րին ջերմեռանդ աղօթքը շատ ազդեցութիւն ունի ։
17 մ Եղիա մեզի պէս կրից ենթակայ մարդ մըն էր ,
յ ու աղօթք ըրաւ որ անձրև չգայ , ն և երեք տարի
18 ու վեց ամիս երկրի վրայ անձրև չեկաւ ։ շ Ու նո-
րէն աղօթք ըրաւ , ու երկինքը անձրև տուաւ , և
երկիրը իր պտուղը բուսցուց ։
19 Եղբայրներ՝ ո թէ որ ձեզմէ մէկը ճշմարտութե-
20 նէն մոլորի , ու մէկը զանիկայ դարձի բերէ , Գիտ-
ցած ըլլայ թէ ան որ մեղաւորը իր մոլորութեան
ճամբայէն կը դարձընէ , չ հոգի մը մահուանէ կ'ա-
զատէ , պ ու մեղաց բազմութիւնը կը ծածկէ ։

ձ Մար . զ . 13 ։ ժզ . 18 ։
ղ Եա . լգ . 24 ։ Մատ . թ . 2 ։
ճ Ծն . ի . 17 ։ Թու . ժա . 2 ։ բ Օր . թ . 18 , 19 , 20 ։ Յես . ժ . 12 ։ ա Թագ . ժբ . 18 ։ գ Թագ . ժզ . 6 ։ դ Թագ . դ . 33 ։ ժթ . 15 , 20 ։ ի . 2 , 4 , ևն ։ Սաղ . ժ . 17 ։ լդ . 15 ։ ճխե . 18 ։ Առակ . ժե . 29 ։ իը . 9 ։ Յոհ . թ . 31 ։ ա Յոհ . գ . 22 ։
մ Գործ . ժդ . 14 ։
յ գ Թագ . ժէ . 1 ։
ն Ղու . դ . 25 ։
շ գ Թագ . ժը . 42 , 45 ։
ո Մատ . ժը . 15 ։
չ Հռով . ժա . 14 ։ ա Կոր . թ . 22 ։ ա Տիմ . դ . 16 ։
պ Առակ . ժ . 12 ։ ա Պետ . դ . 8 ։

ԱՌԱՋԻՆ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաքեալը գոհութիւն կը մատուցանէ Աստուծոյ՝ անոր բազմապատիկ հոգևոր շնորհքներուն համար. 10 կը ցուցընէ թէ Քրիստոսով եղած փրկութիւնը նոր լսուած բան մը չէ, հապա հին ատենի մարգարէներէն ալ գրուցուած է. 13 կը յորդորէ քրիստոնեաները բարեպաշտութեամբ ապրելու, յիշեցընելով անոնց թէ իրենք նորէն ծնած են Աստուծոյ խօսքովը։

1 Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ, օտա-
րականներուդ ա որ ցրուած էք Պոնտոսի, Գա-
ղատիայի, Կապադովկիայի, Ասիայի ու Բիւ-
2 թանիայի մէջ, բ ընտրուած՝ գ Հօր Աստուծոյ
կանխագիտութեանը համեմատ, դ Հոգիին սրբա-
ցընելովը՝ հնազանդութեան և Յիսուս Քրիստոսի
ե արեանը սրսկուելուն համար. զ Շնորհք և խաղա-
ղութիւն ձեր վրայ շատնայ։
3 է Օրհնեալ է Աստուած ու մեր Տէր Յիսուս
Քրիստոսի Հայրը, ը որ իր առատ ողորմութեա-
նը համեմատ թ մեզ նորէն ծնաւ կենդանի յոյսի
համար՝ ժ Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարու-
4 թիւն առնելովը, Անեղծ ու անարատ ի և անթա-
ռամ ժառանգութեանը համար՝ լ որ երկինքը պա-
5 հուած է ձեզի, խ Որ Աստուծոյ զօրութեամբը
պահպանուած էք հաւատքով այն փրկութեանը

համար՝ որ պատրաստուած է վերջին ժամանակը
6 յայտնուելու. ծ Որ անով կ'ուրախանաք, կ թէև
հիմա, ինչպէս որ հարկը կը պահանջէ, հ քիչ մը
ատեն տրտմած էք զանազան փորձութիւններով.
7 ձ Որպէս զի ձեր հաւատքին փորձառութիւնը (որ
կորստական ոսկիէն աւելի պատուական է, ղ թէև
անիկայ կրակով կը փորձուի,) ճ գտնուի գովու-
թիւնով ու պատւով և փառքով Յիսուս Քրիս-
8 տոսի յայտնուելու ատենը. մ Զոն որ դուք չտեսած՝
կը սիրէք, յ զոր անիկայ հիմա չէք տեսներ, բայց
կը հաւատաք, և ուրախ էք անպատմելի ու փառա-
9 ւորեալ խնդութիւնով. ն Ձեր հաւատքին վախ-
ճանը ընդունելով, այսինքն հոգիներնուդ փրկու-
10 թիւնը։ շ Որ այն փրկութեանը համար փնտռե-
ցին ու քննեցին մարգարէները՝ որոնք մարգարէա-
11 ցան ձեզի եղած շնորհքին համար. Ու կը քննէին
թէ ո՛րը կամ ինտո՛ր ատեն կ'իմացընէր իրենց մէջը
եղած ո Քրիստոսի Հոգին՝ չ որ առաջ կը վկայէր
Քրիստոսի չարչարուիլը, ու անկէ ետև փառաւո-
12 րուիլը։ պ Որոնց յայտնուեցաւ, ջ որ ոչ թէ
իրենց՝ հապա մեզի մատակարարեցին այն բաները,
որոնք հիմա ձեզի պատմուեցան անոնց ձեռքովը՝ որ
աւետարանը քարոզեցին ձեզի ռ Հոգւով Սրբով

որ երկինքէն խրկուեցաւ. պ որ այն բաներուն՝ հրեշտակները կը ցանկան ակնկառոյց նայելու։
13 ջ Անոր համար ձեր միտքերուն մէջքը գօտեւորած՝ ռ արթուն կեցած, կատարելապէս յուսացէք այն ձեր վրայ հասնելու շնորհքը՝ ս Յիսուս Քրիստոսի
14 յայտնուելու ատենը, Հնազանդ զաւակներու պէս, վ չէ՛ թէ ձեր տգիտութեան ատենին տ առջի
15 ցանկութիւններովը վարուելով. ր Հապա ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք ձեր
16 բոլոր վարմունքներուն մէջ. Ինչու որ գրուած է
17 թէ ց Սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ։ Եւ թէ որ Հայր կը կոչէք անիկայ ւ որ առանց աչառութեան կը դատէ ամէն մէկուն գործքին համեմատ, փ ուրեմն ձեր ք պանդխտութեան ժամանա-
18 կը վախով անցուցէք, Գիտնալով որ ա դուք չէ՛ թէ ապականացու արծաթով կամ ոսկիով բ փրկուեցաք ձեր հայրերէն աւանդուած ունայն վարմունքէն,
19 գ Հապա Քրիստոսի պատուական արիւնովը՝ դ որպէս թէ անբիծ ու անարատ գառի մը.
20 ե Որ առաջուց ճանչցուած էր աշխարհիս սկիզբէն առաջ, զ ու վերջի ատենները յայտնուեցաւ ձեզի
21 համար, Որ անոր միջոցովը Աստուծոյ հաւատա-

պ Ել. իե. 20 ; Դան. ը. 13 ; ժբ. 5, 6 ; Եփե. գ. 10 ;
ջ Ղու. ժբ. 35 ; Եփե. զ. 14 ;
ռ Ղու. իա. 34 ; Հռով. ժգ. 13 ; ա Թես. ե. 6, 8 ; Գլ. դ. 7 ; ե. 8 ;
ս Ղու. ժէ. 30 ; ա Կոր. ա. 7 ; բ Թես. ա. 7 ;
վ Գոր. ժէ. 30 ; ա Թես. դ. 5 ;
տ Հռով. ժբ. 2 ; Գլ. դ. 2 ;
ր Ղու. ա. 74, 75 ; բ Կոր. է. 1 ; ա Թես. դ. 3, 4, 7 ; Եբր. ժբ. 14 ; բ Պետ. գ. 11 ;
ց Ղև. ժա. 44 ; ժթ. 2 ; ի. 7 ;
ւ բ Օր. ժ. 17 ; Գոր. ժ. 34 ; Հռով. բ. 11 ;
փ բ Կոր. է. 1 ; Փիլ. բ. 12 ; Եբր. ժբ. 28 ;
ք ա Կոր. ե. 6 ; Եբր. ժա. 13 ; Գլ. բ. 11 ;
ա ա Կոր. զ. 20 ; է. 23 ;
բ Եզեկ. ի. 18 ; Գլ. դ. 3 ;
գ Գոր. ի. 28 ; Եփե. ա. 7 ; Եբր. թ. 12, 14 ; Յայտ. ե. 9 ;
դ Ել. ժբ. 5 ; Ես. ծգ. 7 ; Յօհ. ա. 29, 36 ; ա Կոր. ե. 7 ;
ե Հռով. գ. 25 ; ժզ. 25, 26 ; Եփե. գ. 9, 11 ; Կող. ա. 26 ; բ Տիմ. ա. 9, 10 ; Տիտ. ա. 2, 3 ; Յայտ. ժգ. 8 ;
զ Գաղ. դ. 4 ; Եփե. ա. 10 ; Եբր. ա. 2 ; թ. 26 ;

ցիք, է որ զանիկայ մեռելներէն յարոյց, ը եւ անոր փառաւորութիւն տուաւ. որ ձեր հաւատքը ու
22 յոյսը Աստուծոյ վրայ ըլլայ։ թ Ձեր անձերը մաքրելով Հոգիին միջոցովը ճշմարտութեանը հնազանդելով, ժ եղբայրսիրութեան մէջ անկեղծ ըլլալով, սուրբ սրտով մէկզմէկ պինդ սիրեցէք,
23 ի Նորէն ծնած ըլլալով՝ չէ՛ թէ ապականացու սերմէն, հապա անապականացուէն լ Աստուծոյ կեն-
24 դանի ու յաւիտենական խօսքովը։ խ Վասն զի ամէն մարմին խոտի պէս է, եւ մարդուն բոլոր փառաւորութիւնը խոտի ծաղիկի պէս. խոտը կը
25 չորնայ ու անոր ծաղիկը կը թափթփի. ծ Բայց Տէրոջը խօսքը յաւիտեան կը մնայ, կ այսինքն է ան խօսքը՝ որ աւետարանով ձեզի քարոզուեցաւ։

ԳԼ. Բ.

1 Կը յորդորէ բոլոր չարութիւնը մէկդի ձգել, 4 ցուցընելով թէ Քրիստոս է հիմը որուն վրայ քրիստոնեայք շինուած են. 11 կ'աղաչէ հեռու կենալ մարմնաւոր ցանկութիւններէն, 13 ու հնազանդ ըլլալ իշխանաւորներուն. 18 կը սորվեցընէ ծառաներուն որ հնազանդ ըլլան իրենց տէրերուն, 20 ու երբոր բարիք գործելնուն համար չարչարուին, համբերութեամբ տանին՝ Քրիստոսի օրինակին համեմատ։

1 հ Ուրեմն մէկդի ձգելով ամէն չարութիւնը ու ամէն խաբէութիւնը ու կեղծաւորութիւնները, եւ նախանձը ու ամէն չարախօսութիւնը,

է Գոր. բ. 24 ;
ը Մատ. իը. 18 ; Գոր. բ. 33 ; գ. 13 ; Եփե. ա. 20 ; Փիլ. բ. 9 ; Եբր. բ. 9 ; Գլ. գ. 22 ;
թ Գոր. ժե. 9 ;
ժ Հռով. ժբ. 9, 10 ; ա Թես. դ. 9 ; ա Տիմ. ա. 5 ; Եբր. ժգ. 1 ; Գլ. բ. 17 ; գ. 8 ; բ Պետ. ա. 7 ; ա Յօհ. գ. 18 ; դ. 7, 21 ;
ի Յօհ. ա. 13 ; գ. 5 ; ա Յօհ. գ. 9 ;
լ Յակ. ա. 18 ;
խ Սաղ. ճգ. 15 ; Ես. խ. 6 ; ծա. 12 ; Յակ. ա. 10 ;
ծ Սաղ. ճբ. 12, 26 ; Ես. խ. 8 ; Ղու. ժզ. 17 ;
կ Յօհ. ա. 1, 14 ; ա Յօհ. ա. 1, 3 ;
հ Եփե. դ. 22, 25, 31 ; Կող. գ. 8 ; Եբր. ժբ. 1 ; Յակ. ա. 21 ; ե. 9 ; Գլ. դ. 2 ;

2 ե Նորածին մանկանց պէս զ բանական ու անխար-
դախ կաթին փափաքեցէք, որ անով մեծնաք
3[մինչև փրկութիւնը], է Թէ որ Տէրոջը քաղցր
4 ըլլալուն համը առիք. Որուն մօտենալով՝ ան կեն-
դանի Վէմին, ը որ թէպէտ մարդիկներէն անար-
գուած է, բայց Աստուծմէ ընտրուած ու պա-
5 տուական է, թ Դուք ալ կենդանի քարերու պէս
շինուիք ժ հոգևոր տաճար մը, ի սուրբ քահա-
նայութիւն մը, լ Յիսուս Քրիստոսի ձեռքով
Աստուծոյ հաճելի խ հոգևոր պատարագներ մատու-
6 ցանելու։ Որովհետև գիրքին մէջն ալ կայ թէ
ծ Ահա Սիօնի մէջ ընտիր՝ պատուական անկեան
վէմ մը կը դնեմ. և ով որ անոր հաւատայ,
7 բնաւ պիտի չամչնայ։ Ուստի ձեզի հաւատա-
ցեալներուդ պատուական է ան, բայց անհաւատա-
ներուն՝ կ ան քարը որ շինողները անարգեցին,
8 անիկայ անկիւնին գլուխը եղաւ. հ Նաև գլորման
վէմ ու գայթակղութեան քար ձ անոնց՝ որ չհա-
ւատալով խօսքէն կը գայթակղին, ղ որուն սահ-
9 մանուած ալ էին։ ճ Բայց դուք ընտիր ցեղ մըն
էք, մ թագաւորական քահանայութիւն, յ սուրբ
ազգ, ն սեփհական ժողովուրդ մը, որ քարոզէք

ե Մատ. ժը. 3: Մար. ժ. 15: Հռով. զ. 4: ա Կոր. ժդ. 20: Գլ. ա. 23:
զ ա Կոր. գ. 2: Եբր. ե. 12, 13:
է Սաղ. լգ. 8: Եբր. զ. 5:
ը Սաղ. ճժը. 22: Մատ. իա. 42: Գործ. դ. 11:
թ Եփս. բ. 21, 22:
ժ Եբր. գ. 6:
ի Ես. կա. 6: կզ. 21: Հմր 9:
լ Փիլ. դ. 18: Գլ. դ. 11:
խ Ովս. ժդ. 2: Մաղ. ա. 11: Հռով. ժբ. 1: Եբր. ժգ. 15, 16:
ծ Ես. իը. 16: Հռով. թ. 33:
կ Սաղ. ճժը. 22: Մատ. իա. 42: Գործ. դ. 11:
հ Ես. ը. 14: Ղու. բ. 34: Հռով. թ. 33:
ձ ա Կոր. ա. 23:
ղ Ել. թ. 16: Հռով. թ. 22: ա Թես. ե. 9: Յուդ. 4:
ճ բ Օր. ժ. 15: Գլ. ա. 2:
մ Ել. ժթ. 5, 6: Յայտ. ա. 6: ե. 10:
յ Յօհ. ժէ. 19: ա Կոր. գ. 17: բ Տիմ. ա. 9:
ն բ Օր. դ. 20: է. 6: ժդ. 2: իզ. 18, 19: Գործ. ի. 28: Եփս. ա. 14: Տիտ. բ. 14:

անոր առաքինութիւնները, շ որ ձեզ խաւարէն իր
10 սքանչելի լոյսին կանչեց. ո Որ առաջ ժողովուրդ
չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք. որ
առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմու-
թիւն գտաք։
11 Սիրելիներ՝ կ՚աղաչեմ, չ պանդուխտներու և
օտարականներու պէս պ մեկդի կեցէք մարմնաւոր
ցանկութիւններէն, ջ որ հոգիի դէմ կը պատե-
12 րազմին, ռ Ձեր վարմունքը հեթանոսաց մէջ բարի
պահելով, որ ինչ բանով որ ձեզ չարագործնե-
րու պէս կը բամբասեն, ս ձեր բարի գործքերը
տեսնելով՝ փառաւորեն զԱստուած վ այցելութեան
13 օրը։ տ Ուստի հնազանդ եղէք ամէն մարդկային
սահմանադրութեան Տէրոջը համար, թէ թագա-
14 ւորին՝ վերնագոյն մէկու մը պէս, ր Թէ կուսակալ-
ներուն՝ անոր կողմէն խրկուածներու պէս՝ ց չարա-
գործները պատժելու, և բարեգործները գովե-
15 լու համար։ Ինչու որ Աստուծոյ կամքը ասանկ է,
ւ որ բարեգործ ըլլալով՝ անխելք մարդոց տգիտու-
16 թիւնը պապանձեցնէք. փ Ազատներու պէս ըլ-
լալով, և չէ թէ ձեր ազատութիւնը չարութեան
ծածկոյթ մը պէս գործածելով, ք հապա Աստու-
17 ծոյ ծառաներու պէս։ օ Ամէնը պատուեցէ՛ք.
ֆ եղբայրութիւնը սիրեցէ՛ք. + Աստուծմէ վախցէ՛ք.
թագաւորը պատուեցէ՛ք։

շ Գործ. իզ. 18: Եփս. ե. 8: Կող. ա. 13: ա Թես. ե. 4, 5:
ո Ովս. ա. 9, 10: բ. 23: Հռով. թ. 25:
չ ա Մն. իթ. 15: Սաղ. լթ. 12: ճժթ. 19: Եբր. ժա. 13: Գլ. ա. 17:
պ Հռով. ժգ. 14: Գաղ. ե. 16:
ջ Յակ. դ. 1:
ռ Հռով. ժբ. 17: բ Կոր. ը. 21: Փիլ. բ. 15: Տիտ. բ. 8: Գլ. գ. 16:
ս Մատ. ե. 16:
վ Ղու. ժթ. 44:
տ Մատ. իբ. 21: Հռով. ժգ. 1: Տիտ. գ. 1:
ր Հռով. ժգ. 4:
ց Հռով. ժգ. 3:
ւ Տիտ. բ. 8: Հմր 12:
փ Գաղ. ե. 1, 13:
ք ա Կոր. է. 22:
օ Հռով. ժբ. 10: Փիլ. բ. 3:
ֆ Եբր. ժգ. 1: Գլ. ա. 22:
+ Առակ. իդ. 21: Մատ. իբ. 21: Հռով. ժգ. 7:

18 ա Ծառաները ամէն բանի մէջ վախով հնազանդ
ըլլան իրենց տէրերուն, ոչ թէ միայն բարերար-
ներուն ու հեզերուն, հապա խստաբարոներուն
19 ալ : բ Վասնզի աս շնորհք մըն է, թէ որ մէկը
առ Աստուած ունեցած խղճմտանքովը անիրա-
ւաբար կրած վիշտերուն համբերելու ըլլայ :
20 գ Վասն զի ի՞նչ գովութիւն կ'ըլլայ ձեզ, թէ
որ մեղք գործելով ծեծուիք ու համբերէք.
հապա թէ որ բարիք գործելով չարչարուիք
ու համբերէք, ասիկայ Աստուծոյ քով շնորհք
21 մըն է : դ Վասնզի դուք աս բանիս համար կան-
չուեցաք, ե որ Քրիստոս ալ ձեզի համար չարչա-
րուեցաւ, զ ու ձեզի օրինակ թողուց՝ որ իր շաւիղ-
22 ներուն հետեւիք. է Որ ինքը մեղք մը չգործեց, ու
իր բերնին մէջ նենգութիւն մը չգտնուեցաւ.
23 ը Որ կը նախատուէր և փոխարէնը չէր նախատեր,
կը չարչարուէր ու սպառնալիք չէր ըներ, թ հա-
պա ինքզինքը արդարութեամբ դատողին կը յանձ-
24 նէր : ժ Որ մեր մեղքերը իր մարմնովը խաչա-
փայտին վրայ վերցուց, ի որ մենք մեղքերէն ազա-
տինք ու արդարութեան համար ապրինք. լ որուն
25 վէրքերովը դուք բժշկուեցաք : խ Ինչու որ մոլո-
րեալ ոչխարներու պէս էիք, ծ բայց հիմա ձեր
հոգիներուն Հովիւին ու Տեսուչին դարձաք :

ա Եփե. Զ. 5 ; Կող. Գ. 22 ; Ա Տիմ. Զ. 1 ; Տիտ. Բ. 9 ;
բ Մատ. Ե. 10 ; Գլ. Գ. 14 ;
գ Գլ. Գ. 14 ; Դ. 14, 15 ;
դ Մատ. ԺԶ. 24 ; Գոր. ԺԴ. 21 ; Ա Թեսս. Գ. 3 ; Բ Տիմ. Գ. 12 ;
ե Գլ. Գ. 18 ;
զ Յով. ԺԳ. 15 ; Փիլ. Բ. 5 ; Ա Յով. Բ. 6 ;
է Եսա. ԾԳ. 9 ; Ղու. ԻԳ. 41 ; Յով. Ը. 46 ; Բ Կոր. Ե. 21 ; Եբր. Դ. 15 ;
ը Եսա. ԾԳ. 7 ; Մատ. ԻԷ. 39 ; Յով. Ը. 48, 49 ; Եբր. ԺԲ. 3 ;
թ Ղու. ԻԳ. 46 ;
ժ Եսա. ԾԳ. 4, 5, 6, 11 ; Մատ. Ը. 17 ; Եբր. Թ. 28 ;
ի Հռով. Զ. 2, 11 ; Է. 6 ;
լ Եսա. ԾԳ. 5 ;
խ Եսա. ԾԳ. 6 ; Եզեկ. ԼԴ. 6 ;
ծ Եզեկ. ԼԴ. 23 ; ԼԷ. 24 ; Յով. Ժ. 11, 14, 16 ; Եբր. ԺԳ. 20 ; Գլ. Ե. 4 ;

ԳԼ. Գ

1 Կը սորվեցընէ կիներուն ու էրիկներուն ունեցած փոխադարձ պարտաւորութիւնները. 8 կը յորդորէ ամէն մարդիկ միութիւն և սէր ունենալու, 14 և հալածանաց համբերելու. 19 կը ծանուցանէ Քրիստոսի ցուցուցած բարերարութիւնը հին աշխարհին :

1 Նմանապէս ա կիները հնազանդ ըլլան իրենց
էրիկներուն. որ եթէ ոմանք խօսքին հնազանդ
չըլլան ալ, բ առանց խօսքի գ շահուին կիներուն
2 վարմունքովը, դ տեսնելով ձեր երկիւղած պարկ-
3 կեշտ վարքը : ե Որ իրենց զարդարանքը չըլլայ
դրսէն մազերու հիւսուածքներով և ոսկիներու
շարքերով կամ շքեղ հանդերձներ հագնելով.
4 զ Հապա սրտին ծածուկ մարդը՝ անեղծութիւնով
հեզ ու հանդարտ հոգիին զարդը թող ըլլայ, որ
5 Աստուծոյ առջեւ խիստ պատուական է : Ինչու
որ առաջ սուրբ կիները՝ որ իրենց յոյսը Աս-
տուծոյ վրայ դրած էին, անձերնին այսպէս կը
զարդարէին՝ իրենց էրիկներուն հնազանդ ըլլալով.
6 Ինչպէս որ Սառա հնազանդ էր Աբրահամին, է և
զանիկայ տէր կը կոչէր. որ դուք բարեգործ ըլլա-
լով ու մէկ երկիւղէ մը չվախնալով՝ անոր աղջիկ-
ները կ'ըլլաք :
7 ը Նմանապէս էրիկները խոհեմութիւնով անոնց
հետ բնակին, թ տկար անօթի պէս պատիւ տա-
լով կիներուն, իբրև կենաց շնորհքին ժառան-
գակիցներ, ժ որ ձեր աղօթքներուն արգելք չըլլայ :
8 Վերջապէս ի ամէնքնիդ մէկ միտքի վրայ ըլլաք,

ա Ա Կոր. ԺԴ. 34 ; Եփե. Ե. 22 ; Կող. Գ. 18 ; Տիտ. Բ. 5 ;
բ Ա Կոր. Է. 16 ;
գ Մատ. ԺԸ. 15 ; Ա Կոր. Թ. 19—22 ;
դ Գլ. Բ. 12 ;
ե Ա Տիմ. Բ. 9 ; Տիտ. Բ. 3, [illegible] ;
զ Սաղ. ԽԵ. 13 ; Հռով. Բ. 29 ; Է. 22 ; Բ Կոր. Դ. 16 ;
է Ծն. ԺԸ. 12 ;
ը Ա Կոր. Է. 3 ; Եփե. Ե. 25 ; Կող. Գ. 19 ;
թ Ա Կոր. ԺԲ. 23 ; Ա Թեսս. Դ. 4 ;
ժ Տես Յոբ. ԽԲ. 8 ; Մատ. Ե. 23, 24 ; ԺԸ. 19 ;
ի Հռով. ԺԲ. 16 ; ԺԵ. 5 ; Փիլ. Գ. 16 ;

կարեկից, զեղբայրասէր, էողորմած ու քաղցրաբա-
9 րոյ ։ ըՉըլլայ որ չարութեան փոխարէն չարութիւն
հատուցանէք, կամ նախատանաց փոխարէն՝ նա-
խատինք. այլ ընդհակառակն օրհնեցէք, գիտնա-
լով որ ասոր համար կանչուեցաք, թոր օրհնու-
10 թիւն ժառանգէք ։ ժՎասն զի ան որ կ՚ուզէ
կեանքը սիրել ու բարի օրեր տեսնել, իիր լեզուն
թող զգուշացնէ չարութենէն, ու իր շրթունքնե-
11 րը նենգութիւն խօսելէն. լՉարութենէ ետ
քաշուի ու բարութիւն ընէ, խխաղաղութիւն
12 փնտռէ և անոր ետևէն երթայ ։ Ինչու որ Տէ-
րոջը աչքերը արդարներուն վրայ է, ծու իր ա-
կանջները անոնց աղօթքին. բայց Տէրոջը երեսը
13 չարագործներուն վրայ է ։ կՈւ ո՞վ ձեզի չարիք
մը պիտի հասցնէ՝ թէ որ դուք բարիին հետե-
14 ւող ըլլաք ։ հԲայց թէ որ արդարութեան համար
չարչարուիք ալ՝ երանելի էք. և ձանոնց ահէն մի՛
15 վախնաք ու մի՛ շփոթիք. Հապա Տէր Աստուածը
սրտերնուդ մէջ սուրբ պահեցէք. և միշտ ղպատ-
րաստ եղէք հեզութեամբ ու երկիւղածութեամբ
պատասխան տալու ամենուն, որ ձեր ունեցած
16 յոյսին պատճառը ձեզի կը հարցնեն. Ու ճբարի
խղճմտանք ունենաք, մոր ինչ բանով որ ձեզ
կը բամբասեն իբրև չարագործներ, ամօթով մնան

զ Հռով. ժբ. 10 ; Եբր. ժգ. 1 ; Գլ. բ. 17 ;
է Կող. գ. 12 ; Եփե. դ. 32 ;
ը Առակ. ժէ. 13 ; ի. 22 ; Մատ. ե. 39 ; Հռով. ժբ. 14, 17 ; ա Կոր. դ. 12 ; ա Թես. ե. 15 ;
թ Մատ. իե. 34 ;
ժ Սաղ. լդ. 12, &c. ;
ի Յակ. ա. 26 ; Գլ. բ. 1, 22 ; Յայտ. ժդ. 5 ;
լ Սաղ. լէ. 27 ; Եսա. ա. 16, 17 ; գ Յով. 11 ;
խ Հռով. ժբ. 18 ; ժդ. 19 ; Եբր. ժբ. 14 ;
ծ Յոհ. թ. 31 ; Յակ. ե. 16 ;
կ Առակ. ժզ. 7 ; Հռով. ը. 28 ;
հ Մատ. ե. 10, 11, 12 ; Գլ. բ. 19 ; դ. 14 ; Յակ. ա. 12 ;
ձ Եսա. ը. 12, 13 ; Երեմ. ա. 8 ; Յոհ. ժդ. 1, 27 ;
ղ Սաղ. ճժթ. 46 ; Գոր. դ. 8 ; Կող. դ. 6 ; բ Տիմ. բ. 25 ;
ճ Եբր. ժգ. 18 ;
մ Տիտ. բ. 8 ; Գլ. բ. 12 ;

անոնք՝ որ Քրիստոսով եղած ձեր բարի վարմունքը
17 կը պախարակեն ։ Ինչու որ աւելի աղէկ է բարե-
գործութիւն ընելով չարչարուիլ՝ թէ որ Աստու-
ծոյ կամքը ան ըլլայ, քան թէ չարագործութիւն
18 ընելով ։ նՎասն զի Քրիստոս ալ մեղքի համար
մէկ անգամ չարչարուեցաւ, Արդարը անարդար-
ներուն վրայ, որ մեզ Աստուծոյ մօտեցընէ. շոր
թէպէտ մեռաւ ոմարմինով, չբայց կենդանի եղաւ
19 հոգիով. Որով պբանտի մէջ եղած ջհոգիներուն
20 ալ գնաց ու քարոզեց. Որոնք ատեն մը ապստամբ
էին, ռերբոր Աստուծոյ երկայնմտութիւնը կը
համբերէր անոնց Նոյի օրերը՝ սերբոր տապանը կը
շինուէր, վորուն մէջը քիչ անձինք՝ այսինքն ութը
21 հոգի ջուրէն ապրեցան. տՈր մեզ ալ ան օրինա-
կին պէս մկրտութիւնը հիմա կ՚ապրեցնէ, (րչէ թէ
մարմինին աղտը մէկդի ձգելը, հապա բարի խղճ-
մտանքին վկայութիւնը առ Աստուած,) ցՅիսուս
22 Քրիստոսի յարութիւնովը. Որ անիկա երկինք
գացած՝ ւԱստուծոյ աջ կողմն է՝ փհրեշտակները
ու իշխանութիւնները և զօրութիւնները իրեն
հնազանդելով ։

ԳԼ. Դ.

1 Կը յորդորէ քրիստոնեաները մեղքէ հրաժարելու, յիշեցը-
նելով Քրիստոսի օրինակը, և աշխարհի վերջը որ մօտենա-
լու վրայ է, 12 և կը մխիթարէ զանոնք հալածանքի վրայով ։

1 Արդ քՔրիստոս որ մեզի համար չարչարուեցաւ
մարմինով, դուք ալ նոյն մտքով զինուորե-

ն Հռով. ե. 6 ; Եբր. թ. 26, 28 ; Գլ. բ. 21 ; դ. 1 ;
շ բ Կոր. ժգ. 4 ;
ո Կող. ա. 21, 22 ;
չ Հռով. ա. 4 ; ը. 11 ;
պ Եսա. ժբ. 7 ; խթ. 9 ; կա. 1 ;
ջ Գլ. ա. 12 ; դ. 6 ;
ռ Ծն. զ. 3, 5, 13 ;
ս Եբր. ժա. 7 ;
վ Ծն. է. 7 ; ը. 18 ; բ Պետ. բ. 5 ;
տ Եփե. ե. 26 ;
ր Տիտ. գ. 5 ;
ց Գլ. ա. 3 ;
ւ Սաղ. ճժ. 1 ; Հռով. ը. 34 ; Եփե. ա. 20 ; Կող. գ. 1 ; Եբր. ա. 3 ;
փ Հռով. ը. 38 ; ա Կոր. ժե. 24 ; Եփե. ա. 21 ;
ք Գլ. գ. 18 ;

ցէք. [Ե] վասն զի ան որ մարմնով չարչարուե-
2 ցաւ, մեղքէն դադարած է. [Զ] Որ ալ չէ՛ թէ մար-
դոց ցանկութիւններուն պէս՝ [Է] հապա Աստուծոյ
կամքին պէս [Ը] ապրիք մարմնի մէջ մնացած ատեն։
3 [Թ] Ինչու որ հերիք է մեզի կենաց անցեալ ժամանա-
կը, որուն մէջ [Ժ] հեթանոսներուն կամքը կատարե-
ցինք, ու գիճութիւններով՝ ցանկութիւններով՝
գինեմոլութիւններով՝ անառակութիւններով՝ ար-
բեցութիւններով ու անօրէն կռապաշտութիւննե-
4 րով վարուեցանք։ Ու աս բանիս կը զարմանան՝
որ դուք նոյն չափազանց անառակութեան մէջ
անոնց հետ չէք վազեր, [Ի] ու հայհոյութիւն կ'ընեն.
5 Որոնք պատասխան պիտի տան անոր՝ [Լ] որ պատրաստ
6 է դատելու կենդանիները ու մեռելները։ [Խ] Քանզի
աս համար մեռելներուն ալ աւետարանը քա-
րոզուեցաւ, որ դատուին մարդոց կողմանէ մարմի-
նով, ու կենդանի ըլլան Աստուծոյ կողմանէ հո-
գիով։
7 [Ծ] Սակայն ամէն բանին վախճանը մօտեցեր է.
[Կ] ուստի զգաստ եղէք ու աղօթքի մէջ արթուն կե-
8 ցէք։ [Հ] Եւ ամէն բանէն առաջ իրարու հետ սըր-
տանց սէ՛ր ունեցէք. [Ձ] ինչու որ սէրը մեղաց բազ-
9 մութիւնը կը ծածկէ։ [Ղ] Իրարու հիւրասիրութիւն

Ե Հռով. զ. 2, 7. Գաղ. ե. 24. Կող. գ. 3, 5.
Զ Հռով. ժդ. 7. Գլ. բ. 1.
Է Յոհ. ա. 13. Հռով. զ. 11. բ Կոր. ե. 15. Յակ. ա. 18.
Ը Գլ. ա. 14.
Թ Եզեկ. խդ. 6. խե. 9. Գոր. ժէ. 30.
Ժ Եփե. բ. 2. դ. 17. ա Թես. դ. 5. Տիտ. գ. 3. Գլ. ա. 14.
Ի Գոր. ժգ. 45. ժը. 6. Գլ. գ. 16.
Լ Գոր. ժ. 42. ժէ. 31. Հռով. ժդ. 10, 12. ա Կոր. ժե. 51, 52. բ Տիմ. դ. 1. Յակ. ե. 9.
Խ Գլ. գ. 19.
Ծ Մատ. իդ. 13, 14. Հռով. ժգ. 12. Փիլ. դ. 5. Եբր. ժ. 25. Յակ. ե. 8. բ Պետ. գ. 9, 11. ա Յոհ. բ. 18.
Կ Մատ. իզ. 41. Ղուկ. իա. 34. Կող. դ. 2. Գլ. ա. 13. ե. 8.
Հ Եբր. ժգ. 1. Կող. գ. 14.
Ձ Առակ. ժ. 12. ա Կոր. ժգ. 7. Յակ. ե. 20.
Ղ Հռով. ժբ. 13. Եբր. ժգ. 2.

10 ցուցուցէք [Ճ] առանց տրտունջ ընելու։ [Մ] Ամէն
մէկը ի՛նչ տեսակ շնորհք որ առաւ, անիկայ իրա-
րու մատակարարեցէ՛ք [Յ] Աստուծոյ զանազան շնորհք-
11 ներուն [Ն] բարի տնտեսներուն պէս։ [Շ] Թէ որ մէկը
խօսի, Աստուծոյ պատգամներուն պէս թող խօսի,
[Ո] թէ որ մէկը մատակարարութիւն ընէ, որպէս
թէ Աստուծոյ շնորհած զօրութենէն թող ընէ, [Չ] որ
ամէն բանի մէջ Աստուած փառաւորուի Յիսուս
Քրիստոսի ձեռքովը. [Պ] որուն փառք և զօրութիւն
յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
12 Սիրելիներ, օտար բան մի՛ սեպէք ձեր նեղու-
թեան բորբոքը, [Ջ] որ ձեզ փորձելու համար կ'ըլլայ,
որպէս թէ օտար բան մը ձեզի հանդիպած է.
13 [Ռ] Հապա ուրախ եղէք՝ [Ս] քանի որ Քրիստոսի չար-
չարանքներուն հաղորդ եղած էք, [Վ] որ անոր փա-
ռքին յայտնուելու ատենն ալ ցնծութեամբ ուրա-
14 խանաք։ [Տ] Թէ որ Քրիստոսի անուանը համար
նախատուիք, երանելի էք. ինչու որ փառաց * և
զօրութեան '' և Աստուծոյ Հոգին ձեր վրայ հանգ-
չած է. * յիրաւի անոնց կողմանէ կը հայհոյուի
անիկայ, բայց ձեր կողմանէ կը փառաւորուի''։
15 [Ր] Չըլլայ որ ձեզմէ մէկը չարչարուի իբրև մարդաս-
պան, կամ գող, կամ չարագործ, [Ց] կամ իբրև
16 ուրիշին բանին խառնուող. Բայց թէ որ քրիս-

Ճ բ Կոր. թ. 7. Փիլ. բ. 14. Փիլիմ. 14.
Մ Հռով. ժբ. 6. ա Կոր. դ. 7.
Յ ա Կոր. ժբ. 4. Եփե. դ. 11.
Ն Մատ. իդ. 45. իե. 14, 21. Ղուկ. ժբ. 42. ա Կոր. դ. 1, 2. Տիտ. ա. 7.
Շ Երեմ. իգ. 22.
Ո Հռով. ժբ. 6, 7, 8. ա Կոր. գ. 10.
Չ Եփե. ե. 20. Գլ. բ. 5.
Պ ա Տիմ. զ. 16. Գլ. ե. 11. Յայտ. ա. 6.
Ջ ա Կոր. գ. 13. Գլ. ա. 7.
Ռ Գոր. ե. 41. Յակ. ա. 2.
Ս Հռով. ը. 17. բ Կոր. ա. 7. դ. 10. Փիլ. գ. 10. Կող. ա. 24. բ Տիմ. բ. 12. Գլ. ե. 1, 10. Յայտ. ա. 9.
Վ Գլ. ա. 5, 6.
Տ Մատ. ե. 11. բ Կոր. ժբ. 10. Յակ. ա. 12. Գլ. բ. 19, 20. գ. 14.
* Ոմանք չունին.
Ր Գլ. բ. 20.
Ց ա Թես. դ. 11. ա Տիմ. ե. 13.

…է իբրև քրիստոնեայ՝ թող չամչնայ, ա հապա
17 այս մասին թող Աստուծոյ փառք տայ ։ բ Վասնզի
ժամանակ է որ դատաստանը Աստուծոյ տունէն
սկսի. գ և թէ որ առաջ մեզմէ կը սկսի, դ հապա
անոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ՝ որոնք Աստուծոյ
18 աւետարանին չեն հնազանդիր ։ ե Ու թէ որ ար-
դարը դժուարաւ կը փրկուի, հապա ամբարիշտը
19 ու մեղաւորը ո՞ւր պիտի գտնուի ։ Ասոր անոնք
որ Աստուծոյ կամացը համեմատ կը չարչարուին,
բարիք գործելով զ իրենց հոգիները թող անոր
յանձնեն, իբրև հաւատարիմ Արարիչին ։

ԳԼ. Ե

1 Կը յորդորէ երէցները որ իրենց հօտերը արածեն, 5 երիտասարդները՝ որ հնազանդ ըլլան. և ամենուն կը պատուիրէ որ պարկեշտ՝ արթուն և հաւատքի մէջ հաստատուն ըլլան, 9 և այսպէս դէմ դնեն իրենց հակառակորդը եղող Սատանային ։

1 Ձեր մէջը եղող երէցներուն կ'աղաչեմ՝ ես ալ ա-
նոնց պէս երէց ըլլալով, է ու Քրիստոսի չար-
չարանացը վկայ, ը և յայտնուելու հանդերձեալ
2 փառքին մասնակից. թ Աստուծոյ հօտը որ ձեր
մէջն է արածեցէ՛ք, վերակացու ըլլալով ժ չէ՛ թէ
ակամայ՝ հապա կամաւ, ի չէ՛ թէ անարգ շահա-
3 խնդրութեամբ՝ հապա յօժարութեամբ, լ Ո՛չ թէ
վիճակներուն վրայ խ տիրելով, ծ հապա հօտին օրի-
4 նակ ըլլալով. կ Ու Հովուապետին երևցած ատե-

ա Գոր. ե. 41 ։
բ Ես. ժ. 12 ։ Երեմ. իե. 29 ։ խթ. 12 ։ Եզեկ. թ. 6 ։ Մաղ. գ. 5 ։
գ Ղու. իգ. 31 ։
դ Ղու. ժ. 12, 14 ։
ե Առակ. ժա. 31 ։ Ղու. իգ. 31 ։
զ Սաղ. լա. 5 ։ Ղու. իգ. 46 ։ բ Տիմ. ա. 12 ։
է Ղու. իդ. 48 ։ Գոր. ա. 8, 22 ։ ե. 32 ։ ժ. 39 ։
ը Հռով. ը. 17, 18 ։ Յայտ. ա. 9 ։
թ Յոհ. իա. 15, 16, 17 ։ Գոր. ի. 28 ։
ժ ա Կոր. թ. 17 ։
ի ա Տիմ. գ. 3, 8 ։ Տիտ. ա. 7 ։
լ Սաղ. լգ. 12 ։ հդ. 2 ։
խ Եզեկ. լդ. 4 ։ Մատ. ի. 25, 26 ։ բ Կոր. ա. 23 ։
ծ Փիլ. գ. 17 ։ բ Թես. գ. 9 ։ ա Տիմ. դ. 12 ։ Տիտ. բ. 7 ։
կ Եբր. ժգ. 20 ։

նը հ փառաց անթառամ պսակը պիտի ընդունիք ։
5 ձ Նմանապէս դուք երիտասարդներ՝ հնազանդ եղէք
երէցներուն. և ղ ամէնքդ իրարու հնազանդ ըլլա-
լով՝ խոնարհութի՛ւն հագէք. ճ ինչու որ Ա-
ստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ,
6 բայց մ խոնարհներուն շնորհք կու տայ ։ յ Ուրեմն
Աստուծոյ հզօր ձեռքին տակը խոնարհեցէ՛ք, որ
7 ձեզ ժամանակին բարձրացընէ ։ ն Ձեր ամէն հոգը
անո՛ր ձգեցէք, վասն զի անիկա ձեզի համար կը
հոգայ ։
8 շ Արթո՛ւն կեցէք, հսկեցէ՛ք, ո ինչու որ ձեր
հակառակորդը Սատանան մռնչող առիւծի պէս կը
9 պտըտի, ու կը փնտռէ թէ ո՛վ կլլէ. չ Անոր
դէմ կեցէք հաւատքով հաստատուած, պ գիտնա-
լով որ ձեր եղբայրներն ալ աշխարհի մէջ նոյն չար-
չարանքները կը կրեն ։
10 Եւ բոլոր շնորհաց Աստուածը՝ ջ որ մեզ իր յա-
ւիտենական փառքին կանչեց Քրիստոս Յիսուսի
ձեռքովը, ռ քիչ մը ատեն նեղութիւն կրելնէդ ետ-
քը, ինքը ձեզ կատարելա՛լ ընէ, ս հաստատէ, զօ-
11 րացընէ ու հիմնէ ։ տ Իրեն փառք և զօրութիւն
յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։
12 ր Սիղուանոս հաւատարիմ եղբօրը ձեռքովը՝

հ Գլ. ա. 4 ։
ձ ա Կոր. թ. 25 ։ բ Տիմ. դ. 8 ։ Յակ. ա. 12 ։
ղ Հռով. ժբ. 10 ։ Եփե. ե. 21 ։ Փիլ. բ. 3 ։
ճ Յակ. դ. 6 ։
մ Ես. ծէ. 15 ։ կզ. 2 ։
յ Յակ. դ. 10 ։
ն Սաղ. լէ. 5 ։ ծե. 22 ։ Մատ. զ. 25 ։ Ղու. ժբ. 11, 22 ։ Փիլ. դ. 6 ։ Եբր. ժգ. 5 ։
շ Ղու. իա. 34, 36 ։ ա Թես. ե. 6 ։ Գլ. դ. 7 ։
ո Յոբ. ա. 7 ։ բ. 2 ։ Ղու. իբ. 31 ։ Յայտ. ժբ. 12 ։
չ Եփե. զ. 11, 13 ։ Յակ. դ. 7 ։
պ Գոր. ժդ. 21 ։ ա Թես. գ. 3 ։ բ Տիմ. գ. 12 ։ Գլ. բ. 21 ։
ջ ա Կոր. ա. 9 ։ ա Տիմ. զ. 12 ։
ռ բ Կոր. դ. 17 ։ Գլ. ա. 6 ։
ս Յուդ. 24 ։
վ բ Թես. բ. 16 ։ գ. 3 ։
տ Գլ. դ. 11 ։ Յայտ. ա. 6 ։
ր բ Կոր. ա. 19 ։

(ինչպէս ես կը կարծեմ ,) ջհամառօտ մը ձեզի
գրեցի , յորդորելով ու վկայելով ռթէ աս է
Աստուծոյ ճշմարիտ շնորհքը , որուն մէջը հաստատ
13 կեցեր էք : Բարեւ կ՚ընէ ձեզի Բաբելոնի մէջ եղած
եկեղեցին որ ձեզի հետ ընտրուած է , ու սիմ որդիս
14 Մարկոս ալ : վԲարեւ տուէք իրարու սիրոյ համ-
բոյրով ; տխաղաղութիւն ձեր ամենուն հետ որ
Քրիստոս Յիսուսի մէջ էք : Ամէն :

ջ Եբր . ժգ . 22 ;
ռ Գոր . ի . 24 ; ա Կոր . ժե . 1 ; բ Պետ . ա . 12 ;
ս Գոր . ժբ . 12 , 25 ;
վ Հռով . ժզ . 16 ; ա Կոր . ժզ . 20 ; բ Կոր . ժգ . 12 ; ա Թես . ե . 26 ;
տ Եփե . զ . 23 ;

ԵՐԿՐՈՐԴ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաքեալը հաստատելով քրիստոնեաները Աստուծոյ շնորհացը մէջ աճելու յուսով , 5 կը յորդորէ զանոնք որ հաւատքով ու բարի գործքով իրենց կոչումը հաստատ պահեն ; 12 որն որ ինքը հոգ կը տանի անոնց միտքը ձգելու , գիտնալով որ իր մահը մօտ է ; 16 Կը խրատէ որ հաստատ ըլլան Քրիստոսի հաւատքին մէջ , ցուցընելով թէ անիկայ է Աստուծոյ ճշմարիտ Որդին , որովհետեւ առաքեալները անոր վեհափառութեանը ականատես եղան , եւ Հայրը ու մարգարէներն ալ անոր համար վկայեցին ;

1 Շմաւոն Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի ծառայ եւ
առաքեալ , ձեզի աոր մեր հետը նոյն պա-
տուական հաւատքին հասած մեր Աստուծոյն ու
Փրկչին Յիսուս Քրիստոսի արդարութիւնովը ·

ա Հռով . ա . 12 ; բ Կոր . դ . 13 ; Եփե . դ . 5 ; Տիտ . ա . 4 ;

2 բՇնորհք եւ խաղաղութիւն ձեր վրայ աւելնայ
Աստուծոյ ու մեր Տէրոջը Յիսուսի գիտութիւ-
նովը :
3 Ինչպէս որ իր աստուածային զօրութիւնը կե-
նաց եւ աստուածպաշտութեան վերաբերեալ ամէն
բաները մեզի տուաւ գանոր գիտութիւնովը՝ դոր
մեզ փառքով ու առաքինութիւնով հրաւիրեց ·
4 եՈրոնցմով ամենամեծ ու պատուական խոստմունք-
ներ տրուած են մեզի , Որպէս զի անոնցմով աս-
տուածային բնութեանը հաղորդ ըլլաք՝ զաշխարհի
մէջ ցանկութենէ յառաջ եկած ապականութենէն
5 փախչելով : էՆաեւ աս բանիս համար բոլոր ջան-
քերնիդ դրած՝ ձեր հաւատքին վրայ առաքինու-
թիւն աւելցուցէք , ու առաքինութեան վրայ
6 գիտութիւն , Ու գիտութեան վրայ ժուժկալու-
թիւն , ու ժուժկալութեան վրայ համբերու-
թիւն , եւ համբերութեան վրայ աստուածպաշ-
7 տութիւն , Ու աստուածպաշտութեան վրայ եղ-
բայրսիրութիւն , ըՈւ եղբայրսիրութեան վրայ
8 սէր : Վասն զի քանի որ աս բաները ձեր վրայ կը
գտնուին ու կ՚աճին , թպարապ ու անպտուղ չեն
ըներ ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսը ճանչնալուն
9 մէջ : Բայց որուն քով որ աս բաներս չկայ , ժա-
նիկայ կոյր է ու կարճատես , իոր մոռցեր է իր առ-
10 ջի մեղքերէն մաքրուիլը : Աստ համար՝ եղբայրներ՝
աւելի ջանք ըրէք լոր ձեր կոչումը ու ընտրութիւնը
հաստատէք , ինչու որ աս ընելով՝ խբնաւ պիտի

բ Դան . դ . 1 ; զ . 25 ; ա Պետ . ա . 2 ; Յուդ . 2 ;
գ Յով . ժէ . 3 ;
դ ա Թես . բ . 12 ; դ . 7 ; բ Թես . բ . 13 ; բ Տիմ . ա . 9 ; ա Պետ . բ . 9 ; գ . 9 ;
ե բ Կոր . է . 1 ;
զ բ Կոր . գ . 18 ; Եփե . դ . 24 ; Եբր . ժբ . 10 ; ա Յով . գ . 2 ;
է Գղ . բ . 18 , 20 ;
ը Գղ . դ . 18 ;
թ Գաղ . զ . 10 ; ա Թես . գ . 12 ; ե . 15 ; ա Յով . դ . 21 ;
ժ Յով . ժե . 2 ; Տիտ . գ . 14 ;
ի ա Յով . բ . 9 , 11 ;
լ Եփե . ե . 26 ; Եբր . թ . 14 ; ա Յով . ա . 7 ;
խ ա Յով . գ . 19 ;
ծ Գղ . գ . 17 ;

11 չվրիպիք . Քանզի այսպէս ձեզի առատօրէն պիտի
շնորհուի մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի
յաւիտենական թագաւորութիւնը մտնելը :
12 է Ուստի ես միշտ աս բաները մտքերնիդ ձգե-
լու վրայով զանցառու պիտի չըլլամ , ը թէեւ
գիտէք և հաստատուած էք ներկայ ճշմար-
13 տութեանս վրայ : Նաեւ իրաւունք կը սեպեմ ,
թ թէ քանի որ աս *մարմինիս մէջն եմ՝ ժ մտքերնիդ
14 ձգելով ձեզ արթընցընեմ : ի Քանզի գիտեմ որ
ես շուտով աս իմ մարմինս պիտի մերկանամ ,
լ ինչպէս որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը յայտ-
15 նեց ինծի : Ուստի պիտի ջանամ որ իմ աշխարհէ
ելլելէս ետքն ալ միշտ կարող ըլլաք աս բաները
16 յիշելու : խ Ինչու որ չէ թէ մենք վարպետու-
թեամբ շինուած առասպելներու ետեւէ երթալով՝
մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը ու գա-
լուստը ձեզի ցուցուցինք , ծ հապա անոր մեծափա-
17 ռութեանը ականատես ըլլալով : Վասն զի ինքը
Հօր Աստուծմէ փառք ու պատիւ առաւ , ան
մեծվայելչութեան փառքէն անանկ ձայն մը գալով
թէ կ Աս է իմ սիրելի Որդիս , որուն հաճեր
18 եմ : Նաեւ աս երկինքէն եկած ձայնը մենք լսեցինք ,
19 հ որ անոր հետ էինք սուրբ լեռանը վրայ : Նաեւ
մարգարէական խօսքն ալ ունինք՝ որ աւելի հաս-
տատուն է . ու աղէկ կ'ընէք՝ թէ որ անոր . մտա-

է Հռով. ժե. 14, 15 : Փիլ. գ. 1 : Գլ. գ. 1 : ա Յոհ. բ. 21 : Յուդ. 5 :
ը ա Պետ. ե. 12 : Գլ. գ. 17 :
թ բ Կոր. ե. 1, 4 :
* Յուն. վրանիս
ժ Գլ. գ. 1 :
ի Տես բ Օր. գ. 21, 22 : լա. 14 : բ Տիմ. դ. 6 :
լ Յոհ. իա. 18, 19 :
խ ա Կոր. ա. 17 : բ. 1, 4 : բ Կոր. բ. 17 : դ. 2 :
ծ Մատ. ժէ. 1, 2 : Մար. թ. 2 : Յոհ. ա. 14 : ա Յոհ. ա. 1 : դ. 14 :
կ Մատ. գ. 17 : ժէ. 5 : Մար. ա. 11 : թ. 6 : Ղուկ. գ. 22 : թ. 35 :
հ Տես Ել. գ. 5 : Յես. ե. 15 : Մատ. ժէ. 6 :

դրութիւն ընէք , ձ որպէս թէ մութ տեղը լոյս
տուող ճրագի մը , մինչեւ որ ցորեկը լուսնայ ղ ու
20 արուսեակը սրտերնուդ մէջը ծագի : Բայց առաջ
աս գիտնաք , ճ որ գրոց ամէն մարգարէութիւն իր
21 յատուկ մեկնութիւնը չունի : մ Ինչու որ մար-
գարէութիւն մը երբեք մարդոց կամքին պէս չը-
տրուեցաւ , յ հապա Աստուծոյ սուրբ մարդիկը
Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան :

ԳԼ. Բ

1 Կը ծանուցանէ թէ սուտ վարդապետներ պիտի ելլեն , և կը նախաձայնէ՝ թէ՛ անոնց ու թէ անոնց հետեւողներուն անպարկեշտ վարմունքը ու պատիժը . 7 ուսկից ազատ պիտի մնան բարեպաշտները , ինչպէս որ Ղովտ Սոդոմէն ազատեցաւ : 10 Ու անսանձ և հայհոյիչ խաբեբաներուն վարմունքը աւելի մանրամասնաբար կը նկարագրէ , որպէս զի տեսնելով մարդիկ շուտով կարենան ճանչնալ զանոնք , և անոնցմէ հեռու կենալ :

1 ն Բայց սուտ մարգարէներ ալ կ'ըլլային ժողովուր-
դին մէջ , շ ինչպէս որ ձեր մէջն ալ սուտ
վարդապետներ պիտի ըլլան , որ գաղտուկ պիտի
մոլորեցնեն կորուսիչ հերձուածողութիւններ , ո ու
զիրենք ծախու առնող Տէրը չ ուրանալով՝ պ իրենց
2 վրայ պիտի բերեն արագահաս կորուստը . Նաեւ շա-
տերը անոնց կորստական ընթացքը ետեւէն պիտի եր-
թան , որոնց համար ճշմարտութեան ճամբան պի-
3 տի հայհոյուի . ջ Նաեւ ագահութիւնով խորամանկ-

ձ Սաղ. ճժթ. 105 : Յոհ. ե. 35 :
ղ Յայտ. բ. 28 : իբ. 16 : Տես բ Կոր. դ. 4, 6 :
ճ Հռով. ժբ. 6 :
մ բ Տիմ. գ. 16 : ա Պետ. ա. 11 :
յ բ Թագ. իգ. 2 : Ղուկ. ա. 70 : Գործ. ա. 16 : գ. 18 :
ն բ Օր. ժգ. 1 :
շ Մատ. իդ. 11 : Գործ. ի. 30 : ա Կոր. ժա. 19 : ա Տիմ. դ. 1 : բ Տիմ. գ. 1, 5 : ա Յոհ. դ. 1 : Յուդ. 18 :
ո ա Կոր. զ. 20 : Գաղ. գ. 13 : Եփե. ա. 7 : Եբր. ժ. 29 : ա Պետ. ա. 18 : Յայտ. ե. 9 :
չ Յուդ. 4 :
պ Փիլ. գ. 19 :
ջ Հռով. ժզ. 18 : բ Կոր. ժբ. 17, 18 : ա Տիմ. զ. 5 : Տիտ. ա. 11 :

կութեամբ շինուած խօսքերով ե ձեզ վաճառա-
շահութեան պիտի գործածեն. զ որոնց դատա-
պարտութիւնը շատոնցմէ պատրաստ ըլլալով չու-
շանար, ու անոնց կորուստը չմրափեր ։
4 Վասն զի թէ որ Աստուած է մեղք գործող
ը հրեշտակներուն չխնայեց, թ հապա խաւարի կա-
պերով տարտարոսը ձգած՝ դատաստանի պահել
5 տուաւ. Ու առջի աշխարհին ալ չխնայեց. ժ միայն
թէ Նոյ ութերորդ անձը՝ ի արդարութեան քարո-
զիչը պահեց, լ երբոր ջրհեղեղը ամբարիշտներուն
6 աշխարհին վրայ բերաւ. խ Նաեւ Սոդոմի ու Գոմորի
քաղաքները մոխիր դարձնելով ու կործանելով
դատապարտեց, ծ յետքէն ամբարշտութիւն ընելու
7 մարդոց օրինակ ընելով զանոնք. կ Նաեւ ազատեց ար-
դար Ղովտը՝ որ անօրէններուն անառակ վարմուն-
8 քէն ձանձրացեր էր. (Ինչու որ ան արդարը անոնց
մէջը կենալով՝ հ աչքովը տեսնելով ու ականջովը
լսելով, օրէ օր իր արդար հոգին կը տանջէր անոնց
9 անօրէն վարմունքովը.) ձ Տէրը գիտէ բարեպաշտ-
ները փորձութենէ ազատելը, և անիրաւները
տանջանքի համար դատաստանի օրուան պահելը ։
10 ղ Մանաւանդ անոնք որ պղծալից ցանկութեամբ
մարմինի ետեւէ կ'երթան, և տէրութիւնը կ'ա-
նարգեն, ճ ինքնահաւան ու յանդուգն են, չեն
11 վախնար փառաւորներուն դէմ հայհոյելու. մ Երբ-
որ հրեշտակները՝ որ անոնցմէ շատ մեծ են զօ-
րութիւնով ու կարողութիւնով, Տէրոջը առջեւ

ե Բ Կոր. բ. 17; Գղ. ա. 16;
զ Բ Օր. լբ. 35; Յուդ. 4, 15;
է Յօհ. ը. 44; ա Յօհ. գ. 8;
ը Յոբ. դ. 18; Յուդ. 6;
թ Ղուկ. ը. 31; Յայտ. ի. 2, 3;
ժ Ծն. է. 1, 7, 23; Եբր. ժա. 7; ա Պետ. գ. 20;
ի ա Պետ. գ. 19;
լ Գղ. գ. 6;
խ Ծն. ժթ. 24; Բ Օր. իթ. 23; Յուդ. 7;
ծ Թուոց. իզ. 10;
կ Ծն. ժթ. 16;
հ Սաղ. ճժթ. 139, 158; Եզեկ. թ. 4;
ձ Սաղ. լդ. 17, 19; ա Կոր. ժ. 13;
ղ Յուդ. 4, 7, 8, 10, 16;
ճ Յուդ. 8;
մ Յուդ. 9;

հայհոյութեամբ դատապարտութիւն չեն բերեր
12 անոնց վրայ ։ յ Բայց ասոնք անբան անասուն-
ներու պէս (որ բնականաբար որսի ու ապականու-
թեան համար եղած են,) չգիտցած բաներնուն դէմ
կը հայհոյեն, և իրենց ապականութիւնովը պիտի
13 ապականին, ն Անիրաւութեան վարձքը ընդունե-
լով. շ որ ցորեկուան մէջ եղած զեղխութիւնը
զուարճութիւն կը սեպեն. ո Աղտ ու բիծ են,
իրենց խաբէութիւններովը զուարճանալով՝ չ ձեզի
14 հետ կերուխումի նստած ատեննին. Շնութեամբ
լեցուն աչքեր ունին, որ մեղքէ չեն դադարիր.
անհաստատ հոգիները կը խաբեն. պ ագահու-
թեան սովորած սիրտեր ունին. անիծեալ զաւակ-
15 ներ են. Շիտակ ճամբան ձգելով մոլորեցան,
ջ Բէովրեան Բաղաամին ճամբուն հետեւելով, որ
16 անիրաւութեան վարձքը սիրեց. Բայց իր անօրէ-
նութեանը յանդիմանութիւնը առաւ. անխօս
էշը մարդկային ձայնով խօսելով՝ մարգարէին
17 յիմարութիւնը արգիլեց ։ ռ Ասոնք ջուր չունեցող
աղբիւրներ են, ու փոթորիկէ քշուած մէգեր, ո-
րոնց համար թանձր խաւարը պահուած է յաւի-
18 տեան ։ ս Վասնզի ունայնութեան հպարտ խօսքեր
ընելով՝ գիճութիւններով՝ մարմնոյ ցանկութիւն-
ներով կը խաբեն զանոնք՝ վ որ քիչ մը առաջ փա-
խեր էին անոնցմէ՝ որ մոլորութեան մէջ կը պտը-
19 տին. տ Անոնց ազատութիւն կը խոստանան, ր և
իրենք ապականութեան ծառաներ են. վասն զի
ինչ բանէ որ մէկը յաղթուի, անոր ծառայ ալ

յ Երեմ. ժբ. 3; Յուդ. 10;
ն Փիլ. գ. 19;
շ Տես Հռով. ժգ. 13;
ո Յուդ. 12;
չ ա Կոր. ժա. 20, 21;
պ Յուդ. 11;
ջ Թուոց. իբ. 5, 7, 21, 23, 28; Յուդ. 11;
ռ Յուդ. 12, 13;
ս Յուդ. 16;
վ Գործ. բ. 40; Գղ. ա. 4; Հմր 20;
տ Գաղ. ե. 13; ա Պետ. բ. 16;
ր Յօհ. ը. 34; Հռով. զ. 16;

20 կ'ըլլայ ։ ÷Ինչու որ եթէ +Տէր ու Փրկիչ Յի-
սուս Քրիստոսի գիտութիւնովը աշխարհիս պղծու-
թիւններէն •հրաժարելէն ետեւ՝ դարձեալ անոնց բա-
ներէն բռնուած յաղթուին, անոնց վերջը առջինէն
21 գէշ կ'ըլլայ ։ §Ինչու որ աղէկ էր անոնց՝ որ ընաւ
արդարութեան ճամբան ճանչցած չըլլային, քան
թէ ճանչնալով ետ դառնային այն սուրբ պատուի-
22 րանքէն՝ որ իրենց յանձնուեցաւ ։ Սակայն անոնց
հանդիպեցաւ այն ճշմարիտ առակին բանը, թէ
–Շունը նորէն իր փսխածին կը դառնայ, ու
լուացուած խոզը ցեխի մէջ թաւալելու ։

ԳԼ. Գ.

1 Կը հաստատէ Քրիստոսի դատաստանի գալուն ճշմարտութիւնը ։ 10 կը նկարագրէ թէ ինչ կերպով աշխարհս պիտի վերջանայ ։ 11 կը յորդորէ քրիստոնեաները որ աս բանին սպասելով՝ անարատ վարք ունենան, 15 ու համոզուին թէ Տէրոջը երկայնմտութիւնը իրենց փրկութեանը համար է, ինչոր որ Պօղոս գրեր էր անոնց իր թուղթերուն մէջ ։

1 Սիրելինե՛ր, աս երկրորդ թուղթը հիմա ձեզի կը
գրեմ, =որոնցմով ձեր անկեղծ միտքը կ'ար-
2 թընցընեմ յիշելու, Որ սուրբ մարգարէներէն ա-
ռաջուց ըսուցուած խօսքերը, ու Ê մեր՝ այսինքն Տէ-
րոջը ու Փրկչին առաքեալներուն պատուէրները
3 միտքերնիդ բերէք ։ ‡Նախ աս գիտնաք,
որ վերջին օրերը ծաղր ընողներ պիտի գան,
⊤որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ
4 պիտի քալեն ։ Ու պիտի ըսեն, ⊢Ո՞ւր է ա-
նոր գալուն խոստումը ։ վասն զի քանի որ
հայրերը քնացան, ամէն բան անանկ կայ կը մնայ

÷ Գլ. ա. 4 ։ Հմր 18 ։
+ Գլ. ա. 2 ։
• Մատ. ժբ. 45 ։ Ղու. ժա. 26 ։ Եբր. զ. 4 ։ ⁂ ։ ժ. 26, 27 ։
§ Ղու. ժբ. 47, 48 ։ Յօհ. թ. 41 ։ ժե. 22 ։
– Առակ. իզ. 11 ։
= Գլ. ա. 13 ։
Ê Յուդ. 17 ։
‡ ա Տիմ. դ. 1 ։ բ Տիմ. գ. 1 ։ Յուդ. 18 ։
⊤ Գլ. բ. 10 ։
⊢ Եսա. ե. 19 ։ Երեմ. ժէ. 15 ։ Եզեկ. ժբ. 22, 27 ։ Մատ. իդ. 48 ։ Ղու. ժբ. 45 ։

5 արարածոց սկիզբէն հետէ ։ Քանզի անոնք (որ
իրենց ուզածը աս է) ան բանը մոռցեր են, թէ
երկինքը առաջուց եղաւ, ու երկիրը ջուրերէն ու
ջուրերով հաստատ կեցեր է ⊢Աստուծոյ խօսքովը ։
6 ⊏Որով հին աշխարհը ջրհեղեղով ապականած
7 կորսուեցաւ ։ Բ Իսկ հիմակուան երկինքը ու երկիրը
նոյն խօսքով պահպանուած են, ♂ մինչեւ դատաս-
տանին ու ամբարիշտ մարդոց կորստեան օրը
8 կրակի համար պահուած ։ Իսկ աս մէկ բանը ձեզմէ
ծածուկ չմնայ՝ սիրելիներ, որ Տէրոջը քով մէկ
օրը հազար տարուան պէս է, ու հազար տարին
9 մէկ օրուան պէս ։ Լ Տէրը չուշացըներ իր խոստ-
մունքը, ինչպէս որ ոմանք ուշացուցած կը սեպեն,
⊢ հապա մեզի երկայնամիտ կ'ըլլայ ։ Ծ ինչու որ
չուզեր որ մէկը կորսուի, { հապա որ ամէնքը ա-
10 պաշխարանքի գան ։ ՙ Սակայն Տէրոջը օրը գողի
պէս պիտի գայ, Ͻ որ ան ատենը երկինքը սաստիկ
շառաչիւնով պիտի անցնի, ու տարերքները բորբո-
կած պիտի լուծուին, երկիրս ալ՝ ու ինչ գործքեր
11 որ անոր մէջը կը գտնուին, պիտի այրուին ։ Ուս-
տի աս ամէն բաները որ պիտի լուծուին, ձեզի
ինչպէս մարդիկ ըլլալ կը վայլէ՝ սուրբ վարմուն-
քով ու բարեպաշտութեամբ, ‡ սպասելով
12 Ու արտորալով Աստուծոյ օրուանը գալուն,
ⸯ որուն մէջ երկինքը կրակով այրուած պիտի լու-

ղ Սաղ. իգ. 2 ։ ճլգ. 6 ։ Կող. ա. 17 ։
⊢ Ծն. ա. 6, 9 ։ Սաղ. լգ. 6 ։ Եբր. ժա. 3 ։
⊏ Ծն. է. 11, 21, 22, 23 ։ Գլ. բ. 5 ։
Բ Հմր 10 ։
♂ Մատ. իե. 41 ։ բ Թես. ա. 8 ։
⊢ Սաղ. ղ. 4 ։
Լ Ամբ. բ. 3 ։ Եբր. ժ. 37 ։
⊢ Եսա. լ. 18 ։ ա Պետ. գ. 20 ։ Հմր 15 ։
Ծ Եզեկ. ժը. 23, 32 ։ լգ. 11 ։
{ Հռով. բ. 4 ։ ա Տիմ. բ. 4 ։
ՙ Մատ. իդ. 43 ։ Ղու. ժբ. 39 ։ ա Թես. ե. 2 ։ Յայտ. գ. 3 ։ ժզ. 15 ։
Ͻ Սաղ. ճբ. 26 ։ Եսա. ծա. 6 ։ Մատ. իդ. 35 ։ Մար. ժգ. 31 ։ Եբր. ա. 11 ։ Յայտ. ի. 11 ։ իա. 1 ։
ղ ա Պետ. ա. 15 ։
ճ ա Կոր. ա. 7 ։ Տիտ. բ. 13 ։
ⸯ Սաղ. ծ. 3 ։ Եսա. լդ. 4 ։

ծուխ, ժ ու տարերքները բոցնկած պիտի հալին:
13 ի Սակայն իր խոստմունքին համեմատ նոր երկինքի
մը ու նոր երկրի մը կը սպասենք, որոնց մէջ ար-
դարութիւն կը բնակի:
14 Ուստի սիրելիներ՝ ասոնց սպասելով ջանացէք,
լ որ ան ձեզ անբիծ ու անարատ գտնէ խաղաղու-
15 թիւնով. խ Նաեւ մեր Տէրոջը երկայնմտութիւնը
փրկութիւն սեպեցէք. ինչպէս որ մեր սիրելի եղ-
բայրը Պօղոս ալ իրեն տրուած իմաստութիւնովը
16 գրեց ձեզի. ծ Ինչպէս որ ամէն թուղթերուն մէջ
ալ աս բաներուս վրայով կը խօսի. որոնց
մէջ քանի մը դժուարիմաց խօսքեր կը գտնուին,
որ զանոնք տգէտները ու անհաստատները
ծուռ կողմը կը դարձընեն, ինչպէս ուրիշ
գիրքերն ալ՝ իրենց անձին կորսուեանը համար:
17 Ուրեմն դուք՝ սիրելիներ՝ ղ առաջուց գիտնալով
Զգոյշ եղէք, որ չըլլայ թէ անօրէններուն խաբէ-
ութենէն բռնուած՝ ձեր հաստատութենէն իյնաք.
18 մ Հապա աճեցէք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս
Քրիստոսի շնորհքովը ու գիտութիւնովը. յ անոր
փառք հիմա ալ, ու մինչեւ յաւիտենական օրն
ալ: Ամէն:

ժ Միք. ա. 4; Հմր 10;
ի Եսա. կե. 17; կզ. 22; Յայտ. իա. 1, 27;
լ ա Կոր. ա. 8; ժե. 58; Փիլ. ա. 10; ա Թես. գ. 13; ե. 23;
խ Հռով. բ. 4; ա Պետ. գ. 20; Հմր 9;
ծ Հռով. ը. 19; ա Կոր. ժե. 24; ա Թես. դ. 14;
ղ Մար. ժգ. 23; Գղ. ա. 12;
ճ Եփե. դ. 14; Գղ. ա. 10, 11; բ. 18;
մ Եփե. դ. 15; ա Պետ. բ. 2;
յ բ Տիմ. դ. 18; Յայտ. ա. 6;

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաքեալը կը նկարագրէ Քրիստոսի անձը՝ որով մենք յաւիտենական կեանք ունինք՝ Աստուծոյ հետ հաղորդութիւն ունենալով. 5 կը յորդորէ որ ասոր հետ սուրբ վարք ալ ունենանք, որ վկայութիւն մը ըլլայ թէ մեր հաւատքին դաւանութիւնը և հաղորդութիւնը ճշմարիտ է, և որ հաստատ ապահովութիւն մը ունենանք թէ Քրիստոսի մահուամբը մեր մեղքերուն թողութիւն կայ.

1 Կենաց Բանին վրայով — ա որ սկիզբէն էր, որուն
համար լսեցինք, որն որ մեր աչքերովը տե-
սանք, բ որուն նայեցանք գ ու մեր ձեռքերը շօ-
2 շափեցին. (դ Նաեւ կեանքը ե յայտնուեցաւ, ու
տեսանք զ և կը վկայենք է ու ձեզի կը պատ-
մենք այն յաւիտենական կեանքը, ը որ Հօրը քովն
3 էր՝ ու մեզի յայտնուեցաւ.) թ Ան որ տեսանք ու
լսեցինք ձեզի կը պատմենք, որ դուք ալ մեզի հետ
հաղորդութիւն ունենաք. ժ և մեր հաղորդութիւ-
նը Հօրը հետ է ու իր Որդւոյն Յիսուս Քրիստո-
4 սի հետ: Նաեւ աս բաները կը գրենք ձեզի, ի որ
ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ:
5 լ Նաեւ ասիկայ է այն պատգամը որ իրմէն լսեցինք
ու ձեզի կը պատմենք, խ թէ Աստուած լոյս է, ու

ա Յոհ. ա. 1; Գղ. բ. 13;
բ Յոհ. ա. 14; բ Պետ. ա. 16; Գղ. դ. 14;
գ Ղու. իդ. 39; Յոհ. ի. 27;
դ Յոհ. ա. 4; ժա. 25; ժդ. 6;
ե Հռով. ժզ. 26; ա Տիմ. գ. 16; Գղ. գ. 5;
զ Յոհ. իա. 24; Գոր. բ. 32;
է Գղ. ե. 20;
ը Յոհ. ա. 1, 2;
թ Գոր. դ. 20;
ժ Յոհ. ժէ. 11; ա Կոր. ա. 9; Գղ. բ. 24;
ի Յոհ. ժե. 11; ժզ. 24; բ Յոհ. 12;
լ Գղ. գ. 11;
խ Յոհ. ա. 9; ը. 12; թ. 5; ժբ. 35, 36;

6 անոր մէջը բնաւ խաւար չկայ ։ ի Թէ որ ըսենք
թէ Անոր հետ հաղորդութիւն ունինք, ու խաւա-
րի մէջ պտըտինք, սուտ կը խօսինք և ճշմար-
7 տութիւնը չենք ըներ ։ Հապա թէ որ լուսոյ մէջ
քալենք, ինչպէս որ անիկայ լուսոյ մէջ է, իրարու
հետ հաղորդութիւն կ'ունենանք, լ ու անոր Որ-
դւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղ-
8 քէ կը սրբէ ։ խ Թէ որ ըսենք թէ Մենք մեղք մը
չունինք, ինքզինքնիս կը խաբենք, ծ ու մեր մէջը
9 ճշմարտութիւն չկայ ։ կ Թէ որ խոստովանինք մեղ-
քերնիս, հաւատարիմ ու արդար է անիկայ մեր
մեղքերուն թողութիւն տալու, հ և մեզ բոլոր ան-
10 իրաւութենէ սրբելու ։ Թէ որ ըսենք թէ Մեղք
մը չգործեցինք, սուտլուց կ'ընենք անիկայ, ու
անոր խօսքը մեր մէջը չէ ։

ԳԼ. Բ.

1 Կը զգուշացընէ տկարութեան մեղքերէն ։ 8 Կը սորվեցընէ թէ ճշմարտապէս զննուած ճանչնալը կը կայանայ անոր պատուիրանքները պահելու մէջ, 9 մեր եղբայրները սիրելու, 15 և աշխարհը չսիրելու մէջ ։ 18 Պարտինք հեռու կենալ մոլորեցուցիչներէն, 20 որոնց մոլորութիւններէն ապահով և ազատ կ'ըլլան՝ հաստատուն հաւատքով և սուրբ վարքով պահպանուած ։

1 Իմ որդեակներս՝ աս բաները ձեզի կը գրեմ որ
մեղք չգործէք ։ Եւ թէ որ մէկը մեղք գործելու
ըլլայ, ձ Հօրը քով բարեխօս ունինք Յիսուս
2 Քրիստոս արդարը ։ ղ Եւ անիկայ մեր մեղքերուն
քաւութիւն է, և ոչ թէ միայն մերիններուն,
ճ հապա բոլոր աշխարհին ալ ։

ի բ Կոր. զ. 14 ։ Գլ. բ. 4 ։
լ ա Կոր. զ. 11 ։ Եփե. ա. 7 ։ Եբր. թ. 14 ։ ա Պետ. ա. 19 ։ Գլ. բ. 2 ։ Յայտ. ա. 5 ։
խ գ Թագ. ը. 46 ։ բ Մն. զ. 36 ։ Յոբ. թ. 2 ։ ժե. 14 ։ իե. 4 ։ Առակ. ի. 9 ։ Ժող. է. 20 ։ Յակ. գ. 2 ։
ծ Գլ. բ. 4 ։
կ Սաղ. լբ. 5 ։ Առակ. իը. 13 ։
հ Հմր 7 ։ Սաղ. ծա. 2 ։
ձ Հռովմ. ը. 34 ։ ա Տիմ. բ. 5 ։ Եբր. է. 25 ։ թ. 24 ։
ղ Հռով. գ. 25 ։ բ Կոր. ե. 18 ։ Գլ. ա. 7 ։ դ. 10 ։
ճ Յոհ. ա. 29 ։ դ. 42 ։ ժա. 51, 52 ։ Գլ. դ. 14 ։

3 Ու ասով գիտենք թէ անիկայ ճանչցանք, թէ
4 որ անոր պատուիրանքները պահենք ։ ա Ան որ
կ'ըսէ թէ Ես անիկայ ճանչցայ, ու անոր պատուի-
րանքները չպահեր, բ ստախօս է, և անոր մէջը
5 ճշմարտութիւն չկայ ։ գ Բայց ան որ անոր խօսքը
կը պահէ, դ իրաւցընէ իր մէջը կատարեալ է Աս-
տուծոյ սէրը ։ ե Ասով կը ճանչնանք թէ անոր մէջն
6 ենք ։ զ Ան որ կ'ըսէ թէ անոր մէջը կը բնակի,
է անանկ պէտք է որ քալէ ինչպէս որ անիկայ քա-
լեց ։

7 Եղբայրներ, ը չէ թէ մէկ նոր պատուիրանք մը կը
գրեմ ձեզի, թ հապա ան հին պատուիրանքը որ ըս-
կիզբէն 'ի վեր ունէիք ։ Եւ հին պատուիրանքը ան
8 խօսքն է, որ դուք սկիզբէն լսեցիք ։ Դարձեալ
ժ նոր պատուիրանք մը կը գրեմ ձեզի, որ ճշմարիտ
է անոր մէջը ու ձեր մէջը ։ ի Ինչու որ խաւարը
կ'անցնի, լ ու ճշմարիտ լոյսը արդէն կ'երեւնայ ։
9 խ Ան որ կ'ըսէ թէ լուսոյ մէջ է, ու իր եղբայրը
10 կ'ատէ, անիկայ տակաւին խաւարի մէջ է ։ ծ Ան
որ իր եղբայրը կը սիրէ, լուսոյ մէջ կը բնակի,
11 կ ու իր մէջը գայթակղութիւն չկայ ։ Բայց ան որ
իր եղբայրը կ'ատէ, խաւարի մէջ է հ ու խաւա-
րի մէջ կը քալէ, և չգիտեր թէ ուր կ'երթայ,
ինչու որ խաւարը անոր աչքերը կուրցուցեր է ։
12 Կը գրեմ ձեզի՝ որդեակներ, ձ ինչու որ ձեր
մեղքերը թողուած են անոր անուանը համար ։

ա Գլ. ա. 6 ։ դ. 20 ։
բ Գլ. ա. 8 ։
գ Յոհ. ժդ. 21, 23 ։
դ Գլ. դ. 12 ։
ե Գլ. դ. 13 ։
զ Յոհ. ժե. 4, 5 ։
է Մատ. ժա. 29 ։ Յոհ. ժգ. 15 ։ ա Պետ. բ. 21 ։
ը բ Յոհ. 5 ։
թ Գլ. դ. 11 ։ բ Յոհ. 5 ։
ժ Յոհ. ժգ. 34 ։ ժե. 12 ։
ի Հռով. ժգ. 12 ։ Եփե. ե. 8 ։ ա Թես. ե. 5, 8 ։
լ Յոհ. ա. 9 ։ ը. 12 ։ ժբ. 35 ։
խ ա Կոր. ժգ. 2 ։ բ Պետ. ա. 9 ։ Գլ. դ. 14, 15 ։
ծ Գլ. դ. 14 ։
կ բ Պետ. ա. 10 ։
հ Յոհ. ժբ. 35 ։
ձ Ղուկ. իդ. 47 ։ Գործ. դ. 12 ։ ժ. 43 ։ ժգ. 38 ։ Գլ. ա. 7 ։

13 Կը գրեմ ձեզի՝ հայրեր, մինչու որ դուք ճանչցաք
անիկա [յ] որ սկիզբէն է։ Կը գրեմ ձեզի՝ երի-
տասարդներ, մինչու որ դուք չարին յաղթեցիք։
14 Կը գրեմ ձեզի՝ տղաքներ, մինչու որ դուք ճանչցաք
Հայրը։ Գրեցի ձեզի՝ հայրեր, մինչու որ դուք
ճանչցաք անիկա որ սկիզբէն է։ Գրեցի ձեզի՝
երիտասարդներ, [ն] մինչու որ դուք ուժով էք, և
Աստուծոյ խօսքը ձեր մէջը կը բնակի, ու չարին
15 յաղթեցիք։ [շ] Մի՛ սիրէք աշխարհս, ո՛չ ալ ինչ
16 որ աշխարհիս մէջ է։ [ո] Թէ որ մէկը աշխարհը
կը սիրէ, անոր ներսի դին Հօրը սէրը չկայ. քա-
նզի ամէն բան որ աշխարհի մէջ է, մարմնոյ ցան-
կութիւնը [չ] ու աչաց ցանկութիւնը և
կեանքին ամբարտաւանութիւնը, Հօրմէն չէ, հա-
17 պա աշխարհէս է։ [պ] Աշխարհս ալ կ'անցնի,
անոր ցանկութիւնն ալ. բայց ան որ Աստուծոյ
կամքը կը կատարէ, յաւիտեան կը մնայ։
18 [ջ] Որդեակներ՝ [ռ] վերջին ժամանակն է. ու ինչ-
պէս որ լսեցիք [ս] թէ Նեռը պիտի գայ, [վ] և արդէն
շատ նեռեր եղած են. [տ] անկէ կ'իմանանք թէ վեր-
19 ջին ժամանակ է։ [ր] Մեզմէ ելան ասոնք, բայց
մեզմէ չէին. [ց] ինչու որ եթէ մեզմէ ըլլային, մեր
հետը պիտի մնային. [ւ] հապա ասիկա եղաւ, որ
յայտնի ըլլան՝ թէ անոնք ամէնը մեզմէ չէին։
20 [փ] Բայց դուք օծութիւն ունիք [ք] Սուրբէն, [օ] ու-

յ Գլ. ա. 1։
ն Եփե. զ. 10։
շ Հռով. ժբ. 2։
ո Մատ. զ. 24։ Գաղ. ա. 10։ Յակ. դ. 4։
չ Ժող. ե. 11։
պ ա Կոր. է. 31։ Յակ. ա. 10։ դ. 15։ ա Պետ. ա. 24։
ջ Յօհ. իա. 5։
ռ Եբր. ա. 2։
ս բ Թես. բ. 3, 8։ բ Պետ. բ. 1։ Գլ. դ. 3։
վ Մատ. իդ. 5, 24։ բ Յօհ. 7։
տ ա Տիմ. դ. 1։ բ Տիմ. գ. 1։
ր բ Օր. ժգ. 13։ Սաղ. խա. 9։ Գործ. ի. 30։
ց Մատ. իդ. 24։ Յօհ. զ. 37։ ժ. 28, 29։ բ Տիմ. բ. 19։
ւ ա Կոր. ժա. 19։
փ բ Կոր. ա. 21։ Եբր. ա. 9։ Հմր 27։
ք Մար. ա. 24։ Գործ. գ. 14։
օ Յօհ. ժ. 4, 5։ ժդ. 26։ ժզ. 13։ Հմր 27։

21 ամէն բան գիտէք։ Չգրեցի ձեզի իբր թէ ճշմար-
տութիւնը չէք գիտեր, հապա թէ գիտէք անի-
կա, ու նաև թէ ամէն ստութիւն ճշմարտութենէ
22 չէ։ [ֆ] Ո՞վ է ստախօս, եթէ ոչ ան որ կ'ուրանայ
թէ Յիսուսը Քրիստոս չէ. անիկա է Նեռը որ
23 կ'ուրանայ Հայրը ու Որդին։ [ա] Ամէն մէկ որ
կ'ուրանայ Որդին, անիկա Հայրն ալ չընդունիր.
[[բ] Բայց ան որ կը խոստովանի Որդին, անիկա
24 Հայրն ալ կ'ընդունի]։ [գ] Ուրեմն ինչ որ դուք
սկիզբէն լսեցիք, թող անիկա ձեր մէջը բնակի.
թէ որ ան սկիզբէն լսածնիդ ձեր մէջը բնակի,
[դ] դուք ալ Որդիին ու Հօրը մէջ պիտի բնակիք։
25 [ե] Եւ ասիկա է այն խոստումը որ ինքը մեզի
խոստացաւ, այսինքն յաւիտենական կեանքը։
26 [զ] Ասոնք բաները ձեզի գրեցի՝ ձեզ մոլորցնողներուն
27 համար։ [է] Եւ այն օծութիւնը որ դուք իրմէն ըն-
դունեցիք, ձեր մէջը կը մնայ, [ը] ու պէտք չէ որ
մէկը ձեզի սորվեցնէ. [թ] հապա ինչպէս որ նոյն
օծութիւնը ձեզի կը սորվեցնէ ամէն բանի վրա-
յով, և ճշմարիտ է ու սուտ չէ, և ինչպէս որ
անիկա ձեզի սորվեցուց, անոր մէջը կեցէ՛ք։
28 Ու հիմա՝ որդեակներ՝ անոր մէջը կեցէ՛ք, [ժ] որ
երբ անիկա յայտնուի, մենք համարձակութիւն
ունենանք, [ի] ու անկէ չամչնանք իր գալու ատենը։
29 [լ] Թէ որ գիտէք թէ անիկա արդար է, կ'իմանաք
թէ [խ] ամէն մէկ որ արդարութիւն կը գործէ, ան-
կէ ծնած է։

ֆ Գլ. դ. 3։ բ Յօհ. 7։
ա Յօհ. ժե. 23։ բ Յօհ. 9։
բ Յօհ. ժդ. 7, 9, 10։ Գլ. դ. 15։
գ բ Յօհ. 6։
դ Յօհ. ժդ. 23։ Գլ. ա. 3։
ե Յօհ. ժէ. 3։ Գլ. ա. 2։ ե. 11։
զ Գլ. գ. 7։ բ Յօհ. 7։
է Հմր 20։
ը Երեմ. լա. 33, 34։ Եբր. ը. 10, 11։
թ Յօհ. ժդ. 26։ ժզ. 13։ Հմր 20։
ժ Գլ. գ. 2։
ի Գլ. դ. 17։
լ Գործ. իբ. 14։
խ Գլ. գ. 7, 10։

ԳԼ. Գ

1 Յիշեցընելով Աստուծոյ անզուգական սէրը՝ որով մեզ իրեն որդիներ կ'ընէ, 3 կը յորդորէ որ հնազանդութեամբ անոր պատուիրանքները պահենք, 11 ու նաև եղբայրաբար մէկզմէկ սիրենք :

1 Տեսէ՛ք՝ Հայրը ինչո՛ր սէր շնորհեց մեզի, ա որ
մենք Աստուծոյ որդիք ըսուինք . ասոր համար
աշխարհ մեզ չճանչնար, բ ինչու որ զանիկայ ալ
2 չճանչցաւ : Սիրելիներ՝ գ հիմա մենք Աստուծոյ
որդիքն ենք, դ և տակաւին յայտնի չէ թէ ինչ
պիտի ըլլանք . բայց գիտենք որ երբ անիկայ յայտ-
նուի, ե անոր պէս պիտի ըլլանք . զ վասն զի անի-
կայ պիտի տեսնենք՝ ինչպէս որ է :
3 է Ու ամէն մէկ որ այս յոյսը անոր վրայ ունի,
ինքզինքը կը մաքրէ, ինչպէս որ անիկայ մաքուր է :
4 Ամէն մէկ որ մեղք կը գործէ, անիկայ անօրէնու-
թիւն ալ կը գործէ, ը և բուն մեղքը անօրէնու-
5 թիւն է : թ Ու գիտէք որ անիկայ անոր համար
յայտնուեցաւ, ժ որ մեր մեղքերը վերցընէ . ի ու
6 իր մէջը մեղք չկայ : Ամէն մէկ որ անոր մէջը կը
կենայ, մեղք չգործեր . լ ամէն մէկ որ մեղք կը
գործէ, զանիկայ տեսած չէ ու զանիկայ ճանչ-
7 ցած չէ : Որդեակներ՝ խ մէկը ձեզ չխաբէ . ծ ան
որ արդարութիւն կը գործէ՝ արդար է, ինչպէս որ
8 Անիկայ արդար է : կ Ան որ մեղք կը գործէ՝

ա Յոհ. ա. 12 :
բ Յոհ. ժե. 18, 19 : ժզ. 3 : ժէ. 25 :
գ Եսա. ծզ. 5 : Հռով. ը. 15 : Գաղ. գ. 26 : դ. 6 : Գլ. ե. 1 :
դ Հռով. ը. 18 : բ Կոր. դ. 17 :
ե Հռով. ը. 29 : ա Կոր. ժե. 49 : Փիլ. գ. 21 : Կող. գ. 4 : բ Պետ. ա. 4 :
զ Յոբ. ժթ. 26 : Սաղ. ժզ. 11 : Մատ. ե. 8 : ա Կոր. ժգ. 12 : բ Կոր. ե. 7 :
է Գլ. դ. 17 :
ը Հռով. դ. 15 : Գլ. ե. 17 :
թ Գլ. ա. 2 :
ժ Եսա. ծգ. 5, 6, 11 : ա Տիմ. ա. 15 : Եբր. ա. 3 : թ. 26 : ա Պետ. բ. 24 :
ի բ Կոր. ե. 21 : Եբր. դ. 15 : թ. 28 : ա Պետ. բ. 22 :
լ Գլ. բ. 4 : դ. 8 : գ Յոհ. 11 :
խ Գլ. բ. 26 :
ծ Եզեկ. ժը. 5-9 : Հռով. բ. 13 : Գլ. բ. 29 :
կ Մատ. ժգ. 38 : Յոհ. ը. 44 :

Սատանայէն է, ինչու որ Սատանան սկիզբէն ի
վեր կը մեղանչէ . ասոր համար Աստուծոյ Որդին
յայտնուեցաւ, հ որ Սատանային գործքերը քակէ :
9 ձ Ամէն մէկ որ Աստուծմէ ծնած է, մեղք չգործեր,
ղ ինչու որ անոր սերմը իր մէջը կը մնայ, ու չկըր-
նար մեղք գործել, քանզի Աստուծմէ ծնած է :
10 Ասով յայտնի են Աստուծոյ որդիքը ու Սատա-
նայի որդիքը :
ճ Ամէն մէկ որ արդարութիւն չգործեր, անիկայ
Աստուծմէ չէ, մ և ան ալ՝ որ իր եղբայրը չսիրեր :
11 յ Ինչու որ ասիկայ այն պատուիրանքն է որ դուք
12 սկիզբէն լսեցիք, ն որ մէկզմէկ սիրենք : շ Չէ
թէ Կայենին պէս որ չարէն էր, ու իր եղբայրը
սպաննեց . և ինչո՞ւ համար զանիկայ սպաննեց .
անոր համար որ իր գործքերը չար էին, ու իր
13 եղբօրը գործքերը՝ արդար : Մի՛ զարմանաք՝ եղ-
14 բայրներս՝ ո թէ որ աշխարհ ձեզ ատէ : չ Մենք
գիտենք որ մահէն կեանքի փոխուեցանք, ինչու որ
եղբայրները կը սիրենք . պ ան որ եղբայրը չսիրեր,
15 մահուան մէջ կը մնայ : ջ Ամէն մէկ որ իր եղբայ-
րը կ'ատէ, մարդասպան է . ռ ու գիտէք որ ամէն
մարդասպան իր մէջը բնակած յաւիտենական
16 կեանք չունի : ս Ասով գիտցանք Քրիստոսի սէրը,
որ անիկայ իր կեանքը մեզի համար դրաւ . մենք
ալ պարտաւոր ենք մեր եղբայրներուն համար դնել
17 մեր կեանքը : վ Բայց ան որ աշխարհքիս բարիքը

հ Ծն. գ. 15 : Ղու. ժ. 18 : Յոհ. ժզ. 11 : Եբր. բ. 14 :
ձ Գլ. ե. 18 :
ղ ա Պետ. ա. 23 :
ճ Գլ. բ. 29 :
մ Գլ. դ. 8 :
յ Գլ. ա. 5 : բ. 7 :
ն Յոհ. ժգ. 34 : ժե. 12 : Համր 23 : Գլ. դ. 7, 21 : բ Յոհ. 5 :
շ Ծն. դ. 4, 8 : Եբր. ժա. 4 : Յուդ. 11 :
ո Յոհ. ժե. 18, 19 : ժէ. 14 : բ Տիմ. գ. 12 :
չ Գլ. բ. 10 :
պ Գլ. բ. 9, 11 :
ջ Մատ. ե. 21, 22 : Գլ. դ. 20 :
ռ Գաղ. ե. 21 : Յայտ. իա. 8 :
ս Յոհ. գ. 16 : ժե. 13 : Հռով. ե. 8 : Եփե. ե. 2, 25 : Գլ. դ. 9, 11 :
վ բ Օր. ժե. 7 : Ղու. գ. 11 :

ունի, և իր եղբայրը բանի մը կարօտ կը տեսնէ
ու իր գութը անկէ կը գոցէ, ⊤ ինչպէ՞ս Աստուծոյ
18 սէրը անոր մէջը բնակած կ'ըլլայ։ Որդեակներս՝
ɾ չէ՛ թէ խօսքով ու լեզուով սիրենք, հապա
գործքով ու ճշմարտութիւնով։
19 ɜ Ու ասով կը ճանչնանք թէ ճշմարտութենէն
ենք, ու մեր սրտերուն համարձակութիւնովը անոր
20 առջեւը պիտի երեւնանք։ Քանզի – թէ որ մեր
սիրտերը մեզ կը մեղադրեն, հապա Աստուած մեր
21 սիրտերէն մեծ է՝ և ամէն բան գիտէ։ Սիրելիներ՝
թէ որ մեր սիրտերը մեզ չմեղադրեն, ∔ համար-
22 ձակութիւն կ'ունենանք Աստուծոյ առջեւը. Ու
ƒ ինչ որ խնդրենք, կ'առնենք անկէ. ինչու որ իր
պատուիրանքները կը պահենք, ◦ ու իր առջեւն
23 հաճոյ եղած բաները կ'ընենք։ ‡ Ու ասիկայ է
անոր պատուիրանքը, որ իր Որդւոյն Յիսուս
Քրիստոսի անուանը հաւատանք — ու մէկզմէկ
սիրենք, Ϝ ինչպէս որ մեզի պատուէր տուաւ։
24 ∔ Ու ան որ անոր պատուիրանքները կը պահէ,
⊤ անոր մէջը կը կենայ, ու անիկայ ալ անոր մէջը.
Ͱ և ասկէ գիտենք որ անիկայ մեր մէջը կը կենայ,
այսինքն ան Հոգիէն որ մեզի տուաւ։

⊤ Գլ. գ. 20։
ɾ Եզեկ. լգ. 31։ Հռով. ժբ. 9։ Եփե. դ. 15։ Յակ. բ. 15։ ա Պետ. ա. 22։
ɜ Յօհ. ժը. 37։ Գլ. ա. 8։
– ա Կոր. դ. 4։
∔ Յոբ. իբ. 26։ Եբր. ժ. 22։ Գլ. բ. 28։ դ. 17։
ƒ Սաղ. լգ. 15։ Ճխն. 18, 19։ Առակ. ժե. 29։ Երեմ. իթ. 12։ Մատ. է. 8։ իա. 22։ Մար. ժա. 24։ Յօհ. ժդ. 13։ ժե. 7։ ժզ. 23, 24։ Յակ. ե. 16։ Գլ. ե. 14։
◦ Յօհ. ը. 29։ թ. 31։
‡ Յօհ. զ. 29։ ժէ. 3։
— Մատ. իբ. 39։ Յօհ. ժգ. 34։ ժե. 12։ Եփե. ե. 2։ ա Թեսս. դ. 9։ ա Պետ. դ. 8։ Հմր 11։ Գլ. դ. 21։
Ϝ Գլ. բ. 8, 10։
∔ Յօհ. ժդ. 23։ ժե. 10։ Գլ. դ. 12։
⊤ Յօհ. ժէ. 21, 22։
Ͱ Հռով. ը. 9։ Գլ. դ. 13։

ԳԼ. Դ

1 Կը պատուիրէ չհաւատալ ամէն վարդապետներուն, որոնք
կը պարծենան թէ Աստուծոյ Հոգին ունին, այլ փորձել

զանոնք ուղղափառ հաւատքին կանոններովը. 7 և շատ
փաստերով կը յորդորէ զանոնք եղբայրական սէր ունենա-
լու։

1 Սիրելիներ՝ — ամէն հոգիի մի՛ հաւատաք, Ϝ հա-
պա հոգիները փորձեցէք թէ արդեօք Աստուծմէ՞
են. ‡ ինչու որ աշխարհիս մէջ շատ սուտ մարգա-
2 րէներ ելած են։ Ասով կրնաք ճանչնալ Աստուծոյ
Հոգին. ⊤ ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մար-
մինով եկած կը խոստովանի, անիկայ Աստուծմէ
3 է. Ͱ Ու ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մար-
մինով եկած չխոստովանիր, անիկայ Աստուծմէ
չէ. ու ասիկայ Նեռին հոգին է, որուն համար լսե-
ցիք թէ պիտի գայ, Ղ ու հիմակուընէ ալ աշխար-
4 հիս մէջ է։ Ͱ Դուք Աստուծմէ էք՝ որդեակներ,
ու անոնց յաղթեցիք. քանզի մեծ է անիկայ որ
ձեր մէջն է, Ը քան թէ անիկայ որ աշխարհիս մէջն
5 է։ Ϝ Անոնք աշխարհէ են. անոր համար աշխարհի
վրայով կը խօսին, Ճ և աշխարհս մտիկ կ'ընէ ա-
6 նոնց։ Մենք Աստուծմէ ենք. Ի ան որ զԱստուած
կը ճանչնայ, մեզի մտիկ կ'ընէ. ան որ Աստուծմէ
չէ, մեզի մտիկ չըներ. ասով կը ճանչնանք Լ ճըշ-
մարտութեան Հոգին ու խաբէութեան հոգին։
7 Ͱ Սիրելիներ՝ մէկզմէկ սիրենք, ինչու որ սէրը
Աստուծմէ է. ու ամէն ով որ կը սիրէ, Աստուծ-
8 մէ ծնած է, ու կը ճանչնայ զԱստուած։ Ան որ
չսիրեր, Ճ զԱստուած չճանչնար. Ն ինչու որ Ա-

— Երեմ. իթ. 8։ Մատ. իդ. 4։
Ϝ ա Կոր. ժդ. 29։ ա Թեսս. ե. 21։ Յայտ. բ. 2։
‡ Մատ. իդ. 5, 24։ Գոր. ի. 30։ ա Տիմ. դ. 1։ բ Պետ. բ. 1։ Գլ. բ. 18։ բ Յօհ. 7։
⊤ ա Կոր. ժբ. 3։ Գլ. ե. 1։
Ͱ Գլ. բ. 22։ բ Յօհ. 7։
Ղ բ Թեսս. բ. 7։ Գլ. բ. 18, 22։
Ͱ Գլ. ե. 4։
Ը Յօհ. ժբ. 31։ ժդ. 30։ ժզ. 11։ ա Կոր. բ. 12։ Եփե. բ. 2։ զ. 12։
Ϝ Յօհ. գ. 31։
Ճ Յօհ. ժե. 19։ ժէ. 14։
Ի Յօհ. ը. 47։ ժ. 27։ ա Կոր. ժդ. 37։ բ Կոր. ժ. 7։
Լ Ես. ը. 20։ Յօհ. ժդ. 17։
Ͱ Գլ. գ. 10, 11, 23։
Ճ Գլ. բ. 4։ գ. 6։
Ն Հմր 16։

9 տուած սէր է: ^հ Ասով բանին մէջ Աստուծոյ սէրը
մեր վրայ յայտնի եղաւ, ^ձ որ Աստուած իր միածին
Որդին աշխարհք խրկեց, որ անոր միջոցովը ապ-
10 րինք: Ասով բանին մէջ է սէրը, ^ղ որ չէ թէ մենք
սիրեցինք զԱստուած, հապա որ անիկայ մեզ սի-
րեց, ^ճ ու իր Որդին խրկեց մեր մեղքերուն քա-
11 ւութիւն ըլլալու: Սիրելիներ՝ ^մ թէ որ Աստուած
մեզ ասանկ սիրեց, ուրեմն մենք ալ կը պարտա-
12 ւորինք մէկզմէկ սիրել: ^յ Մէկը երբէք զԱստուած
տեսած չէ. թէ որ մէկզմէկ կը սիրենք, Աստուած
մեր մէջը կը բնակի, ^ն ու անոր սէրը մեր մէջը
13 կատարեալ է: ^շ Ասով գիտենք թէ մենք անոր
մէջը կը բնակինք՝ ու անիկայ մեր մէջը, որ իր
14 Հոգիէն մեզի տուաւ: ^ո Եւ մենք տեսանք ու կը
վկայենք ^չ որ Հայրը իր Որդին խրկեց աշխարհի
15 Փրկիչը ըլլալու: ^պ Ով որ կը խոստովանի թէ
Յիսուսը Որդի Աստուծոյ է, Աստուած անոր մէջը կը
16 բնակի, ան ալ Աստուծոյ մէջը: Եւ մենք ճանչ-
ցանք ու հաւատացինք այն սէրը որ Աստուած մեր
վրայ ունի. ^ջ Աստուած սէր է. ^ռ Եւ ան որ սիրոյ մէջ
կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի, ու Աստուած
17 անոր մէջը: Ասով սէրը մեր վրայ կատարեալ կ'ըլ-
լայ, ^ս որ համարձակութիւն ունենանք դատաստա-
նին օրը. ^վ Վասն զի ինչպէս է ինքը, անանկ ալ
18 մենք ենք աս աշխարհիս մէջ: Սիրոյ մէջ վախ
չկայ, հապա կատարեալ սէրը վախը մէկդի կը

^հ Յոհ. գ. 16: Հռով. ե. 8: ը. 32: Գլ. գ. 16:
^ձ Գլ. ե. 11:
^ղ Յոհ. ժե. 16: Հռով. ե. 8, 10: Տիտ. գ. 4:
^ճ Գլ. բ. 2:
^մ Մատ. ժը. 33: Յոհ. ժե. 12, 13: Գլ. գ. 16:
^յ Յոհ. ա. 18: Ա Տիմ. զ. 16: Հմր 20:
^ն Գլ. բ. 5: Հմր 18:
^շ Յոհ. ժդ. 20: Գլ. գ. 24:
^ո Յոհ. ա. 14: Գլ. ա. 1, 2:
^չ Յոհ. գ. 17:
^պ Հռով. ժ. 9: Գլ. ե. 1, 5:
^ջ Հմր 8:
^ռ Գլ. գ. 24: Հմր 12:
^ս Յակ. բ. 13: Գլ. բ. 28: գ. 19, 21:
^վ Գլ. գ. 3:

ձգէ. ինչու որ վախը տանջանքի ենթակայ է,
ուստի ան որ կը վախնայ, ^տ սիրոյ մէջ կատարեալ
19 չէ: Մենք զանիկայ կը սիրենք, ինչու որ առաջ
20 անիկայ մեզ սիրեց: ^ր Թէ որ մէկը ըսէ թէ Ես
Աստուած կը սիրեմ, ու իր եղբայրը ատէ, անի-
կայ ստախօս է. քանզի ան որ իր եղբայրը չսիրեր՝
որ կը տեսնէ, ^ց զԱստուած՝ որ չտեսներ, ինտո՞ր
21 կրնայ սիրել: ^ւ Ու անկէ աս պատուէրը ունինք,
թէ ան որ զԱստուած կը սիրէ, իր եղբայրն ալ
սիրէ:

ԳԼ. Ե

1 Ան որ զԱստուած կը սիրէ, անոր որդիներն ալ կը սիրէ, ու
կը պահէ անոր պատուիրանքները, 3 որոնք հաւատացելոց
ծանրութիւն մը չեն: 9 Յիսուս Աստուծոյ Որդին ըլլալով,
կարող է մեզ փրկել, 14 ու մեր աղօթքները լսել, որ
կը մատուցանենք թէ՛ մեր անձերուն և թէ ուրիշներուն հա-
մար:

1 ^փ Ամէն ով որ կը հաւատայ թէ ^ք Յիսուսը Քրիստոս
է, ^օ Աստուծմէ ծնած է. ^ա Եւ ամէն
ով որ ծնողը կը սիրէ, անկէ ծնածն ալ կը սիրէ:
2 Ասով կը ճանչնանք թէ Աստուծոյ որդիները կը
սիրենք, երբոր Աստուած սիրենք ու անոր պա-
3 տուիրանքները պահենք: ^բ Ինչու որ ասիկայ է
Աստուծոյ սէրը, որ անոր պատուիրանքները պա-
հենք. ^գ Եւ անոր պատուիրանքները ծանր բան չեն:
4 ^դ Վասն զի ան ամէնը որ Աստուծմէ ծնած է, աշ-
խարհին կը յաղթէ. և ասիկայ է յաղթութիւնը
որ աշխարհին կը յաղթէ, ^ե այսինքն մեր հաւատքը:
5 Ո՞վ է որ աշխարհին կը յաղթէ, եթէ ոչ անի-

^տ Հմր 12:
^ր Գլ. բ. 4: գ. 17:
^ց Հմր 12:
^ւ Մատ. իբ. 37, 39: Յոհ. ժգ. 34: ժե. 12: Գլ. գ. 23:
^փ Յոհ. ա. 12:
^ք Գլ. բ. 22, 23: դ. 2, 15:
^օ Յոհ. ա. 13:
^ա Յոհ. ժե. 23:
^բ Յոհ. ժդ. 15, 21, 23: ժե. 10: Բ Յոհ. 6:
^գ Միք. զ. 8: Մատ. ժա. 30:
^դ Յոհ. ժզ. 33: Գլ. գ. 9: դ. 4:
^ե Ա Կոր. ժե. 57: Գլ. դ. 15:

կայ որ կը հաւատայ թէ Յիսուս Որդի Աստու-
ծոյ է :
6 ըԱսիկայ է որ եկաւ ջուրով և արիւնով , այս-
ինքն Յիսուս Քրիստոս . ոչ թէ միայն ջուրով ,
հապա ջուրով ու արիւնով . թև Հոգին է որ կը
վկայէ , ինչու որ Հոգին ճշմարտութիւն է :
7 Վասն զի իրեք են որ [երկինքի մէջ կը վկայեն ,
Հայրը՝ իԲանը ու Սուրբ Հոգին , լև աս իրեքը
8 մէկ են : Ու իրեք են որ երկրի վրայ] կը վկայեն ,
Հոգին՝ ջուրը ու արիւնը , և իրեքը միաբան են :
9 խԹէ որ մարդոց վկայութիւնը կ'ընդունինք , Աս-
տուծոյ վկայութիւնը աւելի մեծ է . ծ ինչու որ ա-
սիկայ է Աստուծոյ վկայութիւնը , որ իր Որդւոյն
10 համար վկայեց : Ան որ Աստուծոյ Որդւոյն կը հա-
ւատայ , կվկայութիւնը իր մէջը ունի . ան որ Աս-
տուծոյ չհաւատար , հստախօս կ'ընէ զանիկա , ին-
չու որ չհաւատար ան վկայութեանը՝ որ Աստուած
11 իր Որդւոյն համար վկայեց : ձՈւ վկայութիւնը աս
է , որ Աստուած մեզի յաւիտենական կեանք տուաւ ,
12 ղՈւ աս կեանքը անոր Որդւոյն մէջն է : ճԱն որ
Որդին ընդունած է , կեանք ունի . և ան որ Աս-
տուծոյ Որդին ընդունած չէ , կեանք չունի :
13 մԱս բաները գրեցի ձեզի՝ յոր գիտնաք թէ յա-
ւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ Որ-
14 դւոյն անուանը կը հաւատաք : Ու ան համարձա-
կութիւնը որ մենք անոր քովը ունինք՝ աս է , նոր
ինչ բան որ խնդրելու ըլլանք իր կամքին համեմատ՝
15 կը լսէ մեզի : Ու թէ որ գիտնանք թէ մեզի կը

ը Յոհ . ժթ . 34 :
թ Յոհ . ժդ . 17 : ժե . 26 : ժզ . 13 : Ա Տիմ . գ . 16 :
ի Յոհ . ա . 1 : Յայտ . ժթ . 13 :
լ Յոհ . ժ . 30 :
խ Յոհ . ը . 17 , 18 :
ծ Մատ . գ . 16 , 17 : ժէ . 5 :
կ Հռովմ . ը . 16 : Գաղ . դ . 6 :
հ Յոհ . գ . 33 : ե . 38 :
ձ Գլ . բ . 25 :
ղ Յոհ . ա . 4 : Գլ . դ . 9 :
ճ Յոհ . գ . 36 : ե . 24 :
մ Յոհ . ի . 31 :
յ Գլ . ա . 1 , 2 :
ն Գլ . գ . 22 :

լսէ , ինչ որ խնդրելու ըլլանք , աղէկ կը գիտ-
նանք թէ կ'առնենք խնդիրքներս , որ կը խնդրենք
իրմէն :
16 Թէ որ մէկը տեսնէ որ իր եղբայրը մեղք մը
գործեց՝ ոչ թէ մահացու , թող խնդրէ՝ շու Աս-
տուած անոր կեանք պիտի տայ ան մահացու չեղած
մեղքը գործողին . ոմեղք կայ որ մահացու է ,
17 չչեմ ըսեր որ անոր համար խնդրէ : պԱմէն ան-
իրաւութիւն մեղք է , և մեղք կայ որ մահացու չէ :
18 ջԳիտենք որ ան ամէնը որ Աստուծմէ ծնած է ,
մեղք չգործեր . հապա ան որ Աստուծմէ ծնած է ,
19 ռիր անձը կը պահէ , ու չարը իրեն չդպչիր : Գի-
տենք որ մենք Աստուծմէ ենք , սու բոլոր աշխարհք
20 չարին մէջն է : Եւ գիտենք որ Աստուծոյ Որդին ե-
կաւ , վու մեզի միտք տուաւ , տոր ճշմարիտը
ճանչնանք . և ան ճշմարիտին մէջն ենք՝ իր Որդւոյն
Յիսուս Քրիստոսի մէջ . րասիկայ է ճշմարիտ
21 Աստուած ցու յաւիտենական կեանք : Որդեակ-
ներ՝ ւինքզինքնիդ կուռքերէն պահեցէ՛ք :

շ Յոբ . իը . 8 : Յակ . ե . 14 , 15 :
ո Մատ . ժբ . 31 , 32 : Մար . գ . 29 : Ղու . ժբ . 10 : Եբր . զ . 4 , 6 : ժ . 26 :
չ Երեմ . է . 16 : ժդ . 11 : Յոհ . ժէ . 9 :
պ Գլ . գ . 4 :
ջ Ա Պետ . ա . 23 : Գլ . գ . 9 :
ռ Յակ . ա . 27 :
ս Գաղ . ա . 4 :
վ Ղու . իդ . 45 :
տ Յոհ . ժէ . 3 :
ր Եսա . թ . 6 : խդ . 6 : ծդ . 5 : Յոհ . ի . 28 : Գործ . ի . 28 : Հռովմ . թ . 5 : Ա Տիմ . գ . 16 : Տիտ . բ . 13 : Եբր . ա . 8 :
ց Հմր 11 , 12 , 13 :
ւ Ա Կոր . ժ . 14 :

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

1 Կը յորդորէ մէկ պատուաւոր քրիստոնեայ տիկին մը՝ որ իր որդիներովը մէկտեղ հաստատուն մնայ քրիստոնէական սիրոյն և հաւատքին մէջ, 8 որ չըլլայ թէ իրենց առջի դաւանութեանը վարձքը կորսնցընեն. 10 պատուէր կու տայ չընդունիլ այն մոլորեցուցիչները, որոնք Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը չունին։

1 Երէցէն՝ ընտրեալ Տիկնոջը ու անոր որդիներուն,
ա որ ես ճշմարտութեամբ կը սիրեմ, (և չէ
թէ միայն ես, հապա ամէնքն ալ՝ բ որ ճշմարտու-
2 թիւնը կը ճանչնան,) Այն ճշմարտութեանը հա-
մար՝ որ մեր մէջը կը մնայ, ու յաւիտեան մեր հե-
3 տը պիտի ըլլայ. գ Շնորհք՝ ողորմութիւն՝ խա-
ղաղութիւն Հայր Աստուծմէն և Տէր Յիսուս
Քրիստոսէն՝ Հօրը Որդիէն ձեր հետը ըլլայ դ ճշ-
մարտութիւնով ու սիրով։
4 Շատ ուրախ եղայ ես, որ քու որդիներէդ
գտայ ե որ ճշմարտութեամբ կը քալեն այն պատուի-
5 րանքին համեմատ, որ Հօրմէն առինք։ Ու հի-
մա քեզի կ'աղաչեմ՝ ով Տիկին, ոչ զ իբր թէ նոր
պատուիրանք մը քեզի կը գրեմ, հապա այն որ
6 սկիզբէն ունէինք, է որ մէկզմէկ սիրենք։ ը Ու
սէրը աս է՝ որ անոր պատուիրանքներուն համեմատ
քալենք. Ու պատուիրանքը աս է՝ թ որ ինչպէս
սկիզբէն 'ի վեր լսեցիք, անոր համեմատ քալէք։

ա ա Յոհ. գ. 18; գ Յոհ. 1; Հմր 3։
բ Յոհ. ը. 32; Գաղ. բ. 5, 14; գ. 1; ե. 7; Կող. ա. 5; բ Թես. բ. 12; ա Տիմ. բ. 4; Եբր. ժ. 26։
գ ա Տիմ. ա. 2։
դ Հմր 1։
ե գ Յոհ. 3։
զ ա Յոհ. բ. 7, 8; գ. 11։
է Յոհ. ժգ. 34; ժե. 12; Եփե. ե. 2; ա Պետ. դ. 8; ա Յոհ. գ. 23։
ը Յոհ. ժդ. 15, 21; ժե. 10; ա Յոհ. բ. 5; ե. 3։
թ ա Յոհ. բ. 24։

7 ժ Ինչու որ շատ մոլորեցուցիչներ ելան աշխարհիս
մէջ, ի որոնք Յիսուս Քրիստոսը մարմնով եկած
չեն խոստովանիր. լ անանկ մէկը մոլորեցուցիչ ու
8 Նեռ է։ Զգուշացէ՛ք ձեր անձերուն, որ խ աշ-
խատանքնիս չկորսնցընենք, հապա որ լման վարձք
9 առնենք։ ծ Ամէն ով որ յանցանք կը գործէ ու
Քրիստոսի վարդապետութեանը մէջ չկենար, ա-
նիկայ Աստուած չունի. այն որ Քրիստոսի վարդա-
պետութեանը մէջ կը կենայ, անիկայ Հայրն ալ
10 ունի՝ Որդին ալ։ Թէ որ մէկը ձեզի գայ ու աս
վարդապետութիւնը չբերէ, զանիկայ տուներնիդ
11 մի՛ ընդունիք, կ և անոր Բարև մի՛ ըսէք։ Քանզի
ով որ անոր Բարև կ'ըսէ, անոր չար գործքերուն
հաղորդ կ'ըլլայ։
12 հ Շատ բան ունէի ձեզի գրելու, բայց չուզեցի
թղթով ու մելանով գրել. ինչու որ յոյս ունիմ
որ ձեզի գամ, ու բերան առ բերան խօսիմ, ձ որ
13 մեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ։ ղ Բարև
կ'ընեն քեզի քու ընտրեալ քրոջդ որդիքը։

ժ ա Յոհ. դ. 1։
ի ա Յոհ. դ. 2, 3։
լ ա Յոհ. բ. 22; դ. 3։
խ Գաղ. գ. 4; Եբր. ժ. 32, 35։
ծ ա Յոհ. բ. 23։
կ Հռով. ժզ. 17; ա Կոր. ե. 11; ժզ. 22; Գաղ. ա. 8, 9; բ Տիմ. գ. 5; Տիտ. գ. 10։
հ գ Յոհ. 13։
ձ Յոհ. ժէ. 13; ա Յոհ. ա. 4։
ղ ա Պետ. ե. 13։

ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

1 Առաքեալը կը գովէ Գայիոսի բարեպաշտութիւնը, 5 և հիւրասիրութիւնը, 7 որով ճշմարիտ քարոզիչները կը պատուէր. 9 կը գանգատի Դիոտրեփեսին անվայել վարմունքին և անպատուութեանը համար, 11 որուն չար օրինակէն զգուշանալու պատուէր կու տայ. 12 մասնաւոր վկայութիւն մը կ'ընէ Դեմետրիոսին բարի համբաւին վրայով։

1 Երէցէն Գայիոս սիրելիին, ա որն որ ես կը սիրեմ
2 ճշմարտութեամբ: Սիրելի՛ աղօթք կ՚ընեմ որ
ամէն կողմէ յաջողութեան մէջ ու առողջ ըլլաս,
ինչպէս որ քու հոգիդ ալ յաջողութեան մէջ է:
3 Ինչու որ շատ ուրախացայ, երբոր քանի մը եղբայր-
ներ եկան, ու քու ճշմարտութեանդ վրայով վկայե-
ցին, բ ինչպէս որ դուն ճշմարտութեամբ կը քալես:
4 Աւելի մեծ ուրախութիւն մը չունիմ, գ որ կը լը-
սեմ թէ իմ որդիներս ճշմարտութեան մէջ կը քա-
5 լեն: Սիրելի՛ դուն հաւատարմաբար կ՚ընես, ինչ
6 որ կ՚ընես եղբայրներուն և օտարներուն. Որոնք
եկեղեցիին առջեւ վկայեցին քու սիրոյդ վրայով.
որ եթէ աստուածահաճոյ կերպով զանոնք ճամբայ
7 դնես, աղէկ պիտի ընես: Ինչու որ Աստուծոյ
անուանը համար ելան, դ ու հեթանոսներէն բան
8 մը չեն առներ: Ուստի մենք պարտաւոր ենք
անանկները ընդունել, որ ճշմարտութեանը
գործակից ըլլանք:
9 Եկեղեցիին գրեցի. բայց Դիոտրեփէս՝ որ մէջեր-
նին առաջին ըլլալ կ՚ուզէ, մեզ չընդունիր:
10 Անոր համար թէ որ գամ, անոր ըրած գործքերը
պիտի յիշեմ, որ մեզի դէմ շաղակրատելով չա-
րախօսութիւն կ՚ընէ. և ասով ալ գոհ չեղած՝
ինքը չընդունիր եղբայրները, ու անոնք որ կ՚ուզեն
ընդունիլ՝ կ՚արգիլէ, ու եկեղեցիէն ալ կը հանէ:
11 Սիրելի՛ ե չարին նմանող մի՛ ըլլար, հապա բարի-
ին. զ Ան որ բարիք կը գործէ, Աստուծմէ է.
բայց ան որ չարիք կը գործէ, անիկայ զԱստուած
12 տեսած չէ: Դեմետրիոսին համար է ամէնն ալ կը
վկայեն, բուն իսկ ճշմարտութիւնն ալ. մենք ալ

ա բ Յոհ. 1:
բ բ Յոհ. 4:
գ ա Կոր. դ. 15: Փիլիմ. 10:
դ ա Կոր. թ. 12, 15:
ե Սաղ. լէ. 27: Եսա. ա. 16, 17: ա Պետ. գ. 11:
զ ա Յոհ. բ. 29: գ. 6, 9:
է ա Տիմ. գ. 7:

կը վկայենք. ը և դուք գիտէք որ մեր վկայութիւնը
ճշմարիտ է:
13 թ Շատ բան ունէի գրելու, բայց չեմ ուզեր
14 մելանով ու գրիչով քեզի գրել: Սակայն յոյս
ունիմ մօտերս քեզ տեսնելու, ու բերան առ բե-
15 րան պիտի խօսինք: Խաղաղութիւն քեզի. բա-
րեկամները քեզի բարեւ կ՚ընեն. բարեւ ըրէ մեր
բարեկամներուն՝ ամէն մէկուն անունովը:

ը Յոհ. իա. 24:
թ բ Յոհ. 12:

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ
ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

1 Առաքեալը կը յորդորէ քրիստոնեաները որ հաստատ կենան հաւատքին պաշտպանութեանը մէջ. 4 ծանուցանելով անոնց թէ խաբեբայ վարդապետներ մտած են մէջերնին՝ որ զանոնք մոլորցնեն. որոնց դատապարտելի վարդապետութեանը ու վարմունքին համար սոսկալի պատիժ պատրաստուած է. 20 Իսկ բարեպաշտներուն վրայով կ՚իմացընէ թէ անոնք Աստուծոյ աղօթք ընելով՝ Սուրբ Հոգիին օգնականութեամբը կրնան հաստատուն կենալ, շնորհօք աճիլ, անձերնին պահել և ուրիշներն ալ ազատել աս մոլորեցուցիչներուն որոգայթներէն:

1 Յուդա՝ Յիսուս Քրիստոսի ծառայ ու ա Յակո-
բոսին եղբայրը, ձեզի՝ որ Հայր Աստուծմէն
սրբուած էք, և բ Յիսուս Քրիստոսէն պահուած
2 գ ու կանչուած, Ողորմութիւն դ ու խաղաղու-
թիւն և սէր ձեր վրայ շատնայ:
3 Սիրելինե՛ր, բոլոր ջանքը վրաս առնելով ձեզի
գրելու ե հասարակաց փրկութեանը համար, զ ան-
ջեր հարկ սեպեցի ձեզի գրել" ու յորդորել, է որ

ա Ղուկ. զ. 16: Գործ. ա. 13:
բ Յոհ. ժէ. 11, 12, 15: ա Պետ. ա. 5:
գ Հռով. ա. 7:
դ ա Պետ. ա. 2: բ Պետ. ա. 2:
ե Տիտ. ա. 4:
զ Փիլ. ա. 27: ա Տիմ. ա. 18: զ. 12: բ Տիմ. ա. 13: դ. 7:

մրցիք այն հաւատքին համար՝ որ անգամ մը սուր-
4 բերուն աւանդուեցաւ ։ է Քանզի մէկ քանի մար-
դիկ գաղտուկ մտան , ը Անոնք որ առաջուց աս
դատապարտութեանը համար որոշուած էին , ամ-
բարիշտներ , թ որ մեր Աստուծոյ շնորհքը ժ ան-
առակութեան դարձուցին , ի և մի միայն Իշխանը
5 ու մեր Տէր Յիսուս Քրիստոսը ուրացան ։ Արդ
կ'ուզեմ միտքերնիդ բերել , թէև արդէն գիտէք
ասիկայ , լ թէ Տէրը որ ժողովուրդը Եգիպտոսի
երկրէն ազատեց , խ ետքը չհաւատացողները կոր-
6 սնցուց ։ ծ Եւ այն հրեշտակները՝ որ իրենց իշ-
խանութիւնը չպահեցին , հապա իրենց բնակու-
թիւնը ձգեցին , կ մշտնջենաւոր կապերով խաւարի
7 մէջ պահեց հ մեծ օրուան դատաստանին ։ ձ Ինչ-
պէս Սոդոմ ու Գոմոր և անոնց բոլորտիքը եղած
քաղաքները՝ որոնք ասոնց նման պոռնկեցան ընկեր-
ներուն մարմնին ետևէն երթալով , առջևնիս
օրինակ կեցեր են՝ յաւիտենական կրակին դատա-
8 պարտութիւնը ընդունելով ։ ղ Նմանապէս այս
ցնորածներն ալ մարմինը կը պղծեն , տէրութիւնը
կ'անարգեն , ճ փառաւորներուն դէմ կը հայհոյեն ։
9 Բայց մ Միքայէլ հրեշտակապետը երբոր Սատա-
նային դէմ դնելով՝ Մովսէսին մարմնին համար
կը վիճէր , յ չհամարձակեցաւ հայհոյութեան դա-
տապարտութիւն բերել անոր վրայ , հապա ըսաւ ,
10 ն Տէրը յանդիմանէ քեզ ։ շ Իսկ ասոնք՝ ան բա-

է Գաղ. բ. 4 ; բ Պետ. բ. 1 ;
ը Հռովմ. թ. 21, 22 ; ա Պետ. բ. 8 ;
թ Տիտ. բ. 11 ; Եբր. ժբ. 15 ;
ժ բ Պետ. բ. 10 ;
ի Տիտ. ա. 16 ; բ Պետ. բ. 1 ; ա Յոհ. բ. 22 ;
լ ա Կոր. ժ. 9 ;
խ Թուոց. ժդ. 29, 37 ; իզ. 64 ; Սաղ. ճզ. 26 ; Եբր. գ. 17, 19 ;
ծ Յոհ. ը. 44 ;
կ բ Պետ. բ. 4 ;
հ Յայտ. ի. 9 ;
ձ Ծն. ժթ. 24 ; բ Օր. իթ. 23 ; բ Պետ. բ. 6 ;
ղ բ Պետ. բ. 10 ;
ճ Ել. իբ. 28 ;
մ Դան. ժ. 13 ; ժբ. 1 ; Յայտ. ժբ. 7 ;
յ բ Պետ. բ. 11 ;
ն Զաք. գ. 2 ;
շ բ Պետ. բ. 12 ;

ներուն որ չեն հասկընար , հայհոյութիւն կ'ընեն .
և ան բաները որ բնականաբար անբան անասուն-
ներու պէս գիտեն , անոնց մէջ կ'ապականին ։
11 Վա՜յ անոնց՝ ո որ Կայէնին ճամբովը գացին , չ ու
Բաղաամին մոլորութեանը պէս ցանկութեամբ
վարձքի ետևէ գացին , պ և Կորխին հակառակու-
12 թեանը պէս կորսուեցան ։ ջ Ասոնք ռ ձեր սիրոյ
խնջոյքներուն մէջ արատներ են , ու ձեզի հետ
կերուխումի նստած ատեննին աներկիւղ իրենց
անձը կը կերակրեն . ս անջուր ամպեր վ հովերէն
քշուած . պտուղնին կորսնցուցած ծառեր , բերք
չունեցող , տ երկու անգամ մեռած , արմատէն
13 խլուած . ր Ծովու կատղած ալիքներ , ց որ իրենց
անձերուն ամօթը կը փրփրցընեն . մոլորական
աստղեր , ւ որոնց համար խաւարին մէգը պահուած
է յաւիտեան ։
14 Անոնց վրայ մարգարէացաւ Ենովք ալ՝ փ որ
եօթներորդ էր Ադամէն , ու ըսաւ , ք Ահա Տէրը
15 իր բիւրաւոր սուրբերովը եկաւ , Ամենուն դատաս-
տան ընելու , ու բոլոր ամբարիշտները յանդիմա-
նելու իրենց ըրած ամբարշտութեանը բոլոր գործ-
քերուն համար , օ և բոլոր խիստ խօսքերուն համար՝
որ ամբարիշտ մեղաւորները անոր դէմ խօսեցան ։
16 Ասոնք տրտունջողներ ու քրթմնջողներ են , որոնք
իրենց ցանկութիւններուն համեմատ կ'երթան , ֆ և
իրենց բերանները ամբարտաւան խօսքեր կը զրու-

ո Ծն. դ. 5 ; ա Յոհ. գ. 12 ;
չ Թուոց. իբ. 7, 21 ; բ Պետ. բ. 15 ;
պ Թուոց. ժզ. 1, ետ. ;
ջ բ Պետ. բ. 13 ;
ռ ա Կոր. ժա. 21 ;
ս Առակ. իե. 14 ; բ Պետ. բ. 17 ;
վ Եփես. դ. 14 ;
տ Մատ. ժե. 13 ;
ր Եսա. ծէ. 20 ;
ց Փիլ. գ. 19 ;
ւ բ Պետ. բ. 17 ;
փ Ծն. ե. 18 ;
ք բ Օր. լգ. 2 ; Դան. է. 10 ; Զաք. ժդ. 5 ; Մատ. իե. 31 ; բ Թես. ա. 7 ; Յայտ. ա. 7 ;
օ ա Թագ. բ. 3 ; Սաղ. լա. 18 ; ղդ. 4 ; Մաղ. գ. 13 ;
ֆ բ Պետ. բ. 18 ;

ցին , ա և շահու համար երեսպաշտութիւն կ՚ընեն ։
17 բ Բայց դուք սիրելիներ՝ միտքերնիդ բերէք այն խօս-
քերը որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի առաքեալնե-
18 րէն առաջուց ըսուեցան ։ Որ ձեզի կ՚ըսէին թէ
գ Վերջի ժամանակը ծաղր ընողներ պիտի ըլլան ,
որոնք իրենց ամբարիշտ ցանկութիւններուն համե-
մատ պիտի երթան ։
19 դ Ասոնք ինքզինքնին զատող , ե շնչաւորներ են ,
20 որ Հոգին չունին ։ Բայց դուք , սիրելիներ՝ զ ան-
ձերնիդ շինելով ձեր ամենասուրբ հաւատքին վրայ ,
21 և Սուրբ Հոգիով է աղօթք ընելով , Անձերնիդ
Աստուծոյ սիրոյն մէջ պահեցէք , ը մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի ողորմութեանը սպասելով յաւի-
22 տենական կենաց համար ։ Եւ խտրութիւն ընելով՝
23 ոմանց ողորմեցէք ։ Եւ թ ոմանք վախով ազատե-
ցէք՝ ժ կրակէն յափշտակելով զանոնք , ատելով
ժա մարմինէն աղտոտուած հանդերձն ալ ։
24 ժբ Եւ անոր՝ որ կարող է ձեզ ժգ անբիծ պահել ,
և իր փառքին առջևը անարատ կայնեցընել ցնծու-
25 թիւնով , ժդ Մեր Փրկչին մի միայն *Աստուծոյ [մեր
Տէր Յիսուս Քրիստոսին ձեռքովը] փառք ու մե-
ծութիւն , զօրութիւն ու իշխանութիւն [բոլոր
դարերէն առաջ ,] և հիմա ու բոլոր դարերու
մէջ ։ Ամէն ։

ա Առակ. իը. 21 ։ Յակ. բ. 1, 9 ։
բ բ Պետ. գ. 2 ։
գ ա Տիմ. դ. 1 ։ բ Տիմ. գ. 1 ։ դ. 3 ։ բ Պետ. բ. 1 ։ գ. 3 ։
դ Առակ. ժը. 1 ։ Եզեկ. ժդ. 7 ։ Ովս. դ. 14 ։ Թ. 10 ։ Եբր. ժ. 25 ։
ե ա Կոր. բ. 14 ։ Յակ. գ. 15 ։
զ Կող. բ. 7 ։ ա Տիմ. ա. 4 ։
է Հռով. ը. 26 ։ Եփե. զ. 18 ։
ը Տիտ. բ. 13 ։ բ Պետ. գ. 12, 13 ։
թ Հռով. ժա. 14 ։ ա Տիմ. դ. 16 ։
ժ Ամով. դ. 11 ։ ա Կոր. գ. 15 ։ Զաք. գ. 2 ։
ժա Զաք. գ. 4, 5 ։ Յայտ. գ. 4 ։
ժբ Հռով. ժզ. 25 ։ Եփե. գ. 20 ։
ժգ Կող. ա. 22 ։
ժդ Հռով. ժզ. 27 ։ ա Տիմ. ա. 17 ։ բ. 3 ։
* Ոմանք իմաստուն Աստուծոյ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

ԳԼՈՒԽ Ա

4 Յովհաննէս իրեն եղած յայտնութիւնը կը գրէ Ասիայի եօթը եկեղեցիներուն , որոնց նշան ըլլալու համար ցուցուեցաւ իրեն՝ եօթը ոսկեղէն աշտանակները ։ 7 Քրիստոսի գալուստը , 14 ու անոր զօրութիւնը և մեծափառութիւնը ։

1 Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը , ա որ Աս-
տուած անոր տուաւ իր ծառաներուն ցուցընե-
լու ինչ որ բ շուտով պէտք է ըլլալ . գ և իր հրեշ-
տակին ձեռքովը խրկելով՝ իր Յովհաննէս ծառային
2 իմացուց , դ Որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը
ըրաւ , ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը ,
3 ե ինչ որ տեսաւ ։ զ Երանի անոր որ կը կարդայ ,
ու անոնց որ կը լսեն այս մարգարէութեանս խօս-
քերը , և կը պահեն ինչ որ անոր մէջը գրուած է .
է ինչու որ ժամանակը մօտ է ։
4 Յովհաննէսէն եօթը եկեղեցիներուն որ Ասիայի
մէջ են . շնորհք և խաղաղութիւն ձեզի Անկէ
ը որ է թ և որ էր և որ պիտի գայ , ժ ու եօթը
5 Հոգիներէն՝ որ անոր աթոռին առջևն են , Եւ
Յիսուս Քրիստոսէ ժա հաւատարիմ վկայէն , ժբ որ
մեռելներուն անդրանիկն է ժգ ու երկրի թագա-

ա Յով. գ. 32 ։ ը. 26 ։ ժբ. 49 ։
բ Գլ. դ. 1 ։ Հմր 3 ։
գ Գլ. իբ. 16 ։
դ ա Կոր. ա. 6 ։ Գլ. զ. 9 ։ ժբ. 17 ։ Հմր 9 ։
ե ա Յով. ա. 1 ։
զ Ղու. ժա. 28 ։ Գլ. իբ. 7 ։
է Հռով. ժգ. 11 ։ Յակ. ե. 8 ։ ա Պետ. դ. 7 ։ Գլ. իբ. 10 ։
ը Ել. գ. 14 ։ Հմր 8 ։
թ Յով. ա. 1 ։
ժ Զաք. գ. 9 ։ դ. 10 ։ Գլ. դ. 1 ։ գ. 5 ։ ե. 6 ։
ժա Յով. ը. 14 ։ ա Տիմ. զ. 13 ։ Գլ. գ. 14 ։
ժբ ա Կոր. ժե. 20 ։ Կող. ա. 18 ։
ժգ Եփե. ա. 20 ։ Գլ. ժէ. 14 ։ ժթ. 16 ։

ւորներուն իշխանը ։ զ Անոր՝ որ մեզ սիրեց, է ու
6 մեզ իր արիւնովը մեր մեղքերէն լուաց, ը Եւ մեզ
թագաւորներ ու քահանաներ ըրաւ Աստուծոյ ու
իր Հօրը, ժ անոր փառք և զօրութիւն յաւի-
տեանս յաւիտենից ։ Ամէն ։
7 ի Ահա ամպերով կու գայ . ու ամէն աչք պիտի
տեսնէ զանիկա, և անոնք որ զանիկայ խոցեցին . և
անոր վրայ կոծ պիտի ընեն լ երկրիս բոլոր ազգերը ։
8 Այո, Ամէն ։ խ Ես եմ Ալֆա և Օմեղա, կ'ըսէ
Տէր [Աստուած], ծ որ է և որ էր, և որ պիտի
գայ՝ Ամենակալը ։
9 Ես Յովհաննէս ձեր եղբայրը՝ և Յիսուս Քրիս-
տոսի նեղութեանը կ ու արքայութեանը և համբե-
րութեանը մէջ հ ընկերակիցը, Պատմոս ըսուած
կղզին էի, ձ Աստուծոյ խօսքին համար ու Յիսուս
10 Քրիստոսի վկայութեանը համար ։ ղ Ես * կիրա-
կի օրը ճ Հոգին իմ վրաս եկաւ, մ ու ետևէս մեծ
11 ձայն մը լսեցի փողի ձայնի պէս, որ կ'ըսէր, Ինչ
որ կը տեսնես՝ գիրքի մը մէջ գրէ, ու խրկէ եօթը
եկեղեցիներուն, որ Եփեսոսի, ու Զմիւռնիայի,
և Պերգամոնի, ու Թիւատիրի, և Սարդիկէի,
ու Փիլադելփիայի, և Լաւոդիկիայի մէջ են ։
12 Եւ դարձայ ան ձայնը տեսնելու՝ որ ինծի կը խօսէր .

զ Յոհ. ժգ. 34 ։ ժե. 9 ։ Գաղ. բ. 20 ։
է Եբր. թ. 14 ։ ա Յոհ. ա. 7 ։
ը ա Պետ. բ. 5, 9 ։ Գլ. ե. 10 ։ ի. 6 ։
ժ ա Տիմ. զ. 16 ։ Եբր. ժգ. 21 ։ ա Պետ. դ. 11 ։ ե. 11 ։
ի Դան. է. 13 ։ Մատ. իդ. 30 ։ իզ. 64 ։ Գործ. ա. 11 ։
լ Զաք. ժբ. 10 ։ Յոհ. ժթ. 37 ։
խ Ես. խա. 4 ։ խդ. 6 ։ խբ. 12 ։ Հմր 17 ։ Գլ. բ. 8 ։ իա. 6 ։ իբ. 13 ։
ծ Հմր 4 ։ Գլ. դ. 8 ։ ժա. 17 ։ ժզ. 5 ։
կ Հռով. ը. 17 ։ բ Տիմ. բ. 12 ։
հ Փիլ. ա. 7 ։ դ. 14 ։ բ Տիմ. ա. 8 ։
ձ Գլ. զ. 9 ։ Հմր 2 ։
ղ Յոհ. ի. 26 ։ Գործ. ի. 7 ։ ա Կոր. ժզ. 2 ։
* Յն՝ տէրունական
ճ Գործ. ժ. 10 ։ բ Կոր. ժբ. 2 ։ Գլ. դ. 2 ։ ժէ. 3 ։ իա. 10 ։
մ Գլ. դ. 1 ։ ժ. 8 ։

ու երբոր դարձայ՝ յ եօթը ոսկեղէն աշտանակներ
13 տեսայ . ն Եւ եօթը աշտանակներուն մէջ շ մէկը
Որդւոյ մարդոյ նման՝ պճղնաւոր ո պատմուճան մը
հագած, չ ու կուրծքին վրայ ոսկի գօտի մը կա-
14 պած . Եւ իր գլուխը պ ու մազերը՝ բուրդի պէս
ճերմակ ու ձիւնի պէս, ջ ու իր աչքերը՝ կրակի
15 բոցի պէս . ռ Եւ իր ոտքերը ոսկեպղնձի նման՝ որ-
պէս թէ հնոցի մէջ կրակ դարձած, ս ու իր ձայնը
16 շատ ջուրերու ձայնի պէս . Եւ վ իր աջ ձեռքին
մէջ եօթը աստղ ունէր, տ ու իր բերնէն սրած
երկսայրի սուր մը կ'ելլէր, ր և իր երեսը արեւու
17 պէս էր՝ որ իր զօրութեամբը կը փայլի ։ ց Ու
երբոր տեսայ անիկայ, իր ոտքը ինկայ մեռելի պէս .
ւ ու իր աջ ձեռքը իմ վրաս դրաւ ու ըսաւ ինծի, Մի
18 վախնար . փ Ես եմ Առաջինը ու Վերջինը . ք Եւ
ես կենդանի եմ, ու ես ան եմ որ մեռայ, և և
ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից . օ և
ես ունիմ մահուան ու դժոխքին բանալիները ։
19 [Ուստի] գրէ ը ինչ որ կը տեսնես, ի ան որ կայ
20 ժ ու ան որ ետքը պիտի ըլլայ . է Եօթը աստ-
ղերուն խորհուրդը՝ որ իմ աջ ձեռքիս մէջը
տեսար, ւ և եօթը ոսկեղէն աշտանակները . ան

յ Հմր 20 ։ Ել. իե. 37 ։ Զաք. դ. 2 ։
ն Գլ. բ. 1 ։
շ Եզեկ. ա. 26 ։ Դան. է. 13 ։ ժ. 16 ։ Գլ. ժդ. 14 ։
ո Դան. ժ. 5 ։
չ Գլ. ժե. 6 ։
պ Դան. է. 9 ։
ջ Դան. ժ. 6 ։ Գլ. բ. 18 ։ ժթ. 12 ։
ռ Եզեկ. ա. 7 ։ Դան. ժ. 6 ։ Գլ. բ. 18 ։
ս Եզեկ. խգ. 2 ։ Դան. ժ. 6 ։ Գլ. ժդ. 2 ։ ժթ. 6 ։
վ Հմր 20 ։ Գլ. բ. 1 ։ գ. 1 ։
տ Ես. խթ. 2 ։ Եփե. զ. 17 ։ Եբր. դ. 12 ։ Գլ. բ. 12, 16 ։ ժթ. 15, 21 ։
ր Գործ. իզ. 13 ։ Գլ. ժ. 1 ։
ց Եզեկ. ա. 28 ։
ւ Դան. ը. 18 ։ ժ. 10 ։
փ Ես. խա. 4 ։ խդ. 6 ։ խբ. 12 ։ Գլ. բ. 8 ։ իբ. 13 ։ Հմր 10 ։
ք Հռով. զ. 9 ։
և Գլ. դ. 9 ։ ե. 14 ։
օ Սաղ. կը. 20 ։ Գլ. ի. 1 ։
ը Հմր 12, ետ. ։
ի Գլ. բ. 1, ետ. ։
ժ Գլ. դ. 1, ետ. ։
է Հմր 16 ։
ւ Հմր 12 ։

եօթը աստղերը ե եօթը եկեղեցիներուն հրեշտակ-
ներն են . ճ և եօթը աշտանակները եօթը եկեղե-
ցիներն են ։

ԳԼ. Բ

1 Եփեսոսի, 8 Զմիւռնիայի, 12 Պերգամոնի 18 և Թիւատիրի եկեղեցիներուն հրեշտակներուն՝ այսինքն հոգևոր պաշտօնեաներուն գրուելու պատուէրները, ու ան եկեղեցիներուն եղած գովութիւնները ու յանդիմանութիւնները ։

1 Եփեսոսի մէջ եղած եկեղեցիին հրեշտակին գրէ ,
ա Այսպէս կ'ըսէ անիկայ որ իր աջ ձեռքին մէջ
եօթը աստղերը ունի , բ ու եօթը ոսկեղէն աշտա-
2 նակներուն մէջը կը պտըտի . գ Գիտեմ քու գործ-
քերդ և քու աշխատութիւնդ ու քու համբե-
րութիւնդ , և որ չարերուն չես կրնար տանիլ , դ ու
փորձեցիր անոնք ե որ կ'ըսեն թէ իրենք առաքեալ
3 են ու չեն , և գտար թէ ստախօս են . Ու համ-
բերութիւն ունենալով՝ զ կրեցիր իմ
4 անուանս համար ու չթուլցար ։ Բայց քեզի
դէմ բան մը ունիմ, որ քու առջի սէրդ ձգեցիր ։
5 Միտքդ բեր հիմա ուսկից որ ինկար , ու ապաշ-
խարէ ։ և քու առջի գործքերդ ըրէ . է Եթէ ոչ՝
շուտով կու գամ քեզի , ու քու աշտանակդ իր
տեղէն պիտի շարժեմ՝ թէ որ չապաշխարես ։
6 Բայց ասիկայ ունիս , որ ը Նիկողայոսեանց գործ-
7 քերը կ'ատես , որոնք ես ալ կ'ատեմ ։ թ Ան որ
ականջ ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ ե-
կեղեցիներուն . Ան որ կը յաղթէ՝ անոր ժ ուտել
պիտի տամ ի Կենաց ծառէն որ Աստուծոյ դրախ-
տին մէջն է ։

ե Մաղ. բ. 7. Գլ. ա. 1, 20.
ճ Զաք. դ. 2. Մատ. ե. 15. Փիլ. բ. 15.
ա Գլ. ա. 16, 20.
բ Գլ. ա. 13.
գ Սաղ. ա. 6. Հմր 9, 13, 19. Գլ. գ. 1, 8, 15.
դ ա Յով. դ. 1.
ե բ Կոր. ժա. 13. բ Պետ. բ. 1.
զ Գաղ. զ. 9. Եբր. ժբ. 3, 5.
է Մատ. իա. 41, 43.
ը Հմր 15.
թ Մատ. ժա. 15. ժգ. 9, 43. Հմր 11, 17, 29. Գլ. գ. 6, 13, 22. ժգ. 9.
ժ Գլ. իբ. 2, 14.
ի Ծն. բ. 9.

8 Ու Զմիւռնիայի մէջ եղած եկեղեցիին հրեշ-
տակին գրէ , Այսպէս կ'ըսէ ա Առաջինը ու Վեր-
9 ջինը , որ մեռաւ ու կենդանացաւ . բ Գիտեմ քու
գործքերդ ու նեղութիւնդ և աղքատութիւնդ ,
(գ բայց հարուստ ես ,) ու անոնց հայհոյութիւ-
նը՝ դ որ կ'ըսեն թէ իրենք Հրեայ են ու չեն ,
10 ե հապա Սատանայի ժողովք մը ։ զ Բնաւ մի՛
վախնար ան բաներէն որ պիտի կրես . ահա Բան-
սարկուն ձեզմէ մէկ քանիները բանտը պիտի ձգէ
որ փորձուիք , և տասը օր նեղութիւն պիտի ունե-
նաք . է Մինչև 'ի մահ հաւատարիմ եղիր , ը ու
11 քեզի կենաց պսակը պիտի տամ ։ թ Ան որ ականջ
ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցի-
ներուն . Ան որ կը յաղթէ՝ ժ երկրորդ մահէն պիտի
չվնասուի ։
12 Ու Պերգամոնի մէջ եղած եկեղեցիին հրեշտա-
կին գրէ , ի Այսպէս կ'ըսէ անիկայ որ սրած երկ-
13 բերան սուրը ունի . լ Գիտեմ քու գործքերդ , և
թէ ուր կը բնակիս՝ խ այսինքն Սատանային աթո-
ռին եղած տեղը , ու իմ անունս կը պահես , և իմ
հաւատքս չուրացար ան օրերը անգամ՝ որ Անթի-
պաս իմ հաւատարիմ վկաս սպաննուեցաւ ձեր մէ-
14 ջը , ուր որ Սատանան կը բնակի ։ Բայց քեզի
դէմ քիչ մը բան ունիմ , որ հոդ ծ Բաղաամին
վարդապետութիւնը բռնողներ ունիս , որ Բաղա-
կին սորվեցուց Իսրայէլի որդւոց առջևը գայթակ-
ղութիւն դնել , կ որ անոնք կռոց զոհուածներ

ա Գլ. ա. 17, 18.
բ Հմր 2.
գ Ղուկ. ժբ. 21. ա Տիմ. զ. 18. Յակ. բ. 5.
դ Հռովմ. բ. 17, 28, 29. Թ. 6.
ե Գլ. գ. 9.
զ Մատ. ժ. 22.
է Մատ. իդ. 13.
ը Յակ. ա. 12. Գլ. գ. 11.
թ Հմր 7. Գլ. ժգ. 9.
ժ Գլ. ի. 14. իա. 8.
ի Գլ. ա. 16.
լ Հմր 2.
խ Հմր 9.
ծ Թուոց իգ. 14. իե. 1. լա. 16. բ Պետ. բ. 15. Յուդ. 11.
կ Հմր 20. Գործ. ժե. 29. ա Կոր. ը. 9, 10. ժ. 19, 20.

15 ուտեն [ջ]ու պոռնկութիւն ընեն : [ռ]Այսպէս ալ
դուն Նիկողայոսեանց վարդապետութիւնը բռնող-
16 ներ ունիս, որն որ ես կ'ատեմ : [Ուստի] ապաշ-
խարէ . եթէ ոչ՝ շուտով կու գամ քեզի, [ս]ու իմ
բերնիս սրովը պիտի պատերազմիմ անոնց հետ :
17 [վ]Ան որ ականջ ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ
կ'ըսէ եկեղեցիներուն . Ան որ կը յաղթէ՝ պահուած
մանանայէն ուտել պիտի տամ անոր, ու ճերմակ
խիճ մը պիտի տամ անոր, և ան խիճին վրայ
[տ]նոր անուն մը գրուած, որն որ մէկը չգիտեր,
բայց միայն ան՝ որ կ'ընդունի :
18 Ու Թիւատիրի մէջ եղած եկեղեցիին հրեշտա-
կին գրէ, Այսպէս կ'ըսէ Աստուծոյ Որդին, [ր]որ
կրակի բոցի պէս աչքեր ունի, ու իր ոտքերը
19 ոսկեպղինձի նման են . [ց]Գիտեմ քու գործերդ և
սէրդ ու ծառայութիւնդ, և քու հաւատքդ ու
համբերութիւնդ, և թէ քու վերջին գործերդ
20 առաջիններէն շատ են : Բայց քեզի դէմ բան մը
ունիմ, որ թող կու տաս [ւ]Յեզաբէլ կնոջ, որ
ինքզինքը մարգարէուհի կ'անուանէ, ու իմ ծա-
ռաներս մոլորցնելով՝ կը սորվեցնէ [փ]պոռնը-
21 կութիւն ընել և կռոց զոհուածներ ուտել : [ք]Ու
ես անոր ժամանակ տուի իր պոռնկութեանը վրայ
22 ապաշխարելու, ու չապաշխարեց : Ահա ես զանիկայ
անկողինը պիտի ձգեմ, ու անոր հետ շնութիւն
ընողները՝ մեծ նեղութեան մէջ, թէ որ իրենց
23 գործերուն վրայ չապաշխարեն : Ու անոր զա-
ւակները մահով պիտի սպաննեմ . ու բոլոր եկե-

ջ ա Կոր. զ. 13, [illegible] ։
ռ Հմր 6 ։
ս Եսա. ժա. 4 ։ բ Թես. բ. 8 ։ Գլ. ա. 16 ։ ժթ. 15, 21 ։
վ Հմր 7, 11 ։
տ Գլ. գ. 12 ։ ժթ. 12 ։
ր Գլ. ա. 14, 15 ։
ց Հմր 2 ։
ւ գ Թագ. ժզ. 31 ։ իա. 25 ։ դ Թագ. թ. 7 ։
փ Ել. լդ. 15 ։ Գործ. ժե. 20, 29 ։ ա Կոր. ժ. 19, 20 ։ Հմր 14 ։
ք Հռով. բ. 4 ։ Գլ. թ. 20 ։

ղեցիները պիտի գիտնան [օ]թէ ես ան եմ՝ որ երի-
կամունքները ու սիրտերը կը քննեմ . [ֆ]և ամէն
մէկերնուդ ձեր գործերուն համեմատ պիտի հա-
24 տուցանեմ : Բայց ձեզի կ'ըսեմ միւսներուդ, որ
Թիւատիրի մէջ էք, ու աս վարդապետու-
թիւնը չունիք, որ չճանչցաք Սատանային խո-
րունկ բաները՝ (ինչպէս որ կ'ըսեն .) [ա]Ձեր վրայ
25 ուրիշ ծանրութիւն չեմ ձգեր . [բ]Հապա ան որ
26 ունիք՝ պահեցէք մինչև որ ես գամ : Ու ան որ
կը յաղթէ [գ]ու իմ գործերս մինչև վերջը կը պա-
հէ, [դ]անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն
27 վրայ, ([ե]Ու պիտի հովուէ զանոնք երկաթէ գա-
ւազանով . անոնք բրուտի ամաններու պէս պիտի
28 փշրուին .) Ինտոր որ ես ալ իմ Հօրմէս առի .
29 ու անոր պիտի տամ [զ]Առաւօտեան աստղը : [է]Ան
որ ականջ ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ
եկեղեցիներուն :

ԳԼ. Գ

2 Քրիստոս կը յանդիմանէ Սարդիկէի եկեղեցիին հրեշտակը . 3 կը յորդորէ զանիկայ որ ապաշխարէ, և սպառնալիք կ'ընէ անոր . 8 կը գովէ Փիղադելփիայի եկեղեցիին հրեշտակը 10 իր արթնութեանը և համբերութեանը համար . 15 կը նախատէ Լաւոդիկէի եկեղեցիին հրեշտակը՝ ո՛չ պաղ և ո՛չ տաք ըլլալուն համար, 19 և կը պատուիրէ որ աւելի նախանձաւոր ու ջերմեռանդ ըլլայ ։ 20 Քրիստոս դուռը կայնած կը բաղխէ ։

1 Ու Սարդիկէի մէջ եղած եկեղեցիին հրեշտակին
գրէ, [ը]Այսպէս կ'ըսէ անիկայ որ ունի Աս-

օ ա Թագ. ժզ. 7 ։ ա Մն. իը. 9 ։ իթ. 17 ։ բ Մն. զ. 30 ։ Սաղ. է. 9 ։ Երեմ. ժա. 20 ։ ժէ. 10 ։ ի. 12 ։ Յոհ. բ. 24, 25 ։ Գործ. ա. 24 ։ Հռով. ը. 27 ։
ֆ Սաղ. կբ. 12 ։ Մատ. ժզ. 27 ։ Հռով. բ. 6 ։ ժդ. 12 ։ բ Կոր. ե. 10 ։ Գաղ. զ. 5 ։ Գլ. ի. 12 ։
ա Գործ. ժե. 28 ։
բ Գլ. գ. 11 ։
գ Յոհ. զ. 29 ։ ա Յոհ. գ. 23 ։
դ Մատ. ժթ. 28 ։ Ղուկ. իբ. 29, 30 ։ ա Կոր. զ. 3 ։ Գլ. գ. 21 ։ ի. 4 ։
ե Սաղ. բ. 8, 9 ։ խթ. 14 ։ Դան. է. 22 ։ Գլ. ժբ. 5 ։ ժթ. 15 ։
զ բ Պետ. ա. 19 ։ Գլ. իբ. 16 ։
է Հմր 7 ։
ը Գլ. ա. 4, 16 ։ գ. 5 ։ ե. 6 ։

տուածոյ եօթը Հոգիները՝ ու եօթը աստղերը .
բ Գիտեմ քու գործերդ՝ որ դուն անուն ունիս
2 թէ կենդանի ես , գ ու մեռած ես ։ Արթո՛ւն կե-
ցիր և հաստատէ՛ մնացած բաները որ մեռնելու
վրայ են , ինչու որ քու գործերդ Աստուծոյ առ-
3 ջեւ կատարեալ չգտայ ։ դ Յիշէ՛ ուրեմն ըեր
թէ ինչպէս ընդունեցիր ու լսեցիր , ու պահէ՛ ե և
ապաշխարէ . զ Բայց թէ որ արթըննալու չըլլաս ,
գողի պէս քու վրադ պիտի գամ , ու բնաւ պիտի
չգիտնաս թէ ո՛ր ժամուն քու վրադ պիտի գամ ։
4 Սակայն քանի մը անձինք ունիս Սարդիկէի մէջ ,
է որոնք իրենց հանդերձները չաղտոտեցին , ը և
ճերմակներով պիտի պտըտին ինծի հետ , քանզի
5 արժանի են ։ Ան որ կը յաղթէ թ ճերմակներ պի-
տի հագնի . ժ ու ես անոր անունը ի կենաց գիրքէն
պիտի չջնջեմ , լ և անոր անունը պիտի դաւանիմ
իմ Հօրս առջեւը ու անոր հրեշտակներուն առջեւը ։
6 խ Ան որ ականջ ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ
կ՚ըսէ եկեղեցիներուն ։
7 Ու Փիլադելփիայի մէջ եղած եկեղեցիին հրեշ-
տակին գրէ , ծ Այսպէս կ՚ըսէ ան Սուրբը՝ կ ան
Ճշմարիտը հ որ Դաւիթի բանալին ունի , ձ կը
բանայ ու մէկը չկայ որ գոցէ , ղ և կը գոցէ ու
8 մէկը չկայ որ բանայ . ճ Գիտեմ քու գործերդ .
մ Ահա քու առջեւդ բացուած դուռ մը դրի , որ մէ-

բ Գլ. բ. 2։
գ Եփե. բ. 1, 5։ ա Տիմ. ե. 6։
դ ա Տիմ. զ. 20։ բ Տիմ. ա. 13։ Հմր 11։
ե Հմր 19։
զ Մատ. իդ. 42, 43։ իե. 13։ Մար. ժգ. 33։ Ղու. ժբ. 39, 40։ ա Թես. ե. 2, 6։ բ Պետ. գ. 10։ Գլ. ժզ. 15։
է Յուդ. 23։
ը Գլ. դ. 4։ զ. 11։ է. 9, 13։
թ Գլ. ժթ. 8։
ժ Ել. լբ. 32։ Սաղ. կթ. 28։
ի Փիլ. դ. 3։ Գլ. ժգ. 8։ ժէ. 8։ ի. 12։ իա. 27։
լ Մատ. ժ. 32։ Ղու. ժբ. 8։
խ Գլ. բ. 7։
ծ Գոր. գ. 14։
կ ա Յով. ե. 20։ Հմր 14։ Գլ. ա. 5։ զ. 10։ ժթ. 11։
հ Ես. իբ. 22։ Ղու. ա. 32։ Գլ. ա. 18։
ձ Մատ. ժզ. 19։
ղ Յոբ. ժբ. 14։
ճ Հմր 1։
մ ա Կոր. ժզ. 9։ բ Կոր. բ. 12։

կը չկրնար գոցել . ինչու որ դուն քիչ մը կարո-
ղութիւն ունիս , և իմ խօսքս պահեցիր ու իմ
9 անունս չուրացար ։ յ Ահա ես քեզի կու տամ Սա-
տանային ժողովքէն եղողները՝ որոնք կ՚ըսեն թէ
իրենք Հրեայ են ու չեն , հապա սուտ կ՚ըսեն .
ն Ահա պիտի ստիպեմ անոնք՝ որ գան ու երկրպա-
գութիւն ընեն քու ոտքերուդ առջեւը , և ճանչնան
10 թէ ես քեզ սիրեցի ։ Որովհետեւ իմ համբերու-
թեանս խօսքը պահեցիր , շ ես ալ քեզ պիտի
պահեմ փորձութեան ժամանակը , ո որ պատրաստ
է գալու բոլոր աշխարհի վրայ՝ չ երկրիս երեսը
11 բնակողները փորձելու համար ։ պ Ահա ես շուտով
կու գամ . ջ Ունեցածդ ամո՛ւր բռնէ , ռ որ մէկը
12 չառնէ քու պսակդ ։ Ան որ կը յաղթէ՝ անիկայ
իմ Աստուծոյս տաճարին մէջ ս սիւն մը պիտի
ընեմ , ու ալ դուրս պիտի չելլէ . վ Եւ անոր վրայ
իմ Աստուծոյս անունը պիտի գրեմ , ու իմ Աս-
տուծոյս քաղաքին անունը , տ այսինքն Նոր Երու-
սաղէմին , որ երկինքէն իմ Աստուծմէս կ՚իջնէ ,
13 ր և իմ նոր անունս . ց Ան որ ականջ ունի՝ թող
լսէ թէ Հոգին ինչ կ՚ըսէ եկեղեցիներուն ։
14 Ու Լաւոդիկէի մէջ եղած եկեղեցիին հրեշտա-
կին գրէ , ւ Այսպէս կ՚ըսէ Ամէնը՝ փ հաւատարիմ
ու ճշմարիտ Վկան , ք Աստուծոյ արարածոց Սկիզ-
15 բը . օ Գիտեմ քու գործերդ որ ո՛չ պաղ ես
ու ո՛չ տաք . երանի թէ պաղ ըլլայիր կամ տաք ։
16 Ուստի դուն որ գաղջ ես , ու ո՛չ տաք՝ ոչ ալ պաղ ,

յ Գլ. բ. 9։
ն Ես. խթ. 23։ կ. 14։
շ բ Պետ. բ. 9։
ո Ղու. բ. 1։
չ Ես. իդ. 17։
պ Փիլ. դ. 5։ Գլ. ա. 3։ իբ. 7, 12, 20։
ջ Գլ. բ. 25։
ռ Գլ. բ. 10։
ս գ Թագ. է. 21։ Գաղ. բ. 9։
վ Գլ. բ. 17։ ժդ. 1։ իբ. 4։
տ Գաղ. դ. 26։ Եբր. ժբ. 22։ Գլ. իա. 2, 10։
ր Գլ. իբ. 4։
ց Գլ. բ. 7։
ւ Ես. կե. 16։
փ Գլ. ա. 5։ ժթ. 11։ իբ. 6։ Հմր 7։
ք Կող. ա. 15։
օ Հմր 1։

17 քեզ բերնէս դուրս փսխելու վրայ եմ ։ Քանզի կ՚ը-
սես , ‡ Ես հարուստ եմ՝ ու մեծցայ , և բանի մը կա-
րօտ չեմ ։ ու չես գիտեր որ դուն խեղճ ու թշուա-
18 ռական ես՝ և աղքատ ու կոյր ու մերկ ։ Ես քեզի
խորհուրդ կու տամ ։ — Ինծմէ կրակի մէջ փոր-
ձուած ոսկի ծախու առ որ հարստանաս , ₣ ու
ճերմակ հանդերձներ՝ որ հագնիս , որ քու ամօթալի
մերկութիւնդ չերևնայ ։ և աչքերդ դեղ դիր որ
19 տեսնես ։ ‡ Ես իմ ամէն սիրածս կը յանդիմանեմ
ու կը խրատեմ ։ ուստի նախանձաւո՛ր եղիր ու
20 ապաշխարէ ։ ⊤ Ահա ես դուռը կայներ եմ ու կը
զարնեմ ։ ⊦ Եթէ որ մէկը իմ ձայնս լսէ ու դու-
ռը բանայ , ⌐ անոր քովը պիտի մտնեմ՝ և անոր
21 հետ ընթրիք պիտի ընեմ , ան ալ իմ հետս ։ Ան
որ կը յաղթէ , իմ հետս ⊦ իմ աթոռս նստել պի-
տի տամ անոր ; ինչպէս որ ես ալ յաղթեցի ու
22 իմ Հօրս հետ անոր աթոռը նստայ ։ ⊏ Ան որ ա-
կանջ ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ՚ըսէ եկե-
ղեցիներուն ։

ԳԼ . Դ

2 Յովհաննէս Աստուծոյ աթոռը կը տեսնէ երկնից մէջ ։ 4 Քսանըչորս երէցները ։ 6 Չորս կենդանիները՝ որոնք առջենուն ու ետևնուն աչքերով լեցուն էին ։ 10 Երէցները իրենց պսակները աթոռին վրայ նստողին առջև դնելով , երկրպագութիւն կ՚ընեն անոր ։

1 Աս բաներէն ետքը տեսայ , և ահա երկնից մէջ
բացուած դուռ մը կար , — և առջի ձայնը որ
լսեցի , փողի նման էր , որ ինծի հետ կը խօսէր ու
կ՚ըսէր , ₣ Հոս ելիր ‡ ու ասկէ ետքը ըլլալու բա-

‡ Ովս . ժբ . 9 ; ա Կոր . դ . 8 ;
— Ես . ծե . 1 ; Մատ . ժգ . 44 ; իե . 9 ;
₣ բ Կոր . ե . 3 ; Գլ . է . 13 ; ժզ . 15 ; ժթ . 8 ;
‡ Յոբ . ե . 17 ; Առակ . գ . 11 , 12 ; Եբր . ժբ . 5 , 6 ; Յակ . ա . 12 ;
⊤ Երգ . ե . 2 ;
⊦ Ղուկ . ժբ . 37 ;
⌐ Յոհ . ժդ . 23 ;
⊦ Մատ . ժթ . 28 ; Ղուկ . իբ . 30 ; ա Կոր . զ . 2 ; բ Տիմ . բ . 12 ; Գլ . բ . 26 , 27 ;
⊏ Գլ . բ . 7 ;
— Գլ . ա . 10 ;
₣ Գլ . ժա . 12 ;
‡ Գլ . ա . 19 ; իբ . 6 ;

2 ները քեզի ցուցընեմ ։ ⊤ Եւ շուտ մը Հոգին իմ
վրաս եկաւ ։ ⊦ Եւ ահա աթոռ մը դրուած էր երկ-
3 նից մէջ ։ Ու աթոռին վրայ մէկը նստեր էր ։ և
նստողը յասպիս ու սարդիոն քարերու երևոյթին
4 նման էր ։ Եւ աթոռին բոլորտիքը ⌐ ծիածան՝
զմրուխտի երևոյթի նման ։ ու աթոռին բոլորտի-
քը քսանըչորս աթոռներ , և ան աթոռներուն
վրայ քսանըչորս երէցներ նստեր էին ⊦ ճերմակ
հանդերձներ հագած , ⊏ ու գլուխնին ոսկիէ պսակ-
5 ներ ունէին ։ Եւ աթոռէն ⊏ փայլակներ ու ձայներ
և որոտումներ կ՚ելլէին , ⊹ ու աթոռին առջին եօթը
հատ բորբոքած կրակի ղամբարներ կային , ⊦ որոնք
6 Աստուծոյ եօթը Հոգիներն են ։ ւ Եւ աթոռին
առջևը իբրև ապակեղէն ծով մը՝ ակնվանիի նման ,
և ⊦ աթոռին մէջը ու աթոռին բոլորտիքը չորս
կենդանիներ , որ աչքերով լեցուն էին առջևէն
7 ⊹ ու ետևէն ։ { Եւ առջի կենդանին առիւծի նման
էր , ու երկրորդ կենդանին՝ զուարակի նման , և
երրորդ կենդանին մարդու երես ունէր , ու չորրորդ
8 կենդանին՝ թռչող արծիւի նման ։ Եւ չորս կեն-
դանիներուն ամէն մէկը շուրջանակի ՙ վեց վեց թև
ունէր , ու ներսէն ՙ աչքերով լեցուն էին ։ ու
չէին հանգչեր ո՛չ ցորեկը ո՛չ ալ գիշերը՝ ըսելով ,
⌐ Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ՝ ճ Տէր Աստուած Ամենա-
9 կալ , ՛ որ էր և որ է և որ պիտի գայ ։ Ու
երբոր ան կենդանիները փառք ու պատիւ և գո-

⊤ Գլ . ա . 10 ; ժէ . 3 ; իա . 10 ;
⊦ Ես . զ . 1 ; Երեմ . ժէ . 12 ; Եզեկ . ա . 26 ; ժէ . 1 ; Դան . է . 9 ;
⌐ Եզեկ . ա . 28 ;
⊦ Գլ . գ . 4 , 5 ; զ . 11 ; է . 9 , 13 , 14 ; ժթ . 14 ;
⊏ Հմր 10 ;
⊏ Գլ . ը . 5 ; ժզ . 18 ;
⊹ Ել . լէ . 23 ; բ Մն . դ . 20 ; Եզեկ . ա . 13 ; Զաք . դ . 2 ;
⊦ Գլ . ա . 4 ; գ . 1 ; ե . 6 ;
ւ Ել . լե . 8 ; Գլ . ժե . 2 ;
⊦ Եզեկ . ա . 5 ;
⊹ Հմր 8 ;
{ Եզեկ . ա . 10 ; ժ . 14 ;
ՙ Ես . զ . 2 ;
ՙ Հմր 6 ;
⌐ Ես . զ . 3 ;
ճ Գլ . ա . 8 ;
՛ Գլ . ա . 4 ;

հութիւն կու տային աթոռին վրայ նստողին՝ [ժ] որ
10 կենդանի է յաւիտեանս յաւիտենից, [ի] Քսանու-
չորս երէցները աթոռին վրայ նստողին առջեւ
կ'իյնային [լ] ու երկրպագութիւն կ'ընէին յաւի-
տեանս յաւիտենից կենդանի եղողին, [խ] և իրենց
պսակները աթոռին առջեւ կը ձգէին՝ ըսելով,
11 [ծ] Արժանի ես Տէր՝ փառք ու պատիւ և զօրութիւն
առնելու, [կ] ինչու որ ամէն բան դուն ստեղծեցիր,
ու քու կամքովդ եղան ու ստեղծուեցան ։

ԳԼ. Ե

1 Եօթը կնիքով կնքուած գիրքը ։ 9 Միայն մորթուած Գառնուկը արժանի էր զանիկայ բանալու ։ 12 Վասն որոյ երէցները փառք ու գոհութիւն կու տան անոր, 9 ու կը խոստովանին թէ անիկայ փրկեց զիրենք իր արիւնովը ։

1 Ու աթոռին վրայ նստողին աջ ձեռքը [ա] մէկ գիրք
մը տեսայ՝ ներսէն ու դուրսէն գրուած, [բ] եւ
2 եօթը կնիքով կնքուած ։ Ու մէկ զօրաւոր հրեշ-
տակ մը տեսայ՝ որ մեծ ձայնով կը կանչէր, Ո՞վ
արժանի է այս գիրքը բանալու և անոր կնիք-
3 ները քակելու ։ Ու [գ] ոչ երկնից մէջ՝ ոչ երկրի
վրայ ու ոչ երկրի տակը գտնուեցաւ մէկը՝ որ կա-
րող ըլլար այն գիրքը բանալու, ոչ ալ անոր նա-
4 յելու ։ Ես ալ սաստիկ կու լայի՝ որ մէկը արժա-
նի չգտնուեցաւ այն գիրքը բանալու, ոչ ալ անոր
5 նայելու ։ Ու երէցներէն մէկը ըսաւ ինծի, Մի՛
լար ․ [դ] Ահա Յուդայի ցեղէն եղող Առիւծը՝ [ե] Դա-
ւիթի Արմատը յաղթեց այն գիրքը բանալու [զ] ու
6 անոր եօթը կնիքները քակելու ։ Ու տեսայ որ ա-

[ժ] Գլ. ա. 18 ։ ե. 14 ։ ժե. 7 ։
[ի] Գլ. ե. 8, 14 ։
[լ] Հմր 9 ։
[խ] Հմր 4 ։
[ծ] Գլ. ե. 12 ։
[կ] Ծն. ա. 1 ։ Գոր. ժէ. 24 ։ Եփե. գ. 9 ։ Կող. ա. 16 ։ Գլ. ժ. 6 ։
[ա] Եզկ. բ. 9, 10 ։
[բ] Ես. իթ. 11 ։ Դան. ժբ. 4 ։
[գ] Հմր 13 ։
[դ] Ծն. խթ. 9, 10 ։ Եբր. է. 14 ։
[ե] Ես. ժա. 1, 10 ։ Հռով. ժե. 12 ։ Գլ. իբ. 16 ։
[զ] Հմր 1 ։ Գլ. գ. 1 ։

թոռին ու չորս կենդանիներուն մէջտեղը և երէց-
ներուն մէջտեղը կայնած [է] Գառնուկ մը կար՝ որպէս
թէ մորթուած, որ եօթը եղջիւր [ը] ու եօթը աչք
ունէր, [թ] որոնք Աստուծոյ եօթը Հոգիներն են՝ որ
7 բոլոր երկիրը կը խրկուին ։ Ու անիկայ եկաւ [ժ] ու
աթոռին վրայ նստողին աջ ձեռքէն գիրքը առաւ ։
8 Ու երբոր գիրքը առաւ, [ի] չորս կենդանիները ու
քսանուչորս երէցները Գառնուկին առջեւ ինկան,
[լ] և ամէնքն ալ քնարներ ունէին, ու ոսկիէ խըն-
կամաններ խունկով լեցուն, [խ] որ սուրբերուն ա-
9 ղօթքն է ։ [ծ] Ու նոր երգ մը կ'երգէին՝ ըսելով,
[կ] Արժանի ես դուն այս գիրքը առնելու և անոր
կնիքները բանալու ․ [հ] ինչու որ մորթուեցար, [ձ] ու
մեզ ծախու առիր Աստուծոյ՝ քու արիւնովդ [ղ] ամէն
10 ցեղէ ու լեզուէ և ժողովուրդէ ու ազգէ ․ [ճ] Ու
մեզ մեր Աստուծոյ թագաւորներ ու քահանաներ
11 ըրիր, ու երկրի վրայ պիտի թագաւորենք ։ Ու
նայեցայ՝ ու շատ հրեշտակներու ձայն լսեցի, [մ] որոնք
աթոռին ու կենդանիներուն և երէցներուն բոլոր-
տիքն էին ․ [յ] ու անոնց թիւն էր բիւրք բիւրուց և
12 հազարք հազարաց ․ Որոնք մեծ ձայնով կ'ըսէին,
[ն] Այս մորթուած Գառնուկը արժանի է զօրութիւն
ու հարստութիւն և իմաստութիւն ու կարողու-
թիւն և պատիւ ու փառք ու օրհնութիւն առնելու ։

[է] Ես. ծգ. 7 ։ Յով. ա. 29, 36 ։ ա Պետ. ա. 19 ։ Գլ. ժգ. 8 ։ Հմր 9, 12 ։
[ը] Զաք. գ. 9 ։ դ. 10 ։
[թ] Գլ. դ. 5 ։
[ժ] Գլ. դ. 2 ։
[ի] Գլ. դ. 8, 10 ։
[լ] Գլ. ժդ. 2 ։ ժե. 2 ։
[խ] Սաղ. ճխա. 2 ։ Գլ. ը. 3, 4 ։
[ծ] Սաղ. խ. 3 ։ Գլ. ժդ. 3 ։
[կ] Գլ. դ. 11 ։
[հ] Հմր 6 ։
[ձ] Գոր. ի. 28 ։ Հռով. դ. 24, 25 ։ ա Կոր. զ. 20 ։ է. 23 ։ Եփե. ա. 7 ։ Կող. ա. 14 ։ Եբր. թ. 12 ։ ա Պետ. ա. 18, 19 ։ բ Պետ. բ. 1 ։ ա Յով. ա. 7 ։
[ղ] Դան. դ. 1 ։ զ. 25 ։ Գլ. է. 9 ։ ժա. 9 ։ ժդ. 6 ։
[ճ] Ել. ժթ. 6 ։ ա Պետ. բ. 5, 9 ։ Գլ. ա. 6 ։ ի. 6 ։ իբ. 5 ։
[մ] Գլ. դ. 4, 6 ։
[յ] Սաղ. կը. 17 ։ Դան. է. 10 ։ Եբր. ժբ. 22 ։
[ն] Գլ. դ. 11 ։

13 ս Եւ բոլոր արարածները որ երկնից մէջ ու երկ-
րի վրայ ու երկրի տակը և ծովու մէջ, ու ամէն
ինչ որ անոնց մէջը կայ՝ լսեցի որ կ'ըսէին, վ Ա-
թոռին վրայ նստողին և Գառնուկին տ օրհնութիւն
ու պատիւ և փառք ու զօրութիւն յաւիտեանս
14 յաւիտենից։ ր Եւ չորս կենդանիները կ'ըսէին,
Ամէն. ու երէցները ինկան ու երկրպագութիւն
ըրին։

ԳԼ. Զ.

1 Կնիքներուն կարգաւ բացուիլը, ու անոնց հետեւած երեւոյթ-ները։

1 ա Եւ տեսայ՝ երբոր Գառնուկը կնիքներուն
մէկը բացաւ, բ ու չորս կենդանիներուն մէ-
կէն որոտումի պէս ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Ե-
2 կո՛ւր ու տե՛ս։ Ու տեսայ՝ գ և ահա ճերմակ ձի մը,
դ ու անոր վրայ հեծնողը աղեղ մը ունէր. ե և
պսակ մը տրուեցաւ անոր, և անիկայ յաղթող էր
ու յաղթելու ելաւ։
3 Ու երբոր երկրորդ կնիքը բացաւ, զ երկրորդ
4 կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, Եկո՛ւր։ է Եւ ու-
րիշ ձի մը ելաւ շառագոյն, ու անոր վրայ հեծնո-
ղին իշխանութիւն տրուեցաւ որ երկրէս խաղաղու-
թիւնը առնէ, որ իրար սպաննեն. ու անոր մէկ
մեծ սուր մը տրուեցաւ։
5 Ու երբոր երրորդ կնիքը բացաւ, ը երրորդ կեն-
դանիէն լսեցի որ կ'ըսէր, Եկո՛ւր ու տե՛ս. ու
տեսայ՝ թ և ահա սեւ ձի մը, ու անոր վրայ հեծնողը
6 իր ձեռքը կշիռ մը ունէր։ Ու չորս կենդանինե-

ս Փիլ. բ. 10 ։ Հմր 8 ։
վ Գլ. գ. 16 ։ ե. 10 ։
տ Ա Մն. իթ. 11 ։ Հռով. թ. 5 ։ ժզ. 27 ։ Ա Տիմ. գ. 16 ։ Ա Պետ. դ. 11 ։ ե. 11 ։ Գլ. ա. 6 ։
ր Գլ. ժթ. 4 ։
ց Գլ. դ. 9, 10 ։
ա Գլ. ե. 5, 6, 7 ։
բ Գլ. դ. 7 ։
գ Զաք. զ. 3 ։ Գլ. ժթ. 11 ։
դ Սաղ. խե. 4, 5 ։
ե Զաք. զ. 11 ։ Գլ. ժդ. 14 ։
զ Գլ. դ. 7 ։
է Զաք. զ. 2 ։
ը Գլ. դ. 7 ։
թ Զաք. զ. 2 ։

րուն մէջէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Կապիճ մը
ցորենը մէկ դահեկանի, ու երեք կապիճ գարին
մէկ դահեկանի. ժ և ձէթին ու գինիին վնաս չընես։
7 Ու երբոր չորրորդ կնիքը բացաւ, ի չորրորդ
կենդանիէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Եկո՛ւր ու
8 տե՛ս։ լ Ու տեսայ՝ և ահա դեղին ձի մը, ու ա-
նոր վրայ հեծնողին անունը Մահ էր, և Գժոխքը
անոր ետեւէն կ'երթար. ու անոնց իշխանութիւն
տրուեցաւ երկրի չորրորդ մասին վրայ, խ որ սրով
ու սովով և մահով ծ ու երկրի գազաններով սատ-
կեցընեն։
9 Ու երբոր հինգերորդ կնիքը բացաւ, կ սեղանին
տակը տեսայ հ ան մարդոց հոգիները, որ սպան-
նուած էին ձ Աստուծոյ խօսքին համար, ղ ու անոր
10 վկայութեանը համար՝ որ իրենք ունէին. Եւ մեծ
ձայնով աղաղակեցին ու ըսին, Ո՛վ ճ սուրբ ու
ճշմարիտ Տէր՝ մ մինչև ե՞րբ յ չես դատեր ու մեր
արիւնին վրէժը երկրի բնակիչներէն պահանջեր։
11 ն Եւ ճերմակ հանդերձներ տրուեցաւ անոնց, ու
ըսուեցաւ անոնց՝ շ որ քիչ մը ատեն ալ հանգչին,
մինչև որ անոնց ծառայակիցները ու անոնց եղբայր-
ները լման ըլլան, որոնք իրենց պէս պիտի սպան-
նուէին։
12 Եւ տեսայ՝ երբոր վեցերորդ կնիքը բացաւ, ո ու
մեծ շարժ մը եղաւ, չ ու արեւը սեւցաւ մազեղէն
քուրձի մը պէս, և լուսինը[բոլորովին]արիւնի պէս
13 եղաւ. պ Ու երկնից աստղերը գետինը թափթը-

ժ Գլ. թ. 4 ։
ի Գլ. դ. 7 ։
լ Զաք. զ. 3 ։
խ Եզեկ. ժդ. 21 ։
ծ Ղև. իզ. 22 ։
կ Գլ. ը. 3 ։ թ. 13 ։ ժդ. 18 ։
հ Գլ. ի. 4 ։
ձ Գլ. ա. 9 ։
ղ Բ Տիմ. ա. 8 ։ Գլ. ժբ. 17 ։ ժթ. 10 ։
ճ Գլ. գ. 7 ։
մ Տես Զաք. ա. 12 ։
յ Գլ. ժա. 18 ։ ժթ. 2 ։
ն Գլ. գ. 4, 5 ։ է. 9, 14 ։
շ Եբր. ժա. 40 ։ Գլ. ժդ. 13 ։
ո Գլ. ժզ. 18 ։
չ Յովել. բ. 10, 31 ։ գ. 15 ։ Մատ. իդ. 29 ։ Գործ. բ. 20 ։
պ Գլ. ը. 10 ։ թ. 1 ։

փեցան, ինչպէս որ սաստիկ հովէն շարժուած թըզ-
14 ենին իր տհաս պտուղները կը թափէ. ա Ու եր-
կինքը գալարուող տոմսի պէս կը քաշուէր. բ ու
բոլոր լեռները և կղզիները իրենց տեղերէն շարժե-
15 ցան: Ու երկրի թագաւորները և մեծամեծները
ու հարուստները, հազարապետները և զօրաւոր-
ները ու բոլոր ծառաները ու բոլոր ազատները
գ այրերուն և լերանց ապառաժներուն մէջ պահուը-
16 տեցան. Ու լեռներուն ու ապառաժներուն կ'ը-
սէին, դ Վրանիս ինկէք ու մեզ ծածկեցէք անոր
երեսէն՝ որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնու-
17 կին բարկութենէն. ե Քանզի որ անոր բարկու-
թեանը մեծ օրը եկաւ, զ ու ո՞վ կրնայ դիմանալ:

ԳԼ. Է.

2 Մէկ հրեշտակ մը Աստուծոյ ծառաներուն ճակատները կը կնքէ. 4 Կնքուածներուն թիւը՝ այսինքն Իսրայէլի ամէն մէկ ցեղէն որոշեալ թիւ մը, 9 ու բոլոր ուրիշ ազգերէն անհամար ժողովուրդներ՝ որոնք աթոռին առջեւ կը կենային ճերմակ հանդերձներ հագած ու ձեռքերնին արմաւենիներ բռնած. 14 Անոնց հանդերձները Գառնուկին արիւնովը լուացուած էին.

1 Ու ասկէ ետեւ տեսայ չորս հրեշտակներ՝ որոնք երկ-
րի չորս անկիւնը կեցեր էին, է ու երկրի չորս
հովերը բռներ էին, ը որ երկրի վրայ հով չփչէ,
ու ո՛չ ծովու վրայ, ո՛չ ալ մէկ ծառի մը վրայ:
2 Ու մէկ ուրիշ հրեշտակ մը տեսայ որ արեւելքէն
ելաւ, ու կենդանի Աստուծոյ կնիքը ունէր. և
մեծ ձայնով մը աղաղակեց այն չորս հրեշտակնե-
րուն, որոնց իշխանութիւն տրուած էր երկրին ու
3 ծովուն վնասելու, Ու ըսաւ, թ Երկրին վնաս մի՛

ա Սաղ. ճբ. 26. Եսա. լդ. 4. Եբր. ա. 12.
բ Երեմ. գ. 23. դ. 24. Գլ. ժզ. 20.
գ Եսա. բ. 19.
դ Ովս. ժ. 8. Ղու. իգ. 30. Գլ. թ. 6.
ե Եսա. ժգ. 6, [illegible]. Սոփ. ա. 14, [illegible]. Գլ. ժզ. 14.
զ Սաղ. հզ. 7.
է Դան. է. 2.
ը Գլ. թ. 4.
թ Գլ. զ. 6. թ. 4.

ընէք, ո՛չ ծովուն, ո՛չ ալ ծառերուն, մինչեւ
որ մեր Աստուծոյն ծառաներուն ժ ճակատները
4 ի կնքենք: Ու կնքուածներուն համրանքը լսեցի՝
որ էր լ հարիւր քառասունըչորս հազար՝ Իսրայէլի
5 որդւոցը բոլոր ցեղերէն կնքուած. Յուդայի ցեղէն
տասներկու հազար կնքուած, Ռուբէնի ցեղէն
տասներկու հազար կնքուած, Գադի ցեղէն տաս-
6 ներկու հազար կնքուած, Ասերի ցեղէն տասներ-
կու հազար կնքուած, Նեփթաղիմի ցեղէն տաս-
ներկու հազար կնքուած, Մանասէի ցեղէն տաս-
7 ներկու հազար կնքուած, Շմաւոնի ցեղէն տաս-
ներկու հազար կնքուած, Ղեւիի ցեղէն տասներ-
կու հազար կնքուած, Իսաքարի ցեղէն տասներ-
8 կու հազար կնքուած, Զաբուղոնի ցեղէն տաս-
ներկու հազար կնքուած, Յովսէփի ցեղէն տաս-
ներկու հազար կնքուած, Բենիամինի ցեղէն
տասներկու հազար կնքուած:
9 Ասկէ ետքը տեսայ, խ և ահա մեծ բազմութիւն՝
որն որ մէկը չէր կրնար համրել, ծ բոլոր ազգերէն
ու ցեղերէն և ժողովուրդներէն ու լեզուներէն,
որոնք աթոռին առջեւ ու Գառնուկին առջեւ կե-
ցեր էին՝ կ ճերմակ հանդերձներ հագած և ձեռ-
10 քերնին արմաւենիներ բռնած. Ու մեծաձայն կ'ա-
ղաղակէին ըսելով, հ Փրկութիւնը մեր Աստուծոյ՝
ձ որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուկին:
11 ղ Ու բոլոր հրեշտակները աթոռին ու երէցներուն
և չորս կենդանիներուն բոլորտիքը կեցեր էին, ու
իրենց երեսներուն վրայ աթոռին առջեւ ինկան ու
12 Աստուծոյ երկրպագութիւն ըրին, ճ Ըսելով,

ժ Գլ. ի. 4.
ի Եզեկ. թ. 4. Գլ. ժդ. 1.
լ Գլ. թ. 16.
խ Գլ. ժդ. 1.
ծ Հռովմ. ժա. 25.
կ Գլ. ե. 9.
հ Գլ. գ. 5, 18. դ. 4. զ. 11. Հմր 14.
ձ Սաղ. գ. 8. Եսա. խգ. 11. Երեմ. գ. 23. Ովս. ժգ. 4. Գլ. ժթ. 1.
ղ Գլ. ե. 13.
ճ Գլ. դ. 6.
մ Գլ. ե. 13, 14.

Ամէն ․ օրհնութիւն ու փառք և իմաստութիւն ու
գոհութիւն և պատիւ ու զօրութիւն և կարողու-
թիւն մեր Աստուծոյն յաւիտեանս յաւիտենից ։
13 Ամէն ։ Ու երէցներէն մէկը պատասխան տալով՝
ինծի ըսաւ , Ասոնք որ [կ]ճերմակ հանդերձներ հա-
14 գած են՝ ո՞վ են , և ո՞ւրկից եկան ։ Ես ալ ըսի
անոր , Տէ՛ր իմ՝ դուն գիտես ․ ու ըսաւ ինծի՝,
[հ]Ասոնք են մեծ նեղութենէ եկողները , [ձ]որ իրենց
հանդերձները լուացին , ու զանոնք Գառնուկին
15 արիւնովը ճերմկցուցին ․ Անոր համար Աստուծոյ
աթոռին առջևն են , և իրեն կը ծառայեն ցորեկ ու
գիշեր իր տաճարին մէջը ․ [ղ]և աթոռին վրայ նստո-
16 ղը իր վրանը պիտի տարածէ անոնց վրայ ․ [ճ]Այսու-
հետև ո՛չ պիտի անօթենան ու ո՛չ ծարաւին ,
[մ]ո՛չ ալ արևը կամ մէկ տաքութիւն մը անոնց
17 վրայ պիտի իյնայ ․ Վասն զի Գառնուկը որ
աթոռին մէջն է , [յ]պիտի հովուէ զանոնք , ու
կենդանի ջուրերու աղբիւրները պիտի առաջնորդէ
զանոնք ․ և [ն]Աստուած բոլոր արցունքները պիտի
սրբէ անոնց աչքերէն ։

ԳԼ․ Ը

1 Եօթներորդ կնիքը բացուած ժամանակը , 2 եօթը հրեշտակներու եօթը փողեր կը տրուին ։ 6 Անոնց չորսը իրենց փողերը կը հնչեցնեն , որուն կը հետևի մեծ հարուածներ ու պատուհասներ ։

1 [ա]Ու երբոր եօթներորդ կնիքը բացաւ , լռու-
թիւն եղաւ երկինքը կէս ժամու չափ ։
2 [բ]Ու տեսայ այն եօթը հրեշտակները , որ Աս-
տուծոյ առջևը կը կայնէին ․ [գ]ու անոնց եօթը

[կ] Հմր 9 ։
[հ] Գլ․ զ․ 9 ; ժէ․ 6 ։
[ձ] Ես․ ա․ 18 ; Եբր․ թ․ 14 ; ա Յօհ․ ա․ 7 ; Գլ․ ա․ 5 ; Տես Զաք․ գ․ 3 , 4 , 5 ։
[ղ] Ես․ դ․ 5 , 6 ; Գլ․ իա․ 3 ։
[ճ] Ես․ խթ․ 10 ։
[մ] Սաղ․ ճիա․ 6 ; Գլ․ իա․ 4 ։
[յ] Սաղ․ իգ․ 1 ; լզ․ 8 ; Յօհ․ ժ․ 4 , 11 , 14 ։
[ն] Ես․ իե․ 8 ; Գլ․ իա․ 4 ։
[ա] Գլ․ զ․ 1 ։
[բ] Մատ․ ժը․ 10 ; Ղու․ ա․ 19 ։
[գ] բ Մն․ իթ․ 25—28 ։

3 փող տրուեցաւ ։ Ու ուրիշ հրեշտակ մը եկաւ
սեղանին առջևը կայնեցաւ , ու ոսկեղէն խնկամաց
մը ունէր ․ և իրեն շատ խունկ տրուեցաւ , [դ]որ
բոլոր սրբոց աղօթքներուն հետ աթոռին առջևը
4 եղող [ե]ոսկի սեղանին վրայ մատուցանէ ։ [զ]Ու
խունկերուն ծուխը սրբոց աղօթքներուն հետ
5 հրեշտակին ձեռքէն Աստուծոյ առջևը ելաւ ։ Ու
հրեշտակը առաւ խնկամանը ու զանիկայ սեղանին
կրակէն լեցուց , և ձգեց երկրին վրայ ․ [է]ու եղան
ձայներ և որոտումներ ու փայլակներ [ը]ու երկրա-
6 շարժ ։ Ու եօթը հրեշտակները որ եօթը փո-
ղերը ունէին՝ պատրաստուեցան որ հնչեցնեն ։
7 Ու առջի հրեշտակը փողը հնչեցուց , [թ]ու եղաւ
կարկուտ ու կրակ արիւնով խառնուած , [ժ]ու երկ-
րի վրայ ձգուեցաւ , [ու երկրին երրորդ մասը այրե-
ցաւ ,] [ի]և ծառերուն երրորդ մասը այրեցաւ , ու
ամէն կանանչ խոտ այրեցաւ ։
8 Ու երկրորդ հրեշտակը փողը հնչեցուց , [լ]և
որպէս թէ մէկ մեծ լեռ մը կրակով բորբոքած՝ ծո-
վը ձգուեցաւ , [խ]ու ծովուն երրորդ մասը [ծ]արիւն
9 եղաւ ․ Ու [կ]ծովուն մէջի շնչաւոր արարածներուն
երրորդ մասը մեռաւ , ու նաւերուն երրորդ մասը
կորսուեցաւ ։
10 Ու երրորդ հրեշտակը փողը հնչեցուց , [հ]ու եր-
կինքէն մէկ մեծ աստղ մը ինկաւ ջահի պէս
բորբոքած , [ձ]և գետերուն ու ջուրի աղբիւրներուն
11 երրորդ մասին վրայ ինկաւ ։ [ղ]Ու այն աստղին
անունը Օշինդր էր ․ ու ջուրերուն երրորդ մասը

[դ] Գլ․ ե․ 8 ։
[ե] Ել․ լ․ 1 ; Գլ․ զ․ 9 ։
[զ] Սաղ․ ճխա․ 2 ; Ղու․ ա․ 10 ։
[է] Գլ․ ժզ․ 18 ։
[ը] բ Թագ․ իբ․ 8 ; դ Թագ․ ժթ․ 11 ; Գոր․ դ․ 31 ։
[թ] Եզկ․ լը․ 22 ։
[ժ] Գլ․ ժզ․ 2 ։
[ի] Ես․ բ․ 13 ; Գլ․ թ․ 4 ։
[լ] Երեմ․ ծա․ 25 ; Ամով․ է․ 4 ։
[խ] Գլ․ ժզ․ 3 ։
[ծ] Եզկ․ ժդ․ 19 ։
[կ] Գլ․ ժզ․ 3 ։
[հ] Ես․ ժդ․ 12 ; Գլ․ թ․ 1 ։
[ձ] Գլ․ ժզ․ 4 ։
[ղ] Հռութ․ ա․ 20 ։

օշինդր եղաւ , և ճ շատ մարդիկ ջուրերէն մեռան ,
քանզի դառն եղան :
12 մ Եւ չորրորդ հրեշտակը փողը հնչեցուց , ու
արեւին երրորդ մասը և լուսնին երրորդ մասը
ու աստղերուն երրորդ մասը զարնուեցաւ , անանկ
որ անոնց երրորդ մասը խաւարի , և օրուան եր-
րորդ մասը լոյս չտայ , նոյնպէս ալ գիշերուանը :
13 Եւ նայեցայ՝ յ ու երկնից մէջ թռչող * հրեշտակի
մը ձայն լսեցի , որ մեծ ձայնով կ'ըսէր , ն Վայ վայ
վայ երկրի վրայ բնակողներուն՝ այն մնացած փողի
ձայներուն համար , որ իրեք հրեշտակները պիտի
հնչեցնեն :

ԳԼ. Թ.

1 Հինգերորդ հրեշտակը փողը հնչեցնելով՝ մէկ աստղ մը կ'իյ-
նայ երկինքէն , որուն կը տրուի անդունդին բանալին ։ 2 Ա-
նիկայ անդունդը կը բանայ , ուսկից կարիճներու պէս մա-
րախներ կ'ելլեն ։ 12 Մէկ վայը կ'անցնի ։ 13 Վեցերորդ փո-
ղը կը հնչուի ։ 14 Չորս կապուած հրեշտակները կ'արձակուին ։

1 Եւ հինգերորդ հրեշտակը փողը հնչեցուց , շ ու
տեսայ որ երկինքէն աստղ մը ինկաւ երկրի
վրայ , ո Եւ անդունդի գուբին բանալին անոր
2 տրուեցաւ . չ Ու անդունդին գուբը բացաւ , ու
այն գուբէն ծուխ կ'ելլէր մեծ հնոցի մը ծուխին
պէս . ու խաւարեցաւ արեւը ու օդը գուբին ծու-
խէն :
3 պ Եւ ծուխէն մարախներ կ'ելլէր երկրի վրայ . ու
անոնց զօրութիւն տրուեցաւ ջ երկրի կարիճներուն
4 ունեցած զօրութեանը պէս . Եւ անոնց ըսուեցաւ
ռ որ չվնասեն ս երկրի խոտին , ոչ ալ կանանչե-
ղէնի մը և ոչ մէկ ծառի մը , հապա միայն այն

ճ Ել. ժե. 23 ; Երեմ. թ. 15 ; իգ. 15 ;
մ Ես. ժգ. 10 ; Ամով. ը. 9 ;
յ Գղ. ժդ. 6 ; ժթ. 17 ;
* Ոմանք՝ արծուի
ն Գղ. թ. 12 ; ժա. 14 ;
շ Ղու. ժ. 18 ; Գղ. ը. 10 ;
ո Ղու. ը. 31 ; Գղ. ժէ. 8 ; ի. 1 ; Հմր 2, 11 ;
չ Յովէլ. բ. 2, 10 ;
պ Ել. ժ. 4 ; Դատ. է. 12 ;
ջ Հմր 10 ;
ռ Գղ. զ. 6 ; է. 3 ;
ս Գղ. ը. 7 ;

մարդոց , վ որոնք իրենց ճակատներուն վրայ Աս-
5 տուծոյ կնիքը չունին : Եւ անոնց հրաման տրուե-
ցաւ որ չսպաննեն զանոնք , տ հապա չարչարեն
զանոնք հինգ ամիս . ու անոնց տուած չարչարանքը
կարիճի տուած չարչարանքին պէս էր՝ երբոր մար-
6 դը կը զարնէ : ր Եւ այն օրերը մարդիկ մահը պի-
տի փնտռեն ու պիտի չգտնեն . և պիտի ուզեն
7 մեռնիլ , ու մահը անոնցմէ պիտի փախչի : ց Եւ
մարախներուն նմանութիւնը՝ պատերազմի պատ-
րաստուած ձիերու պէս , ւ ու անոնց գլուխներուն
վրայ ոսկեղէն պսակներու պէս , փ և անոնց երես-
8 ները մարդոց երեսներու պէս էր . Ու անոնք մա-
զեր ունէին կանանց մազերուն պէս , ք ու անոնց ակ-
9 ռաները առիւծներու ակռաներուն պէս էր : Եւ
զրահներ ունէին երկաթէ զրահներու պէս . ա ու
անոնց թեւերուն ձայնը պատերազմի վազող շատ
10 ձիեր լծուած կառքերու ձայնին պէս էր : Եւ կա-
րիճներու նման պոչեր ունէին , ու պոչերնուն վրայ
խայթոց . բ և իշխանութիւն ունէին հինգ ամիս
11 մարդոց վնասելու : գ Եւ իրենց վրայ թագաւոր
ունէին դ անդունդին հրեշտակը , որուն անունը
Եբրայեցերէն * Աբադոն , և Յոյն լեզուով կ'ըսուի
12 * Ապողղիոն : ե Մէկ վայը անցաւ . ահա ետեւ
ասոնց երկու վայեր ալ կու գան :
13 Եւ վեցերորդ հրեշտակը փողը հնչեցուց , ու
ձայն մը լսեցի Աստուծոյ առջեւը եղող ոսկի սեղա-
14 նին չորս եղջիւրներէն , Որ կ'ըսէր վեցերորդ
հրեշտակին որ փողը ունէր . զ Եփրատ մեծ գետին
15 վրայ կապուած չորս հրեշտակները արձակէ : Եւ

վ Գղ. է. 3 ; Տես Ել. ժբ. 23 ; Եզեկ. թ. 4 ;
տ Գղ. ժա. 7 ; Հմր 10 ;
ր Յոբ. գ. 21 ; Ես. բ. 19 ; Երեմ. ը. 3 ; Գղ. զ. 16 ;
ց Յովէլ. բ. 4 ;
ւ Նաւ. գ. 17 ;
փ Դան. է. 8 ;
ք Յովէլ. ա. 6 ;
ա Յովէլ. բ. 5, 6, 7 ;
բ Հմր 5 ;
գ Եփե. բ. 2 ;
դ Հմր 1 ;
* Յն՝ կորուսիչ ;
ե Գղ. ը. 13 ;
զ Գղ. ժզ. 12 ;

այն չորս հրեշտակները արձակուեցան, որ պատ-
րաստուած էին ժամի ու օրուան և ամսի ու տա-
րիի համար, որ մարդոց երրորդ մասը մեռցնեն։
16 ա Եւ ձիաւոր զօրքերուն համրանքը բ երկու բիւր
17 բիւրուց էր, գ ու լսեցի անոնց համրանքը։ Եւ
տեսիլքին մէջ այսպէս տեսայ ձիերը, ու անոնց
վրայ հեծնողները, որ ունէին հրեղէն ու յակին-
թեղէն և ծծմբեղէն զրահներ. դ և ձիերուն գլուխ-
ները առիւծներու գլուխներուն պէս էր. ու անոնց
18 բերնէն կրակ ու ծուխ և ծծումբ կ'ելլէր։ Ասո
երեք հարուածներէն մարդոց երրորդ մասը մեռաւ,
այսինքն կրակէն ու ծուխէն ու ծծումբէն՝ որ անոնց
19 բերնէն կ'ելլէր։ Ինչու որ անոնց զօրութիւ-
նը բերաններնուն մէջն է ու պոչերնուն մէջ.
ե քանզի անոնց պոչերը օձերու նման էին, ու գլ-
20 լուխներ ունէին որոնցմով կը վնասէին։ Եւ ուրիշ
մարդիկ որ աս հարուածներէն չսպաննուեցան,
զ իրենց ձեռացը գործքերէն չապաշխարեցին, որ
երկրպագութիւն չընեն Դեւերուն՝ ու ոսկիէ և ար-
ծաթէ ու պղնձէ և քարէ ու փայտէ շինուած
է կուռքերուն, որոնք ոչ կրնան տեսնել, ոչ ալ
21 լսել, ու ոչ քալել. Նաև չապաշխարեցին
իրենց մարդասպանութիւններէն, ը ոչ ալ իրենց
կախարդութիւններէն, ոչ ալ իրենց պոռնկու-
թենէն և ոչ իրենց գողութիւններէն։

ա Եզեկ. լը. 4.
բ Սաղ. կը. 17. Դան. է. 10.
գ Գլ. է. 4.
դ Ա Մն. ժր. 8. Ես. ե. 28, 29.
ե Ես. թ. 15.
զ Բ Օր. լա. 29.
է Ղև. ժէ. 7. Բ Օր. լբ. 17. Սաղ. ճզ. 37. Ա Կոր. ժ. 20.
ը Սաղ. ճժե. 4. ճլե. 15. Դան. ե. 23.
թ Գլ. իբ. 15.

ԳԼ. Ժ.

1 Զօրաւոր հրեշտակ մը կ'երևնայ՝ իր ձեռքը բացուած գրքոյկ մը ունենալով. 6 երդում կ'ընէ յաւիտեան Կենդանի եղողին վրայ, թէ ալ ուրիշ ժամանակ պիտի չըլլայ։ 9 Յովհաննէսին հրաման կ'ըլլայ որ այն գիրքը առնէ և ուտէ։

1 Եւ տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ մը որ
երկինքէն կ'իջնէր, ու ամպ հագած էր, ա և
իր գլխուն վրայ ծիածան կար. բ ու իր երեսը
արևի պէս էր, գ և իր ոտքերը կրակի սիւներու
2 պէս. Եւ իր ձեռքը գրքոյկ մը ունէր բացուած.
դ ու իր աջ ոտքը ծովուն վրայ դրաւ, և ձախը՝
3 ցամաքին վրայ. Եւ մեծ ձայնով աղաղակեց ա-
ռիւծի մը գոչելուն պէս. ու երբոր աղաղակեց,
ե եօթը որոտումները իրենց ձայներովը խօսեցան։
4 Ու երբոր եօթը որոտումները խօսեցան, պիտի
գրէի. ու երկինքէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր,
զ Կնքէ այն բաները որ եօթը որոտումները խօսե-
5 ցան, ու զանոնք մի գրեր։ Եւ այն հրեշտակը որ
ծովուն վրայ ու ցամաքին վրայ կայնած տեսայ, է իր
6 [աջ] ձեռքը երկինքը վերցուց. Ու երդում ըրաւ
յաւիտեանս յաւիտենից Կենդանի եղողին վրայ,
ը որ ստեղծեց երկինքը ու ինչ որ անոր մէջն է, ու
երկիրը և ինչ որ անոր մէջն է, և ծովը ու ինչ որ
անոր մէջն է, թ թէ ալ ժամանակ պիտի չըլլայ.
7 ժ Հապա եօթներորդ հրեշտակին ձայնին օրերը՝
երբոր փողը հնչեցընէ, Աստուծոյ խորհուրդը պի-
տի կատարուի, ինչպէս որ իր ծառաներուն մար-
գարէներուն աւետիս տուաւ։
8 ժա Եւ այն ձայնը որ երկինքէն լսեցի, նորէն խօսե-
ցաւ ինծի ու ըսաւ, Գնա՛ առ այն բաց գրքոյկը՝
որ ծովուն ու ցամաքին վրայ կայնող հրեշտակին
9 ձեռքն է։ Ես ալ հրեշտակին գացի ու ըսի ա-
նոր, Տուր ինծի աս գրքոյկը. ու ըսաւ ինծի,
ժբ Առ ասիկայ ու կեր. և քու փորիդ մէջ դառ-

ա Եզեկ. ա. 28.
բ Մատ. ժէ. 2. Գլ. ա. 16.
գ Գլ. ա. 15.
դ Մատ. իը. 18.
ե Գլ. ը. 5.
զ Դան. ը. 26. ժբ. 4, 9.
է Եզ. գ. 8. Դան. ժբ. 7.
ը Նեեմ. թ. 6. Գլ. դ. 11. ժդ. 7.
թ Դան. ժբ. 7. Գլ. ժզ. 17.
ժ Գլ. ժա. 15.
ժա Հմր 4.
ժբ Երեմ. ժե. 16. Եզեկ. բ. 8. գ. 1, 2, 3.

նութիւն պիտի պատճառէ, բայց բերնիդ մէջ
10 մեղրի պէս անոյշ պիտի ըլլայ։ Ու գրքոյկը
հրեշտակին ձեռքէն առի ու կերայ զանիկայ. ե և
իմ բերնիս մէջը մեղրի պէս անոյշ էր, և ուտե-
11 լէս ետքը զ փորիս մէջը դառնութիւն եղաւ։ Ու
ըսաւ ինծի, Պէտք է որ դուն նորէն մարգարէու-
թիւն ընես շատ ժողովուրդներու և ազգերու ու
լեզուներու և թագաւորներու * վրայով։

ԳԼ. ԺԱ

3 Երկու վկաները կը մարգարէանան. 6 Անոնք իշխանութիւն պիտի ունենան երկինքը գոցելու որ անձրև չգայ. 7 Գազանը պիտի պատերազմի անոնց դէմ, ու սպաննէ զանոնք. 8 Անոնք չթաղուած պիտի մնան, 11 և իրեք ու կէս օրէն ետև յարութիւն պիտի առնեն. 14 Երկրորդ վայը կ'անցնի. 15 Եօթներորդ փողը կը հնչուի.

1 ա Ու ինծի մէկ եղէգ մը տրուեցաւ գաւազանի
պէս, և հրեշտակը կայներ էր ու կ'ըսէր,
բ Ելի՛ր ու չափէ՛ Աստուծոյ տաճարը ու սեղանը՝ և
2 անոր մէջ երկրպագութիւն ընողները։ գ Ու գա-
ւիթը որ տաճարին դուրսն է, ձգէ՛ և մի՛ չափեր,
դ ինչու որ անիկայ հեթանոսներուն տրուած է,
ե ու անոնք սուրբ քաղաքը պիտի կոխկռտեն Քառա-
3 սունըերկու ամիս։ զ Ու իմ երկու վկաներուս
[illegible] պիտի տամ, է և անոնք քուրձ հագած
հազար երկու հարիւր ու վաթսուն օր ը մարգա-
4 րէութիւն պիտի ընեն։ թ Ասոնք այն երկու ձիթե-
նիները ու երկու աշտանակներն են, որ երկրին Տէ-
5 րոջը առջևը կը կենան։ Ու թէ որ մէկը ուզէ անոնց
վնաս ընել, ժ անոնց բերաններէն կրակ կ'ելլէ, ու

ե Եզեկ. գ. 3։
զ Եզեկ. բ. 10։
* Կամ առջև։
ա Եզեկ. խ. 3, Է։ Զաք. բ. 1։ Գլ. իա. 15։
բ Թու. իգ. 18։
գ Եզեկ. խ. 17, 20։
դ Սաղ. հթ. 1։ Ղու. իա. 24։
ե Դան. ը. 10։
զ Գլ. ժգ. 5։
է Գլ. ի. 4։
ը Գլ. ժբ. 6։
թ Գլ. ժթ. 10։
ժ Սաղ. ծբ. 8։ Երեմ. ժա. 16։ Զաք. դ. 3, 11, 14։
ի դ Թագ. ա. 10, 12։ Երեմ. ա. 10։ ե. 14։ Եզեկ. խգ. 8։ Ովս. զ. 5։

իրենց թշնամիները կ'ուտէ. լ և թէ որ մէկը ուզէ
անոնց վնաս ընել, պէտք է որ անիկայ այսպէս
6 սպաննուի։ խ Ասոնք իշխանութիւն ունին երկին-
քը գոցելու՝ որ իրենց մարգարէութեան օրերը անձ-
րև չգայ, ծ ու ջուրերուն վրայ իշխանութիւն ունին՝
անոնք արիւն դարձնելու, և ամէն կերպ պատու-
հասներով երկիրը զարնելու՝ քանի անգամ որ ու-
7 զեն։ կ Ու երբոր իրենց վկայութիւնը կատարեն,
այն գազանը հ անդունդէն ելլող ձ գազանը ղ անոնց
հետ պատերազմ պիտի ընէ, և անոնց պիտի յաղ-
8 թէ ու պիտի սպաննէ անոնք։ Ու անոնց դիե-
րը ինկած պիտի մնան ճ այն մեծ քաղաքին հրապա-
րակին մէջ, որ հոգևորապէս կ'ըսուի Սոդոմ ու
Եգիպտոս, մ ուր որ մեր Տէրն ալ խաչուեցաւ։
9 յ Ու ժողովուրդներէն ու ցեղերէն և լեզուներէն
ու ազգերէն պիտի տեսնեն անոնց դիերը իրեք ու
կէս օր. ն ու թող պիտի չտան անոնց դիերը գե-
10 րեզմաններու մէջ թաղելու։ շ Ու անոնք որ երկ-
րի վրայ կը բնակին, ուրախ պիտի ըլլան ու խըն-
դան անոնց վրայ. ո մինչև անգամ իրարու ընծա-
ներ պիտի ղրկեն. չ ինչու որ աս երկու մարգա-
րէները երկրի բնակիչները չարչարեցին։
11 պ Ու իրեք ու կէս օրէն ետև ջ Աստուծմէ կեն-
դանութեան հոգի մտաւ անոնց մէջ, ու իրենց
ոտքերուն վրայ կայնեցան. և զանոնք տեսնողնե-
12 րուն վրայ մեծ վախ ինկաւ։ Ու երկինքէն մեծ
ձայն մը * լսեցին, որ կ'ըսէր անոնց, Վե՛ր ելէք՝

լ Թու. ժդ. 29։
խ դ Թագ. ժէ. 1։ Յակ. ե. 16, 17։
ծ Ել. է. 19։
կ Ղու. ժգ. 32։
հ Գլ. թ. 2։
ձ Գլ. ժգ. 1, 11։ ժէ. 8։
ղ Դան. է. 21։ Զաք. ժդ. 2։
ճ Գլ. ժդ. 8։ ժէ. 1, 5։ ժը. 10։
մ Եբր. ժգ. 12։ Գլ. ժը. 24։
յ Գլ. ժէ. 15։
ն Սաղ. հթ. 2, 3։
շ Գլ. ժբ. 12։ ժգ. 8։
ո Եսթ. թ. 19, 22։
չ Գլ. ժդ. 10։
պ Հմր 9։
ջ Եզեկ. լէ. 5, 9, 10, 14։
* Ոմանք՝ լսեցի։

Հոս ելէք։ Ռ և անոնք Ս ամպով երկինքը վերացան․
13 Վ Ու անոնց թշնամիները զանոնք տեսան։ Տ Ու
նոյն ժամուն մեծ երկրաշարժ մը եղաւ, Ր ու քաղա-
քին տասներորդ մասը կործանեցաւ, և այն երկրա-
շարժէն եօթը հազար մարդիկ մեռան, ու մնա-
ցածները վախով լեցուեցան Ց ու փառք տուին
14 երկինքի Աստուծոյն։ Ւ Երկրորդ վայը անցաւ․
ահա երրորդ վայը շուտով կու գայ։
15 Փ Ու եօթներորդ հրեշտակը փողը հնչեցուց․ ու
Ք երկինքի մէջ մեծ ձայներ եղան որ կ՚ըսէին, Օ Աշ-
խարհին թագաւորութիւնները մեր Տէրոջը ու իր
Օծեալինը եղան, Ֆ և ինքը պիտի թագաւորէ
16 յաւիտեանս յաւիտենից։ Ա Ու քսանըչորս երէց-
ները որ իրենց աթոռներուն վրայ նստած էին Աս-
տուծոյ առջևը, իրենց երեսներուն վրայ ինկան,
17 և Աստուծոյ երկրպագութիւն ըրին՝ ըսելով, Քե-
զի գոհութիւն կը մատուցանենք՝ Ամենակալ Տէր
Աստուած՝ Բ որ ես և որ էիր, որ քու մեծ զօրու-
18 թիւնդ առիր Գ ու թագաւորեցիր։ Դ Ու ազ-
գերը բարկացան․ ու քու բարկութիւնդ եկաւ,
Ե և մեռելներուն ժամանակը՝ որ դատուին, ու
վարձք տաս քու ծառաներուդ մարգարէներուն և
սուրբերուն ու քու անունէդ վախցողներուն՝ Զ պզ-
տիկներուն ու մեծերուն, Է և երկրի ապականիչնե-
րը ապականես։
19 Ը Ու երկինքի մէջ Աստուծոյ տաճարը բացուե-

Ռ Ես․ ժդ․ 13։ Գլ․ ժբ․ 5։
Ս Ես․ կ․ 8։ Գործ․ ա․ 9։
Վ Դ Թագ․ բ․ 1, 5, 7։
Տ Գլ․ զ․ 12։
Ր Գլ․ ժզ․ 19։
Ց Յես․ է․ 19։ Գլ․ ժդ․ 7։ ժե․ 4։
Ւ Գլ․ ը․ 13։ թ․ 12։ ժե․ 1։
Փ Գլ․ ժ․ 7։
Ք Ես․ իէ․ 13։ Գլ․ ժզ․ 17։ ժթ․ 6։
Օ Գլ․ ժբ․ 10։
Ֆ Դան․ բ․ 44։ է․ 14, 18, 27։
Ա Գլ․ դ․ 4։ ե․ 8։ ժթ․ 4։
Բ Գլ․ ա․ 4, 8։ դ․ 8։ ժզ․ 5։
Գ Գլ․ ժթ․ 6։
Դ Հմր 2, 9։
Ե Դան․ է․ 9, 10։ Գլ․ զ․ 10։
Զ Գլ․ ժթ․ 5։
Է Գլ․ ժգ․ 10։ ժը․ 6։
Ը Գլ․ ժե․ 5, 8։

ցաւ, և * անոր ուխտին տապանակը իր տաճարին
մէջը երևցաւ․ Թ ու եղան փայլակներ ու ձայներ
և որոտումներ, ու երկրաշարժ Ժ և խոշոր կար-
կուտ։

ԳԼ․ ԺԲ

1 Մէկ կնիկ մը արեւը իր վրան հագած՝ ցաւ կը քաշէ։ 4 Մեծ հրեղէն վիշապ մը անոր առջեւը կը սպասէ, որ կլլէ անոր ծնանելու որդին․ 6 բայց կինը երբոր կը ծնանի, անապատը կը փախչի։ 7 Միքայէլ ու իր հրեշտակները վիշապին հետ կը պատերազմին ու անոր կը յաղթեն։ 13 Վիշապը երկրի վրայ ինկալէն ետքը կինը կը հալածէ։

1 Ու երկինքի մէջ մեծ նշան մը երևցաւ․ մէկ կնիկ
մը արեւը իր վրան առած, ու լուսինը իր ոտ-
քերուն տակը․ և իր գլխուն վրայ տասուերկու
2 աստղէ պսակ մը․ Ու յղի էր, Ի ու երկանց մէջ
ըլլալով և ծնանելու համար շատ նեղութիւն
քաշելով կը պոռար։
3 Ու երկինքի մէջ ուրիշ նշան մը երևցաւ, Լ և
ահա մէկ մեծ շառագոյն վիշապ մը, Խ որ եօթը
գլուխ ու տասը եղջիւր ունէր, Ծ և իր գլուխներուն
4 վրայ եօթը թագ։ Կ Ու անոր պոչը Հ երկինքի
աստղերուն երրորդ մասը կը քաշէր, Ձ ու անոնք
երկրի վրայ ձգեց․ Ղ և վիշապը կեցեր էր այն կնկա-
նը առջևը որ ծնանելու վրայ էր, Ճ որ երբոր ծը-
5 նանի, անոր զաւակը կլլէ։ Ու ծնաւ արու զա-
ւակ մը, Մ որ երկաթէ գաւազանով պիտի
հովուէր բոլոր ազգերը․ և անոր զաւակը յափշը-
տակուեցաւ Աստուծոյ քովը ու անոր աթոռին
6 քովը։ Յ Ու կինը անապատը փախաւ, ուր որ

* Ոմն․՝ Տէրոջը
Թ Գլ․ ը․ 5։ ժզ․ 18։
Ժ Գլ․ ժզ․ 21։
Ի Ես․ կզ․ 7։ Գաղ․ դ․ 19։
Լ Գլ․ ժէ․ 3։
Խ Գլ․ ժէ․ 9, 10։
Ծ Գլ․ ժգ․ 1։
Կ Գլ․ թ․ 10, 19։
Հ Գլ․ ժէ․ 18։
Ձ Դան․ ը․ 10։
Ղ Հմր 2։
Ճ Ել․ ա․ 16։
Մ Սաղ․ բ․ 9։ Գլ․ բ․ 27։ ժթ․ 15։
Յ Հմր 4։

անոր տեղ պատրաստուած էր Աստուծմէ, որ հոն
կերակրուի հազար երկու հարիւր ու վաթսուն օր ։
7 Ու երկինքի մէջ պատերազմ եղաւ. խ Միքայէլ
ու իր հրեշտակները ծ վիշապին հետ պատերազմե-
ցան. վիշապն ալ իր հրեշտակներովը պատերազ-
8 մեցաւ. Ու չկրցան դէմ կենալ, ու երկինքի մէջ՝
9 ալ տեղ չգտնուեցաւ անոնց ։ կ Ու վար ձգուե-
ցաւ մեծ վիշապը՝ հ ան առջի օձը որ Բանսարկու
ու Սատանայ կ'ըսուի, ձ որ բոլոր աշխարհ մոլոր-
ցուց. ղ Ու իր հրեշտակները իրեն հետ վար ձգուե-
10 ցան երկրի վրայ ։ Ու մեծ ձայն մը լսեցի երկինքի
մէջ՝ որ կ'ըսէր, ճ Հիմա եղաւ մեր Աստուծոյ փըր-
կութիւնը ու զօրութիւնը և թագաւորութիւնը,
ու անոր Օծեալին իշխանութիւնը. ինչու որ մեր
եղբայրներուն դէմ չար խօսողը վար ձգուեցաւ, մ որ
անոնց դէմ չարախօսութիւն կ'ընէր մեր Աստու-
11 ծոյն առջեւը ցորեկ ու գիշեր ։ յ Ու անոնք անոր
յաղթեցին Գառնուկին արիւնովը, ու իրենց վը-
կայութեանը խօսքովը. ն և իրենց կեանքը չսիրե-
12 ցին մինչեւ 'ի մահ ։ շ Անոր համար ուրախացէ՛ք
ով երկինք ու անոր մէջը բնակողներ. ո վա՜յ երկրին
ու ծովուն որ Բանսարկուն ձեզի իջաւ, որ շատ
բարկութիւն ունի՝ գիտնալով որ չ քիչ ժամանակ
պիտի կենայ ։
13 Ու երբոր վիշապը տեսաւ որ ինքը երկրի վրայ
ձգուեցաւ, պ արու զաւակ ծնանող կնկանը ետեւէն
14 ինկաւ ։ ջ Ու ան կնկանը մեծ արծիւի երկու

լ Գլ. ժա. 3։
խ Դան. ժ. 13, 21; ժբ. 1։
ծ Հմր 3; Գլ. ի. 2։
կ Ղու. ժ. 18; Յոհ. ժբ. 31։
հ Ծն. գ. 1, 4; Գլ. ի. 2։
ձ Գլ. ի. 3։
ղ Գլ. թ. 1։
ճ Գլ. ժա. 15; ժթ. 1։
մ Յոբ. ա. 9; բ. 5; Զաք. գ. 1։
յ Հռով. ը. 33, 34, 37; ժզ. 20։
ն Ղու. ժդ. 26։
շ Սաղ. ղզ. 11; Ես. խթ. 13; Գլ. ժը. 20։
ո Գլ. ը. 13; ժա. 10։
չ Գլ. ժ. 6։
պ Հմր 5։
ջ Ել. ժթ. 4։

թեւեր տրուեցաւ, ռ որ անապատ իր տեղը ս թռչի,
վ ուր որ պիտի կերակրուէր ժամանակ ու ժամա-
15 նակներ ու կէս ժամանակ՝ օձին երեսէն ։ տ Ու
օձը իր բերնէն գետի պէս ջուր վազցուց կնկանը
16 ետեւէն, որ զանիկայ հեղեղով ընկղմէ ։ Ու եր-
կիրը օգնեց կնկանը, ու երկիրը իր բերանը բա-
ցաւ և կլլեց ան գետը, որ վիշապը իր բերնէն
17 վազցուց ։ Ու վիշապը բարկացաւ կնկանը դէմ,
ր և գնաց պատերազմելու անոր ուրիշ զաւակներուն
հետ, ց որոնք Աստուծոյ պատուիրանքները կը
պահէին, ւ ու Յիսուսի վկայութիւնը ունէին ։
18 Ու * կայնեցայ ծովուն աւազին վրայ.

ԳԼ. ԺԳ

1 Եօթը գլխով ու տասը եղջիւրով գազան մը ծովէն դուրս
կ'ելլէ, ու վիշապը իր զօրութիւնը անոր կու տայ։ 11 Ուրիշ
գազան մը երկրէն կ'ելլէ, 14 առջի գազանին պատկերը շինել
կու տայ, 15 ու կը ստիպէ մարդիկ որ անոր երկրպագու-
թիւն ընեն, 16 ու անոր դրոշմը ընդունին ։

1 ա Ու տեսայ որ ծովէն գազան մը կ'ելլէր, բ և
ունէր եօթը գլուխ ու տասը եղջիւր. և
անոր եղջիւրներուն վրայ տասը թագ, ու անոր
գլուխներուն վրայ հայհոյութեան անուններ կար ։
2 գ Ու ան գազանը որ տեսայ՝ ընձու նման էր, դ ու
իր ոտքերը արջու պէս, ե և իր բերանը առիւծի
բերնի պէս. զ Ու վիշապը անոր տուաւ իր զօրու-
թիւնը է և իր աթոռը ը ու մեծ իշխանութիւն ։
3 թ Ու անոր գլուխներուն մէկը մահու չափ վիրաւո-

ռ Գլ. ժէ. 3։
ս Հմր 6։
վ Դան. է. 25; ժբ. 7։
տ Ես. ծթ. 19։
ր Ծն. գ. 15; Գլ. ժա. 7; ժզ. 7։
ց Գլ. ժդ. 12։
ւ Ա Կոր. բ. 1; Ա Յոհ. ե. 10; Գլ. ա. 2, 9; զ. 9; ի. 4։
* Ոմանք՝ կայնեցաւ
ա Դան. է. 2, 7։
բ Գլ. ժբ. 3; ժէ. 3, 9, 12։
գ Դան. է. 6։
դ Դան. է. 5։
ե Դան. է. 4։
զ Գլ. ժբ. 9։
է Գլ. ժզ. 10։
ը Գլ. ժբ. 4։
թ Հմր 12, 14։

բուածի պէս էր . ու անոր մահուան վէրքը առող-
ջացաւ . ժ Եւ բոլոր երկիրը գազանին ետեւէն զար-
4 մացաւ : Ու երկրպագութիւն ըրին վիշապին՝ որ
գազանին իշխանութիւն տուաւ , ու երկրպագու-
թիւն ըրին գազանին՝ ըսելով , ի Ո՞վ է ա գա-
զանին նման . և ո՞վ կրնայ անոր հետ պատերազմ
5 ընել : լ Ու անոր մեծ բաներ ու հայհոյութիւն-
ներ խօսող բերան տրուեցաւ . խ և քառասուներ-
կու ամիս անոր իշխանութիւն տրուեցաւ իր կամքը
6 ընելու : Ու իր բերանը հայհոյութեամբ Աստու-
ծոյ դէմ բացաւ , անոր անունը ծ ու անոր խորանը
7 ու երկինքը բնակողները հայհոյելու : Ու անոր
իշխանութիւն տրուեցաւ սուրբերուն հետ կ պատե-
րազմ ընելու ու անոնց յաղթելու . հ և անոր
իշխանութիւն տրուեցաւ բոլոր ցեղերու և ժողո-
8 վուրդներու ու լեզուներու և ազգերու վրայ . Ու
անոր երկրպագութիւն պիտի ընեն երկրի վրայ
բոլոր բնակողները , ձ որոնց անունները ղ աշխար-
հիս սկիզբէն ՚ի վեր՝ մորթուած Գառնուկին կենաց
9 գրքին մէջը գրուած չեն : ճ Ով որ ականջ ունի՝
10 թող լսէ : մ Ով որ գերութեան քշէ , ինքը
գերի պիտի տարուի . յ ով որ սրով սպաննէ ,
պէտք է որ ինքը սրով սպաննուի . ն Հոս է սուր-
բերուն համբերութիւնը ու հաւատքը :
11 Ու մէկ ուրիշ գազան մը տեսայ՝ շ որ երկրէն
կ'ելլէր , ու գառնուկի նման երկու եղջիւր ունէր ,
12 ու կը խօսէր վիշապին պէս : Ու առջի գազանին

ժ Գլ. ժէ. 8 :
ի Գլ. ժը. 18 :
լ Դան. է. 8, 11, 25 : ժա. 36 :
խ Գլ. ժա. 2 : ժբ. 6 :
ծ Յօհ. ա. 14 : Կող. բ. 9 :
կ Դան. է. 21 : Գլ. ժա. 7 : ժբ. 17 :
հ Գլ. ժա. 18 : ժէ. 15 :
ձ Եղ. լբ. 32 : Դան. ժբ. 1 : Փիլ. դ. 3 : Գլ. գ. 5 : ի. 12, 15 : իա. 27 :
ղ Գլ. ժէ. 8 :
ճ Գլ. բ. 7 :
մ Ես. լգ. 1 :
յ Ծն. թ. 6 : Մատ. իզ. 52 :
ն Գլ. ժդ. 12 :
շ Գլ. ժա. 7 :

բոլոր իշխանութիւնը կը վարէր անոր առջեւը , ու
երկիրը ; և ; անոր բնակիչները կը ստիպէր որ
երկրպագութիւն ընեն առջի գազանին՝ ա որուն մա-
13 հուան վէրքը առողջացաւ : բ Ու մեծ նշաններ
կ'ընէր , գ ու մինչև անգամ երկինքէն կրակ կ'իջե-
14 ցընէր երկրի վրայ մարդոց առջեւը : դ Ու երկրի
վրայ բնակողները կը մոլորցընէր ե այն նշաններով ,
որ իր ձեռքը տրուած էր գազանին առջեւը ընելու .
ու երկրի բնակիչներուն կ'ըսէր որ պատկեր շինեն
այն գազանին , որ սրով վիրաւորուած էր զ ու
15 առողջացաւ : Ու իշխանութիւն տրուեցաւ անոր ,
որ գազանին պատկերին հոգի տայ , որ գազանին
պատկերը խօսի . է և ով որ գազանին պատկերին
երկրպագութիւն չընէ , զանիկայ սպաննել տայ :
16 Ու կը ստիպէր ամէնը՝ [illegible] պզտիկները ու մե-
ծերը և հարուստները ու աղքատները և ազատ-
ները ու ծառաները , ը որ իրենց աջ ձեռքին վրայ
17 կամ իրենց ճակատին վրայ դրոշմ ընդունին . Ու
որ մէկը չկրնայ գնել կամ ծախել , բայց միայն
այն՝ որ ունի դրոշմը թ կամ գազանին անունը ,
18 ժ կամ անոր անուանը թիւը : ի Հոս է իմաս-
տութիւնը . ով որ միտք ունի , լ թող համրէ
գազանին թիւը . քանզի խ մարդու մը թիւ է , ու
անոր թիւը վեց հարիւր վաթսունվեց է :

ա Հմր 3 :
բ Բ Օր. ժգ. 1, 2, 3 : Մատ. իդ. 24 : Բ Թես. բ. 9 : Գլ. ժզ. 14 :
գ Գ Թագ. ժը. 38 : Դ Թագ. ա. 10, 12 :
դ Գլ. ժբ. 9 : ժթ. 20 :
ե Բ Թես. բ. 9, 10 :
զ Դ Թագ. ի. 7 :
է Գլ. ժզ. 2 : ժթ. 20 : ի. 4 :
ը Գլ. ժզ. 9 : ժթ. 20 : ի. 4 :
թ Գլ. ժդ. 11 :
ժ Գլ. ժե. 2 :
ի Գլ. ժէ. 9 :
լ Գլ. ժե. 2 :
խ Գլ. իա. 17 :

ԳԼ. ԺԴ

1 Գառնուկը իր հետեւողներովը Սիօն լեռանը վրայ կը կենայ : 6 Հրեշտակ մը աւետարանը կը քարոզէ : 8 Բաբելոնի անկումը : 15 Աս աշխարհիս հունձքը : 18 այգեկութը : 20 Աստուծոյ բարկութեանը հնձանը :

1 Ու տեսայ՝ ա ու ահա Գառնուկը կայներ էր Սիոն
լերանը վրայ, բ ու անոր հետը հարիւր քառա-
սունըչորս հազարը, գ որոնք ունէին անոր անունը
և անոր Հօրը անունը իրենց ճակատներուն վրայ
2 գրուած: Ու երկինքէն ձայն մը լսեցի դ շատ
ջուրերու ձայնի պէս ու մեծ որոտումի ձայնի մը
պէս, ե ու լսած ձայնս քնարահարներուն իրենց
3 քնարները զարնելուն նման կը նմանէր: զ Ու
նոր երգ կ'երգէին աթոռին առջեւ ու չորս կենդա-
նիներուն ու երէցներուն առջեւ. և մէկը չէր
կրնար այն երգը սորվիլ, է բաց 'ի այն հարիւր
քառասունըչորս հազարէն, որոնք երկրէն փրկուած
4 էին: Ասոնք անոնք են՝ որ կիներու հետ չխառ-
նակեցան, ը քանզի կոյս են. թ ասոնք Գառնուկին
ետեւէն կ'երթան՝ ուր որ այն երթայ. ժ ասոնք մար-
դոց մէջէն փրկուեցան ի Աստուծոյ ու Գառնուկին
5 երախայրի ըլլալու. լ Ու անոնց բերանը սուտ
չգտնուեցաւ, խ ինչու որ անբիծ են:
6 Ու ուրիշ հրեշտակ մը տեսայ ծ որ կը թռչէր
երկինքին մէջ. կ Ու ունէր յաւիտենական աւետիքը՝
քարոզելու հ բոլոր ազգերուն ու ցեղերուն և լեզու-
ներուն ու ժողովուրդներուն որ երկրի վրայ կը
7 բնակին. Ու մեծ ձայնով կ'ըսէր, ձ Աստուծմէ
վախցէք ու փառք տուէք անոր, ինչու որ անոր
դատաստանին ժամը եկաւ. ղ Ու երկրպագու-

ա Գղ. ե. 5:
բ Գղ. է. 4:
գ Գղ. է. 3: ժգ. 16:
դ Գղ. ա. 15: ժթ. 6:
ե Գղ. ե. 8:
զ Գղ. ե. 9: ժե. 3:
է Հմր 1:
ը Բ Կոր. ժա. 2:
թ Գղ. գ. 4: է. 15, 17: ժե. 14:
ժ Գղ. ե. 9:
ի Յակ. ա. 18:
լ Սաղ. լբ. 2: Սոփ. գ. 13:
խ Եփե. ե. 27: Յուդ. 24:
ծ Գղ. ը. 13:
կ Եփե. գ. 8-11: Տիտ. ա. 2:
հ Գղ. ժգ. 7:
ձ Գղ. ժա. 18: ժե. 4:
ղ Նեեմ. թ. 6: Սաղ. լգ. 6: Ճիղ. 8: Ճիզ. 5, 6: Գործ. ժդ. 14: ժէ. 24:

թիւն ըրէք անոր՝ որ ստեղծեց երկինքը ու երկի-
րը և ծովը ու ջուրերուն աղբիւրները:
8 Ու անոր ետեւէն ուրիշ հրեշտակ մը եկաւ՝ ու ը-
սաւ, ճ Ինկաւ՝ ինկաւ մ մեծ Բաբելոնը, ինչու որ
բոլոր ազգերը արբեցուց իր կատաղի պոռնկու-
9 թեանը գինիէն: Ու անոնց ետեւէն երրորդ հրեշ-
տակ մըն ալ եկաւ, ու մեծ ձայնով մը ըսաւ,
յ Ով որ գազանին ու անոր պատկերին երկրպա-
գութիւն կ'ընէ, և դրոշմը իր ճակատին վրայ կամ
10 իր ձեռքին վրայ կ'ընդունի, ն Անիկայ Աստուծոյ
սրտմտութեանը գինիէն պիտի խմէ՝ շ որ անխառն
լեցուած է ո անոր բարկութեանը գաւաթին մէջ,
չ և կրակով ու ծծումբով պ պիտի տանջուի սուրբ
հրեշտակներուն առջեւ ու Գառնուկին առջեւ:
11 ջ Ու անոնց տանջանքին ծուխը կ'ելլէ յաւիտեանս
յաւիտենից. և ցորեկ ու գիշեր հանգստութիւն
չունին անոնք՝ որ գազանին ու անոր պատկերին եր-
կրպագութիւն կ'ընեն, և անոր անուանը դրոշմը
12 կ'ընդունին: ռ Հոս է սուրբերուն համբերութիւ-
նը, ս որոնք Աստուծոյ պատուիրանքները ու Յի-
13 սուսի հաւատքը կը պահեն: Ու երկինքէն ձայն
մը լսեցի որ կ'ըսէր, Գրէ՛, վ Այսուհետեւ երա-
նելի են այն մեռելները՝ տ որոնք Տէրոջմով կը ննջեն,
այո, կ'ըսէ Հոգին, ր որ իրենց աշխատութենէն
հանգչին. ու իրենց գործերը իրենց ետեւէն կ'եր-
թան:

ճ Եսա. իա. 9: Երեմ. ծա. 8: Գղ. ժը. 2:
մ Երեմ. ծա. 7: Գղ. ժա. 8: ժզ. 19: ժէ. 2, 5: ժը. 3, 10, 18, 21: ժթ. 2:
յ Գղ. ժգ. 14, 15, 16:
ն Սաղ. հե. 8: Եսա. ծա. 17: Երեմ. իե. 15:
շ Գղ. ժը. 6:
ո Գղ. ժզ. 10:
չ Գղ. ժթ. 20:
պ Գղ. ի. 10:
ջ Եսա. լդ. 10: Գղ. ժթ. 3:
ռ Գղ. ժգ. 10:
ս Գղ. ժբ. 17:
վ Ժող. դ. 1, 2: Գղ. ի. 6:
տ Ա Կոր. ժե. 18: Ա Թես. դ. 15:
ր Բ Թես. ա. 7: Եբր. դ. 9, 10: Գղ. զ. 11:

14 Ու տեսայ՝ և ահա ճերմակ ամպ մը, ջ ու ան
ամպին վրայ մէկը նստեր էր Որդւոյ մարդոյ նման.
ռ և իր գլուխը ոսկիէ պսակ մը՝ ու իր ձեռքը սուր
մանգաղ մը ունէր։
15 ս Ու տաճարէն ուրիշ հրեշտակ մը կ՚ելլէր, որ
ամպին վրայ նստողին մեծ ձայնով կ՚աղաղակէր ու
կ՚ըսէր, վ Երկնցո՛ւր քու մանգաղդ ու հնձէ. ին-
չու որ հնձելու ժամանակը եկաւ, տ ինչու որ երկրի
16 հունձքը հասունցած է։ Ու ան որ ամպին վրայ կը
նստէր, իր մանգաղը երկրին վրայ երկնցուց, ու
երկիրը հնձուեցաւ։
17 Ու երկինքին մէջի տաճարէն ուրիշ հրեշտակ մը ե-
18 լաւ, և ասիկայ ալ սուր մանգաղ մը ունէր։ Ու սե-
ղանէն ուրիշ հրեշտակ մը ելաւ, ր որ կրակի վրայ
իշխանութիւն ունէր, ու մեծ ձայնով կանչեց անոր՝
որ սուր մանգաղը ունէր, ու ըսաւ, ց Երկնցո՛ւր
քու սուր մանգաղդ, ու երկրի այգիին ողկոյզները
կթէ, ինչու որ անոր խաղողները հասունցած են։
19 Ու ան հրեշտակը իր մանգաղը երկրին վրայ երկըն-
ցուց, ու երկրին այգիին խաղողները կթեց, ւ ու
Աստուծոյ բարկութեանը մեծ հնձանին մէջ ձգեց։
20 փ Ու հնձանը ք քաղաքին դուրսը կոխուեցաւ. ու
հնձանէն արիւն կ՚ելլէր, օ որ մինչև ձիերուն սան-
ձերը ու հազար վեց հարիւր ասպարէզ կը հաս-
նէր։

ջ Եզեկ. ա. 26։ Դան. է. 13։ Գրլ. ա. 13։
ռ Գրլ. զ. 2։
ս Գրլ. ժդ. 17։
վ Յովէլ. գ. 13։ Մատ. ժգ. 39։
տ Երեմ. ծա. 33։ Գրլ. ժդ. 12։
ր Գրլ. ժզ. 9։
ց Յովէլ. գ. 13։
ւ Գրլ. ժթ. 15։
փ Եսա. կգ. 3։ Ողբ. ա. 15։
ք Գրլ. ժա. 8։ Եբր. ժգ. 12։
օ Գրլ. ժթ. 14։

ԳԼ. ԺԵ

1 Եօթը վերջին հարուածները ունեցող եօթը հրեշտակները։ 3 Գազանին յաղթողներուն երգը։ 7 Աստուծոյ բարկութեամբը լեցուն եօթը սկաւառակները։

1 Ու ա ուրիշ մեծ ու զարմանալի նշան մը տեսայ
երկինքի մէջ, բ եօթը հրեշտակներ՝ որոնք եօ-
թը վերջին հարուածները ունէին, գ որովհետև
անոնցմով կը կատարուէր Աստուծոյ բարկութիւ-
2 նը։ դ Ու տեսայ որպէս թէ ապակեղէն ծով մը
ե կրակով խառնուած. և անոնք որ յաղթեցին
գազանին ու զ անոր պատկերին և անոր անուանը
թուոյն, ապակեղէն ծովուն վրայ կայներ էին, է ու
3 Աստուծոյ քնարները ունէին. ը Ու Աստուծոյ ծա-
ռային Մովսէսին երգը կ՚երգէին, ու Գառնուկին
երգը՝ ըսելով, Մեծ ու զարմանալի են թ քու
գործքերդ՝ ով Տէր Աստուած Ամենակալ. արդար
ու ճշմարիտ են ժ քու ճամբաներդ՝ ով Թագաւոր
4 սրբոց. ի Տէ՛ր՝ ո՞վ պիտի չվախնայ քեզմէ, ու
քու անունդ չփառաւորէ, ինչու որ դուն միայն
սուրբ ես. լ Քանզի բոլոր ազգերը պիտի գան ու
քու առջիդ երկրպագութիւն պիտի ընեն, ինչու
որ քու արդար դատաստաններդ յայտնուեցան։
5 Ու անկէ ետև տեսայ՝ խ ու բացուեցաւ վկայու-
6 թեան խորանին տաճարը, որ երկինքն էր. ծ Ու
եօթը հարուածները ունեցող եօթը հրեշտակները
կ մաքուր ու պայծառ կտաւ հագած՝ և իրենց կուրծ-
քերուն վրայովը ոսկեղէն գօտի կապած՝ տաճարէն
7 ելան։ հ Ու չորս կենդանիներէն մէկը եօթը հրեշ-
տակներուն եօթը ոսկեղէն սկաւառակներ տուաւ
յաւիտեանս յաւիտենից ձ կենդանի եղող Աստուծոյ

ա Գրլ. ժբ. 1, 3։
բ Գրլ. ժզ. 1։ Իա. 9։
գ Գրլ. ժդ. 10։
դ Գրլ. դ. 6։ Իա. 18։
ե Մատ. գ. 11։
զ Գրլ. ժգ. 15, 16, 17։
է Գրլ. ե. 8։ ժդ. 2։
ը Ել. ժե. 1։ Բ Օր. լա. 30։ Գրլ. ժդ. 3։
թ Բ Օր. լբ. 4։ Սաղ. ճժա. 2։ ճլթ. 14։
ժ Սաղ. ճխե. 17։ Ովս. ժդ. 9։ Գրլ. ժգ. 7։
ի Ել. ժե. 14, 15, 16։ Երեմ. ժ. 7։
լ Եսա. կզ. 22։
խ Գրլ. ժա. 19։ Տես Թուոց. ա. 50։
ծ Հմր 1։
կ Ել. իը. 6, 8։ Եզեկ. խդ. 17, 18։ Գրլ. ա. 13։
հ Գրլ. դ. 6։
ձ Ա Թես. ա. 9։ Գրլ. դ. 9։ ժ. 6։

8 բարկութիւնովը լեցուն : [ղ] Եւ տաճարը [ճ] Աստուծոյ փառքէն ու անոր զօրութենէն ծուխով լեցուեցաւ . ու մէկը չէր կրնար տաճարը մտնել , մինչեւ որ կատարուէին եօթը հրեշտակներուն եօթը հարուածները :

ԳԼ . ԺԶ

2 Հրեշտակները երկրի վրայ կը թափեն իրենց եօթը սկաւառակները որ բարկութեամբ լեցուն էին . ու զանազան հարուածներ կը հետեւին , 15 Քրիստոս գողի պէս կու գայ . երանի՛ անոնց որ արթուն կը մնան :

1 Եւ տաճարէն մեծ ձայն մը լսեցի որ [ա] եօթը հրեշտակներուն կ'ըսէր , Գացէ՛ք [բ] Աստուծոյ բարկութեանը եօթը սկաւառակները երկրի վրայ թափեցէ՛ք :
2 Եւ առջի հրեշտակը գնաց [գ] ու իր սկաւառակը
երկրի վրայ թափեց . [դ] ու չարաչար պալարներ եղան այն մարդոցը վրայ , [ե] որոնք գազանին դրոշմը ունէին [զ] ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընէին :
3 Ու երկրորդ հրեշտակը իր սկաւառակը [է] ծովուն վրայ թափեց , [ը] ու ջուրերը մեռած մարդու արիւն դարձան , [թ] եւ ծովուն մէջի բոլոր կենդանիները մեռան :
4 Ու երրորդ հրեշտակը իր սկաւառակը [ժ] գետերուն եւ ջուրերու աղբիւրներուն վրայ թափեց , [ի] ու
5 անոնք արիւն դարձան : Եւ ջուրերուն հրեշտակէն
լսեցի որ կ'ըսէր , [լ] Արդար ես դուն , [խ] որ ես եւ
որ էիր , եւ սուրբ ես , որ ասանկ դատաստաններ

ղ Ել . խ . 34 ; գ Թագ . ը . 10 ; բ Մն . ե . 14 ; Ես . զ . 4 ;
ճ բ Թես . ա . 9 ;
ա Գլ . ժե . 1 ;
բ Գլ . ժդ . 10 ; ժե . 7 ;
գ Գլ . ը . 7 ;
դ Ել . թ . 9 , 10 , 11 ;
ե Գլ . ժգ . 16 , 17 ;
զ Գլ . ժգ . 14 ;
է Գլ . ը . 8 ;
ը Ել . է . 17 , 20 ;
թ Գլ . ը . 9 ;
ժ Գլ . ը . 10 ;
ի Ել . է . 20 ;
լ Գլ . ժե . 3 ;
խ Գլ . ա . 4 , 8 ; դ . 8 ; ժա . 17 ;

6 ըսիր . [ծ] Ինչու որ անոնք [կ] սուրբերուն ու մարգա-
րէներուն արիւնը թափեցին . [հ] եւ դուն անոնց ա-
7 րիւն խմել տուիր , քանզի արժանի են : Եւ սե-
ղանէն լսեցի որ կ'ըսէր , Այո՛ [ձ] Ամենակալ Տէր
Աստուած , [ղ] քու դատաստաններդ արդար ու
ճշմարիտ են :
8 Եւ չորրորդ հրեշտակը իր սկաւառակը [ճ] արեւին
9 վրայ թափեց : [մ] Ու անոր զօրութիւն տրուեցաւ որ խորշակահար ընէ մարդիկները կրակով . եւ սաստիկ տաքէն խորշակահար եղան մարդիկ , [յ] եւ հայհոյեցին Աստուծոյ անունը , որ աս հարուածներուն վրայ իշխանութիւն ունի . [ն] ու չապաշխարեցին [շ] որ անոր փառք տան :
10 Եւ հինգերորդ հրեշտակը իր սկաւառակը [ո] գա-
զանին աթոռին վրայ թափեց , [չ] ու անոր թագա-
ւորութիւնը խաւարեցաւ . [պ] եւ ցաւէն լեզուներ-
11 նին կը ծամէին . [ջ] Ու երկնից Աստուածը հայհոյե-
ցին իրենց ցաւերուն [ռ] եւ իրենց պալարներուն
պատճառովը . [ս] ու իրենց գործքերէն չապաշխարե-
ցին :
12 Եւ վեցերորդ հրեշտակը իր սկաւառակը [վ] մեծ
գետին Եփրատին վրայ թափեց , [տ] ու անոր ջու-
րերը ցամքեցան , [ր] որ արեւելքի թագաւորներուն
13 ճամբան պատրաստուի : Եւ տեսայ որ [ց] վիշապին
բերնէն ու գազանին բերնէն [ւ] եւ սուտ մարգարէին

ծ Մատ . իգ . 34 , 35 ; Գլ . ժգ . 15 ;
կ Գլ . ժա . 18 ; ժը . 20 ;
հ Ես . խթ . 26 ;
ձ Գլ . ժե . 3 ;
ղ Գլ . ժգ . 10 ; ժդ . 10 ; ժթ . 2 ;
ճ Գլ . ը . 12 ;
մ Գլ . թ . 17 , 18 ; ժդ . 18 ;
յ Հմր 11 , 21 ;
ն Դան . ե . 22 , 23 ; Գլ . թ . 20 ;
շ Գլ . ժա . 13 ; ժդ . 7 ;
ո Գլ . ժգ . 2 ;
չ Գլ . թ . 2 ;
պ Գլ . ժա . 10 ;
ջ Հմր 9 , 21 ;
ռ Հմր 2 ;
ս Հմր 9 ;
վ Գլ . թ . 14 ;
տ Տես Երեմ . ծ . 38 ; ծա . 36 ;
ր Ես . խա . 2 , 25 ;
ց Գլ . ժբ . 3 , 9 ;
ւ Գլ . ժթ . 20 ; ի . 10 ;

բերնէն փ իրեք պիղծ ոգիներ կ'ելլէն գորտերու-
14 նման . ք Ինչու որ անոնք դեւերու ոգիներ են՝ օ որ
նշաններ կ'ընեն , ու ֆ բոլոր աշխարհին թագաւոր-
ներուն կ'երթան , որ զանոնք Ամենակալ Աստու-
ծոյ այն մեծ օրուանը ա պատերազմին համար ժող-
15 վեն . (բ Ահա գողի պէս կու գամ . երանի անոր
որ արթուն կը կենայ ու իր հանդերձները կը
պահէ , որ գ մերկ չպտըտի ու իր ամօթը երեւնայ .)
16 դ Ու զանոնք մէկ տեղ մը ժողվեցին , որ Եբրայե-
ցերէն Արմագեդոն կ'ըսուի :
17 Ու եօթներորդ հրեշտակը իր սկաւառակը օդին
վրայ թափեց . ու երկինքին տաճարէն՝ աթոռէն
18 մեծ ձայն մը ելաւ՝ ըսելով , ե Եղաւ : զ Ու փայ-
լակներ ու ձայներ և որոտումներ եղան . է ու մեծ
երկրաշարժ մը եղաւ , ը անանկ որ մարդոց երկրի
վրայ ըլլալէն 'ի վեր անանկ մեծ երկրաշարժ մը ե-
19 ղած չէր : թ Ու մեծ քաղաքը իրեք մաս եղաւ , ու
ազգերուն քաղաքները կործանեցան , ժ և մեծ Բա-
բելոնը Աստուծոյ առջեւը յիշուեցաւ , ի որ իր սաս-
տիկ բարկութեանը գինիին գաւաթը անոր տայ :
20 լ Ու ամէն կղզի փախաւ , ու լեռները չգտնուե-
21 ցան : խ Ու խոշոր կարկուտ դրեթէ մէկ տաղանդի
մը կշռքով երկինքէն կ'իջնէր մարդոց վրայ . ծ ու
մարդիկ հայհոյեցին զԱստուած կ կարկուտին հա-
րուածին համար , ինչու որ խիստ մեծ էր ան հա-
րուածը :

փ Ա Յոհ. դ. 1, 2, 3 ։
ք Ա Տիմ. դ. 1 ։ Յակ. դ. 15 ։
օ Բ Թես. բ. 9 ։ Գլ. ժգ. 13, 14 ։ ժթ. 20 ։
ֆ Ղու. բ. 1 ։
ա Գլ. ժե. 14 ։ ժթ. 19 ։ ի. 8 ։
բ Մատ. իդ. 43 ։ Ա Թես. ե. 2 ։ Բ Պետ. գ. 10 ։ Գլ. գ. 3 ։
գ Բ Կոր. ե. 3 ։ Գլ. գ. 4, 18 ։
դ Գլ. ժթ. 19 ։
ե Գլ. իա. 6 ։
զ Գլ. դ. 5 ։ ը. 5 ։ ժա. 19 ։
է Գլ. ժա. 13 ։
ը Դան. ժբ. 1 ։
թ Գլ. ժդ. 8 ։ ժէ. 18 ։
ժ Գլ. ժը. 5 ։
ի Եա. ծա. 17, 22, 23 ։ Երեմ. իե. 15, 16 ։ Գլ. ժդ. 10 ։
լ Գլ. զ. 14 ։
խ Գլ. ժա. 19 ։
ծ Հմր 9, 11 ։
կ Տես Ել. թ. 23, 24, 25 ։

ԳԼ. ԺԷ

3 Ծիրանիներ ու կարմիրներ հագած կին մը ձեռքը ոսկեղէն գաւաթ մը բռնած՝ գազանին վրայ կը նստի ։ 5 Անիկայ է մեծ Բաբելոնը ու ամէն գարշութեանց մայրը ։ 9 Գազանին եօթը գլուխներուն 12 ու տասը եղջիւրներուն մեկնութիւնը ։ 14 Գառնուկին յաղթութիւնը ։ 16 Պոռնիկին պատիժը ։

1 ա Ու եօթը սկաւառակները ունեցող եօթը հրեշ-
տակներէն մէկը եկաւ , ու ինծի հետ խօսե-
ցաւ՝ ըսելով , Եկո՛ւր՝ բ ու քեզի ցուցընեմ գ այն մեծ
պոռնիկին դատաստանը , դ որ շատ ջուրերուն
2 վրայ կը նստի . ե Որուն հետ երկրի թագաւորները
պոռնկեցան , զ ու երկրի բնակիչները անոր պոռ-
3 նկութեանը գինիով գինովցան : է Ու զիս
անապատը տարաւ հոգիով . ու տեսայ մէկ կնիկ
մը՝ որ ը կարմիր գազանի մը վրայ նստեր էր . թ Եւ
այն գազանը լեցուն էր հայհոյութեան անուններով ,
4 ու ժ եօթը գլուխ ի և տասը եղջիւր ունէր : լ Ու
կնիկը ծիրանի ու կարմիր հագած էր , խ և զարդա-
րուած էր ոսկիով ու պատուական քարերով և մար-
գարիտներով , և ծ իր ձեռքը ոսկիէ գաւաթ մը
ունէր կ պղծութիւններով ու իր պոռնկութեա-
5 նը անմաքրութիւններով լեցուն . Ու անոր ճա-
կատին վրայ անուն մը գրուած էր հ Խորհուրդ ,
ձ Մեծ Բաբելոն՝ ղ պոռնիկներուն ու երկրի պղծու-
6 թիւններուն մայրը : Ու տեսայ այն կնիկը որ
ճ սուրբերուն արիւնովը մ ու Յիսուսի վկաներուն

ա Գլ. իա. 9 ։
բ Գլ. ժզ. 19 ։ ժը. 16, 17, 19 ։
գ Նաւ. գ. 4 ։ Գլ. ժթ. 2 ։
դ Երեմ. ծա. 13 ։ Հմր 15 ։
ե Գլ. ժը. 3 ։
զ Երեմ. ծա. 7 ։ Գլ. ժդ. 8 ։ ժը. 3 ։
է Գլ. ժբ. 6, 14 ։
ը Գլ. ժբ. 3 ։
թ Գլ. ժգ. 1 ։
ժ Հմր 9 ։
ի Հմր 12 ։
լ Գլ. ժը. 12, 16 ։
խ Դան. ժա. 38 ։
ծ Երեմ. ծա. 7 ։ Գլ. ժը. 6 ։
կ Գլ. ժդ. 8 ։
հ Բ Թես. բ. 7 ։
ձ Գլ. ժա. 8 ։ ժդ. 8 ։ ժզ. 19 ։ ժը. 2, 10, 21 ։
ղ Գլ. ժը. 9 ։ ժթ. 2 ։
ճ Գլ. ժգ. 15 ։ ժզ. 6 ։
մ Գլ. զ. 9, 10 ։ ժը. 11 ։

արիւնովը [ժ]գինովցած էր . ու երբոր տեսայ անի-
7 կայ, մեծ զարմանքով զարմացայ : Եւ հրեշտակը
ինծի ըսաւ, Ինչո՞ւ զարմացար . ես քեզի ըսեմ
այն կնկանը խորհուրդը, ու այն գազանին՝ որ զա-
նիկայ վրան կը կրէ, ու եօթը գլուխ և տասը եղ-
8 ջիւր ունի : Այն գազանը որ տեսար, կար ու
չկայ, և [ի]անդունդէն ելլելու [լ]ու կորուստը եր-
թալու վրայ է . ու երկրի վրայ բնակողները՝
[խ]որոնց անունները աշխարհի սկիզբէն 'ի վեր կենաց
գրքին մէջը գրուած չեն, [ծ]պիտի զարմանան երբոր
տեսնեն այն գազանը թէ կար ու չկայ, թէև կայ :
9 [կ]Հոս պէտք է իմաստութիւն ունեցող միտք մը .
[հ]ան եօթը գլուխը եօթը լեռներ են, ուր որ կինը
անոնց վրայ կը նստի . և եօթը թագաւորներ են .
10 Հինգը ինկած են՝ մէկը կը կենայ, և միւսը դեռ
եկած չէ, ու երբոր գայ, քիչ ատեն պիտի մնայ :
11 Եւ այն գազանը որ կար ու չկայ, անիկայ ալ
ութերորդ է, ու եօթնէն է, [ձ]ու դէպ 'ի կո-
12 րուստը կ'երթայ : [ղ]Եւ տասը եղջիւրը որ տե-
սար, տասը թագաւորներ են, որոնք դեռ թագա-
ւորութիւն առած չեն, հապա գազանին հետ մէկ
ժամու չափ թագաւորներու պէս իշխանութիւն
13 կ'առնեն : Ասոնք մէկ կամք ունին, ու իրենց զօ-
րութիւնը և իշխանութիւնը գազանին կու տան :
14 [ճ]Ասոնք Գառնուկին հետ պիտի պատերազմին . և
Գառնուկը անոնց պիտի յաղթէ, [մ]քանզի անիկայ
տէրերուն Տէրն է ու թագաւորներուն Թագաւո-
րը . [յ]և անոր հետը եղողները կանչուած ու ընտ-
15 րուած և հաւատարիմ են : Ու ըսաւ ինծի, [ն]Այն

ժ Գլ. ժը. 24 :
ի Գլ. ժա. 7 ; ժգ. 1 :
լ Գլ. ժգ. 10 ; Հմր 11 :
խ Գլ. ժգ. 8 :
ծ Գլ. ժգ. 3 :
կ Գլ. ժգ. 18 :
հ Գլ. ժգ. 1 :
ձ Հմր 8 :
ղ Դան. է. 20 ; Զաք. ա. 18, 19, 21 ; Գլ. ժգ. 1 :
ճ Գլ. ժզ. 14 ; ժթ. 19 :
մ Բ Օր. ժ. 17 ; Ա Տիմ. զ. 15 ; Գլ. ժթ. 16 :
յ Երեմ. ծ. 44, 45 ; Գլ. ժգ. 4 :
ն Ես. ը. 7 ; Հմր 1 :

ջուրերը որ տեսար՝ որոնց վրայ պոռնիկը նստեր է,
[շ]ժողովուրդներ են ու բազմութիւններ և ազգեր
16 ու լեզուներ : Եւ տասը եղջիւրները որ գազանին
վրայ տեսար, [ո]անոնք պիտի ատեն պոռնիկը, ու
զանիկայ ամայի ու [չ]մերկ պիտի ընեն, և անոր մար-
մինը պիտի ուտեն, [պ]ու զանիկայ կրակով այրեն :
17 [ջ]Ինչու որ Աստուած անոնց սրտին մէջը դրաւ
որ իր կամքը կատարեն ու մէկ կամք ըլլան, և
իրենց թագաւորութիւնը գազանին տան, [ռ]մինչև
18 որ Աստուծոյ խօսքերը կատարուին : Եւ կինը
որ տեսար, այն [ս]մեծ քաղաքն է, [վ]որ կը թագա-
ւորէ երկրի թագաւորներուն վրայ :

ԳԼ. ԺԸ

2 Բաբելոն կ'իյնայ : 4 Աստուծոյ ժողովուրդին հրաման կ'ըլլայ, որ անոր մէջէն դուրս ելլեն : 9 Երկրի թագաւորները, 11 վաճառականները 17 և նաւավարները կ'ողբան անոր վրայ : 20 Սուրբերը կ'ուրախանան՝ տեսնելով որ Աստուծոյ դատաստանները անոր վրայ կը կատարուին :

1 Եւ [տ]ասկէ ետքը [ուրիշ] հրեշտակ մը տեսայ որ
երկինքէն կ'իջնէր, և մեծ իշխանութիւն ու-
նէր, [ր]ու երկիրը անոր փառքէն լուսաւորուեցաւ :
2 Եւ զօրաւոր ձայնով աղաղակեց՝ ըսելով, [ց]Ին-
կաւ՝ ինկաւ մեծ Բաբելոնը, [ւ]և դևերու բնակա-
րան եղաւ, ու բոլոր պիղծ ոգիներու արգելարան,
[փ]և բոլոր պիղծ ու ատելի թռչուններու վանդակ .
3 [ք]Ինչու որ անոր կատաղի պոռնկութեանը գինիէն
խմեցին բոլոր ազգերը, ու երկրի թագաւորները

շ Գլ. ժգ. 7 :
ո Երեմ. ծ. 41, 42 ; Գլ. ժզ. 12 :
չ Եզեկ. ժզ. 39—44 ; Գլ. ժը. 16 :
պ Գլ. ժը. 8 :
ջ Բ Թես. բ. 10 :
ռ Գլ. ժ. 7 :
ս Գլ. ժզ. 19 :
վ Գլ. ժբ. 4 :
տ Գլ. ժէ. 1 :
ր Եզեկ. խգ. 2 :
ց Ես. ժգ. 19 ; իա. 9 ; Երեմ. ծա. 8 ; Գլ. ժդ. 8 :
ւ Ես. ժգ. 21 ; իա. 8 ; լդ. 14 ; Երեմ. ծ. 39 ; ծա. 37 :
փ Ես. ժդ. 23 ; լդ. 11 ; Մար. ե. 2, 3 :
ք Գլ. ժդ. 8 ; ժէ. 2 :

անոր հետ պոռնկեցան, [ե] և երկրի վաճառական-
ները անոր չափազանց ցեղխութիւններէն հարստացան։
4 Ու երկնքէն ուրիշ ձայն մը լսեցի որ կ'ըսէր,
[ը] Ելէ՛ք անոր մէջէն՝ իմ ժողովուրդս, որ անոր
մեղքերուն հաղորդ չըլլաք, ու անոր հարուածնե-
5 րէն բաժին չառնէք. [թ] Ինչու որ անոր մեղքերը
մինչև երկինքը հասան կցուեցան. [ժ] ու Աստուած
6 անոր անիրաւութիւնները յիշեց։ [ի] Հատու-
ցէ՛ք անոր՝ ինչպէս որ ինքը հատուց. ու իր գործ-
քերուն համեմատ կրկնապատիկ փոխարինեցէ՛ք ա-
նոր. [լ] Այն գաւաթը որ ինքը լեցուց՝ [խ] կրկնապա-
7 տիկ լեցուցէ՛ք իրեն։ [ծ] Որչափ որ փառաւորեց
զինքը և ցեղխութեամբ ապրեցաւ, այնչափ ալ
տանջանք և սուգ հատուցէ՛ք անոր. ինչու որ իր
սրտին մէջը կ'ըսէ թէ [կ] Ես թագուհի կը նստիմ,
ու որբևարի չեմ, ու բնաւ սուգ պիտի չտեսնեմ։
8 [հ] Անոր համար մէկ օրուան մէջ պիտի գան անոր
հարուածները՝ մահ ու սուգ և սով, [ձ] ու կրա-
կով պիտի այրի. [ղ] Ինչու որ հզօր է Տէր Աստուած
9 որ զանիկայ դատեց։ Ու [ճ] երկրի թագաւոր-
ները՝ որ անոր հետ պոռնկեցան ու հեշտացան,
[մ] պիտի լան ու կոծեն անոր վրայ [յ] երբոր անոր
10 հրկիզութեանը ծուխը տեսնեն. Ու անոր տան-
ջանքին վախէն հեռուն պիտի կայնին ու ըսեն,
[ն] Վա՜յ վա՜յ քե՛զ մեծ Բաբելոն քաղաք՝ հզօր քա-

ե Հմր 11, 15 ։ Ես. խէ. 15 ։
ը Ես. խը. 20 ։ ծբ. 11 ։ Երեմ. ծ. 8 ։ ծա. 6, 45 ։ բ Կոր. զ. 17 ։
թ Ծն. ժը. 20, 21 ։ Երեմ. ծա. 9 ։ Յովն. ա. 2 ։
ժ Գղ. ժզ. 19 ։
ի Սաղ. ճլէ. 8 ։ Երեմ. ծ. 15, 29 ։ ծա. 24, 49 ։ բ Տիմ. դ. 14 ։ Գղ. ժգ. 10 ։
լ Գղ. ժդ. 10 ։
խ Գղ. ժզ. 19 ։
ծ Եզեկ. իը. 2, ևն ։
կ Ես. խէ. 7, 8 ։ Սոփ. բ. 15 ։
հ Ես. խէ. 9 ։ Հմր 10 ։
ձ Գղ. ժէ. 16 ։
ղ Երեմ. ծ. 34 ։ Գղ. ժա. 17 ։
ճ Եզեկ. իզ. 16, 17 ։ Գղ. ժէ. 2 ։ Հմր 3 ։
մ Երեմ. ծ. 46 ։
յ Հմր 18 ։ Գղ. ժթ. 3 ։
ն Ես. իա. 9 ։ Գղ. ժդ. 8 ։

ղաք, [շ] որ մէկ ժամու մէջ եկաւ քու դատաս-
11 տանդ։ [ո] Ու երկրի վաճառականները պիտի ող-
բան ու սուգ ընեն անոր վրայ. ինչու որ ալ մէկը
12 ծախու չառներ անոնց վաճառքը, [չ] Ոսկիի ու ար-
ծաթի և պատուական քարերու ու մարգարիտնե-
րու և բեհեզի ու ծիրանիի և մետաքսի ու որ-
դան կարմիրի վաճառքը և ամէն խունկի փայտերը
ու ամէն փղոսկրեայ ամանները և ամէն պատուա-
կան փայտէ ու պղնձէ և երկաթէ ու մարմարիոնէ
13 ամանները, Ու կինամոնը ու ամոմը և խուն-
կերը ու անուշահոտ եղը ու կնդրուկը և գինին
ու ձէթը և նաշիհը ու ցորենը և արջառները ու
ոչխարները և ձիերը ու կառքերը և մարմիննե-
14 րը ու [պ] մարդոց հոգիները։ Ու քու հոգիիդ
ցանկացած պտուղները քեզմէ գնաց, ու բոլոր
չքեղ ու փայլուն բաները քեզմէ կորսուեցաւ, և
15 ալ բնաւ պիտի չգտնես զանոնք։ [ջ] Այս բաներուն
վաճառականները՝ որ անկէ հարստացած էին, հե-
ռուն պիտի կայնին անոր տանջանքին վախէն՝ լալով
16 ու սուգ ընելով, Ու պիտի ըսեն, Վա՜յ վա՜յ մեծ
քաղաք՝ [ռ] որ բեհեզ ու ծիրանի և որդան կարմիր
հագած էիր, ու ոսկիով և պատուական քարերով
17 ու մարգարիտներով զարդարուած էիր. [ս] Ինչու
որ այնքան հարստութիւնը մէկ ժամու մէջ փճա-
ցաւ։ [վ] Ու ամէն նաւավարները և ան ամէնը որ
նաւով տեղ տեղ կ'երթան, ու նաւաստիները
և որոնք որ ծովու մէջ կը բանին, հեռուն կայնե-
18 ցան. [տ] Ու տեսնելով անոր հրկիզութեանը ծու-
խը, կ'աղաղակէին ըսելով, [ր] Ո՞վ նման է այս
19 մեծ քաղաքիս. [ց] Ու իրենց գլուխներուն վրայ հող

շ Հմր 17, 19 ։
ո Եզեկ. իէ. 27-36 ։ Հմր 3 ։
չ Գղ. ժէ. 4 ։
պ Եզեկ. իէ. 13 ։
ջ Հմր 3, 11 ։
ռ Գղ. ժէ. 4 ։
ս Հմր 10 ։
վ Ես. իգ. 14 ։ Եզեկ. իէ. 29 ։
տ Եզեկ. իէ. 30, 31 ։ Հմր 9 ։
ր Գղ. ժգ. 4 ։
ց Յես. է. 6 ։ ա Թագ. դ. 12 ։ Յոբ. բ. 12 ։ Եզեկ. իէ. 30 ։

ցանեցին, և լալով ու սուգ ընելով կ'աղաղակէին
ըսելով, Վա՜յ՝ վա՜յ այն մեծ քաղաքին, որուն մէջ
իր պատուականութենէն հարստացան ամէնքը որ
նաւեր ունէին ծովուն վրայ. ւ ինչու որ մէկ ժամու
20 մէջ ամայացաւ: փ Ուրախացէ՛ք անոր վրայ՝ Երկինք ու սուրբ առաքեալներ և մարգարէներ,
ք որ Աստուած ձեր վրէժը անկէ առաւ:
21 Ու մէկ զօրաւոր հրեշտակ մը քար մը առաւ
աղօրիքի մեծ քարի նման, ու ծովը ձգեց՝ ըսելով,
օ Ասանկ ուժով վար պիտի ձգուի Բաբելոն մեծ
22 քաղաքը, ֆ ու ալ պիտի չգտնուի: ա Ու քնարահարներուն ու երաժիշտներուն և սրնգահարներուն ու փողահարներուն ձայնը ալ պիտի չլսուի
քու մէջդ. և արհեստի վարպետ մը ալ բնաւ պիտի չգտնուի քու մէջդ, ու աղօրիքին ձայնը ալ
23 պիտի չլսուի քու մէջդ. բ Ու ճրագին լոյսը ալ
պիտի չերևնայ քու մէջդ. գ ու փեսային ձայնը և
հարսին ձայնը ալ պիտի չլսուի քու մէջդ. դ Քանզի քու վաճառականներդ երկրի մեծամեծներն էին.
ե ինչու որ քու կախարդութիւնովդ բոլոր ազգերը
24 մոլորեցան: զ Ու մարգարէներուն ու սուրբերուն
ու է երկրի վրայ բոլոր սպաննուածներուն արիւնը
անոր մէջը գտնուեցաւ:

ւ Համր 8.
փ Ես. խդ. 23, խթ. 13, Երեմ. ծա. 48.
ք Ղուկ. ժա. 49, 50, Գլ. ժթ. 2.
օ Երեմ. ծա. 64.
ֆ Գլ. ժբ. 8, ժզ. 20.
ա Ես. իդ. 8, Երեմ. է. 34, ժզ. 9, իե. 10, Եզեկ. իզ. 13.
բ Երեմ. իե. 10.
գ Երեմ. է. 34, ժզ. 9, իե. 10, լգ. 11.
դ Ես. իգ. 8.
ե Գ Թագ. թ. 22, Նաւ. գ. 4, Գլ. ժէ. 2, 5.
զ Գլ. ժէ. 6.
է Երեմ. ծա. 49.

ԳԼ. ԺԹ.

1 Երկնից մէջ զԱստուած կը փառաբանեն՝ որ դատեց պոռնիկը, և սուրբերուն արեանը վրէժը առաւ. 7 Գառնուկին հարսնիքը. 10 Հրեշտակը չուզեր որ Յովհաննէս իրեն երկրպագութիւն ընէ. 17 Թռչունները կը կանչուին մեծ կոտորածին.

1 Անկէ ետքը շատ բազմութեան ա մեծ ձայն մը լսեցի երկինքը՝ ըսելով, Ալէլուիա. բ փրկութիւն ու փառք և պատիւ ու զօրութիւն մեր Աստուծոյն.
2 գ Ինչու որ ճշմարիտ ու արդար են անոր
դատաստանները, քանզի դատեց այն մեծ պոռնիկը, որ իր պոռնկութիւնովը երկիրը ապականեց,
դ ու իր ծառաներուն արեան վրէժը անոր ձեռքէն
3 պահանջեց: Ու կրկին անգամ ըսին, Ալէլուիա.
ե ու անոր ծուխը յաւիտեանս յաւիտենից կ'ելլէ:
4 զ Ու քսանուչորս երէցները ու չորս կենդանիները
ինկան ու երկրպագութիւն ըրին Աստուծոյ՝ որ աթոռը կը նստի, ըսելով, է Ամէն, Ալէլուիա:
5 Ու աթոռէն ձայն մը ելաւ՝ ըսելով, ը Մեր Աստուծոյն օրհնութիւն տուէք՝ իր բոլոր ծառաները,
ու դո՛ւք որ իրմէն կը վախնաք՝ թ պզտիկներ ու մե-
6 ծեր: ժ Ու լսեցի շատ բազմութեան ձայնի պէս՝ ու
շատ ջուրերու ձայնի պէս, ու սաստիկ որոտումներու ձայնի պէս՝ որ կ'ըսէին, Ալէլուիա, ի ինչու որ
[մեր] Ամենակալ Տէր Աստուածը թագաւորեց:
7 Խնդանք և ուրախանանք ու փառք տանք անոր,
լ քանզի Գառնուկին հարսնիքը հասաւ, ու անոր
8 կինը ինքզինքը պատրաստեց: խ Ու իրեն տրուեցաւ որ մաքուր ու լուսափայլ բեհեզ հագնի,
(ծ որ այն բեհեզը սուրբերուն արդարութիւնն է:)
9 Ու ինծի ըսաւ, Գրէ՛. կ Երանելի են անոնք որ

ա Գլ. ժա. 15.
բ Գլ. դ. 11, է. 10, 12, ժբ. 10.
գ Գլ. ժե. 3, ժզ. 7.
դ բ Օր. լբ. 43, Գլ. զ. 10, ժը. 20.
ե Ես. լդ. 10, Գլ. ժդ. 11, ժը. 9, 18.
զ Գլ. դ. 4, 6, 10, ե. 14.
է ա Մն. ժզ. 36, Նեեմ. ե. 13, ը. 6, Գլ. ե. 14.
ը Սաղ. ճլդ. 1, ճլե. 1.
թ Գլ. ժա. 18, ի. 12.
ժ Եզեկ. ա. 24, խգ. 2, Գլ. ժդ. 2.
ի Գլ. ժա. 15, 17, ժբ. 10, իա. 22.
լ Մատ. իբ. 2, իե. 10, բ Կոր. ժա. 2, Եփե. ե. 32, Գլ. իա. 2, 9.
խ Սաղ. խե. 13, 14, Եզեկ. ժզ. 10, Գլ. գ. 18.
ծ Սաղ. ճլբ. 9.
կ Մատ. իբ. 2, 3, Ղուկ. ժդ. 15, 16.

Գառնուկին հարսանեացը ընթրիքին կանչուածներն .
ու ինծի ըսաւ , Ասոնք են Աստուծոյ ճշմարիտ
10 խօսքերը ։ հ Ես ալ անոր ոտքերուն առջեւ ինկայ ,
որ անոր երկրպագութիւն ընեմ . ու ըսաւ ինծի ,
Զգուշացի՛ր՝ յ մի՛ ըներ . ես քու ծա-
ռայակիցդ եմ ու քու եղբայրներուդ , ղ որոնք
Յիսուսի վկայութիւնը ունին . Աստուծոյ երկր-
պագութիւն ըրէ . (Վասն զի Յիսուսի վկայու-
թիւնը մարգարէութեան հոգին է ։)
11 ճ Ես տեսայ երկինքը բացուած . մ Եւ ահա մէկ
ճերմակ ձի մը , ու անոր վրայ հեծնողը յ Հաւա-
տարիմ ու Ճշմարիտ կ'ըսուի . ն Եւ արդարու-
թեամբ դատաստան կը տեսնէ ու կը պատերազմի .
12 շ Եւ անոր աչքերը կրակի բոցի պէս էր , ո ու անոր
գլխուն վրայ շատ թագեր կար , ու չ գրուած ա-
նուն մը ունէր՝ որ մէկը չգիտեր , բայց միայն ինքը .
13 պ Եւ արիւնով ներկուած հանդերձ մը հագեր էր .
14 ջ ու անոր անունը Բան Աստուծոյ կ'ըսուի ։ ռ Ու
երկնից մէջ եղող զօրքերը անոր ետեւէն կ'երթային
ճերմակ ձիերով , ս ճերմակ ու մաքուր բեհեզներ
15 հագած ։ վ Եւ անոր բերնէն սրած սուր մը կ'ել-
լէր , որ անով ազգերը զարնէ . տ ու ինքը երկա-
թէ գաւազանով պիտի հովուէ զանոնք , ր ու Ա-
մենակալ Աստուծոյ սաստիկ բարկութեանը գինիին
16 հնձանը ինքը պիտի կոխէ ։ ց Եւ իր պատմուճանին

հ Գլ. իբ. 8.
յ Գործ. ժ. 26. ժդ. 14. Գլ. իբ. 9.
ղ ա Յօհ. ե. 10. Գլ. ժբ. 17.
ճ Գլ. ժե. 5.
մ Գլ. զ. 2.
յ Գլ. դ. 14.
ն Եսա. ժա. 4.
շ Գլ. ա. 14. բ. 18.
ո Գլ. զ. 2.
չ Գլ. բ. 17. Հմր 16.
պ Եսա. կգ. 2, 3.
ջ Յօհ. ա. 1. ա Յօհ. ե. 7.
ռ Գլ. ժդ. 20.
ս Մատ. իը. 3. Գլ. դ. 4. է. 9.
վ Եսա. ժա. 4. բ Թես. բ. 8. Գլ. ա. 16. Հմր 21.
տ Սաղ. բ. 9. Գլ. բ. 27. ժբ. 5.
ր Եսա. կգ. 3. Գլ. ժդ. 19, 20.
ց Հմր 12.

վրայ ու իր ազդրին վրայ գրուած գիր մը ունէր ,
փ ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՏԷՐ ՏԵ-
ՐԱՆՑ ։
17 Եւ մէկ հրեշտակ մը տեսայ՝ որ արեւին մէջը կայ-
ներ էր , ք ու մեծ ձայնով աղաղակեց երկնքի մէջ
թռչող բոլոր թռչուններուն՝ ըսելով , օ Եկէ՛ք
18 Աստուծոյ մեծ ընթրիքին ժողվուեցէ՛ք . ֆ Որ ու-
տէք թագաւորներուն մարմինները՝ ու հազարա-
պետներուն մարմինները՝ զօրաւորներուն մարմին-
ները՝ ու ձիերուն եւ անոնց վրայ հեծնողներուն մար-
մինները՝ ու ամենուն մարմինները՝ թէ՛ ազատնե-
րուն եւ թէ ծառաներուն , թէ պզտիկներուն եւ թէ
մեծերուն ։
19 Եւ տեսայ գազանը ու երկրի թագաւորները ու
անոնց զօրքերը մէկտեղ ժողվուած պատերազմ ը-
նելու անոր հետ , որ ձիուն վրայ հեծեր էր , ու ա-
20 նոր զօրքերուն հետ ։ Եւ գազանը բռնուեցաւ ,
ու անոր հետ սուտ մարգարէն՝ որ անոր առջեւ
նշաններ ըրաւ , որոնցմով մոլորցուց գազանին
դրոշմը ընդունողները , Եւ անոր պատկերին
երկրպագութիւն ընողները . երկուքն ալ ողջ
ողջ ծծումբով վառած կրակին լիճը ձգուեցան ։
21 Եւ ուրիշներն ալ սպաննուեցան ձիուն վրայ հեծ-
նողին սուրէն , որ իր բերնէն կ'ելլէր , ու բոլոր
թռչունները անոնց մարմիններէն կշտացան ։

փ Դան. բ. 47. ա Տիմ. զ. 15. Գլ. ժէ. 14.
ք Հմր 21.
օ Եզեկ. լթ. 17.
ֆ Եզեկ. լթ. 18, 20.
Գլ. ժզ. 16. ժէ. 13, 14.
Գլ. ժզ. 13, 14.
Գլ. ժգ. 12, 15.
Գլ. ի. 10. Տես Դան. է. 11.
Գլ. ժգ. 10. իա. 8.
Հմր 15.
Հմր 17, 18.
Գլ. ժէ. 16.

ԳԼ. Ի

2 Սատանան հազար տարի կը կապուի ։ 6 Առաջին յարու-
թիւնը . երանի՛ անոնց որ անոր մէջ բաժին ունին ։ 7 Սա-
տանան նորէն արձակուելով՝ Գոգը ու Մագոգը կը ժողվէ ։
9 Սատանան կը ձգուի կրակի ու ծծումբի ծովին մէջ ։ 12
Վերջին ընդհանուր յարութիւնը ։

1 Ու հրեշտակ մը տեսայ՝ որ երկինքէն կ'իջնէր ,
ա ու անդունդին բանալին և մեծ շղթայ մը
2 ունէր իր ձեռքը ։ բ Ու բռնեց վիշապը այսինքն
առջի օձը՝ որ Բանսարկուն ու Սատանան է , և
3 կապեց զանիկայ հազար տարի ։ Ու անդունդը
ձգեց զանիկայ՝ և գոցեց գ ու վրայէն կնքեց , դ որ
ալ չմոլորցընէ ազգերը՝ մինչև որ հազար տարին
լմննայ , և անկէ ետքը պէտք է որ արձակուի անի-
կայ քիչ մը ժամանակ ։
4 ե Ու աթոռներ տեսայ , ու նստան անոնց վրայ ։
զ և անոնց դատաւորութիւն տրուեցաւ ։ Նաև
է Յիսուսի վկայութեանը համար ու Աստուծոյ
խօսքին համար գլխատուածներուն հոգիները տե-
սայ , ը և անոնք որ երկրպագութիւն չըրին գա-
զանին ո՛չ ալ անոր պատկերին , թ ու անոր դրոշ-
մը իրենց ճակատներուն վրայ ու իրենց ձեռքին վրայ
չընդունեցին ։ և ապրեցան՝ ժ ու Քրիստոսի հետ
5 հազար տարի թագաւորեցին ։ Ու ուրիշ մեռել-
ները չապրեցան մինչև որ հազար տարին կատա-
6 րուեցաւ ։ ասիկայ է առջի յարութիւնը ։ Երա-
նելի և սուրբ է ան որ առջի յարութեանը մէջ
բաժին ունի ։ ի ասոնց վրայ երկրորդ մահը իշխա-
նութիւն չունի , լ հապա անոնք Աստուծոյ և
Քրիստոսի քահանաները պիտի ըլլան , խ ու անոր
հետ հազար տարի պիտի թագաւորեն ։
7 Ու հազար տարին լմննալուն պիտի արձակուի
ծ Սատանան իր բանտէն ։ և կ պիտի ելլէ ու մոլոր-

ա Գլ. Ա. 18 ։ Թ. 1 ։
բ Գլ. ԺԲ. 9 ։ Տես Բ Պետ. Բ. 4 ։ Յուդ. 6 ։
գ Դան. Զ. 17 ։
դ Գլ. ԺԶ. 14, 16 ։ Հմր 7 ։
ե Դան. Է. 9, 22, 27 ։ Մատ. ԺԹ. 28 ։ Ղու. ԻԲ. 30 ։
զ Ա Կոր. Զ. 2, 3 ։
է Գլ. Զ. 9 ։
ը Գլ. ԺԳ. 12 ։
թ Գլ. ԺԳ. 15, 16 ։
ժ Հռով. Ը. 17 ։ Բ Տիմ. Բ. 12 ։ Գլ. Ե. 10 ։
ի Գլ. Բ. 11 ։ ԻԱ. 8 ։
լ Ես. ԿԱ. 6 ։ Ա Պետ. Բ. 9 ։ Գլ. Ա. 6 ։ Ե. 10 ։
խ Հմր 4 ։
ծ Հմր 2 ։
կ Հմր 3, 9 ։

ցընէ երկրի չորս անկիւնները եղող ազգերը՝ հ Գոգը
ու Մագոգը , ձ որ զանոնք պատերազմի ժողվէ , ո-
8 րոնց համրանքը ծովու աւազին չափ է ։ ղ Ու երկրի
ընդարձակութեանը մէջ ելան , և սուրբերուն բա-
նակը ու սիրելի քաղաքը չորս կողմէն պատեցին ։
9 Ու երկինքէն Աստուծմէ կրակ իջաւ , ու սպառեց
զանոնք ։ ճ և Բանսարկուն որ անոնք մոլորցուց ,
ձգուեցաւ կրակի ու ծծումբի լիճին մէջ , մ ուր որ
10 էր գազանը , Ու սուտ մարգարէն ։ յ ու պիտի չար-
չարուին ցորեկ ու գիշեր յաւիտեանս յաւիտենից ։
11 Ու մեծ ճերմակ աթոռ մը տեսայ , ու անոր
վրայ մէկը նստած , ն որուն երեսէն երկիրը ու
երկինքը փախան , շ և տեղ չգտնուեցաւ ա-
12 նոնց ։ ո Ու տեսայ պզտիկ ու մեծ մեռելները՝ որ
Աստուծոյ առջևը կայնած էին ։ չ Ու գիրքերը բա-
ցուեցան , պ և ուրիշ գիրք մը բացուեցաւ՝ այ-
ինքն կենաց գիրքը ։ և գիրքերուն մէջը գրուածնե-
րէն մեռելները դատուեցան ջ իրենց գործքերուն
13 համեմատ ։ Ու ծովը իր մէջի մեռելները տուաւ ,
ռ ու մահը և դժոխքը իրենց մէջի մեռելները
տուին ։ ս ու ամէն մէկը իրենց գործքերուն համե-
14 մատ դատուեցան ։ վ Ու մահը ու դժոխքը կրա-
կի լիճին մէջը ձգուեցան ։ տ ասիկայ է երկրորդ մա-
15 հը ։ Ու ով որ կենաց գրքին մէջը գրուած չգըտ-
նուեցաւ , ր կրակի լիճին մէջը ձգուեցաւ ։

հ Եզեկ. ԼԸ. 2 ։ ԼԹ. 1 ։
ձ Գլ. ԺԶ. 14 ։
ղ Ես. Ը. 8 ։ Եզեկ. ԼԸ. 9, 16 ։
ճ Հմր 7 ։
մ Գլ. ԺԹ. 20 ։
յ Գլ. ԺԴ. 10, 11 ։
ն Բ Պետ. Գ. 7, 10, 11 ։ Գլ. ԻԱ. 1 ։
շ Դան. Բ. 35 ։
ո Գլ. ԺԹ. 5 ։
չ Դան. Է. 10 ։
պ Սաղ. ԿԹ. 28 ։ Դան. ԺԲ. 1 ։ Փիլ. Դ. 3 ։ Գլ. Գ. 5 ։ ԺԳ. 8 ։ ԻԱ. 27 ։
ջ Երեմ. ԺԷ. 10 ։ ԼԲ. 19 ։ Մատ. ԺԶ. 27 ։ Հռով. Բ. 6 ։ Գլ. Բ. 23 ։ ԻԲ. 12 ։ Հմր 13 ։
ռ Գլ. Զ. 8 ։
ս Հմր 12 ։
վ Ա Կոր. ԺԵ. 26, 54, 55 ։
տ Հմր 6 ։ Գլ. ԻԱ. 8 ։
ր Գլ. ԺԹ. 20 ։

ԳԼ. ԻԱ

1 Նոր երկինքը ու նոր երկիրը ։ 10 Երկնային Երուսաղէմին տեսիլքը ու անոր ստորագրութիւնը ։ 23 Անոր մէջ արեւի կարօտութիւն չկայ, որովհետեւ Աստուծոյ փառքը անոր լոյսն է ։ 24 Երկրի թագաւորները իրենց հարստութիւնները անոր կը բերեն ։

1 ա Ու նոր երկինք մը ու նոր երկիր մը տեսայ.
բ Քանզի որ առջի երկինքը ու առջի երկիրը
2 անցաւ, ու ալ ծով չկար ։ գ Ու սուրբ քաղա-
քը նոր Երուսաղէմը տեսայ՝ որ երկինքէն Աստուծմէ
կ'իջնէր, դ իր էրկանը համար զարդարուած հարսի
3 մը պէս պատրաստուած ։ Ու երկինքէն մեծ ձայն
մը լսեցի՝ որ կ'ըսէր, ե Ահա Աստուծոյ խորանը
մարդոց մէջն է, ու անոնց հետ պիտի բնա-
կի. և անոնք անոր ժողովուրդը պիտի ըլլան, և
Աստուած ինքը անոնց հետ պիտի ըլլայ եւ
4 անոնց Աստուածը. Ու զ ինքը անոնց աչքերէն
բոլոր արցունքները պիտի սրբէ, է ու ալ մահ պի-
տի չըլլայ, ը ո՛չ սուգ և ո՛չ աղաղակ և ո՛չ ցաւ
պիտի ըլլայ ասկէ ետեւ. քանզի որ առջի բաները
5 անցան ։ թ Ու ան որ աթոռին վրայ կը նստէր,
ըսաւ. ժ Ահա ամէն բաները նոր կ'ընեմ. ու ը-
սաւ ինծի, Գրէ. ի քանզի որ աս խօսքերը ճշմա-
6 րիտ ու հաւատարիմ են ։ Նաեւ ըսաւ ինծի,
լ Եղաւ. խ Ես եմ Ալֆա ու Օմէղա՝ սկիզբը ու
վերջը. ծ Ես ծարաւին ձրի պիտի տամ կենաց ջու-

ա Եսա. կե. 17 ։ կզ. 22 ։ բ Պետ. գ. 13 ։
բ Գլ. ի. 11 ։
գ Եսա. ծբ. 1 ։ Գաղ. դ. 26 ։ Եբր. ժա. 10 ։ ժբ. 22 ։ ժգ. 14 ։ Գլ. գ. 12 ։ Հմր 10 ։
դ Եսա. ծա. 5 ։ կա. 10 ։ բ Կոր. ժա. 2 ։
ե Ղեւ. իզ. 11, 12 ։ Եզեկ. խգ. 7 ։ բ Կոր. զ. 16 ։ Գլ. է. 15 ։
զ Եսա. իե. 8 ։ Գլ. է. 17 ։
է ա Կոր. ժե. 26, 54 ։ Գլ. ի. 14 ։
ը Եսա. լե. 10 ։ կա. 3 ։ կե. 19 ։
թ Գլ. դ. 2, 9 ։ ե. 1 ։ ի. 11 ։
ժ Եսա. խգ. 19 ։ բ Կոր. ե. 17 ։
ի Գլ. ժթ. 9 ։
լ Գլ. ժզ. 17 ։
խ Գլ. ա. 8 ։ իբ. 13 ։
ծ Եսա. ժբ. 3 ։ ծե. 1 ։ Յովհ. դ. 10, 14 ։ է. 37 ։ Գլ. իբ. 17 ։

7 րին աղբիւրէն ։ Ան որ կը յաղթէ, * ամէն բաները
պիտի ժառանգէ. կ Ու ես անոր Աստուած պիտի
8 ըլլամ, ան ալ ինծի որդի պիտի ըլլայ ։ հ Բայց
վախկոտներուն՝ ու անհաւատներուն՝ և պիղծերուն՝
ու մարդասպաններուն՝ ու պոռնիկներուն՝ և կա-
խարդներուն՝ ու կռապաշտներուն՝ և բոլոր ստա-
խօսներուն բաժինը ձ կրակով ու ծծումբով վառած
լիճին մէջը պիտի ըլլայ, որ է երկրորդ մահը ։
9 ղ Ու եօթը վերջին հարուածներով լեցուն եօթը
սկաւառակները ունեցող եօթը հրեշտակներէն մէ-
կը ինծի եկաւ, և հետս խօսեցաւ ու ըսաւ, ճ Եկո՛ւր
10 ցուցնեմ քեզի հարսը՝ Գառնուկին կնիկը ։ մ Ու
հոգիով մէկ մեծ ու բարձր լեռան մը վրայ տարաւ
զիս, յ և ցուցուց ինծի սուրբ Երուսաղէմ քաղա-
11 քը, որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր. ն Ու Աս-
տուծոյ փառքը ունէր. և անոր լուսաւորութիւնը
խիստ պատուական քարի նման էր, ակնվանիի երե-
12 ւոյթով յասպիս քարի պէս ։ Ու անոր պարիսպը
մեծ ու բարձր էր, շ և տասնըերկու դռներ ունէր,
ու դռներուն վրայ տասնըերկու հրեշտակներ կար,
և դռներուն վրայ անուններ գրուած էր՝ այսինքն
Իսրայէլի որդւոցը տասնըերկու ցեղերուն անուն-
13 ները ։ ո Արեւելեան կողմէն երեք դուռ, ու հիւ-
սիսային կողմէն երեք դուռ, և հարաւային կողմէն
երեք դուռ, ու արեւմտեան կողմէն երեք դուռ ։
14 Ու քաղաքին պարիսպը տասնըերկու հիմեր ունէր,
չ ու անոնց վրայ՝ Գառնուկին տասնըերկու առա-

* Ոմանք՝ աս
կ Զաք. ը. 8 ։ Եբր. ը. 10 ։
հ ա Կոր. զ. 9, 10 ։ Գաղ. ե. 19, 20, 21 ։ Եփե. ե. 5 ։ ա Տիմ. ա. 9 ։ Եբր. ժբ. 14 ։ իբ. 15 ։
ձ Գլ. ի. 14, 15 ։
ղ Գլ. ժե. 1, 6, 7 ։
ճ Գլ. ժթ. 7 ։ Հմր 2 ։
մ Գլ. ա. 10 ։ ժէ. 3 ։
յ Եզեկ. խը ։ Հմր 2 ։
ն Գլ. իբ. 5 ։ Հմր 23 ։
շ Եզեկ. խը. 31—34 ։
ո Եզեկ. խը. 31—34 ։
չ Մատ. ժզ. 18 ։ Գաղ. բ. 9 ։ Եփե. բ. 20 ։

քերաններուն [տասուերկու] անունները գրուած էր :
15 Ու ինծի հետ խօսողը [բ]ձեռքը ոսկիէ եղէգ մը ու-
նէր, որ անով քաղաքը և անոր դռները ու անոր
16 պարիսպները չափէ : Ու քաղաքը քառակուսի էր,
ու անոր երկայնութիւնը լայնութեանը չափ էր. և
քաղաքը նոյն եղէգով տասուերկու հազար ասպարէզ
չափեց. անոր երկայնութիւնը ու լայնութիւնը
17 և բարձրութիւնը հաւասար էր : Ու անոր պա-
րիսպը հարիւր քառասունըչորս կանգուն չափեց՝
մարդու չափով, այսինքն հրեշտակին չափով :
18 Ու անոր պարսպին շինուածքը յասպիս քարէ էր ;
ու քաղաքը զուտ ոսկի էր մաքուր ապակիի նման :
19 [գ] Ու քաղաքին պարսպին հիմերը ամէն տեսակ
պատուական քարերով զարդարուած էին. առջի
հիմը յասպիս էր, երկրորդը՝ շափիւղայ, երրորդը՝
20 քաղկեդոն, չորրորդը՝ զմրուխտ, հինգերորդը՝
եղնգնաքար, վեցերորդը՝ սարդիոն, եօթներորդը՝
ոսկեքար, ութերորդը՝ բիւրեղ, իններորդը՝
տպազիոն, տասներորդը՝ քրիսոպրասոս, մետասա-
ներորդը՝ յակինթ, երկոտասաներորդը՝ ամեթիստ :
21 Ու տասուերկու դռները տասուերկու մարգարիտ
էին, ամէն մէկ դուռը մէկ մէկ ամբողջ մարգարիտէ
էր. [դ] ու քաղաքին հրապարակը մաքուր ոսկի էր
22 թափանցիկ ապակիի նման : [ե] Ու անոր մէջը
տաճար չտեսայ, ինչու որ Տէր Աստուած Ամենա-
23 կալն ու Գառնուկը անոր տաճարն է : [զ] Ու քա-
ղաքը արեւի ու լուսնի պէտք չունի, որ զանիկայ
լուսաւորեն. ինչու որ Աստուծոյ փառքը զանիկայ
24 կը լուսաւորէ, ու անոր ճրագը Գառնուկն է : [է] Ու
[փրկուած] ազգերը անոր լոյսովը պիտի քալեն,
ու երկրի թագաւորները իրենց փառքը ու պատի-

բ Եզեկ. խ. 3; Զաք. բ. 1; Գլ. ժա. 1;
գ Ես. ծդ. 11;
դ Գլ. իբ. 2;
ե Յօհ. դ. 23;
զ Ես. իդ. 23; կ. 19, 20; Գլ. իբ. 5; Հմր 11;
է Ես. կ. 3, 5, 11; կզ. 12;

25 ւը անոր մէջը պիտի բերեն : [ը] Ու անոր դռները
ցորեկը պիտի չգոցուին. (վասն զի [թ] հոն գիշեր
26 պիտի չըլլայ.) [ժ] Ու ազգաց փառքը ու պատիւը
27 անոր մէջը պիտի բերեն : [ի] Ու հոն բնաւ անմաք-
րութիւն մը պիտի չմտնէ, ո՛չ ալ պղծութիւն ու
ստութիւն գործող մը, հապա միայն անոնք՝ [լ] որ
Գառնուկին կենաց գրքին մէջը գրուած են :

ԳԼ. ԻԲ

1 Կենաց ջուրին գետը ; 2 Կենաց ծառը ; 5 Աստուած ինքը կը լուսաւորէ երկնային քաղաքը ; 9 Հրեշտակը չուզեր որ իրեն երկրպագութիւն մատուցուի ; 18 Պէտք չէ բան մը աւելցընել Աստուծոյ խօսքին վրայ, ոչ ալ անկէ բան մը պակսեցընել ։

1 [խ] Ու ինծի կենաց ջուրի գետ մը ցուցուց ականա-
կիտի պէս պայծառ, որ կ'ելլէր Աստուծոյ ու
2 Գառնուկին աթոռէն : [ծ] Ու անոր փողոցին հրապա-
րակին մէջ, ու անոր գետին մէկ կողմէն ու միւս
կողմէն [կ] կենաց ծառ կար՝ որ տասուերկու կերպ պը-
տուղ կը բերէր, ու ամէն ամիս իր պտուղը կու
տար. [հ] և անոր ծառին տերեւները հեթանոսներուն
3 բժշկութիւն կ'ըլլար : [ձ] Ու ալ բնաւ նզովք պի-
տի չըլլայ. [ղ] Ու անոր մէջը պիտի ըլլայ Աստուծոյ
ու Գառնուկին աթոռը, [ճ] և անոր ծառաները պի-
4 տի պաշտեն զանիկա. Ու անոր երեսը պիտի տես-
նեն, [մ] ու անոր անունը իրենց ճակատներուն վրայ
5 պիտի ըլլայ : [յ] Ու հոն՝ ալ գիշեր պիտի չըլլայ,

ը Ես. կ. 11;
թ Ես. կ. 20; Զաք. ժդ. 7; Գլ. իբ. 5;
ժ Հմր 24;
ի Ես. լե. 8; ծբ. 1; կ. 21; Յովէլ. գ. 17; Գլ. իբ. 14, 15;
լ Փիլ. դ. 3; Գլ. գ. 5; ժգ. 8; ի. 12;
խ Եզեկ. խէ. 1; Զաք. ժդ. 8;
ծ Եզեկ. խէ. 12; Գլ. իա. 21;
կ Ծն. բ. 9; Գլ. բ. 7;
հ Գլ. իա. 24;
ձ Զաք. ժդ. 11;
ղ Եզեկ. խը. 35;
ճ Մատ. ե. 8; Ա Կոր. ժգ. 12; Ա Յօհ. գ. 2;
մ Գլ. գ. 12; ժդ. 1;
յ Գլ. իա. 23, 25;

և ճրագ ու արեւու լոյս պէտք չէ · [ժ]քանզի Տէր Աս-
տուած պիտի լուսաւորէ զանոնք , [ի]և յաւիտեանս
յաւիտենից պիտի թագաւորեն :
6 Ու ըսաւ ինծի , [լ]Այս խօսքերը հաւատարիմ են
ու ճշմարիտ · և [*]սուրբ մարգարէներուն Տէր
Աստուածը [խ]իր հրեշտակը խրկեց՝ իր ծառաներուն
7 ցուցընելու ինչ որ շուտով պէտք է ըլլալ : [ծ]Ահա
ես շուտով կու գամ · [կ]Երանի անոր՝ որ կը պահէ
աս գրքիս մարգարէութեան խօսքերը :
8 Ու ես Յովհաննէս լսեցի ու տեսայ աս բանե-
րը · և երբ լսեցի ու տեսայ , [հ]ինկայ որ երկրպա-
գութիւն ընեմ , ան հրեշտակին ոտքերուն առջեւ՝
9 որ աս բաները ինծի կը ցուցընէր : Ու ըսաւ
ինծի , [ձ]Զգուշացի՛ր՝ մի՛ ըներ · ինչու որ ես քու-
կին ու քու եղբայրներուդ՝ մարգարէներուն և աս
գրքիս խօսքերը պահողներուն ծառայակիցն եմ ·
10 Աստուծոյ երկրպագութիւն ըրէ : [ղ]Ու ըսաւ ինծի ,
Աս գրքիս մարգարէութեան խօսքերը մի՛ կնքեր ,
11 [ճ]ինչու որ ժամանակը մօտ է : [մ]Ան որ անիրաւու-
թիւն կ'ընէ՝ ալ անիրաւութիւն թող ընէ , ու
ան որ աղտոտ է՝ ալ աղտոտ ըլլայ , և ան որ արդար
է՝ ալ արդար ըլլայ , ու ան որ սուրբ է՝ ալ սուրբ
12 ըլլայ : [յ]Ահա ես շուտով կու գամ , [ն]և իմ
վարձքս իմ հետս է՝ [շ]ամեն մէկուն իր գործքին
13 համեմատ հատուցանելու : [ո]Ես եմ Ալֆա և

ժ Սաղ. լզ. 9 ։ ձդ. 11 ։
ի Դան. է. 27 ։ Հռով. ե. 17 ։ բ Տիմ. բ. 12 ։ Գլ. գ. 21 ։
լ Գլ. ժթ. 9 ։ իա. 5 ։
* Ոմանք՝ մարգարէից հոգիներուն
խ Գլ. ա. 1 ։
ծ Գլ. գ. 11 ։ Հմր 10, 12, 20 ։
կ Գլ. ա. 3 ։
հ Գլ. ժթ. 10 ։
ձ Գլ. ժթ. 10 ։
ղ Դան. ը. 26 ։ ժբ. 4, 9 ։ Գլ. ժ. 4 ։
ճ Գլ. ա. 3 ։
մ Եզեկ. գ. 27 ։ Դան. ժբ. 10 ։ բ Տիմ. գ. 13 ։
յ Հմր 7 ։
ն Ես. խ. 10 ։ կբ. 11 ։
շ Հռով. բ. 6 ։ ժդ. 12 ։ Գլ. ի. 12 ։
ո Ես. խա. 4 ։ խդ. 6 ։ խը. 12 ։ Գլ. ա. 8, 11 ։ իա. 6 ։

Օմեղա՝ Առաջինը ու Վերջինը՝ Սկիզբը և Վախ-
14 ճանը : [չ]Երանելի են անոնք որ անոր պատուի-
րանքները կը կատարեն , [պ]որ իշխանութիւն ու-
նենան կենաց ծառին վրայ , և [ջ]դռներէն ներս քա-
15 ղաքը մտնեն : [ռ]Բայց դուրս պիտի մնան [ս]շուները
ու կախարդները և պոռնիկները ու սպանութիւն
ընողները և կռապաշտները ու ան ամէնը որ ստու-
թիւն կը սիրէ և՝ կ'ընէ :
16 [վ]Ես Յիսուս իմ հրեշտակս խրկեցի՝ աս բաները
ձեզի վկայելու եկեղեցիներուն [*]մէջ · [տ]Ես Դաւի-
թի արմատը ու ցեղն եմ , [ր]ու առաւօտեան պայ-
17 ծառ աստղը : Ու Հոգին [ց]ու հարսը կ'ըսեն ,
Եկո՛ւր · և ան որ կը լսէ՝ թող ըսէ , Եկո՛ւր ·
[ւ]ու ան որ ծարաւ է՝ թող գայ , ու ան որ կ'ուզէ՝
կենաց ջուրը ձրի առնէ :
18 Ես կը վկայեմ ամենուն՝ որ աս գրքիս մարգա-
րէութեան խօսքերը կը լսէ · [փ]թէ որ մէկը ասոնց
վրայ բան մը աւելցընէ , Աստուած ալ անոր վրայ
պիտի աւելցընէ ան հարուածները որ աս գրքիս
19 մէջը գրուած են : Ու թէ որ մէկը աս մարգա-
րէութեանս գրքին խօսքերէն բան մը պակսեցընէ ,
[ք]Աստուած ալ անոր բաժինը պիտի պակսեցընէ
կենաց գրքէն [օ]և սուրբ քաղաքէն՝ որ աս գրքիս
20 մէջը գրուած են : Աս բաներուն վկայութիւն
տուողը կ'ըսէ , Այո , [ֆ]շուտով կու գամ ես :

չ Դան. ժբ. 12 ։ ա Յօհ. գ. 24 ։
պ Հմր 2 ։ Գլ. բ. 7 ։
ջ Գլ. իա. 27 ։
ռ ա Կոր. զ. 9, 10 ։ Գաղ. ե. 19, 20, 21 ։ Կող. գ. 6 ։ Գլ. թ. 20, 21 ։ իա. 8 ։
ս Փիլ. գ. 2 ։
վ Գլ. ա. 1 ։
* Կամ՝ վրայով ·
տ Գլ. ե. 5 ։
ր Թուոց. իդ. 17 ։ Զաք. զ. 12 ։ բ Պետ. ա. 19 ։ Գլ. բ. 28 ։
ց Գլ. իա. 2, 9 ։
ւ Ես. ծե. 1 ։ Յօհ. է. 37 ։ Գլ. իա. 6 ։
փ բ Օր. դ. 2 ։ ժբ. 32 ։ Առակ. լ. 6 ։
ք Ել. լբ. 33 ։ Սաղ. կթ. 28 ։ Գլ. գ. 5 ։ ժգ. 8 ։
օ Գլ. իա. 2 ։
ֆ Հմր 12 ։

21 ―Ամէն, Ֆեկո՛ւր, Տէր Յիսուս։ ԷՄեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամէնուն հետ ըլլայ։ Ամէն։

― Յօհ. իա. 25։
Ֆ Բ Տիմ. դ. 8։

Է Հռովմ. ժզ. 20, 24։ Բ Թես. գ. 18։

ՓԵՑՌԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ